Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը Մատենադարանը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն գրքի տպագրությանն աջակցելու համար

Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts Matenadaran
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund
express their gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the printing of this book



MATENADARAN
REPUBLIC OF ARMENIA – MASHTOTS INSTITUTE of ANCIENT MANUSCRIPTS

GENERAL CATALOGUE OF ARMENIAN MANUSCRIPTS OF THE MASHTOTS MATENADARAN

VOLUME XI

Manuscripts 3401-3700

YEREVAN - 2024

«МАТЕНАДАРАН»
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МАШТОЦА

ГЕНЕРАЛЬНЫЙ КАТАЛОГ АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ МАТЕНАДАРАНА ИМЕНИ МАШТОЦА

ТОМ XI

Рукописи 3401-3700

ЕРЕВАН - 2024

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՈՒԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՅՐ ՑՈՒՑԱԿ
ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՈՒԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ՀԱՏՈՐ
ԺԱ.

Ձեռագիրք 3401-3700

ԵՐԵՒԱՆ - 2024

Տպագրւում է Մաշտոցի անուան Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Առայիկ Խզմալեան (խորհրդի նախագահ), Գուրգէն Գասպարեան, Վահէ Թորոսեան, Արմէն Մալխասեան,
Գոհար Մուրադեան, Էոնա Մանեա Շիրինեան, Կարէն Մաթեւոսեան,
Շահան արք. Սարգիսեան, Շահէ ծ. վրդ. Անանեան, Վահան ծ. վրդ. Օհանեան

ՄԱՅՐ ՅՈՒՅԱԿԻ ԺԱ. ՀԱՏՈՐԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յակոբ Քեոսէեան, Առամ Թօփչեան, Քրիստիէ Կոստիկեան

Խմբագիրներ՝

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

ԳՈՒՐԳԷՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի (3401-3700)

Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց / Մատենադարան, Մաշտոցի անուան հին ձեռագրերի ինստիտուտ: Հտ. ԺԱ., 1984 սիւն (992 էջ): Եր.: Մատենադարան, 2024:

Մաշտոցեան Մատենադարանի հայերէն ձեռագրերի Մայր ցուցակի ԺԱ. հատորն ընդգրկում է Մատենադարանի ձեռագրատունը պահուող 3401-3700 գոյահամարներով գրանցուած 300 ձեռագիր մատեաններում ընդգրկուած 312 ձեռագիր մատեանի եւ 3 տպագիր գրքի ընդարձակ նկարագրութիւնները:

ISBN 978-9939-897-32-5



© ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ՄԱՇՏՈՑԻ ԱՆՈՒԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ, 2024

ՄԱՇՏՈՑԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՄԱՅՐ ՅՈՒՑԱԿԻ ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ

Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրերի մայր ցուցակի ԺԱ. հատորն ընդգրկում է Մատենադարանի ձեռագրատունը պահուող 3401-3700 գոյքահամարներով գրանցուած 300 ձեռագիր մատեանների ընդարձակ նկարագրութիւնները, որոնք կատարել են Մատենադարանի ձեռագրագիտութեան բաժնի գիտաշխատողները երջանկայիշատակ Գէորգ Տէր-Վարդանեանի ղեկավարութեամբ:*

Հատորում ընդգրկուած ձեռագրերի մի մասը (3434-3449, 3452-3453, 3455-3457, 3460, 3468, 3660-3465) *ժամանակին նկարագրել է Յ. Թօփճեանը**:*

Ձեռագրերի նկարագրութիւնների խմբագրական վերջնական շտկումները, սրբագրական աշխատանքները կատարուել են 2013-2014 թթ.՝ եւս մէկ անգամ դրանք համեմատելով բնագրերի հետ:

Հատորում ընդգրկուած 300 ձեռագիր մատեաններից 24-ը բաղկացած է մէկից աւելի ձեռագրերից, իսկ երեք ձեռագիր մատեան կազմուել է տպագրուած գրքերի հետ (ձեռ. 3628, 3668, 3697): *Մէկից աւելի ձեռագիր մատեաններ պարունակող ժողովածուների հաշուառման պատկերը հետեւեալն է. ձեռ.* 3422 – 2, 3424 – 4, 3425 – 5, 3457 – 2, 3463 – 2, 3468 – 2, 3469 – 2, 3515 – 2, 3521 – 2, 3522 – 2, 3527 – 2, 3567 – 2, 3584 – 2, 3606 – 2, 3613 – 2, 3630 – 2, 3642 – 3, 3651 – 3, 3652 – 4, 3655 – 2, 3657 – 5, 3667 – 2, 3686 – 2, 3695 – 2: *Այսպիսով, 3401-3700 գոյքահամարներով գրանցուած 300 ձեռագիր մատեաններում ընդգրկուած է եւ նկարագրուել է 312 ձեռագիր մատեան և 3 տպագիր գիրք:*

Մայր ցուցակի ԺԱ. հատորում ընդգրկուած ձեռագրերի առաջին նկարագրութիւնները կատարել են՝

Փիրուզ Հայրապետեանը – Հմր 3401-3411, 3413-3414, 3416-3417, 3419-3425, 3427, 3430-3431, 3433, 3437-3440, 3442-3443, 3445-3446, 3448-3452, 3455, 3457-3469, 3471, 3474-3484, 3486-3491, 3495, 3497-3600 (176 ձեռագիր),

Արմէն Մահակեանը – Հմր 3412, 3415, 3418, 3426, 3428, 3429, 3432, 3434-3436, 3441, 3444, 3447, 3453-3454, 3456, 3470, 3472-3473, 3485, 3492-3494, 3496 (24 ձեռագիր),

Արմինէ Մելքոնեանը – Հմր 3601-3645, 3649-3657, 3661, 3663-3665, 3667-3669, 3672-3697, 3699 (88 ձեռագիր),

Արամ Դիլանեանը – Հմր 3646-3648, 3658-3660, 3662, 3666, 3670, 3671, 3698, 3700 (12 ձեռագիր):

Մայր ցուցակի ԺԱ. հատորում ընդգրկուած ձեռագրերի երկրորդ նկարագրութիւնները կատարել են՝

Տաթեւիկ Մանուկեանը – Հմր 3401-3450 (50 ձեռագիր),

Գոհար Զաւեանը – Հմր 3451-3500 (50 ձեռագիր),

Մարինէ Սարգսեանը – Հմր 3501, 3503-3505, 3528-3530, 3533-3534, 3540-3542, 3548 (13 ձեռագիր),

Քնար Յարութիւնեանը – Հմր 3502, 3506-3527, 3531-3532, 3535-3539, 3543-3547, 3549-3550 (37 ձեռագիր),

Անի Առաքելեանը – Հմր 3551-3600 (50 ձեռագիր),

Մարինէ Սարգսեանը – Հմր 3601-3650 (50 ձեռագիր),

Յասմիկ Իրիցեանը – Հմր 3651-3700 (50 ձեռագիր):

Նարինէ Վարդանեանը *վերջնամշակել է* 3406 *ձեռագրի նկարագրութիւնը:*

Յանկերը եւ աղիւսակները կազմել են՝ ***Խաչիկ Յարութիւնեանը, Օվսաննա Խաչատրեանը, Գոհար Զաւեանը, Սեդա Մանուկեանը, Գուրգէն Գասպարեանը:***

Վրացերէն գրառումների վերծանութիւնը կատարել է ***Բեռնար Ուտիէն:***

Պարսկերէն գրառումները վերծանել եւ թարգմանել են ***Քրիստիէ Կոստիկեանը եւ Իվէտ Թաջարեանը:***

Թուրքերէն գրառումները վերծանել եւ թարգմանել է ***Անի Աւետիսեանը:***

Մայր ցուցակի ԺԱ. հատորում վերանայուել է «Յանկեր եւ աղիւսակներ» բաժնի նիւթերի ցանկը: Մատենագրական միաւորները ներկայացուել են թէ՛ բովանդակային, ինչը հիմնական սկզբունքն էր նախորդ հատորներում, եւ թէ միջնադարեան հայ մատենագրութեան մէջ առկայ ժանրերի հնարաւորինս մանրամասն դասակարգումով:

«Մայր ցուցակի» սոյն հատորում նախընտրել ենք «յետագայ» բառաձեւի փոխարէն կիրառել «հետագայ» բառաձեւը հետեւեալ պատճառներով.

Ըստ Հրաչեայ Աճառեանի՝ այս երկու բառերի արմատը հնդեւրոպական «հետ»-ն է, որը հայերէնում չորս տարբերակով է արտայայտուել՝ հետ, յետ, ետ *եւ* ոտ *(տե՛ս Արմատական բառարան, հտ. 3, եր., 1926, էջ 84):*

---

* 3401-3700 գոյհաճամարներով գրանցուած այս 300 ձեռագիր մատեանների համառօտ նկարագրութիւնները տե՛ս Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ա, կազմեցին **Օ. Եգանեան, Ա. Ջէյթունեան, Փ. Անթաբեան**, խմբագրութեամբ **Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի**, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչութիւն, Եր., 1965, էջ 1004-1066:

** Տե՛ս **Յ. Թօփճեան**, Յուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, մասն Բ., Վաղարշապատ, 1900:

«Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանը (հտ. 2, էջ 89 եւ 357) «յետագայ» բառը իմաստով նոյնացնում է «հետագայ»-ի հետ: Ընդ որում՝ «Նոր Բառգիրքը» առաւել տարածուած եւ հիմնական է համարում «հետագայ» ձեւը:

Հետագայում լոյս տեսած բառարաններում բառի գրութեան ձեւի եւ իմաստի որեւէ տարբերակում արձանագրուած չէ: Օրինակ, Սիմոն Գաբամաճեանի «Նոր Բառգիրք հայերէն լեզուի» (1910) բառարանը «յետագայ» բառաձեւ առհասարակ չունի, ունի միայն «հետագայ» բառաձեւը «հետեւէն եկող. գալիք. յաջորդ» բացատրութեամբ (էջ 812): Խորհրդային շրջանի բառարաններում, օրինակ, Էդ. Աղայեանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» եւ ՀՀ ԳԱԱ լեզուի ինստիտուտի հրատարակած «ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ում նոյնպէս «յետագայ» բառաձեւը չկայ, քանի որ ուղղագրական բարեշրջումից յետոյ այդ բառերը դարձել են համանուններ: Այս երկու բառարանները նոյն բացատրութիւնն են տալիս «հետագայ» բառին.

Էդ. Աղայեան – *ՀԵՏԱԳԱ, ած. 1. Որեւէ բանի հաջորդող: 2. Որեւէ բանի հետեւող, մի բանից հետո եկող, հետեւյալ, հաջորդ: 3. գ. Ապագա: (եր., 1976, հտ. 1, էջ 861):*

ՀՀ ԳԱԱ լեզուի ինստիտուտ – *ՀԵՏԱԳԱ 1. հետո եկող, ապագա, գալիք, 2. հետեւյալ, հաջորդող» (եր., 1969, հտ. 3, էջ 341):*

Գնել առ. Ճէրէճեանի, Փարամազ Կ. Տօնիկեանի եւ Արտաշէս Տէր Խաչատուրեանի *«Հայոց լեզուի նոր բառարան»-ում (Պէյրութ, 1992) «հետագայ» եւ «յետագայ» բառերին տրուած է նոյն բացատրութիւնը (էջ 305, 1221), այն տարբերութեամբ, որ «յետագայի» համար տրուած է «որեւէ բանի յաջորդող», իսկ «հետագայի» համար՝ «որեւէ բանի անմիջապէս յաջորդող» բացատրութիւնները:*

Ստ. Մալխասյանցը «Հայերէն բացատրական բառարան»-ում (եր., 1944, հտ. 3, էջ 96 եւ 406) առաջին անգամ տարբերակում է այս երկու բառաձեւերի իմաստները.

«ՀԵՏԱԳԱՅ *(գա), ի (ից), ած. Հետեւող, յետեւից եկող, յաջորդող, հետեւեալ:* Այս եւ հետագայ խօսքերից պարզ երեւում է նրա դիտաւորութիւնը: Պայմանը բաղկացած էր հետագայ հինգ յօդուածներից: *(Այլ է յետագայ):*

ՅԵՏԱԳԱՅ, *ած. Ինչ որ յետոյ է եկել, կամ յետոյ պիտի գայ:* Յետագայ սերունդներն անշուշտ մեզանից աւելի լաւ կապրին: *2. գ. Ապագայ ժամանակ:* Այդ հարցի վճիռը թողնենք յետագային: Յետագայում շատ բան կփոխուի: *Այլ է հետագայ»:*

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ բառի արմատը «հետ»-ն է (ըստ Աճառեանի), ինչպէս նաեւ «հետագայ» բառաձեւի առաւել յաճախակի կիրառութիւնը հայ մատենագրութեան մէջ (ըստ Հայկազեանի բառարանի) եւ Ստ. Մալխասեանցի այս բառաձեւերի իմաստային յստակեցումը՝ Մայր ցուցակում նախնընտրել ենք կիրառել «հետագայ» բառաձեւը:

Հատորում կիրառուած յապաւումների, համառօտագրութիւնների եւ պայմանական նշանների ցանկ

/// (շար.) = շարունակութիւնը թափուած
/// (սկ.) = սկիզբը թափուած
/// (վջ.) = վերջը թափուած
աբեղ – աբեղայ
ածչնչկն – աստուածաշնչական
արտմ. – արտաքին
արեպս. – արեւելեան պարսկերէն
բլրգծ – բոլորգիծ
բլրգր – բոլորգիր
գրչփրձ – գրչափորձ
դ. – դար
եպս. – եպիսկոպոս
երկթգր – երկաթագիր
թ. – թիւ
թգւր – թագաւոր
լատ. – լատիներէն
լս. – լուսանցք
ծն. – ծնունդ է
ծնթ. – ծանօթագրութիւն
կթղկս – կաթողիկոս
կնհդրշմ – կնհադրշմ
կր. – կրօնաւոր
հայ. – հայերէն
հմմտ. – համեմատել
Հ՝ր – համար
ձեռ. – ձեռագիր
ճգնւր – ճգնաւոր
մահ. – մահացել է
մգզթ – մագաղաթ
մհտ. – մահտեսի
մնրկր – մանրանկար
մրգ. – մարգարէ
յիշ. – յիշատակարան
յշտկծ – յիշատակուած
յուն. – յունարէն
նահտկ. – նահատակուած
նոտր. – նոտրգիր
ուղղգծ – ուղղագիծ
պհպ. – պահպանակ
պտոկ-պհպ. – պատառիկ պահպանակ
պրն – պարոն
սբ, սրբ – սուրբ
սկ. – սկիզբը
ստ. – ստորին
սրկ. – սարկաւագ
վկյ – վկայ
վջ. – վերջը
վր. – վերին
վրաց. – վրացերէն
վրդ. – վարդապետ
տրց. – տիրացու
ֆհյ – ֆահլաւայ
ֆորեպս. – ֆորեպիսկոպոս


ԳՈՒՐԳԷՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ

3401
ՇԱՐԱԿՆՈՑ

[ՍԱՆԱՀԻՆ]* ԺԶ. դար

ԳՐԻՉ՝ Թումա սրկ.: ՍՏԱՑՈՂ՝ Սարգիս աբղյ:

ԹԵՐԹ՝ 263: ՊՐԱԿ՝ Ա-ԻԸ×12 (Ա, Իէ 7, Բ 1, Գ-Դ՝ չիք, Ե-Ջ 5, Ժ, ԻՋ 11, ԺԱ, ԻԸ 6): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14,4×10,4: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (11×7): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 165ա): ՏՈՂ՝ 25: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի կապիչներով. միջուկը՝ տախտակ. աստառը՝ ծաղկազարդ կտաւ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+էԸ՝ սպիտակ չգրուած թուղթ:



Նմուշ 165ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Լս-այիւ՝ Իմաստուն կոյս (Առակ յիմար եւ իմաստուն կուսանաց)՝ 53ա: Ճակատազարդ՝ 6բ, 47ա, 68ա, 111ա, 160ա, 212ա, 229ա, 251ա: Լուսանցազարդ՝ բուսական, թոչուն: Ձարդագիր՝ թոչնագիր, հանգուցագիր, մարդադէմ: Գոյներ՝ կարմիր, վարդագոյն, դարչնագոյն, սեւ:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Մեկնութիւն ինչ (՞): Ժ. դ.: ԳԴ+եՋ՝ ստացուած 1ական թերթի ընդլայնակի եւ ընդերկայնակի ծալումով եւ խորը եզրահատումով: Մագաղաթ 19,5×13,5. երկսիւն (19,5×13,5). ուղղագիծ երկաթագիր (նմուշ՝ Գա). տող՝ 18-20: Կարդալ. Գա-Դբ՝ «///նապի է երթա/// ///ա վասն այն ո///... /// թէեւ մեք ///ցուք ընդ ն/// ոմանք աս///», Գբ-Դա՝ «///եռեալ եւ ///թիւն էր... փակեալ /// այլ ընդ ամենայն կո///», Եա-Զբ՝ «/// յասելոյ /// զի զար/// բանզի... ասէ հրեայքն /// բազում էին, որ իմ///», Եբ-Զա՝ «///այ ի նմանէ եւ եր/// զբոյրն եւս կոչէր... հայիս չ/// աւգնական/// ///նձն է գործ/// ///ծեմ /// զամ///»:



Նմուշ Գա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին նորոգուած, մէջբը եւ Ա. փեղկի եզրերը լրացրած նոր կաշւով, լուսանցակողերը սեւացած. Պտոկ-պիպ-ներն աղտոտուած, ցեցի անցքերով. թերթերին խոնաւութեան եւ աղտոտուածութեան հետեր, թերթերի հիմքերը եւ թափուած հատուածները 1950ականների կազմութեան ժամանակ լրացուած սպիտակ թղթով, ապա նորացուած 2023 թ. նորոգութեան ժամանակ, սկզբից անորոշ, ընդմէջ թ. 6-7ի 2, 7-8ի 13, 8-9ի 31, թ. 65-6ի, 241-2ի, 251-2ի 1ական, 257-8ի 10 թերթ ընկած, թ. 214-6, 263ը աւելացուած կազմութեան ժամանակ թափուած հատուածների փոխարէն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տէ՛ս ձեռ. 1576, 4ա-368բ: 1/1ա-2ա (սկ. /// [պարզ]գեւեցեր ըզքեզ բար...): 2/2ա-4ա: 3/4ա-6ա: 4/6բ (քրովբէից անտեսանելի կերպացեալ ըզմերս /// վջ.): 5/7աբ (սկ. /// այսաւր ցնծան երկինք ի վերուստ... Սուրբ զԱստուածածնին աւրհնութեամբ մեծաց[ուցանեմք] /// վջ.): 6-12/չիք: 13/8աբ (սկ. ///ն եւ ծընար մարմնով զքեզ... ծագեաց մեզ լոյս երեսաց եւ Փրկիչ անձ/// վջ.): 14-26/չիք: 27/9ա-12ա, 199բ-200ա (սկ. /// եւ գովել զանուն քո յաւիտեան...): 28/12ա-20ա: 29/20ա-9բ: 30/29բ-35ա, 39բ-40բ: 31/40բ-7ա: 32/47ա-9ա: 33/49ա-50բ: 34/50բ-1բ (Բարեբանեալ ես... Ուրախ լե՛ր, մա՛յր լուսոյ...՝ չիք): 35/51բ-3ա: 36/53ա-4ա: 37/54ա-5բ: 38/55բ-7բ: 39/57բ-65բ (գ՝ չիք): 40/65բ-7բ (Կենդանին յաւիտենից... Կուսածին մարմնով... Զքեզ աւրհնեմք... Որ բաշխաւղղ ես...՝ թափուած): 41/68ա-74բ: 42/74բ-80ա: 43/80ա-99ա: 44/99ա-103ա: 45/103բ-11ա: 46/111ա-3բ: 47/113բ-5ա: 48/115բ-7ա: 49/117ա-8բ: 50/118բ-20ա: 51/120ա-1բ: 52/121բ-3ա: 53/123բ-7բ (Մարգարէից գերագոյն... Այսաւր ցընծայ եկեղեցի...՝ չիք): 54/127բ-9բ (ունի՝ Մարգարէից գերագոյն... Այսաւր ցընծայ եկեղեցի...): 55/129բ-31բ: 56/131բ-3ա: 57/133ա-5բ: 58/135բ-42ա: 59/142ա-3բ: 60/143բ-6ա: 61/146ա-7բ: 62/147բ-9բ: 63/149բ-51ա: 64/151ա-3բ: 65/153բ-4ա, 157ա-8ա: 66/158ա-60ա: 67/160ա-1բ: 68/161բ-3ա: 69/163ա-4ա: 70/164ա-5բ: 71/165բ-6բ: 72/166բ-7բ: 73/167բ-9բ: 74/169բ-72ա: 75/172ա-3բ: 76/173բ-5բ: 77/175բ-7բ (Որ ընդ հողեղէն բնութեան... Որ աւետաւոր քում գալստեանդ... Այսաւր ժողովուրդք... Այսաւր ցընծա գուարճացեալ...՝ չիք): 78/177բ-9բ: 79/180ա-1բ: 80/181բ-3ա: 81/183ա-5ա: 82/185ա-94բ, 198բ-9բ, 202ա-3ա (ժբ-ժգ՝ չիք): 83/194բ-8բ: 84/203ա-7բ: 85/207բ-11բ: 86/212ա-28բ (Անոխակալ եւ բարէգութ, մի՛ ցրեր... Հեղմամբ արեան... Աւրհնեն ըզքեզ... Ընդ սուրբըս քո...՝ չիք): 87/229ա-46ա (Ժողովեալքս ի տաճար... Զահագին համբաւ... Ահագին է աւր... Մերձեցայ ես ի դուռնն...՝ թափուած): 88/251ա-63ա (Ծանեաք ըզքեզ... Հաստատութի՛ւն իմ, լե՛ր... Ի գիշերաց կանխելով... Յոյս եւ յարութիւն... Զփառաւորեալըն յամենայն... Որ լըւար... Հաստատութիւն իմ... Ի գիշերաց կանխեալ... Անմահ թագաւոր... ԶԱստուածն ամենեցուն... Անապականութեան աղբեր... Անեղին եղեալ... Աւգնական ընդունելի եղեւ իմ... Նայեցարուք երկինք... Աստուածային հուր... Ի Սուրբ երրորդութենէն ծանեաք... Հաստատեցաւ սիրտ իմ... Հոգի իմ յամենայն ժամ... Հառաչեցի զանլըռելի... Յաւրհնութիւն նոր... Ջհրաշալի խորհուրդ... Տէ՛ր, ըզլուր քո... երգեցէ՛ք Տեառն երգ նոր ձայնիւ... Նայեցարո՛ւք, ժողովո՛ւրդք... Որ ըզհուր... Որ յանըսկըզբնական Հաւրէ...

Հաստատեցան սիրտըք մեր առ քեզ, փառաց թագաւոր...՝ թափուած): 89/246ա-51ա (ունի՝ Անբսակիզբն Աստըւած հա-մապայծառ...): 90/35ա-9բ: 91/200ա-1բ: 92/200ա: 93-94/չիք: 95/154ա-7ա: 96/201բ-2ա:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

47ա Անարժան ոգիս հաբեղայս յիշեցայք ի Քրիստոս, ով մեզ յիշ[է], Աստուած զինքն յիշէ. ամէն:

160ա Բարեխաւսեա՛յ, տիրուհի՛, մեղաւոր գրչիս Թումայ*:*

211բ Ջստացող գրոցս, որ ստացաւ տէր Սարգիս *յիշատակ ինձ եւ իմ ծնաւղացն, զանարժան եւ մեղաւոր գրչիս՝ սուտանուն* Թումայ *սարկաւագք, եւ գործն ոչ, յիշեցէ՛ք, ո՛վ դաս քահանայից եւ սարկաւագաց, կարգալով կամ աւրինակելով, Աստուած տացէ ձեզ պըսակ մարտիրոսաց, փա՛ռք յաւիտեանս. ամէն:*

228բ Զգմեղաւոր փծողս՝ զԹումա *սարկաւագէս յիշեցէ՛ք, եւ Աստուած զգձեզ յիշէ ի միւսանգամ գալըստեան. ամէն:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *263ա (1692 թ., բոլորգիր) Զվերջին նորոյգող սուրբ գրանցս յիշեցէ՛ք, զբԲարսեղ ահ[եպիսկոպոսն յիշեցէ՛ք, որ եւս նորոյգել ժ. եւ ե. (15) գիրք՝ մեծ եւ փոքր, հալալ ընչից եւ ապրանաց իմոց տուի նորոյգել վասն փրկութեան հոգւո իմոյ եւ իմ արեան մերձաւորացն: |263բ| Ո՛վ սուրբ քահանայք եւ մանկունք սուրբ եկեղեցոյ, ով ոք հանդիպիք սմա կարգալով կամ է. խորհուրդ սուրբ եկեղեցոյ կատարելով, յիշեցէ՛ք* զԲարսեղ *ահ[եպիսկոպոսն եւ իւր ծնօղն եւ իւր արեան մերձաւորսն յիշեցէ՛ք, եւ դուք յիշեալ լիցիք առաջի Աստուծոյ. ամէն: Կազմեցաւ ի դրան* Սուրբ Աստուածածնին, *թվին Ռճե. եւ Ա. (1692), մախսի ամսոյ Ի. եւ ե. (25):*

* Ծնթ. Նորոգումը եղել է ըստ ամենայնի Սանահնի վանքում, որի առաջնորդը 1672, 1683-1697 թթ. եղել է Բարսեղ եպիսկոպոսը. տե՛ս Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի էջօթուկը), աշխ. Պ. Մուրադեանի, խմբ. Գէորգ Տէր-Վարդանեանի, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 2007, էջ 263: Յիշատակուած Ս. Աստուածածինն անպայման Սանահնի վանքի գլխաւոր եկեղեցին է, նոյն վանքում է գրուել նաեւ յաջորդ՝ 1839 թ. յիշատակարանը: Հնարաւոր է ենթադրել, որ ձեռագիրս գրուել եւ նորոգումից առաջ մի դար շարունակ գործածուել է նոյն Սանահնի վանքում, ապա՝ արժէ փնտրել եւ գտնել 1692 թ. շուրջ Սանահնում Բարսեղ եպիսկոպոսի նորոգած միւս ձեռագրերի գոնէ մի մասը եւ բոլորի համադիր ճնշութեամբ ուսումնասիրել մեր գրչութեան պատմութեան այդ ուշագրաւ էջը:

2. *108բ լս. (1839 թ., անփոյթ շղագիր) Ի թվին 1839 ամի Փրկչին եկի* Աւետիս *աբեղէս եւ միաբանեցա սուրբ ուխտիս* Սանահնի*: Այլեւայլ ժամանակի յիշեցէ՛ք ի Քրիստոս, եւ դուք յիշեալ լիցիք ի վերջոյ բարբառոյն:*

ՆՇՈՒՄ՝ *պհպ. Բա.ին սոսնձած թղթին՝ «Հդր 13, ԺԶ., Շարական /// նորոգողը ///, թիւ Ռճե.ից առաջ (1691), Մ[եսրոպ] եպ[իսկոպոս]», «Հդր 1144/3401», 1ա՝ «3401», պհպ. Ըբ՝ «Վերականգնումը կատարել է Արևիկ Գրիգորյանը, ղեկավար՝ Գայանե Էլիազյան, 2023 թ.»:*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *1ա ատ. լս., հակառակ դիրքով՝ «երանութիւն մարդոյ փառք է իւրն, ասին սուրբքն նախնեաց», 127ա ատ. լս.՝ «եղբա՛յր Դաւիթ, այդպէս կու լինի, ինչի՞ ես բարկանում», պտռկ-պհպ-ներին, գրեթէ բոլոր էջերի լս-ներում՝ առանձին բառեր, տառեր, մասնիկներ:*


3402
ՇԱՐԱԿՆՈՑ

ԱՅՐԻՎԱՆՔ ՋԱ. – 1452

ԳՐԻՉ՝ Մաթէոս կբ.: ՍՏԱՑՈՂ՝ Դանիէլ աբղ:

ԹԵՐԹ՝ 331+1 (կրկն.՝ թ. 1). չգրուած՝ 1գ: ՊՐԱԿ՝ Ա-ԻԸ×12 (Ա 14, Ժ 13, ԻԸ 5): ՆԻԹ՝ թուղթ, մագաղաթ (թ. 1, 2, 11, 121): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14×9: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (9,5×6): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 185ա): ՏՈՂ՝ 23: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դոնակով. միջուկը՝ տախտակ. աստառը՝ շերտազարդ մետաքս:


ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Ծնունդ՝ 1դ: Յարութիւն, Աւետումն դժոխոց՝ 120բ: Լս-ային՝ Աւետումն՝ 7բ-8ա, Աստուածամայրը Մանկան հետ՝ 12բ, Մարիամ Աստուածածին՝ 21բ, Մկրտութիւն՝ 25ա, Իւղաբեր Մարիամ՝ 27ա, Ընծայումն տաճարին՝ 31ա, Սուրբ Անտոն Անապատական՝ 33բ, Թէոդոս թագաւոր՝ 35ա, Դաւիթ արքայ՝ 37ա, Ստեփանոս Նախավկայ՝ 38ա, Պետրոս եւ Պաւղոս՝ 40բ, Ոդիլ Ոռոմաց՝ 42բ, Յովհաննէս առաքեալ՝ 44ա, Յովնան յերախ կիտի՝ 48ա, Բարի հովիւ՝ 62ա, Գրիգոր Լուսաւորիչ՝ 87ա, 181բ, Քրիստոս չորեքկերպեան գահին՝ 88բ, Յարութիւն Ղազարու՝ 95բ, Մուտ յԵրուսաղէմ՝ 97ա, Ադամ եւ Եւա՝ 101ա, Իմաստուն եւ յիմար կուսանք՝ 103ա, Ներսէս Շնորհալի՝ 111ա, 185բ, Խաչելութիւն՝ 116ա (ստացող Դանիէլ աբեղայ), Թաղումն Քրիստոսի՝ 118ա, Գլուխ Յովհաննու Մկրտչի ի վերայ սկուտեղի՝ 126բ, Համբարձումն՝ 154ա, Հոգեգալուստ՝ 165ա, Աւետումն Զաքարիայի՝



Նմուշ 185ա

176ա, Յովհաննէս Մկրտիչ՝ 180բ, Սուրբ Հռիփսիմէ՝ 188ա, Պայծառակերպութիւն՝ 195բ, Վերափոխումն Աստուածածնի՝ 202բ, Գիւտ խաչին՝ 222ա, Մարգարէ՝ 224ա, Մեսրոպ վարդապետ Մաշտոց՝ 227ա, Յակոբ Մծբնացի՝ 229ա, Մինն ի հառասուն մանկաց՝ 231ա, Հրեշտակապետ՝ 232բ, Սուրբ հայրապետ՝ 234ա, Իգնատիոս Անտիոքացի՝ 237ա, Յովհան Ոսկեբերան՝ 237բ, Բասեղ Կեսարացի՝ 237բ, Գրիգոր Աստուածաբան՝ 238ա, Եփրեմ Ասորի՝ 238բ, Թէոդորոս զաւրավար՝ 240ա, Քրիստոս՝ 250ա, 287ա, 297ա, Ջորեկերպեան՝ 250բ, Հրեշտակ՝ 270ա, Մովսէս՝ 308բ: Կիսախորան՝ 2ա, 121ա: Ճակատազարդ՝ 11ա, 51ա, 95բ, 165ա, 209ա, 259ա, 278ա, 301բ: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն, խոյ (241բ), խաչ (ծաղկած՝ 108բ), տաճար, յուշկապարիկ: Ձարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, նարնջի, վարդագոյն, մանուշակագոյն, շագանակագոյն, սպիտակ, ոսկի:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Անորոշ: ԺԱ. դ.: Ա (սկ.)՝ ստացուած 1 թերթի ընդլայնակի եւ ընդերկայնակի հատումով (բնագիրը կտրած): Մագաղաթ 13,5×7. միասիւն 11×6,5. ուղղագիծ երկաթագիր (նմուշ՝ Աբ). տող՝ 7: Կարդալ. Ա՝ «/// բազում /// դարմանեալ մինչ /// Աղուանից հասան///», Աբ՝ «/// եւ ի նմին աւուր մինչդեռ յուրախութեանն էր... փութապէս չոգա եւ սիրով ///»:



Նմուշ Աբ

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, դոնակի ստ. մասը եւ մէջքի վր. մասը վնասուած, կապիչներն ու գամերն ընկած, լուսանցակողերի կարմիրը հիմնականում թափուած, գունափոխուած. պտոկպիպ-ի լս-ը գրեթէ 4 սմ-ի չափով պատռուած. թերթերին աղտոտուածութեան հետքեր, ցեցի անցքեր, մի շարք թերթերի թափուած մասերը լրացուած հետագայի թղթով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տե՛ս ձեռ. 1576, 4ա-368բ: 1/2ա-5ա: 2/5ա-7ա: 3/7բ-10բ: 4/11ա-2բ: 5/12բ-4ա: 6/14ա-6ա: 7/16ա-7բ: 8/17բ-9բ: 9/19բ-21բ: 10/21բ-3ա: 11/23ա-5ա: 12/25ա-7ա: 13/27ա-31ա: 14/31ա-3բ: 15/33բ-5ա: 16/35ա-7ա: 17/37ա-8ա: 18/38ա-40բ: 19/40բ-2բ: 20/42բ-4ա: 21/44ա-6բ: 22/46բ-8ա: 23/48ա-50ա: 24/50աբ: 25/51ա-2բ: 26/52բ-6բ: 27/56բ-62ա: 28/62ա-70բ: 29/70բ-80բ: 30/80բ-8բ: 31/88բ-95ա: 32/95բ-7ա: 33/97ա-9բ: 34/99բ-101ա: 35/101ա-2բ: 36/103ա-4բ: 37/104բ-6ա: 38/106ա-8բ: 39/108բ-17բ: 40/118ա-20ա: 41/121ա-7բ: 42/127բ-34ա: 43/134ա-54ա: 44/154ա-7բ: 45/157բ-64բ: 46/165ա-7ա: 47/167ա-8բ: 48/168բ-70ա: 49/170ա-1բ: 50/171բ-3ա: 51/173ա-4ա: 52/174ա-6ա: 53/176աբ-80բ: 54/180բ-1բ: 55/181բ-4ա: 56/184ա-5բ: 57/185բ-8ա: 58/188ա-93բ: 59/193բ-5բ: 60/195բ-8ա: 61/198ա-9բ: 62/199բ-201ա: 63/201ա-2բ: 64/202բ-4բ: 65/205ա-6բ: 66/206բ-8բ: 67/209ա-10ա: 68/210ա-1բ: 69/211բ-3ա: 70/213ա-4ա: 71/214ա-5բ: 72/215բ-6բ: 73/216բ-8ա: 74/218ա-20բ: 75/220բ-2ա: 76/222ա-4ա: 77/224ա-7ա: 78/227ա-9ա: 79/229ա-31ա: 80/231ա-2ա: 81/232ա-4ա: 82/234ա-45բ, 300բ-1ա: 83/245բ-9բ: 84/249բ-54բ: 85/255ա-8բ: 86/259ա-77բ: 87/278ա-97ա: 88/301բ-20ա: 89/297ա-300բ, 325բ-7ա: 90/328ա-31բ (՝ չիք): 91/324ա-5բ: 92/չիք: 93/322ա-3ա: 94/323ա-4ա: 95/չիք: 96/321բ-2ա: Ունի՝

1. *1աբ* Յաղագս շարականացն, թէ ով է ասացեալ – *Նախ Մեծն Մեսրովպ զկարգն ապաշխարութեան... եւ ոմանք ասեն, թէ Սիւնեցոյն է:*

2. *321բ* Կիրակմտի. ՍՏ. ՀԲ. – *Անըսկիզբն Աստըւած, համապայծառ, ամենասուրբ երրորդութիւն... զաստուածային լոյս քո ծագեա՛ յանձինըս մեր աւրՙ:*

3. *327աբ* ԲԿ. Տ. *Սարսափելի որոտմամբ եւ ահագին զաւրութեամբ («ՍԱՐԴԻՍ»)... ԱԿ. Մ. Ով գերահրաշ ծաղիկ բուրեալ... ԴՋ. Մ. Ուրախացի՛ր, Աստուածածի՛ն, վերաւրհնեալդ ի սրովբէից...*

4. *331բ* Շարական գեղարդեանն – *ԲՋ. Իսկ դու պարծանք ես պարծանաց... արտաբերէր, որով փրկիմք եւ հաղորդիմք ի /// (վջ.):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

208բ Ջանպիտան եւ զանարժան գծող Մաթէոս *սուտանուն կրաւնաւոր յիշեցէ՛ք ի սուրբ յաղաւթս ձեր, ո՛վ սուրբ եղբարք:*

*277բ Ջանպիտան գծող սորին զ*Մաթէոս *անարժան եւ զստացող զԴանիէլ կուսակրաւն աբեղայ յիշեցէ՛ք ի սուրբ յաղաւթս ձեր, ո՛վ սուրբ եղբարք, եւ Աստուած զձեզ յիշէ:*

320ա Փա՛ռք ամենասուրբ երրորդութեանն՝ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Ի ծագմանէ բանին Աստուծոյ լուսաւորեալք եւ ի շնորհաբաշխ Հոգւոյն Սրբոյ մաքրազարդեալք ի մերոց պետաց, ի հոգեկիր արանց, ի հայկազանց սեռից, յուղղափառ հայրապետաց եւ աստուածաբան վարդապետաց, ներհմտացեալք կրթական վերծանութեամբ, քաջոլորակ բաժանմամբ ձայնից երաժշտականաց շարակարգեցին զերգս շարականաց վիպասան չափաբանութեամբ բոլոր տարոյն, ըստ հոլո[վ]ման մեծ արուսեկին, յաղագս տէրունական տօնից եւ ամենայն սրբոց ի պահքս ապաշխարութեան եւ ի հանգիստ ննջեցելոցն ի Քրիստոս, եղանակեցին երգ

աւրհնութեան ի պայծառութիւն տաւնից եւ ի պատիւ փառացն Աստուծոյ, ի համաձայնութիւն հրեշտակաց եւ ի մասնակցութիւն սրբոց եւ ի հրճուանս եկեղեցական դասուց: Արդ, ցանկացօղ եղեւ այսմ աստուածա|320բ|շունչ երգարանիս Դանիէլ *աբեղայ, եւ ետ գծագրել մեծաւ ծախիւք՝ ի վայելս վայելուչ անձին իւրոյ եւ յիշատակ իւր եւ ծնաւղաց իւրոց՝ հաւր իւր՝* Դաւթի *եւ մօրն իւր՝* Կանէֆի, *փոխեցելոցն ի Քրիստոս, եւ հարազատ եղբաւր իւրոյ՝* Սամուէլ *քահանայի, հանդերձ ծաղկերանկ զաւակաւք, եւ զհաւրեղբայրն իւր՝* զՄարտիրոս *քահանայ, որոյ յիշատակ նոցին աւրհնութեամբ եղիցի:*

Արդ, եղեւ աւարտ գրչութեան այսմ մեծահանդէս, ոսկիազարդ եւ հոգելից տառիս ի շրջագայութեան հայկազեան տումարի ՋԱ. (1452), ի դառն եւ ի չար ժամանակի, որով նեղիմք ի բռնութենէ անօրինաց, ի հայրապետութեան տեառն Գրիգորի՝ *յառաքելական աթոռն ի* Սուրբ Էջմիածինն, *որ ի Վաղարշապատ, ի սուրբ եւ ի գերահռչակ ուխտս, որ կոչի* Այրիվանք՝ *ի սկիզբն եւ ի մայր ամենայն վանորայից, ընդ հովանեաւ լուսոյ մաւր* Սուրբ Աստուածածնին *եւ արեամբ ներկեալ անմահին Յիսուսի սուրբ գեղարդեանն, եւ այլ սրբոցս, որ աստ հաւաքեալ կան, ձեռամբ ամենամեղ եւ փգուն գրչի՝* Մաթէոսի, *որ զանունս միայն ունիմ կրօնաւորի, ի խնդրոյ եւ յարդեանցս երիցս երանեալ* Դանիէլ *կրօնաւորի, վասն որոյ յերեսս անկեալ |321ա| աղաչեմք զամենեսեան, որք լուսաւորիք սովաւ ուսմամբ կամ գաղափար առնելով, յիշեցէ՛ք ի Քրիստոս զվերոյգրեալ ստացաւղք տառիս՝* Դանիէլ *աբեղայ, հանդերձ ծնօղաւք եւ ամենայն արեան մերձաւորաւք: Յիշեցէ՛ք ի Քրիստոս ասելով ի խորոց սրտէ, թէ Տէ՛ր Աստուած, ողորմեա՛ նոցա եւ ջնջեա՛ գձեռագիր յանցանաց նոցա եւ գրեա՛ զնոսա ի գիրն կենաց: Ընդ նոսին եւ զիս՝ զբազմամեղ ոգի* Մաթէոս, *որ եղէ գրիչ եւ սպասաւոր այսմ իրագործութեան ի գիր, ըստ իմում կարի Խլկեցի աւրինակաւ՝ բանիւ եւ եղանակաւ ստուգեալ, եւ եդի զսայ շաղկապ սիրոյ ի մէջ հոգեւոր հարագատիս մեր՝* Դանիէլի, *որոյ Տէր Աստուած վայելեալ տացէ բազմամեա ժամանակաւ: Ընդ որս եւ ես անկեալ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք ի տեսութիւն վայելչութեան, եւ որք աւգտիք կամ ընդաւրինակէք, յիշեցէ՛ք ի Քրիստոս զիս՝* զՄաթէոս *գրիչ, եւ զծնօղսն իմ եւ զապաշխարող քոյրս մեր՝* Ղատերես, *որ բազում աշխատանք ունի ի վերայ մեր: Եղիցի յիշատակ մասին ժառանգութեան ընդ սուրբս ամենայն, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որով յիշողացդ եւ յիշեցելոցս առ հասարակ ողորմեացի. եւ նմա փառք յաւիտեանս. ամէն, եղիցի, եղիցի:*

Տե՛ս Ժե. դ. յիշ-f, Բ., էջ 15-16, Հմր 19:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *Ա. կազմաստառին սոսնձած թղթին (1871 թ., շղագիր) յիշատակ եառու այս շարականս* Մայնի *հոգու համար, թող Աստուած վեր առնի ի ձեռաց նորա ի հաճոյս իւր. ամէն,* Թադէոս Երուանդեանց, Սանահին, *1871 ամի:*

2. *2ա ստ. լս. (ԺԹ. դ., շղագիր) Յիշատակ է շարականս* Մայնին *եւ* Ստեփանոսին Մաղաքեանց:

3. *2բ ստ. լս. (ԺԹ. դ., նոտրգիր) Ընկա՛լ, Տէ՛ր, զփոքրս ի տկարէս ու տո՛ւր |3ա| զմեծս ի հզօրէս առ այս աւանդ |3բ| մաղթանաց ու տո՛ւր գողորմութիւնդ շնորհաց |4ա| ես մեռանիմ, / դանամ ի հող, / գիրս մնայ յիշատակող,* Թադէոս Երուանդեանց:

Տե՛ս Ո. Եգանեան, Աշխատութիւններ, պատր. Գէորգ Տէր-Վարդանեան, Երեւան, 2014, էջ 40:


ՆՇՈՒՄ՝ *Ա. կազմաստառին սոսնձած թղթին՝ «ՋԱ. – 1452, Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս», «Հմր 14, շարական չիք թիւ», «Հմր 1145/3402, ԺՋ.՝ ջնջած», 12ա ստ. լս.՝ «Սանահին», 331բ՝ «Թադէոսի շարական»:*

3403
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ, ՊԱՏՄՈՒԹԻԻՆ ՏԱՐՕՆՈՅ

ԱՄՍԴԷԼՕՏԱՄ ՌՄԷ. – 1758

ԳՐԻՉ՝ Սիմոն մհտ. (1բ-62բ), Սողոմոն աբղ (62բ-135բ):

ԹԵՐԹ՝ 136 (ստ. լս. գրչի էջակալում՝ 1-269, որ է՝ 1բ-136բ). չգրուած՝ 136աբ: ՊՐԱԿ՝ Ա-ԺԲ×12 (ԺԱ. 10, ԺԲ 6): ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ լատինատառ «GR», «ANT», թագապսակ զինանշան, որը եզերող ժապաւէնին լատինատառ անընկալելի գրութիւն, փայտէ ցանկապատ մուտքով, ներսում տղամարդ՝ զինուորական հանդերձով եւ գաւազանով, եւ թագակիր առիւծ՝ սուրը ձեռքին, առիւծի գլխավերեւում՝ «PRO PATRIA»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15,3×9,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, մատիտով սահմանագծուած (9,5×5,2): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 98ա): ՏՈՂ՝ 21: ԿԱՋՄ՝ ոսկեզօծ դարչնագոյն դրոշմազարդ կաշի (տպարանային, եւրոպական ոճի). միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ սպիտակ թուղթ. լուսանցակողերը՝ դրոշմազարդ բրոնզ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ (վջ.)՝ սպիտակ չգրուած թուղթ. լուսագծերով, մասն կազմաստառի (պհպ. Բ.):



Նմուշ 98ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Ձարդագիր՝ թոչնագիր:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, մէջի ստ. մասը վնասուած. գրադաշտը խոնաւութիւնից գունափոխուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *1ա-97ա* Պատմութիւն երկրին Տարօնոյ, զոր գրեաց Ձենոբ Ասորւոց եպիսկոպոսն՝ հրամանաւ Լուսաւորչի մերոյ սրբոյն Գրիգորի

Տե՛ս ձեռ. 1328, 242ա-333բ: ա/4բ-6բ: բ/6բ-18բ: գ/18բ-38ա: դ/38բ-48բ: ե/48բ-55բ: զ/56ա-69բ: է/69բ-85ա: ը/85ա-91ա: թ/91ա-5ա:

Ունի՝

– *1բ-4ա* Բան սակաւուկ առ բարեմիտ ընթերցօղսդ – *Յորժամ նիւթ իմն պատուական եկեալ յերկրէ հեռաստանէ՝ գտանիցի ի տեղւոջ ուրեք... որ արար զամենայն եւ է օրհնեալ անզրաւ յաւիտենիւ. ամէն: Պատմողական այսմիկ տառիս, / ականջադրուկ թէ եղիցիս, / ղօղեալ գործոց մերոց տոհմիս, / տեղեակ ոմանցն առլինիցիս:*

– *95բ-7ա* Ցանկ եւ ցուցակ գրոյս ըստ համարոյ երեսաց թղթոցն – *Գրել Սրբոյն Գրիգորի առ Ղեւոնդէս. Ա. .....7 ... Վասն գալստեանն Վարդուհրայ. Խ. 178:*

ա. *97ա-100բ* Վասն մահուան Տիրանայ՝ որդւոյ Խաջին Վահանայ, եւ վասն պատերազմին, զոր արար յեզր Աղի ծովուն – *Յետ այս ամենայնի զրուցատարութեանս՝ ի Պարս սուգ անասելի եղեւ... որ ի ձեռնկերտ՝ ի Տարօն քաղաքի, ի փառս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ՝ երրեակ անձանցն եւ միոյ բնութեանն, որում պատիւ եւ փառք անզրաւ յաւիտենիւ. ամէն:*

բ. *100բ-3բ* Վասն գիտելոյ զպատճառ խաչին Ծիծառնէոյ, թե ուստի կամ ձեռօք բերաւ ի Հայս կամ որպէս եւ յորում ժամանակի կայր ի Ծիծառնէ – *Ընդ ժամանակս թագաւորութեան կայսերն Հերակլեայ մեծի... եւ փոխեցաւ առ ըղձալին իւր բարեպաշտ ընթացիւք ի փառս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:*

Տե՛ս Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, աշխ. Ա. Աբրահամեանի, Երեւան, 1941, էջ 31-289 (ձեռագիրս մասին՝ էջ 19), Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարաւնոյ, աշխ. Ա. Յակոբեանի, Մատենագիրք հայոց, հտ. Ե. (է. դար), Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 971-1126:

2. *103բ-5բ* Յիշատակարան տեառն Յօհաննու եպիսկոպոսի Մամիկոնէից տանն՝ Ժողովողի պատմութեանս ի միում տեղւոջ – *Ընդ ամս ժամանակաց Գրիգորի մերոյ Լուսաւորչին գրեալ մեծին Ձենոբայ Ասորւոյ զոմանս... եւ անդ ցրուեցեալ, այսքանս գտանի այժմ առ ձեռն պատրաստ, զոր ընկալեալ գոհասջիք զՏեառնէ:*

3. ա. *105բ-10բ* Առ սուրբն Յօհաննէս՝ մեծն ի մարգարէս, Պաղտասար պարտաւոր դպրի ասացեալ – *Սուրբ Յօհաննէս գերհրաշական / անճառ շնորհին ընդունարան... որով Քրիստոսին հաճոյ գըտեալ, / արքայութեանն արժանացեալ:*

բ. *110բ-1ա* Նորին դարձեալ առ սուրբն Յօհաննէս («Ի ՊԱՂՏԱՍԱՐԷ») – *Ի յարգանդէ մաքրազարդեալ, / ձայն բարբառոյ անւանեցեալ... մեզ յարաժամ օգնեա՛ յերկնէ, սո՛ւրբ Յօհաննէս, ի բնութենէս գերազանցեալ:*

գ. *111բ-8ա* Նորին յետնեցելոյ ասացեալ առ սուրբն Գրիգորիոս Լուսաւորիչն Հայաստանեայց («Ի ՊԱՂՏԱՍԱՐԷ ՈՒՄԵՄՆԷ ԲԱՆ ԳՈՎԵՍՏԱԿԱՆ ՇԻՆԵՑԵԱԼ ՏԱՄԲ ՁԱՓԻԼՈՎ ԱՌ ՍՈՒՐԲՆ ԳՐԻԳՈՐԻՈՍ») – *Ի վերնական լուսոյն յաւէտ պատուեցեալ, / իմաստութեամբ նորին իսկապէս լցեալ... ո՛վ զարդ Հայաստանեայց եւ հովիւ առաջի անմահին, միշտ յիշեսցես զիս:*

4. *118ա-34ա* Յիշատակարան պատմագրաբար – *Գթութեամբն Աստուծոյ մեք՝ նուաստ ծառայքս նորա Գրիգոր եւ Յօհաննէս, սպասաւորք սուրբ Աւետարանին... եւ որք յիշէքդ, լիջիք յիշեցեալք ի Քրիստոսէ Յիսուսէ՝ յուսոյն մերմէ յաւուրն այցելութեան, հանդերձ ննջեցելովք ձերովք. ամէն:*

–*134բ* [Ցանկ] – *Վասն մահուանն Տիրանայ եւ պատերազմին, որ յեզր Աղի ծովուն .....190 ... Յիշատակարան պատմագրաբար 232:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

135ա Փա՛ռք, պաշտօն եւ գոհութիւն ամենասուրբ երրորդութեան եւ միոյ աստուածութեան՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Որ եւ բարեխօսութեամբ եւ մաղթանօք արագահաս եւ երջանիկ վկային իւրոյ՝ Միհնասայ *զօրավարին, ետ կարողութիւն ինձ՝ նուաստիս, կրկին գրել զվերատ գիրքս այս, որ կոչի Ձենոբ պատմագիրք, որ յառաջմանէ գրեալ էր մինչեւ ի 122 թղթահամարն՝ ձեռամբ աշակերտի* Ամասիացի Յովհաննէս *վարդապետին,* Կեսարացի *մահտեսի* Կարապետի *որդւոյ՝ մահտեսի* Սիմօնին*: Եւ անգուստ սկսայ գրել եւ ի կատար հասուցանել առընթեր վերոյգրեալ* Յովհաննէս *վարդապետին, եւ ուսանելով զայս գիրս ի նմանէ ես՝* Վաղարշապատեցի Խեչումէնց Գրիգորի *որդի* Սօղոմոն *աբեղայս, ի թուոյ Փրկչին 1758 եւ յամսեանն Օգոստոսի 25, ընդ հովանեաւ* Սուրբ Հոգի *եկեղեցւոյս հայոց յԱմստէլօտամայ: Եւ |135բ| արդ, երեսս անկեալ եւ ի հող մաձեալ եւ առաքիւր առաջի գարշապարաց համայնից եղբայրութեան ձերում՝ կողկողագին դիմօք աղաչեմ զպատահիլն եւ ի զբօսնուլն ձեր, ճեմիւ ընթերցման եւ սիրով ուղղափառութեան յիշեցէ՛ք ի Քրիստոս, ի մաքրափայլ աղօթս ձեր զհանգուցեալ ծնօղս իմ, եւ որք միանգամ Հայր մերիս յիշողաց զիս՝ անարդիւնս, ինքն եղիցի յիշեալ ի Քրիստոսէ յուսոյն մերոյ ի միւսանգամ գալստեան իւրոյ. ամէն:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *Ա. կազմաստառ (1859 թ., շինծու բոլորգիր) Գրեալ յԱմսդելօդամ, յամի Տեառն 1758, էհաս ի ձեռս իմ յամին 1859։*

2. *135բ (1859 թ., շղագիր) Կարդացի 1859 Մարտի 20։*

ՆՇՈՒՄ՝ *Ա. կազմաստառ՝ «Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս», Ա. կազմաստառին սոսնձած թղթին՝* «Шкаф полка, N 22», *1ա՝ «Հ[ին] 1151/3403,* Отъ Г. Галустова, *Ք. Պատկանեան մատենադարան, Ջենոբ Գլակ, վպ не изъ церковныхъ ли книг?»։*


ԳՐՉԱՓՈՐՁ՝ *1ա՝ անհասկանալի բառ, թուեր։*

3404
ՇԱՐԱԿՆՈՑ

ժէ. դար

ԳՐԻՉ՝ Աւետիս Ֆիյ։ ՍՏԱՑՈՂ՝ Յակոբ դպիր։

ԹԵՐԹ՝ 264։ ՊՐԱԿ՝ Ա-Լ×12 (Ա 5, Բ, Գ, Ժ, ԺԳ, ԻԸ 11, Դ, Է, ԺԸ-ԺԹ, ԻԳ 10, Ը, Լ 7, ԺՋ, ԻԲ, ԻԴ, ԻԹ 8, ԻԱ, ԻԵ-ԻԷ՝ չիք)։ ՆԻՒԹ՝ թուղթ։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 13,4×10,2։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (9,5×6)։ ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 152ա)։ ՏՈՂ՝ 22-23։ ԿԱՋՄ՝ շագանակագոյն կաշի՝ երկու կապիչով. միջուկը՝ տախտակ. աստառը՝ ծաղկաւոր մետաքս։ ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա-Ջ+Է-ԺԱ՝ չգրուած թուղթ (Ջա՝ գրուած)։



Նմուշ 152ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – ձակատազարդ՝ 99բ, 132ա։ Ջարդագիր՝ թոչնագիր, հանգուցագիր։ Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, վարդագոյն։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. վերականգնուած նոր տախտակներով եւ կաշուով, լուսանցակողերը կեղտոտուած, սեւացած. գրադաշտը խոնաւութիւնից գունափոխուած, խունացած, կեղտոտուած, ցեցի անցքերով, ընդմէջ թ. 5-6ի, 61-2ի, 78-9ի, 101-2ի, 125-6ի, 160-1ի, 168-9ի, 180-1ի, 262-3ի 1ական, 16-7ի, 218-9ի 2ական, 71-2ի, 189-90ի, 229-30ի 3ական, 211-2ի 14, 237-8ի 40, 255-6ի 4 եւ վերջից անորոշ հանակի թերթ ընկած, գրեթէ բոլոր թերթերի թափուած մասերը լրացուած հետագայի թղթով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տե՛ս ձեռ. 1576, 4ա-368բ։ 1/1ա-4ա։ 2/4ա-5բ (Որ ի բարձրութիւնս երկնից...՝ թափուած)։ 3/6ա-8ա (սկ. /// բերկրեալ կոյս Մարիամ...)։ 4/8բ-10ա։ 5/10բ-2ա։ 6/12ա-4ա։ 7/14ա-6ա։ 8/16աբ (Ըզքեզ աղաչեմք... Որ ի հրեղէն աթոռ... Ըզքեզ կոյս եւ մայր...՝ թափուած)։ 9/17ա-8ա (սկ. /// բարձր արարէք ըզնա յաւիտեան...)։ 10/18ա-20ա։ 11/20ա-2ա։ 12/22ա-4բ։ 13/24բ-9ա։ 14/29ա-31բ։ 15/31բ-3բ։ 16/33բ-5բ։ 17/37բ-9ա։ 18/39ա-41բ։ 19/41բ-3բ։ 20/43բ-6ա (ունի՝ ԳՋ. ճշ. Այսօր բերկրանաւք լըցեալ ցնծութեամբ...)։ 21/46ա-8բ։ 22/48բ-50բ։ 23/50բ-2բ։ 24/չիք։ 25/53ա-5ա։ 26/55ա-9ա (58բ-9ա ստ. լս. գրչից՝ «Ի հոսել հրեղէն գետոց փորձանաց ազգ ազանեաց վերանալ հետ արգարոցն |59ա| ի մարգկան ինձ շնորհեա՛, թեւս (=թերեւս) ողորմեա՛յ ինձ, Աստուա՛ծ», 58բ նոտրգիր՝ «Մ վ եղբայր, օրինակի մէջն չկայր, եգեւ գրեցաք, թողութիւն արարէ՛ք»)։ 27/59բ-65բ (Զանուն քո, Քրիստո՛ս, աւրհնեմք... Ծով կէնցաղոյս.., ի համբառնալ իմում... Որ խոնարհեցար...՝ թափուած)։ 28/65բ-72բ (Յոյս իմ ես... Ընդ առաւաւտըս կանխեցից... Տէր Աստըւած հարցըն մերոց... Մեղք իմ բազում են... Ամենայն երկիր... Մանկանցն ըզձայնըն... Թիւնս իմ։ Մեղայ քեզ... Ամենայն արարածք... Աստըւած հրզաւր թագաւոր... եկեսցէ Տէր ի վերայ մեր... Տէր ըզլուր միւսանգամ... Որ աւրհնիս ի հրեշտակաց... եւ աւրհնեցէք զանուն Տեառն...՝ թափուած)։ 29/72բ-83ա (Զաւրհներգութիւնըս բանաւոր... Պահապան խընդրեմք... Սուրբ Աստըւած Հայր անըսկիզբն... Քրիստոս Աստըւած... Ջանըսկիզբն Աստըւած զՀայրն...՝ թափուած)։ 30/83ա-92ա։ 31/92ա-9բ։ 32/99բ-101բ։ 33/102ա-3ա (սկ. /// [ձերոց]ն աւրհնաբանից ուրախութեամբ բարեբանեցէ՛ք...)։ 34/103աբ։ 35/103բ-5բ։ 36/105բ-7բ։ 37/107բ-9ա։ 38/109ա-12ա։ 39/112բ-5բ, 118բ-25բ (արդ, ընդ վիմացն, որ շարժէին, շարժեա՛յ զանշարժ սիր[տս] /// վջ.)։ 40/115բ-8ա։ 41/132ա-8բ։ 42/139ա-43բ (ա՝ թափուած)։ 43/143բ-62ա (Փառաբանակից Հաւր... Որ բարեբանեալդ ես... Ի խաչ ելեր... Կանանցըն կանխելով... Որ ի քառակերպեան... Թիւնս իմ։ Ողորմեա՛ մեզ... Ահագին ձայնիւըդ... Յորժամ ի խաչին...՝ թափուած)։ 44/162ա-6բ։ 45/166բ-72բ (Որ զամենազաւր զաւրութիւնըդ... Յարեար երեւեցար... Յորժամ եկին ի գերեզմանն... Այսաւր ցընծան... Որ ըզկերպարանըս... Էջ հրեշտակն... Փառաւորեալ է...՝ թափուած)։ 46/173ա-5բ։ 47/175բ-7ա։ 48/177ա-9ա։ 49/179ա-80բ։ 50/180բ-1ա (Այսաւր ցընծան դասք... Անեղանելիդ Աստուած... Իջեր, Տէ՛ր... Այսաւր աղբեր...՝ թափուած)։ 51/181ա-2բ։

52/182բ-4բ: 53/184բ-9բ: 54/189բ-90բ (տեսանէր ըզՅիսուս ի կայր առ նա եւ աղաղակէր եւ ա[սէ] /// վջ.): 55/191աբ (սկ. /// [գալ]ըստեանն: Հրաշալի գարմացմամբ երանելին...): 56/191բ-3ա: 57/193ա-5բ: 58/195բ-202ա: 59/202ա-4ա: 60/204ա-6բ: 61/207ա-8բ: 62/208բ-10բ: 63/210բ-2ա: 64/212աբ (Որ ըզնախամաւրըն... խորանայարկ կամարանըման... Որ ունիս իշխանութիւն... Անըսկիզբն Աստուած... Անթառամ ծաղիկ...՝ թափուած): 65-71/չիք: 72/213ա-4ա (սկ. /// [սրովբէից ան]տեսաբար ահիւ [պատուեալ] քեզ երկրըպագեմ յաւգնութիւն...): 73/214ա-5բ: 74/215բ-8ա: 75/218ա-9բ (մահուամբ առիթ գոլ կենաց եւ մահացուցիչ նախա[ստեղծին] /// վջ.): 76/220ա (սկ. /// բարձրեալ թագաւոր, որ վասն մեր...): 77/220ա-3բ: 78/223բ-5բ: 79/225բ-8ա (կրկն.՝ 35բ-7բ): 80/228ա-9բ: 81/229բ-30բ (անարուեստ աթոռք բազմաչեայ քերովբէք /// վջ.): 82/231ա-8բ (սկ. ///աց գառաքելոց սըրբոց եւ գմարգարէից ջրեցան... արիացեալք առ հակառակն /// վջ., ժ. կրկն.՝ 59բ, գ, ժգ-ժդ՝ չիք): 83/չիք: 84/126ա-31ա (սկ. /// արարչական Բանին հրաման...): 85-86/չիք: 87/239ա-56բ (սկ. /// [ընկա՛լ եւ արժ]անաւորեա՛ հանգըս///, որ ըզգըժոխս աւերեցէր եւ ըզգերեալսն փըրկեցէր /// վջ.): 88/257ա-64բ (սկ. /// [քրովբէ]ական աթոռ: Որ ընդրեցեր քեզ վերըստին... Հաստատութիւն իմ... Ի գիշերաց կանխեալ... Անմահ թագաւոր... ԶԱստուածն ամենեցուն... Անապականութեան աղբեր... Անեղին եղեալ... Աւգնական ընդունելի եղեւ իմ...՝ թափուած, հարսն երկնից եւ գուռն [կնքեալ], զոր [մարգարէն եառեա] /// վջ.): 89-92/չիք: 93/131ա-2ա: 94-96/չիք:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. Գրչի *99բ ես՝ անարժան գծօղ* Աւետիս *սուտանուն քահանայ, եւ իմ ծնօղն <իմ> յիշեա՛յ:*

118ա Մեռեալ հոգիս եւ փաբուր (=թափուր) ի բարեաց գործոց յիշեսցի՛ք առաջի Յիսուս Քրիստոսի եւ ողորմութեան արժան արա՛յ զԱւետիս սուտանուն քահանայ, լօք անուամբ եմ ի մարմնի, լալոտ աչօք գքրեցի ի ղարիպութիւն: Վա՛յ անել, վա՛յ, զի կարի ⟨ատն է օտարութեան, |118բ| եւ գմեր բարեկամ Կիրակոս<ս>ն *եւ իւր կողակից* Շահաղէն *եւ իւր եղբայր* Սարգիսն, *եւ իւր կողակիցն՝* Եղիսաբեաւն, *որ բազում աշխատանք եւ երախտիք ունէին ի վերա մեր՝ կերակրելով եւ այլ բազում աշխատելով, փոխարէն աստի աշխատանացս գերկնային արգաւթիւն ստացէ ի գուգքն (=գոգն)* Աբրահամու. *ամէն:*

2. Ստացողի *172բ Ի նուաստ եւ անպիտան, սուտանուն* Յակոբ *գպիրս յիշեա՛ եւ Աստուած ողորմի ասա՛, Աստուած ձեզ ողորմեսցի իւր միւսանգամ գալըստեանն. ամէն: Հայր մէր որ:*

Ծնթ. Գիրը նախորդից տարբեր է, յիշատակարանը գրուած է սկզբնապէս ազատ թողած տեղում, ստացումը հաւանաբար եղել է գրչութիւնից կարճ ժամանակ անց:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *126բ լս. (1691 թ., անարուեստ նոտրգիր) ես անարժան* Պարխուտար *գիրեցի: ես՝ անարժան* Տուրասանս *գրեցի, որ թվին ՌՃԽ.ի (1691) էր, ես ո///:*

181ա լս. ես՝ Պարխուտարս, *գիրեցի թվին ՌՃԽ. (1691) էր, Յունվարի Ժ.:*

2. *99բ լս. (1698 թ., անարուեստ նոտրգիր) ես՝ անարժան* Պարխուտարս, *գիրեցի յիշատակ* Մարեանիին, *օվ կարդայ, մին բերան Աստուած ողորմի ասի, իւր հոգոյն. ամէն: ես անարժան* Պարխուտար *գիրեցի թվի ՌՃԽէ. (1698), յիշատակ* Մարեանիին, *օվ կարդա (չշարունակած, նման՝ 132ա լս.):*

3. *98բ ստ. լս. (ժէ. դ, անարուեստ նոտրգիր) Շարակ<ան>նոցս* Պարխ[ա]տրիին այ՝ *եղբայր* Տուրասանայ *(նման՝ 173ա):*

181բ լս. ես՝ Պարխուտարս, *գիրեցի յիշատակ* Պալասանիին, Մարեանիին, Թամամիին, Պարոիին, Զամարիին, *որ մենք առանք էս Շարակնոցս* Պարխուդարիին *համար (նման՝ 52բ, 90բ):*

4. *161բ լս. (1701 թ., անարուեստ նոտրգիր) Թվ. ՌՃԾ. (1701) ես՝ տէր* Պաղտասարս *գրեցի պարով /// պարի, որ բնորայկս անուն կեղցինք սիրես տան կայքօզ ///:*

5. *Պհպ. Զա (ԺԹ. դ-ի վերջ, շղագիր, Մ. եպս. Սմբատեանի ձեռքով) Շարական ձեռագիր, գրւած յԱւետիս քահանայէ Զէ. թվին 1258, տե՛ս* Ղազարու Յարութիւն *եւ ի* Յակոբ *դպրէ, տե՛ս Հոգեգալստեան կանոնն:*

Ծնթ. Հաւանաբար նկատի ուի 118ա էջում գրչի յիշատակարանից յետոյ իր իսկ ձեռքով աւելացրած հետեւեալը՝ «թվիս Զէ. (1258)», նաեւ 99բ՝ «յԱւետիս բահանայէ գրեալ»:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *232բ սեւ թանաքով բոլորակ՝ շատ վատ գրոշմուած, անընթեռնելի:*

ՆՇՈՒՄ՝ *պհպ. Գա, եա՝ «3404», պհպ. Զա՝ «Հ՚ր 1167», «ԺԶ., Մ[եսրոպ] եպ[իսկոպոս]», պհպ. Ըբ.ին սոսնձած թղթին՝ «Վերակազմված է նոր կաշվով, նոր կազմաստառով եւ նոր գծագրությամբ: Երեւան 1969: Գլխ. վերականգնիչ՝ Ա. Խաչատրյան», պհպ. Թա՝ «Վերականգնված է նոր տախտակներով եւ կաշվով, 22.03.2022 թ., Մ. Միրզոյան»:*


ԳՐԶԱՓՈՐՁ՝ *1ա, 6բ ստ. լս.՝ անընթեռնելի, 61բ լս.՝ «/// գիրեցի էս գիրս ասաց Տէր ///», 74բ ստ. լս.՝ «ես՝ Կոթցի Մատուրս, գիր», 33բ ստ. լս., 49 լս., 90ա ստ. լս., 132բ լս., 168բ, 173բ, 190բ, 202ա, 212բ, 220բ, 230բ, 264աբ՝ մասնիկներ, առանձին բառեր, անկապակից տառեր:*

3405
ԻԳՆԱՏԻՈՍ, ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՂՈՒԿԱՍՈՒ

ՂՐԻՄ ՊՋ. – 1357

ԳՐԻՋ՝ Ստեփանոս: ՍՏԱՑՈՂ՝ Կարապետ:


ԹԵՐԹ՝ 373: ՊՐԱԿ՝ Ա-ԼԱ×12 (ԼԱ 13): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14,7×11: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (10,5×7): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 250ա): ՏՈՂ՝ 22: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դոնակով. միջուկը՝ տախտակ. աստառը՝ կապոյտ կտաւ (դոնակինը՝ դրոշմազարդ կաշի). լուսանցակողերը՝ վարդագոյն: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+ԴԵ՝ սպիտակ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ եռամահիկ (պհպ. ԴԵ), մասն կազմաստառի (պհպ. Ա):



Նմուշ 250ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Ղուկաս՝ 2բ: Լս-ային՝ Գաբրիէլ հրեշտակապետ (Աւետումն)՝ 20ա: Կիսախոռան՝ 3ա: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն: Ձարդագիր՝ թռչնագիր, կենդանագիր, հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, կանաչ, կապոյտ, դեղին, նարնջի, մանուշակագոյն, վարդագոյն, սեւ, սպիտակ, ոսկի:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Աւետարան Մարկոսի: Թ. դ.: ԲԳ+ՋԷ՝ ստացուած 1 թերթի ընդլայնակի կիսումով եւ հատումով (բնագիրը կտրած) եւ ընդերկայնակի ծալումով ու տարբեր կողմերի եզրահատումով, թերթի մի կէսը սկզբում, միւսը՝ վերջում: Մագաղաթ 20,5×14,5. երկսիւն (19×9,5, 15,5×10,5). բոլորագիծ երկաթագիր (նմուշ՝ Գբ). տող՝ 7: Ունի լս-ային համաբարբառ: Կարդալ. Ձբ, Բբ, Էա, Գա, Էբ, Գբ, Ձա, Բա՝ «ուներ ար[քայութեա]նն Աստուծոյ, հա[մարձակեց]աւ եմու[տ]... բանզի [զա]հի հարեալ էին եւ [ոչ] ումեք ինչ ասե[ցին], զի երկնչէին» (ԺԵ. 43 - ԺՋ. 8):



Նմուշ Գբ

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, կապիչներն ու գամերն ընկած, լուսանցակողերի կարմիրը թափուած. պտոկ-պհպ-ը մաշուած, ցեցի անցքերով, պհպ. ԴԵ՝ պոկուած, կեղտոտուած. գրադաշտը խոնաւութիւնից գունափոխուած, թերթերին զանազան հետքեր ու բծեր, թ. 12ը անջատ:

Ծնթ. Այս ձեռագրի Ստեփանոս գրչի Սուրխաթում գրածն է նաեւ ՄՄ 7598 ձեռագիրը՝ 1352 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա-372բ Մեկնութիւն Ղուկասու Աւետարանին, զոր արարեալ է Իգնատիոսի եպիսկոպոսի, ի խնդրոյ տեառն Գրիգորիսի Հայոց կաթուղիկոսի

Տե՛ս ձեռ. 1246, 163բ-306բ: Նխգր./1ա-2ա: ա/3ա-43բ: բ/43բ-71բ: գ/71բ-9բ: դ/79բ-90ա: ե/90ա-5ա: զ/95ա-100բ: է/100բ-13ա: ը/113ա-8ա: թ/118ա-27ա: ժ/127բ-44ա: ժա/144ա-56ա: ժբ/156ա-74բ: ժգ/174բ-91բ: ժդ/191բ-201բ: ժե/201բ-28ա: ժզ/228ա-57ա: ժէ/257ա-69ա: ժը/269ա-79ա: ժթ/279ա-95ա: ի/295ա-8ա: իա/298ա-310ա: իբ/310ա-26ա: իգ/326ա-40ա: իդ/340ա-72ա: Ընծայական/372աբ:

Ծնթ. Ձեռագիրս առտայայտուած չէ հետեւեալ գրքում. Սուրբ Գրքի հայերէն մեկնութիւնների մատենագիտութիւն, պատր. Ե. եպս. Պետրոսեան, Ա. Տեր-Ստեփանեան, Երեւան, 2002, էջ 90:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Ստացողի *372բ Շնորհիւ Տեառն սկսաւ եւ ողորմութեամբ նորին կատարեցաւ Աւետարանս ըստ Ղուկա՝ մեկնեալ* Իգնատիոսի *հայրապետի, ձեռամբ* Ստեփանոսի *աշխատասէր գրչի: Ի բարեխաւսութիւն ինձ՝ մեղաւորիս* Կարապետի, *եւ կենակցի իմոյ՝* Գուհար *տիկնա, եւ զաւակաց մերոց՝* Հիլալին, *եւ ծնաւղաց մերոց՝* Եսեբէյին *եւ* Մովսիսին *եւ* Աւգերին *եւ ամենայն զարմից, որք աւգտիք, մեղաց քաւութիւն հայցեցէ՛ք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ: Ի թվական ՊՋ. (1357) գրեցաւ եւ ի Մարտի Ի. (20) աւարտեցաւ ի փառս Աստուծոյ:*

Տե՛ս ԺԹ. դ. յիշ-ի, էջ 431-432, Հմ 516:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *373ա (1363 թ., բոլորգիր) Յամի ութ հարիւրերորդի տասներորդի երկրորդի՝ ըստ թուաբերութեան յաբեդական տոհմիս տումարի (1363) ստացաւ զմեկնութիւն սուրբ Աւետարանիս, որ ըստ Ղուկայ, արարեալ մեծ վարդապետին հայոց* Իգնատիոսի *պատուելի կրա[ւ]նաւորն* Գէորգէոս՝ *յոյժ փափագմամբ եւ յորդորամիտ սիրով, ի դաստիարակութիւն կենաց, ի հոգեւորն զարգանալ հասակի՝ լուսաւորելով ի պատուիրանաց Տեառն՝ ըստ ներքին մարդոյն, եւ յետ աստեացս մնասցէ յիշատակ անշէջ յեկեղեցիս եւ յորդիս իւր: Արդ, որք հանդիպիք փառաւոր եւ հրաշաբան մեկնութեան սրբոյն աւետարանիս, ուրախ լինելով ի ճաշակ սորա քաղցրութեան, յիշեսջի՛ք ի Տէր սրտի մտաւք զպատուելի |373բ| կուսակրաւն կրաւնաւորն* Գէորգէոս՝ *զստացաւղ սորա, եւ զծնաւղսն իւր՝ զպարոն* Ոսկեհեռն *եւ զՄամախաթուն՝ զփոխեալսն առ Քրիստոս, եւ զեղբայր սորա զՏատուրն, զԽաչատուրն,*

զՔրիստոսատուրն, զՄարտիրոսն *եւ զքուերսն եւ զամենայն ազգայինսն՝ զկենդանիս եւ զվախճանեալսն, որպէսզի տացէ սոցա խաղ[աղ]ական կենաւք վարել զկենցաղս ի կամս Աստուծոյ եւ հասանել հանդերձելոյն եւ նոցա հանգիստ ընդ հաճոյացեալ սուրբս ի վերինն* Երուսաղէմ, *ի մայրն որդւոց Սիովնի նորոյ: Եւ որ ոք սրտի մտաւք եւ սեռն սիրով յիշեսցէ ի միտս բարիս, յիշեսցի եւ ինքն ի Քրիստոսէ Յիսուսէ՝ յեկայքն ասել, աւրհնեալք Հաւր իմոյ ժառանգել զկեանսն յաւիտենական: Եւ քանզի գրեալ էր գիրս ձեռամբ ումեմն* Ստեփաննոսի՝ *ի խնդրոյ* Կարապետ *քահանայի, իսկ այժմ խանդաղատական սիրով խնդրեալ ի նմին* Կարապետ *քահանայէ կրաւնաւորս* Գէորգ, *որոյ հարկեալ ի սիրոյ սորա եւ ի պատուիրանաց Տեառն, թէ՝ Ամենայն, որ խնդրէ, տո՛ւր, եւ զսա* Գէորգ *կրաւնաւորին սեպհական յիշատակ: Յիշեսջի՛ք եւ զառաջին ստացողն զ*Կարապետ *եւ զ*Աւետ*ս միջնորդաւղ, եւ Աստուած զձեզ յիշէ, նմա փառք: Գրեցաւ ի* Ղրիմ* *քաղաք:*

* Ծնթ. Ձեռագրի գրչութեան վայրի Ղրիմ անունը մակաբերուած է այս վկայութիւնից:

Տե՛ս ԺԴ. դ. յիշ-ք, էջ 462-463, Հմր 561:

2. *Պհպ. Դա (1698 թ., նոտրգիր) Յիշատակ է Սուրբ Ղուկաս գլխի Աւետարանի մեկնիչս՝* Աստապատեցի Մարի Սարգսի *որդի, եւեթ անուն չնչին* Մարգարայ *աբեղիս, եւ եաու ի վանքն մեր* Սուրբ Ստեփաննոսայ *վկային՝ յիշատակ իմ հոգւոյս եւ մերոցն ամենայնի: Ով սուրբ վարդապետք եւ քահանայք եւ սարկաւագունք, յորժամ կարդայք, ի մի բերան Աստուած ողորմի ասէ՛ք իմ հոգւոյս եւ իմ մեղացս թողութիւն խնդրէ՛ք յԱստուծոյ, եւ դուք վարձն Աստուծոյ առնուք աստ եւ ի հանդերձեալսումն. ամէն: Հայր մեր որ: Գրեցաւ Նոյեմբեր ամսոյ ուրբին, թվին ՌՃԽԷ.ին (1698):*

3. *Պհպ. Դբ (1855 թ., շղագիր) Ստացեալ է իմ զայս արեգակս հոգւոյ մարդկան աստուածաբան վարդապետէ, որ յորջոր[ջ]ի խաստակրօն* Յօհաննէս *վարդապետ՝ վանահայր* Կարմիր *վանից* Սրբոյ Ստեփաննոսի Նախավկային *ներգո[=ե]ւեալ աշակերտ սորին* Ստեփաննոս *քահանայ* Մամիկոնեանց, *ի 1855 ամի, ի Մարտ:*

4. *Պհպ. Եա (1903 թ., շղագիր) Զայս մեկնութիւն Ղուկասու Աւետարանին նուիրեալն ինձ ի* Մուշեղ *քահանայէ* Մամիկոնեան, *նուիրեմ գրադարանի* Սրբոյ Էջմիածնի *յանուն տէր տէր* Մկրտիչ *վեհափառ կաթողիկոսի ամենայն Հայոց, ի 14 փետրուարի, 1903:* Մեսրովբ *արքեպիսկոպոս* Սմբատեանց*:*

Ծնթ. խմբ. Ձեռագրիս յիշատակարանները տե՛ս Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա, գրեց Մեսրովբ արեպս. Սմբատեանց, 1897-1904, Տփխիս, 1904, էջ 227-229, վերջում գրել է՝ «Մեկնութեան գիրս գտանի առ իս, եւ պատկանի Մուշեղ Բահանայի Մամիկոնեան Շահապանորոյ»: Սմբատեանցին աղբիւր ունենալով՝ Հ. Անտեանը հաւատարել է, որ ձեռագիրս գրուել է «Նախավկայի վանքում» (տե՛ս Հ. Անտեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Գ., Երեւան, 1946, էջ 87 (Հիլալ անուն), հտ. Դ., Երեւան, 1948, էջ 471 (Սեբեր անուն)): Անկասկած գրուել է Ղրիմում, որ հաստատում է նախ 1363 թ. յիշատակարանը, նոյնն է վկայում նաեւ ձեռագրի նկարազարդման ղրիմահայ ոճը, ի վերջոյ՝ Ժէ. դարի վերջերին այս ձեռագիրը բերուել է Նախիջեւանի գաւառ:

ՆՇՈՒՄ՝ *մէջքին սոսնձած թղթին՝ «Մեկնութիւն Ղուկասու Աւետարանի յԻգնատիոսէ, ՊՋ. — 1357», պհպ. Աա՝ «ՊՋ. — 1357, Մ[եսրոպ] եպ[իսկոպոս]», «Մեկնութիւն Ղուկասու Աւետարանին գրեալ յամի Տեառն 1357, թուին հայոց ՊՋ. ի Ստեփաննոս գրչէ եւ ի Գէորգ կրօնաւորէ, ունի յիշատակարան», պհպ. Աբ՝ «1170/3405», պհպ. Գբ՝ «Ի 1857»:*

ԳՐՋԱՓՈՐՁ՝ *պհպ. Բա՝ տառեր, պհպ. Գա՝ «եղաբերցն, մաքուր», պհպ. Դբ՝ «Մարմին, մարգարէ», 248ա վր. լս.՝ «Մարմին», պհպ. Եբ՝ «Մարգարէ. Զափաբերական — Սիրոյ զորութիւն գերազանց է, քան զբնութիւն ըստ սրբոյն», պհպ. Զբ՝ «Զի զոր», պհպ. Էբ՝ անկապակից տառեր:*


ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *պհպ. Բբ՝ բուսական լուսանցազարդ:*

3406
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ԺՁ. դար

ԹԵՐԹ՝ 103: ՊՐԱԿ՝ Ա-Ժ×12 (Ա. 9, Բ 10, Դ-Է, Թ 10, Ը, Ժ 11): ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14,3×10,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (10×6.5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 60ա): ՏՈՂ՝ 17: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դոնակով. միջուկը՝ տախտակ. աստառը՝ դրոշմազարդ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԴ՝ դեղնաւուն չգրուած թուղթ (Ի. դ.):

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, կապիչներն ու գամերն ընկած, լուսանցակողերի կարմիրը թափուած, սեւացած. գրադաշտը խոնաւութիւնից գու-



Նմուշ 60ա

նափոխուած, ընդմէջ 9-10ի, 19-20ի, 31-2ի, 71-2ի, 82-3ի, 92-3ի՝ 1ական, թ. 8-9ի, 51-2ի, 61-2ի, 87-8ի՝ 2ական, 41-2ի՝ 3, 102-3ի՝ 4, վջ-ից անուրոշ ֆանակի թերթեր թափուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-58ա* [Կանոնագիրք]

1. *1ա-7ա* Կանոնք եւ սահմանք սուրբ առաքելոյն՝ [Թա]թէոսի եղեալ – *[Հ]արցու[մն]. [Ո՞րպ]էս պա[րտ է] եպիսկոպոսին լինել եւ կալ ի տեսչութիւն եկեղեցւոյ: [Պատասխանի]. Եպիսկոպոսն եղիցի սուրբ, անարատ, պարկեշտ... այլ հանապազ պաոնկութիւն, եւ ընդ անիծօք Արարչին:*

Ծնթ. Առկայ են միայն՝ Ա., Գ., Դ., Ժ-ԺԴ., ԺԷ-ԺԹ., ԻԱ., ԻԸ., ԻԲ., ԻԳ., ԻԹ-ԼԱ. կանոններն, առանց համաբակալման, հմմտ. Կանոնագիրք հայոց, աշխ. Վ. Յակոբեանի, հտ. Բ., Երեւան, 1971, էջ 19-40:

2. *7ա-24ա* [Ի կանոնաց արբոց հարց]* – *Հարցումն. Վասն գայլաոի եւ շնառի: Եթէ կենդանի են ըմբըռնեալ, զենցեն... 7բ Իսկ քահանայից ձուկն յորսացեալ կերիցեն: 7բ-8ա Այլ ի սուրբ եւ ուտելի կենդանեաց, եթէ ի ծնունդըս մեռանի... 8ա Եւ թէ մորթեալ գըտանիցեն ի նմայ ծնունդ շնչով մի՛ կերիցեն... 8բ Այլազգոյ ի ձեռն առեալ հաց մի՛ ուտիցեն... ի[սկ զ]տուեալն ի նոցանէ մի՛ կերիցեն, զհաց զպ/// (շար.) 9ա [Դարձեալ սովորութիւն քահանայից, որ այլազգոյ ծնունդն մկրտեն. 3672, 11ա]** (սկ.) /// Այլ նոքա, որ ի մէնջ մկրտին, այս խորհուրդս փրկութեան... 9բ-10ա Այլ ի ժամ մերոյ մկրտութեան /// (շար.) 10ա [Եթէ մկնառ գինով կամ նշխարով անգիտութեամբ ոք պատարագ շինէ] (սկ.) /// հանդերձ սկէ ծածկոցքն, բայց ի հանդերձից սեղանոյն... 10ա Իսկ եթէ գիտութեամբ ոք մատուցանէ, առ ոտն հարկանելով զանճառ խորհուրդն... 10ա-1ա Իսկ ի դնել սպասուցն՝ մերձեցեալ մուկն արածեսցէ... 11ա Այլ Բ.աւրեայ նշխարով ոք շինէ պատարագ... 11աբ Իսկ եթէ յօթեանկ ջրով ի պատճառս ծուլութեան կազմեսցի նշխար... 11բ-2բ Վասն երա[զա]փորձութեան յաւրինակ տեսանի՝ է, որ ի լնուլ ժամանակի... 12բ Այլ եթէ անկանի ընդ քուն մայրն ի վերայ մանկանն... 12բ-3բ Վասն անկնունք մանկան մեռանելոյ հարցմանն այս է... 13բ Այլ են ոմանք, որ չար սովորութեամբ ճմլեն զմարմինս... 13բ-4ա Վասն յարուցագիտաց եւ անաստնագիտաց մի է բանն... 14ա Եթէ անօրինաց հետ խառնակին, ԺԵ. (15) ապաշխարէսյ... 14աբ Այլ կանայք պոռնիկ, որ զմանկունս սպանանին... 14բ-5ա Վասն հաղորդելոյ հարցմանն այս է... 15ա-7ա Առաջ քահանային պարտ է ուսուցանել զմեղաւորն... 17աբ Ապա թէ կոչեսցեն զքահանայն վասն հիւանդին կամ վասն կնքոյ... 17բ-8ա Այլ թէ քահանայն վերբերութիւն առնէ... 18աբ Այլ կանայք, որ ի ծնունդս մեռանին... 18բ-9ա Ընդ քուրդի, որ շնայ կին սոգոմակօն հանդերձ... 19ա Կարգեցին առաքեալքն, թէ ոք փոխ տայ եւ առնու վաշխ... 19աբ* Վասն գողի – *Հայ գողացար եւ գրկեցար գընկերդ... 19բ-20ա* Յաղագս ոչ առնելոյ սուգ ի վերայ մեռելոց – *Դարձեալ ի վերայ ամենայնի գրեմք զայս կանոնք հաստատութեամբ... զի առ Քրիստոս գնաց ի յոյն քրիստոնէից, որ զինքն եւս /// (շար.) 20ա [յայսպիս]ի երկրաւոր եւ մարմնական յիրս ծախեն... 20բ Իսկ թէ մեղաւք շաղախեալ իցէ ոք ընդ մօրըւքի կամ ընդ խորգ քվեր... 20բ Եւ թէ ընդ հարսին կամ ընդ զանքանչին պոռընկին... 20բ Այլ պարտ է քրիստոնէից որ ժ.ամեայ զօակն ոչ քնեն ընդ մօր կամ ընդ քվեր: 21ա Այլ երիտասարդ քահանայ, որ կին իւր մեռանի... 21ա-2բ Վասն մկան, թէ մուկն ի վերայ աղի սատկի... 22բ-3ա Թէ տաշտ կամ տեփուր կամ այլ ինչ ամանք... 23աբ Կ(=Հ)այ կին, որ լինի ընդ տաճկի եւ ոչ մեկնեսցէ ի պատճառս քրիստոնէութեան... 23բ Թէ կամօ զդստերս իւրեանց տացեն այլազգեաց անհօատից... 23բ-4ա Եթէ քրիստոնեա կին տաճկի մանկան ծիծ տայ... Եթէ սովորական գործ որոշեսցի եկեղեցւոյ:*

* Ծնթ. 7ա-19ա, 20բ-24ա թերթերին Դափթ Ալաւկայ որդու Բ-Դ., Ե., Ը-ԺԱ., ԺՋ., ԺԸ., ԺԹ., ԻԱ., ԻԴ., ԻԷ., ԻԹ., ԼԱ., ԼԴ., Խ., ԽԴ., Ծ., ՅԵ-ՅԷ., ՀԲ., ՀԳ., ՀԷ. կանոններն են՝ առանց համաբակալման, խառն եւ հաղուածոյ (որոշ դէպքերում խմբագրուած եւ համադրուած այլ կանոնների հետ՝ տե՛ս 14բ-5ա, 17աբ, 20բ, 21ա-4ա), հմմտ. Ա. Աբրահամեան, Դափթ Ալաւկայ որդու կանոնները, ուսումնասիրութիւն եւ բնագրեր, Երեւան, 1953, էջ 10-47: 25ա՝ Կանոնք առաքելականի ԺԸ. Կանոնը, հմմտ. Կանոնագիրք հայոց, աշխ. Վ. Յակոբեանի, հտ. Ա., Երեւան, 1964, էջ 39: 19բ-20ա՝ Յովհաննէս Երզնկացւոյ Խրատ հասարակաց երկի ԺԹ. գլուխը՝ համաոտուած, հմմտ. Է. Բաղդասարեան, Յովհաննէս Երզնկացին եւ նրա խրատական արձակը, Երեւան, 1977, էջ 179-180: 15ա-7ա, 19աբ՝ հաղուածքներ այլ կանոններից:

** Ծնթ. Այս և միւս դէպքերում թափուած ենթամիատոներէի սկզբնատողերը վերականգնուած են ըստ 3672 ձեռագրի:

3. *24ա-35բ* [Բանք կանոնականք]

ա. *24ա-5ա* Կանոնք եւ սահմանք սուրբ հայր[ապե]տին Սահակայ – *Պարտ է քառասունք տալ մեռելին, զի առաքելական հրամանք է եւ աւանդութիւն սուրբ հարցն եւ ի Սուրբ Հոգւոյն*... 24բ Եպիսկոպոսին հասքն, տուն քահանայիցն... 24բ-5ա Գեղոյ քահանային ոամիկ ժողովրդեանն զթաղմանն եւ զպաշտմանն... զտուն աւրհնելն, ամենայն ինչ իրիցու է:*

* Ծնթ. Քաղուած Յովհաննէս Երզնկացւոյ Խրատ հասարակաց երկից, տե՛ս Է. Բաղդասարեան, Յովհաննէս Երզնկացին եւ նրա խրատական արձակը, Երեւան, 1977, էջ 180-181: Սկզբում Սահակ Ձորոփորեցու ԺԵ. կանոնի վերաշարադրաւմն է (հմմտ. Կանոնագիրք հայոց, հտ. Ա., էջ 513), ապա քաղուածքներ այլ կանոններից:

բ. *25ա* Այլ կանոնք մեռոնի – *Մի՛ իշխեսցէ ոք ի*

պէտս դեղոց մերձուցանել… եթէ ոք յանդգնի, առնէ զայս, նզովեալ եղիցի։

գ. *25աբ* [Պասի, ձէթ կամ գինի ուտելոյ. ձեռ. 8461, 37բ, ստ. լս.] – *Եւ լուաք վասն քահանայից եւ սարկաւագաց… ճ. (100) ծունր եւ կանոն ըստ կարգին եւ ողորմութիւն հետ նորայ։*

դ. *25բ-6ա* [Քահանայն, որ շահ ուտէ. ձեռ. 8461, 38ա, ստ. լս.] – *Քահանայ կամ այլ եկեղեցականք, որ զարծաթ իւր ի վարձու տայ… Գ. ամ արտաքոյ ապաշխարէ եւ մի ընդ աւրինօք, եւ այլ մի՛ գնասցէ։*

ե. *26ա-7բ* Վասն հոսման, որ ֆուն լինի – *Ջերմութիւն, որ ի քուն լինի, է որ խոտելի է եւ մեղադրելի, զի եթէ յղփութենէ կերակրոց լինի կամ ըմքելեաց… 26բ-7ա Այլ վասն տեսլեանց պէս-պէս, որ լինին արուի կամ ընդանեաց… ապա թէ սովորութիւն առնէ, պոռնիկ է ստոյգ, եւ Քրիստոսի փառք յաւի[տեանս]։*

Զ. *93ա-5ա* [Հարցմունք եւ պատասխանիք վասն ողջոյնի] – *Վա՞ն էր ասէ՝ Նախ ողջոյն տուք: Պատասխանի. Ողջոյն բազում բարի գործս ունի... ողջոյնն եւ խաղաղութիւն եղիցի ընդ ձեզ. ամէն:*

Է. *95բ-6ա* [Գրառաջ.] Կաթողիկոսի շարադրութիւն կամ վարդապետի – *Ընտրեալդ յորովայնէ եւ կոչեցեալ*

ի Հոգւոյն Սրբոյ... եւ մտօք պանծացեալ տէ՛ր իմ հոգեւոր։

Ը. *97աբ* [Յաղագս զարդուց եւ զնշանակութենէ նոցին] – *Վհուկն հարցանողքն են, որք լինէին պաշտօնեայք կռոցն... այսքան վասն չարութեան զարդք առնէին, զորս քարսաւէ մարգարէն եսայի եւ վարդապետք սուրբք։*

Թ. *97բ* [Վասն Դ. տարեաց] – *Այս է պատճառ քսանամեայ ջրոյն, հուրն եռանկիւն է, եւ յօդն Ը.անիստ է... եւ Դ. անգամ, եւ արար զերկիր։*

Ժ. *98ա-100բ* Հին Ջուղայեցի ընտեփանենոս աստուածաբան վարդապետի յաշակերտէն՝ [Մեսրոպայ վարդապետէն] առ երկրորդ լուսաւորիչն հայոց սուրբն Գրիգոր Տաթեացին («Ի ՄԵՍՐՈՊԱ ՎԱՐԴԱՊԵՏԷ») – *Ի ժամ աշնան բուսեալ ծաղիկ հաւատոյ, / հանգոյն վարդի պայծառացեալ մէջ այգւոյ... այլ հաստատուն մընալ ի նոյն յաւիտեան։*

ԺԱ. *102ա-3բ* Այս է խորհուրդ եօթեանցն – *է. զգայութիւն մարմնոյս, է. օր շաբաթուն... է. ամաց ելեալ ուսման պատշաճի։*

ԺԲ. *103բ-4ա* Այս է երկոտասան կենդանակերպին – *Խոյն պարսիկք, որ է ի վերայ ամենայն կենդանեաց գլխոյ... ոչ է պարտ երակ առնուլ կամ խոցել, ապա թէ ոչ վնասի կենդանին։*

ԺԳ. *104ա Միւնեաց երկոտասան գաւառաց վանքի պտուղն, այսինքն՝ Տաթեւու վեց հազար եօթն հարիւր ոսկի է, թո՛ղ զհոգեբաժինն եւ աթոռահա[ր]կն եւ այլն նոյնպէս (այսչափ)։*

ԺԴ. *104բ* [Կերպ առնթաթ շինելոյ] – *Առ Ժ. տրամ սպրկիկ կլայեկ, տրամ եւ կէս պղինձ, նոյնպէս եւ սնտիկ տրամ եւ կէս, զա՛տ ի միմեանց, հալէ՛ զսոսա եւ լի՛ց զերկոսինն ի վերայ պղնձին, լինի արծաթ։*

ԺԵ. *104բ* [Գուշակութիւն] – *Ա, գ, ե, է, թ – արականն Ղազարն է։ Բ, դ, զ, ը, ժ – իգականն Մարթայն է... եւ լաւապէս հաշուեա՛ զանուան գրերն, բաւ է։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

85բ Գրեցաւ սա ՌՃՀԴ. (1735) թվին հայոց, ձեռամբ Առեւելցի *հեգ* Մեսրոպին, *որ եւ աղաչեմ զհանդիպողքդ յիշել զեղկելիս, եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն։*

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *1ա, 2բ երկիցս, 85բ, 90բ սեւ թանաքով ուրուանկիւն՝* «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ / ՄԵՍՐՈՊ / ՎԱՐԴԱՊԵՏ»։

ՆՇՈՒՄ՝ *Ա. փեղկին սոսնձած թղթերին՝ «27», «Ա 14», Ա. կազմաստառ՝ «ՌՃՀԴ. – 1735, Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս», 1ա՝ «1204/3409, 1735 թ./ յեր. 85ա»։*

ԳՐՉԱՔՈՐՉ՝ *Ա. կազմաստառ՝ տառեր, թւեր։*


ՆԿԱՐԱՔՈՐՉ՝ *96բ՝ երկու բոլորակ. առաջինի մէջ Ա-բեւ, Լուսին, երկրորդի՝ աստղեր։*

3410
ՀԱՐՑՄՈՒՆՔ ԱԹԱՆԱՍԻ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ԿԻՒՐՂԻ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Կ. ՊՈԼԻՍ ՌՃԾԹ. – 1710

ԳՐԻՉ՝ Սարգիս Եւդոկիացի Սահէթճի եպս.։

ԹԵՐԹ՝ 43։ ՊՐԱԿ՝ Ա-Դ×12 (Դ 7)։ ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14,6×10,6։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (11,5×7,5)։ ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 16ա)։ ՏՈՂ՝ 25։ ԿԱՋՄ՝ մուգ կարմիր թուղթ. մէջքը, փեղկերի հիմնամասերը եւ անկիւնները՝ սեւ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ սպիտակ թուղթ։



Նմուշ 16ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Ճակատազարդ՝ 1ա։ Զարդագիր՝ թուչնագիր։ Գոյներ՝ կարմիր, վարդագոյն, սեւ։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմը մաշուած, մէջքի կաշուի վր. եւ ստ. հատուածները թափուած. գրադաշտը խոնաւութիւնից գունափոխուած, թերթերին զանազան հետքեր, տեղ-տեղ փոխրիկ պատռուածքներ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա-43բ Երանելոյն Աթանասի արեւելիսկոպոսի Ա-ղեկսանդրացւոյ Հարցմունք վայելուչ եւ պատասխանիք Կիւրղի Երուսաղէմայ հայրապետին Յաղագս մակասացութեան եւ հանճարոյ – *Ա. Հետեւումն համարիմ ընդ Աստուածոյ երիս բանս...։ Պատ. Իսկ ոգի մարդոյ գոյութիւն է անիմանալի... ըստ հրամանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։*

Ծնթ. Ունի ՃԽԳ. (143) ենթահարց, իրենց պատասխաններով հանդերձ՝ Բ. Հարց. Ուստի՞ յայտ է, թէ ի ժամ մահուն ոչ մեռանի հոգին ընդ մարմին... Գ. Հարց. Հաւատարիմ է բանդ, այլ զայս հարցանեմ, թէ որո՞վ աղագաւ բաժանի հոգին ի մարմնոյն... Դ. Հարց. Ո՞ւր իցեն արդեօք յառաջ երթալոց ոգիք մարդկան... Ե. Հարց. Ապա զի՞նչ ընկալան միանգամայն արդարն զբարին եւ մեղաւորն զտանջանսն... եւ այլն։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

43բ Գրեցաւ թվին հայոց ՌՃԾԹ. (1710) եւ եղեւ զրաւ սորա Յունիսի Իե. (25), ի մայրաքաղաքս Ստամ-

պօլ, *ի թաղն Պէկօղլի կոչեցեալ ձեռամբ* եւդոկիացի Սարգիս *եպիսկոպոս կոչեցեալ, որ եմ* Սահէթճի: *Արդ, որք հանդիպիք սմա, յիշեցէ՛ք ի մաքրափայլ աղօթս ձեր, եւ դուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ. ամէն:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

Ա. կազմաստառ (1897 թ., շղագիր) Ճեմարանի գրադարանին նուէր Հայկ Տէր-Աստուածատրեանից, *Ապրիլ 9ին, 1897:*


ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *11բ երիցս, սեւ թանաքով ութանկիւն՝* «ՏԷՐ ԴԱՒՈՒՍՆ»:

ՆՇՈՒՄ՝ *Ա. կազմաստառ՝ «Ի գրեանց Աբրամու Շահբասեանց», «ՌՃՃՓ. – 1710, Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս, 1205/3410»:*


ԳՐՉԱՓՈՐՁ՝ *Ա. կազմաստառ՝ «Գրեանց Աբ»:*

3411
ՏԱՂԱՐԱՆ


ԹԵՐԹ՝ 180+2 (կրկն.՝ թ. 1, 66). չգրուած՝ 1բ, 100բ-1ա, 165բ: ՊՐԱԿ՝ Ա-Ժ×12 (Ա, Գ, Ը, Թ 11, Դ 9, Ե 10, Ջ 7, Է 8)+Ա-Դ×12+6+8+18: ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ եռամաիիկ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14,3×10,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (10,2×6, 8,5×5,5): ԳԻՐ՝ նոտագիր՝ 1գ-152բ, 163ա-78ա (նմուշ՝ 53ա, 173ա), բոլորգիր՝ 155ա-62բ, 178բ-80բ (նմուշ՝ 156ա, 179ա): ՏՈՂ՝ 18-22: ԿԱՋՄ՝ շագանակագոյն կաշի. միջուկը՝ տախտակ. աստառը՝ շերտազարդ մետաքս. լուսանցակողերը՝ կարմիր:




Նմուշ 53ա



Նմուշ 173ա




Նմուշ 156ա



Նմուշ 179ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Ջարդագիր՝ մարդադէմ, հանգուցագիր, թոչնագիր: Գոյներ՝ կարմիր, վարդագոյն, սեւ:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – 1. Աւետարան Մատթէոսի: Ժ. դ.: ե (վջ.)՝ ստացուած 1 թերթի ընդլայնակի եւ ընդերկայնակի հատումով եւ ծալումով: Մագաղաթ 14×12. երկսիւն (12×10). բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝ եա). տող՝ 12: Կարդալ. եաբ՝ «Արդ, հրամա[յեա՛] զգուշա[նալ գեր]եզմանին... եւ կնքեցին զվէմն հանդերձ զաւրականաւմն... մի՛ երկնչիր դուս, գիտեմ զի զՅիսուս զխաչ ելեալ[ն] [խնդրէք] չէ աս[տ] [հանզի] [յարե]աւ /// [ո՛ղ]ջ էհ, [եւ ն]ոհա մա[տուցեալ կա]ման զոտս» (Իէ. 64-ԻԸ. 9): 2. Հրահանգ ուղղուած ծխական հաճախաներին (տպագիր, լատիներէն): ԺԸ. դ.: ԱԲ+ԳԴ՝ ստացուած 2 տարբեր թերթերի ընդերկայնակի եւ ընդ-



Նմուշ եա

լայնակի հատումով (բնագիրը կտրած): Թուղթ 22×14, 15×14. երկսիւն (14.5×8,5, 15×9). լատինատառ գոթական գիր (նմուշ՝ Դբ). տող՝ 43: Կարդալ. Աա-Բբ՝ «Competit autem generaliter ecclesiis parochialibus... Sepeliri debet in ecclesia ubi sunt clerici. A. Idem», Աբ-Բա՝ «in uca. q. io. pm Inno. Religiosi eo debent sepeliri... Quid de his qui morientem molestant», Դբ-Գա՝ «bunt. Docentes eo/// in theological facilitate... idem iuris. Si eo sufficiens est et non habet», Գա-Գբ՝ «vel /// ponat cu[m] en. A. /// positione que poe... extra eo. B. 37. vis. de quibusdam. ex eo. per totum». հմմտ. D. D. Michaelis Lochmaier, sac. Theologiae, Necnon Juris Pontificij (sic!) Doctoris, ac Ecclesiae Pataviensis Canonici, Parochiale Curatorum: Opus Multiplici doctrina refertum, ac omnibus animarum regimini incumbentibus apprime necessarium, Lugdini, Apud Ioannem Baptistam Bovrier, & Lavrentium Avbin. MDCLXXIII (1673), Cum Permissu Superiorum (բնագրին վերաբերող տեղեկութիւններն ըստ Օլգա Վարդազարեանի):

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, մէջքի կաշին վնասուած՝ վր. մասի 3 սմ եւ միջին մասի 3,5 սմ շերտերը թափուած, կապիչներն ու զամերն ընկած,

լուսանցակողերի կարմիրը մասամբ թափուած, կեղտոտուած. պտոկ-պիպ. Ա.Բ, Գ.Դ. մաշուած եւ եզրերը թափուած, պտոկ-պիպ. ե.ի ստ. մասը պոկուած. գրադաշտը խոնաւութիւնից գունափոխուած, զանազան հետքերով, թ. 152, 154, 180ի տարբեր մասեր պատռուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

– 1գ Յանկ Տաղարանի *– ա. Նախ եւ առաջին սեղան աւրհնելոյ ասա՛յ... խ. Կաֆայ քաղաք նըման դրախտի:*

1. *2ա-4ա* [Ա. Աւրհնութիւն վասն սեղան աւրհնելոյ. ձեռ. 695, 237ա] («ԱՅՍ ԱՌԱՔԵԼԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ») – *Աւրհնեսցուք մեք միաբան զՀայրըն եւ զՈրդին եւ զՍուրբ Հոգին, / որ բարութեանց է պարգեւաւղ, զոր վայելեն ազգ մարդկային... եւ ասասցուք Հայ[ր] մեր երկինս ննջեցելոցն ամենայնի:*

2. *4բ-6բ* Բ. Տաղ եւ աւրհնութիւն – *Աւրհնեցէ՛ք զՀայրն Աստուած դուք ի սկըզբանէ, / գովեցէ՛ք զՈրդին ծնեալն ի Կուսէ... ընդ սրբոց արդարոց իւրոց դասեսցէ:*

3. *6բ-8բ* Գ. Աւրհնութիւն սեղանոյ է – *Միրով ընտրեցեր զմարգարէսըն քո, / յայտնեալ ահխարհի (= աշխարհի) զմարդեղութիւնըս քո... արդ, աւրհնեալ է Հայր եւ համաքոյ Որդին, Հոգոյն ճշմարտի փառք յաւիտեանս:*

4. *8բ-10բ* Դ. Ազարիայի [Ջուղայեցւոյ] է բանի՛ Տաղ ուրախութեան եւ հարսանեաց («ԱՋԱՐԻԱՅԷ ԲԱՆՔ») – *Արարիչ Տէր քաղցրացաւ ի յԱդամայ, / եւ ծնաւ ի Սուրբ Կուսէն Մարիամայ... քաղցրասցի ձեզ Տէր, քաղցրասցի մեզ Տէր:*

Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (ԺՉ-ԺԷ. դդ.), Բնագրեր, հտ. Ա., աշխ. Յ. Սահակեանի, Երեւան, 1986, էջ 285-289:

5. *10բ-2բ* Ե. [Աստուածատուր Ա.] Տաղ եւ գովասանի այգոյ խաղողոյ եւ գինոյ – *Այն առաջին ժամանակին, / որ պտղայբերքն տնկեցին... եւ իմ անուն է Աստուածատուր, / զկըթիան իլլի արա՛յ ու տո՛ւր, / Թո՛ղ շատ ապրիս իմ խաչայտուր:*

Տե՛ս նոյն տեղում, էջ 71-78, ձեռագիրս օգտագործուած չէ:

6. *12բ-4բ* Զ. [Սարկաւագ Բերդակացի], Գովասանութիւն խաղողոյ բաժակին եւ այլ վասն ուրախութեան – *Խաղո՛ղ, ըզքեզ գովել պիտի, բոլոր պըտղովա՛ւ ես հաւասար... որ մեր հոգուն է լուսարար:*

Տե՛ս նոյն տեղում, էջ 281-284:

7. *14բ-6ա* Է. [Մարտիրոսի Խարասացւոյ] Տաղ ուրախութեան սեղանոյ եւ գինոյ հաւասար ամենեցուն – *Այսաւր խըմենք քաղցր եւ յորդոր, / բարեկամաց ի հետ բոլոր... քեզ Մարտիրոսն գինով խոչկոր, / անոյշ խըմ՛:*

Տե՛ս նոյն տեղում, էջ 148-150:

8. *16ա-7բ* Ը. [Մարտիրոսի Խարասացւոյ] Տաղ եւ աւրհնութիւն ուրախութեան – *Աստուա՛ծ, զայս տունս շէն պահէ, / բազում բարեաւք զինք զարդարէ... քեզ Մարտիրոսն յետին կասէ, / Աստուած այս տունըս շէն պահէ:*

Տե՛ս նոյն տեղում, էջ 155-157:

9. *17բ-9բ* Թ. [Տաղ] Վերայփոխման Սուրբ Աստուածածնին – *Խնկին ծառին նըման ես, / պտո՛ւղ, դու քաղցրահամ ես... քրոբէական յաթոռ ես, քերովբէից նման ես, / աստուածութեան բարձօղ ես, Աստուա՛ծ":*

10. *19բ-21ա* Ժ. [Մարտիրոսի Խարասացւոյ] Տաղ ի տես սիրելեաց եւ հեռատրաց ասա՛յ («Ա-Ք») – *Այսաւր ըզքեզ տեսայ եւ ուրախացայ բարով, / զարդարեցեր ի Տեառնէ գոհացայ... քեզ Մարտիրոսն եղեւ յետին նոր ծառայ, / այս":*

Տե՛ս նոյն տեղում, էջ 166-169:

11. *21ա-2բ* ԺԱ. [Մարտիրոսի Խարասացւոյ] Տաղ հարսանեաց եւ ուրախութեան՝ ընտիր եւ գեղեցիկ («Ա-Ք») – *Աստուած աւգնէ թագաւորին, / բաշխէ բազում կենդանութիւն... քեզ Մարտիրոսն ասաց յետին, / Աստուած աւգնէ թագաւորին:*

Տե՛ս նոյն տեղում, էջ 152-154:

12. *22բ-5ա* ԺԲ. Տաղ հարսանեաց եւ ուրախութեան ամենայն մարդկան («ՆԱՂԱՇ ՍԱՐԿԱՔԱԳԻ ԵՍԱՅԵԶ», խորագիրը կրկն.՝ 23ա) – *Նախ աւրհնեմք զաստուածութիւնն, / որ ստեղծ զհրեշտակս ի լուսոյն... եւ հետ կանչեն զթարլալան, / որ հարսնիքս ուրախանան:*

Տե՛ս Մկրտիչ Նաղաշ, աշխ. էդ. Խոնդկարեանի, Երեւան, 1965, էջ 101-104:

13. *25ա-7ա* ԺԳ. Աւրհնութիւն հարսին եւ փեսային. [Կանոն պսակ առնելոյ] – *Ամենայզա՛ւր Տէր, թագաւոր թագաւորաց, / թագաւորիս մեր ըզգեցոյց հանդերձ փառաց... փառըս տացուք Հօր եւ Որդոյ, Հոգոյն Սրբոյ եւ Քրիստոսի ամենայզաւր թագաւորին:*

14. *27ա-8բ* ԺԴ. [Մարտիրոս Խարասացւոյ] Տաղ կնիտուի եւ տղարուի ի կընճայեաւր եւ իւր սանին («Ա-Ք») – *Աստուած աւգնէ այս կընկայ հարւրն եւ իւր սանին, / բազում վարձ տայ հետ նոր մանկանն աշխատողին... քեզ Մարտիրոսն ասաց այս բան, Ղարահասրին / Աստուա՛ծ":*

Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (ԺՉ-ԺԷ. դդ.), Բնագրեր, հտ. Ա., աշխ. Յ. Սահակեանի, Երեւան, 1986, էջ 150-152:

15. *29ա-37ա* ԺԵ. [Յարմարեալ բանս ուրախութեան ի խաչատուր վարդապետէ Խարբերդացւոյ]. Այսուհետեւ սկսանիմ զգարնան, զվարդին եւ զպուլպուլին տաղերն կարգաւ («ՅԱՐՄԱՐԵԱԼ ԲԱՆՍ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ») – *Յորժամ եղեւ գարուն, է՛կ պուլպուլն այգին, / տեսեալ զվուփն վարդին... չըխմի՞շ պէնում ճանում կէլիփ տուր պանդայս:*

Տե՛ս նոյն տեղում, էջ 185-191:

16. *37ա-42բ* ԺԶ. Գրիգորիս յԱղթամարացւոյ ասա-

ցեալ տաղ ի վերայ վարդին եւ պուլպուլին՝ ընտիր եւ գեղեցիկ – *Յետ գնալոյ վարդին, է՛կ պուլպուլն այգին... փառք եւ ուրախութիւնս այս անցաւոր է, / կենացըդ կայ վճար, քանզի երազ է։*

Տե՛ս Գրիգորիս Աղթամարցի (ԺԶ դ.), աշխ. Մ. Ասլալբէկեանի, Երեւան, 1963, էջ 224-237:

17. *42բ-7ա* ԺԷ. Տաղ գարնան եւ ուրախութեան Գրիգորիս կաթուղիկոսի Ախթամարցոյս – *Ծաղկունք ասեն հերիք արա՛, / քանի կանչես վարդին վրայ... հագարացիք աւրինաւք թիւր, / զաքաս խանձեն որպէս զհուր։*

Տե՛ս նոյն տեղում, էջ 130-142, ձեռագիրս օգտագործուած չէ:

18. *47ա-8ա* ԺԸ. Նորին Գրիգորի Ախթամարցոյ՝ ըստ անուան երգողի. Տաղ գարնան («ԳՐԻԳՈՐԻՍ») – *Գարունն երեկ պուլպուլն այգին, / ծաղկունքն ամէն շատլըխ արին... սիրտս վառել հրով այրի, / թէ ինձ չառնէ պատասխանի։*

Տե՛ս նոյն տեղում, էջ 221-223:

19. *48ա-9բ* ԺԹ. [Գրիգորիսի Աղթամարեցւոյ] Տաղ գարնան եւ ուրախութեան – *Գարուն է բացվել, վարդն ի պաղչանին, / քաղցր եղանակ էր, պուլպուլն ի զումբին... եւ փըրկէ քեզ ի չար վտանգին, / գինով եմ, գինով ցորեկն՛։*

Տե՛ս նոյն տեղում, էջ 238-241:

20. *49բ-52բ* Ի. Տաղ ուրախութեան Գրիգոր Աղթամարցոյ ասացեալ ի վրայ սիրոյ – *Մաքուր պատկերով նըման հրեշտակի, / անգին մարգարիտ եռեալ ընդ ոսկի... ապայ աւաղես, դառնաս փոշիման։*

Տե՛ս նոյն տեղում, էջ 206-212:

21. *52բ-5ա* ԻԱ. Նորին Գրիգորի Ախթամարցոյ ասացեալ – *Դու դրախտ յեդեմայ տնկեալ յանեղէն, / ի յելս արեւու տեղիք լուսեղէն... բայց յետոյ լինիս ողորմ ու լալի։*

Տե՛ս նոյն տեղում, էջ 192-198:

22. *55ա-6ա* ԻԲ. Տաղ Խաչատուր [Թոխաթցւոյ] իրիցւէ ասացեալ վասն ուրախութեան, Բ. ազգ լեզուէ խիստ ազնիւ («ԽԱԶԱՏՈՒՐ») – *Խարանֆիլ, նարկիզ, մէնաւշայ, սունպուլ, / կանչեմ անդադար ես որպէս պուլպուլ... փրկել ի տանջանաց հըրոյ գեհենոյն եւ արժան առնելով Յիսուսի տեսոյն։*

Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (ԺՉ-ԺԷ. դդ.), Բնագրեր, հտ. Ա., աշխ. Յ. Սաճակեանի, Երեւան, 1986, էջ 576-579:

23. *56ա-7ա* ԻԳ. Տաղ եւ ուրախութեան ամենայն մարդկաց (Անանուն Ա.) – *Քանի որ տեսնեմ ըզքեզ հեռեւանց, / քան զշամպայ եղէգն ելեր ես շիտակ... կերես, կու լափես իմ սրտիկըս դուն։*

Տե՛ս նոյն տեղում, էջ 109-110:

24. *57ա-8ա* ԻԴ. Նորին ուրախութեան (Անանուն Բ.) – *Բաներս քեզ ասեմ, ինձ մըտիկ արա՛յ, / քո սալվի բովան պայիտ եմ ծառայ... զի քեզի նըման իսկի ծնեալ չէ։*

Տե՛ս նոյն տեղում, էջ 111-113:

25. *58ա-9ա* ԻԵ. Դարձեալ տաղ սիրոյ է ասացեալ (Անանուն Գ.) – *Քո սէրըդ իմ սրտիս պաղչայ կուլիստան, / կարծեմ դու մէն ես բազկիտ Շահիստան... գընամ մէկ մ՚այլ սիրեմ, հաշւիմ, թէ դու ես։*

Տե՛ս նոյն տեղում, էջ 114-116:

26. *59ա-61ա* ԻԶ. Այլ տաղ սիրոյ եւ ուրախութեան (Անանուն Դ.) – *Մեր Տէրն է բազմել ի բարձր աթոռին, / աջովն օրինէր զպատակեր քոյին... երբ տեսնում ըզքեզ, մընամ կենդանի։*

Տե՛ս նոյն տեղում, էջ 117-121:

27. *61ա-5ա* ԻԷ. Տաղ սիրոյ եւ ուրախութեան՝ ի Սեբաստացի Ղազար իրիցէ ասացեալ – *Ծով աչք, ամբանի նայիս խոլոռով, / գաս նըստիս, գաչերըդ ածես խնճերով... զՏէր մեղա ասա՛յ / գընա՛յ նիստ ի վայր։*

Տե՛ս նոյն տեղում, էջ 96-107:

28. *65բ-70բ* ԻԸ. Տաղ ի Թոխաթցի մղտեսի Թաթոսէն ասացեալ՝ վասն տնօրինութեան Քրիստոսի – *Հազար կենդանայկերպ Աստուած ստեղծեր է, / զամէնըն Ադամայ հընազանդ արեր է... անդէն զէրանաւէտ ձայնըն լըսել է։*

Տե՛ս նոյն տեղում, էջ 471-480:

29. *70բ-1բ* ԻԹ. Տաղ յերանելոյն Ադամայ ի դրախտէն – *Ադամայ ստեղծօղն եկեալ իւր պատկերին տես, / Ադամ էր ձայն տըվեալ՝ Ադամ դու ո՞ւր ես... մինչեւ գայ աւր մահուան գերեզման է զքեզ։*

Տե՛ս Ա. Սրապեան, Յովհաննէս Երզնկացի, Ուսումնասիրութիւն եւ բնագրեր, Երեւան, 1958, էջ 210-212:

30. *71բ-3ա* Լ. Յորժամ ելաւ Ադամ ի դրախ<տն>տէն, լայր եւ աղաղակէր ըն[դ]դէմ սէրովբէից – *Ադամ նըստել դոռն դրախտին, / լայր եւ ձայնէր ողորմագին... որք ի դրախտն աստուածատունկ, / յերկրէ ընտրեալք ազգի ազգունք։*

Տե՛ս նոյն տեղում, էջ 228-234:

31. *73ա-4բ* ԼԱ. Տաղ Ադամայ տնաւրէնութեան («Ա-Ք») – *Աստուած, անեղ, անպարագիծ եւ անզընայ, / բանն ի Հաւրէ յառաջ ծընեալ լոյս եւ արքայ... քոյ արբութեամբ երկրպագեմ միշտ յարակայ։*

32. *74բ-6բ* ԼԲ. Տաղ հոգոյ ազնիւ՝ ի Խաչատուր Կեչառացոյ ասացեալ – *Ես եմ կորուսեալ ոչխար, մոլորեալ ի սուրբ քո հաւտէն... ջանք արա՛յ ելնես ի դուրս, որ չայրիս անշէջ գեհէնէն (կրկն.՝ 127բ-8բ)։*

33. *77ա-8բ* ԼԳ. Խրատ հոգեւորի՝ Յովհաննէս վարդապետէ («ՅՈՀԱՆԻՍԻ») – *Յամենայն մեղաց ի զատ ասէ, կացի՛ր, / եւ յաւրէնս աստուածայինըս միշտ մաւտեցի՛ր... զինչ քաղաք առանց պարըսպի հեծելի կոխէ։*

Տե՛ս նոյն տեղում, էջ 200-206:

34. *79ա-81բ* ԼԴ. Տաղ հոգոյ՝ ի Նախաշ վարդապետի ասացեալ («Ա.-Ք») – *Անցանէ մեծութիւն եւ փառք աշխարհիս, / աւերի եւ քակտի շինուած տաճարիս... մի՛ մնար, մի՛ մնար անդարձ ի մեղաց, / մի՛ մատներ, մի՛ մատներ զհոգիդ տանջանաց:*

Տե՛ս Մկրտիչ Նաղաշ, աշխ. էդ. Խոնդկարեանի, Երեւան, 1965, էջ 129-136:

35. *81բ-4բ* ԼԵ. [Առաքելի Բաղիշեցւոյ] Նորին տաղ հոգոյ ասացեալ («Ա.-Ք») – *Ամենայն փառք մարդոյ դատարկոյ ունայն, / Սողոմոն զայս պատմէ շնօրհաւք լիական... որ զղջաս եւ լինիս Տեառն արժանաւոր, մի՛ մնար, մի՛ մնար անդարձ (կրկն.՝ 114բ-6բ):*

Տե՛ս Առաքել Բաղիշեցի, աշխ. Ա. Ղազինեանի, Երեւան, 1971, էջ 188-193:

36. *84բ-7բ* ԼԶ. [Գովասանք սուրբ Աստուածածնի՝ ի Վանեցի Քօչակէ ասացեալ. ձեռ. 1636, 120բ] – *Աղբիւր կենդանի, բըղխում զանազան, / մեղա՛յ քեզ, Քրիստո՛ս, կոյս անապական... մեղա՛յ քեզ, մեղա՛, կոյս անապական:*

37. *87բ-8ա* ԼԷ. Մկըրտութեանն Քրիստոսի [Յորդորակ. ձեռ. 5879, 59ա] – *Ո՛վ զարմանալի խորհուրդ այս մեծ յայտընեալ... արդ, աւրհնեալ է Հայր եւ համագոյ Որդին, Հոգոյ ճշմարտի փառք յաւիտեանս. ամէն:*

38. *88ա-9ա* ԼԸ. [Տաղ ազնիւ, թէ գիտէս լավ է ավ՛՛. ձեռ. 4328, 6ա] – Պետրոս երազ էր տեսեր, / Պատրոս զերազն էր յայտներ... եղբայր երազըն ի բարին, / երնէկ եզազ տեսողին:

39. *89ա-90ա* ԼԹ. Տաղ վասն հոգոյ՝ [ի տէր Ներսէսէ ասացեալ. ձեռ. 3986, 30ա] – *Ճըրագ մարմնոյս է իմ խաւար, / ակըն հոգոյս դարձեալ է ջուր... զիս ի մեղաց արար ի զատ:*

40. *90ա-1ա* Խ. [Մարտիրոսի Խարասացւոյ] Տաղ ի վերայ Կաֆայ քաղաքին՝ ասացեալ է վասն ուրախութեան («Ա.-Ք») – *Աստուած թող շէն պահէ զԿաֆայ, / բոլոր պարիսպն, որ ի նըմայ կայ... քեզ՝ Մարտիրոս, Աստուած գըթայ, / Աստուած թող շէն պահէ զԿաֆայ:*

Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (ԺԶ-ԺԷ. դդ.), Բնագրեր, հտ. Ա., աշխ. Յ. Սահակեանի, Երեւան, 1986, էջ 170-172:

41. *91ա-2ա* ԽԱ. Գովասանութիւն ի վերայ Կաֆայ քաղաքին՝ ասացեալ է ի յԸՍեփանոս իրիցուէ – *Կաֆայ քաղաք նըման դրախտի, / Երուսաղէմ սուրբ քաղաքի, / մեծ Հռոմայ ՚ւ ըՍտամպալի... հօրս Սարգսի, մօրս Ճանփաշի, / Հայր մեր յերկինս, սուրբ եղիցի:*

42. *92ա-100ա* ԽԲ. Կարապետի մեծի վարդապետի ասացեալ խրատ պիտանիս մանկան եկեղեցոյ – Ոտանաւոր տաճիւ («Ա.-Ք», «ԿԱՐԱՊԵՏԷ») – *Ամենայնի սկիզբն եմ ես, / դուք լուարո՛ւք, զոր ինչ ասեմ, ո՛վ մանկունք... է սա ընծայ յուշ իմ եւ փաստ, / նորամարզիցն, որ իջա հաստ:*

43. *101բ-7ա* Տեառն Ներսէսի Կըլայեցոյ ասացեալ է՝ Յաղագս կատարածի աշխարհիս եւ յաւուր դատաստանի եւ հատուցումն գործոց – *Յորժամ գըրեալքըն կատարին, / որ զայնմ աւուր մեզ պատմեցին... նայ եւ բարոյն կողման մասին, / պարգեւք բարեաց ի քէն տացին, / ըստ հատոց եւ ըստ գործոց եւ ըստ շնորհաց աւազանին:*

44. *107ա-10ա* [Առաքել վարդապետէ ասացեալ]՝ Վասն անկելոյն Ադամայ ի դրախտէն եւ սգալոյն եւ արտասուելոյն եւ վասն հոգեւարին եւ ճանապար[հ]ի հոգոցն եւ պատեր[ազմի. ձեռ. 424, 346ա] – *Վա՛յ այն աւուր, որ ես [ս]տեղծայ, / վա՛յ էն ժամոյն, որ խաբեցայ... եւ հրաւիրէր զամենեսին խառնիլ ի դաս դիւաց գընդին:*

45. *110ա-3ա* Վասն աճեղ դատաստանին եւ ֆնութեանց եւ [յ]արութեան մեռելոց՝ Առ[աքել վարդապետէ ասացեալ. ձեռ. 424, 348ա] – *Յորժամ դրունք երկնից բացին, / լինի հընչմունք ահագնակին... գոչէ դըժոխքըն սաստկագին, / ձայնիւ հալէ զամենեսին:*

46. *113ա-4բ* Վասն բաժանման արդարոց եւ մեղաւորացն եւ տանջանացն դըժոխոց՝ Առաքել վարդապետէ. [ձեռ. 424, 349բ] – *Յետ քննութեանց դատաստանին, / երբ ամենայն բանք վըճարին... այլ բարկութիւնըն բորբոքի, / ի տարտարոսն անպատմելի:*

47. *117աբ* Ոտանաւորք եւ ողբ Առաքել վարդապետէ՝ վասն անձին իւրոյ եւ ինձ («ՅԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՅՍ») – *Յիշելով զաւր մահուն՝ սիրտ իմ սասանի, / յահագին ատենին անձն իմ զարհուրի... եւ արժան առնելով տեսոյն Քրիստոսի:*

Տե՛ս Առաքել Բաղիշեցի, աշխ. Ա. Ղազինեանի, Երեւան, 1971, էջ 181-183:

48. *117բ-8ա* [Առաքել վարդապետէ. ձեռ. 2236, 425բ] Ողբ դատաստանին եւ դժոխոցն – *Յորժամ Գաբրիէլ գոչէ, եւ յառնեն մեռեալքն ի հողոյն... կեր լինին ժանեաց վիշապուն:*

49. *118ա-20ա* [Առաքել վարդապետէ. ձեռ. 2236, 425բ] Գովասանութիւն եւ խոստովանութիւն եւ խրատ – *Եղբա՛յր, ինձ մի՛ տիր եւ լըսէ՛ / եւ զհոգոյդ աչքն ի բաց պահէ՛... ե<ղ>կայք, աւրհնեալք ձայնըն լըսէ:*

50. *120ա-2բ* Խրատական բաներս ի Գրիգոր վարդապետէ («Ա.-Ք») – *Աւրհնեալ է հայրըն լուսոյ, / որ ստեղծ զմեզ ի հողոյ... պահեա՛ յանփորձ ի թըշնամոյ:*

51. *122բ-4ա* Բանք վասն անագին եւ սոսկալի գալստեանն Քրիստոսի եւ դատաստանի աւուր եւ ան՛՛ – *Յորժամ յիշեմ զօրն ահագին եւ զոսկալի (=զսոսկալի) գալուստ փըրկչին... զոր վառէ հուրըն գեհենի:*

52. *124ա-5բ* Խոստովանութիւն գաղտնեաց եւ խայտառակութիւնն անձին – *Մեղա՛յ, Տէ՛ր, ինձ ողորմեա՛յ, / Տէ՛ր, մեղա՛յ, Աստուա՛ծ, զիս քաւեա՛յ... որ մեղաց համար կու լինայ:*

53. *125բ-7բ* Խրատ պիտանիի՝ Յովհաննէս վարդապետէ («ՅՈՀԱՆՆԻՍԻ») – *Յամենայն մեղաց ի զատ ասէ, կացի՛ր, / եւ յաւրէնս աստուածայինըս միշտ մաւտեցի՛ր... եւ ի նմանէ ողորմութիւն ձեզ միշտ պարգեւի։*

Տե՛ս Ա. Սրապեան, Յովհաննէս Երզնկացի, Ուսումնասիրութիւն եւ բնագրեր, Երեւան, 1958, էջ 201-207։

54. *128բ-30ա* Նորին Խաչատուր Կեչառեցոյ («Ա-Ք») – *Այս կեանքս է յերազ նըման, / եւ խաբողան զերծ յանդիման... քաւիչն է փրկիչն Յիսուս, ինքն օրհնեալ փառօք հայրենի։*

Տե՛ս Խաչատուր Կեչառեցի, Տաղեր, աշխ. Ա. Դոլուխանեանի, Երեւան, 1985, էջ 147-149։

55. *130ա-1ա* Խրատ խռով չի կենալոյ եւ ոխ չի պահելոյ՝ Նախաշ վարդապետի ասացեալ է – *Անձն իմ, վա՛յ քեզ հազար բերան, թէ խրոով կենաս կամ ոխ պահես... եւ Քրիստոսի սիրուն համար զչար կամաց ոտքն համբուրես։*

Տե՛ս Մկրտիչ Նաղաշ, աշխ. Է.դ. Խոնդկարեանի, Երեւան, 1965, էջ 120-122։

56. *131ա-2ա* Խրատ հպարտութեան – *Քան զամենայն գործըս չարի, / հպարտութիւն է զազրելի... կոխան արար զքեզ ամենի, / ապա Քրիստոս ի քեզ բնակի։*

Տե՛ս Առաքել Բաղիշեցի, աշխ. Ա. Ղազինեանի, Երեւան, 1971, էջ 170-172։

57. *132ա-4բ* Խրատական բաներս ագահութեան եւ անընչութեան՝ ի Նախաշ վարդապետէ ասացեալ – *Սողոմոն՝ մայրն իմաստութեան, / առ մեզ խաւսի բան խրատական... նավդ ի բեռանց թեթեւացոյ, որ հասանես ի յաւթեւան։*

Տե՛ս Մկրտիչ Նաղաշ, աշխ. Է.դ. Խոնդկարեանի, Երեւան, 1965, էջ 113-119։

58. *134բ-6ա* Խրատ եւ կըշտամբանք անձին՝ Նախաշ վարդապետէ ասացեալ («Ա-Ք») – *Անձն իմ, արի՛ աղաւթէ դէմ արարողին, / ո՛վ անձն իմ, արտասուաւք պաղատէ՛ ի մէջ գիշերին... քերովբէք քեզ երգեն, իմ Տէ՛ր, փառըք քեզ։*

Տե՛ս նոյն տեղում, էջ 143-149։

59. *136ա-8ա* Խրատական բաներս՝ ի Նախաշ վարդապետի ասացեալ («Ա-Ք») – *Անցանէ մեծութիւն եւ փառք աշխարհիս, / աւերի եւ քակտի շինուած տաճարի... մի՛ մատներ զհոգիդ տանջանաց։*

Տե՛ս նոյն տեղում, էջ 129-136։

60. *138ա-9ա* Նորին Նախաշ վարդապետէ ասացեալ – *Երազ է եւ սուտ, եղբա՛յրք, / յաշխարհիս բաներն ի լման... ի հոգ աշխարհիս դատիս, / շահ չունիս քան զենն աւելի։*

Տե՛ս նոյն տեղում, էջ 123-126։

61. *139աբ Ինչ շահ է քո զուր դատիլդ, / երբ յաւտար երկիր կու տանին... մահուն աւրըն թէզ կու[գ]այ, / որ չի տայ քեզ պահ մի յամենալ (այս եւ նախորդ տաղերը ձեռագրում առանձնացուած չեն)։*

Տե՛ս նոյն տեղում, էջ 127-128։

62. *139բ-41բ* Խրատ խաղաղութեան՝ [Ի Յովանիսէն Թլգուրանցու ասացեալ է. ձեռ. 2676, 194բ] – *Խրատ մի տամ սիրով քեզ, / թէ միտ դընէս ու լըսէս... ագահ կամ արբեցաւղ ես, / դրախտին կենաց զըրկած ես։*

63. *141բ-2բ* [Կարապետի Բաղիշեցւոյ] Ողբ ի վերայ մեղացն եւ նախատինք անձին եւ պաղատանք առ Աստուած («Ա-Ն») – *Աստուա՛ծ իմ, Յիսուս Քրիստոս, կենդանի եւ կենարար, / զիս կենդանացո, հոգով մեռեալ եմ, մեղաւք չարաչար... նայեա՛ յաղաչանըս մեր եւ գթա՛յ ի մեզ տիրաբար։*

Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (ԺՋ-ԺԷ. դդ.), Բնագրեր, հտ. Ա., աշխ. Յ. Սահակեանի, Երեւան, 1986, էջ 36-39։

64. *143ա-4ա* Այլ ողբ ապաշխարութեան – *Ողբս ադիողորմ, եղբա՛յրք, ինձ եհաս երեմիային... եւ մէտ-մէտ մեղաց ալիքս քայքայեն զտախտակս արակայ։*

65. *144ա-5բ* Ողբ ապաշխարութեանն – *Ա՛նձն իմ, ընդէ՞ր ես ծուլացեր... զի դու միայն ես մարդասէր։*

66. *145բ-6բ* Այլ տաղ – *Կամ առաջի քո ամաւթով, / գործեր եմ շատ չար եւ յոլով... եւ ես տաց քեզ զայլ, որ փոխան։*

67. *146բ-51բ* Ողբ դատաստանի աւուրն եւ դըժոխոցն եւ անհուն ոդանց – *Յորժամ տարերքըն դըղըրդին, երկինք, երկիր նոր նորանան... եւ բընակարան յոյս եւ ապաւէն զքեզ ունիմք, մաքուր ծընօղ անապական։*

68. *152բ* [Աւրհնութիւն] – *Աւրհնեալ է Դ. թեւն խաչին, / աւրհնեալ հրամանքն փրկչին... երեք ափով ջուր ի ջուրցին։*

69. *152բ* [Տաղ սիրոյ] – *Անցայ ու տեսայ զիմ եարն՝ ի վերա խալուն է նստած... արեւու տու այլ շատ իրաց։*

70. *155ա-62բ* [Գրիգորի Նարեկացւոյ Մատեան ողբերգութեան]

ա. *155ա-7բ* [Վերստին յաւելուած կրկին հեծութեան... խասւ ընդ Աստուծոյ] – *(սկ.) ///Նալի գոյութեանս առցէ աշխարել բանիս յարմարութիւն... եւ ի հանդերձեալ մշտնջենաւորութիւն յայտնութեան աւուրն մեծի յաւիտեանս. ամէն (Բան Իե.)։*

բ. *157բ-62ա* Վերստին յաւելուած կրկին հեծութեան... խասւ ընդ Աստուծոյ – *Եւ քանզի ըստ ողբաձայնիցն բանաստեղծութեանց... եւ ստեղծեալ կրկին ի փրկութիւնն անմահից կենացն անախտականաց, եւ քեզ ընդ Հաւր, Հոգոյդ Սրբո փառք յաւիտեանս. ամէն (Բան Իէ.)։*

գ. *162աբ* Վերստին յաւէլուած կրկին հեծութենէ – *Եւ արդ, զորս յայտնեցից եւ յաղագս ոյց նշանակեցից...*

զյոգնագլուխն պոռնկութիւն, թէ զառողջութեանն անբժշկութիւն /// (վջ., Բան ԻՀ.)։

71. *163աբ* [Հարցմունք տոմարականի] – *(սկ.) ///ոցն ընդ եւ այս է, որ ասէ... վասն զի առաջին ամի թվականին։*

72. 165ա Վասն ԲԺ.ան կենդանակերպիցն – *Առաջնոյ գիտելի է, զի խոյն ունի ի խոյէ զնմանութիւն դիմակին... կենդանակերպք ըստ խորհրդոյ է բաժանեալ ի վերայ մարդոյ։*

73. *166ա-75բ* Տաղ Ներսէսի հայրապետին է [Ներբողեան տաղաչափական ի վերայ վարուց Մեծին Ներսէսի Առաքել վարդապետի ասացեալ. ձեռ. 3853, 115բ] – *Աւրհնեալ անուն անճառ Աստուծոյ մեծին, / Հաւր եւ Որդոյ, Հոգւոյ նոցին փառակցին... մարգարէ հոգելից զգալոցն պատմող / եւ զուղղափառութիւն միշտ ուսուցանող։*

74. *176ա-8ա* [Պատմութիւն սուրբ հօրն Աբրահամու եւ Սահակայ՝ որդոյ նորա եւ Մամբրէի ծառայի իւրոյ. ձեռ. 569, 254բ] – *Աբրահամու հաւրն անուն Թաբայ էր... կուզէ զքեզ փարաւոն առնու եւ իւր կին արասցէ։*

75. *178բ-9ա* [Տաղ] (հայատառ թրերէն) – *Աբգալ սիւթահէդ դիմսաւզէ կետէրէկ... պիզի սալախ յիւզէ կիտէրէք։*

76. *179ա-80բ* [Տաղ Յակոբայ Սսեցւոյ] – *Այս տաղ գուսական բե՛ր Ակոբ լեզուն, / տես նելէր, տեսեր նայ ի Ղարասուն... ասող, լսոցդի, գըրոցդի թըղտուն, տես նել՛ (զուգահեռ ունի թուրքերէն թարգմանութիւն)։*

Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (ԺԶ-ԺԷ. դդ.), Բնագրեր, հտ. Բ., աշխ. Յ. Սահակեանի, Երեւան, 1987, էջ 273-276։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *Պհպ. եա (1678 թ., ԺԹ. դ.ի շղագիր) 1678 թուին.* Մանուկ Խորճիով։

Ծնթ. 1678 թուականը գուցէ վերաբերում է լատինատառ տպագիր Ա-Դ. պտոկ-պիպ-ին։

2. *153բ (ԺՀ. դ., նոտրգիր) Էս գիրս գրեցաւ* Աճամ *տ[ի]րացու* Գասքար, *օվ որ այս գիրս գա[ր]դայ, մէկ բերան ասի, թէ Աստուած նրայ բանն [յա]ջողի։*

3. *153ա (1863 թ., շղագիր) 1863ին Յունվարի 2ին գրվեցավ գիրս ձեռամբս չնչից ծառայս Աստուծոյ* Կարապետ Պարոնեանց։

4. *1ա (1866 թ., շղագիր) Այս գիրքն կպատկանի* Ա-վետիք Մամիկոնովին, *1866ին ///։*

5. *57բ (1866 թ., շղագիր, մատիտով, լս.) 1866ին* Նախիջեւան /// Ավետիք Մամիկոնեանց։

6. *164ա (1869 թ., շղագիր, մատիտով) 1869ին Նոյեմբերի 9ին գրվեցավ ձեռամբ ծառայիս Աստուծոյ* Ավետիք Մամիկոնեանց։ Въ Таганрогъ Петру Павловичу Баранову, въ Г. Еврона Росигского барона.

7. *151բ (1870 թ., շղագիր, մատիտով) 1870 թիւ Նոյեմբեր 18ին* Պողոս Պաղօնօվից ձեռն տացէ։

8. *152ա (ԺԹ. դ., շղագիր, մատիտով) Ես իմոյ սիրելի Պէտրոս աղայ հաւր սիրով բարեւս կմատուցանեմ, իր բոլոր ընտանեացքն բարեւս կանեն։ ///* Баранову Павел Петровичу:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *պհպ. Բա, 100ա սեւ թանաքով ութանկիւն, երիցս՝* «ԱՍՏՈՒԾՈՅ ԾԱՌԱՅ ///», *սեւ թանաքով ութանկիւն, երկիցս՝ առանց գրութեան, 77ա սեւ թանաքով առանց շրջանակ, լս.՝* «AM»։

ՆՇՈՒՄ՝ *Ա. փեղկին սոսնձած թղթին՝ «38», պհպ. Բա՝ «1206/3411», 1ա՝ «ԺԷ., Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»։*

ԳՐՉԱՓՈՐՉ՝ *պհպ. Բա, 2ա՝ անընթեռնելի բառեր, 101բ՝ «Անսկիզբն Աստված, Տէր ողորմեա», 153ա՝ «Գրվեցաւ ձեռամբ Աստուծոյ ծառայիս», 153բ՝ «[Մասն հաշուեմատեանի] – /// 4 հոգի... պապայ տիրացու 2», 154ա՝ «[Տաղ սիրո] – Հուրն սիրո իմոյս ազգի... արդ, բողբոջեն ծառք իմաստից, օգնեա՛ Յիսուս, Փրկիչ բարի», 153բ, 154բ, 155ա լս.՝ ռուսերէն անընթեռնելի բառեր, 180բ՝ «Հար մէ, Հար մեր, որ երկինս, սուրբ եղիցի, է եւ ամենուն, որք են վար»։*


ՆԿԱՐԱՓՈՐՉ՝ *2ա՝ կիսախորան, 153բ՝ դէմք։*

3412
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

ԼԵԻՔՈՍԻԱ (ԿԻՊՐՈՍ) **Ջկե. – 1316**

ԳՐԻՉ՝ Սմբատ։ ՍՏԱՅՈՂ՝ Ստեփանոս ֆիլ, ճուաճ սրկ. (եղբարբ)։

ԹԵՐԹ՝ 298+3 (կրկն.՝ թ. 3, 154, 288). չգրուած՝ 3աբ, 3դ, 233բ։ ՊՐԱԿ՝ Բ-ԻԷ×12 (Բ 10, է, ԺՉ, ԺԸ 11, ԻԷ 6)։ ՆԻԹ՝ մագաղաթ։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15,2×10։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (10×7)։ ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 58ա)։ ՏՈՂ՝ 16-19։ ԿԱՉՄ՝ մուգ շագանակագոյն դրոշմազարդ կաշի. միջուկը՝ տախտակ. աստառը՝ դրոշմազարդ կտաւ։ ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա-Գ+Դ-Չ՝ դեղնաւուն չգրուած թուղթ։



Նմուշ 58ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ – Կիսախորան՝ 4ա։ Ճակատազարդ՝ 30ա, 98ա, 129ա, 165ա, 198ա, 234ա։

Լուսանցազարդ՝ բուսական, թոչուն: Ձարդագիր՝ հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, մանուշակագոյն, վարդագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին ճեռծուած, կապիչներն ու գամերն ընկած, լուսանցակողերը սեւացած. գիրը խոնաւութիւնից տեղ-տեղ ջնջուած, դժուարընթեռնելի, հաճախ անընթեռնելի, թերթերին զանազան հետքեր, թափուած մասերը լրացուած հետագայի թղթով, 2բ էջի գիրը լուացած, անընթեռնելի, թ. 8ը կարուած հակառակ. կարդալ՝ 8բ-8ա, թ. 287, 288գդ, 293՝ սխալ կարուած. կարդալ՝ թ. 285, 287, 286, 288գդ, 288աբ, 289-92, 294, 293, 295:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-2ա* [Պատճառ Սաղմոսարանի՞] – *(սկ.) ///ի խորան Տեառն, ասէ Մով[սէս]… Արդ, ամենայն սաղմոսացն պատճառ ինքն աքանչելին Դաւիթ է /// (2 բառ անընթեռնելի) պայծառացան:*

Բ. *4ա-281բ* [Սաղմոսարան]

Տե՛ս ձեռ. 1642, 1ա-239ա: 1/4ա-29բ (բ՝ չիք): 2/30ա-61բ (բ՝ չիք): 3/61բ-97ա (գ՝ չիք): 4/98ա-128բ (բ՝ չիք): 5/129ա-64բ (բ՝ չիք): 6/165ա-97բ (բ՝ չիք): 7/198ա-233ա (գ՝ չիք): 8/234ա-81բ (է՝ չիք, ենթագլուխները խառը հերթականութեամբ՝ ա, զ, գ-ե, բ):

Ծնթ. Գրէթէ բոլոր էջերի ստ. լս-ներում կան հետագայի աղօթական յաւելագրութիւններ՝ 17բ-8ա՝ «Ոչ է հասեալ ձեզ ժամ…», 32բ-3ա ստ. լս.՝ «Ուրախացի՛ր ի Տէր, զի կատարի զխնդրուածս ձո եւ պահէ զձեզ յամենայն չարէ Աստուած», 34ա ստ. լս.՝ «Աստուած ազգնական է ձեզ, մի՛ կանչեր, թէպէտ տրտմիս յոյժ խնդութեամբ ///», 36բ ստ. լս.՝ «Ոչ պակաս առնէ ձեզ Աստուած զամենայն բարութիւնս», 37բ, 38բ, 40ա, 41բ, 43ա, 44ա, 46բ, 49ա, 50բ, 52բ՝ «Սակաւ մի նեղութիւն կրես, բայց բարի լինի ձեզ», 54բ, 57բ, 65ա, 67ա, 68բ, 70բ, 71բ, 73ա, 74ա, 76բ, 78բ, 80բ, 86բ, 88ա, 89ա, 90ա եւ այլուր:

Գ. *282ա-96բ* [Ձափածոյ թուղթ եւ խրատ Ներսեսի Շնորհալւոյ]

1. *282ա-285բ, 287ա* Տեառն Ներսիսի խրատ ուսումնականաց մանկանց ի դիմաց Այր եւ Բենից տաճկաց, ոտանաւոր տաղիւ չափոյ («Ա-Ք», «ՆԵՐՍԵՍԻ Է») – *Առաջին ըզքեզ տըղա, / հանէ յիմաստըն գերակայ… զականջս քո սորա դու բա՛ց, / լսէ՛ ու ի միտ ա՛ռ, զոր ասա գ[ր]ած:*

Տե՛ս Գ. Մուրադեան, Ռ. Պօղոսեան, Ներսէս Շնորհալու չափածոյ թուղթ եւ խրատ, Մատենագիրք հայոց, հտ. ԻԱ. (ԺԲ. դ.), Երեւան, 2018, էջ 493-500:

2. *287աբ, 286աբ, 288գդ, 288աբ, 289աբ* Բան հաւատոյ վասն անեղին եւ եղելոց, բարառնաբար՝ ի դիմաց հայկական տաճից չափաբերմամբ ոգեալ ի Ներսիսէ («Ա-Ք», «ՆԵՐՍԵՍԻ Է») – *Անըսկիզբն ասէ զԱստուած, / անեղ բնութիւն ոչ արարած… տո՛ւք փոխարէն զոր եւ պարտիք, / զաղաւթս սուրբս, որ պաղատիք:*

Տե՛ս նոյն տեղում, էջ 470-477:

3. *289բ-92բ, 294աբ, 293աբ, 295ա-6բ* Նորին բան ներտաղական ի խրատ ոգւոց համայնից, ի դիմաց մեռոյին տաճից յիւրաքանչիւրս բանից («Ա-Ք», «ՆԵՐՍԵՍ») – *Աստուծոյ զքեզ մերձակայ, / խրատէ լինել թէ հաւատա… սուրբ հոգեւոր բանըս պէս-պէս, / որոց նպաստ եղեւ ներսէս:*

Տե՛ս նոյն տեղում, էջ 481-492:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, ԺՋ. դ.

1. *97աբ* [Տաղ յարութեան. ձեռ. 425, 9բ] (նոտրգիր, «ԳՐԻԳՈՐ») – *Գոչէր հրեշտակն ի վիմէն… ի Գալիլէայ փութացեալ / զՅիսուս տեսի յարուցեալ:*

2. *233ա* [Տաղ բառասնօրեայ գալստեանն. ձեռ. 424, 43բ] (բոլորգիր) – *Քրիստոս փառաց թագաւորն այսաւր եկեալ յընծայում քառասնօրեայ գալստեամբ կատարելով զխորհուրդն, զոր մարգարէն /// (չշարունակած):*

3. *298բ* [Աղիւսակ իմն]

Ծնթ. Խիստ գունաթափ, անընթեռնելի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

297ա Փա՛ռք քեզ անսահման անուն եւ անզուգական անձնաւորութիւն՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Յամի եւթն հարիւրորդի վաթսներորդի հինգերորդի (1316) ամի շրջաբերութեան հայոց տումարի, ի հայրապետութեանն Հայոց տեառն Կոստանդնեա *եւ ի թագաւորութեանն* Հայոց Աւշնի, *եւ ի թագաւորութեանս* Կիպրոսի *ոչ Հեռէ գրեցաւ գերահրաշ եւ ամենապայծառ, լուսայիղձ եւ բազմատենչ գիրս Սաղմոսաց, յոգնագունակ բայիւք եւ ճոխական իմաստիւք, որում ցանկացաւղ եղեալ այսմ գեղեցիկ տառիս, բարի անուն եւ ընտրեալ քահանայն* Ստեփանոս, *հանդերձ հարազատ եղբարբն իւրով՝ ձուան սարկաւագան, |297բ| որ եւ ստացան զսա ի վայելումն անձանց իւրեանց եւ յետ աստեացս բարեաց յիշատակ եւ գանձ անկողոպտելի յաւիտենական, որ եւ կանգնեցին զգեղեցիկ եւ զպանձալի տաճարն ի քաղաքն* Մաղասա, *յանուն քաջ նահատակին Քրիստոսի՝ սրբոյն* Սարգսի, *յիշատակ նոցա աւրհնութեամբ [եղիցի]:*

Արդ, աղաչեմք զամենեսեան, որք աւկտիք ի սմանէ ուսմամբ կամ գաղափար առնելով, սրտի մտաւք յիշատակեսցի՛ք զստացաւղք սորա զՍտեփանոս քահանա, եւ զեղբայրն իւր զՁուան սարկաւագ եւ զծնաւղս իւրեանց՝ զԳրիգոր քահանա եւ զՍպիլ՝ զգնացեալսն առ Քրիստոս: Աղաչեմ յիշել ի Քրիստոս զտիկնայեաց տիկինն՝ զսինիջալէս աստուածապահ կղզոյս Կիպրոսի, *եւ զծնողս |298ա| իւր, այլ եւ զսպասաւորսն մեր՝ զԱստար տիկին եւ զՄարիամ, զի բազում են աշխատել ի վերայ մեր, յիշատակ նոցա աւրհնութեամբ [եղիցի]:*

Արդ, եղեւ զրաւ գրչութեան սորա ի կղզիս Կիպրոս, *ի հոյակապ քաղաքս* Լեւոսիա, *ընդ հովանեաւ սրբոյ կուսիս* Վաւվառա, *ձեռամբ ամենամեղ եւ անարհեստ գրչիս* Սմբատա, *աղաչեմ յիշել ի Քրիստոս եւ զիմ անարժանութիւնս, եւ Աստուած յիշողացդ եւ յիշելոցս առհասարակ ողորմեսցի, եւ նմա փառք յաւիտեանս:*

Տե՛ս ԺԴ. դ. յիշ-f, էջ 122-123, Հ^{մր} 159, նաեւ ԺԴ. դ. յիշ-f, Ա. (2018), էջ 308-309, Հ^{մր} 282:

296բ Ո՛վ աստուածասէր ընթերցողք եւ լսողք հոգեւից բանիցս, զստացաւղ սորա՝ զսրբասնեալ եւ զպատուական քահանա[յ] զՍտեփաննոս, *եւ զհարազատ եղբայրն իւր զձուան պատուական սարկաւագ, եւ զծնողք սոցա՝* զԳրիգոր *քահանա[յ] եւ* զՍպիլ, *յիշեսցի՛ք ի սուրբ եւ ի մաքրափայլ յաղաւթս ձեր, այլեւ զհոգի ամենամեղ գրչիս* Սմբատի, *եւ ամենառատն Աստուած զձեզ յիշեսցէ: Գրեցաւ ի թո[ին] ՉԿԵ. (1316):*

Տե՛ս նոյն տեղում:

2ա Զստացաւղ սորա զՍտեփաննոս *քահանայ եւ զձուան սարկաւագ:*

Ծնթ. Գիրը լուացած, ընթերցումը պայմանական է:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

298ա (ԺԵ. դ., բոլորգիր) ես՝ Ստեփաննոս *վարդապետս, յուսով դիմեց[ի] ի սուրբ քաղաքն* Երուսաղէմ՝ *երկրպագութիւն ս[ուրբ] տնաւրինականացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, եւ ստացայ զսուրբ Սաղմոսարանս ի հալալ արդեանց իմոց՝ յիշատա[կ հո]գոյ իմոյ, որք աւգտիք ուսմամբ [կ]ամ [աւ]րինակելով յաղաւթս [յիշեցէ՛ք]:*

Տե՛ս ԺԵ. դ. յիշ-f, Գ., էջ 539, Հ^{մր} 787:

ՆՇՈՒՄ՝ *պհպ. Աա՝ «3412», 1ա՝ «1235/3412», պհպ. եբ՝ «Վերականգնված է հին ու նոր կաշվով, հին կազմատառով, գլխ. վերականգնիչ՝ Լ. Աղաբեկյան, Երեւան, 1977 թ.»:*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *3գ՝ «ես գրեցի Մարտի ///», 3գ, 31բ՝ զանազան տառեր եւ բառեր, 128բ-9ա՝ խզբզոց, 284բ-5ա՝ «Այբուբեն՝ ա-թ»:*


ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *233բ՝ ճակատազարդ:*

3413
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ՌՃՃԸ-ՌՃՃԹ. – 1709-1710

ԳՐԻՉ, ՍՏԱՑՈՂ՝ Յակոբ Թոխատցի:

ԹԵՐԹ՝ 375: **ՊՐԱԿ՝** 12+Ա-Դ×8 (Դ 10)+Ա-ԼԶ×8 (Բ 2, Է 12, ԼԴ 10)+1-5×8 (5՝ 9): **ՆԻՒԹ՝** թուղթ. լուսագծերով: **ՄԵԾՈՒԹԻՒՆ՝** 15,7×10,8: **ԳՐՈՒԹԻՒՆ՝** միասիւն, սեւով սահմանագծուած (13,5×8,5): **ԳԻՐ՝** նոտրգիր (նմուշ՝ 210ա): **ՏՈՂ՝** 18, 14: **ԿԱՋՄ՝** շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դռնակով եւ գօտէնման կապիչ-ճարմանդով. միջուկը՝ տախտակ. աստառը՝ դրոշմազարդ կտաւ:



Նմուշ 210ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, դռնակի եւ Բ. փեղկի հիմնամասը վերից պոկուած, մեղատէ հիմերով եւ նոյնպիսի ագուցիչ-ծայրով սկզբնապէս ունեցած երկու կապիչներն ընկած, Ա. փեղկի մետաղէ հիմերից միաւորուող գօտէնման ծայրով հագցուել է Բ. փեղկի մէջտեղում դրուած ճարմանդին. թ. 1ի ստ. աջ անկիւնը պատռուած, թ. 1-88, 173-80ը հիմերի կարը թուլացած, անջատուած, գրաղաշտը խոնաւութեան եւ աղտոտուածութեան հետեւեռով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

– 2ա-3բ Ցանկ թէ ի բանիս *– Ա. Յաղագս հարցումն Բարսղի առ Գրիքոր... ԻԴ. Քարոզ ի բան Սողոմոնի, որ ասէ՝ Լաւ է կոյր աչօք, քան գկոյր մտօք:*

Ա. *4ա-12բ* Ա. Հարցմունք սրբոյն Բարսղի Կեսարացւոյ եւ պատասխանի եղբօր իւրոյ՝ սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ *– Բարսեղ ասէ՝ Յորժամ ոչ էին երկինք եւ երկիր, աստուածութիւն ուր վերակացմէր... Գրիգոր ասէ՝ Տէր Աստուած, օրհնեսցէ՛ ըզհաւատացեալքս միաբան:*

Բ. *13ա-45բ* Բ. Պատմութիւն եւ խօսք Խիկարայ իմաստասիրի, զոր պա[ր]տ էր իմանալ ամենայն մարդոյ. Վասն շահի եւ օգտութեան

Տե՛ս ձեռ. 464, 40ա-56ա: ա/13ա-4բ: բ/14բ-32ա: գ/32ա-43ա: դ/43ա-5բ:

Գ. *46ա* [Դեղագիր] Սիպիդակ համի ուտուցի դեղ *– Կուլաբ եւ ելջվգ եւ մէկ էլ ճովզ սբիդակ սանդալըն... գուլաբօվ խմէ, գլավանա Աստուծով:*

Դ. *46բ* [Վասն Կատարինէ կուսին] *– Ջատարինէ սուրբ գուսն եւ նահատակըն հայցեալ է Աստուծոյ իւր գատարման ժամանակին, թէ՝ Ո ոք որ յիշելով զիս իւր հոգէվարին բարի հրեշտակի, անձըն արա՛ քաչցրութեամբ ավանդէլ գհոգի նորա:*

Ե. *47աբ* Ցաղագս Ժ. բանից զգուշութեան ի ժամ աղօթից *– Նախ չէ պարտ խօսիլ ի ժամ աղօթիցն... այլ թողուլ զպարտս ամենեցուն:*

Զ. *47բ-58բ* Գ. Յոհաննու վարդապետի ասացեալ վասն աւերման աշխարհի եւ վասն գալստեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ եւ վասն դատաստանի աւուրն

– Մեք, որ ակն ունիմք գալստեանն Քրիստոսի վկայութեամբ Սուրբ Գրոց... նահատակութիւն է իբրեւ զՅոբայն, եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս. ամէն:

է. *58բ-61բ* ե. Յաղագս թուելոյ զերկնային խնդութեան – *Համառօտաբար թուեսցուք զերկնային խնդութիւնն ոչ զեզականն... զոր եւ մեզ շնորհեսցէ սկիզբն եւ վախճանն ամենայնի, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն:*

Ը. *61բ-81ա* Ջ. Երանելոյն Եփրեմի վասն ապա[շ]խարութեան – *Ասէ երանելի մարգարէն եզէկիել՝ Անօրէնն եթէ դարձցի յանօրէնութեանց... եւ ի գահոյս հանգուցանէ ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ:*

Թ. *81բ-127ա* [Քառոզք Գրիգորի Տաթեւացւոյ, ի Ձմեռան հատորէ]

1. *81բ-94ա* է. Յայլմէ դառնեալ քառոզ վասն պահոց եւ պահեալ զաւ. (40) տիւ եւ զաւ. (40) գիշեր, ապա խաղցեաւ – *Ասէ Յոբ, թէ կեանք մարդոյ պատերազմ է ի վերայ երկրի... եւ նորոգիլ բարի գործովք ի փառս նորոգողին մերոյ Քրիստոսի Աստուծոյն փառք յաւիտեանս (ԻԳ.):*

2. *94ա-107ա* Ը. Յայլմէ քառոզ երիմովին՝ ի դէմս բահանայից եւ ժողովրդոց, ի բանն՝ «Այր մի իջանէր յԵրուսաղեմէ յերիխով եւ անկաւ ի ձեռս աւազակաց, որք մերկացուցին զնա եւ գնացին» – *Ասեն իմաստունք, թէ բարի է միաբանիլ ընդ բարիսն... նոյնպէս ամենայն պաշտօնեայք եկեղեցւոյ առնուն զվարձս ի Քրիստոսէ Աստուծոյ, որ է օրհնեալ յաւիտեան. ամէն (ԿԴ.):*

3. *107ա-17բ* Թ. Դարձեալ քառոզ յառաջին կիրակէն, ի բանն՝ «Ճրագ մարմնոյ ակն է, եթէ ակն քո առատ է, ամենայն» – *Ամենայն բանք առակաւոր քարոզութեանցն Քրիստոսի դիւրալուր են միանգամայն... յորում եւ զմեզ արժանաւորեսցէ Քրիստոս ողորմութեամբն իւրով սրբութեամբ պահել զպահքս առաջի խնդութեամբ եւ յուսով հասանել յարութեան շնորհացն եւ փառացն իւրոց, որ է օրհնեալ ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյն. ամէն (ԿՋ.):*

4. *117բ-27ա* Ժ. Նորին դառնեալ ի սկիզբն պահոց, վասն խոստովանութեան, ի բան՝ «Լուացարո՛ւք, սրբեցարո՛ւք» – *Սրբութիւն աղտեղութեան ոչ միայն ի կենդանի մարդս տեսանեմք... որ եւ զմեզ արժանի լինիլ Յիսուսի Քրիստոսի ի Տէր մեր, որ է օրհնեալ յաւիտեանս (ԿԹ.):*

Ժ. *127ա-373բ* [Քառոզք Ղուկասու Լօռեցւոյ]

Տե՛ս ձեռ. 746, 1ա-236բ: ա/127ա-37ա: բ/137բ-47բ: գ/148ա-60ա: դ/160ա-9բ (վջ. տարբեր՝ այսպէս մերձենայ ի մարմինն քրիստոնէի): ե/չիք: զ/169բ-87ա (անխորագիր, սկ. տարբեր՝ Յերբ տեսանէ զահաւոր եւ զանձնականն, որ ասէ...): է/187ա-210բ: ը/210բ-34ա: թ/340ա-58ա: ժ/358բ-73բ: ժա/298բ-323ա: ժբ/323ա-39բ: ժգ/234բ-66ա: ժդ/266ա-77ա: ժե/285ա-98բ: ժզ-իա/չիք:

Ունի՝

– 277բ-84բ ԺԹ. Քառոզ ի բան օրինացն, որ ասէ. «Պատուեա՛յց զհայր ſո եւ զմայր ſո, զի ſեզ բարի լինիցի. շնորհաբա՛շխ Տէր Յիսուս Քրիստոս, օգնեա՛ ինձ – *Եւ պարտ է գիտել, զի Դ. բան զաւակն ծնօղին պարտական են... եւ ազատիլ ի պարտուց մեղացն յամենայնէ:*

Ծնթ. Յղտղ՝ Հ՝ր 746 ձեռագրի հմմտ. ունի խմբագրական, շարադրաճախային զգալի տարբերութիւններ:

Տե՛ս է. Յարութիւնեան, Ղուկաս Լօռեցին եւ նրա քարոզգիրքը, Բանբեր Մատենադարանի, Հ՝ր 10, Երեւան, 1971, էջ 213-236:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1բ Թվին ՌՃԾ. եւ Ը.ին (1709) ըսկիզբն արարաք այս ժողովածուիս, ՌՃԾ. եւ Թ.ին (1710) աւարտեցաք: Այսմ ամի ծնաւ իմաստնացեալն Սողոմոն, *ամսեանն Մայիս ԻԲ. (22). օրն շաբաթ, Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ:*

Թվին ՌՃԽ. եւ Դ.ըն (1695) ծնաւ Հովիփսիմէն:

ՌՃԾ. եւ Բ.ին (1703) եկաւ Լեւոնն:

ՌՃԾԹ.ին (1710), Դեկտեմբերի է. Պարնի *որդի* Թէմուրազն *մեռաւ:*

ՌՃԾ. եւ Ջ.ըն (1707) գնացի սուրբ քաղաքն Երուսաղէմ *եւ՝ մեղաւոր տէր* Յակոբս:

3բ Շնորհօքն Քրիստոսի ահա այս թվականիս ԱՀԱ ԿԵՆԴԱՆԻ ԵՄ (1+ 70+ 1+ 60+ 5+ 400+ 4+ 1+ 400+ 20+ 5+ 200= 1167+ 551= 1718), իսկ ըզստոյգ հռոմայեցոց թվական գա ձայնէ զմեզ, զի ահա եկի: Մվ եղբայր, որ տեղեակ ես թվականն եդեալ կա, զի թէ իմանան:

277ա Որոց արժանի արասցէ Քրիստոս Աստուած, եւս առաւել ըստացող գրոյս մեղապարտ եւ անարժան տէր Յակոբիս *(նման՝ 137ա, 210բ, 234ա, 266ա, 298բ, 323ա):*

339բ ՏՀ՛ր Աստուած Յիսուս Քրիստոս, փրկեա՛ եւ ազատեա՛յ զամենայն հաւատացեալս զքրիստոնեայս այնպիսի դառն մահուանէ, եւս առաւել զգծօղ սորին՝ տէր Յակոբն *(նման՝ 358ա, 373բ):*

374ա Փա՛ռք անմահին արարչի, ամենակալի, ամենազօրի եւ սկզբնական պատճառէ յԱստուծոյ Հօրէ, ի գերակատար եւ ի գերածնունդ Նորին բնութենէ, իսկակից եւ անժամանակ Միածնին Բանէ, ի գերազանց եւ ի գերալրական բղխմանէ Նորին էութենէ, ինքնահզօր եւ ամենազօր Հոգւոյն Ճշմարտէ, զի որոյ տէրութիւն է անբաւելի զօրութիւն, անխմանալի իսկութիւն, անճառելի որպիսութիւն, անհասանելի որքանութիւն, անքննելի եւ անպարագրելի, որ ոչ տեղօք սահմանի եւ ոչ մտօք ընբռնի, քան զկարն: |374բ| Յաղագս այսորիկ յետնեալս ի բարեաց, ծնունդս վերջին, ի նսեմացեալ եւ երեկոյացեալ ժամանակիս եւ թափուրս ի բարեաց Յակոբ *էրէց*

Թոխատցի, *որ անունս միայն ունիմ եւ գործս ոչ, զի ոչ գոյր ուստէք փրկութիւն մեղսաթաւալ հոգոյ իմոյ, որ զամենայն աւուրս կենաց իմոց ծախեցի ընդ սատանայի, այլ միայն հաւատս <միայն> մնաց կենդանի: Վասն որոյ եւ յուսամ ի Քրիստոս եւ ի նորին կենսատու չարչարանսն, զի սովաւ գտից զողորմութիւն ի Տեառնէ, սակս որոյ ստացա եւ աշխատեցի ձեռամբ իմով զՔառոզ|375ա|գիրքս այս՝ ի վայելումն յանձինս եւ յիշատակ հոգոյ իմոյ, յաղագս որոյ խնդրեմ հարց սրբազանից եւ աղերսեմ եղպարցդ մաքրագունից, զի որում յաւուր եւ ժամանակի որք պատահիքդ զայս շահաւէտ քարոզիս՝ ընթեռնելով կամ գաղափարելով, յիշեսջի՛ք ի մաքրափայլ յաղօթս ձեր զիս՝ վերոյգրեալ չար եւ մեղսաթաւալ ծերունիս, եւ գծնօղս իմ՝ հոգեւոր եւ մարմնաւոր, իսկ անգարութեան գրոյս անմեղադրելի լիցո՛ւք եւ սքալանաց, իսկ որ օգտիք ի սմանէ եւ հաճելի իցէ Տեառն շնորհ, միայն ան|375բ|պարսաւ մնացից ի պատահելոցդ ծարեալ Քարոզգիրքս: Եղեւ ի ժամանակս կաթողիկոսութեան տեառն Աստուածատուրին եւ թագաւորութեանս Վախտանգին եւ իւր որդի Բագրատուեաց յազգէ Բաֆարին, որ կայ յայժմ եւ վարէ թագաւորութիւն, զոր Տէր Աստուած հաստատուն եւ ամուր ձեռօք պահեսցէ ի պարծանս քրիստոնէից. ամէն: Գծագրեցաւ թուականիս ՌՃՄԹ. (1710), յայսմ ամի ծնաւ Սողոմոն, Մայիսի ԻԲ. (22), օրն շաբաթ, Հռէփսիմէն՝ ՌՃԽԴ. (1695):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *1բ (1723 թ., նոտրգիր) Թվին ՌՃՀԲ.ն (1723) էր /// ալպաշն* Վաղթանկ *///ո դարձոյց եւ /// դուռն փակէ ///վարի ամս[ո]յն:*

2. *1ա (1725-1778 թթ., նոտրգիր) Թվին ՌՃՀԴ. (1725) Յուլիսի գնաց* Ռեճէգի *աղան քաղաքէս* Երեւան */// բազում չարիքս գ/// եւ այնչափ արեան եղեղ, զոր ոչ կարեմ թվով: Արդ, զկնի հատաւ* Խուղ *փաշան եւ կալան զմելիք աշխարի ///ե ե. Փետրվարի /// Բ. օրն Գ.շափթ է ծընաւ* Օհաննէսն*: Թուին ՌՄԻԷ. (1778), ի Փետերւարի ԺԲ. (12) Մեծ բարեկենդանի օրն Բ.շափթէ ծընաւ* Ստեփ[անոս] */// թիւին /// բերի ե. օ///:*

3. *3բ (1766-1771 թթ., նոտրգիր) Թուին հայոց ՌՄԺԵ. (1766) Փետերւարի ԺԴ. (14), օրն Գ.շափթէ, ես՝ անարժան տէր* Յակոբս *օրհնըւեցայ ձեռամբ* Սարքիս *վարդապետին: Թուին ՌՄԻ. (1771)* Սողոմոն *ծնաւ Յունարի ԺԶ. (16)՝ Առաջաւորի բարեկենդան, օրն կիրակի:*

4. *373բ (1769 թ., նոտրգիր) Թուին ՌՄԺՀ. (1769) եւ Յունիսի ԱԺ. (11) թուման տուի շահով* Յարութինին*, ամսէնըն թումանին Բ. շահի: Մարդասըպանի* Մկրտիչ *ձեռով ԺԱ. (11) մինալթուն փող, Խ. (20) լիտր ալուր, ե. ստիլ կագ, Գ. լիդր բրինձ, Ա. լիտր աղ, ԺԲ. (12) մինալթուն փուղ՝* Պօղոսին*, Ա. թուման՝* Մօսէան *ասլ/// (անընթեռնելի), Ա. լիդր կագ, Դ. ըստիս աբրշոմ, Ա. թուման էլ՝* Մօսին*:*

5. *45բ (1824 թ., նոտրգիր) Թվին հայոց ՌՄՀԳ.ին (1824) ի քաղաքեն* Թիֆլիզ *կամ* Կանճայ *ռուսք են ծուռ Ջատիկ արարին, մէկ շաքաթ մեր Ջատեկիցէն առաջ, որ Ա. շաքաթ պաս մնաց, որ ռուսի ժամանակ էր, ոմանք պահէցին, ոմանք էլ առաչուց Թվին ՌՋ. եւ երեքին (1634) հոռոմ ազգն էլ ծուռ Ջատիկ էն արէլ:*

6. *1ա.ին սոսնձած թղթին (1830 թ., շղագիր) Յիշատակ մահտեսի* Մնացական Սասանեանից *իւր որդոյ՝* Մկրտչին*, 1830 Թվին:*

7. *1ա.ին սոսնձած թղթին (1900 թ., շղագիր)* Խաչատուր Մկրտչեան *մահտեսի* Մնացականեանից *ի յիշատակ էջմիածնայ Թանգարանին, 1900 Յուլիսի 27ն,* Գանձակ *(նման՝ 374բ.ին սոսնձած թուղթ):*

Ծնթ. Գրչութեան եւ ներագայ յիշատակարանների ամբողջութիւնը նման է տարեգրութեան:


ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *3բ սեւ թանաքով ուխտանկիւն՝ անընթեռնելի:*

ՆՇՈՒՄ՝ *1ա.ին սոսնձած թղթին՝ «1237», «ՌՃԾԹ. — 1710, Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս», 2ա՝ «1237»:*

ՆԿԱՐԱԳՐՈՒՔ՝ *290բ՝ լուսանցազարդ. բուսական, թռչուն:*

3414
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

ԺՋ. դար



Նմուշ 34ա

ԳՐԻՔ՝ Նեռսէս:

ԹԵՐԹ՝ 161: ՊՐԱԿ՝ Դ-ԺԹ×12 (Դ 5, ե, ԺԷ 11, Ջ, ԺԹ 8, Ը 9, ԺԱ 6, ԺԴ 7, ԺԸ 14, ԺԹ 10): ՆԻՒԹ՝ մագաղաթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 13,2×9,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (10,5×7): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 34ա): ՏՈՂ՝ 19: ԿԱՋՄ՝ շագանակագոյն կաշի՝ զոյգ կապիչով. միջուկը՝ տախտակ. աստառը՝ ծաղկազարդ մետաքս: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԴ՝ չգրուած թուղթ:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – ճակատազարդ՝ 31ա, 54բ, 76բ, 124բ: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն: Զարդագիր՝ թռչնագիր, մարդադէմ, հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, դարչնագոյն, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. վերակազմուած նոր կաշուով եւ աստառով. գրադաշտը խոնաւութիւնից գունափոխուած, սկզբից եւ վերջից անորոշ, ընդմէջ թ. 2-3ի, 9-10ի, 74-5ի, 137-8ի 1ական, 73-4ի 5, 99-100ի 3 թերթ ընկած, թ. 5ը ընկածի փոխարէն հետագայի լրացում, թ. 74ը վերից 3/4 չափով պատռած-հանած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տե՛ս ձեռ. 1642, 1ա-239ա: 1/չիք: 2/1ա-4բ (սկ. /// զանձն իմ խորհեցան որդոց ի մարդկանէ..., մէջտեղից թափուած՝ մի՛ եկեսցէ ի վերայ մե[ր ոտք] /// եղեւ բաժին Տեառն ժողովուրդ իւր Յակոբ..., այլ համարեա՛ զաշխատութիւնս մեր ի գործ արդարութեանց /// վջ.): 3/5ա-30բ (սկ. /// խոտոյ վազվազակի անցցեն..., մէջտեղից թափուած՝ պատմեցի եւ խաւսեցա[յ] եւ բազում եղեն, քան զթիւ ընդ գոհս /// եւ դու Աստուած իմ մի ամենար...): 4/31ա-54ա: 5/54բ-76ա (մէջտեղից թափուած՝ եւ ուրախ եղիցի սիրտ իմ երկնչել յանուանէ քումմէ /// 3[աւիտեան պահեցից նմա զողորմութիւն իմ...], մէջտեղից թափուած՝ քակեց զամենայն պարիսպ նորա եւ /// վասն զի լոյս են հրամանք քո ի վեր երկրի...): 6/76բ-99բ (որպէս զաղաւնի այնպէս մնչեցի, զի նուազեցան աչք իմ տեսանելոյ /// վջ.): 7/100ա-24բ (սկ. /// [փրկեաց] ի ձեռաց թշնամոյն...): 8/124բ-61բ (մէջտեղից թափուած՝ արդարք գոհասցեն զանուանէ քումմէ եւ բնակեսցեն /// եւ զնեղութիւնս իմ առաջի նորա պատմեցից..., եւ սրբոց առաքելոցն եւ մարգարէիցն եւ վարդապետացն եւ մարտիրոսացն /// վջ.):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

54ա Գոհութեամբ եւ ճշմարիտ խոստովանութեամբ անդադար փառաւորեմք զՀայր եւ զՈրդի եւ Սուրբ [Հոգի]: Ջմեղաւք մեռեալ հոգիս յիշեա՛յ ի Քրիստոս, ո՛վ սուրբ սաղմոսերգու, կարող է Աստուած ի ձեռս այլում ողորմութիւն առնել այլոց, եւ դուք ողորմութեան Աստուծոյ արժանաւորիք. ամէն:

76ա Տէ՛ր Աստուած, կարող յամենայնի, թո՛ղ զմեղս Ներսէս անարժանի. ամէն եւ եղիցի:

124բ Ո՛վ սուրբ սաղմոսերգողք, յիշեց[է՛ք] ի Քրիստոս Ներսէս մեղաւք լցեալս, աղաչ[եմ]:

154բ Ո՛վ սուրբ եղբայրք, յորժամ պատահիք սմա, յիշեցէ՛ք զմեղօք մեռեալ ոգիս եւ զծնողն իմ Արիստակէս քահանային, Աստուած զձեզ յիշէ իւր միւսանգամ գալստեան. ամէն:


ՆՇՈՒՄ՝ *1ա՝ «1239/3414»:*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *35բ, 36բ, 39բ-40ա՝ զանազան մասնիկներ, տառեր, 60բ վր. լս.՝ «ես՝ Արութիւնս գիրեցի», «Ա-Մ»:*

ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *29բ, 52բ, 60բ՝ լուսանցազարդ:*

3415
ԱՒԵՏԱՐԱՆ

ՌՃԸ. – 1659



Նմուշ 97ա

ԳՐԻՉ՝ Տիրատուր:

ԹԵՐԹ՝ 349. չգրուած՝ 2ա, 3բ-4ա, 5բ-6ա, 7բ-8ա, 9բ-10ա, 11բ-2ա, 13բ-4ա, 15բ-6ա, 17բ-8ա, 19բ-20ա, 21բ-2ա, 23բ-4ա, 25բ-6ա, 27բ-8ա, 32ա, 349աբ: ՊՐԱԿ՝ 17+10+Ա-ԻԷ×12 (ե, ԺԱ. 11, ԺԴ 10, ԻԷ 14): ՆԻՒԹ՝ մագաղաթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15,5×11,3: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (10×6,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 97ա): ՏՈՂ՝ 22: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դոնակով եւ երեք կապիչով. միջուկը՝ տախտակ. աստառը՝ կապոյտ մետաքս. Ա. եւ Բ. փեղկերին արծաթէ կրկնակազմ՝ դաշտը ծաղկազարդ, Ա. փեղկին՝ խաչելութիւն («INRI»), անկիւններում՝ աւետարանիչների խորհրդանիշերը (Ղուկասի խորհրդանիշին՝ «ՅԻՇԱՏԱԿ Է ԿՈՍ[Տ]ՂՍ ՄԱՂՏԵՍԻ ԱՋԱՐԻԱՅԻՆ ԵՒ ՍՈՒՐԲ Գ.ԽՈՐԱՆ»). Բ. փեղկին խաչ՝ կենտրոնում Աստուածամայրը մանկան հետ, անկիւններում՝ սերովբէ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+ԲԳ՝ չգրուած մագաղաթ:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Աւետումն՝ 2բ: Երկրպագութիւն մոգուց (Ծնունդ)՝ 3ա: Ընծայումն տաճարին՝ 4բ: Մկրտութիւն՝ 5ա: Պայծառակերպութիւն՝ 6բ: Յարութիւն Ղազարու՝ 7ա: Մուտ Յերուսաղէմ՝ 8բ: Խորհրդաւոր ընթրիք՝ 9ա: Ոտնլուայ՝ 10բ: Մատնութիւն՝ 11ա: Ձերբակալումն, Քրիստոս խաչընդուս՝ 12բ: Խաչելութիւն՝ 13ա: Յարութիւն՝ 14բ: Համբարձումն՝ 15ա: Հոգեգալուստ՝ 16բ: Աւետ դատաստան՝ 17ա: Լս-ային՝ Ծննդաբանութիւն Քրիստոսի՝ 33բ-4ա, Յովսէփի երազը՝ 34բ, Մոգք (Ծնունդ)՝ 35ա, Փախուստ յԵգիպտոս՝ 36բ, Յովհաննէս Մկրտիչ՝ 37բ, 283ա, Քրիստոս փորձեալ ի սատանայէ՝ 39ա, Քրիստոս ուսուցանէ աշակերտացն՝ 41ա, 42ա, 45ա, 48ա, 59բ, 82բ, 102ա, 168բ, 171բ, 219ա, 224բ, 246ա, 262բ, 288ա, 302ա, Քրիստոս եւ դպիր՝ 51բ, 65բ, 153բ, 166բ (ի տաճարի), Քրիստոս եւ Մատթէոս մաքսաւոր՝ 53բ, Յարութիւն դստեր Յայրոսի՝ 54բ, Բժշկումն կուրաց՝ 55ա, Քրիստոս ուսուցանէ ժողովրդեան՝ 55բ, 56բ, 68բ, 71ա, 87ա, 128բ, 142ա, 199բ, 201ա, 233բ, 235ա, 239ա, 294բ, 295բ, 303բ, 304բ,

322բ, Քրիստոս՝ 62ա, 129բ, 206բ, 227բ, 261բ, 268ա, 287բ (օձն անապատի), Բժշկումն դիւահարի՝ 64ա, 201բ, 222բ, 229ա, Սաղովմոն՝ 66ա, Գլխատումն Յովհաննու Մկրտչի՝ 71բ, Բժշկումն բանաձաց կնոջ դստեր՝ 76ա, Բժշկումն կոյրի, համեր եւ կաղի՝ 76բ, 293բ, Բժշկումն լուսնոտի՝ 81ա, Քրիստոս եւ փարիսեցի՝ 85բ, 305բ, Բժշկումն կուրաց՝ 91ա, Քրիստոս եւ թզենի տերեւալից (Առակ անպտուղ թզենի)՝ 92բ, 162ա, Քրիստոս ուսուցանէ ժողովրդեան եւ աշակերտացն՝ 99ա, Քրիստոս եւ Կայափա յատենի՝ 110ա, Մատնութիւն՝ 111ա, Քրիստոս եւ Պետրոս՝ 112ա, 159ա, 172բ, 235բ, 326ա, 346բ, Աղօթք ի Գէթսէմանի՝ 113բ, Ձերբակալումն՝ 116բ, Կախեալ Յուդայ՝ 117ա, Յովսէփ Արիմաթացի՝ 121ա, 179բ, 274ա, 342ա, Յարութիւն՝ 122ա, 180բ, Բժշկումն անդամալուծի՝ 130բ, 203բ, Քրիստոս եւ Ղեւի մաքսաւոր՝ 131բ, 204բ, Աշակերտք հասկ կորզէին եւ ուտէին՝ 132բ, Քրիստոս, Աստուածամայր, Յովհաննէս կամ Յակոբ՝ 135ա, Փոթորիկ ի ծովի՝ 138բ, 216ա, Յարութիւնն դստեր Յայրոսի՝ 140ա, Քրիստոս եւ բանաձաց կինն՝ 148բ, Բժշկումն խուլի՝ 149ա, Քրիստոս եւ մանկունք՝ 157բ, 253ա, Բժշկումն Բարդիմէոս կուրի՝ 160բ, 254բ, Քրիստոս եւ սադուկեցի՝ 165բ, 261ա, Քրիստոս Պիղատոսի առջեւ՝ 176բ, Աւետումն՝ 188ա, Հանդիպումն Մարեմայ եւ Եղիսաբեթի՝ 189ա, Ճանապարհորդութիւն ի Բեթղեհէմ՝ 192ա, Աւետումն հովուի՝ 192բ, Ընծայումն տաճարին՝ 193բ, Բժշկումն բորոտի՝ 203ա, Բժշկումն հարիւրապետի ծառայի՝ 210ա, Օձումն ի Բեթանիայ՝ 213ա, Քրիստոս եւ ումն օրինական փորձէր զնա՝ 226ա, Հուր եկի արկանել՝ 236բ, Բժշկումն կարկամեալ կնոջ՝ 238ա, Բժշկումն ջրգողեալ առն՝ 240բ, Հարսանիք ի Կանայ՝ 285ա, Քրիստոս եւ Նիկոդիմոս՝ 286բ, Քրիստոս եւ կինն սամարացի՝ 289բ, Քրիստոս եւ Փիլիպպոս՝ 297ա, Քրիստոս եւ հրեայք՝ 306բ, 311ա, Բժշկումն ի ծնէ կուրի՝ 309բ, Յարութիւն Ղազարու՝ 315բ, Քրիստոս եւ բանաձայապետ՝ 318բ, Մուտք յԵրուսաղէմ՝ 320ա, Քրիստոս եւ Յուդայ՝ 328ա, Քրիստոս խաչընդուս՝ 340ա: Մատթէոս՝ 32բ: Մարկոս՝ 126բ: Ղուկաս՝ 185ա: Յովհաննէս եւ Պռոխորոս՝ 280բ: Խորան՝ 18բ, 19ա, 20բ, 21ա, 22բ, 23ա, 24բ, 25ա, 26բ, 27ա: Կիսախորան՝ 33ա, 127ա, 186ա, 281ա: Լուսանցազարդ՝ թռչուն, բուսական, տաճար, հասկ (62բ, 94բ, 259ա, 321ա): Ջարդագիր՝ մարդ, թռչնագիր, կենդանագիր, հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, կանաչ, կապոյտ, դեղին, նարնջի, վարդագոյն, մանուշակագոյն, մոխրագոյն, շագանակագոյն, ոսկի, սպիտակ, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. դռնակի ստ. աջ անկիւնը այրուած, մէջքն ու կապիչները նորոգուած Ի. դարում, լուսանցակողերի կարմիրը մասամբ թափուած. թերթերին զանազան հետեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *18բ-9ա* Թուղթ Եւսեբեայ:

2. *20բ-1ա, 22բ-3ա, 24բ-5ա, 26բ-7ա* Համաբարբառ *(նաեւ ստ. լս.՝ Յրուացանկ)*:

3. *29ա-30բ* Գլուխք: *30բ-1ա* Համաձայնութիւն: *31աբ* Նախադրութիւն: *33ա-123բ* Աւետարան Մատթէոսի:

4. *124ա-5ա* Գլուխք: *125բ-6ա* Նախադրութիւն: *127ա-182ա* Աւետարան Մարկոսի *(181ա-2ա Յարութեալ Յիսուս)*:

5. *182ա-4ա* Գլուխք: *184ա-5ա* Նախադրութիւն: *186ա-278բ* Աւետարան Ղուկասու:

6. *278բ-9բ* Գլուխք: *279բ-80ա* Նախադրութիւն: *281ա-347բ* Աւետարան Յովհաննու:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

280ա Աւրհնութիւն, որ կարդայ, գովութիւն, որ լսէ, փա՛ռք տուողին եւ յիշատակ գրչիս. ամէն:

348ա Փա՛ռք ամենասուրբ երրորդութիւն՝ Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ. այժմ: Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս թվին ՌՃՀ. (1659), ձեռամբ մեղաւոր Տիրատուր գրչի, յիշեցէ՛ք ի սուրբ յաղօթս ձեր, եւ որ յիշէ զմեզ, յիշեալ լիցի արքայութիւնն Աստուծոյ. ամէն: Հայր մեր, որ յեր[կինս]: Այլեւ յիշեցէ՛ք զտէր Մարգարն, որ բազում աշխատանք կրեց՝ թէ՛ քերելն, թէ՛ կոկելն, աղաչեմ զձեզ՝ Հայր մեր ասացէ՛ք:

Տե՛ս ԺԷ. դ. յիշ-ք, Գ., էջ 867, Հմր 1326:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *28բ.ին սոսնձած թղթի տակ (ԺԷ. դ., նոտրգիր) Յիշատակ է ոսկեզօծ եւ համաբարբառ Սուրբ Աւետարանս մահդասի եարղուղոյ կողակից Հոփսիմին, որ ընծաեաց ի դուռն Սուրբ Երեխոռանին, ի յիշատակ հոգոյ իւրոյ, ի վայելումն եկեղեցոյ եւ մանկանց Սիոնի, որոյ Տէր Աստուած վարձ ըստ բարեաց պարգեւեսցէ. ամէն:*

123բ Յիշատակ է ոսկեզօծ եւ համաբարբառ սուրբ Աւետարանս Հոփսիմին, որ ընծայեաց ի դուռն Սուրբ Երեխոռանին՝ առ ի յիշատակ հոգոյ իւրոյ, զոր եւ յիշել աղաչեմ միով Հայր մեղայիւ, եւ դուք յիշեալ լիջիք յԱստուծոյ. ամէն:

185ա Յիշեցէ՛ք ի Քրիստոս զստացօղ սուրբ Աւետարանիս զեարղուղուղ կողակից Հոփսիմին եւ զամենայն արեան մերձաւորս իմ եւ միով Հայր մեղայիւ ողորմի ասացէ՛ք:

Ձեռագրիս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Ցուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 58-59:

3441
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ԺԷ. դար

Թերթ՝ 24. չգրուած՝ 19բ-22բ, 24բ: Պրակ՝ Ա-Բ×12: Նիւթ՝ թուղթ: Մեծութիւն՝ 14,8×10: Գրութիւն՝ միասիւն, կարմրով սահմանագծուած (10,3×6,5): Գիր՝ բոլորգիր (նմուշ՝ 10ա): Տող՝ 25: Կազմ՝ կանաչ մոմլաթ. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ վարդագոյն թուղթ (1950ականներէ): Պահպանակ՝ Ա-Բ+Գ-Դ՝ վարդագոյն (Ա, Դ) եւ սպիտակ (Բ, Գ) չգրուած թուղթ (Ի. դար), մասն կազմաստառի (Ա, Դ):



Նմուշ 10ա

Վիճակ՝ բաւարար. կազմը եւ պիպ-ները պատրաստուած 1950ականներին Մատենադարանում. թ. 1-24ի ստ. ներքին հատուածներում ցեցի անցքեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա-18ա Ժե. Յովաննու Որոտնեցոյ հաւաքեալ ի բանից իմաստասիրաց. [Ի] սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր, եւ գործ ձեռաց քոց երկինք են [Եբր. Ա. 10] *– Բայց զի ասէ մարգարէն՝ աքանչելի է գիտութիւն աստուածային արարչագործ կամացն... այսպէս եւ մեք զհասանելիսն ըստ չափոյ եւ կարողութեան քննեսցուք եւ զանհասանելիսն Աստուծոյ լռութեամբ պատվեսցուք եւ նմա փառք:*

Տե՛ս Սուրբ Յովհան Որոտնեցի, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, Ս. Էջմիածին, 2009, էջ 119-181 (այստեղ ձեռագրիս բնագիրն զգալի կրճատումներով):

Յաւելագրութիւնք, ժԸ. դ., նոտրգիր

1. *23աբ* ԺԶ. Անանիա Շիրակունոյ Համառողի. Յաղագս ասարիոնի, լեդոնի եւ դանկի – *Կշեռ Բ. գարէհատաց կոչի ասարիոն... եւ ունի ԼԶ. կերատաց կշեռ:*

Ծնթ. Ունի նաեւ՝ Յաղագս փշտի, Յաղագս կերատի, Յաղագս սնկրի, Յաղագս գրամարի, Յաղագս տրմիսի, Յաղագս սիմէսի, Յաղագս դահեկանի, Յաղագս սատեռի եւ դրամմէի, Յաղագս սեղի եւ դահեկանի ենթամիաւորները:

2. *24ա* [Յաղագս չափուց] – *Մէկ ղիրաթն կում է, Գ. ցորեանն ղիրաթ մի է... եւ նահանջն մի են Դ. ամէ:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *18բ (1730 թ., նոտրգիր)* Յիշատակ է գրքուքս զայս յեսայի վարդապետին եւ ծնօղացն՝ Ֆահրատին եւ Սիրունին, *եղբարցն եւ քերցն եւ ամենայն արեանն մերձաւորացն, եւ Աստուած ողորմի ասացէ՛ք մեզ եւ տէր Թաքէոսին, որ տղայ հասակաւ հանգեաւ ի Տէր, որ Աստուած ողորմեսցի ձեզ. ամէն: Թվին ՌՃՀԹ. (1730):*

Ծնթ. 18բ՝ կայ թուականի մատիտով կիսատ վերածանութիւն՝ 1179 года.

2. *19ա (ԺԹ. դ., շղագիր, մատիտով)* Այս գիրս առի, *տէր յարուրապտին եղից զաս նմայ:*

Ծնթ. Յիշատակարանը Բալասան բժշկի ծածկագրութեամբ է, որի բանալին տե՛ս ձեռ. 3609, 49բ, նաեւ Տ. Մանուկեան, Ք. Յարութիւնեան, Երկու նոր այլ ծածկագիր, Բանբեր Մատենադարանի, Հմր 25, Երեւան, 2018, էջ 218-231:


3. *19ա (ԺԹ. դ., շղագիր, մատիտով)* Գրիգոր Տէր Բաղաասարեանց Բատամիրեանց, *այս վերի գրեալ այիբն է, զալամով գիր ունիմ:*

Նշումք՝ *պհպ. Բա՝ «Ա. վարդապետ», «52/3441», «ԺԷ. դ., Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»:*


3442
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ԺԷ. դար

Թերթ՝ 11: Պրակ՝ 1×11: Նիւթ՝ թուղթ. լուսագծերով: Մեծութիւն՝ 15,2×11,7: Գրութիւն՝ միասիւն (12×9): Գիր՝ նոտրգիր (նմուշ՝ 5ա), բոլորգիր (11բ): Տող՝ 23: Կազմ՝ կանաչ մոմլաթ. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ վարդագոյն թուղթ (1950ականներէ): Պահպա-



Նմուշ 5ա



Նմուշ 11բ

նակ՝ Ա-Բ+Գ-Դ՝ վարդագոյն եւ սպիտակ չգրուած թուղթ, մասն կազմաստառի (պիպ. Ա, Դ):

Վիճակ՝ բաւարար. գրադաշտը խոնաւութիւնից գունափոխուած, թերթերին զանազան բծեր, ձեռագիրը նորոգուած 1950 թ.ից առաջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-7բ* [Երաեղոյն Յոհաննու Ոսկիբերանի, որ ասէ. Առն միոջ էին Բ. որդի... ձեռ. 870, 124բ] – *Դէմք առակիս առ ամենակալ բնութիւն Արարչին հայի... զի եւ ընդ նմա արդարասցուք եւ Հաւրն երկնաւորի Որդի կոչեսցուք եւ հանդերձեալ բարեացն հասցուք, ընդ ամենայն սուրբ ի Քրիստոս, ի Յիսուս, ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն:*

Բ. *8ա-9բ* [Հարցմունք եւ պատասխանիք] – *Հ[արցումն]. Յամենայն ժամանակի զրոյց ի գալ զարմանք ի մեր իՙնչ: Պ[ատասխանի]. Բազում եւ անչափ ի մարդ եւ յանասուն, որ գրով հազիւ արկանի այս... Հ[արցումն]. երկու ուլն, զո՞ր հատոյց մայրն Յակոբայ: Պ[ատասխանի]. երկու պատուիրան՝ աստուածասիրութեան եւ մարդասիրութեան:*

Գ. *10ա-1ա* [Մասն Ռամգրոց] – *Հիւսուսաին է, է վէ եւ ջրաին ի վերա լուսնի, հուքմ արա՛... մնա՛, սկիզբն ժամադիտակ կէտէն արա՛ եւ տո՛ւր ի կէտս ՂԱ. (91) ամ, Գ. ամիս եւ Գ. ժամ:*

Ծնթ. Կան նաեւ կենդանակերպերի եւ այլ գաղափարագրեր:

Դ. *11բ* [Տաղ-հանելուկ. հայատառ թրերէն] – *Ման ղուրբաթամ բէշ լամազ, / բէշ տխտուր [ուր]բէշ լամազ... բիրաջակՙք բէսլանմիշ սուսուզ երդան թօրփախսըզ:*

Տե՛ս Յուցակ հայերէն ձեռագրերի հայատառ թուրերէն նիւթերի եւ հայատառ թուրերէն ձեռագրերի, կազմեց Յ. Ստեփանեան, Երեւան, 2008, էջ 62:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԴՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

7բ Ջանարհեստ սակաւ ծրես, / զոր չէ արժան աստ յիշեսցես, / թէ միտ դնես այսմ առակիս, / նա բարձրանաս, ելնես յերկինս / եւ քաջ լինիս հանդէս մարտիս / եւ խառնեսցիս ընդ երկնայինս եւ ժառանգեալ զանճառ բարիս: Ծանի՛ր, եղբա՛յր, դու վերծանող, / դու մի՛ ասեր յիմար զգծող, / որպէս երբեմն կինն մեղքող, / որ անգոսնեաց զարքայն յաղթող, / որ զտապանակն անդրէն բէրող, / ազաչեմ, ո՛վ ընթերցող, զիմ սխալանս զամէն դու թո՛ղ, / զգուշագի՛ր, եղբա՛յր, որ չի լինես ուլ նմանող:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

11բ (1660 թ., բոլորգիր) Տանուտէր եկաւր, Սեպտեմբերի Դ., յաւուր Գ.շաբթի ծնա առաւօտուն, զի տանուտէրն եկաւորն էր, թուականին ՌՀՋ. (1627), գիր տարոյն Դայն էր: ԺՋ. (16) Սեպտեմբէր, յաւուր կիրակէի Սուրբ խաչին մկըրտեցա յաւազան: ՌՂե. (1646) յուսումն գնացի գրոց: ՌՂԹ. (1650) թիւ քահանայ եղա: ՌՃԹ. (1660) գաւազան առի:

Տե՛ս ԺԷ. դ. յիշ-ի, Գ., էջ 935-936, Հմր 1412:


ՆՇՈՒՄ՝ *պհպ. Բա՝ «Խ. վարդապետ», «64գ/3442», «ՌՃԹ. – 1660, Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»:*

Ձեռագիս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Յուցակ ձեռագաց Դադեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 78:


3443
ՍԻՄԷՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ, ՔԱՐՈԶԳԻՐՔ

ԺԸ. դար


ԹԵՐԹ՝ 138: ՊՐԱԿ՝ 1-13×8 (2, 6՝ 12, 3, 12՝ 14, 4՝ 17, 5, 10, 13՝ 10, 9՝ 7): ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ առիւծ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15×10,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, կարմրով սահմանագծած (12,5×7,3): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 23ա, 56ա, 95ա): ՏՈՂ՝ 20-25: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի. մէջբը եւ փեղկերի հիմնամասերը՝ սեւ կտաւ. ստ., վր. եւ արտ. եզրերը՝ վարդագոյն մոմլաթ. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ սպիտակ թուղթ (1950ականների). լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+Գ՝ դեղնաւուն չգրուած թուղթ, մասն կազմաստառի (Ա, Գ):



Նմուշ 23ա



Նմուշ 56ա



Նմուշ 95ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. լուսանցակողերի կարմիրը հիմնականում թափուած, կեղտոտուած. կազմը նորոգուած հին կազմի Ա. եւ Բ. փեղկերի կաշւով. գրադաշտը խոնաւութիւնից գունափոխուած, որի հե-

տեւաճոով որոշ թերթերի գիրը դժուարընթեռնելի, ընդմէջ թ. 8-9, 19-20, 36-7, 51-2, 52-3, 60-1ի անորոշ բանակի թերթեր թափուած։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. 1. *1ա-8բ* Քարոզ նորին Սիմէօնի վարդապետի ի Նինուէացիսն, ի բանն Յօնանու, թէ՝ եղեւ բան Տեառն առ Յօնան՝ Արի՛ եւ գնա՛ ի Նինուէ. եւ այլն — *Որպէս ամենայն առաքինութիւնք են արդարացուցիչք... զի յուրում պահու/// (վջ.)։*

2. *9ա-10բ* Տեառն Սիմէօնի սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց՝ ասացեալ քարոզ ի յողջոյնն, ի բանն Քրիստոսի, թէ՝ Յոր տուն մտանիցէք, նախ ասացէ՛ք ողջոյն տանս. եւ այլն — *Մարգարէքն ի հնումն եւ առաքեալք եւ վարդապետք ի նորումս... զոր ունիմ թէ յիս եւ որք ոչ ի յիս մնայցէ։*

3. *10բ-2բ* Նորին դարձեալ վասն ողջունի, ի բանն, թէ՝ Յոր տուն մտանիցէք, նախ ասացէ՛ք ողջոյն — *Սովորութիւն է ծնողաց, զի ի դաստիարակելն զփոքրագոյն ստնդեալ մանկունս... եւ զայլն որպէս կամիս։*

4. *12բ-4բ* Դարձեալ նորին վասն ողջունի, ի բանն, թէ յոր տուն մտանիցէք, նախ ողջոյն տո՛ւք — *Սովորութիւն է թագաւորաց, որ ի յառաքելն իւրեանց գծառայս ի գործ ինչ... տե՛ս ի միւս հատորն, ի մեծ քարոզն ողջունի, որ անդ։*

5. *14բ-6ա* Նորին քարոզ ի յորպիսութիւն Սրբոյն Էջմիածնի, ի բանն, թէ՝ Սեաւ եմ ես եւ գեղեցիկ, դստեր Երուսաղէմի — *Դաւիթ մարգարէն յառաջագոյն տեսեալ մարգարէական հոգւով... ծփիմ հանապազ իմայնովքս հանդերձ եւ այլք այսպիսիք (գորքան կամիս)։*

6. *16ա-7բ* Նորին քարոզ ի Սուրբ Էջմիածին եւ ի սուրբ մեռոնն, ի բանն Սողոմոնի, թէ՝ Աղբիւր պարտիզաց ջրհոր ջրոյն կենդանւոյ, որ յարմարի ի յօր բաշխման սրբոյ մեռոնին — *Խորհրդաբար արքայն Սողոմօն, այսինքն՝ Քրիստոս... զոր երանեն եւ գովեն։*

7. *18ա-9բ* Յայլմէ քարոզ վասն ողջունի — *Կերպարդրութիւն ողջունիս բազմաւ եղանակաւ առեալ լինի ի Սուրբ Գրոց... եւ ողջոյնն հաշտարար բժշկեաց զմեզ յատելու/// (վջ.)։*

8. *20աբ (սկ.) /// ես ո հանգեայց, եթէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս... եւ արքայութիւն եւ պարգեւողին ամենայնի փառք եւ երկրպագութիւն, այժմ եւ անզրաւ յաւիտենից. ամէն։*

9. *21ա-36բ* Աւրհնութիւն ժողովրդեանն եւ շրջաբերականի — *Ի գիւղեանց Տեառն Աստուծոյ ամենակալէն... սուրբն եփրեմ ասէ, զոր քերօքէքն բարձեալ ո/// (վջ.)։*

10. *37ա-43ա* Քարոզ Մեծի պահոց բարեկենդանի կիրակէին. նախ առ բանն Եսայիայ՝ Գոչեաց զօրութեամբ եւ մի՛ խնայէր — *Նախ պատուիրէ Աստուած քարոզչաց կոչել զժողովուրդս... որոյ մեծ զօրութիւնն խոնարհաց միայն պատուէ, զի եւ ինքն իսկ զխոնարհս միայն տեսանէ։*

11. *43ա-51բ* Վասն յղութեան Աստուածամօրն, որպէս արար զԵզ. Երգ — *Ինաբանս այս ունի հինգ մասունս, չորքն է զանարատ յղութենէն, զորոց համառօտեալ խօսեացուք... եւ ոչ գիտէին, թէ որպէս զհանդերձ դա/// (վջ.)։*

12. *52աբ* Յաղագս խոնարհութեան եւ բարձրութեան նորա — *Իմաստութիւնն հօր Յիսուս զճանապարհս փրկութեան որդոց մարդկան... եւ ի ներս նորա լիք են նենգս /// (վջ.)։*

13. *53ա (սկ.) /// ձեռնարկութիւնս մխին հարկ է ամենայն կենցաղականացս բարեաւ մնալ ասել... ուսարո՛ւք յինէն, զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ։*

14. *53բ-5ա* Նորին՝ ի Կացէք բարով ասելն յաւարտ գործոյն — *Քրիստոս Տէրն մեր ի յառաքելն զառաքեալսն իւր առ ժողովուրդսն պատուիրեաց նոցա... մի՛ ընդունայն անցուցանիցէք զժամանակ շնորհառութեանս։*

15. *55ա-7բ* Քարոզ նորին Սիմէօնի ի Սուրբ Էջմիածին եւ ի մեռոնն, ի բանն թէ՝ Գովելի են գեղեցիկն եւ պարսաւելիք գարշելիքն, ի յօր բաշխման սրբոյ մեռոնին — *Ըստ վարդապետաց արդարութիւն է ընդաբոյս դաշն... եւ մի՛ մոռանայք զերախտիս նորա. վերջ։*

16. *57բ-60բ* Քարոզ նորին Սիմէօնի, ի բանն Պօղոսի, թէ՝ Որպէս զգեցաք զպատկեր հողեղինին, զգեցցուք եւ զպատկեր երկնաւորին. եւ այլն, վասն յիշատակի — *Աստուածաշունչ գիրն ի ճառելն զարարչագործութիւնէն Աստուծոյ... վասն նորա ոչ շիջուցանէ զճրագ տան նորա եւ տոհմի նորա եւ այլն։*

17. *61աբ (սկ.) /// յոգոց հանիցէ մեզաւորն՝ կեցցէ։ Ահա նինուէ... եւ անճառ երանութեանն յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

18. *62ա-4բ* Քարոզ եւ շնորհաւորումն Մեծի պահոցն Աղուանից, ի նոյնոյ Սիմէօն վարդապետի, ի սկզբան Մեծի պահոցն ասելի — *Շնորհաւոր պահք եւ շնորհաւոր աւուրք սրբութեան եւ մաքրութեան... եւ առնումք զօրհնութիւնն, ճաշակելով զսուրբ մարմին նորա եւ այլ։*

19. *65ա-9բ* Քարոզ նորին Սիմէօնին վարդապետի յԱղուանից յառաջի շաբաթին, ի բանն, ուր ասէ Տէր ցՄովսէս՝ Առասցես զամենայն ըստ օրինակին, որ ցուցաւ քեզ ի լերինն — *Ի յազատելն Աստուծոյ զԻսրայէլ յԵգիպտոսէ... գալ բողոքել ձեզ առ յիս, եւ ինձ ոչ լսել ձեզ։*

20. *69բ-73բ* Նորին Սիմէօն վարդապետի Քարոզ ի յառաջին շաբաթն Մեծի պահոցն, ի բանն Եսայեայ՝ Գոչեա՛ զօրութեամբ եւ թէ լոյծ զկնճիռն եւ այլն կարգաւ — *Եկեսցո՛ւք ի բնաբանս մեր, զոր ասաց Աստուած... որ ոչ լինիցի ըստ օրինակին իմոյ։*

21. *74ա-9բ* Նորին Սիմէօնի վարդապետի քարոզ ի

Մեծի պահոց առաջի շաբաթին. Լուացարումն ի նոյն բնաբանն, թէ՝ Առասցես ըստ օրինակին, որ ցուցաւ եզ ի լերինն – *Ասաց Աստուած իսրայէլացոցն, թէ զվեց օր գործեսցես զերկիր քոյ... թէ սուր կերիցէ զձեզ:*

22. *79բ-84ա* Նորին ճառոզ ի խորհուրդ առաջնոյ շաբաթի պահոցս, որ պատասխան է առաջնոյ աւուր ստեղծագործութեանն Աստուծոյ, ի բանն, թէ՝ Առասցես ըստ օրինակին, որ ցուցաւ – *Աստուած յառաջնումն ստեղծագործութեանն ի վեց աւուրս արար եւ էստեղծ զամենայն արարածս իւր... որ ցուցանի քեզ ի լեառն Աստուծոյ, այսինքն՝ յեկեղեցին:*

23. *84ա-8բ* Նորին Սիմէօնի ճառոզ յառաջին շաբաթն Մեծի պահոցս, որ պատասխան է առաջնոյ դառուն կենցաղոյս, յայսմ ստեղծաւ Ադամ, ի բանն, թէ՝ Առասցես ըստ օրինակին. եւ այլն. ԺՂ. գլուխ – *Նախապէս զայս պարտիմք գիտել... ուրեմն ասասցո՛ւք ըստ օրինակին եւ այլն:*

24. *88բ-91ա* Նորին ճառոզ ի նոյն առաջին շաբաթս Մեծի պահոցս, ի դէմս պահողաց եւ չպահողացն, ի նոյն բնաբանն, թէ՝ Առասցես ըստ օրինակին, որպէս ցուցաւ եզ ի լեառն. ԺԷ. գլուխ – *Եւ որպէս ասացաւ... որ զանազան եղանակօք ցուցանի քեզ. եւ այլն:*

25. *91բ-4բ* Քարոզ նորին Սիմէօնի ի յերկրորդ կիրակէն Մեծի պահոց, որ պատասխանէ երկրորդի աւուր ստղծմանն Աստուծոյ Ադամայ, ի նոյն բնաբանն, թէ՝ Առասցես ըստ օրինակին, որ ցուցանի եզ եւ. ԺԸ. գլուխ – *Ասացաք ի յանցելումն. եօթնեկին շաբաթք Մեծի պահոցս... եւ որդիք սատանայի կոչեսցին:*

26. *95ա-6բ* Քարոզ վասն մաճուան. ըստ որում՝ Հող էիր եւ ի հող դարձցիս – *Յորժամ Աստուած կամեցաւ աւերել զաշխարհս ջրհեղեղաւ... պարտ եմք յետոյ ի հարկէ դառնալ ի տունն մեր, որ է գերեզման:*

27. *97ա-115բ* Նորին Սիմէօնի կտակ եւ ճառոզ ի Մեծի յուրբաթին, ի խաչելութիւնն Քրիստոսի Աստուծոյն մերոյ – *Սարսափիմ եւ զարհուրիմ, ո՛վ սիրելիք... որ է օրհնեալ ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս:*

28. *116ա-36բ* Նորին Սիմէօնի ճառոզ եւ ասացուած եւ ներբողեան ի վեցերորդ տեսակ յողորմութիւնն յԱստուծոյ՝ ի Սուրբ Էջմիածին, զոր ընկալաւ յատկապէս ազգս հայոց, իբր զեղական պարգեւ յԱստուծոյ, ձեռամբ Գրիգորի, ի նոյն բանն, թէ՝ Աստուած զհիմունս էարկ, նմա յաւիտեան ընկալաւ, Աստուած զողորմութիւն ոչ ի մէջ ժողովրդեանն ոչ – *Արդ, ամենաբարին Աստուած... այսինքն՝ ի յարփիականէ լուսոյն:*

Համմտ. ձեռ. 2212, 18բ-91ա, 124ա-324բ:

Բ. *137ա-8ա* [Տաղ Տէրտէրի (հայատառ թուրեերէն)] – *Ղարշուտայ գեալան օզի / շաքեար տուր նապն սօզի / ղուշլարդան նա ղուշ օլայ, բիր / աղզի վար բիր գեօզի... գայում բէշ արշուն բէզ տունեատան:*

Տե՛ս Յուցակ հայերէն ձեռագրերի հայատառ թուրեերէն նիւթերի եւ հայատառ թուրեերէն ձեռագրերի, կազմեց Յ. Ստեփանեան, Երեւան, 2008, էջ 62:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *138բ սեւ թանաքով ութանկիւն* «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ / ԳԱԼՈՒՍՏ / 1858»:

ՆՇՈՒՄ՝ *պհպ. Բա՝ «Խ. վարդապետ, Հմր 48»՝ ջնջած, «Հմր 68/3443», «ԺԸ., Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս», 94բ՝ «1872 ամի»:*


Ձեռագիս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Յուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 81-82:

ԳՐՁԱՓՈՐՁ՝ *137բ՝ «Քարոզ վասն մահուան, ըստ որում թէ հող ես եւ ի հող դարձցիս – Յորժամ կամեցաւ Աստուած աւերել», 138բ (հայատառ թրքերէն)՝ «Ղարշուտայ, պու տաղլար խասայ տաղլար, / շաս կալտի օլան կօին ալամազ, / օլտրանկա սաբ աղար, պուտարայ կալին տարայ, կոկողի փարտալիտր, պլուֆեօխ փարտալիտր», «Ա-Մ, թուեր՝ 1-9»:*

3444
ԴԱԻԱՆՈՒԹԻԻՆ ՀԱՒԱՏՈՅ

ԺԸ. դար

ԹԵՐԹ՝ 24: ՊՐԱԿ՝ 2×12: ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14,6×10,3: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (11×6,7): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 5ա): ՏՈՂ՝ 23: ԿԱՋՄ՝ կանաչ մոմլաթ. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ վարդագոյն թուղթ (1950ականների): ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԴ՝ վարդագոյն եւ սպիտակ չգրուած թուղթ, մասն կազմաստառի (Ա, Դ):



Նմուշ 5ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթերին աղտոտուածութեան հետեւեր, թ. 14, 15՝ արտ. լս-ներն այրուած, որի հետեւանքով թ. 15ի բնագիրը մասամբ թափուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *1ա-7ա* [Նախերգան] – *(սկ.) /// զի ասի հոգի Քրիստոսի... եւ շաղկապ յաւդական ի գլուխն ճշմարտութեան:*

2. *7ա-24բ* [Դաւանութիւն հաւատոյ սուրբ հօրն մե-

ոոյ՝ երկոոդ լուսատուչի, ֆաջ հոետոորին Գրիգորի. ձեռ. 1712, 34ա] – *Հաւատամ եւ խոստովանիմ, դաւանիմ եւ երկիր պագանեմ ըստ հարցն աւանդութեանց... այսքան յեղանակաւ աւծեալ ասի Տէր Յիսուս Քրիստոս, վասն որոյ ասէ. Հոգի Տեառն ի վերայ իմ:*

Ծնթ. «Դաւանութեան հաւատոյ» գործի մէկ ամբողջական մաս է՝ բաղկացած հետեւեալ ենթամասերից՝ 8ա Դաւանեմ հոգով... 9ա Հաւատամ զնոյն Բանն Աստուած...10ա Որ եւ յետ ոոոշման Հոգոյն... 12ա եւ արդ, յետ ելանելոյ... 13ա Նմանապէս եւ ընդդէմ սոցա... 14ա Պատասխանի ոոպէս ասէ սուրբն Կիւրեղ... 15ա Իսկ եթէ վասն էր Բանն մարդացաւ... եւ այլն:


ՆՇՈՒՄ՝ *պհպ. Բա՝ «Հ. վարդապետ, Հմր 113»՝ ջնջած, «71ա/3444», «ԺԼ., Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»:*

Ձեռագիրս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Յուցակ ձեռագրաց Դպռեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 88-89:

3445
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ԺԷ. դար

ԹԵՐԹ՝ 52. չգրուած՝ 52բ: ՊՐԱԿ՝ 1+Ա-Ե×12 (Ա 9, Դ 6, Ե 11)+1: ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ բուսական: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 13,5×9: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (10,2×6,5): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 21ա): ՏՈՂ՝ 19: ԿԱՋՄ՝ կանաչ մոմլաթ. միջուկը՝ ստուարաթուղթ, աստառը՝ վարդագոյն թուղթ (1950ականների): ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԴ՝ վարդագոյն եւ սպիտակ չգրուած թուղթ, մասն կազմաստառի (Ա, Դ):



Նմուշ 21ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշտը խոնաւութիւնից գունափոխուած, կարմրագիր խորագրերը մասամբ դժուարընթեռնելի, թերթերին աղտոտուածութեան հետեւեր. թ. 1, 52ը աւելացուած հետագայում, շղագրով, թ. 13-22ը հիմմի կարերից թուլացած, թ. 37-8ը պոկուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *1ա-8ա* Տեսիլ Սրբոյն Գրիգորի վասն հոգւոյն եւ մարմնոյն. Հարցումն սրբոյն Գրիգորի հոգւոյն եւ մարմնոյն եւ պատասխանի հրեշտակին վասն հոգւոցն արդարոց եւ մեղաւորաց – *Խնդրեաց յԱստուծոյ Սուրբն Գրիգոր պահօք եւ աղօթիւք, զբառասուն տիւ եւ զբառասուն գիշեր հաց ոչ եկեր... եւ արարեր ժառանգորդ երկնից արքայութեան, եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:*

2. *8ա-12ա* Քարոզ վասն աղօթից՝ Գրիգոր ասացեալ – *Այսպէս ասէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս... իւր մեղքն ջնջին, եւ արքայութիւնն ժառանգէ:*

3. *12ա-4ա* [Պատմութիւն անողորմ Պետրոսի ասացեալ է. ձեռ. 515, 51ա] – *Այր մի կայր մեծատուն, անուն նորա էր Պետրոս... որ ի նմա բնակի:*

4. *14ա-5բ* Դարձեալ ոմն ֆաիանայ՝ անուն Յոհան, յոյժ աղխատացեալ էր – *Ելաւ իւր աշխարհէն ընդանեօքն իւրովք... որ աղքատ է, այնով առնէ ողորմութիւն, որ յիշեցաք:*

5. *15բ-9ա* Յոհաննու Մանդակունոյ ասացեալ վասն եւ յիշոցաց մեղաց – *երկերո՛ւք, զարհուրեցէ՛ք եւ զարհուրեցէ՛ք եւ դողացէ՛ք, սարսեցէ՛ք... Աստուած գձեզ դարձ եւ զղջումն տայ, կարդացողաց եւ լսողաց. ամէն:*

6. *19ա-21բ* Յաղագս վասն աղօթից – *Եւս առաւել պարտ է քրիստոնէից՝ առնուն Գ. անգամ օրն ժամ աղօթք առնել... արժանի լինի տեսոյն Քրիստոսի եւ սուրբ յարութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն:*

7. *21բ-6բ* Քարոզ վասն գալստեանն Քրիստոսի – *Այս է պատմութիւն վասն գալստեանն Քրիստոսի... եւ փրկիս ի դառն տանջանաց դժոխոց. եւ յերկնից արքայութիւն ժառանգեսցեն. ամէն:*

8. *26բ-8բ* Քարոզ վասն գալստեանն Քրիստոսի եւ դատաստանի նորա – *Յայնժամ կատարի խօսք սուրբ Աւետարանին, որ ասէ... եւ զնոսա նահատակեսցեն եւ մարտիրոսանան վասն Քրիստոսի, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:*

9. *28բ-32ա* [Պուտաղ օղլի Խազի խանի ասացեալ] – *Հոգին ի մարմին, եղբա՛յր, շուրջ կուգան աշխարհս հետրած, / դաստելէն շատ խազինայ մեղք ու վարձք ի կշիռնէ դրած... Պուտաղ օղլի Խազի խան, դու նստի՛ր, քո մեղքն լա՛ց... աստղաց եւ լսողաց, գրողաց եւ ականջ դրողաց Աստուած լինի ողորմած:*

10. *32ա-6ա* [Յովհաննու Թլկուրացւոյ] Պատմութիւն /// Ալէքսանոսի ճգնաւորին – *Աստուած գթած եւ մարդասէր, երեակ, լսէ իւր ծառային... խեւ Յովանէս Թուրկուրանցի, / վարք պատմութիւնն գրեցի, / սուրբ ճգնաւոր Ալէքսանին, / սորին աղօթիւք Տէր մեզ ողորմի. ամէնն եղիցի, եղիցի:*

11. *36աբ* [Վասն վնասուց գինւոյ] – *Այս է գինուն գենն ու զարարն, որ մարդոյն կու հասուցանէ... Աստուած փրկէ եւ ազատէ գինախումէ:*

12. *36բ-7բ* [Մկրտչի Նաղաշի ասացեալ] – *Անձն ի՛մ, վա՛յ քեզ հազար բերան, թէ խռով կենաս, ոխ պահես, / զի խռովարարն է սատանայ, ջանայ, որ սէրն հատատես... անմի՛տ, դու քեզ հոր կու փորես, փառք յաւիտեանս. ամէն:*

Տե՛ս Մկրտիչ Նաղաշ, աշխ. էդ. Խոնդկարեանի, Երեւան, 1965, էջ 120-122:

13. *37բ-8ա* Վասն մեկնութեան բանիս, որ պատմէ մեզ զամենայն – *Իսկ տասանորդն բաժին է Աստուծոյ, որ բանիւ հրեշտակին խօսեցաւ... եւ զայս Գ. ժամ աղօթս անխափան կատարեցէ՛ք ամենայն տեղաց՝ ի ճանապարհի, ի արտ եւ յայգի եւ ամենայն գործ:*

14. *38ա-40ա* Առակացն Սողոմոնի. Սակաւ բան խրատական – *Հաւատացելոցն ամենայն աշխարհս ընչիւք լինի լի անհաւատին... գուցէ ուսուցանիցես զճանապարհ նորա:*

15. *40ա-2բ* Խրատ հոգեւոր – *Զմիտքն հոգոյն աչք արար, եւ աչքն մարմնոյն ճրագ...*

ա. *41ա* Այլ են, որ բողոքեն յերկիմբ – *Համաւոր մարդադատանութիւն եւ մեղք սոդոմականք... մահն՝ դատաստան, դժոխք՝ դրախտք:*

բ. *41ա-2բ* [Յաղագս] չորս իրաց – *Լինի աղքատութիւն մարդուն, ա. Որ աղքատ արարեալ է Աստուած... ճշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս Տէրն մեր, որ է աւրհնեալ ընդ Հօր եւ Սուրբ Հոգոյն յաւիտեան ամենայն:*

16. *42բ-52ա* Պատմութիւն սուրբ յարութեան կիրակէ եւ այլ ամենայն բանի – *Զթուլքին, որ էջ յերկնից ի Հռոմ քաղաք... յորում վայել է փառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

38ա Ձըստացողի գրոցս Աստուած ողորմի ասա՛:

ՆՇՈՒՄ՝ *պհպ. Բա՝ «Խ. վարդապետ, Հմր 32»՝ ջնջած, «72/3445»:*

Ձեռագիրս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Ցուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 89-90:


ԳՐՉԱՓՈՐՁ՝ *31ա լս.՝ «Ովանէսի /// էր»:*

3446
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ՍՈՒՐԲ ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՈԽՏ ՌՃԺ. – 1661

ԳՐԻՉ, ՍՏԱՑՈՂ՝ Իգնատիոս Մեծոփեցի:

ԹԵՐԹ՝ 369+1 (կրկն.՝ թ. 1). չգրուած՝ 369բ: ՊՐԱԿ՝ Ա-ԼԱ×12 (Ա, ԼԱ 11): ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15×9,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (10,6×6,9): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 156ա): ՏՈՂ՝ 19: ԿԱՋՄ՝ կանաչ մոմլաթ. մէջբը, փեղկերի ճիմնամասերը եւ անկիւնները՝ սեւ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ վարդագոյն թուղթ (1950ականներէ): ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԴ՝ վարդագոյն եւ սպիտակ չգրուած թուղթ, մասն կազմաստառի (Ա, Դ):



Նմուշ 156ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթերին խոնաւութեան, աղտոտուածութեան եւ բորբոսի հետեր, խոնաւութեան հետեւանքով թերթերի մի մասի գիրը դժուարընթեռնելի, միւսներուն թափուած եզրերը լրացուած հետագայի թղթով, Ա-Դ. պրակները ճիմմի կարի բուն մասից հեռացած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-239բ* [Մովսիսի Քերթողի Գիրք Պիտոյից]

Տե՛ս ձեռ. 1681, 1ա-233բ: 1. ա/1ա-3ա (սկ. /// այսպիս[ա-

բար զանազան] վերաբերութեամբ, [վասն զի նոցա գոլ բանիւ լռացն բնախօսութիւն [է սիրելութիւն...]): բ/3ա-5բ: գ/5բ-8ա: դ/8ա-10բ: ե/10բ-3ա: 2. ա/13ա-6ա: բ/16ա-8ա: գ/18ա-20ա: դ/20ա-2ա: ե/22ա-4բ: զ/24բ-6բ: է/26բ-8ա: 3. ա/28ա-30բ: բ/30բ-3ա: գ/33ա-6ա: դ/36ա-9ա: 4. ա/39ա-43բ: բ/43բ-8ա: գ/48ա-54բ: դ/54բ-9բ: ե/60ա-5բ: 5. ա/65բ-74բ: բ/74բ-80բ: գ/80բ-6բ: դ/86բ-93բ: ե/93բ-9ա: 6. ա/99ա-105ա: բ/105ա-10բ: գ/110բ-7ա: դ/117բ-24ա: ե/124ա-9բ: 7. ա/129բ-36բ: բ/136բ-42ա: գ/142ա-7բ: դ/147բ-52բ: ե/152բ-9ա: զ/159ա-64ա: 8. ա/164ա-9ա: բ/169ա-72ա: գ/172ա-4բ: դ/174բ-6բ: ե/176բ-80ա: զ/180ա-2ա: է/182ա-3բ: 9. ա/184ա-8բ: բ/188բ-93ա: գ/193ա-6ա: դ/196ա-9ա: ե/199ա-202ա: զ/202ա-5բ: է/205բ-8բ: 10. ա/208բ-18բ: բ/218բ-23բ: գ/223բ-9բ: 11. ա/229բ-34ա: բ/234ա-6բ: գ/236բ-9բ:

Ունի՝

– *239բ-41բ* Մովսէսի Քերթողի արարողի Պիտոյիցս տաղի խրատաբանութիւն յորդորական առ Թէոդորոս ոմն աշակերտ իւր, ներակրթիլն բաջուշիմն վարժիւ յիմաստս ճարտասանականս արհեստիս – *Աստուստ ի բարձրագոյնս վերաթեւելով գեղեցկապէս գեղապարեսցես... եւ մերկագոյն յիւրոցն սարասից՝ ծաղր երաստս յոքնազան հաւուցն եղանիւր:*

Տե՛ս Գիրք պիտոյից, աշխ. Գ. Մուրադեանի, Երեւան, 1993, էջ 30-248, ձեռագիրս մասին՝ էջ 26-27:

Բ. *241բ-87ա* Գումարումն յոթնադիմի իրողու-

թեանցն սահմանաց Դաւթի փիլիսոփայի եւ այլոց իմաստասիրաց՝ ի Մովսիսէ ումեքէ ըստ տառից դասատուութեան շարակարգեալ («Ա-Ք») – *Ագահութիւն է բանականին անյա/// ///համեստ ցանկութիւն փա/// այլ իւրաքանչիւր իրաց... քաւութիւն է գաղտ խօսել չար զընկերէն։*

Գ. 1. *287ա-92ա* Յաղագս պատկերացուց<ու>թեան – *Արդ, զանազան յօրինուած մարմնոյն ըստ պատկերացուց<ու>թեանն արհեստի... ցուցանէ զայր ուշիմ եւ զբարեբարոյ։*

2. *292ա-3ա* Յաղագս հասարակաց պատկերացուցութեան – *Արդ, պարտ է հասարակաբար դնել ի մտի, զի չափակից անդամունքն... հաստատեցին զաչսն լինել ճշմարիտ կարապետ սրտին։*

Դ. *293բ-334բ* [Բանք իմաստասիրաց]

Տե՛ս ձեռ. 464, 9ա-30ա։ Յոջբ/չիք։ ա/330ա-4բ։ բ/293բ-5ա (սկ. տարբեր՝ Պղատոն ասէ. Որք մեծամեծաց առաջիկան մեծի զգաստութեան պետս ունին...)։ գ/չիք։ դ/295ա-7բ։ ե/297բ-9ա։ զ/299աբ։ է/299բ-301բ։ ը/301բ-2բ։ թ/302բ-3ա։ ժ/303աբ։ ժա/303բ-4բ։ ժբ/304բ-5ա։ ժգ/305աբ։ ժդ/305բ-6բ։ ժե/306բ։ ժզ/306բ-8բ։ ժէ/308բ-9բ։ ժը/309բ-10ա։ ժթ/310ա-1ա։ ի/311ա-2ա։ իա/312աբ։ իբ/312բ-3բ։ իգ/313բ-5ա։ իդ/315աբ։ իե/315բ-6ա։ իզ/316ա-7բ (խորագիրը տարբեր՝ Յաղագս մահուան եւ փոխելոյ ի կենաց)։ իէ/317բ-21բ։ իը/324ա-6ա։ իթ/326բ-330ա։

Ունի՝

– *321բ-4ա* Յաղագս բարեբարոյ եւ իմաստուն կանանց – *Իմաստունն Սողոմոն ասէ. եզն սիրոյ... որոյ ընդ իմաստնոյն են գնացք իւր։*

Ե. *335ա-65ա* [Նախերգանք Բառոզից]

1 *335աբ* [Քրիստոսի] – *Իսկականն էութիւն եւ անեղանելի գոյացութիւնն...*

2. *335բ* [Մովսէսի] – *Գլուխն պարու ի գուշակողականն հանդիսի...*

3. *336ա* Քաղցրախօս քնարն Ձայնիւ բնաւորական...

4. *336աբ* Սողոմոնի – *Հրաշագեղն մանուկն ի տիս հասակի...*

5. *336բ-7ա* Յոբայ – *Նահանդէս օրինակն մեծի համբերութեան...*

6. *337աբ* Եսայի – *Համարձակախօսն ի պատգամս տէրունեան...*

7. *337բ-8ա* Պօղոսի – *Փողն բարձրաբարբառ եւ համատարած...*

8. *338աբ* Պօղոսի – *Հազարապետն հաւատարիմ...*

9. *338բ-9ա* Մարգարէից – *Անճառելի շնորհաց...*

10. *339ա* Անձախեալի շնորհացն Աստուծոյ...

11. *339աբ* [Դաւթի] – *Գովելին ի գումարս...*

12. *339բ* [Պօղոսի] – *Անօթն հոգեւորական...*

13. *339բ* [Քրիստոսի] – *երանելի բնութիւն եւ անճառական բարերարութիւն...*

14. *339բ-40ա* [Քրիստոսի] – *երանելին եւ միայն հզօրն...*

15. *340ա* [Մովսէսի] – *Հայրն մարգարէից...*

16. *340ա* [Սողոմոնի] – *Մանուկն տիօք, ծերացեալն մտօք...*

17. *340աբ* [Պօղոսի] – *Փողն բարձրաբարբառ եւ ազդարար...*

18. *340բ* [Պօղոսի] – *Փողն Տասնաց, բերանն Յիսուսի...*

19. *340բ-2ա* Բացից զբերան մտաց...

20. *342ա-3ա* Բաց զշրթունս իմ՝ խօսել...

21. *343աբ* Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ...

22. *343բ* Ապաւինելով ի Հոգին Սուրբ Աստուած...

23. *344աբ* Աղբիւր կենաց Քրիստոս...

24. *344բ* Ամենաբար իշխեցօղ...

25. *344բ-5ա* Ամենազօր Որդի Աստուծոյ...

26. *345աբ* Երրորդութիւն գերակայ...

27. *345բ-6ա* Լուսատու տիեզերաց Քրիստոս...

28. *346աբ* Լուսով բանի գամ առ քեզ...

29. *346բ-7ա* Յիսուս լոյս շնորհաց...

30. *347ա-8բ* Յաստուածածագ լուսոյ ճառագայթից...

31. *348բ-9բ* Մվ աղբիւր կենդանութեան...

32. *349բ-50բ* Մվ դասք լուսերամից...

33. *350բ-1ա* Մվ Աստուած յԱստուծոյ եւ նորոգիչ...

34. *351ա-2ա* Մվ երկնագունակ եւ բազմահաւաք հանդիսարան...

35. *352աբ* Մվ անստուեր լոյս իմանալի...

36. *352բ-3ա* Մվ լոյս համատարած եւ անճառ ճառագայթ...

37. *353ա-6ա* Մվ Տէր Աստուած իմ, Յիսուս Քրիստոս...

38. *356ա-7ա* Որդի Աստուծոյ, որ տուր...

39. *357ա* Մվ ամէնաւարհնեալ Հայր երկնաւոր...

40. *357աբ* Տէր, տո՛ւր ինձ լեզու խրատու...

41. *357բ-8ա* Անձանօթ ծնունդ ծոցոյ Հօր Միածին...

42. *358ա* [Սողոմոնի] – *Աստուածեղէն առհանճարով լցեալն...*

43. *358աբ* Արդ, աւրհնեալ, գովեալ, բարեբանեալ...

44. *358բ-9ա* Այժմ ժամանեալ մեր յաւարտ...

45. *359աբ* Նաեւ ընդ սմին դարձեալ ըզձմամբ...

46. *359բ-60ա* Հայոց – *Մանաւանդ զազգս հայկազեան...*

47. *360ա* Աստուածածնին – *Այլ եւ աւրհնեալ է սուրբ տիրամայրս...*

48. *360աբ* Խաչի – *Այլ եւ աւրհնեալ է սուրբ խաչն...*

49. *360բ-1բ* Տաճարի – *Այլ եւ գկամարակապ խորանս...*

50. *361բ-2ա* Ննջեցելոց – *Այլ եւ ննջեցեալքն, որք ընդ հովանեաւ...*

51. *362ա* Շինողաց եկեղեցոյ – *Նա եւ զշինօղ սուրբ եկեղեցւոյս…*

52. *362ա* Գործաւորաց – *Այլ եւ ուխտաւորք եւ պաղաբերք սուրբ եկեղեցւոյս…*

53. *362աբ* Վարդապետաց – *Այլ եւ զվարդապետական խումբս…*

54. *362բ-3ա* Կաթողիկոսի – *Այլ եւ գլուխն ճշմարիտ…*

55. *363աբ* Եպիսկոպոսի – *Այլ եւ զարհիեպիսկոպոս գաւառիս…*

56. *363բ-4ա* Ընկերաց – *Նա եւ զհամշիրակ դասս սրբազանիցդ…*

57. *364աբ* Քահանայից – *Այլ եւ քահանայք եւ փակակալք սուրբ եկեղեցւոյս…*

58. *364բ-5ա* Քաղաքի – *Այլ եւ զհոյակապ եւ զհռչակաւոր քաղաքս… առաքինութեան գործով ի հաճոյս կամաց իւրոց. ամէն։*

Ջ. *365աբ* Աւետնութիւն վերարկուի, զգեստի, վեղարի եւ փիլոնի – *Աղաչեմք զքեզ, Տէր մեր Յիսուս Քրիստոս եւ խնդրեմք առատ ողորմութենէ քումմէ… որ խոցեաց Ղունկիանոս՝ սորա մին աչքն կոյր էր, դիպեցաւ արիւն Քրիստոսի, լուսաւորեցաւ։ Յայս բանս Գրիգոր Տաթեւացին է ոգեալ ներհարցմանց, քանզի ընդունելի է բան նորա։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԱՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

366ա Շնորհօք եւ ողորմութեամբ [ամենա]սուրբ երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն [Ս]րբոյ, ես՝ ամենանուաստ եւ ներգեւեալ, չարապատեհ վատագործութեամբ, եղեռնալիր վարուց, անապաքինելի ցաւօք, կրկին մարդով ի խոր խոցելոյ, բնաչարին արուեստականութեամբ, ինքնայօժար կամօք, ինքնին ի ծառայութիւն ախտից բազմազան եւ ազգի-ազգի փորձութեամբ, բանականիս ընտրողութիւն մշտապէս, ունողութեամբ ընդ ներքոյ նորուն նուաճելով պղծասէր կամաց Իգնատիոս *վատշուէր եւ լոկ անուամբ բանի երեւեալ սպասաւոր, բայց յոյժ ըստգոմամբ յորջորջմանս ի գործոյն հեռաւոր, ի կափանս անձին եւ յամօթ նախատանաց զսոյն ստանալով, զի բազում սիրով զանունն ընկալայ, ջանիւ ի գործն ոչ մխեցայ։ Եւ եմ ես յերկրէն* Ձարաբերթոյ, *ի գեղջէն* Մեծշինու, *ըստ բնական տեղւոյ սննդեան ի ուխտն* Սուրբ Երից Մանկանց *սնեալ |366բ| եւ վա[ր]ժեա[լ ի ն]ախնի աթոռն մեր եւ կաթողիկոսարան Հայոց եւ ամենայն Աղուանից* Սուրբ Գանձասարս, *որ այսու ժամանակաւ գեղեցկազարդ պայծառութեամբ շքեղացեալ գոյ հոգեւորին եւ մարմնաւորին սահմանադրութեամբ, ի ձեռն քաջ եւ առաքինասէր, ճշմարիտ հովուապետիս եւ կրկին Լուսաւորչիս ազինս՝ խաւարաւ անգիտութեան եւ մոլոր ուղէգնացութեամբ յափն մահու ժամանելոյ եւ իսպառ կործանելոյ։ Յարոյց Աստուած զեղջեւր փրկութեան սուրբ եւ երջանիկ կաթողիկոս* Պետրոս, *որոյ ըստ արժանւոյն գովաբանութիւն եւ ցուցումն երախտեաց ըստ անցնիւր արդիւնադրութեանց՝ թէ զի՞նչ եւ կամ հի՞ պէս վարեցաւ եւ արար բազում եւ զանազան նորոգութիւնս կարգաց եւ կրօնից, շինուածոց եւ ապարանից, այլոց ուշիմամտաց եւ հարստաբանից, քաջ ուսումնասիրաց թողցուք յիշատակել եւ ըստ իւրաքան|367ա|չիւրցն արժանեաց հատո[ւցանէ] առատս գովեստից եւ միանգամայն բաւական համարեալ զառ ի յոլովից սակս սորա ճառեցեալ վիպաբանութիւնս, յորում անդորրութեան եւ խաղաղութեան միջոցի գրէթէ ամենայնիւ զարդարուն եւ լիալիր գերափաղփութեամբ պերճացեալ երեւիւր աթոռս սուրբ իւրով քո որդիացեալ վարդապետականիս խմբիւք, որք աստ կան գումարեալք ի վարժ եւ ի յիղձ փափագանաց՝ յաւէտ պարապեալք Հնոց եւ Նորոց կտակարանաց, նրբից եւ արտաքնոց եւ քերթողութեանց արուեստից բնաւին թագաւորեալք։ Աստ է՛ր, տեսանել զսոսա ոչ ինչ իւիք աղօտացեալ անման համեմատութեամբ յառաջին լուսատուացն մերոց սրբոց թարգմանչացն եւ նոցին հետեւողացն, այլ ամենեւին յար եւ նման նոյնասարաս իմաստասիրութեամբ ի լոյս ածեալ երեւեցուցին եւ ուսուցին բազմաց զանխլացեալ (1 բառ չնչած) եւ զղօղեալ բանս |367բ| Աստուած ///այնոց գլուխ [առ]աջնորդ լեալ մեծ վարժապետս* Անդրէաս, *որ է սա տեղեաւ* Ջուղայեցի, *ի մեծ մայրաքաղաքէն եւ թագաւորանիստ արքայակերտէն* Շօշայ, *որ այժմ ասի ը*Սպահան, *որոյ ըստ տուեցելոյն սմա իմաստութեանն յԱստուածոյ լեալ դպրապետ, ուսուցանէ յոլովից զարհե[ա]տս իմաստից, միայն իմ չուառակիս անհաղորդ եւ ծարաւի ի նմանէ գտանելով, վասն ծուլութեան եւ պղերգութեանս իմ։ Իսկ ի ժամանակիս յայսմիկ, յորում այս ամենայն այսպէս կարգաւորեալ հաստատուիր, եկեալ մեծ րաբունապետն* Ոհան *ի սուրբ ուխտէն* Տաթեւոյ *եւ սա է սեփհական եւ բնիկ* Տաթեւացի, *որ է սա ի մէջ բանասիրաց արեգակն, բազում օգտութիւնս հասոյց անձանձրոյթ ուսուցանելովն աշակերտելոց անձանց, մանաւանդ վարժապետիս մերոյ՝* Անդրեաս *վարդապետիս։ Եւ սա մեծ վարդապետս մեր՝* Ոհան *բերեալ, |368ա| ընդ իւր զօրինակ գրոցն /// ճա/// որ է արարեալ մեծի քերթողահօրն* [Մովսէս]ի Խորենացւոյ, *որ զանունն մի /// լուեալ, բայց զինքն տեսեալ ոչ բնաւ, զի էր բնաւին անհետացեալ ի մերայինս ազգաց։ Եւ իմ տեսեալ զայն վատշուէրս անձին, սիրալիր տենչմամբ առեալ գաղափարեցի եւ գրեցի իմովս տխեղծ մատամբ եւ խազրացեալ անարհեստ եւ վատերանգ գրչագրութեամբ, անհմուտ գոլով այսմ գործառնութեան, բայց զփափագ սրտիս միայն կամելով լնանել, յօժարեցի, քան զկար ձեռնարկել սակս օրինակի։ Եւ եղեւ թիւ աւարտման սորա յամի հազարերորդի հարիւրորդի տասն թիւ յաւելուածի (1661), ի վերադիտողութեան*

սուրբ եւ երջանկափառ մեծ հայրապետին Պետրոսի Խաչենեցւոյ *եւ ի թագաւորութեան թուրքաց* Պարսից *շահ* Աբասի Փոխու, *եւ գրեալ եղաք ընդ սմին զբանս իմաստասիրացն, զսահմանս ժողովեալս եւ կարգեալս ընդ|368բ| /// [Դ]աւթի Անյաղթ փիլիսո[փայի] /// զնախերգանս եւ զԱւրհնութիւնս եւ ի զբօսանս անձանց մերոց եւ յետ [իւր]ում Տէր տացէ ժառանգել, բայց զ-[ե]րեսս ի գետին խոնարհեցուցեալ ժամեմք եւ աղաչեմք կողկողագին պաղատանօք եւ մոխրամած դիմօք զընթերցողդ եւ զգաղափարօղդ եւ կամ հարեւանցի իմն զսա տեսանօղդ եւ վայելօղդ, զի միով ողորմայիւ եւ լիաբերան ձայնիւ յիշեցի՛ք զհոգիս հանգուցեալ առ Քրիստոս մեծ պապն իմ՝* Հաճեանն, *եւ հօրեղբարքն՝ տեր* Ովհաննէսն, Մելխոնն, *Քրիստոս արժանի արասցէ իւր տեսութեանն. ամէն: Դարձեալ մաղթեմք յիշատակել ի մշտանուէր աղօթս ձեր զհայրն իմ՝ տէր* Սարգիսն, *եւ զմայրն իմ՝* Սալվարն, *եւ եղբարքս՝ զ*Սէվումն *եւ զ*Մանուչարն, *զ*Սիմէոն *սարկաւագն, զ*Պալասանն, *զոր Տէր Աստուած լիցի սոցա սատար եւ ոստիկան [եւ] պահե[սց]է զամենայն |369ա| (1 տող) ///լ զկեանս իւրեանց հա///ոյս կ///. ամէն: Ընդ որս եւ զբազմավէր* Իգն[ատիոս] *տառապեալս հայցեմ յիշատակել [հան]դերձ սիրելի եւ աչաց լոյս եղբարբքս՝ զտէր* Ոհաննէս, *զ*Նիկողայոս, *զ*Ոհաննէս *վարդապետս, զտէր* Պետրոս, *զտէր* Մկրտիչս *եւ եւս զհոգեւոր հարքս մեր (2-3 բառ եղծած) զեղիայ պարոնտէրս, զ*Աստուածատուր *պարոնտէրս, զ*Յա[կո]բ *պարոնտէրս եւ զտէր* Թաթէոսս *եւ եւս սիրելի եղբարքս՝ զտեր* Ոհաննես, *զտէր* Մելխիսէթս, *զտէր* Անտոնս *եւ զտէր* Բարսեղս, *զոր Տէր Աստուած պահեսցէ զսոսա անսասան. ամէն: [Եւ] դուք՝ յիշօղք սոցա, յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ՝ յաւրհնելոյն յաւիտեանս. ամէն: Հայր մեր, որ յերկինս, սուրբ եղիցի ա[նուն քո] (չշարունակած):*

ՆՇՈՒՄ՝ *պհպ. Աա՝ «Հմր 3446», պհպ. Բա՝ «Ախ. վարդապետ, 82/3446, ՌՃԺ. – 1661, Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»:*


Ձեռագիրս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Ցուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, ժողված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 101-102:

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *369ա՝ «Աաաաջաջ»:*

3447
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՀՄԵՏԻ

ԺԷ. դար

ԹԵՐԹ՝ 26: ՊՐԱԿ՝ Է-Թ×12 (Թ 2): ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ մաճիկ, բուսական: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 13,8×9,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (9×5,5): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 5ա): ՏՈՂ՝ 16: ԿԱՋՄ՝ կանաչ մոմլաթ. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ վարդագոյն թուղթ (1950ականների): ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԴ՝ վարդագոյն եւ սպիտակ չգրուած թուղթ, մասն կազմաստառի (Ա, Դ):



Նմուշ 5ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթերին աղտոտուածութեան հետեւեր, թ. 13ը պոկուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա-26բ Պատմութիւն ծննդեան եւ սննդեան արբանեկի նեռան Մահմէտի թագաւորին – *Աստանաւր կամ եղեւ ինձ դարձեալ երրորդ անգամ... եւ անդ ցուցեալ նմայ զպատուական խաչն /// (վջ.):*

ՆՇՈՒՄ՝ *պհպ. Բա՝ «Ախ. վարդապետ», «Հմր 99թ»՝ ջնջած, «83բ/3447», «ԺԷ., Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»:*


Ձեռագիրս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Ցուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, ժողված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 102:

3448
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ԺԵ. դար

ԳՐԻՉ՝ Յովհան: ՍՏԱՅՈՂ՝ Ստեփաննոս:

ԹԵՐԹ՝ 202+1 (կրկն.՝ թ. 155). չգրուած՝ 189ա-90բ: ՊՐԱԿ՝ Ա-ԺԵ×16 (Ա 14, Ը, ԺԱ 11, Ժ 12, ԺԲ 6, ԺԳ չիք, ԺԴ 18, ԺԵ 5)+14: ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14,8×10: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (11,2×7): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 67ա): ՏՈՂ՝ 20: ԿԱՋՄ՝ կանաչ մոմլաթ. մէջբը, փեղկերի հիմնամասերը եւ անկիւնները՝ սեւ կաշի. միջուկը՝



Նմուշ 67ա

ստուարաթուղթ. աստառը՝ վարդագոյն թուղթ (1950ականների): ՊԱՀՊԱՆԱԿ ԱԲ+ԳԴ՝ վարդագոյն եւ սպիտակ չգրուած թուղթ, մասն կազմաստառի (Ա, Դ):

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Կիսախոռաձ՝ 1ա: Ճակատազարդ՝ 111ա: Լուսանցազարդ՝ բուսական, խաչ, թռչուն: Ձարդագիր՝ թռչնագիր, հաձգուցագիր: Գոյներ՝ կարմիր, վարդագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթերին խոնաւութեան, աղտոտուածութեան հետեր, ցեցի անցքեր, խոնաւութիւնից բազմաթիւ էջեր վնասուած, մաշուած, եզրերը թափուած, գրադաշտը գունափոխուած, թ. 23ի լս-ից 1 սմ-ի չափ կտրած-հանած, թ. 137ի ստ. մասում պատռած, ընդմէջ թ. 159-60ի 15, 165-6ի գրեթէ 16 թերթ (ԺԳ. պրակը) ընկած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. 1. *1ա-110բ* Դաւթի փիլիսոփայի Յաղագս սահմանաց իմաստասիրութեան

Տե՛ս ձեռ. 464, 95ա-149բ: Նախերգ./1ա-4ա: ա/4ա-13ա: բ/13ա-7բ: գ/17բ-24ա: դ/24ա-33ա: ե/33ա-7բ: զ/37բ-42բ: է/42բ-5ա: ը/45ա-50ա: թ/50ա-3բ: ժ/53բ-62ա: ժա/62ա-7ա: ժբ/67ա-72բ: ժգ/72բ-7ա: ժդ/77ա-8բ: ժե/78բ-82բ: ժզ/82բ-6ա: ժէ/86ա-93ա: ժը/93բ-7ա: ժթ/97ա-103ա: ի/103ա-6ա: իա/106ա-10բ (Արդ, ըզգիտնական զօրութիւնս զարդ /// վջ.):

Տե՛ս Դաւթի Անյաղթ փիլիսոփայի, Մատենագրութիւմ եւ թուղթ Գիտայ կաթողիկոսի առ Դաւիթ, Վենետիկ, 1932, էջ 26-120:

2. *111ա-31ա* Դաւթի Անյաղթ ֆիլիսոֆայի ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ – *Բարձրացուցէ՛ք, զՏէ՛ր Աստուած մեր՝ մարգարէն ձայնէ... եւ պատուական սուրբ նշանիւս ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեան:*

Տե՛ս նոյն տեղում, էջ 9-25:

3. *132բ-65բ* Սահմամբ իմաստասիրին Թաւթի. Սահմանիք իմաստասիրական իբր հարցմամբ («Ա-Ք») – *Ջի՞նչ Աստուած. Աստուած վսեմական եւ ինքնաբուն գոյութիւն... Քաջ է ոգի բացարձակ ի հողեղէն մարմնոյ ըստ ինքեան գոլով բարի:*

Բ. 1. *166ա-8բ* Յոհաննիսի Բաբուն եզընկացոյ ի խնդ[ի]ր գրոյ ուսումնասէր եւ բարեպաշտ իշխանին ասացի բան, ինչ յիշատակ սիրուց եւ ա///(ջնջուած). Յաղագս երկնի եւ զարդուց նորին («ՅՈՀԱՆՆԻՍԻ ԲԱՆ ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԻ Ի ԽՆԴՐՈ ԻՇԽԱՆԻՆ ՀԱՅՈՑ ԱՊԼՈՑ Ա-ՆՈՒՆ») – *Յամենահրաշ գործ Արարչին, որ գոյացան, / մեծ եւ ահեղ աքանչելիք ներգործեցան... եւ մեզ յանցնիւրս ժամանակաց պատճառ յիշման:*

2. *168բ-88բ* Նորին յաղագս երկնի – *Այն որ յառաջ քեզ ճառեցան բանք նախնական, / յաղագս երկուց տրամագծիցն անկիւնական... երգեմ ըզփառս անզրաւական: Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ գոյացուցեր... անհասանելոյ եղականի բնութեանս զքո բերելով:*

Գ. *191ա-202բ* [Քարոզ] Ի բանն, որ ասէ՝ Քանզի ճանաչելն զեզ բաւանդակ առդարութիւն է, եւ գիտելն՝ զաւրութիւն, fn արմատ անմահութիւն է – *է Աստուած ամէնայգօր, ամէնիմաստ, ամենաբարի... եւ նորա վիրօքն բժշկեցաք:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԴՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

25բ կարմրով, ստ. լս. Գրիչ չկա, որ աղէկ գրի:

54բ կարմրով, ստ. լս. Աւա՛ղ, որ գրիչ չունիմ, |55ա| որ այլ աղէկ գրէի:

60բ կարմրով, ստ. լս. Ի կերակրոյս հալմանե առեալ եմ, շոգն ի |61ա| գլուխս եւ զգայարանքս ծանրացեր, քունս խիստ կու նեղէ:

76ա ստ. լս. Գրիչս լաւ չէ:

131ա Դարձեալ կատարեցաւ ներբողեալ ճառս խոստովանական դաւանիւք պատմագրաբար ի դէմս ամենազօր աստուածային գայիսոն խաչին, ճարտասանական ստորոգութեամբ՝ մեծ եւ հռչակաւոր ֆիլիսոփային Դաւիթ՝ ի ձեռն իմս Յովհան անհմտութեան, զՎարդան [օ]րինակատու յիշել ի բարի պահանջեմ:

140բ կարմրով Ջմեծազարմ բաբունին զՈվհաննէս՝ մականուն Սամաղար, յիշեցէ՛ք յաղաւթս ձեր, ո՛վ սուրբ մանկունք, ընդրեալք եկեղեցոյ, ոյք կարդայք զգրեալս եւ զգրագիրս, բարի մտաւք յիշեցէ՛ք: |141ա| Ե///ին եւ միայն հզաւրն ամէն[իմ]աստն եւ ամէնարուեստնն, ամէնազաւրն եւ ամենակալն, էացուցանողն եւ միշտ պարունակողն, կենդանարարն եւ միայն բարէգործն, գերագոյն շնորհաց բաշխողն յոգեղեղէն կենդանեաց, լոյսերամիջն եւ յոգեղինացս սեռից երկրորդ բանականացս կատարելոցն եւ փափաքողացս ճշմարիտ երանութեանն եւ անճառ խոստացեալ բարեացն անզրաւ ուրախութեանցն եւ արդարութեան պսակացն յաջողողն, բաւականացուցանողն, հաւատարմացուցանողն եւ ժառանգեցուցանողն: Ամենասուրբ երրորդութիւն, համագոյ աստուածութիւն, աւրհ[ն]եալ, յանճառ մեծութեանն եւ յանհասանելի բարձրութեանն իւրում ի սրբութենէ իւրմէ. ամէն: Նոյն բարեգութն ճշմարիտն Աստուած գթայ եւ լուսաւորէ զհոգի եւ զմիտս Յովաննէս վարդապետին: Նոյն նորոգագործն, յօրինաւղն եւ նախախնամողն բոլորից գոյիցս սակաւ աշխատողիս հոգոյս իւր բազում ող[որմ]ութեամբն գթասցի. ամէն, |լս.| ընդ աստուածաբան վարդապետացն դասաւորեսցէ, եւս առաւել՝ զՄխիթար վարդապետ: |141բ| Ճշմարիտ երանութեան փափագողք, աստուածային մնացական բարեացն խնդրողք եւ իմաստութեան բանի սիրողք, ոյք հանդիպիք այսմ Սահմանք գրոց՝ կարդալով կամ աւրինակելով, բարի մտաւք յարտասուելոյ ժամն մեր յանցանացն եւ մե-

զացն թողութիւն հայցեցէ՛ք ի բարերարէն՝ Յովաննէս *վարդապէտին, Մխիթար վարդապետին եւ նախնեաց նոցին եւ աշակերտիս սուրբ վարդապետացս, սուրբ գրոցս եւ ճշմարիտ բանի խնդրողիս՝* Ստեփաննոսիս, *նոյն բարի մտաւք յանցանացն եւ մեղացն իմոց թողութիւն հայցեցէ՛ք: Ի կարդալոյ, յաղաւթելոյ ժամն եւ յարտասուելոյ խնդրեցէ՛ք զբարոյն յաջողիլն մեզ, նոյն բարերարն Աստուած զիւր խօստացեալ յաջողեսցէ զբարիսն ձեզ՝ խնդրողացդ եւ մեզ՝ փափաքողացս, պարգեւատուն աւրհնեալ յաւիտ<ից> ենից յաւիտեանս. ամէն:*

|լս.| *Ջ*Ստեփաննոսս *բարի մտաց յիշեա՛յ ի բարի:*

ՆՇՈՒՄ՝ *պհպ. Բա՝ «Ի. վարդապետ, Հմր 62»՝ ջնջած, «84/3448», «ԺԳ. եւ ԺՋ., Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»:*

Ձեռագիս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Յուցակ ձեռագրաց Դպրեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 103:

ԳՐՋԱՓՈՐՁ՝ *143բ՝ «Քեզ աղաչեմ, օվ Տիրայծին, Տիրայմայր», 144բ ստ. լս.՝ «Դրախտն ուն, օվ որ քեզ մուտ ունի, յուսմե ու պայծառ զոր քակարի ք/// լուս», 145ա՝ «Գապրել հրըշտակըն քեզ բերաւ, ողճոյնորեաց հոկէորն աւրհն Աստուածայծին յարկամէիդ բնակայց, որ մեհնածայ եղերք ի մայր Աստուածածին», 165բ՝ «Ատ ել գայս եւ բաժանի բնութիւն ի բնութեանց, իսկ բնութիւն ի վերայ տեսական տեսակի աւարտադրի», 189ա՝ «Փոխման Աստուածածին գիշերի հսկումն է անի աստեան առաւաւտու, աւրհնութիւն այսար ժղաիւր սարաք», 190բ՝ «Յիշատակ է Ոհան պարոնտէրին, Հայր»:*


ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *190ա՝ հրեշտակ, աղաւնի:*

3449
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ՍՊԱՀԱՆ **ՌՁԳ. – 1635**

ԳՐԻՉ՝ Յակոբ Երզնկացի: ՍՏԱՅՈՂ՝ Միխայէլ Ջուղայեցի:

ԹԵՐԹ՝ 409 (վր. լս. հետագայի էջակալում՝ 3-41, որ է՝ 1ա-20ա, իգ-ճէ, որ է՝ 21ա-53ա). չգրուած՝ 146բ-9բ, 185բ, 379բ-83բ, 391բ-2ա: ՊՐԱԿ՝ 1-13×12 (1՝ 10, 9՝ 11, 13՝ 8)+ԺԲ-ԺԳ×12+Ա.-ԺԷ×12 (ԺԳ 10, ԺԷ 14)+20: ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ երեքնուկ, եռամահիկ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14,7×10: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (10×6,5): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 240ա): ՏՈՂ՝ 22: ԿԱՋՄ՝ կանաչ մոմլաթ. մէջբը, փեղկերի հիմնամասերը եւ անկիւնները՝ սեւ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ վարդագոյն թուղթ (1950ականների). լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԴ՝ վարդագոյն եւ սպիտակ չգրուած թուղթ, մասն կազմաստառի (պհպ. Ա., Դ):



Նմուշ 240ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. լուսանցակողերի կարմիրը մասամբ թափուած, կեղտոտուած. գրաղաշտը խոնաւութիւնից փոխր-ինչ գունափոխուած, թերթերին զանազան հետեր, սկ-ից ամբողջ էանակի թերթեր թափուած, թ. 151-2ի վր. աջ անկիւնը պատռած, թ. 409ը հիմիից մասամբ պոկուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-22բ* [Լուծմունք Ներածութեանն Պորփիւրի]

1. *1ա-2բ* [Յաղագս սեռի] – *(սկ.) /// Ի Հերակլեա բացորոշելով եւ յայլոցն մեկնեցան: Լծ. Ի Հերակլեա տեսակքն բացորոշեցան եւ ըստ բազմութեան անձանց մեկնեցան... եւ կամ ձեւն հարցանէ, երկայն, խարտեաշ, ճակատ եւ այլն:*

2. *2բ-6բ* Յաղագս տեսակի – *Տեսակ ասի եւ ի վերայ իւրաքանչիւր կերպիւ...: Լծ. Տեսակ ասի, մարդ, ձի ասէ... եւ բոլորն այլոցն, որ է անհատիցն:*

3. *6բ-11ա* Յաղագս տարբերութեանն – *Տարբերութիւն հասարակ եւ յատկապէս եւ յատկեղ ասասցի...: Լծ. Թէի, թէ այս սահմանս իւր է Պորփիւրի... եւ ոչ յատուկն ձիոյն գոյացուցանէ զնայ:*

4. *11բ* Յաղագս յակակի [=յատկի] է բանս – *Ջյատուկն բաժանեն քառակի: Լծ. Դ. ցեղ, որ միայնում տեսակի... այլ զի բնութեամբ ունի, ծիծաղական ասեմք:*

5. *11բ-2ա* Յաղագս պատահմանն – *Եւ որ ոչ են այսպէս: Լծ. Սահմանեն այսպէս... եւ զինչ յատուկ իւրաքանչիւր առանձինն, Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն:*

6. *12ա-22բ* Կրկին լուծմունք. Սկիզբն դնէ ի մեկնչէն, ի հետեւ գա կարգաւ – *Ելոյր հարկաւորի: Լծ. Նախ եթէ լուր է սա հարկաւոր... եւ ի վերայ բազմաց ամենեքեան ճշմարիտ են:*

Բ. *23ա-35ա* [Մեկնութիւն ի] Սահմանք ասացեալ ի [Դ]ապէ [փիլիսոփայէ]

Տե՛ս ձեռ. 55, 396ա-405բ: ա/23աբ: բ/23բ-4ա: գ/24ա-35ա:

Գ. *35ա-6ա* Ոմանք զչարն անեղ ասացին եւ բնութիւն ունողացն գրեցին, եւ յԱստուծոյ ասացին ազդել ի սիրտս մարդկան զչարն՝ որպէս զբարին, վասն այսորիկ հարկ եղեւ իմաստասիրին Դաւթի, որ ցուցանէ, թէ ոչ է անեղ եւ ոչ բնութիւն եւ ոչ հարկ մարդոյ, եւ ոչ յԱստուծոյ տուեալ մարդկան – *Ամենայն չար տանջելի,*

այսինքն՝ չարն սատանայ է... եւ ընդ բանբասանօք՝ որպէս սատանայ:

Դ. *36ա-45բ* Ներածութիւն Պորփիւրի գրոց նախերգանս – *Պորփիւրիոս եւ յԱմղիքոս եւ Քրիսաւորի է ընկերք եւ աշակերտակիցք էին յԱթէնս, աշակերտք Պղատոնի... ենթակայն է պարունակեալ ի մարմինն կաչաղակն, եւ Քրիստոսի փառք յօխտեանս. ամէն:*

Ե. *46ա-92բ, 108ա-46ա* [Բանք Արիստոտելի]

1. *46ա-84ա* Ստորոգութիւն Արիստոտէլի. Նախերգան

Տե՛ս ձեռ. 1931, 100բ-12բ: 1/46ա-57ա: 2/57ա-62ա: 3/62ա-9ա: 4/69ա-75բ: 5/75բ-6ա: 6/76ա-9բ: 7/79բ-80ա: 8/80ա-1ա: 9/82բ-3բ:

Ունի՝

– *81ա-2բ* Յաղագս շարժութեանց – *Լինել, որ ծնանի, ապականել, որպէս մեռնի... այլայլութիւն ոչ ունի ներհակ, վասն այն յորակն տո՛ւր:*

2. *84ա-92բ* Վասն գոյացութեանց ի Ժ. Ստորոգութեանց [Արիստոտէլի] գրոց համառօտ բանիւ – *Համանունք, ասին, որոց անուանք միայն հասարակ...*

ա. *85աբ* Վասն գոյացութեան – *Առաջին, որ ոչ զենթակայէ ումեմնէ ասի... որ է ջերմն եւ բարէքաստիկ գոյացութիւն:*

բ. *85բ-6ա* Վասն բանակի – *Ջոր է ինչ, որ տարորոշէ... թերեւս ասացէ ոք:*

գ. *86ա-7ա* Վասն առնչի – *Ջոր ինչ ինքեանք են եւ այլոց գոլ ասին... զոր ամենայն անուն զիւր գոյացութիւնն նշանակէ:*

դ. *87ա-8ա* Յաղագս հարկի – *Որոց ասին սպիտակ... եւ զամենայն ինչ, որ սեռիւ իմանամք:*

ե. *88ա* Վասն առնելոյ եւ կրելոյ – *Ջոր ունին եւ ներհակութիւն... զոր եւ աստ ցուցանի հակակայք:*

զ. *88ա-9ա* Վասն հակակայից – *Նստի, ոչ նստի կոյր... այսպէս գոյ եւ սեռին անունն:*

է. *89ա* Վասն նախադրութեան – *Զի որ իրիցագոյն է, աւելի ասէ ունել զժամանակն... որ ծանուցանի մեզ զգայութեամբք:*

ը. *89աբ* Վասն համանգամայնցն – *Ջոր են պարզաբար եւ իսկագոյնք եւ տիրապէս... եւ ի միոյն ա՛ռ մի, ա՛ռ երկու:*

թ. *89բ-90ա* Վասն շարժմանց, որ են Ջ. – *Լինելութիւն, ապականութիւն, աճելութիւն, նուազութիւն, այլայլութիւն... այսպէս եւ ի վերայ ամենեցուն գոլ:*

ժ. *90աբ* Վասն ունելոյ – *Ջոր ասի զանազան, ապա գոլ ունակութիւն... որ ունի զամենայն բանիւ զօրութեամբ իւրով ի փառս իւր:*

ժա. *90բ-2բ* Վասն ցուցանելոյ զոմանս իմաստասիրութեան գործն թվով Ջ. – *Առաջինն է գիտութիւն գոյիցն... սոքա անբան մասինն են, եւ այլքն՝ բանականին:*

3. *108ա-34ա* Նախերգ Յաղագս Պերի արմենիաս՝ հոռոմ լեզու, եւ հայերէն՝ Յաղագս մեկնութեան

Տե՛ս ձեռ. 1931, 112բ-20ա: 1/108ա-10ա: 2/110ա-1ա: 3/111ա-2բ: 4/112բ-34ա:

4. *134ա-43բ* Նախերգան Յաղագս աշխարհից՝ Արիստոտէլի – *Աղէքսանդր Թագաւոր որդի էր բնութեամբ Սուիրոնիսկոսի գոռոզին... իսկ մակացիքն, այսինքն՝ որ ի ձի են հեծեալ եւ զրեհեալ ճակատին:*

Տե՛ս ձեռ. 1931, 120ա-4ա:

5. *144ա-6ա* Արիստոտէլի Յաղագս Առաքինութեան գրոց նախերգան – *Ի խնդրոյ Աղէքսանդր Թագաւորի պատմութիւնն արարեալ վասն աշխարհի... եւ այլ զամենայն ազգ գեղեցկութիւն սիրէ. եւ այլն: եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Տե՛ս ձեռ. 1931, 124աբ:

Զ. *92բ-107բ* Անուամբ Աստուծոյ Գիրք ի վերայ բնութեան հանրական եւ մասնական հանանայի ումեմն, աշխատեալ Իշաւ, անուն Յեսու – *Խնդիր վասն բնութեան այսպիսի արասցուք: Յորժամ գոյացոյց Աստուած զէս յոչէից... ոչ կարէ հասու լինել:*

Տե՛ս Իշօխ, Գիրք ի վերայ բնութեան, աշխ. Ս. Վարդանեանի, Երեւան, 1979, էջ 76-105, ձեռագիր՝ f:

Է. *150ա-85բ* Վասն բառի եւ վասն բանի: Այս են մուտք Քերականիս, որ ի Դիոնէսիոսէ սորին գտօղէ են եղեալ գլուխս թվով Ը. – *Պաւղ, որ է բառ, եւ ոս, բառ է, եւ ասելով Պաւղոս՝ այս է բան...*

1. *150բ-2ա* Վասն բանի – *Եւ զի՞նչ է բանս, է բանս... կենցաղակիցք ի հրոյ, ի ջրոյ, ի հողոյ եւ ի յօդոյ:*

2. *152ա-3ա* Վասն անուան – *Նա եւ ձկտին մասունք բանիս... զոր կապեալ է ընդ գոյացութեամբ:*

3. *153ա-7բ* Վասն բայի եւ վասն ոռակի – *Որակ եւ բայս, որ ունի մասունք Թ... թէ չափել զբանս եւ զիմաստս անկշռելիս:*

4. *157բ-60ա* Վասն լծորդի եւ բանակի – *Զի լծորդքս լինին թուովք շաղկապեալք առ յիրեարս... եւ յայլսն մտանել դիւրք:*

5. *160ա-2ա* Վասն ընդունելութեան եւ վասն հնագիտութեան եւ վասն տառնչի, որ են լծորդ – *Ընդունելութեանս ասէ, թէ սայ բառ է... եւ աստի ընդունի դէմ յարեւելս զնորայն չափեալսն:*

6. *162ա-5ա* Վասն ստուգաբանութեան գիւտի եւ վասն յօդի եւ վասն դերանուան, որ են լծորդ – *Ստուգաբանութեան գիւտ ասէ զփաղաւութեանց լուծումն... տե՛ս, որ առինչ ունի եւ զսոյն միտս:*

7. *165ա-8ա* Վասն համեմատութեան, տեղեկութեան եւ վասն նախադրութեան եւ վասն մակբայի եւ վասն ուրիշ – *Որք են լծորդք միմեանց եւ նշանակիչք գոյից եւ ստուգիչք... զայս կոչեցին մակբայ:*

8. *168ա-75բ* Վասն որ ասէ դատումն ſեղդաձաց, որ լաւ եւ վասն շաղկապի եւ վասն ոս ասէ առնել, որ եմ կցորդ *– Սոքա եւ դատումն քերդածաց լաւ քան զամենայնս…*

9. *175բ-81բ* Վասն անուանն Ե. մասանց *– Ջորմէ խօսեցաւ Պորփիւրի եւ այլաբանեաց զանուն… ուստի սկսան, որում փառք, իշխանութիւն եւ պատիւ:*

10. *181բ-2բ* Վասն տառի եւ վասն բառի, որ ի գրոց Արիստոտէլի Մեկնութիւն ſեռականիս *– Քանզի տառք նախինք, քան զտրամագիծս են դասիւ… քանզի անկար է լինել իմացումն առանց էակին մտածութեան:*

11. *182բ-3ա* Յաղագս բանին մեկնութեան, որ յԱրիստոտէլէ *– Բան է ձայն նշանական, զոր զմասանց իմն նշանակէ զմարդ… ոչ կարէր եղանիլ իւրաքանչիւրն ի հարկէն էակին:*

12. *183ա-4բ* Վասն անուան ի սոյն գրոց Արիստոտէլի *– Ջոր ասէ Քրիստոսն, զի է իմն, զումեմնէ… զոր առանց ամանակի եւ մասանց ոչինչ նշանակէ՝ ճշմարիտ կամ սուտ:*

13. *184բ-5ա* Վասն բայի, որ նշանակի ամանակի *– Եւ զայլոց ասացեալս զանցեալն եւ զներկայն եւ զգալոցն… զոր բաժանեալ է առ զանազան գոյացութիւնսն եւ ի պատահմունքն:*

Ը. *186ա-378ա* [Լուծմունք Յովհաննու Որոտնեցւոյ]

1. *186ա-271բ* Եռամեծին Յոհաննու Որոտնեցւոյ հայոց փիլիսոփա[յ]ի եւ վարժապետի հաւաքումն համառօտ վերլուծութեան Ստորոգութեանցն Առիստոտելի

Տե՛ս ձեռ. 1648, 4ա-85բ: Նխ./186ա-95բ: ա/195բ-204բ: բ/204բ-16բ (սկ. տարբեր՝ Իսկ քանակն զի նախագաս եղեւ որակին…): գ/216բ-26ա: դ/226ա-39ա: ե/239աբ: զ/239բ-57բ: է/257բ-62ա: ը/262ա-5բ: թ/265բ-8բ: ժ/269ա-71բ:

2. *271բ-378ա* Նոյին Յոհաննու Որոտնեցւոյ Համառաւտ լուծմունք Պերի արմէնիաս գրոցն

Տե՛ս ձեռ. 1648, 85բ-179բ: Նխդր./271բ-80բ: ա/280բ-5բ: բ/285բ-9ա: գ/289ա-378ա: Յիշ./չիք:

Թ. *384ա-409ա* Դաւթի փիլիսոփայի Ներգինացոյ յԱռաջաբանութիւն [Լուծմունք] Սահմանաց իմաստասիրութեան *– [Որք] տենչան բանից: Լծ. Ըստ այսմ աւրինակի թէ ոչ որպէս դուք կարծէք ոչ գոլ իմաստութիւն… եւ միմեամբք ապա կարեն կեալ, եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս. ամէն:*

Տե՛ս ձեռ. 621, 332ա-40ա:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

146ա Յակոբ *գրիչս յիշեցէ՛ք, ո՛վ եղբարք, յիշեալ լիջիք միւսանգամ գալստեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ:*

378բ Փա՛ռք ամենասուրբ երրորդութեանն՝ Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս: Շնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զգիրքս, որ կոչի (անունը չգրուած, տեղը բաց), ընդ հովանեաւ Սուրբ Սարգսի զաւրավարին եւ որդոյ նորա՝ Մարտիրոսին, ի մեծ թուականիս հայոց ի ՌՀԴ. (1635), ի հայրապետութեան տեառն Էջմիածնայ տէր Փիլիպպոսի ամենայն հայոց, եւ առաջնորդութեան Շօշ քաղաքի, որ կոչի ըՍպահան, սրբազան վարդապետին՝ տէր Խաչատուրին: Արդ, գրեցաւ սա ձեռամբ անարժան եւ մեղսամած եւ փծուն գրչի՝ ե[ր]զնկացի Յակոբ դպրի: Արդ, աղաչեմ զամենեսեանդ, զի որք հանդիպիք տեսութեան գրոցս կարդալով կամ յօրինակելով եւ կամ հարեւանցի տեսանելով, յիշեցէ՛ք ի մաքրափայլ յաղօթս ձեր զըստացող գրոցս Ջուղայեցի զխոճայ Միխայէլն եւ զծնօղսն իւր՝ զխոճայ Խեւրին եւ զմայրն իւր՝ զՓերսաբերն, եւ առ Աստուած հանգուցեալ եղբայրքն իւր՝ զՄխիթարն, զԹումանն եւ զքոյրն իւր՝ զ|379ա| Սուլթանխանն, եւ զկողակիցն իւր՝ զԱննան, եւ զամենայն արեան մերձաւորսն իւր, որ ստացաւ սայ ի հալալ ընչից եւ յարդեանց եւ եդ յիշատակ զայս գիրքս ի ձեռն տէր Յակոբ սրբայկրօն հաբեղային, եւ Աստուած զյիշողդ յիշէ ի միւսանգամ գալուստն Քրիստոսի. ամէն: Հայր մեր, որ յերկինս, սուրբ եղիցի:

Տե՛ս ԺԷ. դ. յիշ-f, Բ., էջ 610-611, Հմր 896:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *409բ (1706 թ., նոտրգիր)* Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, ողորմեա՛ սորա ստացողի Գրիգորի *(կապգրով)* ծնողացն, որ ստացաւ իւր հալալ ընչիցն Դ. զուռուշ ի վայելումն ընդերցողացն: Ով ոք կարդայ կամ օրինակի, մէկ բերան Աստուած ողորմի ասէ, որ եւ ողորմեսցի Տէր Աստուած ըստ մեծի ողորմութեան իւրում, թվին ՌՃԾ. եւ ե.ին (1706), ամսեանն Մայիս ժ. եւ մէկին (11). ամէն: Հա՛յր մեր, որ:

2. *409ա (ԺՀ. դ., նոտրգիր)* Ջգրելիս, ո՛վ բարեմիտ ընթերցողք, յիշել կամիջիք եւ ոչ միայն զիս, այլեւ զայլոց, որ մոլորեալ շրջին (1 բառ եղծած), որպէս զմին ծառայ եւ եղբայր ձեր (2-3 բառ եղծած) Գրիգոր վարդապետ:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *82բ, 408բ* սեւ թանաքով ուղղանկիւն՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ / ՅԵՍԱՒ / ՎԱՐԴԱՊԵՏ / ՌՃԿԳ. (1714)»:

ՆՇՈՒՄ՝ *պհպ. բա՝ «Խ. վարդապետ, Հմր 95»՝ ջնջած, «85/3449», «ԺԷ., Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս», 409բ՝ «814, Հմր 2/4»:*


Ձեռագիս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Յուցակ ձեռագրաց Դպրեան Խաչիկ վարդապետի, ժողված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 103-104:

3450
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ԺԸ. դար

ԳՐԻՉ՝ Մկրտիչ կր.:

ԹԵՐԹ՝ 138+1 (կրկն.՝ թ. 32): ՊՐԱԿ՝ Ե-Ի×12 (Ե 13, Զ, Ը, ԺԱ-ԺԲ 10, Է, Թ 11, ԺԳ-ԺԶ՝ չիք, ԺԷ 5, Ի 9)+14: ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15×10: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (11×7): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 33ա): ՏՈՂ՝ 22-23: ԿԱԶՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դոնակով. ստ. եւ վր. եզրերը՝ վարդագոյն մոմլաթ. մէջբը՝ կապոյտ կտաւ. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ՝ դեղնաւուն չգրուած թուղթ, մասն կազմաստառի:



Նմուշ 33ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմը նորոգուած հին կազմի Ա. եւ Բ. փեղկերի, դոնակի կաշւով, գրաղաշտը խոնաւութիւնից գունափոխուած, թերթերը մաշուած, որի հետեւանքով գիրը հաճախ անընթեռնելի, սկզբից, տարբեր թերթերի միջեւ անորոշ հանակի թերթեր թափուած, թ. 134ը սխալ տեղադրուած, կարդալ՝ թ. 135, 134, 136:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-66բ* [Բառ ֆերթողականք] – *(սկ.) ///ի կր[կիա – ի ձի]ընթաց, իմաստակ – սուտ իմաստուն է, իղձ – ցանկութիւն կամ փափուկ, ի մակագոյն – երկրագոյն... քողիցնօղ – դասապետ, քօշ – վայրի ղօչ, ֆրէր – եղբայր:*

Տե՛ս Բառ ֆերթողականք եւ երեմիա Մեղրեցւոյ Բառգիրք հայոց բառարանների առնչութիւնների մասին մանրամասն տե՛ս Հ. Ամալեան, Միջնադարեան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V-XV դդ.), Երեւան, 1966, էջ 82-88, նոյն գրի՝ (XVI-XVII դդ.), Երեւան, 1971, էջ 306, նաեւ Բառգիրք հայոց, աշխ. Հ. Ամալեանի, Երեւան, 1975, էջ 1-340:

Բ. *67ա-79բ* Հանդէս [բանա]ստեղծաց. փաղանունաբար ստորոգիլ սակս նորավարժիցն բան գեղչուկ *– Աստուածազան, աստուածասքանչ, աստուածազգեաց, աստուածասէր... վավաշոտ, լկտի, ծանակ, հերատու/// ափրոտ իւրեանք:*

Տե՛ս Հ. Ամալեան, Միջնադարեան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V-XV դդ.), էջ 123-132:

Գ. *80ա-1բ* ԺԸ. Վասն աղօթից – *(սկ.) /// իմոյ յիշատակ մինչեւ ես գամ, զի աղօթքն խօսք է ընդ Աստուած... որ իւր շնորհօք թողու զմեզս Աստուծոյ պարգեւս, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:*

Դ. *82ա-100ա* [Խրատք]

1. *82ա-7բ* ԺԹ. Խրատ կրօնաւորաց, թէ զինչ հարկաւոր է յանապատ բնակողացն եւ զինչ պիտանացու, Գրիգորի եռամեծի, հաջ հոետորի, վարդապետի ասացեալ *– Ասեմք նախ, եթէ այն է հարկաւոր, առանց որոյ կեալ ոչ է... ո՛վ որդեակ, այլոց ողորմիս, ինձ ընդէր ոչ ողորմիս, որ ընդ քեզ /// (վջ.):*

Ծնթ. Տաթեւացու Ձմեռան հտ.ի տարբեր բառոզների խմբագրական տարբերակն է:

կբ. *267ա-8բ* Փիլիպեցւոց գլխոյն – *Եպիսկոպոս՝ տեսուչ կամ այցելու… Կցորդ՝ հաղորդ։*

կգ. *268բ* Կողոսացւոց գլխոյն – *Տեղեակ՝ հմուտ կամ ուսեալ… Սկիւթացի՝ թուրք։*

կդ. *268բ-9ա* Թեսաղոնիկեցւոց առաջին գլխոյն – *Ողոքել՝ աղաչել կամ աղերսել… Բաւանդակ՝ բոլոր կամ ընդհանուր կամ ամենայն։*

կե. *269ա* Երկրորդ գլխոյն – *Ապստամբութիւն՝ անհաւանութիւն կամ ի բաց ցացումն… Պատկառել՝ ամաչել կամ զգուշանալ։*

կզ. *269ա-70բ* Եբրայեցւոց գլխոյն – *Նկարագիր՝ պատկեր կամ կերպարան… Վաղագոյն՝ յառաջագոյն։*

կէ. *270բ-1բ* Տիմոթէոսի առաջին գլխոյն – *Տիմոթէոս՝ պատիւ Աստուծոյ կամ պարգեւ Աստուծոյ… Աւանդն՝ պատուիրանն կամ պահեստ կամ պահ կամ յանձն։*

կը. *271բ* Երկրորդ գլխոյն – *Հանն հանիկն է կամ մամն… Մատեան՝ գիրք կամ կոնդակ կամ թուղթ։*

կթ. *271բ-2ա* Բառ Տիտոսի գլխոյն – *Տիտոս՝ պատուելի կամ պատուական… Հատուս՝ մատնիչ կամ խային։*

հ. *272ա* Փիլիմոն՝ շնորհեալ կամ զարմանալի – *Արգոյ՝ մեծարոյ, գործոյ… Թելադրութիւն՝ յորդորումն բանի կամ յօդումն։*

հա. *272ա-4ա* Բառ տեսլեանն Յոհաննու – *Նշանակել՝ բացայայտել կամ նշանել… Կիւօս՝ եղեգնեայ գաւազան։*

հբ. *274ա-5ա* Բառ էր ընդ եղբաւրն – *Կիրակէն ի մերս բարբառ տէրունի… Անբասիր՝ անպատճառ։*

Ծնթ. Ստ. լս-ներում հետագայ ձեռով խորագրերի կրճատ անուանումները։ Տե՛ս Հ. Ամալեան, Հայ միջնադարեան բառարանագրութիւնը, Երեւան, 2007 (ձեռագրիս մասին՝ էջ 346)։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

275ա Յիշատակարան գրոյս բառի – Փա՛ռք համագոյ եւ միասնական, անբաժանելի եւ անքակ տէրութեանն՝ Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից։ Որ ետ կարողութիւն նուաստ, յոքնամեղ անձինս՝ Ներսէս մեղապարտ քահանայի հա-


սանել ի յաւարտ եւ ի կատարումն սուրբ տառիս, որ կոչի Բառգիրք, որով պարունակեալ ունի յինքեան զամենայն բառս յԱստուածաշունչ գրոց, այսինքն՝ Հին եւ Նոր կտակարանաց: Ի թուականիս հայոց ՌՃ. եւ ժ. եւ Ը.ե-րորդի (1669), ի հայրապետութեան տեառն Յակոբայ, |*275բ*| *ի գեօղաքաղաքս* Աստապատ, *ի դուռն* Սուրբ Վարդան *զօրավարին, եւ մերում առաջնորդութեան երջանկափառ աթոռոյ* Սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի, *տէր* Յակոբ *եւ տէր* Միքայել *րաբունապետ աստուածաբան վարդապետաց: Արդ, ցանկացօղ եղեւ սոյն տառի մաքուր եւ կուսակրօն քահանայն՝ տէր* Միքայէլն *եւ հարկ եդ ծնօղի իւրոյ՝* Մարիամու, *զի հալալ ընչից իւրոյ տացէ ծրել զգիրս, զոր բարեմիտ մայրն իւր* Մարիամ *յաւժար կամաւք եւ մեծաւ բաղձանօք յանձն էառ եւ գրել ետ զգիրս եւ յանձնեաց ի կուսակրօն որդին իւր՝ տէր* Միքայէլն, *որպէսզի լիցի անչինչ յիշատակ հոգւոյ իւրոյ: Եւ որք հանդիպիք սոյն տառի, յիշեսջի՛ք յաղօթս ձեր տէր* Միքայէլն *եւ զիւր ծնօղն <իւր> զ*Աբրահամ *եւ զ*Մարիամն *եւ որ յիշէքդ յիշեալ լիջիք ի Ք*րիստոսէ Աստուծոյ:

ՁԵՌԱԳԻՐ Բ.

ՌՃԺԹ.-ՌՃԺԵ. – 1665-1666

ԳՐԻՉ՝ Գրիգոր դպիր: ՍՏԱՑՈՂ՝ տէր Միքայէլ:

ԹԵՐԹ՝ 190 (թ. 278-467). չգրուած՝ 278ա-9ա: ՊՐԱԿ՝ Ա.-ԺԶ×12 (Ը 11, ԺԶ 9, ԺԷ 14): ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ բոլորակի մէջ խաչ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15×10,3: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (9,5×6): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 287ա): ՏՈՂ՝ 23:



Նմուշ 287ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – ճակատազարդ՝ 284ա: Լուսանցազարդ՝ յուշկապարիկ՝ 284ա: Ձարդագիր՝ թոչնագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, վարդագոյն, դեղին:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթերին տեղ-տեղ խոնաւութեան եւ աղտոտուածութեան տարատեսակ հետքեր. թանաքի թթուայնութեան հետեւանքով թերթերը մասամբ գունափոխուած. գրադաշտը տեղ-տեղ խամրած եւ անընթեռնելի. ընդմէջ թ. 372-3ի 1 թերթ ընկած, ընդմէջ թ. 466-7ի 1 թերթ կտրած. թ. 420, 458՝ ճիմիից մասամբ անջատ. թ. 296, 354՝ գործարանային թերութեամբ. թ. 439, 440՝ ստ. լս. պատռուած. թ. 313-4՝ այրուածքի հետքեր, գրադաշտը վնասուած. 279բ հանդիպակաց երեսի գիրը մասամբ արտատպուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *280ա-2ա* [Առաքել վարդապետէ. ձեռ. 1495, 135բ] Անուանիք Աստուածաշունչ գրոց Հ. եւ Բ.ից (72) – *Տէր Առաքել դիտող Միւնեաց, / գուրկ եւ թափուր ամէն շնորհաց... զմեզ ի մեղաց ազատելով. նմայ փա՛ռք անզրաւ:*

Բ. *282ա* [Յաղագս կշռոց] – *Տաղանդ կշռոյ անուն է, որ է ճ՚իե. (125) լիտր... Յուդայ ի քահանայիցն. դինարն եւս զգահեկանի անուն է:*

Գ. *282բ-3ա* [Բառ եբրայեցւոց. ձեռ. 540, 2ա] – *Արդ, թուեն եբրայեցիքն [զգիրս] այսպէս. առաջինն անուանեն Բերեսիթ... սրբագրագրացն, որ լինի Իբ. (22):*

Դ. *283աբ* Այս բառ յեռեհիւական բաղաձայն հոմանուանց բակնայնեալ – *Ջամենայն որ ինչ մի անգամ են անուանք յեփրայեցի... Թաւ՝ նշան կամ կանչումն, փըն, մեմ:*

Ե. *283բ-447ա* Այս բառ են ճերթողական վասն հոմերական տաղիցն, վասն զի ճերթողական արհեստն չափաբերականք են եւ չափով վարին: Եւ են, որ գեղչուկ են, որով ճարտասանքն վարին, զի յաճախապէս փոխաբերին սակս զարդու ճարտասանիցն, եւ ճարկ է ճոգնահամար ելանիլ: Իսկ զյունաց փոքր բառն նայ եւ զբառ Աստուածաշնչին, որ յետո հաւաքեցաւ, խառնեցաւ ի մի ընդ իւրաքանչիւր տեղոջ – *Աբաւոիթ (=աբաթոիթ)՝ անշէն, Աբանա՝ հօր օրհնութիւն... Օցտել եւ օձտել՝ պատառել:*

Տե՛ս Բառգիրք հայոց, աշխ. Հ. Ամալեանի, Երեւան, 1975 (ձեռագրիս մասին՝ էջ ԺԱ, ԻԸ-ԻԹ): Համմտ. Հ. Ամալեան, Հայ միջնադարեան բառարանագրութիւնը, Երեւան, 2007:

Զ. *447ա-53բ* Բառ Գալիանոսի բժշկի – *[Ա]թխար՝ վաղամեռուկ... Քորտոր՝ սպերման, Քամիղոն՝ կանկար:*

Է. *454ա-7ա* Թարգմանութիւն դեղոց, զոր ընտ[ր]եալ են իմաստունքն եւ կարգեալ յայլ լեզուաց ի մերս – *[Ա]բլուկ՝ ցըթնի պտուղ... Ֆրասիոն՝ մեղրածծուկ:*

Ը. *457բ-65բ* Հանդէս բանաստեղ[ծ]աց, փաղանուանաբար ստորոգիլ սակս նորավարժիցն. բառ է գեղչուկ – *Աստուածազան՝ աստուածաբանչ, աստուածազգեաց, աստուածավայելուչ եւ քրիստոսափառ... Փոփոխել՝ յեղուլ, յեղեղել... վհանդել, երերել, խարխալել:*

Թ. *465բ-6ա* Թարգմանութիւն պարսից բառից, որ ի Վարդանանց պատմութեանց գրոց միջին է – *Զրադաշտական՝ բուն բան կամ զկարեւոր ուխտ... Ջառաջին ճառն երիս բառ պարթեւն ոչ գիտաց, ասելով, թէ չէ պարսից, եւ այլն այս է:*

Հ. Ամալեան, Հայ միջնադարեան բառարանագրութիւնը, Երեւան, 2007 (ձեռագիրն այստեղ օգտագործուած է):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. *Գրչի 279բ Օգնեա՛, Հոգիա՛ Սուրբ, Գրիգոր դպրի, զի կարողութեամբ քո աւարտի։*

466ա եւ Քրիստոսի յուսոյն փա՛ռք յաւիտեանս. ամէն, որ ետ կարողութեան փգուն եւ տատանեալ Գրիգոր դպրիս հասանել ի յաւարտ փոքր տառիս։ Ջծրօղ համայն տառիս՝ / զԳրիգոր բազմամեղիկս, / ի թուին հայոց հայկըզունի / հազար հարիւր ԺԵ. (1666) թուի։ / Արդ, հանդիպողք այմ տառիս / եւ շահաւէտ բուրաստանիս, / ինձ յիշեցէ՛ք զեղկելիս, / զթարմատարս եւ զգերիս։

2. *Ստացողի 466բ (բոլորգիր) Միաւնական Սուրբ երրորդութեանն՝ Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, յամենայն արարածոց, յիմանալեաց եւ ի զգալեաց, ի հրեշտակաց եւ ի մարդկանէ եւ յամենայն տարրեղինաց. ամէն։ Եւ այժմ ստացօղ եղեւ հոգիազարդ կտակարանիս հեզահոգի եւ սրբամիտ տէր Միխայելն. ստացօղ եղեւ սորին ի թուին հայոց ՌՃԺԴ. (1665), ի հայրապետութեան տեառն Յակոբայ սրբայգան կաթողիկոսի, ի թագաւորութեանն Պարսից շահ Ապասին։ Եւ դարձեալ ես՝ տէր Միխայելս, ստացա զԲառգիրքս, գրել տուի յիշատակ ինձ եւ ամենայն մերձաւորաց. ամէն։ Իսկ առաջնորդ եւ միաբանք Սուրբ Նախավկայիս՝ Միխայել վարդապետ, առաջնորդ Ոհան վարդապետն, Մարտիրոս վարդապետն, Դանիէլ վարդապետն, տէր Եսային, տէր Սամուէլն, տէր Թորոսն, տէր Պետրոսն, տէր Մովսէսն, տէր Միխայէլ՝ ստացօղ սորին, Գ. սարկաւագ՝ Մարտիրոս, Աւետիս, Գրիգոր։ Մանաւանդ ես՝ տէր Միխայէլս, գրել տուի՝ յիշատակ ինձ եւ ամենայն արեան /// (շար.)։*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ 316բ՝ *«Ջգոնութիւն ընթելութիւն զգոնեցուցանեմք ընթելեցուցանեմք»։*

3469
ԺՈՂՈՎԱԾՈՅ
(բաղկացած 2 ձեռագրից)

ԹԵՐԹ՝ 113։ ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի. միջուկը՝ տախտակ. աստառը՝ սպիտակ չգրուած թուղթ։ ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ՝ դեղնաւուն թուղթ (Ի. դ.)։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, կեղտոտուած, մէջբը ճաճճած. փեղկերի եզրերի կաշին մաշուած՝ երեւում է միջուկ-տախտակը. փեղկերի վրայի երբեմնի խաչերն ընկած՝ կան անցքերը. աստառը մաշուած, աղտոտուած։

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *1ա՝ անընթեռնելի «/// 1189» (1740), 22բ սեւ թանաքով ուխտանկիւն՝* «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏԻՐԱՅՈՒ ԹԱԹՈՍ», *99բ, 107ա սեւ թանաքով բոլորակ՝ առիւծի եւ խաչի պատկերով։*

ՆՇՈՒՄ՝ *մէջքին սոսնձած թղթին, տպագիր՝ «Ի գրեանց գրատան անապատին Սեւան[այ] Հ՝ի 1», ձեռագրով գրուած՝ «Ադամգիրք ոտանաւորք», 1ա՝«Սեւան, 1/3469»։*

Ձեռագիրս նկարագրութիւնը տե՛ս Մ. Սմբատեանց, Տեղագիր Գեղարդունի Ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 395, Հ՝ի 1/1։


ԳՐՉԱՓՈՐՁ՝ *1բ՝ «ա-է», 3ա՝ «բաբաաթի ջրուն, բաբաթն, բ շբաաթ», 3բ՝ «աբ», Բ. կազմաստառ՝ «Այս է գոուղղղի, մուլքկ, այս է գոուղղղի մուլքն, Առաքել, Պօղոս, 3»։*

ՁԵՌԱԳԻՐ Ա.

ԷՋՄԻԱԾԻՆ ՌՃԿԹ. – 1715

ԳՐԻՉ՝ Կիրակոս Թալնցի։

ԹԵՐԹ՝ 99 (թ 1-99). չգրուած՝ 1ա-3բ, 63բ, 99աբ։ ՊՐԱԿ՝ 3+ԺԱ-ԻԴ×12 (ԺԴ-ԺԸ՝ չիֆ, ԺԳ 1, ԻԱ 11)։ ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ բուսական զարդանախշ։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15,2×10,1։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, կարմրով եւ սեւով սահմանագծուած (13×7,5)։ ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 30ա)։ ՏՈՂ՝ 20-21։



Նմուշ 30ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Ջարդագիր՝ հաճգուցագիր։ Գոյներ՝ կարմիր։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թ. 1-3՝ նորոգուած սպիտակ կիսաթափանցիկ թղթով (Ի. դ.), թերթերին տեղ-տեղ խոնաւութեան եւ աղտոտուածութեան տարատեսակ հետքեր. ընդմէջ թ. 28-9ի շուրջ 71, 62-3ի 1 թերթ կտրած. թ. 29՝ հիմիից մասամբ անջատ. թ. 38՝ ստ. անկիւնը պատռուած։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *4ա-28բ* [Ադամգիրք Առաքելի Սիւնեցւոյ]

Տե՛ս ձեռ. 83, 2ա-138ա։ 1/չիք։ 2/4ա-17բ։ ա-բ/չիք։ գ/4ա (սկ. թափ. «/// Ձեզ թշնամի կա օձն ու չարըն...»)։ դ/4ա-5բ (5ա գրչից՝ «Քան զԱդամայ յանցանքն ես յոյժ մեղայ, Տէ՛ր, մեղա՛յ ասեմ բիւր Ռ. (1000), թո՛ղ ինձ, Տէր, Տէր. ես գրեցի»)։ ե/5բ-13բ։ զ/13բ-4բ։ է/14բ-6ա։ ը/16ա-7բ։ ȣ/18բ-28բ։ Յանկ/18բ-9ա։ ա/19ա-21ա։ բ/21աբ։ գ/21բ-3բ։ դ/23բ-5ա։ ե/25ա-6ա։ զ/26ա-8ա։ է/28աբ («...կամքս իմ ի չարըն ներկեցաւ, եւ չարն ի յիս///» շար.)։ ը-ժ, յիշ./չիք։

Բ. *29ա-46բ* [Առաքելի Սիւնեցւոյ. ձեռ. 83, 184ա-229ա] Վասն յատկացուցանելոյ զդասս առ հասարակ ամենայն սրբոց, որ են յԲԺ.ն (12) գլուխս բաժանեալ, յորոց զանազան շնորհիւ յայտնեցան մարդկան: Այսպէս եւ դիմակիւ սոցին՝ մասու[ն]ք չարին, զոր սերմանեաց սատանայ զորումն յազարակին բնութեանս մասունս չարեաց՝ ՅՀ. (370), որ է՝ Լ.ԲԺ.-ն (30×12=360), եւ ՅՀԷ. (377) մասն, եւ է սայ՝ Է.Ծ. (7×50=350) ի խորհուրդ զանազանեալ. Տունս ՄԽ. (240) – *երկոտասան դասք են սրբոց / առաքինեաց եւ ընտրելոց... որ ազատէ զազգս մարդկան / յայսքան չարեացըս զանազան:*

Գ. *46բ-89բ* [Բանիւ խրատական եւ յոյժ հարկաւոր, որ ֆակտեն զխորհուրդ մարմնական եւ տան ուրանալ զսնոտի խաբէութիւն աշխարհիս, եւ այլ իմն շինեն զխորհուրդ մարդկան]

Տե՛ս ձեռ. 83, 229բ-71բ: Նախերգան/չիք: Յանկ/չիք: ա/46բ-9ա: բ/49ա-50ա: գ/50աբ: դ/50բ-3ա: ե/53ա-4ա: զ/54ա-6ա: է/56ա-8բ: ը/58բ-60ա: թ/60ա-5բ (62բ գրչից՝ «Թուղթ էր պակաս, վասն որոյ թողի եւ ոչ գրեցի»): ժ/65բ-7ա: ժա/67ա-8բ: ժբ/68բ-9ա: ժգ/69ա72ա: ժդ/72ա-4բ: ժե/74բ-7բ: ժզ/77բ-81բ: ժէ/82ա-3բ: ժը/83բ-5բ: ժթ/85բ-6բ: ի/86բ-9բ:

– 46բ *Արդ, աղաչեմ զձեզ միաբան, / որք ընթեռնուք զայս ի մատեան, / զտէր Աւաքեալ հեգք ու անարժան / յիշեցէ՛ք յաղօթըս ձեր զանազան:*

Տե՛ս Առաքել Սիւնեցի, Դեախտագիրք, Վենետիկ, 1956:

Դ. *91ա-8բ* [Տոմարականի]

ա. *91ա-5ա* Եւ դարձեալ զայս եւս յուշ առնեմ սիրելեացդ, ֆանզի ոմանք յեղբարց խնդրեցին ի մէնջ. եթէ գոյ հնար եւ կարող ես զՊարզատօմարն կարճ ի կարճոյ ոտք հանել, որ աշխարհի ֆահանայք եւ անգէտ մատաղ մանկունք ուսանին եւ բերան առեալ երգելով ե՛ւ դիւրինս ուսանել, ե՛ւ դեռաբոյսից ուսուցանել. Աստուծով յանձն առի եւ արարի եւ աւարտեցի Լ. տնով, որպէս եւ տեսանէք. բաւ է – *Յունվարի մէկն կազանդ է, / վեցն՝ Յայտնութիւն եւ Ջրաւրհնէք... Այս է աւարտն Պարզատօմարիս, զոր |95ա| ըսկիզբն եղեւ ՌՃՄԱ. (1702) թուին:*

բ. *95աբ* Ի խնդրոյ եղբարց ոմանց, նոյնպէս եւ զՇ.եակն (532) Ի. (20) տընով ոտք արարաք վասն դեռաբոյս մանկանց, որ եւ բերան առեալ միշտ բարբառին եւ դիւրաւ ուսանին եւ զայլս ուսուցանէն – *Դարձեալ ծանէք, սիրելի՛ք, սուրբ հարքն մեր պարզել զտօմարն այբուբենի ի վերայ ԼՋ. (36) գրով... Այսքանս Պարզատօմարի մեկնութիւնն բաւ է իմաստից:*

գ. *95բ-6ա* Իսկ վասն ՇՃ.եկին (532), որ ըսան տնով զայն եւ տաղաչափեալ, որ թէ մանկունք բերան առեալ երգեն, այլ ոչ կարօտին օրինակի – *Մեծ տօմարն ըսկիզբն Յունվարոյ է... որ ի վեր է, քան զամենայն գիտութիւն արտաքնոց:*

դ. *96ա* Իսկ զայսման մեկնութիւնս իմաստից բաւե[ս]ցի, եւ զկատարեալ մեկնութիւնն սորայ արարեալ եմ յայլում տեղոջ՝ յերկար, թէ ով է պատջառ այս Շ.եկիս (532) եւ կամ որպէս գտին, ըսկիզբն եղեւ էաս եւ ժողովեալ աշխարհիս զիմաստունս Լ. (30) թվով – *Նախ, զընթացս լուսնին գտին... այսքանս բաւ է իմաստից:*

ե. *96բ-8բ* Այսուհետեւ կամիմ ասել զեՃ.եկին (532) նախ զահմանողն գովել եւ ապայ Ի. (20) տնով տաղաչափել եւ դիւրինս գտանել («Կիրակոս վարդապետէ է ասացեալիս») – *Կամիմ ասել բան գովեստի, / էասայ մեծ հեռատորի... տանց եւ տառից անուն ծրոցի, / զի ընթերցօղք վերահասու լինիցի:*

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, ԺԸ. դ., նոտրգիր

63ա [Մասն բառոցի ինչ] – *(սկ.) ///աղաղակեսցուք առ Տէր յամենայն նեղութիւնս, ո՛վ սիրելիք... գուցէ ձանձրութիւն ունկնդրացդ եղիցի:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

17բ Բանք Բ. հատորացս աւարտեցաւ, եւ կամիմ յիշատակարան գրել.

Փա՛ռք եւ պատիւ յամենայնի,
Հօր եւ Որդւոյ իւր ճշմարտի
եւ Սուրբ Հոգոյն շնորհաբաշի,
առատաձիր պարգեւողի:
Երրեակ գոլով անբաժ եւ մի,
միշտ գոհութիւն նմա լիցի,
այժմ, յաւիտեանս եւ յապառնի:
Շրջապատումն Կռօնոսի,
Ի.երորդ (20) յոբելինի,
Լ.երորդ (30) դիպիաթի,
*երկեակ հնկեակ ամ նահանջի (1711)**
Յունիս ամիս աւարտեցի,
երկեակ տասնեակ մու հընկեկի (25),
ի գահ Իջման Սուրբ Միածնի:
Յաւարտումն այս մեծ սուիերի,
ձեռամբ անմիտ եւ տըկարի,
եւ զառածեալ մեղօք ի լի:
Անուամբ կոչիմ ես Թալնցի,
յԱրարտեանըն գաւառի,
սնեալ, վարժեալ էջմիածնի:
Նա, որ գիծն յամենայնի,
եւ շնորհէ ում եւ կամի,
նա եւս ինձ կար, որ ծրեցի,
հասանելով ի ծայր բանի:
Զի զօրութիւն ես չունէի
Նշանախէց մի դրոշմէի,
|18ա| Փա՛ռք յարակայ նմա լիցի,
այժմ եւ յաւէտ եւ ապառնի:
Դարձեալ եղէ որպէս մոլի,

սէր սոփերիս այսմ գրքի,
որ հին եւ նոր Ադամ *կոչի,*
Եւայ նման կուսին լինի։
Ի յումեմնէ բանասիրէ,
է արարեալ Սիւնեաց *վիհէ*
Տէր Առաքեալ, Գրիգորի
քեռորդի է Տաթեւացի։
Ծերութիւնս, որ զիս ունի,
Ջ. (80) ամն հասեալ էի,
Բ. գոզլուկ զաչս եդի,
դողդոջալով զայս գրէի։
Լինի թէ մէկ ողորմեսցի,
ինձ ասողաց ձեռն ընկնի,
ըզծերութիւնս ի բաց եդի,
յուսով յԱստուած ես դիմեցի։
Լալով, ողբով զայս գրէի,
վա՛յ եւ եղուկ ինձ կարգայի,
ոչ թէ զԱդամ անգոսնէի։
Բայց մեղքն որքան ես չափէի,
զիմն եւ նորայն կշռէի,
բիւր Ռ. զիմն աւելի,
քան զնորայն տեսանէի,
վասն որոյ եղուկ ինձ ասէի։
Ջբան Պօղոսիկն *ի միտ ածի,*
պետ եւ գլուխ մեղաւորի,
զիս կոչելով դառն լայի,
եւ ես ինքնին վկայեցի։
Կամել կարելն Քրիստոսի,
յուսահատիլն ի բաց եդի։

Առաջին հատորն այս ամէն մէկ տուն Ռ. ու Յ. ու Ջ. (1380) տուն Աստուծով գրեցաք, իսկ երկրորդ հատորն ՃՀՋ. (380) այլ իմն ոճով, նորն Ադամայ եւ Յովասափի, գունովն երգեցէ՛ք եւ զմեզ յիշեցէ՛ք, որ եւ Աստուած զձեզ յիշէ իւր արքայութեան. ամէն։

* Ծնթ. Թուականն այսպէս ենք հասկանում. իսան յոբելեան՝ 20×50=1000. երեսուն ոլիմպիադ՝ 30×4=120, երկեակ ճնգեակ՝ 2×5=10. այսինքն՝ 1000+120+2×5×4=40=1160+551=1711։

89բ Աստանօր եղեւ աւարտ։ Փա՛ռք տվողին կարողութիւն տկարիս եւ փըծուն գրչի՝ Թալնցի *պիտականուն* Կիրակոս *վարդապետի, որ վերջն գրիս հասի։*

90ա Փա՛ռք եւ գոհութիւն եռանձնեա տէրութեանն եւ միասնական Սուրբ երրորդութեանն՝ Հօր եւ Որդոյ եւ Սուրբ Հո[գո]յն. ամէն։ Դարձեալ գոհանամ զքէն, Քրիստո՛ս Աստուած, որ ետուր ինձ կարողութիւն տըկարիս եւ անզօր, փըծուն գրչիս՝ Թալնցի Կիրակոս *վարդապետիս, որ հասուցեր աւարտ գրքիս, որ կոչի Ադամգիրք, հազարերորդի երրեակ յոբելի, եւ նահանջի, երկեակ ամի (1000+ 150+ 12+ 2+ 551= 1715), ի գահ* Իչման Սուրբ Միածնի, *ի վեցն Հոկտեմի (այսպէս), որ նահատակեալ օր էր սուրբ* Գայիանեա՝ *դայեկին սրբոյն* Հռիփսիմեա *եւ դաստիարակին։ Եւ դարձեալ վերստին փա՛ռք եւ գոհութիւն Քրիստոսի, որ ոչինչ ունէի կարողութիւն եւ զօրութիւն մէկ տող գիր գրելոյ, քանզի հասեալ էի ամն ուշասուն, որ մէկ գոզուկով չկարացի գրել, Բ. գոզլուկ եդի աչացս, իբրեւ զստուեր երեւիւր աչացս։ Այսպէս վայ տալով անձինս եւ գրէի լալով եւ չափ եդեալ կըշռէի զմեղս զիմն ու* զԱդամայն, |90բ| *եւ տեսի որ զիմ մեղքն քան զՄասիս, իսկ նորայն՝ որպէս զհատ մանանխոյ։ Ոմն ի սրբոց այսպէս ասէր վասն դառն պտղին. Ռ. (5000) ամ ի դըժոխս կացին, Ջ. (900) ամ յաշխարհս լացին։ Իսկ թէ ինձ զինչ լինիցին, ոչ գիտեմ զինչ արարից, զեղջ իսկի չկայ սրտիս կամ արտասուս այս կուր աչիցս, միշտ զմարմին սիրեմ գերիս եւ գիրկ ածեմ ես աշխարհիս, սատանայի եղէ գերիս, նորա կամքն միշտ կատարեմ, աշխարհս ամէն ժողովէին, զիմ գլուխս լալու էին, չէր բաւական որ լինէին։ Գիտեմ, զի ասելոց էք՝ Աստուած ողորմած է, մի՛ խռովիր եւ մի՛ յուսահատիր, յուսա՛ յԱստուած, խոստովանեա՛ նմա, նա հոգա՛յ վասն քո։ Գիտեմ եւ ես, թէ իմ աշխատանքն այս ծերութեանս բարի մարդոյ ձեռք անկանի, Աստուծով ինձ ողորմի կասէ, Աստուած իւրն ողորմի, իսկ թէ գրիս տընազ առնէ եւ ծերութեանս քամահէ, թէ վասն էր գրեցեր, սխալ եւ գէշ գիր է, վասն որոյն քամահէ եւ հայհոյէ։ Աղաչեմ, աղաչեմ, թո՛ղ սրբագրէ, Աստուած զինքն մեղաց սրբէ եւ ի միասին զմեզ Տէրն Քրիստոս վարձատրեսցէ, որ սակաւ խնդրէ |91ա| ի մէնջ եւ ինքն բազումս շնորհէ, քանզի առատ է։ Միայն զմեր կամելն խնդրէ, եւ ինքն ըստ իւր չափոյն շնորհէ։ Դարձեալ կրկին եւ երեքկին խնդրեմ թողութիւն, զի չունէի ակն, թէ կենդանի տեսնում զաւարտումն գրոյս, կարծէի, թէ շուտով կու մեռանիմ, վասն որոյն փութայի շաղբաղբելով, որպէս թէ մուսաւատէ կանեմ, յետոյ լինի, թէ այլոց գրել տամ։ Վասն որոյն աղճատելով գրեցի, թողութիւն շնորհէ՛ք, ընթերցողք, ինձ՝ զառաձեալ ծերունի* Թալնցի Կիրակոս *վարդապետի։*

98բ Այսքան էր մեր կարն. գրին եւ խոշորութեան անմեղադիր լերո՛ւք, քանզի կար մեր այսքան էր։ Եւ զի Ջ. (80) ամաց էի, մէկ գոզլուկով չկարէի գրել, վասն որոյն Բ. գոզլուկ աչիցս եդեալ գրէի. վասն որոյն աղաչեմ, աղերսեմ ներել սղալանացն։ Եւ ով ոք որ ընթե[ր]ցի, չմեղադրէ, այլեւ սրբագրէ, որ Տէրն Քրիստոս զձեզ եւ զմեզ ի մեղաց սրբէ. ամէն։ Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

62բ (ԺԲ. դ., նոտրգիր) Մի ուղութեամբ ասիլ ի քեզ, / թէ վաղն ապաշխարեմ ես, / զի ոչ գիտես զինչ ծնանի, / վաղիւն ի քեզ։ / Այսօր արա՛ քեզ ճար բարի, / ճար անեղոց տեղն ես, / թէ չէ որ յերբ վաղն մեռար, / Անդ անճա-

բակ ես: / Նայեա՛, շուշան տեղն է պատրաստ, / Անբեկ զնա տե՛ս, / Դու մարդ գոլով եւ բանական, / Քան զնա տակար ես: / Թէ շանր թւեալ մեղք ունիս, / Զնա խոսովանես, / Թէ չէ ահեղ հրապարակին, / կու խայտառակիս: / Թեթեւն եւս յետն ասա՛ / եւ ապաշխարես, / Պատժոյն զերծանես, / Գծողս յիշեսցես:


Ծնք. Թուում է՝ շարադրանքը մօտաւոր վերարտադրութիւնն է բնագրի որոշ հատուածների (հմմտ. տպ. Առաքել Սիւնեցի, Դրախտագիրք, Վենետիկ, 1956, էջ 16-120):

ՁԵՌԱԳԻՐ Բ.

ՌՃԿ. – 1711

ԳՐԻՉ՝ Գրիգոր:

ԹԵՐԹ՝ 14 (թ. 100-13): ՊՐԱԿ՝ 1×14: ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15,1×10: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (12×98,5). ստ. լս.՝ յիշագրեր: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 103ա): ՏՈՂ՝ 22:



Նմուշ 103ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Ձարդագիր՝ թոչնագիր (ուրուագծային)՝ 106ա: Գոյն՝ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթերի մաշուած հատուածները նորոգուած սպիտակ եւ դեղին կիսաթափանցիկ թղթերով (Ի. դ.). ձիւն նորոգման ժամանակ թերթերը եզրահատուած (բնագիրը կտրած). տեղ-տեղ խոնա-

տութեան եւ աղտոտուածութեան տարատեսակ հետքեր, թ. 107՝ ձիմիից մասամբ անջատ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *100ա-4բ* [Ողբ Երեմիայ մարգարէի] – *(սկ.) /// Եմուտ զհնձս իմ հալածեաց եւ էհաս եւ լքոյց զիս ապականութիւն...* 102բ Գլուխ Դ. Ալէփ – *Զիա՞րդ շլացաւ ոսկին, այլագունեցաւ արծաթին սպիտակ... զամենայն ամպարշտութեանս քո:*

2. *104բ-5բ* Աղօթք սրբոյն Երեմիայի մարգարէին – *Յիշեա՛յ, Տէր, որ ինչ անցք անցին ընդ մեզ... մինչեւ իսպառ յայժմ եւ միշտ եւ աւիտեանս աւիտենից. ամէն:*

3. *106ա-9բ* Յայս է պատմութիւնն եւ պատճառ մարդեղութիւնն Քրիստոսի Աստուծոյ – *Յորժամ ստեղծ զերկինս եւ զերկիր եւ արար նախ զգօրս հրեշտակաց... այսպէս ուրախ կացին մինչեւ յերեկունն:*

4. *109բ-10բ* Այս է պատմութիւն բանիս, որ յայտնէ մեզ զեղեալն ընդէր – *Թօթափեցեր ու յերկնից զգաստ հրեշտակաց Սադայէլի... ի հրոյն տանջանաց. ամէն եղիցի, եղիցի:*

5. *110բ-3ա* Դարձեալ մեկնեմք զմեկնութիւն պտղոյն Ադամայ – *Զի ոչ թէ պտուղն չար էր, որ կերաւ Ադամ... ձեր եւ մեր ննջեցելոցն ողորմի. ամէն:*

6. *113աբ* Պատմութիւն ելանելոյն Ադամայ ի դ[ra]խտէն –*Իսկ երբ անկաւ Ադամ ի դրախտէ[ն]... քեզ ծառայ լինիմք մեք ամենայն ծնունդ /// (վջ.):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

105բ Թվին ՌՃԿ. (1711) Յուլիսի ամսոյ ԻԷ. ես՝ Գրիգորըս, *գրեցի, որ է որդի* Ղոբստակէսի:

3470
ԱՂՕԹԱԳԻՐՔ


ԺԷ. դար

ԳՐԻՉ՝ Վարդան դպիր:


ԹԵՐԹ՝ 196. չգրուած՝ 161բ: ՊՐԱԿ՝ 1+Ա-Ժ×12 (Ժ 16)+Ա-Է×12 (Դ՝ չիմ, է 10)+1: ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14,8×10,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, սեւով սահմանագծուած (10,5×6,5). վր. տողերի վր. ելուստները գրչախաղերով՝ 8ա, 18ա եւ այլուր: ԳԻՐ՝ մէջընդմէջ բոլորգիր եւ նոտրգիր (նմուշ՝ 35ա, 51ա): ՏՈՂ՝ 17: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի. միջուկը՝ տախտակ. աստառը՝ սպիտակ չգրուած թուղթ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ՝ դեղնաւուն չգրուած թուղթ (Ի. դ.):

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Ձարդագիր՝ թոչնագիր: Գոյներ՝ կարմիր, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. երկիցս նորոգուած (ԺԹ. դ., Ի.



Նմուշ 35ա



Նմուշ 51ա

դ. 70ականներ), թ. 174 եւ այլուր՝ մաշուած հատուածները լրացուած սպիտակ թղթով (ԺԹ. դ.). պեպ-ները՝ Ի. դ. նորոգման ժամանակի. թ. 125ի մաշուած եզրը նորոգուած դեղնաւուն կիսաթափանցիկ թղթով. կազմը տեղ-տեղ մաշուած, գոյնը մգացած, Բ. փեղկին թանաքի հետք. լուսանցակողերը մասամբ գունաթափ, աղտոտուած. թերթերին տեղ-տեղ խոնաւութեան եւ աղտոտուածութեան տարատեսակ հետքեր. թ. 14-5 եւ այլուր՝ գործարանային թերութիւն։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

2ա-195ա [Աղօթագիրք]

1. *1բ-125բ* (*խորագիրս՝ 125բ*) Կշտամբանք յանդիմանութեան սակաւ անձին ողորմելոյս Վարդան վարդապետի՝ աղերս վասն իմ եւ վասն ամենայն մեղաւորաց, ի խորոց սրտէ աղերս մաղթանաց առ Յիսուս Քրիստոս Միածին Որդին, երթեալ յերուսաղէմ յամենայն տեղիս, ուր կատարեաց զմարդեղութիւն իւր տնաւրինաբար, զոր գրեցին տեսանողքն վասն նորա եւ ընթեռնուլ անդրէն որիշ որիշ եւ հայցել թողութիւն ի նմանէ

Տե՛ս ձեռ. 84, 2ա-67ա: Յանկ/124ա-5ա: ա/ 2ա-7բ (բաժանուած 2 մաղթանքների): բ/7բ-12բ: գ/12բ-6բ: դ/16բ-22ա: ե/22ա-7բ: զ/27բ-33բ: է/33բ-9բ: ը/39բ-48բ: թ/48բ-53ա: ժ/53բ-7բ: ժա/57բ-61բ: ժբ/61բ-7ա: ժգ/67ա-72բ (սկ. տարբեր՝ «Տէր իմ Յիսո՛ւս Քրիստոս, որ եղեր...»): ժդ/73ա-9բ (սկ. տարբեր՝ «Ի բարձրելոյն ծնունդ...»): ժե/79բ-88ա (սկ. տարբեր՝ «Տէր Աստուա՛ծ հայրական...»): ժզ/88ա-100բ: ժէ/100բ-7բ: ժը/107բ-12բ: ժթ/112բ-6ա: ի/116ա-23բ:

2. *126ա-7ա* Մեսրովբ վարդապետի ասացեալ աղօթք եւ աղաչանք առ ամենասուրբ կոյսն Մարիամ — *Մարիամ Աստուածածին մայր լուսոյ... եւ արժանի լինիլ փառաւորեալ զամենասուրբ զերրորդութիւն... ամէն:*

3. *127ա-9բ* Վարդան վարդապետի ասացեալ առ սուրբ Աստուածածինն — *Մարիա՛մ Աստուածածին, Կո՛յս հրաշալի եւ մա՛յր Փրկչին... եւ որ զամէնքն կցորդի. ամէն եղիցի, եղիցի:*

4. *130ա-2ա* Աղօթք պատարագի դիմաց. աղօթք ոգեշահ, զի որ զղջացեալք, սրտիւ խոստովանութեամբ եւ արտասուօք ասացեն ի մի անգամն ճ.ատոր (100) առցէ մեղաց թողութիւն, սակայն ասի աղօթս առաւել ի ժամ սրբոյ պատարագին, ի տեսութիւն մարմնոյ եւ արեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ գիտեա՛ ստուգիւ, զի ընդդէմ ամենայն հակառակաց խաղաղութիւն եւ յաղթութիւն կալցես ի Տեառնէ — *Սուրբ, սուրբ Հա՛յր ամենակարող եւ յաւիտենական Աստուած... որ է միութեամբ Հոգւոյն Սրբոյ, Աստուած իմ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

5. *132աբ* Մաղթանք առ սուրբ մարմին Քրիստոսի, յորժամ հանանայն բառնացուցանէ ակներեւ ժողովրդեան, պարտ է զայս ասել առ սուրբ մարմին եւ արիւն Քրիստոսի — *Ջերեւելդ ինձ ի փրկութիւն խոստովանիմ... եւ Հոգւոյդ քո փառակցի յայժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

6. *132բ-4ա* Նորին աղօթք առ Տէր Յիսուսի Քրիստոսի — *Ի քեզ յուսամ Քրիստոս Յիսուս, յո՛յս իմ... զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

7. *134ա-5բ* Նորին աղօթք առ Տէր Աստուած — *Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ, որ քննես զսիրտս... փառաւորեցից զամենազօր տէրութիւնդ յաւիտեանս. ամէն:*

8. *135բ-8բ* Նորին աղօթք Մխիթարայ ի դէմ պատարագի — *Ամենակալ, ամենախնամ Աստուա՛ծ յամենայնի օրհնեալ, որ յամենայնի ես... եւ միում աստուածութեանդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

137բ ստ. լս. գրչից՝ «Թողութիւն արարէ՛ք, եղբա՛րք, խալտայ՝ Ջայի տեղ Այբ գրեցի. վա՛յ ինձ»:

9. *138բ-9բ* Նորին աղօթք առ սուրբ պատարագի — *երեքանձնեան տէրութիւն, միով բնութեամբ եւ էութեամբ անքննին եւ անճառ Աստուա՛ծ... ի փառս քո եւ քեզ փա՛ռք յաւիտեանս. ամէն:*

10. *139բ-41բ* Մեսրոբա վարդապետի ասացեա Յաղագս զղջման եւ արտասուաց — *Ո՛վ, որ անեղդ ես եւ անստեղծ եւ արարիչ ամենայն արարածոց... սիրոյդ անուան քո եւ քեզ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

11. *141բ-3ա* Աղօթք եւ օրհնութիւնք ամենայն աշխարհի — *Աւրհնեալ Հա՛յր, Սուրբ Աստուա՛ծ ճշմարիտ, սրբեա՛ զմեզ յամենայն սգալանաց... եւ օրհնեսցէ զամենեսեան. ամէն:*

12. *143ա-5ա* Աղօթք գեղեցիկ եւ խնդրուած, ուղիղ սրտիւ յամենայն ժամ խնդրէ յԱստուծոյ եւ կատարէ — *Տէ՛ր Աստուած, մարդասիրի Հօր Որդի՛, դու ես պահապան... եւ կատարեա՛ զխնդրուածս իմ. ամէն:*

13. *145ա-50բ* Նորին աղօթք եփրեմի՝ ասացեալ ընդդէմ սուրբ պատարագին — *Տէր Աստուա՛ծ մեր Յիսուս Քրիստոս երկնի եւ երկրի... զամենասուրբ զերրորդութիւնդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

14. *150բ-1բ* Աղօթք առ պահապան հրեշտակն — *Ի խորոց սրտի իմո հեզութեամբ մտաց աղաչեմ... հրճուիլ յանդրաւականում խնդութեան. ամէն:*

15. *151բ-5ա* Աղօթք սրբոյն Փոկասու հայրապետին — *Յիսուս Քրիստո՛ս, Որդի՛ Աստուծոյ, որ սուրբ է անունդ... եւ գոհանալով փառաւորեսցուք:*

16. *155ա-6ա* Աղօթք առ սուրբ մարմինն Տեառն — *երկիր պագանեմ քեզ, Քրիստո՛ս՝ փրկութիւն աշխարհի... եւ ի թողութիւն մեղաց իմոց:*

17. *156ա-7բ* [Յովհաննու Գառնեցւոյ]

ա. *156աբ* Նորին Յոհաննէս Գառնեցոյ աղօթք առ Տէր – *Ահ լուսոյ եւ ճշմարիտ ճանապարհ կենացն յաւիտենից... եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

Տե՛ս Յովհաննէս Գառնեցի, Աղօթամատոյց, աշխ. Գէորգ Տէր-Վարդանեանի, էջմիածին, 2007, էջ 48-51։

բ. *156բ-7բ* Նորին աղօթք առ Տէր Աստուած – *Նայեա՛ քաղցրութեամբ առ գառնացուցիչս, Տէր իմ... փառաւորեցից զամենազօր տէրութիւնդ յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

18. *157բ-61ա* Աղօթք առ սուրբ պատարագն – *Հոգի՛ իմաստութեան եւ հանճարոյ... փառաւորեմք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ յայժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

158բ-9ա ստ. լս., գրչից՝ «Վա՛յ ինձ, պարտակ[ան]իս բիւր քանքարոյ, փող մի չունիմ հատուցանելոյ»։

19. *162աբ* Աղօթք կամ մտածութիւնք զանազանք յաղագս չարչարանաց Տեառն։ Աղօթք յաղագս իւրաքանչիւրոց մասանց չարչարանացն – *Աստուած, որ վասն փրկութեան աշխարհի կամեցար ծնանիլ... եւ թագաւորես յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

20. *162բ-3ա* Աղօթք – *Տէր Յիսուս Քրիստո՛ս, ներ որոյ հրամանում բովանդակք են... ի ձեռն ամենեցուն յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

21. *163աբ* Առ վերստին Քրիստոսի աղօթք – *Աղաչեմ զքեզ, Տէր Յիսո՛ւս, ի ձեռն այնոցիկ... որ կեաս եւ թագաւորես յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

22. *163բ-4բ* Մտածութիւնք գորովականք յաղագս չարչարանացն Քրիստոսի – *Ով Տէր Յիսուս Քրիստո՛ս, երկիրպագանեմ քեզ ի խաչին... Հայր մեր, որ՛ ՈղջոյնՄարիա՛մ։*

23. *164բ-5բ* Յաղագս եօթանց բանիցն, զորս Քրիստոս ի խաչին կախեալ ասաց. աղօթք – *Տէր Յիսուս Քրիստո՛ս, Որդի Աստուծոյ կենդանոյ... ի ձեռն անվախճանից յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

24. *165բ-7ա* Ողջունատուութիւնք առ ամենեսեան անդամս Քրիստոսի, եւ զինքն իսկ առ նմին յանձնարարութիւն – *Ողջ [լ]ե՛ր սարսափելի հանուրց զօրութեանց գլուխ Տեառն Յիսուսի Քրիստոսի... եւ աներեւութից այժմ եւ առ յապայն. ամէն։*

25. *167ա-8ա* Աղօթք առ երանուհի կոյսն Մարիամ – *Աղաչեմ զքեզ, տիրուհի, սրբուհի՛ Մարիամ... մայր Աստուծոյ եւ ողորմութեան. ամէն։*

26. *168աբ* Այլ յանձնարարութիւն առ կոյսն Մարիամ – *Ով տիրուհի իմ, սրբուհի Մարիա՛մ... քոյոյ եւս Որդւոյ կամօք. ամէն։*

27. *168բ-9ա* Աղօթք առ կոյսն Մարիամ – *Ով Մարիամ Աստուածածին եւ կոյս շնորհազարդ... բարեբախտութեամբ հասանիլ. ամէն։*

28. *169ա-70բ* Պաղատանք, որ եւ մաղթանք երանուհւոյ կուսին Մարիամու – *Տէր ողորմեաց, Քրիստոս ողորմեաց, Տէր ողորմեաց... եւ աղաղակիմ առ քեզ եկեսցէ։*

29. *170բ-1ա* Աղօթք – *Ջքոյական շնորհ աղաչեմք, Տէ՛ր, հեղ ի սիրտս մեր... Աստուծոյ գոհութիւն։*

30. *171աբ* Աղօթք աստուածայնոյն Գրիգորի հայրապետի, որ առնանի բացատրութեանց եօթնից սաղմոսացն ապաշխարականաց – *Բարի Յիսո՛ւս, Բա՛ն Հաւր եւ ճառագայթ հայրենեաց... անվախճանից յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

31. *171բ-2բ* Աղօթք առ Յիսուս – *Ով բարի Յիսուս, ո՛վ գթածագոյն Յիսուս... վերակոչեն զանուն քո, որ է Յիսուս. ամէն։*

32. *172բ-4բ* Մաղաւտաւթք առ անուն Յիսուսի – *Տէր ողորմեաց, Քրիստոս ողորմեաց, Տէր ողորմեաց... աղաղակիմ առ քեզ, եկեսցէ։*

33. *174բ-6ա* Աղօթք երանելոյն Թովմասու Ամուինացւոյ – *Շնորհեա՛ինձ, ողորմա՛ծ Աստուած... ի ձեռն ամենեցուն յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

34. *176ա-7ա* Այլ աղօթք երանելոյն Թովմասու Ակվինացւոյ. նախ բան զընթերցումն – *Արարի՛չ անճառելի, որ ի գանձարանաց իմաստութեան քոյ... եւ զելս շարալրացուսցես ի ձեռն Քրիստոսի, Տեառն մերոյ. ամէն։*

35. *177ա-80ա* Աղօթք ներփոռնութեան – *Ով քաղցրագոյն Տէր Յիսուս Քրիստոս, ճշմարիտ Աստուած... որ կեաս ի թագաւորես յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

36. *180աբ* Սաղմոս ներփոռնութեան «Ո՞ բնակեալ է յօգնութիւն». աղօթք – *Աստուա՛ծ, որ տրամելոց ոչ անտես առնես... հեզաբար լո՛ւր ի ձեռն Տեառն մերոյ։*

37. *180բ-2բ* Աղօթք նախապատրաստութեան. ի խոստովանութիւն խորհրդական – *Հաստի՛չ երկնի եւ երկրի, թագաւո՛ր թագաւորաց... եւ արժանաւոր երաշխաւորութիւնն, ամենեցուն մեղանաց իմոց. ամէն։*

38. *183ա-4ա* Աղօթք նախ բան զխոստովանութիւնն խորհրդական – *Ընկա՛լ զխոստովանութիւնս, գթածագոյն եւ հեզագոյն Տէ՛ր... սրտիւ բացայայտել, որ կեաս եւ թագաւորես։*

39. *184ա* Աղօթք զկն[ի] խոստովանութեան – *Եղիցի քեզ, Տէ՛ր, աղաչեմ... երկնում, որ կեաս եւ թագաւորես։*

40. *184ա-5բ* Աղօթք յառաջ, բան զսուրբ հաղորդութիւնն – *Առ սեղան քաղցրագունի խրախութեան քոյ... հաստատագոյն պաշտպանութիւն. ամէն։*

41. *185բ-6բ* Այլ իմն աղօթք երանելոյն Թովմասու Ակվինացւոյ նախ բան զհաղորդութիւնն – *Ամենակարող եւ մշտնջենաւոր Աստուած... մշտնջենաւորաբար շարալնանիլ, որ ընդ քեզ։*

42. *186բ-7բ* Աղօթք երանելոյն Թաւմասու Ակինուացւոյ զկնի հաղորդութեան – *Շնորհս քեզ մատու-*

ցանեմ, Տէ՛ր, սուրբ Հա՛յր ամենակարող... ի ձեռն այնորիկ Քրիստոսի Տեառն մերոյ։

43. *187բ-8բ* Այլ աղօթք սրբոյն Բօնավէնտուրի զկնի հաղորդութեան – *Ներամխեա՛ համեղագոյն Տէ՛ր Յիսուս... արմատացեալ միշտ իմ եւ սիրտ իմ. ամէն։*

44. *188բ-9ա* [Ա]յլ աղօթք զկնի հաղորդութեան – *Զանճառելի ողորմածութիւն քո, Տէ՛ր Յիսուս... ի ձեռն ամենեցուն յաւիտենից յաւիտեանս. ամէն։*

45. *189ա-91բ* Լիդանիա, որ է պաղատանք առ վերապատուելի խորհուրդն. կցորդ – *Ահա երախան սրբազան նորում... աղաղակիմ առ քեզ եկեսցէ։*

46. *191բ* Աղօթք – *Աստուած, որ մեզ ընդ խորհրդոյ... ամենեցուն յաւիտենից յաւիտեանս. ամէն։*

47. *191բ-2ա* Այլ աղօթք – *Հոգի՛ Քրիստոսի, սրբեա՛ զիս, մարմին Քրիստոսի, կեցո՛ զիս... գովիցեմ զքեզ ի յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

48. *192ա-3ա* Վերադարձութիւն հանապազորդեան. յորժամ առաւօտու յառնես, կնքեա՛ զքեզ նշանաւ սրբոյ խաչին եւ ասա՛. Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյ Սրբոյ, զկնի այնորիկ ձեռնամածեալ առաջի պատկերին ասա՛ – *Ամենօրհնեալ, համագոյ եւ միասնական, անբաժանելի Սուրբ Երրորդութիւն... եւ աղաղակ իմ առ քեզ եկեսցէ։*

49. *193ա* Աղօթք – *Տէ՛ր Աստուած ամենակար, որ առ սկիզբն աւուրս այսորիկ... ի ձեռն Քրիստոսի Տեառն մերոյ։*

50. *193բ* Աղօթք – *Ուղղել եւ սրբագործել եւ հովուել եւ կառավարել... հովուեա՛ եւ կառավարեա՛. ամէն։*

51. *193բ* Օրհնութիւն – *Տէ՛ր, զմեզ օրհնեսցէ՛... հանգիցին ի խաղաղութեան. ամէն։*

52. *193բ-4ա* Ընդ առաւօտս եւ երեկոյս եւ հասարակ աւուրն ողջունատուութեան հրեշտակականի նշան տուեալ լինի – *Հրեշտակ Տեառն աւետարանեաց Մարիամու... գրեալ է նախ։*

53. *194ա* Նախ քան զսկսումն աղօթից – *Զարարմունս մերայինս աղաչեմք, Տէ՛ր... ի ձեռն Քրիստոսի Տեառն մերոյ. ամէն։*

54. *194ա* Զկնի աղօթից աղօթք – *Ընկա՛լ հեզագոյն Աստուա՛ծ խնդրուածօք... ի ձեռն ամենից յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

55. *194բ* Ցելանելն ի տանէն ասա՛ – *Զճանապարհս քո, Տէ՛ր, ցո՛ւց ինձ... գայթաղղեսցին գնացք իմ։*

56. *194բ* Մտանելով յեկեղեցին – *Տէ՛ր, բազմաւ ողորմութեամբ քով մտից ի տուն... խոստովան եղէց անուան քոյ։*

57. *194բ* Ի սկսելն ջրոյն օրհնութեան – *Յօղեա՛ յիս, Տէ՛ր, մշտակաւ... զի ձիւն սպիտակեցայց։*

58. *194բ-5ա* Առ սուրբ ընծայն հաղորդութեան նուիրեալ աղօթք – *Ողջոյն քեզ, ճշմարիտ մարմի՛ն... ողորմեաց ինձ. ամէն։*

59. *195ա* Աղօթք յառաջ քան զպատարագն – *Հեզագոյն Հա՛յր ողորմութեանց... ի ձեռն նունոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ամէն։*

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, ԺԸ. դ., նոտրգիր

1. *1ա* Աղօթք զկնի խոստովանութեան – *Գոհանամ զքէն, բազմագո՛ւթ Արարիչ... մեծաւ յօժարութեամբ եւ սիրով։*

2. *1բ* Մաղթանք առ Քրիստոս յամենայն ժամ ասելիք – *Պահապան ամենայնի, Քրիստո՛ս Աստուած իմ... զօրհնութիւնս եւ զգոհութիւնս այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

3. *195բ* [Աղօթք] – *Յոյց զքեզ, մա՛յր ողորմութեան... արքայութեան Որդւոյ Միածնիդ եւ Տեառն մերոյ. աւրհնէ։*

4. *196աբ* Յանձնարարութիւն հոգւոյ ի ձեռս Արարչագործին – *Արդէն իսկ առողջ եւ կարօղ գոլով... որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։*

Ծնթ. Ստ. լս-ներում գրչի ձեռքով բնագրային լրացումներ։ Նաեւ՝ ստ. լս-ներում հետագայ ձեռքով բնագրային մեկնութիւններ՝ 184ա՝ «Հաղորդութիւնն կերակրէ զմեզ եւ զօրացուցանէ, նաեւ է սպեղանի վիրաց մերոց, եւ հնարք ընդդէմ վիրացն մեղաց ներգործականաց», 185բ՝ «Հաղորդութիւնն տայ մեզ զյաւիտենական կեանսն եւ վասն այնր հաղորդութիւն կոչի, զի կցորդի նա մեզ, եւ մե՛ր նմա, զի է մարմին եւ արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ կերակուր հոգեւոր, որ եւ վերջապես տայ մեզ ժառանգել զկեանս յաւիտենական. ամէն», 187բ՝ «Ճաշակումն տէրունական մարմնոյ եւ արեան նշանակէ զՅիսուսի հաղորդութիւնն եւ ասի գոհութիւն, զի Տէրն մեր ի յաւիտենական զխորհուրդն զայն գոհացաւ, եւ մեզ պարտ է միշտ գոհանայ», 188ա՝ «Հոտ եւ անուի, այսինքն հոտաւորութիւն կամ հոտաւէտութիւն»։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

161ա Յորժամ առնես առանձնակի, / զանպիտան գրիչս յիշի, / սուտանուն Վարդան *դպրի, / որ զայս բաներըս գրեցի։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

125բ (1793 թ., նոտրգիր) Յիշատակ է աղօթից գիրքս տէր Գրիգորին, *ուր որդի տէր* Սուքասին *եւ* Պետ[ր]ոսին *եւ* Պողոսին *թվին ՌՄԽԲ.ին (1793) ի* Դիատին *գրեցաւ։*

ՆՇՈՒՄ՝ *մէջքին սոսնձած տպագիր թղթին՝ «ԱՆԱ/// Հ՚ր 1», Ա. կազմաստառ՝ «Սեւան 3/3470», «ԺԷ. Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»։*

Ձեռագրիս նկարագրութիւնը տե՛ս Մ. Սմբատեանց, Տեղագիր Գեղարուսի Ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 395, Հ՚ր 3/1։


ԳՐՋԱՓՈՐՁ՝ *123բ՝ արաբանիշ թուեր։*

3471
ԱՂՕԹԱԳԻՐՔ

ԿՏՈՒՑ ՌՄՀՋ. – 1827

ԳՐԻՉ՝ Յարութիւն Տիֆլիզցի:

ԹԵՐԹ՝ 177 (գրչի էջակալում՝ 3-350, որ է՝ 2ա-175բ). չգրուած՝ 1ա, 176ա, 177աբ: ՊՐԱԿ՝ Ա-ԻԲ×8+1: ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ լայնեզր գլխարկ, «M», «C»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15,2×10: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (11,5×7). ստ. լս.՝ յիշագրեր: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 92ա): ՏՈՂ՝ 17: ԿԱՋՄ՝ շագանակագոյն կաշի՝ ճնշագծերով. միջուկը՝ տախտակ. աստառը՝ սպիտակ չգրուած թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա (սկ.)՝ սպիտակ չգրուած թուղթ, մասն կազմատախի:



Նմուշ 92ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմը տեղ-տեղ մաշուած, ճաճճած, գունափոխուած, ցեցի անցքերով, կազմատաոնները փեղկերից մասամբ անջատ՝ երեւում է միջուկ-տախտակը. լուսանցակողերը աղտոտուած, տեղ-տեղ մաշուած. թերթերին տեղ-տեղ խոնաւութեան եւ աղտոտուածութեան տարատեսակ հետքեր. թ. 172-7՝ ցեցի անցքեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *2ա-28ա* Աղօթք առ Սուրբ Երրորդութիւնն՝ երանելոյն Յոհաննու վարդապետի ասացեալ, որ մականուամբ Սարկաւագ կոչի – *Առ քեզ, Տէր, միեւնոյն ապաւինեալ աղաչեմ…*

ա. *6բ-12ա* Նորին աղօթք առ Հայր – *Հա՛յր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ զամենայն գոյացուցեր… ի փառաբանութիւն ամենասուրբ երրորդութեանդ այժմ եւ միշտ եւ՛՛:*

բ. *12ա-5ա* Նորին աղօթք առ Որդի – *Որդի եւ Բան Հօր, Աստուած ճշմարիտ… ուղղակի փառատրութեամբ եւ խոստովանութեամբ… այժմ եւ միշտ եւ՛՛:*

գ. *15ա-9ա* Նորին աղօթք առ Հոգին Սուրբ – *Անբաւելի եւ բազմազան շնորհաց առատապէս… խոստովանութեամբն ընդ Հօր եւ ընդ Որդւոյ այժմ եւ՛՛:*

դ. *19ա-26բ* Նորին աղօթք – *Հա՛յր մեր, որ յերկինս եւ Հա՛յր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի… ի Քրիստոս Յիսուս Տէր մեր. ամէն:*

ե. *27ա-8ա* Նորին աղօթք – *Զօրութիւն եւ իմաստութիւն Հօր, Յիսուս Քրիստո՛ս, որ առաքեցար… շրթմամբք ցնծութեան յայժմ եւ միշտ եւ յաւի՛՛:*

Տե՛ս Աղօթամատոյց Յովհաննէս Սարկաւագ վարդապետի, աշխ.՝ Ա. Մադոյեանի, Ս. Էջմիածին, 2007:

2. 28ա-31բ Մաղթանք առ սուրբ Աստուածածին՝ Ոսկիբերանին ասացեալ – *Աստուածածի՛ն մա՛յր լուսոյ եւ ծնո՛ղ Միածնի Հօր… յամօթ արասցէ, եւ նմա փառք յաւիտեանն. ամէն:*

3. 31բ-3բ Նորին Յոհաննու աղօթք – *Ո՛հ լուսոյ եւ ճշմարիտ ճանապարհ կենաց յաւիտենից… ընդ Սրբոյ Հոգւոյդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

4. *34ա-5բ* Աղօթք սրբոց վարդապետաց – *Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ, կենաց կենդանարար… գովութիւն ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ յայժմ եւ՛՛:*

5. *35բ-44բ* Մաղթանք Յոհաննու Գառնեցւոյ ասացեալ – *Յաւիտենից Աստուած եւ արարիչ բոլորից, որ ի սկզբանէ… ի պատիւ ամենասուրբ անուանդ քում… յաւիտենից՛՛:*

Տե՛ս Յովհաննէս Գառնեցի, Աղօթամատոյց, աշխ. Գէորգ Տէր-Վարդանեանի, Էջմիածին 2007, էջ 18:

6. *44բ-52բ* Աղօթք Բենեկ վարդապետի – *Տէ՛ր Աստուած, ահաւոր եւ աքանչելի, սահմա՛ն սիրոյ եւ ողորմութեան… փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւ՛՛:*

7. *52բ-3բ* Յորժամ խաչ տեսանես, անկիր առաջի եւ աղօթեա՛ – *Տէր Յիսո՛ւս Քրիստոս, նշանի խաչի քո երկիր պագանեմ… եւ քեզ փառք յաւիտեանս. ամէն:*

8. *53բ-4ա* Աղօթք վասն ճանապարհի, [սբոյն Նարեկայ ասացեալ. ձեռ. 1915, 279ա] – *Առաջնորդ կենաց եւ ճանապարհ ճշմարտութեան… ճշմարտութիւն եւ կեանք մեր… այժմ եւ միշտ՛՛:*

9. *54ա-5ա* Աղօթք գիշերի – *Աղաչեմ զքեզ, Տէր Աստուա՛ծ ամենակալ, եւ գոհանամ… փառաւորեցից զամենազօր տէրութիւնդ այժմ՛՛:*

10. *55ա-6բ* Նորին աղօթք Գառնեցւոյն՝ միջնորդութեամբ երկնային զօրացն – *Սուրբք եւ սիրեցեալք յամենասուրբ երրորդութենէն, հոգիք հարկաւորք Գաբրիէլ, Միքայէլ… յամենայն յանցանաց փառաւորեցից ընդ ձեզ զամենասուրբ երրորդութիւնն յաւիտեանս յաւ՛՛:*

Տե՛ս Յովհաննէս Գառնեցի, Աղօթամատոյց, աշխ.՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, Էջմիածին 2007, էջ 70-72:

11. *56բ-9ա* Աղօթք գիշերի – *Ով ամենաբարի, տուո՛ղ շնորհաց, Յիսո՛ւս Քրիստոս… զի հաւատամ եւ ես, Տէ՛ր, արքայութեան քում, յիշեա՛ եւ զիս, Տէր:*

12. *59ա-69բ* Աղօթք Անաստաս Ֆահանայի – *Տէ՛ր,*

մի՛ սրտմութեամբ քո յանդիմաներ զիս... ամենայն ինչ կարելի է, որ օրհնեալդ ես յաւիտեանս. ամէն։

13. *70ա-9ա* եւ արդ, ես՝ երկրածինս, մարդ կենցաղականաւ, անկայուն գոյիւ զբաղեալ... *բարութիւն առանց քո, եւ քեզ վայել է փառք յաւիտեանս. ամէն։*

14. *79ա-89ա* եւ արդ, յամենայնի առ ամենայն ակնկալութիւն fո է ողորմութիւն... *բարեխնամօղ երկայնամտութեան, օրհնեալ յաւիտեանս. ամէն։*

15. *89ա-95բ* եւ fանզի ես ինձէն անձամբ իմով ինքնագրաւ... *ի գովեստ Հոգւոյդ Սրբոյ յաւիտեանս յաւիտեան. ամէն։*

16. *95բ-9ա* եւ արդ, դու միայն սկիզբն բարեաց, գթութիւն անճառ... *բարեբանեալդ յամենայնի յաւիտեանս. ամէն։*

17. *99ա-107բ* Արդ, վրիպեալս ես՝ յաւէտ ամենապատիժ... *ճաշակաց աղբիւր միայն օրհնեալդ յամենայն յաւիտենից. ամէն։*

18. *108ա-12բ* [Կշտամբանք եւ յանդիմանութիւն առականի սակաւ անձին ողորմելոյս Վարդանայ, որ ի Մարաթայոյ... մեղաւորս Վարդան յարարեալ գրեցի յերուսաղէմ, ի Սուրբ Յակոբ, ի խնդրոյ Թորոսի աստուածասէր fաճանայի եւ այլ միանձանցն, որ բազում անգամ թախանձեցին զիս, ձեռ. 84, 2ա]

ա. *108ա-11ա* Ի Նազարէթ, ուր ընկալաւ սուրբ Կոյսն զաւետիս ի հրեշտակէն եւ յղացաւ զԲանն Աստուած. օգնեա՛ ինձ, Յիսուս – *Ծագումն իմանալի եւ անհետազօտելի, յանհասանելի եւ անճառելի... եւ եղիսաբեթին եւ ամենայն սրբոց, եւ քեզ ընդ Հօր... այժմ եւ միշտ՛՛։*

բ. *111բ-2բ* Ի Բեթղահէմ՝ ի յայրն եւ ի մսուրն առաջի Յիսուսի Քրիստոսի, ի խորոց սրտէ աղերս մաղթանաց Վարդանայ եւ ամենայն մեղաւորաց – *ճառագա՛յթ փառաց եւ կերպարա՛ն էութեան Աստուծոյ... հոգիս իմ, եւ քեզ փառք յաւիտեանս՛՛։*

19. *113ա-5բ* [Աղօթք] – *Օրհնեա՛լ ես, Հա՛յր Սուրբ, Աստուա՛ծ ճշմարիտ... փառաւորեցից զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ այժմ եւ միշտ՛՛։*

20. *115բ-6բ* Աղօթք առաւօտեան ժամու – *Դոհանամ զքէն, Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ... յայնմ ժամու փառաւորեցից զՍուրբ երրորդութիւնդ, որում միշտ վայել է փառք յա՛՛։*

21. *116բ-7բ* Աղօթք երեկոյին՝ ի ժամ ննջման – *Դոհանամ զքէն, Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ եւ օրհնեմ... վայել է փառք եւ երկրպագութիւն յաւիտեանս յա՛՛։*

22. *118աբ* Աղօթք վասն հասարակ ննջեցելոց եւ մանաւանդ վասն ընտանեաց եւ երախտաւորաց – *Այլեւ աղաչեմ եւ խնդրեմ ի քէն, ո՛վ բազմագութ Աստուած... ի նոցին պարտուցն, եւ քեզ փառք յաւիտեանս. ամէն։*

23. *118բ-20ա* Աղօթք վասն թշնամեաց եւ չարակամաց – *Արդ, ո՛վ ողորմած եւ բազմագութ Աստուած իմ... առաքեսցուք քեզ ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ այժմ եւ միշտ՛՛։*

24. *120ա-3բ* Աղօթք առ ամենասուրբ Աստուածածինն Մարիամ – *Յետ այսքան վշտագնեալ անձամբ բաշխելոյ զգուռն ողորմութեան... գոհութեամբ բարեբանեցից յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

25. *123բ-6ա* Աղօթք առ ամենասուրբսն Աստուածոյ – *Ո՛վ ամենասուրբք Աստուածոյ, հաճոյական ծառայք եւ հարազատ կամարարք... ես փառաւորեցից զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին յաւիտեանս յաւի՛՛։*

26. *126ա-7ա* Աղօթք առ երկնային զինուորութիւնսն – *Արդ, առ ձեզ է աղաչանքս, ո՛վ երկնայինք եւ անմարմինք... զի ընդ ձեզ փառաւորեցից... յաւիտեանս յաւ՛՛։*

27. *127բ-34բ* Աղօթք առ սուրբ խաչն փրկչական – *Մեծաւ երկիւղիւ, սոսկացեալ անձամբ եւ ճշմարիտ հաւատով... բարեբանեցից յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

28. *134բ-5բ* Աղօթք սրբոյն Եփրեմի Խուրին Ասորւոց – *Տէր Աստուա՛ծ զօրութեանց, աղաչեմ զքո բարերարութիւնդ... պիտանիսն փառաւորեցից ի բարձունս... յաւիտեանս յաւիտե՛՛։*

29. *135բ-42ա* Նորին աղօթք սրբոյն Եփրեմի պէսպէս հայցուածովք – *Տէր մեր Յիսուս Քրիստո՛ս երկնի եւ երկրի, իշխա՛ն կենաց... համաձայնեալ փառաւորեցից... միշտ եւ յաւիտ՛՛։*

30. *142ա-4ա* Աղօթք յորժամ յորոգայն(=թ) անկանի ոք, ասացեալ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին – *Օրհնեալ է մարդասիրութիւնդ քո, Տէ՛ր իմ եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս... ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյդ փառք յաւիտեանս յաւ՛՛։*

31. *144ա-8ա* Աղօթք [Յոհաննու Ոսկեբերանի ասացեալ. ձեռ. 40, 54ա] դարձելոցն ի զղջումն ապաշխարութեան – *Անսկիզբն Աստուա՛ծ եւ անհասանելի, բա՛ց զաչս սրտի իմոյ... արժանի եղէց գոհանալով... զՍուրբ Հոգիդ. ամէն։*

32. *149ա-52բ* Աղօթք առ պահապան հրեշտակն – *Ի խորոց սրտից հեզութեամբ մտացս աղաչեմ զքեզ... փառաւորեցից զամենազօր տէրութիւնդ յաւիտեան. ամէն։*

33. *153ա-9ա* Վարդան վարդապետի ասացեալ առ սուրբ Աստուածածին Մարիամ – *Մարիա՛մ Աստուածածին, կո՛յս հրաշալի եւ մա՛յր փրկչին... Միածնի եւ Հոգւոյդ քո փառակցի... ամէն։*

34. *159բ-61ա* Նորին աղօթք [ասացեալ սուրբ հօրն Յոհաննու. ձեռ. 1915, 245ա] առ Տէր Յիսուս Քրիստոս – *Ի քեզ յուսամ, Յիսուս Քրիստոս, յո՛յս իմ, եւ աղաչեմ... ընդ նոսին փառաւորեմք... ամէն։*

35. *161ա-4ա* Նորին աղօթք Մխիթարայ ի դէմ պատարագի – *Ամենակալ, ամենախնամ Աստուա՛ծ, յամե-*

նայնի օրհնեալ... եւ ի միաստուածութեանդ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

36. *164ա-5բ* Նորին աղօթք առ սուրբ պատարագի – *երեքանձնեա տէրութիւն միով բնութեամբ եւ էութեամբ անքննին... ի փառս քո, եւ քեզ փառք յաւիտեանս. ամէն։*

37. *165բ-8ա* Մեսրոպայ վարդապետի ասացեալ յաղագս զղջման եւ արտասուաց – *Ով, որ անեղդ ես եւ անստեղծ եւ արարիչ ամենայն արարածոց... սիրոզաց անուան քո, եւ քեզ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

38. *168ա-70ա* Աղօթք եւ օրհնութիւնք ամենայն աշխարհի – *Օրհնեալ Հա՛յր Սուրբ, Աստուած ճշմարիտ, սրբեա՛ զմեզ... եւ օրհնեսցէ զամենեսեան. ամէն։*

39. *170բ-2ա* Մեսրոպ վարդապետի ասացեալ աղօթք եւ աղաչանք առ ամենասուրբ կոյսըն Մարիամ – *Մարիա՛մ Աստուածածին, մա՛յր լուսոյ եւ ծնո՛ղ Քրիստոսի... արժանի լինիլ փառաւորել... յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

40. *172ա-5բ* Աղօթք առ սուրբ պատարագ – *Տէր Աստուա՛ծ, արարի՛չ, փրկի՛չ եւ նորոգիչ ամենայնի... փառաւորեմ զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս՛՛։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

107բ Եւ որք շահիք յայսմ աղօթիցս, յիշեցէ՛ք զեղկելի, մեղաւոր գծօղս, հանդերձ ազգականօք իմովք, վասն Քրիստոսի, եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոս Յիսուս. ամէն։

148ա Արդ, գրեցաւ եւ աւարտե|148բ|ցաւ սուրբ մատեանս ի կղզիս, որ կոչի Կտուց, *ընդ հովանեաւ* Սուրբ Կարապետին *եւ* Սուրբ Աստուածածնին, *թուին հայոց ՌՄՀՋ.ին (1827), ձեռամբ բազմամեղ, սուտանուն* Յարութիւն *սարկաւագիս։ Աղաչեմ ըզձեզ ի Տէր, ո՛վ հոգեւոր հարք եւ եղբարք իմ, յորժամ ընթեռնուք զայս եւ աղօթէք, յիշէսջի՛ք զմեղապարտ գրիչս եւ զազգականս իմ վասն Աստուծոյ, զի յոյժ կարօտիմ այլոց աղօթից. եւ ձեզ՝ յիշողացդ, Աստուած ողորմի այժմ եւ ի հանդերձեալն։ Եւ յետ ելման իմոյ աստի, եթէ կարգաւոր ոք ստասցի զայս մատեան, յամենայն ժամարար ժամանակ յիշեսցէ |149ա| զիս, եթէ հնար է ի սուրբ պատարագին, զգրիչս՝ հանդերձ ազգականօքս, վասն զի կարի յոյժ կարօտ եմ, զի յոյժ սաստիկ մահացու մեղօք մեղուցեալ եմ եւ զարհուրիմ յուսահատութեամբ եւ ձեզ՝ կատարօղացդ զխնդիրս լսօղ եղիցի Աստուած. ամէն։*

175բ Ով ոք վայելէք զայս փոքր բուրաստանս աղօթից, յիշեցէ՛ք անպիտան գրօղս սորա՝ Տիֆլիզցի *իբրեւ սարկաւագ* Յարութիւնս, *եւ եթէ իցէ վայելօղ սորա կարգաւոր ի ժամ աղօթից եւ ի պատարագին, յիշեսցէ՛ զեղկելիս վասն Քրիստոսի, որ այսու յուսով, մեծաւ աշխատութեամբ գրեցի ի մէջ տկարութեան, եւ ձեզ՝ լսողացդ ըզխնդիրս եւ յիշողացդ լսօղ եւ յիշօղ եղիցի Աստուած. ամէն։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1բ (ԺԹ. դ. շղագիր) Յիշեսջի՛ք զգրօղս սորա՝ միով Աստուած ողորմի ասելով, եւ դուք զողորմութիւն գտջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ. ամէն։

69բ Յիշեցէ՛ք զիս՝ զգրօղս մատենիս, միով Աստուած ողորմի ասելով, եւ ձեզ՝ կատարողացդ զխնդիրս, Աստուած ողորմեսցի ի միւսանգամ գալստեան իւրում. ամէն։

152բ Յիշեցէ՛ք զեղկելի գրօղս սորա վասն Տեառն՝ միով Աստուած ողորմի ասելով։

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *69բ սեւ թանաքով երկգիծ ձուածիր բոլորակ, կենտրոնում՝ խաչ, եզերքին՝* «ԿՆԻՔ ՍՐԲՈՅ Ա-ՆԱՊԱՏԻՆ ՍԵՒԱՆԱՅ»։

ՆՇՈՒՄ՝ *մէջքին սոսնձած տպագիր թղթին՝ «Գիրք աղօթից ժողովեալ ի ԳՐԵԱՆՑ ԳՐԱՏԱՆ ԱՆԱՊԱՏԻՆ ՍԵՒԱՆՈՒ Հմր 1», 1ա՝ «Սեւան 4/3471», «ԺԹ. Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»։*

Ձեռագիրս նկարագրութիւնը տե՛ս Մ. Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 395, Հմր 4/1։


ԳՐՉԱՓՈՐՁ՝ *պհպ. Աբ՝ «Լ Ղ Ք ա բ», 176բ՝ «Տեսակ առանց նիւթոյ առանց գոյացութիւն անշարժ արժելի տեղեա/// անբովանդակելի եւ անպարագրելի, հրեշտակք եւս են անպարագրելի ը/// (հատուած) մարմին»։ Լս-Նեբում. վրացերէն, ԺԹ. դար՝ 3471 65բ* ԱՀԱՄԴՕՆ՝ *Մինչեւ այստեղ. 123բ-127ա* ԱՀԵԴԱՄ – ԱՀԱՄԴՕՆ՝ *Այստեղից – մինչեւ այստեղ։*

3472
ԱԻԵՏԱՐԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ՌԿԹ. – 1620

ԳՐԻՉ՝ Միքայէլ Թոխատցի։ ՍՏԱՑՈՂ՝ Յակոբ աբեղայ։

ԹԵՐԹ՝ 345. չգրուած՝ 1ա-4ա, 12բ-6ա, 108բ, 264ա, 344ա-5բ։ ՊՐԱԿ՝ 2+12+Ա-ԻԸ×12 (Ա, Ը, ԺԳ 11, ԻԸ 8)+2։ ՆԻՒԹ՝ թուղթ։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14,6×10,2։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (11×7)։ ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 59ա)։ ՏՈՂ՝ 19։ ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի, Ա. փեղկին վարդեակներով 39 զարդագամ, կենտրոնում՝ մետաղէ խաչ՝ մէկ նարնջի եւ երկու երկնագոյն ակներով, զոյգ վարդեակաձիւմ մետաղէ գամերով. միջուկը՝ տախտակ. աստառը՝ շերտազարդ մետաքս։



Նմուշ 59ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Մաթէոս՝ 16բ, Յովհաննէս եւ Պռոխորոս՝ 265բ: Խորան՝ 4բ-9ա: Լս-ային՝ թղենի տերեւալից՝ 145ա, ծառ («Մուտք յերուսաղէմ»)՝ 241բ: Կիսախորան՝ 17ա, 109ա, 168ա, 266ա: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն, տանար: Ձարդագիր՝ հանգուցագիր, թռչնագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, վարդագոյն, մոխրագոյն, նարնջի:

Տե՛ս Ա.Գէորգեան, Անանուն հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն Թ-ԺԷ. դդ., Գահիրէ, 2005, էջ 394, Հմ 547:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի Ա. փեղկի խաչի աջ թեւի ակը, ներեւի թեւի ակն ու ակնակապիճն ընկած. Ա. փեղկի մետաղէ խաչի երկու ակն ընկած. լուսանցակողերը աղտոտուած, կարմիրը թափուած, հազիւ նշմարելի, վր. եւ ստ. լուսանցակողերին՝ հիմիին մօտ, սեւ թանաքով առուած աղեղնաձեւ գիծ. թերթերին տեղ-տեղ խոնաւութեան եւ աղտոտուածութեան տարատեսակ, բորբոսի, ժանգի, այրուածի հետքեր, զանազան բծեր. թ. 1, 74՝ հիմիից մասամբ, թ. 15՝ ամբողջովին անջատ. թ. 1-14՝ կաւերը թուլացած. ընդմէջ թ. 25-6ի 1 թերթ ընկած. թ. 108-9ի, 167-8ի միջեւ 1ական թերթ կտրած. թ. 67, 259, 260, 302՝ եզրերին պատռուածքներ. թ. 332-42, 344-5՝ այրուածի անցքեր. 3բ-4ա՝ լուացած յիշատակարանի հետքեր. թ. 85, 104, 143 եւ այլուր՝ արտաքին լուսանցներին կապոյտ թելերով էջանշան-թերթիկներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. 1. *4բ-5ա* Թուղթ եւսեբեայ:

2. *5բ-9ա* Համաբարբառ (նաեւ ստ. լս.՝ Յրուագանկ):

3. *9բ* Նախադրութիւն: *10ա-1բ* Գլուխք: *11բ-12ա* Համաձայնութիւն: *17ա-106բ* Աւետարան Մատթէոսի (ե. 7-19՝ թափուած):

4. *107ա-8ա* Գլուխք: *109ա-65բ* Աւետարան Մարկոսի (*165աբ* Յարուցեալ Յիսուս):

5. *166ա-7բ* Գլուխք: *168ա-263բ* Աւետարան Ղուկասու:

6. *264բ-5ա* Գլուխք: *266ա-336բ* Աւետարան Յովհաննու:

Բ. *337ա-42բ* Հանգիստ երանելոյն Յովհաննու աւետարանչին – *էր ընդ եղբարս երանելին Յովհաննէս մեծաւ ուրախութեամբ ի Տէր... սուրբ առաքեալն եւ աւետարանիչն Յոհաննէս ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

342բ Փա՛ռք ամենասուրբ երրորդութեան՝ Հաւր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս. ամէն: Գրեցաւ ի մայրաքաղաքն Կոսդան[դ]ինուպաւիս, *ձեռամբ* Թոխատցի Միխայէլին: *Արդ, աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա՝ կարդալով կամ յաւրինակելով, մէկ Հայր մեզայիս մի յիշեցէ՛ք զանպիտան գրիչս եւ զծնաւղան իմ, եւ զկենդանիսն իմ եւ զննջեցեալսն իմ, եւ |343ա| Աստուած զյիշողդ յիշէ իւր միւսանգամ գալստեանն. ամէն: Արդ, ըստացաւղ սորա եղեւ* եկեղեաց *գաւառէն* Յակոբ *աբեղան, որ անունս ունիմ եւ գործս՝ ոչ, յիշատակիմ եւ ծնաւղաց իմոց՝* Թուրվանտին *եւ զփոխեցեալ հայրն իմ՝* զեղթիարն, *եւ զաէր* Սարգիսն, *եւ զմիւս հայր[ա]գիրն՝* զԽաչերեսն *եւ զամենայն արեան մերձաւորսն, որ առ Աստուած փոխեր են: Ով յիշէ, յիշեալ լիցի առաջի Քրիստոսի: Այլեւ յիշեցէ՛ք զաւրինակի շնորհաւղն՝* զԱլէքսանոսն *եւ զիւր հայրն՝ զաէր* Գրիգորն, *որ առ Աստուած փոխեցաւ, եւ զիւր որդին՝* զԿարապետն, *եւ կենակիցն* զՍուլթանն: *Ի յառաջնորդութեան* Յովանննէս *վարդապետին, թվին ՌԿԹ. (1620): Եւ դուք եւ մեք ի մի բերան, լի սրտիւ ասացուք՝ Հայր մեր, որ յերկինս:*

Տե՛ս ԺԷ. դ., յիշ-ք, Ա., էջ 721, Հմ 985:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *343բ (1624 թ., բոլորգիր) Փա՛ռք ամենասուրբ երրորդութեանն՝ Հօր եւ Որդո եւ՛: Գրեցաւ սուրբ Աւետարանս ի թվականիս հայոց ՌՀԳ. (1624), [ձեռ]ամբ անիմաստ* Ղազար *[գրչի]: Արդ՝ ստա[ցող եղեւ] սուրբ Աւետարա[նիս* Թոխա]թցի մահ[տեսի Պ]օղոսն, *իւր հալալ [ընչից], յիշատակ իւր հոգւոյն եւ իւր կողակից* Նաղաշին *հոգւոյն, իւր ծնօղացն՝* Եաղուպին *եւ* Ճանփաշահին *հոգւոյն, եւ իւր աղբօրն՝* Մինասին, *եւ իւր կողակցին՝* Սէյրանին *հոգւոյն, եւ եղբար որդոյն՝* Եաղուպին, *եւ դստերն՝* Պահարին *հոգւոյն եւ ամենայն արեան մերձաւորացն: Եւ եդ յիշատակ ի դուռն* Սուրբ Յակոբա, *ի ձեռն* Սարգիս *քահանային, ոչ ոք կարող է միւս անգամ գնել կամ ծախելու կամ արգիլելու: Ով հակառակի,* Յուդայի *պատիժն կրէ:*

Տե՛ս ԺԷ. դ. յիշ-ք, Բ., էջ 140, Հմ 198:

2. *3բ (ԺԹ.դ., բոլորգիր) Թվին ՉԺՉ. (1467) (՞)... ձեռամբ... Մարգարին (՞)... // |4ա| Յիշատակ է Աւետարանս ///:*

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *16ա կարմիր թանաքով ձուածիր, մէջտեղում՝ կղզին, գագաթին պայծառացած խաչ, շուրջբոլորը՝* «ԿՆԻՔ ՍՈՒՐԲ ԱՆԱՊԱՏԻՆ ՍԵՒԱՆԱՅ»:

ՆՇՈՒՄ՝ *մէջքին սոսնձած կապոյտ թղթին՝ (տպագիր) «Գրեանց գրատան [անապ]ատին Սեւանու», «28», 1ա՝ «ՌԿԹ.-1620 Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս», 2ա՝ «Սեւան», «34/3472», 343ա՝ «Գրեալ է ի թուին ՌԿԹ. (1620) ի Պօլիս»:*

Ձեռագրիս նկարագրութիւնը տե՛ս Մ. Սմբատեանց, Տեղագիր Գեղարդունի Ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 400, Հմր 34/28: Ձեռագրի մասին մանրամասն տե՛ս Խ. Յարութիւնեան, Միխայէլ անուամբ ժէ. դարի երկու գրիչ, Երեւան, «Նաիրի» հրատ., էջ 62-64:


ԳՐՁԱՓՈՐՁ՝ *1ա՝ «աբաբ»: 2բ Այս Սուրբ Աւետարանս յիշատակ (այսչափ): 343բ՝ «զհանդերձն իւր տարածեաց: Եւ ասացեալ ցմեզ. «Խաղաղութիւն ընդ ձեզ, եղբա՛րք»: Եւ մինչդեռ մեք ուրախ էաք եւ լսեաք, աւանդեաց զհոգին իւր ի ձեռն Տեառն, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն»:*

3473
ԱԻԵՏԱՐԱՆ


ԺԴ., ԺԷ. դդ.

ԳՐԻՉ՝ Անանուն Ա.՝ ԺԴ. դ. (թ. 85-149, 151-5, 253-335), Անանուն Բ.՝ ԺԷ. դ. (թ. 1-84, 150ա-դ, 156ա-252):

ԹԵՐԹ՝ 335+2 (կրկն.՝ թ. 4, 150): ՊՐԱԿ՝ Ա-ԻԹ×12 (Ա 4, Ը 9): ՆԻՒԹ՝ թուղթ (թ. 85-149, 151-5, 253-335), այլ թուղթ՝ լուսագծերով (թ. 1-84, 150ա-դ, 156ա-252): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 12×8: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն՝ թ. 85-166, 253-335 (10-3×6), երկսիւն, սեւով սահմանագծուած՝ թ. 1-84, 167-252 (10,2×6): ԳԻՐ՝ բոլորգիր՝ թ. 85-149, 151-5, 253-335 (նմուշ՝ 99ա), թ. 1-84, 150ա-դ, 156ա-252 (նմուշ՝ 15ա): ՏՈՂ՝ 18-19: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ դռնակը, կապիչները եւ պեպ-ները նորոգման ժամանակի. կազմի անկիւնները մաշուած, մէջբը ճաճճած. լուսանցակողերը մասամբ գունաթափ. թերթերին տեղ-տեղ խոնաւութեան եւ աղտոտուածութեան տարատեսակ հետքեր. թ. 1ից առաջ, թ. 3-4ի միջեւ յական թերթ ընկած. թ. 155-6ի միջեւ մէկ, 335ից յետոյ՝ 5-6 թերթ ընկած. 196բ՝ լղոզուած թանաքի հետք:



Նմուշ 99ա



Նմուշ 15ա

մազարդ կաշի, դռնակով, զոյգ կապիչներով եւ գամերով. միջուկը՝ տախտակ. աստառը՝ սեւ եւ սպիտակ սիւներով ծաղկազարդ կտաւ, դռնակինը՝ շագանակագոյն գործուածք: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա.Բ+ԳԴ՝ սպիտակ չգրուած թուղթ (Ի. դ.). լուսանցակողերը՝ կարմիր, վր. եւ ստ. լուսանցակողերին՝ հիմիին մօտ, սեւ թանաքով աղեղնաձեւ զարդագիծ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած Ի. դարի վերջին.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *1բա, 2ա-84ա* Աւետարան Մատթէոսի (Ա.-Բ. 14, Դ. 24 -Ջ. 2՝ թափուած):

2. *85ա-156բ* Աւետարան Մարկոսի (156բ՝ Յարուցեալ Յիսուս, ԺԵ. 47-ԺՋ. 10՝ թափուած):

3. *157ա-252բ* Աւետարան Ղուկասու:

4. *253ա-335բ* Աւետարան Յովհաննու (ԺԹ. 42 – ԻԱ. 25՝ թափուած):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

84բ (1797 թ., շղագրանման նոտրգիր) Թուին ՌՄՀՋ. (1797), ի կաթողիկոսութեանն տէր Ղուկասու եւ ի առաջնորդութեանն Սեւանու առաջնորդութեանն Գրիգո՛ր վար[դա]պետով եղեւ սով սաստիկ:

252բ Թվին ՌՄՀՋ. (1797) ի դագաւորութեանն Ռուսաց, ի առաջնորդութեանն Սեւանու Գրիգո՛ր:

ՆՇՈՒՄ՝ *մէջքին սոսնձած կապոյտ թղթին՝ տպագիր «ԴՐԵ/// [ԱՆԱՊ]ԱՏԻՆ ՍԵՒԱՆՈՒ Հմր 29», Ա. կազմաստառին սոսնձած թղթին՝«Սեւան 35/3473», «ԺՋ. եւ ԺԷ. Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»:*


Ձեռագրիս նկարագրութիւնը տե՛ս Մ. Սմբատեանց, Տեղագիր Գեղարդունի Ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 400, Հմր 35/29:

ԳՐՁԱՓՈՐՁ՝ *252բ՝ զանազան տառեր:*

3474
ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ

ԺԵ. դար

ԹԵՐԹ՝ 130: ՊՐԱԿ՝ 1+Ա-ԺԱ×12 (Ա 10, Ը 11): ՆԻՒԹ՝ մագաղաթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 10,6×7,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (7,5×5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 60): ՏՈՂ՝ 15: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի. միջուկը՝



Նմուշ 60ա

տախտակ. աստառը՝ Ա. փեղկ՝ մագաղաթ, Բ. փեղկ՝ կապոյտ թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ թ. 1+Ա (վջ.). թ. 1. մագաղաթ՝ հաշուած թերթաթանակի մէջ, մասն կազմաստառի, Ա՝ կապոյտ թուղթ՝ լուսագծերով, մասն կազմաստառի:

160. *318բ-9բ* ՃՀԱ. Տաղ Ծնընդեան աստուածամաւր ի յիւր ծնող[սն] – *Այսաւր անճառ մեծի խորհրդ-*

դով… 319բ-20ա Փոխ, «Անարատ տաճարին ձայն», («Շ-Ք») – *Շնորհք բարեաց յերկրի տըւաւ…*

319բ ստ. լս., գրչից՝ «Եւ ի կան[ան]ցըն կանխեալ ձայն այլ ասի»:

161. *320ա-1ա* ՃՀԲ. Այլ տաղ ջուր աւրհնելոյն – *Սկըզբնագարդ գոյի ստեղծաւղն գայր… 321ա-2ա* [Փոխ] – *Մըկըրտիչըն Յիսուսի՝ մեծ կարապետըն Յովաննէս…*

162. *322ա-3բ* ՃՀԳ. Տաղ Փոխման Աստուածածնին ի գլուխ եկեղեց[ոյ] («ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍԻ») – *Կոյս, անապական Մարիամ սուրբ Աստուածածին…*

163. *323բ-4բ* ՃՀԴ. Այլ տաղ Ծընընդեան Քրիստոսի («ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍԷ») – *Կոյսն ծնանէր յայրին, Յովսէփ զարմանայր… 324բ-5ա* («ԿՈՍՏԱՆԴԻ») – *Կոյսն ի յայրն ի բեզգէէմ…*

164. *325ա-6ա* ՃՀԵ. Այլ տաղ Ծնընդի. կենակապ – *Կայր Կոյսն ի յայրին, կայր եւ երկնանայր… 326աբ* Փոխ – *Կառափնատեղոջըն կանգնեցին ըզխաչն…*

165. *326բ-7բ* ՃՀԶ. Այլ տաղ Ծընընդի («Ք-Ա») – *Քրիստոս ծնեալ ի բեզգահէմ… 327բ-8ա* Փոխ – *Զայն Տեառն զաւրութեանց…*

326բ ստ. լս., գրչից՝ «Աւետիս մատուցանեմք ձայն է տաղս», 327բ «Անճառ է խորհուրդ ձայն է»:

166. *328ա-9ա* ՃՀԷ. Այլ տաղ Ծընընդի («ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱԼՀ») – *Յայտնի Աստուած այսաւր ի յաշխարհի… ա. 329աբ* լս.՝ «Այլ ազգ» – *Աստուած յայտնեցաւ ի յաստեղէն… բ. 229բ-30ա* Փոխ – *Անեղ անըսկիզբն էնն ահայ Աստուած է… գ. 330բ-1ա* Փոխ – *Մանուկ կուսածին լոյսն ի յերկնից իջեալ…*

328ա ստ. լս., գրչից՝ «Յորդոցն որոտմանց ձայն է տաղս», 329ա «Կաճանցըն կանխել ձայն է փոխս»:

167. *331աբ* ՃՀԸ. Այլ մեղեդի Ծընընդի – *Որ անըսկիզբն էութեան ընդ Հաւր… 331բ* Փոխ – *Այսաւր նորոգեալ եղեւ բնութիւնք եղելոցս…*

331բ ստ. լս., գրչից՝ «Ի գաւազանին ձայն է փոխս»:

168. *331բ-3ա* ՃՀԹ. Տաղ Քառասնաւրեայ գալըստեան Տեառն ի տաճար – *Ծերունին այսաւր Սիմէոն յարուցեալ եկն ի տաճարն…*

332ա ստ. լս., գրչից՝ «Աստուծով ողորմութեանց ձայն է, եւ թէ ուզես, Նա անեղ Որդոյն այլ աս[ա]»:

169. *333բ* ՃՁ. Մեղեդի Անտոնի – *Անտո՛ն, ոստ անապատի, լերանց, բարձանց…*

170. *333բ-4ա* ՃՁԱ. Այլ տաղ սըրբոյն Ստեփաննոսի Նախավկա[յի] – *Մվ պըսակըդ պարծանաց, / սուրբդ առաջին մարտիրոսաց…* ա. *334աբ* լս.՝ «Այլ ազգ» – *Տո՛ւնկ անմահ, իմանալի…* բ. *334բ-5բ* լս.՝ «Այլ ազգ», «Անարատ տաճար» – *Ջեռամբն ակնարկելով ըզքեզ…*

171. *335բ-7ա* ՃՁԲ. Տաղ սրբոց Քառասնից – *Սըրբոց քառասնից այսաւր տաւնեմք… 337ա-8բ* Փոխ – *Յերկնից ծագելով արեւ անմուտ լուսոյն…*

172. *338բ-9բ* ՃՁԳ. Տաղ յարութեան Ղազարու («ՍՏԵՓԱՆՆՈՍԻ», ապա՝ անկապակից տառեր») – *Սըրբոց հրըշտակաց զարմանահրաշից տեսեալ… 339բ-40բ* Փոխ – *Զայնին զաւրութեան Փըրկչին…*

173. *340բ-2ա* ՃՁԴ. Տաղ Գալըստեան Տեառն յերուսաղէմ իշով – *Այսաւր երգ առեալ գոչեն հրեշտակք…*

174. *342աբ* ՃՁԵ. Այլ տաղ Մեծի քրեֆաբ[աթ]ին աւուրն – *Գողութեամբ այսաւր եւ մեք ամեն<են>եքեան…*

342ա ստ. լս., գրչից՝ «Ի խորհուրդ հայրենի ձայն է»:

175. *342բ-3ա* ՃՁՁ. Այլ տաղ Մեծի շաբաթին. յԱնտոնի ձայն – *Յովսէփ, ճըշմարիտ մեծատուն… 343ա-4ա* Փոխ – *Այսաւր աւետիս ձեզ նընջեցելոցդ…*

Ստ. լս., գրչից՝ 342բ «յԱնտոնի ձայն է», 343ա «Աւետիս մատուցանեմք ձայն է»:

176. *344աբ* ՃՁԷ. Այլ տաղ Համբարձման՝ Ստեփ[ա]նոսի] («ՍՏԵՓԱՆՈՍԷ») – *Մոսկալի ահիւ պակեան հոլք բոցեղինաց… 344բ-5բ* Փոխ – *Ես խաւսիմ զարդարութիւն զանճառ…*

177. *345բ-7ա* ՃՁԸ. Այլ տաղ Ծնընդի – *Արմատ կենդանեաց անմահութեանց խորհուրդ…*

345բ ստ. լս., գրչից՝ «Շարժէր-ին ձայն է»:

178. *347ա-8բ* ՃՁԹ. Այլ տաղ սուրբ Աստուածածնին, որոյն նախագիծ տանցն՝ ըստ աւուան ոգողին՝ մեծին Յոհաննիսի վարդ[ապետի] ասացեալ՝ եղբաւր թագ[աւորին] հայոց Գով[աբանութիւն] Սուրբ Աստուած[ածնին] («ՅՈՀԱՆՆՈՒ ՆԱՎ ԱՍԱՅԵԱԼ ՆՈՒ») – *Յորէն Հաւրէն նկատեալ կանխաւ մինչ ի վախճան… 348բ-50բ* Փոխ – *Այսաւր ցընծան արարածք աստուածայինն…*

179. *350բ-1ա* ՃՂ. Նորին Յոհաննն[ու] յարճ[այէն] Հեթում մինչ ի Տաթարն էր, որոյ նախագիծ տանցն ըստ աւուանն է ոգեալ («ԵՐԳՍ ՀԵԹՄՈՅ Ե») – *Երրորդութիւն Սուրբ, Աստուած անըսկիզբն եւ անեղ… ա. 351ա-2բ* Փոխ («ԱՐՔԱՅԻՆ ՀԱՅՈՅ») – *Այլ դու, Տէ՛ր անյիշաչար… բ. 352բ-3ա* լս.՝ «Հոսեալ հրեղին», («Ա ՅՈՀԱՆՆԻՍԷ») – *Այսաւր հաւաքման հոգիահոյլ հովուացս… 353աբ* («ԿՐՍԵՐ Ի ԻՒՐ») – *Կերակրիչ կաթամբ կերակրողին…*

180. *353բ-4ա* ՃՂԱ. Նորին Յոհաննու մեղեդ[ի] ապաշխ[արութեան] («ՅՈՀԱՆՆԵՍ, ՎԱՅ ՔԵՋ») – *Յորժամ ածեմ ըզմըտաւք զաւրն ահագին…*

181. *354ա-5բ* ՃՂԲ. Տաղ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին հայոց՝ Յոհ[աննու] ձլուզ վարդ[ա]պ[ետի] ասացեալ («ԳՐԻԳՈՐԻՈՍ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՀՈՅՈՅ») – *Գրիգորիոսի բազմաչարչար սըրբոյն… 355բ-6բ* Քրիստոսի Աստուծոյ մերոյ աւաւրէն է – *Երկինք երկնից յիմաց արարէք…*

182. *356բ-7բ* ՃՂԳ. Տաղ Ծնընդեանն Քրիստոսի, ի սուրբ կոյսն Մ<մ>արիամա՝ ի Կոստընդնայ ոգեալ –

կոյս անապական եւ անխախտ ծնողութիւն… 357բ-8բ Փոխ – *Հրճուիմք այսաւր մեք հոգեպէս…*

183. *359աբ* ՃՂԴ. Տաղ Յայտնութեան Քրիստոսի հաւաս ուսիր – *Անճառելի եւ անհասըն բնութեամբ… 259բ-61ա* [Փոխ] – *Քրիստոս՝ Բանըդ Հաւր, ծնունդ անժամանակ…*

184. *361ա-2ա* ՃՂԵ. Տաղ Թլփատութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ – *Անսկիզբն Բանըդ Հաւր, ծնեալդ յառաջ…*

185. *362աբ* ՃՂԶ. Տաղ Սուրբ Հոգւոյն ասի՝ ի ձեռնայդր[ութիւն] – *Ճարտ[ա]րապե[տ ի]մաստից նոյնագոյ բնութեամբ… 262բ-3ա* Փոխ – *Որ անմահ հաց կենաց մեզ տըւար…*

186. *363ա-4ա* ՃՂԷ. Տաղ եկեղեցւոյ՝ ի Կոստանդեա նուաստէ ոգեալ – *Նոր նոր[ոգ]եալ կենաց մերոց… ա. 364աբ* Փոխ – *Դրախտ նոր տընգով զարդարեցաւ… բ. 365ա-6ա* Փոխ – *Նախախնամական տեսչութիւն կոչեաց…*

187. *366ա-7բ* ՃՂԸ. Տաղ Յովաննու Մըկըրտչին – *Ի դասս հրեղինաց յաւդեալ… 367բ-9ա Ի ձայն հրճուանաց խրախ[ճ]անամք…*

188. *369աբ* ՃՂԹ. Տաղ մարտիրոսաց եւ կուսանաց – *Այսաւր նորահրաշ տաւնի ցընծան…*

189. *369բ-70բ* Մ. Տաղ Սրբոյն Գէորգա Ջաւրավա[րի] («Ի ԿՈՍՏԱՆԴԵԱՅ Է») – *Ի հանդիսական տաւնիս երգելով… 370բ-1բ* Փոխ («Ս. ԳԷՈՐԳԵԱ Ա») – *Սըրբոյն սըրբութիւն ստասցուք…*

190. *371բ-2ա* ՄԱ. Տաղ սրբոց Ներսիսեանցն ի Կոստանդն[ի] ոգեալ – *Նորազուարճ հայրապետ եւ արթուն քահանայապետ… ա. 372աբ Յարմատոց բարեաց բըղխեալ ծաղիկ… բ. 372բ-3ա Հընչմամբ ձայնիւ երկրանաց…*

191. *373աբ* Մ[Բ]. Տաղ սրբոյն Նիկալայոսի հայրապետին – *Թագաւորին տիէզերաց երկիր երգէ… 373բ-4ա Նոր մեծահանդէս տաւնի…*

192. *374ա-4բ* ՄԳ. Տաղ սուրբ վըկայից Միննասայ, Երմոգինեայ եւ Գրաբոսի – *Հրճուելով այսաւր եկեղեցւոյ մանգունք… 374բ-5բ* Փոխ – *Այսաւր նորահրաշ տաւնիս ցընծան…*

193. *375բ-6բ* ՄԴ. Տաղ սրբոյն Սարգսի զաւր[ա]վար[ի] եւ որդւոյ նոռայ Մարտ[իրոսի] – *Պարծանք հանդիսից խըմբից գըլուխ… 376բ-7ա* Փոխ – *Վըկայից հանդիսից հրաշալի նեղութեամբ…*

194. *377ա-8բ* ՄԵ. Տաղ սուրբ զինուորին Մերկեռիոսի – *Քաջամարտիկ մեծ զինուորին Մերկեռիոսի…*

195. *378բ-9ա* ՄԶ. Այլ տաղ զինաւորաց եւ մարտիրոսաց – *Միածին Բանդ եւ սկիզբն կենաց…*

196. *379աբ* Տաղ սրբոց մարգարէիցն – *Նախկին տեսաւղ, սո՛ւրբ մարգարէք…*

197. *380աբ* Տաղ Սուրբ Սար/// – *Ի հանդիսական տ/// երգս աւրհնութիւն գոչ/// ///եզ, ո՛վ Տէր Յիսուս Քրիստոս… 380բ-1ա* Փոխ – *Թագազարդեալք յայսմ տաւնիս յուրախական հանդիսի…*

198. *281ա-2ա* Տաղ սըրբոց վկայից Տարագոսի եւ Պռաւբոսի եւ Անդրաւնիկոսի ի Կոստանդն[է] ոգեալ – *Վըկայք մարմնով չարչարեցան…*

199. *382ա-3ա* Տաղ սուրբ Աստուածայծնին՝ ի Կոստընդնէ – *Աստուածածին կոյս երանեալ…*

200. *383աբ* ՄԹ. Տաղ Սրբոյն Թէոդորոսի – *Ա<ա>յս հանդիսաւո[ր] [ք]առաքնորդաց պահոցս… 383բ-4ա Փոխ – Ի զինուորական դասէն քաջ… միշտ գոհաբանեալ /// [ա]յժմ եւ յաւիտ[եան]։*

ԵՒս-ներում եւ տողամէջերին կան գրչի սրբագրումներ։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

62ա Ո՛վ մայր Աստուծոյ, լե՛ր բարեխաւս առ Տէր վասն ստացողի սորա՝ Յեսայի աբեղայի։

80ա Սուրբ նախայվկայիս բարէխաւսութեամբն, Քրիստո՛ս Աստուած, ողորմեայ ստացողի գրոցս եւ գրողիս՝ Եսայի միայն անուամբ աբեղայի, եւ ծընողաց իմո<յ>ց. եւ որ յիշէ, յիշեալ լիցի ի գիրն կենդանի. ամէն։

125ա Տե՛ս Բվնդ. (խորագիր)։

155ա Քրիստո՛ս Աստուած, քո սուրբ չարչարանացդ եւ խաչելութեանդ եւ թաղմանդ բարէխաւսութեամբ ողորմեա՛յ ստացող գրոցս <նոց> եւ գրողիս՝ Յեսայի պիտականուն միայն աբեղայ եւ ամենայն հանգուցեալ արեան մերձաւորաց իմ<իմ>ոց եւ եղանակողացդ, եւ որոց զԱմէն ասեն. եղիցի, եղիցի։

185ա Քրիստո՛ս Աստուած, սուրբ յարութեամբ քո ի կեանս քո գր|185բ|եայ զստացաւղ գրոցս եւ զգրողս՝ զեսայի սուտանուն աբեղայ Առաբելցի, որ եմ ազգաւ Սասնցի, եւ զծնողսն իմ՝ զՄարտիրոս, եւ զմայրն իմ՝ զՄարթայ, եւ զհարւրեղբայրն իմ՝ զԹաքէոս քահանայ, եւ զքեռան իմ զհանկո[ւցե]ալսն եւ զերջանիկ, հարազատ եղբայրն իմ՝ զՊետրոս աբեղայն, զոր Տէր Յիսուս պահեսցէ զինքն խաղաղութեամբ եւ զամենայն ազգայինսն՝ զհայրենիսն եւ զմայրենիսն, զհանգուցեալսն եւ կենդանիսն. ամէն։ եւ որ յիշէ, լիշեալ լիցի ի գիրն կենաց։ եւ գրեցաւ ի քաղաքն Սիս՝ ընդ հովանեաւ Սուրբ Նիկալայ եւ Սուրբ Լուսաւորչին Գրիգորի, ի թվին ի ՊԽԹ. (1394), որ եւ ես այս տարովս եղայ աբեղայ, ի յԱնարզաբա, առ ոտս սրբոյնիոյ Աստուածածնին եւ Սուրբ Նշանին եւ այլ ամենայն սրբոցն, որ անդ կան։ |186ա| Յիշեսջի՛ք եւ զերախտաւոր հայրն իմ զերջանիկ, հեզահոգի քահանայն՝ զԳրիգոր փիլիսոփայն՝ զուսուցիչն իմ, որ եւ յայսմ ամի հանգեաւ առ Քրիստոս՝ ի յոյսն ամենեցուն։ եւ որ յիշէ, յիշեալ լիցի ի գիրն կեն[դանի]։

213բ ստ. լս., գրչից՝ Մինչեւ յայս տեղս ի թվին ՊԽԹ.ն (1394) գրեցաւ։

224ա Քրիստո՛ս Աստուած իմ, քո սուրբ պայծառակերպութեամբդ բարեխաւսութեամբն ողորմեա՛յ ստացողի գրոցս եւ գրողիս՝ Եսայի *սուտանուն աբեղայի,* եւ ծնողացն իմոյ. ամէն: Եւ զոր զԱմէնն ասէ, նայ եւ նմայ ողորմեսցի Քրիստոս Աստուած. ամէն:*

* Ծնթ. Նախապէս գրել է «սաղակաւագիս», այնուհետեւ կարմրագրով ուղղել՝ «աբեղայի»:

*384ա Փա՛ռք, պատիւ եւ գոհութիւն պաշտելի եւ երկրպագելի, համագոյ եւ անբաժանելի, միասնական Սուրբ Երրորդութեանն՝ Հաւր եւ Որդ[ւոյ] եւ Սուրբ Հոգւոյն յաւիտեանս. ամէն: *Արդ, գրեցաւ եղանակաւոր Տաղարանս հին եւ նոր, զոր առաջին սուրբ հայրքն են եղանակել, ի թվականին ՊԽԳ. (1394), ի հայրապետութեան տեառն* Կարապետի *եւ ի թագաւոր|384բ|ութեանն* Կիպրոսի Ճագէթի, *որ եւ ի վերայ Հայոց աւրհնեցաւ եւ անուանեցաւ թագաւոր: Գրեցաւ սա ձեռամբ վերջին եւ մեղսաթաւալ եւ անարժան գծաւղի՝* Եսայի *աբեղայի, ի քաղաքս* Սիս, *ընդ հովանեաւ* Սուրբ Նիկալաոսի *եւ կենսակիր* Սուրբ Նշան[աց]ս՝ Զոռովանիցն *եւ* [Ռոմա]կաղնոյն, *եւ* Վանկոյ Սուրբ Նշանին, *եւ աջոյն* Սուրբ Լուսաւորչին, *ի լաւ եւ յընդիր աւրինակէն* Յեսու *փիլիսոփային, որոյ Տէր ողորմեսցի ի խընդիրս եւ ի փափաքս անձին իմոյ եւ եղբաւրն իմոյ՝* Պետրոս *աբեղայի, եւ յիշատակ ծնողաց մերոց՝* Մարտիրոսի *եւ հաւրեղբաւրն իմոյ՝* Թաքէոս *քահանայի, եւ մաւրն իմոյ՝* Մարթայի, *եւ ամենայն ազգականացն՝ կենդանեացն եւ հանգուցելոցն. ամէն*:*

Արդ, աղաչեմք զամենեքսեան, որք ալփոիք ի սմանէ աւրինակաւ |385ա| [կամ] ուսմամբ, յիշեսջի՛ք եւ մեղաց թողութիւն խընդ[ր]ըրեցէ՛ք եղկելի գծողիս սորա՝ Եսայի *աբեղայիս, եւ զիմսըն զամենեսեան յիշել ի Տէր Աստուած, որ առատն է ի [տուրս բարեաց]/// փափաքս /// յեկ/// տարէ///մանկ[ան]ց եկեղեցւոյ զտեառին, եւ զկացուրդին, զբովանդակն, նայ եւ զշարականսըն եւ զտաղերս զայս զհաւաքեալս ի սմայ եւ ինքն առանց կաշ|385բ|առոյ, որ Տէր Աստուած ողորմեայ ի նմայ/// ի ժամանակ որդէկացն իւրոյ* Կոստընդ[ին], ///, Ստեփանոսին *եւ* Յովաննիսին, ///ն. *ամէն: Յիշեսջի՛ք ///: /// զտաղ(ՀՀ) /// ես գիրք չ///ի///յ վան այն գր/// համար, որ չմոռան///. եւ թէ սխալ կայ, մի՛ մեղադրէք, ապա արւեստն յոլովէ ի ներս, եւ խրատքն եւ Քրիստոսի մարդ[աս]իրին փառք յաւիտ///:*

Ծնթ. Միայն աստղանիշերի՝ մէջ առած մասը տե՛ս ԺԹ. դ-ի յիշ-ի, էջ 607, Հմր 757. վերջում ծանօթագրուած՝ «Շարունակութեան մեծ մասը պատռուած է»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1779, շղագիր

*պհպ. Դբ ///*Վանեցի Խաչատ[ու]ր *եկի ի յերկիրն* Տարունոյ, *ի մեծափառ վանք, որ կոչի* Ղազարոյ. */// երկուտասան սուրբ առաքեալ այժ[մ] ժամանակին, որ մեծաւոր* Աւրատեսեաց *տիրացու ումն, ի թվին ՌՄԻՀ. (1779): Դարձեալ, ով ոք հանդիպիք ի սմայ, Աստուած նորայ բան յաջողի ասէք, ի մատենիս ասացէ՛ք, Աստուած նորայ մեղաց թողութիւն անի. ամէն:*

պհպ. Դբ (արտք. լս.՝, 1779) ես՝ /// Վանեցի Խաչիկ, *ի սուրբ /// (անընթեռնելի) առա ի խաչի(Հ) [մ]եղ[աց թո]ղութիւն], ո՛վ ոք հանդիպիք:*


ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *պհպ. էբ սեւ թանաքով բոլորակ՝ կենտրոնում անընկալելի զարդ, եզրագծով՝ անընթեռնելի գրութիւն (ջնջուած):*

ՆՇՈՒՄ՝ *պհպ. Ա՝ «3503», Պտկ-պհպ. Գ՝ «280/3503, «ՊԽԳ.-1394,* Մ[եսրոպ] *եպիսկոպոս», Պտկ-պհպ. էբ՝ հակառակ դիրքով «ՀՄՐ 203/87», պհպ. Ըբ՝ վրան սոսնձուած թերթիկին՝ «Վերակազմված է / հին ու նոր կաշվով, հին կազմաստառով: Գլխ. վերականգնիչ՝ Ա. Խաչատրյան. Երևան 1970 թ. (կապոյտ թանաքով 0-ն դարձրած 1)»:*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *պհպ. Դա, եբ, էբ՝ հայերէն այբուբենի գլխագիր տառեր եւ բուսական զարդերի հետքեր (պհպ. ե), պհպ. Գբ՝ հակառակ դիրքով, գունաթափ կարմրագիր բոլորգրով՝ «Այս բաներս, որ ես կասեմ, քան զկոտրաց փա///», գունաթափ կարմրագիր բոլորգիծ երկաթագրով՝ «Մեծա, Մեծ[ա]պայ<պայ>ծառ խորհուրդ սոսկալի այսաւր ցուցաւ ամենայն երկրի... Մարդայսհրութեամբ Որդիա՛ միածին, եկեալ ի խընդիր եղծ[ե]ալ պատկերին, կատարեցեր ամս (այսպէս) առաք», 104բ՝ «պայծառ արբին»:*

3504
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ԿԱՖԱ — Ռճիե. ԽՈՆՃԱ.– 1676-1692



Նմուշ 8ա

ԳՐԻՉ՝ Վարդան եպս.:

ԹԵՐԹ՝ 314+2-12 (կրկն.՝ թ. 1, 99. գրչի թերթակալում՝ ա-ղգ, որ է՝ 1գ-93բ). չգրուած՝ 1աբ, 11բ, 120բ, 183բ-4բ: ՊՐԱԿ՝ Ա-ԻԱ×12 (Ա, է, ԻԱ 11, Ը, Թ 13, ԺԶ 6, պրակահամարի թռիչ՝ ԺԲ-ԺԴ)+Ա-է×12 (Ա 11): ՆԻՒԹ՝ մագաղաթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18×13: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (12,5×8-8,5), 1գ, 73ա՝ միասին): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 8ա): ՏՈՂ՝ 30-31: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ

կաշի. միջուկը՝ տախտակ. աստառը կապոյտ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա-Դ+ե՝ մագաղաթ, չգրուած եւ գրոտուած:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Կիսախոշոր՝ 1գ, 12ա, 73ա, 232ա: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն: Ձարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, կանաչ, կապոյտ, ոսկի:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, վրան՝ ճեղուածքներ եւ ճաքեր, անկիւններում երեւում է միջուկ-տախտակը, յական գամերը, կապիչները եւ դռնակն ընկած, կան կապիչների եւ դռնակի հիմքերը. լուսանցակողերի կարմիրը մասամբ թափուած. պիպները եւ որոշ թերթեր աղտոտուած, պիպ. ե՝ վրան խոնաւութիւնից մնացած կազմի կապիչների շագանակագոյն հետքերը, թ. 158, 159՝ հիմքից մասամբ անջատ, որոշ թերթերի վրայ բնական անցքեր, ընդմէջ թ. 163-4ի՝ 2, թ. 168-9ի՝ առնուազն 3 թերթ ընկած: Ունի պրակների 2 համարակալում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-11ա* [Դիոնիսիոսի Թրակացւոյ Աւուեստ հերականութեան]

Տե՛ս ձեռ. 267, 229ա-42բ: ա/1ա: բ/1աբ: գ/1բ: դ/1բ: ե/1բ: զ/1բ-2բ: է/2բ: ը/2բ-3ա: թ/3ա: ժ/3ա: ժա/3աբ: ժբ/3բ: ժգ/3բ-5բ: ժդ/5բ-6ա: ժե/6աբ: ժզ/6բ: ժէ/6բ: ժը/6բ-7ա: ժթ/7աբ: ի/7բ-8ա: իա/8աբ: իբ/8բ: իգ/8բ-9ա: իդ/9ա-10բ:

Ունի՝

– 10բ-11ա Աւծարծմունք խոնաւհմանց բայից. յաղագս աղօթից – *Աղաւթական ներգործական ներքսականանակի միաւորական աղաւթեմ, աղօթես, աղաւթէ... Անցեալ կրաւորական եզական՝ եթէեցա, եթէեցար, եթէեցաւ, եզերքական՝ եցայց, եցայք: եւ Քրիստոսի Աստուծոյ մարդասէր թագաւորին մերոյ փառք յաւիտեանս. ամէն:*

Բ. *12ա-72բ* Նուաստ վարդապետի Յոհաննիսի ե[ր]զնկացւոյ, որ եւ Ծործորեցի, արաբեալ Համառատ տեսութիւն Քերականի

Տե՛ս ձեռ. 2193, 10ա-92բ: ա/12ա-22ա: բ/22ա-5ա: գ/25ա-6բ: դ/26բ-8ա: ե/28աբ: զ/28ա-34ա: է/34աբ: ը/34բ-5բ: թ/35բ-6ա: ժ/36ա-7ա: ժա/37աբ: ժբ/37բ-9ա: ժգ/39ա-49բ: ժդ/49բ-52բ: ժե/52բ-7ա: ժզ/57աբ: ժէ/57բ-9ա: ժը/59ա-61ա: ժթ/61աբ: ի/61բ-5ա: իա/65ա-7բ: իբ/67բ-70ա: իգ/70ա-2բ (... եւ մեզ մասնաւորեացես յանգեցումն ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր, որ է աւրհնեալ՛՛:

Գ. *73ա-109բ* [Սիմէոնի վարդապետի Ջուղացւոյ արաբեալ Քերականութիւն ըստ լեզուի մերում հայկազանց]

Տե՛ս ձեռ. 1984, 115ա-62բ: 1/73ա-93բ: ա/73աբ: բ/73բ: գ/73բ-4ա: դ/74ա: ե/74աբ: զ/74բ: է/74բ: ը/74բ-81բ: թ/81բ-7բ: ժ/87բ-8բ: ժա/88բ-9բ: ժբ/89բ-90ա: ժգ/90աբ: ժդ/90բ-2բ: ժե/92բ-3բ: 2/93բ-109բ: ա/93բ-5ա: բ/95աբ: գ/95բ: դ/95բ-105բ: ե/105բ-9բ:

Դ. *110ա-20ա* Սահման բերականութեան

Տե՛ս ձեռ. 841, 120ա-30բ: 1/110ա-19ա: ա/110ա (սկ. տարբեր՝ «Քերականութիւն է արուեստ գործական...»): բ/110աբ: գ/110բ: դ/110բ: ե/110բ: զ/110բ-2բ: է/112բ-4բ: ը/114բ-5ա: թ/115աբ: ժ/115բ-6բ: ժա/116բ-7ա: ժբ/117ա-8ա: ժգ/118ա-9ա: 2/119ա-20ա: ա/119աբ: բ/119բ: գ/119բ-20ա:

Ե. *121ա-32բ, 134բ-64ա, 165բ-8ա, 177աբ, 178բ-83ա, 221ա-4ա* [Զափաբերականի՛ Տաղ, Գովասանի, Աւրհնութիւն]

1. *121ա-5բ* [ստ. լս-ից՝ Նախերգան վարդապետացց] – *Արփիական լոյս, անշիջանելի ճառագայթ... ի տեսութիւն կենսաբուխ բանից քոց, որ ասէ:*

Արտ. եւ ներ. լս-ներում, գրչից՝ 122բ «Եսայիան», 123ա «Դաւիթ», «Մովսէս», 124ա «Քրիստոս», «Մովսէս», «Դաւիթ», 124բ «Սողոմոն» (երկիցս), 125ա «Եսայի», 125բ «Աստուծոյ»:

2. *125բ-32բ, 134բ-42ա, 223ա-4ա* [Աւրհնութիւն]

ա. *125բ-6բ* [ստ. լս-ից՝ Ոտանաւոր: Աւրհնութիւն ի վերայ Կաֆայու] (Ա-Ք) – *Աստուա՛ծ եւ Տէ՛ր ամենակալ, ըզպ[ա]զատանս մեր ընկալ... (126ա տրուպ Վարդանա յետեւեալ կարգի)... մեք անարժան գոլով յուսաք, աւարտեցաք Այբենէ Քէին:*

Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (ԺՋ-ԺԷ. դդ.), աշխ.՝ Յասմիկ Սահակեանի, հտ. Բ., Երեւան, 1987, էջ 157-162, ձեռ. Բ:

բ. *127ա-30բ* [ստ. լս-ից՝ Աւրհնութիւնք (ըստ Համառօտ ցուցակի)՝ Թուղթ առ ժողովուրդն Կաֆայու] – *Արդ, ի գալ աւրհնութեան սուրբ առաքելոցս գրաւորական նամակիս մերոյ առ ձեզ... անտրտում ուրախութեացն, որ ասէ արդարոցն՝ եկա՛յք աւրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէ՛ք:*

129ա, 130ա ստ. լս., գրչից՝ «Աւրհնութիւնք ժողովրդի»:

գ. *130բ-2բ*՝ [ստ. լս-ից՝ Աւրհնութիւնք ժողովրդականաց] – *Աւրհնեալ է Հայրն Աստուած անեղ, անծին եւ անժամանակ... ընդդէմ ամենայն ներհակացն ճշմարտութեան զվերջինս պայծառանօք քան զառաջինն. ամէն:*

դ. *134բ-42ա* [ստ. լս-ից՝ Աւրհնութիւնք] – *Այլ եւ աւրհնեալ է տիրամայր սուրբ Աստուածածինն... եւ պայծառացուցէ զհոգի համօրէն հաւատացեալ:*

Արտ. լս., գրչից՝ 135ա-6բ «եկեղեցոյ, Նընջեցելոց. 136բ բնագրի մէջ յիշատակարան. «Եւ եթէ կամիս զչինօղ եկեղեցոյս եւ զննջեցեալսն եւ զգործատուս աստ յիշեա՛, որ յառաջ եկեղեցոյ գրեցան», Շինօղ, Աշխատողաց, Կաթուղիկոս, Եպիսկոպոսի, Իշխան[ա]ց, Ճգնաւորաց, Ընկերաց, Խոստիչի, Քաղաքի», 140ա, 141բ «Աւրհնութիւնք ողորմութեանց, Նընջեցելոց»:

ե. *223ա-4ա* Աւրհնութիւն. ոտանաւոր է – *Այն, որ*

աւրհնեաց զնախնին զԱդամ, զենովք, զՆոյ եւ զԱբրահամ… 2. *224աբ* («ԱՅՍ ԱՒԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵ») – *Արդ, աւրհնեսցուք մեք միաբան զերրորդութիւն միշտ անխափան…* 3. *224բ-6ա* [ստ. լս-ից՝ Կոնտակ գրելոյ] – *Ի հայրածագս միածին Բանէն եւ ի մշտաբուղխ փառակից Որդւոյ…* 4. *226ա* («ՀԱՅՐ») *Հօր զօրութեամբն անեղական…* 5. *226աբ* Որդւոյ անուամբ («ՈՐԴԻ») – *Որդին՝ Աստուած Հօր ծոցածին…* 6. *226բ* Հոգւոյն Սրբոյ անուամբ («ՀՈԳԻ») – *Հոգին՝ ելումն, որ ի Հօրէն…* 7. *226բ-7ա* Կրկին ԲԺ. (20) գրով ըստ անուան՝ Հաւատ, յոյս եւ սէր («ՀԱՒԱՏ, ՅՈՅՍ, ՍԷՐ») – *Հօր զօրութիւն ձեզ մշտագոյն…*

Ստ. լս., գրչից՝ 224ա, 225ա, 226ա «Աւրհնութիւն ոտանաւոր»:

228բ երկոտասան գրով աստուածային անուանց աւրհնութիւն տաղիւ չափեալ ի համբական հանճար Յովհաննէս *նուաստ անձնէս իմաստուն քահանայից եւ փառաւոր տանուտէրաց եւ ժողովրդոց մերայի սեռիդ աստուածապահ քաղաքիդ* Լով *եւ ըստ անուան գծողիս՝ նուաստ* Յովհաննէս*։*

228բ **Յ***ինէն գըրեալս իմոյ մատեան,*
Ո*ղջոյն բարեւ խաղաղութեան,*
Վ*արդապետէ ունայնաջան,*
Ա*ւրհնութեան գիր պատճառ յիշման։*
Ն*ամակաւ հարց բարեւ շարժման*
Ն*ախապատիւ ձեր մեծութեանն,*
Է*րախտեաց ձեր մեզ լաւութեան*
Ս*էրն Աստուծոյ, զոր ձէնջ եղան։*
Վ*եհաքատակ կարգ սըրբազան,*
Ա*ստիճանացդ քահանայական,*
Բ*եառոր բամից ժողովրդեան,*
Գ*ըռնաբացիկ արքայութեան։*
Ա*րքայատոհմ Աբեղական,*
Պ*ետիցդ գըլուխ գըրեալ իշխան,*
Ե*րանաւոր եւ պերճական,*
Տ*ընտես գանձուցդ տէրունական,*
Ի *ժողովուրդ եկեղեցեան։*
Փոքուց մեծացդ համանգամայն
յօգում գըլխուն քրիստոսական,
յԱստուած նուաստէս առ ձեզ յայսքան
փոքրիշատէ սէր ծանուցման
միով բազում, զոր գըրեցան,
միով բազում, զոր մեզ ցուցաւ։
Հայր, Որդի, Հոգի։

228բ Գրչից ցուցում բնագրից անմիջապէս յետոյ. «ԲԺ. (12) գրով ոտանաւորին վերջն պիտէր. եւ աստ գրեցաք»:

3. *142բ-64ա, 165բ-8ա, 177աբ, 179բ-81ա, 182բ-3ա, 221ա-2բ* [Տաղ]

–142բ («ՍՏԵՓԱՆՈՍ ԳՐԻՉ») – Սէրովբէից Տէր խնամակին, որ գըթացար յանձն անարժան / Տանել յաւարտ զգիծ տիրական, որ ի շնորհաց հոգւոյն բըղխման, / Ետո՛ւր մեզ կեանս խաղաղական, մինչ ի սկըսեալ տառիս վախճան, / Փանաք գըրչիս եղէ՛ր պաշտպան եւ հասուցեր յաւարտ լըրման։ / Արդ, գոհանամ զքէն անխափան, պաղատանօք հայցեմ զայս բան, / Նախագասեա՛ զիս միաբան ի լուսաճեմ սըրբոց կայան։ / Ուղղապետեա՛ ինձ էական ի յանպատումըն յօթեւան, / Սոպալ յաւէտ զարմանազան ի յարութեան որդւոց մարդկան։ / Գովեստ բանից քոյին անուան արժանացայց ճառել պատկան, / Բետորական լինել նըման, աւրհնել զանուն քո իսկական։ / Ի գովեստ Հօրն համանգամայն եւ Սուրբ Հոգւոյն նորին բըղխման, / Զըքնաղագեղ երիցն անուան փառք եւ պատիւ այժմ յաւիտեան։

ա. *143ա* Աւետեաց Աստուածածնին՝ ի Ներսէս Լամբրօնացւոյ – *Աւր է աւետեաց ուրախութեան հընչումն… 143աբ* արտ. լս.՝ Փոխ – *Ողջո՛յն սիրալիր, բերկրեալ, աւրհնեալ, աստուածընկալ տաճար… (արտք. լս.՝ «Դուստր Միոնի», «Անեղ որդի», «Մայր Աստուծոյ», «Ով զարմանալի», «ես ձայն զառիւ՛»)։**

* Ծնթ. Տաղերը, փոխերը եւ նման այլ միաւորներ միմեանցից չտարանջատուած, բերուած միայն սկզբից, մէջտեղից, երբեմն վերջից հառատողեր կամ փոխ-ինչ աւելին: Հնարաւոր դէպքերում դրանք տարանջատել ենք:

143ա ստ. լս., գրչից՝ «Գրիգորիսին ձայն է»։

բ. *143բ* Տաղ սուրբ Յայտնութեան ճրագալուցի օրն («Ա-Դ») – *Այսաւր աւետեաց Գաբրիէլ ի լըրումն եղանի առ կոյսն Մարիամ… ա. 143բ Նոր ծաղիկ բըղխէ այսաւր… 143բ* [Փոխ] – *Այսաւր ի սուրբ ի յայրին… 143բ* արտ. լս.՝ Փոխ – *Այսաւր ցընծութիւն հողեղինացս…*

գ. *143բ-4ա* Տեառն Ներսէսի կաթողիկոս՝ ի սուրբ Աստուածածնին. խոսրովային ձայն – *Նոր ծաղիկ ցուցաւ…*

դ. *144ա* Տեառն Ներսէսի կաթողիկոսի՝ ասացեալ Ջրաւրհնեացն առաւաւտուն – *Աւետիս մեծ խորհրդոյ…*

ե. *144ա* Ներսէս կաթուղիկոս – *Այսաւր ի սկըզբան Բանն… 144ա* [Փոխ] – *Նոցին համաձայնեալ եւ մեք ցընծութեամբ…*

զ. *144ա* Տեառն Ներսեսի ասացեալ. խոսրովային – *Նոր եղեմ բանաւոր տընկոյն… 144աբ* արտ. լս.՝ Փոխ – *Մա՛յր Աստուծոյ, Մարիա՛մ, դուստըր Դաւթեան թագազարմն…*

է. *144բ-5ա* Նոր թագաւորին անժամանակ… *145ա* [Փոխ] – *Հայրն երկնանըման իջավանեալ…*

ը. *145աբ* [Տաղ Ծննդեան Տեառն] – *Գովեստով տաւնեն տեւնչմամբ տոհմըք տիրամայրն… 145բ* [Փոխ] – *Դու շուշան ծաղիկ անապական…*

Տե՛ս Մատենագիրք հայոց, հտ. ԺԳ., Գանձարան, գիրք Ա., Ամթիլիաս-Լիբանան, 2008, էջ 195, 197 (այսուհետեւ՝ գիրք Ա., եւ էջահամարը): 145բ ստ. լս., գրչից՝ «Ով զարմանալի»:

թ. *145բ* [Տաղ Հինգերորդ աւուրն առաւաւտին] – *կամիմ աստանաւր ըզաւետիսն երգել… (գիրք Ա., էջ 127)։*

ժ. *146ա* [Տաղ Ութերորդ աւուրն առաւաւտին] – *Սկըսեալն յանըսկիզբն ի Հաւրէ անժամանակ Որդին… 146ա* [Փոխ], արտ. լս.՝ «Սկիզբն էառ» – *Սկիզբն էառ լինելութեանց ի սկըզբանէ… (գիրք Ա., էջ 184, 211)։*

ժա. *146ա* [Այլ տաղ Գալստեան Տեառն ի տաճարն՝ ի Ներսիսէ է ասացեալս] – *Այսաւր նորահրաշ լոյսն ի յերկնից ծագեալ… (գիրք Ա., էջ 302)։*

ժբ. *146ա* [Այլ տաղ Քառասնաւրեայ գալստեան Տեառն ի տաճարն] – *Այսաւր ցընծայ երուսաղէմ եւ զուարճացեալ պայծառանայ… 146բ* [Փոխ] – *Ըստ նախահարցն թլփատի… (գիրք Ա., էջ 304, 226)։*

ժգ. *146բ* [Տաղ Յովհաննու Մկրտչին՝ ի Ներսիսէ կաթողիկոսէ] – *երեւմամբ Գաբրիէլի Զաքարիայ մարգարէի…*

Տե՛ս Մատենագիրք հայոց, հտ. ԺԴ., Գանձարան, գիրք Բ., Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 1169 (այսուհետեւ՝ գիրք Բ. եւ էջահամարը)։

ժդ. *146բ-7ա* Մեղեդի Ծննդեան եւ Փոխման Աստուածածնի – *Գոհար վարդն ինքնագոյն… 147աբ* [Յորդորակ՞] («Ա-Ք») – *Արեւ լուսատու, տաճար Աստուծոյ Մարիամ…*

ժե. 147բ Տաղ յԱռաքել վարդապետ[է] («ՏԷՐ ԱՌ[Ա]ՔԵԱ[Լ]*») – *Տունկ անմահութեան բողբոջեցար, սո՛ւրբ Կոյս…*

* Ծնթ. Ա եւ Լ տառերով սկսուող երեքական տողերը չգրած՝ տեղը բաց թողած։

147բ ստ. լս., գրչից՝ «Ո՛վ զարմանալի»։

ժզ. *147բ-8ա* [Տաղ ննջման Աստուածածնին Երորդ աւուրն է. հմմտ. ձեռ. 424, 201բ] – *Մեծացի՛ր այսօր, սո՛ւրբ Աստուածածին, / իջմամբ միածնին առ քեզ հրեշտակաւք… (գիրք Բ., էջ 1153)։*

ժէ. *148ա* Յորդորակ սուրբ Աստուածածնին («Ա-Ը») – *Աւետի՛ս քեզ, Մարիա՛մ, զոր Գաբրիէլ սկըզբնաւորեալ…*

ժը. *148աբ* Տաղ ի տեառն Ներսէս [Փոխ] – *Անարատ տաճար եւ առագաստ լուսոյ… (գիրք Բ., էջ 1128)։*

148ա ստ. լս., գրչից՝ «Ո՛վ զարմանալի»։

ժթ. *148բ* Տաղ տեառն Ներսէսի ասացեալ – *Այսաւր Գաբրիէլ հրեշտակապետն եկեալ… (գիրք Բ., էջ 1126)։*

148բ արտ. լս., գրչից՝ «Ո՛վ զարմանալի»։

ի. *148բ-9ա* [Տաղ շըրջակ ձայնի ասա՛ յեղմն] – *Խընկի ծառի նըման ես… (գիրք Բ., էջ 1158)։*

148բ արտ. լս., գրչից՝ «Քրիստոս փառաց»։

իա. *149ա* [Մեղեդի սուրբ եկեղեցւոյ] – *Քրիստոս եկեալ քահանայապետ, ը՛, սուրբ… (գիրք Բ., էջ 1112)։*

իբ. *149բ* [Տաղ սուրբ խաչին Քրիստոսի՝ Տեառն Ներսեսի ասացեալ] – *Նոր դրախտին եկեղեցւոյ ծառ կենաց տընկեալ ի մէջ… (գիրք Բ., էջ 1198)։*

149բ ստ. լս., գրչից՝ «Ի խաչի տընկ[եալ]», «Տապանակ կազմ՛»։

իգ. *149բ-50ա* [Տաղ խաչի երորդ աւուրն] – *Եսայիաս դիմեալ ասէր ի յեգեմայ եկեալ Փըրկիչն… (գիրք Բ., էջ 1122)։*

149բ ստ. լս., գրչից՝ «Այսաւր ցընծա Յէրուսաղէմ», «Ո՛վ պըսակըդ պարծանաց»։

իդ. *150ա* [Տաղ սուրբ խաչին՝ Ներսիսի կաթուղիկոսի ասացեալ] – *Փառաց թագաւորն ի խընդիր եղեալ իւրոյ… (գիրք Բ., էջ 1208)։*

150ա ստ. լս., գրչից՝ «Խոսրովայեն ձայն»։

իե. *150ա* [Փոխ] – *Որով ի դըժոխս իջեալ փըրկեաց զգերեալսն… (գիրք Բ., էջ 1238)։*

150ա ստ. լս., գրչից՝ «Ո՛վ զարմանալի»։

իզ. *150ա Տաճարին Սողոմոնի վարագոյրն հերձաւ…*

150ա արտ. լս., գրչից՝ «Գունդ սուրբ վկայից»։

իէ. *150աբ* [Մեղեդի աւոյշ] – *Ելեալ թագուհին հոգւով սաստիկ տենչալի…*

150ա արտ. լս., գրչից՝ «Վարագայ», «Յիսուս ոդ[ի]», «Ի խաչին»։

իը. *150բ* Տեառն Ներսէսի ասացեալ – *Նոր տաւնիւս զուարթնոց հրեշտակական դասուց…*

150բ ստ. լս., գրչից՝ «Ո՛վ, զարմանալի»։

իթ. *150բ-1ա* [Այլ տաղ սրբոց հրեշտակապետացն] – *Ի մեզ քաղցրութեամբ աղաղակեմք նայիլ… (գիրք Բ., էջ 1349)։*

լ. *151ա* [Յորդորակ հրեշտակապետաց] («ՁԱԻՐԱ-ՎԱՐ») – *Ձաւրք երկնային զըւարթնոց… (գիրք Բ., էջ 1353)։*

լա. *151աբ* Յորդորակ սուրբ Աստուածածնին («Ա-Ը») – *Աւետի՛ս քեզ, Մարիա՛մ, զոր Գաբրիէլ սկըզբնաւորեաց…*

լբ. *151բ* [ՓՈԽ] – *Սեաւ եմ, գեղեցիկ, դո՛ւստր Եւայի երուսաղէմ… (գիրք Ա., էջ 796)։*

լգ. *151բ-2ա* [ՓՈԽ] – *Անարատ տաճար եւ առագաստ լուսոյ… (գիրք Բ., էջ 1118)։*

լդ. *152ա* [Գրիգորի Նարեկացւոյ. ձեռ. 424, 128բ]. Տաղ Սըրբոյ խաչին – *Ես ձայն զառիւծոյն ասեմ, որ գոչէր…*

լե. *152բ* Տաղ եկեղեցւոյ՝ Առաքել[ի] վարդապետ[ի] – *Տաճար լուսոյ, տուն արքային…*

152բ արտ. լս., գրչից՝ «Հըրճուիմք այսաւր», «Յիսուս», «Այսօր ցընծայ»։

լզ. *152բ* Ներսէս Լամբրոնացւոյ – *Այլ այս նըշանըս քառաձեւ…*

152բ արտ. լս., գրչից՝ «Ինձ ում էտ»։

լէ. *152բ* Տեառն Ներսէսի ասացեալ – *Կենաց փայտ տընկեալ…*

152բ արտ. լս., գրչից՝ «Յարեւագ[ա]լի»։

լը. *152բ-3ա* Նոյն Առաքել ասացեալ – *Զորեքկերպեան թեւք սուրբ խաչին…*

152բ առտ. լս., գրչից՝ «Յիսուս»:

լթ. *153ա-4բ* Յակոբ եպիսկոպոսէ – *Մքանչելի սուրբ նըշանըդ պատուեալ…*

Ստ. լս., գրչից՝ 153ա «Վըկայից հանդիսից», 153բ «Հըրեշտիմ այսաւր», «Ձայն, որ զաշխարհս արար», 154ա «Յիսուս», «Այսօր ցընծայ», 154բ «Ո՛վ զարմանալի»:

խ. *154բ* Տաղ յարութեան՝ Վարդանի *(«Վ<ՎԱ>ԱՐԴԱՆԻ ԵՐ»)* – *Վասըն յարութեան աւուր Փըրկչին մերոյ…*

154բ ստ. լս., գրչից՝ «Այսաւր Գաբրիէլի», «Ո՛վ զարմանալի»:

խա. *155ա* Տաղ Պետրոսի հայրապետի – *Ի հանդէս տաւնի քո բախացեալ…*

խբ. *155ա* Մեղեդի Յովնանու մարգարէի – *Պատճառ պարծանաց մարգարէից գնդին…*

խգ. *155ա* Տաղ Վահանայ Գողթնեց[ւոյ] – *Վառեալ ի հոգւոյն ի սէր անմահ Բանին…*

խդ. *155ա* Տաղ Կիրակոսի եւ Յուլիտայ – *Սուրբ Յուլիտայ դուստըր մեծաց…*

խե. *155բ* Տաղ Կոստա[դիանոսի], Թէոդոս[ի] եւ Աբգարու – *Թագաւորին երկնաւորի պատկերակից կանգնեալ…*

խզ. *155բ-6ա* Տաղ Անտոնի ճգնաւորի եւ այլ միանձանց – *Անձամբ խոնարհիմք ի Ք.ի ճըգնութիւնըս քո…*

155բ ստ. լս., գրչից՝ «Ո՛վ զարմանիալի»:

խէ. *156աբ* Տաղ սրբոյն Սարգսի զաւրաւարի – *Յառաջ տեսողէն անմահ…*

156ա ստ. լս., գրչից՝ «Ես ձայն զաւիծուն զո[չեմ]», «Սուրբ Ոսկի բահանայդ նազելի»:

խբ. *156բ* Մեղեդի Ոսկեանցն – *Սուրբ Ոսկի քահանայդ նազելի…*

խթ. *156բ-7ա* Տաղ Ղեւոնդեանց բահանայից եւ Վարդանանց զօրականաց – *Ի հանդէս տաւնի ձեր…*

ծ. *157ա* Այլ տաղ Վարդան[այ] – *Աստուածային հոգւով լըցեալ…*

ծա. *157աբ* Թէոդորոս զին[ա]տոր («ՍՏԵՓԱՆՈՍԵ») – *Սիրով վառեցար ի սէր անմահ արքայի…*

ծբ. *157բ Խաղաղարար նոր թագաւոր…*

157բ առտ. լս., գրչից՝ «Յիսուս»:

ծգ. *157բ* Սըրբոյն Կիւրեղի եւ Աննայի – *Յիսո՛ւս, փառաց Հաւր միածին…*

ծդ. *157բ-8ա* Տաղ նոցին – *Հայրապետաց դասուց վեհին…*

– *158ա Ա՛ռ Հայրդ աղաղակեմ անառակին…*

– *158ա Մեղայ քեզ Քրիստոս Աստուած ապաւէն…*

– *158ա Գանգատ ունիմ ասել քեզ թագաւոր…*

– *158ա Ի յելս արեւու արեւ…*

– *158ա Ձայն այն, որ զաշխահս արար…*

– *158ա Դարձեալ նորոգեմ ըզքեզ…*

158ա առտ. լս., գրչից՝ «Ա՛ռ Հայրդ», «Ես ձայն», «Ի խաչին», «Վազար»:

ծե. *158աբ* Տաղ ի Ներսէս հայոց կաթողիկոս[է] – *Աւրհնեալ, որ եկիր եւ գաս… 158բ* [Փոխ] – *Վա՛յ իմ մեղուցեալ անձինս… (գիրք Ա., էջ 611):*

ծզ. *158բ-9ա* Տաղ Յոհաննէս Պլուզ վարդապետի ասացեալ. – *158բ Անդ, ի մէջ դրախտին…*

Հմմտ. Ա. Սրապեան, Յովհաննէս Երզնկացի, ուսումնասիրութիւն եւ բնագրեր, Երեւան, 1958, էջ 237, ձեռ. e:

– *158բ Ադամայ ստեղծուցն եկեալ յիւր պատկերքն… (հմմտ. նշ. աշխ., էջ 210):*

– *158բ Մէրըն կատարիչ հինն աւրինաց ուխտի…*

– *158բ-9ա Աստուածածնին սըրբուհի, ամենաւրհնեալ տիրուհի… (հմմտ. նշ. աշխ., էջ 241-247):*

158բ ստ. լս., գրչից՝ «Պատճառ պար[ծանաց], «Ողբ Աստուածածնին»:

ծէ. *159ա* Ողբ Աստուածածնին, որ ասէր ի դէմ խաչին – *Աստուածածին կոյսըն Մարիամ…*

ծը. *159բ Միրտ իմ սասանի, սաստի, կըսկծի…*

ծթ. *160ա-1ա* [Ջահարիայ վրդ., ձեռ. 7717, 205ա. Տաղ սրբոյ Աստուածածնին] («Ա-Ք») – *Ամէնաւրհնեա՛լ սըրբուհի, դո՛ւստըր Դաւթի արքայի… անմեղ, անարատ գառին տաշխ եւ կինամոն խընկին:*

կ. *161բ-2ա* [Յովհաննէս Երզնկացի]. Գովեստ ի սուրբ Աստուածածնին («Ա-Ք») – *Առաջնաճաշակ պըտ[ղ]ոյն մահուան առաջին մարդոյն… Քեզ, ո՛վ տիրածին սուրբ Կոյս, / երկըրպագեսցուք մեզ յոյս / գփառաւորեսցուք զՅիսուս, մայր՛՛:*

162ա ստ. լս., գրչից՝ «Տաղ Սրբոյ Աստուածածնին»:

Տե՛ս Ա. Սրապեան, Յովհաննէս Երզնկացի, ուսումնասիրութիւն եւ բնագրեր, Երեւան, 1958, էջ 249-250., ձեռ. j:

կա. *162բ* Առաքել վարդապետի ասացեալ՝ Գովեստ ի սուրբ Աստուածածնին – *Աւրհնեալ ես, սո՛ւրբ Աստուածածին… զօտարացեալ Քրիստոս ի սուրբ կամացն աստուածային, / մերձաւորեա՛՛ համբուրելով ըստ անառակին:*

կբ. *163աբ* Տաղ ամենայն սրբոց մարգարէից («Ա-Ք») – *Աստուածային խորոցն անճառ խորհըրդակից սուրբ մարգարէքն… Քրիստոսի նախաքարոզք, որում պատիւ, փառք յաւիտեանս:*

163ա ստ. լս., գրչից՝ «Ո՛վ պըսակըդ պարծ[անաց]»:

կգ. *163բ* Երկրորդ անձինսս տեառն Ներսեսի ասացեալ. Տաղ ամենայն սրբոց համօրէն հայրապետացն /// (շար.):

163բ ստ. լս., գրչից՝ «Ասի թագաւորեաց Տրդատ ձայնիւն»:

կդ. *164ա* [Տաղ] – (սկ.) */// ըզմարդիկ ի մեղաց ազատեալ, ողկուզաբեր որթ մեծ սորեկի… կուսանաց համայնից պանծալի, բարեխօս լե՛ր Որդւոյդ միածնի:*

կե. *165բ-6բ* Խրատ մանկագունից՝ Առաքել վարդապետի ասացեալ («Ա-Ք», «ՅԱՌԱՔԵԼԷ») – *Այբեն Աստուծոյ է աւրինակ, ուսուցանէ զքեզ համարձակ… Լեալ ըստ Թուղն այբուբենի, էին լուսոյ անճառելի:*

165բ-6ա ստ. լս., գրչից՝ «Առաքել վարդապետի ասացեալ՝ Տաղ խրատական մանկազունից»:

Տե՛ս Առաքել Բաղիշեցի, աշխ. Ա. Ղազինեանի, Երեւան, 1971, էջ 157-165, ձեռ. N:

կզ. *166բ-7բ* ստ. լս-ից՝ [Տաղ զարիպի] («ԱՅՍ Ա-ՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՐԳ») – *Աւտարութիւն է խիստ դիժար, որ ոչ լինի կամքն ի կատար... զիս Առաքէլ օտարական, յարժանաւոր առնէ՛ք յիշման:*

Տե՛ս Առաքել Բաղիշեցի, աշխ. Ա. Ղազինեանի, Երեւան, 1971, էջ 184-187, ձեռ. B:

կէ. *167բ-8ա* Աղօթք Առաքէլ վարդապետի ասացեալ («Ա-Ղ») – *Աստուածածնի՛ն ամէնաւուրհնեալ, ըզպաղատանըս մեր ընկալ... եւ յաղթեսցուք անառակին, խորտակեսցո՛ւք զէնս նորին*

167բ առաջ. լս, գրչից.՝ «Աստուածածնի», «Խաչի», «Առաքելոց», «Մարգարէից», «Յովանու», «Ստեփանոսի», «Լուսաւորչի», |168ա| «Մարտիրոսաց», «Ճգնաւորաց»:

կը. *177աբ* [Տաղ աղաւթից եւ ողորմութեան՝ Առաքել վարդապետէ. ձեռ. 424, 91ա] – *Քան զամենայն գործ բարուվթեան, զողորմութիւն է պատուական... ես՝ Առաքել, զձեզ աղաչեմ, հա՛րք եւ եղբա՛րք ամենեքեան՝ / ողորմելով զիս յիշեցէ՛ք առ ողորմած Տէրն էական:*

Տե՛ս. Առաքել Բաղիշեցի, աշխ. Ա. Ղազինեանի, Երեւան, 1971, էջ, 166-169, ձեռ. L:

կթ. *179բ* ստ. լս-ից՝ [Ներսէս վարդապետի] – *Յիմար մըտաց եւ եղկելի, երագս ի չարն եւ ոչ բարի... երգեմք աղերըս մաղթելի, փառաւորեմք զՀայր եւ զՈրդի:*

ճ. *179բ-80ա* ստ. լս-ից՝ [Մարտիրոս իրիցու] («ՄԱՐՏԻՐՈՍԻՆ Է ԱՅՍ ԳԻՐՔՍ») – *Մաքուր գընդին Տեառն Յիսուսի առաքելոցըն համայնի... սապէս եւ Հօրն համապատուվթիւն եւ Սուրբ Հոգոյն իւր էակցի:*

հա. *180աբ* ստ. լս-ից՝ [Ստեփաննոսէ ասացեալ] («ՎԱՐԴԱՆ ԱՌԵՂԱՅ») – *Վա՛րդ, անթառամ ծաղկի նըման կու փայլես, / Լուսաւորչի Մեծի յաթոռ բազմեալ ես... մոխրաթաւալ ժըտեալ աղաղակեմ ես, / չունիմ ճար եւ հընար, բայց ի քէն եւ ես:*

Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (ԺՋ-ԺԷ. դդ.), աշխ.՝ Յասմիկ Սահակեանի, հտ. Բ., Երեւան, 1987, էջ 166-168, հրատարակուած այս ձեռագրից:

180ա, 180բ ստ. լս., գրչից՝ «Կաթուղիկոսի»:

հբ. *180բ-1ա* ստ. լս-ից՝ [Ձաֆարիա վարդապետի]. (սկզբնատառերը՝ «ՁԱՔԱՐԻԱ ՐԱԲՈՒՆՈՅ», վերջնատառերը կրկնատառերով՝ «ՅԷՐԷՄԻԱՅ ԾԱՌԱՅԷԴ») – *Ջօրացեալդ ի Տէր Յիսուս, / Արիացեալդ ի յարմատոյ... եւ ծնանիցիս զբաղձան հոգոյս, / դիցես ըզդեղսըդ հիւանդիդ:*

հգ. *182բ-3ա* [Տաղ վարդի] («ՎԱՐԴԱՆԻ Է ԱՍԱՑԵԱԼՔՍ») – *Վարդն է բացուեր առաւօտուն գոյնըզգոյն, / հոտըն բուրէր անմահութեան զօրն ի բուն... որ զուարճացեալ լիանայի քո հոտոյն, / գոհութիւն, փառք տայի ստեղծօղ Աստըծոյն, / Աստըծոյն մի թա՛՛: / Սա յարմարեալ թուականի Մեծ հայուն / հազար հարիւր ութերորդ աւելորդոյն (1659), / ճանապարհին յերուսաղէմայ գալուն, / աբեղայի ծոյլ Վարդան անուանելոյն: Մի՛ թափիր վարդ՛՛:*

Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (ԺՋ-ԺԷ. դդ.), աշխ.՝ Յասմիկ Սահակեանի, հտ. Բ., Երեւան, 1987, էջ 162-166, ձեռ. C5

հդ. *221ա-2բ* ստ. լս-ից՝ [Հեթում թագաւորի ասացեալ է ոտանաւորս այս] – *Իր ծառայեալս եմ բիւր ախտից, / կապեալ տոռամբ չար շըղթայից... զերիսն ի մի բնութեան նոյնում:*

4. *178բ-9բ, 181բ-3ա* [Գովասանք]

ա. *178բ-9ա* Գովասանք հայրապետի («Ի ՀԱՐԱՊԵՏՆ ԱՍԱՑԵԱԼ ԻՄ») – *Ի քէն հայցեմ ես, Մա՛րը Հոգի, շարժեա՛ լեզուս ի դէմ բանի... մարմնով պանծացեալ եւ պայծառացեալ, հոգով զարդարեալ:*

բ. *179աբ* Սուրբ Նշանի վանուցն («ԳԱԲՐԻԷԼԻ») – *Գերապատիւ յոյժ գովելի, գերանըկար եւ բաղձալի... եւ դուք յիշիք այնմ աւետնի եւ Քրիստոսի դաստատանի:*

գ. *181բ-2ա* ստ. լս-ից՝ [Սուրբ Խաչի վանուց գովասանքն է] («ՎԱՐԴԱՆԻ Է ԱՍԱՑԵԱԼ») – *Վարդապետն Յիսուս Աստուածն համայնի / եւ տա խընդրողաց շնորհաբաշխ հոգի... որչափ որ գովեմ, աւարտ ոչ ունի, / եղբա՛րք իմ, լերո՛ւք անմեղադրելի: / Աստուած ողորմի հոգւոյն շինողի / Յովաննէս անուն սուրբ վարդապետի, / զիս ի միասին ո՛վ ոք յիշեսցի, / խընդրեմ յԱստուծոյ յինքն յիշեալ լինի: / Լըցեալ թուականի հայոց տումարի / հազար եւ հարիւր քըսան եւ հընգի (1676), / առ ոտըն Սըրբոյն վանք Աստուածածնի, / վանուց Սուրբ Խաչի գովքերն ասացի:*

Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (ԺՋ-ԺԷ. դդ.), աշխ.՝ Յասմիկ Սահակեանի, հտ. Բ., Երեւան, 1987, էջ 168-171, ձեռ. A:

դ. *182աբ* ստ. լս-ից՝ [Երեմիայի ասացեալ Աստուածածնի գովք] («ԵՐԵՄԻԱՅԻ Է») – *Երանեալ կոյս սուրբ Տալիթայ, / մէրիեմ ուրուհի փաք վէուրու քերի սուլթան... անմեղադիր լինել հայցեմ, / զիյատէ, սիզէ եասըր կետայ Քեօմուրճիզատէ (հայատառ թուրքերէն):*

Հայատառ թուրերէն հատուածի ընթերցումը՝ ըստ Անի Ժ. Աւետիսեանի:

ե. *182բ-3ա* («ՎԱՐԴԱՆԻ Է ԱՍԱՑԵԱԼՔՍ») – *Վարդն է բացուեր առաւօտուն գոյնըզգոյն... սա յարմարեալ թուականի մեծ հայուն հազար հարիւր ութերորդ աւելորդոյն, / Ճանապարհին յերուսաղեմայ գալուն աբեղայի ծոյլ Վարդան անուանելոյն. / Մի՛ թափիր, վա՛րդ՛՛:*

Զ. *132բ-4բ* ստ. լս.-ից՝ [Յորդորակ վարդապետաց] – *Ապաւինելով ի Հոգին Սուրբ Աստուած՝ բարի եւ ուղիղ... ծածկին բազմութիւնք մեղաց եւ ջնջին անօրէնութիւնք մեր անթիւ. ամէն:*

է. *142աբ* Վասն զաւազանացն – *Հռոմայ ամբոն Սուրբ Պետրոսի վիմին է, որում եւ Տէր զփականս արքայութեան... ի վեր բարձր նըստուցանեն եւ Քրիստոսի փառք յաւիտեանս:*

142ա ստ. լս. գրչից՝ «Եպիսկոպոսք եւ վարդապետք»:

Ը. *164ա-5ա* Կարգ եւ թիւ եւ անուանի կաթուղիկոսանցն հայոց՝ սկսեալ ի սրբոյն Գրիգորի Լուսաւորէն մինչեւ ցայս վայր՝ ի տէր Յակոբ կաթողիկոսն՝ հաւաքեցեալ ի Սաղոմոնէ պաշտոնատարէ՝ ի փառս մեծին Աստուծոյ Տէր սուրբ – *Գրիգոր Լուսաւորիչն՝ ամ. (30), Արիստակէս՝ ամս. է.... Մօսէս, Փիլիպպոս Հաղբակացի, Յակօբ Ջուղայեցի:*

164ա ստ. լս., գրչից՝ «Կաթողիկոսք»:

Թ. *168բ* [Մասն աղօթի] – *Հաւր. Հայր անըսկիզբն եւ ողորմած, հողեղէն բնութեանս գըթայ... անմահից արքայ եւ Տէր եւ /// (վջ.):*

Ժ. *169աբ* ստ. լս-ից՝ [Դատաստանի վերջի օրն] – *(սկ.) /// եւ յական թօթափել յանկարծակի որպէս փայլակն... եւ Գաբրիէլ հրեշտակապետն գոչէ ահաւոր եւ սոսկալի ձայնիւ գալէլուն:*

ԺԱ. *169բ* Ներսէսի կաթողիկոսի, եղբօր Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի – *Մի՛ ոք արեան մերձաւոր ազգակցաց պսակ աւրհնութեան... բաւական համարեցան զազգակցութիւն առ սէր:*

ԺԲ. *169բ-75ա, 232ա-307բ* [Մատենագրութիւնք Յակոբայ Ղրիմեցւոյ]

1. *169բ-75ա* Ի խնդրոյ Թումայ վարդապետէ աստուածաբնակ սուրբ ուխտին Մեծոքայ վանիցն եւ ծառայաբար կատարեալ աստուած[ակ]իր հոգելից առն Աստուծոյ Յակոբ վարդապետի Ղրիմեցւոյ աշակերտ Գրիգոր վարդապետի Երզնկացւոյ Յաղագս յազգ[ակ]անութեան բաժանման: Յաղագս յազգականութեան – *Գիտելի է՝ յազգականութիւն տարորոշեալ յանձանցն եւ ոչ հատանին... եւ այս շատ եւ բազում լիցի, որ ցուցեալս եղեւ ի մէնջ. եւ Քրիստոսի փառք յաւ՛՛ (աղիւսակք՝ 170բ, 171բ, 172բ, 173բ):*

Ստ. լս., գրչից՝ 171ա «Յազգականութիւմ», 172ա «Կնքաւորութիւն», 173ա «Հոգեւոր ազգականութեան», 174ա «Ծառն աւրհնակ»:

2. *232ա-314բ* [Յակոբ Ղրիմեցի. ձեռ. 739, 58բ] Մեկնութիւն տումարի, զոր խնդրեաց Թոմա վարդապետն Մեծոփա վանից աստուածաբնակ ուխտին եւ սիրով զհայց[ուածս նորա կատարեալ Յակոբ վարդապետի Ղրիմեցւոյ]

Տե՛ս ձեռ. 739, 58բ-178ա: ա/232ա-7բ : բ/307բ-11բ Յիշատակարան/311բ-2ա:

Ծնթ. 241ա, 263ա, 301ա՝ ունեն բոլորակ, 312ա-4բ՝ բոլորակ եւ աղիւսակ. 312ա՝ Խառակուսի՝ մէջը շաբաթուայ օրերը խորհրդանշող 7 բաժանումով եւ 6 շրջանով բոլորակ, խառակուսու անկիւններում՝ «Գարնանամուտ, Ամառնամուտ, Աշնանամուտ, Ձմեռնամուտ», ներեւում ունի հրահանգ՝ «Այս բոլորակս ցուցանէ է.երեակով պատկերն դ. ալ մի աւր, եղբա՛յր, բարի», 312բ՝ 2 անհաւասար բաժանումով ուղղանկիւն, մէջը 2 բոլորակ՝ վերեւում 8 բաժանումով եւ 3 շրջանով, ունի հրահանգ՝ «Զմոլորական սոսա իմացի՛ր, զոր չինայ իմաստասէրն գըլտան...», ներեւում 8 բաժանումով եւ 8 շրջանով՝ Ա-է եւ խաչանշան բաժիններով, 313ա՝ 2 անհաւասար բաժանումով ուղղանկիւն, մէջը՝ վերեւում 12 բաժանումով եւ 11 շրջանով բոլորակ՝ տումարական զուգադիր, ներեւում՝ ձախ կողմում 35 բաժանումով եւ 3 շրջանով, աջ կողմում 7 բաժանումով եւ 3 շրջանով բոլորակներ՝ կենտրոնում համապատասխան հրահանգներով՝ «Այս բոլորակս ցուցանէ յայտնութենէն ի յառաջաւորն, թէ քանի աւր է տարոյ գերով...», «Այս բոլորակս ցուցանէ Վարդավառէն ի յԱստուածածինն, թէ քանի շաբաթն է...», 313բ՝ վերեւում 8 բաժանումով եւ 11 շրջանով բոլորակ՝ Ա-է եւ խաչանշան բաժիններով, ներեւում՝ աղիւսակ՝ 9 սիւն եւ տող 8, ունի հրահանգ՝ «Վիճակս խիստ փորձած է, որ ճշմարիտ է կամ պատերազմի... փաղչի կամ մեռանի», 314ա՝ ուղղանկեան մէջ բոլորակ՝ 30 բաժանումով եւ 2 շրջանով՝ կենտրոնում՝ «Այս Լ.եակ (30) բոլորս ոչ միայն Լուսին առնէ...», 314բ՝ ուղղանկեան մէջ բոլորակ՝ ներգծուած փոր 12 բոլորակ, 6 շրջանով, կենտրոնում՝ «Այս բոլորս լուսնի է օրն ԻԺ. (12) մասն հեռանայ եւ մօտենայ, մինչեւ ՃՁ. (108) մասն: Կարմիր գիրն լուսնի աւուրն թուխն հանդիպէ»: Հմր 739 ձ-ի նկարագրութեան մէջ 177բ էջի յիշ-ի յապաւուած սկսուածքն այստեղ հետեւեալն է. «Փա՛ռ անբաժանելի երեակ աննիւթաւորութեանն եւ միակ բնութեանն՝ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԳ. *175ա-9բ* [Մանումք]

ա. *175աբ* [Գրիգոր Տաթեւացի. ձեռ. 2220, 314բ-5բ] Վասն ազգականութեան – *Հարց՝ ո՞րն է ք. ազգն, որ ք. պորտ կոչեմք... զի նա մարմնոյ եւ արեան ազգակից լինի: Այսքան առ այս:*

բ. *176ա* ստ. լս-ից՝ [Բառարութիւմ երկնի եւ երկրի] – *Եւթն աստիճանք են խորութիւնք անդնդոց... յառաջին աստիճան հաստատեալ է՝ [ա.] օդք, բ. ամպք, գ. Լուսին, դ. Արեգակն, ե. հոգիք մարդկան, զ. աստեղք, է. ասեն երկին. այս է բարձրութիւն:*

գ. *176ա* ստ. լս-ից՝ [Ստեղծուածք] – *Առաջին օրն յարարչութեան է՝ Ա. երկինք, Բ. երկիր, Գ. հողմք, Դ. ջուր, ե. հուր, Զ. լոյս, է. խաւար... Վեցերորդ օրն՝ ժը. չորքոտանիք, ժԹ. գազանք, ի. զեռունք, իա. սողունք, իբ. մարդն:*

դ. *176ա* Այս ԻԲ. գործ Աստուծոյ եւ ԻԲ. գիրք – Ա. Ծնունդ, Բ. Ելք... ԻԲ. Դանիէլ: Իսկ ի մարդալոյն Աստուծոյ գիրք եւ գործ Գ. Մկրտութիւն, ԼԳ. Մարմի<ւ>նն ուտել, Յարութիւն եւ Քրիստոսի փառք յաւիտեան:

ե. *176աբ* [Յաղագս արտաքին գրոցն] – *Ուսուցին մեզ ամենայն Աստուածաշունչ գիրք, զի եղան անմիտք...*

եւ Նոր կտակարանքն ամենայնն ՓՇՂԱ. (8581) տուն է. եւ Հին եւ Նորն ընդ ամենայնն ԺԷՌՉԻ. (17720) տուն է:

զ. *177բ* Խրատ եւ ոտանաւոր յաղագս շարական ղեղելոյ. Յովասափի ձայն է – *Յորժամ որ դու կամիս քաղել շարական... աստուածեղէն տուն<մ> արարիչէն / ես ասացի ողբէն, ապա մաղթանքէն: / Մեղսասէր ՚ւ անարժան Յակոբ անպիտան, / քեզ ո՞վ եւս հրըրաման զայս ասել յատեան, / ընթերցողք ՚ւ ընդունօղք եւ զսակաւ զայս բան / Հայր մեզայ ասացէ՛ք աւրհնեալ յաւիտեան:*

է. *177բ-8բ* Խրատ եւ հարցմունք եւ պատասխանիք զանազան, հարկաւորք եւ պիտանիք, զոր արաբեալ է ֆաջ հոետորն եւ տիեզերալոյս վարդապետի Գրիգորի եռամեծի եւ Տաթեւացոյ. Յաղագս շարականաց, թէ որպէս պարտ է ղաղեմք – *Պատասխանիք. նախ՝ ըստ աւուրց, երկրորդ՝ ըստ համանմանութեան... ըստ առաքելոյն Պօղոսի, որ ասէ. նախ՝ զառաքեալսն, երկրորդ՝ զմարգարէսն, երրորդ՝ զվարդապետս:*

ը. *178բ* Խրատ եւ կարգ շարական ղաղելոյ՝ Ղուկաս վարդապետի ասացեալ – *Սեպտեմբերի Ը. տօն է ծննդեան ամէնաւրհնեալ Աստուածածնին... եւ Աստուածածնին տօն է. աւրհնութիւն Գկ.:*

թ. *179բ* Սուրբ Նշանի վանից ի վերայ գմբէթի երկաթագիրն է այս – *Փառաց տաճարս աստուածային / յերկր[ի] դըրախտ կենաց փայտին, / որ է պատկեր երկնից վերին, / եւ եռանձնեանըն կայանին, / ի ծնընդենէ մարմնոյ Փըրկչին / երեք հարիւր եւ հազարին / ութ եւ յիսուն (1358) սկըսեալ ամին / կանգնեալ անուն Սուրբ Նըշանին / սատարութեամբ իւր ծառային / Յովանէսի կրօնաւորին / եւ հարազատ յեղբարց նորին / եւ ըստ յոգւոյ որդոց բնաւին:*

Ծնթ. Սա Ղրիմի Ս. Խաչ վանքի Սուրբ Նշան եկեղեցու «գմբէթի թմբուկի բիւրեղին, խոշոր գեղեցիկ ծաղկազարդով» արձանագրութիւնն է, որի նկարը, վերծանութիւնը եւ նախորդ հրատարակութիւնների թուարկումը տե՛ս Դիւան հայ վիմագրութեան, պրակ է., Ուկրաինա, Մոլդովա, կազմեց Գ. Գրիգորեան, Երեւան, 1996, էջ 103, արձ. Հ^{մր} 206: Ըստ այսմ՝ արձանագրութեանս առաջին հրատարակութեան պատիւը ձեռագիս գրիչ Վարդան եպիսկոպոսինն է:

ԺԹ. *185ա-218բ, 219բ-20ա, 222բ-3ա* [Բանիմ տոմարականք-աստղաբաշխականք]

ա. *185ա* [Բոլորակ-աղիւսակ. կոր տողերի խորագրերը՝ Գիր վերին խորանի. Աղէկսանդրացի, անծեռնալի, մարգաց, էզայէ] – *Կա՛լ զգիր վերին խորանի...*

Ծնթ. 185ա՝ ուղղանկեան մէջ բոլորակ՝ 20 բաժանումով եւ 6 շրջանով, ներեւում հրահանգ՝ «Կա՛լ զգիր վերին խորանի Յայտնութենէ, տո՛ւ առաջի... ի վերայ բե՛ր, լրում է Հռոմի» եւ աղիւսակ՝ 9 սիւն, 15 տող՝ «Կրկնակ: Ամիսք եբրայեցոց: Յարակայ: Ամիսք Արաբացոց: Կիսակ: Ամիսք Մակեդոնացոց: Վերադիր: Ջատկի լրմունք Գ. ազգ: Քանիք...»:

բ. *185բ* [Ամիսք եբրայեցւոց, արաբացւոց, մակեդոնացւոց. աղիւսակ] – *Կրկնակ. ամիսք եբրայեցւոց: Յարակայ. ամիսք արաբացւոց...*

գ. *186ա-7բ* Պատճէն տումարի եբրայեցոց – *Թուական այսպէս արա. կա՛լ ՐՋՀԶ. (5976) եւ զՀայոց մեծ թուականն...*

Ծնթ. 187ա՝ ուղղանկեան մէջ 3 բոլորակ՝ վերեւում՝ 12 բաժանումով եւ 9 շրջանով՝ Ամիսք եբրայեցոց, ներեւում նախ կողմում՝ 19 բաժանումով եւ 2 շրջանով, կենտրոնում հրահանգ՝ «Կա՛լ մի ի խորանացն եւ զթիւն միաւորեա՛յ եւ զվերադիր տառոյն ե՛րթ եւ այլն...», աջ կողմում՝ 7 բաժանումով՝ Ա-է, եւ 2 շրջանով, կենտրոնում հրահանգ՝ «Կա՛լ զՀայոց մեծ թուականն Գ., ի վերայ բե՛ր...», 187բ՝ աղիւսակ՝ 14 սիւն եւ 13 տող՝ «Կրկնակ: Ամիսք Ասորոց: Կիսակ. Կրկնակ: Ամիսք Յունաց: Կիսակ. Յարակայ: Ամիսք Հռոմայեցոց: Քանիք: Մեծ յարակայ: Միջին յարակայ: Փոքր յարակայ...

դ. *188ա-91ա* Պատճէն տումար[ի] ասորոց եւ յունաց զկնի հռոմայեցոց երթայ – *Թուական ասորոց այսպէս. կա՛լ Հե. (75) եւ զհայոց մեծ թուականն ի վերայ բե՛ր... Վերադիր ասորոց այսպէս. կա՛լ զթվական եւ ե՛րթ ԺԹ. ԺԹ. (19, 19), որ մնա՛յ բազմապատիկ...*

Ծնթ. 190ա՝ 12 փոքր ներգծուած շրջանակով եւ 7 շրջանով բոլորակ, ներեւում հրահանգ՝ «Բոլորակիս գըրեան որ կայ, / Արեգական Լուսնի սոռա, / Քանի մասունք կու հեռանայ... այս է Լուսնի կատարումն», աղիւսակ՝ 190բ՝ 12 սիւն եւ 20 տող՝ «Վերադիր: Հռոմայեցոց առաջաւորք: Քանիք: Րոպէ...», 191ա՝ 13 սիւն, 13 տող՝ «Կրկնակ: Ամիսք հռոմայեցոց: Քանիք: Կիսակ...»:

ե. *191ա-3բ* չ – *Կրկնակ ամսոց այսպէս. կա՛լ Յունվարի ամիսն եւ ե՛րթ է. է., որ մնայ, կրկնակ է... (193բ՝ 12 բաժանումով եւ 6 շրջանով բոլորակ՝ տոմարական զուգադիր):*

զ. *194ա-5բ* Եբրայեցոց տարեմտի ԻԲ. ամսոյն Մարտի, Նիսանի...

Ծնթ. Աղիւսակ՝ 194բ՝ 10 սիւն, 20 տող՝ «Հռոմայեցոց եւ իւրոց Գ.: Քանիք: Սարկաւագի Հայոց: Քանիք: Եգիպտացոց եւ իւրոց է.: Քանիք: Եբրայեցոց եւ իւրոց Գ.: Քանիք: Անշարժ եղանակ աւուրց ԲԺ. ազգաց»: 195ա՝ ուղղանկեան մէջ 3 բոլորակ. վերեւում՝ 9 բաժանումով եւ 10 շրջանով՝ տոմարական զուգադիր, ներեւում՝ նախ կողմում՝ 35 բաժանումով եւ 4 շրջանով՝ տոմարական զուգադիր, աջ կողմի 3 շրջանով բոլորակը դատարկ: 195բ՝ 14 սիւն, 14 տող՝ «Կրկնակ: Ամիսք Հայոց: Կիսակ: Քանիք: Եաւթներեակ: Յարակա...»:

է. *196ա-202բ* Պատճէ հայոց տումարին մեծ – *Կրկնակ ամսոց այսպէս. կա՛լ զՆաւասարդի ամիսն եւ ե՛րթ է. է., որ մնայ, կրկնակ է Հռոմ... Հոկտեմբեր Ա. Յունաց, Նոյեմբերի Ա. Ասորոց:*

Ծնթ. ստ. լս., գրչից ՝ 197ա, 198ա «Տումար Հայոց», 199ա «Տումար հայի», 200ա «Հայոց տումար», 200բ «Ջուգաւորութիւն», 201ա «Ամսանաւանջ», «Թուական», 201բ «Ջատիկ», «Րոպէ», 202ա «Եւ կէտ են չորս», «Կատարումն լուսնի»:

ը. *202բ* ստ. լս-ից՝ [Յերկնից բառնութիւնն] – *Եթէ*

կամիցիս գիտել զբարձրութիւնս յերկնից... երէք՝ Արեգակն, չորս՝ աստեղքն։

թ. *203ա* ստ. լս-ից՝ [Ամէն ազգաց թուականի] – *Հինգ հոգիք մարդկան ժողովեալ են ՀԲ. (72) ազգ եւ լեզուք. եւ այլ ազգք թուականք գեղեցիկ կալ... եւ տարեմուտն տաճկաց Մարտի ԺԱ.ն է։*

ժ. *203աբ* [Դարագլուխ] – *Թուականք յԱդամայ մինչեւ ի ջրհեղեղն ամք ՍՄԽ. (2240)... եւ ըստ եօթանասնից ՌՃՂԸ. (5198) ամ։*

ժա. *204ա-6ա* [Ղուկասու Կեղեցւոյ Պատճէն Հռոմայեցւոց տոմարի*]. Պատճէն Հռոմայ մեծ տումարին, / պարզեալ հարանցըս մեր նախկի[ն], բայց արդ, Ղուկասըս Կեղեցի ոտանաւոր շարադրեցի – *Անուանք ամսոց հռոմայական / Յունվար, Փետրվար, Մարտ գարնան... այլ սա մընայ անխախտելի / մինչ ի գալուստըն Քրիստոսի։*

* Ծնթ. Խորագրումն ըստ Համառօտ ցուցակի՝ Ա., էջ 1028: 204ա ստ. լս., գրչից՝ «Ոտմ Հռոմացոց տումարին»:

ժբ. *206ա-7բ* ստ. լս-ից՝ [Վահանայ ասացեալ՝ Վասըն գըրոց տարեաց նոր] – *Ա՛ռ զՅայ[տն]ութեան միջոցն, որ[ն] հինգ Թիւ գընաս, զոր պակասեն... (փըցուն գըրիչս ի Վահանէ...) եւ ինքն յիշեալ լիցի Տեառնէ ի միւսանգամ գալըստենէ։*

ժգ. *207բ-13ա* [Վարդանայ Կաֆայեցւոյ տոմար*] – *Վարդան՝ ծառայ Հայր Աստուածոյ եւ պաշտաւնեայ Տեառն իւրոյ, / խորհուրդ արար շարադրելոյ ազգին Հայոց մեծ տումարոյ։ / Այլեւ ջանիւ ոտք հանելոյ, դիւրեաւ մանկանց ուսանելոյ... հազար Ճ. Թուականի Իե. յարաբարդի, (1676), առ ոտըն Սուրբ Աստուածածնի եօթներեակ է բոլոր տարոց / եւ այլքն որպէս հռոմայեցւոց։*

*Ծնթ. Խորագրումն ըստ Համառօտ ցուցակի՝ Ա., էջ 1028: 207բ-8ա ստ. լս., գրչից՝ «Հայոց տումարն. ոտանաւորի». նման՝ 209ա, 210ա, 211ա:

ժդ. *213բ* [Առաքելի Սիւնեցւոյ Վասն ԲԺ.ան (12) կենդանակերպից, ԲԺ.ան (12) ազգաց եւ ԲԺ.ան (12) անդամոց. Հոմերապէս ոտանաւոր. ձեռ. 35, 122բ] – *Աշխարհս ունի ըզձեւ մարդոյ / երկոտասան անդամք մարմնոյ... (Տէր Առաքէլ գրեցի զայս բան...) այսպէս ոտցա աւանդեցան՝ / առեալ զազդումն յաշխարհըս տան։*

ժե. *213բ-5ա* Վասն է. մոլորականացն եւ ԲԺ. (12) կենդանակերպիցն, թէ ո՛րք որոց են կամ ո՛րպէս ընթանան, կամ զի՛նչ է գործ նոցա (ա-ե.) – *Կան է. աստեղք մոլորական, կենդանակերպք՝ ԲԺ.[ան] (12)... զի ի սոսա գարըն լինին խառնահաւատքն ամենեքին։*

ժզ. *215ա* Վասն ԲԺ. (12) հողմոց – *Հընչեալ հողմունքըն զանազան / ի Դ. կողմանց աշխարհի գան... այս են հողմունքն ամենեքին / եւ այսքան գործ յատուկ նոցին։*

ժէ. *215աբ* Վասն աստեղաց թուոյ կենդանակերպիցն – *Ոյն, որ իշխան է ամբրոպայ, / ԺՋ. (16) աստղ կայ ի նըմայ... ԺԷ. (17) աստղ կայ ի նըմին։*

ժը. *215բ* Վասն է. մոլորականացն – *Ջօհալ աստղ է ամպահոլով, / մուշթարին պարզ օգախառնով... Լուսինըն պարզ եւ սառուցիչ. / այս յատկութիւնք եօթանց աստղից։*

ժթ. *215բ* Ի պարսից լեզուէն ի մերս անուանիմ մոլորականացն – *Բայց ըստ լեզուաց ազգին պարսից / եւ ըստ հայոցըս բարբառից... Ղամար կոչեն զանուն Լուսնին, / միայն անուամբ զանազանին։*

ի. *215բ* Վասն ընթացից արեգականն առ կենդանակերպսն – *Այլեւ յայտնեալ մեկնեմ զայս բան / յատուկ-յատուկ առանձնական... եւ ընդ Ջրկան ոտից թաթին. / այս է յատուկ ընթացք նորին։*

իա. *215բ-6ա* Եւ թէ յոռո՞ւմ աւր ամսոյն մտանէ Արեգակ ի կեդրանակերպսն – *Ի ԻԲ. Մարտի ամսոյն՝ ի ԺԴ.ըն Արեգի... լոյսն յարտահոյրըն մըտանի։*

իբ. *216աբ* Վասն ընթացից արեգական, թէ յոռո՞ւմ ժամում մտանէ ի կեդրանակերպսն – *Յորժամ ի խոյն գայ մըտանէ / ԺԲ. (12) ժամ ի տուընջենէ... առաջին ժամն ի ցորեկէ։*

իգ. *216բ* Վասն անուանց ժամուցն – *Այլեւ զայս ցուցեալ յայտնեմ, / զանուանք ժամուցն թէ որպէս են... զտիւ եւ զգիշերըն վըճարեալ։*

իդ. *216բ-7ա* Աւտրճ պահպանութեան այս են – *Յունվար երկուսն եւ ի չորսին, / Փետրվար Ջ. եւ ի քսանին... հընարեա՛, զի չար քո խափանին։*

իե. *217ա* Վասն ԲԺ. (12) կենդանակերպիցն, թէ որպէս ունին զբնութիւն Դ. տարեաց – *Կենդանակերպքն ամենեքին զբնութիւն տարերցս այսպէս ունին... Խեցգետին, Կարիճ եւ Ջուկըն ջըրոյ։*

իզ. *218ա* Յաղագս ընթացից արեգակ[ան] ԻՀ. (28) ամաց եւ շրջագայութիւն Լուսնի Թ. եւ Ժ. երեակ ամաց – *Որ լինի միահամուռ ընդ ամենայն ամք Թուով ՇԼԲ. (532)... ԺԹ. (19) ամն շաբաթանայ ԳԺ. (13) Լուսնի ամսոյն։*

իէ. *218բ* Ստեփաննոս իրիցու տումարագիտի՝ որդւոյ Յոհաննիսի բահանայի ասացեալ – *Յաղագս ընթացութիւն արեգակ[ան] ԻՀ. (28) ամաց, եւ շրջագայութիւն Լուսնի ԺԹ.եակ (19) ամաց... զոր ինչ եւ խորհի առնել. օգնեա՛յ Յիսուս Քրիստոս՝ Աստուած ճշմարիտ։*

218բ ստ. լս., գրչից՝ «Կատարումն լուսնի»:

իը. *219բ* ստ. լս-ից՝ [Երկնից չափութիւն] – *Այս է կերպարան եւ նմանութիւն գետնին ընտրեալ իմաստնոց, թէ որպէս է ցամաքս ի մէջ ծովու... որ ի միջոցի են կղզիք եւ աշխարհք, եւ այսպէս՝ արա՛ արեւելք դէպ երեսիս<u>ս</u> եւ ուղիղ քննեացես զսա, հա՛րք եւ եղբա՛րք իմ։*

իթ. *220աբ* [Վասն արեգական] – *Եթէ կամիցիս գիտել, թէ Արեգակ այսօր քանի հոլովում առնու... Յուլն Բ. պահ, եկաւորն՝ Գ. եւ այլն կար՛։*

լ. *222բ-3ա* ստ. լս-ից՝ [Վասն Ծոազատկին] – *Նաեւ ի Թուոջ Փըրկչին ՌՈԿՀ. (1668), իսկ ի մերում ՌՃԺԷ.ին (1668)... որ յառաջին ամիսն անցնի / վասն այսորիկ ամի աղալման խօսի՝ որպէս ինձ Թուի։*

ԺԵ. *217ա-8ա* [Առաքելի Սիւնեցւոյ] Վասն Աստուածաշունչին ՀԲ. (72) փերթ գրոցն անուանին է – *Տէր առաքէլ դիտողս Սիւնեաց / զուր եւ թափուր յամէն շնորհաց / շարադրեցի զկարգըս գրանաց... զոր այսչափ խրատ գրեաց փութով / զմեզ ի մեղաց ազատելով:*

ԺԶ. *218բ-9ա* ստ. լս-ից՝ [Խմաստութիւն Ե. բանից վերայ] – *Հինգ են ամենայն բաւականութիւն պատճառք եւ արմատք... ընտրութիւն, վարդապետութիւն, փրկութիւն, ազատութիւն:*

ԺԷ. *219ա* ստ. լս-ից՝ [Մարդս որպէս գոյանայ]. Արիստոտէլ իմաստասիրի ասացեալ Յաղակս յառաքինութիւն Աղէքսանդր թագաւորի – *Վեց են սահմանք առաքինութեան՝ գիտութիւն էակացն... զի խաղայր որպէս լեղուրդ ի յարգանդի մօր իւրոյ. եւ կարգեցին Խ. (40) Տէր ողորմեա:*

ԺԸ. *227ա-8բ* Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ Վասն վարդապետաց եւ իմաստուն հաճանայից վախճանի, բան գովութեան եւ մխիթարութեան: Ո՛վ հաճանայք եղբայրասէրք, / լալով, ողբով գիս ընթերցէ՛ք, / որ լըսողացըն զեղճ բերեմ, / Հայր մեղայիւ զիս յիշեցէ՛ք – *Աւրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... երեւելի եւ յաներեւոյթ թշնամոյն. ամէն:*

227ա ստ. լս., գրչից՝ «Քահանայ իմաստուն եւ վարդապետ վախճանելոյ ասա՛ ողբով»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԱՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

89ա Վարդան *գրիչս յիշէ՛ք ի Տէր:*

109բ Ո՛վ հարք եւ եղբարք, աղաչեմ զձեզ, յիշեցէ՛ք ի պաղատանծ եւ ի մաքրափայլ յաղօթս ձեր զեղկելի, գործով ոչ կրօնաւորս եւ անուամբ կոչեցեալ ծոյլ Վարդանս, *եւ դուք ի սիրոյն Քրիստոսի յիշեալ լիջիք:*

126բ ստ. լս.՝

Վարդան գերիս յիշել ի Տէր
արժանաւոր յաղօթս ձեր, |127ա|
եւ դուք յիշիք Աստուածոյն մեր,
արքայութեան ելանէք վեր:

165ա Որ կայ այժմ եւ վարէ զիշխանութիւն կաթողիկոսութեանն, որոյ Տէր Յիսուս տացէ զկեանս ընդ երկայն աւուրս ի պարծանս բնաւից հայկազունեաց: Որ եւ զիս՝ զանարժանս, հողս եւ փոշիս, աւրհնեաց եպիսկոպոս ի վերայ Կաֆայու, *Հայոց թուականութեանն ՌՃԺԷ. (1668) եւ ի մէջ* Կոստանդիանոսի Պօլսի, *առ ոտն* Սուրբ Գէորգայ *եկեղեցի, որ եւ* Սուլու մանաստըր *կոչի: Որ եւ անուամբ* Վարդան *կոչիմ, Հայր մեղայիւ եւ զիս յիշե՛ք:*

169բ Աղաչեմ զձեզ, եղբա՛րք, յիշեցէ՛ք ի մաքրափայլ աղօթս ձեր զեղկելի Վարդանս *եւ զհոգեւոր ծնօղքն իմ՝ զԽաչատուր եպիսկոպոսն գծերունի եւ զՅակոբ կաթողիկոսն, եւ զմարմնաւոր հայրն իմ՝ զԵնովք, եւ մայրն իմ՝ Աննայ, քորքս եւ եղբարքս եւ զհամեստ եւ հարկեւոր զՀոիփսիմէն, որ եԺ.ան (15) ամեան փոխեցաւ առ Քրիստոս՝ յոյսն ամենեցուն, եւ դուք յիշեալ լիջիք Աստծոյն մերմէ: Թուականիս ՌՃԽԵ. (1676):*

176բ Ո՛վ իմաստասէր եղբայր, եւ զանիմաստ Վարդան *ծրօղս յիշէ՛ք ի Տէր, եւ յիշի՛ք Աստըծոյն մեր աւրհնելոյն:*

Ջմեղսամակարդ յոգիս ոռի
եւ զպարտական բիւր քանքարի,
յաղօթըս ձեր սուրբ հաճելի
յիշատակէ՛ք, մանկո՛ւնք ուխտի:
Վարդան *ծառայ Տեառն Յիսուսի*
վերատեսուչ ընտ[ր]եալ հօտի,
դաւանութեամբ Լուսաւորչի,
քրիստոսասէր ժողովըրդի:
Այս Սուրբ *տաճարս* Աստուածածնի
նորոգեցաւ ի յայսմ ամի
հազար Ճ. (100) թուականի
քըսանւերեք յարաբարդի (1674):
Ի ծընընդեանէ մարմնոյ Փըրկչին
ԼԳ. (33) Յոբելենին,
քըսան ու Ջ. թիւ աւելին (1676),
եւ տանուտէրըն Յուլ կոչի:
Կաֆայ *քաղաք աւրհնեալ երկրի,*
եկեղեցեաց բազմագունի,
վանորէիւք շըրջապատի
նաւահանգիստ դէմ պարըսպի:
182բ Տե՛ս Բովանդակութիւն:
190ա (բոլորակի կենտրոնում)
ո՛վ իմ եղբայր փիլիսոփայ,
դու հանապազ աղօթք արա՛,
Վարդան *ծառա՝ գծող սորա,*
ի միասին արժան արա՛:

203ա Իմացի՛ր, ո՛վ եղբայր, եւ զանարժան Վարդան *գրիչս յիշեա՛ ի Տէր. ի թուականի ՌՃԽԵ. (1676) ծրեալ եղեւ:*

206ա Ես՝ անարժանս, մեղօք ի լիս,
ոչ գիտելով յիմար մըտիս,
ոչ ըզմըտաւ ածել կուրիս
նոյն եւ Վարդան *աբեղայիս:*
ո՛վ ընթերցողք այս մատենիս
չի մեղադրէք ինձ՝ տկարիս,
Հայր մեղայիւ յիշէ՛ք եւ զիս,
միշտ ասացէ՛ք Տէրն ողորմիս:
Ձեզ ողորմի Հայրն իմ բարիս,
յոյժ աղաչեմ ստեղծող փըրկչիս,
որ փըրկեսցէ ի վըտանգիս
մինչեւ ի յաւուր դատաստանիս:
Վարդան՝ *յիմար եւ եղկելիս,*
կարգաւորաց եանեալ գերիս,
ամենեցուն հող եւ փոշիս,

մի՛ խընայէք Տէրն ողորմիս։
հազար ճ. (100) թուականիս
քսան եւ հինգ յարաբարդիս (1676)
գըծագրեցի ոտք տումարիս
առ ոտըն Սուրբ Աստուածածնիս։
Վարդան՝ *ծառայս Տեառն Յիսուսի,*
վերատեսուչ ընտրեալ հօտի,
դաւանութեամբ Լուսաւորչի
քրիստոսասէր ժողովըրդի։
եպիսկոպոս Կաֆայեցի
է հաստակաւ Կ. (60) ամի,
յորժամ տաճարս նորոգեցի
գըմբէթաձեւ շնորհօք ի լի։
եւ յաւիտեանս յաւիտենի։
228ա ստ. լս.՝ Վարդան *գրիչս յիշել ի Տէր*
արժանաւոր յաղօթս ձեր,
եւ դուք յիշիք Աստուծոյն մեր
արքայութեան ելանէք վեր։
228բ Վերըստ<Կ>ին կազմեալ սուրբ եկեղեցի՝
Յովակիմ *անուն վանք* Սուրբ Աննայի,
յԱստուծոյ իջեալ աւրհնեալ Սուրբ Հոգի,
եկեալ բնակեցաւ ի սուրբ տաճարի։
Աստուած *քաղցրացաւ* Կաֆայու *երկրի,*
իւր ժողովրդեանն սուրբ Լուսաւորչի.
միաբան եկեալ մեծէ ի փոքրի
եւ զարդարեցին տաճար գովելի։
Բամից *զըւարթնոց է ցանկալի*
եւ ուխտատեղիք մարդկային ազգի,
պաշտօն, պատարագ յարաժամ կատարի,
հանապազ Աստուած կու փառաւորի։ |229ա|
Դրախտի *նամակ լուսափայլեսցի,*
որպէս նըմանակ Յերուսաղէմի,
եկեալ ուխտաւորքն ի մէջ տաճարի
եւ փափագն առնուն Սուրբ Կարապետի։
Արարիչն Աստուած *նոցա ողորմի,*
միշտ եկեալ տաճարն կանգնեալ աղօթի,
բարեխօսութեամբ նոր նահատակի
յամենայն չարեացն փրկեալ ազատի։
Նոյն *եւ Տէր մեր Քրիստոս քաղցրասցի,*
քաղցր աջոք ի մեզ հանապազ հայի,
միշտ ժտեալ խնդրեմ յոյժ աղերսալի,
եւ նա փըրկեսցէ ըզմեզ վտանգի։
Այլ *եւ Տէրըն մեր քաղցր է եւ բարի,*
բարերարութեամբն մեզ որողմեսցի,
եւ մեք մեծ ու փոքր ի մէջ տաճարի
հաւասար առնումք շնորհք Քրիստոսի։
Այսչափ *խօսեցայ, եմ անարժանի,*
թողութիւն արէ՛ք ինձ մեղաւորի,
ձերն Աստուած թողցէ իւրում ատենի
եւ պըսակեսցէ մարանաթայի։

Սըրբութիւն սըրբոց, որ մատուցանի,
Սուրբ Հոգին իջեալ յայնմ ժամանակի՝
եկեալ բնակեսցէ ի սուրբ խորանի,
ցօղն ողորմութեամբ բաշխէ խնդրողի։
Ամենուն *խնդիրքն է ընդունելի,*
այլեւս առաւել շինօղ տաճարի,
օգնական լինօղքն եւ եղբարք բարի
միապէս առնուն վարձքն Քրիստոսի։
Ընծան *զուարճանան շինօղք տաճարի,*
եւ փափագն առնուն ընդ իւրեանց սրտի.
փառք միշտ տուողին. ես փափագս առի,
սուրբ եկեղեցի կատարեալ տեսի։
Երանի՛ *աչաց տաճարս շինողի,*
Ռ. (1000) երանի՛ սորա գուգողի,
բարեխօսութեամբ սուրբ նահատակի
եւ արքայութեան արժանի լինի։
Աշխատաւորի *եւ կերակրողի*
վարձերն ի կատար ամէն դատողի,
խորն հասանեն վերջք ժամանակի՝
երթեալ ժառանգեն վերին տաճարի։
Լուեալ *իմաստուն եղբարք իմ բարի*
ԽՈՆՃԱ. (40+ 600+ 400+ 100+ 1) (1692) մատուցի
Հայոց թվականի
Ը.երորդ աւուր Սեպ[տեմ]բեր ամսի
Վերջին օծումն եղեւ սրբոյ տաճարի։
229ա Վերստին *կազմեցաւ սուրբ եկեղեցի*
կամարաձեւ հաստատ եւ խաչ կամարի,
բարձրագոյն եւ տաճար գեղեցիկ ձայնի,
եւ շինողաց հոգւոյն Աստուած ողորմի։
Աւագ *խորան կազմեալ ի սուրբ սեղանի,*
դեղագործ նկարեալ ոսկէզարդ փայլի,
տեսողաց երեւիւր որպէս աղաւնի,
ընդ երկնայնոյ նման վերնոյն Սիօնի։
Բամից *ժողովուրդն սուրբ* Լուսաւորչի
միաբան խորհրդոցն շինել տաճարի,
ողորմութիւն տըւին արծ[ա]թ եւ ոսկի
եւ առին հատուցումն՝ պարգեւք Քրիստոսի։
Դրախտի *նման պայծառ որպէս գերարփի,*
հիւսիսային կողմն յորմըն խորանի,
գեղեցկազարդ զուգած ի սուրբ սեղանի |229բ|
անուամբ ընդ ծերոյն սուրբ Սիմէոնի։
Առաջին *ժողովուրդն* Յանի *քաղաքի*
եկեղեցեաց դըռներն բերին ի յերկրի,
շինեցին զանազան աղօթատեղի
եւ հաստատ զուգեցին կամարաձեւի։
Նորոգօղք *տաճարիս ի յայսմ ամի*
հիմնարութեան սորա շինօղք առաջի
ի միասին առնուն վարձքն Քրիստոսի,
անթառամ պսակացն լինին արժանի։
Ագաէնտիոս *անուն սուրբ քահանայի*

Ե. ընկերք միաբան սուրբ նահատակի
հանապազ բարեխօս լինին աշխարհի
եւ ինձ՝ մեղաւորիս Վարդան *ծառայի։*
Յ*այնժամ գալստեան Տեառն Յիսուս Քրիստոսի*
եւ փըրկեսցէ զձեզ չարեաց վտանգի,
ազատեսցէ ձեռացըն սատանայի,
յաջակողմեան դասուն առնէ արժանի։
Ա<ո>*թոռ չորեքկերպեան բազմեալ Քրիստոսի,*
նման չորրոդ խորան կազմեալ տաճարի,
յորժամ սուրբ պատարագ որ մատուցանի,
Սուրբ Հոգին բազմեալ սեղանն Քրիստոսի։
Ս*րբութիւն սըրբոց որ մատուցանի,*
զօրք երկնային իջեալ հազարք Ռ.ի (1000),
փառաբանեն զԱստուած ի մէջ տաճարի,
միշտ հանապազ Աստուած կու փառաւորի։
Ա*յլեւ աստուածային տաճար նազելի,*
լուսամուտն էր Դ.թեւ նման խաչի,
երրորդութեան նման երեքդըռանի
եւ վարպետաց հոգւոյն Աստուած ողորմի։
Յ*ընծան հրեշտակք յերկնից մարդկային ազգի,*
յորժամ ժողովին ի մէջ տաճարի,
հրսկում առնեն պաշտօն եւ պատարագի,
հրեշտակ[ք] ուրախանան ի վերայ երկրի։
Ե*րանի՛ այն մարդոյն՝ ողորմած լինի,*
ի մէջ եկեղեցւոյն յիշատակ ունի,
հանապազ իւր հոգւոյն փըրկութիւն լինի
եւ յամենայն չարեաց գերծեալ ազատի։
Ա*մէն մարդ իւր հոգւոյն փրկութիւն ունի,*
ես միայն փափագեալ կարօտ մնացի
եւ գոյնս Յովաս[ա]փու *ոտքերս ասացի,*
կարդայք եւ զիս յիշէք մէկ Հայր մեղայի։
Լուարո՛ւք, իմաստո՛ւնք եղբարք իմ բարի,
ձեզ ԽՈՆՃԱ (40+ 600+ 400+ 100+ 1= 1141+ 551 = 1692) մատուցի Հայոց թուականի
ամսեանն նոյեմբերի երկոտասանի
օծումն եղեւ սրբոյ փառաց տաճարի։
229բ **Վ***երստին կազմեցաւ սուրբ եկեղեցի՝*
գեղեցիկ եւ բոլոր գումպէթաձեւի,
բարձրագոյն եւ պայծառ տաճար գովելի
տիրամայր Մարիամ *սուրբ աստուածածնին։*
Ա*բեթեական տոհմէն Հայոց տումարի*
ՌՃԻ. եւ Գ. թվի (1674),
ժամանակ Վարդանայ *եպիսկոպոսի,*
նորոգեցաւ տաճարս Սուրբ Աստուածածնի։
Բ*ամից ժողովրդոց սուրբ* Լուսաւորչի
քահանայք, ժողովուրդք երի|230ա|տասարդի,
հաւատար քրիստոնեայք մարդկային ազգի
միաբան դատեցան ի սուրբ տաճարի։
Դ*ըրախտի նըման պայծառ լուսափայլեսցի*
եւ տաճարի նըմանակ Սուրբ Սողոմոնի
Սըրբոյն Յակովբայ *վանք գլխագրի*
Սուրբ Յարութեան *նման յերուսաղէմի։*
Ա*ստուածածին, սո՛ւրբ Կոյս, մայր Տեառն Յիսուսի,*
հանապազ բարեխօս բոլոր աշխարհի,
ձեզ բարեխօս լինայ Որդւոյն միածնի
եւ զձեզ պահեսցէ անսասանելի։
Ն*որոգեցաւ տաճարս որպէս աղաւնի,*
եւ Սուրբ Հոգին իջեալ աղաւնակերպի,
բազմեալ ի մէջ խորանի ի սուրբ սեղանի,
բաշխէ ուխտաւորացդ պարգեւք Քրիստոսի։
Ա*րդ, աղաչեմք ըզքեզ սուրբ Աստուածածին,*
բարեխաւսեա՛ առ Տէր Որդւոյդ միածնի
եւ փրկեսցէ ըզմեզ փորձանաց չարի,
այլեւ ազատեսցէ չարեաց վտանգի։
Յ*ինն օր նախատօնակ Ծննդեանն Քրիստոսի*
եւ տօնախմբութիւն սրբուհոյ Կուսի,
շնորհաբաշխութեան օրն կանգնող տաճարի,
զինչ գործեցեալ մեղքերն ջնջեալ մաքրեսցի։
էջմիածնի *նըման ձայնիւ տաճարի,*
այլեւ Մըշու *սուլթան* Սուրբ Կարապետի,
բարձր լեառըն Սեպուհ *սուրբ* Լուսաւորչի,
այլեւ խնդրակատար Սուրբ Աստուածածնի։
Ա*մէնասուրբ եւ կոյս, աւրհնեալ թագուհի,*
թագ եւ պարծանք ես դու ի մէջ աշխարհի,
վանորէից գըլուխ այլ ուխտատեղի,
մայր ես եկեղեցեաց բոլոր աշխարհի։
Ս*ըրբոյ եւ չարխափան* Սուրբ Աստուածածնի,
ով ոք ուխտ կատարէ ի սուրբ տաճարի,
խոյօք եւ զուարակօք անուշ մատաղնի,
Աստուած նընջեցեալոց հոգւոյն ողորմի։
Ա*յլեւ հէրիսայի քաղցրաճաշակի,*
զանազան կերակրոց հոգւոց մեռելի,
որչափ չարիք որ կայ, չարըն խափանի,
անուամբն չարխափան Սուրբ Աստուածածնի։
Յ*ընծան, ուրախանան հոգիք մեռելի,*
պաշտօն եւ պատարագ յորժամ կատարի,
բարեկամք կենդանեաց եւ ազգականէ,
միոյն բիւրապատիկ հատուցում լինի։
Ե*րանի այնոցիկ եւ սէր ունողի,*
եւ Ռ. (1000) երանի տաճար շինողի,
եւ ամենայն ժամի եւ պատարագի,
եւ իւր հոգին բարի կու յիշատակի։ |230բ|
Ա*ւրն ծննդեան մարդոյ թէ բարի լինի,*
մինչեւ յետի օրն նա բարի ապրի,
մարմնով ուրախութեան ի մէջ աշխարհի,
հոգով արքայութեան ժառանգորդ լինի։
Լ*ուսաւորեալ հոգին պայծառափայլի,*
մէջ արդարոց սրբոց դասակից լինի.
երանի այն մարդոյն, որ օրս հանդիպի,
եւ Ռ. (1000) երանի աւուրն ահեղի։

Եւ այլ ուխտատեղիք Պատղոս Պետրոսի,
նըման եւ չարխափան երաշխաւորի,
միջնորդ ատենահաս եւ զաւրավարի,
հանապազ, միշտ բարեխաւս բոլոր աշխարհի։
Բամեալ մանկունքս ամէն ի մէջ տաճարի
լալով աղաղակեմք բոլոր սրտին
հայցեմք ի Քրիստոսէ հաշտութիւն յերկրի,
եւ տայ խաղաղութիւն Աստուած աշխարհի։
Գերագոյն եւ պայծառ տաճար պանծալի,
պարծանք ես հաստատուն մեր հայոց ազգի,
զքեզ ունիմ բարեխաւս, մայր Տեառն Յիսուսի,
եւ ըզմեզ դասեսցէ յիւր յաջակողմի։
Սըրբոյն Աստուածածնի՝ մայր Տեառն Յիսուսի,
լալագին աղաչեմք յոյժ արտասուելի,
եւ բարեխաւս լինի Որդւոյն Միածնի,
ազատեսցէ ըզմեզ չարեաց վըտանգի։
Արդարադատն Աստուած քաղցրացաւ յերկրի,
քաղաքի ժողովրդեան մեր հայոց ազգի,
ողորմութիւն իջաւ ի մէջ տաճարի,
ամրագոյն հաստատեաց սուրբ եկեղեցի։
Յայսուհետեւ մինչեւ ի յաւիտենի,
պայծառ հաստատ կենայ ի մէջ քաղաքի,
եւ շինողաց հոգւոյն Աստուած ողորմի,
բազում ողորմութիւն պարգեւք տուողի։
Սիրոյ անմահ փեսին մայր Տեառն Տիրուհի,
զքեզ աղաչեմք մանկունք ի մէջ Սիոնի,
լե՛ր բարեխօս առ Տէր Աստուածն ամենի
եւ փրկեսցէ ըզմեզ յաւուրն ահեղի։

Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (ԺԶ-ԺԷ. դդ.), աշխ.՝ Յասմիկ Սահակեանի, հտ. Բ., Երեւան, 1987, էջ 153-156, ձեռ. A:

230բ **Վ**արդան *եպիսկոպոս, ծառայ Քրիստոսի*
պատմեմ ձեզ սիրելեացդ, եղբա՛րք իմ բարի,
յաղագս աւերութեան վանք Սուրբ Աննայի,
այնչափ աւեր կեցաւ Խ. (40) տարի։
Աստուած *յայնկարծակի այց արար բարի,*
եւ Սուրբ Հոգին իջեալ ի մէջ տաճարի,
շնորհեաց ողորմութիւն մեր հայ|231ա|ոց ազգի,
բարի ժողովրդոց սուրբ Լուսաւորչի։
Բամից պաշտօնէից դասք քահանայի,
ծերոց եւ տղայոց երիտասարդի,
միաբան դասողաց աշխատաւորի
ամենեցուն վարձքերն բարին կատարի։
Դրախտի նըման փայլուն սուրբ եկեղեցի
եւ որպէս նմանակ Յերուսաղէմի,
եւ երանի աչացն պայծառ տեսնողի,
հազար երանութիւն տաճար շինողի։
Արեգական նըման լոյսդ ի քէն ծագի,
պայծառացեալ լուսով ի մէջ տաճարի,
անմահութեան հոտն միշտ ի քէն բուրի,
ուխտաւոր<աւոր>աց սիրտըն փառաւորեսցի։
Նահատակ ես եւ սուրբ Պարոնտոյս բարի,
պայծառ ես դու լուսով ի մէջ տաճարի,
միշտ բարեխօսեա՛ ի քէն խնդրողի,
եւ ինձ՝ ան[ա]րժանի Վարդան *ծառայի։*
Ա՛յ, *իմ լուսապայծառ սուրբ եկեղեցի,*
որպէս եւ նմանակ Պօղոս Պետրոսի,
սուրբ գերեզման մէջդ է նոր նահատակի
եւ բարեխօս լինիս մեր հայոց զարմի։
Յայսուհետեւ մինչեւ յաւիտենի
հաստատ պայծառ կենայ ի մէջ քաղաքի,
եւ շինողաց հոգւոյն Աստուած ողորմի,
բազում ողորմութիւն պարգեւք տըւողի։
Էջմիածնի նըման տաճար գովելի,
եւ նմանակ ուխտին Սուրբ Կարապետին,
որպէս գերեզմանին սուրբ Լուսաւորչին
ամենեցուն կարաւտն ի քեւ կատարի։
Այլեւ նըման ես դու Յերուսաղէմի
գլխագրի Սուրբ Յակոբայ *մեր հայոց վանքի,*
եւ տաճարի նըման Սուրբ Սողոմոնի,
ուխտաւորաց փափագն քեզ միշտ կատարի։
Սըրմ(=բ)ութիւն եւ սրբոց որ մատուցանի,
պաշտօն եւ պատարագ յորժամ կատարի,
եւ զօրք յերկնից իջեալ Ռ.ք Ռ.ի *(1000-1000)*
եւ փառաւորեսցեն ի մէջ տաճարի։
Արեգական նըման որպէս գերարփի
նըմանակ փայլեսցէ վանուց Սուրբ Խաչի,
ուխտաւորքն եկեսցեն երամք երամի,
փոխարէն առնուցուն պար[գ]եւք Քրիստոսի։
Յընծայ, ուրախանայ, գուարճացեալ բերկրի
տիրամայր Մարի|231բ|ամ իւր մօրն Աննայի,
հանապազ օգնական լինի ծնողի
եւ տայ ուխտաւորաց բիւր Ռ. *(1000)* բարի։
Երանի Յովակիմայ *եւ սուրբ* Աննայի՝
աւրհնեալ ընտրեալ զաւակ ստացան երկրի,
սովաւ լուսաւորեցան բոլոր աշխարհի,
ազատեցան ձեռացըն սատանայի։
Այլեւ ծընաւ Յիսուս միածին որդի՝
Թոռըն Յովակիմայ *եւ սուրբ* Աննայի,
զի փըրկեսցէ ըզձեզ մեղաց վըտանգի,
կըրկին ազատեսցէ մարանաթայի։
Լուարո՛ւք, իմաստո՛ւնք եղբարք իմ բարի,
ձեզ *ԽՈՆՃԱ. (40+ 600+ 400+ 100+ 1= 1141+ 551= 1692)* մատուցի Հայոց Թուականի,
աւուրն ութերորդի Սեպտեմբեր ամսի
օծումն եղեւ սրբոյ փառաց տաճարի։

Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (ԺԶ-ԺԷ. դդ.), աշխ.՝ Յասմիկ Սահակեանի, հտ. Բ., Երեւան, 1987, էջ 173-175, ձեռ. A:

Ծնթ. 228բ, 229ա, 229բ, 230բ էջերի յիշատակարանները ու-

նեն ծայրակապեր՝ ըստ բառատողերի առաջին տառերի՝ «ՎԱՐԴԱՆԱ ԱՍԱՅԵԱԼ», «ՎԱՐԴԱՆԱՅ ԱՍԱՅԵԱԼ», «ՎԱՐԴԱՆԱՅ Է ԱՍԱՅԵԱԼ ԵՐԳՍ ԱՅՍ», «ՎԱՐԴԱՆԱՅ Է ԱՍԱՅԵԱԼ»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

ԺԹ. դ., շղագիր

Ա. կազմաստառ Միխայէլ *վարդապետ։*

պհպ. Աա Միխայել *արքեպիսկոպոս* Սալլանթեանց։

պհպ. Աբ Միխայէլ *արքեպիսկոպոս* Սալլանթեանց՝ *նուիրակ Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի եւ քննիչ գործոց վիճակին* Նախիջեւանայ *եւ* Պեսարապիու *եւ այլոց ի* Մոսկով։

1բ Միխայէլ *ծայրագոյն վարդապետին է. 25 Ապրիլի։*

ՆՇՈՒՄ՝ *մէջքին սոսնձուած թերթիկին՝ «Յովհաննու Երզնկացւոյ Քերականութեան մեկնութիւն», «Ռձ(Ը. – 1659», «Մ[եսրոպ] եպիսկոպոս», «324/3504»,*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *պհպ. Աա՝ «չիմար զքեզ տփռնիկ, ոչ է, ոչ է պատեհ», «дуракъ дворникъ», պհպ. Աբ՝ «աբ», պհպ. Բա՝ «հ. հայր (քառիցս), այսաւր, երգե, վասն այն, վասն», պհպ. Գբ՝ հակառակ դիրքով «Ա[ստուա]ծ, ե-րորդ», պհպ. Եբ՝ «ա, ա, ա, բ, ե-ծ», «Յաւիտենական յիշատակ նոցին արդարոցն աւրհնութեամբ եղեցի, [հ]ա[ն]դիման նզովեալ եղեցի (առաջին 2 տողը կրկն.)», 180բ՝ «Յոգւոց խաւարացելոց լուսազարդեսցես»։*

ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *184բ՝ թուչնագրեր, հանգուցագրեր, մարդկային պատկերներ։*


3505
ԳԱՆՁԱՐԱՆ

Ձ[ԻԹ]. – 1480*

ԳՐԻՉ՝ Մելքիսէթ։ ՍՏԱՅՈՂ՝ Ղարաճա Յոհաննէս։

ԹԵՐԹ՝ 133։ ՊՐԱԿ՝ Ա-ԺԱ×12 (Ա 11, Ձ 14)։ ՆԻԹ՝ թուղթ։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18,5×13։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (14×10). գանձերի խոռագիրը, սկզբնատողերը՝ կարմրով, երկրորդ տողերը՝ մեծ մասամբ կանաչով։ ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 10ա)։ ՏՈՂ՝ 19։ ԿԱՋՄ՝ կարմիր լաթ, մէջբը՝ սեւ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ դեղնաւուն թուղթ (1950ական թթ.). լուսանցակողերը՝ կարմիր։ ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Դ՝ դեղնաւուն թուղթ, մասն կազմաստառի։


* Ծնթ. խմբ. Համառօտ ցուցակում (Ա., էջ 1028) յիշ-իս թուականը կարդացուել է Ջէ.՝ 1458 թ.։ Լ. Խաչիկեանը (ԺԹ. դ-ի յիշ-ք, Գ., էջ 453, Հմ 617) կարդացել է Ջի.՝ 1471, եւ ծանօթագրել. «Թուականի տասնաւորը ջնջուած է, երեւում է միայն ուղղահայեաց մի գծիկ, որ կարող է լինել ե՛ւ «ի», ե՛ւ «խ» տառերի աջակողմեան ելուստը։ Այսպիսով, յիշատակարանը կարող է գրուած լինել նաեւ Ջխ., այսինքն՝ 1491 թուականին»։ Տասնաւորից բացի կայ նաեւ միաւորի հետք. մենք տեսանք ԻԹ. գրեր եւ կարդացինք ու թուագրեցինք Ջ(ԻԹ.՝ 1480։



Նմուշ 10ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – ճակատազարդ՝ 1ա։ Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն (70բ), տաճար (127բ), ոճաւորուած խաչ (131բ)։ Ձարդագիր՝ հանգուցագիր։ Գոյներ՝ կարմիր, կապոյտ, շագանակագոյն։

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – ճաշոց (՞)։ ԺԱ. դ.։ ԲԳ (սկ.)՝ ստացուած 1 թերթի ընդլայնակի ծալումով, վր. եւ ստ. հատուածների եզրահատումով (բնագիրը հատուած)։ Մագաղաթ (17,8×13). երկսիւն (17×9). բոլորագիծ երկաթագիր (նմուշ՝ Գա). տող՝ 15 (սկզբնական վիճակը՝ 36,5×26. երկսիւն (29×19,5). տող՝ 26)։ Կարդալ՝ Գա «/// եւ եղեւ յամին յորում մեռաւ Ոզիա արքայ... եւ երկումն ծածկէին զոտս իւեանց, եւ երկումն թռուցեալ։ Աղ///», Գբ «///ջինն իրաւունս պաշտաման յայնժամ զաշխարհական սրբութիւնն... արկղն կտակարանաց պատեալ ներոյ առտաոյ ոսկւով ///», Բա «/// խոռանն յամենայն ժամ մտանէին ֆահանայքն... Ձայս ցուցեալ Հոգւոյն Սրբոյ ///», Բբ «/// արդարութիւնք, որ մինչեւ ի ժամանակս ուղղութեանն ի վերայ կային... յովտ մի, որ նշանախեց ///»։



Նմուշ Գա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած 1950-ական թթ. խոնաւութիւնից եւ գործածութիւնից լուսանցակողերը եւ թերթերը (հատկապէս եզրերը) աղտոտուած, տեղ-տեղ առաւել գորշացած, լուսանցակողերի կարմիրը թափուած, պտոկ-պիպ-ները վնասուած, խիստ աղտոտուած, Աա, Բբ երեսների գիրը մասամբ թափուած, պտոկ-պիպ Ա՝ թանաքի թթուայնութեան հետեւանքով տառերի գծագրութեամբ առաջացած անցքեր, վր. եւ ստ. հատուածներից պատռուած-ընկած։ Լուսանցազարդերը՝ տեղ-տեղ (76ա, 100ա, 108բ եւ այլուր) փոխր-ինչ կտրուած։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *1ա-4ա* [Ա. Ճրագալուցիին Ծնընդեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ձեռ. 428, 58ա] («ՏԷՐ Մեհ») – *Տարփումն ըղձական, առչոր անձկա[կա]ն…*

2. *4ա-6բ* Բ. Գանձ Ծնընդեան առաջի աւուր («ՃԱՐԱ») – *Ճրա՛գդ պարծանաց, թագաւո՛ր փառաց…*

3. *6բ-8բ* Գ. Գանձ Ծնընդեան («ՄԿՐՏԻՉ») – *Մաքուր եւ ամբիծ սուրբ Աստուածածին…*

4. *8բ-11բ* Գանձ Ծնընդեան եւ Մկրտութեան («ԽԱՉԱՏՈՒՐ») – *Խորան փառաց հոգոյն ճշմարտի եւ բնակարան Հօրն երկնաւորի…*

5. *11բ-4ա* Գանձ Աւետեաց Աստուածածնին («ԽԱՉԱՏՈՒՐ») – *Խնդութեան ձայն, բարբառ աւետեաց…*

6. *14-6ա* Գանձ Յովանու Մկրտչի («ՄԿՐՏԻՉ») – *Մեծապայծառ փառաւք պանծալի այսաւր ցնծա…*

7. *16-8բ* Գանձ ճգնաւորաց («ՃԳՆԱՒՈՐՔ») – *Ճգնաւորք ընդրեալք ճշմարտագործեալ…*

8. *18բ-23բ* Գանձ թագաւորաց («ՀԻՆԳԷՏԱՍԱՆ») – *Համագոյական Հաւր սահման եւ Բան…*

9. *23բ-6ա* Գանձ Վահանա Գողգնացուն («ԳՐԻԳՈՐ») – *Գըթացեալ քո[յ]ին արքայդ երկնա[յ]ին եւ առեր մարմին…*

10. *26ա-8ա* Գանձ Սուրբ Սարգսի զօրավարի եւ որդոյ նորա («ՄԿՐՏԻՉ») – *Մեծապայծառ փառաւք զարդարեալ, եկեղեցի պայծառազգեալ…*

11. *28ա-30ա* Գանձ Ատոմեանցն («ԳՐԻԳՈՐԷ») – *Գեղապանծ լուսով, գերազարդ փառով, գեղաքանչ գունով…*

12. *30բ-3ա* Գանձ Ոսկեանցն եւ Սուխիասանցն («ԳՐԻԳՈՐԻ Է») – *Գանձ սիրո քո[յ]ին գանձեալ ի յոգին գերաշակերտին…*

13. *33ա-9ա* Գանձ Թարգմանչացն («ԲՆ ՔԱՐՈՋԻՑ») – *Բարձրեալ անքննին բնաւից լըրութիւն, բաւականութիւն…*

14. *39ա-41ա* Գանձ Գալստեան Քրիստոսի Տառասնօրեայ («ՄԿՐՏԻՉ») – *Միաւնական Սուրբ Երրորդութիւն, բարեբանեալ անբաւ զօրութիւն…*

15. *41ա-3բ* Գանձ Ղեւոնդեանցն եւ վարդա[պետաց] («ԽԱՉԱՏՈՒՐ») – *Խրամատեալ կանոնք աւրինին Հօր համայնից սրբոյն Գրիգորի…*

16. *43բ-8ա* Գանձ հայրապետաց Գ. ժողովոյն («ԱՅՐԻՎԱՆԵՑԻ») – *Աստուած կենդանի, անիմանալի, անհասանելի…*

17. *48ա-52բ* Գանձ Բարեկենդանին («ԵՐԵ̲ՆԱՆԵՑԻՆ») – *Երգ յաւէրժական երգեմք բանական երիցդ միական…*

18. *52բ-4բ* Գանձ Թէոդորոսի («ԳՐԻԳՈՐ») – *Գոհանեալ ես Տէ՛ր, Սո՛ւրբ Հոգի…*

19. *52բ-6ա* Գանձ անառակ որդուն («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ ահեղ խորհուրդ տիրական, անճառ, անհաս…*

20. *56բ-8բ* Գանձ մեծատանն եւ Ղազարու («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ ահեղ խորհո[ւ]րդ(=դ) տիրական, որ նորոգեաց զաշխարհս ամենայն…*

21. *58բ-60բ* Գանձ Քառասնիցն («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ հզաւր անմահից արքայ…*

22. *60բ-2բ* Գանձ դատաւորին եւ այրուն («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ ահեղ խորհուրդ անքննին, որ գթացար յագգս մարդկա[յ]ին…*

23. *62բ-5ա* Գանձ սրբոյն Գրիգորի («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ հզաւր անմահից արքա Յիսուս Քրիստոս…*

24. *65ա-70բ* Գանձ յարութեան Ղազար[ու] («ԳՐԻԳՈՐԻ Է ՍԱ») – *Գոհաբանական ձայն նուիրական տացուք քոմ անուան…*

25. *70բ-2բ* Գանձ առմաւենեաց («ՀԱՅՅԷՍ») – *Համագո[յ]ական Հաւր սահ[մա]ն եւ բան…*

26. *72բ-6ա* Գանձ Աւագ երկուշաբաթին («ԳՐԻԳՈՐԻ Ե̲ ՍԱ») – *Գերագոյն էից, գերահրաշ գո[յ]ից…*

27. *76ա-9ա* Գանձ Աւա̲ֆ երեքշաբաթին («ԳՐԻԳՈՐ») – *Գործ արարչական գերահրաշական գթով գոյացան…*

28. *79ա-81ա* Գանձ Աւա̲ֆ չորեքշաբաթի («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ անճառ խորհուրդ անհասին, որ կայր ծածկեալ…*

29. *81ա-3բ* Գանձ Աւա̲ֆ հինգշաբաթին («ՁՊԱԿԱՍ») – *Ձահեղ, զանքննին զխորհուրդըս խորին…*

30. *83բ-5ա* Գանձ ցերեկի Ոտնալուա[յ]ին («ՈՐԴՍ») – *Որք փափաքէին ուտել զայն մարմին…*

31. *85ա-7բ* Գանձ ի Աւագ ու[ր]բաթուն («Ի ՄԱԹԷ») – *Ի յանմարմնական յանձանց բանական…*

32. *87բ-9բ* Գանձ թաղման («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ ահեղ խորհուրդ սոսկալի այսաւր ցուցաւ…*

33. *89բ-92ա* Գանձ Յարութեան («ՄԿՐՏԻՉ») – *Մեծապայծառ ձայն ուրախալի գոչէր Գաբրիէլ…*

34. *92ա-4ա* Գանձ հասարակաց կիրակէի («ԳՐԻԳՈՐ») – *Գերամբարձ Աստուած, գովեալդ ի զաւրաց…*

35. *94ա-6բ* Գանձ Համբարձմանն Քրիստոսի («ՄԿՐՏԻՉ») – *Մեծապայծառ տօնիւս ահագին…*

36. *96բ-8ա* Գանձ Հոգո գալստեան («ՄԿՐՏԻ») – *Մեծ եւ հզաւր Հոգի Աստուծոյ, անտես մըտաց անհաս խորհրդոյ…*

37. *98ա-100ա* Գանձ եկեղեցոյ («ՄԿՐՏԻՉ») – *Մաքրեալ տաճար սուրբ տէրունական…*

38. *100ա-1բ* Գանձ Վարդավառին («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ ահեղ խորհուրդ մեզ յայտնեալ…*

39. *101բ-4ա, 105բ* Գանձ Փոխման Աստուածածնին («ՄԿՐՏԻՉ») – *Մեծապայծառ հրաշակերտ վեհին սաւառնացեալ…*

40. *105բ-8բ* Գանձ Սուրբ Խաչին («Ի ՄԱԹԵՈՍԵ») – *Իսկակից Որդի Հաւր քո հզաւրի…*

41. *108բ-10բ* Գանձ մարտիրոսաց («ՄԿՐՏԻՉ») – *Մեծապայծառ փառաւք զարդարեալ եկեղեցիք…*

42. *110բ-3ա* Գանձ հրեշտակապետացն («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ ահեղ խորհուրդ հրաման…*

43. *113ա-5ա* Գանձ Յակոբա Մծբնա հայրապետին («ՄԿՐՏԻՉ») – *Մեծահռչակ անուն գովելի, տէր սո՛ւրբ Յակոբ…*

44. *115ա-8բ* Գանձ Դաւթի եւ Յակոբա («ԽԱՉԱՏՈՒՐ») – *Խորք անքննին անճառ անհասին, Հօր արարչին…*

45. *118բ-21ա* Գանձ սրբոյն Ստեփանոսին («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ հզօր անմահ թագաւոր…*

46. *121ա-3ա* Գանձ առաքելոցն Պետրոսի եւ Պօղո[սի] («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ ահեղ խորհրդո Փրկչին…*

47. *123ա-5բ* Գանձ Յոհաննու եւ Յակոբա՝ որդոցն Ռոտմ[ան] («ԳԷՈՐԳԵԱՆ») – *Գերահրաշ խորհուրդ աւետարանչաց…*

48. *125բ-7բ* Գանձ պաշտաման գիշերոյ («ԳՐԻԳՈՐԻ Ե») – *Գերանճառ արփի՝ գոյից ամենի…*

49. *127բ-9բ* Գանձ եկեղեցոյ («ՄԿՐՏԻՉ») – *Մեծապայծառ փայլմամբ իբր ըզբոց գեղազարդեալ…*

50. *129բ-31բ* Գանձ հայրապետացն («ՅՈՎԱՆԵՍ») – *Յաւէտ քեզ փա՛ռք, փառա՛ց թագաւոր…*

51. *131բ-3ա* Գանձ մարգարէից («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ ահեղ անուն հրաշալի… զխաղաղութիւն տալ անդատապարտք. ողորմեաց:*

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, *բոլորգիր, ԺԶ. դար*

ա. *104բ-5ա* [Տաղ] – *Արեգակ<ա>ն արդարութեան, ալելուիա՛յ, բացաւ մեզ դուռն ողորմութեան… Քրիստոս հզօր մեծ թագաւոր. աւրհնեալ է Տէր:*

104բ սկ., այլ ձեռով՝ «Կթխայ դորիք ձեռաց»:

բ. *105ա* [Տաղ] – *Այսօր եղեւ պայծառ գարուն, / ցնծան ծաղկունքն եւ զարդարին, / ձայնն քաղցրիկ գայր պլպուլին… զինչ ալիքն մէչ ծովուն:*

գ. *133բ* [Տաղ] – *Յիսուս Որդի Հաւր միա[ծին], ճառագայթ կերպարանին, ծնունդ անճառ… /// պատվիրանին /// անառակին (4-5 տող անընթեռնելի):*

Տե՛ս Ներսէս Շնորհալի, Գիրք, որ կոչի Յիսուս Որդի, Կ. Պոլիս, 1824, էջ 3-4:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

133բ Փա՛ռք ամենասուրբ երրորդութեան՝ Հաւր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգւոյն, որ հասոյց զիս ի յաւարտ Գանձարանիս, զոր փափա[գա]նաւք սրբագրել էրեւտ Ղարաճա Յոհաննէսն՝ յիշատակ իւր եւ ծնաւղաց իւրոց: Որք հանդիպիք եւ եղանակէք, յիշեցէ՛ք ի սուրբ յաղաւթս ձեր զբգուն գրիչս՝ զՄելիխեթս, եւ զամացող սորա՝ զՂարաճա Յոհաննէսն, եւ ծնաւղս իւր, եւ Աստուած զձեզ յիշէ իւր յարքայութիւն. ամէն: Գրեցաւ Գանձարան[ս] ի թվիս Հա[յ]ոց ի Ջ[ԻԹ]. (1480):

Տե՛ս Տե՛ս ԺԹ. դ-ի յիշ-ք, Գ., էջ 453, Հմր 617:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1ա (շղագիր, ԺԹ. դ.) Նուէր Սուրբ Էջմիածնայ *մատենադարանին* Գաբրիէլ Յոհաննիսեանց: *12 ե. 1885:*

ՆՇՈՒՄ՝ *Ա. կազմին սոսնձուած կարմիր մոմլաթին՝ «3505», Ա. կազմաստառին սոսնձուած թերթիկի ա երեսին՝ «Հմր 2 / Գանձարան քառածալ, բոլորագիր. գրեալ ի թղթի «ի Մելիխսեթէ ումեմնէ ի թվին հայոց Ջ/// եղծեալ». ունի ի վերջն յիշատակարան համառօտ: Պարունակին ի Գանձարանիս. Ա. Գանձք ի ծնունդն Քրիստոսի՝ բաժանեալ ի չորս գլուխս… Ի թաղումն, ի յարութիւնն, ի համբարձումն Քրիստոսի: եւ այլն, եւ այլն», «2 թերթ մագ. պհպ.», բ. երեսին՝ «408/3505, Ջհ.-1471, Մ[եսրոպ] եպիսկոպոս», պհպ. Ա՝ «3505/408, 1471 թ.», 1ա՝ «3505, նուէր* Սուրբ Էջմիածնայ *Մատենադարանին,* Գաբրիէլ Յովհաննիսեան, *1885.12.V.»:*

ԳՐՁԱՓՈՐՁ՝ *Պտոկ-պհպ. Գբ՝ հայերէն այբուբենի տառեր, 28բ՝ հակառակ դիրքով «Առութիւն Տէր Յովանէսայ»:*

ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *Պտոկ-պհպ. Գբ՝ թռչուն, ծաղիկ:*

3506
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ԼԵՀԱՍՏԱՆ* (՞ Ա.)
ԱԴՐԻԱՆՈՒՊՕԼԻՍ (Բ.)


ՌԿԴ. – 1615 (Ա.)
ՌՃԽՋ. – 1697 (Բ.)

ԳՐԻՉ՝ Ջատիբ Պօղտանի (1ա-60ա), Անանուն (60ա-96բ), Կարապետ (97ա-130բ), Միհնաս Ֆիյ (130բ-259բ): ՍՏԱՅՈՂ՝ Եփրեմ պատրիարք երաժիշտ:


Ծնբ. Համառօտ ցուցակի (Ա., 1965, էջ 1029) ետ նաեւ մեծ առաջին մասի գրչութեան վայր ենթադրաբար համարում ենք Լեհաստանը, քանի որ առաջին գրիչ Ջատիբ Պօղտանուց (Պօղտանի որդի) մեզ են հասել Լվովում գրուած Հմր 99, 1385 ձեռագրերը:

ԹԵՐԹ՝ 260: ՊՐԱԿ՝ Ա-ԻԲ×12 (Թ 4, ԺԱ 10)+4: ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ թագով պսակուած ոճաւոր ուղղանկիւն, մէջը՝ «WERGOY/ VERYRAVT/ HATWOL/ GEBAVT/ HANSEISEL»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19×14,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն՝ թ. 1-60 (14×11), թ. 61-96 (15-15,5×11), թ. 97-260 (13,5-15×9,5): ԳԻՐ՝ բոլորգիր՝ թ. 1-60 (նմուշ՝ 35ա), բոլորգիր՝ թ. 60-96 (նմուշ՝ 69ա), բոլորգիր՝ թ. 97-130 (նմուշ՝ 122ա), թ. 130-259 (նմուշ՝ 212ա): ՏՈՂ՝ 25 (թ. 1-60), 31 (թ. 61-94), 25-26 (թ. 97-196), 30 (թ. 197-259): ԿԱՋՄ՝


շագանակագոյն կաշի, Ա. փեղկին ձուածիր իսլամական ճնշադրոշմ (պահպանուած ճիւն կազմից). միջուկը՝ տախտակ. աստառը՝ կանաչ կտաւ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԴ՝ սպիտակ չգրուած թուղթ:




Նմուշ 35ա



Նմուշ 69ա



Նմուշ 122ա



Նմուշ 212ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – ձակատազարդ՝ 26բ, 190ա, 221ա: Լուսանցազարդ՝ բուսական (26բ, տարբեր՝ 31բ, 54ա): Զարդագիր՝ թոչնագիր, հանգուցագիր (5բ, 26ա, 54ա՞), մարդադէմ (109ա, 190ա, 252ա): Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, վարդագոյն, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. վերջին նորոգումը 2023 թ.ի, վերակազմած՝ նախկին կազմից պահելով միայն Ա. փեղկի կաշին, վրան 2 մետաղէ գամերի հիմի վարդեակի հետքեր, խաղը դասաւորութեան թերթերը ճիշտ կարգով կազմած. թ. 1-59 թանաքի թթուայնութեան հետեւանքով տեղ-տեղ տառերն արտացոլուած հակառակ երեսներին, գրադաշտը մգացած, 77ա-ին նախկինից մնացած կապոյտ մատիտով գրութեան հետքեր, թ. 181ի առտ. լս-ի կտրած մասը լրացուած. լուսանցակողերը կեղտոտուած:

Ծնթ. նախկին՝ Ի. դարի 50ական թթ.ի կազմը (Ա. փեղկ շագանակագոյն կաշի, Բ. փեղկ եւ Ա.ի եզրեր վարդագոյն մոմլաթ, մէջքը կապոյտ կտաւ, միջուկը ստուարթուղթ, աստառը սպիտակ թուղթ, Ա. փեղկի ճիւն աստառից դեղին մետաքսէ պատառիկ) պահուում է ձեռագրատանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *2ա-5բ* Ընդդիմադրութիւն առ միմեանս սրբոյն Աթ[անա]սի եւ Արիոսի՝ նոցունց խնդիր դարձեալ յաղագս Սրբոյ Հոգւոյն – *Արիոս ասէ. Եւ արդ, վասն զի մանաւանդ սահմանացեր դու ի սկզբանն համագոյական գոլ… այսու իմացիր եւ լռեաց:*

Ծնթ. թերթերի ստ. լս-ներին շղագրով ցուցումներ նախկինում խառը դասաւորութեամբ թերթերի ճիշտ կարգի մասին, օրինակ՝ 3բ՝ «շար. տես թղ. 17», 11բ՝ «Տես շարունակութիւն 94 բ.», 24բ՝ «Տես շարունակութիւն 57-րդ թուղթ», 12ա՝ «առաջին մասը Տե՛ս թուղթ 5»:

2. *5բ-26ա* Սրբոյն Աթանասի եւ Ջակէի՝ առն հրէից տուրեւառմ վիճմանց՝ յաղագս աստուածութեանն Քրիստոսի – *Ջակքէ ասէ. Մոլորեալք էք, քրիստոնեա՛յք դուք, նախ եւ առաջին՝ զի կարծէք եւ այլ Աստուած գոլ, քան զմինն… իբրեւ առագաստեալ տեսանիւր յաչս ձեր:*

3. *26բ-31բ* Հարցմունք եւ պատասխանիք ի Գրոց Սըրբոց – *Մինչ ոչ էին ստեղծեալ հրեշտակք եւ մարդիկք, զաստուածութիւնն ո՞վ փառաւորէր: Պատասխանի. Հայր Որդոյ փառաւորէր… ճաշակեաց Ադամ վասն կնոջն ողորմելոյ, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս:*

4. *31բ-2ա* ԲԺ. (12) ակն լանջացն Ահարոնի, ԽԴ. (44)՝ ԲԺ. (12) առաքելոցն արժանաւորք լանջաց մեծի հաճանայապետին Յիսուսի – *Առաջին ակն սարդիոն շիկագոյն, արիւնատեսիլ գոյանի… գոյանի ի Տորոս, յանցս եփրատ գետոյ:*

5. *32ա-7ա* Ոլոմպիանու առակ

ա. 32ա Մտընտուն ցմանուկն, վասն զի լայր, թէ ոչ լուռ կացցես, ասէ… մինչեւ ցբանն են յուսացելոցն շնորհք:

բ. 32աբ Կրիայ զձի ի հանդէս ընթացից կոչէր… պիտոյանալ կրթութեան եւ փութոյ յամենայն ուրեք:

գ. 32բ Ընդ կուսի գեղեցկութեան առիւծ զարմացեալ տուփէր… զբնութեանս զէնս ոչ մերկանալ:

դ. 32բ-3ա Տուփեցաւ աքիս ի պատանւոջ… բնութեան իրք անընդդիմակալ են եւ յամենայնի բուռն:

ե. 33ա Յառիւծէ ծերութիւն հատանէր զզօրութիւն… իսկ իմաստնոցն յայտնի է:

զ. 33ա Մայր ցեղջերու ասէ, եթէ դու եւ մեծութեամբ յաղթ ես, քան զշունս… զօրացուցանէ զբնութեամբ երկչոտսն:

է. 33աբ Քարոզ ի հաւս հասանէր… մի՛ արտաքուստ պիտոյանալ զարդուց:

ը. 33բ-4ա Նապաստակք ի մի վայր եկեալք՝ մեզ ասեն. կեանքս անկեանք են… չար ընկերացն տեսանել, զի կրիցեն:

թ. 34ա Ագռաւ զիւր բնութիւնն պարսաւէր… որ ոչ բնութեան է սարաս։

ժ. 34ա էշ էր եւ առիւծ թուէր… զխրատելոցն կեղծաւորիս ձեւ։

ժա. 34աբ Գորտ եւ մեծաձայնէր միանգամ… քանզի բազում անգամ յինքեանց մատնին։

ժբ. 34բ Գայլք առ ոչխարս հրեշտակագնաց եղեալ ասեն… խ<ա>րատէ առասպելս ի թշնամեաց խրատուց զգուշանալ։

ժգ. 34բ-5ա Ջուարակք ի միասին արածէին… զառ բարեկամիս հաստատուն պահել զմտերմութիւն։

ժդ. 35ա Ագռաւ պանիր ունէր ի բերանն… մի՛ երբէք պատրիցիս ի սուտակասպաս գովութենէ։

ժե. 35աբ Կապիկք մեծ իմն խորհեցան քան զբնութիւն… ունի իմն ծերութիւն իմաստութիւն ժամանակաւ եւ հմտութեամբ աւելագոյն։

ժզ. 35բ Արծիւ հալածէր զկաքաւ, եւ կաքաւն ի բզէզն ապաւինեցաւ… մի՛ առնէր քեզ թշնամի զոք ի մարդկանէ, թէպէտ եւ աղքատ եւ տկար լինի։

ժէ. 35բ Մրջիմն եւ աղաւնին. Աղաւնին տեսեւ ետ մրջմանն… յորմէ զերծաւ աղաւնին։

ժը. 35բ Որսորդն կալաւ կաւաք մի… զի ոչ հաճի Աստուած ի գործս քո եւ դարձեալ քեզ պատրաստէ զնա։

ժթ. 35բ-6ա Աղուէս մի քաղցեաւ… հետոյ ոչ երեւի ումէք, զի անցաւոր եւ խաբող է։

ի. 36ա Հարցին ընդ աղուեսն, թէ քանի ցեղ արուեստ գիտես… ապա նա է կատարեալ մարդ, որ ոչ մեղանչէ։

իա. 36ա Այրի կին մի ունէր տղայ մի… մեղք որդւոցն ի գլուխ ծնողացն է յօուրն դատաստանի։

իբ. 36աբ Աղուեսն եւ խեցգետին եղեն եղբարք… տեարք լինին երկնից հացին։

իգ. 36բ-7ա Առիւծն կալաւ իւր սպասաւոր զաղուեսն… ոչ վայել է մարդոյ ձկտել աւելի քան զկար իւր, ոչ ի հոգի եւ ոչ ի մարմին։

իդ. 37ա Արծիւ սլանայր ի հօտս ոչխարաց… ընդմբռնին յորոգայթ նման բանսարկուին։

իե. 37ա Ագռաւն գնաց առ հաքիմ եւ իր ձագուն դեղ ուզէր… հետոյ երբ անկին ի նոսա եւ չօգտին։

Տե՛ս Առակք Ոդոմպիանու, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1854, ձեռագրիս ԻԹ., իե. առակները տպագրում չկան։

6. 37ա-49բ Վասն բառուց իւր<գի>աֆանչիւ կենդա[նւոյն] – *Վասն առիւծու, որպէս բարուախօսն ասէ, թէ թագաւոր է ամենայն գազանաց… թէ այլ ոք կայ Աստուած, քո արարիչ, մեր երկրպագութիւնս նմա համարեսցի։*

ա. 37աբ Վասն առիւծու, որպէս Բարուախօսն ասէ, թէ թագաւոր է ամենայն գազանաց… բարւոք ասացեր բար[ոյախօսն] վասն առ[իւծուն] եւ վասն կոր[եան]։

բ. 37բ-8ա Էրէ ինչ աթոլոփս գազան սաստիկ երէ…

գ. 38ա Ի գինոյ եւ ի կնոջէ խոտորեայ այլ իմաստուն։ են եւ քարինք ինչ…

դ. 38աբ Է գազան ինչ ի ծովի, որ կոչի սղոց…

ե. 38բ-9ա Է թռչուն ինչ, որ կոչի քարադրոս…

զ. 39ա Դաւիթ ասէ՝ Նմանեցայ ես հաւալ…

է. 39աբ Ջբուոյն ասեն, թէ զգիշեր քաջ սիրէ, քան զտիւ…

ը. 39բ Դարձեալ ասէ Դաւիթ Նորոգեսցի որպէս զարծու[ի] մանկութիւն քո։ Բարուախօսն ասէ զնմանէ, թէ յորժամ ծերանայ…

թ. 39բ-40ա Տէր մեր Յիսուս Քրիստոս ասէր՝ Իշխանութիւն ունիմ դն[իլ]… էր թռչուն ինչ, որ կոչի փիւնիքս…

ժ. 40ա Գիրք ասեն՝ թէ որ անարգէ զհայր կամ զմայր… է թռչուն ինչ, որ կոչի յոպոպ…

ժա. 40աբ Յոր ասէ, թէ՝ Ով եթող զցիւռ ազատացեալ։ Բարուախօսն ասէ զցիռն…

ժբ. 40բ Յովաննէս ասաց ցփարիսեցիսն ծնունդ իժից։ Բարուախօսն ասէ զիժէ, թէ յորժամ արուն…

ժգ. 40բ-1ա Տէր մեր ասաց՝ եղերուք խորագէտք իբրեւ զօձս։ Բարուախօսն ասէ, թէ երեք բարք են օձի…

ժդ. 41աբ Սողոմոն ասէ՝ երթ առ մրջիւնն, ո՛վ վատ [Առակ. Ջ. 6]։ Բարուախօս ասէ՝ Գ. բարք են մրջիւնն…

ժե. 41բ-2ա Եսայի մարգարէն ասէ՝ Անդ յուշկապարիկք բնակեսցեն [ԺԳ. 21-22]։ Բարուախօսն ասէ վասն յուշկապարկաց, թէ մահաբերք են…

ժզ. 42ա Է գեռուն ինչ ոզնի անուն…

ժէ. 42աբ Վասն մղձի, որ կոչի արագնոյ բարուախօսն ասէ, թէ յորժամ ծերանայ…

ժը. 42բ Ջաղուէս. ասէ բարուախօսն, թէ ամենեւին նենգաւոր է…

ժթ. 42բ-3ա Մարգարէն ասէ՝ Ի Տեառնէ եղիցի նա որպէս առիւծ… Բարուախօսն ասէ զյովազէ…

ի. 43ա Պաւղոս առաքեալ ասէ՝ Ջեմ ինչ անտեղեակ… [Բ. Կոր. Բ. 11]։ Բարուախօսն ասէ՝ գազան ինչ ի ծովու…

իա. 43բ-4ա Երեմիաս ասէ՝ Ջայն արար կաքաւն… [ԺԷ. 11]։ Բարուախօսն ասէ զկաքաւէ, թէ զայլոց ձուս թխէ…

իբ. 44աբ Տէր ասաց՝ Վայ յղեաց եւ որ ունիցին մանուկ ստընդ[հայս]… [Ղուկ. ԻԱ. 23]։ Բարուախօսն ասէ զանգեղէ…

իգ. 44բ Ելիփազ Թեմնացի ասէ՝ Մրջիւն առիւծն սատակեցաւ… Բարուախօսն ասէ զմրջիւն առիւծ է, թէ հօր նորա…

իդ. 44բ-5ա Աւրէնքն հրամայեն՝ Մի՛ ուտիցես զաքիս։ Բարուախօսն ասէ զաքսոյ, թէ…

իե. 45ա Մարգարէն ասէ՝ Որպէս փափաքէ եղջերու։ Բարուախօսն զեղջերուէ ասէ, թէ այնպիսի ինչ բնութիւն…

իգ. 45աբ Է երէ ինչ, որ կոչի կոտորոս…

իէ. 45բ Աւրէնքն ասեն՝ Մի՛ ուտիցես զբորէն… Բարուախօսն ասէ, թէ արու եւ էգ է…

իը. 45բ Այլ ինչ էրէ կայ ի նեղոս գետ…

իթ. 46ա է երէ ինչ, որ կոչի ինքնիմոս, որ թարգմանի հետահան…

լ. 46աբ է ծառ, որ կոչի պերեդիքսոն, որ թարգմանի կշտապանակ…

լա. 46բ Բարւոք ասաց՝ Թէ նստես դու իբրեւ զագռաւ… Բարւախօսն ասէ զագ[ռաւէ], թէ ի միաւորութենէ…

լբ. 46բ Բարւախօսն ասէ վասն տատրակի…

լգ. 46բ Ծիծառն միանգամ ծնանի…

լդ. 46բ Եւ զմիեղջերէ ասէ, թէ թշնամի է օձի…

լե. 46բ-7ա Դարձեալ վասն արջու այնպէս ասէ, թէ գազան է…

լզ. 47ա է հաւ մի, որ կոչի ժրահաւ…

լէ. 47ա Զագռաւ ասէ, թէ յորժամ հանէ զձագն ի ձուոյն…

լը. 47աբ է թռչուն ինչ փանաքի եւ վտիտ, անախտ եւ անհաս…

լթ. 47բ է գազան ինչ վար[ա]զանման…

խ. 47բ է գազան ինչ որպէս եզն…

խա. 47բ է գազան ինչ մարդակերպ…

խբ. 47բ է այլ կենդանի որպէս զոչխար…

խգ. 47բ է գազան ինչ կանանցի ունելով զգլուխն…

խդ. 47բ են եւ այծամարդք…

խե. 47բ են եւ այլադէմ կենդանիք…

խզ. 48ա է գազան ինչ նման առիւծու…

խէ. 48ա է գազան ինչ մեծ քան զփղեղ…

խը. 48ա եւ վասն միեղջերուի ասեն…

խթ. 48ա Վասն բասկճի ասե…

ծ. 48բ Վասն վագրի ասեն…

ծա. 48բ են ի հնդկաց կողմն մարդիկ…

ծբ. 48բ է եւ էշ եղջիւրաւոր:

ծգ. 48բ են մարդիկք ագեւորք…

ծդ. 48բ է հնդիկս կղզի ասեն…

ծե. 48բ Ի կապադոկիայ է ծովակ…

ծզ. 48բ Ի Թիրակէ է ծովակ մի…

ծէ. 48բ Ի Պէփլագոնիայ է աղբիւր…

ծը. 48բ-9ա Շաթաոռի մօտ ի Փայտակարան քաղաք…

ծթ. 49աբ Մինդիմոս սոփեստէսքն, որ են մերկիմաստք…

Ծնթ. Ա. խմբգր., յաւելեալ երկրորդ շարով: Միաւորները առանց խորագրերի, իրարից տարորոշուած առաջին բառի սկզբնատառի կարմրով եւ լս-ներում առուած յատուկ նշաններով:

Տե՛ս Գ. Մուրադեան, Բարոյախօս (PHYSIOLOGUS). հայերէն խմբագրութիւններ.– Բանբեր Մատենադարանի, հտ. 23, Երեւան, 2016, էջ 291-329: G. Muradyan, Physiologus, the Greek and Armenian Versions with a Study of Traslation Technique, Leuven-Paris-Dudley, MA 2005:

7. *49բ-55ա* [Խրատ Յովհաննու Երզնկացւոյ]

ա. *49բ-53բ* Խրատ հոգեւորական՝ ասացեալ Յոհաննիսի վարդապետի Եզնկեցւոյ, որ Պլուզն կոչէին – *Աբար Աստուած զմարդն հոգի եւ մարմին… պիտի աւելրի աշխարհն այն:*

բ. *53բ-5ա* Խրատ մարմնաւոր կենացս յաշխարհի իմաստութեան՝ ընդ Յոհաննու Եզնկեցւոյ ասացեալ – *Զպարոնութիւն արժանի մարդոյն այն, ով ճանաչէ… ոչ որ մեծազգի լինի, ու գործքն վատ, եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս:*

8. *55ա-7բ* Խրատ իմաստնոց՝ պիտանի ամենայն մարդոյ – *Զորս իրք զթագաւորութիւնն պահէ… այնոքիւք է ի պատկեր Աստուծոյ, որպէս ասէ մարգարէն:*

9. *57բ-9ա* [Հարցմունք թագաւորին տաճկաց եւ պատասխանիք Անտիոքայ հայարպետի. հմմտ. ձեռ. 644, 147բ] Թագաւորն տաճկաց ասէ – *Հարց. Ընդէ՞ր ինքն Աստուած իջանէր յերկնից… Պատասխանի Տիմոթէոս Անտիոքա հայրապետ. Եւ ընդէ՞ր ինքն Աստուած իջանէր… բան ի մտաց, անհաս եւ անժամանակ եւ անբաժանելի, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

10. *59աբ* Բանք ընդդիմադրականք առ մահատականն (=մահմետականք), որ եւ կարծիս տան, թէ գիտեն զԱստուած, զաւրէնս նոր Աստուծոյ – *Արդ, մեք երիս Աստուածս օտարս եւ զատեալս… Յիսուս՝ Որդի Մարիամու, Հոգի եւ Բան Աստուծոյ:*

11. *59բ-60ա* [Վասն սրբոյն Աստուածածնի] – *Աւետարանեցաւ սուրբն Մարիամ ի Նազարեթ եւ ժե. ամաց էր… սատակեցան արք Ծ. (50)՝ հարեալք զմխմեանս, որում փառք յաւիտեանս. ամէն:*

12. *60ա-79ա* [Նոնոսի] Ժողովարանք մեկնութեանց պատմութեանցն այնոցիկ, զորս յիշատակեաց սուրբն Գրիգոր Աստուածաբան ի ճառի մեկնութեանն, որոյ սկիզբն «Դարձե[ա]լ իմ Յիսուս» է.

Տե՛ս ձեռ. 598, 22բ-54բ: 1. ա/60աբ: բ/60բ-1ա (խորագիրը եւ սկիզբը տարբեր՝ Ոչ փոխգացուց, հատուածք եւ փողք եւ կորիքանդք – Այս պատմութիւնս կայ յԱրձանականն…): գ/61աբ: դ/61բ-2ա: ե/62աբ: զ/62բ: է/62բ: ը/62բ-3ա: թ/63ա: ժ/63աբ: ժա/63բ: ժբ/63բ: ժգ/63բ: ժդ/64ա: ժե/64ա: ժզ/64ա: ժէ/64աբ: ժը/64բ: ժթ/64բ: ի/64բ-5ա (սկիզբը տարբեր՝ Ի միս կարծեցեալ եղեւ ոչհի աղջկանն յափշտակելոյ…): իա/65ա: իբ/65ա: իգ/65ա: իդ/65աբ: 2. [Պատճառ]/65բ-6բ (խորագիրը՝ Առաջին ճառ: Յաղագս Պոլիպիդեացն եւ որ ընդ նոսա անուանցն): ա/65բ-6ա: բ/66ա: գ/66աբ: դ/66բ: ե/66բ: զ/66բ-7ա: է/67ա: ը/67ա: թ/67աբ: ժ/67բ: ժա/67բ-8ա: ժբ/68ա: ժգ/68ա: ժդ/68բ: ժե/68բ: ժզ/68բ: ժէ/68բ-9ա: ժը/69ա: ժթ/69ա: ի/69ա: ի-ա/69աբ: իբ/69բ: 3. (խորագիրը տարբեր՝ Մեկնութիւն նմանապէս այնոցիկ եւ որ յառաջնումն արձանականին եղեւ յիշեալ պատմութեանց), [Պատճառ]/69բ-70ա: ա/70աբ: բ/70բ: գ/70բ-1ա: դ/71ա (Զորրորդ պատմութիւն

Յաղագս Պէլօպսի խակագործութենէ, որ եւ գրեալ է ի մկրտու[թեան] ճառին): ե/71ա: զ/71աբ: է/71բ (Որ առ Տօրոսքն օտարասպանութիւնք է.երորդ – Տօրոսքն ազգք են սկիւթացիք, առ որ փոխադրեալ եղեւ ի ձեռն Արտեմիդեա...): ը/չիք: թ/71բ: ժ/71բ-2ա: ժա/72ա: ժբ/72ա: ժգ/72ա: ժդ/72ա: ժե/72աբ: ժզ/72բ: ժէ/72բ: ժը/72բ: ժթ/72բ-3ա: ի/73ա: իա/73ա: իբ/73աբ: իգ/73բ-4ա: իդ/74ա: իե/74ա: իզ/74աբ: իէ/74բ-5ա: իը/75ա: իթ/75աբ: լ/75բ: լա/75բ: լբ/75բ: լգ/75բ: լդ/75բ-6ա: լե/76ա: լզ/76ա: լէ/76բ: լը/76բ: լթ/76բ-7ա: խ/77ա: խա/77ա: խբ/77աբ: խգ/77բ: խդ/77բ: խե/77բ-8ա: խզ/78ա: խէ/78ա: խը/78բ: խթ/78բ: ծ/78բ: ծա/78բ-9ա: ծբ-ղ/չիք: 4/չիք:

Ունի՝

ա. 68աբ Ժ. Հանդերձ այսոքիկ եւ յաղագս սաղամանդրեանցն պատմութիւն – *Սաղամանդրն կենդանի ինչ է՝ մեծութեամբ իբրու այնմ... եւ նա ոչ այրի:*

բ. 78բ ԾԲ. Այլ պատմութիւն – *Այսինչ առասպելեալ լինի՝ ի Տիւռենական ծովն գազան ինչ գոլ... ուտէր անխնայապէս եւ գազանաբար:*

գ. 76բ ԼԶ. Յաղագս սնափառին Անմահսարագոռոսի գրեալ է:

դ. 76բ ԼԸ. Յաղագս Փաղէղոսի ասացեալ է ի ճառի սրբոյ աւուրն լուսոյ եւ գրեալ է:

ե. 78ա Խէ. Յաղագս Միւթրոսի գրած է:

Ծնթ. Ունի շարադասութեան եւ բառային որոշ տարբերութիւններ: 2րդ միաւորի ա-ե ենթամիաւորները չառանձնացած եւ անխորագիր:

13. *79ա-81բ* Վասն որ ներհնաւածողն Նաւատիոս զկնի մկրտութեանն ոչ թողոյր յանցաւորին գրեաց Աստուածաբանն Գրիգորիոս առ եօթնալոյսն Բասիլիոս, եւ նա պատասխանէ – *Գանձ եկեղեցոյ Աստուծոյ է Հին եւ Նոր կտակարանքն եւ ամենայքն վկայեն... եւ զայլ սքանչելիսն արար, եւ սոքա ասեն՝ կեցոյ եւ ապրեցոյ:*

Վերնագրից առաջ նոյնպէս կարմրագիր՝ «Գրիգորի գրեալ է ի պատմութիւն ի Բասիլիոսի»:

14. *81բ-6ա* Տեսիլ սրբոյն Յոհաննու Աստուածաբան աւետարանչին՝ Յաղագս Գալատեան Տեառն, թէ որպէս իջանելոց է յահեղ աւուրն յերկնիցի յերկիր – *Յետ Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ համբառնալոյն յերկինս... պահեսցեն զպատուիրանս իմ այժմ եւ յաւիտեան օրհնեալ լիցին. ամէն:*

15. *86ա-95բ* Պատմութիւն վասն Նեռին ծնընդեանն, սնունդն եւ չար գործոյն, եւ յառնելոյ եղիայի եւ Ենովքայ, վասն զօրանալոյ փոանկ ազգին եւ առնելոյն զմեծն Ստամպօլ եւ սուրբն յերուսաղէմ եւ վասն փոխման թագաւորացն եւ վասն կատարածի աշխարհի եւ վասն դատաստանի աւուրն՝ ասացեալ սուրբն Ագաթանգէի՝ սուրբ եւ անյաղթ փիլիսոփայի՝ յաղագս լուռագ – *Արդ, ի լնուլ ամաց է.եանց դարուն, մտանելոց ՀՒՀՃ. եւ ե. (8840) ամին լինի կատարումն լուսնին... լսելոյ երանաւէտ ձայնին. եթէ՝ եկայք աւհնեալք Հօր իմոյ. ամէն:*

16. [Մանուկ]

ա. *81բ* Այլուստ բան – *Մանանեխ օգուտ գործէ ամենայն կարգաց մերոց... պայծառ՝ վասն թողութեան, վաշ՝ նմանողին:*

բ. *81բ* [Նշանակութիւնք անուանց] – *Գրիգոր եւ Գրիգորէս արթուն եւ հսկող թարգմանի, Վրթանէս՝ հետեւումն Տեառն, Ռստակէս՝ կրկին պարգեւք, Յուսիկ՝ փրկանք, Ներսէս՝ բղխումն շնորհի, Խահակ՝ ծաղր երեսաց եւ խնդութիւն աչաց:*

գ. *95բ-6ա* Առասպել, զոր ասեն ի հինն, զոր յիշէ Փիլոն – *Պասիփա՝ ոմն դուստր արեգականն... Պասիփա՝ անկարգ խառնակութիւն:*

դ. *96ա* Մովսէս եդ օրէնս խիստ – *Քահանայապետին՝ տարեւորական պահք, քահանայիցն՝ շաբաթուք... այս հնոյն աւանդութիւն:*

ե. *96ա* Այս են անուանք թագաւորաց Պարթեւի հայոց – *Հրաչէ, Տիգրան, Արշակ, Վաղարշակ... Խոսրով, Վրամշապուհ, Արտաշէս:*

զ. *96ա* Այս են թագաւորք հայոց վերջինք, որք են Բագրատունիք, որ յԱնի քաղաք թագաւորեցին – *Աշոտ՝ որդի Սմպատայ, Սմպատ՝ որդի Նորա... որ անուանեցան Մամիկոնեանք:*

17. *97ա-108ա* Վկայութիւնք վասն Տեառն մերոյ՝ Յիսուսի Քրիստոսի՝ ի տեսլեան գրոցն Յօհաննու աւետարանչին, ընդ նմին եւ բան առ բան լուծումն մեկնութեան: Առաջին գլուխ – *Յայտնութիւն Յիսուսի Քրիստոսի ի ձեռն որոյ ետ Աստուած ցուցանել ծառայից իւրոց... [Ա. 1] Վկայութիւն Յիսուսի Քրիստոսի, զոր էտես եւ որ էրն... գայ վաղվաղակի յանդիմանութիւն անհաւատից եւ ի պարծանս հաւատացելոց, եւ նմա ընդ Հօր իւրում եւ ամենասուրբ Հոգւոյն փառք եւ երկրպագութիւն յաւիտեանս. ամէն:*

Տե՛ս Գրիգոր Տաթեւացի, Գիրք, որ կոչի Ոսկեփորիկ, Կ. Պոլիս, 1746, Գլուխ ԼԲ., էջ 295-339:

18. *109ա-89բ* [Անդրէասի Կապադովկացւոյ Մեկնութիւն Յայտնութեանն Յովհաննու]

Տե՛ս ձեռ. 1161, 79բ-168բ: Յիշ. թարգմանողի/189աբ (խմբագրուած. Տե՛ս ստորեւ): Ի տիեզերական ժողովոյն կամս.../109ա-10բ: Գլուխք/110բ-2ա: Ի յայտնութիւննն Յոհաննու.../112ա-5ա: ա/115ա-8բ: բ/118բ-9բ (վջ./// ...ի հոտոտելիս մտաց հաւատացելոց///): գ/120ա (սկ. թափ. «///տեսին բարութեանցն: Յայտն է փայտին անուամբ...»): դ/120աբ: ե/120բ-1բ: զ/121բ-3բ: է/123բ-4ա: ը/124ա-5բ: թ/125բ-7բ: ժ/127բ-30բ: ժա/130բ-1ա: ժբ/131ա-2ա: ժգ/132ա-3ա: ժդ/133աբ: ժե/133բ-4բ: ժզ/134բ-5ա: ժէ/135աբ: ժը/135բ-7ա: ժթ/137ա-8բ: ի/138բ-40ա: իա/140ա-1ա: իբ/141աբ: իգ/141բ: իդ/141բ-2ա: իե/142աբ: իզ/142բ-4ա: իէ/144ա-5ա: իը/145բ-6ա:

իթ/146ա-7ա: լ/147ա-8ա: լա/148աբ: լբ/148բ-9ա: լգ/149ա-51բ: լդ/151բ-5ա: լե/155ա-6ա: լզ/156ա-7ա: լէ/157ա-8ա: լը/158աբ: լթ/158բ-9բ: խ/159բ-60ա: խա/160ա: խբ/160ա-1ա: խգ/161աբ: խդ/161բ-2ա: խե/162ա-3բ: խզ/163բ-4ա: խէ/164ա: խը/164ա-5ա: խթ/165աբ: ծ/165բ: ծա/165բ-6բ: ծբ/166բ-7բ: ծգ/167բ-8բ: ծդ/168բ-71ա: ծե/171ա-3բ: ծզ/173բ-4ա: ծէ/174աբ: ծը/175ա-6ա: ծթ/176աբ: կ/176բ-7բ: կա/177բ: կբ/177բ-8: կգ/178ա-9ա: կդ/179բ-80բ: կե/180բ-1ա: կզ/181ա-2ա: կէ/182ա-5բ: կը/185բ-6ա: կթ/186աբ: հ/187ա: հա/187աբ: հբ/187բ-8բ:

Ծնթ. Լս-ներին սրբագրումներ եւ յաւելումներ:

—189աբ Նախադրութիւն սրբոյն Յովհաննու Յայտնութեանն

Ես՝ Ներսէս *նուաստս ի Քրիստոս եւ տարտամս յուսոմնասիրաց, վերջին եւ նուաղեալ ժամանակի ծնունդ, յընթեռնուլն զՅայտնութիւնն* Յովհաննու *տագնապէի յանձն իմ առ ի յոչ գիտել զլուծումն բանից սքանչելեացն, եւ այսր-անդր խուզելով զմեկնութիւն նորին ի մերս բարբառ ոչ գտի: Յետ որոյ եհաս ինձ ընթանալ ի մեծն* Անտիոք *եւ, շրջելով որ անդ վանորայս հոռոմոց եւ ֆռանկաց, այս տենչումն բորբոքէր ի միտս իմ, ուստի եւ քննեալ գտի ի գրեանս հռչակաւոր ուխտի* Սրբոյն Պօղոսի *ի քաղաքի անդ զմեկնութիւն Յայտնութեանս՝ ի լումպարտ բարբառ, եւ ի նոյն գիր, որով վարին ֆռանգք, Ր.ու (=երկու) մեկնչաց արարեալ, եւ փափաքելով թարգմանել, ոչ գտի զոք, որ յայնմ բարբառոյ կարէր ի հայս յեղաշրջել: Ապա ելեալ արտաքոյ քաղաքին՝ ի սուրբ լեառն, որի հիւսիսոյ կողմն անդր ի մի ի վանօրէիցն հոռոմոց, յորում անուն էր* Պէթիաս, *առ որմն արգելական միայնակեաց, որոյ անուն էր* Բասիլ, *քննեալ գտի զցանկալին ի հելլենացի բարբառ եւ ի գիր՝ ուղղաբան եւ վայելուչ, որ լեալ էր* Աթանասի՝ *պատրիարգի նորին քաղաքի: Եւ խնդրեալ աղաչանօք ի բարեմիտ առնէն՝ առեալ փութացայ գրովքն ի հայրապետական աթոռն՝ առ տէրն իմ եւ կաթողիկոսն սուրբն* Գրիգորիոս, *զոր ծանուցեալ ուրախ եղեւ յոյժ եւ հրամայեաց թարգմանել ի ձեռն մետրապօլտին* Յերապօլսի Կոստանդեայ, *որ անդ՝ ի ներքոյ սրբոյ հայրապետին հովանւոյ հագչէր: Եւ սկսեալ օգնութեամբն Աստուծոյ եւ սրբոյ Տեառնն՝ նա ի թարգմանել եւ ես՝ ի գրել, վերընծայեցաք եկեղեցւոյ Հայաստանեաց ուսումնասէր մանկանց զայս աքանչելի եւ աստուածային Յայտնութեանս Մեկնութիւն:*

Արդ, աղաչեմ զընթերցողսդ եւ զիմաստութեան |189բ| զսիրողսդ յիմանալն զխորս իմաստից Աստուծոյ քննութեամբս զսուրբ զհայրապետն Հայոց՝ զտէրն իմ՝ զԳրիգոր *զբարեմիտն, ե՛ւ զբարեսէրն, ե՛ւ զառիթն թարգմանութեանս, ե՛ւ զհրամայողդ, մաղթեցէ՛ք ի Քրիստոս յաստիս խաղաղութեամբ պահել եւ ի հանդերձեալն սրբոց իւրոց յերկնից արքայութիւնն ժառանգակից ընդունել: Այլեւ զ*Կոստանդին *մետրապօլիտն, որ թարգմանեաց, եւ զԲասիլ կրօնաւորն, որ զօրինակն եհտ, Քրիստոս ողորմութեան իւրոյ արժանացուսցէ աղօթիւք ձերովք:*

Թարգմանեցաւ աստուածային Յայտնութեանս Մեկնութիւն ի թվականիս Ո. եւ ի ԻՀ.-ին (1179), ի սուրբ եւ ի հայրապետական աթոռն, որ կոչի Հռոմկլայ, *շրջապատեալ յագենական աղբերէն* Եփրատայ, *որ մատակարարէ բնակչացն զամենայն մարմնական պիտոյս, խնամօքն Աստուծոյ, ընդ հովանեաւ* Աստուածընկալ Նշանին Վանկոյ *եւ այլ աքանչելի սրբոցն, որ հանգուցեալ են անդր ի փառս Աստուծոյ: Իսկ սրբաբանեցաւ ի նշանագրութենէն քերթողական արհեստիւ ի յապահով անապատս* Սուրբ Գէորգ, *ի մէջ լերինս* Տորոսի, *որ է ի գահ* Կիլիկիոյ, *եւ ի սկիզբն* Պամփիլայ, *ձեռամբ նուաստ եպիսկոպոսի նորին մայրաքաղաքի՝* Տարսոնի, *տառապելոյս* Ներսէսի, *շնորհօք եւ ողորմութեամբն Քրիստոսի, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:*

Ծնթ. Տե՛ս Մեկնութիւն Յայտնութեան Ս. Աւետարանչին Յովհաննու, արարեալ տ. Անդրէի եւ Արետասայ եպիսկոպոսացն Կեսարու, յԵրուսաղէմ, 1855: Այս ձեռագրում Ներսէս Լամբրոնացու 1179 թ. յիշ-ը կիսատ՝ թերի է. ճմմտ. ձեռ. 1161, 79բ (նոյնպէս՝ վերջից թերի. մաճառամասները տե՛ս Ներսէս վ. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 267-73): Այս յիշ.ը Յովս. Յիշ-ի, էջ 473-6. առել է Հ^{մր} 2520 ձեռ-ի 343ա-4ա էջերից, իսկ ե-ԺԲ. դդ-ի յիշ-ի, էջ 228-9՝ առել է Հ^{մր} 1418 ձեռ-ի 125ա-6բ էջերից:

19. *190ա-220ա* Տեսութիւն պատմութեան բանից ննջման սրբոյ աւետարանչին Յովհաննու աստուածաբանի՝ արարեալ սրբազան արեպիսկոպոսին Տարսոնի Ներսէսի՝ ի խնդրոյ եղբօր ումեմն

ա. *190ա-1բ* [Յառաջաբան] — *Գիր քոյոյ պատուականութեանդ մի անգամ եւ երկիցս, Հա՛յր Սուրբ, եհաս առ իս... իւրաքանչիւր նոցա նշանակեցին, որ ասէ այսպէս:*

բ. *191բ-220ա* [Մեկնութիւն] — *[Բան]. Է՞ր ընդ եղբարսն երանելին Յոհաննէս մեծաւ ուրախութեամբ ի Տէր: [Մեկն.]. Է՞ր ասէ եւ թէ յորո՞ւմ տեղւոջ կամ ի քաղաքի, ոչ նշանակէ զլինելն... առ ի չեւս սորին իմաստութեամբ բարձրանալ շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ յուսոյն մերոյ եւ լուսոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն:*

Տե՛ս Ներսէս Լամբրոնացի, Տեսութիւն աղօթից, Կ. Պոլիս, 1736: Նաեւ՝ Ներսէս վ. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 155-159:

20. *220բ-49բ* Ի չորս հարիւր ԻՋ. թուականութեանս Հայոց Գրիգոր Բահանայ ի Նարեկայ, որդւոյ տեառն Խոսրովայ Անձաւացեաց եպիսկոպոսի, արարեալ է զմեկնութիւն սուրբ գրոցս, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. ամէն: Երգ երգոցի մեկնիչն է, ի Գրիգորէ Նարեկացւոյ մեկնեալ — *Արդ, նախ զայս արժան է*

ասել, թէ զի՞նչ մեկնի երգ երգոց եւ այսու զանբաւ պատուականութիւն նորա ուսանել... որք ուսանիքդ ի նոյն ինքն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն:

Տե՛ս Գրիգորի Նարեկացւոյ Մեկնութիւն երգոց երգոյն Սողոմոնի, կազմեց Լ. Յովսէփեան, Մատենագիրք հայոց, ԺԲ. հտ., Ժ. դ., Գրիգոր Նարեկացի, Երեւան, 2011, էջ 749-882: Տպագրի հմմտ. սկզբից թերի, սկսում է տպագրի էջ 762, 1ին հատուածի 13րդ տնից:

21. *249բ-59բ* [Վկայութիւմբ ի բանից վարդապետաց] Այ[ն]ուհետեւ աստուածաբանութիւն է

ա. *249բ-50ա* [Մեկնութիւն մասին Մատթէի] – *Նմանեցաւ արքայութիւնն երկնից գանձի ծածկելոյ յագարակի[Մտթ. ԺԳ. 44]. ա. արքայութիւն կոչի, նախ... վասն այն գանձ ծածկեալ ասէ:*

բ. *250ա-2ա* Այս վասն միութեանն Աստուծոյ ասացին իմաստասէրքն – *Որպէս Դիոնէսիոս ասէ՝ Ամենայն բազմութիւն ի միութենէ առնու զծնունդն... ճանաչելն կեանք յաւիտենականք, որում եւ զմեզ արժանի արասցէ երկրպագութեան Սուրբ Երրորդութեանն. եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:*

գ. *252աբ* Վկայութիւմբ յաղագս հաւագոյ եւ զուգապատիւ երրորդութեանն եւ նոյնագործ արարչութեանն – *Զի արարիչ է Հայր, արարիչ է Որդի, արարիչ է եւ Հոգին Սուրբ... հոգի քո բարի առաջնորդ:*

Տե՛ս Գրիգոր Տաթեացի, Գիրք, որ կոչի Ոսկեփորիկ, Կ.Պոլիս, 1746, Գլուխ ԺԲ., էջ 140-142:

դ. *252բ-3ա* Այսման ի վկայութեանց յաղագս ամենասուրբ երրոր[դ]ութիւնն՝ *զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգի... չորրորդ, զբաղարճ եւ զգինի պատարագեաց:*

Սկիզբը՝ 252բ-3ա, տե՛ս Գրիգոր Տաթեացի, Գիրք, որ կոչի Ոսկեփորիկ, Կ. Պոլիս, 1746, էջ 142-143, շարունակութիւնը, սկսած՝ «Բանն մարմին եղեւ, զի Բանին էր պատշաճ...» այլ է:

ե. *253բ* Վասն Ծնընդեան Քրիստոսի – *Առաջին պատասխանի, որ ասեն, թէ որպէս մարդ ծնաւ... ծնցի մարմին անխիղճ:*

զ. *253բ* Վասն Մըկըրտութեան – *Նախ զի մարմնով միայնգամայն, նոյնպէս եւ հոգւով միայնգամայն ծնանիմք... մի է սկիզբնական մեղքն, որով սրբիմք:*

է. *253բ-4բ* Վասն մահուն Քրիստոսի – *Մահն յերիս բաժնի, այսինքն՝ բնութեամբ եւ կամաւ... առաւել քան զայս օգտութիւն ի թաղմանէն Քրիստոսի եղեւ:*

ը. *254բ-7ա* Վասն եկեղեցոյ – *Իսկ եկեղեցիս լերին նմանեցուցանէ... անճառ երանութեանն եւ կենաց անվախճանից Քրիստոսիւ Յիսուսիւ Տերամբ մերով, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:*

թ. *257ա* Դարձեալ յայլում տեղ գրէ – *Եղիցի լոյս աստեղաց՝ իբրեւ զԼուսնի, եւ Լուսնին՝ իբրեւ զԱրեգակն... լինին է.պատիկ քան զԱրեգակն:*

ժ. *257աբ* Դարձեալ այլուր ասէ – *Ծաղկեսցի իբրեւ զշուշան. շուշանն Բ. ազգ է եւ Բ. գոյն... հոգին պայծառացեալ որպէս զձին սպիտակացեալ:*

ժա. *257բ-8ա* Դարձեալ յայլումէ ժողովեալ – *Զեղէգն ջախջախեալ մի՛ բեկցէ... մինչեւ հանցէ ի ճշմարտութիւն զիրաւունս որպէս եւ յայտնեաց:*

ժբ. *258ա* Դարձեալ յայլոց ժողովեալ [Հարցումն եւ պատասխանի] – *Հարցումն. Ասէ փիլիսոփայն Դաւիթ. Ամենայն չար տանջելի... Պատասխանի՝ Ասեմք նախ՝ զի մեղանչէ՝ տանջի... զի ինքն անպարտ էր չարչարանաց եւ ապականութեան:*

ժգ. *258աբ* Այլ վասն երկաբնակացն [Հարցումն եւ պատասխանի] – *[Հարցումն]. Վասն չէ՞ր ծերանայ կամ բորբոսի կամ որթնի մարմինն խորհրդական... [Պատ.] Ասեմք, թէ այսոքիկ յատկութիւն հացին են եւ գինոյն... յաստուածակերպութիւնս դարձուցանէ զհացն եւ զգինին:*

ժդ. *259աբ* Վասն բազում պատճառաց [Հարցումն եւ պատասխանի] – *Հարցումն. Սուրբ Յովանէս վասն չէ՞ր կարապետ կոչի: Պատասխանի. Նախ՝ զի կարապետ եղեւ Գալստեանն Բանին մարդացելոյ... ոչ ոք է ի ծնունդըս կա՞:*

ժե. *259բ* Նման Յովաննու [Վասն ցուցանելոյ զաստուածութիւնն բանին] – *Նոյն Գաբրիէլ յաւետիս Կուսին եցոյց... եւ ինքն Տէրն ասէ՝ ո՞ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց:*

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, ԺԸ. դ., նոտրգիր

ա. *96բ* [Հմայութիւն] – *Վաճառի գընելո եւ ծախելոյ, որով աջողի եւ առաջ գայ...վաճառի ի ծառային Աստուծոյ առուտուրին. ամէն:*

Ծնթ. Վր. լս-ում նոյն ձեռով 9 շրջանակ, ներսում՝ «նոր սէս ելպեւ ար այս ու սաղ եկ առ»:

բ. *96բ* Գիր սիրոյ վասն բանի յաջողութեան – *Աստուծով գրէ գայս, ի բազուկս կապէ... զոր ազատեալ եղեցի ձառային Աստուծոյ Աւօին. ամէն:*

գ. *96բ* (այլ ձեռ, նոտրգիր) [Վասն զարմի Նոյեան] – *Նո[յ]եայ կնկայ անոյն Նեմզար, տղէկների անուն... այս է Նոյեան զարմ:*

դ. *1ա* (այլ ձեռ, նոտրգիր) [Տէրունական աղօթք. հայատառ թուրեռէն-հայերէն, տող առ տող թարգմանութեամբ] – *(Թրք.) Ամամզքի սէմատէսէն մուգատէս օլայ: (հայ.) Հայր մեր, որ յերկինս... (Թրք.) ապատիլ ապատ. ամին (հայ.) յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Թուրեռէնի ստուգումը Անի Ժ. Աւետիսեանի:

Տե՛ս Յ. Ստեփաննեան, Յուցակ հայերէն ձեռագրերի հայատառ թուրեռէն նիւթերի եւ հայատառ թուրեռէն ձեռագրերի, Երեւան, 2008, էջ 62:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. Ջատիկ Պօղտանի գրչի *49բ Ջմեղաւոր* Ջատիկ եւ

զանարժան, անպիտան յիշեցէ՛ք, ո՛վ եղբարք, ի մաքրափայլ յաղօթս ձեր, յիշեցէ՛ք ի Քրիստոս Տէր մեր, եւ որ զիս յիշէ, յիշեսցէ զնա Տէր Աստուած Յիսուս Քրիստոս յիւր միւսանգամ գալուս[տն]. Հայր՛՛:

53բ ՋՋատիք Պօղտանի՝ *զմեղաւոր յիշեցէ՛ք ի Քրիստոս, ո՛վ սուրբ ընթերցողք:*

59ա Զմեղաւոր գրիչս՝ զանարժան Ջատիք Պօղտանի *յիշեցէ՛ք ի Քրիստոս, ո՛վ սուրբ ընթերցողք:*

60ա ԴԳ.Ա.ՍՍ.ԺԺ.ԹՌ: (գումարագիր ծածկագիր՝ Ջատիք) ԸՃ.ՋՃ.Ղ.ԴՈ.Ա.ԴՃ.Ի (գումարագիր ծածկագիր՝ Պողտանի): *Գրեցաւ ի թվական[ին]* ՌԿԴ. *(1615):*

Տե՛ս ԺԷ. դ. յիշ.-ի, Բ., էջ 548, Հմր 711:

2. Կարապետ գրչի *108ա Տեա՛ր իմ սուրբք եւ ծառայակիցք առ Քրիստոս, աղերսեմ յիշել զիս՝ զանարժանս երկնի եւ երկրի, զմտօք խաւարեալ* Կարապետ՝ *ծառայող բանի, այլեւ զրաբունապետն իմ եւ զամէնիմաստն թարգմանիչն՝* Ոսկան *հռետոր:*

3. Ստացողի *189բ Նաեւ զվերջին ստացօղ զայս սրբոյն աւետարանչին* Յոհաննու *տեսլեան մեկնիչիս եւ էր ընդ եղբարս Մեկնիչիս* Կոստանդնուպօլսոյ *պատրիարգ ծերունի* Եփրեմ *վարդապետս, որ յոյժ ըղձմամբ եւ փափականօք գրել ետու՝ յիշատակ ինձ եւ ամենայն կենդանեաց եւ ննջեցելոց իմոց, ի թուականութեանս Հայոց ՌՃԽՋ. (1697), ի յարքայանիստ քաղաքս* Անդրիանուպօլիս: *Եւ որք յիշէք զմեզ, միով Հայր մեղայիւ, յիշեալ լիջիք ի Քրիստոսէ՝ Աստուծոյն մերոյ. ամէն:*

220ա Յիշատակարան գրքիս այսորիկ. Փա՛ռք ամենասուրբ երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Արդ, ի հազար հարիւր եւ ի ԽՋ. (1697) թուականիս Հայոց ես՝ տրուպս եւ պիտակս՝ Կոստանդնուպօլսոյ *պատրիարգ երաժիշտ* Եփրեմ *վարդապետս, որ եմ աշակերտ մեծի* Սրբոյ Աթոռոյն էջմիածնի *տեառն* Յակովբայ *սրբազան կաթողիկոսի ընդհանուր Հայաստանեայցս հայրապետի՝ վերափոխեցելոյն առ Քրիստոս՝ ի յոյսն ամենայնի: Վասն որոյ՝ ցանկացօղ եւ փափագօղ եղէ եւ ստա|220բ|ցայ զայսքան եղեալ գրոցս, որք կային աստ ի յառաջագոյն գրեալ ի մէջ գրքիս այսմիկ: Իսկ հետոյ կրկին անգամ եւ ես գրել ետու ի էտրէնէ տէր* Մինաս *քահանային զՄեկնութիւն տեսլեան սրբոյ աւետարանչին* Յոհաննու, *եւ Մեկնութիւն էր ընդ եղբարսին՝ ի հալալ արդեանց իմոց՝ առ ի վայելումն ինձ՝ թարմատարիս եւ յիշատակ իմոյ հոգւոյս: Արդ, աստանօր բազում թախանձանօք եւ աղերսանօք հայցեմ եւ խնդրեմ հարցդ սրբազանից եւ եղբարցդ մաքրագունից, զի յորում աւուր եւ ժամու որք պատահեսջիք զայս սրբոյ մատենիս՝ տեսութեամբ, գաղափարութեամբ եւ կամ ընթեռնլով, յիշեսջիք միով Հայր մեղայիւ զիս՝ փառս ծերունիս, զոր կամ ի վերոյգրեցեալ* Կոստանդնուպօլսոյ *պատրիարգ, երաժիշտ* Եփրեմ *վարդապետս, հանդերձ ծնօղիւքս իմով եւ համօրէն աշակերտեալ միաբանիւքս եւ ամենայն ազգատոհմիւքս՝ զննջեցեալսն եւ զկենդանիքսն իմ. իսկ որ առատն է ի տուրս բարեաց՝ Քրիստոս Աստուածն մեր, զձեզ՝ յիշողացդ, եւ զմեզ իսկ հուսկ հետոյ ողորմեսցի իւր միւսանգամ սուրբ գալստեանն իւրոյ եւ արժանաւորս արասցէ զիւր երանաւէտ քաղցրալուր բառբառոյն, որ ասէ ընդ յաջակողմեան դասուն, եթէ՝ եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէ՛ք զանսպառ յարքայութիւնն երկնից, որ է օրհնեալ անզրաւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Հայր մեր, որ յերկինս:*

37ա *Զգր՛՛* Սոմիաս՛՛:

Ծնթ. Գրուած է բնագրական միաւորի վերջում, կարդալի գուցէ «գր[իչ]»՞, բայց անհասկանալի է, թէ ի՞նչ գրիչ է, գուցէ նախագաղափար աւրինակի՞ց է:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *260ա (1804 թ., նոտրգիր) Թվին 1253 (1804), Ունսի (= Յունիսի) մուտն* էրեւանու *քաղաքն՝ որպէս տիրացու* Ըստեփաննս, *ուռուսի զալաբանդլղօվն (՞) այս հռչակազարթ մեկնիչս, որմէ արախլուի միոյ ձեռանէ ե. ռխալով գնհատեցի եւ ինչ մէհնաթով առի իմ հալալ փողով:*

Ով այս գրքոյս նեխած հայի, / Յերանավէտ ձայն ոչ լսի, / Իսկ իփրես զաթոռս կործանի / ’ի խորս անդնդոց հալածի: / Ապա թէ բարութեամբ նայի, / Յաւուրն յետին ոչ ամաչի:

2. *260ա (ԺԹ. դ.՝ 1825 թ.ից առաջ, շղագիր) ես՝ տէր* Աստուածայտուր, *առա այս հռչակազարդ մ[է]կնիչս տիրացու* Ըստեփաննսի *կնոչէն, յանձնեց ինձ յիշատակ իւր՝* Ըստեփաննս *մարդոյ հոգո հիշատակ եւ իւր յամայն ննջեցեալոց: Աստուած ի փառս իւրում համարի. ամէն:*

3. *260բ (1825 թ., նոտրգիր) Տէր* Աստուածայտուրի *որդի* Յակոբին: *Թվին ՌՄՃՀԴ.ին (1825):*

4. *108բ (1839 թ., նոտրգիր) Փառք, պատիւ Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Գրվեցաւ գիրս Թուին ՌՄՁՐ. (1839): Առայ յիշատակ գիրքս այս՝ հոջակազարդ մեկնիչ, որ է* Յօհաննու *տիսիլք՝ Ի տիեզերական ժողովուն կամս, որ եղեւ Աստուածաւ, եւ թող տուի որդոյ իմ՝ տիրացու* Յակոբին *եւ* Յօհաննջանին *եւ* Պետրոսին *եւ կողակից իմ* Ըռէհանին *եւ հայրոն՝* Հռոոմին, *թոռին* Յակոբին՝ *ՌՄՀԳ. (1824) թուականին,* Օհանին՝ *ՌՄՁԱ. (1832) թվականին,* Պետրոսին՝ *ՌՄՁԷ. (1838) թուին, տէր* Աստուայծատուր *քահանայիս՝ ՌՄԽԵ. (1796) ծնընդեան իմոյ թուին, ձեռնադրել իմոյ քահանայ ՌՄՀԳ. (1824): Աստուած վայելումն տացէ, ո՛վ ընդերձող, Հայր մեղայիւ ասացէ, Աստուած ձեզ ողորմեսցի ի մուսանգամ գալստեան իւրոյ:*

5. *260բ (1840 թ., շղագիր) Այս հռչակազարդ մեկնիչ յիշատակ է տէր* Աստուածատուրին: *[Ով] որ ի ձեռն առնու, ողորմի, յիշէ Աստուած իւրեանց, [ո]ղորմեսցի ի*

մուսանգամ գալըստեան Տեառն մերո եւ փրկչի Յիսուսի Քրիստոսի: Թվին ՌՄՁԹ.ին (1840), որ ես գրեցի: [Տի-բա]ցու Յակոբ Տէր-Աստուածատուրօվ *գրեց այս գիր///. ամէն:*

Ծնթ. 260ա, 260բ, 108բ, 260բ էջերի յիշ-ները գրուած տէր Աստուածատուրի եւ նրա որդի Յակոբի ձեռով:

6. 1բ (1840 թ., նոտրգիր) Յոլովեալ ժամանակիս եւ փոփոխեալ տարուն՝ թվին ՌՄՁԹ. (1840). պատճառ գրուս այս է. գալ թագաւորն Նիկոլայ *եւ յաղթելով զշահն եւ զթագաւորն օսմանցու յախտելով եւ հետօ (=յետոյ) գկնի նորա ԺԲ. (12) տարուն եւ վասն մեր մեղացն՝ շարժ լինելով եւ գայր հանկարծակի Ջ. ջրհեղեղ, կորսեաց Ջ. յԱկոռին գիւղըն եւ Սուրբ Հակոբայ վանքն: ես՝ տիրացու Հակոբ, գրեցի տէր Աստուածատուր, որ<վ> 1840 յամի: Լսո՛ղըք, Աստուած ողորմի ասացէ՛ք:*

0վ էր տէսէր էս աշխարըս էս օրին, / Մեր մեղացըն՝ շարժը քանտեց Հակոռին, */ Հակոռին էր էս աշխրհի մէ նշան, / Ջըպահելով Աստուծոյ պատվիրանը, / Աչկը թարթեց, կոտորեց հազար ջանը: / Ո՛վ էր տէսեր էս աշխարըս էս օրին:*

7. 259բ (ԺՌ. դ., շղագիր) Սայ ամանաթ է տէր Ակոբի *հար* Թամարին, *առաջի մարտ* Ստէփանի Վդնեն՛:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *5բ, 108ա սեւ թանաքով ութանկիւն՝ «ԳԻՐՔՍ / ՍՈՒՐԲ ԷՋՄ/Ի[Ա]ԾՆԱ Է»:*

ՆՇՈՒՄ՝ *2ա՝ «Նուէր Սուրբ Էջմիածնայ մատենադարանին, Գաբրիէլ Յոհաննիսեանց, 12, V, 1885», 2ա՝ «3506» (մատիտով):*

116ա Ո՛վ եղբայր, սիրտս փափաքէ ի գրել եւ ի գրոց բան ժողովել։ Աղաչեմ՝ զգծողիկս Աստուած ողորմիւ յիշատակել։

126ա Եղբա՛յր, զինչ յաւրինակս կայր, գրեցի, բայց զինչ Աստուած կամի, զայն կատարէ։ (Նոյնը՝ հայատառ թուրքերէն)՝ Յաեղի Յիսուս կեչէր գուտս ամինազ է։

Ընթերցումը եւ բացատրութիւնը Անի Ժ. Աւետիսեանի։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԴԱՅԻ

1. *96ա (1711 թ., նոտրգիր)* Սուրբ գիրքս յիշատակ է Աստապատեցի Նուկէնց Պետրոս *վարդապետին եւ հոգեւոր հօրն իմոյ՝ տեառն* Խաչատրոյ՝ *մեծի վանիցս յառաջնորդին եւ ծնօղաց իմս՝* Յովաննէսին *եւ* Գիւլնապաթին, *եւ եղբարցս՝* Ստեփաննոսին *եւ* Ամիրգիւլին, *եւ ամենայն աշխատաւորացն իմ։ Աղաչեմ, որք ընթեռնուք զսա ասել զողորմին եւ զՀայր մեր յերկին, նաեւ՝ զհամշիրաքն իմ՝* Գյոռհաննէս *բաբունին, առ Տէր յիշել մաղթեմ ի բարին։ Գրեցաւ ՌՃԿ.ին (1711), ի գրան* Սրբոյն Ստեփանոսի *վանքին եւ ի վայելումն միաբանիցն նորին՝ եղբարցն իմ։*

2. *96բ (ԺՐ. դ., շինծու բոլորգիր)* Յիշատակ է այս գիրքս Սագանին, *ծնողացն եւ իւր կողակրցուն եւ համայն նը[ն]ջեցելոց հոգուն, որ եառուր ի ձեռս տէր* Մարտիրոս՝ *մեղապա[ր]տ եւ մեղսասէր անարժան քահանա[յ]իս։ Եթէ ընդերնումք, եթէ պաշտում[ք], պատարագ մատուցանեմք նորին յինեւ նոր նը[ն]ջեցելոցն՝ մասն եւ բաժին եղիցի աստ եւ ի հանդերձելումն, որ ասէ. Գանձեցէ՛ք գանձս ձեր երկինս, ուր գող եւ ցեց ոչ ապականէ եւ կենդանեացն երկեար կեանս պագեւեսցէ անսասան. ամէն։*

3. *188բ (1848 թ., շղագիր)* Գրիգոր Թարխան, *1848 ամի 5 Յունիս գրուա՛մբ ա էս ես ըստորագրեալ։* Գրիգոր Թարխ.։

4. *47բ (ԺՒ. դ., շինծու նոտրգիր)* Այս է Տաթէվանիս *յիշատակ է։*

5. *188ա (ԺԲ. դ., շղագիր)* Շատ բարեւ եւ բարի հասց, *իմ եղբա՛ր* Մուրադ, *ի նոր գիրըս քեզ։*

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *1ա, 78բ, 96ա, 173ա* սեւ թանաքով բոլորակ՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ / ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ / ՌՃԾԵ. (1706)», *1բ* սեւ թանաքով բոլորա՛կ՝ «ՔՐԻՍՏՈՍԻ [ԾԱՌԱՅ]////ՍՏԵ՞///» *(պատռուած, ջնջուած, դժուարընթեռնելի), 2ա, 96ա, 97ա* սեւ թանաքով բոլորակ, ներսում պատկերուած՝ Գառն Աստուծոյ, *103բ* կարմիր թանաքով բոլորակ, կենտրոնում պատկերուած Հայր Աստուած, Յիսուս Քրիստոս, վերեւում թեւատարած աղաւնու տեսքով Սուրբ Հոգին, շուրջանակի՝ «ՇՆՈՐՀԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՏԷՐ ԵՓՐԵՄ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՌՄԾԹ. (1810)» *(այլ թղթից կտրած եւ աստ սոսնձած է, կնքադրոշմի վերեւում նոյն թղթին թուչնագիր «է», գոյները՝ կանաչ, վարդագոյն)։*

ՆՇՈՒՄ՝ Ա. կազմաստառին սոսնձած թղթին ձեռագրի մասին տեղեկութիւններ եւ «527, 3512», «ԺԷ. դ., Մ[եսրոպ] եպիս[կոպոս]»։

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *1ա՝ «բարձ բնորին նորին», 10բ՝ «աբգ» (երից), արաբական թուանշաններ, 14ա՝ «պ (հնգից), թ (երից), ֆ», 21բ՝ «շ (երից), է», 25բ՝ տառեր՝ «ջփպև» (բազմից), 29աբ՝ տառեր՝ «ԱԲ» (բազմից), 38բ՝ «ձզօրութիւն գրոյս վ զ զօոռձ», 96բ՝ «լար, նորին բարձ էրկից», 102բ՝ «աբ Աստուծոյ գիս», 142բ՝ «ԴԱ», 188բ՝ տառեր, արաբանիշ թուեր, հաշիւներ, «խնծոր, նորին, նորին մեծութիւն», «ատուր, ատուր, տատուր, աստմատուր չորս բովիդ»։*


ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *97բ՝ երկրաչափական լուսանցազարդ խաչերով։*

3513
ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՑԻ, ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ

ԺԵ. դար

ԳՐԻՉ՝ Կարապետ: ՍՏԱՑՈՂ՝ Մարգարէ վարդապետ:

ԹԵՐԹ՝ 249+2 (կրկն.՝ թ. 50, 100). չգրուած՝ 1ա, 248ա-9բ: ՊՐԱԿ՝ Ա-ԻԲ×12 (Ջ 11, ԺԷ 10, ԻԱ 8, ԻԲ 6): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18,2×14: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (13,5×9,5-10): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 60ա): ՏՈՂ՝ 26 (թ. 1-70), 28 (թ. 71-130), 29 (թ. 131-247): ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի. միջուկը՝ տախտակ. աստառը՝ դեղին մետաքս. լուսանցակողերը՝ կարմիր:



Նմուշ 60ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – ճակատազարդ՝ 2ա (ուրուագծային): Ջարդագիր՝ հանգուցագիր (ուրուագծային): Գոյներ՝ կարմիր, սեւ:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Աւետարան Ղուկասու: ԺԴ.: ԱԲ+ԳԴ՝ ստացուած 2 թերթի ընդլայնակի ծալումով եւ ընդերկայնակի եզրահատումով: Մագաղաթ 17,5-18×13,5. երկսիւն (14,5×11,5, 14,5×9,5). բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝ Աբ). տող՝ 9, 10, (սկզբնական վիճակ՝ 26,5×18. երկսիւն (22×15). տող՝ 19): Կարդալ՝ Աա-Բբ, Աբ-Բա, Դբ-Գա, Դա-Գբ. «[Ի]բրեւ տեսին աշա[կ]երտքն, սաստէ[ի]ն նոցա: [Ի]սկ Յիսուս կոչեց[եալ] [զ]նոսա... եւ Յիսուս ասէ ցնա. Հայեաց հաւատք fո կեցուցին զքեզ» (ԺՀ. 15-43): Ունի ստ. լս. համաբարբառ:



Նմուշ Աբ

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած եւ կազմած ԺԸ. դարում, կազմի եզրերի ու մէջքի կաշին մաշուած, 3 կապիչներից երկուսն ու 3 գամերն ընկած, 1 կապիչը մաշուած, աստառին՝ ցեցի անցքեր. ընդմէջ թ. 118-9ի, 128-9ի, 199-200ի նորոգման հետեւանք թերթերի եւ լուստներ, թ. 1, 45-9՝ եզրերը պատռուած, թ. 1-13՝ ստ. լս-ին պատռուածքներ, թ. 128-36, 227-39՝ ստ. լս-ին, թ. 201-23՝ առտ. լս-ին, թ. 56-63 հիմքի մօտ վերին մասում ցեցի անցքեր, 144ա՝ ստ. լս-ին մոմի կաթոցի հետք, թ. 207-8՝ գրադաշտին կտրուածք, գրադաշտը խոնաւութիւնից գունափոխուած, պատռած սնկային հիւանդութեան հետքերով. պտոկ-պիպ-ի եզրերը սեւացած, որոշ հատուածներ (Գբ-Դա) հետագայում թանաքով մգացուած. թ. 45, 74, 101, 124, 148, 173, 200՝ առտ. լս-ներին ամրացուած երկի գլուխները մատնանշող էջանշան թելեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1բ-247բ (այլ ձեռքով, նոտրգիր) Աշխարհալոյս (ուղղուած՝ աշխարհալուր) եւ տիեզերալոյս վարդապետին Վարդանայ, պարզ եւ լուսո(=աւ)որ խորին խորհրդով եւ դժուարակի Մեկնութիւն աւետեալ Սաղմոսիս, շարժեալ ի Հոգւոյն Սրբոյ աւիւնականէն յԱղբատայ եւ աշակերտաց իւրոց յոյժ աշխատեալ, զո[ր] ցուցանէ առաջիկայ ամբարեալ ի վարժմանց Սիոն եւ ի խնդրոյ ուսումնասիրաց: Աւգնեա՛, Հոգի՛ Սուրբ Աստուած, զընթաց հետեւողեալ մանկանցս աշխարհի

Տե՛ս ձեռ. 1119, 1ա-304ա: Մասն նխ./չիք: Յիշ./չիք: Նխ./2ա-11ա: 1/11ա-44բ: Նխ./44բ: 2/45ա-74բ: Նխ./74բ: 3/74բ-101ա: Նխ./101ա: 4/101ա-24ա: Նխ./124ա: 5/124ա-48ա: Նխ./148բ: 6/148բ-73ա: Նխ./173ա: 7/173ա-200ա: Նխ/200աբ: 8/200բ-44ա: Յիշ./244աբ: 9/244բ-7բ (գանփրկագործն պատարագն եառես զբոլորից փրկա/// վջ.):

Ծնթբ. լս-ներում գրչի եւ հետագայի ձեռքով լրացումներ՝ 3ա, 6բ, 10ա, 11ա եւ այլն: Տե՛ս Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի, Ամստերդամ, 1797:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

4ա ստ. լս. Ով եղբայր, անմեղադիր լե՛ր, շտապեցա:

7բ ստ. լս. Ով եղբա՛յ[ր], անմեղադիր լե՛ր, տունս մութն է ու շօք, տողն |8ա| չէրեւուր, ’ւ արիւնակս վատ է (նման՝ 29ա):

28բ ստ. լս. Անիծած է քունն ու ճանճն ու լուն:

33ա ստ. լս. Ո՛հ, ո՛հ, յայս լերոյ չարէս լափեցին:

40ա Ով մարդ, անմեղադիր լե՛ր, ի ման/// (2-3 բառ) մտաւ:

44բ ստ. լս. Ջմեղապարտ գիծս յիշեցէ՛ք ի Տէր, եւ զստացող սորա. եւ դուք յիշեալ լիջ[իք]:

51ա ստ. լս. Ով եղբայր, անմեղադիր լե՛ր, զի միտքս մեղաւք կու[րա]ցել է:

59բ ստ. լս. Ով եղբայր, անմեղադիր լե՛ր ծէ գիր չե///աւոր:

60ա Մհ, ո՛հ, խիստ նեղացայ (նման՝ 223բ)։

64բ ՁՄարգարէ *վարդապետ յիշեցէ՛ք (նման՝ 131ա, 138ա, 174ա, 228ա)։*

74բ ՁՄարգարէ *վարդապետ յիշեցէ՛ք եւ զծրողս* զԿարապետ *(նման՝ 136ա, 160ա, 212ա, 213ա, 235բ)։*

77ա ստ. լս. Աւաղ ի գլխայցավէս, եղբա՛յր։

103ա ստ. լս. Մվ եղբայր, թէ սխալ բան հանդիպի, ինձ անմեղադիր լե՛ր, զինչ աւրինակն էր, ես նոյնպէս եմ գրել։

109բ ստ. լս. Վա՛յ ի գլխոյցաւէս, Մարգարէ *վարդապետ յիշ՛։*

124ա Զհոգիազարդ [հայր]ն իմ ըստ հոգւոյ, զանփորձն ի կորստական սխալմանէ, զմոլուքն եւ զըբարեպաշտ այր։ (ջնջած՝ Զկախաբերան///) ջնջուած, զյիշման արժանինն զՄարգարէ *վարդապետ յիշեցէ՛ք ի բարի մասին առաջի Քրիստոսի՝ խնդրելով ի նմանէ զթողութիւն եւ զմեծ զողորմութիւն եւ ինձ՝ ամենամեղ ծրողիս* Կարապետի *եւ ծնաւղաց իմոց։*

117բ ստ. լս. Մհ, ո՛հ ի գլխոյ ցաւէս (նման՝ 129բ, 219բ)։

142ա ստ. լս. Զանարժան գրողս յիշեա՛։

147բ ստ. լս. Զանպէտ եւ զյոգնամեղ Կարապետ *գրողս յիշեցէ՛ք ի Քրիստոս։*

155բ եւ Կարապետիս *ողորմութիւն՝ անարժան եւ անպէտ գրչիս։*

168ա ստ. լս. զՄարգարէ *վարդապետ ստացող սորա եւ* զԿարապետ *գրիչս եւ զմեր ծնող յիշ[եցէ՛ք]։*

173ա Զսրբասէր եւ զսրբանեաց զՄարգարէ *վարդապետ յիշեցէ՛ք ի Քրիստոս, ո՛վ բարեսէր ընթերցողք, նա եւ զանպիտան ծրողս* զԿարապետ։

188ա Ի ձեռն նորին բարեացն եւ ինձ եղիցի մասն բարի գտանել անարժան գրչիս եւ ծնաւղաց իմոց։

189բ ստ. լս. Զփծուն գրիչ եւ զհոգեւոր մայր իմ զԱրղումմկէ *յիշեցէ՛ք ի Քրիստոս։*

200ա եւ զյոգնամեղ գրող գրոցս զԿարապետ *գրիչ եւ զծնաւղսն մեր եւ զեղբարսն յիշեցէք առ Տէր ի բարի։ եւ երախտաւորաց մերոց եւ հոգեւոր մաւր մերոյ՝* Ա-ղումմկէի։ *Ամդ արասցէ Քրիստոս Աստուած զբարի հատուցումն եւ առաւել* Մարգարէ *վարդապետի՝ ստացողի գրոցս եւ ծնողացն եւ որք յիշէք, յիշիք ի Քրիստոսէ՝ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։*

237ա Զմեղապարտ գիծս զԿարապետ *եւ զծնաւղսն իմ յիշեցէ՛ք։*

238ա զՄարգարէ *վարդապետ զստացող սորա եւ զանձնապարտ գրողս յիշ[եա՛]։*

243բ ստ. լս. Ոհ, ո՛հ ի գլխոյ ցաւէս ճրագէն։

244բ Նաեւ զանպտուղս ի բարեաց զանարժան Կարապետ *գրիչ զկի (՞) ամաւթալի գործոց անբարեաց եւ զծնաւղսն իմ յիշել աղաչեմ ի մաքրափայլ յաղաւթս ձեր, զի թերեւս եւ մեզ լիցի ողորմութիւն գտանել ի Քրիստոսէ յաւուրն աներեակ, եւ եղբաւրն իմ* Վարդանա, *որ զթ[ուղթ] կո[կեաց]։*

Ծնթ. Ուրոշ իրար նման յիշատակարաններ թղթի որակի եւ թանաքի պատճառով մասամբ ջնջուած են եւ կարող են հետագայում ջնջուել, ուստի բոլորն ընդօրինակել ենք։

ՆՇՈՒՄ՝ *Ա. կազմաստառին սոսնձած թղթին՝ «ԺՁ. (ապա Ձ.-ն գարձրած Ե.) Մ[եսրոպ] եպիս[կոպոս], «531, 3513», մէջքին սոսնձած թղթին՝ «1. Վարդան վարդապետի երգ երգոց (ջնջած), Մեկն. Սաղմոսաց», 1բ՝ «Բաղչասարայցի տէր Յովհան[նէս]» (շղագիր)։*


ԳՐՁԱՓՈՐՁ՝ *պհպ. Ա՝ «Զանարատն աւրհնեսցո՛ւք զԱստուածածինն», պհպ. Բբ՝ «Այլ որ անմահդ ես ի սկզբանէ կաւաւ մեռար բնութեան», 1ա՝ «Այսաւր լըցաւ խոստումն Աստուծոյ առ նահապետսն ի զաւ», «Բարի արմատ շառաւեղ իսկ արդ։ Ժառանգա///(1 տառ ջնջուած)ո հինար։ Հաստատութիւն իմ լե՛ր, Տէ՛ր, եւ յոյս փրկութեան լուսապայծառ շնորհաւք հի։ Խորհրդով մաքրագունիւ արդ։ Ծընընդեան Հոգոյն Սրբոյ, զորս յադ», «Ո որդւոյն Աստուծոյ զանուն ընդ ամենայն երկիր տարածեալա ամէն էրէս»,1բ՝ «մայր եւ կոյս աղախ, այլ դու Տէր իմ այց», 248բ՝ «Ահա սակայն իսկութեամբ, զի վավաշոտութիւն է գաղտնի դահիճ է տզրուկ անկըզ մի, որ կակղագունիւ պարանաւ կախէ զմարդն ի կախաղանէ<զանէ> այլ եւ արհ. <ա> արդ», պհպ. Գա՝ «ԶՁ», խաչի պատկեր, պհպ. Դբ՝ «Զբ<զբ>անաւաւ նոյն կամաւ»։*

3514
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ՆՈՐ ՁՈՒՂԱ (՞)* ԺԷ. դար


ԳՐԻՁ՝ Փանոս։ ՍՏԱՅՈՂ՝ Յովանէս։

ԹԵՐԹ՝ 193. չգրուած՝ 67ա-72բ, 191աբ, 193աբ։ ՊՐԱԿ՝ Ա-ԺՁ×12 (ԺԱ 11, ԺԵ 10, ԺԴ (=ԺՁ)՝ 14) +2։ ՆԻՒԹ՝ թուղթ։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19×12,4։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն՝ թ. 1-66, 95-192, մատիտով սահմանագծուած (11,5×7,3), երկսիւն՝ թ. 73-84, կարմրով սահմանագծուած (12,5×8,5)։ ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 168ա), բոլոր-



Նմուշ 168ա

գիր՝ թ. 73 (նմուշ՝ 73ա): ՏՈՂ՝ 23 (թ. 73-84), 25 (թ. 73-84): ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի. միջուկը՝ տախտակ. աստառը՝ շերտազարդ կտաւ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա-Գ (վջ.)՝ չգրուած սպիտակ թուղթ:



Նմուշ 73ա

* Ըստ Գէորգ Տէր-Վարդանեանի՝ կազմի դրոշմազարդերը եւ թղթի տեսակը վկայում են ձեռագրի՝ Նոր Ջուղայում կամ նրա շրջակայքում գրուած լինելու մասին:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, մէջքի վր. եւ ստ. մասի կաշին թափուած, դռնակը, 1 կապիչն ու 2 գամն ընկած, մնացած կապիչի կէսը պոկուած, փեղկերին, աստառին՝ ցեցի անցքեր. թ. 1ից առաջ եղած 4 թերթից մնացած 4-6 սմ լայնութեամբ մասերը սոսնձած Ա. կազմաստառին, թ. 178-ը նոյնը թ. 120ի հետ՝ վրան սխալմամբ ԺԴ. պրակահամարը, կազմած թ. 177-9ի միջեւ. թ. 1՝ լս-ները պատռուած, գրադաշտին անցքեր, թ. 4-13՝ վր. լս-ին՝ պատռուածք, թ. 16-57՝ ստ. լս-ին, թ. 191-3՝ վր. լս-ին ցեցի անցքեր, գրեթէ բոլոր թերթերի ստ. եւ առմ. լս-ներին խոնաւութեան հետեր, թ. 182-93՝ առմ. եւ ստ. լս-ները սեւացած, թ. 63-4՝ կպած թերթերն իրարից անջատելիս վերին անկիւններին անցքեր առաջացած, 66բ՝ գիրը մասամբ արտատպուած 67ա-ին. պիպ. Ա-Գ՝ ցեցի անցքերով, եզրերը պատռտուած, սեւացած. լուսանցակողերը՝ սեւացած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Առակ Սողոմոնի – *Նախգր. 1աբ: Գլ. 1բ-3բ: Գիրք 4ա-16ա, 18բ-42բ, 43ա-51ա:*

ա. *16ա-7բ* Յիշատակարան Առակացս Սողոմոնի, զոր իւրով ձեռօք գրեաց տեառն (=տէրն) Ներսէս («Ա-Ք») – *[Աստուած] եղէն հոգովն ի սմա, / խաղաղութեան անուն արքա... քաղցր կոչելով աստուածակառք, յանուիթական տարեալ քաղաք:*

բ. *17բ-8բ* Անդրադարձութիւն տառիս Յիշատակի («Ք-Ա») [Տեառն տէր Ներսէսի Հայոց կաթողիկոսի ասացեալ. ձեռ. 1784, 253աբ] – *[Ք]աղցրագունիս այս մաղթանօք / լցեալ հոգիս խաւար մեղօք... աւարտ բանիս Տէր ողորմեա՛, / առհասարակ մեզ եւ նոցա:*

գ. *42բ* Նորին Ներսէսի ասացեալ («ՆԵՐՍԷՍ») – *[Ն]որոգ ծնունդ, որ յերկիր գաս / եւ յերկար կենօք դու մնաս... եւ յետ աստեացս առ նա գընաս:*

դ. *51ա* Տեառն Ներսէսի նորին ասացեալ («ԲԱՆ ՆԵՐՍԷՍԻ») – *[Բ]անիդ ընդ Հօր էականի/ եւ ճշմարիտ Սողոմոնի... ինձ ողորմեա՛ քում ծառայի, / տառիս գծողի տեառն Ներսէսի:*

Բ. Ժողովող – *Գիրք 51ա-65բ (Ժ. 1-ԺԲ. 14. կրկնուած՝ 73ա-5ա):*

ա. *65բ-6ա* [Նորին Տեառն Ներսէսի ժողովողն, Տե՛ս 75ա] («ՆԵՐՍԷՍԻ ԲԱՆՆ Է») – *[Ն]մանաբար խորհուրդ խորին / յայտնէ եւ միւս անուն նորին... երգել միշտ փառս ընդ սրովբէին (նոյնը՝ 75աբ):*

բ. *75բ-6ա* Ի գծողէս բան առ ճշմարիտ ժողովողն («ԳՐԻԳՈՐԷ») – *Գրթեալ չարեօք սիրտ իմ անյոյժ, / գերեալ ախտիւք հոգիս անբուժ... էդ էակցին Հօր Միածնին, / ինձ ողորմեա՛ յօրն ահագին (նոյնը՝ 66ա):*

Գ. Երգ երգոց – *Գիրք 76ա-83ա (Ա. 1-5ը կրկնուած՝ 66բ):*

– *83աբ* Նորին Ներսէսի ասացեալ («ՆԵՐՍԵՍԻ Է») – *[Ն]որոգելոյս ի քէն Յիսուս / եւ ի մեղաց խաւարելոյս... յիմանալիդ փոխել ի լուս:*

Դ. Իմաստութիւն – *Գիրք 83բ-109բ:*

ա. *110ա* Նուաստ Յոհաննէսի Ծործորեցոյ Իմաստութիւն գլխոյն («ՅՈՀԱՆՆԵՍԻ ԲԱՆ») – *[Յ]իմաստութիւն կենաց վերին, / շարժեա՛ եւ զիմ սիրտս ըստորին... նման իննեակ դասուց յերկին, / որք են սկսեալ, ոչ դադարին:*

բ. *110ա-1ա* Նորին Ներսէսի ասացեալ ի Սողոմոն արքայն («ՍՈՂՈՄՈՆ») – *[Ս]այ մարգարէ աստուածաբան / եւ իմաստուն յոյժ խոհական... նա կորուսեալ, զոր ետ նմա, / սա շնորհըս տա, որք Ադամա:*

Ե. Իմաստութիւն Սիրաքայ – *Գլ. 111բ-2ա: Գիրք 112ա-44բ:*

Ծնթ. թ. 178 նոյնն է թ. 120ի հետ:

– *111աբ* [Յաղագս կանոնի] – *Չհամարձակիմ ասել, թէ իցէ ի մարգարէից, այլ ասեն զսա ոմանք սպասաւոր լեալ մեծի իմաստնոյն Սողոմոնի, սակայն Հընոյ օրէնսդրութեան գիրք համարին երբայեցիք ընդ ամենայն Ի. եւ Բ. (22). Մովսէսի՝ Ե. մարգարէիցն ըստ սրբագրացն՝ Թ. եւ զՅեսու Սիրաքա |111բ| եւ զՅուդիթ Տուբիայ եւ զՀովիւն չհամարին արժանի կանոնի: Այլ եւ ի ճահ իմն թուի ինձ ասացեալն զամանէ աշակերտ եղեալ Սողոմոնի, զի արար զոճիր (՞) հանգոյն երգոյն նորա: Եւ սկսանի ասել ըստ Սողոմոնի, թէ՝ Պատուեա՛ զՀայր քո եւ լե՛ր հնազանդ մօր քո, եւ թէ՝ երեւանեալ է այր, որ զիմաստութիւն խորհի, եւ թէ՝ Ի մանկութեան քո ընտրեա՛ զիմաստութիւն. եւ այլ բազում երկար բանիւք խրատեալ աւարտէ ի փառս Աստուծոյ. ամէն:*

Զ. Յոբ – *Նախգր. 144բ-6ա: Գրք. 147բ-77բ, 179ա-90բ, 192աբ (ի հեռաստանէ դիտեն աչք իւր, եւ ձագք նորա ///, չիք՝ Լթ. 29-ԺԲ.):*

Ունի՝

146ա-7բ Յուլիանեա եպիսկոպոսի Աղիկառնացւոյ – *նշանակէ գիրք երանելոյս Յոբա... ախոյեան եկեալ ծնդրէր մարտակից ի նմանէ:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

42բ Ո վ Յովաննէս՝ *սիրոյ բանի, / քո սուրբ հոգիւք փառուորի, / որ ցանկացար սրտի մտօք / ասացեալ բանից* Սողոմոնի: */ Քրիստոս տացէ քեզ սիրտ բարի, / զի ընթեռնուս զբանս առակի / եւ զորս ի այս կա օգտակար / ի քո |43ա| խորհուրդըդ համբարի: / Յորժամ կարդաս եւ զղջասցիս, / եւ միտգդ առ քեզ անդրադեսցիս, / դու զիս յիշեա՛ սրտի մտօք, / ըզՓաւնոս զանունս, զոր գրեցի, / նայ, որ անուն Յիսուս կոչի, / ինքն ինձ եւ քեզ ողորմեսցի:*

83բ Ընդ քեզ եւ ընդ քոյդ նմանողսն ընկալցի Քրիստոս Աստուած զմեղաւոր գրողս:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *4ա, 190ա սեւ թանաքով ութանկիւն՝* «ՏԷՐ ԴԱՆԻԷԼ, ՌՃՀԸ. (1729)» *(ութանկիւնը բաժանած 9 վանդակի, 1, 3, 7, 9 վանդակներում գրուած թուականը, կենտրոնում՝ անունը, 2, 8 կատուազգի կենդանի, 4 մարդ, 6 թռչուն):*

ՆՇՈՒՄ՝ *մէջքին սոսնձած վարդագոյն թղթին՝ «17», Ա. փեղկին սոսնձած թղթին՝ «94», Ա. կազմաստառին սոսնձած թղթին՝ «533, 3514», «ԺԽ. Մ[եսրոպ] եպիս[կոպոս]»:*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *48բ՝ «բարի», 85բ՝ «պ տըւվի խե», 193ա՝ զանազան բառեր:*

3515
ԺՈՂՈՎԱԾՈՅ
(բաղկացած 4 ձեռագրից)

ԹԵՐԹ՝ 81+1 (կրկն.՝ թ. 45): ԿԱՋՄ՝ ծաղկաթուղթ, մէջքը՝ սեւ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ թուղթ. լուսանցակողերը՝ կանաչ ցայտկէն: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա (վջ.)՝ սպիտակ չգրուած թուղթ, մասն կազմաստառի:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի ստուարաթուղթը մաշուած, փոխ-ինչ վնասուած:

ՆՇՈՒՄ *Ա. կազմաստառին սոսնձած լուսագծերով եւ «1816» լուսագրոշմով թերթիկին տեղեկութիւնք ձեռագրի մասին, 1ա՝ «541, 3515», «ԺԽ. Մ[եսրոպ] եպիս[կոպոս]», մէջքին սոսնձած թղթին՝ «Մեկնութիւն մարգարէութեան Յովնանու»:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Ի ՄԻ ԿԱՋՄԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԻ


1բ (1864 թ., շղագիր) Այսոքիկ տետրակք, ըստ յարմարութեան նիւթոյն եւ դրիցն, հաւաքեալ ի թղթոց հանգուցեալ Ղուկաս *արքեպիսկոպոսի, եւու կազմել ի մի գիրք, որպէսզի մի՛ ինչ կորիցէ հետզհետէ՝ արտաքոյ ցուցակի թերթատեալ մնալովն: Ի 15 Հոկտեմ[բեր], 1864, ի* Սուրբ Էջմիածին, *նուաստ* Վրթանէս *վ[արդապետ]:*

ՁԵՌԱԳԻՐ Ա.

ԺԹ. դար

ԹԵՐԹ՝ 13 (թ. 1-13, գրչի էջակալում 1-24, որ է՝ 2ա-13բ). չգրուած՝ 1ա: ՊՐԱԿ՝ 1+1×12: ՆԻՒԹ՝ կապտաւուն թուղթ. լուսագծերով ու լուսադրոշմով՝ ոճաւոր զինանշան, այլ թուղթ՝ թ. 1. սպիտակ թուղթ, մասն կազմաստառի: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18,5×13,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (16×10-10,5, ստ. լս.՝ յիշագրեր): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 6ա): ՏՈՂ՝ 27:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թ. 13՝ դեղնաւուն հետքեր, տեղ-



Նմուշ 6ա

տեղ թանաքը արտացոլուած թերթերի հակառակ երեսներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

2ա-13բ Մեկնութիւնն մարգարէութեանն Յօնանու՝ արարեալ տեառն Եփրեմայ կաթողիկոսի Կիլիկեցւոյ՝ յաշակերտէ եւ յեղբօրորդւոյ տեառն Գաբրիէլի գերահանեաւ կաթողիկոսի՝ ի խնդրոյ տեառն Թէոդորոսի՝ վարդապետին Կիլիկեցւոյ, որ այժմ է կաթողիկոս ի Մեծն Կիլիկիայ, ի թուին Հայոց ՌՄԺԸ. (1769), ի հոյակապ մայրաքաղաքն Հերապօլիս, որ է Բերիա


— *2ա-5բ* Յառաջաբանութիւն — *Եւ արդ, գրէ աստուածային Պօղոս անօթընտիրն առաքեալ առ հոգէծին զաւակն իւր... բեր այսուհետեւ ի նոսին բանս մարգարէին երթիցուք, որ ասէ:*

ա. 6ա-13բ Գլուխ առաջներորդ. Եւ եղեւ բան Տեառն առ Յօնաս... գլխ. 1, *չ՝ր* 2 — *Գուսանաց, որ ըստ աշխարհի սովորութենէ է նոցա ձայնատու գործեօք զուարճացուցանել զմիտս... քան տառապեցուցանել զժողովուրդ իւր: Յօթներորդ /// (վջ.):*

ՁԵՌԱԳԻՐ Բ.

ԺԷ. դար

ԹԵՐԹ՝ 12 (թ. 14-25): ՊՐԱԿ՝ ԺԴ-ԺԵ×12 (ԺԴ 1, ԺԵ 11): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18,3×13,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (14,5×9): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 16ա): ՏՈՂ՝ 17:



Նմուշ 16ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ (ուռուագծային) – Լուսանցազարդ՝ բուսական: Ձարդագիր՝ հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. եզրահատման հետեւանքով պրականիշերը կիսով կտրուած, թերթերը սխալ կազմած, կարդալ՝ թ. 22, 23, 14-21, 24, 25, թանաքը արտացոլուած թերթերի հակառակ երեսներին, թ. 22ից առաջ թափուած 11 թ., թ. 21, 24-5՝ ցեցի անցքեր, 23բ դեղին հետքեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ա. *22ա* [Կանոնք Ներսէսի եւ Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի, գլուխք ԼԶ, ԼԷ] – *(սկ.) /// եւ մի՛ ազանդաւորաց երբէք վանս տալ... խնդրել յԱստուծոյ զմարմնաւոր առողջութիւն եւ հոգւոց փրկութիւն. ամէն:*

Տե՛ս Կանոնագիրք հայոց, աշխ. Վ. Յակոբեանի, Երեւան, 1964, էջ 490:

բ. 22բ [Աստիճանք աւրինաց (աղիւսակ խաչանման), ձեռ. 488, 127բ] – *երեք պապք, երեք մամք... երրորդ ի թոռնիայցն:*

գ. *23աբ, 14ա* Ներսէսի՝ Հայոց կաթուղիկոսի [Խրատ աստիճանաց ազգականութեան] – *Ընթեռնլով իմ զխրատ աստիճանաց ազգականութեան... ընդանիայն եւ թոռնիայն իգականք:*

– *14ա* [Յիշատակարան հեղինակի] – *Արդ, որ ոք ընթեռնլով զբունն վերահասու լինի մերովս աւժանդակեալ, թէ կամեսցի փոխել զխրատ աստիճանացն, մի՛ իշխեսցէ թողլով զհինն, որ է աղիւսակաձեւ գրոշմածն, զոր առաջնոց վեհիցն է աշխատասիրեալ, բայց թէեւ զբոլորս գրոշմեսցէ անընթեր, ինքն գիտասցէ, միայն զհինն մի՛ թողցէ:*

դ. *14բ-7ա* Վասն աստիճանաց ազգականութեանն յերրորդ գր[ոցն] Տիտոսի առաքելոյն – *Ազգականութիւն ծնընդականութեան անուն է... ըստ որում գրեալս ունի նկարագրեալ, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն:*

ե. *17ա-21բ, 24ա-5բ* Ամենայն առաքինութեամբ զարդարեալ եւ կատարեալ աստուածակիր հոգելից առն Աստուծոյ Յակոբ վարդապետի Ղրիմեցոյ ասացեալ՝ Յաղագս ազգականութեան: Այգնեա՛յ, Հոգի՛ Աստուծոյ – *Գիտելի է, զի ազգականութիւն տարորոշեալ յանձանցն է... ըստ չորից տարերցդ շարախառնութեան մարմնոյն:*

Ծնթ. Աղիւսակի՝ 19բ, 20ա, 22բ, 23ա, 25ա:

19ա գրչից՝ «եւ գծողիս Աստուած ողորմի ասա՛յ, որ յաղիւսակդ աշխատեցա՛, շրջեա՛ զթուխտդ եւ Տե՛ս զթելերդ ի տուփսդ աղիւսակիդ»:


գ. *25բ* Յաղագս հոգեւոր ազգականութեան *(այսչափ)*:

ՁԵՌԱԳԻՐ Գ.

ՌՄԻԱ. – 1772

ԳՐԻՉ՝ Կարապետ:

ԹԵՐԹ՝ 47 (թ. 26-71, կրկն.՝ թ. 45, գրչի էջակալում՝ 1-93, որ է՝ 27ա-71բ). չգրուած՝ 26բ: ՊՐԱԿ՝ խառն (Ա 14, Բ 10, Գ՝ չիք, Դ 11, Ե 12): ՆԻՒԹ՝ թուղթ (թ. 26-60՝ կարմրաւուն, թ. 61, 70՝ դեղին): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17,6-18,3×13,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, կարմրով սահմանագծուած (13×9): ԳԻՐ՝բոլորգիր (նմուշ՝ 27ա): ՏՈՂ՝ 21:



Նմուշ 27ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթերը եզրահատուած, ստորին եզրագիծը անհաւասարաչափ. Բ. պրակի վերջին թերթին սխալմամբ գրած Գ., որին յաջորդում է Դ. պրակը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ա. *27ա-30ա* Աղաւիտ, որ է աստղայբաշխութիւն: Գլուխ առաջին: Օգնեա՛յ ինձ, Հոգիդ Սո՛ւրբ Աստուած, եւ հասո՛յ աւարտ ա[յ]սմ մատենիս – *[Վ]ասնզի իմաստութիւն կենդանութիւն է հոգւոյ եւ բանականութեան եւ փարատիչ... երբ փնտռեցաք, նայ հանցար ճշմարիտ:*

բ. *30աբ* երկրորդ բանն, թէ որպէս կառնեն <թէ որպէս կառնեն> զայս գիտութիւնս եւ է ԲԺ. (12) դրունք: Առաջին դուռն – *Ով առնէ բան մի այս բաներուս, որ կարծեօք առնէ նայ, այս գիտութիւնս չօգնէ իւրն... եւ եղեւ ինձ այս գիտութիւնս եւ արհեստս:*

գ. *30բ* Դուռն չորրորդ – *Երրորդ (= Զորրորդ) այս է, զոր ասացան իմաստասէրքն, թէ հրեշտակաց լուաք... կատարի զօրութեամբ հրեշտակացն:*

դ. *30բ-1ա* Դուռն Ե.երորդ – *Հինկերորդ, որ այսպէս հաստատեցին ամենայն իմաստունքն, թէ գիտութիւնս զայս ի գիշերն լաւ է գործել, քան զցերեքն... չարգործ աչքն վնասէ արհեստս:*

ե. *31ա* Դուռն Զ.երորդ բանիւ – *Զ.երորդ, զոր ասացեալ են իմաստասէրքն, թէ այս արհեստիս տէրքն պարտ է, որ հանապազ զաղէկն ու բարին գործէ... ի զատ կենայ:*

զ. *31աբ* Եօթներորդ դուռն – *Եօթներորդ դուռն, զոր աս[ա]ցին իմաստունք, թէ պարտ է այս գիտութեանս տէրն պարկեշտ կենայ... ոչ միս կենդանեաց:*

է. *31բ* Ութ դուռն – *Ութերորդ դուռն, որ չէ պարտ ամենայն բանի... իւր տեղն բերէ:*

ը. *31բ* Իններորդ դուռն – *Իններորդ դուռն, յորժամ բան մի առնես բարի... չէ պարտ զանբանն եւ այն մարդոյն:*

թ. *31բ* Տասերորդ դուռն – *Տասներորդ դուռն, թէ պարտ է այն մարդ, որ այս գիտութեան տէր լինի... եւ տղիղան եւ զուստուղասն:*

ժ. *31բ* Մետասան դուռն – *Մետասաներորդ դուռն, որ մարդ սուրբ լինի... որ լինի արիալ անձն:*

ժա. *31բ-2ա* ԲԺ.ան դուռն – *երկոյտասան դուռն, որ մարդն կենդանի հոգի լինի եւ ուժով... զօրութիւն պակաս լինի:*

ժբ. *32ա-4ա* Այլ դուռն վասն թլսմաթին – *Առաջին գիտութիւն վերին աստեղաց զօրութիւն կու բերէ յերկիր... ոչ մեղէ զրկէ յարքայութիւնէ այլ ապայ ոչ այլպէս է:*

ժգ. 34ա-6բ *Ֆասլ այն է, որ ոմանք որպէս գտան զայս արհեստս, են ոմանք, որ նոցայ... յայնժամ իւր բանն ուժով լինի:*

ժդ. *36բ-7բ* Առաջին դուռն – *[Ա]ռաջին դուռն մուհիս այն է, որ այս պատկերներն շատ ագգէ նախշ հանած է... որ այն բանին լայեխ է եւ կատարի Աստուծով:*

ժե. *37բ-41ա* Դուռն վասն գիտութեան աստղայբաշխութեան – *[Ա]ռաջին վասն աստղայբաշխութեան էլմինիճոման պարտ է գիտել մարդոյ... հայեցք չունենայն:*

ժզ. *41աբ* Դուռն, որ ցուցանէ զաստղայգիտութիւն – *Առաջին այն է, որ բռճիրն ցոցանէ, Բ.՝ որ աստղ գիտենաս... ի վերայ վաղճանման. եւ այլ պարտ է մեզ զամենայն կենդանակերպ առանձին ցուցանել:*

ժէ. *41բ-2ա* Բ. դուռն ցոցնելոյ զբնութիւն կերպիցն – *Առաջին, զի են հրայինք, խոյն տալիւ առնէ վասն տաքութեան... հողն, որ միջակ է, ակն որ հօվուի ունի:*

ժը. *42ա-4ա* Դուռն Գ. ցուցման կեն[դան]ակերպաց – *Ֆասլ, որ ցոցանէ զբնութիւն կենդանեաց, միայբան ասաց[ա]ն խօսք իմաստնոց... մուխալիթայն է, որ է եռանկիւն:*

ժթ. *44աբ* Զորրորդ, որ ցուցանէ կենդանակերպաց զարականն – *Ֆասլ, վասն որոյն կենդանայկերպիցն զարական եւ զիվական... իշխանութիւն ի վերայ որձ բանեբուն:*

ի. *44բ-5բ* Հինգ գլուխ, որ ցուցանէ կերպաց գործն – *Ֆասլ, որ յիշէ զպռճերու բարին եւ չարն... որ հոգ կու տայ մարդուն:*

իա. *45բ-5գ* Վեցերորդ գլուխ, որ ցուցանէ զբաժին – *Ֆասլ, որ ցուցանէ, թէ միջի այս կենդանակ[է]րպիցբաժին մի ունի... հարաճ լինի մօտիկ, նայ գուշակէ՝ կուսին է. եւ այսպէս ընթանայ:*

իբ. *45գ* Գլուխ է.երորդ. կենդանական ի վերայ աճասնոց – *Ֆասլ, որ ցուցանէ զկենդանակերպին, որ իշխանութիւն ունի... Զուկն զոտվին. եւ է այսպէս:*

իգ. *45գ-6ա* Գլուխ Ը.երորդ. Յաղագս բնութեան – *Ֆասլ, որ է վասն բնութեան, որ կատարեցաւ խօսք իմասնոց... խաբէութիւն լինի խիստ, եւ այլ է:*

իդ. *46ա-7ա* Գլուխ իններորդ. Վասն պատկերաց – *Ֆասլ, որ ցուցանէ զմարդոյ կերպն... փոքր գլուխ եւ նեղայճակատ, եւ այլ է:*

իե. *47ա-8ա* Գլուխ տասներորդ – *Ֆասլ, որ ցուցանէ զհիւանդութիւն ցաւոց. խոյն գլուխ զատ ցաւ... օվ ծնանի, սատակ լինի, եւ այլ է:*

իզ. *48աբ* Մետասաներորդ գլուխ – *Ֆասլ, ու ցուցնէ զարհեստներն կերպաց. խոյն ունի զարհեստ... Զուկն ունի զՀաքեմներն, լեղւորդնին եւ նաւայվարներն եւ այլք:*

իէ. *48բ-9ա* Գլուխ ԲԺ.երորդ, որ ցուցանէ զտեղըն – *Խոյն ունի զլեռներն, որ քար է, եւ տեղք, որ ոչխար արածի... լաց լինի. այսքան առ այս:*

իը. *49ա-50ա* Գլուխ երեքտասաներորդ, որ զգաղամն ցուցանէ – *Խոյն ունի զՊաղտատ, զԱռան... Հնդիք, որ յարեւելից դիհն է:*

իթ. *50ա* Գլուխ չորեքտասաներորդ, որ զճոճարն ցուցանէ – *Խոյն ունի պղնձն, զերկաթն եւ զթագն... Զուկն չունի ինչ, եւ ասպէս իմացի՛ր:*

ի. *50աբ* Հնգետասաներորդ, որ շնչատրն ցուցանէ – *Խոյն ունի զայնոք, որ պճեղն ճեղքէ՝ որպէս ոչխար, ճէյրան... որ սնրակ չունի, եւ զայլն այսպէս իմացի՛ր:*

իա. *50բ* Գլուխ ԺԶ. Զբուսն ցուցանէ – *Խոյն, Յուլն՝ բան չկա. եկաւորն ունի զբարձր ծառերն... զխնծորն, զսալորն եւ զմշմշեղն:*

իբ. *50բ-1ա* Գլուխ ԺԷ., որ ցուցանէ տեղին – *Խոյն ունի զամենայն վառման կրակն... զինչ կանած ջուր կա եւ ժողոյված ջրերն:*

իգ. *51ա-2ա* Ութուտասաներորդ, որ զհայեցին ցուցանէ – *Ֆասլ, որ ցուցանէ զհայեցք աստեղաց յիրար եւ կենդանակերպից... Յիր Գ. եւ ԺԱ. (11) թաստիս կոչի... բարձրութիւն լաւ է, քան զցածութիւն:*

իդ. *52աբ* Գլուխ ԺԹ.երորդ – *Ապայցուցումն, թէ զի՞նչ յաշխարհս շէն կայ... ունի զարեւմտից եւ հարֆո դիհն:*

իե. *52բ-3բ* Գլուխ Ի.երորդ – *Ֆասլ, որ յաղագս երկնից, որ երկինքն Դ. բաժին է արած... աստղն ամեն պուռճ ագգ մի արուրք կառնեն:*

իզ. *53բ-5ա* Ֆասլ, որ ցուցանէ սիւֆաթ աստեղացն. Գլուխ Առաջին – *Եւ այլ իմացի՛ր, որ երկինքն ո՛չ հօվ կա եւ ո՛չ տաք... անոր ասացաք, թէ հողմային է:*

իէ. *55ա-6ա* Գլուխ երկրորդ. յաղագս աստեղաց – *Այլ դուռն եւ ճանապարհ աստեղաց: Տեսաք զՋոհալն, երբ... մինչ արեգակն գուգան հովացնեն:*

լը. 56ա-7ա Գլուխ երորդ: Յուցումն աստեղաց լաւ եւ վատիւն – *Այլ դուռն, որ ցուցանէ զաղէկն ու վատն աստեղաց... աղէկին աղէկ եւ վատին վատ:*

լթ. *57աբ* Գլուխ չորրորդ: Յուցումն գործոց Դ. աստեղաց – *Այլ դուռն, որ ցուցանէ զաստղերուն գործքն. եւ այս Դ. ազգ է... վատ լինի, այսպէս իմացի՛ր:*

խ. *57բ-8ա* Գլուխ ե.երորդ. Վասն բնութեան աստեղաց – *Հինգերորդ գլուխ: Այլ իմացար զբնութիւն աստեղաց... զաղէկ ի վատ եւ վատն աղէկ փոզէ:*

խա. *58ա* Գլուխ Զ.երորդ, որ ցուցանէ որձն ու էգն – *Այլ դուռն, որ ցուցանէ զորձն, զէգն աստեղաց... տալէհին մէջ էգ է:*

խբ. *58բ* Գլուխ է.երորդ. Յաղագս աստեղացն է. – *Այլ դուռն, որ ցուցանէ զցերեկւան եւ զգիշերան: Իմացի՛ր, որ Արեգակն... վատն մառեխն է գիշեր եւ տիւ:*

խգ. *58բ* Գլուխ Թ.երորդ: Յաղագս աստեղացն – *Այլ դուռն աստեղաց, թէ յարեւելից ի՞նչ աստղ ի՞նչ ցեղ է եւ յարեւմտից ի՞նչ ցեղ է... հեռաւորութիւն այսքան է յարեգակէն:*

խդ. *59ա* Գլուխ Թ. Յուցումն աստեղաց – *Այլ ցուցումն, թէ զի՞նչ իրք կայ, բաժանած է այս է. աստղիս վերայ... տերեւ Լուսնին է, կուտն՝ Օտրիտն է:*

խե. *59ա* Գլուխ ժ. Յուցումն աստեղաց ժ. – *Այլ, որ յիշէ զհամերն. Զոհալ փոյթոքն թթուն ու ծանր համն... զանհամն, քիչ թըթու:*

խզ. *59աբ* Մետասան գլուխ գուներուն – *Այլ դուռն յաղագս գուներուն. Զոհալն ունի զսեւ... դեղնի եւ կարմրի:*

խէ. *59բ* Գլուխ ժԲ. Յուցումն բնութեանց աստեղաց – *[Ա]յլ Զոհալն ունի զի՞նչ հօվ կա ու չոր... լուսին հաւասար եւ գէճ բնութիւն:*

խը. *59բ-60ա* Գլուխ երեքտասան – *[Գ]աս Դ. դուռն, որ յիշէ զտեղերն. Զոհալն ունի զլերունք երկայն... Լուսին զինչ դուրան կայ:*

խթ. *60ա* Զորեքտասաներորդ. Վասն տղաց – *Այլեւ կեցւածք աստեղաց. Զոհալն ունի զգետն... զայն, որ ծառ զատ կայ:*

ծ. *60աբ* Հնգետասաներորդ: Յաղագս աստեղաց – *Դուռն, որ ցուցանէ զերկիրներն. Զոհալն ունի զՄնդուզ... զՄուլուսլ, զՊայեկան եւ զայլն:*

ծա. *60բ* Վեցտասաներորդ, որ զբաներն յիշէ – *Դուռն յաղագս բաներուն. Զոհալն ունի զբուրաստան եւ զերկաթին քակն... զինչ որպէս քար լինի:*

ծբ. 60բ-1ա ԺԷ.երորդ (17) գլուխ, որ յիշէ զհրայեալելին – *Զոհալն ունի զարճիճն, Մուշթարին ունի զկլաեկն... զինչ, որ մատանի լինի:*

ծգ. *61ա* Ութ եւ ժ[Ը].երորդ (18). Յաղագս հնտերուն – *Դուռն, որ ցուցանէ զհնտերն. Զոհալն ունի զպղպեղն... ունի քաղցր նուռ եւ խաղող եւ այլն:*

ծդ. *61աբ* Տասն [ժ]Թ.երորդ (19) գլուխ, որ յիշէ բուսին – *Դուռն, որ յիշէ զբուսքն. Զոհալն ունի զի՞նչ հօվ եւ չոր հուտ կայ... ծառ, որ կանաչ լինի, պակլան,պանպակ:*

ծե. *61բ* Քսաներորդ գլուխ, Ի. (20) – *Դուռն, որ ցուցանէ զկեր[ա]կուրն եւ զեղերն. Զոհալ ունի զինչ հօվ ու չոր ձեղ կայ... Լուսին զինչ հօվ եւ գէճ բան կայ:*

ծզ. *61բ-2ա* Քսան եւ մէկ գլուխ – *Զոհալն ունի խուաթի մասքեան, որ թարգմանի ուժ բռնող... Լուսին՝ զուժ եւ բնութիւններն, եւ այլն:*

ծէ. *62ա* Քսաներկու գլուխ յիշման կենդանեաց – *Զոհալն ունի զինձն, զկատուն, պախրէն, մուկն... զուղտն ու պաղրէն եւ այլն:*

ծը. *62աբ* Քսան Ը. (23) գլուխ, որ զթռչուիմ յիշէ – *Զոհալն ունի զայնոք, որ գիշերն շուրջ գան... Լուսին՝ զբաքն ու սագն եւ այլն:*

ծթ. *62բ* Քսան Ը.երորդ (24) գլուխ – *Դուռն, որ յիշէ զօդւածին. Զոհալն ունի զմազն մորթն... Լուսին՝ մարմնոյ ձաղ դիհն:*

կ. *62բ* Քսանհինգերորդ – *Դուռն, որ յիշէ զզօդւածնին. Զոհալն ունի զաղէկ ճորտն... Լուսին՝ զշլինքն:*

կա. *62բ-3ա* Քսան ու Ջ. (26) գլուխ – *Դուռն, որ յիշէ զրուցքն. Զոհալն ունի զլսելիքն... Լուսին՝ զտեսն:*

կբ. *63ա* Քսան եւ է. (27) գլուխ – *Դուռն, որ յիշէ զանդամն. Զոհալն ունի զականճն... Լուսին՝ ձաղ աչքն:*

կգ. *63ա* Քսան եւ Ը. (28) գլուխ – *Զոհալն ունի զհալեւորն, Մոշթիին՝ զմիջակ կերպն... Լուսին՝ զերեխայութիւն:*

կդ. *63ա* Քսան եւ Թ. (29) դուռն – *Դուռն, որ յիշէ զազգերն. զԶոհալն ունի զաւագ պապն... զքուրերն, մայրն եւ մօրքուրն եւ այլն:*

կե. *63աբ* Երեսուներորդ գլուխ զշաիլն ցուցանէ – *Զոհալն ունի զայն մարդ, որ վատ տեսակ է... բոլոր աղէկ հայեցք:*

կզ. *63բ* Երեսունմէկ գլուխ, որ զգործն յիշէ – *Զոհալն ունի մարդոյ վատ արարմունքն... զաղէկ սիրտ եւ վախկոտն:*

կէ. *63բ-4ա* Երեսուն եւ երկու գլուխ – *Դուռն, որ ցուցանէ զբնութիւններն եւ զարուրքն... կին պակաս երթա եւ այլն ըստ կարգի իմացի՛ր:*

– *64աբ* Դուռն, որ յիշէ զմարդկան ցածութիւն ու բարձրութիւն – *Զոհալն դալիլ առնէ... Լուսին վերայ մեծայոյսանց:*

կը. 64բ ԼԳ. (33) գլուխ, որ յիշէ զհաւատն – *Դուռն, որ յիշէ զհաւատն. Զոհալն ունի զՀոտն եւ ի՞նչ որ սեւ հագնին... եւ զամենայն հաւատս, եւ Քրիստոսի՝ յուսոն մերոյ փառք յաւիտեանս. ամէն:*

2. *65ա-8ա* [Գուշակութիւնք ըստ կենդանակերպից. ձեռ. 2954, 43բ]

ա. *65ա Զոյհալն հալեւոր մի, մի ձեռն աչ մարդոյ գլուխ եւ ձախն մարդոյ ձեռք... պատէ երկինքն լ. (30) տարին:*

բ. 65բ Մուշթարին կտրիճ մարդ մի է. աչ ձեռն մերկիկ թուր... պատէ զերկինքն ԺԲ. (12) տարին:

գ. 66ա Մառեխն կտրիճ մի, որ հեծեր է Դ. առիւծ... պատէ երկինքն Ա. տարի կէս:

դ. 66բ Արեգաչն մարդ մի, որ հեծեր է Դ. ձի... պատէ զերկինքն Ա. տարին:

ե. 67ա Ջոհրան կին մի. հեծեր է ուղտն... պատէ [զերկինքն] Զ. ամիս:

զ. 67բ Աւարիտն կտրիճ մի է. հեծեր է թաւուզն... պատէ երկինք Գ. ամիս:

է. 68ա Լուսինկան ի յաջ ձեռն խիշտ... պատէ երկինքն ԻԹ. (29) օր եւ կէս:

Ծնթ. 65ա իւրաքանչիւր էջի վերեւից 15 տողի չափով ազատ տեղ թողած՝ թերեւս կենդանակերպերի նկարների համար, համմտ. ձեռ. 2954, 43բ-6բ, որտեղ նկարներ կան:

3. 68բ-9բ Դուռն, որ յիշէ զթէպիթ աստեղն, որ հաստատուն: Գլուխ Առաջին, համար Ա. – *[Թ]ապիթ, որ կոչի հաստատ: Աս[ա]ցին ոմանք մի աստեղայբաշխաց, թէ... որ թարգմանի մեծութին:*

ա. 69բ-71բ Դուռն Առաջին – *Խոյն կայ յինքն աստղ մի, որ իւր անունն Աւիրին ասէ... որ զարիպ լինի եւ թէ վատ ուժ կալնու/// (շար.):*


ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

26ա Գիրք, որ կոչի Աղաւիտ, *արար<ար>եալ ի հնոց ֆիլիսուփայից, աստեղաբաշխից եւ թարգմանեցեալ ի հայի բառբառ ումեմն ի բանասիրացն, ի հնոցն է առեալ է: Եւ լուս ածեալ ի հայրապետութեան տեառն* Սիմէոնի *կաթուղիկոսին, ի թւայբերութեան հայոց ՌՄԻԱ. (1772)՝ Մայիսի ԻԲ. (22), ձեռամբ խակայկիրթ* Կարապետ *գրչի, աւուրց դառն այգունս:*

ՋԵՌԱԳԻՐ Դ.

ԺԹ. դար

Թերթ՝ 10 (թ. 72-81). չգրուած՝ 80բ-1բ: Պրակ՝ 1×10: Նիւթ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ 1. լատինատառ անընթեռնելի գրութիւն, 2. առիւծ: Մեծութիւն՝ 18,5×13,5: Գրութիւն՝ միասիւն՝ սեւ մատիտով



Նմուշ 76ա

սահմանագծուած (14×9,5, ստ. լս.՝ յիշագրեր): Գիր՝ նոտրգիր (նմուշ՝ 76ա): Տող՝ 23-24:

Մանրանկարչութիւն – Զարդագիր՝ թոչնագիր (77բ, ուրուագծային):

Վիճակ՝ բաւարար. հիմքի ստորին մասի մօտ եւ եզրերը գունափոխ-մգացած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

72ա-80ա [Բանք մաղթանաց առ Սուրբ Կոյսն]

ա. *72ա-3բ* Խոսք մաղթանաց ընդ երանուհի Սուրբ Կոյսն Տիրածին՝ աղերսեալ ի խորոց սրտէ – *Գանձարան գանձուց ամենատեսակ սրբութեանց, լիուլի լցեալ շտեմարան... մի՛ դադարիր բարեխօսել վասն իմ, Քրիստոսի մայր:*

բ. *74ա-5բ* Վերստին առ նոյն գթած մայրն յուսոյ հաշտութեան, սրտային գոչման աղաղակ աղօթից ցաւագնեալս անձին – *Դարձեալ ո՛վ յառաջատես համայնազօր իմաստութեամբ Սուրբ էին... ոչ բոցակիզեաց քո սուրբ զորովայն, բարեխօսեա՛ առ Տէր վասն իմոյ փրկութեան:*

գ. *75բ-7ա* Գրութիւն առ օրհնաբանութեամբ պաշտելի փրկութենագործ սրբազան գործիսն սոսկալի չարչարանաց Տեառն մերոյ Քրիստոսի, սրտային գոչման աղաղակ ցաւագնեալս անձին – *Եւ ընդ հայցուածոյ առեալ աղերսարկութեանց բարեբանեալ Տիրածին Կուսին... արա՛ ինձ այդ՝ թողլով զմեղանս իմ յանցանաց:*

դ. *77բ-80ա* Առ իմ տառապելոյս խնամակալ եւ միջնորդ երջանիկ սուրբսն Աստուծոյ սրտային գոչման աղաղակ աղօթից ցաւագնեալս անձին – *Ո՛վ գերահրաշ տաղաւար անճառ եւ անքննին սրբութեան... հաշտեաց, Տէ՛ր, ընդ իս սոցին բարեխօսութեամբն, որ միայնդ ես մարդասէր եւ բազումողորմ:*

Գրչագիրք՝ *81բ՝ «Komo»:*


Նկարագիրք՝ *81բ՝ գմբեթ, գծեր:*

3516
ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԺԸ. դար

Թերթ՝ 113+1 (կրկն.՝ թ. 1). չգրուած՝ 1ա-5բ, 108բ-12բ: Պրակ՝ 4+Ա-Թ×12 (Ա, է 11)+4: Նիւթ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմներով՝ 1. 3 զանգականեւ ծաղիկ, 2. ոճաւոր բոլորակ զինանշան, ներսում՝ «FAFA», այլ թուղթ՝ թ. 1-4, 110-4. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ 1. եռամահիկ, ներքեւում՝ «B», 2. երեքնուկ, որի աջ եւ ձախ կողմերում՝ «VP»: Մեծութիւն՝ 20×14,3: Գրութիւն՝ միասիւն (14,5×9): Գիր՝ նոտրգիր (նմուշ՝ 17ա). խորագիրք՝ կարմիր: Տող՝ 27: Կազմ՝ կաճաչ ծաղկաթուղթ. մէջքը՝ շագանակագոյն դրոշմա-

զարդ կաշի. աստառը՝ վարդագոյն հէնոով ծաղկաթուղթ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ թ. 1ադ-3 + թ. 110-3. չգրուած թուղթ. լուսագծերով:



Նմուշ 17ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. մէջքի կաշին փոխ-ինչ վնասուած, 2 թերթ կտրուած-հանուած, ընդմէջ թ. 4-5ի թղթի ելուստ, թ. 6-16, 19-22, 29-30, 35-6, 49-54, 63-4, 86-8, 93, 96-100, 106-7, 108՝ թանաքի մգութեան եւ թղթի բարակութեան պատճառով գիրը արտացոլուած թերթերի հակառակ երեսներին, թ. 98-108՝ խոնաւութեան հետեւ, թ. 1՝ անկեան վրայ, թ. 46 ստ. լս-ին՝ աղտոտուածութեան հետեւ, թ. 4՝ ստ. անկիւնը պատռուած, գլխատառերը՝ չգրուած, տեղերը՝ բաց թողած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

6ա-108ա [Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց]

Տե՛ս ձեռ. 1458, 2ա-183ա: Առաջաբան/չիք: ա/6ա-23բ: բ/24ա-41բ (խորագիր՝ չիք): գ/41բ-108ա: դ/չիք:

Ստ. լս-ներում ունի խորագրեր:

– 35բ Նախաշ ճարտար ամենեւին,
Կազմեա՛ դու շամբ եղեգային,
Գոլով տեղի թագաւորին,
Տղդատ հայոց մեծ արքային,
Շինեա՛ խոզանս ի մէջ շամբին,
գՏղդատ ահեղ կնոջ թային (=կնճթային)
Եւ այլ գազանս ի մէջ շամբին,
Արջ եւ առիւծ ընկեր նորին:

Ծնթ. Մանրանկարչին ուղղուած ոտանաւոր է. ձեռագրում կան նաեւ դատարկ թողած հատուածներ՝ էջի կէս, 1/3ի չափով, թերեւս մանրանկարելու համար: Այս ենթադրութիւնը հաստատւում է նաեւ 41բ ստ. լս-ի խոստից՝ «Հան աստ զսուրբն Գրիգոր գաւազանաւ, եւ զՏղդատ՝ խոզ անկեալ առաջի նորա: եւ զամենայն նախարարսն խառնիճաղանճ մարդկային կերպիւ, բայց այլադէմ, ի լսել վարդապետութիւն նորա»: Այս մասին Տե՛ս Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց, Տփղիս, 1909, էջ ԺԹ., Ի.:

Տե՛ս Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ. Տեր-Մկրտչեանի, Կանայեանց Ստ., Տփղիս, 1909, 2, ԻԹ. 474 էջ. Հմմտ. Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց, Մատենագիրք հայոց, Բ. հտ., ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1295-1735. ձեռագիր՝ Ը, էջ 1293:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *10ա սեւ թանաքով ութանկիւն՝* «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ / ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ»:


ՆՇՈՒՄ՝ *Ա. կազմաստառին սոսնձած թղթին՝ «4բ Ագաթանգեղոս քառածալ, նոտրագիր, գրեալ ի թղթի մինչ ցվերջ վարդապետութեան Ս. Գրիգորի, յիշատակարան ոչ ունի: Նուէր յԱստրախանայ», մատիտով՝ «Նախաշ» ոտանաւոր 35բ 41բ: Կնիք Պետրոս վարդապետի 10ա, Ջունի երրորդ մասը, վերջանում է Վարդապետութեամբ», 1ա՝ «ԺՀ. դ., Մ[եսրոպ] եպիս[կոպոս]», 1բ՝ «614, 3516», մէջքին սոսնձած թղթին՝ «4»:*

3517
ԺՈՂՈՎԱԾՈՅ


ԱՍՏՐԱԽԱՆ ՌՄԺԵ.-ՌՄԺԷ. – 1766-1768

ԳՐԻՉ՝ Յարութիւն Ջուղայեցի:

ԹԵՐԹ՝ 230 *(գրչի էջակալում՝ 1-437, որ է՝ 5ա-224ա).* չգրուած՝ 1ա-3ա, 192աբ, 224բ-31բ: ՊՐԱԿ՝ 2+Ա.-ԺԷ×12 (Թ, Ժ, ԺԱ. 10, ԺԷ 4)+1-5×8 (Ե 6)*: ՆԻԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ 1. բուսական շրջանակ, ներսում թագ եւ անընթեռնելի տառեր, 2. թագով պսակուած շրջան, որի մէջ առիւծ, մի ձեռքին թագ, միւսին գաւազան, շրջանակի վրայ՝ «PRO PATRIA», 3. ոճատոր սիւն, որի վրայ անընկալելի պատկեր, վրան «CD»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19×15: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, սեւ մատիտով, ապա կարմիր թանաքով սահմանագծուած, թ. 3-21 (16,5×12, ստ. լս.՝ յիշագրեր), թ. 22-39 (15,5×12), թ. 40-61 (15,5×11,5), թ. 62-99 (15-15,5×11,3), թ. 100-91 (14,5-15×11), թ. 193-224 (16,5×12,5): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 185ա), բոլորգիր՝ 3բ-4բ, 5ա, 193ա՝ վերնագրերը (նմուշ՝ 4ա): ՏՈՂ՝ 20-26: ԿԱՋՄ՝ մուգ պտերով բաց շագանակագոյն դրոշմազարդ կաշի. միջուկը՝ տախտակ. աստառը՝ թուղթ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա. (վջ)՝ չգրուած սպիտակ թուղթ, մասն կազմաստառի:



Նմուշ 185ա



Նմուշ 4ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ – Ուղղանկիւն երկգիծ շրջանակ (գծուած երեի ճակատազարդի համար, բայց չլրացուած)՝ 5ա: Ձարդագիր՝ թոչնագիր: Գոյներ՝ կարմիր, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշիի մաշուած, տեղ-տեղ ճաճճած, վնասուած մէջքը նորոգուած ԻԱ. դարում նոր կաշուով. թերթերը եզրաճատուած, ինչի հետեւանքով առաջին ինը պրականիշերը մասամբ կամ ամբողջովին կտրուած. թ. 17-22, 69-72, 76-86՝ թանաքի թթուայնութեան հետեւանքով գրադաշտը գունափոխ, թ. 21՝ գրադաշտին փոխրիկ անցք, թ. 23՝ ջրի կաթիլի հետք, 78բ՝ գրադաշտին 4 թանաքի մեծ բիծ, թ. 155՝ արտք. լս-ին փոխրիկ պատռուածք:

* Ծնթբ. Պրակահամարները գրուած են թ՛ թուերով եւ թ՛ տառերով, օրինակ՝ Ժ. 10, ԺԱ. 11 եւ այլն, առաջին 8 պրակներուն պրականիշերուն մեծ մասը թերթերուն եզրաճատման հետեւանքով կտրուած, բայց թուի եւ տառի միատեղ կիրառութեան նշանները նկատելի են ոչ էջերում՝ 50բ, 62բ, 86բ: Պրակ Թ. սկզբնապէս 10 թերթ, մէջտեղի բացուող զոյգ թերթից իւրաքանչիւրի ստ. լս-ում գրուած Թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *3բ-4բ* Վասն հինգ հարիւր եղբարցն – *Լուա՛ք ի պատմութեանց այսպէս գրեալ, զի ասէ Աւետարանն, թէ յորժամ խաչեցաւ Քրիստոս... կատարեցան չարչարանօք եւ մահուամբ վասն անուանն Քրիստոսի՝ Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն:*

Բ. *5ա-223ա* [Բանք Միխայէլի Ասորւոյ]

1. *5ա-207ա* Տեառն Միխայիլի պատրիարգի Ասորոց Համառօտ ժամանակաց զոյցք, խաղուածոյ արարեալ ի յոլովից պատմագրաց, ի վարժս բանասիրաց, սղամանակ ասութիւն՝ յԱդամայ մինչեւ յետին աւուրս թեւացեալ

ա. *5ա-11ա* [Գլուխ Ա. Յաղագս յԱդամայ հետէ մինչեւ յԱմազուխ] – *Ես, եղբա՛յրք իմ ի Քրիստոս ուսումնասէրք եւ աստուածասէրք, կարօտեալ գիտից ժամանակաց... Թարայ լեալ ամաց եւթանասուն՝ ծնաւ զԱբրահամ:*

բ. *11ա-7ա* [Գլուխ Բ. Ամազուխ, որ եւ կին էր թագաւոր, եւ այլ կարգ թագաւորացն Բաբիլացւոց եւ ոսկեհանութիւն եւ հաւատալն Աբրահամու] – *Յայսմ ժամանակի եղեն ամազունք, որ է զօրութիւն կանանց պատերազմօղաց... ի նմանէ կոչեցաւ աշխարհն Ասիկէ (Ասիկէ):*

գ. 17ա-22բ [Գլուխ Գ. Յաղագս Մովսիսի ընդ ծովն Կարմիր] – *Մովսէս լեալ Հ. (70) ամաց՝ երեսմանն Աստուծոյ արժանացաւ... կանայքդ այլազգիք հեռացուցանեն զքեզ ի Տեառնէ, որպէս եւ եղեւն:*

դ. *22բ-36ա* [Գլուխ Դ. Յաղագս թէ դշխոյ եկն առ Սողովմոն] – *Առ սա եկն դշխոյն հարաւոյ, զոր ասեն յազգէն դստերացն Նոյի... ի երկրորդ ամին սորա թագաւորեաց մակեդոնացոցն Անտիգոնոս՝ ամս ԼԶ. (36):*

ե. *36ա-44բ* [Գլուխ Ե. Յաղագս թարգմանութեան Հին կտակարանցն ի Կիպրոս կղզի] – *Ի չորրորդ (=վեցերորդ) ամին Պտղոմեայ թագաւորեցան Հին կտակարանքն ի Կիպրոս կղզի... Պիղատոս զպատկերն Ջեւսայ եմոյծ ի տաճարն եւ զգանձանակն տաճարին թափեաց ի ջրէջսն:*

զ. *44բ-7բ* [Գլուխ Զ. Յաղագս կարգաւ առաքելոցն որ կատարեցան] – *Յերեսուն ամի տնտեսութեան Տեառն մերոյ ընտրեցան առաքեալքն... մի Աստուած, մի անձն դաւանին եւ պահեն զօրէնսն:*

է. *47բ-54բ* [Գլուխ է. Յաղագս Աբգարու, որ առաքեաց յԵրուսաղէմ նկարագիր վասն պատկերին Քրիստոսի] – *Թ. եւ ժ. (19) ամին Տիբերեայ կայսեր Աբգար արքայ Հայոց եւ Ասորոց լուաւ զհամբաւ Տեառն... զօրացաւ հալածումն քրիստոնէից, եւ քակեցան եկեղեցիք:*

ը. *54բ-6ա* [Գլուխ Ը. Յաղագս թէ սով սաստիկ եղեւ ի Դիոկղետիանոսի ժամանակն] – *Եւ եղեւ սով սաստիկ, մինչեւ եղեւ մոթ մի ցորեան... հրամայեաց ոչ զինուորել եւ ելանել ի զօրս, որ ոչ իցէ ծնունդ աւազանին:*

թ. *56ա-60բ* [Գլուխ Թ. Յաղագս Արիոսի հերձուածողին] – *Յայնմ ժամանակի երեւեցաւ Արիոս էրեց Աղէքսանդրացի ի մէջ է. բարեկամաց իւրոց... սակայն կայր նա չարափառութեամբ եւ մարտնչէր ընդ [ուղղափառն] (չգրած, բառի տեղը բաց թողած):*

ժ. *60բ-7ա* [Գլուխ Ժ. Յաղագս Յուլիանոսի ուրացողոյ] – *Իսկ Յուլիանոս յանցանելն ընդ փղոց մի, որպէս եւ կարծէրն՝ բախտի ինչ պատահեաց... ի նմին ժամանակս թագաւորեաց պարսից Շապուհ, զկնի մահուանն Արտազի:*

ժա. *67ա-71բ* [Գլուխ ԺԱ. Յաղագս Մելիտոսի, որ կանոնեաց չառնել խոստովանութիւն անիմաստ բանայի] – *Եւ յերրորդ ամին Թէոդոսի սպանաւ Գրատիանոս ի Մաքսիմիանոսէ բռնակալէ... յայնմ ժամանակի անուանիք էին Սիմէոնն Սիւնակաց Անտիոք եւ Մօր Պարսամու ի սահմանս Փոքր հայոց:*

ժբ. *71բ-86ա* [Գլուխ ԺԲ. Յաղագս Նեստորի հերձուածին] – *Յորում ժամանակս ածաւ յԱնտիոքայ ի Կոստանդինուպոլիս Նեստոր եպիսկոպոս... թէ յաւուր կիրակէի բնաւ մեծ եւ փոքր յեկեղեցիս կացցեն յաղօթս եւ յուսումն:*

ժգ. *86ա-8բ* [Գլուխ ԺԳ. Յաղագս նշանի, որ եղեն. ամիս մի օդդ փոշի տեղաց, եւ թիզ մի կուտեցաւ] – *Բայց եւ զկնի այրման ամիս մի օդդ փոշի տեղեաց, եւ թիզ մի կուտեցաւ... որ արար ճառս վասն աստուածպաշտութեան եւ շարականս ուղղափառ մտաց:*

ժդ. *88բ-92ա* [Գլուխ ԺԴ. Յաղագս աւերման Ամթայ, եւ Պօղոս անուն հրեայ եղեւ պատրիարք Անտիոքայ, եւ ժողովեաց զամենայն եպիսկոպոսունս, զկնի Պօղի Ասկղիպել եւ չար գազան եւ հեղեղն, որ ջրասոյզ արար զՈւռհայ] – *Յայսու ժամանակի աւուրբք խաղաց թագաւորն պարսից Կուտն ընդ Միջագէտս...*

իմացան թէ ՄՌ. (2000) այրս, զորս տարեալ էր ջուրն, զորս ոչ գտին:

ժե. *92ա-7բ* [Գլուխ ԺԵ. Յաղագս Ասկղիպայ եւ Եփրեմի, որ անիծանէին զուղղափառսն. եւ եկն պատուհաս ի վերայ նոցա] – *Եւ մինչ Ասկղիպ եւ Եփրեմ խրախանային ի միասին եւ անիծանէին զուղղափառսն... զզարդն քակեցին եւ հանին անդի եւ տարան յաշխարհն իւրեանց:*

ժզ. *97բ-101ա* [Գլուխ ԺԶ. Յաղագս որ յութ հարիւր ֆառասուն թուին Ասորւոց եղեւ հրաշք անհաւատալի եւ զկնի եղեւ մահտարաժամ, որ բնաւ չէր լեալ: Եւ եղեւ սով եւ շարժ ֆառասուն օր] – *Ի ՊԽՐ. (848) թուին ասորոց եղեւ հրաշք ի վեր քան զհաւատալն... եւ ոչ դադարեաց ի ժամանակս իւր յաղքատանոցս եւ ի հիւրանոցս շինելոյ:*

ժէ. *101ա-13բ* [Գլուխ ԺԷ. Յաղագս որ յութ հարիւր եւթանասուն եւ մի թուին Ասորւոց եւ Ամթոյ պատուհասին] – *Ի ՊՀ.ս (870) թուին ասորոց սկսաւ թուականն հայոց, ՅԼԹ. (334) ամին Յուստինեայ... եւ ոչ վստահացաւ պատահել նոցա եւ դարձաւ անդրէն:*

ժը. *113բ-21բ* [Գլուխ ԺԸ. Յաղագս որ յայսմ ժամանակի երեւեցաւ Մահմէտ որդի Աբդլլահի ի թուին հայոց վաթսուն եւ եւթն (618). զայսու ժամանակօք խաւարեցաւ կէս արեգականն յարեգ աշնանամտին մինչեւ ի Քաղոց ամիս] – *Յայնմ ժամանակի երեւեցաւ Մահմետ [որդի] Աբդլայի... եւ առ Մաւի զՄարուդ կղզի եւ զԿրէ եւ դարձաւ:*

ժթ. *121բ-8բ* [Գլուխ ԺԹ. Յաղագս՝ սով սաստիկ եղեւ, եւ զկնի եղեւ հողմ սաստիկ հիւսիսային եւ փլոյց բազում եկեղեցիս եւ բրգունս ֆաղաֆաց: Եւ Ոմարայ, որ հրամայեաց ոչ ընդունիլ զհիստոսէից վկայութիւն] – *Զայսու ժամանակօք եղեւ սով դառնագոյն, եւ կերան մարդիկ զմիմեանս... եւ եղեւ նմա որդի եւ կոչեաց զանուն նորա Լեւոն:*

ի. *128բ-47ա* [Գլուխ Ի. Յաղագս որ նշաւիճ մեծամեծիճ եւ ցոլմունճ եւ փոշի գայր, եւ ի ծովն խոովեալ սիւնճ հրեղէնճ երեւեալ. եւ եկն կարկուտ՝ կշիռն երկու լիտր, եւ Ջամբրի հարկապահանջութեան անյիշելի] – *Յորում աւուրս եղեն նշանք մեծամե[ծ]ք՝ սկիզբն Մարտի ամսեան մինչեւ յելս Ապրիլի... որոյ առաւել վրէժխնդիր եւ նախանձաւոր ցուցաւ այրս այս:*

իա. *147ա-52բ* [Գլուխ ԻԱ. Յաղագս աստի սկսանի պատմութիւնս ի յառումն Կիւլիկիոյ առ հայս] – *Յաւուրս յայսոսիկ այրք Ծ. (50) հայազունք նեղութիւնք կրեալք ի թուրքաց, ելին յանապատս սպառազինեալք... ասեն բառնալ թագաւորութիւն տաճկաց զկնի Հ. (70) ամի իշխանութեան թուրքաց:*

իբ. *152բ-4ա* [Գլուխ ԻԲ. Յաղագս կոտւելոյ արագիլ եւ խորդ] – *Զայսու ժամանակօք եղեւ մեծ պատերազմ հաւուց, քանզի խորդք եւ արագիլք զբազում աւուրս ժողովեցան... խաղաղութիւն կալարուք ընդ միմեանս առաջի Աստուծոյ, եւ տո՛ւք պատերազմ ընդ անօրէնն:*

իգ. *154ա-6բ* [Գլուխ ԻԳ. Յաղագս գեղարդեանն Քրիստոսի] – *Եւ յետ այնորիկ բերին զգեղարդն Քրիստոսի անուանեալն, եւ ասաց... եւ դողացին ի նմանէ ամենայն շրջակայ թշնամիքն:*

իդ. *156բ-66բ* [Գլուխ ԻԴ. Յաղագս առման Կլայիճ Հռովմայ (Հռոմկլայիճ)] – *Ի նոյն աւուրս գնաց Ճօշլինն ի վանքն Մօր Պարսամաւ, եւ ելին ընդ առաջ նորա քահանայքն... ի ձեռն Տանուն ամիրային, եւ առ զկատուկն եւ զԱբլասաթայն եւ զՏարանտայ:*

իե. *166բ-71ա* [Գլուխ ԻԵ. Յաղագս պարոն Թորոսի եւ Սալահատինի եւ հարցմանց Տ. Ներսեսի եւ հաւատոցն ֆնութեան եւ երկու բնութիւն ասելոյն] – *Ի սոյն ամի պարոն Թորոսն արձակեաց դեսպանս պատարագօք ի Հալպ... եւ առ նոսա ձմեռն, եւ յոլովք կերան ի ծովուն:*

իզ. *171ա-84ա* [Գլուխ ԻԶ. Յաղագս շարժին, որ եղեւ ի Յունիսի ֆսան եւ իննճ. եւ ի խաչի ամիսն եկն ձիւն ֆսան եւ հինգ թիզ] – *Ի նոյն թուին եկն շարժ ահագին Յունիս ԻԹ. (29)՝ ի տօնի սուրբ առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի, ի ժամ պատարագի... իւրաքանչիւր ի յամիրայիցն այնուհետեւ խնամարկէին զընդ ձեռամբ ազգս քրիստոնէից:*

իէ. *184ա-91բ* [Գլուխ ԻԷ. Յաղագս Սալահատինին եւ մեծին Լեւոնի] – *Ի ՈԼԸ. (638) թուին հայոց զօրացաւ Սալահատինն ի յաճախութենէ մեղաց մերոց... զինչ է քահանայութիւն եւ պատիւ նոցա, եւ հանգուսցուք զյօժարութիւնս մեր ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս. ամէն:*

իը. *193ա-207ա* Նորին տեառն Միխայէլի Յաղագս ֆաճանայ[ա]կան կարգաց, թէ ուստի՞ առնու սկիզբն – *Սկիզբն քահանայութեան շնորհի է անժամանակն Աստուած... արժանիս արասցէ մասին սրբոց իւրոց հաւատոց եւ գործոց, որ տաս (այսպէս) դաւանեմ:*

2. ա. *207ա-9բ* [Դաւանութիւն Միխայելի պատրիարքի Ասորւոյ] – *Դաւանեմ զնա, [զսուրբ] եւ զուգափառ երրորդութիւն՝ անեղբ եւ անուր եւ անսկիզբն եւ անվախճան, միշտ անկարօտ եւ բերկրեալ... գրեմք ազիւսակօք զասացեալ է. աթոռոց աթոռակալաց մինչեւ յամենեւին խոտան, զորս թողումք յիշատակ կենդանութեան:*

բ. *210ա-7բ* [Գաւազանագիրք աթոռակալաց ֆնգից աթոռոց]* – *Հռոմա՝ Ուրտոս, Հռոմա՝ Աղէքսանդրոս... Բարդիւղու եւ զՇմուէլ զընդիմական սրբոյն Սա[հ]ակայ, իսկ զկնիսն այլք լցցեն:*

գ. *217բ-23ա* [Յիշատակարան թարգմանութեան Միխայիլի Ասորւոյ, արարեալ Վարդան վարդապետի. ձեռ. 1518, Յաւելուած ի Վարդանայ, տպ.] – *Արդ, եւ մեք՝ հետեւեալքս եւ պատահեալքս այսմ, հասուսցուք*

մինչեւ առ մեզ... գովեալ եւ գոհաբանեալ յազգս բոլոր բանականաց յաւիտեանս յաւիտենից. ամէն։

223ա գրչից՝ «Յիշատակարանս օրինակիս է, ո՛վ եղբայր բարի»։

Ծնթ. Մասերի զատորոշումը, փակագծուած վերնագրերն ու բառերը ըստ տպագրի՝ Տեառն Միխայէլի պատրիարքի Ասորւոյ ժամանակագրութիւն, Յերուսաղէմ, 1870։ * Տպագրի համեմատ (էջ 583) 2. բ. միաւորում չկան Անտիոքի աթոռակալների ցանկը եւ Հռոմի առաջին 5 աթոռակալները։

Գ. *223աբ* [Հարցումն եւ պատասխանի վասն Ջատկին – *Հարց]. Իսկ թէ վա՞ռն էր զՋատիկն ի վերոյ գարնանամտին... [Պատասխանի]. Որպէս ասէ տոմարն վասն լրման Ջատկին... պատուաւոր ի մէջ ամենայն աւուրց եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԴՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ


223բ էջի վերջում, վերջնազարդից առաջ «1766»։

224ա Յիշատակարան օրինակոզի գրքոյս. Փա՛ռք, պատիւ, գոհութիւն եւ երկրպագութիւն ամենասուրբ երրորդութեան եւ միոյ աստուածութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, որ ետ կարողութիւն նուաստ եւ տառապեալ ոգւոյս, որ այս Պատմագիրքն սկսեալ օրինակեցի եւ այժմ շնորհօք Հոգւոյն Սրբոյ աւարտ հասուցի։ Վասն որոյ խնդրեմ աստուածասէր հարցդ եւ եղբարցդ, ով ոք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշէսջի՛ք առ յոյսն բնաւից Քրիստոս զնուաստ Յարութիւնս Ջուղայեցի, *զհայրն իմ՝* Դաւիթն *եւ զմայրն իմ՝* Սօլթանաշէն, *որք հանգուցեալք են ի Տէր, եւ մանաւանդ զնորաբողբոջ որդիքն մեր՝ զզ*Դաւիթն *եւ զզ*Մարգարոյն, *որք ծառայք ձեր են ամենեցոյն։ Թերեւս աղօթիւք ձերովք զարգասցին ուղիղ հաւատով, երկիւղիւ եւ աստուածպաշտութեամբ, ի փառս անուան իւրոյ. ամէն։ Եւ ինքն Քրիստոս՝ Տէրն մեր, որ առատն է ի տուրս պարգեւաց, ի միասանգամ գալստեան եւ յարքայութեան իւրում հատուսցէ առհասարակ վարձս բարեաց իւրաքանչիւրոց՝ յիշողաց եւ յիշեցելոց. ամէն։ Եղեւ աւարտումն ի Թուին* ԱՌԺՃԿԸ. *(1768), Դեկտեմբեր Ի. (20), ի* Աստրախան *քաղաքի։*

3518
ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԱՑ

ԺԸ. դար

ԹԵՐԹ՝ 112+1-1 (կրկն.՝ թ. 1, թուիչ՝ թ. 84-86). չգրուած՝ 1աբ, 89ա: ՊՐԱԿ՝ Ա-ԺԲ×12 (Ա 11, Թ 2, Ժ-ԺԱ՝ չիմ)+2: ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ խարիսխ, այլ թուղթ՝ թ. 60-110. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ եռամաիկ, երեքնուկ, որի աջ եւ ձախ կողմերում «CV», թ. 111-2՝ լուսագծերով եւ լուսադրոշմով՝ կիսալուսին-աստղ-[թագ]: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18,7×14: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (15-15,5×10,5-11): ԳԻՐ՝ նուռգիր (նմուշ՝ 37ա): ՏՈՂ՝ 27 (թ. 1-11), 26 (թ. 12-59, 106-10), 25 (թ. 60-105): ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ թուղթ. լուսանցակողերը՝ կարմիր, վերին լուսանցակողին սեւով՝ «Բէջան»: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ՝ չգրուած սպիտակ թուղթ, մասն կազմաստառի:



Նմուշ 37ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – ճակատազարդ՝ 1գ: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն, խաչ (78բ), տաճար (93բ): Ջարդագիր՝ թոչնագիր, հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, վարդագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նուռգուած Ի. դարի 70ականներին, մէջքի վր. եւ ստ. մասերի թափուած կաշին լրացուած, աստառը եւ պահպանները նուռգման ժամանակի, նոր աստառը սոսնձած հնի վրայ. Բ. փեղկին փոխր անցքեր. թ. 96՝ ԺԹ. դարի յաւելում՝ բնագրի պակասը լրացնելով շղագրով, ընդմէջ թ. 97-8ի մօտ 10 թերթ թափուած, 98-9ի՝ 24 թերթ (Ժ, ԺԱ պրակները). թ. 15-8՝ դեղին հետքեր, 72ա՝ ջրի կաթիլների հետքեր, 84՝ հիմի մօտ խոնաւութեան հետքեր, թ. 94-5՝ իրար կպած թերթերը անջատելիս գրադաշտի ստորին 4 տողերը մասամբ վնասուած, ապա նուռգուած. լուսանցակողերին խոնաւութեան հետքեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա-111բ Համառօտ պատմութիւն ժամանակաց ի սրբոյն Գրիգորէ մինչեւ յետինս թագեալ՝ արաբեալ կիրակոսի ընտրեալ վարդապետի՝ ի մեծաճոխակ ուխտէն Գետկայ

Տե՛ս ձեռ. 1518, 181ա-200բ: Նխ./1գ-3ա: ա/3ա-37ա: բ/37ա-49բ: գ/49բ-52ա (խորագիրը շարունակած՝ թէ որպէս յառաջեաց եւ բռնացաւ): դ/52ա-3բ: ե/53բ-7ա: զ/57ա-8բ (խորագիրը շարունակած՝ նեղեալ յայլազգեաց): է/58բ-9բ: ը/59բ-60ա: թ/60ա-1բ: ժ/61բ-5բ: ժա/65բ-6բ: ժբ/66բ-7բ: ժգ/67բ-9ա (խորագիրը շարունակած՝ սակաւ ինչ առդիցուք): ժդ/69ա-71բ: ժե/71բ-2բ: ժզ/72բ-3ա: ժէ/73բ-4ա: ժը/74ա-5բ: ժթ/75բ-6բ: ի/76բ-8ա: իա/78բ-9ա: իբ/79ա-81ա (խորագիրը շարունակուած՝ զօրաց թաթարաց): իգ/81աբ: իդ/81բ-6բ: իե/86բ-7բ (խորագիրը շարու-

նակած՝ թէ որպէս աւերեցին զնա): իգ/87բ-8բ (այլ միս ի սուրբ կենդանեաց մեր զենեալ՝ չշարունակած, տեղը բաց թողած): իէ/89բ (սկ. չգրուած, տեղը բաց թողած՝ եալ երկիրն յարենէ եւ ի ճարպոյ վիրաւորացն...): իը/89բ-90բ: իթ/90բ-2ա: լ/92ա-3բ: լա/93բ-4ա: լբ/94ա-5բ: լգ/95բ-6բ (խորագիրը շարունակած՝ եւ որ ինչ եղեւ): լդ/96բ-7բ: լե/97բ (գայր դեսպանքն փութացուցանել /// վջ.): լզ-խբ/չիք: խգ/98աբ. (սկ. /// զպսակն ընտրութեամբ արասցեն... զնոր բուսեալ չարիսդ /// շար.): խդ-ծզ/չիք: ծէ/99ա (սկ. /// կալեալ եւ հայր անուանեալ թագաւորին Վրաց Դաւիթ...): ծը/99ա-102ա: ծթ/102ա-3բ: կ/103բ-6ա: կա/106ա-7ա: կբ/107ա-8ա: կգ/108ա-9ա: կդ/109աբ: կե/109բ-11բ (շար. 111աբ, այլ ձեռքով, ԺԹ. դ., շղագիր): Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երեւան, 1961, ձեռ. ս, էջ ՃԸ.:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽԱԳԱՂԱՓԱՐ ԱՒՐԻՆԱԿԻ

3ա Ընդ նմին եւ մեղսամած Գրիգորի *գրչի, միայն անուամբ* Պուետիկոսի:

Ծնթ. Համաոտ ցուցակում (Ա., էջ 1031) ձեռագիրս գրիչ է համարուած «Գրիգոր Պուետիկոս»ը: Ձեռագիրս եւ սրան ազգակից այլ օրինակներում առկայ սոյն յիշատակարանի մասին Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երեւան, 1961, էջ ՃՁ.-ՃԷ.: Դաղափար օրինակի գրիչ Գրիգոր Պուետիկոսը Գրիգոր վրդ. Դարանաղցին է:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

111բ (1864 թ., շղագիր) Այս քանի տողս ի լրումն Թերութեան արտագրեցաւ ի տպեալ մատենէ Կիրակոսի *Պատմութեան, ի 22 Մեպտեմ[բերի], 1864,* Վրթանէս *վարդապետ:*

Ծնթ. Վրթանէս վարդապետը 11աբ թերթերի պակասը լրացնողն է, «տպեալ մատեան» ասելով նկատի ունի թերեւս հետեւեալ տպագիրը. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Մոսկուա, 1858:

ՆՇՈՒՄ՝ *մէջքին սոսնձած թղթին՝ «1. Պատմու[թիւն] Կիրակոս [վար]դապետի Գանձակեց[ու]», Ա. կազմաստառին սոսնձած թղթին ձեռագրի մասին տեղեկութիւններ եւ «626, 3518», 1ա՝ «ԺԸ., Մ[եսրոպ] եպիս[կոպոս]», 112բ՝ «Սահակ վարդապետի»:*


ԳՐՁԱՓՈՐՁ՝ *1բ՝ «Ա», 99ա՝ 3 գծեր, 112ա՝ վրացերէն այբուբէն եւ անկապակից տառեր, 112բ՝ «600000»:*

3519
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ՎԱՇԱՐՀԷՅ (ՀՈՒՆԳԱՐԻԱ) ՌՂՋ. – 1647

ԳՐԻՁ, ՍՏԱՅՈՂ՝ Խաչիկ Կաֆայեցի:

ԹԵՐԹ՝ 365. չգրուած՝ 1ա, 8ա, 178ա-9բ, 258ա-69ա, 362բ, 363բ-5բ: ՊՐԱԿ՝ 6+Ա-Լ×12 (ԻԴ 11): ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ 1. եղջերու, երեմնուկ՝ աջ եւ ձախ կողմերում «VP», 2. թագով պսակուած ոճաւոր բոլորակ, 3. ոճաւոր զինանշան՝ կողմերին 2 առիւծ, թ. 180-1՝ Միխայէլ հրեշտակապետ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19,2×14,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն՝ 1բ-9ա սեւով շրջանակուած (13,5×8,5), թ. 9-54 (14×11), թ. 55-362 (14×10): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 190ա): ՏՈՂ՝ 26-31: ԿԱՋՄ՝ բաց դարչնագոյն դրոշմազարդ կաշի՝ մետաղէ 2 կապիչով (կապիչի վրայ զարդագծեր եւ «LH»). միջուկը՝ տախտակ. աստառը՝ թուղթ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ՝ չգրուած թուղթ՝ մասն կազմաստառի:



Նմուշ 190ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – ճակատազարդ՝ 9ա, 180ա, 306ա: Լուսանցազարդ՝ բուսական: Ձարդագիր՝ թղնագիր, հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, կանաչ, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, մասամբ գունաթափ, Ա. փեղկի առոտ. շերտը մգացած, մէջքի եւ Ա. փեղկի միացման մասը Ի. դարում նորոգուած շագանակագոյն մոմլաթով, աստառը եւ պիպ-ները նորոգման ժամանակի, վր. կապիչի փականը եւ ստ. կապիչի մետաղէ մասը ընկած. թ. 88, 175, 187, 188, 191-3՝ ստ. լս-իին պատռուածք, թ. 306-22՝ ստ. լս-իին ցեցի անցքեր, թ. 341-3՝ առոտ. լս-իին թանաքի հետք, թերթերից շատերի անկիւնները սեւացած կամ թանաքոտ մատնահետքերով (77ա-8ա, 80-1ա, 324ա):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԹԵՐԹ՝ 99. չգրուած՝ 1ա։ ՊՐԱԿ՝ 1+Ա.-Թ×12 (Թ 2)։ ՆԻԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ խաչ, «P. SEKRE», զարդաշրջանակ, մէջը՝ «S», այլ թուղթ՝ թ. 1, 96ի ստորին մասին սոսնձած 19,8×14՝ լուսագծերով եւ ճնշադրոշմով՝ թագով պսակուած ուղղանկիւն։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19×15։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (16×11,5 ստ. լս.՝ յիշագրեր)։ ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 95ա)։ ՏՈՂ՝ 35։ ԿԱՋՄ՝ կանաչ ծաղկաթուղթ, մէջը եւ անկիւնները՝



Նմուշ 95ա

դարչնագոյն կաշի, մէջին ոսկեգոյն զարդեր. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ դեղնաւուն թուղթ. լուսանցակողերը՝ կարմիր ցայտկէն։ ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ՝ չգրուած դեղնաւուն թուղթ, մասն կազմաստառի։

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Գոյներ՝ կարմիր, սեւ։

ՎԻՃԱԿԸ՝ բաւարար. կազմի ծաղկաթուղթը մաշուած, Ա. փեղկի անկեան կաշին թափուած, մէջի եւ Ա. փեղկի միացման մասը կիսով չափ անջատ. բոլոր թերթերի ճիմերին եւ վր. լս-ներին ցեցի անցքեր. թանաքի թթուայնութեան հետեւանքով թ. 2-95՝ գրադաշտը գունափոխ, թ. 29-30՝ գրադաշտին պատռուածք, թ. 96ի ստ. լս-ին սոսնձած 19,8×14 չափսի թերթիկ՝ վրան ԺԹ. դարի կէսից յետոյ աւուած բովանդակային յաւելում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *2ա-27բ* Գիրք կոչեցեալ Վէմ գայթակղութեան, շարադրեցեալ յիլիայ Միհեադիս եպիսկոպոսէ Քեռնիի եւ Բալաւիդացն վիճակի, ի խնդրոյ ուրումն իշխանի, եւ թարգմանեալ ի յունացն ի հայս յամի Տեառն 1767 եւ ի հայոց՝ ՌՄԺՋ. (1767) եւ Յունվարի 31, ի Կոստանդնուպոլիս քաղաքի։ Վէմ գայթակղութեան, այսինքն՝ սկիզբն եւ պատճառ պատառման երկուց եկեղեցեացն արեւելականի եւ արեւմտականի – *Խնդրեցեր յինէն, ո՛վ իշխան, փառաւորագոյն եւ ամենաբարեպաշտ, առ ի յուսանիլ մանրամասնաբար, թէ զինչ է այն, որ բաժանէ զերկուս եկեղեցիսն... մնայ մինչեւ ցայսօր պատառումն ընդմէջ եկեղեցեացն, որ եւ միացուսցէ անլոյծ կապիւ՝ շնորհ ամենասուրբ Հոգւոյն. ամէն։ Վերջ։*

Լս-ներում բաժանուած է 1-57 հատուածների։

Բ. *28ա-94բ* Վարդապետութիւն յաղագս Սրբազան Աթոռոյն Հռոմայ՝ ըստ դիտատուրութեանն Ֆռանկսզաց. նախ թարգմանեցեալ ի կալլիականէն ի յիդալականն եւ ի յիդալականէն ի յունականն, իսկ յայժմոյս՝ ի յունականէն ևս թարգմանեցեալ ի հայկական բարբառ: Յամի շնորհաց 1765 եւ ի Նոյեմբերի 18ին սկսեալ

Տե՛ս ձեռ. 1954, 76ա-278ա: Նախաբան/28աբ: 1/28բ-9բ: 2/29բ-30ա: 3/30բ-2ա: 4/32ա-3բ: 5/33բ-6ա: 6/36ա-7բ: 7/37բ-9ա: 8/39ա-40ա: 9/40ա-2ա: 10/42ա-3ա: 11/43աբ: 12/43բ-5ա: 13/45ա-6ա: 14/46ա-7ա: 15/47ա-9ա: 16/49ա-50բ: 17/50բ-1բ: 18/51բ-3բ: 19/53բ-4ա: 20/54ա-5բ: 21/55բ-8ա: 22/58աբ: 23/58բ-9բ: 24/59բ-62ա: 25/62ա-5ա: 26/65ա-9ա: 27/69բ-71բ: 28/71բ-2ա: 29/72ա-4բ: 30/74բ-6ա: 31/76բ-7բ: 32/77բ-80ա: 33/80ա-1ա: 34/81ա-2բ: 35/82բ-3ա: 36/83ա-5ա: 37/85ա-7ա: 38/87ա-9ա: 39/89ա-90ա: 40/90աբ: 41/90բ-1բ: 42/91բ-3բ: 43/94աբ:

Գ. *95ա-9բ* Ծանուցումն թագաւորական խորհրդարանին: Յամի 1743, փետրվարի ԻԳ.ին (23) – *Արգիլեցեալ է ամենայն վարդապետ[աց] եւ ուսուցչաց եւ որպէս զիարդ եւ իցէ կերպիւ մարդկանց, որք ունին ընթեռնուլ... վասն այսորիկ պատկառելով թերեւս ի յարեւելականացն (95բ՝ գրչից. «Զայս գլուխս վասն այսորիկ եդաք աստ, զի ընթերցեալ զայս կարողասցի նախկին գրուածոցն բարեպէս տեղեկանալ եւ լաւապէս հասկանալ, զի թարց սորայ չկարէ ինչ շահել ի նոցունց»)**:

* Ծնթ. 96բ էջի ստ. մասին աւելացրած թղթի (19,8×14) վրայ՝ ԺԹ. դարի (1846ից յետոյ) յաւելում բոլորգրի նմանեցրած շղագրով:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

27բ Գրեցաւ ի ՌՄԺԶ. (1767) թուին հայոց՝ ի յամսեանն Սեպտեմբերի Ե. (5), առ դրան վեհափառ աթոռոյս Սրբոյ էջմիածնի, *ձեռամբ կարնեցի* Սիմէօնեան Յակոբ *մեղսալի եւ ապաշնորհ վարդապետիս:*

94բ Փա՛ռք քեզ, Տէ՛ր, փա՛ռք քեզ, Աստուա՛ծ, յաղագս ամենայնի Տէ՛ր, փա՛ռք քեզ: Գրեցաւ ի յունական բարբառոյ նորաթարգման բանքս այսոքիկ՝ ի նոյն թարգմանչի ձեռագիր օրինակէն, ըստ կէտին եւ ըստ տառիցն դրութեան, ի Յակոբայ իբրու վարդապետէ, ի ՌՄԺԶ. (1767) թուականութեանս՝ ի Սեպտեմբեր ամսոյն ԺԵ. (15) սկսեալ եւ ի յերեսնին աւարտեալ, առ դրան վեհափառ աթոռոյս էջմիածնի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *1բ (ԺԹ. դ., շղագիր) Գիրք, որ կոչի Վէմ գայթակղութեան՝ շարադրեցեալ յԻլիայ Մենեաղիսէ եպիսկոպոսէ Ֆալավոիդացն վիճակի՝ ի խնդրոյ ուրումն իշխանի: եւ թարգմանեցեալ ի յունաց լեզուէ ի հայս ի Կոստանդնուպօլիս՝ յումեմնէ բանասիրէ, յամի Տեառն 1767: Իսկ այժմ տպագրեալ ի յեօթներորդում ամի հայրապետութեան լուսանկար մօրն մերոյ* Սրբոյ աթոռոյն էջմիածնի, *տեառն Ղուկասու կաթողիկոսի ամենայն հայոց՝ հրամանաւ իշխանազնեայ տեառն* Յովսեփայ *սրբազան արքեպիսկոպոսի եւ առաջնորդի ազգին հայոց, որք են ընդ տէրութեամբ* Ռուսաց: *Արդեամբք եւ ծախիւք բարեպաշտօն ազնուատոհմ* Մանիչարեանց Աստուածատուրեան *ազնիւ պարոն* Մարգարիի, *յամի Տեառն 1786, իսկ ի թուին հայոց ՌՄԼԵ. (1786), ի* Սանկտ Պետրբուրգ, *ի տպարանի* Խաչատուրեանց *պարոն* Գրիգորի, *կրկին հրամանաւ կառավարչացն բարեկարգութեանց, վերնագիր տպագրեալ Ա. մասին սակս տեղեկութեան:*

Ծնթ. «Վէմ գայթակղութեան» 1786 թ. տպագրի տիտղոսաթերթի արտագրութիւնն է:

2. *27բ (ԺԹ. դ., նոտրգիր) Յայս վայր տեսաւ տպագրեալ ի Ս[անկտ] Պետրբուրգ յաւուրս Ղուկասու կաթուղիկոսի, յամի Տեառն 1786: եւ թէ էր զանց զերկրորդաւն եղեալ չիմանե (՞) Խաչ. տէր* Յովհաննէս Խաչկեանց:


ՆՇՈՒՄ՝ *մէջքին սոսնձած վարդագոյն թղթին՝ «1. Վէմ գայթակղութեան», Ա. կազմաստառին սոսնձած թղթին ձեռագրի մասին տեղեկութիւններ եւ՝ «Ի ձեռագրաց Տ. Գէորգեայ Դ-ի՝ հանեալ ի գզրոցէն ծաղկած այվանի», «677, 3523, 1786, Մ[եսրոպ] եպիսկոպոս]»:*

3524
ՏԱՒՆԱՊԱՏՃԱՌ


ԺԴ. դար

ԳՐԻՉ՝ Գրիգոր (1ա-2բ, 148ա-56բ, 304ա-6բ, 321ա-30բ, 334ա-412բ), Անանուն Ա. (3ա-148ա, 331ա-3բ), Անանուն Բ. (157ա-282բ), Անանուն Գ (283ա-304ա, 307ա-21ա):


ԹԵՐԹ՝ 412+1 (կրկն.՝ թ. 151, հետագայի էջակալում՝ 1-852, որ է՝ 1ա-411բ). չգրուած՝ 2բ, 354բ: ՊՐԱԿ՝ Ա-Խ×12 (Գ 4, ե, ժէ, ԻԸ չիf, Ջ, Իե, Իէ 11, ժ, ժԶ, ԻԶ, ԼԶ, ԼԸ 10, Լե, Լէ 9, Խ 8): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17,5×12,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (14×9-9,5): ԳԻՐ՝ բոլորգիր՝ թ. 1-2, 148-56, 304-6, 321-30, 334-412 (նմուշ՝ 326ա), բոլորգիր՝ թ. 3-148, 331-3 (նմուշ՝ 332ա), բոլորգիր՝ թ. 157-282 (նմուշ՝ 185ա), բոլորգիր՝ թ. 283-304, 307-21 (նմուշ՝ 298ա): ՏՈՂ՝ 29 (թ. 1-2, 157-304, 307-21), 30 (թ. 3-156, 304-6, 321-412): ԿԱՋՄ՝ վարդագոյն մոմլաթ, մէջքը՝ սեւ կտոր. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ չգրուած սպիտակ թուղթ (1950ականների): ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ՝ չգրուած սպիտակ թուղթ, մասն կազմաստառի:




Նմուշ 326ա



Նմուշ 332ա



Նմուշ 185ա



Նմուշ 298ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Կիսախոռան՝ 3ա: Լուսանցազարդ՝ բուսական: Ջարդագիր՝ ճանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, դարչնագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. 1970ական թթ-ին 1-110 եւ 388-412 թերթերի եզրերն ամրացուած, թափուած մասերը լրացուած կիսաթափանցիկ թղթով. 412բ՝ գրադաշտը վնասուած, դժուարընթեռնելի, 1ա՝ մասամբ դժուարընթեռնելի, թ. 392՝ կիսով չափ թափուած, լրացուած նոր ոգմաման թղթով, բնագիրը վնասուած. ընդմէջ 26-7ի 8 թերթ թափուած, թ. 40-1ի 13 թերթ (ե. պրակն ամբողջովին + 1 թ. Ջ. պրակից), թ. 282-3ի 13 թերթ (ԻԸ. պրակը +1 թ. ԻԷ.ից), թ. 363-4ի 3 թերթ, թ. 392-3ի 2 թերթ. բոլոր թերթերի հիմերը, վր. եւ ստ. եզրերը խոնաւութեան հետեւանքով գունափոխ-մգացած, թ. 196՝ ստ. լս-ին անցք:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *3ա-306ա, 307ա-53բ, 355ա-412բ* [Տաւնապատճառ]

1. *3ա-10բ* [Ա.] Ի տաւնի Դպիր եւ Յակոբայ – *Սկիզբն տաւնից եւ ամենայն հոգեւոր ուրախութեանց է տաւն Ծնընդեան եւ Յայ[տ]նութեան Տեառն... խնամեսցէ Քրիստոս յեկեղեցի սուրբ. եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:*

– *10բ* Այլուստ – *Մարկիոն Պոնտացի էր ի ժամանակս Հագիանոսի Հռոմա հայրապետն... թւի թէ լեալ է յաւուրս առաքելոցն:*

2. *10բ-8բ* Բ. Ստեփաննոսի Նախավկաի եւ յառաջսար[կաւագի] – *Աստուածազարդ շուք տաւնիս լուսակամ երեւմամբ իւրով ահիւ լնու... եւ զայն աւր եւս տաւն կարգեցին, որ է աւգոստոս Բ.՝ ի փառս Քրիստոսի Աստուծոյ. ամէն:*

3. *18բ-24ա* Գ. Պատճառ Պետրոսի եւ Պաւղոսի՝ գլխաւորաց առաքելոցն – *Յաստուածարար աքանչելեացն բազումք են, զոր իմանամք... արդիւնացուսցէ զիւրատուր իշխանութիւն նոցա ի վերա մեր քաղցրութեամբ եւ մարդասիրութեամբ. եւ նմա փառք յաւիտեանս:*

4. *24ա-6բ* Դ. Յոհաննու եւ Յակոբա՝ Որդոցն Որոտման – *Աստուածահրաման պատուիրանաւն ունէր Խոյէղ զսկիզբն տաւնին... եւ սա ասէ՝ թէ ոչ ծնջիք ի ջրոյ /// (վջ.):*

5. *27ա-9ա* [ե. Յոհաննու Ոսկիբերանի՝ Ի Գործոց մեկնութենէ սկիզբն, ձեռ. 2771, 211բ] – *(սկ.) ///նութեամբ եւ զայլս բազումս, ի բազում արուեստս: Արդ, վասն այնորիկ նշանաւք... այլ ի Պենտեկոստէին, որ եւ ի մեզ բխեսցէ ողորմութեամբն իւրով:*

6. *29ա-31բ* Ջ. Յաղագս Երկրորդ գալըստեանն – *Ելիցին գաւտիք ձեր պնդեալ ընդ մէջ եւ ճրագունք լուցեալ... [Ղուկ., ԺԲ. 35-36]. Շատ ինչ ունի եկեղեցի յաւանդութենէ... նմանեսցուք նաւստաքս այսքանեաց փառաւորաց ողորմութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում փառք:*

7. *31բ-6բ* Է. Յաղագս իջման Հոգւոյն Սրբո ի դասս առաքելոցն – *Բարի է Աստուած եւ բարոյ ամենայնի առարիչ... բնութեամբ եւ աստուածութեամբ եւ զաւրութեամբ եւ կամաւք միաւորեալ ընդ Հաւր եւ ընդ Որդոյ. եւ նմա փառք յաւիտեա[նս]:*

8. *36բ-40բ* Ը. Յաղագս տապանակին խորհրդոյ – *Եւ արար Բեսէլիէլ զտապանակն յանփուտ փայտից [ելք, Լէ. 1]. Աւծ զնա ոսկով, լուսափայլեալ անձինք... եւ աստուստ առ Հայր իւր եւ երընջոցն ան/// (վջ.):*

9. *41ա-7բ* [Ժ. Յաղագս Մեծի աւուր հինգշաբաթոյն] – *(սկ.) ///որսն, յորոց մի էր յերեւելի աւուրցն աւրս այս՝ հինգշաբաթ Հին Ջատկին... կատարմամբ յիշատակին յառաջիկացն զգուշացուցանէ, եւ նմա փառք յաւիտ[եանս]:*

10. *47բ-54բ* ԺԱ. Աղաւթք Ամպակումա եւ երգ – Տէր, զլուր քո լուա եւ երկ[եայ, հայեցայ] ի գործս քո եւ զարմացա: [Գ. 2] Ջարդ գեղեցկութեան երկնի վասն այնորիկ զսքանչելի է, զի այլեւայլ փառաւք պայծառանա... եւ իշխելովք, մեռելաւք եւ կենդանաւք մերովք, եւ նմա փառք յաւի[տեանս]:

11. *54բ-63ա* ԺԲ. [Յելից մեկնութենէ. ի խորհուրդ աւուրս, ձեռ. *2770, 234բ*] – *Խաւսեցաւ Տէր ընդ Մովսէս եւ ընդ Ահարոնի յերկրին եգիպտացոց... [ելք ԺԲ. 1] [Մեկն.] Աստուածայինքն միայն իւրք են... ժրաջան աշխատութեամբ եւ աներկբայ հաւատով, եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:*

12. *63ա-71բ* ԺԳ. Յաղագս Տապանակին – *Բազմաց ի հեբրաեցոցն եւ յերուսաղէմացոցն եկեալ ի հաւատս յետ Յարութեանն Տեառն մերոյ... մի անգամ մատչէր ի տարոջն արեամբ ի սրբութիւնսն:*

13. *71բ-4բ* ԺԴ. Յեզեկիէլէ. – *Եւ եմոյծ զիս Հոգին առաջի դրաց տաճարին, եւ աւրհնեալ էր ջուր... [եզկ. խէ, 1-6] – [Մեկն.] եզեկիէլ ի Բաբելոն գոլով, մարգարէն՝ ի գերութիւն... որսացից զնոսա յամենայն լերանց, ուր ցրեցան. եւ Քրիստոսի փառք ամենայն յաւիտեան:*

14. *74բ-7ա* ԺԵ. Ընդ երեկուշաբթին ընթերնուն կանունական ընթերցուած – *Ի սկզբանէ արար Աստուած զերկինս եւ զերկիր [Ծննդ. Ա., 1]: [Մեկն.] Քանզի եր-*

կուշաբաթիան Զատկին աւրինակ բերէ... խնդրելով ի Քրիստոսէ ողջ լինել կրկին մարդովն։

15. *77ա-81ա* ԺԶ. Խորհուրդ եւ կարգաւորութիւն եկեղեցոյ – *Ոչ եթէ այժմ ինչ ծանեաք զխորհուրդ եկեղեցոյ, այլ յառաջ քան զլինելն աշխարհի... որ յամքս թռուցել զաւրթ երեսաւք ընդ առաջ փեսային, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։*

16. *81ա-5բ* ԺԷ. Յարութեան նախեր[գ]ան – *Այսաւր յարե[ա]ւ Քրիստոս ի մեռելոց եւ յարոյց ընդ իւր, զի վայր անկեալ բնութիւնս ի մեղացն մահուանէ... հանդերձելոց փառացն արժանի լինել շնորհաւք եւ մարդասիրութեամբ յարուցելոցն ի մեռելոց եւ յարուցանողին Հաւր եւ փառակից հոգւոյն, որոց երիցն ի միում աստուածութեան փառք, պատիւ յամենայն եղականաց՝ յիմանալեաց եւ ի զգալեաց, այժմ եւ միշտ եւ յաւի[տեան]։*

17. *85բ-9բ* ԺԸ. Տեսութիւն աւետարանին Մաթէոսի – *[Բան.] Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զաւրէնս կամ զմարգարէս [Մտթ. ե. 17]։ [Մեկն.] Առ գպիրոն եւ փարիսեցիսն, որ հակառակ կային... եւ մեք ի վերա ամենայնի հասեալ փառաւորեսցուք զՏէր մեր Յիսուս Քրիստոս, որում փառք յաւիտեանս. ամէն։*

18. *89բ-97ա* ԺԹ. Վարդապետին Վարդան արաբեալ ի պատիւ սուրբ Աստուածածնին, ի խնդր[ոյ Սարգսի, ձեռ. 2551, 117ա] – *Անթառամ ծաղիկ անդ (շարական). [Մեկն.] Թագաւորել սուրբ եկեղեցի աստուածաբար հրաման տա... 90բ Զի թէ մեր թարգմանիչն եւ հոգեշարժ մարգարէն Մովսէս Խորենացին... կարող եւ կամեցող ողորմութեամբն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ եւ փառաւորե[ա]լ ընդ Հաւր եւ ամենասուրբ Հոգւոյն յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

19. *97ա-105բ* Ի. Յաղագս տարէմտին՝ Վանական վարդապետին արաբե[ա]լ – *Աստուծով իմաստնացեալն Սաղամոն ի գիրս իւրական զեկուցանէ... հանապազ ի փառս տուողին ամենայն բարեաց, որում փառք այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ա[մէն]։*

20. *105բ-13բ* ԻԱ. Պատճառ բանիցն Գրիգորի Աստուածաբանի, որ ասէ՝ Ի պահի իմում կացի – *Յետ համբառնալոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ իջման Հոգւոյն Սրբոյ... որ նորոգեաց զմեզ ի նոր նորոգութիւն հոգոյ եւ մարմնոյ, եւ նմա փառք յաւիտեանս. ամէն։*

21. *113բ-6բ* ԻԲ. Տեսութիւն բանիցն Եսա[յ]եա, որ ասէ՝ Միխթարեցէ՛ք, ֆանանայֆ – *Բանականիս սեռի բազում մասունս բաժանի, բայց գլխաւորք ի նոցունց եւ ալկատակարք... ըստ այնմ, ուր առ աւել եղեն մեղքն, եւս առաւել շնորքն։*

22. *116բ-25ա* ԻԳ. Ի սուրբ Քառասունսն է – *Բարի է Աստուած եւ ամենայն բարութեան արարիչ... յապրուստ հոգոց մերոց ապաւէնք սարսուցելոցս յաւուր յայտնութեան եւ ի միւսանգամ [գ]ալստեանն Քրիստոսի Աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս։*

23. *125ա-30ա* ԻԴ. [Տեսութիւն Աւետարանին ձաշոյ. ձեռ. 2770, 134ա] – *Առն միոջ էին Բ. որդիք [Ղուկ. ԺԵ. 11], զի զամենայն ինչ Քրիստոս ան[ձ]ամբ վճարեաց... խառնեց[եա]լ մարդիկ ի դասս հրեշտակացն արժանի արասցէ զձեզ երկնից արքայութեանն, պսակակից եւ սեղանակից սրբոց եւ սիրողաց իւրոց, որ է աւրհնե[ա]լ յաւիտեանս. ամէն։*

24. *130ա-4ա* ԻԵ. Եւ արդ, երկեղիւ սիրեսցուք, զի արդարոցն աւրեմն... *որ կարող իցեն զմեզ արժանիս առնել մեծամեծ պարգեւացն, որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհաւք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ փրկչ[ին]։*

25. *134ա-40ա* ԻԶ. Աւետարան ըստ Մաթէոսի. Զի որպէս փայլակն, որ ելանէ յարեւելից [Մտթ. ԻԴ. 27] – *[Մեկն.] Մարգարէք եւ [առա]քեալքն հոգովն Աստուծոյ խաւսեցան... յանկարծակի հասանիցէ ի վերա նոցա սատակումն, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։*

26. *140ա-3բ* ԻԷ. [Տեսութիւն Աւետարանին Ղուկայ ճաշոյն, ձեռ. 2770, 147բ] – *[Բան.] Եւ ասէ առ աշակերտն՝ Այր մի էր մեծատուն, որոյ էր տնտես (Ղուկ. ԺԶ, 1)։ [Մեկն.] Այր զինքն անւանէ... մի՛ վերջանայք, որով ամենայն ինչ յարդարի, արժանի արասցէ երկնից արքայութեանն ի փառս ամենասուրբ անւան իւրոյ (այլ ձեռքով՝ աւրհնեալն յաւիտեան)։*

Ծնթ. Աւարտը տարբեր ձեռ. 2770-ից։

27. *143բ-8ա* ԻԸ. Մարտիրոսաց – *Յորժամ լուսաւորին հարք հոգեւորք, ընդ նոսին եւ որդիքն լուսաւորին... որք հաւատով եւ յուսով զյիշատակս նոցա կատարեմք Յիսուսիս Քրիստոսիս, որում փառք եւ զաւրութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

28. *148ա-54բ* ԻԹ. Պատճառ ամենայաղթ Սուրբ խաչին Քրիստոսի ի Բարձրացուցէին – *Ամենայն բարեկամի եւ սիրելոյ գալուստ ուրախարարք են... եւ յումմն անսպառ ուրախութեամբ զուարճանա ի փառս պսակողին Քրիստոսի՝ մեղսաքաւիչ թագաւորին անմահի, որ է աւրհնեալ յաւիտեանս ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյն յաւիտեան յաւիտ[ենից]։*

29. *154բ-6ա* Լ. [Պատճառ] Յոհաննու Ոսկէբերանոյ Հաւատամքի – *[Բան.] Հաւատամք ի մի Աստուած՝ Հայր ամենակալ. Մեզ մի է Աստուած Հայր... իսկ Սաբինոս Մակեդոնիոյ եպիսկոպոսն ընդհալաւ զհամագոյութիւն ի փառս Քրիստոսի Աստուծոյ մեր։*

– 156բ Իսկ մոլորեալն Մարկիոն ասէ. երիս երկինս ի մինն... եւ տեսեալ Աստուծոյն բարոյ եւ աւտարի, որ նստէր յերրորդ երկինս։

30. *157ա-63ա* ԼԱ. Մեկնութիւն Ահարածոց, զոր արաբեալ է սրբոցն – *Սկիզբն իմանալոյ մեզ վասն լինելութիւն արարածոց... ծերքն, խորհուրդք, ժողովուրդն, մարմին, զՇմայ յիշեա՛։*

Ծնթ. Գուցէ Շմայոն, Շմաւոն անունն է, որը կարող է լինել կա՛մ գրչինը կամ նախագաղափար օրինակի գրչինը։

31. *163ա-6բ* ԼԲ. Մեկնութիւն եսայեայ մարգարէի՝ լուր երկ[ին] [Ա. 2] – *Աներեւոյթ է սրբոցն մարգարէիցն բան եւ լի ծածկեալ իմաստիւք... քանզի անանի ի երուսաղէմ մանանայիւն եւ հոգեւոր /// (վջ.):*

Ծնթ. ԼԳ-ԼԴ/ չիմ:

32. *167ա-70բ* [Լե. Յաղագս Գալատեան Կիրակէին՞] – *(սկ.) /// եւ երեւի աշխարհ ի լուսոյ նորա: Արար եւ աստեղս, որ շուրջ են գնովաւ... զի յայնմ աւուր ահեղին եւ ի մեծ հրապարակին բարեխաւսութեամբ սուրբ առաքելոցն եւ սուրբ Աստուածածնին թողեալ զանցանս մեր եւ զննջեցելոցն, եւ նմա փառք:*

33. *170բ-8ա* ԼՋ. Յաղագս յարութեան Ղազարու – *Ինութեամբ է լուսոյ խնդալն, զի ի ծագելն զըւարթանան եւ ծիծաղին ամենայն դէմք կենդանեաց... ամենակարողն ձեռն զամենեսին արիս գործեսցէ ի պատիւ եւ ի փառս անուան նորա այժմ եւ միշտ եւ յաւիտեան:*

34. *178ա-86ա* [ԼԷ.] Աւետարանի եղաբերից չորսն առեալ – *Եւ ահա այր մի՝ անուն Յովսէփ այր նախաբար... [Ղուկ. ԻԳ. 50-53, Մարկ. ԺԵ.. 42-46, Մտթ. ԻԷ. 57-60, Յովհ. ԺԹ. 38-42]. 178բ Այս Յովսէփ էր ի նախարարացն մեծատուն եւ երեւելի... մկրտե[ցէք] զնոսա յանուն Հաւր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեան]. ամէն:*

35. *186ա-8ա* ԼԸ. Պատճառ թելադրութեան Դ.ից աւետարանչացն, թէ որպէս գրեցան եւ յորման ժամանակս կամ որպիսի աւրինակաւ յառաջինսն սոցա խորհուրդ երկնայր եւ գայր – *Յարեւելս ասի տնկեալ զդրախտն, ուստի եւ աղբիւր ելանէր... եւ ի պատշաճ ժամանակի կատարէ զլինելոցն:*

36. *188ա-91ա* ԼԹ. [Վասն Մարկոս եւ Ղուկաս աւետարանչաց] – *Մարկոս եգիպտացոց քարոզեաց զիւր աւետարանն, քանզի անդ ընկալաւ... լինիմք ճշմարտապէս ժառանգք Աստուծոյ եւ ժառանգակից Քրիստոսի. ամէն:*

37. *191ա-4բ Ա.* [Ի բանն Ծննդոց. Ա., 26] Եւ ասաց Աստուած. Արասցուք մարդ՝ ըստ պատկերի մերում – *[Մեկն.] Աստուածընկալն Դաւիթ աստուածաշարժ լեզուով խաւսի ընդ Աստուած ի ՃԳ. սաղմոսին... զի զոր կորուսաքն, առցուք շնորհաւք Տեառն մերո[յ] Յիսուսի Քրիստոսի, որում փառք:*

38. *195ա-7ա* ԽԱ. [Քարոզ ի բան.] Դուք եք աղ երկրի [Մտթ. ե. 13] – *Աղն կրկին ունի զբնաւորական աւգտակարութիւն՝ զանհամութիւն կերակրոցն համեմեալ... ծանեան զերրորդութիւնն ի գալըստեանն Քրիստոսի, վասն որոյ աւրհնութիւն եւ գովութիւն Հաւր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ յաւիտեանս. ամէն:*

39. *197ա-205ա* ԽԲ. [Ջաֆարիա Ջագեցի] Վասն Գալըստեանն Տեառն յԵրուսաղէմ – *Քանզի նշանք հրաշափառագոյնք բնաւորեալ են շարժեալ զմիտս մարդկան ի զարհուրումն... որպէս եւ նորոգեցայք որպէս զարծիւ ի մանկացեալ ի ձեռն աւազի ծնընդեան:*

Տե՛ս տպ., Մատենագիրք հայոց, Թ. հատոր, Անթիլիաս, 2008, էջ 63-82 (խմբագրուած):

40. *205ա-9ա* ԽԳ. Անուանի մարգարէիցն, թէ ուստի՞ էին եւ ո՞ւր թաղեցան, սրբոյն եպիփանու ասացեալ – *Ովսէէ մարգարէ էր ի Բէլամովթայ, ի ցեղէն Իսաքարայ... է մինչեւ ցայսաւր անյայտ ի բազմաց քահանայից անտի, եւ յամենայն ժողովրդենէն կատարեցաւ ցուցակ մարգարէից:*

41. *209աբ* ԽԴ. Նախերգան – *Խաւսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ. Առ՛ քեզ խունկ անուշ ծաղիկ ընդիր... [ելք Լ. 22-25] ի ե. նիւթոյ գոյացեալ եւղն... ըստ այնմ, թէ Քրիստոս եկեալ քահանայապետ յաւիտենից, եւ նմա փառք յաւիտեանս:*

– 210բ-1բ Այր մի էր մեծատուն եւ ագանէր... [Ղուկ. ԺԶ. 19]. Մեծատունն ամենայն մեծատանց իմանի պատկեր թէպէտ եւ ըստ ծիրանեաց... զոր այժմ իբրեւ որդի մարդոյ տեսանիցէք ի միջի ձերում:

42. *211ա-3բ* ԽԵ. [Ի բանն Մատթեայ. Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ զոչխարս ի մէջ գայլոց [Ժ. 16] – *[Մեկն.] Եւ քանզի վասն կարեւորաց պիտոյից կերակրոցն արար զնոսա վստահագոյն... ակնարկէ ասելովն, որ համբերեսցէ, իսպառ նա կեցէ:*

43. *213բ-6բ* ԽԶ. Պատճառ խաչին բարձրացուցանելին եւ սակաւ մի գրին հայոց, որ տուաւ ի ձեռն աղաւթից սրբոյ վարդապետին Մեսրոբա եւ Սահակա – *Յըսկզբան լուսաւորութեան մերոյ եւ նորոգման մարդկա[յ]ին բնութեանս, յորժամ Բանն Աստուած խոնարհեցաւ... որ է հերձուած նեստորի. Բարձրացուցէք զՏէր Աստուած մեր, գոչէ մարգարէն:*

44. *216բ-20ա* ԽԷ. [Ի] Խորհուրդ եկեղ[եցւոյ]. ւագնեա՛, Յիսո՛ւս Քրիստոս, բանն, որ եղեւ ի վերա[յ] եսա[յեա]. Ի վերա Հր[է]աստանի եւ ի վերա Երուսաղէմի [Ա. 1] – *Միջոց իմն է տեսիլն եւ անյայտ եւ է բանս զգալի եւ իմանալի... ծագեսցէ զլոյս աստուածութեան իւրոյ ի սիրտս մեր:*

45. *220ա-7ա* ԽԸ. [Ի բանն Եսայեայ]. Եւ եղեւ յամին յորում մեռաւ Ոզիայ արքայ [Զ. 1] – *Եւ զիարդ իցէ զի զայլ ժամանակս թագաւորացն... էին կամեցեալք, դարձեալ էին եւ ապրեալ ի փառս Քրիստոսի Աստուծոյ, որում փառք:*

46. *227ա-35բ* Խ[Թ.] Նշան կարդացման, զոր ընկալաւ եկեղեցի: Այսոհիկ ը[ստ] [Եպ]իփանու ի սաղմոսն ԺԸ. եւ Ժ. ւագնե[ա՛] Յիսուս – *Զաստուածեղէն աւրինացն Գ.իս ձեւս եւ երիս որոշմունս... որ զհետ մեր գալոց են ի մերոց, յորս լիցի մեզ արժանի լինել ողորմութեանն որոյ, եւ նմա փառք յաւիտեանս:*

47. *235բ-50բ* Ծ. – *Եւ զայս խորան աստուածաշուք, խորան եւ անշարժ խաղաղութիւնն Աստուծոյ անսասան պահեսցէ... մատըռուակել յաւժարիմ ի տէրունի տանէն յամենաբուղխ աղբերէն, յորոց մի է եւ ասացեալս:*

48. *250բ-4ա* ԾԱ. – *Պաւղոս առաքեալ՝ Յիսուսի Քրիստոսի, կամաւքն Աստուծոյ սրբոց, որ են յԵփեսոս եւ հաւատացելոց… կամ զի՞նչ հայցէր յաղաւթելն, այլ զի բոլորով սրտիւ հաստատեսցին ի սէրն Յիսուսի Քրիստոսի:*

49. *254բ-63բ* ԾԲ. Վարդան սուրբ վարդապետի առաքեալ եւ պարզե[ա]լ մեկնութիւն սկիզբն տեսլեանն եզէկիէլի մարգարէին – *[Բան.] Եւ եղեւ եւ յամին յերեսներորդի յամսեանն չորրորդի [եզ. Ա. 1-4]… [Մեկն.] Աստուծով իմաստնացեալ Սաղամոն ասէ ուրեմն… հնազանդութիւն իշխեցելոց եւ հանգիստ հանգուցելոց, ընդ որս լիցի եւ մեզ հասանել շնորհիւ ողորմութեանց Աստուծոյ, որում փառք յաւիտեանս. ամէն:*

Տե՛ս Վարդան Արեւելցի, ճառք, ներբողեանք, աշխ. Յ. Քէոսէյեան, Երեւան, 2000 թ., էջ 122-135:

ա. *263բ-70ա* Նորին Վարդան վարդապետի ի նոյն գրոց – *[Բան.] Եւ ի մէջ նորա իբրեւ զտեսիլ բազմագունի ականց [եզ. Ա. 4-15]… [Մեկն.] Այգի կիսակութ եւ ոճ արտոյ յագարակի… երախտաւորցն լիցի ողորմութիւն գտանել ի Քրիստոսէ Յիսուսէ մերոյ, որ է աւրհնեալ ընդ Հայր եւ Սուրբ Հոգոյն աժմ եւ միշտ:*

բ. *270ա-8բ* Ի նոյն գրոց նորին Վարդանայ սուրբ վարդապետի – *Եւ տեսի եւ ահաւասիկ անիւ մի յերկրի… [Մարգ. եզեկ., Ա. 15-Բ. 1]. Աստուածագործ աշխարհիս յայսմիկ տարերք եւ մասունք ծնողականք են…*

Տե՛ս Նախորդ՝ 263բ-70ա էջերի եւ այս միաւորները տպագրում փոխ-ինչ տարբերութիւններով ներկայացուած իբրեւ մէկ միաւոր՝ Վասն կառացն եզեկիէլի ասացեալ վարդապետին Վարդանայ, տե՛ս տպ., էջ 136-60:

50. *278բ-82բ* ԾԳ. *Թագաւորք երկրի աւր յայտարարեալ են ու ի նոսին պարգեւս բաշխեն…* եւ մեք գուցէ ընդ պարտ պատժոց պատ/// (վջ.):

Տե՛ս ԾԴ/չիմ:

51. *283ա-90բ* ԾԵ. [Պատճառ Վարդավառին ի բանն] – *Եւ արդ, զ«Ուրա՛խ լեր, երիտասա՛րդ»-ս [ժող. ԺԱ. 9]: Ի Սողոմոնէ Վարգավառիս ընթեռնուլ: Այս է պատճառն. զի զայս տաւնս իբրեւ նշանակեալ… եւ ի միտ առնուլ, թէ ըստ ամենայնի մտանելոց է ի դատաստան, եւ գնալ ըստ կամաց դատաւորին Քրիստոսի, որում փառ[ք] յաւիտեան:*

52. *290բ-6ա* ԾԶ. Իգնատիոսի ի Ղուկա Աւետարան[ի մեկն]ութենէն – *Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ յԱստուծոյ… [Ղուկ. Ա. 26] Ամիս վեցերորդ ըզնիսան ասէ եւ ոչ եթէ ի թիւս ամսոցն… շարժեալ լինի Մարիամ ի Հոգոյն եւ ասէ Մեծացուսցէ:*

Տե՛ս Իգնատիոս Սեվերոնցի, Մեկնութիւն սրբոյ Աւետարանին, որ ըստ Ղուկասու, Կ. Պոլիս, 1735:

53. *296ա-304ա* ԾԷ. Աստուածածնին ննջ<ն >ման – *Պայծառ եւ հրաշալի է տաւնախմբութիւնս, միանգամայն եւ գերայզանց քան ըզբնութիւն… աւրհնեալ է յամենայնի ծնաւղն քո, աւրհնութիւն եւ փառք Հաւր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ այժմ եւ միշտ:*

54. *304ա-6ա* Վասն կատարման ժողովոյն եւ խոհրդո պատարագի – *Յետ ասացելոցս պարտիմք եւ զսրբոյ պատարագին բան եւ իմաստ եւ զնորին կատարման… համեմատ ծանուցեալ եւ աւրհնաբանեալ, ընդ որս եւ մեք արժանասցուք մեծի գոհութեանն եւ հաղորդութեան ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յա[ւիտեան]:*

Ծնթ. 304ա առմ. լ-ին՝ «Յաղագս պատարագին»:

55. *307ա-15ա* ԾԸ. [Ի Մեծի աւուր Վարդավարին Այղակերպութեան Տեառն մերոյ ի Թաբովր. Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդինուպաւլսի եպիսկոպոսի ի Մաթէոսի Աւետարանին Մեկնութենէն. ձեռ. 1525, 429բ] – *[Բան.] Ամէն ասեմ ձեզ, զի են ոմանք ի սոցանէ, որ աստ կան, որք մի՛ ճաշակեսցեն զմա[հ] մինչեւ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ փառաւք [Մտթ. ԺՋ. 28]: [Մեկն.] Քանզի բազում ինչ զվշտաց ճաոեաց եւ զմահուանէ… այլ յեղծանել այնպիսի երեսաց գործոցն միայն քննութիւն լինի:*

56. *315ա-9բ* ԾԹ. [Ի բանն Մատթէոսի. Եւ ելեալ Յիսուս ի կողմանս Փիլիպեայ կեսարեան [Մտթ. ԺՁ. 13] – *Պարտ եւ արժան է իմանալ, թէ ուստի գայր Տէրն ի կողմանս յայսոսիկ… սրբարար ի վերա անձանց մերոց, զի արժանի լիցուք մտանել ի հանգիստն յաւիտեան յաւիտենական ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում պատիւ եւ զաւրութիւն յաւիտեանս:*

57. *319բ-27ա* Կ. Յաղագս տաւնի Սրբո Խաչին եւ նորին նաւակատեաց, որ ի չորեքտասաներորդին կատարի Սեպտեմբերի ամսոյ ի փառս Աստուծոյ մերո[յ] եւ Տեառն Յիսուս Քրիստոսի – *Ի ժամանակս Մեծին Կոստանդիանոսի, որ կոչի նա ամ խաղաղութեան մեր[ոյ]… շնորհեցէ զթողութիւն յանցանաց իւրական ողորմութեամբն եւ գթութեամբն, որ է աւրհնեալ, գովեալ եւ բարեբանեալ յիմանալեաց եւ ի զգալեաց յաւիտեանս յաւիտեն:*

58. *327բ-30բ* ԿԱ. Յաղագս եկեղեցո – *Յառակացն Սաղոմոնի՝ Իմաստութիւն շինեաց իւր տուն [Առ. Ք. 1]: [Մեկն.] Առակախաւսն Սաղոմոն ի բազում մասունս աւրինակաց… ուղղեցէ՛ք գիտութեամբն որդոյ զհանճար հոգեկեցոյցն առաքինութեան:*

59. *331ա-3բ* ԿԲ. [Ի բանն Ղուկայ. ձեռ. 1246, 211ա], Յետ այսորիկ երեւեցոյց Տէր այլ եւս եւթանասուն եւ Բ. եւ առաքեաց զնոսա… [Ղուկ. Ժ. 1] – *[Մեկն.] Զայս նկարեալ եցոյց յաւրինակի անդ ի գալ ժողովրդեանն… ասէ՝ խնդացէ՛ք մի՛ ընդ այսոց հնազանդելն, այլ զի անունք ձեր գրեալ են յերկինս:*

60. *334ա-7ա* ԿԳ. – *Բարերարն բոլորից մարդասէրն Աստուած, որ ի յանճառ սիրոյ բռնադատեալ… ոչ լինու*

զբարիոք խնդրուածս մեր, իսկ երկրորդ ժամանակն եւ պատահումն իրացն։

61. *337ա-9բ* ԿԴ. [Մեկնութիւն սրբոյ Աւետարանին, որ ըստ Ղուկասու արարեալ սուրբ վարդապետին Իգնատիոսի] – *[Բան.] Դատաւոր մի էր ի քաղաքի ուրեմն, յԱստուծոյ ոչ երկնչէր... [Ղուկ. ԺԸ. 2]։ [Մեկն.] Դեմք առակիս ոմանց թւեցաւ, թէ... տա պատերազմ ընդ կրաւնիցն բառնալ գնայ, զոր սատարեսցէ Տէր Յիսուս Քրիստոս հոգով բերանոյ իւրոյ ըստ առաքելական ձայնին։*

Տե՛ս Իգնատիոս Սելեւկացի, Մեկնութիւն սրբոյ Աւետարանին, որ ըստ Ղուկասու, Կ. Պոլիս, 1735, գլուխ ԺԸ. էջ 36-3Ժ., ձեռագրի աւարտը թերի, մինչեւ տպագրի էջ 3Թ.։

62. *339բ-42բ* ԿԵ. [Ի բանն Պաւղոսի] Աղաչեմ զձեզ, եղբա՛րք գթութեամբն Աստուծոյ [Հռոմ. ԺԲ. 1] – *[Մեկն.] Բազում ինչ ճառեաց վասն Աստուծոյ մարդասիրութենէն... եւ ոչ էր հպարտանալ, քանզի սկզբնաչար եղեւ ի [մ]էջ այս ախտ, որով անգեալ եղաք խորխորատս կորսեան։*

63. *343ա-9բ* ԿԶ. [Ի բանն Մատթեայ] Եւ տեսեալ Յիսուսի ժողովուրդս բազումս ել ի լեառն [Ե. 1] – *[Մեկն.] Տես զանմեծարգութիւն նորա, զի ոչ ի քաղաքս եւ գեւղս շրջէր նոքաւք... յայնժամ լցուցանէ զքաղցեալսն անճառ բարութեամբն։*

64. *350ա-3բ* ԿԷ. [Ի բանն Յովհաննու] Եթէ սիրէք զիս, զպատուիրանս իմ պահեսջիք [ԺԴ. 15] – *[Մեկն.] Քանզի ասաց նոցայ, թէ զամենայն զոր ինչ խնդրէք յանուն իմ... քարոզել տիեզերաց զհաւատս ճշմարիտս, որ ի Հայր եւ Որդի եւ յամենասուրբ Հոգին, որ է աւրհնեալ յա[ւիտեան]։*

65. *355ա-8բ* ԿԸ. [Ի բանն Մատթէի] Եւ ի ծնանելն Յիսուս ի Բեդղեէմ Հրէաստանի յաւուրս Հերովդէի արքա [Բ. 1] – *[Մեկն.] Նախ զեղանակ ծնընդեանն եւ որ նովաւ լինելոց էր փրկութիւն ճառեաց... որով գնահն ուրախութեամբ յաշխարհն իւրեանց ընդ ցուցեալ ճանապարհն ի հր[է]շտակէն։*

66. *358բ-63բ* ԿԹ. [Ի բան Մատթեայ] Յայնժամ գա Յիսուս ի Գալելիէ ի Յորդանան առ Յովանէս՝ մկրտիլ ի նմանէ (Գ. 13) – *[Մեկն.] Աստուածահինքն ոչ ըստ մարդկայնոցս բերին ակամա շարժումն... աղտեղացայց կամ զի/// (վջ.)։*

67. *364ա-8բ* ՀԱ. [Վասն զանազան բնութեանց]

ա. *364ա* Նշանք բնութեանց – *Որ արիւն չաւել լինի, սպիտակ լինին երեսքն... պակասէ իւր միտքն։*

բ. *364աբ* Վասն բնութեան Ասկղիպեդեայ – *Ասէ՝ ի մարդոյ ի գլխոյն գա ամենայն բարի... եւ ի կոկորդէն երթա ի ստամոքսն։*

գ. *364բ-5բ* [Վասն սննդեան մանկան] – *Դիմոկրատէս հարցաւ, թէ սնունդ մանկանն եւ կերակուր ուստի՞ է եւ ո՞րպէս նայ յորովայնին։ Հիպոկրատէս ասաց, թէ՝ կին յորժամ յղի լինի, կանացիքն արգելուն, եւ արիւն կանացիքն չամէն աւր պարզի... զի չարենէ կերակրեցաւ եւ սեւացաւ։*

դ. *365բ-6ա* Որ Իբասա բժըշկի՝ Վասն տղայոց – *Բնութիւն լինի մանկանց ցրտին եւ գիջին... յորժամ չհանգուրժէ ունել, սովամահ լինի եւ անցուցանէ։*

ե. *366աբ* Վասն երիտասարդաց բնութեան Իբասա – *Զի նման է ջերմութիւն այնպիսոյն հրոյ... ջրով արբեցէ եւ զաւր հասարակ անաւթի կացցէ։*

զ. *366բ-7ա* Նորին վասն ծերոց բնութեանց – *Զի ծերոց բնութիւն շրջի... զի տհալ է եւ գիպորն լոյծ ունի։*

է. *367ա-8ա* Ասկղիպդայ վասն չորից բնութեանց մարդոյ եւ տարոյ եւ ամսոյ – *Բնութիւն մարդոյ բաժանեալ է ի չորս առաջս... կծու ինչ եւ գինի անապակ խառնարբ։*

ը. *368աբ* Վասն բնութեան մարդկան – *Բնութիւն է ի չորից նիւթոց... սաստկացեալ մասինն ծնընդական։*

թ. *368բ* Յաղագս բնակրութեան – *Բնակրութիւնք են այսոքիկ. քաղց, ծարաւ... եւ զմահն, որ լինի ԺԴ. (14)։*

ժ. *368բ* Յաղագս եկամտից – *Եկամուտք են այսոքիկ. որկորամոլականն, ագահականն, գիջականն... որ լինին հաւաստեւ Լ. (30)։*

ժա. *368բ* Յաղագս բնութեան հոգոյ – *Հոգին հուր է... ի զերագահասն շարժողութիւն։*

ժբ. *368բ* Յաղագս բնակրութեան հոգոյ – *Բնութիւնք հոգոյ են ցանկականն, ցասմնականն... առ բարի եւ առ չար։*

ժգ. *368բ* Յաղագս եկամտիցն – *Եկամուտք հոգոյ են անափառութիւնք, հպարտութիւնք... եդաք, որ են ԽԲ. (42)։*

68. *369աբ* ՀԲ. Ն[ա]խ[երգան] (լս-ից) – *Բանն Աստուած կատարեալ աստուածութեամբն խոնարհեալ ի հայրական ծոցոյ... որ լուսաւոր առնէ զամենայն մարդ, որ գալոց է յաշխարհի։*

– *369բ-72ա* Այլ բան – *Երկինք ասի եկեղեցի յաղագս բարձրութեան եւ պայծառութեան... աջ ունկն սրբոյ Կուսին, որ զուրախարարն լաւ ի հրեշտակէն զաւետիս փրկութեան աշխարհի։*

69. 372ա-4ա ՀԳ. Դրուատ ի սուրբ աւետարանիչն Յոհ[աննէս]. Ծաղկաբաղ – *Գերապայծառ է եւ հրաշափառ մեզ խորհուրդ տաւնախմբութե[ա]նս... ի բանալ դպրութեանցն, որո անճառ է իմաստութիւնն եւ անչափ գիտութիւնն, եւ նմա փառք յաւիտեանս։*

ա. *374ա-7բ* Վասն հաճանա[յ]ից – *Աստուած յորժամ զեղբայրն Մովսիսի առ իւր քահանայութիւն... եւ երթեալդ տանէ զմոլորեալն բառնալով ի վերայ ուսոցն խնդալով։*

բ. *376բ-7բ* Նախերգան Սարգսի վարդապետի յիշեա՛ ի Տէր – *Ուղիաճեմ վարուք պանծացեալք եւ անընդակիցք բարեպաշտութեան պարզք եւ անարատ*

գառինք... զիա՞րդ է պաճուճեալ, եթէ ոչ Հոգւոյն Սրբոյ հրաշազան պարգեւաւք։

70. *377բ-81բ* ՀԴ. Սեւէրիանոս ի հուրէ – *Ջմին ունեալով աղբիւր ջրոյ բնութիւն յոլովից... որպէս նախահարքն մեր պատմեցին իմացեալ վասն սրբոյ կուսին Մարիամու, որ ծնաւ եւ մնաց անապական։*

Ծնբ. Հմմտ. ձեռ. 1147, 503բ Մեծն հռետորի Տիրատոյ՝ ի բան. Ամէն ասեմ ձեզ, որ կապիցէք երկրի։

ա. *381բ-2ա* Յոհաննու Իմաստասիրի միաշաբաթի սրբոյ – *Արդ, ասասցուք զխորհուրդ Միաշաբաթին, որ զհանդերձեալ բարեացն... նորին հրամանի հետեւել առաքելական կանոնացն հնազանդելով։*

71. *382ա-6բ* ՀԵ. [Ի բանն Ղուկասու՝ եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ... [Ղուկ. Բ. 1] – *[Մեկն.] Քանզի առաջին աշխարհակալ Աւգաւստոս ցուցաւ... զի Աստուած սքանչելագործն երեւեցաւ յաշխարհի։*

ա. *386բ-9ա* Տապանակին – *Եւ ասէ Տէր ցՄովսէս. Տեսցես զամենայն, որ ցուցաւ քեզ ամպանման խորանն... քաղաքակից լինել մեզ, սրբոցն եւ աստուածասիրաց անձանց, որպէս զի ի տաճարի նորայ ամենեքեան տացուք փառս։*

72. *389ա-90ա* ՀԶ. Յաղագս Վարդավառին – *Թէ վասն էր Վարդավառ կոչի. այսպէս աւանդութեամբ ի նախահարցն մեզ պատմեցաւ... անուշաբուրակ բուսոցն դարձեալ բուրողական թէ տեսցեն ի Թաքաւրական լերինն։*

73. *390բ-1բ* Այլ նախերգան – *Բազում ինչ Սաղոմոն զնմանութիւն ունէր զՔրիչին... զվայելման ճառեաց, զկնի կատարածի գրոցն ասաց. Ուրախ լե՛ր, երիտասարդ։*

74. *391բ-5ա* ՀԷ. Յաղագս տաւնի ի Սրբոյ խաչին. Ի Սաղոմոնէ. Դարձեալ եթէ ոք ի նաւ ելեալ ընդ ամեհի [Իմաստ. Սող. ԺԴ. 1] – *Առակախաւսն իմաստուն խրատ զգաւնութեան մատուցանէ... մխիթարիչ հոգեւոր տխրութեանց եւ լցուցիչ ամենայն կարաւտութեանց, վասն որոյ յիրաւի աւրհնի սա յամենեցունց, որով լինի արդարութիւն ի փառս Աստուծոյ։*

75. *395ա-404բ* ՀՐ. Գերունակն լոյս ի Հաւրէ լուսոյ ծագումն եւ ծնունդ յառաջ քան յաւիտեանս... որ իբրեւ զառիւծ գոչէ, ապա եթէ խոտորի ոք արտաքոյ կամաց նորայ, որ հրամայեաց, թէ՝ Որ զիս սիրեսցէ, զհետ իմ եկեսցէ եղէց /// (մի տող)։

76. *405ա-12ա* ՀԹ. [Ի բանն Յովհաննու] ե[ղեն յայնժամ նաւա]կատիք յերուսաղէմ եւ ձմեռն էր... [Ժ. 22] – *[Մեկն.] Արարիչն բոլորից ժամարոնակն (՞) Աստուած էր ահր/// էին հանուրց բոպէից... յաններելի տանջանացն ///մէ փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած խոստովանողաց անուանն իւրոյ, որ է աւրհնեալ, գովեալ... յաւիտենից. ամէն։*

77. *412աբ* [Յաղագս իմաստասիրութեան, իմաստունի, իմաստակի եւ իմաստութեան] – *Ջանազան են իմաստք անուանադրութեանց եւ առանձնապէս ունին իւրաքանչիւր զտեսութիւն, զի այլ է իմաստասիրութեան անուն... զիմանալեացն դասապետութիւն ///ամք ըստ ան///ել անդասակարգութեանց ///իւեց առ Եփեսացիս քանզի [կ]ամքն Աստուծոյ հա///լէ առ նոսայ։*

Բ. *1ա-2ա, 306բ, 354ա* [Բաւիղ զանազանի, տոմարականի]

1. *1ա* [Յաղագս երից նաւակատեաց] – *(8 տող անընթեռնելի) Արարչական խնամքն որ միշտ բարեգթութեանդ ստեղծուածս իւր... եւ յայնժամն է կատարե[ալ] (2 բառ անընթեռնելի), ո՛վ Աստուած ընդ մարդկան բնակէ եւ փառաւորեն։*

2. *1բ-2ա* Յաղագս աղաւթից – *Լուսազարդ իմաստից /// (1 բառ) որ միանգամ զքաղցրութեանն ճաշակ առեալ... եւ միտքն ի խնամս փառաց կամացն Հաւր, առաջի խաչին Յիսուսի Քրիստոսի գնեալ արեամբն նորա ի դէմս միւսանգամ գալըստեանն, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։*

3. ա. *306բ* Առաջաւորի լրումն այսպէ՛ս առ. Առաջաւորի լրումն է – *Կա՛լ զթւական հա[յ]ոցն, Թ. ի վերա բեր եւ... զգիր տարոյն ի վերա Յայտնութեանն դի՛ր, Առաջաւոր է։*

բ. *306բ* Այս է անծերանալի բոլորն, որ կոչի Ազէքսանդրացի... ի միւս կիւրակէն անցնի, եւ լինի անսգալ։

4. *354ա* Թիւք տանց աստուածեղէն գրոց – *Արարածոցն Տ3Է. (4307), ելիցն ՎՆԳ. (3403)... Տիտոսին ՂԷ. (97), Փիլիմոնին Զ. (6)։*

354ա ի ստ. լս.՝ «Համարք աստուածաշունչ գրոցն տանց»։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

306ա Տէ՛ր Աստուած, ողորմեա՛յ անարժանիս՝ Գրիգորի ի քում գ[ալստեան]։

354ա Յիշեա՛ ի Տէր զգծողս եւ զհաշորդութիւն գրոյս մի՛ աղարտէր, զի եւ դու յիշեսց[ես] ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհ[նեալ] յաւիտեան։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *306ա (Ժե. դ., բոլորգիր)* Ես՝ նուաստ ծառայս Աստուծոյ Սահակ վարդապետս, գնեցի զայս գիրքս եւ այլ եւս եւթն գիրք ի Գրիգոր վարդապետին եղբայր որդեացն՝ ի յարդար արդեանց իմոց եւ եդի ինձ եւ իմոցն յիշատակ բարի։ Եւ արդ, ով ոք որ վարդապետ լինի եւ յիմ ազգէ եւ կամ ի յայս /// (2 բառ ջնջած, անընկալելի), նայ ժառանգէ զիմ վարդա[պետա]կան գրեանքն, որ է այս Տաւնապատճառս, Միխայէլն, Բառագիրքն, Աւէտարանի մեկնիչ Բ. գիրք, Յովասափ, Բարսեղ, Գրիգորի աղաւթքն, Ընթերցուածն եւ Եսային ի ներս, Սողոմոնն եւ շատ իրք ի ներս։ Այս գրեանցս ոչ /// կայ եւ ոչ /// (1 բառ ջնջած) եւ ոչ ի միմեանց բաժանումն բանիւ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

2. *412բ (ԺԵ. դ., բոլորգիր) Նախնին մեր* Գրիգոր *վարդապետն /// գրոցս եւ քիչ ինքն է գրել յոյժ սիրով /// [Սահ՞]ակ վարդա[պետ՞] /// (1 բառ) վերջ (՞): /// (3-4 բառ) Աստուծոյ մերո յ/// (1ա) բանք ///[փա]ռաւոր հաւաքեալ յա///ալն յաստուածային ծա[ղկանց] եւ բուրէ զհոտ /// (2-3 բառ) հաստա(՞)///:*

3. *269բ (ԺԶ. դ., նոտրգիր) Ձմեղսոր* ընծաիչան յիշա՛յ առ Տէր:

4. *1ա ստ. լս. (1651 թ-.ից յետոյ, նոտրգիր) Այս գիրըս ես անարժան* Պօղ(՞)/// *Թիւին ՌՃ./// (1651-ից յետոյ):*

ՆՇՈՒՄ՝ *1ա՝ մատիտով «Տօնապատճառ 3524», Ա. փեղկին 4× 2,3 կարմիր կտորի վրա «3524», 20ա՝ «Ն[ւաստ] Յովհաննէս ծ[այրագոյն] վարդապետ Գրիգորեան, ի Ռուսճուք Պուլկարիոյ»:*


ԳՐՁԱՓՈՐՁ՝ *11ա՝ «աաա», 12ա՝ խզբզոց, 22բ՝ «գգ»:*

3525
ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ, ՔԱՐՈԶԳԻՐՔ
(խմբագրութիւն Յակոբայ Ղրիմեցւոյ)

ՊԿԷ. – 1418

ԳՐԻՉ, ՍՏԱՑՈՂ՝ Յովհաննէս:

ԹԵՐԹ՝ 503: **ՊՐԱԿ՝** 4+Ա.-ԽԲ×12 (ԽԱ. 11, ԽԲ 8): **ՆԻՒԹ՝** թուղթ: **ՄԵԾՈՒԹԻՒՆ՝** 18×13,5: **ԳՐՈՒԹԻՒՆ՝** երկսիւն (14,5×10,5): **ԳԻՐ՝** բոլորգիր (նմուշ՝ 255ա): **ՏՈՂ՝** 33: **ԿԱՋՄ՝** շագանակագոյն դրոշմազարդ կաշի (Ա. փեղկին կապգրով երկիցս դրոշմուած՝ «Ա[ՍՏՈՒԱ.]ԾԱ-ՏՈՒՐ ԵՐԷՑ»*). միջուկը՝ տախտակ. աստառը՝ դեղին շերտազարդ մետաքս, երկաթէ վարդեակաձիւմբ երկու գամով. լուսանցակողերը՝ կարմիր, վր. եւ ստ. մասերում ձիւմբերին մօտ սեւով եզրագծած: **ՊԱՀՊԱՆԱԿ՝** Ա-Գ+ԴԵ՝ ԱԲ, ԴԵ՝ նորոգման, չգրուած դեղնաւուն թուղթ, Գ՝ ձիւն պիսպ-ը, հետագայում գրուտած:



Նմուշ 255ա

Ծնթ. Խմբ. Հմ 3479 եւ 3525 ձեռագրերի կազմերը պատրաստել է Աստուածատուր երէցը ԺԸ. դարում: Երկու ձեռագրերի կազմերի Ա. փեղկերի ներքեւում էլ առկայ է (Հմ 3525 ձեռագրում երկիցս) նոյնական չափի եւ ձեւի գործիքի դրոշմ՝ «Ա[ՍՏՈՒԱ.]ԾԱՏՈՒՐ ԵՐԷՑ». Տե՛ս նաեւ Հմ 3479 ձեռ-ի նկարգ-ը :

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Կիսախոռան՝ 6ա: Լուսանցազարդ՝ բուսական (6ա): Զարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր: Գոյն՝ վարդագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին տեղ-տեղ գունաթափ, դռնակը, 2 գամը եւ 3 կապիչներն ընկած՝ կան կապիչների մետաղէ ձիւմբերը եւ գամերի վարդեակ-ձիւմբերը եւ 1 գամ, նորոգուած Ի. դարի 70ականներին, մէջբը նորոգման շագանակագոյն կաշի. ե. պրակից սկսած (թ. 53) մինչեւ վերջ պրականիշերը հետագայի ձեռքով գրուած նաեւ ամեն պրակի 2րդ թերթի ա. երեսին. թ. 1-7՝ եզրերն ամրացուած կիսաթափանցիկ թղթով, գրեթէ բոլոր թերթերի ձիւմբերը մգացած խոնաւութիւնից, թ. 459-503՝ ստ. եզրերը եւ անկիւնները բորբոսի հետքերով, թ. 220-50՝ առտ. լս-ի եզրերին տողերի գծումների համար արուած անցքեր. թ. 61՝ թղթի սկզբնապէս ունեցած պատռուածքի վրայ եղած կարկատանն ընկած, 1-12րդ տողերի բնագիրը վնասուած, 119ա՝ գրադաշտին 4 տողի վրայ սպիտակ թուղթ սոսնձած, թ. 64 ստ. լս-՝ անցք. թ. 112բ առտ. լս-ի մի մասն ամրացուած այլ թղթով, թ. 261 ստ. լս-ի թափուած մասը լրացուած, 341բ՝ գրադաշտի վնասուած 2 տողը նորոգուած այլ թղթով, բնագիրը լրացուած. թ. 247-9՝ գրադաշտի երկրորդ սեան վրայ 1-2 սմ տրամագծով անցքեր, թերեւս այրուածքից, հետագայում այլ թղթով լրացրած եւ բնագրի պակասը օրինակուած, թ. 353-7՝ գրադաշտին ցեցի անցքեր, որի պատճառով թ. 357ի բնագիրը 7 տողի չափով մասամբ վնասուած, թ. 292-3՝ գրադաշտին եւ առտ. լս-ին փոքրիկ անցքեր, թ. 436՝ ստ. լս-ի պրականիշի տեղում ջնջած, պոկուած, վնասուած:

Ծնթ. Համաոօտ ցուցակում (Ա., էջ 1033) ճարցականով ձեռագրի գրչութեան վայր է համարուած Ղրիմը, բայց ձեռագրում այդ ենթադրութեան որեւէ հիմք չգտանք: Եթէ դա մակաբերուած է Յակոբ Ղրիմեցու՝ այստեղ առկայ անունից, ապա պէտք է յիշենք, որ 1416-1418 թթ-ին նա Ղրիմում չէր, այլ՝ Մեծոփայ վանքում. ըստ յիշ-ի՝ ձեռագրի գրչութեան հետ նա որեւէ առնչութիւն չունի. Տե՛ս նաեւ՝ Յակոբ Ղրիմեցի, Տոմարագիտական աշխատութիւններ, աշխ. Ջ. Էյնաթեանի, Երեւան, 1987, էջ 23-29:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *3ա-489բ Գրիգոր Տաթեւացի, Քարոզգիրք*

– *3ա-4բ* Յանկ է առաջիկայ գրոցս Ճառոզի, մանաւանդ եւ ծաղկաբաղ բուրաստանի՝ արարեալ վասն դիւրաւ գտանելոյ ուսումնասիրաց եւ հետեւողաց իմաստութեան, Ճանզի ոչ ինչ է, զոր խնդրես եւ ոչ գտանես ի սմա – *Ա. Նախ՝ վասն պատուոյն Ադամայ. մարդ ի պատուի էր եւ ոչ իմ[ացաւ]... [ճ]ՀՋ. Յիշատակարան է գրոցս եւ կատարումն ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ:*

– *4բ-5ա* [Նախերգան] – *Յանսկիզբն սկիզբն է եւ ի*

սկիզբնապատկան պատճառէն ներգործեալ բնաւորացն բոլոր բնութիւնք եւ համայն լինելութիւնք եղելոց էից… կամք գեռեւս մարմնով, թէպէտ ոչ կենդանի հոգով։

ա. *6ա-7բ* [Ա.] Գրիգորի եռամեծի եւ բաջ հռետորի աշակերտի Յոհաննու Ոսոտնեցոյ ի բան Սաղմոսին՝ Մարդ ի պատուի էր եւ ոչ իմացաւ։ [ԽՂ. 11] – *Նախ տեսանելի է, թէ զինչ էր պատիւ մարդոյն… ի չետ մեռանելոյն կորուսին զկեանս հանդերձեալ կենացն, ըստ այնմ՝ երթա՛յք յինէն անիծեալք (Զմեռան Կե.)։*

բ. *7բ-11ա* Ի. Նորին, ի բանն Յոբայ՝ Փորձութիւնք են կեանք մարդկան ի վերայ երկրի [է. 1] – *Ասէ իմաստունն՝ Ոսկի փորձի ի բովս, եւ մարդ ընտրի ի նեղութիւնս… եւ շահեցար զքանքարն, զոր եւ մեք մաղթեսցուք արժանի լինել մասնաւորիլ սրբոցն ի լոյս անթառամ ցնծութեան, անտրտում ուրախութեան, չարիտենական եւ անվաղճան կենացն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն (Զմեռան Իե.)։*

գ. *11ա-3ա* Ի. Նորին վասն խոռհրդոց մեղաց, ի բանն առակին՝ Խորհրդոց ամբարշտաց հարց եւ փորձ եղէց [Իմաս. Ա. 9] – *երեք են տեսակ մեղաց, զոր գործեն մարդիկ… զսատանայ իբր պատճառ մոլորութեան մեր, վասն այն, որ այսպիսի հարցափորձութիւնս լինի, պարտ է սուրբ պահել զխորհուրդս մեր ի չարէ (Ամառան ՃԻ.)։*

դ. *13ա-6ա* Ի. Նորին հարոզ վասն լեզուի. Մահ եւ կեանք ի ձեռն լեզուի է [Առակ. ԺՀ. 21], ասէ յԱռակն – *Տէր մեր եւ Աստուածն Յիսուս Քրիստոս հրամայէ յԱւետարանին… հալածին ի ձայնէ թագաւորին, որ ասէ՝ Ոչ գիտեմ զձեզ, երթա՛յք յինէն, անիծեալք (Ամառան ՃԻ.)։*

ե. *16ա-8բ* Ե. Յաղագս սկզբնական մեղաց եւ մահացուին եւ ներելոյն, ի բանն՝ Անօրէնութեամբ յղացաւ եւ ի մեղս ծնաւ զիս <u>ի</u>այր (մայր) իմ [Սաղ. Ծ. 7] – *Մեղք անունն մի է եւ բոլորապէս չերիս տեսակս որոշի… ընդդէմն եւս, վասն որոյ ասէ Եսայի. Վա՛յ, որ ասէ զչարն բարի կամ զբարին չար. եւ այլն. եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն (Ամառան Ծ.-ՃԲ.)։*

զ. *19ա-20ա* Զ. Յայլմէ հարոզ Յաղագս մեղաց եւ առնուանց նորին – *Արդ, նախ գիտելի է զզանազանութիւնս, որ ի մէջ չարին մեղաց մեղադրութեանն արատին… զի ամենայն գործ նորա կամ արդար են կամ բարեգութ։*

է. *20ա-2բ* Է. Յաղագս գարշութեան մեղաց՝ յայլմէ, ի բանն՝ Թշուառակ[ա]ն առնէ մէղմն զժողովրդեան – *Հարցեալ եղեւ Բիաս, որ էր մի չեւթանց փիլիսոփայից՝ Զի՞նչ բարէգոյն եւ երանելի… զնոյնն առնէ եւ զմեզքն ի հոգին, որպէս ասէ Յոբ ԼԳ. Մերձեցաւ յապականութիւն անձն նորա եւ կեանք նորա ի դժոխս։*

ը. *22բ-4բ* Ը. Դարձեալ յաղագս գարշութեան մեղաց, ի բանն՝ Ապականացն եւ պղծացն յանաւէնութեան իւրեանց – *Որպէս ասէ փիլիսոփայն՝ Ամենայն ապականութիւն բնականապէս է… զմին ի տանջանս, որպէս ասէ Մատթէոս Իե.՝ երթիցեն նոքա ի տանջանսն յաւիտենականս, եւ արդարքն ի կեանսն յաւիտենականս։*

թ. *24բ-8ա* Թ. Նորին վասն կամայ եւ ակամա մեղաց, ի բանն Յոհաննու. Են մեղք, որ մեղք են եւ են, որ մահու չափ են [ե. 16] – *Բնական ընտրողութեամբ ամենայն ոք բանական ստեղծաւ ի յԱստուծոյ… նոյնպէս անհաւատին եւ մեղաւք մեռելոյն անօգուտ է չետնոցն յիշատակութիւն, վասն որոյ այսօր պարտ է մեզ գառնալ ի մեղաց եւ արժանաւորիլ ողորմութեանն Աստուծոյ, որում փառք յաւիտենական (Ամառան Խէ.)։*

ժ. *28ա-30ա* Ժ. Նորին հարոզ վասն մեղաց, ի բանն՝ ասէ մարգարէն Ամովս, եթէ՝ Առնէ զողորմութիւն Աստուած ի Ռ. (1000) ա[զ]գս եւ հատուցանէ զմեղս հարց յորդիս, յերից եւ ի Դ. ազգս [ելք, ԼԴ. 7] – *Առնել զողորմութիւն ի Ռ. (1000) ազգս, կրկին իմացումն ունի… պարտ է վարդապետին առաւել զբարիս գործել, եւ ըստ բարեաց գործոցն զանազանապէս եւ առաւել ունին զպատիւ եւ զփառս վարձուց հատուցման ի Քրիստոսէ Աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն (Ամառան ԽՀ.)։*

ժա. *30ա-5բ* Ժ[Ա]. Նորին վասն աստուածային առաքինութեանց եւ նախ վասն հաւատոյ, ի բանն որ ասէ Յակոբոս՝ Հաւատ առանց գործոց մեռեալ են [Յակ. Բ. 22] – *Ասեն վարդապետք, եթէ առաքինութիւն է առնելն եւ ոչ գիտելն միայն… զի ընդ հաւատոցա եւ զգործդ ուղիցէք, զի հանդերձեալ բարեացն արժանաւորասցուք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն (Ամառան ԺԳ.)։*

Ծնթ. 33բ, 35ա՝ ստ. լս-ին 3-4 տող գրած, ապա ջնջած, անընթեռնելի, թերեւս բովանդակութեան ետ կապուած ինչ որ նշումներ, ընթեռնելի է միայն 33բ՝ «Եվսեբն (ղիրն) բանին յորժամ ի ///»։

ժբ. *35բ-7ա* ԺԲ. Նորին հարոզ Վասն յուսոյ, ի բան առաքելոյն՝ Յոյս ոչ երբեք ամաչեցուցանէ [Առ Հռոմ., ե. 5] – *Եւ վասն յուսոյ Դ. ինչ տեսանելի է… եւ Հոգին Սուրբ մխիթարեսցէ անզրաւ յաւիտենիս, որում փառք յաւ[իտեան] (հմմտ. Ամառան, ԺԵ)։*

ժգ. *37ա-40ա* ԺԳ. Յայլմէ հարոզ վասն սիրոյ, ի բանն՝ Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս [Յովհ. ԺԵ. 11] – *Վարդապետք ասեն, թէ սուրբ սէրն Դ. յատկութիւն ունի… ընդդէմ այնոցիկ ասէ Քրիստոս՝ Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս, որ եւ զմեզ արժանի արասցէ սիրոյն իւրոյ եւ ողորմութեանն, եւ Քրիստոսի փառք։*

ժդ. *40ա-2բ* ԺԴ. Յայլմէ հարոզ վասն սիրոյ, ի բանն՝ Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմ[իմեանս] [Յովհ. ԺԵ. 11] – *Ասեն իմաստունք, թէ թշնամութիւնն մեծ պա-*

կասութիւն է ի մէջ մարդկան... «Յայսմանէ ծանիցեն, թէ իմ աշակերտք էք, զմիմեանս սիրիցէք»: Եւ Քրիստոսի Աստուծոյ փառք յաւիտեանս (Ամառան, ԺԶ.):

ժե. *42բ-4ա* ԺԵ. Նորին դառնալ վասն հաւատոյ, յուսոյ եւ սիրոյ, ի բանն՝ Հաւատք սիրով յաջողեալք [Գաղ. Ե. 6] – *Միտքս մեր եւ հոգիս բանական լոյս է ստեղծեալ, ոչ զգալի, այլ իմանալի եւ անմարմին... եւ արժանաւորեսցէ գործոց բարեաց ի Քրիստոս Յիսուս Տէր՛՛ (Ամառան ԺԴ.):*

ժզ. *44ա-6բ* ԺԶ. Նորին վասն խոհեմութեան, ի բանն՝ Երանեալ է այր, որ եգիտ զիմաստութիւն [Առակ. Գ. 13] – *Իմաստասիրութիւնն բաժանի ի տեսական եւ ի գործնական ըստ փիլիսոփայիս... յիրաւի երանէ զնոսա, որք գտանեն զիմաստութիւն եւ զհանճար, եւ Քրիստոսի փառք (Ամառան Ի.):*

ժէ. *46բ-8բ* ԺԷ. Նորին վասն արիութեան, ի բանն Գործոց՝ Ի փոյթ մի՛ վեհերոտ հոգով եռացէք [Հռոմ. ԺԲ. 11] եւ կամ՝ Ո՛վ վատ, ե՛րթ առ մրջիւնն [Առակ. Զ. 6] – *Զվաստակ արիութեան գործոց ունիմք ի Դ. իրաց հաստատեալ... զերծանիլ յայսմ վտանգէ եւ կեալ պարզ երեսօք առաջի Աստուծոյ, որ աւրհ[նեալ է] (Ամառան Ի-Ա.):*

ժը. *48բ-50ա* ԺԸ. Նորին վասն գործոյ, ի բանն որ ասէ՝ Եղ Աստուած զմարդն ի դրախտին՝ գործել եւ պահել [Ծննդ. Բ. 15] – *Ի բանէս յայսմանէ յայտնապէս տեսանեմ... բայց միայն մի մարդոյ, որոյ է գործն, որոց եւ մեզ տացէ Քրիստոս Աստուած ժրութիւն, ժուժկալութիւն եւ կարողութիւն, զի վաստակեսցուք զհոգեւոր եւ զմարմնաւոր գործն եւ ժառանգեսցուք զներկայս եւ զհանդերձեալ (Ամառան ԻԲ.):*

ժթ. *50ա-3ա* ԺԹ. Նորին վասն հալալ, որ է՝ արդար, ամուսնութեան, ի բանն՝ Պատուական է ամուսնութիւն, եւ սուրբ են անկողինք, բայց զշունն եւ զպոռնիկն դատի Աստուած [Եբր. ԺԳ. 4] – *Յորժամ ստեղծեց Աստուած զառաջին մարդն եւ եդ ի դրախտին... Վասն այն ասէ՝ Պատուական է ամուսնութիւն, եւ սուրբ անկողինք, այլ զշունս եւ զպոռնիկս դատի Աստուած (Ամառան ԻԶ.):*

ի. *53ա-7ա* Ի. Նորին վասն արդարութեան, ի բանն Ովսէի որ ասէ՝ Սերմանեցէ՛ք զարդարութիւն եւ ննձեցէ՛ք զպտուղն կենաց [Ովսէ. Ժ. 12] – *Արարչագործն Աստուած կազմեաց զմարդն ի պատկեր իւր... եւ յամենայն ինչս արդարութեամբ ուղղեսցէ զկեանս իւր: Այս է սերմանել զարդարութիւն, եւ ապա յետ այնորիկ հնձեսցէ զկեանսն յաւիտենից ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն (Ամառան ԻԷ.):*

իա. *57ա-9ա* ԻԱ. Նորին վասն արդար վաճառաց եւ կշռոց, ի բանն առակին՝ Կշիռ նենգութեան պղծէ առաջի Տեառն, կշիռ արդար ընդունելի է նմա [Առակ. ԺԱ. 1] – *Որպէս ասէ մարգարէն՝ Արդար է Տէր եւ զարդարութիւն սիրէ, զուղղութիւն տեսանէն... զի հատուցէ ամենեցուն եւ զվարձս վաստակոց իւրոց. Զափ զե[ղ]ուն, թաթաղուն ըստ անսուտ խոստմանցն Քրիստոսի, որ եւ մեզ տացէ մասն (Ամառան Լ.):*

իբ. *59ա-61ա* ԻԲ. Նորին վասն զրկանաց, ի բան Ժողովողին՝ Տեսի զրպարտութիւն ի ներոյ արեգական եւ արտասուք զրպարտելոցն, եւ ոչ ոք էր, որ մխիթարէր [Ժող. Դ. 1] – *Ի բազում եւ ի զանազան մեղաց, զոր գործէ մարդ, մինն զրպարտելն է եւ զրկելն... աղքատին ողորմութիւն տացուք եւ ողորմութեան հանդիպեսցուք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ՛՛ (Ամառան ԼԱ.):*

իգ. *61բ-3բ* ԻԳ. Նորին վասն պահոց: Այլեւ վասն առաջատրին, ի բանն Յունանու՝ Ահա երեք աւուրք, եւ ոչ եւս իցէ [Յօն. Գ. 4] – *Վասն պահոց գիտելի է, զի մարդն հոգի է եւ մարմին... եւ երրորդ, զի նոցա անւամբն ճանաչեմք զսոսա, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս (Ջմեռան ԻՁ.):*

իդ. *63բ-5բ* ԻԴ. Նորին վասն Դ.շաբաթի եւ ուրբաթի, ի բանն՝ Պահեմ երկիցս ի շաբաթու եւ տա[մ]՛՛ [Ղկս. ԺԸ. 12] – *Պատճառ պահոցս, որպէս ասէ սուրբն Բարսեղ... եթէ՛ տերունական եւ եթէ՛ սրբոցն, որոց արժանիս արասցէ զմեզ Քրիստոս ամենայն զղջացելոցն, եւ նմա փառք (Ջմեռան ԻԷ.):*

իե. *65բ-9բ* ԻԵ. Նորին վասն բարոզ, ի բանն՝ Պահեալ զԽ. (40) տիւ եւ զԽ. (40) գիշեր, ապա բաղցեաւ [Մտթ. Դ. 2] – *Յաղագս քառասներորդաց պահոցս Գ. ինչ հարցանելի է... ապա արժանի լինիմք մտից արքայութեանն երկնից, շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ (Ջմեռան ՀՐ.):*

իզ. *69բ-71ա* ԻԶ. Նորին վասն պահոց, ի բանն Զաբարիայ՝ Պահեա՛ ինձ ի չորից, պահեա՛յ ի ճնկից, պահեա՛յ յէ.անց, պահեայ՛ ի տասնից [Զքր. Ը. 19] – *Գիտելի է, զի հինգ տեսանեմք զպատճառս հիւանդութեան մարմնոյ եւ հինգ առողջութեան... զաստուածային մարմին եւ արիւնն ճաշակել ի փառս (Ամառան ՂԵ.):*

իէ. *71ա-4ա* ԻԷ. Դառնալ վասն պահոց, ի բանն՝ Պահեալ զԽ. (40) տիւ եւ զԽ. (40) գիշեր, ապա բաղցեաւ [Մտթ. Դ. 2] – *Վարդապետք ասեն, թէ ամենայն մեղք Դ. աստիճան ունի... եւ վայելել զպսակն յաւիտենից, եւ նմա փառք (Ջմեռան ԻԲ., խմբագրուած):*

իը. *74ա-80ա* ԻԸ. Նորին բարոզ, ի բանն տէրունականն՝ Յորժամ յաղաւթս կացցէք, ասացէ՛ք Հայր մեր, որ յերկինս [Մտթ. Զ. 8] – *Ամենայն աղաւթք յոյժ պատուական եւ գովելի գործեն... յամենայն բերանոյ եւ յամենայն շնչոյ փառք եւ երկրպագութիւն յաւիտեան (հմմտ. Ամառան Թ, ԺԱ, ԺԱ)*

իթ. *80ա-3ա* ԻԹ. Վասն աղօթից, ի բանն Ղուկասու՝ Յամենայն ժամ պարտ է յաղաւթս կալ եւ ո՛չ ձանձրանալ [Ղուկ. ԺԸ. 1] – *Վարդապետք ասեն, թէ աղօթքն յոյժ*

պիտանի է վասն Գ. պատճառի... եւ ուշ դնել նկարագրին եւ խնդրուածոյն հաւատով եւ սիրով, առնուն վարձս ի Քրիստոսէ, որում փառք (Ձմեռան ՀՒ.)։

լ. *83ա-4ա* Լ. Նորին վասն առաւաւտու, ի բանն՝ Ընդ առաւօտս կանխե[ցից] [Սաղ. ԿԲ. 7] – *վասն բազում պատճառի ընդ առաւաւտս աղաւթելի է մեզ... եւ երանաւէտ կոչմանն արժանի արասցէ առհասարակ զամենայն հաւատացեալքս ի Քրիստոս Յիսուս Տէր (Ամառան ՁՁ.)։*

լա. *84ա-7ա* ԼԱ. Նորին դարձեալ վասն առաւօտու, ի բանն՝ Ի գիշերաց կանխէ ճոգի [Եսյ. ԻՁ. 9] – *Արարիչն արարածոց Աստուած զժամանակ կենաց մարդկան տիւ եւ գիշեր է արարեալ... այն է, որ ասէ քաղցր ձայնիւ, եթէ՝ եկա՛յք օրհնեալք Հօր իմոյ՛՛, որում եւ զմեզ արժանի արասցէ Քրիստոս (Ամառան ՁԷ.)։*

լբ. *87ա-8ա* ԼԲ. Նորին վասն ճաշու ժամուն, ի բանն՝ Ես առ Աստուած կարդացի, եւ Տէր [Սաղ. ԾԴ. 17] – *Արդ, վասն բազում պատճառի յաղօթս կալի է մեզ ի հասարակ աւուրս... զայս ունի պատճառ ճաշու ժամն, որք ամենեքեան ժողովիմք յեկեղեցիս եւ (Ամառան ՁՀ.)։*

լգ. *88ա-9բ* ԼԳ. Նորին վասն երեկոյին, ի բանն՝ Ես առ Աստուած կարդացի, եւ Տէր [Սաղ. ԾԴ. 17] – *Եւ վասն բազում պատճառի պարտ է յերեկոյս աղօթել... հինգերորդ՝ Սուրբ կոչել զանուն Աստուծոյ ի վերայ քոյ (Ամառան Ղ.)։*

լդ. *89բ-90ա* ԼԴ. Նորին դարձեալ վասն ձայնական աղօթից՝ Ձայնիւ իմով ես առ [Սաղ. ՃԽԱ. 2] – *Գիտելի է, զի վասն բազում պատճառի բարձր ձայնիւ աղօթեմք... ըստ այնմ՝ Որ խոստովանի յիս առաջի մարդկան, խոստով[անեցայց] առաջի Հօրն, ըստ Դաւթի՝ Խօսէի զվկայութիւնս՛՛ (Ամառան ՂԱ.)։*

լե. *90ա-1ա* ԼԵ. Դարձեալ վասն ձայնական աղօթից՝ Ձայնիւ իմով ես առ Տէր կարդ[ացի] [Սաղ. ՃԽԱ. 2] – *Եւ վասն բազում պատճառի ձայնիւ աղօթելի է մեզ... եւ բարութեանցն Աստուծոյ հասանել, որում փառք յաւիտեանս. ամէն (Ամառան ՂԲ.)։*

լզ. *91ա-2ա* ԼԶ. Նորին վասն աղօթից, ի բանն՝ Պատարագ աւուինութեան փառաւոր արասցէ [Սաղ. ԽԹ. 23] – *Զի ինքն մարգարէս դարձեալ ասէ՝ Պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ... այս կոչի աղօթք եւ պատարագ, եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ (Ամառան ՂԳ.՝ խմբագրուած)։*

լէ. *92ա-4բ* ԼԷ. Նորին վասն աղխատաց, ի բանն՝ Երանի, որ խորհի զաղխատս եւ [Սաղ. Խ. 1] – *Նախ պարտ է գիտել, թէ զի՞նչ է զանազանութիւն աղքատին եւ տնանկին... Եւ վասն արտասուացն քոց զանտրտում ուրախութիւնն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս (Ամառան ՂԶ.)։*

լը. *94բ-8ա* ԼԸ. Նորին դարձեալ վասն ողորմութեան, ի բանն՝ Տուր բաժին եւթանց, այլեւ ութից (Ժղվղ, ԺԱ. 2) – *Ասեն վարդապետք, եթէ զամենայն ինչ, զոր տուալ է Աստուած մարդոյս... վասն պատառ մի հացի եւ բաժակ մի ջրոյ, եւ Քրիստոսի փառք (հմմտ. Ամառան ՂԷ., ՃԻԲ.՝ վերջը խմբագրած)։*

լթ. *98ա-100ա* ԼԹ. Նորին վասն ողորմութեան, ի բան Առակին՝ Ողորմութեամբ եւ հաւատով սրբին մեղք [Առակ. ԺԳ. 27] – *Զամենայն արարածս, զոր ստեղծ Աստուած, բարի եւ օգտակար արար... շահ եւ օգուտ լինի մեզ յողորմութենէն, որպէս ուսոյց իմաստունն մեզ, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս (Ամառան ՂՀ.ի մի մասը)։*

խ. *100ա-2ա* Խ. Նորին թէ զինչ վնաս լինի յանողորմութենէն եւ կամ զեն – *Որ զրպարտէ զտնանկն, բարկացուցանէ... եւ յետ աստեացս ընդ իմաստուն սուրբ կուսանացն արժանաւորեսցէ շնորհօք եւ ողորմութեամբ Քրիստոսի, որ է աւրհնեալն եւ յաւիտեանս (Ամառան ՂՀ.ի շարունակութիւնը)։*

խա. *102ա-5ա* ԽԱ. Նորին դարձեալ վասն ողորմութեան, ի բանն՝ Եղերո՛ւմ գթածի, որպէս եւ Հայրն ձեր [Ղուկ. Զ. 36] – *Արարիչն ամենայն արարածոց է նախախնամող եւ պահապան... եւ արդարքն ի կեանս վասն ողորմութեանն, եւ Քրիստոսի փառք յաւիտեան. ամէն (Ամառան ՂԹ.)։*

խբ. *105ա-7ա* ԽԲ. Նորին դարձեալ վասն ապաշխարութեան, ի բանն՝ Ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ է արքայութիւն [Մտթ. Գ. 2] – *Վարդապետք ասեն, թէ ապաշխարութիւնն մեծ զօրութիւն ունի... վասն այնորիկ ոչ է պարտ լսել սատանայի, այլ Քրիստոսի, որ ասէ՝ Ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ է արք[այութիւն], որում փառք եւ գոհութիւն յաւիտեանս. ամէն։*

խգ. *107բ-9բ* ԽԳ. Դարձեալ վասն ապաշխարութեան, ի բանն՝ Ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ է արքայութիւնն [Մտթ. Գ. 2] – *Նախ տեսցուք, թէ զի՞նչ է ապաշխարութիւն... եւ թէ եկայք առ իս ամենայն աշխատեալք եւ ծանրաբեռինք, եւ ես հանգուցից (Ամառան ՀԵ.՝ վերջը խմբագրած)։*

խդ. *109բ-12բ* ԽԴ. Դարձեալ վասն ապաշխարութեան, ի բանն՝ Ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ է ար[քայութիւն] [Մտթ. Գ. 2] – *Տէրն մեր զապաշխարութիւնն բանիւ եւ արդեամբք կամեցաւ ցուցանել... երրորդ. զի փառք եւ պսակ է արդարոց եւ կատարեալ խոստովանողաց (սկիզբը Ամառան ՀՁ., 11բ-ից Հէ.)։*

խե. *112բ-4բ* ԽԵ. Լուացարո՛ւմ, սրբեցարո՛ւմ, ընկեցէ՛ք զչարիս յանձ[անց] [Եսայ. Ա. 16] – *Զսրբութիւն աղտեղութեան ոչ միայն ի կենդանի մարդս տեսանեմք... պահօք որպէս քերելով, աղօթիւք որպէս հրով (Ձմեռան ԿԹ.ի մի մասը, 114աբ՝ մասն Ամառան ՀԹ.՝ «Եւ գիտելի է զի մկրտութիւնն եւ խոստովանութիւնն զմի շնորհ ունին... աղօթիւք որպէս հրով»)։*

խզ. *114բ-6բ* ԽԶ. Նորին դարձեալ վասն խոստո-

վանութեան, ի բանն՝ Ես կամօք իմովք խոստովան եղէց ձեզ [Սաղ. Իէ. 7] – *Եւ վասն խոստովանութեան Բ. ինչ ասելի է. նախ՝ զկերպ խոստովանութեան... քան զբազում տանջանս արտաքուստ, եւ Քրիստոսի փառք (Ձմեռան ԿԹ.ի շարունակութիւնը, վերջը խմբագրած)։*

խէ. *116բ-9բ* Խէ. Դարձեալ վասն խոստովանութեան, ի բանն՝ Խոստովա՛ն եղերում միմեանց զմեղս [Թղթ Յկբ, ե. 11] – *Գիտելի է, զի ըստ վարդապետաց սրբոց խոստովանութիւնն բազում յատկութիւն ունի... ոչ ունելով քո զվճարն, յաւիտենական տանջանացն է մատնելոց, յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած, եւ նմա փառք յաւ[իտեան]։*

խը. *119բ-21բ* ԽԸ. Դարձեալ վասն խոստովանութեան, ի բանն՝ Խոստովա՛ն եղերում Տեառն, զի բարի է զի՛՛ [Մնաց. Բ., ե. 13] – *Բարի վասն այն ասէ, զի ոչ է իբրեւ զմարմնաւոր գառաւորքս... ի մեղուցեալն եւ ի խոստովանելն խլեցան, եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս. ամէն (121աբ՝ մասն Ամառան ՀԹ.ի)։*

խթ. *121բ-4բ* ԽԹ. Նորին վասն հպարտութեան եւ խոնարհութեան, ի բանն՝ Տէր ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց – *Գիտելի է, զի ըստ վարդապետաց զի այլ ամենայն յանցաւորաց... եւ ԻԸ. (28) կոխան լիցի պակն հպարտութեանն, յորոց գին է (հմմտ. Ամարան ԿԱ.)։*

ծ. *124բ-7ա* Ծ. Յաղագս սնափառութեան, ի բանն՝ Մի՛ պարծեսցի իմաստունն յիմաստութեան իւրում եւ մի՛ պարծեսցի հզօրն ի զօրութեան իւրում եւ [երեմ. Թ. 23] – *Ըստ վարդապետաց՝ նախկին առաքինութիւն քր[ի]ստոնէին է խոտել զգովութիւն... կորնչի ամենայն ինչ, որ առնի, եթէ ոչ զգուշութեամբ պահեսցի ամենայն խոնարհութեամբ։*

ծա. *127ա-30ա* ԾԱ. Յաղագս նախանձու, ի բանն՝ Մի՛ նախանձիր ընդ չարս եւ մի՛ ընդ [Սաղ. ԼՋ. 1] – *Մարգարէս հայրաբար խրատէ՝ մի՛ նախանձիր... նա է մեծ զօրութեամբ, որ խոնարհութեամբ յաղթէ զնախանձն, եւ Քրիստոսի փառք (Ամառան ԿԲ., խմբգր., սկ. եւ վջ պակաս)։*

ծբ. *130ա-3բ* ԾԲ. Քարոզ վասն բարկութեան, ի բանն՝ Բարկանայք եւ մի՛ մեղանչէք [եփես. Դ. 26] – *Մարմին մարդոյ կազմեալ է ի չորից տարերց... զի վասն քաղցրալուր բանիցն ցածասցի, եւ Քրիստոսի Աստուծոյ փառք յաւիտեանս (մասն Ձմեռան ՁՁ.ի, խմբագրուած)։*

ծգ. *133բ-5բ* ԾԳ. Նորին վասն ծուլութեան ի բան Առակին՝ Ձծոյլն կորուսանէ երկիւղն – *Ասեն վարդապետք, թէ մեծ աւազ է, որ ինչ հեղգութեամբ կորնչի... կարէ լինել հնար ընդդէմ ծուլութեանն ամենայն յառաջագոյն ասացեալքդ, եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք, պատիւ յաւիտեանս. ամէն։*

ծդ. *135բ-8ա* ԾԴ. Նորին վասն ագահութեան, ի բան առակին՝ Դժոխք եւ կորուստ ոչ յագի, նոյնպէս անյագ է աչք ագահի [Առակ. 27. 20] – *Գիտելի է, զի դժոխք զգերեզման ասէ... զի չետ մահուան այլ ոչ օգնեն ինչքն, եւ Քրիստոսի փառք (Ամառան, ԿԴ., սկզբ. խմբգր.)։*

ծե. *138ա-41ա* ԾԵ. Քարոզ վասն ոկոռամոլութեան, ի բանն՝ Մի արբշռութեամբ եւ արբեցութեամբ Հռոմեացիք [ԺԳ. 13] – *Որպէս ասեն բժիշկք, թէ կրկնաւորն առ Բ. իրս առեալ լինի... որպէ՞ս լինելոց է մարմին չետ մահուան, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։*

ծզ. *141ա-2ա* ԾԶ. Քարոզ վասն բղջախոհութեան, ի բան Սողոմոնի՝ Մի՛ հայիր ի կին չար [ե. 2] – *Գիտելի է, զի Ժ. ազգ վնաս չառաջ գայ ի պոռնիկ կանանց... վասն այն ասէ՝ մի՛ հայիր ի կին չար, եւ Քրիստոսի փառք ընդ Հօր եւ Սուրբ Հոգոյն յաւիտեան (Ամառան, ԿԶ., վերնագիրը խմբագր.)։*

ծէ. *142ա-4բ* ԾԷ. Քարոզ ի բան օրինացն, որ ասէ՝ Մի շն[ան]ար [Մտթ. ԺԹ. 18] – *Ոչ փոքր ինչ անիրաւութիւն է այս... խնդրել զօգնութիւն եւ զպահպանութիւն յԱստուծոյ փրկչէն մերմէ, որ է աւրհնեալ յաւիտեան (հմմտ. Ամարան Գ.)։*

ծը. *144բ-7ա* ԾԸ. Նորին վասն Ժ. հարուածոցն Եգիպտոսի, ի բան իմաստնոյն՝ Ոռով եւ մեղանչէ ոք, նովին եւ տանջեսցի [Իմաս. ԺԱ. 16] – *Ձարարիչն Աստուած ողորմած եւ արդար... որ անզեղջ մնայ ի մեղս, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն (Ամառան Ե., խմբագրուած)։*

ծթ. *147ա-50ա* ԾԹ. Դարձեալ, ի բանն՝ Ոռով մեղանչէ ոք, նովիմբ եւ տանջեսցի – *Զի թեպէտ համառօտ եւ կարծէ բանս այս, սակայն բազում եւ ընդարձակ տեսութիւն ունի... եւ ասասցէ արդարոցն՝ եկա՛յք աւրհնեալք (Ամառան Ե., սկիզբը խմբագրուած)։*

կ. *150ա-3ա* Կ. Քարոզ վասն բորոտին, ի բանն՝ Զգեաց զձեռն իւր եւ ասաց կամիմ, սրբեաց [Մտթ. Ը. 3] – *Յայսմ բորոտէս Գ. իր տեսանելի է... արդարութիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտենից, եւ Քրիստոսի փառք (Ձմեռան ՃԺՁ.)։*

կա. *153ա-6ա* ԿԱ. Վասն ապաշխարութեան, ի բանն՝ Ոչ է պիտոյ բժիշկ ողջաց, այլ հիւանդաց, եւ ոչ եկի կոչել զարդարս, այլ [Ղուկ. Ե. 31] – *Վարդապետք ասեն, թէ ողորմութիւնն Աստուծոյ է ի վերայ մեղաւորաց... եւ ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս (Ձմեռան ՃԺԴ.)։*

կբ. *156ա-9ա* ԿԲ. Քարոզ, ի բանն՝ Թզենի ոմն տնկեաց յայգոջ եւ եկն խնդրել պտուղ եւ ոչ եգիտ [Ղուկ. ԺԳ. 6] – *Ամենայն գիրք Աստուածաշունչք յօգուտ եւ ի խրատ... զաղքատս ողորմութեամբ խնդացուցանել եւ այն ողորմութեանն Աստուծոյ արժանի լինել, եւ նմա փառք յաւիտեանս (Ձմեռան ՂԲ.)։*

կգ. *159ա-62ա* ԿԳ. Նորին վասն պաշտաման պա-

տուհասի, ի բանն Յովելեայ՝ Փո՛ղ հարէք ի Սիոն, սրբեցէ՛ք պահս, բառոզեցէ՛ք պաղատանս, ժողովեցէ՛ք զծերս. եւ այլն [Յովելեայ. Բ. 15] – *Փոփոխական է մարդոյս բնութիւն, երբեմն ի չարն եւ երբեմն ի բարի... դարձուսցուք զեկեալ պատուհասն նորա ի մէնջ, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս (Ամառան ՀԴ.)։*

կդ. 162ա-5ա ԿԴ.Դարձեալ ի նոյն խորհուրդ, ի բանն Յունանու՝ Ահա Գ. աւուրք, եւ այլ ոչ եւս իցէ Նինուէ – *Գիտելի է, զի կարողութիւն է մարդկան պաշտամամբ եւ պատարագօք զԱստուած հաշտեցուցանել... եւ զկեանս յարքայութեանն երկնից, որում եւ զմեզ արժանի արասցէ Քրիստոս, եւ՛՛ (Ամառան ՀԴ.՝ երկրորդ կէսը)։*

կե. 165ա-7բ կե. Վասն հովուաց ի բան առաքելոյն՝ Զգո՛յշ լերուք, ասէ, հօտիդ, յո[ր]ում եդ զձեզ Հոգին Սուրբ տեսուչս հովուել զհօտ իւր, զոր ապրեցոյց արեամբն իւրով Աստուծոյ Բանն [Գործ Ի. 28] – *Զբանս զայս առաքելոյն Պօղոս առ հովիւս եւ <եւ> առաջնորդս... անտես մի՛ արասցուք, զի եւ խոստացելոց բարեացն հասանել կարասցուք, եւ երկնից արքայութեանն արժանի լինել շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս։*

կզ. 167բ-71ա ԿԶ. Յայլմէ ուղիղ, ի բանն՝ Տէ՛ր, ո՞չ սերմն բարի սերմանեցեր, արդ, ուստի՞ ունիցի զոռոմն [Մտթ. ԺԳ. 27] – *Հարցանեն իմաստունք, թէ չարն եւ բարին ուստի՞ է... կամ թէ զերեան Աստուծոյ ոչ առաւել տանջին, յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած (Ամեռան ՂԹ.)։*

կէ. *171ա-4ա* ԿԷ. Նորին վասն աւուր չարի, ի բանն՝ Ոչ օգնեսցեն ինչ յաւուր բարկութեան, այլ արդարութիւն փրկէ ի մահուանէ [Առակ. ԺԱ. 4] – *Նախ գիտելի է, զի Գ. չար օր է մարդոյ... նոյնպէս եւ մեղաւորք ի տանջանաց աններելի եւ անզերծանելի, յորոց փրկեսցէ Փրկիչն մեր Քրիստոս Աստուած առհասարակ զմեզ եւ զհաւատացեալս անուան իւրոյ եւ նմա փառք յաւիտեանս. ամէն (Ամառան ՀԲ.)։*

կը. *174ա-7ա* ԿԸ. Նորին վասն մանկանց, երիտասարդաց, ի բան Ժողովողին՝ Ցիշեա՛ զԱրարիչն fո յաւուր մանկութեան fո [Ժող. ԺԲ. 1] – *Ի մէջ ամենայն կենդանեաց մարդս միայն է բանաւոր եւ անձնիշխան ստեղծեալ... եւ անդ հասանէ հոգեւոր բարեացն երկնից, նոր եւ նորոգ մանկութեան եւ յարութեան կենաց ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս (Ամեռան Խ.)։*

կթ. *177ա-80բ* ԿԹ. Նորին վասն ոգեվարի, ի բանն առաքելոյն՝ Արդ, առէ՛ք զսպառազինութիւնն Աստուծոյ, զի կարող լինիցիք զդիմի հարկանել չարին յաւուր չարութեան [Եփես. Թ. 13] – *Արդ, սպառազինութիւն Աստուծոյ զասաւածայինն... Աբրահամ ոչ կարաց մխիթարել զնա, յորոց մխիթարեսցէ զմեզ Քրիստոս Աստուած մեր, եւ՛՛ (Ամեռան ԽԶ.՝ խմբագրուած)։*

հ. *180բ-2բ* Հ. Յայլմէ վասն մահու, ի բանն Սիրաքայ՝ Ո՛վ մահ, դառն է յիշատակ fո [Էկլես. ԽԳ. 3] – *Ասէ իմաստունն Արիստոտէլ, թէ վախճան ամենայն ահարկութեանց մահն է... ելանել ի կայանս հոգոց, եւ Քրիստոսի Աստուծոյն մերոյ արժանաւորիլ տեսութեանն, որում փառք յաւիտեանս. ամէն (Ամառան ՃԽԹ.)։*

հա. *182բ-4ա* ՀԱ. Վասն մահու, ի բանն՝ Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց [Սաղ. ՃԺե. 15] – *Յամենայն արարածոցս Աստուծոյ գոն պատուական եւ ազնիւ... այլ նայելով ի մեր բարի վաստակն, որ Աստուծով յաջողեալ լիցի, խնդալից եւ բերկրեալք լիցուք, վաստահացեալք ի բարիսն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ (Ամառան ՃԽՀ.)։*

հբ. *184ա-6բ* ՀԲ. Վասն ընծեցելոց, ի բանն Սիրաքայ՝ Ի միտ ա՛ծ զդատաստանս իմ, զի այնպէս լինելոց է եւ դատաստան fո, ինձ երեկ եհաս եւ ձեզ այսաւր հասցէ [Էկլես. ԼԸ. 23]. Այս երկրորդ պատճառաւ fառոզէ ննջեցելոց, զի կենդանիքն ուղղեսցեն զկեանս իւրեանց եւ պատրաստեսցեն զինքեանս, զի եւ նոքա մահկանացուք են – *Վարդապետք ասեն, թէ Աստուած ոչ առնէ անփոյթ զփրկութիւն մարդկան... յետ զղջման եւ խոստովանութեան եւ ապաշխարութեան, յարիցէ ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեան. ամէն (Ամառան ՃԺԳ.)։*

հգ. *186բ-8բ* ՀԳ. Նորին վասն մխիթարութեան, ի բան իմաստնոյն որ ասէ՝ Սակաւ մի սուգ առ ի վերայ մեռելոյն [Էկլես., ԻԲ. 9] – *Որպէս կրկին են կեանք մարդկան՝ բարի եւ չար... եւ ի մահու, ի կեանս փոխեցաւ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ հանկուցիչ է ամենայն սրբոց եւ պսակիչ սիրելեաց իւրոց, որ է աւրհնեալ յաւիտեանս (Ամեռան ՃԼ.)։*

հդ. *188բ-90ա* ՀԴ. Վասն ննջեցելոց մխիթարութեան, ի բան Սիրաքայ՝ Սակաւ լա՛ց ի վերայ մեռելոցն եւ ապա մխիթարեա՛յ [Էկլես. ԻԲ. 11] – *Վարդապետք ասեն՝ ոչ է պարտ անչափ առնուլ սուգ... զոր արժանաւորեսցէ անճառ բարութեան իւրոյ եւ անանց կենացն գհոգիս ամենայն հաւատացելոց, եւ նմա փառք (Ամառան ՃԺԴ.)։*

հե. *190աբ* ՀԵ. Նորին վասն մխիթարութեան – *Ասեն իմաստունք, թէ վասն Դ. պատճառի պարտ է սգալ... զի յանձնէ քո ընծայեցաւ նուէրք ի հոտ անուշից եւ ի բարէխօսութիւն քեզ եւ ի թողութիւն յանցանաց քոց (Ամառան ՃԺԵ.)։*

հզ. *190բ-1բ* ՀԶ. Նորին երկրորդ աւուր այգալացին՝ Ընդ երեկոյս հանգիցեն լալիք, առաւօտուն եղիցի ուրախութիւն [Սաղ. ԽԹ. 5] – *Բանս այս ունի բազում տեսութիւն... այսօր ժողովեալ մխիթարեմք զմիմեանս, եւ*

Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս. ամէն (Զմեռան ՇԱ.)։

ին. *192ա-3ա* ՀԷ. Դարձեալ վասն մխիթարութեան, ի բանն Սողոմոնի՝ Լաւ է օր մանուան, քան զօր ծնընդեանն [Բանք Ժող., է. 2] – *Դիտելի է, զի կրկին է օր մարդոյ թեպէտ յերկար ապրի... մերձակայ տեսնեն զամենայն փառս եւ զպսակ, զոր ընդունելոց են նոքա ի յարութեանն աւուր, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։*

իր. *193ա-5բ* ՀԸ. Դարձեալ վասն ննջեցելոց, ի բանն Յոբայ՝ Ողորմեցարո՛ւմ ինձ, ողորմեցարո՛ւմ ինձ, ո՛վ բարեկամք իմ, զի ձեռն Տեառն մխեցաւ յիս [Յոբ. ԺԹ. 21] – *Ասեն իմաստունք՝ յորժամ երթայ ոք ի ճանապարհ եւ անկանի յորոգայթ... եւ ի միւսանգամ գալստեանն երկնից արքայութեանն ժառանգորդս կացուսցէ զնոսա ընդ ամենայն սուրբս եւ սիրելիս անուան իւրոյ Քրիստոս Աստուածն մեր եւ Փրկիչն, եւ նմա փառք ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյն յաւիտեանս. ամէն (Ամառան ՃԺԲ.)։*

իբ. *195բ-7ա* ՀԹ. Նորին վասն մխիթարութեան Սողոմոնի՝ Սիրտ իմաստնոյն ի տուն սգոյ եւ սիրտ անմտին ի տուն արբեցութեան [Բանք Ժող., է. 5] – *Ասացեալ է այլ ուրէք, թէ բարի է երթալ... զի այլքն տեսցեն եւ երկին եւ դարձցին ի չարեաց, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս (Ամառան ՃԺԷ., ՃԺԸ.)։*

իգ. *197ա-9ա* Զ. Դարձեալ վասն մխիթարութեան – *Վասն էր փոքր տղայք մեռանին, զի անմեղք են... մինչեւ յառաջին գալուստն, եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս (Ամառան ՃԺԹ, ՃԿ., ՃԿԱ.ից մի մաս)։*

իդ. *199ա-200բ* ՁԱ. Յաղագս օծման հաճանայիցն – *Դիտելի է, զի ի ննջեցեալսն զքահանայն միայն օծանեն, զի նա միայն օծաւ... եւ առհասարակ ժողովրդոց ի փառս կարգապետին եւ ի գովեստ կատարողապետին Տեառն մերոյ (հատուած Զմեռան Ծ.ի)։*

իե. *200բ-1ա* ՁԲ. Վասն մահու, ի բանն՝ Աւուրք իմ որպէս հովանի անցին, եւ ես՝ որպէս խոտ [Սաղ. ԹԱ. 12] – *Եւ գիտելի է, զի վասն բազում պատճառի զկեանս մարդոյ համեմատէ հովանոյ... զմեզս ապաշխարել եւ երկնային փառացն հասանել, եւ զՏէր Յիսուս Քրիստոս ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյն փառաւորել, եւ նմա փառք յաւիտեանս։*

իզ. *201ա-2բ* ՁԳ. Դարձեալ վասն մահու, ի բանն՝ Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր. որպէս ծաղիկ վայ[րի] [Սաղմ. ՃԲ. 15] – *Մահկանացու կեանք մարդոյս Գ. յատկութիւն ու[ն]ի... եւ կորուսանէ անգտանելի, յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած մեր, եւ նմա փառք։*

իդ. *202բ-4ա* ՁԴ. Դարձեալ վասն մահու, ի բանն՝ Ամենայն մարմին խոտ է, եւ ամենայն փառ մարդոյ իբրեւ զծաղիկ խոտոյ [Սաղմ. Խ. 6] – *Վասն էր է խոտ, մի՞թէ յԱրարչէն։ Ո՛չ, զի նա կամեցաւ սերտ եւ անմահ լինել մարդոյն... զոր ոչ մահ եւ ոչ հիւանդութիւն եւ ոչ այլ ինչ ոչ կ[ա]րեն խափանել, եւ Քրիստոսի՛։*

իե. *204աբ* ՁԵ. Դարձեալ վասն մահու, ի բանն՝ Տէ՛ր, հա՛ն ի բանտէ զանձն իմ, գոհանամ զանու[ն] [Սաղմ. ՃԽԱ. 8] – *Դիտել է, զի բազում իրս նշանակէ բանն... եւ խառնեալ ի ժողովս անդրանկաց եւ ի դասս լուսեղինաց, եւ Քրիստոսի փառք յաւիտեան։*

իզ. *204բ-11ա* ՁՁ. Յայլմէ [ƒառո]զ վասն գալստեանն Քրիստոսի, ի բանն՝ Ձի որպէս փայլակն, որ ելանէ յարեւելից եւ երեւի մինչեւ ի մուտս, այնպէս եղիցի գալուստ Որդոյ մարդոյ [Մտթ. ԻԴ. 27] – *Ձփրկական գալուստն Քրիստոսի Աստուծոյ մերոյ կրկին անգամ ասեն... քան զամենայն տանջողս, յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած, եւ նմա փառք (Ամառան ՃԿՁ.՝ խմբագրուած)։*

իէ. *211ա-2բ* ՁԷ. Յայլմէ ƒառոզ վասն ամենայն արբոց, ի բան՝ Երանի ամենեցուն, որ բնակեալ են ի տան Տեառն. յաւիտեանս յաւիտենից աւո[նեսցեն] [Սաղ. ՂԸ. 5] – *Երանութիւն պարառութիւն է ամենայն բարեաց... որպէս ասէ յԱռաջին Կոր[նթացւոց]՝ Սերմանի ապականութեամբ եւ յառնէ անապականութեամբ, սերմանի տկարութեամբ եւ յառնէ զօրութեամբ, սերմանի անարգութեամբ եւ յառնէ փառաւք, սերմանի մարմին շնչաւոր եւ յառնէ մարմին հոգեւոր։ Եւ Քրիստոսի փառք յաւ[իտեան] (Ամառան ՃՀ., սկ. չիք, խմբագրուած)։*

իը. *212բ-4ա* ՁԸ. Յայլմէ ƒառոզ վասն փառաց արքայութեանն, ի բանն՝ Մո՛ւտ յուրախութիւն Տեառն ƒո [Մտթ. ԻԵ. 21] – *Որպէս ասէ առաքեալ, թէ վարձք սրբոցն այնպիսի է... այս է կատարեալ ուրախութիւն ի սրբոցն, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն (Ամառան ՃՀԱ.)։*

իթ. *214ա-6ա* ՁԹ. Եռամեծի Յոհաննու Ոսկեբերոյ ի բան աւետարանչին, որ ասէ՝ Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ [Ղուկ. Ա. 26] – *Նախ տեսցուք զվեցերորդ ամիսն, թէ վասն զինչ պատճառի յիշէ... յորս էհաս Կոյան Մարիամ (Զմեռան Բ.)։*

ի. *216ա-9բ* Ղ. Նորին Գրիգորի վասն ծննդեան, ի բանն՝ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ [Ղուկ. Ա. 14] – *Անհասանելի է խորհուրդն Աստուծոյ... եւ յայլ գերազանց պատիւս բարձրացոյց, որում փառք յաւիտեանս. ամէն (Զմեռան Զ.)։*

իա. *219բ-2բ* ՂԱ. Դարձեալ վասն Ծննդեանն, ի բանն՝ Ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է աւծեալ Տէր ի քաղաքէ Դաւթի – *Երիս իրս տեսանելի է մեզ։ Նախ՝ ասէ վասն աքանչելեաց յղացմանն... զի ի կատարածի դատի զարդարս եւ զմեղաւորս, ըստ այնմ՝ եկա՛յք, աւրհնեալք Հօր իմոյ, եւ թէ՝ երթա՛յք յինէն, անիծեա՛լք. եւ՛՛։*

ին. *222բ-6բ* ՂԲ. Դարձեալ վասն Ծննդեան, ի բանն՝ Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթղէհէմ Հրէաստանի ահա

մոգք եկին յարեւելից եւ. Մտթ. [Բ. 1] – *երիս իրս տեսանելի է մեզ յայսմ վայրի: Նախ՝ վասն տեղոյն... լապտերօք մտանեն ի յառագաստն լուսոյ, որում եւ զմեզ արժանի արասցէ Քրիստոս, եւ նմա փառք յաւիտեան:*

զգ. 226բ-9ա ՂԳ. Յայլմէ վասն մկրտութեան, ի բանն՝ Ի էնէ Տէր աղբիւր կենացն, եւ լուսով երեսաց ոց տեսանեմք [Սաղ. Լե. 10] – *Վարդապետք ասեն, թէ՝ երկիրս ոչ տայ պտուղ... եւ երեւի անդ պատկերն յոյժ գեղեցիկ, վասն այն ասաց՝ Դու ես որդի իմ սիրելի, ընդ քեզ հաճեցայ, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս (Զմեռան Թ.):*

զգ. 229ա-32բ ՂԴ. Նորին վասն թլփատութեան, ի բանն՝ Իբրեւ լցան աւուրք Ը., եկին թլփատել զմանուկն [Ղկ. Ա. 8] – *Հայրն հաւատոց եւ հանգիստն հոգոց հաւատով արդարացեալ... ծանոյց աւետարանիչն ասելով՝ Իբրեւ լցան աւուրք Ը., եկին թլփատել, որ եւ մեզ շնորհեսցէ զթլփատութիւն մեղաց, եւ նմա փառք (Զմեռան Ժ.):*

զե. 232բ-5ա ՂԵ. Նորին դարձեալ վասն Տեառնընդառաջին, ի բանն՝ Իբրեւ ածին ծնօղքն զմանուկն Յիսուս [Ղուկ. Բ. 27] – *Զպատճառ աւուրս տօնի, որ է Խ.օրեայ (40) գալստեանն Քրիստոսի... յորում այսօր ժողովեալ տօնեմք զտօն Խ.օրեայ (40) գալստեանն Քրիստոսի, որում փառք (Զմեռան ԺԴ.):*

զզ. 235ա-8բ ՂԶ. Դարձեալ վասն Տեառնընդառաջին, ի բանն՝ Իբրեւ լցան աւուրք ըստ օրինացն Մովսէսի ածին զմանուկն Յիսուս Յերուսաղէմ [Ղուկ., Բ. 22] – *Լրումն օրինաց եւ մարգարէից Քրիստոսէ ասէ առաքեալ... եւ նա է միշտ անդադար բարեխօս առ Որդին իւր միածին վասն մեղուցեալ եւ սխալոտ անդամացս Որդոյ իւրոյ սիրելոյ, եւ նմա փառք (Զմեռան ԺԵ.):*

զէ. 238բ-40ա ՂԷ. Նորին վասն պահոց, ի բանն՝ Աշխարհս անցանէ եւ ցանկութիւնն [Յօհ. Բ. 17] կամ թէ՝ Է. ժամ փոխիցին ի վերայ ոյ, ի Դանիէլն [Դ. 22] – *Վարդապետք ասեն, եթէ նիւթական կեանք մարդկան միշտ ի հոսման եւ ի փոփոխման են... եւ փոխանակ կերակրոյ ճաշակեմք զպատւիրանս Աստուծոյ եւ փոխանակ ըմպելեաց զանմահութեան բաժակն հոգւոյն ի Սուրբ գրոց, եւ Քրիստոսի փառք յաւիտեան [Զմեռան ՀԲ.]:*

զը. 240ա-2ա ՂԸ. Վասն խոստովանահաց, ի բանն՝ Շրթունք հանանային զգուշացի գիտութենէ, զի հրեշտակ ամենակալի է, ասէ Մաղաքիայ [Բ. 7] – *Արդ, վասն Դ. պատճառի պարտի զգուշանալ... եւ զի մերկացոյց զմարդիկ, դարձեալ պարտ է զգեցուցանել զնոսա, եւ զոր ինչ յափշտակեալ է, յետս դարձուցանել, եւ Քրիստոսի փառք (Ամառան ԽԳ.):*

զթ. 242ա-5ա ՂԹ. Նորին առհասարակ ապաշխարութեան, ի բանն՝ Լուացարո՛ւմ, արբեցարո՛ւմ, ընկե[ցէ՛]ք [Եսայ. Ա. 16] – *Ե(=Ո)ւսուցանէ մեզ առաքեալն Աստուծոյ ասելով... զի հուր ձորալիր պարանոցաթաղ յորդեսցէ, այն է, որ ասէ մեղաւորացն՝ Երթա՛յք յինէն անիծեալք, յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս եւ՛՛ (Զմեռան Հ.):*

զ. 245ա-8բ Ճ. Նորին վասն խնդրելոյ, ի բանն՝ Խնդրեցէ՛ք նախ զարքայութիւնն Աստուծոյ եւ զարդարութիւն նորա, եւ այդ ամենայն յաւելցի ձեզ [Մտթ. Զ. 33] – *Ի ձեռնտըւութենէ Հոգւոյն Սրբոյ եւ օժանդակութեամբ աղօթից ձեր կամիմ աստանօր յաղագս երից իրաց առնել քննութիւն... եւ զմիտս եւ զկամքս ի բարին շարժէ, եւ նմա փառք յաւիտեանս (Զմեռան ՀԳ.):*

զա. 248բ-51բ ՃԱ. Նորին ի բան Աւետարանին՝ Լե՛ր իրաւախոհ ընդ ոսոխին ոք ի ճանապարհի [Մտթ. Ե. 25] – *Զայս պատուիրանս ոչ ձրի դնէ, այլ բազում օգտի... ի սուրբ սրտէ եւ ի մաքուր հաւատոց եւ այլ ամենայն բարեգործութեամբ սոցին նմանեն, զի եւ յաւիտենական բարցն հասցուք ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որ՛՛ (Զմեռան Զ., սկ. չիք, խմբ.):*

զբ. 251բ-4բ ՃԲ. Քարոզ վասն անառակին, ի բանն՝ Առն միոջ էին Բ. որդիք՝ ասէ կրտսերն ցհայրն՝ Տո՛ւ ինձ բաժին յընչիցդ, եւ նա բաժանեաց նոցա զկեանս եւ յ՛՛ [Ղուկ. ԺԵ. 11] – *Դէմք առակիս առ ամենակալ բնութիւն Արարչին հայի... ընդունի զՀոգին Սուրբ որպէս առաքեալքն ի վերնատանն, վասն որոյ պարտ է մեզ ասել Հա՛յր, մեղայ յերկինս... հանդերձեալ բարեացն հասցուք ընդ ամենայն սուրբս ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որ է աւրհնեալ (Զմեռան ՁԱ.):*

զգ. 254բ-7ա ՃԳ. Յայլմէ վասն վարդապետութեան եւ ողորմութեան, ի բան Աւետարանին՝ Անհայ ել սերմանահան սերմանել եւ ի սերմանելն իւրում [Մտթ. ԺԳ. 4] – *Նախ խնդրելի է, թէ վասն զի՞նչ պատճառի Քրիստոս առակօք խօսէր... կրկնապատիկ տալ արժան է, զի լիակատար վարձուցն արժանասցին, եւ Քրիստոսի փառք յաւիտեան (Զմեռան ՁԳ.):*

զդ. 257ա-60ա ՃԴ. Դարձեալ ի նոյն բանն, ի դէմս լսողացն՝ Եւ ի սերմանելն էր, որ անկաւ առ ճանապարհաւ [Մտթ. ԺԳ. 4] – *Որպէս բժիշկ, որ ներհակաւն հանէ զցաւ... ապա ուրեմն մին քան զմին աւելի առնեն, որով եւ աւելի վարձս առնուն ի վարձատուողէն բարեաց Քրիստոսէ Աստուծոյ, որ է աւրհնեալ (Զմեռան ՁԴ.):*

զե. 260ա-3ա ՃԵ. Նորին ճառոզ, ի բանն՝ Մի՛ երկնչիր, հօ՛տ փոքրիկ, զի հաճեցաւ Հայր ձեր [Ղուկ. ԺԲ. 32] – *Ի տէրունական հրամանացս այս Գ. իրս հարցաքննելի է... վասն որոյ յուսադրէ զմեզ՝ մի՛ երկնչիլ ի տանջանաց դժոխոցն, զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ, եւ Քրիստոսի փառք (Զմեռան ՁԵ.):*

զզ. 263ա-6ա ՃԶ. Վասն տնտեսին, ի բան Աւետարանին՝ Այր մի էր մեծատուն, որոյ էր տնտես, եւ ամբաստանութիւն. եւ այլն [Ղուկ. ԺՁ. 1] – *Նախ պարտ է գիտել, զի բազում իրօք զանազանի մեծութիւն Աստու-*

ծոյ… յայնմ ամենայնէ զերծուցանէ աստ բոլորով զղջումն եւ հաւատով խոստովանիլ զմեղս. Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն (Զմեռան Զէ.)։

ճէ. *263-71ա* ճէ. Քառոզ վասն մեծատանն եւ Ղազարու, ի բանն՝ Այր մի էր մեծատուն եւ ագանէր բեհեզս եւ ծիրանիս, եւ Ղազար աղիատ անկեալ առ՛՛ [Ղուկ. ԺԶ. 19] – *Ջամենայն առակաւոր բանս, որ խօսի Աւետարան, ճշտութեամբ եղեալ է… ընդ Ղազարու ի գոգն Աբրահամու յարքայութիւն երկնից հանգիցուք ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որ է աւրհնեալ (Զմեռան ՁՐ.)։*

ճը. *271ա-4ա* ճԸ. Նորին վասն մահու եւ կատարածի աշխարհի, ի բանն՝ Աւրո՛ւն կացէք, զի ոչ գիտէք յորում ժամու Տէր տանն գայցէ. յերեկոյեայ. եւ այլն, էկլ. [Մարկ. ԺԳ. 35] – *Նախախնամութիւնն Աստուծոյ եւ բարերարութիւնն յամենայն յայտնի է առ իւր արարածս… այսպէս արթուն լինել եւ սկիզբն առնել խոստովանութեան եւ ապաշխարութեան. եւ Քրիստոսի փառացն եւ արքայութեանն արժանաւոր լինել, որ է աւրհնեալ ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյն (Զմեռան Ա.)։*

ճթ. *274ա-6բ* ճԹ. Նորին վասն հոգւոյ եւ մարմնոյ, ի բանն՝ Դատաւոր մի էր ի քաղաքի ուրումն, յԱստուծոյ ոչ երկնչէր եւ ի մարդկանէ ոչ ամաչէր [Ղուկ. ԺԸ. 2] – *[Վ]արդապետք ասեն՝ զմարդն ի հոգւոյ իմանալոյ եւ ի մարմնոյ զգալոյ գեղեցիկ կազմեալ… իսկ իշխանականն դատաւոր եղեալ, զի ի մէջն ի յուղիղ կարգն պահեսցէ՝ զերկոսեանն ի փառս եւ ի գովեստս արդար դատաւորին Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյ (Զմեռան ՂԴ.)։*

ճժ. *276բ-9ա* ճԺ. Նորին դարձեալ, ի բանն՝ Դատաւոր մի էր ի քաղաքի ուրումն, յԱստուծոյ ոչ երկնչէր [Ղուկ. ԺԸ. 2] – *Ոմանք զբանս առակիս յԱստուած հանեն… այլ երկերուք յայնմ, որ զհոգի եւ մ[արմին], յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած մեր, որում փառք ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյն (Զմեռան ՂԴ.)։*

ճժա. *279բ-82ա* ճԺԱ. Նորին վասն աղօթից, ի բանն՝ Աւրէ երկու ելին ի տաճարն կալ յաղօթս, փար[իսեցի] եւ մ[ախաւոր] [Ղուկ. ԺԸ. 10] – *Պարտ է գիտել, զի զժամ աղօթիցն, որ կարգեալ են մեզ, ոչ ի նորս միայն է… որ եւ արժանիս արասցէ զմեզ ընդ մեղաւորին եւ մաքսաւորին թողուլ զմեղս մեր եւ արդարացուցանել, որ արդարութիւնն է ամենեցուն Տէր մեր Յիսուս Քրիստոս, եւ նմա փառք յաւիտեանս. ամէն (Զմեռան ՂԵ.)։*

ճժբ. *282ա-4բ* ճԺԲ. Նորին քառոզ վասն քահանայից, ի բանն առաքելոյն՝ Ի յիշատակս սրբոց հաղորդեցարուք [Հոմ. ԺԲ. 13] – *Լուսապսակ եւ արփիազարդ, մեծապայծառ եւ ջահաւորեալ, ցանկալի եւ փափաքելի տօնս փառաւորեալ… եւ հրաման տու[եա]լ կարգել տօն տարեկանս ամ յամէ յաղգաց յազգս ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ (Զմեռան ՁՌ.)։*

ճժգ. *284բ-6ա* ճԺԳ. Նորին դարձեալ ի խորհուրդ Խ.իցն (40), ի բանն՝ Անցաք մեք ընդ հուր եւ ընդ ջուր [Սաղ. Կե. 12] – *Եւ արդ, վերջացեալքս ժամանակաւ, որք արժանաւորեցաք տօնախմբել զյիշատակ սրբոց Խ.իցն (40)… յորս լիցի մեզ ամենեցուն վայելս յերկնաւոր բարիսն, անճառ խնդութիւնն եւ յանպատում երանութիւնն, բարեխօսութեամբ սրբոց վկայիցն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ (Զմեռան Ղ.)։*

ճժդ. *286ա-9ա* ճԺԴ. Սրբոյն Գրիգորի ի բան առաքելոյն՝ Նմանողք ինձ եղերո՛ւք՝ որպէս եւ ես Քրիստոսի [Ա. Կորն. ԺԱ. 1] – *Առաքեալն հեթանոսաց եւ քարոզն աշխարհի՝ երրորդ երկնից տեսօղն… լսէ Աստուած զխնդիրս նոցա եւ զկամս եչկիւղածոց իւրոց կատարէ ըստ Դաւթի, որ եւ զմեզ արժանի արասցէ արքայութեանն իւրոյ Տէրն Յիսուս Քրիստոս՝ բարեխօսութեամբ սրբոյս, եւ նմա փառք յաւիտեանս (Զմեռան ՂԶ.)։*

ճժե. *289ա-92բ* ճԺԵ. Նորին վասն Լուսաւորչին, ի բանն՝ Եղիո<իս> զիս ի գբի ներճնումն, ի խաւար [Սաղ. Զէ. 7] – *Նախատես գիտութիւնն Աստուծոյ ընտրեաց զլաւսն եւ գովեաց… եւ ծնաւ զմեծն Վարդան եւ զՀմայեակ եւ զՀամազասպեան (Ամառան ՃԺ.)։*

ճժզ. *292բ-5ա* ճԺԶ. Յայլմէ վասն այգոյն, ի բանն՝ Ընդէ՞ր կայք աստ զօրս ցերեկ դատարկ [Մտթ. Ի. 6] – *Ասեն իմաստունքն, թէ ամենայն ինչ որքան պատուական է… աստ պատրաստել զիւղն ողորմութեան եւ անդ ընդ իմաստուն կուսանացն մտանել յառագաստն լուսոյ ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որ է աւրհնեալ (Զմեռան ՂԸ.)։*

ճժէ. *295ա-9բ* ճԺԷ. Նորին քառոզ վասն Ղազարու, ի բանն՝ Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս ի Բեթանիայ [Յոհ. ԺԱ. 1] – *Եւն բառ ի Սուրբ Գիրս յԳ. տեղւոջ գնի… որ վասն յամելոյն ի խաւարամած մեղս կորոյս զհոգեւոր տեսութիւնն, եւ Քրիստոսի փառք յաւիտեան (Զմեռան ՃԳ.)։*

ճժը. *299բ-302ա* ճԺԸ. Դարձեալ ի նոյն բանն՝ Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս ի Բեթանիայ [Յոհ. ԺԱ. 1] – *Այժմ ասելի է, թէ զի՞նչ նշանակէ հիւանդութիւնն եւ մահն եւ յարութիւնն Ղազարու. հիւանդութիւնն Ղազարու զմարդկային բնութիւնս նշանակէ… որպէս ես զձեզ սիրեցի, որում եւ զմեզ արժանի արասցէ զամենայն ընդ բարեկամին Ղազարու յարուցանել ի մեռելութենէ մեղաց, եւ նմա փառք ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյն յաւիտեանս. ամէն (Զմեռան ՃԳ., մասն)։*

ճժթ. *302ա-7ա* ճԺԹ. Քառոզ վասն Ծաղկազարդին, ի բանն՝ Ասացէ՛ք, դստրե՛ր Սիովն, ահա թագաւոր ո՛ն գայ ձեզ նստեալ յէշ եւ յաւանակ [Մտթ. ԻԱ. 5] – *Սիոն ամրոց էր Հրէաստանի, զոր Յեբուս կոչէին… Իսկ ի վերայ բեմբին ընծեռնուլ զԱւետարանն, զաստուածախոսութիւն առ սուրբս նշանակէ, եւ Քրիստոսի փառք (Զմեռան ՃԸ.)։*

ճի. *307ա-10բ* ճԻ. Յայլմէ դարձեալ վասն Ծաղկա-

զարդին, ի բանն՝ եւ ածեն զչշն եւ զյաւանական եւ արկին զնոfof ձորձ, եւ նստաւ ի վերայ նոցա [Մտթ. ԻԱ. 7] – *Աստանօր հինգ իրս տեսանելի է մեզ յայսմ վայրի. նախ՝ թէ քանի բարութիւն արար մեզ Քրիստոս... Վարդապետք ասեն, թէ վասն Ադամայ մեղացն ե. ազգ պակասութիւն եղեւ մարդկային ազգի... ի յորոյ զհամբերութիւնն, եւ այսպէս հաճոյանալ Քրիստոսի, որում փառք ընդ Հօր եւ (Ձմեռան ճՂ, ճՀ, խմբագրած)։*

ճիա. *310բ-2ա* ճԻԱ. Քարոզ, ի բանն՝ եւ այգուցն իբրեւ դարձաւ ի ֆաղաֆն եւ տես թզենի մի ի վերայ ճանապարհին եւ անէծ զնա, եւ չորացաւ – *Բազում ունի տեսութիւն բանս, թէ վասն էր Քրիստոս չորացոյց զթզենին... վասն անողորմութեան ըստ այնմ՝ երթա՛յք յինէն, անիծեա՛լք, ի հուրն յաւիտենից, յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած, եւ նմա փառք յաւիտեան (Ամառան ճՀԴ. Ձմեռան ճԹ., խմբգր.)։*

ճիբ. *312ա-5բ* ճԻԲ. Նորին քարոզ, ի բանն՝ Նմանեցաւ արքայութիւնն երկնից ժ. կուսանաց, որ առեալ զլապտերս ելին ընդ առաջ փեսային եւ հարսին [Մտթ. ԻԵ. 1] – *Որքան մարդն ի հեշտութիւն աշխարհիս է ըմբռնեալ՝ ոչ իմանայ զվախճան կենաց... յորոց լիցի մեզ ամենեցուն հասանել, եւ Քրիստոսի Աստուծոյ փառք (Ձմեռան ճԺԲ.)։*

ճիգ. *315բ-9ա* ճԻԳ. Նորին քարոզ վասն կուսութեան, ի բանն՝ Ծնեալն ի մարմնոյն մարմին է, եւ ծնեալն ի հոգւոյն հոգի [Յօհ. Գ. 6] – *Վարդապետք ասեն, թէ մարդս հոգի եւ մարմին է եղեալ... սա նուազագոյն է, քան զառաջինն, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն (Ամառան ճԷ. ճՀ, ճԹ. խմբագրած)։*

ճիդ. *319ա-20բ* ճԻԴ. Նորին քարոզ, ի բանն՝ Իբրեւ եկն Յիսուս ի տուն Սիմոնի բորոտի, մատեաւ առ նա կին մի եւ ունէր շիշ իւղոյ ծանրագնի, եւ թափեաց ի գլուխ նորա [Մտթ. ԻՁ. 6] – *Քրիստոս անունն օծեալ Թարքմանի ըստ մերումս լեզուի.. բազմեցուսցէ ի սեղան Հօրն երկնաւորի եւ անցեալ պաշտեսցէ, որում եւ զմեզ արժանի արասցէ, եւ նմա փառք (Ձմեռան ճԺԳ.)։*

ճիե. *320բ-4ա* ճԻԵ. Նորին քարոզ վասն պատարագաց, ի բանն՝ Հայեցաւ Աստուած ի Հաբէլ եւ ի պատարագս նորա, եւ ի Կայէն եւ ի զոհս նորա ո՛չ հայեցաւ [Ծննդ. Դ. 4] – *Խրատ եառն նախնի ծնօղքն Ադամ եւ Եւայ զաւակաց իւրեանց եւ ասեն՝ Մեք մեղանչելով ելաք ի դրախտէն... որոց զձեզ առհասարակ եւ զննջեցեալսն ձեր ազատեսցէ Քրիստոս ի ծանրութենէն մեղաց եւ հանգուսցէ յօթեւանան լուսոյ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն (Ձմեռան ճԺՀ.)։*

ճիզ. *324ա-8ա* ճԻԶ. Յայլմէ քարոզ վասն պատարագին, ի բանն առաքելոյ՝ Փորձեսցէ մարդ զանձն իւր եւ ապա ի հացէ անտի կերիցէ եւ ի բաժակէն արբցէ, եւ որ ուտէ անարժանութեամբ, ի դատաստան անձին իւրում ուտէ եւ ըմպէ [Ա. Կորն. ԺԱ. 28] – *Ասեն բժիշկ, թէ զանազան է կերակուր մարդկան... որում եւ զմեզ արժանի արասցէ Քրիստոս այնմ արժանապէս եւ անդ յաւիտենից կենացն մասնաւորիլ. եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս (Ձմեռան ճԻՀ.)։*

ճիէ. *328ա-9ա* ճԻԷ. Նորին դարձեալ ի բան առաքելոյն՝ Որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ, ի դատաստան անձին իւրոյ ուտէ եւ ըմպէ [Ա.ո կորնթ. Ա. ԺԱ. 29] – *երիս իրս տեսանելի է մեզ: Նախ՝ թէ զի՞նչ է արժանաւորութիւն այսմ խորհրդոյ... այնպիսին դատաստան եւ դատապարտութիւն անձին իւրում ուտէ եւ ըմպէ, յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս (Ձմեռան ճԻԱ. կէսից, ճԺՀ. խմբագրած)։*

ճիը. *329բ-31բ* ճԻԸ. Նորին վասն Ոտնալու[այ]ին, ի բանն՝ Առկ ջուր ի կոնք եւ էարկ ղենջակ եւ լուաց զոտս աշակերտացն [Յովհ. ԺԳ. 5] – *Բազմագութ եւ մարդասէր է Աստուած, որ ըստ առատ ողորմութեան իւրոյ գթացաւ յազգս մարդկան... եւ մասնակից լինիլ շարչարանաց նորա եւ յարութեան փառաց եւ շնորհաց արժանաւորիլ, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն (Ձմեռան ճԻԵ.)։*

ճիթ. *331բ-6բ* ճԻԹ. Յայլմէ քարոզ ի մեծի ուրբաթի սուգն, ի բանն առաքելոյն՝ Կտակ յետ մահու հաստատուն է [Եբրայ. Թ. 15] – *Սովորութիւն է մարդկան, յորժամ մեռանի ոք ի յայլ տեղիս եւ առնէ կտակ... քաւէ զնա յամենայն մեղաց ի ձեռն զոհման եւ խոստովանութեան, եւ Քրիստոսի փառք յաւիտեան (Ձմեռան ճԻԹ.)։*

ճլ. *336բ-8բ* ճԼ. Նորին քարոզ վասն խաչելութեան, ի բանն՝ Ի մէջ երկուց կենդանեացն ծանիցիս դու [Ամբակ. Գ. 1] – *Բազմադիմի է տեսութիւն բանիս եւ խոր... Որ ի ձեռն չարչարանաց խաչին փրկեաց զարարածս միածին Բանն Աստուծոյ մարդացեալ, որով եւ ընդ որում Հօր եւ Հոգւոյն Սրբոյ փառք յաւիտեանս. ամէն (Ձմեռան ճԼԱ., ճԼՀ.՝ խմբագրած)։*

ճլա. *338բ-41բ* ճԼԱ. Նորին քարոզ վասն թաղման, ի բանն՝ Որպէս էր Յունան ի փոր կէտին զերիս տիւս եւ զերիս գիշերս, նոյնպէս եղեց որդ՛՛ [Մտթ. ԺԲ. 40] – *Գիտելի է, զի Յունան օրինակ էր Քրիստոսի... եւ մեք ի հասարակ յարութեանն Ջ.ամեայ յառնելոց եմք, եւ Քրիստոսի փառք (Ձմեռան ճԼԴ., վերջից պակաս)։*

ճլբ. *341բ-3ա* ճԼԲ. Նորին վասն շաբաթու եւ նաւակատեաց – *երկու իրս ասելի է աստ. Նախ՝ վասն շաբաթու եւ նաւակատեաց... վասն որոյ փրկութեան մերոյ է հաղորդելի նախկին եւ ապա յայլ կերակուրս, եւ Քրիստոսի փառք յաւիտեան (Ձմեռան ճԼԴ-ի մի մասը)։*

ճլգ. *343բ-7ա* ճԼԳ. Նորին քարոզ վասն յարութեանն Քրիստոսի ի բան առաքելոյն՝ Ապա թէ Քրիստոս քարոզի, թէ ի մեռելոց յարուցեալ է, զիարդ՞ ասեն ոմանք ի ձէնջ, թէ յարութիւն մեռելոց չիմ [Ա. Կորն. ԺԵ. 12] – *Եղեն ոմանք հերձւածողք, որք ասէին ոչ գոլ յարութիւն*

հողացեալ մարմնոց... մեղսամակարթ անձամբ ուրանան զյարութիւն եւ զհանդերձեալ կեանս, յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս, եւ նմա փառք եւ պատիւ յաւիտեանս. ամէն (Ձմեռան ճԼՐ.)։

ճլդ. *347ա-50բ* ճԼԴ. Քառոզ վասն Յարութեան, ի բանն՝ Այսօր զոր արար Տէր. եկա՛յք, ցնծասցո՛ւք [Սաղ. ճԺէ. 24] – *Մարգարէս նախատես հոգովն զուրախութիւնս զայս... որպէս աւետեցին հրեշտակքն կանանցն, եւ կանայքն՝ առաքելոցն։*

ճլե. *350բ-3բ* ճԼԵ. Նորին քառոզ վասն նոր կիրակէին, ի բանն, որ ասէ՝ Եւ յետ Ը. աւուր դարձեալ ժողովեալ էին ի ներս, եւ Թովմաս ընդ նոսա [Յովհ. Ի. 26] – *Աւրս այս երբեմն կոչի նոր կիրակէ... նմանապէս եւ զգուխ ողորմութեանն Աստուծոյ ի դարձ մեղաւորին ի մասսիս, եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանն. ամէն (Ձմեռան ճԽԲ.)։*

ճլզ. *353բ-5բ* ճԼԶ. Նորին քառոզ վասն եկեղեցւոյ, ի բան՝ Յեկեղեցիս բարեբանեցէ՛ք զՏէր եւ աւրհնեցէ՛ք զանուն նորա [Սաղ. Կէ. 27] – *Եկեղեցին հոմանուն է եւ բազում նշանակութիւնս ունի... որպէս ասէ Ոսկեբերանն՝ Ամենայն ուրէք, որ զարիւնն Տեառն տեսանեն, փախչին դեւք, եւ ընթանան հրեշտակք։ Յաղագս այս չորից պատճառացս շինի եկեղեցին եւ աւրհնի ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեան (Ձմեռան ճԽԳ)։*

ճլէ. *355բ-7ա* ճԼէ. Նորին քառոզ վասն եկեղեցի աւրհնելոյ, ի բանն «Սուրբ արար զյարկս իւր բառեալն [Սաղ. Խե. 4] – *Պարտ է գիտել, զի իւրաքանչիւր սեռից կազմեաց Աստուած յարկ բնակութեան... որ է յոյժ անմտութիւն, մանաւանդ թէ անբանութիւն, եւ Քրիստոս՛՛ (հմմտ. Ամառան ճԲ., խմբագրած)։*

ճլը. *357ա-9բ* ճԼԸ. Նորին վասն նորակերտ դրան եկեղեցոյ, ի բանն՝ Այս դուռն Տեառն է, եւ արդարք մտանեն ընդ սա [Սաղ. ճԻէ. 20] – *Արդ, գիտել պարտ է, զի դուռն զառաջին մուտն նշանակէ... կապեալ ոտիւք եւ ձեռօք հանել ի խաւարն արտաքին, յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած մեր, եւ նմա փառք յաւիտեանս (Ամառան ճԳ.)։*

ճլթ. *359բ-63բ* ճԼԹ. Յայլմէ քառոզ վասն Համբարձման, ի բանն Ղուկասու՝ Եւ եղեւ յաւրհնելն նորա զնոսա, մեկնեցաւ ի նոցանէ եւ վերանայր յերկինս [Ղուկ. ԻԳ. 50] – *Տէրն մեր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ եկն յաշխարհս... մեք կարասցուք ելանել ընդ նմա, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն (Ձմեռան ճԺ)։*

ճխ. *363բ-6բ* ճԽ. Յայլմէ դարձեալ վասն Համբարձման, ի բանն՝ Տէրն մեր Յիսուս Քրիստոս համբարձաւ <ի> յերկինս եւ նստաւ ընդ աջմէ Հօր [Մարկ. ԺՋ. 19] – *Որպէս ասեն վարդապետք, թէ կարգ է բնութեանն եւ կանոնք Աստուծոյ... որ կազմեցաւ ի հողոյ որպէս մերս, այսօր համբարձաւ ի վեր քան զամենայն երկինս, եւ Քրիստոսի փառք (Ձմեռան ճԽԹ)։*

ճխա. *366բ-70* ճԽԱ. Քառոզ վասն երկրորդ Գալստեանն, որ զկնի Համբարձման կիրակէին, ի բանն՝ Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս եւ ճրագունք վառեալք, եւ դուք նման մարդկան, թէ երբ դառնայցէ ի հարսանեաց, բացՙ՛՛ [Ղուկ. ԺԵ. 35] – *Բազում ինչ ունի եկեղեցիս սուրբ յաւանդութենէ ընկալեալ... եւ այնպէս կան եւ մնան վերջինքն ի ձեռս առաջնոցն, վասն որոյ ելեալ ի խնամս Արարչին աւրհնելոյն յաւիտեանս յաւիտենիս. ամէն (Ձմեռան ճԽՋ.)։*

ճխբ. *370ա-3բ* ճԽԲ. Նորին քառոզ վասն գալստեան Սուրբ Հոգւոյն, ի բանն՝ Եւ ի կատարել աւուրցն Պէնդակոստէին, էին միաբան ի միասին։ Եւ եղեւ յանկարծակի ճնչիւն յերկնից եւ այլն [Գործ. Բ. 1] – *Նախ գիտելի է, զի Պենդեկոստն ի յոյն լեզու եւ կրկին... անհաւատից պատժող եւ դատապարտող որպէս զԱնանիայ եւ զ[Ս]ափիրայ դատապարտեաց, եւ նմա փառք ընդ Հօր եւ ընդ Որդւոյ (Ձմեռան ճԾԵ.)։*

ճխգ. *373բ-7ա* ճԽԳ. Յայլմէ դարձեալ վասն գալստեան Սուրբ Հոգւոյն, ի բանն՝ Երեւեցան նոցա բաժանեալ լեզուք իբրեւ ի հրոյ եւ նստաւ ի վերայ նոցա [Գործ. Է. 3] – *Վարդապետք ասեն՝ Բ. հուր կայ յաշխարհս... ամենայն ժողովուրդն Իսրայէլի անդ էին ժողովեալ, որպէս ասէ յԵլքն, եւ Հոգւոյն Սրբոյ փառք յաւիտեանս (Ձմեռան ճԾԸ.)։*

ճխդ. *377ա-9ա* ճԽԴ. Նորին դարձեալ վասն վկայութեան ամենասուրբ Երրորդութեանն – *Յաղագս վկայութեան ամենասուրբ Երրորդութեանն գիտելի է, զի հաստատի յերից վկայութեանց... զի քննելն յանդգնութիւն է եւ հաւատալն փրկութիւն եւ ճանաչելն կեանք յաւիտենականք, որում փառք (Ամառան Ղ. խմբագրած)։*

ճխե. *379ա-84ա* ճԽԵ. Նորին վասն Վարդավառին, ի բանն Մատթէոսի՝ Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր զՊետրոս եւ զՅակոբոս եւ զՅոհաննէս եւ հանէ զնոսա ի լեառն մի բարձր, եւ այլակերպեցաւ առաջի նոցա [Մտթ. Թ. 1] – *Ի վերայ այսմ բանի ԺԵ. (15) իմն գլխօրէն բանս խնդրելի է մեզ։ Նախ, թէ ընդէ՞ր Մատթէոս յետ Ջ. աւուր ասէ... զի դատաստանի է ժամն եւ հատուցման, եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք, իշխանութիւն յաւիտեանս (Ամառան ճԻէ., խմբ.)։*

ճխզ. *384ա-9ա* ճԽԶ. Պատմութիւն վասն փոխման Տիրամօր Կուսի Աստուածածին – *Արարիչն Աստուած արար զլուսաւորս մեծամեծս եւ զփոքունս... վասն որոյ ի միում տօնեմք ընդ Յարութեան Որդւոյն Միածնի եւ զմօր յարութիւնն, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն (Ամառան ճԼ.)։*

ճխէ. *389ա-92բ* ճԽէ. Դարձեալ վասն փոխման Աստուածածնին, ի բանն Սողոմոնի՝ Բազում դստերք ստացան մեծութիւն, բազումք արարին զօրութիւն, բայց դու առաւել եղեր եւ զանցուցեր զամենեսեումբք [Առակ, ԼԱ. 29] – *Ջնախատեսութիւն աստուածապսակ*

արքայիս Սողոմոնի, որ վասն մեծութեան... որ արբուցանէր զարքայն կուսածին, եւ Քրիստոսի փառք յաւիտեան։

ճխը. *392բ-9բ* ՃԽԸ. Դարձեալ վասն սուրբ կուսին Մարոզ, ի բանն եսայեայ՝ Ահաւասիկ Տէր նստել ի վերայ թեթեւ ամպոյ [Մարգ. ես. ԺԹ. 1] – *Պարտ է գիտել, զի Աստուածածին կոյսն Մարիամ բազմանուն է... զի դատապարտի յաւիտենական կորստեամբն, յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած բարեխաւսութեամբ Սուրբ Աստուածածնին։*

ճխթ. *399բ-402ա* ՃԽԹ. Յայլմէ Մարոզ վասն խաչի, ի բանն՝ եւ տնկեաց Տէր Աստուած զծառն կենաց ի մէջ դրախտին [Ծննդ. Բ. 9] – *Աստուած կրկին անգամ ստեղծեաց զմարդկային բնութիւնս... յորժամ խաչեցաւ, ասէ ընդ աւազակն՝ Այսօր ընդ իս իցես ի դրախտին. եւ Քրիստոսի փառք յաւիտեան (Ձմեռան ՃԼԳ.)։*

ճծ. *402ա-5բ* ՃՄ. Դարձեալ Մարոզ վասն խաչի, ի բանն՝ Ջի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ մեզ փրկելոցս՝ զօրութիւն Աստուծոյ [Ա. Կորն. Ա. 18] – *Փողն բարձրաբարբառ եւ ազդարար, յերրորդ երկինս ելող, անհասիցն տեսող եւ անճառիցն պատմող... եւ մինչ յողոգոմեանն այլս ոչ ելանեմք, եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեան (Ամառան ՃԼՐ.)։*

ճծա. *405բ-9ա* ՃՄԱ. Դարձեալ վասն խաչի Մարոզ, ի բանն՝ Փայտ կենաց է ամենեցուն, որ պատըսպարին ի նա եւ որ յենուն ի նա իբրեւ ի Տէր հաստատութեամբ [Առակաց Գ. 18] – *Գիտելի է, զի կեանք փայտին ի յերիս դէմս երեւեցաւ... զի օձումն եւ աւրհնութիւնն միւն է, անբաժանելի էր ի նմանէ յաւիտեան, եւ Քրիստոսի փառք։*

ճծբ. *409ա-13ա* ՃՄԲ. Յայլմէ վասն հրեշտակապետացն, ի բանն, որ ասէ, <որ ասէ> տեսիլն՝ եղեւ պատերազմ ի յերկինս, Միխայէլ եւ հրեշտակք իւր կռուէին ընդ վիշապին եւ ոչ կարացին ընդդեմ կալ եւ տեղի ոչ գտաւ նոցա յերկինս [Յայտ. ԺԲ. 7] – *Բարի է Աստուած եւ ի բարերար կամաց նորա արարչագործեաց զերկինս... եւ բռնեաց զձեռն նորա, եւ սեւացան մինչեւ ի յայն, որ կարգաց առաջի ժողովրդեանն, եւ դարձեալ սպիտակացաւ ձեռն, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն (Ամառան ՃԽՋ., ՃԽԷ., սկզբից 4 նախադասութիւն չիք)։*

ճծգ. *413ա-8բ* ՃՄԳ. Նորին Մարոզ վասն Յովաննու, ի բանն Մաղաքիայ՝ Առաքեցից զհրեշտակ իմ առաջի fո, որ պատրաստեսցէ զճանապարհս իմ առաջի fո [Մաղաք. Գ. 1] – *Եւ արդ, վասն առաջիկայ բանիս ի դէմս կարապետին Յովհաննու... եւ այսպէս փառաւորեաց Աստուած զսուրբն Յովանէս սատակմամբ չարեացն, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս։*

ճծդ. *418ա-9բ* ՃՄԴ. Նորին վասն միաբանից, հարց եւ կրօնաւորաց, ի բանն, որ ասէ ի պրակս առաքելոցն՝ էր ամենայն ինչ նոցա հասարակաց, եւ ոչ ոք ասէր զընչից իւրոց, թէ իւր իցէ [Գործ. Դ. 32] – *Եթէ զինչ շահ եւ օգուտ է միաբան եղբայրութեանց... իսկ ի միակամութենէն շինութիւն յաւելումն լինի, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. (Ձմեռան ԻԱ.ի մի մասը)։*

ճծե. *419բ-22բ* ՃՄԵ. Դարձեալ խրատ կօրնաւորաց, թէ զի՞նչ հարկաւոր է յանապատի բնակողաց, եւ զի՞նչ պիտանացու. նորին դարձեալ առ նոյն խորհու[ր]դ – *Ասեմք նախ, թէ այն է հարկաւոր, առանց որոյ կեալ ոչ է... իսկ թէ ունի մասնաւոր եւ թիւր, հերձուածող է եւ խաբող, փախի՛ր ի նմանէ, եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք (Ձմեռան ԻԱ.ի շարունակութիւնն է)։*

ճծզ. *422բ-4բ* ՃՄԶ. Նորին վասն ՀԲ. (72) աշակերտացն, ի բանն՝ Յետ այսորիկ երեւեցոյց Տէր եւս ՀԲ. առաքեալս։ Եւ առաքեաց զնոսա երկուս-երկուս [Ղուկ. Ժ. 1] – *Իսկ Հ. եւ Բ. (72) աշակերտացն նախանկարք եւ օրինակք խորհրդոյ բազում են... ըստ անսուտ խոստմանն իւրոյ թէ՝ Ուր եսն եմ, անդ եւ պաշտ[օնեայն], զի տեսանիցեն զփառս իմ, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն (Ամառան ՃԻԳ.)։*

– 422բ Դարձեալ վասն անուանց Հ.իցն գիտելի է, զի ի պատմութիւնն իւրեանց յայտնի է... Յովաննէս Մկրտիչ պարագլուխ։

ճծէ. *425ա-8ա* ՃՄԷ. Նորին Մարոզ ի տօնս Պետրոսի եւ Պօղոսի, ի խորհուրդ երկոտասան առաքելոցն, ի բանն՝ Կոչեցեալ առ ինքն զԲԺ.ն (12) աշակերտս եւ առաքեաց զնոսա [Մարկ. Ջ. 7] – *Թէ վասն է՞ր զաշակերտս ԲԺ.ն (12) ընտրեաց... եւ այսպէս ամենեքեան սոքա ԲԺ.ն (12) թըւով՝ որպէս ասացաք, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ (Ամառան ՃԻԲ.)։*

– 428ա Անուանի ԲԺ.նիցն – *Պետրոս եւ Անդրէաս եղբայր նորա, Յակոբոս... եւ Նաթանայէլ կոչեցաւ։*

ճծը. *428ա-30ա* ՃՄԸ. Նորին վասն գլխաւոր տօնիցս, թէ վասն է՞ր Դ. են տօնս այս – *Ջհորհրդաւոր պատճառ Դ. տօնիցս բազում են եդեալ վարդապետք... նախաշաւիղ կարգեցին ծնունդն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս։*

ճծթ. *430ա-3բ* ՃՄԹ. Նորին Մարոզ Դաւթի եւ Յակոբայ, ի բանն՝ Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ եւ ոչ ստեաց նմա. ի պտղոյ յո[րովայնի] [Սաղ. ՃԼԱ. 11] – *Եւ արդ, վասն երից է խնդիր մեր։ Նախ, վասն աւուրս պատշաճ... եւ հարին թափչաւ զգլուխն, եւ այնպէս աւանդեաց զհոգին ի ձեռս Աստուծոյ, եւ Քրիստոսի փառք (Ամառան ՃՀԵ., սկզբից մի քանի նախադասութիւն պակաս)։*

ճկ. *433բ-8ա* ՃԿ. Նորին վասն Նախավկային Ստեփանոսի, ի բանն՝ Ահա տեսանեմք զերկինս բացեալ եւ զՈրդի մարդոյ, զի կայ ընդ աջմէ Աստուծոյ [Գործ. է. 55] – *Ջի թեպէտ սիրելի են ամենայն պատուղք երկրա-*

գործաց... աւրհնել զանիծիչս եւ աղօթել ի վերայ նեղչաց, եւ Քրիստոսի փառք յաւիտեան (Ամառան ՃՀԷ., սկզբից 3 նախ. չիք)։

ճկա. *438ա-41ա* ՃԿԱ. Նորին Բարոզ վասն առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի, ի բանն՝ Դուք էք լոյս աշխարհի [Մտթ. ե. 14] – *Զիւր վայելչական անունն, որ ասաց՝ ես եմ լոյս աշխարհի... (Ամառան ՃՁԲ., սկիզբը խմբագրած, ՃՀԸ.ի վերջը, ՃՁ., ՃՀԹ.ից մասն)։*

ճկբ. *441ա-4բ* ՃԿԲ. Նորին Բարոզ Յոհաննու եւ Յակոբայ՝ Որդոցն Որոտման, ի բան Աւետարանիչ՝ Դարձաւ Պետրոս եւ տեսանէր զաշակերտն, զոր սիրէրն Յիսուս, զի գայ զհետ նորա. եւ այլն [Յոհ. ԻԱ. 20] – *Պայծառ է մեզ բան տօնախմբութեանս, ո՛վ քրիստոսասէր ժողովուրդք... զի կուսութեամբ եւ սրբութեամբ կեցին եւ նահատակեցան վասն Քրիստոսի։ Եւ զարժանապէս գովութիւն սոցա եւ զփառս՝ գիտէ ինքն միայն որ պսակողն է սրբոց Քրիստոս եւ ցուցանէ ի հանդերձելումն, որ գալոց է, եւ Քրիստոսի փառք (Ամառան ՃՁԱ.)։*

ճկգ. *444բ-8բ* ՃԿԳ. Նորին վասն առաջնորդաց եւ դիտաց, որ է իշխանաց եւ վարդապետաց եւ եպիսկոպոսաց եւ հաճանայից ի բան մարգարէին՝ Որդի մարդոյ դէտ կացուցի զքեզ տանդ Իսրայէլի, զգ՛՛ [Եզեկ. Գ. 17] – *Ի կրկին գոյացութեանց բազկացեալ է մարդն... զայս ասէ մարգարէին Աստուած. Որդի մարդոյ դէտ կացուցի զքեզ, եւ Քրիստոսի փառք (Ամառան ՀՁ.)։*

ճկդ. *448բ-53ա* ՃԿԴ. Նորին վասն գաւազան տալոյ, ի բանն՝ Տըւաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս երկրի, որպէս առաքեաց զիս Հայր, եւ ես առաքեմ զձեզ՝ գնացէք – *Տըւաւ ասելս ըստ մարդկութեանն իմոյ, զի մարդկութեանս ոչ էր յատուկ իշխել... զայս ասէ Պետրոս՝ Ի պատրաստի ունիցիք տալ պատասխանի ամենայնի, որ խնդրիցէ զբանն, որ է վասն յուսոյն ձերոյ, եւ Քրիստոսի փառք յաւիտեան (խմբագր., թ. 452ա-ից Ամառան ԼԳ.՝ «Վասն գաւազան տալոյ)։*

ճկե. *453ա-6ա* ՃԿԵ. Նորին վասն վարդապետաց, ի բանն՝ Դուք կոչէ՛ք զիս վարդապետ եւ Տէր եւ բարիոք առնէք, զի եմ իսկ [Յովհ. ԺԳ. 13] – *Գիտելի է, զի վարդապետութիւնն ի Քրիստոս կրկնակի է... վասն փրկութեան հոգոց մարդկան է քարոզելն եւ ոչ վասն ինչս շահելոյ, եւ Քրիստոսի փառք (խմբագրած, 453բ-4բ Ամառան, ԼԳ.ի խմբագրութիւն «Վասն վարդապետաց կոչմանց)։*

ճկզ. *456ա-9ա* ՃԿԶ. Նորին վասն իմաստութեան լուսոյ եւ գործոյ, ի բան առակին՝ Իմաստնոյն աչքն ի գլուխն է, եւ որ անմիտն է, ընդ խաւար գնայ [Ժող. Բ. 14] – *Զիմաստութիւնն լոյս կոչէ իմաստնացեալն յԱստուծոյ Սողոմոն ասելով... որ եղեւ գլուխ եւ առաջնորդ կենաց ամենեցուն նոյն ինքն Տէր մեր, որում փառք եւ զօրութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն (Ամառան ԼԷ., ԼՐ. խմբագրած)։*

ճկէ. *459ա-62ա* ՃԿԷ. Նորին վասն առաջնորդաց՝ թագաւորաց եւ իշխանաց, ի բանն առակին՝ Որոց ոչ գոյ առաջնորդութիւն, թօթափին իբրեւ զտերեւ [Առակ. ԺԱ. 14] – *Գրէ ուրեմն հանճարեղն եւ իմաստնացեալն յԱստուծոյ առակախօսն Սողոմոն... եւ յ<է>ետ աստեացս ընդ սուրբ իշխանացն եւ հովուապետացն արժանի արասցէ զձեզ արքայութեանն իւրում Քրիստոս, որոյ փառք յաւիտեան (Ամառան ՃԺԱ.)։*

ճկը. *462ա-4ա* ՃԿԸ. Նորին վասն մարտիրոսաց, ի բանն՝ Բազում նեղութիւնք են արդարոց, յամենայնէ փրկէ զնոսա Տէր [Սաղ. ԼԳ. 20] – *Բայց պարտ է գիտել, զի ասեն վարդապետք, թէ բազում պատճառաւ ընտրելի է եւ գտանելի մեզ զմարմնաւոր նեղութիւն... այսպէս եւ զամենայն մարմինս մեր կապեսցուք, եւ Քրիստոսի փառք (Ջմեռան ԻԹ., խմբագրած, սկզբի մի մասը չիք)։*

– *464բ-5ա* Ազգաբանութիւն սկսեալ յԱդամայ մինչեւ ի Քրիստոս, Վասն Մարիամանցն, Որդիքն Յակոբայ, յԱբրահամու ի Մովսէս, Դատաւորն – *Ադամ՝ ՋԼ. (930), Սէթ՝ ՋԺԲ. (912)... եւ կորեան, զի աստուածասպանք եղեն եւ այլ ոչ նորոգեցան, զի նորս թագաւորեաց եւ հասանէ մինչ ի կատարած։*

ճկթ. *465ա-8ա* ՃԿԹ. Նորին Բարոզ վասն է. խորհրդոյ եկեղեցոյ եւ նախ վասն մկրտութեան, ի բանն՝ Եթէ ոք ոչ ծնցի ի ջրոյ եւ ի հոգւոյ կամ ծնեալն ի մարմնոյն մարմին է [Յոհ. Գ. 5] – *Յաղագս մկրտութեանն վեց իրս տեսանելի է... բազում ասացեալ է ի վերոյ հանդերձ խոստովանութեամբ եւ այժմ ասելի է վասն պատարագին, եւ Քրիստոսի փառք (խմբագրած, Ամառան ԼԲ., ԼԳ.ից մի հատուած)։*

ճհ. *468ա-72ա* ՃՀ. Յայլմէ վասն պատարագին, ի բանն՝ Առ Յիսուս հաց, եբեկ եւ ետ աշակերտացն եւ ասէ՝ Առէ՛ք, կերա՛յք, այս է մարմին իմ, որ վասն [Մտթ. ԻՁ. 26] – *Վարդապետք ասեն, թէ սէրն պատճառ է միաւորութեան... արժանապէս վայել են ի սուրբ խորհրդոյն Քրիստոսի, նոյնպէս եւ յեկեղեցի, եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս. ամէն (Ամառան ԼՁ.)։*

ճհա. *472ա-6բ* ՃՀԱ. Վասն կարգի հաճանայութեան, ի բանն՝ Քահանայք սուրբք լիցին եւ մի՛ գարշեցուցանեն զանուն Աստուծոյ իւրեանց, զի զպատարագս Աստուծոյ նոքա մատուցանեն [Ղեւտաց. ԻԱ. 6] – *Վարդապետք ասեն, թէ ամենակալն Աստուած ոչ ինչ եթող յաշխարհս առանց կարգի... դուք կրէք պատուհաս, իսկ արժանի լինելով աւրհնեսցէ զձեզ Քրիստոս Աստուած եւ արժանի արասցէ զձեզ մեծի շնորհաց, եւ նմա փառք յաւիտեանս. ամէն (Ամառան Ի.)։*

ճհբ. *476բ-9բ* ՃՀԲ. Նորին վասն ձեռնադրութեան, ի բանն՝ Քահանայք ո զգեցցին զարդարութիւն եւ կամ այլ ինչ – *Գիտելի է, զի քահանայութիւնն նախ բաժանի յերկնաւորն եւ յերկրաւորս... ակն ունելով երանելի յուսոյն եւ առ Աստուած սիրոյն վարձուց հատուցման ի*

պսակողէն Քրիստոսէ, որ է աւրհնեալ յաւիտեան (հմմտ. Ամառան ԼԷ, ԼՀ, խմբագրած)։

ճիգ. *479բ-82բ* ՃՀԳ. Նորին ֆառոզ պսակի, ի բանն՝ Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ ի Քրիստոս եւ յեկեղեցի [Եփես. ե. 32] – *Խորհուրդն է ծածկելոց իրացն յայտնութիւն... եւ նովաւ ընդ Հօր եւ Հոգւոյն Սրբոյ ըստ որում ասաց՝ Որպէս դու հայր յիս եւ ես ի քեզ, եւ նոքա ի մեզ իցեն, զի տեսանիցեն զփառս իմ։ Որոց լիցի մեզ ամենեցուն արժանաւորիլ տեսլեան անմահ եւ երկնաւոր փեսային ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որում փառք (Ամառան ԽՁ.)։*

ճիդ. *482բ-6բ* ՃՀԴ. Քառոզ վասն լեզուի, ի բանն՝ Ո՛վ մարդ, որ կամիս զկեանս սիրես զաւուրս տեսանել ի բարութեան, լռեցո՛յ զլեզու ֆո ի չարութենէ. եւ շրթունք [Սաղ. ԼԳ. 14] – *Աս Սողոմոն՝ մահ եւ կեանք ի ձեռն լեզուի, գիտել պարտ է, զի որպէս որք յօժարի եւ ցանկանայ ապրել... քանզի ընդ ում խօսի Աստուած ի ներքուստ, ոչ ինչ հոգայ ի յարտաքին խօսից, եւ Քրիստոսի փառք յաւիտեան (հմմտ. Ամառան Ծե., խմբագրած)։*

ճիե. 486բ-9բ ՃՀԵ. Վասն մաճու վարդապետաց, ի բանն Յակոբայ՝ Ծաղր ձեր ի սուգ դարձցի եւ ուր խաւարի ձեր ի տրտմութիւն [Թուղթ առաք. Յակ. Դ. 9] – *Արդ, զի՞նչ ասացից կամ զի՞նչ պատմեցից, զի՞նչ խօսեցայց... զի ուրախասցուք ի միասին յարաձգական յաւիտենիս ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որում փառք յաւիտեան։*

Ծնթ. Քառոզները խմբագրուած են. որոշ դէպքերում 2 եւ աւելի քառոզներ միացուած են իրար եւ դարձուած մէկ միաւոր, երբեմն մի քառոզը բաժանուած է մի քանի միաւորի մէջ, որոշ միաւորներ էլ տարբեր քառոզների մասերից հաւաքած նոր նիւթ են, որոշները սկսւում են ոչ սկզբնատողից, այլ մի քանի տող կամ պարբերութիւն բաց թողնելով։

Բ. 1. *490բ-3բ* Աստանօր բանս իրաւապէս զկայ առցէ։ Արդ, այսոքիկ բաւականասցի առ ի մէնջ ի տեսութիւն բանիս։ Այժմ դարձուսցուք զմակոյկ լեզուիս մեր ի բանս յորդորական, շարժել զշրթունս մեր յաւրհնաբանութիւն – *Արդ, որ ամենեցունց է հրաշագործօղն եւ (այլ ձեռքով՝ «կատարողապետն) Աստուած, սեռն եւ յատակ սիրով եւ անբաւ անդունդ խնամով, անմեկնելի եւ անորոշելի է յարարելոցն իմմէ։ Յառաջնոցն ի լուսաշարժ ստեղծագործելոցն մինչեւ ցհուսկ յեհինսն բոլորովիմբ անշունչ եւ անշարժս ըստ եռամեծին Դիոնոսիոսեա... եւ ի խորան երանական էֆալիր աւրհնութեան, ազնիւ ծառայից մտերմութեան ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։*

Ծնթ. Օրհնաբանութիւններ են՝ ուղղուած աշխարհին, հրեշտակներին, հրիստոնեաներին, հայերին, Աստուածածնին, թագաւորին, իշխաններին, վարդապետներին, կրօնաւորներին, ընկերներին, եկեղեցուն, կառուցողներին, ննջեցեալներին։ Հմմտ. ձեռ. 2137, 304բ-8ա։

– 493բ Իսկ որովհետեւ ժամանեալ հասաք ի խորս իմանալեաց, բե՛ր արտադրեսցուք զգաւանաբանութիւն ուղղափառ քրիստոնէութեանս... որ նա ինքն է հաւատն կենդանական եւ շաղկապ յօդական ի գլուխն Քրիստոս։

Հմմտ. ձեռ. 2180, 90ա-1բ, 2137, 295ա-6ա առաջին եւ վերջին նախադասութիւններն են։

2. *493բ-5ա* [Դաւանութիւն հաւատոյ սուրբ հօրն մերոյ երկրորդ Լուսաւորչի Քաջ հռետորին Գրիգորի. ձեռ. 1712, 34բ] – *Հաւատամ եւ խոստովանիմ, դաւանեմ եւ երկրպագեմ ըստ հարցն աւանդութեանց սրբազան բանից զՀայր եւ զՈրդի եւ զՀոգի Սուրբ՝ երրեակ միութիւն, անքակ անձնաւորութիւն... ոմանց յարութիւն կենաց եւ ոմանց դատաստանաց, ըստ որում մեզ ամենեցուն յանդիման առաջ[ի], զի ընկ[ալցի] իւրաքանչիւր բարի եւ թէ չար։*

Հմմտ. ձեռ. 2137, 296ա-8ա, 2180, 90ա-5ա։

– 495բ Եւ արդ, յետ ելանելոյ ի գագաթն աստուածաբնակ լերինն Սինայ... ձեւագրեալ բանին ի դէմս կրկնատես մարգարէութեանց, որ ասէ։

3. *495բ Ջխորս անճառելի իմաստիցն Աստուծոյ հոգոյն եւ զգործս անպատում արարչականին քննել մտաց այնոցիկ է, որք ամբարձամբք թեւօք հոգոյն Աստուծոյ... եւ ի գովեստ անկարօտ փառաց փեսային, յորոց մի է եւ այս եղեալն առաջի, որ ասէ. /// (վջ.)։*

4. *496ա (սկ.) ///ի գմբեթայարկ կամարս երկնահանգէտ սուրբ եկեղեցոյս գեղազարդ պայծառացուսցէ զվայելչութիւն երեսաց գերամաքուր... հոգոյն հակուցեալոցն զանսպառ եւ զանվախճան ուրախութիւնսն յաւիտենական։ Այլեւ երեւելիս արասցէ զձեզ երկնաւորաց եւ երկրաւորաց մինչեւ ասել, թէ սոքա են զաւակք աւրհնեալք Յաստուծոյ, եւ տացէ ձեզ Տէր լսել զերանաւէտ ձայնն մեօք հանդերձ, թէ՝ եկայք աւրհնեալք Հօր՞։*

Ծնթ. Աւրհնութիւնք ուղղուած հաճախաւերին, տանուտէրերին, մանկանց, կանանց, հասարակաց։

5. *496բ-8ա եւ այժմ զբանս աւրբհնութեան ի քեզ դարձուսցուք, ո՛վ այր Աստուծոյ, բարեբախտ եւ բարեհամբաւ եւ քաջ անուն ստացեալ ի մէջ հոմասեռիցն քոց... եւ յանյարգելի արբումն ըստ խոստման Տեառն մերոյ Յիսուսի, թէ՝ Բազմեցուցից ի սեղան Հօր իմոյ եւ անցեալ պաշտեցից, որ եւ մեք ընդ քեւ եւ ընդ քեզ արժանի լիցուք եւ դուք եւ մեք ի մի բարին աւրհնեսցուք զՀայր եւ զՈրդի եւ՞։*

6. *498ա-503բ Մի է Աստուած եւ մի միջնորդն Աստուծոյ եւ մարդկան... Ո՛վ աղբեւր կենդանութեան եւ արմատ անմահութեան... Աստուծով եւ աստուածատուր պարգեւօք շարժեցիր ի շարժողէն բոլորից... Տէրունեան եւ աստուածային է հրամանս... Վաստահացեալ յուսով քաջութեան յայն... Զամենայն զոր ինչ օրինադրեաց մեզ Տէր մեր Յիսուս Քրիստոս նախ ինք.... եւ արդ, գիտելի*

է, զի Գ. են, որ անձնիշխան կամօք ներգործեն զգործս... եւ արդ, քանզի յայտ է ամենեցուն, զի երկիր ծարաւուտ ոչ պտղաբերի... Անճառելիդ Աստուած եւ անհասդ ամենայն իմաստից... Յաստուածածագ լուսոյ ճառագայթից շնորհաց... Շնորհօք բարերար կամաց մեծին Աստուծոյ... Գիտելի է, զի ամենայն տուրք բարիք... Ծանիցէ աստուածսիրութիւնդ ձեր, զի այս յայտնի է հասարակ տեսութեան, զի ամենայն իրագործութիւնք... առ ի լուսաւորել զմիտս իմ եւ շարժել զլեզուս ի մեկնութիւն բանիս ի սէրն Հօրն երկնաւորի եւ ի պատիւ փառակից Որդոյն Միածնի այժմ եւ յաւիտեան։

– 503բ Տէր տայ ինձ լեզու խրատու, ըստ տեսողին աստուածաբանի, զի գիտացից խօսել ի ժամու զբանն կենաց եւ կնքէ խոստովանութիւն ուղ[ղ]ափառ հաւատոյ... եւ յեղանակ անմարմին ծննդեանն ի բանական գոյիցս անճառելի եւ պատմելի եւ միայն կ/// (վջ.)։

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ

1. *1ա (ժե. դ., բոլորգիր)* [Գուշակողական] – *Բազում քննեալ եւ փորձեալ առաքեցի քեզ, գիր ունելով զաղիւսակդ շնորհալից, յորժամ քննես, գիտես յառաջագոյն, որ ինչ լինելոց է... Տե՛ս թէ ի /// (1 բառ) ապրի, թէ ի ներքին, ոչ։*

2. *5բ (ԺԶ. դ., նոտրգիր)* Նախերգանք լաւ – *Անօթին հոգեւորական եւ փողն աստուածային, արեգակն իմաստութեան եւ լուսաւորիչն եկեղեցւոյ, հրեշտակ երկրային եւ փայլակն երկնային, յափշտակեալն հոգով... եւ լցեալն արարչական Հոգւոյն Սրբոյ հաւատարիմ ի վերայ տանն Աստուծոյ եւ բերան ի բերան խօսողն ընդ Աստուծոյ մարգարէն Մովսէս առաք՛։*

Ունի 3 աղիւսակ՝ 1-ը fառակուսի, 2-ը՝ բոլոռակ։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽԱԳԱՂԱՓԱՐ ԱԻՐԻՆԱԿԻ

Խմբագրի, 1416 թ. *336բ Արդ, եա՛* Յակոբ *մեղաւոր վարդապետս* Ղրիմցի, *որ ի խաչելութեան քարոզս աշխատասիրեցայ, աղաչեմ զձեզ յիշել ի Տէր միով բանիւ։*

350բ Ջմեղուցեալ Յակոբ *վարդապետս* Ղրիմցի, *որ զքարոզս շարադրեցի ի շնորհաց Հոգւոյն յիշեցէ՛ք ի Տէր Քրիստոս, աղաչեմ։*

392բ ՋՅակոբ *վարդապետ՝ շարադրող բանիս յիշեցէ՛ք ի Տէր (նման՝ 489բ)։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

489բ Փա՛ռք ամենասուրբ երրորդութեանն եւ անիմանալի էութեանն, անբաւ զաւրութեանն եւ ամէնուսնակ տէրութեանն, երից անձնաւորութեան եւ միոյ բնութեան՝ Հաւր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ։ Ի թվիս հայկազան տոմարի Պ.երորդի Կ.երորդի եւ Է.երորդի (1418) գրեցաւ եւ յանկ ելեալ տառս աստուածային եւ բուրաստանս երկնայ[ի]ն, դրախտ եդեմային եւ ծառս կենաց անմահութեան պտղոյն, քանզի սա է դեղ կենաց վիրաւորելոց եւ մխիթարութիւն մտաց մանկանց աշակերտելոց։

Արդ, աւարտեցաւ սա յերկրիս /// (1 տող ջնջած) ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս *եւ /// (2,5 տող) |490ա| քանզի ըստ ասիցն իմաստասիրին, թէ այս պատկեր է առն վեհին* Պղատոնի, *զոր գովելոյ անգամ ոչ եմ արժանի։ Կամ թէ ըստ մարգարէն՝ Ջինչ տաց տրիտուր Տեառն, քանզի զորն պատմեմ զերախտաց սորայ՝ որ առ իս, զհայրական գո՞ւթն, թէ՞ զեղբայրական սէրն կամ զծնօղական խնամքն, ինձ անհնար է, բաց այնմ, որ հնարաւորն է՝ ամենայն տացէ նմա՝ միոյն հազարապատիկ եւ բիւրապատիկ, եւ լսել տացէ՝ զեկա՛յք աւրհնեալք Հօր իմոյ եւ կամ թէ Ազնիւ ծառա՛յ, որովհետեւ ի սակաւին հաւատարիմ եղեր, լիջիր իշխանութիւն ունել ի վերա ժ. քաղաքաց. ամէն եղիցի։ Արդ, եա՛* [Յոհաննէս] *մեղօք մեռեալ եւ բազմավէր ոգի նուսատ վարդապետս, շնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի բազում եւ յոյժ տառապանօք եւ խիստ ջանիւ։ Արդ, աղաչեմ զձեզ, որք հանդիպիք սմա ուսմամբ կամ օրինակելով, յիշեցէ՛ք ի մաքրափայլ եւ ի սրաթռիչ յաղօթս ձեր զ*Յովհաննէս *ստացողս եւ զծնօղսն իմ՝ զհայրն իմ՝/// (ջնջած), եւ զմայրն իմ՝ /// (ջնջած), եւ զքոյրն իմ՝ /// (ջնջած) եւ զայլ ամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանիս եւ զփոխեցեալսն ի Քրիստոս, եւ լի բերանով Աստուած ողորմի ասացէ՛ք նոցա, աղաչեմ զձեզ, եւ դուք որ յիշէք, յիշեալ լիցիք ի Քրիստոսէ։ Դարձեալ եւս առաւել ծունր կրկնեալ աղաչեմ զսուրբ հանդիպողքդ յիշել ի սուրբ յաղօթս ձեր զհոգեւոր հայրն իմ եւ զբազում եբախտաւորն /// (1 տող ջնջած), զի նա պատճառ մեզ այսմ ամենայն բարութեան, զոր աղաչեմ յիշատակել յաղաւթս ձեր /// (1 տող ջնջած), զոր տացէ նմա Տէր Աստուած մեր՝ փոխարէն զարքայութիւնն երկնից՝ ի սեղան բազմեցուցանել եւ անցեալ պաշտել, ննջեցելոցն իւր ողորմութիւն պարգեւեսցէ եւ կենդանեացն խաղաղական կեանս եւ անտրտում ուրախութիւն. եւ յիշատակ նորին աւրհնութեամբ եղիցի. ամէն։ Դարձեալ յիշեսջիք յաղօթս ձեր* [զՅակոբ վարդապետ Ղրիմեցին]**. եկն ի հեռաստանէ եւ բազում աշխա[տութեամբ] /// (1,5 տող ջնջած) [քարո]զէ, /// զայս ՃՀԵ. (175) քարոզս. եւ է ինչ, զի ինքն շարադրեաց ի շնորհաց Սուրբ Հոգւոյն, զոր տացէ նմա Տէր Աստուած մեր գփոխարէն վաստակոց իւրոց։ Այլ եւ /// (1 տող ջնջած) եղբայր մեր, որ աշխատութեամբ ապաստաւորեաց մեզ։ Այլ եւ /// (1 տող ջնջած) որ հոգաբարձու եղեւ մեզ, հատուսցէ նոցա Տէր Աստուած մեր ըստ վաստակոց նոցա զարքայութիւնն իւր։ Եւ դուք խոշորութեան գրոյս անմեղադի՛ր լերուք, զի օրինակն յայլ աշխարհ կերթայր, եւ զիս փութացուցանէին։*

Տե՛ս ԺԵ. դ. յիշ-f Ա. էջ 209-10, Հ՝ 225. օրինաբանական մասերի յապաւումով ունի միայն այս եւ 336բ էջի յիշ-ները։ Ձեռ.իս վերջին թերթերի համարները փոխուել են՝ նախկին

486բ-7ա էջերն այժմ են՝ 489բ-90ա: Ջնջումների մասին Լ. Խաչիկեանը ծանօթագրել է. «գծիկներով այստեղ ցոյց ենք տալիս հետագայ ստացողներից մէկի կողմից միտումնաւոր ճերուած բոլոր այն բառերն ու տողերը, որոնք վերաբերել են ձեռագրի գրչութեան հանգամանքներին»: Այստեղ եւս նոյն ջնջած տեղերում եռաթեք նշանն է, երբեմն փակագծերի մէջ նաեւ նշել ենք ջնջած բառերի եւ տողերի քանակը:

* Ծնթ. Վերականգնումը՝ ըստ ԺԵ. դարի յիշ.ի՝ էջ 210:

191բ Ջմեղօք մեռեալ ոգի գՅովհաննէս խնդրողս բանի աղաչեմ յիշել ի Տէր Քրիստոս:

216ա Ո՛վ սուրբ կոյս Մարիամ, *բարեխաւսեա՛ անարժան գրչիս ողորմութեան Միածնի քո մասնաւորիլ, որում փառք:*

279ա Ո՛վ եղբարք, որք հանդիպիք սմա ուսմամբ կամ օրինակաւ կամ տեսութեամբ, մեղուցեալ գրչիս թողութիւն խնդրեցէք:

343ա ԶՅովաննէս մեղուցեալ եւ զտարտամեալ գրիչս աղաչեմ յիշել ի Տէր միով Աստուած ողորմ[այ]իւ:

399բ Մանաւանդ զգծող սորայ գՅովհաննէս եւ շարադրողի սորայ Յակոբ *վարդապետի Ղրիմցոյ, եւ Քրիստոսի փառք յաւիտեան:*

444բ ԶՅովաննէս ստացողս աղաչեմ յիշել ի Տէր:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *2բ (1758 թ., շղագիր) Յիշատակ է այս շնորհալից քարոզգիրքս մահտեսի* Ալամջանին *եւ որդոցն՝ մահտեսի* Պապիկին *կամ մահտեսի* Մարտիրոսին*: Ով ոք հանդիպի սորայ կարճալով կամ օրինակելով, միով Հայր մեղայիւ զվերոյգրեալ* Պապիկն, *զի նայ է պատճառ սորայ, որ եւ յիշողդ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն: Էր թվական 1207 (1758), Սեպտեմբերի 25 օրն, ի* Կարին, *ձեռամբ ծառայ* Պապիկիս*:*

2. *1բ (1758 թ., նոտրգիր) Ես՝* Էրզրումցի *մահտեսի* Պապիկս, *վեր առի եւ պարտ եմ այսչափ փողս, որ պիտի գնայի դէպի արեւելեան երկիրն եւ իսկ չէղայ տեղեակ այսմ բան[ի]: Տէր, եթէ կամեսցի: Ես՝* Էրզրումցի *մահտեսի* Պապիկս, *վեր առի եւ պար:*

պհպ. Գա (ԺԸ. դ., նոտրգիր) Ծառայ մաղտեսի Պապիկ Էրզրումցիս *գրեցի ողջոյն. Լէր ողջ: Ծառայ մահտեսի* Պապիկ *դի մահտեսի* Աղամջան *(առանձին հատուածներ եւ բառեր կրկնուած):*

պհպ. Գբ (ԺԸ. դ., նոտրգիր) Ես՝ մեղեւոր վ (=եւ) անարժան ծառ<u>էայ</u> Աստուծոյ տիրացոց Յովանէս<*ես*>*:*

2ա (ԺԸ. դ., նոտրգիր) Յիշատակ է ծառայ մահտեսի Պապիկին*, որ եւ լոկ անուամբ յատիկար յորջորջի ի յաշխարհի:*

3. *պհպ. Գբ (ԺԸ. դ., նոտրգիր) Յորժամ կարդաս զայս նախագոյն, / ո՛վ դու խոհեմ իմաստնագոյն, / բարուք պահեա՛ մտառագ[ո]յն, / թէ կայ, թէ ոչ կալած մարդոյն:*

4. *5ա (ԺԸ. դ., նոտրգիր) Ես՝ մեղապարտ* Սարգիս *վարդապետս ըստացայ զայս Քարոզգիրքս ինձ յիշ[ատ]ակ եւ իմ ծնօղ[ա]ցս: Ով որ ընթեռնու, յիշօղ լինի. ամէն:*

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *6ա սեւ թանաքով բոլորակ՝* «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ / ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ»*:*

ՆՇՈՒՄ՝ *Ա. կազմաստառին սոսնձած թղթին՝ «Նորին վեհափառութեան տեառն-տեառն Գէորգայ Դ.ի երկնապարգեւ հայրապետի եւ պաշտպանի հայկեան մատենագրութեան նուէր ի խոնարհ ծառայէ Համազասպ քահանայէ Տէր-Աւետիքեանց, N 14-9. 14 Սեպտեմբերի 1880 ամի, ի Շուշի», նոյն տեղում՝ «696, 3525», «Պկէ. 1419 Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս», պհպ. Աա՝ «3525»:*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *պհպ. Գա՝ «ծառայ, մաղտեսի, Պապիկ, Աղամջան» (բազմիցս), պհպ. Գբ՝ «եե մեղվ հ հայցհ հ», 1ա «ցթագուհին ///նուն ակացն մաս աջոյն եւ հինս /// ձախոյն եւ հրեաց», 2ա՝ «ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի» (7 անգամ), «եւ լուաւ ինձ Տէր վ փրկեաց» (3 անգամ), «վասն զի լոյս են հրամանք ի վերայ երկրիս ԱԱ Ավազանգեայ օտա տարէրարց ոչ ի կամաց առն Աստուծոյ կամաց ի նեղութիւն իմում իբե, կամաց առն այլ այ ծնան կամաց առն կամմաց առն», 2բ՝ «Ի կարին», 6ա՝ «Քարոզգիրքս իմս է», 472ա «վնասէ եւ ///ութիւն»:*

ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *պհպ. Գա՝ տերեւներով 2 ճիւղ, պհպ. Գբ՝ տերեւներով 2 ճիւղ, 5 թռչուն, 244բ՝ թռչնագիր «Ի»:*


3526
ԺՈՂՈՎԱԾՈՅ

Ռճժթ. – 1670

ԳՐԻՉ՝ Միխայէլ: ՍՏԱՅՈՂ՝ խոջայ Բէյռոն, Շէրմազան:

ԹԵՐԹ՝ 229. չգրուած՝ 225բ, 226բ: ՊՐԱԿ՝ Ա.-Ի×12 (Ա 11, Ը 10, Թ, Ի 8): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19×13: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (14,5×8-8,5): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 162բ): ՏՈՂ՝ 25: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դռնակով. միջուկը՝ տախտակ. աստառը՝ ծաղկազարդ կտաւ:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – ճակատազարդ՝ 1ա: Լուսացազարդ՝ բուսական, թռչուն: Ձարդագիր՝ հանգուցագիր, թռչնագիր: Գոյներ՝ կարմիր, կանաչ, վարդագոյն, սեւ, ոսկի:



Նմուշ 162բ

Վիճակ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, Ա. փեղկի կենտրոնում, մէջքի վր. եւ ստ. մասերում թափուած, Յական կապիչներն ու գամերն ընկած. գրեթէ բոլոր թերթերին խոնաւութեան հետեր, թ. 125-30, 210-25՝ գրադաշտը խոնաւութեան եւ թանաքի թթուայնութեան հետեւանքով գունափոխ, տառերը արտացոլուած հակառակ երեսներին. թ. 1-9, 12-73 ստ. լս-ին ցեցի անցքեր, թ. 1՝ մգացած, 10ա, 23բ, 30բ-1ա, 46բ-7ա, 59բ, 209բ, 228բ՝ թանաքի հետեր, 15բ, 101բ՝ լուսանցազարդի թանաքը լղոզուած, թ. 94՝ արտ. լս-ը վերից վար կտրած, թ. 205՝ անկիւնը կտրուած, թ. 226՝ 4,5 սմ ընդլայնակի կտրուած, լուսանցակողերը՝ սեւացած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-190բ* [Քարոզք]

1. *1ա-183ա* [Քարոզք Ղուկասու Լոռեցւոյ]

Տե՛ս ձեռ. 746, 1ա-236բ: ա/1ա-7բ: բ/8ա-15ա: գ/15բ-23բ: դ/23բ-41բ: ե-զ/չիք: է/41բ-57ա: ը/57ա-73բ: թ-ժ/չիք: ժբ/157ա-67ա: ժգ/73բ-93բ: ժդ/93բ-101բ (սկ. տարբեր՝ եւ զի ըստ պտուղ բարի է, որ ասէ Պղատոնի հոգին...): ժե/106բ-15ա:

Ունի՝

ա. *101բ-6բ* Քարոզ ի բան Օրինացն, որ ասէ՝ Պատուեա՛ զհայր fո եւ զմայր, զի եզ բարի լինիցի: Շնորհաբաշխ Տէ՛ր Յիսուս, օգնեա՛ ինձ — *եւ պարտ է գիտել, զի Դ. բան զաւակացն ծնօղին պարտական է... պարտ է հատուցանել զպարտսն եւ ազատ մնալ ի պարտուց մեղացն յամենայնէ:*

բ. *142բ-57ա* Քարոզ ի բան Սողոմոնի, որ ասէ՝ Լաւ է օր մահուանն, քանց զօր ծնընդեանն մարդոյ — *եւ պարտ է գիտել, զի հեթանոսք զօր ծննդեանն լաւ համարին... հանգուսցէ բարի աշխատութեանց եւ հոգեւոր մշակութեանց յերկնից արքայութեան:*

գ. *167ա-76ա* Քարոզ ի բանն Սողոմոնի, որ ասէ՝ Յ[իշ]եա՛ զԱրարիչն fո յատուր մանկութեան fո եւ գնա՛յ դու ի ճանապարհս fո արդարութեան՝ մինչեւ եկեալ իցեն աւուրք չարութեան, յորս ասիցեն, ոչ են կամք իմ դոսա: Պարտ է ուսանիլ եւ կատարել — *Աստն իմաստունքն, թէ Դ. բան առանց մեր կամաց լինի... այլ չարչարի մարմնով զարդարանաց հոգւով:*

դ. *176ա-83ա* Քարոզ ի բան Սողոմոնի, որ ասէ՝ Լաւ է կոյր աչօք, քան զկոյր մտօք, զի կոյրն աչօք ուսանի զերդեւեկ ճանապարհին, իսկ կոյրն մտօք ճանապազ մոլար ընթանայ եւ աչօք ոչ տեսանի — *Ասէ իմաստունն եւ անյաղթ փիլիսոփայն Դաւիթ, թէ իմաստութիւն... զի երկրաւոր փառաց ցանկացան, եւ չէին արժանի, որոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած... եւ յանտրտում ուրախութենէ:*

Տե՛ս էլ. Յարութիւնեան, Ղուկաս Լոռեցին եւ նրա քարոզները, Բանբեր Մատենադարանի, հտ. 10, Երեւան, 1971, էջ 213-236:

2. *183ա-90բ* [Գրիգորի Տաթեւացւոյ] Յայլմէ քարոզ Մեծի ուրբաթի սոմ, ի բան առաքելոյն՝ Կտակ յետ մահուն հաստատուն է — *Սովորութիւն է մարդկան, յորժամ մեռանի ոք ի յայլ տեղիս... ողորմութեան եւ խոստովանութեան, եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս. ամէն (Ձմերան, ՃԻԹ):*

Բ. *115ա-9ա* Ի հարցումն սուրբ Աստուածածնին առ հրեշտակապետն Գաբրիէլ՝ վասն մարդկան, թէ որպէ՛ս են փառն արդարոց եւ որպէ՛ս են տանջանք մեղաւորաց կամ զի՛նչ առնելոց են ի Քրիստոսէ — *Յարուցեալ Կոյսն երկրպագեաց Գաբրիէլ հրեշտակապետին... եւ ապա ըստ գործոց իւրեանց տանջեսցին:*

Գ. *119ա-24ա* Տեսիլ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին՝ վասն հոգւոց մեղաւորաց եւ արդարոցն եւ հարցումն ի հրեշտակէն — *Յաւուր միում շրջէր յանապատին սուրբ Լուսաւորիչն Գրիգորիոս... զգրախառն եւ զանազան յուրախութիւնն, ընդ որս եւ մեք արժանի լիցուք փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին յաւիտեանս. ամէն:*

Դ. *124ա-31ա* Պատմութիւն վասն կիրակ[ի] առուրն, զոր իջեալ ի յերկնից գիրս այս ի քաղաքն Հռոմ մեծ առաքելոցն, որ անդ է գերեզմանք նոցա՝ Պետրոսի եւ Պօղոսի — *Ես՝ պապս, որ ի Հռոմ քաղաքս Պետրոսի եւ Պօղոսի... բազմացուցանելով ի տան Հօր իմոյ, եւ մեք քո բանաւոր հօտս հաւատացաք բանի քո, Քրիստո՛ս Աստուած:*

Ե. *131ա-42բ* Վասն քահանայի միոջ, որ հետ օսմանցոց շխերիրն եւ շրներին ի քաղաքին Խարբերդոյ, թէ զինչ պատճառաւ դիմադարձեր են ի վերայ հաւատոցն Քրիստոնէից եւ որպէս յաղթէր է տէր եղիայն շխերին շնորհօք Քրիստոսի — *Եւ ընդ աւրհնութեանս ծանուցումն լիցի ձեզ... Մելքիսէթ վարդապետին եւ Յոհաննէս վարդապետին: Սոցա աւրհնութիւնն ընդ ձեզ եղիցի. ամէն:*

Տե՛ս Պատմութիւն եղիա քահանայի (ԺՋ. դա՞ր). Առտապուած «Արարատ» ամսագրից, Հրաչեայ Աճառեան, Վաղարշապատ, 1908, 56 էջ: Վերաբերատ.՝ Արարատի ժառանգութիւնը. Թ. «Արարատ»ի բնագիրները, հտ. Բ., հրատ. պատրաստեց Ս. Նահապետեան, դասակարգումը, խմբ. եւ առաջաբանը Գէորգ Տէր-Վարդանեանի, Ս. Էջմիածին, 2017, էջ 409-433:

Զ. *190բ-201բ* Թուղթ սիրոյ եւ միաբ[անութեան մեծին Կոս]տանդիանոսի եւ սուրբ պապուն Սեղբեստրոսի եւ Տրդատայ Հայոց արքայի եւ սուրբ Լուսաւորչին Գրիգորի: Ագաթանգեղ[եայ] Պատմութենէն: Աւգնեա՛, Տէ՛ր Յիսուս — *Կամօք եւ կարողութեամբ համագոյ Սուրբ Երրորդութեան...այս է կտակ կայսերական Աստուծով հաստատուն... ի ձեռն աւետնադպրին հայոց արքային մեծիմաստի Ագաթանգեղոս ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն: Հայր մեր:*

Տե՛ս Դաշանց թուղթ, Վենետիկ, 1695:

է. *202ա-23ա* Պատմութիւն եւ խօսք Խիկարայ իմաստասիրի, զոր պարտ է իմանալ եւ ի միտ առնուլ ամենայն մարդոյ վասն շահի եւ օգտութեան

Տե՛ս ձեռ. 464, 40ա-56ա: ա/202աբ: բ/203ա-14բ (ունի խորագիր՝ Խրատ Խիկարայ, զոր ասաց Նաթանայ քրւէր որդւոյն իւրոյ): գ/215ա-21բ: դ/221բ-3ա:

Տե՛ս Պատմութիւն եւ խրատք Խիկարայ իմաստնոյ, Երեւան, 1969, ձեռ. B4, էջ 29:

Ը. *224ա-5ա* [Տեսիլ Յովհաննու Գառնեցւոյ] – *Ասէ սուրբ վարդապետն մեր Յոհաննէս Գառնեցին, թէ ի թուականիս մերոյ ի Ո. եւ ՀԱ. (1212) ամին... եւ բարի վարուք հանգեան ի Քրիստոս, ի փառս Քրիստոսի՝ Աստուծոյ մերոյ:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

7բ Սէր գերազանց, որ լուսաւորեցէր զարարածս քո, Քրիստո՛ս Աստուած, լուսաւորեա՛ զհոգի ստացօղի գրոցս խօճայ (տեղը բաց, չգրած):

15ա Տէ՛ր Աստուած, փրկեսցէ զամենայն հաւատացեալս անուան իւրոյ, եւս առաւել ստացօղ գրոցս խօճայ (տեղը բաց, չգրած):

Ծնթ. Նման չլրացուած յիշատակարաններ կան նաեւ 23բ, 41բ, 57ա, 93բ (անունը ջնջած), 101բ (անունը ջնջած), 119ա, 124ա, 131ա, 157ա, 167ա (ջնջած), 176ա, 183ա էջերում:

73բ Որ եւ արժանի արասցէ զհոգի ստացողի գրոցս:

106բ Որ ողորմի Քրիստոս Աստուած ստացօղին սուրբ գ[ր]ոցս Շէրմազանիկ:

223բ Արդ, յիշեցէ՛ք ի Քրիստոս զստացօղ տառիս զԲէօռն *եւ զկողակիցն իւր (2,5 տող բաց, չգրած) եւ զամենայն արեան մերձաւորսն յիշեցէ՛ք եւ Աստուած ողորմի՛ ասացէք. ամէն: Արդ, եա՝ /// (տեղը բաց),* զՔարոզգիրքս *եւ (2-3 բառի տեղ բաց թողած) գրվեցաւ ձեռամբ* Միխայէլի, *ամսեանն Յունվարի Ի.-ում (20), թուին հազար ձԺԹ.ին (1670):*

225ա Յորոց աղօթիւք եւ բարեխօսութեամբ արժանի արասցէ զամենայն հաւատացեալ քրիստոնէայս, եւս առաւել ստացօղ սուրբ գրոցս Խօջայ Բէօհն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *229ա (1713 թ-ից յետոյ, նոտրգիր) Առաջի մահտարին, որ եղեւ թվին ՌՃԼԲ. (1683),* տէր Խաչատուրն, *որ առ Աստուած փոխեցաւ թվի ՌՃԽԲ. (1693), Ապրելի Ա.,* տէր Մովսէսն, *որ քահանայ օրհնեցին Ապրելի Է. թվին ՌՃԽԷ.(1698),* Խաչատուրն, *որ ծնաւ Սեքտեմբերի ԺԲ., ՌՃԽԶ. (1697) թվին,* Նիկօ[ղ]ոսն, *որ ծնաւ ղվինօբիս թվի ԺԵ. ՌՃԾԹ. (1704) թվին,* Օվսէփն, *որ ծնաւ Մարտի Զ. ՌՃԿ. (1711) թվին,* Դաւիթն, *որ ծնաւ հոգտեմբե[ր]ի ԻՀ., ՌՃԿԲ. (1713) թվին: Մեր դարբասն, որ շինեցինք մարիամօթի ԺԵ., ՌՃԾՀ. (1709) թվին:*

2. *41բ (1738 թ., նոտրգիր) Ի ստի (՞)* տէր Ն[իկո]ղոսի *խուցն է կամ թվին ՌՃՁԷ. (1738):*

3. *227ա (1788 թ., շղագիր)* Աստուծով *թիվ ՌՄԼԷ. (1788): Յունվարի ԺՀ. (18), օրն երիքշաբթէ, կէսօրին տէր* Օսէփ *առ Աստուած փուխէցաւ: Աստուած իր մեղաց թուղութին պաքիվիցէ. ամէն:*

4. *226ա (ԺՀ. դ., նոտրգիր) Էս գիրս տէր* Նիկողոսին *է:*

ՆՇՈՒՄ՝ *Ա. փեղկի կենտրոնին սոսնձած թղթին՝ «97», մէջքին սոսնձած վարդագոյն թղթին՝ «/// Միքայել/// ուր»:*

ԳՐԶԱՓՈՐՁ՝ *46բ՝ «բագդ», 47բ՝ «բագդ», 53բ՝ «Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ ոչ ոք ել: Տէրունական պատվէրըն լօ պահեցի»,65բ՝ «ես մեղաւոր, ես աս ե», 126բ՝ երկրաչափական պատկեր,133բ՝ «ես էի աղտ ագգէն, վա՛յ, ավա՛խ», 209բ-10ա՝ տառեր՝ հդբ: Վրացերէն, ԺՀ.-ԺԹ. դդ. – 47բ* ჰგა კ ლასანბო՝ *Հգա կ լասանբո (իմաստ չունի): 48բ* მნიოთატ *Մնիոթատ,* ქ. ღყაზზ՝ *†. ղղ'ազգ, Ზ Ბეცუ՞ զ բեցուշ, Ზ ჯამნ կամ ბ ჯամნ զ ջամն կամ խ ջամն,* ჯ ჯ ჯ ჯ՝ *ջ ջ ջ ջ,* ქ ქ. ავღიმე: კუმელი ††.՝ *Ավղիմե. կումելի (իմաստ չունեն): 52բ* ქ. ესე წიგნი *[մի ուրիշը ջնջել է]՝ †. այս գիրքը [մի ուրիշը ջնջել է]: 115բ-116ա* ქ. ღმერთო მამეცი (!) სამოთხე სამარადის ხეჩატორასა შენი ჯირიმე՝ *†. Աստուած տուր ինձ դրախտ յաւիտենական խաչատուրի խնդրեմ քեզ 116բ* ქ. ესე წიგნი ტაერ (!) მოსესა შვილი ტერ ნიკოდოსთა *†. այս գիրք տէր (!) Մովսիսի է որդի տէր Նիկոդոսեանց 137բ* ქ. ის ტორაცვ ხეჩატაურას *†. այն տիրացու Խաչատուրի 173բ* ქ ესე წიგნი ხეჩატურასია ღ (მერ)თმან იცის՝ *†. այս գիրք Խաչատրի է Աստուած գիտէ: 193բ* ქ თქვენიჭირიმე თვენა თვით მათ ცია თვით თვენ՝ *†. խնդրեմ ձեզ: 195բ* ქ ესე წიგნ *†. այս գիրք: 197բ* სენის *(՞): 206բ* კვარდუ ჭარი ჯ ჯ ვიც წაივ՝ *կվարդու ճարի ջ ջ վից ծախվ (իմաստ չունեն): 219բ* შენის შვილის შე ხარ՝ *քո որդւոյ դու ես:*

3527
ԺՈՂՈՎԱԾՈՅ

(բաղկացած 3 ձեռագրից)

ԹԵՐԹ՝ 162: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դռնակով եւ զոյգ կապիչով. միջուկը՝ տախտակ. աստառը՝ կապոյտ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր:


ՎԻՃԱԿ՝ 2 գամն ընկած, կազմի կաշին մաշուած, դռնակը Բ. փեղկի վերին մասից անջատ, կապիչներից մէկը վնասուած, դռնակի աստառը անջատ:

ՆՇՈՒՄ՝ *2ա՝ «ժե., Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս», «704/3527»:*

ՁԵՌԱԳԻՐ Ա.

ԺԷ. դար

ԹԵՐԹ՝ 31 (թ. 1-31). չգրուած՝ 2ա, 20ա-2բ, 27բ, 29բ: ՊՐԱԿ՝ 2+1-3×12 (2՝ 8, 3՝ 9): ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ թագով պսակուած զինանշան, մէջը կանգնած առջ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18×13,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (14×10): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 18բ): ՏՈՂ՝ 33:



Նմուշ 18բ

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Ձարդագիր՝ թոչնագիր (ուրուագծային), թոչուն-ձուկ՝ 5ա: Գոյներ՝ կարմիր, վարդագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. խոնաւութիւնից գրադաշտը գունափոխուած-մգացած, տեղ-տեղ թանաքաջրի, թ. 20, 22՝ թանաքի հետքեր, թ. 1-2 հիմիից թուլացած, ընդմէջ թ. 21-2բի 1, 31-2բի 2 չգրուած թերթ կտրած-հանած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *3ա-19բ* [Քարոզք Գրիգորի Տաթեւացւոյ]

1. *3ա-5ա* Նորին քարոզ վասն Պահոց, այլեւ վասն Առաջաւորաց, ի բանն Յովնանու՝ Ահա Գ. աւուրք, եւ ոչ եւս իցէ Նինուէ [*Յովն. 3, 4*] – *վասն Պահոց նախ գիտելի է, զի մարդն հոգի է եւ մարմին... տօնակից զամենայն հաւատացեալս եւ զչերմեռանդ տօնասէր հաւատով եւ յուսով ի սէրն Քրիստոսի. եւ նմա փառք (Ձմերան, ԻՁ.):*

2. *5ա-7ա* Նորին քարոզ վասն Դ.շաբթի եւ Ուրբաթի, ի բանն՝ Պահեմ երկիցս ի շաբաթի [*Ղուկ. 18, 12*] – *Պատճառ պահոցս, որպէս ասէ սուրբն Բարսեղ ի դրախտին օրինադրեցաւ... անտրտում ուրախութեանցն հաղորդս լինել ի Քրիստոս Յիսուս ի Տէրն մեր, ընդ որում (Ձմերան, ԻԷ.):*

3. *7ա-10ա* Նորին քարոզ մարտիրոսաց եւ սրբոյն Սարգսի. Բազում նեղութիւնք են արդարոց [Սղմ. 33, 20] – *[Ո]րք զաստուածպաշտութեան յուսոյն բուռն հարկանեն... ժողովեսցուք ի դասս աջակողմն, ի խրանս երանական ի Քրիստոս Յիսուս (Ձմերան, ԻԹ.):*

4. *10ա-3ա* Նորին շաբաթի աւուրն սրբոց Թարգմանչացն մերոց, քարոզ աշակերտաց եւ վարդապետաց, ի բանն՝ Սկիզբն իմաստութեան՝ երկիւղ Տեառն [Առակ 9, 20] – *[Ո]կիզբն ամենայն էից Աստուած է... որ է պատճառ իմաստութեան եւ գիտութեան ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր (Ձմերան, Լ.):*

5. *13ա-4բ* Նորին վասն կրկին աստիճանաց յեկեղեցիս, որ են վարդապետք եւ հայրապետք – *[Մ]քանչատես մարգարէն Զաքարիաս ցուցանէր զտեսիլ մարգարէութեան իւրոյ... մինչեւ հասեալ ի վերջին ժամանակս առ մեզ վերջացեալքս յամենայնի. եւ Քրիստոսի փառք (Ձմերան, ԼԱ.):*

6. *14բ-5ա* [Ն]որին Գրիգորի, թէ վասն է՞ր ի գիշերի տամք իշխանութիւն վարդապետաց – *[Ա]սեմք եթէ հնգետասան իմն պատճառաց. նախ ըստ Տեառն... այս թէ ընդէ՞ր ի գիշերի տամք իշխանութիւն վարդապետաց:*

ա. *15ա-6ա* Նորին վասն գաւազան տալոյ – *[Ի]սկ թէ զինչ նշանակէ գաւազանն, որ տամք ի ձեռս նոցա... տալ պատասխանի ամենայնի, որ խնդրիցէ զբանն վասն յուսոյն ձերոյ:*

բ. *16աբ* [Ն]որին վասն վարդապետ կոչմանց – *[Ա]յլ որ կոչի վարդապետ, այսինքն՝ ուսուցիչ կամ վարդ[ապետ]՝ վարուցն պետ... յաւելցի ունել իշխանութիւն ի վերայ ժ. քաղաքաց»: Այսքան առ այս (Ձմերան, ԼԳ.):*

7. *17ա-9բ* Յայլմէ վասն շաբաթի աւուրն սրբոյն Թէոդորոսի եւ այլոց, ի բանն առաքելոյ. Այնպէս ընթացարուք, զի հաս[անի]ց[իք] [Կորն. Թ. 24] – *[Մ]ովրութիւն է թագաւորաց, որ գնան յասպարէզն... կեանք յաւիտենական. եւ նմա եւ Հօր իւրում եւ Հոգւոյն Սրբոյ՝ փառք, պատիւ եւ իշխանութիւն (Ձմերան, ՀԱ.)*

Բ. *23ա-7ա* Տէր Առաքելի Սիւնեաց եպիսկոպոսի քարոզ Յարութեան, ի բան աւետարանին որ ասէ՝ Ահա շարժումն մեծ եղեւ [Մտթ. Ը. 24] – *Հիացեալ ընդ անհասութիւն դատաստանացն Աստուծոյ՝ ասէ Պօղոս... թէ ես եմ որքն ճշմարտութեան:*

Գ. *28աբ* [Հարցմունք եւ պատասխանիք վասն բնութեան Քրիստոսի] – *Հարցումն. Ընդէ՞ր ասաց Յիսուս վասն աւուրն այնմիկ՝ ոչ ոք գիտէ... Պատասխանի. Հերձուածողքն ասեն, թէ մարդկային բնութիւնն էր, որ ոչ գիտէր... եւ ընդ աջմէ Հօր նստո(աւ):*

Դ. *29ա* [Պատմութիւնք վասն մեղանչելոյ եւ խոստովանութեան] – *Որպէս ասեն, թէ եպիսկոպոս ոմն Անդրէաս անուն եւ կին ոմն ապաշխարող յոյժ անբիծ... պարտ է գործած մեղքդ խոստովանել:*

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆՔ, ԺԸ. դ., նոտրգիր

1. *1ա* [Ժամանակագրութիւն՝ ՃԸ. (659) – ՌՃՂԸ. (1749)] – *Թաթէոս առաքելո[յ]ն եւ Սանդրզտայ կուսին մարմինն ի հայոց թվականին ՃՀ.ին (659) գտվել է հրաշօւք եւ զարմանալի բանիւք /// (16-18 տող ջնջուած)... [ող]որմի ՌՃՂԸ. (1749):*

2. *1բ* Ժ. ընտորոգութիւն Արիստոտէլի – *Իսկ զաւրութիւն այս է՝ միտք, զգա՟նութիւն, երեւակայութիւն... արտաքոյ սոցայ ոչինչ է յեղիլոց էս:*

3. *2բ* [Վասն Սուրբ Աստուածածնի] – *Վարդապետք ասեն, թէ Սուրբ Աստուածածինն նման է ձկան... ի սուրբ Աստուածածնէնէ էր ուսեալ, այսպէս ասացին:*

4. *30ա-1բ* Վասն պատշաճաւորութեան ննիթոյ առլծեցեալ: Դաւանաբանութիւն Սրբոյն Աթանասի՝ արեւպիսկոպոսի Աղէքսանդրացւոյ – *Ով ոք կամի կեցուցեալ լինիլ նախ քան զամենայն... հաստատապէս իսկ հաւատացեալ իցէ, կեցուցեալ լինիլ ոչ կարիցէ:*

5. [Մանուկ]

ա. *1ա Սաղմոս է միայհամուռ,* ԲՌՁՃ. *(2600) տուն է...*

բ. *1ա Մարդ, որ մահացու չափ մեղք որ ունենայ...*

գ. *1բ Ջինչ Աստուծոյ բերանուն եւ աւրհնութիւնք ի սկըսբանէ...*

դ. *1բ Քան ըզգատաստանն է. օր յառաջ հուր գալու է...*

ե. *2բ Վարդապետք ասեն, թէ Ղուկաս աւետարանիչն ծանօթ էր Աստուածածնին...*


ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

2բ (1749 թ., նոտրգիր) Որ ի յետին ժամանակի գրեցի այս գիրս Դ.շաբթի, թվականիս մեր հայկազնի ՌՃՂԸ.ի (1749) եւ ի ամսենն մեր տոհմի՝ Աւգոստոսի ԺԵ.ի:

ՁԵՌԱԳԻՐ Բ.

ԺԷ. դար

ԹԵՐԹ՝ 108 (թ. 32-139): ՊՐԱԿ՝ Ա.-Թ×12: ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18×13,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (12,5×8,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 53բ): ՏՈՂ՝ 17:



Նմուշ 53բ

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – ձակատագրով՝ 34ա: Լուսանցագրով՝ բուսական: Ջարդագիր՝ հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, դեղին, վարդագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թ. 36-9՝ ստ. լս-ը 0,5 սմ-ով կարճ, թ. 39-42 ստ. լս.՝ ցեցի անցքեր, թ. 80 խոնաւութիւնից գրադաշտը գունափոխուած, թ. 128, 129՝ թանաքաջրի հետքեր, 130բ՝ մատնահետք, թ. 138՝ եզրահատուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

– *32ա-3բ* Յանկ գրոցս – Ա. Վասն քրիստոնէութեան... ՃԲ. Վասն Կաղանդի մտանելոյն օուրցն...ընդ Ադամա եւ ընդ Եվայի:

1. *34ա-6ա* Յաղագս շարական, թէ ով ասացեալ զնիւն եւ զնորն – *ՋՃննդեանն եւ զՏեառնընդառաջին Մովսէս Քերդաւղ է ոգեալ... երբեմն Անարգաբոյ եպիսկոպոս լիեալ:*

Ծնթ. Այս եւ յաջորդ 3 միաւորները ցանկում չկան:

2. *36ա-8ա* Անուանք սուրբ հրեշտակացն, որք հայցեն՝ արագ հասանեն – *Սուրբ Գաբրիէլ եւ Միքայէլ, դէմ ի յերկիր դնելով հայցեմ ի ձենջ... արդ, զանուն գրէ զիւր Քրիստոսի տեսակ եւ ամենայն բարեաց աւրինակ:*

3. *38ա-46ա* Թղթի առաջի կաթողիկոսի (նաեւ՝ վարդապետի, եպիսկոպոսի, փիլիսոփայի, աբեղայի, քահանայի եւ այլոց) – *Ընտրեալ յորովայնէ եւ կոչեցեալ ի Հոգոյն Սրբոյ...*

Ծնթ. Ունի հետեւեալ վերնագրերով գրառաջիներ. «Վարդապետի եպիսկոպոսի եւ կաթուղիկոսի», «Դարձեալ եպիսկոպոսի», «Նորին եպիսկոպոսի եւ վարդապետի», «Եպիսկոպոսի», «Փիլիսոփայի», «Աբեղայի», «Քահանայի», «Այլ ազգ», «Սարկաւագի», «Թագաւորի», «Իշխանի», «Հարպետի», «Դռագրի», «Միակեցի», «Տանուտողջն», «Իմաստուն մարդուն», «Ջինաւորի», «Եղբարց», «Կուսից հաւատաւորի», «Վարդապետի», «Կին մարդուն»:

4. *46ա-50ա* Ի Դաւթա մարգարէէ՝ Սակաւ ինչ տացուք պատճառս – *Ջի՞նչ է, որ ասէ Դաւիթ ի մեծասան սաղմոսին... յիշէ, որ լինի ժ. մինչեւ խ.աւրեա (40) ի տաճարն:*

5. ա. *50ա-2բ* Ա. Յաղագս Քրիստոնէութեան – *Արդ, քրիստոնէութեան սկիզբն եւ գլուխ մկըրտութիւն է... արդ, այս է առաջին գլուխ քրիստոնէութեան հաւատոյն:*

բ. *52բ-3բ* Բ. Յաղագս պսակի եւ խրատ ամուսնացեալ – *Եւ արդ, որք այսպէս սրբութեամբ անանին եւ լինին կտրիճ տղայն... արիւնն ամուսնութեամբ խառնեն, զոր եւ սրբոց հարանցն կանոնքն արգելուն:*

գ. *53բ-6ա* Գ. Դաւանութիւն Սրբոյն Աթանասի – *Որ ոք կամեսցի փրկեալ լինել, յառաջ քան զամենայն, պիտոյ է... փրկեալ լինել ոչ կարասցէ:*

դ. *56ա-62բ* Դ. Դաւանութիւն տեառն Ներսէսի հայոց կաթուղիկոսէ – *Խոստովանիմք որպէս ուսաք ի հարցն սրբոց... ըստ աստուածութեան ընդ Հաւր արարիչ, եւ Քրիստոսի փառք յաւիտեան:*

ե. *62բ-5ա* Ե. Ի բան սրբոյ Աւետարանին, որ ասէ. Հա՛յր, գոհանամ զքէն, զի յամենայն ժամ լսել ինձ [Յովհ. ԺԱ. 41] – *Ամաչեսցէ Թէոդորիտոն եւ նմանք նոցա հերձուածողքն, որ ասեն... յերջանիկն Իսահակայ, որոց աղաւթիւքն:*

զ. *65ա-8բ* Զ. [Հարցումն տաճկաց. *ցանկից*] – *Թագաւորն տաճկաց ասէ. Ընդէ՞ր ինքն Աստուած իջանէր յերկիր... Պատասխանի Տիմոթէայ Անդիոքու հայրապետ[ի]. եւ ընդէ՞ր ինքն Աստուած իջանէր ի մորենին... եւ յամաւթ եղեւ տաճկաց թագաւորն:*

է. *68բ-9ա* Է. Բանիւ ընդ[դ]իմադրականաւ առ մահ-

մետականին, որ եւ կարծիս տան, թէեւ գիտեն զԱստուած եւ զաւէնս նոցա — *Արդ, մեք՝ երիս Աստուածս եւ զատեալս ի միմեանց ոչ ասեմք... ի քէնէ մարդ եղեւ:*

ը. *69ա-90բ* Ը. Յաղագս երկնային շարժմանն՝ նուաստ Յոհաննիսի եզը[ն]կայեցոյ շարադրեալ յիմաստնոց բանից՝ ի խնդրոյ բարեպաշտ եւ երկի[ւ]ղածաղդ պատանոյն պարոն Վախթանկայ

Տե՛ս ձեռ. 529, 149ա-66բ: Նախ./69ա-71բ: ա/71բ-3բ: բ/73բ-5ա: գ/75ա-6բ: դ/76բ-7ա: ե/77ա-8ա: զ/78ա-9ա: է/79ա-80բ: ը/80բ-1բ: թ/81բ-2բ: ժ/82բ-5ա: ժա/85ա-6ա: ժբ/86ա: ժգ/86աբ (խորագիրն այլ՝ Թէ ուստի լինի այսքիկ ի յաւդն եւ որպէս): ժդ/86բ: ժե/86բ-7ա: ժզ/87ա: ժէ/87աբ: ժը/87բ-8ա: ժթ/88աբ: ի/88բ: իա/88բ-9ա: իբ/89ա-90բ: իգ/90բ:

Ծնթ. Ունի ետագայի լրացումներ եւ ուղղումներ: Տե՛ս Յովհաննէս Երզնկացի, Վիպասանութիւն զերկնային մարմնոց շարժմանէ, Նոր Նախիջեւան, 1792, Բ. հրատ.՝ Կալկաթա, 1846: Նաեւ Յովհաննէս Երզնկացի, Յաղագս երկնային շարժմանն, գրաբար-անգլերէն, թարգմ. Ա. Թօփչեանի, Երեւան, 2001:

թ. *90բ-6բ* ԼԱ. Հարցումն ուսումնասիրաց, պատասխանի սրբոց վարդապետաց — *Հարցումն. Քանի՞ գործք են առաջին աւուրն: Պատասխանի. Արար Աստուած զհրեղէն երկինս... այլազգիքն ասեն, թէ Ռ. եւ մի (1001) խաւսեցաւ:*

ժ. *96բ-7ա* ԼԲ. Հարցումն Բարսղի եւ պատասխանի Գրիգորի Աստուածաբանի — *Հարցումն. Յորո՞յ վերա հաստատեալ է երկիր: Պատասխանի. երկիր հաստատեալ է ի վերայ թանձր հողմոյ... ԺԲ. (12) ներբանք են եւ մի ներբա[ն] ԼՋ. գարի են:*

ժա. *97աբ* ԼԳ. Թիւմ ճերձնաւածողաց Ոռիտանի եւ եաագրի եւ Դիդիմոսի զորն — *Նախագոյութիւն այս է հոգւոց գրելով... զՔրիստոս թագաւոր միշտ չոր[ը]որդութիւն երկիր պագանէ:*

ժբ. *97բ* ԼԴ. Այլ բան վասն Յովհաննու — *Արդ, յետ Մկրտութենէն Յիսուսի էր Յովհաննէս ի Սաղիմ... զոր հարք նոցա կերան յանապատին:*

ժգ. *97բ-8բ* ԼԵ. Վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի — *Եւ Յիսուս զգեցեալ էր հանդերձ կարմիր... որպէս զոսկի զամենայն կերակուր եւ զըմբելի:*

ժդ. *98բ* ԼԶ. [Վասն գրերոյն, ցանկից] — *Գրերն զոր յԱստուծոյ էառ Մեսրաւպ այս են... ամենայն աւետարանիչ տունքն՝ ՔՈԼԶ. (9636):*

ժե. *98բ-100ա* ԼԷ. [Վասն Հերովդի եւ մոգուցն, եւ Աստուծոյ խօսելոյն ընդ նախահարացն եւ Արիստոտելի բանի, *ցանկից*] — *Ասէ Հերաւդէս. Եւ ուստի՞ ունիք զվկայութիւնս, զոր դուք միայն գիտեք... 100ա [Ի]աւսեցաւ Աստուած ընդ Ադամա եւ ընդ Եւայի ե. անգամ... [Ա]րիստոտէլի ասացած՝ ցանգութիւն ի լեզուն է... հպարտութիւն ի բերան:*

ժզ. *100ա-2բ* ԼԸ.Կարգաւորութեան ցուցմանց աւրինութիւնաբեր ցուցակին՝ թէ ով ոք կամ ուստի եւ կամ յորում ժամանակի... եւ որոց հրամանաւ կամ կարգաւ ճառեցին — *Երանելոյն Մուսէսի Խորենացոյ Թարգմանչի, որ էր գրիչ սրբոյն Սահակա հայրապետին... յորժամ կամիցիս գիտել զցուցակ Մաշտոցին:*

ժէ. *102բ-3ա* ԼԹ. Վասն Բժ. (12) առաքելոցն — *Պետրոս, եւ անուն կնոջն նորա Սոֆի... կին նորա Թէոպէստիայ եւ որդի՝ Միկալէոսի:*

ժը. *103ա-4բ* Խ. Այլուստ է բանս — *Արդ, գիտելի է, զի յամենայն իրողութիւնս զչորս զայսոսիկ պարտի խնդրել զգլուխս... այսպէս եւ դիւաց հարսանիքն:*

— *104բ-5ա* Այղուստ բան — *Մարմինք մեր, աւդեալ ի Դ. տարերացդ, ունին Դ. պակասութիւն... զոր Փրկիչն եցոյց նախքան զյարութիւն:*

ժթ. *105ա-109բ* ԽԱ. Այս են մեղք գլխաւոր. եւ որ կոչի մահուչափ՝ եւ են եւթն — *Հպարտութիւն, նախանձն, բարկութիւն... յուսահատութիւն հանդերձեալ փառացն եւ կամ թողութեան:*

ի. *109բ-10ա* ԽԲ. Ըզդրբա բանիցն է — *Յղասցի Աստիճն եւ Նէեսայն... ուր ցրուեաց զտեղի մարմնոցն ի ժամանակի ի բարձունս վերանայ:*

իա. *110ա-2բ* ԽԳ. Վասն աստիճանաց եկեղեցոյ, զոր Տէր մեր Յիսուս Քրիստոս կարգեաց ի վերայ սուրբ առաքելոց — *Քրիստոս զեկեղեց[ակ]ան աստիճանս որպէս եցոյց... Դ. կողմ աշխարհիս ձգելոց է թագաւորութիւնն Քրիստոսի:*

իբ. *113ա-6ա* ԽԴ. Յաղագս ժողովոյն սուրբ, որ եղէն ի Նիկիայ եւ յայլսն — *Ջկնի երեք հարիւր եւ ԺԸ. (315) ամի Յարութեանն Տեառն եղեւ ժողովն ի Նիկիայ... եւ նզովեցին զոչ պատուաւոն պատկերաց:*

իգ. *116ա-37ա* [Բանիւ տոմարականիւ եւ աստղագուշականիւ]

1. *116ա-21ա* ԽԵ. [Վասն ցուցակին, ԺԲ. կենդանակերպից. *ցանկից*] — *Յորժամ խոյն լինի տանուտէր... գինի շատ լինի, բայց ոչ հաւասար:*

2. *121ա-3բ* ԽԶ. [Վասն ՀԲ. (72) ազանցն եւ դարագլխացն. ցանկից] — *Ազգահամարք ընդ ամենայն տիեզերս ՀԲ. (72) են եւ լեզուքն են այսոքիկ... նոյնպէս եւ ամսոցն աւուրքն զնոյն գործեն:*

3. *123բ-4ա* ԽԷ. Վասն Նաւասարդմտին — *Թէ ի կիրակի հանդիպի, տարին բարի գայ... միրգ եւ գինի պակասի:*

— *124աբ* Վասն տաւնի Սրբոյ Խաչին — *Թէ ի կիրակին հանդիպի, տարին բարի լինի... առատանայ որոգայթի հեծելեաց եւ աղքատաց բարի:*

— *124բ-5բ* [Վասն ճարուածոց եգիպտոսի] — *Հարուածք, որ եղեն յեգիպտոս այս է... ՃՀԵ. (175) ամ ապրեցաւ, եւ աւրհնեալ է Աստուած յաւիտեանս. ամէն:*

Ծնթ. Վերջին 2 միաւորները ցանկում նշուած են իբրեւ ԽԷ. միաւորի մաս, եւ շարադրանքում էլ առանձին գլխաւորներ չունեն:

4. *125բ-9բ* ԽԸ. [Վասն ամացն Ադամա եւ նախահարցն եւ գօազաւմ ժողովոցն եւ սուրբ Լուսաւորչին եւ թոռանցն. *ցանկից*] – *Ադամ եկաց ամս ՋԼ. (930)... հետեւեցան յունաց, եւ այս մինչեւ ցայս վայր:*

5. *129բ-30ա* ԽԹ. Յորժամ աստղ ցողանա յերկնից – *Աստղ յարեւմտից յարեւելս ցոլանա ի վերայ երկրի, բարկութիւն նշանակէ... խաղաղութիւն ցուցանէ եւ բարութիւն:*

6. *130աբ* Վասն որոտալոյ. յորժամ գարուն որոտայ – *Յառաջի որոտն ի հիւսւսոյ լինի, աւրն՝ կիրակի, հաց՝ շատ... դառնութեամբ լի է տարին այն:*

7. *130բ-1ա* Ը. Յաղագս որոտմանց եւ շարժմանց – *Ի Յունվարի թէ շարժի, մահ նշանակէ... եթէ շարժի, բարի է եւ լաւ:*

– *131աբ* Յաղագս խաւարման Արեգական եւ Լուսնին – *ՅԱւգոստոսէն ի ԺԴ. (14) խաւարի Արեգակ... ոչ մի խաւարի Լուսին:*

– *131բ-3ա* Նշան խաւարման Լուսնին ի վերայ ամսոց – *Եթէ ի Յունվարի ամսեան Լուսինն խաւարի... եւ թագն արեւմտից բարկանայ ի վերայ մեծամեծաց իւրոց:*

8. *133ա-7ա* ԾԱ. Վասն Լուսնին եղջերին եւ բակ ունելոյն եւ խաւարման եւ շարժի եւ որոտման, զոր մարգարէին ՓՆեցին – *Յունվարի թէ Լուսին ղորդ լինի, տարին աղէկ լինի... ընդ ամենայն զոր խաւսեցաւ Աստուած՝ ՄԻՔ. (222):*

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, ԺԸ. դ., նոտրգիր

1. *137ա-8ա* Տաղ Ֆրիկայ է ասացեալ՝ Վասն կենաց բախտի – *Մարդուն որ տալեհն ու պուրճն ի քաղաքըն չէ ըզորդած... բայց ամէնն ի վերնէ գըրած (137ա ստ. լ.՝ Կուգես «Որ ապիզ կենաս»-ին գոյնն ասայ):*

2. *138բ-9բ* [Հարցմունք եւ պատասխանիք վասն] Աստուածայշու[ն]չ գրոց – *Հարց. Մ՛րք քանի են գիրք սուրբք Հին եւ Նոր կտակարանք: [Պատ. Հին] կտակարանքն ե. գիրք... բայց ի մեզաց ի շնորքն յայլ առնեն մարմնով:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

138ա Ջգծողս յիշեցէ՛ք ի Տէր:

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *37ա՝ «այա»,72ա՝ «եւ երկիրս երկու իրք է հող եւ ջուր, հուր եւ յօդ», 137բ ջնջած, 139ա լատինեբէն այբուբէնն՝ զուգահեռ հայերէն անուանումներով:*


ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *138ա՝ հրեշտակ:*

ՁԵՌԱԳԻՐ Գ.


ԺԷ. դար

ԳՐԻՉ՝ Անանուն Ա. (140ա), Անանուն Բ. (141ա-62ա):

ԹԵՐԹ՝ 23 (թ. 140-62): ՊՐԱԿ՝ 1-2×12 (1՝ 11): ՆԻՒԹ՝ թուղթ. լուսադրոշմով՝ զինանշան, մէջը երկու ոտի վրայ կանգնած թագակիր առիւծ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18×13,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն, կարմրով սահմանագծուած (15×11): ԳԻՐ՝ նոտրգիր՝ թ. 140ա (ամուլ՝ 140ա), նոտրգիր՝ թ. 141ա-62ա (ամուլ՝ 152ա): ՏՈՂ՝ 29:



Նմուշ 140ա



Նմուշ 152ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ընդմէջ թ. 139-40ի 1 չգրուած թերթ կտրած-հանած. թանաքի թթուայնութիւնից թ. 141-59ի գրադաշտը գունափոխուած, 162բ.ի երկրորդ սեան վերջին 19 տողը ջնջած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *140աբ* [Ն]որին Գրիգորի ֆառոզ վարդապետաց եւ եպիսկոպոսաց՝ ի բան առաքելոյն, որս եդ Աստուած յեկեղեցւոջ, այս են՝ նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ զմարգարէս, երրորդ՝ զվարդապետս – *Եկեալ տես[ուքեանս]՝ երիս իրս բացայայտէ մեզ... 140ա (շար.՝ այլ ձեռքով. Տե՛ս 140բ՝ յիշտ.) Անդիտաքոս կայսր, որ զերուսաղէմ... լռել պիտի, զի ակնն չարէ եւ մարդնն անդ էր:*

2. *141ա-5ա* Ողբ պիտանիք վասն մեռելոց ի սիրելեաց ի վերայ ազգականաց՝ ի Գրիգոր վարդապետէ – *Արդ, առան ի մէնջ սուրբքն եւ առ Աստուած գնացին... զհոգին յերկինս վեր առաքեն ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ:*

3. *145ա-50ա* Սրբոյն Յոհաննու Մանդակունեցոյ ասացեալ վասն չբամբասելոյ զհաճայս եւ զվարդապետս – *Մեք սգոյ եւ աղջամուղջ տրտմութեան դիզեալ ի վերայ... հանէ ի վերին քաղաքն յերուսաղէմ ի վայելչութիւն անանց բարութեանցն:*

4. *150ա-8ա* Կանոնական խրատ ընքաւրական եկեղեցոյ ամենայն Հայոց՝ ի Կիրակոս վարդապետէ Երզընկացոյ Աւետիք ասողէ, զեւագրեայ Լուծմանցն պարզողէ, զոր արարեալ ծաղկաքաղ յԱստուածաշունչ գրոց եւ կանոնաց առաքելոց եւ հայրապետաց եւ գրով առաքէր որեան կարէր զմերձաւորս բանիւ բերեանով իւրով եւ զհեռաւորս գրով, որպէս սովորութիւն է ամենայն սրբոց աստուածացելոց, որպէս ասէ առաջիկայս – *ՅԱստուածոյ ամենակալէն աւրհնութիւն եւ պահպանութիւն ի նուաստ կիրակոս վարդապետէ... բառնան ի ձէնջ ինչ ցաւսում, որ կայ. աւրհնեալ եղերո՛ւք ի շնորհաց Սուրբ Հոգոյն. ամէն:*

5. *158ա-62ա* Խրատ հոգեւոր՝ Յոհան[ն]էս վարդապետէ Պլուզէ – *Արար Աստուած զմարդն հոգի եւ մարմին... նա աշխարհս անցանէ, եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամէն:*

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, ԺԸ. դ., նոտրգիր

162բ (140աբ-ի շարունակողի ձեռքով) Խրատ. ամենայն մարդս զոր հարկ է ուսանիլ, զոր պատրաստ կենայ առ մարդիկ եւ առ Աստուած – *Առաքին այն է, զոր սուտ չի խաւսի... Աստուած յուսացի՛ր, եւ կատարէ Տէրն ի բարին:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

140բ Վա՛յ քեզ, Գրիգոր *էրէյք:*

Ծնթ. 140ա-ի գրչի ձեռով՝ ըստ տառաձեւերի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

140բ (1744 թ., նոտրգիր) Ա*յրդ, աւարտումն արարից այսմ ճառիս, որ է վկայութեամբ աջօք տեսեալ եւ ականջօք լըսեալ, որ ես՝ մեղաւորըս եւ անարժանս գրեցի թվին ՌՃԿԵ.ին (1716)**: Տէր Խաչատուր *որդի* Մատթէոս *գրեցի* ՌՃՂԳ.ին *(1744).* [յ]աւիտենից փա՛ռք, պատիւ, իշխանութիւն Հաւր, Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Ծնթ. ՌՃԿԵ.ն շրջանակի մէջ առնուած եւ ջնջած:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *28բ սեւ թանաքով ձուածիր՝* «ՏԷՐ ԳՐ/ԻԳՈՐ»:


ԳՐՉԱՓՈՐՁ՝ *162ա՝ «Տահնայ բանք այս է՝ խնդրեալն տէր Մարքարին», /// (19 տող ջնջած) այսմ գիրս, այժմ բաւ է գրեալ/// եաւիտեանս. ամե[ն], իաւիտենից փառք, Հա[յ]ր, Որդի. ամէ[ն]», Բ. կազմաստառին՝ կապգիր «Այս գիր»:*

3528
ԱԻԵՏԱՐԱՆ

ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ ՈՂԱ. – 1242

ԳՐԻՉ՝ Վարդան:

ԹԵՐԹ՝ 221+1 (կրկն.՝ 204): ՊՐԱԿ՝ Ա-Ջ*×8 (Ա, Բ, Թ, Ջ, Պ 10, Դ 7, Ծ, Կ 9, Յ 6, Ջ 5): ՆԻՒԹ՝ մագաղաթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18,5×14,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (15×11): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 138ա): ՏՈՂ՝ 21-26: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դռնակով. Ա. փեղկին վարդեակաձիւմբ 3ական գամեր եւ կապիչներ, կոստղապատ (Ա փեղկ՝ 36 կոստղ, Բ փեղկ՝ 114), Ա. փեղկին դրոշմազարդ ուղղանկիւն մետաղէ շրջանակ՝



Նմուշ 138ա


կենտրոնում բարձրաքանդակ խաչուած Քրիստոս՝ խաչի վերեւում փորագիր մակագրութիւն՝ «ՅՍՆԹՀ՝ Յիսուս Նազովրեցի՝ թագաւոր հրէից», հորիզոնական խաչաթեւերի եզրերին եւ խաչուած Քրիստոսի թեւերի ներքոյ երկաթագիր՝ «ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ», շրջանակի վրայ հետեւեալ փորագիր մակագրութիւնը՝ «ՅԻՇԱՏԱԿ Է ՍՈՒՐԲ ԽԱՉԵԼՈՒԹ[ԻՒ]ՆՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՆԻԱՉԻՆ, ՀՕՐՆ ՍԱՀ/ԱԿԻՆ, ՄԱՒՐՆ ՌՒՄԷՆԻՆ, ԵՂԲԱՒՐՆ ԷՅՎԱԶԻՆ, Ք/ՈՒՐՈՁՆ ՄԱՐԳԱՐՏԻՆ, [ՀԱՒ]ՈՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԻ/Ն ՀՈԳՈՅՆ, Ի ՎԵՐԱՅ ՍՈՒՐԲ ԿԱՐՄԻՐ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ, /ԹՎԻՆ ՌՃԻԳ. (1674), ՅՈՒՆՎԱՐ[Ի] Բ.», խաչի ներեւում՝ Ադամի գանգը՝ բազկոսկորների մէջ առնուած, շրջանակի եզրերով լուսապսակների մէջ առնուած 27 դէմք (մէկն ընկած). միջուկը՝ տախտակ. աստառը կապոյտ մետաքս (Ա, Բ փեղկ), շերտաւոր կտաւ (դռնակը):

* Ծնթ. Պրականիշները՝ այբուբենի տառերի կարգով՝ Ի=ԺԱ, Լ=ԺԲ... Ջ=ԻԷ: Պրականամարներ ունի նաեւ վերին աջ անկիւնում:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Անուանաթերթ Մարկոսի՝ ՝106ա, կիսախորան՝ 1ա, 66ա, 174ա: Լուսանցազարդ՝ բուսական, խաչ (1ա, 174ա): Ձարդագիր՝ հանգուցագիր, կենդանագիր, մարդ: Գոյներ՝ կարմիր:

Տե՛ս Ա. Գէորգեան, Անանուն հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն Թ-ԺԷ. դդ., Գահիրէ, 2005, էջ 48, Հմ 46:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Ճառի՝ անորոշ: ԺԱ. դ.: Ա+Բ՝ ստացուած մէկ թերթի ընդերկայնակի եւ ընդլայնակի եզրահատումով (բնագիրը վնասուած): Մագաղաթ 18×13 (1 տող ընդմէջ թ. 217-8ի). երկսիւն (16,3×13). ուղղագիծ երկաթագիր (նմուշ՝ Բա). տող՝



Նմուշ Բա

15, 18: Կարդալ՝ Աա1 «///աւ ընդ որս երեւեալն ///ղա բերեալ բարու[թեա]մբ եւ բիւր բարութե///... /// այլ յայլ իմն աւրիւ ///յր որով եկաբարսն /// ուղղէր աղաչեմ ///», Աա2 «///յան հաւատիցն, որ եւ Հրեաստանիւ են. մեծ, ուր ես... ցուցանել գառինս գայլս զոմանս յարձակեալ վերայ ///», Աբ1 «/// պատարագն որպէս զի յաւժարութեամբըն գալցին նոքա... եւ ոչ ի վեր ինչ, հան զնոսա, որ ընդու///», Աբ2 «/// եկեալ հանգեացըն /// եւ որում այպիսի /// եւ մարտ առաջիկայ... եւ աշխատեին ա /// պէս միշտ սովոր է ///նել յետ սփոփանա///», Բա1 «///եացն վասն զի աւր///թիւն բազում անգ[ամ] ողորմածութիւն... /// որպէս զի ասիցէ /// ե-

թէ ի գալն իմ ում ///», Բա2 «///իկ աստ զՔրիստոս եւ զՀոգին յառաջ բեր... ջանակից ինձ եղերում ասէ յաղագս վասն ///», Բբ1 «///իկ յայսմանէ եւ յայն իմն կազմէ եւ ցուցանէ... եւ պաշտաւն իմ ասէ, որ յերուսաղէմ հաճոյ եւ ///», Բբ2 «///թենէ տան եւ կամ ///ռախութենէ եւ կամ ///... տեսից զնեզ հան/// ամենայն հե///»:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմը մաշուած, վրան ճաթեր եւ ճեռծուածմներ, Ա. փեղկին փակցուած մետաղէ շրջանակի վրայ եղած երեմմնի Տիրամայր եւ Յովհաննէսի պատկերները եւ վերին աջ անկիւնի լուսապսակով դէմմն ընկած, կապիչներն Ի. դարի վերջի. խոնաւութիւնից եւ գործածութիւնից լուսանցակողերը, պտուկ-պիպ-ների եզրերը (վր., ստ. լսները՝ առաւել) եւ մագաղաթը աղտոտուած, թերթերը ձեւափոխուած, գիրը տեղ-տեղ թափուած, դժուարընթեռնելի, տնաճամարները գրուած երկգիծ (երեմմն եռագիծ) շրջանակի մէջ, թ. 93՝ պատռուածմը մագաղաթէ ֆուղով, թ. 118՝ վերեւից ձախ կողմում կապոյտ թելով կարուած, թ. 119՝ վր. եւ ստ. ձախ անկիւններից ստ. մասում հիմմից անջատ, թ. 183՝ վր. աջ անկիւնից պոկուած-ընկած, թ. 182՝ վրան բնական անցք, թ. 199՝ ձախ լս-ի ստ. հատուածից, թ. 199՝ ներքին լս-ին մօտ միչից պատռուած, ընդմէջ թ. 29-30ի 1 թերթ ընկած. էջանշան թելեր՝ կարմիր, կապոյտ, դեղին, սեւ՝ թ. 25, 31, 51, 56, 64, 66, 70, 104, 106, 113, 132, 143, 183, 207, 217. կրկնագիր թերթեր՝ թ. 40, 52, 58, 202, 203, 208. ձեռագրի հիւսածոյ կապիչի մնացորդը թղթի վրայ ամրացուած դրած ձեռ-ի մէջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *1ա-65բ* Աւետարան Մատթէոսի *(ԺԳ. 32-47՝ թափուած)*:

2. *66ա-105բ* Աւետարան Մարկոսի:

3. *106ա-173բ* Աւետարան Ղուկասու:

4. *174ա-221բ* Աւետարան Յովհաննու

Ունի ստ. լս.՝ համաբարբառ՝ ցուցացանկ:

192ա առտ. լս., գրչից՝ «Իրմ կնոջն շնացելոյ...», ստ. լս., գրչից՝ 55ա «Տաղանդն կշռոյ անուն և եւ ոչ թուոյ, ֆանֆարոն եւ տաղանդն մի են, բիւր մի դահեկան է»:

203բ (կարմրագիր բոլորգրով)՝ «Տաղ անապատի ժողով»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

221բ Փա՛ռք ամենասուրբ երրորդութեանն՝ Հաւր եւ Որդւոյն եւ Սուրբ Հոգւոյն. ամէն: Գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ ումեմն մեղաւորի՝ Վարդանա, *յուղորդ եւ յընտիր աւրինակէ, թեպետ և՛ գծողս, և՛ գիրս, և՛ նիւթս վատ է, թւականիս հայոց ՈՂԱ. (1242): Արդ, գրեցաւ սա յանապատիս, ընդ հովանեաւ* Սուրբ Կարապետիս *եւ* Սուրբ Ստեփ[անոսի]*: Եւ են ի սմա Բ. սուրբ վարդապետք՝* Քրիստոսատուր *եւ* Վարդան, *եւ առաջնոյ սուրբ ուխտիս* Յուսիկ *եւ այլ սուրբ եղբարք, որոց անուանքն ի դպրութիւն կենաց, որոց ողորմեսցի Տէր Քրիստոս. ամէն: Ողորմեսցի Տէր Աստուած գծողի սորա եւ ծնաւղաց իւրոց, եւ եղբարց, եւ որդւոց, եւ բնաւ զարմից իւրոց, եւ ամենայն հաւատացելոց. ամէն:*

Տե՛ս ԺԳ. դ. յիշ-ի, էջ 224-5, Հմր 179:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *65բ (ԺԵ. դ., բոլորգիր) Քրիստոս Աստուած, յորժամ գաս հայրական փառաւք ի նորոգեալ զերկիր, ողորմա՛յ* Թուխեռոյն* *հոգոյն. սուրբ Ավետարանս յիշատակ է հոգոյ իւրոյ. ամէն:*

* Ծնթ. Նոյնը Տե՛ս ի 105բ. միայն անուան փոխարէն գրուած է «Ֆրիտոնի», եւ 173բ-ում՝ «տիկնոջն»:

2. *105բ (1605 թ., բոլորգիր) Փա՛ռք համագոյ անբաժանելի եւ միասնական Սուրբ երրորդութեան՝ Հաւր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ. ամէն: Արդ, զվերջին ստացող սուրբ Աւետարանիս՝ բարի եւ հաւատարիմ, աստուածասէր առն* Սիամոնն, *որ տեսեալ զսուրբ Աւետարանս ի ձեռաց անաւրինաց, յոյժ փափաքան<ան>աւք ստացաւ զսուրբ Աւետարանս ի հալալ ընչից իւրոյ՝ յիշատակ իւրն եւ իւր ծնողացն՝ հաւրն իւրոյ՝* Մուրատին, *եւ մաւրն՝* Դիլպարին, Մարգարիտին *եւ եղբաւրն՝* Ոհանին, Մուիլին, *եւ քուրն՝* Մարիանին, *եւ կողակցին՝* Ղարագօզին, *եւ որդոյն՝* Մուրատին, *որ հանգուցեալ է առ Քրիստոս, եւ ամենայն յարեան մերձաւորացն. ամէն: Թվին ՌԺԴ. (1605):*

Տե՛ս ԺԷ. դ. յիշ-ի, Ա., էջ 168, Հմր 205:

3. *65բ (1714 թ., բոլորգիր) Յիշատակ է սուրբ Աւետարանս* Աստուածատուրին *եւ իւր որդւըն՝* Սահակին, Սահակի *որդի* Խոճայնազին, Օղուլբէկին, Նիազի *որդի* Էվազին, Բարսեղին, Էվազի *որդի* Բէջանին, Ափիճանին, Կուլիճանին, *որ հանկուցեալ է առ Քրիստոս թվին ՌՃԿԴ.ին (1714): Մահոյն վէրջ կոսգղ սուրբ Աւետարանիս, թվին ՌՃԻԳ. (1674):*

* Ծնթ. Հմմտ. կազմի վրայ եղած մակագրութեան հետ:

ՆՇՈՒՄ՝ *Ա. փեղկի կազմաստառին սոսնձած թերթիկին՝ «ՈՂԱ.-1242,* Մ[եսրոպ] *եպիսկոպոս», սեւով՝ «486/3528»:*


ԳՐՉԱՓՈՐՁ՝ *45ա՝ Աղաղակ(՞) Մեծի երկուշաբաթի ավուրն սաղմոս, կցուրդ խոստովան[ութեան] եւ վայելչութեան(՞): Ավետարան ///են ընդրել(՞)///: 93ա՝ փոքրիկ շրջանակի մէջ՝ «ասացեալ», «մեծի երեքշաբաթին առաջաւոր, սաղմոս արգին(՞) թագ՛՛ (անընթեռնելի)», 204ա՝ «ավաք շաբաթին առաջաւորին սաղմոս ՂԳ., Աստուած վրեժխնդիր, որսացան զԱւետարանի /// այժմեանն Ղ՛. /// (/// հատուածները անընթեռնելի)»:*

3529
ԱԻԵՏԱՐԱՆ

ՎԱՆՔ ԳԻՒՂ (ՅԵՐԿԻՐՆ ԳՈՒՐՀԱՄՈՒ) ՌՃԻԷ. – 1678

ԳՐԻՉ՝ Առաքել դպիր: ՍՏԱՑՈՂ՝ Վահրաւեցի Ճանդուրպան:

ԹԵՐԹ՝ 197. չգրուած՝ 1ա, 71բ-3ա, 134ա, 197բ: ՊՐԱԿ՝ Ա-ԻԳ×12 (Ա 13, Ջ 11, Ր 12+4, Թ-ԺԴ չիփ, ԺԷ 10, ԻԳ 3): ՆԻՒԹ՝ մագաղաթ, թուղթ (թ. 97-100 լուսագծերով, կապտաւուն): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18,5×13,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (13.5×9.5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 124ա): ՏՈՂ՝ 21: ԿԱՋՄ՝ բաց շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ Ա. փեղկին մետաղէ վարդեակ՝ վրան 5 կոստղ, որից մէկը կենտրոնում. միջուկը՝ տախտակ. աստառը՝ մագաղաթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+Գ. մագաղաթ, չգրուած:



Նմուշ 124ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Մատթէոս՝ 1բ, Մարկոս՝ 73բ, Յովհաննէս եւ Պռոխորոն՝ 134բ: Կիսախոշոր՝ 2ա, 74ա, 135ա: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն, տաճար (53ա, 120ա, 126բ, խաչ՝ 2ա, 63բ, 65ա, 74ա, 188ա): Ջարդագիր՝ մարդ, թռչնագիր, հանգուցագիր, կենդանագիր: Գոյներ՝ կարմիր,կապոյտ, դեղին, վարդագոյն, սպիտակ, դարչնագոյն, սեւ, նարնջի:

Տե՛ս Ա. Գէորգեան, Անանուն հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն Թ-ԺԷ. դդ., Գահիրէ, 2005, էջ 529, Հմ 729:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմը եւ կապիչները մաշուած, վրան կան ճաթեր եւ ֆերծուածքներ, խոնաւութիւնից եւ գործածութիւնից լուսանցակողերը (առաւել վր.) աղտոտուած, թերթերը ձեւափոխուած, կծկուած, վրան խոնաւութեան խոշոր հետքեր, մանրանկարների եւ գլխատառերի կարմիր թանաքը տարածուած՝ լղոզուած, տեղ-տեղ գիրը մասամբ թափուած՝ 45ա եւ այլուր, թ. 52, 71, 87, 132 եւ այլն՝ վրան բնական անցք, որոշ թերթերի վրայ փոքրիկ պատռուածքներ, որոշ պատռուածքներ ամրացուած թղթով, թ. 63՝ վր. լս-ից հիմքից մասամբ պոկուած. ընդմէջ թ. 96-101ի՝ 72 թերթ ընկած, փոխարէնն այդ թերթերի արանքում հետագայում ավելացրած 4 կապոյտ լուսագծերով թերթաճամար ունեցող թերթեր. էջանշան կարմիր թել՝ 189:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *2ա-71ա* Աւետարան Մատթէոսի:

2. *74ա-96բ* Աւետարան Մարկոսի *(թ. 11-ԺԶ. 20 թափուած)*:

3. *101ա-33բ* Աւետարան Ղուկասու *(Ա. 1-ԺԴ. 30 թափուած)*:

4. *135ա-196ա* Աւետարան Յովհաննու *(195բ-6ա իրք կնոջն շնացելոյ)*:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

133բ Յիշեցէ՛ք զստւտանու[ն] Առաքել *դպիրս, թվին ՌՃԻ. եւ եօթն (1678)*:

196ա Փա՛ռք ամենասուրբ երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյ Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Արդ, գրեցաւ զքառավտակ եւ յորդառատ աղբիւրս եւ աստուածաբան սուրբ Աւետարանս ի յերկրին Գուրհամու*՝ *ի գեղն, որ կոչի* Վանք, *ընդ հովանեաւ* Սուրբ Ստեփանոսիս *եւ ամենայն սրբոց նորա, ի թուաբերութեանն Հայկազ[ե]ան սեռի ՌՃԻէ. (1678), եւ ի հայրապետութեան սրբազան* Յակոբ *|196բ| կաթողիկոսի եւ ներողաց* Տաճ[կ]աց *շահ* Սիլէմանի, *եւ մերոյ* Ստաթէի *արհեպիսկոպոսի* Յովհաննէս *քաջ բաբունապետի: Արդ, գրեցաւ զսուրբ Աւետարանս ձեռամբ եւ մեղսամած սուտանուն* Առաքել *դպրի, որ միայն անունս ունիմ եւ գործս ոչ: Արդ, աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսջի՛ք զ*Առաքել *գրիչս եւ զհոգոյ հայր տէր* Վրթանէսն *եւ մարմնաւոր ծնօղքն իմ՝* Աստուածատուր *քահանան եւ* Նոյէմզարն, *եւ զեղբարքն իմ՝* Ղազար *քահանան,* Յովանէսն, Ներսէսն, *սարկաւագ* Մարգարայն, *եւ քոյրն իմ՝* Թամամն, *եւ ուստերս եւ դստերս յիշեցէ՛ք եւ Հայր մեզայիւ ողորմի ասացէ՛ք, եւ յիշողդ յիշեալ լիջիք աւուր դատաստանին Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Հայր մեր, որ՛՛:*

* Ծնբ. Գաւառ Մեծ Հայքի Սիւնիք աշխարհում: Տե՛ս Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 1, Երեւան, 1998, էջ 982:

197ա Յիշատակ է սուրբ Աւետարանս Վահրաւեցի Ճանդուրպանին, Շամամին, *դուստրն՝* Մարինային, *փեսայ* Գրիգորին, Գուղտին, Խաչումին, Ուստին: *Առաւ* Ճանդուրպանն *ի հալալ ընչից իւրոց եւ ետ յիշատակ ի տաճարն* Սուրբ Աստուածածնին, *ի գեօղն, որ կոչի* Վահրաւայ*: *Եւ դարձեալ, ո՛վ սիրելի՛ք քահանայք եւ սարգաւակունք, յիշեցէ՛ք զ*Ճանդուրպանն *եւ զիւր ննջեցեալքն, որ հանգուցեալ են առ Աստուած. առաւ զսուրբ Աւետարանս եւ ետ յիշատակ ի* Սուրբ Աստուածածնին**: *Ով որ զայս հանէ եկեղեցոյս կամ ծախէ, կամ գողանայ, մասն* Յուդայի *առցէ: Ո՛վ ընթերցօղք, յիշեցէ՛ք*

եւ Հայր մեղայիւ ողորմի ասացէ՛ք Ձանղուրպանիին, փեսայ Գրիգորին եւ փծուն գրչիս. ամէն: Հայր մեր, որ՛՝:

* Ծնթ. Գիւղ Մեծ Հայքի Սիւնիք աշխարհում, Կաֆաւաբերդի գաւառում, այժմ Վաճրաւար, ՀՀ Մեղրու շրջանում: Տե՛ս Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 4, Երեւան, 1998, էջ 739:

** Ծնթ. Այս եւ նախորդ Աստուածածին բառն աւելացուած ժամանակ անց, աւելի մուգ թանաքով եւ նոտրգրով:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *պհպ. Բբ (1788 թ., անարուեստ շղագիր) ես՝* Դաշտեցի Ավետի *որ[ք] Ովանես<ե>ս, գրեցի: Ով որ կարՁայ, Ա. բերան ողորմի ասէ իր հղր կամ իմ հղր: Թվին ՌՒՃԼԷ. (1788) Հունիվարի Ա.ում գրվեցաւ* Ագարագ*:

* Ծնթ. Գիւղ Մեծ Հայքի Սիւնիք աշխարհի Վայոց ձոր գաւառում, այժմ գտնուում է ՀՍՍՀ Վայք մարզում: Տե՛ս Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 1, Երեւան, 1998, էջ 17:

2. *1ա (ԺԸ. դ., անարուեստ շղագիր) Էս՝* Դաշտեցի *մականեցի* Թումանի *որդի օղորմած հոգի* Պողոս, Սուրբ Աստվածա<յ>ծին *սուրբ Ավետարա[ն]ն հան(՞) զանցանի <անի> [թաքածոյ անոր, է վայ սուրբ Ավէքտարա[ն]ն: Ինչ քանա<յ> նայ որ հիշ[ի] ինչ, ոչ պարտակ մնայ:*

3. *պհպ. Գա (ԺԸ. դ., նոտրգիր) Յիշատակ է յայս Աւետարանս* Սուրբ ըՍտեփանոսին, *որ ես՝* Մարգարէս, *աշգատեցի Նորոգման կազմն Աւետարանիս: Ով որ ոք կարՁայ, մէկ բերան յիշէ զբարին զմեզ. ի վայելումն* Խաչատուր *վարդապետին, որ գոչի* Ղազանչեցի:


ՆՇՈՒՄ՝ *պհպ. Աա՝ «787/3529, ՌՃԻԷ. – 1678,* Մ[եսրոպ] *եպիսկոպոս»:*

3530
ԱԻԵՏԱՐԱՆ

ԿՈՂՈՒՑ ՎԱՆՔ **ՁԽՁ. – 1497**


ԳՐԻՉ՝ Մատթէոս աբղ: ՍՏԱՑՈՂ՝ պրն Գորգ:

ԹԵՐԹ՝ 335. չգրուած՝ 97ա: ՊՐԱԿ՝ 3+Ա-ԻԴ×14 (Ա 10, Բ 12, ԺԷ, ԺԸ, ԺԹ, Ի, ԻԱ 16, ԻԴ 6): ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18×13,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (13,5×9,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 94ա): ՏՈՂ՝ 19: ԿԱՉՄ՝ կարմիր մոմլաթ, մէջը՝ սեւ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ դեղնաւուն թուղթ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Դ՝ դեղնաւուն թուղթ, մասն կազմաստառի:



Նմուշ 94ա

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Անորոշ: ԺԱ. դ.: ԲԳ. (սկ.)՝ ստացուած մէկ թերթի ընդերկայնակի եւ ընդլայնակի եզրահատումով եւ ընդլայնակի ծալումով (բնագիրը վր. լս-ից եւ եզրերից վնասուած): Մագաղաթ (17,5×13, ամբողջական թերթինը՝ 26×17,5). երկսիւն (ամբողջական թերթինը՝ 26×17.5). բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝ Գա). տող՝ 22: Կարդալ՝ Բբ$_1$, Գա$_1$, Բբ$_2$, Գա$_2$. «///Մի՛ թողուր զիս: Երրորդ գու(՞)///յին սաղմոս... Տէր ընդէր ոչ կարի ///», Բա, Գբ՝ անընթեռնելի:



Նմուշ Գա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Մատթէոս (վր. լս. բոլորգրով՝ «Մաթէոս Աւետարանիչ»)՝ 3բ, Մարկոս՝ 97բ, Ղուկաս՝ 156բ (վր. լս. բոլորգրով՝ «Ղուկաս Աւետարանիչ»), Յովհաննէս եւ Պռոխորոն (վր. լս. բոլորգրով՝ «Յովհաննէս առաքեալ Աւետարանիչ», արտ. լս.՝ «Պռոհաւրոն աշակերտն»)՝ 256բ, լս-այինն՝ Տիրամայր՝ 95ա, 160բ, Բարտիմէոս կոյր՝ 134ա, Յովսէփ Արիմաթացի՝ 154բ, 251բ, 324բ, Գաբրիէլ հրեշտակապետ՝ 159բ, Հովիւ՝ 163բ, Բժշկումն անդամալուծի առ աւազանին Բեթհեզդայ՝ 270բ, Յարութիւնն Ղազարու՝ 294բ: Խորան՝ 1ա, 1բ, 2ա: Կիսախորան՝ 4ա, 98ա, 157ա, 257ա: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն, կենդանու գլխով թռչուն (259բ, 284բ), յուշկապարիկ (147ա, 183ա), ծառ (63բ, 65բ, 135բ, 233բ), խաչ (87բ, 89ա, 247ա, 322բ), տաճար (75ա, 141բ, 239բ): Ձարդագիր՝ մարդ (Գ՝ 4ա, եւ՝ 51ա), մարդադէմ (Ձ՝ 56ա, Գ՝ 136բ, 330բ), թռչնագիր, հանգուցագիր, կենդանագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, դեղին, կանաչ, սպիտակ, վարդագոյն, մոխրագոյն, դարչնագոյն, սեւ, նարնջի:

Տե՛ս Ա. Գէորգեան, Անանուն հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն Թ-ԺԷ. դդ., Գանիրէ, 2005, էջ 245, Չ^{մր} 358:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած եւ կազմուած 1950ական թթ. մէջի կաշին մէջտեղից ճաճած, պտոկպիպ. Բ, Գ՝ խումացած, գիրը ջնջուած, դժուարընթեռնելի, թրջուածութեան եւ ցեցակերութեան հետեւով. գործածութիւնից եւ խոնաւութիւնից լուսանցակողերը (յատկապէս վերինը) աղտոտուած, կարմիրը մասամբ թափուած, թերթերի վրայ կան խոնաւութեան եւ աղտոտուածութեան, տեղ-տեղ առաւել գորշացած հետ-

ֆեր, խոնաւութիւնից գրադաշտը գունափոխուած, տեղ-տեղ՝ թանաքի ու թրջուածութեան հետքեր, ընդմէջ թ. 8-9ի 2 թերթ ընկած, Մատթէոս, Մարկոս աւետարանիչների մանրանկարները ծածկուած են պաշտպանիչ դեղին եւ կապոյտ մետաքսէ գործուածքներով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *1ա-2ա* Համաբարբառ (Կանոնք Ը.-ԺԲ., *նաեւ տե՛ս յառաջաբան*՝ *Յրուացանկ*):

2. *4ա-96բ* Աւետարան Մատթէոսի *(Բ. 12-22 թափուած)*:

3. *98ա-156ա* Աւետարան Մարկոսի:

4. *157ա-256ա* Աւետարան Ղուկասու:

5. *257ա-330բ* Աւետարան Յովհաննու *(330աբ <Գ>իրք կնոջն շնացելոյ)*:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, *ԺԷ. դ., նոտրգիր*

– 333ա [Գրեացուցակ-գոյացուցակ] *– Է. Աւետարան, Բ. ձառ, Ա. Ոսկիփորիկ, Բ. Աստուրք, Ա. Քարոզգիրք, Ա. Գանձատետր, Ա. Բուն Մաշտոց, Բ. սուրբ նշան, մէկ ճաշոյ գիրք, Բ. սկի, Է. շուրջառ, Դ. վարագոյրս, Դ. շապիք, Բ. ջուխտ բազպան:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

331բ Փա՛ռք եւ պատիւ Հաւրն անծնին, աներբ, անեղ իսկականին,

եւ միածին նորա Բանին, անճառ ծննդեանն հայրենին,

եւ Սուրբ Հոգոյն միշտ փառակցին, ամենառատ պարգեւատուին,

միոյ բնութեան աստուածային, մի տէրութեան եւ միշտ էին,

գերակատար երիցն անձին, կատարողին արարածին

յանցեալն, յայժմուս, յապագային եւ յանսպառ յաւիտենին յաւիտեանս. ամէն:

Իսկ չորից աւետարանացն խորհուրդ բազմաւրինակ իմն ցուցմամբ տեսանի, զի ոմանք ասեն, թէ չորից աւետարանացն են չորք անգիւնք արարածոց՝ Արեւելք եւ Արեւմուտք, Հիւսիս եւ Հարաւ: Պարտ էր համասփիւռ քարոզել զԱւետարանն, իսկ ոմանց հաճոյ թուեցաւ ըստ չորից մըշտահոս գետոցն յադենական աղբերէն յառաջ խաղացեալ առ ի |332ա| տիեզերաց ոռոգումն՝ Փիսոն, Գեհոն, Տիգրիս *եւ* Եփրատէս, *եւ սոցա գոլով նմանապէս թուով ուռճատեալք ի կենդանական աղբերէն, ոռոգանել զպասքեալ միտս մարդկան նոյնաւրինակ ըստ տեսութեան* Եզեկիելի *քառակերպեան աթոռոն՝ Մարդ, Առիւծ, Եզն, Արծիւ: Զանմարմնոցն Տէր տեսանելով, բազմեալ ի փառացն աթոռ իմանալի ցուցմամբ, զխնամս բոլոր բնութեանս զակնարկումն, որ աստուածապէս եւ տիրաբար բերմամբ նշանակէ զլինելն առ ի հողածինս, հոգեղինացն, անմահից, զմահկանացուս առնել հաղորդ եւ ի գերակատար հանել ի փառս, վասն զի փառաց թագաւորն Քրիստոս՝ փառակիցն Հաւր եւ Հոգոյն Սրբոյ, զմերս առեալ բնութիւն, յինքեան միացոյց աստուածութեան՝ ուսուցանելով մի Որդի դաւանելով, որ յԱստուծոյ Հաւրէ եւ որ ի Մարիամայ սուրբ կուսէն անճառ միութեամբ, |332բ| զոր աւետարանականն ուսուցանեն բանք՝ մինչ ի կատարած հաւանութեամբ եւ հաստատ կարգօք ի նոյն յարելով առաքելաւանդն քարոզութիւն, որ գաստուածախաւսն վարդապետութիւն դրոշմեալ զսակաւս ի բազմացն հաւատալ, թէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ: Ըստ վերին Յովհաննու հաւատալ եւ զկեանն յաւիտենականս ընդունել յանուն նորա:*

Աստանաւր յանկ ելեալ՝ աւարտեցաւ քառաբուխ եւ քառավրտակ աստուածախաւս սուրբ Աւետարանս այս ի թուաբերութեան Հայկազան տումարիս ՋԽՋ. (1497) ամին, ի սուրբ ուխտս ի Կողուց *վանքն, ընդ հովանեաւ* Սուրբ Գրիգորիս *եւ* Սուրբ Կարմիրակ *նշանիս եւ ի յառաջնորդութեանս տէր* Դանիէլի, *ի դառն եւ ի վշտալից ժամանակիս, յորում ի խիստ եւ ի նեղութեան եւ ի չար ծառայութեան կամք ազգին նետողաց, զի յոյժ նեղեն եւ կեղ[եքեն զազգս քրիստոնէից] |333ա| եւ որ բարէմասնութեանց եւ հեծեալս եւ մաշեալս, վերջինս աղքատութեամբս, մեղաւոր եւ անարժան ծառայս ծառայիցդ Աստուծոյ՝* Մատթէոս *սուտանուն աբեղայ, տեսի գփափագ եւ զսէր հաւատարիմ տանուտրոջն պարոն* Գորգն, *զոր ունէր առ հոգեւորսն, եւ տակաւ անձամբ յանձն առի կատարել զհայցուածս նոցա: (14 տող չգրած) զի սորա՝ պարոն* Գորգուն, *եւ իւր կենակցին՝* Մարգրտին, *եւ իւր ծնաւղացն՝* Մխիթարին *եւ* Շաղփաշին, *եւ իւր զաւակացն (3 տող չգրած) |333բ| (3 տող չգրած) եւ զհաւրեղբայրքն իւր՝ զ*Կարապետ, *զ*Մխիթարն *եւ զ*Յովանէս, *եւ զյորդիք նոցին՝ զէզդան եւ զ*Միրան *եւ* Ջաֆարէն:

Տե՛ս ԺԵ. դ. յիշ-f, Գ., էջ 243, Հմր 333ա.:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *333բ (ԺՋ. դ.ի սկիզբ, բոլորգիր) Ես՝* Մարգարիտս, *գրել տըւի զսուրբ Աւետարանս եւ եառ զսա ի ձեռն* Միքայէլ *քահանային, զի այլ մարդու դաւ չի լինի հետ սորա: Եւ որ գառնա եւ յանդրգնի, նա նըզովեալ լիցի յԱստուծոյ եւ յամենայն սրբոց:*

Տե՛ս ԺԵ. դ. յիշ-f, Գ., էջ 243, Հմր 333բ.:

2. *333բ (ԺՋ. դ., բոլորգիր) Աստուած ողորմի ասացէ՛ք* Բաղդասարին. *ամէն:*

3. *333բ (ԺՋ. դ., բոլորգիր) Ո՛վ դասք լուսերամից, որ հանդիպիք սուրբ Աւետարանիս, լի բերանով եւ ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէ՛ք* Մկըրտչին *եւ կենակցին իւրոյ՝* Շահգուլին, *որ ստացան զսուրբ Աւետարանս ի հալալ արդեանց իւրոց՝ յիշատակ կենդանեաց եւ մեռելոց, հաւրն՝* Ազիբէկին, *եւ մաւրն՝* Գուարին, *եւ եղ-

բաւրն՝ Յակոբին, *եւ քվերն՝* Նղաշին, *եւ զաւակ[ացն]։ |334ա| Ով դասք լուսերամից, որք հանդիպիք սուրբ Աւետարանիս, լի բերանով եւ ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէ՛ք* Մկրտչին *եւ կենակցին իւրոյ՝* Շահգուլին, *եւ որդոցն՝* Ջաջաթին, Յովասափին, Աբգարին, Ջաջուռին, Միհնազբէկ *եւ միուս* Ազբէկին, Ղազարին, *եւ դստերացն՝* Խոնդոարին, Ղզլայբէկին, Խոնձային, Նուբարին, Գոլբարին, *եւ հաւրն՝* Ազբէկին, *եւ մաւրն՝* Գոյարին, *եւ կնոջն հաւր* Ղազարին, *եւ մաւրն՝* Ջույարին։ *Եւ Աստուած ողորմի |334բ| ասացէ՛ք* Մկր[տ]չին, Շահգուլին. *ամէն, որ ըստացան սուրբ Աւետարանս ի հալալ արդեանց իւրոց՝ յիշատակ կենդանեաց եւ մեռելոց, հաւրն՝* Ազբէկին, *եւ մաւրն՝* Գոյարին, *եւ եղբաւրն՝* Յակոբին, *եւ քուերն* Նղաշին, *եւ զաւակացն* Յակոբին, Սբաթին, Շահգուլի, *եղբարցն՝* Մլհամին *եւ* Յովանիսին, *եւ որդոցն՝* Բաղ[դ]ասարին, Ատոմին, Մուրաւթին։ *Աստուած ողորմի ասացէ՛ք իւրոց. ամէն։ Դարձեալ յիշեցէ՛ք վերջին ստացող սուրբ Աւետարանիս՝* Մկըրտիչն *եւ կե|335ա|կցին՝* Շահգուլն, *եւ զաւակաց իւրոց՝* Շաղաւաթն *եւ* Յովասափն, Աբգարն, Ղազարն *եւ* Ազիբէկն, Ջաջուռն, *եւ դստերացն՝* Խոնդոարն, Ղըզլարբէկն *եւ* Խոնձէն, Գոլբարն *եւ* Նուբար։ *Աստուած ողորմի ասացէ՛ք իւրոցն. ամէն։ Եւ են վկայք այսմ վաճառիս միրզայ* Մուսթաֆէն *եւ եղբարն՝* Մահմատն, *եւ մէլիք* Փախչան *եւ ըռէս* Մարտիրոս։ *Եւ եառաք ի սուրբ ուխտս՝* Սրխոյ *վանիցն* Աստուածածնին, *եւ սուրբ ճգնաւորին* Մարինոսի, *եւ եառաք ի ձեռն հեզայհոգի Հէր|335բ|պետն տէր* Աւետիսին, *տէր* Յովանիսին, *որ ընթեռնուն եւ Աստուած ողորմի ասեն մեզ եւ մեր նը[ն]ջեցելոցն. ամէն։ Եւ է սուրբ Աւետարանս անջինջ յիշատակ. եւ տուք անհզելի* Սուրբ Աստուածածնին *տաճարի դրանն, որ ոչ ոք իշխէսցէ նենգութեամբ մերձենալ սայ կամ ծախելով կամ գրաւելով, ո՛չ մերոց եւ ո՛չ յաւտարաց։ Եթէ ոյք յանդգնի, նայ մասն Յուդայի առցէ եւ խաչ քանողաց, անէծքն զԿայենին առցէ. ամէն։ Լաւ պահաւղն Աստուած աւրհնէ. ամէն ու Ռ. (1000) ամէն։*

4. *Պտռկ-պհպ. Բա (1749 թ., բոլորգիր) Վերըստին ազատեցաւ սուրբ Աւետարանս Թվին ՌՃՂԸ. (1749), ի յաջորդութեան սուրբ ուխ[տ]իս* Սարգիս Քաչբերունցի *չլաշներ ջաղաց շինեցի, վանքի ժամատուն վերըստին նորոգեցի, ճ. (100) ղուռուշ անօրինաց զուլմայ տւի։*

5. *2բ (1751 թ., բոլորգիր) Եւ դարձեալ յիշեցէ՛ք զվերջին ըստա<յ>ցօղ. սուրբ Աւետարանս* Սուխարայ *վանից անգեալ ի գերութիւն, զոր վերստին թափեցին ի ձեռ[ա]ցն անօրինաց տանտէրք կ[ղ]զու եւ յաջորդ վանից* Սարգիս *վարդապետ։ Եւտուն նոյն վանքն* Սուխարայ Սուրբ Աստուածածնին *եւ սուրբ կոյս ճգնաւոր* Մարիաննոսի *գերեզմանին ի թվականիս ՌՄ. (1751). Ա. չափ կէս ցորեն,* Ջիրաֆ՝ *Բ. չափ,* Սախօս՝ *մէ[կ] կօտ,* Բաղտօ՝ *մէկ կօտ,* Խամզար՝ *կէս կօ[տ],* Մաղսոտ՝ *մէկ կօտ,* Վարդն՝ *երեք չ[ափ]։* Սարգիս *վարդապետ յիշեցէ՛ք եւ Աստուած ողորմի ասացէ՛ք* Ջիրաֆին, Սախօին, *իւր կող[ակցին]՝* Մարիխան, Բաղդօն, Վարդն, Խամզար, Մաղ[սոտ] /// *(՞), |3ա|* Սարգիս *վարդապետն ստացան սուրբ Աւետարանս՝ յիշատակ հոգոց իւրեանց կենդանեաց եւ ն[ն]ջեցելոց։ Յիշեցէ՛ք ի Քրիստոս, եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոս յաւիտեանս. ամէն։ Ի յառաջնորդութեան սուրբ ուխ[տ]իս* Սարգիս *վարդապետի, ի դառն եւ դժվար ժամանակիս, ի ձեռն այլազգաց, զի յոյժ նեղեն եւ կեղեքեն զմեզ, եւ եմք ի մէջ վշտաց եւ նեղութեանց եւ հասեալ վերջին ալքատութեան։ Մեղաւոր եւ անարժան, սուտանուն* Սարգիս *աբեղայս վերստին շինեցի վանքի ժամ[ա]տուն ճ. (100) ղուռուշ ջայր եւ տոգանս առին։ Թվին ՌՄ. (1751)* Սոխարայ *վանից ժամ[ա]տուն վերստին նորոգեցաւ, սուրբ Աւետարանս գնեցաւ եւ ազատեցաւ ձեռամբ մեղսամած եւ մեղսայբուտ* Սարգիս *աբեղայիս։ Յիշեցէ՛ք եւ Աստուած ողորմի ասացէ՛ք, եւ դուք յիշե[ա]լ լիջիք ի Քրիստոս յաւիտեանս. ամէն։*

ՆՇՈՒՄ՝ *Պտռկ-պհպ. Բա՝ «790/3530, ՋՂՋ.-1497, Մ[եսրոպ] եպիսկոպոս», 1ա՝ «3530»։*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *332բ՝ «ա, բ, գ, դ, ե, զ», 333ա՝ «անեն էր»։*


3531
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ՌՃԻԸ. – 1679

ԳՐԻՉ՝ Ղուկաս։ ՍՏԱՅՈՂ՝ Միխայէլ Աստապատեցի։

ԹԵՐԹ՝ 351+1-1 (կրկն.՝ թ. 179, թուիչ՝ թ. 265-7)։ ՊՐԱԿ՝ Ա-ԼԲ×12 (է, ժե, ԻԱ 11, Իէ 10, ԻԲ չիմ, ԻԸ 5, ԼԲ 3)*։ ՆԻՒԹ՝ թուղթ, այլ թուղթ՝ թ. 300-3, 317-30. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ գունդ, վերեւում՝ խաչ, 2. ոճաւոր զինանշանի վերին մասը (թ. 300)։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18×12։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, մասամբ կարմրով սահմանագծուած, թ. 2-169 (13×6,5-7), թ. 170-350 (13×7-7,5)։ ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 171ա)։ ՏՈՂ՝ 27։ ԿԱՋՄ՝ դարչնագոյն կաշի. միջուկը՝ տախտակ. վերին կարակապին ամրացուած սեւ թելով հիւսած էջանշան։

* ԺԵ-ԻԱ. (թ. 168-238) պրակները ունեն նաեւ Ա-է. համարներ։



Նմուշ 171ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Ճակատազարդ՝ 171ա: Լուսանցազարդ՝ թռչուն, բուսական, յուշկապարիկ (171ա): Ձարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր: Գոյներ՝ վարդագոյն, կապոյտ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի եզրերի կաշին մաշուած, փեղկերին թանաքի բծեր, աստառ չունի, ձեռագիրը եզրահատուած. բոլոր թերթերի եզրերը եւ հիմերը խոնաւութեան հետեւանքով գունափոխուած՝ մգացած. որոշ թերթեր սխալ կազմած, կարդալ՝ թ. 297, 344, 298-303, 343, 304, 305, 345-9, 307-42, 306, 350-1. ընդմէջ թ. 72-3ի 1, 248-9ի 13, թ. 305-ի եւ 345ի 7 թերթ, 349ի եւ 307-ի 3 թերթ ընկած, թ. 301-3ը հիմիից մասամբ անջատ, թ. 1, 351՝ ցեցի անցքեր, սեւացած, ստ. մասում՝ պատռուածք, արտ. լս-ը մասամբ լրացուածամրացուած, թ. 2-5, 345-51՝ գրադաշտին, թ. 314-21՝ ստ. լս-ին, թ. 338-42՝ արտ. լս-ին, ցեցի անցքեր, թ. 43ի արտ. լս-ին անցք, թ. 58բ-9ա, 169ա, 329բ-30ա՝ թանաքի բծեր, թ. 83՝ լայնքը 1 սմ-ով պակաս, թ. 165՝ արտ. լս-ին պատռուածք, թ. 169, 245, 330՝ աջ անկիւնը պատռուած. թ. 307՝ ընդլայնակի պատռուած, վերին մասը թափուած՝ գրադաշտի 2 տողը վնասուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1բ-158ա* [Վարք հարանց]

– *1բ* [Յանկ] – *Ա. Յաղագս կատարեալ առաքինութեանց... Ժե. Վասն քաղաքավարութեան նոցին, որք զամենայն վարս ուղղեցին առաքինութեամբ:*

Տե՛ս 789, 2ա-533բ: 1/չիք: 2/2ա: ա/չիք: բ/2աբ: գ/2բ-3բ: դ/3բ-5բ: ե/5բ-8ա: զ/8ա-13ա: է/չիք: 3/13ա-6ա: 4/16ա-21ա: ա-ե/չիք: 5/21բ-5ա (սկ. այլ՝ Ունէր երբեմն հայրն Ադաթոն երկու աշակերտ...): ա/25ա-7ա: 6/27բ-37ա (սկ. այլ՝ էր ոմն միայնակեաց, որ բնակէր ի լեառն Անտոնիոսի...): ա/37ա-40ա: 7/40բ-3բ: ա/չիք: բ/43բ-5ա: 8/45բ-56բ: 9/չիք: ա/56բ-8ա: 10/58բ-62բ (սկ. այլ՝ Արդ, ասաց ոմն ի ծերոցն, եթէ ոչ ինչ է լաւագոյն, քան զայս պատուիրան...): *ա/62բ-6բ: 11/66բ-77բ (սկ. այլ՝ Ասէին զծերոյ ումեմնէ, եթէ եկաց զամս յիսուն...): ա/77բ-9ա: բ/79ա-81ա: 12/81ա-5բ (սկ. այլ՝ Եւ ասացին ծերքն, եթէ երեք են զօրութիւնք դիւաց...)*: *ա/85բ-8բ: բ/88բ-9բ: 13/չիք: ա/չիք: 14/89բ-115ա (սկ. այլ՝ Ել երբեմն հայրն Դանիէլ եւ աշակերտ իւր յԱղէկսանդրիա...): ա/115ա-21բ: բ-գ/չիք: 15/122ա-3բ (սկ. այլ՝ Եւ վասն հօրն Յոհաննու կարճահասակին պատմէին մեզ, եթէ գնաց նա երբեմն առ ծեր...): 16-7/չիք: 18/123բ-6բ (սկ. այլ՝ Գնաց երբեմն հայրն (չգրուած) ի քաղաքն՝ վաճառել գձեռագործ իւր...): ա/չիք: 19/127ա-30ա (սկ. այլ՝ Ասաց հայրն Դանիէլ, եթէ պատմէր մեզ հայրն Արսենիոս...): ա/130ա-48ա: բ/148բ: 20/չիք: 21/148բ-58ա: ա-գ/չիք: 22-6/չիք: 27. ա/8ա: բ/16ա: գ/21ա: դ/27աբ: ե/40ա: զ/45աբ: է/56բ (նոյնը՝ 58աբ): ը/58բ: թ/չիք: ժ/81ա: ժա/121բ-2ա: ժբ/չիք: ժգ/126բ: ժդ/148ա: ժե/148բ: ժզ/158ա: ժէ-ժը/չիք:*

Իսկ ես՝ ունայնս եւ թափուրս յամենայն հոգեւոր բարեմասնութեանց եւ հեծեալս եւ մաշեալս, վերջինս աղքատութեամբ, մեղաւոր եւ անարժան ծառայս ծառայիցդ Աստուծոյ Մատթէոս *սուտանուն աբեղայ, տեսի զփափագ եւ զսէր հաւատարիմ եւ անորդի մօրն իմոյ՝* Բէկուն, *զոր ունէր առ հոգեւորսն, եւ տկար անձամբ յանձն առի կա[տարմամբ] (շարունակութիւնը տե՛ս ՅԻշատակարան հետագայի)։*

* Ծնթ. Ստացողի անունը եւ նրան վերաբերող հետեւեալ տեղեկութիւնները գրչութեան թուականից կարճ ժամանակ անց այլ թանաճով եւ այլ ձեռքով գրուել-լրացուել են նախապէս գրչի բաց, չգրած թողնուած տեղերում՝ «կինն Բեկի» եւ յաջորդ աստղանիշակիր հատուածները՝ «հաւատարիմ մայրն մեր Բէկի... եւ ըստացաւ», «եւ անզաւակ մայրն մեր Բէկի», «հօրն՝ ըՌըստակիսին, եւ մօրն՝ Խոնձին, եւ եղբարցն՝ Աշրաֆին եւ Դաւմանին, եւ քուերցն՝ Գուլըստանին եւ Շահփշին. ամէն», «եւ անորդի մօրն իմոյ՝ Բէկուն»։

2. *Ծաղկողի 13բ զՅովսէփ՝ նըկարօղ սուրբ Աւետարանիս, յիշեցէ՛ք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէ՛ք։*

Տե՛ս ԺԵ. դ. յիշ-ր, Գ., էջ 244-5, Հմր 335. ունի գլխաւոր յիշատակարանի միայն հետեւեալ մասերը՝ «Աստանաւոր յանկ ելեալ... կեղեւեն զազգս հրիստոնէից», «Այսպէս եւ հաւատարիմ մայրն... տկար անձամբ յանձն առի կա[տարել]» եւ ծաղկողի յիշ-ը։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *351ա (1604 թ., բոլորգիր, գրուած որպէս գրչութեան յիշ-ի շարունակութիւն. կազմողի ձեռքով) [կա]տարմամբ բանիւն Աստուծոյ վերջին կազմող սուրբ Աւետարանիս՝ յիշատակ տանուտէր եւ ըռայիս* Վաչոյին, *հօրըն՝* Նուրիջանին, *եւ մօրն՝* Աղայբէկուն, *եւ եղբայրն՝* Մուրաւեանին, *եւ կողակից նորայ՝* զՇախասալթան, *եւ զորդիքն նոցա՝* զՅովանէս *եւ* զգՈրիգորն։ *Դարձեալ յիշեցէ՛ք զըռայիս* Վաչօն *եւ զորդիքն՝* զԱբրահամ<ա>ն *եւ* զՄանասէն, *եւ զՆուրիջան։ Դարձեալ յիշեցէ՛ք եւ Աստուած ողորմի ասացէ՛ք* Վայջոյին, *որ ետ նորոգ|351բ|ել զսուրբ Աւետարանս՝ յեշատակ իւրեանց, եւ իւրեանց ծնողաց արքայութիւն տացէ եւ յերկնից յարքայութիւն հրաւիրէ. ամէն։ Ի թվին Հայոց մերոց ՌԾԳ. (1604)՝ ձեռամբ սուտանուն* Աբրահամին՝ Ասծրկեցի *իմ վարպետին, մի բերան Աստուած ողորմի ասացէ՛ք, Աստուած ձեզ եւ մեզ ողորմեսցի յիւր միւսանգամ գալուստ<դ>ն. ամէն։*

Դարձեալ կրկին անգամ յիշեցէ՛ք ի Քրիստոս Վաչօն, Մուրաւեանն *եւ եղբայրն՝* Աղայմէլիք, *|352ա| որ փոխեցեալ է ի Քրիստոս, լի բերանով եւ Աստուած ողորմի ասացէ՛ք, Աստուած ձեզ եւ իւրեանցն ողորմի. ամէն։ Կացէ՛ք զսուրբ Աւետարանս անջի[ն]ջ յիշատակ ի դուռ* Սուրբ Գէորգայ *զօրայվարին եւ* Սուրբ Յովանիսիսի։ *Ով ոք հեռացուցանէ զսուրբ Աւետարանս կամ ծախելով կամ գրաւելով, կամ գողանալով, պատիճն* Յուդայի *առցէ եւ խաչ հանողաց։ Ով ոք զսուրբ Աւետարանս լաւ պահէ եւ խնամ արկէ, աւրհնի ի յԱստուծոյ եւ յամենայն սրբոց նորա. ամէն։ |352բ| Դարձեալ կրկին անգամ յիշեցէ՛ք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէ՛ք ըռէս* Վաչօին, *եղբօրն՝* Մուրաւեանին, *որդոյն՝* Աբրահամին, *եւ* Մանասին *եւ* Նուրիջ[ա]նին։ *Դարձեալ յիշեցէ՛ք* զԱբրահամն *եւ զիւր որդիքն՝* զՆուրիջանն, զՄանասն, *եւ* զԹաքէոսն, *եւ զկողակիցն՝* զԳուլումն։ *Յիշեցէ՛ք եւ Աստուած ողորմի ասացէ՛ք, եւ որ զողորմին ասէ, Աստուած իւրն ող[ո]րմեսցի. ամէն։ Հայր մեր, որ՛՛։*

Տե՛ս ԺԷ. դ. յիշ-ր. Ա., էջ 134-5, Հմր 167։

2. *114ա (1669 թ., նոտգիր) ի թվին ՌՃԺՀ.ին (1669) եւ մենք՝* Մուրաւեանի *որդիք* Գրիգորս, Կակոս, Սահակս, *միմեանց լեաս սուլիս էղանք, թէ՛* Յեհիանէսի *մալի դիմաց, թէ՛ դուռն ճանպխի դիմաց, որ հետ մէկի-մէկի այլ բան չի մնաց։ Այսուհետեւ խեաս մէկի-մէկի դաւի չկայ։ Ինչ մարդ, որ այս բանիս փոշիման լինի, այսուհետեւ դաւի անէ, ՅԺՀ. (318) սուրբ հայրապետաց անէծք եւ նզովք առնու, զպատառն Յուդայի եւ մասն խաչ հանողաց առցէ եւ որոշեալ լիցի փառաց Որդոյն Աստուծոյ։ Աղէն ձեռօք* Գուլահմատ *վկայ, առաջնորդ տէր* Սիմէօն *վկայ, էրաշխաւորայ* Սաֆարն *վկայ,* Գազդղան Ղարիպջան *վկայ,* Խորանից Մարտիրոս *վկայ, Աստուած վկայ։*

3. *352բ (1896 թ., շղագիր)* Վաղարշապատցի Նիկողայոս Առամեանս *զսոյն գրչեայ Աւետարանս զնախնեաց իմոց ընծայեցի* Մատենադարանին *Մայր Աթոռոյ* Սրբոյ Էջմիածնի՝ *ի յիշատակ ինձ եւ իմայնոց, որ գրեալ է ի թվին Հայոց ՋԽՋ. (1497),* յԱխթամարայ *վանն։* Նիկողայոս Առամեանց, *ի 1896 ամի, ի 10ն Ապրիլի, ի* Վաղարշապատ։


ՆՇՈՒՄ՝ *Ա. կազմաստառին սոսնձուած թերթիկին՝ «Հմր 837. Աւետարան, բոլորգիր, գրեալ ի թղթի ի թուին հայոց ՋԽՋ. (1497),* յԱղթամար, *ի ձեռն* Մատթէոս *աբեղայի, ի հայրապետութեան տեառն* Ատոմայ. *նուիրեալ Մատենադարանի Ս. Աթոռոյս ի Վաղարշապատցի պ.* Նիկողայոսէ Առամեանց, *յամի 1896։ Ունի զյիշատակարան ի վերջն», թերթիկի Բ. երեսին՝ «837/3534, ՋԽՋ.—1497,* Մ[եսրոպ] *եպիսկոպոս», պհպ. Աա՝ «3534»։*

3535
ՄԱՇՏՈՑ ՁԵՌԱՑ, ԳԱՆՁԱՐԱՆ

ՄԵԾԿԵՐՏՈՒ ՎԱՆՔ ՋԾԷ. – 1508

ԳՐԻՉ՝ Յովանէս:


ԹԵՐԹ՝ 275: ՊՐԱԿ՝ Ա-ԻԵ×12 (Ա 2, Բ 11, ԻԵ 10): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18×13,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (13×9,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 98ա): ՏՈՂ՝ 15: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի կապիչներով եւ գամերով. միջուկը՝ տախտակ. աստառը՝ կարմիր կտաւ, դռնակիները՝ շերտազարդ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր:



Նմուշ 98ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – ճակատազարդ՝ 155ա: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն, խաչ (96ա): Ջարդագիր՝ հանգուցագիր, մարդադէմ (7ա, 45ա), թռչնագիր (117ա): Գոյներ՝ կարմիր, վարդագոյն:

ՊԱՏԱՒԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – ճաշոց: ԺՋ. դ.: ԱԲ (վջ.)՝ ստացուած 1 թերթի ընդլայնակի ծալումով: Թուղթ 17×12,5 (զոյգ թերթի բացուածքինը). միասիւն (25×12). բոլորգիր (նմուշ՝ Ա.). տող՝ 27: Կարդալ՝ Բբ, Աա, Բա. «[Մարգարէութիւն Եսայեայ, ՃԷ. 13-21] – /// (անընթեռնելի 4 տող) [սրբութ]եան իմոյ: [Եւ] ասասցեն... այլ ան[աւրէնք իբրեւ] զծով ծփեսցին եւ հանգիստ մի՛ գտցեն /Բա/ /// (2 տող) գոյ խաղաղ[ութիւն] ///»: Բա, Աբ. «Պաւղոսի առաքելոյն [Առ Եփեսացիս, Դ. 17-28] – Արդ, [զայս ասեմ եւ ուխտեմ ի Տէր մի եւս] ձեզ զնոյն... տեղի սատանայի: Որ գ///» (Տե՛ս ճաշոց, Վաղարշապատ, 1872, էջ 123-5):



Նմուշ Աա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի մէջքին այլ կաշի՝ շուալաքարով ամրացուած փեղկերին. դռնակը, մէկական կապիչն ու գամն ընկած, կաշին տեղ-տեղ վնասուած, Բ. փեղկին անցքեր, կազմաստառը մաշուած եւ գունաթափ. թ. 1ից առաջ թափուած 3, ընդմէջ թ. 2-3ի 9 թերթ, թ. 42՝ հիմիից անջատ, թ. 124-5, 252, 265՝ կիսով հիմիից անջատ. ձեռագիրը եզրահատուած, ոմանց լուսանցազարդեր (27ա, 30բ, 36ա) վնասուած, թ. 3՝ գրադաշտին այրուածքից առաջացած անցք, 3 տողի 1-3 բառ չիմ, թ. 1-3՝ արտ. լս-իին մուգ շագանակագոյն հետքեր, գուցէ թանաք թափուած (՞), թ. 73-6՝ գրադաշտին, թ. 72-5՝ արտ. լս-իին ցեցի անցք, թ. 139-40՝ գրադաշտին, թ. 179-80, 199-200՝ արտ. լս-իին շագանակագոյն բծեր, թ. 229-31՝ գրադաշտին կաթոցի մուգ շագանակագոյն հետքեր. լուսանցակողերը սեւացած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. 1ա-153բ [Մաշտոց ձեռաց]

ա. *1ա-6ա* [Կանոն մկրտութեան] – *(սկ.) /// տագ[ն]ապեսցի աներեւոյթ տանջանաւք... եւ ասէ զաղաւթս. Աւրհնեալ ես, Տէր Աստուած մեր, որ ընդրեցեր քեզ ժողովուրդ... /2բ/ ...Հաւր [ամե]նակալի հանդերձ կենդա/// |3ա| զճակատն ասէ///. Եւղ անուշ հեղեալ...*

բ. *6բ-26բ* Կանովն համաւրէն պսակ առնելոյ – *Պարտ է քահանային եւ փեսային, հարսինն... եւ ասէ զաղաւթս. Աստուած յաւիտենական, որ զանզոյգս եւ բացորոշեալս զուգակցես ի սէր...*

գ. *27ա-35բ* Կանոն հաղորդութիւն տալոյ – *Առնու քահանայն զփրկական խորհուրդն... եւ ասէ զաղաւթս. Աւրհնեալ ես, Տէր Աստուած ամենակալ, արարիչ ամենայն արարածոց, որ արժանի արարեր զամենայն հաւատացեալս...*

դ. *35բ-44բ* Կանովն տեառնական – *Ածեն զխոստացեալն ի դուռն եկեղեցոյն... Ընթերցուած. յիղեւտացոց. Որ կոչեաց Տէր զՄովսէս եւ խաւսեցաւ ընդ նմա...*

ե. *45ա-64բ* Կանովն զամենայն վաղճանեալսն յուղարկեն առ Քրիստոս – *Աստեն կանոն զերկինք պ[ատմեն]... եւ ասէ զաղաւթս զայս. Աստուած յաւիտենական անբսկիզբն, անեղ, անիմանալի, անհասանելի խորհուրդ...*

զ. *64բ-72բ* Երկրորդ աւուրն այգոյն – *Գան ի գերեզմանն. Սաղմոս՝ եղիցին ականջ քո ի լսել. Պաւղոսի առաքե[ալի] ի Թեսաղոնիկեցոց [թղթ]ոյն]. Այլ մեք պարտիմք գոհանալ... 66ա Աղաւթք սրբոյն Բարսղի Կեսա[րա]ցո – Գոհանամք զքէն, Հա՛յր...*

է. *72բ-91ա* Կանովն յորժամ տղայ վաղճանի – *Աստեն սաղմոս՝ Առ քեզ Տէր համբարձի... Քարոզ՝ Վասն ի վերուստ. եւ ասէ զաղաւթս. Սուրբ ես, Տէ՛ր Աստուած մեր, որ բնակեալդ ես ի յերկինս եւ բարեբանիս ի սրբոց քոց...*

– *91ա-5բ* Գանձ. ի մեռելթաղն ասա. եւ զիս՝ զանպիտան գրիչս յիշեա՛ *(«ՄԱՆՎԵԼՍ»)* – *Մինդ ի յէէն, Բանդ ի սկզբանէ... դուք բարով կացէ՛ք մընացէ՛ք. ողորմեա՛ց մեզ Տէր:*

ը. *95բ-116բ* Կանոն խաչ ատհնեն — *Բերեն յեկեղեցին, լուանան ջրով եւ ասեն սաղմոս... Ընթերցուած յԱռակաց. երանեալ է այր, որ եգիտ զիմաստութիւն...*

թ. *117ա-35բ* Կանովն ջուր ատհնելոյ յատուր Յայտնութեան — *երթան ի ջուրն խաչիւ եւ մոմեղինաւք... Ընթերցուած յելից. եւ խաղաղացոյց Մովսէս զորդիսն Իսրայէլի...*

ժ. *135բ-53բ* Կանոն Մեծի հինգշաբաթին Ոտնալուային. ըստ որում ասաց Յիսուս, թէ՝ Ատիճակ մի ետու ձեզ, զոր ասացեալ է տեառն եփրեմի խորին Ասորոյ, զոր թարգմանեաց սուրբ դիտապետն հայոց Գրիգորիոս Վկայասէրն — *Ի տաւներըորդ ժամուն ժողովին ի գաւիթս եկեղեցոյն... Քարոզէ սարկաւագն. Եւ եւս գոհութիւն եւ երկրպագութիւն մատուսցուք Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի...*

Բ. *153բ-274բ* [Գանձարան]

— *153բ-5ա* Յանկ Գանձարանիս — *Ա. Սրբոց հրեշտակապետացն... ԼՂ. Յակոբայ Մըծբնայ հայրապետին:*

ա. *155ա-8ա* Ա. Գանձ սրբոց հրեշտակապետացն *(«ՄԿՐՏԻՉ»)* — *Մեծապայծառ խորհուրդ հրաշազան... անմարմնական զաւրացն արքնական ողորմեաց:*

բ. *158բ-61բ* Բ. Գանձ Յարութեանն Քրիստոսի. կիրակէի *(«ԱՌԱՔԵԼ»)* — *Անժամանակ լոյսն արփիական, որ է ծընունդ Հաւր, Որդի եւ Բան... ողորմութիւն լիցի պարգեւեալ, ողորմ[եա՛]:*

Ծնթ. Բոլոր գանձերի վերջում «ողորմեա՛» բառը յապաւումով, այսուհետ գրում ենք ամբողջութեամբ, առանց վերականգնման նշանների:

գ. *161բ-5ա* Գ. Գանձ Դաւթեա մարգ[արէի] եւ Յակոբա *(«ԽԱՉՏՈՒՐ»)* — *Խորք անքննին, անճառ անհասին... եւ ազատել ի հրո գեհենին. ողորմեա՛:*

դ. *165ա-8ա* Դ. Գանձ սրբոյն Ստեփանոսի Նախավկային *(«ՄԿՐՏԻՉ»)* — *Մեծ եւ հզաւր անմահ թագաւոր... ’ւ արժան առնել մեծաց պարգեւի. ողորմեա՛:*

ե. *168բ-74ա* Ե. Գանձ Պետրոսի եւ Պաւղոսի *(«ՍԱՐԳԻՍ ԳՐԻՉ»)* — *Սուրբ երրորդութիւն, ստեղծաւղ զաւրութիւն... քեզ փառս ի յերկրի, պատիւ ի յերկինի՝ ընդ քոյդ միածնի. ողորմեա՛:*

զ. *174ա-8բ* Զ. Գանձ Ոդոց Ոռոմանց. ասա՛ եւ զիս յիշեա՛ *(«ԳՐԻԳՈՐԻ Է ՍԱ»)* — *Գառըդ երկնային, Հաւրըդ միածին... գանձիս ասողի եւ սրբագրողի՝ անմիտ Գրիգորի, / այլ եւ ստացողի եւ փոխարկողի, սիրով հայցողի. ողորմեա՛:*

է. *178բ-81բ* Է. Գանձ Յարութեանն Քրիստոսի *(«ԿԻՐԱԿԵԻ»)* — *կենդանարար Որդի Աստուծոյ... կեանս անբասիր եւ յոյժ բարեգոյն. ողորմեա՛:*

ը. *181բ-5ա* Ը. Գանձ Ճրագալուցի Ծնընդեանն Քրիստոսի Աստուծոյ *(«ՏԷՐ ՄԽԻ»)* — *Տարփումն ըղձական, տոչոր անձկական... դրախտին բանալի վերըստին շնորհի. ծառն ի քէն ծաղկի: Ող՛:*

թ. *185ա-7բ* Թ. Առաջի ատուր Ծնընդե[ան] *(«ԹԱՐԱՅ»)* — *Թագըդ պարծանաց, թագաւոր գաւրաց... արարիչ բնաւի, Տէրդ ամենայնի. ողորմեա՛:*

ժ. *187բ-90ա* [Ժ.] Երկրորդ ատուրն *(«ՄԿՐՏԻՉ»)* — *Մաքուր եւ անբիծ Սուրբ Աստուածածին... առ միածինըն քո միջնորդեալ. ողորմեա՛:*

ժա. *190բ-4ա* ԺԱ. Երրորդ ատուր Ծնը[ն]դեանն *(«ԽԱՉԱՏՈՒՐ»)* — *Խընդութեան ձայն, բարբառ աւետեաց... փառաւորեալդ ի հրանիւթ սեռից մեզ բարէխաւս բնութեանս ազգակից. ողորմեա՛:*

ժբ. *194ա-6բ* ԺԲ. Կանոն թլփատութեան *(«ԳՐԻԳՈՐ»)* — *Գոչումն ըղձագին, գովեստ քաղցրագին... եւ ամենայնին սրբոցն երամին, որ ի մէնջ պատուին. ողորմեա՛:*

ժգ. *196բ-201ա* [ԺԳ.] Յովանու Կարապետին *(«ԳՐԻԳՈՐԻ Է»)* — *Գերագոյն բարի Փրկիչ աշխարհի... մեզազ թողութիւն գըրոց խնամողին եւ լաւ պահողին տալ ողորմութիւն. ողորմեա՛:*

ժդ. *201ա-3բ* ԺԴ. Կանոն թագատրացն *(«ՏԱՍԱ»)* — *Տէր տընտեսական տեսեալ նախնական... որ մեզ լոյս ծագեալ եւ լուսաւորեալ. ողորմեա՛:*

ժե. *203բ-6ա* ԺԵ. Գանձ Տեառնընդառաջին ասա՛ եւ զիս յիշեա՛ *(«ԳՐԻԳՈՐ»)* — *Գովեալ եւ աւրհնեալ Աստուածըդ բարձրեալ... երգոյս երգաւղի, սիրով հայցողի, մասն ի պարգեւի. ողորմեա՛:*

— *206ա-7բ* Տաղ Գալստեան. [ասա՛յ] եւ զիս յիշեայ՛ — *Քրիստո՛ս, փառաց թագաւոր / այսաւր եկեալ յընծայումն... քեզ փառս տալ ընդ սրբոցն:*

ժզ. *207բ-10բ* ԺԶ. Սրբոյն Սարգսի *(«ՄԿՐՏԻՉ»)* — *Մեծապայծառ փառաւք զարդարեալ... մանկանց սորա ուղ[ղ]ափառութիւն. ողորմեա՛:*

ժէ. *210բ-3բ* ԺԷ. Գանձ Կիրակէի. ասա՛ եւ զիս յիշեա՛ *(«ԳՐԻԳՈՐԷ»)* — *Գերակա գընդին գոյից համայնի... բախումն սրտի, բարբառ մեղայի, զի Տէրն ողորմի. ողորմեա՛:*

ժը. *213բ-6բ* ԺԸ. Կանոն Վարդանանցն *(«ԳՐԻԳՈՐԻ Է»)* — *Գոհաբանեալ Տէրդ ամենայնի... եւ երգողի բանիս աղքատին, / անմիտ Գրիգոր՝ բանի խընդողին. ողորմեա՛:*

ժթ. *216բ-20բ* ԺԹ. Գանձ Երկրորդ կիրակէին Աղուհացիցն *(«ԳՐԻԳՈՐԻ Է»)* — *Գրթութեամբ իջեր Տէր եւ մարդ եղեր... Սիմոն Պետրոսին, սուրբ Յոհանիսին եւ Յակոբոսին. ողորմեա՛:*

ի. *220բ-2բ* Ի. Երրորդ կիրակէի *(«ՄԿՐՏԻՉ»)* — *Մեծ եւ ահեղ խորհուրդ տիրական... մանաւանդ հայոց մեր ազգին տալ քաւութիւն եւ ողորմութիւն. ողորմեա՛:*

իա. *223ա-5բ* ԻԱ. Գանձ վասն մեծատանն *(«ՄԿՐՏԻՉ»)* — *Մեծ եւ ահեղ խորհուրդ տիրական, որ նորոգեաց զաշխարհս ամենայն... մեզ այց առնել յաշխարհիս չարի. ողորմեա՛:*

իբ. *225բ-8ա* ԻԲ. Ի դատաստան եւ յայրին *(«ՄԿՐՏԻՉ»)* — *Մեծ եւ ահեղ խորհուրդ անքընին... Լուսաւորչին Գրիգորի սըրբոյն. ողորմեա՛:*

իգ. *228ա-31բ* ԻԳ. Վեցեր<ր>որդ կիրակէին *(«ԳՐԻԳՈՐ»)* – *Գոյիդ կատարեալ, Աստուծոյդ բարձրեալ... այլեւ երգողի, գանձիս ’ւ ասողի, անմիտ Գրիգորի... զաւարտն ի բարի. ողո:*

իդ. *231բ-4բ* ԻԴ. Գալըստեանն. Ծաղկազ[արդի] *(«ՀԱՅՑԷՍ»)* – *Համագոյական Հաւր սահման եւ Բան... յերկինս հանեալ, յաջմէ կացուցեալ. ողորմեա՛:*

իե. *234բ-8ա* ԻԵ. Գանձ Թաղման ճրագալուցին *(«ԽԱՉԱՏՈՒՐ»)* – *Խորհուրդ հանգըստեան եւ Յ<ր>որդին... փեսայն յառնէ փառաւք զարդարեալ. ողորմեա՛:*

իզ. *238ա-40բ* ԻԶ. Կանոն Յարութեանն Քրիստոսի Աստուծոյ *(«ՄԿՐՏԻՉ»)* – *Մարդասիրութեամբ Որդիդ միածին... ժողովրդեանս մեղաց թողութիւն. ողորմեա՛:*

իէ. *240բ-3բ* ԻԷ. Մեռելոցի ատուրն *(«ՏԷՐՈՒՆ»)* – *Տէր տէրունական, տըւաւդ տիրական... Տէր ահա եկեալ. ողորմեա՛:*

իը. *243բ-6բ* ԻԸ. Կանոն Երրորդ ատուր *(«ԱԿԱՆ»)* – *Արդ լուսաւորեա՛, արդ փառաւորեա՛յ... հաղորդ արարած, զազգ Հայաստանեայց. ողորմեա՛:*

իթ. *246բ-8բ* ԻԹ. Զորրորդ ատուրն *(«ՄԿՐՏԻՉ»)* – *Մեծապայծառ ձայնիւ ցընծալի... երկրպագեմք մեք խոստովանեալ. ողորմեա՛:*

լ. *248բ-52ա* Լ. Նոր կիրակէի *(«ԳՐԻԳՈՐԻ է»)* – *Գաղտնի խորհրդին գուշակեալ ի հին... երգոյս երգողի եւ սրբագրողի՝ անմիտ Գրիգորի, այլեւ ստացողի սիրով հայցողի եւ փոխարկողի, մասնի պարգեւի. ողորմեա՛:*

լա. *252ա-5ա* ԼԱ. Կանոն Մեծահրաշին *(«ՄԱԹԷՈՍԻ է»)* – *Միակդ ահաւոր, Տէր եւ զաւրաւոր... բամբ սուրբ հանդիսի, նոր նորոգեցի, հայոց աշխարհի. ողորմեա՛:*

լբ. *255ա-7բ* ԼԲ. Վարդավառին ասա՛ *(«ՄԿՐՏԻՉ»)* – *Մեծ եւ ահեղ խորհուրդ մեզ յայտնեալ... արժանանալ Տեառն ողորմութեան. ողորմեա՛:*

լգ. *257բ-9բ* ԼԳ. Գանձ Փոխմանն Կուսին *(«ՄԿՐՏԻՉ»)* – *Մեծապայծառ արփիանըման փայլեաց հոգի... գըթալ ի մեզ աստ ’ւ յապագային. ողորմեա՛:*

լդ. *259բ-62ա* ԼԴ. Սուրբ խաչին գանձ *(«ԱՌԱՔԵԼԻ»)* – *Աւրհնեալ ես, փայտ, կանգնեալ ի յերկիրի... զխաղաղութիւն շնորհել աշխարհի, մեզ ողորմել յաւուրն ահեղի. ողորմեա՛:*

լե. *262ա-7բ* ԼԵ. Գանձ Վարագա խաչին ասայ *(«ԳՐԻԳՈՐԻ Ե ՍԱ»)* – *Գլուխն եկեղեցոյ, վէմըն հաւատոյ... Աստուած եւ գըթայ եւ մեզ ողորմեա. ողորմեա՛:*

լզ. *267բ-9ա* ԼԶ. Գիւտ խաչին ասա՛ *(«ԽԱՉԱՏՈՒՐ»)* – *Խաչի քո, Քրիստո՛ս, երկիր պագանեմք... ազատել յահագին հըրոյն. ողորմեա՛:*

լէ. *269ա-72ա* ԼԷ. Գանձ կիրակմտի *(«ԳՐԻԳՈՐԻ»)* – *Գերամբարձ Աստուած, գովեալդ ի զաւրաց... սիրով հայցողի, գանձիս ’ւ ասողի՝ անմիտ Գրիգորի... եւ մեզքն քաւողի. ողորմեա՛:*

լը. *272ա-4բ* ԼԸ. Սրբոյն Յակոբայ Մծբնա ե[պարապետին] *(«ՄԿՐՏԻՉ»)* – *Մեծահամբաւ անուն գովելի... եւ ամենայն սըրբոց հանդիսին. ողորմեա՛:*

Ծնթ. Ստ. լս-ներում կան կանոների համառօտ խորագրերը:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, ժէ. դ., շինծու բոլորգիր

275ա [Տաղ իմն] – (սկ.) *///ն մարմնոցն, որ ի երկինս են փառաբան / զԱստուածածին Բանին ծնաւղըն Մարիամ, / որ անդադար է բարեխաւս ազգի մարդկան: / Դուք հայցեցէ՛ք ի Սուրբ Հոգոյն մաքրողական / [ե]ս հաւատովս վերայնամ յերկնից խորան, / զի Տէրն քաղցր է եւ բարի, / որդոց մարդկան անտես չառնէ / զգործս ձեռացն արարչութեան:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

116բ Եւ զիս՝ զանպիտան գրիչս՝ զՅովաննէս, յիշեցէ՛ք առ Քրիստոս:

274բ Փա՛ռք ամենասուրբ երրորդութեան՝ Հաւր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ, յերից յաւիտեանս եւ անդր, քան զպայման յաւիտենին. ամէն: Գրեցաւ սուրբ Մաշտոցս եւ Գանձս ի վանս Մեծկետոտ՝ ընդ հովանեաւ Սուրբ Յակոբայ եւ Սուրբ Միհասայ, ի թըւականիս մերում ՋՄԷ. *(1508)*, ձեռամբ յոգնամեղ եւ անպիտան գրչի՝ Յովանիսի: *Արդ, աղաչեմ զամենեսեան, որք կարդայք կամ տեսանէք, յիշեցէ՛ք ի սուրբ յաղաւթս ձեր զիս եւ զհայրն իմ՝ զՍտեփաննոս քահանայն եւ զեղբայրն իմ եւ /// (վջ.):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

154բ (1663 թ., նոտրգիր) Յիշատակ է. տէր Տեփանոսին է. յորդի Գըոռին է:

275ա Յիշատակ է տէր Տեփան<ա>ոսին, իւր կողակիցին՝ Գոհարին, Կարապետին, Հրապետին, Մարտիրոսին, Խաթուն[ին]: *Թվին ՌՃԺՓ. (1663):*


ՆՇՈՒՄ՝ *Ա. կազմաստառին սոսնձած թղթին՝ «839/3535», «ՋՄԷ. – 1508, Մ[եսրոպ] եպիս[կոպոս]», մէջքին սոսնձած թղթին՝ «Մաշտոց»:*

3536
ՄԱՇՏՈՑ ՁԵՌԱՅ

ԽՈՐԱՆԱՇԱՏՈՒ ՎԱՆՔ ՌՃԻԳ. – 1674

ԳՐԻՉ՝ Աւետիս Ւհյ:

ԹԵՐԹ՝ 134: ՊՐԱԿ՝ Գ-ԺԸ×12 (Գ 2, Դ 4, ե, Թ 10, Ա, Բ, ժ, ժԱ՝ թափուած, ԺԲ 9, ԺԸ 2): ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ «ТА» կամ թագ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20,3×16: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն, կարմրով սահմանագծուած (15×11): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 53ա):



Նմուշ 53ա

ՏՈՂ՝ 21: ԿԱՋՄ՝ կարմիր լաթ, մէջբը՝ սեւ կաշի. աստառը՝ թուղթ (1950ականներէ): ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ՝ չգրուած սպիտակ թուղթ, մասն կազմաստառի:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Ձարդագիր՝ հանգուցագիր, թոչնագիր (91բ): Գոյն՝ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թ. 13-23՝ հիմմից անջատ, որոշ թերթեր սխալ կազմած, կարդալ՝ թ. 3, 133, 127, 126, 119, 118, 1, 2, 4, 11 (Գ, Դ, ե. պրակի), 115, 117, 120, 122, 121, 124, 123, 125, 128, 129, 130 (ԺԷ. պրակ), 131, 132, 134 (ԺԸ. պրակ). թ. 3ից առաջ 30 թ. (Ա. Բ. պրակի 2×12+7 Գ. պրակից), ընդմէջ թ. 3ի եւ 133ի, թ. 126ի եւ 119ի 2ական թերթ, թ. 133ի եւ 127ի, 118ի եւ 1ի առնուազն 4 թերթ, թ. 47-8ի 1 թերթ, թ. 57-8ի 28 թ. (Ժ. ԺԱ պրակի 2×12+Թ.ից 1 թ.+ԺԲ.ից 3 թ.), թ. 132ի եւ 134ի 9 թերթ թափուած. գրադաշտը խոնաւութեան պատճառով մգացած, վնասուած, թ.1-2, 4-5՝ հիմմին մօտ, 30-8, 78-132՝ գրադաշտին, թ. 43-5՝ արտ. լս-իմ ցեցի անցքեր, թ. 118, 127՝ արտ. լս.՝ պատռուածք. լուսանցակողերը սեւացած. թ. 68՝ վր. անկիւնը թափուած, ապա նորոգուած սպիտակ 2×2 սմ չափի թղթով, 3 տող թափուած, թ. 68-74, 114-134՝ վերից 2-8 տողի չափով թափուած մասերը լրացուած սպիտակ թղթով, գրադաշտը վնասուած, Բ. կազմաստառին սոսնձած որպէս էջանշան գործածուած տպագիր գրքի թերթից մի փոքրիկ մաս, վրան Սաղմոս ՃԺԸ. «Ա-րա///ողորմու/// [զարդար]ութիւնս fո ու [սո]/// եմ ես՝ իմաստ[ուն]... Մանուկ էի ես եւ ///զարդարութիւնս fո /// [ա]րդարութիւն fո ար///»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *3աբ, 133աբ* [Կանոն պսակ աւրհնելոյ] – *(սկ.) /// [Ընթերցուած յԵսայեա մարգարէէ, կՓ. 2-7]. յանուն Նորա, զոր Տէր անուանեսցէ եւ եղիցիս պսակ վայելչութեան... 3բ [Ընթերցուած ի Մաթէոսէ]. եւ գնացին զհետ Նորա ժողովուրդք բազումք... ըստ ամենայն վնասու: Պատաս/// (2 թ.) 133ա [Աստուած մարդասէր, որ միայնդ ես բարերար] /// [պարսպե]ցուցեր կարողութեամբ, զարեգակն ճառագայթեցուցեր...*

2. *127ա* [Կարգ երորդ ամուսնութեան, ձեռ. *953, 492բ*] – *(սկ.) /// [յանդի]ման քեզ եւ խնդրեն թողութիւն մեղաց կամայից եւ ակամայից, վասն որոյ բարերար Տէր տուեաց...*

3. *127աբ, 126աբ, 119աբ, 118աբ, 1աբ* Կանոն մեծի Յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի ջուր ածելոյ – *Զկնի պատարագին երթան ի ջուրն... Ընթերցուած Զորրորդ թագաւորութենէ. եւ ասեն արք քաղաքացին ցեղիսէէ...*

– *119աբ, 118աբ, 1ա* [Աւրհնութիւն ջրոյ, զոր ասացեալ է սրբոյն Բարսղի հայրապետին Կեսարու Կապուտկացւոյ] – *(սկ.) /// զտեղացեալ ջուրք, որ ի ծով երեւեցաւ ցամաքս ամենածին բուսով...(118բ աղաւնակերպ իջմամբ ուստի յառաջընթաց /// (3-4 թ.) 1ա /// եղիսէիւ ջրով եւ [հր]ով ազատեցեր զիս ի ծառայութենէ...)*

4. *1բ-2բ, 4ա-7բ* Թ. Կանուն Յոհաննի [Մ]անդագոյն հայոց կաթողիկոսի Կոչումն ապաշխարութեան – *երթայ մեղուցեալն ի դուռն եկեղեցւոյն... Ընթերցուած յԵսայեա մարգարէէ. Լուարո՛ւք, սրբեցարո՛ւք, ընկեցէ՛ք զչարիս անձանց ձերոց...*

5. *8ա-17ա* Ժ. Կանովն Մեծի հինգշաբաթին զապաշխարողսն յարձակելոյ – *Գ. ժամն ժողովին քահանայքն զապաշխարողսն ի դուռն եկեղեցւոյն... Ընթերցուած յԵսայեա մարգարէէ. Եւ կատարեսցեն աւուրք սգոյ քո...10ա Աղօթք ի վերայ ապաշխարողաց [Բարսղի արքեպիսկոպոսի] – Տէ՛ր Աստուած, Հա՛յր ամենակալ... (միջից թափուած 1 թ.՝ 11բ «... կուէն Մարիամու Աստուածածնէն: Եւ յանձն /// 12ա [պատ]կերն ի դրախտն [ու]ստի եհան զեւթնեկի շնորհսն...»):*

6. *17ա-21ա* ԺԱ. Կանովն Բարոզ պատուիրանի, զոր էկուցանէ (=զեկուցանէ) բահանան զժողովրդեանն՝ նախան զսկիզբն խորհրդոյն – *Առեալ զսուրբ Աւետարան ի ձիրկս իւր եւ կարկառեալ զձեռն իւր եւ ասէ զաղաւթս. Լուարո՛ւք ինձ, որդեա՛կք իմ...*

7. *21ա-32բ* ԺԲ. Կանոն Մեծի Հինգշաբաթին երեկունն Ոտնալուային. ըստ որում ասաց Յիսուս, թէ՝ Օրինակ մի ետու ձեզ. Ջոր արարեալ է սրբոյն եփրեմի Խորին, զոր թարգմանեաց սուրբ հայրն հայոց Գրիգորիս Վկայասէրն – *Ի տասներորդ ժամուն զկնի պատարագին ժողովին ի դուռն եկեղեցւոյն... սարկաւագն քարոզէ. եւ եւս գոհութիւն եւ երկրպագութիւն մատուցուք Տեառն մերոյ...*

8. *32բ-46բ* ԺԳ. Կանոն խաչ աւրհնելոյ – *Բերեն յեկեղեցին եւ ասեն շարական խաչի ԴՋ... Ընթերցուած յԱռակաց. երանեալ է այր, որ եգիտ զիմաստութիւն...*

9. *46բ-50բ* ԺԴ. Կանոն Տեառնական աղ աւրհնելոյ – *Ածեն զնուիրեալսն ի դուռն եկեղեցւոյն եւ առաջի սուրբ խաչին... Ընթերցուած Ղեւտացւոց. եւ կոչեաց Տէր զՄովսէս եւ խօսեցաւ... (միջից թափուած՝ 47բ «...առաջի Տեառն եւ իբրեւ կատարեաց Դա[ւիթ] /// (3 թ.) 48ա զկաղս եւ զկոյրս, զի երանի լինիցիս, զի ոչ ունին...):*

10. *50բ* Կանոն հաւ աւրհնելոյ – *Սաղմոս. Տէ՛ր, Տէ՛ր մեր զի աքանչէ՛: եւ ասէ զաղօթս. Տէր Աստուա՛ծ ամենակալ...*

11. *51ա-6ա* ԺԵ. Կանոն հոգէհանգիստ. աղ աւրհ-

նելոյ – *Ասեն սաղմոս ի թիւ. երանի որում թող[ութիւն]… ասէ զաղաւթս. Անկեալ եմք առաջի քո…*

12. *56ա-7բ* [ԺԶ.] Կանոն հաղորդ տալոյ – *Առնու քահանան զփրկական խորհուրդն եւ գխաչն վառեալ առաջի… Հրաժարիմք ի սատանայէ եւ յամենայնի… մեզա՛ զօրութեամբ հոգւոյս խո[րամանկութեամբ] /// (վջ.)։*

13. *58աբ* [Ողբ ի Քեռրենց Յովանիսէ. ձեռ. *1989, 213ա – Յերէկ հողվերօքն անցայ] – (սկ.) /// բնաւ իսկի չի/// / զինչ որ բարեկա///… ըզփառս աշխարհիս սիրես, / որ կորուստ է քեզ ամենի։*

14. *58բ-63ա* ԺԹ. Կանոն Այգալացին – *Նախ երթան ի գերեզմանն եւ խաչ վառեն եւ Աւետարանաւ եւ բիւրմամբ խնկոց… Պօղոսի ի Թեսաղիկոնիկեացւոց թղթ[ոյն]. Այլ մեք պարտիմք գոհանալ զԱստուծոյ…*

15. *63ա-72ա* Ի. Կանոն Ամբիծի ասելոյ – *Իսկ ամենայն երեկոյ խաչիւ եւ Աւետարանաւ եւ վառեալ մոմեղենօք երթան ի տուն ննջեցելոցն… երանեալ են անբիծք ի ճանապարհի…*

16. *72ա-5ա* ԻԱ. Կանոն եւթնեւերորդ աւուրն – *Երթան ի գերեզմանն խաչիւ եւ Աւետարանաւ եւ ասեն սաղմոս. Տէ՛ր, լո՛ւր աղօթից իմոց… [Ընթերցուած] յեսայեա մարգարէէ. Մխիթարեցէ՛ք ժողովուրդք իմ…*

17. *75ա-85ա* ԻԲ. Կանոն, յորժամ տղայ վախճանի – *Այսպէս ուղարկեն առ Քրիստոս։ Ասեն սաղմոս գոբոզայս Դ. ԵՒս քեզ Տէ՛ր համբարձի… քահանայ ասէ զաղօթս. Սուրբ ես Տէր Աստուած մեր, որ բնակեալդ ես…*

18. *85ա-7ա* ԻԳ. [Կանոն երկրորդ աւուրն. ձեռ. *961, 92բ*, Տղաթաղի այգելաց, *ստ. լս.*] – *Իսկ երկրորդ առաւօտուն գան ի գերեզմանն։ Սաղմոս, կցուրդ. եղիցի անուն Տեառն… Ընթերցուած յեսայեա մարգարէէ. Զի ի Տեառնէ եղեց դարձ արդարոց…*

19. *87ա-9ա* ԻԴ. Կանոն տղաթաղի եւթնօրեացն – *Եւթներորդ աւուրն գան ի գերեզմանն եւ ասեն սաղմոս. Առաքեաց զբան իւր… Եւ քահանայն ասէ զաղօթս. Աստուած յաւիտենական, թագաւոր անմահ, դու ես Տէր ամենեցունն…*

20. *89ա-91բ* [Իե]. Կանոն զարմտիս, սերմն, շեղջ եւ հնձան աւրհնելոյ – *Սաղմոս, կցուրդ. Հովիտք բազում. Փոխ. Քեզ վայե[լ է]… Ընթերցուած յԱռակաց. Պատուեա՛ Տէր ի քոյոց արդար վաստակոց…*

21. *91բ-5ա* ԻԶ. Կանուն պղծեալ տաճարի աւրհնել եւ շարժեալ սեղանոյն վերըստին աւրհնել – *Մտանէ եպիսկոպոսն քահանայիւք հանդերձ, սարկաւագօք եւ հրամայէ զգեհինն եկեղեցոյն լուանալ… Ընթերցուած յեսայեա մարգարէէ. Հակառակորդն մեր կոխեցին զսրբութիւն…*

22. *95ա-8բ* ԻԷ. Կանուն յաւազան աւրհնելոյ – *Հաստատեն զաւազանն ի տեղոջ իւրում եւ լուանան ներքոյ եւ արտաքոյ… քարոզի. Միաբան խնդրեսցուք ի Փրկչէն մերմէ, զի առաքեսցէ զշնորհս…*

23. *98բ-9բ* ԻԸ. Կանոն սկի[հ] եւ մաղզման աւրհնելոյ – *Բերեն եկեղեցին, նախ լուանան ջրով եւ ապա գինով… քահանայն ասէ զաղաւթս. Աւրհնեալ ես Տէր Աստուած մեր, որ եստուր մեզ զնիւթս…*

24. *99բ-100բ* ԻԹ. Կանոն նոր դուռն աւրհնելոյ եկեղեցոյ – *Հաստատեն ի տեղւոջ իւրում եւ ասեն սաղմոս. Խոստովան եղեր… ասեն զաղաւթս զայս. Տէ՛ր Աստուած, նորոգիչ գոյոց արարածոց, որ ի սկզբանցն…*

25. *100բ* Լ. Կանոն վասն հանդերձ աւրհնելոյ – *Բերեն եկեղեցին, սաղմոս. Միրեցից զքեզ, Տէ՛ր… ասէ զաղօթս զայս. Աստուա՛ծ բարձրեալ, որ զգեցուցեր զեկեղեցի քո լուսով…*

26. *100բ-1ա* ԼԱ. Աղօթք երաշտի, կարդա՛, որ անձրեւ գայ – *Տէ՛ր Աստուած մեր, որ յաղագս առ քեզ նախանձու լուար եղիայի մարգարէին…*

27. *101ա-3ա* ԼԲ. Կանոն խաչալուա առնել – *Սաղմոս. Ի կարդալ իմում։ Ընթերցուած ի Զորրորդ թագաւորութենէ. եւ ասեն այսպէս արք քաղաքացիքն…*

28. *103աբ* ԼԳ. Աղօթք, որ ինչ պեղծ կերակուր կերեալ իցէ – *Տէր Աստուա՛ծ մեր, որ ի սուրբս հանգուցեալ եւ գովեալդ Իսրայէղի…*

29. *103բ-4ա* ԼԴ. Աղօթք ի վերայ երդմնաճաւոց կարդա՛ – *Աստուա՛ծ, որ մարդաբնակութիւն փոփոխական եւ տկար գիտես…*

30. *104աբ* ԼԵ. Կանոն զողկոյզ աւրհնելոյ, զայգոյ եւ զորթոյ – *Տանին եկեղեցին, եւ քահանայն հոլոնին շուրջ եւ տան զնշանն տերունական ի ձեռս քահանայի միոջ… Աւրհնեալ է մարգասէրն Աստուած, որ վասն մեր մարդ եղեւ…*

31. *104բ* ԼԶ. Վասն խունկ աւրհնելոյ – *Աւրհնեալ ես, Տէ՛ր Աստուած, որ ընկալար զխունկն ի ձեռացն Ահարոնի…*

32. *104բ-6բ* ԼԷ. Կանոն հատի պատարագի – *Գոհանամք եւ փառաւորեմք զքեզ, բարերար եւ բազումողորմ Տէր…*

33. *106բ-16բ* [Աւետարանի Իղաբերից, Բժշկութեան, Հանգստեան]

ա. *106բ-7բ* Աւետարանն Իղաբերից Մաթէոս [ԻՀ. 1-20] – *Եւ յերեկոյի շաբաթուն յորում լուսանայր միաշաբաթին…*

բ. *107բ-8ա* Աւետարան Բժշկութեան [Մտթ. Թ. 27-34] – *Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս, զհետ եղեն կոյրք…*

գ. *108ա-9ա* Աւետարան Հանգստեան [Մտթ. ԺԳ. 36-52] – *Յայնժամ թողեալ Յիսուս զժողովուրդսն, ելն ի տուն…*

դ. *109ա-10ա* Աւետարան Իղաբերից Մարկոս [ԺԵ. 42-ԺԶ. 8] – *Եւ իբրեւ երեկոյ [եղեւ, քան]զի ուրբաթ էր…*

ե. *110ա-1ա* Աւետարան Բժշկութեան Մարկոս [Ա.

21-34] – *եւ մտանեն ի կափառնաւում եւ իսկ եւ իսկ ի շաբաթուն…*

զ. 1*11աբ* Աւետարան Հանգստեան [Մրկ. Դ. 26-33] – *եւ ասէր. Այսպէս է արքայութիւն Աստուծոյ. որպէս զի այր մի արկանիցէ…*

է. *111բ-2բ* Աւետարան Իղաբերից Ղուկաս [ԻԳ. 50-ԻԴ. 12] – *եւ ահա այր միաւուն Յովսէփ, որ էր նախարար…*

ը. *112բ-3ա* Աւետարան Բժշկութեան [Ղուկ. Դ. 31-42] – *եւ էջ կափառնաւումն ի քաղաքն Գալիլեաց…*

թ. *113ա-4ա* Աւետարան [Հան]գստեան [Ղուկ. ԺԲ. 32-48] – *Մի երկնչիր հօտ [փո]քրիկ, [զ]ի հաճեցաւ Հայրն…*

ժ. *114ա-5բ* Աւետարան Իղաբերից Յովհաննու [ԺԹ. 38-Ի. 18] – *Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս Յովսէփ, որ Յարիմաթեայն էր…*

ժա. *115բ-7բ* Աւետարան Բժշկութեան [Յովհ. ե. 1-30] – *Յետ այսորիկ ոտն էր հրէից…*

31. 117բ, 120աբ, 122աբ, 121աբ, 124աբ, 123աբ, 125աբ, 128ա-32բ Ի կատարած. Սաղմոս ի Դաւիթ ԺԸ. 1 – Լե. 6] – *երկինք [պատմեն] զփառս Աստուծոյ… Տէր յերկինս է ողորմութիւն քո եւ ճշմարտութիւն քո մինչեւ յամպս. ալելուա, ալելուիա:*

Ծնթ. Ստ. լս-ներում կան կանոների համառօտ խորագրերը: Տե՛ս Մայր Մաշտոց, հտ. Ա., գիրք Ա., Ժ. դար, աշխ. Գէորգ Տէր-Վաղդանեանի, Սբ. Էջմիածին, 2012:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԴՐՋՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

134ա /// (8 տող) կարեւոր ///Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի ս /// (1 բառ) յաւիտեանս յաւիտենից. ամէն: Որ եւս կարողութիւն տկար եւ տարտամ անարմար սուտանուն Աւետիս քահանայ, ըստ իմում կարի օրինակեցի Մաշտոցս ի թուականիս հայոց ՌՃԻԳ. (1674), ի հայրապետութեան տէր Պետրոսի եւ յաթոռ խորանաշատու */// (6 տող) /// ք յիշեցէք զիս եւ ծնօղքն իմ՝* Հասան, *եւ մայրն [ի]մ՝* Սաւիկն, *եւ որդին /// տէր* Մարգարէ[ն], Մարտիրոսն */// [Ովաննեսն, Մկրտիչն, դստերքն]* իմ՝* Սաւիկն, Նազլուխ[անն], Հուռումսիմէն, եղիսաբեթն, Հեղնարն, *որ փոխեալ են առ Տէր: եւ անարժան* Աւետի[ս] *երէց եւ կենակից իմ* Թանկազիզն *եւ որ |134բ| /// (2 տող)* Մելիի[ս]եթն, *եւ զիս՝ /// մեղապարտս յիշեցէ՛ք եւ անմեղադիր լերո՛ւք սղալանաց սորայ (՞) /// (1 տող անընթեռնելի) եւ ամենայնի, որ ի սմին: Պակասութիւն կա///ն, զի ոչ եթէ արար /// (1 բառ), ապա կար մեր այսչափ [է]ր. դարձեալ ան-կ[ա]նիմ առ ոտս ձեր՝ անմեղադիր լերո՛ւք, եթէ թողէք զիս եւ ոչ ծաղր առնէք, թողցէ եւ ձեզ Հայրն ձեր երկնաւոր զանցա[նս] ձեր. ամեն, որ եւ աւրհն[եալ/// (2 տող) ///ոց /// (2-3 բառ) առաք/// (2 բառ) երրորդ[ութեան] /// վասն Տեառն մերոյ ///սմանացն ի յաւարտ բանի ասացուք Հայր մեր, որ. ամէն:*

*Ծնթ. Վերականգնել ենք ըստ ԺԷ. դ. յիշ-ի, Գ., էջ 707, Հ՝ 1075՝ նոյն Աւետիսի գրած՝ ՄՄ 262 ձեռագրի 42բ էջի յիշատակարանի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *8բ լս. (1785 թ., նոտրգիր) ես՝ տիրացու* Դաւիթս, *գիրեցի թվին ՌՄԼԴ. (1785):*

2. *134բ (ԺԸ. դ., անարուեստ նոտրգիր) Յիշատակ է,* Նէկո: *Յիշատակ է* Նիկողոս *վարդապետին այս Մաշտոցս ի տուել ի ձեռըն տեառն* Մելիքսէթին: *Ով որ կարդայ, միբերան ողոր[մ]ի ասէ, Աստուած ողոնի բուն (՞) յիմոյ. Տէր:*

ՆՇՈՒՄ՝ *1ա՝ «844, 3536», «ՌՃԻԶ. – 1674, Մ[եսրոպ] եպիս[կոպոս]»:*


ԳՐԶԱՓՈՐՁ՝ *42բ, 43ա՝* այբուբեն, առանձին տառեր, *«ին նուաստ տտանարժան», 90բ՝ «Տէր, օյ, շատ է այս Մաշտոց»:*

3537
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՅԻ, ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ ՌՄԻ. – 1771

ԳՐԻՉ՝ Պետրոս Բերթումեան:

ԹԵՐԹ՝ 230 (գրչի էջակալում՝ 3-458, որ է՝ 5ա-230բ). չգրուած՝ 1բ, 4բ: ՊՐԱԿ՝ Ա-Շ×10 (Ա, Շ 12, ժ, Ի 8)*: ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ «AL MASSO», թագով պսակուած ոճաւոր զինանշան, ներսում թագակիր թեւատարած արծիւ, ներքեւում՝ «GIOR MAGNANI» (թ. 5-128), այլ թուղթ՝ թ. 129-230. կապոյտ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18,8-19×13: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, սեւ մատիտով սահմանագծուած (15×10-10,5): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 108ա): ՏՈՂ՝ 22: ԿԱՋՄ՝ ստուարաթուղթ, մէջբը եւ փեղկերի ծայրերը՝ կանաչ



Նմուշ 108ա

դրոշմազարդ կաշի. աստառը՝ թուղթ (ԺԹ. դարի): ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ-Դ՝ չգրուած թուղթ, ԺԹ. դ-ի, մասն կազմաստառի:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Գոյներ՝ կարմիր, սեւ, բալագոյն:

Վիճակ՝ բաւարար. գրադաշտը խոնաւութիւնից գունափոխուած, որոշ տեղերում թանաքը մգացած, թ. 10-3՝ վր. լս-ին՝ դեղին հետքեր. թերթերը վերջից՝ վնասուած. կազմի ստուարաթուղթը, մէջքն ու եզրերը՝ մաշուած, ֆերծուած:

* Ծնթ. ժ-Շ՝ պրակակալուած տասնեակներով՝ ժ, Ի, Լ...:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

5ա-222բ [խոր. 1ա] Պատմութիւն Յովհաննու Ջ. (6) կաթուղիկոսի Դրասխոնակերտցւոյ (այսպէս)՝ գրեալ յամի Տեառն 900, արտագրեալ ի Պետրոս վարդապետէ Աղամալեանց Նախիջեւանցւոյ՝ միաբանէ Սուրբ Էջմիածնի, յամի Տեառն 1771

Տե՛ս ձեռ. 1893, 2ա-127բ: 1/չիք: 2/չիք: 3/5ա-222բ (վջ. այլ՝ Արդ, այսքան բան ձեզ յինէն բաւականասցի, բայց անարժանս ես եւ հեզգ ապաշաւան Յովհաննէս նուաստ կաթողիկոս Հայոց աղաչեմ):

– 223ա-30բ Ցանկ երեւելի անուանց եւ գործոց – *Աբաս՝ եղբայր Աշոտոյ՝ իշխանաց իշխանի կարգի սպարապետ... |||ռաջին Յոհ(մոյ) նստի կաթողիկոս: 134:**

* Ծնթ. Լս-ներում բովանդակութեանը վերաբերող կարմրագիր նշումներ: Տե՛ս Յովհաննէս Դրասխանակերտցու Հայոց պատմութիւնը. ուսումնասիրութիւն եւ բնագիր, աշխ. Գէորգ Տէր-Վարդանեանի, Մատենագիրք հայոց, հտ. ԺԱ., ժ. դ., Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 317-584. ձեռագրիս մասին՝ էջ 327:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Տե՛ս խորագիր՝ 1ա:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

2ա (1892 թ., շղագիր) Ազգ. զՅովհաննու Ջ. Պատմաբան կաթողիկոսի զգեղեցկահիւս եւ բազմավէպ պատմութեան ձեռագիր սոյն այս օրինակս մարգարտաշար գրուածով եւ կարմրաներկ գլխակարգութեամբ որոշեալ եւ բացայայտիչ համառօտ տեղեկութեամբք, որ ի լուսանցս լուսաբանեալ, ի ձեռս բերելով ի բարեկամ |2բ| քահանայէ ումեմնէ Առմաւիցւոյ, նուիրիմ գրագարանի Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի՝ ի մշտնջենաւոր յիշատակ, որ արտագրեալ է ըստ աւանդութեանն ի միաբանէ Սուրբ Էջմիածնի՝ ի Պետրոս վարդապետէ (ապա՝ եպիսկոպոս) Աղամալեանց նոյն եւ Բերդումեանց Նախիջեւանցւոյ |3ա| յամի Տեառն 1771, յընտիր եւ ի պատուական օրինակէ Սիմէօն եպիսկոպոսի Երեւանցւոյ (ապա՝ կաթողիկոս):

Պատմութիւն մատեանս յուսամ թէ կարի կարեւոր համարեսցի ի բաղդատելն ընդ այլ օրինակաց: Ուստի եւ ընդունելութեան արժանի համարեսցի այս դոյզն նուէրն |3բ| զայս եւեթ աղաչեմ եւ խնդրեմ յընթերցողաց մատենիս յիշել նախ զբազմաշխատ գրող եւ արտագրող մատենիս եւ ապա զիս՝ զնուաստ պաշտօնեայս Հայաստանեայցս եկեղեցւոյ՝ զմիաբանս Սուրբ Էջմիածնի, զժողովողս ազգային հնութեանց եւ բեւեռաձեւ արձանագրութեանց, Արարատեան նահանգի եւ այլոց |4ա|, ի 1870-1887: Անդամ սինօդի Սուրբ Էջմիածնի եւ ի 1887 ամէ ցայս 1892 նահանջ ամն առաջնորդ հայոց Շամախոյ եւ Բագուայ վիճակին՝ Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատեանց Նախիջեւանցի: Եւ զձեզ յիշեսցէ Տէր յաւուրն վերջնում. ամէն:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *պհպ. Ա, 9ա, 219բ, 222բ սեւ թանաքով բոլորակ, մէջը եպիսկոպոսական խոյր խաչուած գաւազաններով, ներքեւում՝ «1871», շուրջանակի՝* «ՄԵՍՐՈՎԲ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԵԱՆՑ ՆԱԽԻՋԵՒԱՆՑԻ»:


ՆՇՈՒՄ՝ *պհպ. Ա՝ «877, 3537», «ԺՓ. Մ[եսրոպ] եպիս[կոպոս]»:*

3538
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊՕՆԱ, ՋԵՌԲԱԾՈՒԹԻՒՆ ՅԵՐԿԻՆՍ

ԱՄՍՏԵՐԴԱՄ ՌՄՋ. – 1757

ԳՐԻՉ՝ Յովակիմ Ռաֆայէլեան Ղափանցի:

ԹԵՐԹ՝ 168 (գրչի էջակալում՝ 1-206, 223-348, որ է՝ 2ա-168ա). չգրուած՝ 1բ, 168բ: ՊՐԱԿ՝ 1-15×12 (2, 12՝ 10, 15՝ 4): ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ ցանկապատի մէջ արջ՝ ձեռքին սուր, զինուորական՝ ձեռքին տապար, վերեւում՝ «Pro Patria», ներքեւում «D&CT» կամ թագ, ներքեւում «CR»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20×15,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, սեւ մատիտով սահմանագծուած (13,5-14×8,7, ստ. լս.՝ յիշագրեր): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 46ա): ՏՈՂ՝ 25 (թ. 1-58), 24 (թ. 59-168): ԿԱՋՄ՝ կարմիր լաթ, մէջքը՝ սեւ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ թուղթ



Նմուշ 46ա

(1950ականների). լուսանցակողերը՝ դարձդարձիկ գծերով: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա.Բ+Գ՝ չգրուած սպիտակ թուղթ, մասն կազմաստառի:

Վիճակ՝ բաւարար. 18բ՝ թանաքը լղոզուած, գրեթէ բոլոր թերթերի լս-ներին խոնաւութեան հետքեր, 60բ-1ա՝ հիմմի մօտ սնկի հետքեր, թ. 168՝ ստ. անկիւնը պո-

կուած, թ. 165-8՝ գրադաշտին դեղին հետեր. լուսանցակողերը սեւացած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. 1. *1ա, 2ա-164բ* [Տիտղ.] Ձեռաբածութիւն յերկինս՝ պարունակող զգացմանց սրբազանիցն հաց եւ հնագունից իմաստասիրաց, յօրինեցեալ աշխատութեամբ տեառն Յոհաննու Պօսաի՝ վսեմագունոյ Բարտինալի ս[ուրբ] ե[կեղեցւոյն] Հ[ռոմայ], եւ թարգմանեցեալ ի հայկական բարբառ ի Վարդանայ Յունանեան, յամի ներմարմնութեան Տեառն 1671 եւ ըն[դ] թուաբերութեան Առամազնոյ 1120, ի հայրապետութեանն լուսաճեղոյս գայոհին (=գոհոյին) Սրբոյ Էջմիածնի՝ տեառն Նահապետի՝ հօրն մերոյ՝ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի փոխանորդի, եւ ամենայն հայոց իմնագլուխ հովուապետի, յԱմսդէլրօդամի

— *2ա-5ա* [Առաջաբան հրատարակչի] — *Յամի Տեառն մերոյ՝ Յիսուսի Քրիստոսի 1705, իսկ ըստ հայոց՝ 1154՝ Օգոստոսի 7, Մարգաց 5, յԱմստերդամ քաղաքի տպագրեցաւ այս գիրք... գերազանցութեան ձերում ծառայ անպիտան Վարդան Յունանեան, Մինունդ Գազուեան, Ք. Հ.:*

— *5բ-7բ* Յառաջաբանութիւն յօրինողի մատենիս — *երկուք են, զորս նակզբան մատենականս այսուիկ փոքեր... զի մի՛ ասացեալքն իմ պակասութեամբ առմանց պատկառիցեն:*

— *8ա-11բ* Առ ընթերցօղս հայկազինս Վարդան Յունանեան. Մ. Հ. — *Համահետեւելով իմ առից քրիստոսավիպի կնոջն աւետարանականի... զուարթունակիս ոգւով ընկալարո՛ւք զտուրս, եւ զիղձս տուողիս. ո՛ղջ լերուք:*

ա. *11բ-5բ* Ձեռաբածութիւն յերկինս: Գլուխ Առաջին. Յաղագս վերջնոյ վախճանին մարդոյ, որման չար իցէ ստեղիւրելն յայնմանէ, որովք միջնորդիմ եւ որով կարգաւ ժամանեցի առ նա — *Առ յերկինն ածել ձեռք առաջադրեալ է իմ, ո՛վ երջանիկ ընթերցող... ոչ ինչ շահ է անդ, ուր գոյ վնաս փրկութեանն:*

բ. *15բ-20ա* Գլուխ Բ. Որ տեսչայ բարեկեցութեան, առ ընտրել պարտի զոմն կրթիչ վարուց իւրոց, թէ որպիսի ոք պարտ իցէ գոլ նա: Գործ աշակերտին — *Ոչ ինչ առաւել հարկաւոր է սկսանողին ծառայել... եթէ կամիցիս անըսդտանելի վարկանել զքեզ ամենից աչաց:*

գ. *20ա-7ա* Գլուխ Գ. Յաղագս մարեցութեանն ի մեղաց: Մերկանելիք են ըղձմունքն ձկտեցեալք առ նոսին եւ յոռութիւնքն կրճատելիք: Ձիք գործադրողագոյն տեղ յոռութեանց, բան զմաճուան եւ զյաւիտենականութեան մտախոհումն — *Ի վերջնոյ վախճանէն արտուղի մարդն, մինչ մեղանչէ... եթէ զկեանդ քոյ իսկօրէն ոչ վերանորոգես, կարծրագոյն քան զապառաժն ես:*

դ. *27ա-30ա* Գլուխ Դ. Յաղագս որկորոյ, չարն նորին եւ դեղ, որ իցեն նշանք յաղթեցելոյ որկորոյն — *Ջնախապետականն մարտ ընդդէմ մոլութեան որկորոյն... այլ ի կատարելութիւն ողջախոհութեանն:*

ե. *30ա-4ա* Գլուխ Ե. Յաղագս բղջախոհութեան, որման գար[շ]ելի իցէ մոլութիւնս այս, որման դիւր իցէ անկումն ի նոյն եւ զիարդ խորշելի: Հեշտութեանց ոգւոյն հետազօտելի է, որ զտագունեղն է — *Ձիք մոլութիւն գարշելագոյն սմին, չիք յորմէ առաւելագոյն պատկառեսցուք... զամենայն փափկութիւնս եպերել:*

զ. *34ա-8ա* Գլուխ Զ. Յաղագս ագահութեան, չարութիւն նորին կաշկանդի, բաղդատութիւն տնանկին եւ հարստին, հարստութեանցն ստութիւն եւ ունայնութիւն — *Այս է ագահութեանն ամենաչար խարդախութիւնն, զոր... եթէ յարաժամ մտածեսցես գոլ քո մահկանացու:*

է. *38ա-45բ* Գլուխ Է. Յաղագս բարկութեան, տիպ բարկացողին, գործ, պատճառ եւ տեղին բարկութեան — *Բարկանամ բարկութեանն. սա միայն է արդար բարկութիւն... ոչ ճանաչելն զզրպարտութիւնն, քան թէ ներելն:*

ը. *45բ-8ա* Գլուխ Ը. Յաղագս նախանձու եւ ծուլութեան, ստորագրութիւն երկոցունցն եւ սպեղանումն — *Նախանձն, վրէժխնդիր ինքեան, նախ զիւրն աղիս խարշատեալ քայքայէ... արա՛ զոր կարես, զամենայն կարասցես. Աստուած օգնէ արարողին:*

թ. *48ա-54ա* Գլուխ Թ. Յաղագս հպարտութեան եւ ամբարտաւանութեան եւ սնափառութեան, գաղափար հպարտին, ունայնութիւն արժանապատուութեանց եւ վտանգ, փճացման չարիքն եւ սպեղանի նորին — *Մոլութիւնքս այսոքիկ՝ հպարտութիւն, անբարտաւանութիւն եւ սնափառութիւն... մինչ ծանիցես զքեզ, գոլ ոչինչ:*

ժ. *54բ-8բ* Գլուխ Ժ. Յաղագս բովանդակի մարմնոյն եւ զգայութեանց արտաքնոց համոզման, որա՞ն ներելի իցէ մարմնոյ ճնշել զթոյլատուութիւնն աչաց, փառամոլութիւնն զգեստուց դատապարտի — *Ջառողջարարս զայս եւ զողջամիտս վերընկալ զգաղափար կենաց... յիմարական ամբարտաւանութիւն է վերածածկել զողբն ոսկեաւ:*

ժա *58բ-63բ* Գլուխ ԺԱ. Յաղագս պահպանութեան լեզուին, որքանո՞յ միտի իցէ եւ որա՞ն դժուարին: Զի՞նչ պահելի ի խօսս եւ յորոց խորշելի: Զիա՞րդ բանալի իցէ մոլեկան լեզուս այլոց — *Այնքանում միտի է պահպանութիւն լեզուին, մինչ զի մեծագունիս... եթէ կարծես կարել քո արհամարհել:*

ժբ. *63բ-7ա* Գլուխ ԺԲ. Յաղագս ներքնոց զգայութեանց, կիրառութիւն կարծեաց: Բարեօք մտածմամբ տոգորել պարտ է զմիտն: Յաղագս սանձահարելոյ ախորժակին զգայականի եւ մոլարից ըղձակաութեանց նորին: Ջանազանք առ նոյնն պատուէրք —

Նայամ շարժի, մանաւանդական ծխնի իմաստութեանն... եթէ բարւոք առեսցես, կորուսցես, եթէ չարւոք՝ սիրեսցես:

ժգ. *67բ-71ա* Գլուխ ԺԴ. (=ԺԳ.) Յաղագս սիրոյ: Ո՞ր իցէ բնութիւն նորին, ո՞րք պատճառք եւ ո՞րք իցեն գործք: Յաղագս նորին սպեղանւոյն: Վերաբերութիւն ինչ յաղագս ատելութեան – *Սէրն բարեհաճութիւն բարւոյն է... զի ոչ ոք այնքան վնասեաց քեզ, որքան դու ինքդ:*

ժդ. *71բ-4բ* Գլուխ ԺԴ. Յաղագս բաղձանաց եւ փախստեան: Որում բաղձալի եւ յորէ փախչելի իցէ – *երջանիկ է այրն, որ ենթադրեցեալ եւ հնազանդեցեալ է Աստուծոյ... զոր պարտիցես թշնամանել, բաց ի մեղաց:*

ժե. *75ա-8բ* Գլուխ ԺԵ. Յաղագս ուրախութեան եւ տրտմութեան: Ջիա՞րդ ուրախանալ պարտի այր բարի, ոչ տրտմի, որ զամենայն նախատեսանէ: Զանազանիւ սպեղանիւ ցաւոյն – *Այնպէս ուրախանալ պարտիս, թէ նուրախութեան քում... մինչ մարտնչէր ինքն ընդդէմ ալեացն հզօրեղապէս:*

ժզ. *79ա-80բ* Գլուխ ԺԶ. Յաղագս յուսոյ եւ յուսահատութեան: Ջիա՞րդ համոզել մարթիցէ զերկաճիւռն – *Յոյսն ունայն եւ սուտ է... տառապանն իք (՞) առիթ առաքինութեան:*

ժէ. *80բ-4ա* Գլուխ ԺԷ. Յաղագս երկիւղի, որա՞ն ունայն իցէ եւ որո՞վ պատճառաւ յաղթահարիցի: Խորշել յանդգնութեանց մարթէ: Վերստին փոխ ինչ վերյաւելումն, յաղագս բարկութեան – *Մեծագոյն մասն մահկանացուացս մինչ ոչ է ներկայ չար ինչ... ոգին խաղաղական, թէ միշտ ցնծայ եւ յարաժամ յաղթանակէ:*

ժը. *84ա-8բ* Գլուխ ԺԸ. Յաղագս զօրութեանց հոգւոյն բանականի: Ջսպելի է իմացն ի հետաբերութեանց, որո՞ւմ մակացութեան պարապիչ պարտիմք նախապետաբար: Որա՞ն չար իցէ զննել զվարս այլոց: *Ջդատողութիւնս օտարաց եպերել մարթիմք: Վասն զլացման կամացն – Տուաւ քեզ յԱստուծոյ կարողութիւն իմանալոյ... զոչ կամեցօղն քարշէ:*

ժթ. *89ա-92բ* Գլուխ ԺԹ. Յաղագս կացութեան զարգացողացն: Զանազանիւ զօրավիգիւ զարգացման: Հաշումն ժամանակի եւ կիրառութիւն նորին: Ներկայութիւնն Աստուծոյ ցուցանի գոլ հարկաւոր – *Եթէ ցանկաս լինիլ բարի, նախկնաբար հաւատա՛, չար գոլ զքեզ... եւ երանի թէ երբեմն ժամանեցես:*

ի. *93ա-8բ* Գլուխ Ի. Յաղագս բարւոյն միաւորութեան: Փախչելի է յընկերակցութենէ չարաց: Մոլութիւնք աշխարհի ֆանի՞ֆ եւ ո՞րք իցեն: Զանն զարգացելոյն է շահումն առաքինութեանց: Նշանք ոմանք վերաշահեցելոյ առաքինութեանն – *Ամենամեծ նշան բաղադրեցելոյ մտին... ոչ երբեք անցանէ, այլ գոյ միշտ ներկայ:*

իա. *98բ-102ա* Գլուխ ԻԱ. Յաղագս աստուածաբանականաց առաքինութեանց: Հաւատն դրուատելի է ճանդերձ գործովք: Նաստուծում միայնում դնելի է յոյսն: Առիթք սիրոյն, որ առ Աստուած: Սէր ընկերին բարեառնութեամբ ցուցանի: Քաջալերութիւն յորդորական առ ողորմութիւնն – *Միւն եւ խարխափ այլոց առաքինութեանց եւ հիմն քրիստոնէականի կենին է հաւատն... թշնամին կարէ ասպատակել զտունդ, զերկինն՝ ոչ կարէ:*

իբ. *102ա-4բ* Գլուխ ԻԲ. Յաղագս խոհեմութեան, ճարկատորութիւն նորին եւ դժուարութիւն: Գործ՝ առն խոհեմի – *Որպէս ոչինչ գործ ճարտարապետին ուղղապէս յառաջանայ թարց գծի... զոր չկարէ գովել, եթէ ոչ կատարեսցի:*

իգ. *104բ* Գլուխ ԻԳ. Յաղագս արդարութեան եւ կրօնի, ներգործութիւն երկաճիւռոյն: Զի՞նչ իցէ ապաշխարութիւնն եւ նորո՞ւմ կայացի – *Արդարութիւնն է վերնական իմն առաքինութիւն... անդրահեղու ի մերձաւորն:*

Ծնթ. Գլուխ ԻԳ-ԻԵ.՝ չիմ, յիշատակարանում (167բ) գրիչը բացատրում է, որ տպագիր գաղափար օրինակը թերի է եղել:

իդ. *105ա-9ա* Գլուխ ԻԶ. Յաղագս սիրելութեան: Որո՞վք առիմ պաշտելի իցէ: Պատուիրանիւ ոմանիւ առեզառումու երթեկցութիւնն պատկանելիք – *Ջիք ինչ առաւել հարկաւոր առ կեանն մարդկային... ծիծաղին եւ հեշտանան:*

իե. *109ա-11ա* Գլուխ ԻԷ. Յաղագս առատաձեռնութեան: Զի՞նչ իցէ եւ զիա՞րդ ի կիրառնելի, զիա՞րդ զանազանիցի ի մեծյարգոյութենէ – *Ոչ կոչեմ առատաձեռն զայն, որ բարկացեալ է... զոր պարգեւէ այլոց եւ ծախէ:*

իզ. *111ա-4բ* Գլուխ ԻԸ. Յաղագս արիութեան: Ո՞րք իցեն առ նորին: Խոտելի գոլ մանն յառնէ արիականէ – *Մեղկունք են սիրաք մարդկայինք, եւ տկարազգած է բնութիւնն... եթէ ոչ մեռցիս զօր հանապազ:*

իէ. *114բ-6բ* Գլուխ ԻԹ. Յաղագս մեծասրտութեան կամ մեծոգիութեան: Ստորագրութիւն առն մեծասրտի – *Ջմեծ իմն բացագանչէ ինքեամբ իսկ անուամբն... եւ ոչ կարի կարգէ, որ շատանայ ինքեամբ:*

իը. *117ա-22ա* Գլուխ Լ. Յաղագս համբերութեան: Առիթք նորին եւ գործունակութիւնն: Յուցակ ճշմարտի համբերութեանն: Յորդորակ եւ խրատաբանութիւն առ ի կրել զամենայն չարս: Հարկատորութիւն յարատեւութեան – *Համբերութիւն է առաքինութիւն իմն, որով զչարիս յաւիտենիս... գիտասցես միշտ գոլ տեղի աճման առաքինութեան քոյոյ:*

իթ. *122ա-4ա* Գլուխ ԼԱ. Յաղագս բարեխառնութեան: Որա՞ն ինչ բաղնիւսիցէ նմին, ամօթխածութիւնն: Յաղագս պահեցողութեան եւ ողջախոհութեան – *Բարեխառնութիւնն իշխէ փափկութեանց, որք ի ճաշակէ... կորնչի, որ կարի սիրօղն է իւրոյն գերեզմանի:*

լ. *124ա-5բ* Գլուխ ԼԲ. Յաղագս ներզութեան եւ գթու-

թեան, երկաֆանչիւռոյն գործն եւ գերազանցութիւն – *Զի մեզկացուսցես զդիմումն բարկութեանն... գոլ հեզահոգի եւ խաղաղական:*

լա. *125բ-8բ* Գլուխ ԼԳ. Յաղագս համեստութեան: Կրկին են գործ ուսումնասիրութեան: Զո՞ր կանոն պահելի իցէ ի կիրառումն բաղաբառոյութեան – *Համեստութիւնն, զայլ ամենայն ձիրս ոգւոյն... մինչ վերանցանէ ոք զչափն արդարական:*

լբ. *128բ-131բ* Գլուխ ԼԴ. Յաղագս խոնար[ճ]ութեան: Յորո՞ւմ առկայասցի: Վասն ճանանչման իւրոյ ինքեան: Ստորագրութիւն ճշմարտի խոնարհին – *Ի Քրիստոսէ եկն խոնարհութիւնն... որ զինքն ոչ ինչ գոլ հաւատայ:*

լգ. *131բ-3բ* Գլուխ ԼԵ. Յաղագս կացութեան կատարելոցն: Պատկեր առն կատարելոյ. վախճան կատարելոյ կենին է միաւորութիւնն ընդ Աստուծոյ – *Կատարեալ ասի նա, որում ոչ ինչ գոյ պակաս... եթէ ոչ բացակատարեցի մի եւ ամենապարզ: Վերջ:*

– *134ա-7բ* Ցուցակ գլխոց: Մատենականս – *Գլուխ Ա. Թիւ 20: Յաղագս վերջնոյ վախճանին մարդոյ... Գլուխ ԼԵ. Թիւ 275: Յաղագս կացութեան կատարեցելոցն... ընդ Աստուծոյ: Վերջ:*

2. *138ա-64բ* [Բառարան]

ա. *138աբ* [Նախաբան] – *Եղբա՛րք իմ սիրագունեղք, կարեւոր իմն վարկի շարազուգել աստէն համառօտաբար... ուստի զգրեցեալս եւեթ ի փառս մեծագոյնս Աստուծոյ ընկալարուք, եւ շատ է:*

բ. *139ա-64բ* Բառարան գրիս – Ա. *Ախտաջեր՝ երան, յոգնակի՝ ախտաջերունք, սեռական... (164ա) Քաղցկեղ՝ տեսակ իմն խոցի... յորմէ ամենայն, որով ամենայն, յորում ամենայն, նմա փառք յաւիտեան. ամէն: Վերջ:*

Բ. *165ա-6ա* Տաղ Ոսկանայ վարդապետի ասացեալ («ՈՍԿԱՆԻ ԵՐԵՒԱՆՅԻՈՅ») – *Ողկոյզ պտղաւէտ՝ յոստոյն նախուց սերեալ, / ծառ նորաբողբոջ՝ ծաղկափըթիթ բերկրեալ... ողորմա՛ծ կամօք եւ քաղցրալիր սըրտիւ / այժմ եւ յարակայ հովանի լե՛ր ըղձիւ / յորսողէն պահել ըզմիածնի քոյ հօտս, / մանաւանդ զերգօղս եւ գովեստիս գրծօղս. ամէն:*

– *166բ* [Յիշատակարան տպագրի] – *Անբովանդակելւոյ եւ երանելւոյ բնութեան պատիւ եւ երկրպագութիւն, գոհութիւն եւ գովեստ անզրաւ յաւիտենիս յամենայն լեզուաց յիւրաքանչիւր բարբառոց վերաթեւեալ, ծառացեալ անուշահոտ բուրմամբ մատուցաւ, մատուցանի եւ մատուսցի միշտ ամենաբարի արարչին մերոյ, զորմէ կախեալ կան էակք հանուրք եւ տենչան անյագ բաղձանօք գոլ ընդունակ եւ տեղի նորին մշտածաւալ շնորհաց եւ գթութեան, որ, ըստ ձայնի սրբոյ Աւետարանին, ածէ անձրեւ ի վերայ արդարոց եւ մեղաւորաց (Մատթէոս 5, 45): Ընդ որս եւ ես՝ անարդիւն եւ թափուր յամենայն լաւաց՝ Թօմաս՝ ծառայ եկեղեցւոյն Քրիստոսի, ի Վանանդայ Գողթնեաց, օժանդակութեամբ ընկալեալ ի վերին նախախնամութեանցն, տպեցի զքաղցրաճաշակ գիրս մեծին կարդինալ Բօնային, զոր եռամեծ Վարդան րաբունին լաթին լեզուէ թարգմանեաց ի |167ա| հայկական բարբառ՝ համեղ եւ ախորժ ոճով՝ յիմում տպարանի եւ ծախիւք իմովք յԱմստերդամ քաղաքի յամի Տեառն 1705, Հոկտեմբերի 4 եւ ի թուին հայոց 1155, Նաւասարդի 9: Ուստի եւ մաղթեմ զհամայն վայելօղսդ այսմ գեղեցկահոս վտակէ արժանի առնել յիշման զթրծեալս ի Թոնիր ապականութեան զԹօմաս աւանդակորոյս եւ զհայրն իմ՝* ըզԴիլդար, եւ զեղբարս հօր իմոյ՝ զՂուկաս եւ զՍտեփաննոս, եւ զեղբարս իմ՝ ըզԳրիգոր, զԱռիստակէս եւ ըզՅակոբ եւ զքոյրն իմ՝ զԱնայ: *Այլեւ մաղթեմ վերստին զհոյլս եղբարցդ սիրելեաց յիշել զհարազատ եւ զմտերիմ շարաբարդօղ, ուղղագրօղ եւ կառավարօղ գործակալս տպարանիս մերոյ, որով եւ գուք յիշեալ լիջիք յերկնից արքայութիւնս. ամէն:*

*Թնթ. Բաց թողած, չգրած տպագրի հետեւեալ բառերը՝ «Նուրիջան Նուրիջանեան եւ զմայրն իմ»:

Տե՛ս Յոհաննէս Պոնա, Ձեռաբածութիւն յերկինս, թարգմ. Վ. Յունանեանի, Ամստերդամ, 1705:

Համմտ. Հայ գիրը 1512-1800 թվականներին. Հայ ճնատիտ գրքի մատենագիտութիւն, կազմեցին Ն. Ոսկանեան, Ք. Կորկոտեան, Ա. Սաւալեան, Երեւան, 1988, էջ 159-60, Հմր 224:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

167բ Արդ, շնորհօք եւ օժանդակութեամբն Աստուծոյ՝ աւարտ եղեւ գիրքս, որ կոչի Ձեռնածութիւն յերկինս, շարադրեալ Յօհաննու Պօսախ՝ *ազգաւ լատին, կոչեցեալոյ Կարտինալի, եւ ի նոյն լեզուէ է թարգմանեալ մերս ի ձեռն* Վարդան *վարդապետիս քաղցր ոճով: Եւ է տպեալ* Ամստրդամ *քաղաքւոջ՝ ի տպարանի* Թօմաս *վարդապետի* Վանանդացւոյ, *սակայն ներքոյ անկեալս շատ որոնեցի, որ հատ մի առնէի, ոչ գտի: Միայն սիրելի եղբայրակից մի միոյ հատ ունէր, խնդրեցի, որ ընթեռնում: Եւ յորժամ ընթերցայ, քանի գլուխ մի պակատ գտայ, այսինքն՝ գլուխ 17 եւ 18, երկու տեղւոջ էին եդեալ: Եւ գլուխ 23, 24, 25 ոչ կոյր, եւ ցանկումն կատարեալ են եդեալ. աւա՜ղ, որ այսպիսի պակաս են տպեալ: Վասն որոյ զիս անմեղադիր պահեսջիք, եւ յորժամ կամեցայ առնել զօրինակս, իւելին պակասացուցի եւ պակասին ոչ գարացայ օգնել: Եւ եթէ այլ սխալ պատահեցի, այն իմս է մեղադրելի, բայց որքան կարն էր, ջանացայ՝ ըստ նմին օրինակի գրեցի զօրինակս ինձ՝ մեղապարտիս յիշատակ:*

Եղեւ աւարտ սորին ի |168ա| նաւահանգիստ քաղաքն յԱմսթէլրօդամ, ի թուոջ Փրկչին 1757, Նոյեմպերի 30 եւ թիւն Հայկազեան տոհմի 1206, նոյն ամսոյ 19: Սակայն

աղերս արկեալ՝ մաղթեմ ընթերցասիրացդ, եթէ հանդիպիք նայեմ մատեանս միով եւեթ Հայր մեղայիւ յիշման արժանի վարկջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զանարժան եւ մեղօք լցեալ ծառայ յամենիցդ Յովակիմ Ռաֆայէլեան Ղափանցոյս *եւ զմայր իմ՝ Հռիփսիմիան, եւ զեղբայրն իմ՝ զԹօմաս, եւ յիշօղքդ լիջիք յիշեալք առաջի անմահ գառին Աստուծոյ. ամէն: Աւարտ վերջաբանութեան:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *166ա (1889 թ., շղագիր) եւ զարհին* Մեսրովբ՝ *ի Սմբատեան տոհմէ, որ զհայս Աղուանից խնամով արդ հովուէ, յամի Տեառն 1889 եւ հայկական 4381, ի քաղաքն Ղուբայ:*

2. *168ա (ԺԹ. դ., շղագիր)* Ձեռաբարձութիւն գիրքս պատկանաւոր է Ջորաք դի Յովանէս Կարաբլովին:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *79ա, 89ա, 164բ սեւ թանաքով բոլորակ, մէջը եպիսկոպոսական խոյր, խաչուած գաւազաններով, ներքեւում «1871», շուրջանակի՝* «ՄԵՍՐՈՎԲ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԵԱՆՑ ՆԱԽԻՋԵՒԱՆՑԻ»:


ՆՇՈՒՄ՝ *պհպ. Բա՝ «879, 3538», «Ձեռնածութիւն յերկինս Յօհան քարտինալ 1757, Մ[եսրոպ] եպիս[կոպոս], 1705 յԱմստերդամ», 1ա, 133բ, 137բ՝ «Ի գրոց Աւագ քահանայի Ավշարեանց», 1ա՝ «879, 3538»:*

3539
ՔԱՐՈԶԳԻՐՔ

ԺԶ. դար

ԳՐԻՉ՝ Գրիգոր:

ԹԵՐԹ՝ 219+1 (կրկն.՝ թ. 182). չգրուած՝ 1ա, 2ա: ՊՐԱԿ՝ Ա-ԻԱ×12 (Ա 13, Զ, ԺԱ, ԺԴ 10, Ժ, ԺԲ 9, ԺԵ-ԺԷ, Ի 11, ԺԹ՝ չիք, ԻԱ 7): ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով (թթ. 1-61, 119-124) եւ լուսադրոշմով՝ երեմուկ, որի աջ եւ ձախ կողմերում՝ «AC», մագաղաթ՝ թ. 1-2, 213-9: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20,5×14,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (13×8-9): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 157ա): ՏՈՂ՝ 23-31: ԿԱՋՄ՝ կարմիր գործուածք, մէջը՝ սեւ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ չգրուած սպիտակ թուղթ (1950ական թուերի): ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ՝ չգրուած սպիտակ թուղթ, մասն կազմաստառի:



Նմուշ 157ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Սուրբ հայրապետ (Գրիգոր Լուսաւորի՞չ)՝ 2բ, Քարոզող վարդապետ՝ 3բ: Ճակատազարդ՝ 4ա: Լուսանցազարդ՝ յուշկապարիկ (130ա, 191ա), բուսական, մարդադէմ (181բ): Ձարդագիր՝ թղնագիր, հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, կանաչ, կապոյտ, դեղին, նարնջի, շագանակագոյն, վարդագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած եւ վերակազմուած 1950-ականներին, որոշ թերթեր սխալ տեղում կազմած, կարդալ՝ թ. 69, 209, 210, 70-132, 205-6, 133-42, 207-8, 143-73, 211, 174-85, 187-9, 186, 190-204, 213-4, թ. 105ը սխալ կազմած թ. 114-5ի միջեւ, 193-192 հետուառաջ, ընդմէջ թ. 61-2ի, 151-2ի 2ական թերթ, թ. 114-5ի, 154-5ի, 173 եւ 211ի, 212-182գ, 132 եւ 205-ի, 204 եւ 213ի 1ական թերթ, 124-5ի 4 թերթ, 193-4ի 12 թերթ (ամբողջ ԺԹ. պրակը) թափուած, թ. 2, 159՝ կիսով չափ հիմիից անջատ, թ. 33՝ արտ. լս-իւն պատռուածք, թ. 38 արտ. լս-ը, թ. 61-212՝ ստ. լս-ը պատռտուած, թ. 46՝ գրադաշտի պատռուածքը նորոգուած թափանցիկ թղթով, թ. 3, 14, 60՝ անկիւնը պոկուած, թ. 1-6՝ հիմիից. թ. 11-7՝ արտ. լս-իւն, թ. 63-83՝ ստ. լս-իւն եւ հիմիի մօտ ցեցի անցքեր, թ. 1-2՝ մագաղաթը ամբողջովին, թ. 213-9ի եզրերը սեւացած, թ. 204՝ մեծ մասը (14 սմ ընդերկայնակի) թափուած, լրացուած նորոգման սպիտակ թղթով, բնագիրը վնասուած. գրեթէ բոլոր թերթերի եզրերին խոնաւութեան հետքեր. 2բ, 3ա մանրանկարների գոյները տեղ-տեղ թափուած. լուսանցակողերը սեւացած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *4ա-69բ, 209ա-10բ, 70ա-118բ, 123ա-30ա, 158բ-71բ* [Ղուկաս Լօռեցի, Քարոզգիրք]

Տե՛ս ձեռ. 746, 1ա-236բ: ա/4ա-10ա: բ/10ա-22ա: գ/չիք: դ/22ա-39ա: ե-զ/չիք: է/39ա-49բ: ը/49բ-61ա: թ/61աբ (երբ մեռանի յանպաշար չգնայ անճար կեանքէ այն /// վջ.): ժ/62ա-9բ, 209ա-10բ, 70աբ (սկ. ///յոր ոչ ունին յոյս յաւիտենական կենացն, նոքայ կամին զերկարիլն ի մարմնի...): ժա/70բ-89ա: ժբ/89ա-99բ: ժգ/99բ-113ա: ժդ/113ա-8բ (միջից թափուած՝ 114բ այլ բարի գործքն անցել, որ դեմ գա իւրն, կարէ յօգնել /// 115ա զի Յուդայ յուսահատեցաւ, ասաց ինքն իւր, թէ չինձ այլ ոչ գոյ թողութիւն...): ժե/123ա-30ա (միջից թափուած՝ 124բ ձայնիւ յահագին, այլ ոչ կարէ նա /// 125ա պակասութիւն ոչ լինի...): ժզ-ժը/չիք: ժթ/158բ-71բ: ի-իա/չիք:

Տե՛ս նաեւ ձեռ. 3526. թէեւ սկզբնատողերը համընկնում են, բայց կան շարադրանքի մասնակի եւ ամբողջական տարբերութիւններ:

Ունի.

1. *118բ-23ա* Քարոզ ի բան յԱւրինաց, որ ասէ՝ Պատուեա՛յ զհայր fո եւ զմայր [Ե. 16] – *եւ գիտելի է, զի Դ. բան զաւակացըն ծընաւղին պարտական են... 119բ ...որ զաւրհնութեան պըսակն առնուն/// 120ա Ապա թէ, քան ըզըպսակն, թէ հետ մէկմէկի պոռնկին խառնակին... որ մարդ զիւր հոգին չիշատակնապով (՞) չմողու զիւր ձեռով տայ հոգւոյն:*

2. *130ա-2բ, 205ա-6բ, 133ա-40ա* Քարոզ ի բան Յոբայ, որ ասէ՝ Այր մի էր յԱւսիտ յաշխարհէ [Ա. 1] – *Այր մի էր յԱսիտ յաշխարհէ՝ անուն Յոբ արդար... 132բ մինչդեռ նա զայն խաւսէր, այլ գուժկա/// 205ա ///տեաց զչորս ոմն ապարանիցն եւ կործանեաց... 206բ զնայ, ոչ կոխան լինի յամէնե/// 133ա յերբ որ համբերութեամբ յաղթեաց սատանայի... նահատակութիւն եւ մարտիրոսութիւն կոչեցաւ, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն:*

3. *140ա-2բ, 207ա-8բ, 143ա-8ա* Քարոզ ի բանն, որ ասէ՝ Հայեցաւ Աստուած ի Հաբէլ եւ ի պատարագ նորա եւ ի Կա[յ]էն եւ ի զոհս նորայ ոչ հաճեցաւ [Ծննն. Դ. 4] – *Յորժամ արար Աստուած զմարդն յառաջին եւ եդ զնա ի դրախտն... զի ընկալցին զբարի փոխարէն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն:*

4. *213բ-5ա* Վասն թասի եւ սեղան աւրհնելոյ ի բան մարգարէին, որ ասէ՝ Երկիր ետ զպըտուղ իւր, եւ աւրհնեաց զմեզ Աստուած, Աստուած մեր [Սղմ., ԿՂ. 7-8] – *Առաջին երկիր կոչի հողն եւ ջուրն... տանի յերկնից արքայութիւն եւ զարդարէ յանթառամ փառօք եւ պսակօք:*

5. *215ա-9ա* Դարձեալ վասն գինոյ եւ սեղան աւրհնելոյ՝ ի բան մարգարէի, որ ասէ՝ Աստուած, Աստուած մեր, աւրհնեսցէ զմեզ Տէր [Սղմ. ԿՂ. 8] – *Հրամա[յ]են վարդապետք եկեղեցւոյ, թէպէտ աստուածա[յ]ին աւրհնութիւն բազում է... արտասուել եւ մեղաց թողութիւն գտանել, եւ նմայ փառք յաւիտեանս. ամէ[ն]: Հա՛յր մեր:*

Տե՛ս էլ. Յարութիւնեան, Ղուկաս Լօռեցին եւ նրա քարոզգիրքը, Բանբեր Մատենադարանի, Երեւան, 1971, հտ. 10, էջ 213-236:

Բ. *148ա-58ա, 171բ-3բ, 211աբ, 174ա-81բ, 212աբ, 182ա-204բ, 213ա* [Այլ քարոզք]

1. *148ա-58ա* Քարոզ վասն ջրհեղեղին ի բան, որ ասէ՝ Որ Նոյ ամաց հարիւրից, որ եղեւ Աստուծոյ բարկութիւն եւ երեր ջրհեղեղն ի վերայ երկրի, եւ Նոյ էր արդար – *Յորժամ, որ խառնակեցան ԲՃ. (200) ճգնողքն ընդ դստերացն Կա[յ]ենի... 154բ յանկեաւ լելով առ լերամբն կամ կորուսեալ /// 155ա եւ որպէս կոչնակի ձայնիւն... եդօ(=աւ) ի տապանին նախիջեվան եւ Նեմզարա ի Մարանդ. եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամէն:*

2. *171բ-3բ, 211աբ, 174ա-5ա* Տեսիլ Սրբոյն Յոհաննու աւետարանչին եւ աստուածային Բանին յաղագս Գալըս<ըս>տեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եթէ որպէս յիջանելոց է յերկնից երկիրս եւ առնէ զհատուցումն – *եւ յետ Յարութեան համբառնալոյն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի երկրէ ի յերկինս ելանելն տեսեալ Յոհաննէս... 173բ զամենայն յերեսս երկրի միայն տոչո/// 211ա ///նուցու զգիրան գառն եւ բացցէ զկնիքն... ասաց Տէրն մեր Յիսուս Քրիստոս՝ թէ որ սիրէ զիս, բանս իմ պահեսցէ, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն:*

լթ. *233ա-4բ* Գլուխ ԼԹ. Եթէ պարտ չէ մարդոյ երբեք / յիրողութիւնս կալ տագնապ / եւ չէ ըմբռն յիրս աշխարհի, / հալել, մաշել տապ ի տապ – *Որդեա՛կ սիրուն, ինձ յանձ արա՛ / զամենայն ինչ քո կարիս... զի մի՛ երբեք մտանիցէք / ի փորձութիւն ի հարուած։*

խ. *235ա-9բ* Գլուխ Խ. Թէ մարդ չունի ոչինչ բարի / յիւրմէ երբեք բնաւին, / չէ նա կարող պարծել յիրս, / առ հասանել անբաւին – *Տէ՛ր, ո՞վ է մարդ, զի յիշես դու / զնա սիրով ի բարձանց... բայց թէ յիմս տկարութիւն, / որ ներքեւեալ կամ նկուն։*

խա. *239բ-41ա* Գլուխ ԽԱ. Յաղագս կարի անգոսնելոյ / կացուցանել առհամառհ / ողջ ամենայն ժամանակիս / պատիւ եւ փառ անհամար – *Ա՛յ իմ որդեակ, մի՛ վհատիր, / մի՛ գժդմիր ի վերեր... հագւով բերկրել ի վերուստ։*

խբ. *241բ-4ա* Գլուխ ԽԲ. Պարտ չէ դնել խաղաղութիւն / առ ի մարդ ոք մահացու, / ոք ոչ ժամ մի կան ի խաղաղ, / այլ միշտ յուզին մատնատու – *Ա՛յ իմ որդեակ, եթէ դնեմ, / խաղաղութիւն քո մարդ... չորացնէ զբոյս շնորհաց / գերթ անջրդոջ չոր ուռի։*

խգ. *244բ-8բ* Գլուխ ԽԳ. Յաղագս սին եւ սնոտի/ աշխարհային գիտութեան, / ոք կործանեն զհաւատս, / վասն կեղծեալ ընիտութեան – *Ա՛յ իմ որդեակ, մի՛ շարժեսցին / զքեզ բանքն գեղեցիկ... ու թուի ինձ նա հեշտալուր, / ոչ իսկ ընդվայր տարժանի։*

խդ. *249ա-51ա* Գլուխ ԽԴ. Յաղագս թէ չնզելոյ / զարտաքինսն առ յանձն, / ոչ զակատիլ ագահութեամբ / աշխարհային առ գանձն – *Ա՛յ իմ որդեակ, պարտ է քեզ միշտ, | ի բազումս կալ լուռմունջ... թշուառութիւն թշուառութեանց / մի զմիով գայ գնայ։*

խե. *251ա-7բ* Գլուխ ԽԵ. Եթէ չէ պարտ միշտ հաւատալ / ամենեցուն ի ջանս, / յաղագս գոլ բնոյթ նոցին / միշտ դիւրասահ ի բանս – *Տո՛ւր ինձ, Տէ՛ր իմ, տո՛ւր զօգնութիւն, / ի նեղութեան, յանձկութեան... որ գլխովին կոչի սոյն կեանք, / փորձութիւն, մարտ անցաւոր*:

խզ. *257բ-64ա* Գլուխ ԽԶ. Յաղագս միշտ ապաւինել / առ Տէր Աստուած՝ բարձր յերկինս, / նա մանաւանդ, երբ ի վերայ, / սլաff բանից յարձակին – *Ա՛յ իմ որդեակ, քաջ զօրացի՛ր, / յուսա՛ յԱստուած, յուսա՛ յիս... առաջի քո չարդարանայ / իսկ ամենայն կենդանի*:

խէ. *264ա-8բ* Գլուխ ԽԷ. Եթէ պարտ է տանել ծանուցից, / յամենայնի ամենայն, / վասն կենաց յափտէնից, / տանել վշտաց ողջ համայն – *Որդեա՛կ, զի մի՛ վհատեսցեն, / զքեզ վաստակք ծանրակիր... եւ ժառանգին զարքայութիւն / հօրն իմոյ անխաբան*:

խը. *268բ-76բ* Գլու[խ] ԽԸ. Յաղագս անկէտ, աւուրն անվերջ, / յափտենից յափտեան / եւ կենցաղոյս անձկութեանցն, / ունայնութիւն առ յատեան – *Ա՛վ երանի վերին անմահ, / սուրբ քաղաքին լուսաւոր... թէ՛ ի ներքոյ, թէ՛ արտաքոյ / եդեալ զախս ամրափակ*:

խթ. *276բ-87ա* Գլուխ ԽԹ. Վասն կենաց յափտենից, / կարօտալի փափաքման... եւ եթէ բանի պակաս մնան, / պատեհազմող բարի արց – *Ա՛յ իմ որդեակ, իբրեւ յանձին, / զգաս փափաք վերնական... յափտեանս յափտենից / կացես յաւերժ անպահման*:

ծ. *287ա-95ա* Գլուխ Ծ. Որպէս պարտ է բաց լինելոց, / մեկ ի ծերպս յարաստոյ, / առ աւանդել զանձն իւր միշտ, / առ ի ձեռս Աստուծոյ – *Տէ՛ր իմ Աստուած, Հայր սո՛ւրբ անմահ, / օրհնեալ ես այժմ յափտեան... կացէք խոնարհ, հլու եւ հեզ / ցուցէք զսէր փոխադարձ*:

ծա. *295ա-7ա* Գլուխ ԾԱ. Եթէ միշտ պատաղել, / ի գործ խոնարհ եւ հլու, / յորժամ չես ինչ դու ժամանող, / բարձրագունից յերկնաչու – *Ա՛յ իմ որդեակ, չես դու կարող, / միշտ փոյթեռանդ կաթոյգին... հանդերձելոց փառաց անմահ, որք են ի մեզ յայտնելոց*:

ծբ. *297ա-302ա* Գլուխ ԾԲ. Զէ պարտ մարդոյ միշտ համարել, / զանձն փառաց արժանի... յաւէտ ի սոյն միշտ համակել, / յայսմ կենիս յաղցաւոր – *Տէ՛ր իմ, չեմ իսկ ես արժանի, / մխիթարող քոյդ բանից... որ ինչ յայլուստ աղտեղացաւ, / հոգին ի գոյն արջնատես*:

ծգ. *302ա-6բ* Գլուխ ԾԳ. Թէ շնորհիւն Տէր Աստուծոյ, / Իսկ ընդ այնս ոչ խառնի, / Որոց բաղցր են երկրաւորք, / Զար զբաղումն ոչ խառնի – *Ա՛յ իմ որդեակ, պատուական է, / Շնորհն իմ գուտ մաքուր... առանձնական ջերմ սիրով, / ոչ տարփանօք միշտ անձկալ*:

ծդ. *306բ-17բ* Գլուխ ԾԴ. Յաղագս թէ եւ այլ ու այլ, / Շարժմանց շնորհաց բնութիւն, / Աստ խօսեացուք զգոյշաբար, / Վասն շնորհաց բերկրութեան – *Ա՛յ իմ որդեակ, զգուշութեամբ, / Անձամբ ի քեզ դիտեսջիր... ըստ պատկերի Տեառն Աստուծոյ, / գեղազուարճ նորոգի*:

ծե. *317բ-25ա* Գլուխ ԾԵ. Յաղագս իմ մաճկանացու, / ապականեալ բնութեան, / եւ շնորհաց աստուածային, / սմանչելի ազգութեան – *Տէ՛ր իմ Աստուած, որ արարեր / զիս ի պատկեր տիրական... Քրիստոսիւ տէր Յիսուսիւ Որդւով քո, Տէ՛ր / ամէն, ամէն յաւիտեան*:

ծզ. *325բ-31բ* Գլուխ ԾԶ. Թէ պարտ է մեզ միշտ ուրանալ, / զանձինս մեր զէտ բաջին, / զնետ երթալ Քրիստոսի, / կենդանաւարար Սուրբ Խաչին – *Ա՛վ իմ որդեակ, որչափ ի քէն / դուրս ելանես տարանջատ... փախչելով բաց ի սուրբ խաչէ / գհետ լինել վաստութեան*:

ծէ. *331բ-5բ* Գլուխ ԾԷ. Զէ պարտ մարդոյ կարի իմն / իսպառ, իսպառ լքանել, / յորժամ դէպի նմա առիւ, / պակասութիւն յինչ սահիլ – *Ա՛յ իմ որդեակ, հաճոյ էն ինձ / համբերութիւն առաւել... ամէն Տէր իմ լուսաւորեա՛յ / յանստուեր լոյս եւ անմուտ*:

ծը. *336ա-48ա* Գլուխ ԾԸ. Յաղա՛ս թէ չ՛ինել, / զբարձրագոյնս զիս անհաս, / եւ զԱստուծոյ գաղտնի գործս, / դատաստանս վերադաս – *Ա՛յ իմ որդեակ, զգոյշ լե՛ր դու, / իսկ ոչ վիճել զԱստուծոյ... ուրախասցիջ անանց փառօք, / լսէք կենաց աւետիս*:

ծթ. *348ա-52բ* Գլուխ ԾԹ. Թէ զամենայն լոյս մեր եւ յոյս, / արձանասցի ի յԱստուած, / միայն պարտ է մեր ապաւէն / հաստատեսցի առ Աստուած – *Տէ՛ր իմ Աստուած, ո՞վ է իմ լոյս, / իմ ապաւէն ի կեան աստ... ամէն Տէր իմ ժամանեցիջ / դիտեալ տեղիս բերկրալից*:

352բ Վերջ: Կատարեցան խրատք եւ խօսք, / որ կայ ի մեր ի վերայ, /ներհին հոգւով մխիթարեալ / ուրախացայց յարակայ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Տէ՛ս տիտղ.՝ 1ա:

ՆՇՈՒՄ՝ *Ա. կազմաստառին՝ «1023/3549», 1ա՝ «Մ[եսրոպ] եպիս[կոպոս]»:*

3550
ԹԷՈԴՈՐՈՍ ՇԻՐԱԿՈՒՆԻ, ՆՈՒԱԳԱՐԱՆ ԲԱՐԵԻՂՁ


(Հատոր Բ.)

ԽԱՉԱԿԱՊԻ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՆՔ ՌՅԻԵ. – 1876

ԳՐԻՉ՝ հեղինակը:

ԹԵՐԹ՝ 86 (գրչի էջակալում՝ 1-200, որ է՝ 1ա-84բ). չգրուած՝ 1բ, 85ա-6ա: ՊԱԿ՝ Ա.-Ջ×16 (Ա, Բ 14, Ջ 10): ՆԻՒԹ՝ թուղթ, ճնշադրոշմով՝ ձուածիր՝ «Кооп///

[фаб]рики Рязанцевыхъ, N 7» (թ. 1-3, 6, 15, 20, 22, 45, 47, 49), ուղղանկիւն՝ «///ъева» (61, 63, 65, 67, 69, 71, 73, 75-81): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18,6×15,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (13,5-15×7-8): ԳԻՐ՝ շղագիր (նմուշ՝ 27ա): ՏՈՂ՝ 16: ԿԱՋՄ՝ կանաչ-սեւ ծաղկաթուղթ, մէջիը՝ կարմիր ծաղկազարդ կտաւ. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ սպիտակ թուղթ. լուսանցակողերը՝ մանուշակագոյն ցայտկէն:



Նմուշ 27ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի եզրերը մաշուած. թ. 1՝ եզրին մատնահետք, 80բ, 84ա՝ թանաքի բծեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա, 2ա-352բ [Տիտղ.] Նուագարան բարեիղձ. Բ հատոր: Երկասիրութիւն Թէոդորոս վարդապետ Շիրակունի՝ վանահօր Թարգմանչաց վանից Խաչակապու: Ի 1876 ամի Յունվարի 25-ին, ի վանս Սրբոց Թարգմանչաց:

– 2ա Գիրք երկրորդ – Խրատք բարիք, որք եւ ձգեն / զմեզ ի ներս հոգեկան, / ի բաց կորզին յաշխարհայնոց, / ուր սնոտի հոգ մարդկան:

ա. *2ա-12ա* Գլուխ Ա. Յաղագս ներհին գնացիցն / առ ի բարին ճշմարիտ, / յաղագս վերին բարի խոկմանց / զերջանկութեանց ճշգրիտ – *Արքայութիւն, արդարութիւն, / ճշմարտութիւն Աստուծոյ... եւ ժառանգել փառս անվախճան / լուսարփենից հրճուանս:*

բ. *12ա-5ա* Գլուխ Բ. Յաղագս խոնարհ կալոյ մարդկան / եւ հպատակ Աստուծոյ, / առաքինի գործովք իւրովք / լինել նմա միշտ հաճոյ – *Մի՛ համարիր մեծ ինչ բարի, / թէ ոք իցէ նպաստ քեզ... դու աստրին զանձ վարկ միշտ / աւուրքս կենաց վերջ յանգին:*

գ. *15բ-9բ* Գլուխ Գ. Յաղագս առն խաղաղարար / եւ հաշտարար անհատի, / խաղաղասէր առն բարւոյ / աստուածասէր անհատի – *Նախ՝ հաստատեա՛ զքեզ, ո՛վ մարդ, / խաղաղութեան ի հանդէս... ժառանգ երկնից արքայութեան / Քրիստոսի բարեկամ:*

դ. *19բ-23ա* Գլուխ Դ. Յաղագս ջինջ, մաքուր մտաց / եւ պարզ հոգւոց միամիտ, / մաքուր դիտման առ բան բարին/ յերջանկութիւն հշմարիտ – *Որ վերանայ երկու թեւօք / ի յողիմպեան ի կամար... զոր ի վաղուց կարծիր նմա, / յոյժ դժուարին եւ ծանր:*

ե. *23բ-7ա* Գլուխ Ե. Յաղագս ճիշտ հանաչելոյ / զչափ անձին սեփական, / յաղագս զուտ հասկանալոյ/ զարատ անձին բնական – *Անմարթէ է մեզ կարի իմն / միշտ հանապազ մեր անձանց... զճշմարիտ ուրախութիւն / սրտի քոյին առ բարի:*

զ. *27ա-32ա* Գլուխ Զ. Յաղագս զուարճ ուրախութեան / բարեոք խղճի մեր մտաց, / յաղագս բարի ընկերութեանց / խաչասէր մտերմաց – *Փառք է, պատիւ առն բարւոյ, / երանութիւն երջանիկ... գործ է մարդոյ բանականի, / որ միշտ խօսի ըստ կարգին:*

է. *32ա-6ա* Գլուխ Է. Յաղագս սիրոյն տէր Յիսուսի, / որ ի վեր հան զամենայն, / յաղագս գթոյն Փրկչին մերոյ, / որ ի վեր է հան համայն – *Երանի՛, որ ի միտ առնու, / զինչ է սիրելն Տէր Յիսուս... զի ընտանին յոյժ վնաս է, / քան զամենայն չարակամ:*

ը. *36ա-43ա* Գլուխ Ը. Յաղագս սերտ սերելութեան / Տէր Յիսուսիս մտերիմ, / յաղագս խիստ ատելութեան / սատանային ոխերիմ – *Յորժամ մերձ է առ քեզ, Յիսո՛ւս, / յայնժամ ճոխ ես եւ փարթամ... յետ մրրկի առաւօտու / գայ մաքուր օդ պարզերեկ:*

թ. *43ա-53ա* Գլուխ Թ. Յաղագս ինչ պակասութեան / սփոփանաց ամենայն, / յաղագս դոյզ նուագութեան / հայթհայթանաց մեր համայն – *Չէ ինչ ծանր զմարդկային / արհամար[հ]ել սփոփան... որ ոչ երբէք հանգչին յորսոյ / մարմնոյդ տոփոտ հոմանիք:*

ժ. *53ա-60բ* Գլուխ Ժ. Յաղագս ճիշտ սուրբ գոհութեան / առ շնորհս Աստուծոյ, / զոր ինչ կամաց Տէր Աւարչին / առ ի բնուստ է հաճոյ – *Չի խնդրես դու հանգիստ, դադար, / անդորրութիւն առ բարձին... զի մի երբէք կորուսցես դու / շնորհ բարի բաւարար:*

ժա. *61ա-6բ* Գլուխ ԺԱ. Յաղագս դոյզ սակաւութեան / սիրողացն սուրբ խաչին, / սրբոյ խաչին Տէր Յիսուսի / եւ կենարար սուրբ աջին – *Ունի Յիսուս արդէն բազում / արքայութեան սիրողս... եւ ի յետին նըւաստութիւն / իջուցանէ զիւր զանձն:*

ժբ. *66բ-84բ* Գլուխ ԺԲ. Յաղագս սուրբ ճանապարհին / սրբոյ խաչին արմունի / առ դիմողս ուղիղ սրտիւ / յարքայութեան ընդունի – *Չի խիստ թուի բազմաց բանս, / թէ ուրացիր զանձն քո... կատարեցան խրատք մեր, / որ մեզ ձգեն ի ներքս / առ ի բուժել զցաւ սրտիս / ի լուանալ զվէրքս:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Տե՛ս տիտղ.՝ 1ա:

84ա Աւարտեցաւ երկրորդ հատոր Նուագարան բարեղձիս ի սուրբ վանս Թարգմանչաց՝ մերձ ի Խաչակապ, ձեռամբ հեղինակի սորին՝ Թէոդորոս վարդապետ Շիրակունւոյ, ի 1876 ամի, ի 12 Ապրիլի:

ՆՇՈՒՄ՝ *Ա. կազմաստառին՝ «1025/3550», 1ա՝ «Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»:*

3551
ԺԱՄԱԳԻՐՔ ԱՏԵՆԻ

ԺԷ. դար

ԳՐԻՉ՝ Աւետ: ՍՏԱՑՈՂ՝ տէր Ջաֆարէ:

ԹԵՐԹ՝ 252: ՊՐԱԿ՝ Ա.-ԻԵ×12 (Ա. 6, Է.-Թ, ԺԱ, ԺԵ, ԻԳ 10, Ժ 9, ԺԶ.-ԻԱ, ԻԵ 8, ԻԲ 11, ԻԴ 14): ՆԻՒԹ՝ մագաղաթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20×14: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն, կարմրով սահմանագծուած (14×9): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 48ա): ՏՈՂ՝ 23 (1ա-158ա), 25 (158բ-228բ), 29 (թ. 229-52): ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշի. միջուկը՝ տախտակ:



Նմուշ 48ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Կիսախոռան՝ 1ա, 106ա: Ճակատազարդ՝ 25ա, 50բ, 57բ, 61բ, 65բ, 77ա, 88բ, 97բ, 120ա, 135բ, 153բ, 167բ, 183բ, 198ա, 214ա: Լուսանցազարդ՝ բուսական, բուսաթռչնային, յուշկապարիկ: Ձարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, շագանակագոյն, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, գունաթափ, կեղտոտուած, տեղ-տեղ թափուած, վրան ցեցի եւ այլ անցքեր, 2ական կապիչներն ու փայտէ գամերն ընկած՝ կան անցքերը եւ գամերի հիմքերը, Ա. միջուկի՝ 1 տեղից ընդերկայնակի, Բ. միջուկի՝ 2 տեղից ընդլայնակի կոտրուած մասերը իրար միացուած, կազմին կապուած ամրացման թելերով, մէջքի կաշին մասամբ պատռուած. աստառներն ընկած, կապոյտ թղթից Ա. աստառից մնացած պատռուած փոքր կտորներ, կազմից անջատ. նորոգուած ԺԹ. դ. (թ. 147, 178, 194), թերթեզերքը այրուած, սեւացած, մաշուած, որից նաեւ՝ մանր պատռուածքներ. թերթերը խոնաւացած, զանազան բծերով, կեղտոտուած, խոնաւութեան եւ այլ դեղին հետքերով, սեւ կեղտաբծերով, ստ. արտ. անկիւններում՝ մատնահետքեր, թանաքի (33բ-4ա, 44բ-5ա եւն) հետքեր, հիմքը՝ կուտակուած փոշուց սեւացած. որոշ թերթերի 1ական անցք, որոշ տեղերում բնագրի 1-3 տառեր պակաս (թ. 11, 14, 93, 120, 124, 138, 173, 181 եւն), թ. 147՝ ստ. արտ. անկիւնում՝ ցեցի անցք, որոշ թերթեր՝ եզրահատուած, վնասուած (թ. 57, 99-102, 108 եւն). Ա. պրակի կարը թուլացած, թ. 114-5՝ հիմքից գրեթէ անջատ. գրիչը չի դրել ԺԱ-ԺԴ. պրականիշերը (պրականիշումն արուել է ըստ կարերի). 21բ, 30ա, 74ա, 76բ, 79բ-80ա՝ գրչից բնագրի տեղ բաց թողած, չգրած, 79բ՝ 1 շարական գրուած հետգ. ձեռով, 134բ՝ 2րդ սեան մէջ գրուած հետգ. յիշատակարանը ջնջած, անընթեռնելի, թ. 1, 16-8, 251-2՝ արտ. սիւների բնագրի գրեթէ կէսը կամ կէսից աւելին, որոշ թերթերի եզրերից մասամբ՝ թափուած (թ. 163-5, 173, 177 եւն). սկ-ից, թ. 6-7 միջեւ՝ 1-2, թ. 244-5ի միջեւ՝ 2-3 թ., վջ-ից՝ անորոշ քանակի թերթեր ընկած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-105բ* [Ժամագիրք Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ...]

Տե՛ս ձեռ. 435, 4ա-156բ: 1-3/չիք: 4. ա/1ա-24ա (խորագիրը՝ չիք, 6բ «...ծիծաղին գլորմամբ ծանակ զիս առնեն: Կամաւ կորացայ ///» շար., 7ա «/// Խաղաղութիւն ընդ ամենեսեան...», ընթերցուելիք Աւետարանները դրուած են համապատասխան միաւորի սկ-ում կամ վջ-ում՝ միայն աւետարանչի անուան, բնագրի սկզբնատողի 2 բառի կամ համարի նշումով. հմմտ. Ժամագիրք, Վաղարշապատ, 1902, էջ 50-59, «[երգ պաշտաման գիշերոյ՝ Ա-Ք] – Աստուածածին մայր Քրիստոսի, / Իմ յոյսն դու ես յաւուր մեծի...»՝ չիք): բ/24բ-50ա (խորագիրն ունի՝ «[Խրատ] – Եւ երգովք երից մանկանցն, եւ Տիրամօր՝ աստուածածին կուսին, եւ Զաքարիայ քահանայապետին: Եւ գիտելի է, զի Խոսրով հետ առաջին ժամուն... եւ գննի Յայսմաւուրացն՝ Հայր մեր», «[երգ] Փոխման Աստուածածնին – Քրիստոս եկեալ ի փոխումն Աստուածածնին...»՝ չիք): գ/50բ-7ա: դ/57բ-61բ: ե/61բ-5ա (սկ.՝ տարբեր՝ «Աւրհնեա՛լ Հայր սուրբ Աստուած ճշ[մարիտ]. ամէն»): զ/65ա-76բ: է/76բ-88ա: ը/88ա-97ա: թ/97բ-105ա («Նայեաց սիրով»՝ ունի ամբողջութեամբ, Գրիգոր Նարեկացու Բան ՂԴ.՝ չիք):

Հմմտ. Ժամագիրք, Վաղարշապատ, 1902:

Բ. *106ա-228ա* [Սաղմոսարան]

Տե՛ս ձեռ. 1642, 1ա-239ա: 1/106ա-19բ: ա/117բ-8բ: բ/118բ-9բ (ունի՝ 118բ «[Մաղթանք] սրբոց տաւնի – Բարեխաւսութեամբ սրբուհւո Աստուածածնին...», 118բ «Մաղթանք Յարութեան – Փա՛ռք յարութեան քո, Տէ՛ր...»): 2/120ա-34ա: ա/132բ-4ա: բ/134ա («Աղօթք – Ի գիշերի եւ ի տուընջեան եւ յամենայն ժամու զքեզ աղաչեմք...», «Մաղթանք – Ի գիշերի եւ ի տուընջեան...»՝ չիք): 3/135բ-52բ: ա/150ա-1բ: բ/151բ-2ա: գ/152աբ: 4/153բ-67ա: ա/165բ-6ա: բ/166ա-7ա: 5/167բ-83ա: ա/181բ-2բ: բ/182բ (ունի՝ 182բ «Աղօթք Մնընդեան – Փա՛ռք ծնընդեան քո, Տէ՛ր...», 182բ «Քարոզ... – Վասն ի վերուստ խաղաղութեան...», 182բ-3ա «[Աղօթք] – Տէ՛ր տուընջեան եւ գոյացուցիչ գիշերոյ...», 183ա «[Մաղթանք] – Սաղմոսիւք եւ աւրհնութեամբ...»): 6/183բ-97բ: ա/196աբ: բ/196բ (ունի՝ 196բ-7ա «Քարոզ... – Վասն ի գիշերի եւ ի տուընջեան...»,

197աբ «[Ագօթք] – Ի գիշերի եւ ի տուընջեան…», 197բ «[Մաղթանք] – Ի գիշերի եւ ի տուընջեան եւ յամենայն ժամու անդադար փառաւորեմք զՀայր…»): 7/198ա-213բ: ա/211բ-2ա: բ/212աբ: գ/212բ (ունի՝ 212բ-3ա «Քարոզ… – Վասն ուղղելո զգնացս մեր…», 213աբ «[Ագօթք] – Տէ՛ր երկնի եւ երկրի…», 213բ «[Մաղթանք] – Յերգս աւրհնութեան եւ ի ձայն սաղմոսաց…»): 8/214ա-28ա: ա/226ա-7ա («Փոքր էի ես»՝ չիք): բ-է/չիք: (ունի՝ 227ա «Մաղթանք – Լո՛ւր մեզ, Տէ՛ր…», 227աբ «Քարոզ… – Վասն գտանելո մեզ շնորհս…», 227բ-8ա «[Ագօթք] – Գոհանամք զքէն, Տէ՛ր Աստուած մեր…», 228ա «[Մաղթանք] – Գոհութեամբ եւ ճշմարիտ խոստովանութեամբ… նմա փառս տալն պատիւ»):

Ծնթ. Որոշ գլխահամարներ՝ թռիչքների հետեւանքով տարբեր: Հմմտ. Սաղմոսարան, Վենետիկ, 1786:

Գ. *228բ-52բ* [Տօնացոյց]

Տե՛ս ձեռ. 2441, 3ա-196ա: 1. ա/228բ: բ/228բ (228բ-9ա «Նաւասարդի Լ. (30) եւ Սեպտեմբերի Թ., Իլուլի ԻԲ. (22) – Տօն է մեծապայծառ հրաշափառ եւ փառաւորեալ ամենասուրբ Աստուածածնին…»): գ/229ա: դ/229աբ, 245բ (229ա «Արեգի ամսո Լ. (30) եւ Ապրիլ հռոմայեցւոց Է. – Տօն է մեծապայծառ ամենասրբուհւոյ աստուածածնին Մարիամու… բայց թէ չինանցն հանդիպի, ճաշու եւ երեկոյին ամենայն ինչ յարութեան է», 229բ «Այլ եւ այս գիտելի է, զի բազում հակառակութիւն կրէ մերս եկեղեցի վասն տօնի Աւետեաց Աստուածածնին… զի խաղաղասէրն Որդի Աստուծոյ կոչեսցի»): է-զ/չիք: 2. ա/230ա-1բ: բ/231բ-4ա: գ/234ա-5ա: դ/235ա-6ա: 3. ա/236աբ: բ/236բ-7ա: գ/237ա-8բ: դ/238բ-44բ (244բ՝ «Յորժամ ընթեռնուցուն զեսայեա՝ լուսաւորեացն ///» վջ): 4. ա/245ա (սկ. «/// Գործք՝ Հայեցեալ ի համարձակութիւն…»): բ/245ա-6ա: գ/246աբ: դ/247ա-8բ: է/248բ-9բ: 5/249բ-51ա: 6/251ա-2ա: 7. ա/252ա («Եր[ի]կուն փառ., եկեալք ///» վջ): բ/252աբ (սկ. 252ա «…եւ երկրպագան[են] /// ԲԿ., Խաչի քո Քրիստոս…», 252բ «Բ.շաբթի. Մամասա եւ Փիլի[կ]տիմոնի եւ Սիմէոնի Սիւն[ակեցւոյն]» վջ): գ-դ/չիք: 8. ա-դ/չիք:

Տե՛ս Գիրք ժամակարգութեան, որ կոչի Ատենի, Մարսէլ, 1673, էջ 341-395:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, ԺԸ. դ., անարուեստ նոտրգիր

105բ [Ոտանաւոր-աղօթք, հայատառ թուրերէն*]

– Քաթպգը հարգիշնան / օխտուր հարգիշնան… եախշի օրայորիշ դարմանի:

* Ծնթ. Ընթերցումը եւ բառանշատումը՝ Օհաննա Կարապետեանի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

105ա Ջբազմամեղ Աւէտ *գ[ծողս] յիշեցէ՛ք ի Քրիստոս միով Տէր ողորմայիւ:*

183ա Ջստացող տառիս զբարեմիտ եւ զսրբասէր կրօնաւորն զտէր Ջաֆարէն *յիշեցէ՛ք ի Քրիստոս միով ուղիղ բերանով եւ Աստուած ողորմին բարբառեցէ՛ք:*

213բ Եւ աստ յիշեցէ՛ք զստացող գրոցս զտէր Ջաֆարիայն, *որ ըստացաւ արդար վաստակոց՝ ցանկանալով տէրունեան բանին, որ ասէ. Երանի՛, որ ունիցի զաւակ ի Սիոն. զայս ունելով յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնօղացն ի հանդերձեալ աշխարհին: Ընդ նմին եւ զիս՝ զբազմամեղս եւ զառածեալ* Աւէտ *անարժան գրիչս, որ եմ ունայն եւ թափուր ի գործոց բարեաց եւ փարթամացեալ չարեօք իբրեւ զբարձունք կուտակ կուտակ ի վերայ իմ, ընկղմեալ ի խորս չարեաց, ոչ ունելով յոյս իմոյս փրկութեան, բայց միայն սուրբ երգողացդ, որ միով ուղիղ սրտիւ ողորմի ասէք անարժանիս՝ ոչ ունելով տեղի ողորմութեան:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *2բ (ժէ. դ., անարուեստ նոտրգիր, ատ. լս.) Յիշատակ է այս Սաղմոսա[րանս] մահտեսի* Օրտուի *որդի* Պատալին:

105բ Որդի Պատալ *անէ (՞) շատ բարեւ:*

106ա (կիսախորանի մէջ) Մահտեսի Օրտուին *որդի* Պատալին *յ[ի]շատակ է այս Սաղմոսա[րանս]:*

Տե՛ս նաեւ՝ կնմադրոշմ, 2բ, 228ա:

2. *135ա (1771 թ., նոտրգիր) Ես՝* Անտօնի *որդի զարկար* Յարութուս, *գվի մին մաղաթ ատո՞ւ (մագաղաթ Ատենի ՞) ի դուռեն* Սուրբ Գ.խորանին, *այլեւ հեգվերոր(=հոգեւոր) յիշատակ յաւիտեն[ա]կան է: Թվին ՌՃԻ.ին (1771) ես՝ տէր* Օվանէսըս, *գիրցի:*

3. *30ա (1782 թ., նոտրգիր) Այս է* Մայիլի *որդի* Կիրիքոր, *թուին ՌՄԼԱ. (1782), երից եր[ան]եալ եւ երչանկ[ա]զարդ: Կարշաբարն համբուրեմ հոգւոյ հարիս մերում աստուածայբան Հովհագիմայ վարդապե[տի] եւ քո ծառայ Գիրիգորէս հատ լցի քո սրբութենէդ: (Մի քանի տող ցած)՝ Մվ երջանիկ ճառապայթ, իմանալի արէգ[ա]կն, որ լուսայորէ ամենայն մարդ, այսինքն՝ գէրերջանիկ եւ հոգիաբնակալ սրբազան հօրդ մերո եր[ա]ն<ն> այշնօր* Յովագիմ *զգօնամ/// վարդապետիդ յայտարարութիւն լիցի /// գրեալ ///*

4. *105բ (1783՞ թ., նոտրգիր) Յիշատակ է* Գրիկորի *որդի* Մուկլին *սուրբ մատենին, վայէլի մինչեւ ընդ խորին ծերութուն. ամէն: Թվին ՌՄՀԲ. (1783՞), Մարգի Ի-Ա.ին (21):*

5. *106ա (1786 թ., նոտրգիր, ատ. լս.) Թվին ՌՄՀԵ. (1786) էլաւ* Մոյի[լըն՞]:

6. *65ա (1791 թ., նոտրգիր) Ես՝ անարժ[ան] տէր* Յահուպուն(=Յարութիւն) *քահանայս, գիրէցի թիվ ամաց իմ<ոց> ծնընդ[եան] իմ Ի. եւ Ը. ամաց (28) քահանայութիւն իմ Աստուած<ոյ>ով թվին ՌՄՀ.ին (1791):*

7. *20բ (1793 թ., անարուեստ նոտրգիր, ատ. լս.) Այս է տէր* Մինասին *թիվն քհանայութեանն՝ ՌՄՀԲ. (1793):*

65ա *ես՝ անարժան, մեղայոր ի Տէր* Մինաս *երեցըս, գըրեցի ի թիվս մեր ծընընդեան ՌՄԺԲ. (1763), ի մերոյ քահանայութեան թվին ՌՄՃ[Խ]Բ. (1793)։ Ով ոք գարդայ, մէկ բերան ողորմի ասի, Աստուած իւրն ողորմի։*

Ծնք. 1ին 8 բառը կրկնուած է 64բ.ում։

8. *134բ (ԺՂ. դ., նոտրգիր, արտք. լս.) ///եւ ն///ն ///այիլի որ[դ]ի* Գիրիգ[ո]ի *որդի* [Ո]սկանին, [Մ]ախմուր[ի]ն, Շահնապատին, Ան[ահ]ն, Ջանազ[ա]նին։ *[Մ]ուրբ մա[տեն]իս բարձր ///րակոեահ ///ան նոր տվե/// [ս]այ, սուրբ [ա]ղպուրըն [ց]աւոց տեղացց [ճա՞]ր է**։ *(Գրուած 2րդ սեան վեր. լս-ում)՝* Նազար *որդի* Սիմօն, Գիրիգոր՝ *որդի* Ոսկան, Մախմուր, Շահնապատ, Անահ։

* Ծնք. Աւտ. լս-ի եզրահատման պատճառով ամէն տողի 1-2 տառ կտրուած։

9. *232բ (ԺՂ. դ., անարուեստ նոտրգիր, ստ. լս.) Ի Աստուծոյ ծառայ* Վիրաբէ։

10. *228ա (1806 թ., նոտրգիր) Թվին ՌՄԾե.ին (1806) եւ Մարգի ԺԱ.ին (11) գ<ե>րեցաւ զայս նամակըս։ Ես՝ տէր* Գըրիգորէս, *եկամ այսօ գուշս, որ է՝* Սավեր կեղ*, հետ տէր* Յարութիւնի, *միայսին քահանայութիւն արինք։ Այն տարի էր, որ Ղաջարի ժաման[ա]կն էր, որ շահզատան* Թաւվէզ *նստած էր։ Ջմեռըն գոցայ տէրտէրներայ փախայցին* Քուտիսդա[ն]։ *Ետու ես՝ մեղմածեալ տէր* Գըրիգոր *անարժան քհանայս, խիջմտանքն զիս գանճեց, թողիմ զիմ գուղին, եկամ,* Սուրբ Յօհաննէս եկեղեցուն *ծառայութիւն արիմ այս ամիս։ Ով որ հանդպի գորայ կարդալով կամ օրինակելով, նայ մէկ լի բերանով Աստուած ողոր[մ]ի ասայցէ՛ք, Աստուած ձեզ ողորմեսցի իւր մուանգամ գալստեան. ամէն։ Մեղապարտ եւ անարժան տէր* Գրգորիս։

* Ծնք. Խօսքը գուցէ Պարսկահայաստանի Սալմաստ գաւառի Սաւրա գիւղի մասին է. գրուել է պարսկական տիրապետութեան միջավայրում։

11. *168բ (1833 թ., շղագիր, արտք. լս.) Մնամ խոնայ ծառայ* Սարքիս Մուրայտեան, *(ստ. լս-ում)՝ 1833 թիւ, Մա[ր]տի 18։*

12. *85ա (ԺԹ. դ., շղագիր, ստ. լս. հակառակ դիրքով, մատիտով հետգ. ջնջած) երազ տեսայ ես ուրբաթ գիշեր Յունվարի 29, Լուսնի 20 ըրեն։*

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *2ա, 7բ սեւ թանաքով ութանկիւն՝* «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՊԱՏԱՒ», *5բ, 135բ, 153բ (երկիցս), 218բ, 222բ սեւ թանաքով ութանկիւն՝* «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏԷՐ ՊՕՂՈՍ 1186 (1737)», *50բ, 54բ, 80բ, 88՝* «BGH», *228ա (երկիցս)՝ սեւ թանաքով ութանկիւն՝* «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏԷՐ ԳՐԻԳՈՐ 1249 (1737)»։

ՆՇՈՒՄ՝ *միջուկին սոսնձած դեղնաւուն թղթին՝ «ԺԷ. Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս», «1027/3551»։*

ԳՐՉԱՓՈՐՉ՝ *7ա՝ սեւով խզբզոց, 19ա՝ գծեր, 19բ՝ գրած-ջնջած տառագծեր, անընթեռնելի, 21ա՝ «Առայքեւոցն ոչ էն կամեւք ասայ, զարատն մարքարէիցն բարի ասայ», 21բ՝ «ԱՍ», «Թ ծուխեամբ», 24բ՝ «մարգարէ», խզբզոց, 30ա՝ «այս է մերդ», 33բ՝ «դկ», «մ», «ս», «դ», գլխագիր խաչանման «Փ», «ն յ», «Տց», 48բ՝ «Յ», 64բ՝ «ես անանժան մեղայոր ի Տէր Մինաս երէցս», «ա», 65ա՝ «ա», 65բ՝ «Ա», արտատպուած նաեւ 66ա.ին, 72բ՝ տառագծեր, արտատպուած նաեւ 73ա.ին, 76բ՝ «Խ», 79բ՝ «ուխիւն», ջնջած, անընթեռնելի, 96բ՝ «Հ» (երկիցս), 97ա՝ «Հ», 97բ՝ «կա», «ե», 105բ՝ «///էսխ մարտո», «յիշատակ է ///», 106բ՝ «եԲ», «աա», «եսբ», «վ», 112բ՝ «ու վ», «ռեււս», «բարով», 140բ՝ «ն», «ճ», «է», «ի», «ը», «թ», թանաքը՝ արտատպուած նաեւ հանդիպակաց էջին, 144բ՝ «Սուրբ», արտատպուած նաեւ 145ա.ին, թ. 147 արտք. եզրի նորոգման կարկատան թղթին 2 կողմից՝ ԺԹ. դ.՝ «ա-թ» (բազմիցս), «Արամ Արմեն արդ ընկալ հոգ///», 156բ՝ «Բ», «կարքաւոր հալաք պարոնտէր ես աասցի», «վար», «գ» (5 անգամ), «ն» (5 անգամ), «ջի», 157բ՝ «ն», «ժ», 166բ՝ «Ի նվաստ եւ Աստուծոյ ծառ», «Քե», 167ա՝ «եւ», «Ա», «մ», «ր», «սուրբ», 168բ՝ «ս», թ. 178 ստ. արտք. եզրի, թ. 194 ստ. եզրի նորոգման սպիտակ կարկատան-թղթին՝ հակառակ դիրքով՝ տառեր՝ ԺԹ. դ. (բազմիցս), 206բ՝ «ա» (27 անգամ), «գգ», «ԼԼ», 2-3 տառեր՝ անընթեռնելի, 224բ՝ «աապ», 230բ՝ խզբզոց, 244բ-5ա՝ «վիրապէն շատ բարով Ռ. բարով ասացէք Բ. շաբաթ ///», անընթեռնելի։*


ՆԿԱՐԱՓՈՐՉ՝ *65բ՝ բուսական նախշ, 153ա՝ հանգուցագիր-թռչնագիր՝ «Մ» «Հասցէ գ» գրութեամբ, նժարներով կշէռքի պատկեր, 167ա՝ թռչուն՝ վերեւում հակառակ դիրքով հայատառ պարսկերէն՝ «Թավուզ» (թրգմն.՝ սիրամարգ) գրութեամբ, երկիցս։*

3552
ԱՒԵՏԱՐԱՆ


ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅ (ՇԱՄԻՉՈՐ) ՌԽԳ. – 1594

ԳՐԻՉ՝ Անանիա վրդ.։ ՍՏԱՑՈՂ՝ Բարսեղ վրդ.։ ԿԱՉՄՈՂ՝ Յովսէփ։

ԹԵՐԹ՝ 344+1 (կրկն.՝ թ. 205). չգրուած՝ 1ա, 2բ-3ա, 4բ-5ա, 6բ-7ա, 8բ-9ա, 10բ-1ա, 12բ-3ա, 14բ-5ա, 16բ-7ա, 22բ-4ա, 173ա, 265ա, 342ա, 343ա, 344ա։ ՊՐԱԿ՝ 10+2+10+Ա-Իէ×12 (Իէ 11)։ ՆԻՒԹ՝ թուղթ՝ թ. 23-285. այլ թուղթ՝ թ. 1-22, 286-344։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18×14։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն, կարմրով սահմանագծուած (11,7×9)։ ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 65ա, եղբայրագի՞ր ծածկագիր՝ 337բ)։ ՏՈՂ՝ 19։ ԿԱՋՄ՝ դարչնագոյն կաշի՝



Նմուշ 65ա



Նմուշ 337բ


դռնակով, 2ական կապիչով եւ մետաղէ գամով (Ա. փեղկը՝ կոստղապատ՝ 53 կոստղ, 6 մետաղէ ճաւասարաթեւ խաչ, որոնցից 2ը՝ ականակուռ, ակները՝ կապոյտ եւ կարմիր). միջուկը՝ տախտակ. Ա. աստառ՝ տպագիր դեղնաւուն թուղթ՝ Շարակնոց, Կանովն Փոխման Աստուածածնին. երկրորդ աւուրն (պատառիկներ 2 տարբեր ձեռագրերից՝ Ա.[1] 5×8, միասիւն (7,5×3), 5 տող, էջ 44///, ունի յիշագիր. «/// այսօր ճանգուցեր ի լոյս[ն անմատոյց]... ընդ վերին զուարթնոց երկնից ///»: Ա.[2] 8×9,5, միասիւն (7,9×7,7), 14 տող. «/// որ վայր իջեալ ընդ Միածնին... զհուր անդադար ծաւնիւ ///»): Համմտ. Շարակնոց, 1692, թ. 441-442: Ա.[3] Սաղմոսարան, Աղօթք Ամբակումայ մարգարէին (ձեռագրից 1 ամբողջական էջ՝ 14,8×9,4, միասիւն (12×7,5), 25 տող, էջ 340, զարդաշրջանակով, ունի յիշագիր. «///եսցին եւ անտառ [վ]ատ[նեսցին]... ֆոյ, ի փրկել զընտրեալս ֆո ///»). հմմտ. Սաղմոսարան, 1795, Կ. Պոլիս, էջ 363-364: Բ. աստառ՝ սպիտակ կտաւ:

ՊԱՏԱՒԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – 1. Աւետարան Ղուկասու: Ժ. դ.: ԱԲ (սկ.)՝ ստացուած մէկ թերթի եզրաճատումով եւ ընդլայնակի ծալումով: Մագաղաթ զոյգ թերթերի բացուածքը՝ 25,7×17,2. երկսիւն (23,4×16). ուղղագիծ երկաթագիր (նմուշ՝ Բա). տող՝ 21: Լուսանցազարդ՝ բուսակա՞ն՝ Աա (եզրաճատումով կտրած). գոյներ՝ կանաչ, շագանակագոյն, մանուշակագոյն: Կարդալ. Բբ[1], Աա[1], Բբ[2], Աա[2], Բա[1], Աբ[1], Բա[2], Աա[2] «/// [նշա]ն երկնից ոչ տացի սմա, բայց նշանն Յովնանու... բաժակին եւ զպնակին սրբէիր եւ ներ[ինն] ///» (ԺԱ. 29-39):

2. Մաշտոց: ԺԱ. դ.: Գ (վջ)՝ ստացուած մէկ թերթի ընդերկայնակի եւ ընդլայնակի եզրաճատումով (բնագիրը՝ կտրած): Մագաղաթ 17,4×13,5. երկսիւն (13,7×11,2). ուղղագիծ երկաթագիր (նմուշ՝ Գա). տող՝ 19 (սկզբնական վիճակը՝ 24,2×17,5. երկսիւն (17×11,7). տող՝ 24-25): Կարդալ. Գաբ՝ «/// զնոսա յաշխ[արհէ, ա]յդ զի պա[հեսցէ զ]նոսա ի չա[րէ]... եւ աշակերտաւմն հանդերձ յայնկո[յս ձորոյ]ն կեդրովնի ///» (Յովհ. ԺԷ. 15 – ԺԸ. 1), Գբ՝ «Վասն ի վեր[ուստ] /// [ա]ղաւ[թք]. եկեա[լ] եմ[ք երկիր պա]գանել... բանզի [ֆո հրա]մանաւդ կոչ[էցեր յաւ]ծումն, եւ կատ[արեալ] ///»:

Տե՛ս Մայր Մաշտոց, հտ. Ա., Գիրք Ա., աշխ.՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, Ս. Էջմիածին, 2012, էջ 475-476:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Աւետումն՝ 1բ, Ծնունդ՝ 2ա, Ընծայումն տաճարին՝ 3բ, Մկրտութիւն՝ 4ա, Այլակերպութիւն՝ 5բ, Յարութիւնն Ղազարու՝ 6ա, Մուտ յե-



Նմուշ Բա



Նմուշ Գա

րուսաղէմ՝ 7բ, Ոտնլուայ՝ 8ա, Խաչելութիւն՝ 9բ, Թաղումն՝ 10ա, Աւերումն դժոխոց՝ 11բ, Իտալբեր կանայք՝ 12ա, Համբարձումն՝ 13բ, Հոգեգալուստ՝ 14ա, Ազգարարումն երկրորդ գալստեան եւ պատուիրատուներ՝ 15բ, Աճեղ դատաստան՝ 16ա, Մատթէոս՝ 24բ, Մարկոս՝ 112բ, Ղուկաս՝ 173բ, Յովհաննէս եւ Պրոխորոն՝ 265բ: Լս-ային՝ Թզենի տերեւալից՝ 82ա, 152ա, Յովսէփ Արիմաթացի՝ 170ա, 259բ, 331բ, Աւետումն՝ 176ա-7ա, սափոր (Հարսանիք ի Կանայ)՝ 270ա, Բժշկումն կուրի՝ 297բ: Խորան՝ 17բ, 18ա, 18բ, 19ա, 19բ, 20ա, 20բ, 21ա, 21բ, 22ա: Կիսախորան՝ 25ա, 113ա, 174ա, 266ա: Լուսանցազարդ՝ բուսական, բուսաթռչնային, յուշկապարիկ, խաչ, տաճար, «...զոչխարս ի մէջ գայլոց...»՝ 48ա, գառն՝ 221ա, ծառ, ճրագ («Ճրագ մարմնոյ ակն է...»)՝ 37բ, կրակի բոցեր («Հուր եկի արկանել...»)՝ 222բ: Ձարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, դեղին, կանաչ, ճարնջագոյն, մանուշակագոյն, մոխրագոյն, սեւ, ոսկի:

Տե՛ս Ա. Գէորգեան, Անանուն հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն, Թ-ԺԷ. դդ., Գահիրէ, 2005, էջ 330:

Ծնթ. 3 տարբեր ձեռքի աշխատանք է՝ ա. տէրունական մանրանկարներ եւ խորաններ, բ. աւետարանիչներ եւ լս-ային մանրանկարներ, գ. լուսանցազարդեր եւ զարդագրեր:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, ճերմակած, Ա. փեղկի 4 խաչերի ակները, 1 խաչի ակնի ճաւեւ հիմքը, 1-2 կոստղ՝ ընկած. Ա. աստառի տպագիր թերթերը կեղտոտուած, դեղնած, առանձին մասերը սոսնձած իրար, գիրը՝ ծածկած, Բ. աստառը կեղտոտուած, սոսնձի դեղնաւուն եւ պտոկ-պիպ Գ.ից արտատպուած սեւ թանաքի հետքերով. պտոկ-պիպ.

Աբ՝ մասամբ խունացած, եզրերում եւ ծալման հատուածում մասամբ դեղին հետքերով, Գ.ի նրբն եզրին նորոգման թուղթ սոսնձած, գիրը՝ ծածկած, նախկին կպումը կոպիտ անջատելու հետեւանքով կապիչների հիմքերի ուղղութեամբ պատռուած, բ երեսը դեղնած, նախկինում աստառին կպած լինելու հետեւանքով՝ սոսնձի հետքերով, մասամբ անընթեռնելի. նորոգուած 1788 թ., թերթեզերբը մասամբ մաշուած, դեղնած, նորոգման ժամանակի եզրահատումից անհաւասար, տեղ-տեղ մանր պատռուածքներ. հիմքում եւ եզրերում կան նորոգման սպիտակ չգրուած թղթի մասեր (35ա, թ. 38, 47ա, թ. 191-2 եւն). թերթերին խոնաւութեան եւ դեղին այլ կեղտաբծեր, հիմքը ամրացած փոշուց սեւացած, ստ. արտ. անկիւններում՝ մատնահետքեր, տեղ-տեղ այրուածքի (թ. 36-7, 42 եւն) եւ թանաքի հետքեր. թերթերը տեղ-տեղ մաշուած, գրադաշտից եւ եզրերից պատռուած (թ. 42, 45-6 եւն), թ. 34-5, 58-9, 333-4՝ մասամբ իրարից հեռացած, թ. 188, 190՝ ստ. արտ. անկիւններից՝ թափուած. մանրանկարները մասամբ գունաթափ, մի քանիսը՝ նախկին կպումը կոպիտ անջատելու հետեւանքով վնասուած (1բ-2ա, 3բ-4ա եւն), թ. 1-16 եւն մանրանկարների միջեւ կան դեղին մեկուսիչ թղթեր, թղթի բարակութեան հետեւանքով թանաքը եւ 25ա, 113ա, 174ա 266ա մանրանկարների գոյները արտացոլուած հակառակ երեսներին, եզրահատումով 126բ բուսական լս-զարդը եւ զարդագիրը՝ մասամբ կտրած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *17բ-8ա* Թուղթ եւսեբեայ:

2. *18բ-22ա* Համաբարբառ (նաեւ ստ. լս.՝ Յռուացանկ):

3. *25ա-111բ* Աւետարան Մատթէոսի: *112ա* Թելադրութիւն:

4. *113ա-72ա* Աւետարան Մարկոսի (*171բ-2ա* Յարուցեալ Յիսուս): *172բ* Թելադրութիւն:

5. *174ա-264ա* Աւետարան Ղուկասու: *264բ* Թելադրութիւն:

6. *266ա-337բ* Աւետարան Յովհաննու: *338ա* Թելադրութիւն:

7. [Ոտանաւորք]

ա. *112ա* Մաթէոս մարդ անաւանեցաւ...

բ. *172բ* Այս Մարկոսի ասի առեւծ...

գ. *264բ* Այս Ղուկասու եզն ասացին...

դ. *338ա* Այս Յոհաննէս արծուանման...

Ծնթ. 237ա արտ. լս-ում կայ գրչի բնագրային լրացում:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԱՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. *Անանիա գրչի 19ա (ստ. լս.) եղբա՛յր, օտար մարդու ձեռ է անկեր, ինձ մեղ չդնէ՛ք զղալատն:*

74բ (ստ. լս.) Աստուած աւրհնէ Նախջուվանեցի Նսէֆն, *որ երեկ մեր վանքն, տեսաւ որ Աւետ|75ա|արանն կու գրի, Ա. շահի ինքն, մէկ՝* Սալթանփաշէն: *Աստուած զիւրեանքն |74բ| աւրհնէ, <զիւրեանքն>՝* զԽութլուշէն, զԿարապետն, Փանոսն: *Աստուած զիւր|75ա|եանքն մինչեւ ի խորին ծերութիւնն պահէ. ամէն:* Խաթունին, *|74բ|* Ղազար:

77բ (ստ. լս.) Վա՛յ ինձ, ջուր թափաւ, սեւ է տեղն (2րդ սեան 1ին 4 տողերի մասին է):

264բ Վա՛յ քեզ, եղկելի՛ Անանիա */, լա՛յ ու սգա՛ անձինդ վերայ: / է ռէհի ֆլի պաւ (՞), քեզ եմ յուսացեր:*

337բ (եղբայրագիր ծածկագիր) ԲՅՒ.Յ.Յ.Լ.Ն. Դ.Տ.Ի.Յ.Ջ: Անանիայ *գվըրհ///*

338բ Աւրհնութիւն, գոհութիւն, բարեբանութիւն գթածին, ողորմածին եւ մարդասիրին՝ Աստուծոյ Հաւր, Աստուծոյ Որդւոյ, Աստուծոյ Հոգւոյն Սրբոյ, եռանձնեայ, եզակի, համակամ, համագոյ եւ համազաւր, անորիշ, անբաժանելի եւ անզննելի, անքակ եւ անքանակ ամենասուրբ երրորդութեանն այժմ եւ անզըրաւ յաւիտենիս. ամէն: Որոյ շնորհաւք աւարտեցաւ եռահրաշ եւ հոգիազարդ Աւետարանս, որ է շաղկապեալ երանելի աւետարանչացն՝ ըստ բազմերանգ գունոց ի մի ոստայն անկելով հանճար, զոր արուեստակեալ անուշոցաց ծաղկանց եւղեփեցական կազմութեամբ, որ ըստ հոգւոյն յատկութեան իմանի, զանազան որակութեամբ գաղափարելով ըստ յօքունց արփիացելոցն դասակցութեանց՝ |339ա| առ ի յարմարումն եկեղեցւոյ, յաւդիւ խաղաղութեան գլխոյն պատշաճեալ, զի յայսմանէ կատարելութեան: Զորս Աւետարանք ի բազում պատճառէ. չորեքկերպեան կենդանիք՝ Մարդ, Առեւծ, եզն, Արծիւ, չորս նիւթք աշխարհիս՝ հող եւ ջուր, աւդ եւ հուր՝ թշնամիք անհաշտելիք եւ սիրելիք անքակտելիք, չորս չորք գիր անուան ամենասուրբ երրորդութեանն՝ Հայր, Որդի, Հոգի, չորս գետք բղխեալ ի դրախտէն՝ Փիսոն, Գեհոն, Տիգրիս, Եփրատէս, չորք անկիւնք եւ չորս եղջերք սեղանոյն, չորք գէմք սրբոյ խաչին, չորս առաքինութիւնք հոգւոյ՝ խոհեմութիւն, արիութիւն, ողջախոհութիւն եւ արդարութիւնն, չորս ծագք տիեզերաց՝ արեւելք, արեւմուտք, հիւսիս եւ հարաւ, չորս բանք Աւետարանիս՝ պատգամ եւ |339բ| պատուիրան, սպառնալիս եւ աւետիս, չորս բանիւ խաւսի Աւետարանս՝ հրամանաւ եւ խրատով, աւրինակաւ եւ վկայութեամբ. եւ այլ բազում պատճառք են, յորս գաղափարին չորեքեան Աւետարանքս: |340ա| Արդ, գրեցաւ սա ձեռամբ յոգնամեղ եւ անարհեստ գրչի Անանիա *յետին վարդապետիս, ի թվականութեան հայոց ՌԽԳ. (1594), ի յերկիրն* Շամիձոր *կոչեցեալոյ, ի դուռն* Սուրբ Ստեփաննոս Նախավկային *եւ ի տիրամայր* Սուրբ Աստուածածին, *եւ* Սուրբ Գէորգ Զաւրավարին, *որոյ ընդ մեզ աւգնութիւն եւ ձեռնտու եղեն, որ կարողացոյց զանարժանս հասանել յետին գիծ ոսկիաբան սուրբ Աւետարանիս: |340բ| Յի-*

շեցէ՛ք ի սուրբ աղաւթս ձեր անարժանս եւ զիմ ծնաւղն՝ ըստ հոգւոյ հայրն տէր Բարդուղիմէոս *կրաւն<աւն>աւորն, եւ զհայրն իմ պարոն* Ղութլիբէկն, *եւ մայրն իմ* Մըրմաթխաթուն, *եւ զեղբայրն իմ* Խաչատուր, *եւ զհաւրեղբարքն իմ, որ հանգուցեալ են առ Քրիստոս՝ պարոն* Սարիկն *եւ* Գրիգորն, *եւ որդիքն իւրեանց՝* Ատղն, Միրումն, Առաքելն, Մարգարէն, *եւ քոյրն իմ* Ասախաթուն, *եւ զիւր որդիքն. ամէն: Յարձեալ աղաչեմ զձեզ, յիշեցէ՛ք զիմ որդի տէր* Յոհաննէսն *եւ այլ միեղէն եղբարքն. ամէն:*

2. Յովսէփ *կազմողի 341ա [ո]ւստի եւ տեսեալ զսոյա անճառ փրկագործութեան խորհուրդ՝ հեզահոգի եւ մաքրամիտ, քաջ բաբունապետն տէր* Բարսեղն՝ *ջահն եկեղեցւոյ եւ սիւնն հաւատոյ, մեզ՝ ազգիս հայոց, որ եռափափագ սիրով, յաւժար կամաւք եւ սերտ հաւատով ցանկացող եղեւ այսմ ծաղկաւէտ եւ վարդափթիթ, կենսաբուխ սուրբ Աւետարանիս եւ ետ գրել ի հալալ վաստակոց իւրոց՝ յիշելով զբան մարգարէին, որ ասէ. երանի՛, որ ունիցի զաւակ ի Սիոն, որ է եկեղեցի սուրբ: Վասն այն յուսոյն ետ գրել զէրունեան Աւետարանս առատ տրիւք՝ ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ եւ ի վայելումն մանկանց Սիովնի: Այլեւ յիշատակ բարի հոգւոյ իւրոյ եւ ծնաւղաց իւրոց՝ հաւրն տէր* Ներսէս քահանային, *եւ մաւրն* Մէհրշի, *եղբարցն՝ |341բ|* Մարտիրոսին, *տէր* Հայրապետին, Սրապիոնին, Մովսէսին, *եղբաւրորդոյն* Յոհաննէս *դպրին, քուերն* Ալամի: *Աստուած ողորմի՛ ասացէք սոցա հոգոյն. ամէն:*

Արդ, որք ճաշակէք յամէնառատ սեղանոյս եւ վայելէք յաստուածային բուրաստանէս եւ հանդիպիք սուրբ Աւետարանիս կարդալով կամ տեսանելով, յիշեսջիք ի սուրբ եւ ի մաքրափայլ յաղաւթս ձեր՝ առաջի անարիւն զենմանն ի ժամ սոսկալի սուրբ պատարագին եւ լի բերանով Աստուած ողորմի ասացէ՛ք տէր Բարսէղ *սրբասէր վարդապետին, եւ ծնաւղացն՝ տէր* Ներսէս քահանային *եւ* Մէհրշի, *եղբարցն՝* Մարտիրոսին, *տէր* Հայրապետին, Սրապիոնին, Մովսէսին, *եղբաւրորդոյ* Յոհաննէս *դպրին, եւ քուերն* Ալամի, *եւ Աստուած ձեզ ողորմեսցի յիւր միւսանգամ գալուստն. ամէն: Յովսէփ կազմողս չի մոռանաս, ոսիցդ եմ հոգ:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *342բ (ժէ. դ., բոլորգիր) Յարձեալ յիշեցէ՛ք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվերջին եւ զվերոյգրեալ անուանքս՝ զգՖարմանն (արտք. լս-ում)՝ «եւ զգկողակից* Գուլբըհարն», *եւ զգ*Դարմանն, *եւ զկողակիցն* Խաթունիկն, *մալիք* Պետրոս, *եւ զկողակիցն զ*Վարդխաթունն, *էռէս* Յովասափն, *եւ կողակիցն իւր զ*Նուբարն, *եւ զնոքաբուս որդիքն իւրեանց՝* Պօղոս, *զ*Կարապետն *եւ զ*Խլղաթին, *եւ* Դաւթի *կողակիցն՝ զ*Նուբարն, *եւ զիւր որդիքն՝ զ*Իսիբէկն *եւ զ*Ատիշն, *եւ զ*Նուրիջանն, Խաչիկն *եւ զկողակիցն* Շարըստանն, *զ*Ասլանն *եւ* Սաոսնն, *յիշեցէ՛ք եւ Աստուած ողորմի ասացէ՛ք նոցա. ամէն: (2 տող ցածում)՝ զ*Գափարն, *զ*Մարգըրիտն, *զ*Գուհարն *յիշեցէ՛ք ի Քրիստոս, եւ Աստուած ողորմի նոցա: (6 տող ցածում) Յարձեալ յիշեցէ՛ք, յերկնաբացիկ յաղօթս ձեր զհայրքն մեր հոգեւոր՝ զ*Նուրիջանն *եւ* Խանիսենց Պետրոս *եւ զկողակիցքն իւրեանց, զմայր|343ա|ն մեր (չշարունակած):*

2. *339բ (ստացողի, ժէ. դ., անարուեստ բոլորգիր) Յիշեցէ՛ք ի Քրիստոս զմէլէք* Մէհէրն, *որ ըստացաւ զսա՝ ի հալ[ալ] արդեա[ն]ց՝ յիշատակ հաւրն մէլիք* Դաւթին, Փաշախաթունին, *եւ եղբաւրն մէլէք* Եարազիզին, *եւ* Ջրուանդին, *եւ որդոյն* Մլհամին, *եւ* Մկրտչին, Նուրիջանին, Դաւթին, Խաչկէն, Ամիրխանին, Շահնազարին, Յովասափ<ս>ին, Խոլաթին, Յովանիսին, Յուսէփին, Պետրոսին, Միրազիզին, *(այլ ձեռքով)՝ «տէր»* Ղազարին, Աստուածատրին: *Յարձեալ յիշեցէ՛ք ի Քրիստոս էռէս* Մլհամ *եւ զիւր կողակից զ*Փաշախաթուն, *եւ զերեց որդիքն՝ զ*Մէհէրն *եւ զկին զ*Նազխաթուն, *|340ա| եւ զդստերն* Փարեխանին, Աղաբէկին, Ամիրաղին, *մէլէք* Եարազիզին *եւ իւր կնոջ* Բանաւին, *եւ* Նուբարին, Էթարին, Ջրուանդին, *կնոջն* Մլհամին, Մկրտչին *եւ իւր կողակցին: Յարձեալ յիշեցէ՛ք ի Քրիստոս զ*Դաւիթն *եւ զկողակիցն զ*Նուրիխանին: *Աստուած աւրհնէ զպարոն* Մէհէր *եւ զեարազիզն, որ ետուն զսա ի դուռն* Սուրբ Յարութեան<ի>ն *եւ* Սուրբ Սարգսին՝ *յիշատակ հոգւոյ իւրեանց. ամէն:*

Ծնթ. Գրուած է գրչի 338բ-40բ էջերի յիշատակարանի՝ ստացողի անուան համար բաց թողնուած տեղում:

3. *343բ (Նորոգման, 1788 թ., բոլորգիր) Ո՛վ եղբայրք, յիշեցէ՛ք ի Քրիստոս: Արդ, Նորոգեցաւ սուրբ Աւետարանս, որ յոյժ քայքայեալ էր: Ես՝ տէր* Մարքարաի *որդի տէր* Օհաննէսս, *որ տուի Նորոգել, լինիցի մեզ յիշատակ եւ հօրն իմոյ տէր* Մարգարահն, *եւ մօրն իմոյ* Նազէին, *եւ յեղբարաց իմոց* Յակոբին, Գրիգորին, Մարտիրոսին: *Յիշեցէ՛ք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զհայր իմ, եւ զմայրն իմ, եւ զեղբայրքն իմ, եւ զիս՝ մեղաւորս յիշեցէ՛ք, եւ զմեզ յիշօղն Աստուած ողորմեսցի իւր միւսանգամ գալստեան. ամէն: Թվին ՌՄԼԷ. (1788), Նոյեմբերի ժ. այս Նորոգեցաւ: Յարձեալ յիշեցէ՛ք (չշարունակած):*


4. *344բ (1799 թ., շղագիր) Արդ, ի ժամանակիս երեկոյեցեալ եւ ի դարուս նսեմացեալ ցանկացող եղեն նո[րո]գել* Սուրբ Յարութիւնն *եկեղեցին. տէր* Մարգարի *որդի տէր* Յօհան *եւ պարոն* Յարութիւն *շինել ետուն զխաչկալն, մի լաւ լաւ ջաղեր, շատ գրե<րե>անք, լաւ ժամակարգութիւն, զոր տ[է]սողքն ցանկանային: Եւ ես՝ նւաստ տիրաց[ո]ւ* Գրիգոր, *բազում աշխատեցայ եւ կազմեցի հին եւ ցրւեալ գրեանք: Ով որ հանդիպիք, չի մոռանաք: Թվին ՌՄՀԸ. (1799):*

ՆՇՈՒՄ՝ *1ա՝ սեւով «1028/3552», «ՌՀԳ. 1594 Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»:*

3553
ՔԱՐՈԶԳԻՐՔ

ԺԹ. դար

ԹԵՐԹ՝ 123+1 (կրկն.՝ թ. 63). (գրչի էջակալում՝ 1-67, որ է՝ 2ա-35ա, գրչին շարունակած հետգ-ի էջակալում՝ մատիտով՝ 68-246, որ է՝ 35բ-123բ, 5րդ տետրի հետգ-ի էջակալում բնագրի վրայ խոշոր թուանշաններով՝ 446-468, որ է՝ 112ա-23բ). չգրուած՝ թ. 1, 36-40: ՊՐԱԿ՝ խառն (Ա. 40, 2-4՝ 24, ե 12): ՆԻՒԹ՝ թուղթ. այլ թուղթ՝ թ. 1-40. այլ՝ լուսագծերով թուղթ՝ թ. 112-23: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20,5×14,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (19×13,7. ստ. լս. յիշագրեր՝ թ. 2-35): ԳԻՐ՝ շղագիր (նմուշ՝ 93ա): ՏՈՂ՝ 33-34 (թ. 1-35), 24 (թ. 41-63), 25-26 (թ. 64-111), 30-35 (թ. 112-23): ԿԱՋՄ՝ մուգ շագանակագոյն մոմլաթ, մէջքը՝ սեւ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ դեղնաւուն թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ՝ դեղնաւուն չգրուած թուղթ, մասն կազմաստառի:



Նմուշ 93ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած 1950ական թթ., կազմը՝ նորոգման ժամանակի. թերթերի բարակութեան հետեւանքով թանաքը արտացոլուած հակառակ երեսներին. մի քանի թերթերի վրայ մանր կեղտաբծեր, դեղին հետքեր, թանաքի բծեր. թ. 111-2ի միջեւ, վջ-ից՝ անորոշ քանակի թ. ընկած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *1ա-35բ* [Քարոզք Անտոնի Վիէրայ. ձեռ. 2874, 279բ-92բ, 296ա-314ա]

ա. *2ա-8բ* Քարոզ երեսուն եւ վեցերորդ. Յաւուր երեքշաբաթի Աւագ շաբաթու. Թագաւորք ածեալ ի դժոխս յաւազակաց: Եւ աւազակին ածեալք ի յարհայութիւն ի թագաւորաց, [ի բանն]՝ Յիշեա՛ զիս, Տէ՛ր, յորժամ գայցես արհայութեամբ քո, այսօր ընդ իս իցես ի դրախտին. Ղուկ. 23: 42-[43] – *Այս բան այսօրեայ Աւետարանին զայս ցուցանէ մեզ... նոքա մանաւանդ ածցեն զգողն ընկերակցութեամբ իւրեանց ի յերկնային դրախտն, որպէս դու այսօր արարեր (Ընդ իս այսօր իցես ի դրախտին):*

Ծնթ. 2ա վեր. լս-ում՝ խոռազրի կողին, հետգ-ի շղագրով կապոյտով՝ «Թարգմանութիւն»:

բ. *9ա-15բ* Քարոզ երեսուն եւ եօթներորդ. Յաւուր Աւագ հինգշաբաթի. Փափաք սիրոյ Քրիստոսի, [ի բանն]՝ Գիտաց Յիսուս, թէ յԱստուծոյ ել եւ առ Աստուած երթայ: Սիրեաց զիւրսն, իսպառ սիրեաց զնոսա. Յով. 13: 1, [3] – *Մեծ է օրս եւ մեծագոյն սէրն այսմ աւուր... ի վայելել գամենապայծառ տեսութիւն քո, այլ առ ի սիրել զքեզ ընդ ամենայն յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

գ. *16ա-22ա* Քարոզ երեսուն եւ իններորդ. Յաւուր Սրբոյ զատկին: Որ առաւել սիրէ ընդ արշալոյսն յառնէ, [ի բանն]՝ եւ ընդ առաւօտս միաշաբաթուն գան ի գերեզման ընդ արեւագալն. Մարկոսի 16. 2 – *Որ առաւել սիրէ՝ ընդ արշալոյսն յառնէ. Այսպէս արար յայսմ առաւօտուն... որ նախ քան զծագել արեգական՝ արդէն ծագեալ էր (եւ ընդ առաւօտն միաշաբաթուն գան ի գերեզման, ընդ արեւագալն):*

դ. *22բ-7բ* Քարոզ հառասներորդ. Յաւուր երկուշաբաթու Ջատկին. Պատմութիւն մերոյ ժամանակի, [ի բանն]՝ եւ ահա երկուք ի նոցանէ երթային ի նմին աւուր ի գեօղ մի, եւ էր անուն նորա Էմմաուս. Ղուկ., 24: 13 – *Հետաքրքրական է այսօրեայ պատմութիւն, զոր ճառէ սուրբն Ղուկաս... եւ նոքա լցան անպատմելի խնդութեամբ ի լսել զպատմութիւնս ի Տեառնէ:*

ե. *27բ-35բ* Քարոզ հառասուն եւ միերրորդ. Յաւուր երեքշաբաթի գկնի Ջատկին. Հաւասարութիւնն եւ համբերութիւնն, երկու միջոցօք առ ի հետեւիլ խաղաղութեան, [ի բանն]՝ եկն Յիսուս եւ եկաց ի միջի նոցա եւ ասէ ցնոսա. Ողջո՛յն ընդ ձեզ: Իբրեւ զայս ասաց, եցոյց նոցա զձեռսն եւ զոտս, եւ <եւ> զկողսն. Յոհ., 20: [19]-20 – *Յետ ալեկոծութեան եղելոյ ի յընդհանրական ջրհեղեղին... կազմեալ քոյին սրբազան խաչիւն: Խաղաղութիւն ընդ ձեզ: Խաղաղութիւն ընդ ձեզ: Խաղաղութիւն ընդ ձեզ: Վերջ Քարոզիս իմոյ:*

2. *41ա* [Քարոզ վասն խրատի Աստուծոյ] – *(սկ.՝ չգրուած) /// եթէ ի զոհն հօրն Սամփսոնի, (Դատ. ԺԳ. 20) ներկայ եղեւ հրեշտակն Տեառն եւ հուրն աստուածային հրաշապէս վերացաւ... այլ մատուցեալ էք ի Սիոն լեառն եւ ի քաղաք Աստուծոյ եւլն. եբր. ԺՀ.(=ԺԲ.) 12, 22:*

3. *41ա-5ա* Նովաւ կեանք էր եւ կեանք էր լոյս մարդկան [Յովհ., Ա. 4]: Մեկնութիւն անուան ծառոյն կենաց եւ երկոտասան պտղոյ նորա եւ տեղւոյ, յորում ծնեալ բուսանի՝ ըստ Յոհաննու տեսլեան ԻԱ. եւ ԻԲ. Գնայր ի մէջ հրապարակաց քաղաքին եւ զեզերք գետոյն աստի եւ անտի ծառս կենաց... – *Ի ներքոյ օրինակի այսորիկ ծառոյ կենաց, որում ցանկամ տեառնագրել զբոլոր գիտութիւն քո... եւ ընկալցի զարիւնն Աբելի արդարոյն, զի արիւնս այս աղաղակէ հզօրեղապէս՝ բարեխօսելով վասն առ Հայր:*

4. *45բ-60ա* [Խորհուրդ ապաշխարութեան] – *Խորհուրդն ապաշխարութեան է ճրագ, որ լուսաւորէ զայնո-*

սիկ, որք անկեալ շրջին ի խաւարի մահացու մեղաց զկնի մկրտութեան... եւ իբրեւ զթեթեւութիւն ի ծանր բեռանէ եւ ոչ նեղի ի խղճմտանաց, յայնժամ իմանայ, թէ գտաւ թողութիւն մեղացն:

5. *60ա-61բ* [Յաղագս աստիճանաց եկեղեցականաց] – *Որպէս ի բնական իրս են աստիճանք, ուր ստորնագոյն ի ձեռն վեհագունից կառավարին... ի մասն ժառանգութեան սրբոց առ ի զինուորիլ երկնաւոր թագաւորի ի ներքոյ դրոշակի խաչին եւ փշալի պսակի նորա:*

6. *61բ-2բ* Աղաչեմ զձեզ, ըստ արժանւոյն գնալ կոչման, յոր կոչեցարուք. եփես. Դ. [1] – *Այս կոչումն հայի առ տունն Աստուծոյ, որ այժմ յոյժ խոնարհեալ տեսանի... քանզի ոչ խորշեցայ ի պատմելոյ ձեզ զամենայն կամսն Աստուծոյ: Աղաչեմ զձեզ. եւլն:*

7. *62բ-3ա* Ագարակն եկեղեցւոյ եռապատիկ վարի եւ երիցս ճնձի եւ զարդարի երեսուն, վաթսուն եւ հարիւր պտղով – *Առաջինն՝ հերկեալ վարի ի ձեռն ամուսնացելոց... զի յերկինս ոչ արք կանայս առնեն եւ ոչ արք կանանց լինին:*

8. *63ա* Ասացին եբրայեցիք, թէ Աստուած պահէ իւրեանց զչորս բանալին եւ զփականս բնութեան... եւ լցուցանես զամենեսեան կենդանի օրհնութեամբ. Սաղմոս 144: 19:

9. *63ա* Ըստ վկայութեան Հեռոնիմոսի՝ Յովակիմ եւ Աննա ընդ որում ամուլ էին, ոչ ծնանէին, այլ ծնանէին զողորմածութիւն եւ զբարեպաշտութիւն, զի բաշխէին զմի մասն ընչից իւրեանց ի տաճարի Տեառն, զերկրորդ մասն՝ աղքատաց, եւ զերրորդն՝ պիտոյից իւրեանց: Ուրեմն՝ չունի՞ս որդի, աղօթեա՛, ողորմեա՛ եւն (այսչափ):

10. *63ա-դ* [Խրատ առ ծնօղս] – *Պարտաւորին ծնողք զզաւակն, որ մինչ մանուկն է, ի միջի բարեպաշտութեան վարժել... եւ ուղիղ ոչ կարասցեն դատել զտնանկն եւ այս ոչ միայն եղեւ ի Հին օրէնս, այլեւ ի Նորումս:*

11. *63դ-6ա* [Վասն երկոտասան առաքելոց] – *Առաքեալք են ծղխնիք երկոտասան, յորոց վերայ եդ Տէր զեկեղեցին եւ զերկիր շինեաց. Ի տակարաց ընտրեաց Աստուած զառաքեալս, որպէս հզօրն Սափսօն յաղթեաց... եւ մարտիրոսաց եւ առաքելոց ձայնիւ եւ արեամբ նկուն առնելոց է զաշխարհ:*

63դ ստ. լս-ում գրչից՝ «Ընթերցի՛ր զմիւս տետրն»:

12. *66աբ* [Յաղագս զոհաբերութեան] – *Ի նուիրման հնոյ տաճարին հարիւր հազար ոչխարք եւ քսան հազար զուարակք եղեն ողջակէզ... զի կեցցեն արդարութեան, որպէս հաւաստէ <է> Թոմային ի Հնդկաստան:*

13. *66բ* Ի նաճիր աշխատեն շինօղ աշտարակի յաղիւսոյ եւ ձիւթոյ մինչեւ յերկինս, մեք շինեսցուք զաշտարակն հաւատոյ ի կենդանի բարանց ընդդէմ ամենայն բռնութեան՝ հողմոյ անշարժ: Նոքա առդարապէս պատժեցան հպարտութեամբ, մեք եւս միութեան եւ սի[ր]ոյ եւլն (այսչափ):

14. *66բ-7բ* Կարէ՞ մարդն բանական լուսով ճանաչել, թէ գոյ Աստուած, զի զի՞նչ այլ ինչ գոյ ոչ ապաէն սանդուխ իմն, որով ելանեմք ի ծանօթութիւն Աստուծոյ եւ որա՞ն ստեղծուածի – *Այնքան են աստիճանք սանդխոյս, նովաւ ելանէր Օգոստինոս, մինչ, ասէ. Շրջէի աստ եւ անդ... անզգայ է, որ ո՛չ սիրէ, ո՛չ ճանաչէ զնա:*

15. *67բ-8ա* [Խրատ վասն ապաւինութեանն յԱստուած] – *Ընկեա՛ ի Տէր զհոգս քո եւ նա կերակրէ զքեզ... յուսա՛ ի նախախնամութիւն նորա, եւ յանձնեմք զքեզ բոլորովիմբ:*

16. *68ա-70ա* [Յաղագս Աստուծոյ] – *Կամի Աստուած անցուցանել զմեզ ի յաւիտենական կեանս, վասն որոյ նախատեսութեամբն ի մէջ աշխարհիս շինեաց զտուն իւր՝ զսուրբ եկեղեցի... զհարուած բարեկամի հարկանէ մեզ Աստուած ի խրատել, որպէս հայր զորդիս:*

17. *70աբ* [Յաղագս Սրբոյ Երորդութեանն] – *Ի Հին օրէնս խորհուրդն ամենասուրբ երրորդութեան ծանուցեալ բազում օրինակաւ: Նախ ծանուցանէ Դաւիթ... 14. երեք դրունք քաղաքին Աստուծոյ յամենայն կողմանց. Յայտ. ԻԱ. 13:*

18. *70բ-2բ* [Քարոզ. Բնաբան]. Ամենայն հոգիք են հարկաւորք, որ առաքին ի սպասաւորութիւն վասն այնորիկ, որ ժառանգելոց են զփրկութիւն. ասէ առաքեալն առ Եբրայեցիս: Եւ եսայի ԿԲ. 6. Ի վերայ պարսպաց fոց, Երուսաղէմ, պահապանս կացուցից զօրն ողջոյն եւ զգիշերն ողջոյն – *Աստուստ իմանի, զի հրեշտակք պահապան են մարդկանց, քաղաքաց, տաճարաց... եւ Նիկողայոս վեց ամիս յառաջ քան զմահն, լսէր զքաղցրանուագ երգս հրեշտակաց եւլն:*

19. *72բ-7բ* [Վասն առաքման մարդոյ] – *Յաւուր վեցերորդի ստեղծ Աստուած զմարդն... հուսկ յետոյ մարդն է աւար մահու եւ ժառանգ որդանց, այնպէս զի բազմիցս պարտի յիշել զբան Յօբայ. Հոգին իմ նուաղեսցի, աւուրք իմ համառօտեսցին, բայց միայն կայ եւ մնայ ինձ գերեզման:*

20. *77բ-9ա* [Վասն խոհեմոյ մարդեղութեան] – *Մեծ է խորհուրդ մարդեղութեան, եւ պղտաւէտ է յաճախ մտածումն... ահեակն է գալուստ նորա մարմնով, աջն՝ գալուստ նորա փառօք, անդ հոգին կարէ հանգչիլ եւ գտանել զմխիթարութիւն:*

21. *79ա-84բ* [Յաղագս ապականեալ բնութեան մարդոյ] – *Օրէնք բնական կամ բնութեան, որ գրեալ է ի սիրտս մարդոյ, չեղեւ բաւական առ ի փրկել զապականեալ բնութիւնն... զի բոլոր պատիւն որքան է ի կողմանէ գործոյ անարգողին եւ արհամարհեցելոյն մտանի, աստուստ մեղքն մահացօրէն եղեւ ընդդէմ Աստուծոյ:*

Ծնթ. Հաւանաբար տարբեր ձեղինակների՝ նոյն խնդրի վերաբերող գործերից առուած ծաղկաքաղ է:

22. *85ա-8ա* [Յաղագս անուան Յիսուսի] – *Այլաբանական անուն է Յիսուսի առ ի նշանակել զյատկութիւնն, որպէս հովիւ ոչխարաց, ճանապարհ, գառն, առիւծ, վէմն, իսկ անունս Յիսուս է յատուկ անուն նորա... եւ այս անուան խոնարհին թագաւորական գաւազանք, կայսերական խոյրք, սերօբէք եւ քերօբէք:*

23. *88ա-90ա* Ի տօնախմբութեան անուանն Յիսուսի. Իւղ թափեալ է անուն fո, վասն այսորիկ օրհոդք սիրեցին զձեզ – *Արդ, քննեսցուք զբանս այսորիկ ասացուածոց. նախ՝ զի Յիսուս անունն կոչի իւղ, զի իւղն է գերազանց... նախ կանգնեաց զքարն օծելով զնա, որ է օրինակ եկեղեցւոյ եւ ընտանիքն ժողովրդեանն:*

24. *90բ-2բ* Ի ծննդեանն Յիսուսի նշանաւ մեծամեծ երեւեցան – *Ով ոչ զարմանայ, զի մանուկ ծնանի Բանն եւ որ հեռին էր, մերձակայ երեւի... ուրեմն՝ օգտակար է մեզ, եղբա՛րք, այնքան սէրն, որքան մեզ եցոյց Տէրն փառաց, այնքան խոնարհութիւն, որքան ունէրն, այնքան քաղցրութիւն, զոր երեւեցոյց նա մեզ խոնարհութեամբ:*

25. *93ա-4բ* Յաղագս աւուր Ծննդեան Տեառն: [Բնաբան]. Ո՞վ տացէ ձեզ եղբօրորդին իմ դիել զստինս մօր իմոյ: Գտեալ զձեզ արտաքոյ համբուրեցից եւ ոչ անգոսնեսցես զիս: Երգ [երգոց] Ը., [1-2] – *Ո՛վ տացէ. Նա, որ էր Աստուած, Տէր ստեղծող, թագաւոր հրեշտակաց... ուրեմն՝ ո՛չ Հայր անարգէ զիս, որ եառ մեզ զՈրդին, ո՛չ Որդին, որ արժանաւորեցաւ լինիլ եղբայր, ո՛չ Հոգին Սուրբ, որ է հեղինակ խորհրդոյս եւ ո՛չ հրեշտակք, զի զբարձրացեալ բնութիւն մեր հիացեալ պաշտեն:*

26. *94բ-6ա* [Քարոզ]. Բնաբան. Քանզի երեւեցաւ շնորհն Աստուծոյ՝ Փրկիչ ամենայն մարդկան, որ խրատէ զմեզ, զի ուրացցում զամբարշտութիւն եւ զաշխարհական ցանկութիւն. Տիտոս Բ. 11 – *Ոչ ոք կարէ զարթուցանել զերախտագիտութիւն մեր... եւ ներշնչեա՛, լուսաւորեա՛, խրատեա՛ զմեզ, զի բարեպաշտութեամբ կեցեալ ակն կալցուք երանելի յուսոյն գալստեան փառաց քոց:*

27. *96ա-7ա* [Յաղագս ծննդեանն Քրիստոսի] – *Կամեցաւ Քրիստոս Մելքիսեթեկ մեր լինիլ՝ անհայր եւ անմայր, անհայր՝ յերկրի, անմայր՝ յերկինս... զի առանց ցաւոյ ծնաւ իբրեւ զշուշան, որպէս արեգակն ծագէ զճառագայթն, վասն որոյ կոչի արեւելք Քրիստոս, զի յաւիտեան ի Հօրէ ծնանի:*

28. *97ա-103ա* Յաղագս հինգ խոհրդոյ ցաւոց, թէ Քրիստոս չարչարեցաւ վասն մեր եւ խաչեցաւ եւ մեռաւ: Յայս հինգ խոհրդոց իբրեւ ի հինգ զմռենի ոստոց առնեմք զխունձ, զոր դնէ հաւատարիմ հոգին ի մէջ ստեանց իւրոց իմացականութեան եւ կամաց առ ի մտածել իմացականութեամբ զդառնագոյն ցաւս սիրելի փեսային իւրոյ եւ հետեւեցուցանել սիրոյ նորա զսէր կամաց իւրոց, զոր այնման չարչարանօք գնեաց փեսայն – *Ոչ առանց խորհրդոյ սկսի Քրիստոս զխորհուրդ չարչարանաց ի պարտիզէն... ի մարմնի զձաղանս յանդամս, զտարածումն ի ձեռան եւ յոտս զբեւեռս, վերջապէս ի գլխոյն մինչեւ ցոտս զանթուելի ցաւս եւ վէրս:*

29. *103ա-4ա* Բարձրացումն Քրիստոսի ի խաչ բազում օրինակօք ծանուցաւ – *Նախ, ի բարձրացմանէ օձին յանապատի, որպէս բարձրացոյց Մովսէս զօձն յանապատի... ուրեմն ճշմարիտ է վասն իւրաքանչիւր մարդոյ, զոր ասէ առաքեալն վասն իւր, որ եառ զանձն իւր եւ մատնեաց վասն իմ:*

30. *104ա-5բ* [Յաղագս մահուան եւ թաղման Քրիստոսի] – *Յօժարութեամբ մեռաւ Քրիստոս, յորժամ կամեցաւ, ըստ այնմ արեգակն ծանեաւ զժամ մտանելոյ իւրոյ... սակայն մարմին Քրիստոսի մնաց անապական, եւ ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն:*

31. *105բ-7ա* Բազում են աւուրք հանդիսաւորք եւ ուրախութեան, բայց խառնեալ է ընդ նոսա տրտմութիւն իմն... *ի սիրոս ձեր ի վերայ հիման Քրիստոսի, զի առաւելցի շինումն մինչեւ յօրն Յիսուսի Քրիստոսի, յորում հաղորդ լինելոց էք յարութեան եւ փառաց նորա:*

32. *107բ-11բ* [Յաղագս երեւմանց Քրիստոսի յետ յարութեանն]. Յաղագս առաջին երեւման – *Յետ յարութեանն Քրիստոս նախ երեւեցաւ մօրն, եւ կարող էր ասել... Տասներորդ՝ երեւեցաւ Յակոբայ, ըստ առաքելոյն Պ̲ողոսի: Մեռասա///:*

Ծնթ. Վջ՝ թափուած, ունի 7 մաս-«երեւում», վերջինում կարգով թուարկուած են նաեւ 8-10րդ «երեւումներ»:

33. *112ա-4ա* Քարոզ յութերորդ կիւրակէի խաչվերացին. Բնաբան. Օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ օրհնեաց զմեզ ամենայն հոգեւոր օրհնութեամբ յերկնաւորս ի Քրիստոս. Եփես. Ա. 3: Յառաջաբան – *Առաքելական ուսմանց առաջին կանոն է. սկիզբն ամենայն բանից՝ զօրհնութիւն առ Աստուած... որպէս ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զլինելն աշխարհի, լինել մեզ սուրբս եւ անարատս առաջի նորա սիրով:*

Ծնթ. Ունի՝ Ա-Բ. մասեր եւ Վերջաբանութիւն: 112ա խորագրի մօտ՝ արտ. լս-ում, գրչից՝ «եթէ կամիս, արա՛: Յովակիմայ եւ Աննայի զիւտյն օրն ալ այս կը կարթցվի», 114ա՝ վերջին 6 տողի համար ստ. լս-ում՝ «Այս կտորը մէջը պիտի մտնայ»:

34. *114բ-6ա* Յաւետումն սուրբ Կուսին. Բնաբան. Եւ Բանն մարմին եղեւ եւ բնակեցաւ ի մեզ. Յովհաննու [Ա. 14], սկսուած – *Դիւանագպիրն Հնոյ օրինաց Մովսէս նախամարգարէն զգիրս Ծննդոց այսպէս սկսանի... ոք իշխեսցէ ուզել զայս մարմին, մինչ չեւ է երկրպագեալ նմին. Ոսկեբերան:*

35. *116բ-21ա* Բնաբան. Հուր եկի արկանել յերկիր

եւ զի՞նչ կամիմ, թէ արդէն իսկ բորբոքիւր. Ղուկ. [ԺԲ. 49], սկսուած – *Հրոյ օրինակաւ ցուցաւ Աստուած ի հնումն Մովսէսի ի վառիլ մորենւոջն... եւ ընդունիմք զշնորհս ժամանելոյ ի փառս երկնից արքայութեան (ունի Ա-Գ. մաս)։*

– *121աբ* Յորդորակ – *եւ արդ, հուրն կենդանի եկն յերկիր, եւ արկ զհուր զիւր աստուածային սիրոյ... ի քաղցր գմայլողութիւն աստուածայնոց եւ Աստուծոյ, եւ յեառոյ հոգւով եւ մարմնով։*

36. *121բ-3բ* [Անտոն Վիէբա. ձեռ. 2874, 267ա-72բ], Յաւուր Ծաղկազարդի. Կերպն արբացուցանելոյ զսուրբ շաբաթն [ի բանն]. Եւ այլ հատանէին զոստս ի ծառոյ եւ տարածանէին ի ճանապարհին. Մտթ. 21, 8 – *Ազանչելի են աստուածային տրամադրութիւնք... եւ ոստս ի ծառոց հատանէին։ Էին ոստք արմա/// (վջ)։*

Ծնթ. Ձեռ-ս կազմուած է 5 պրակ-տետրից, սրա շար-ն է ՄՄ Հմր 8832 ձեռ-ը. երկուսն էլ նոյն բնոյթի՝ տետրակներից կազմուած ձեռագրեր են, գրերը նման են իրար, երեւի նոյն գրչի գործն են։ Այս՝ 3553 ձեռ-ի 111րդ թերթի բնագրի շար-ը՝ տե՛ս ձեռ. 8832, 1աբ։

Ձեռ-ս ծաղկամաղուած հարոզների ժողովածոյ է, յաճախ միաւորները չխորագրուած։ Տրոհել ենք ըստ բովանդակութեան, սակայն նոյն խորագրին կարող են վերաբերել նոյն թեմայով տարբեր հեղինակների գործերից ծաղկամաղուած նիւթեր, որոնք զատորոշել հնարաւոր չէ։


ՆՇՈՒՄ՝ *1ա «1030/3553», «ԺԹ. Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»։*

3554
ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ, ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ

ՋԷՅԹՈՒՆ Ռ–ՃԺԹ. – 1670

ԳՐԻՉ՝ Յովհաննէս։

ԹԵՐԹ՝ 361. չգրուած՝ 3բ, 361ա։ ՊՐԱԿ՝ Ա-ԻԴ×16 (Ա 11, Բ 12, Գ, ԺԸ, ԻԲ, ԻԳ 14, ԺԷ, ԻԱ 15, ԻԴ 11)+1։ ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ մաճիկով պսակուած վեցաթեւ աստղ, տակը՝ թագ, գծային խաչ, որի 2 կողմերում լատ. «PA», ստ. թեւն աւարտւում է երեքնուկով, երեքնուկով պսակուած գծային խաչ, խաչապսակ բոլորակ, մէջը նոյնպէս խաչ, տակը՝ «IC» (թ. 50), երեքնուկով պսակուած գծային խաչ՝ նախ կողմում լատ. «A», աջ կողմում՝ «G» (թ. 96). այլ թուղթ՝ թ. 361։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20,5×15։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (14,5×10՝ թ. 1-165, 15×10՝ թ. 166-359)։ ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 66ա)։ ՏՈՂ՝ 29 (թ. 1-165), 35 (թ. 166-359ա)։



Նմուշ 66ա

ԿԱՋՄ՝ Ա. փեղկ՝ մուգ շագանակագոյն մոմլաթ, մէջբը՝ սեւ կաշի, Բ. փեղկ՝ մուգ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ 2 կապիչով. Ա. միջուկը՝ ստուարաթուղթ, Բ. միջուկը՝ տախտակ. Ա. աստառը՝ դեղնաւուն թուղթ, Բ. աստառը՝ սպիտակ ներմով շագանակագոյն եզրագծումներով կարմիր եւ կանաչ ծաղկանկար կտաւ. լուսանցակողերը՝ վարդագոյն ցայտկէն։ ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա (սկ.)՝ դեղնաւուն չգրուած թուղթ, մասն կազմաստառի։

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Կիսախոռան՝ 4ա։ Ճակատազարդ՝ 36ա, 75բ, 102ա, 140բ, 168ա, 218ա, 233բ, 260բ, 320բ։ Լուսանցազարդ՝ բուսական, բուսաթռչնային, տաճար՝ 281բ, 291բ, երիվով բաղաբի յատակագիծը՝ 217բ։ Ձարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր։ Գոյներ՝ կարմիր, կանաչ, վարդագոյն։

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Աւետարան Ղուկասու։ ժ. դ.։ Բ-Գ+Դ-Ե՝ ստացուած մէկ թերթի ընդերկայնակի ծալումով, ընդլայնակի կիսումով (բնագիրը՝ կտրած) եւ արտ. եզրահատումով։ Մագաղաթ 20,2×14,5. երկսիւն (Բ-Գ՝ 12×9,5, Դ-Ե՝ 14,7×9,5). բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝ Դբ). տող՝ 9՝ Բ-Գ, 11՝ Դ-Ե (սկզբնական վիճակը՝ 40,9×31. երկսիւն (27,2×20,5). տող՝ 21)։ Լուսանցազարդ՝ բուսական՝ Գա, Դբ. գոյներ՝ կարմիր, շագանակագոյն։ Կարդալ. Եբ, Դբ, Դա, Բա, Դբ, Բբ, Եա, Գա՝ «/// փրկութեան մեզ ի տան Դաւթի՝ ծառայի իւրոյ... եւ հովիւ եղիր ի տեղւ///» (Ա. 69 – Բ. 8)։



Նմուշ Դբ

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած 1950ական թթ., Ա. փեղկը, մէջբը, Ա. աստառը եւ պհպ. Ա.ն՝ նորոգման ժամանակի. Ա. աստառը պհպ. Ա.ից անջատ, որով եւ կազմը հիմիից անջատ, Բ. փեղկը մաշուած, տեղ-տեղ պատռուած, թափուած մասերը լրացուած նորոգման մոմլաթով, կապիչները պատռուած, ճաճճած, մասամբ թափուած. պտոկ-պհպ-ների եզրերը սեւացած, թերթերը՝ դեղնած, խումացած, կեղտաբծերով, պտոկ-պհպ. Բ.ի վեր. ստոր. անկիւնը՝ թափուած. թերթեզերբը մաշուած, լուսանցակողերի վարդագոյնը մասամբ

գունափոխ, թափուած. թերթերի վեր. գրեթէ կէսը, մեծ մասամբ նաեւ հիմմերը՝ խոնաւացած, դեղնած, հիմմում մասամբ ամրացած փոշի, ստ. արտ. անկիւններին՝ մատնահետքեր, զանազան բծեր, թանաքի (18ա, 53ա, 73ա եւլն) հետքեր, դեղին կեղտաբծեր, լս-զարդերից արտատպուած ներկի հետքեր (101բ, 141ա, 217բ եւլն), որոշ թերթեր (թ. 273-90) կամ եզրեր եւ ստ. հիմմեր (թ. 272, 290-359 եւլն) ձէթից դեղնած. որոշ թերթեր վեր. եւ ստ. հիմմից մասամբ անջատ (թ. 11, 118, 352, 359-60), թ. 292-305 կարը թուլացած, թ. 352-60՝ վեր. հիմմից հեռացած. թ. 359՝ 2րդ սեաւ ստ. հատուածից 7,6×7,8, թ. 360՝ ստ. եզրից 5×10,5 չափսի կտրած-հանած. թ. 361՝ 12,2×10,2 չափսի հիմմից անջատ թուղթ է՝ նախկինում էջանշան-թերթիկ, որի բ. երեսին ընթերցողական գրառումներ են. կան հետգ-ի ձեռքով՝ 12 թերթ հաշուելով արուած Բ-ԼԱ պրականիշեր. ընդմէջ թ. 17-8ի 4, թ. 30-1ի, 267-8ի 2ական, թ. 245-6ի, 318-9ի 1ական թ.՝ ընկած. թերթերի դասաւորութիւնը՝ խառն, կարդալ՝ թ. 1-308, 320, 309-19, 321-59ա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա-359ա [Գրիգորի Տաթեւացւոյ Գիրք հարցմանց] *Տե՛ս ձեռ. 921, 3ա-367ա: Այս ինչ է.../1ա: Յոչբն/1ա-2բ: 1. Յանկ... /2բ-3ա: ա/4ա-14ա (Հարցմունք՝ չիք): բ/14ա-5բ: գ/15բ-33բ (17բ «... վասն որոյն ծնեալ բանն այն՝ է նոյն էութիւն ///» շար., 18ա «///բաւոնի եւ եղիա եւ եղիսէոս գմեռեալս յարուցին...», 30բ «... ահա անօգուտ է եւ աւելորդ լուացումն ձեր ///», 31ա «/// եւ ոչ զնորս քրիստոնէից: Զոր տեսցուք նախ զանազանութիւն կերակրոց...»): դ/33բ-5ա: 2. Յանկ/35աբ: Նախադրութիւն/36ա-8բ: ե/39ա-47բ: զ/47բ-55բ: է/55բ-74բ: 3. Յանկ/75ա: ը/75բ-89բ: թ/89բ-101ա: 4. Յանկ/101բ-2ա: ժ/102ա-14ա: ժա/114ա-8բ: ժբ/118բ-27ա: ժգ/127ա-37ա (129ա Հոդմնացոյց բոլորակ): ժդ/137ա-40ա: 5. Յանկ/140աբ: ժե/140բ-52ա: ժզ/152ա-61բ: ժէ/161բ-7ա: 6. Յանկ/167ա-8ա: ժը/168ա-74բ (խորագիրը եւ սկզբնատողը՝ եռեւառաջ): ժթ/174բ-84ա (խորագիրը՝ տարբեր՝ «Վասն Աբրահամու եւ Սառայի»): ի/184ա-93բ: իա/193բ-203ա: իբ/203ա-9բ (204ա խորան վկայութեան եւ բնակավայր ԺԲ. ցեղից Իսրայէլի): իգ/209բ-16բ: 7. Յանկ/217ա: իդ/218ա-20ա: իե/220ա-2ա: իզ/222ա-4ա: իէ/224ա-7ա: իը/227ա-9բ: իթ/229բ-32բ: 8. Յանկ/232բ-3ա: լ/233ա-59բ (245բ «...Զորրորդ. Մկրտութիւնն Յովհաննու, որ մկրտէր յապաշխարութիւն, զի ///» շար., 246ա «/// զՏէրն իւրեանց մերկացեալ պատառեցին եւ քօղարկին զխաւարն...»): 9. Յանկ/260աբ: լա/260բ-9բ (267բ «...երրորդ. Յետ համբարձմանն, յորժամ էջ Հոգին Սուրբ, արար գնոսա կաթողիկոսունս առհասարակ, եւ յայտ է յայսմանէ, որ ///» շար., 268ա «/// ճշմարտի բազում ստոց հետեւել...»): լբ/269բ-75բ: լգ/275բ-81բ: լդ/281բ-91բ: լե/291բ-308բ, 320ա: 10. Յանկ/320աբ: լզ/320բ, 309ա-17բ: լէ/317բ-9բ, 321ա-5բ (խորագիրը՝ չիք, 318բ «...եւ այն եկեղեցիք անգրանկաց կատարելոց յերկրիս, որպէս ասէ Պօղոս եւ ի ///» շար., 319ա «/// աներեւոյթ են մեղօք եւ ոչ ունին զպայծառութիւն բարեաց...»): լը/325բ-7ա: լթ/327ա-35ա: խ/335ա-51բ: խա/352բ-8բ: Յիշատակարան գրոցս/351բ-2բ: Յիշատակարան Հարցմանցն Գէորգեայ/358բ-9ա:*

Ունի՝

217բ երիքովի յատակագիծը, ապա՝ «[Ոտանաւոր] *— Այս է քաղաքն երիքովի, / որ ամրագոյն պարիսպ ունի... փառք ի բարձունս փառաւորեսցի»:*

Տե՛ս Գրիգոր Տաթեւացի, Գիրք հարցմանց, Երեւան, 1993: Ծնթ. Լս-ներում կան գրչի եւ հետ-ի նոտրգրով բնագրային լրացումներ (55ա, 72ա, 103բ, 139ա եւլն):

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, անաւարտ նոտրգիր

1. *պտուկ-պհպ. Բա* (ժէ. դ.) [Լուսնային օրացոյցի ամսանուններ, հայատառ թուրեռէն*] *— Ըռա[հ]ման ու զիլ (՞) /// Զիլքադե (Զիլքադե) Շապան (Շաբան) Մուհառեմ (Մուհարրեմ) իրպ էպ (՞) /// Սէֆր [Սաֆար] Բապթ էլ էվէլ (Ռեբի՛ուլ էվվել) Բապի ախըր (Ռեբի՛ուլ ախըր) Մէվլի Աշրուայի (Թրգմն.՝ Աշուրայի տօնը): Այս են [տա]ճկաց [ամ]սանուան[ք]:*

*Ծնթ. Ընթերցումը եւ բացատրութիւնը՝ Անի Ժ. Աւետիսեանի:

2. *103ա* (ԺԸ. դ., ստ. լս.) [Ոտանաւոր] *— Գոռամ, կոչեմ յոժ լալագին, / անգեալ մահիճն իմ ցաւագին, / Աստուծոյ աղաղակեմ կողագին (այսչափ):*

3. 182ա (այլ ձեռ) [Յանկ ձայնից եւ կողմանց ըստ աւուրց] *— Շաբաթ ԲՁ., Կիրակիյ՝ ԲԿ.... Երկուշապաթ ԳԿ., Երեքշապաթ ԴՁ.:*

4. *359ա* (այլ ձեռ) *Յակոբ նայապետի որդիք, երբ որ մտան յԵգիպտոս, Հէ. (77) էին, երբ որ ելան՝ ՁՃ. (600) ու ԴՃԼ. (430) տարի [ի]մացի (այսչափ):*

5. *359բ-60ա* [Պատճէն երդմնեցուցութեան] *— <ե> երդմնեցուցանեմ զքեզ ի չորս գլուխ Աւետարան, ի Մաթթոս, ի Մարկոս, Խուկան եւ Օհաննէսն... եւ ի չիք դառնաս Բա<ւ>նիւն Աստուծոյ անուա<ն>մբ Տեառն մեր<յ>ոյ Յիսուսիս Քրիստոսի, յաւիտեանս. ամէն:*

6. *360ա* [Ողբ առ մայրն. հմմտ. ձեռ. 5477, 15աբ] *— Մ՛ւր ես, մա՛յր իմ, քաղցր եւ անուշ, նազելի, / զկուսածին որդիա՛ց ե՛կ տե[ս] ցաւալի... զիս կե[ն]դանի գալ տեսանել մի՛ համարեր:*

7. *360բ* (այլ ձեռ) [Տաղ] *— Անապակ[ա]ն ծնանիլ քո ի կոյս յարգանդէ / ազատեաց ///ենէն Ադամ ի խաւար բան[տէն]: Ողորմեա՛, Տէ՛ր... այժմ կատարեցաւ ի խաւար բանտէն: Մնընդօք փրկեցաւ: Ողոմե:*

8. *360բ* (այլ ձեռ) [Տաղ] *— Յորժամ վարդըն կանաչանայ, / բլբուլ վարդովն ուրախանայ / Ձայն արքակեալ գոչէ՝ վա՛րդ, վա՛րդ / ես քո<շ> սիրուն չեմ դաւթարի (այսչափ):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1ա Հոգի՛ Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, զսկսեալս իմ դու կատարեա՛ եւ լե՛ր ինձ օգնական յայսմ մատեան:

3ա Եւ զիս՝ զանարժանս, հող ոտից քոց, յիշեսցես՝ զՅովաննէս մեղաւորս. եւ Աստուած զքեզ յիշէ. ամէն: Հայր մեր, որ:

69ա Յիշեա՛ զգծագրողս:

216բ Թվին ՌՃԺԹ. (1670), յերկրի Գեւմանիկոյ, մօտ ի Կիւլիկէ, ի գեղաքաղաքս Ջեթուն, գրեցաւ ձեռամբ Յովաննէս հողիկ ոչընչի: Յիշեցէ՛ք ի Քրիստոս, ո՛վ հարք իմ բարիք եւ եղբարք:

233ա Որ իջեր ի Յորդանան / վասն էակցիդ աղաւնանման / այլ եւ հրով ի վերնատան / առաքելոցն Բժ.ան: / Հայցեմ ի քէն աղերսական, / տրուպ Յովաննէս՝ ոգի տարտամ, / զի դու լիցիս ինձ օգնական / յաւարտ հասից յայսմ մատեան:

359ա Փա՛ռք անբաժանելի ամենասուրբ երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Շնորհիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յանգ ելեալ կատարեցաւ գիրքս այս, որ կոչի Հարցմունք, զոր պարզեալ եւ մեկնեալ է մեծ հռետորն եւ իմաստունն Գրիգոր Տաթեւացին, որ եւ երկրորդ լուսաւորիչ անուանեցաւ հայոց ազգիս, եւ գծագրեցաւ սա ի յերկիրս Գեւմանիկոյս, ի գեղաքաղաքս Ջեթուն, ընդ հովանեաւ եւ առ դրան Սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչին եւ սրբուհւոյ ամէնօրհնեալ Սուրբ Աստուածածնին՝ լուսաճեմ եւ հրեշտակապար մենաստանին եւ այլ Ը. եկեղեցեացս, որ աստ կան յօգնականութիւն քրիստոնէիցս, ի կաթողիկոսութեան Կիւլիկեցւոց տէր Խաչատուրին, եւ յառաջնորդութեան մեր վանացս՝ տէր Մովսէս աստուածաբան վարդապետի, եւ այլ միաբան կարգաւորացս՝ եղբօրս մերոյ Ստեփաննոս վարդապետի եւ միաբան կրօնաւորաց քահանայից, եւ ուղղափառ հարանց եւ քրիստոնէից: Գրեցաւ սա ի թվին հայոց ՌՃԺԹ. (1670), ձեռամբ ամենավերջ հողիկ եւ կոխան ամենայնի Յովաննէս անարժանի՝ ի խնդրոյ աստուածասէր (2 տող բաց՝ չգրած, իսկ թերթի ստ. մասը՝ կտրած, հանած):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *89բ (ստացողի, ԺԷ. դ., անարուեստ նոտրգիր, Ը. գլխի վջ-ում գրչի չգրած մասում) ի վայելումն Կոստանդինուպօլսեցւոյ Կիրակոս վարդապետին, զոր Տէր Աստուած բարով վայելել տացէ. ամէն:*

352ա (հեղ.ի՝ 351բ-2բ յիշատակարանի ազատ մնացած մասում) ես՝ Կիրակոս վարդապետս Ըստամպօլսցի, ստացա զայս գիրքս յաղագս անձին իմոյ, որ կոչի Հարցմանց եւ է ժողովեալ ի սրբոց վարդապետաց բանից, յոյժ պիտանի եւ յօգտակար բանասիրաց եւ հետեւողաց գրոց սրբոց՝ արարեալ ի մեծ հռետորէն եւ եռամեծէն ի բանիբուն վարդապետէ Գրիգորի Տաթեւացո: Ապա մինչ կենդանի եմ, ընթեռնում եւ քարոզեմ, յետ ստացման իմոյ՝ յորո ձեռի հանդիպի, միով Հայր մեղայիւ յիշեցէ՛ք զանարժանս, եւ դուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ. ամէն:

2. *2ա (1714 թ., շղագիր) ես՝ անարժան Յովաննէս եմ, կեդանութեան ժամանակ իմ յօժար կամով գայս Տաւեվանցի տվեցի տէր Մխիթար քահանային՝ ընձի համար յիշատակ, թվին հազար եօթ հարիւր տասնչորսին, Յունվարի ԺԱ. /// (2 բառ անընթեռնելի) գին 11 մի///*

3. *պհպ. Աբ (ԺՀ. դ., նոտրգիր) ես՝ Հօյնէս, անարժան, մեղայոր եւ մեղապարտ, այսպէս գրեցի, լաւ ոչ եկաւ:*

պհպ. Դա (այլ թանաքով) ես անարժան <ես անարժան> Յոհաննէս, այս գիրքս գնեցի ե. դուռուշ, մէկ գրթուց (՞) մի, որ հիմար էր, ոչ գիտէր զայս գրքի գին: Ահայ, որ առայ, հիմացայ, որ շատ բան կա՞ սորայ մէջն:

360ա ես անարժան տիրացու Հօվաննէս՝ ծառայ Աստուծոյ, եւ որ կարդայ, զողորմ[ի] ասացէ՛ք, Աստուած ձեզ (չշարունակած):

4. *360բ (ԺՀ. դ., նոտրգիր) <Գիրս հասցէ ի ձեռն տիրացու> Հասցէ գիրս ի ձեռն տիրացու Մէսրոպին, յորժամ այս գիրս այսպէս սիրելի քեզ հասնի, դուն էլ եւ իմաստուն գիր մի (չշարունակած):*

5. *Գբ (1844 թ., շղագրանման նոտրգիր) Թվին ՌՄՂԳ. (1844) Աստուած ա/// տըղան մեզ շնորհեց ա///, վայելում տացէ. ամ[էն]:*

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *Բբ, 3բ, 167բ սեւ թանաքով բոլորակ՝ անընթեռնելի, 217ա՝ մանուշակագոյն թանաքով բոլորակ, եզերքում՝* «Потомственный Почетный Гражданинъ Ахалцихскій», տակը՝ «Аршакъ Ивановичъ АКОПДЖАНЯНЦЪ», *ներքեւում՝ ձեռքսեղմման պատկեր, տակը՝ լատինատառ* «(ARNON)»:

ՆՇՈՒՄ՝ *1ա սեւով՝ «1031/3554», «ՌՃԺԹ – 1670 մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»:*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *պհպ. Բա՝ «///սօր օծումն երեսն իղե ծունր ///», պհպ. Բբ՝ «ես անոր», «սա-զ», «ես անարժան եւ մեղապարտ Հօյ», 12ա՝ «ա» (երիցս, արտատպուած նախորդ էջին), 24բ՝ «աբգդզզէզզզռռ», 71բ՝ «բգդ», «գ», 74բ՝ «ա», 84բ՝ «ակբգդ», 102բ՝ «զզ», «ե-խ», 119բ՝ մատիտով «Թագաւոր Թագաւոր փառաց», 120ա՝ մատիտով խզբզոց, 178բ՝ «Ա Ա», 230բ՝ «պ», «կ», «ե», «պ», «Տ», 358բ՝ «յակո», 360բ՝ «աա», «Դու մորենի անկեզելի ի հրոյ զիս տոչորաց ահա վիշտ ծաղանաց եւ ցա[ւ]ոց», «դու մորենի անեաս», «ա-ձ», 361բ՝ իրար տակ ընթերցողական գրառումներ՝ «Պէտրոս, Անդրէաս, Յակոբոս, Յուլիանէս, Փիլիպոս, Բարթողիմոս, Թովմաս, Յակոբոս Ալփեան, Ղեբէոս, որ եւ Թադէոս, Յուդայ Իսկարիոտացի: Մանրրուսմունք, Քրիստոսայպատում: Եբրայերէն, դաղմատերէն, այսինք՝ [լ]ատիներէն եւ յունարէն», պհպ. Դա՝ «Փառք քեզ Թագաւոր, երբ կամիս*

երբ գաս դատաստան ///», «քքաչնա», Դբ՝ «ճ» (չորիցս), «մ», «ննշշշ», «զքեզ յայր ցաա», «զ» (5 անգամ), եբ՝ «բազում են», «օվ»։


ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *233բ՝ թռչուն (8 անգամ), 360բ՝ թռչուն, Դբ՝ թռչուն, եա՝ թռչուն (7 անգամ), յուշկապարիկ, մարդու դէմք (երկիցս), բուսական նախշ։*

3555
ԳԱՆՁԱՐԱՆ

ՊՁ. – 1431

ՍՏԱՅՈՂ՝ Մանուէլ աբեղ, տէր Տիրապագ (եղբարբ)։

ԹԵՐԹ՝ 285+1 (կրկն.՝ թ. 8)։ ՊՐԱԿ՝ Ա.-ԻԴ×12 (ԻԴ 10)։ ՆԻՒԹ՝ թուղթ։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18,5×14։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (13,5×10). որոշ էջերի վեր. տողերի վեր. ելուստներ՝ գրչախաղերով։ ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 234ա)։ ՏՈՂ՝ 20. գծումներ՝ ճնշումով։ ԿԱՋՄ՝ դարչնագոյն դրոշմազարդ կաշի. միջուկը՝ տախտակ. աստառը՝ կարմիր ճէնճով սպիտակ բոլորակներով կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր։



Նմուշ 234ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Գանձասա՞ց՝ 5բ։ Կիսախոռան՝ 6ա։ Լուսանցազարդ՝ մարդադէմ-կենդանական եւ հանգուցային՝ 130բ, բուսական։ Զարդագիր՝ թոչնագիր, հանգուցագիր, մարդադէմ՝ 6ա։ Գոյներ՝ կարմիր, դեղին, սեւ։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մասամբ կեղտոտուած, մէջքի վեր. եւ ստ. եզերքը՝ թափուած, դոնակը, յական կապիչներն ու գամերը՝ ընկած, Ա. փեղկին սուր գործիքի հետեր, Բ. փեղկին՝ 1 այրուածքի եւ ցեցի անցքեր. կան ժէ. դ. նորոգման կարկատաններ (35ա, 46ա եւն). լուսանցակողերի կարմիրը՝ մասամբ գունաթափ. թերթեզերքը՝ մաշուած, մեծ մասամբ մաներ պատռուածքներով. թերթերը մեծ մասամբ գործածութեան հետեւանքով խունացած, կեղտոտուած, վրաներ զանազան բծեր, դեղին (թ. 12-3, 231 եւն) եւ թանաքի հետեր, ստ. արտ. անկիւններում՝ մատնահետեր, հիմերը՝ ամրացած փղոյց սեւացած, թերթելու հետեւանքով ստ. արտ. եւ ներքն եզրերը՝ մասամբ բամբակացած. 177բ-8ա՝ նախկին կպումը կոպիտ անջատելու հետեւանքով գրադաշտը վնասուած, որոշ տեղերում կարմիր թանաքը լղոզուած կամ թափուած, գիրն անընթեռնելի կամ մասամբ ընթեռնելի (215ա, 239բ, 240ա, 279ա եւն). թ. 276-7՝ հիմիից անջատ. թ. 275-85 ստ. արտ. անկիւններում՝ ցեցի անցքեր։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

– *2ա-5ա* Ցանկ Գանձագրոցս։ Յառաջաբանութիւն գրոցս, որ ցուցանէ զիւրաքանչիւր տաւնի զգանձ եւ զտաղ, զոր ի շնորհաց Սուրբ Հոգւոյն երգեցին ոմանք <ոմանք> ըստ ժամանակս ժամանակս՝ ի պայծառութիւն սուրբ եկեղեցոյ եւ ի փառս Աստուծոյ – *Ա. Յովակիմայ եւ Աննայի. Գանձ ի Գրիգորէ... ՁԳ. երգ արձակման առաւաւտին։*

1. *6ա-8բ* Ա. (խորագիրը՝ հետգ-ի ձեռով) Յովակիմայ եւ Աննայի («ԳՐԻԳՈՐԻ Է») – *Գոյին անեղի, անճառ անհասի... ա. 8բգ Տաղ ի տէր Գրիգորէ Անաւարզեցւոյ – Ի նըւիրելըն հրճուէին... բ. 8գգ Փոխ է – Այսաւր լըրիւ երկիր հընչէ... գ. 8գ-9ա* Յորդորակ նորին ի նոյն – *Կանանց անէծքըն լուծանի մահն...*

2. *9ա-12ա* Բ. (խորագիրը՝ հետգ-ի ձեռով) Ա-ւետ[ե]աց Աստուածածնին («ԽԱՁԱՏՈՒՐ») – *Խընդութեան ձայն, բարբառ աւետեաց... ա. 12ա-3ա* Մեղեդի անոյշ ի Պլզոյ Յոհաննու եզընկեցւոյ («ՅՈՀ») – *Յանեղական լուսոյն անժամանակեայ լոյսն... բ. 13ա-4բ* Յորդորակդ նորին ի նոյն Աստուածածնին *(«ԳՈՎԵՍՏ Ի ՍՈՒՐԲ ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ Է»)* – *Գովեստ բերկրանաց հրճուողական հընչմամբ...*

3. *14բ-9ա* Գ. Գանձ ճրագալուցի աստուածայինն [Յա]յտնութեան («ՏԷՐ ՄԽԻԹԱՐԱ») – *Տարփումն ըղձական, տոչոր անձկական... ա. 19ա* Մեղեդի Ծնընդեանն – *Այսաւր աւետեաց Գաբրիէլ... բ. 19աբ Տաղ ի տէր Ներսիսէ պիտանի («ՆԵՐՍԻՍԻ Է ԱՅՍ ԵՐԳՍ»)* – *Նոր ծաղիկ բըղխէ այսաւր... գ. 19բ-20բ* Յորդորակ նորին ի նոյն *(«Ա-Ք»)* – *Այսաւր երեւի անհասն...*

4. *20բ-3ա* Դ. Գանձ Յայտնութեան Տեառն Աստուծոյ՝ ի Մկրտչէ («ՄԿՐՏԻՉ») – *Մաքուր եւ անբիծ սուրբ Աստուածածին... ա. 23ա-4ա Տաղ ի Ներսիսէ կաթողիկոսէ ան[ո]շ («ՏՂԻ ՆԵՐՍԵՍԻ Ե ՍՍ»)* – *Տէր փառաց անճառ ծընեալ... բ. 24աբ* Յորդորակ նորին ի նոյն *(«ԵՐԳ ՆԵՐՍԻՍԻ ԱՅՍ Է»)* – *Երգ նոր աւետեաց բարբառ...*

5. *24բ-6ա* Ե. Քառոզ մկրտութեան՝ Յոհ[աննու] Ծոր[ծորեցւոյ] («ՅՈՀԱՆՆԻՍԻ ԵՐԿ») – *Յամենայն ժամ աւրհնեմք զաւրհն[եա]լ Փրկիչդ էմանուէլ... ա. 26ա-7ա Տաղ ի Սրիկ Կոստանդէ – Քրիստո՛ս Բանըդ Հաւր, ծնունդ անժամանակ... բ. 27ա (խորագիրը՝ արտք. լս-ում)՝ Փ[ոխ] – Մվ զարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ...*

6. *27ա-30ա* Զ. Այլ գանձ՝ խաչատրոյ ասացեալ («ԽԱՁԱՏՈՒՐ») – *Խորան փառաց Աստուծոյ Բանին... ա. 30աբ* Մեղեդի անոյշ՝ ի տէր Ներսիսէ ասացեալ *(«ՆԵՐ-*

ՍԵՄԻ ԵՐԳ») – Նոր եդեմ բանաւոր տընկոյն... բ. 30բ-1ա Յոհդորակ մեծին Թորոսի *(«Ի ՄԵԾԻՆ ԹՈՐՈՍԻ ե») – Ի-մանալի սէրոբէ Բանին... գ. 31աբ է.* Մեղեդի անոյշ ի Սրիկ Կոստանդէ *– Կոյս անապական եւ անխախտ ծընողութիւն... դ. 31բ-2բ [Փոխ] – Հըրճուիմք այսաւր մեք հոգէպէս...*

ե. *32բ-3բ* Ը. Մեղեդի՝ ի Գրիգորէ Նարեկացոյ *– Աչքըն ծով ի ծով ծիծաղախիտ...*

զ. *33բ-4ա* Թ. Յոհդորակ ընդին ի նոյն, անուշ է *– Սեաւ եմ գեղեցիկ... է. 34աբ Տաղ ի Սրիկ Կոստանդէ – Աստուածածի՛ն կոյս երանեալ... ը. 34բ-5ա* Յոհդորակ պիտանի եւ անոյշ *(«Ա-ժ») – Աստուածածի՛ն մայր լուսոյ...*

թ. *35ա-6ա* Ժ. Տաղ անուշ՝ ի Սրիկ Կոստանդէ *– Կայր կոյսն ի յայրին...*

ժ. *36ա-8ա* ԺԱ. Յովհաննու Պլզոյ ասացեալ է *(«Ա-Ք») – Առաջնաճաշակ պըտղոյն մահուան...*

ժա. *38ա-9ա* ԺԲ. Տաղ թլփատութեան՝ ի Սրիկ Կոստանդէ, անոյշ *– Անըսկիզբն Բանըդ Հաւր... ժբ. 39աբ* Յոհդորակ ի տէր Ներսիսէ կաթողիկոսէ *– Ստեղծաւղ մանկանց մանուկ ցուցաւ...*

ժգ. *39բ* ԺԳ. Մեղեդի Ծընընդեան, անուշ *(«Պ[ԱՐԹԵԻ]») – Պարագրի անպարագրելի Բանն ի մարմնի... ժդ. 39բ-40բ Տաղ ի Ներսիսէ – Այսաւր ի սկըզբան Բանն, որ ընդ Հաւր... ժե. 40բ* Յոհդորակ ընդին ի նոյն *(«ՆԵՐՍԻՍԻ Ե ԵՐԳՍ») – Նոցին համաձայն եւ մեք ցընծութեամբ...*

Ծնթ. 6րդ միաւորը ներառում է ցանկի է.-ԺԳ. համարները:

7. *40բ-2բ* ԺԴ. Գանձ Տեառնընդառաջին՝ ի Մկրտչ[է] *(«ՄԿՐՏԻՉ») – Միաոնական Սուրբ երրորդութիւն, բարեբանեալ անբաւ զաւրութիւն... ա. 42բ-3ա Տաղ Տեառնընդառաջին ասա՛յ եւ զիս յիշեա՛ – Մըտեալ ի տաճարն այսաւր աւծեալն Աստուած... բ. 43ա-4ա ԺԴ.* Յոհդորակ է Տեառնընդառաջին: *Ասա՛ եւ զմեղուցեալ Սարգիսս յիշեա՛ – Այսաւր ցընծայ երուսաղէմ...*

8. *44ա-6ա* ԺԵ. Գանձ Յովհաննու Մկըրտչին է *(«ՄԿՐՏԻՉ») – Մեծապայծառ փառաւք պանծի... ա. 46աբ Տաղ Յովհաննու՝ ի Ներսիսէ – Քեզ մատուցանեմք այսաւր... բ. 46բ-8ա* Յոհդորակ պիտանի *(արտք. լ-ում)՝ «Փ[ոխ]» («Ա-Ք») – Անմարմնոցըն հրեղինաց...*

9. *48ա-52բ* ԺԶ. Պետրոսի հայրապետի եւ Աբիսողոմայ սարկաւագի *(«ՎԱՐԴԱՅՊԵՏԻ») – Վերերգեմք հընչմամբ, վերնական տարփմամբ...*

10. *52բ-6ա* ԺԷ. Գանձ ճգնաւորացն՝ ի տէր Մխիթարայ *(«ԲԱՅԻՒ ԵՐԳԵԼ») – Բարձրեա՛լ ահաւոր, բա՛ն Հաւր դիմաւոր... ա. 56աբ Տաղ սրբոյն Անտոնի եւ այլոցն ասա՛յ – Անտոն՝ ոստ անապատի... բ. 56բ* Յոհդորակ է *– Անձամբ խոնարհիմ ի ճրգնութիւնըս քո...*

11. *56բ-61ա* ԺԷ. Գանձ թագաւորաց՝ ի տէր Մխիթարայ *(«ՀԻՆԳԷՏԱՍԱՆ») – Համագոյական Հաւր սահման եւ Բան... ա. 61ա Տաղ թագաւորացն՝ ի Ներսիսէ («ՆՎԱԳ ԲԱՆԻՍ ՆԵՐՍԵՍԻ ե») – Նոր գրախտ ի քոյ, Տ՛ր... բ. 61աբ Նորին ի նոյն երգեա՛ եւ զիս յիշեա՛ («ՆԵՐՍԵՍԻ է») – Նորահրաշ տեսիլ եւ գերագոյն, քան ըզբնութիւն...*

12. *62ա-5բ* ԺԸ. Գանձ հայրապետացն՝ ի Մխիթար[այ] *(«ՎԷՇՏԱՍԱՆՔ է») – Վայել է քոյին վայելչականին... ա. 65բ-6ա Տաղ հայրապետաց՝ ի Ներսիսէ («ՆԵՐՍԵՍԻ ԵՐԳ») – Նոր գիւտոյն իմաստութեան... բ. 66ա-7ա [Տաղ] («Ա-Ք») – Այսաւր Սիովն ցընծայ...*

13. *67ա-70ա* ԺԹ. Գանձ Վահանայ Գողթնացւոյն ի Խաչայտոյ ասացեալ *(«ԽԱԶԱՏՈՒՐ») – Խորան քեզ ողբ, մայր կաթուղիկէ...*

14. *70ա-3բ* Ի. Քարոզ Առաջաւորացն ուրբաթին ի Մաթէոս[է, Նիւնուէացւոցն ի Մաթէոս վարդապետէ. գրչի ցանկ, ԻԱ., 2բ] *(«Ի ՄԱԹԵՈՍԷ») – Իմաստութիւնըդ Հաւր՝ Յիսուս...*

15. *73բ-6ա* ԻԱ. Գանձ սրբոյն Սարգսի Զաւրավարին *(«ՄԿՐՏԻՉ») – Մեծապայծառ փառաւք զարգարեալ... ա. 76ա-7ա Տաղ սրբոյն Սարգսի Զաւրավարին եւ Մարտիրոս[ի] – Վրկայից հանդիսից հրաշալի... բ. 77աբ* Յոհդորակ Սարգսի *(«Ի ՅԱԿՈԲԱ ՋԱՅՍ ԵՐԳ») – Ի քէն աղերսիւ հայցեմք...*

16. *77բ-9բ* ԻԲ. Գանձ Ատոմանցն՝ ի գծողէ գրոյս *(«ԳՐԻԳՈՐ») – Գեղապանծ լուսով, գեղազարդ փառաւք...*

17. *79բ-82ա* ԻԳ. Գանձ Ոսկեանցն եւ Սուրիասեանցն *(«ԽԱԶԱՏՈՒՐ») – Խոստովանիմք ըզքեզ, Միածի՛ն... ա. 82աբ Տաղ սրբոց Ոսկեանցն եւ Սուքիասանցն – Երջանիկ, հոգիահրաշ երանելին սուրբ Սուքիաս... բ. 82բ-3բ Փոխ է – Բայց նոքա ոչ զահի հարեալ...*

18. *83բ-8բ* ԻԴ. Գանձ սրբոյն Սահակայ եւ Մեսրոպայ՝ ի տէր Մխիթարայ *(«ԲԱՆ ՔԱՐՈՉԻՑ») – Բարձրեալ անքննին, բնաւից լըրութիւն... ա. 88բ-9ա Տաղ սրբոց թարգմանչացն – Ի ձեզ հաստատեալ կան... բ. 89ա (խորագիրը՝ արտք. լս-ում) Փ[ոխ] – Տաւն հանդիսական տաւնեմք...*

19. *89ա-91բ* ԻԵ. Գանձ Վարդանանց եւ Ղեւոնեանց *(«ԽԱԶԱՏՈՒՐ») – Խրամատեալ կանոնք աւրինի... ա. 91բ-2բ* Մեղեդի անուշ՝ ի Մաթէոս վարդապետէ *(«ՄԱԹԷՈՍԻ ե») – Մաքուր հոգով, արիք մարմնով... բ. 92բ-3բ* Յոհդորակս ինձ է *– Ի հանդէս տաւնի ձեր բախացեալ...*

20. *93բ-7բ* ԻԶ. Գանձ սրբոց հայրապետացն Գ. Ժողովին՝ Այրիվանեցի *(«ԱՅՐԻՎԱՆԵՑԻ») – Աստուած կենդանի, անիմանալի... ա. 97բ-8բ* Մեղեդի անոյշ՝ ի Մաթէոս վարդապետէ *(«ՄԱԹԷՈՍԻ ե») – Միայն Բանին Հաւր իմաստնոյ... բ. 98բ-9ա Փոխ է («ԵՐԳՍ ԱՅՍ ՆՈՐ Ե ԳՐԵԱԼ») – Եւ Հայաստան անխախտ կացեալ...*

21. *99ա-102բ* ԻԷ. Գանձ աղուհացից կիրակէիցն *(«ԵՐԵԻԱՆԵՑԻՆ») – Երգ յաւերժական, երգեմք բանական...*

22. *102բ-4ա* ԻԸ. Գանձ Թէոդորոսի եւ Մեկկիւտիոսի ասա՛յ («ԳՐԻԳՈՐ») – *Գոհաբանեալըդ Սուրբ Հոգի... ա. 104աբ* Մեղեդի անոյշ՝ ի Սրիկ Կոստանդէ – *Քաջամարտիկ մեծ զինուորին... բ. 104բ-5ա (խորագիրը՝ արտք. լս-ում) Փ[ոխ]* – *Խաղաղարար նոր թագաւոր...*

23. *105ա-7բ* ԻԹ. Միւս շաբաթ աւոն Կիւրղի («ԳԷՈՐԳԱ») – *Գովեմք յաղթանակ դըրուատ գովեստիւ...*

24. *107բ-9ա* Լ. Երրորդ կիրակէին յԱնառակ որդին («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ ահեղ խորհուրդ տիրական...*

25. *109ա-11ա* ԼԲ. Զորրորդ շաբաթ աւոն Յովհաննու հայրապետին: Գանձ զհայրապետացն ասա՛, ի ԺԹ. (=ԺԸ.) համարն է՝ Վայել է ֆոյին: Զորրորդ կիրակէին առ Մեծատօնն («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ ու ահագին խորհուրդ տիրական...*

26. *111ա-3ա* ԼԳ. Գանձ սրբոց Քառասնիցն՝ ի տէր Մկրտչէ («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ հզաւր անմահից արքայ... ա. 113աբ Տաղ ի սրբոյն Գրիգորէ Նարեկացւոյն* («ԳՐԻԳՈՐԻ Ե [Ե]ՐԳՍ ԱՅՍ») – *Գունդ սուրբ վըկայից... բ. 113բ-4ա* Յորդորակ է («ՔԱՌԱՍՈՒՆՍՆ») – *Քրիստոս՝ փառաց թագաւոր, փառաւորեալ ի զուարթնոցն...*

27. *114ա-5բ* ԼԴ. Հինգերորդ կիրակէ ի Դատ<u>օ</u>րն («ՄԿՐՏԻՉ») – *Մեծապայծառ խորհուրդ անքըննին...*

28. *115բ-8բ* ԼԵ. Գանձ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին է («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ հըզաւր անմահից արքայ... ա. 118բ* Մեղեդի անուշ սրբոյն Գրիգորի Լուսաւ[որչի] – *Գրիգորիոսի առաքինի, հըսկող Քրիստոսի... բ. 118բ-9ա* Յորդորակ է – *Ի յելս արեւուն արեւ ծագեցաւ... գ. 119ա-20ա* Յորդորակ պիտանի – *Բարձրացիր դշխոյ փառաւք...*

29. *120ա-3բ* ԼԶ. Վեցեր<r>որդ կիրակէին գանձ Առեւանեցւո ասա՛: Ձերգ Յաւե[ր]ժականն ասա՛: Գանձ յարութեան Ղազարու («ԳՐԻԳՈՐԻ Է ՍԱ») – *Գերակայ գոյին, սկիզբն ամենայնին... ա. 123բ-4ա* Մեղեդի անոյշ, Ղազար («ՍՏԵՓԱՆՆՈՍԻ») – *Սըրբոց հրեշտակաց զար[մ]անս հրաշից տեսեալ... բ. 124ա-5ա* Յորդորակ պիտանի – *Զայնն այն, որ զաշխարհս արար...*

30. *125ա-9ա* ԼԷ. Գանձ Ծաղկազարդին («ՀԱՅՑԷ ՍԻՐՈՎ») – *Համագոյական Հաւր սահման եւ Բան... ա. 129ա* Մեղեդի – *Անեղանելիդ Աստուած հրաշալի փառաւք... բ. 129աբ (խորագիրը՝ արտք. լս-ում) Փ[ոխ]* – *Աստ եբրայեցոց մանկունքն... գ. 129բ-30ա* Յորդորակ է – *Այսաւր ցնծան արարածք...*

31. *130ա-4բ* ԼԸ. Գանձ Մեծի Բ.շաբաթի («Ի ՄԱԹԵՈՍԷ [ՀՆԴՐԱՑ ԳՐԻԳՈՐ]») – *Ի սկզբան էին արարեալ զերկին... ա. 134բ-5ա* Մեղեդի Բ.շաբթի – *Որք ի Տ<u>ե</u>ր Յիսուս... բ. 135աբ (խորագիրը՝ արտք. լս-ում) Փ[ոխ]* – *Անդ ի մէջ դրախտին... գ. 135բ-6ա [Փոխ]* – *Բարերար եւ մարդասէր...*

32. *136ա-9բ* ԼԹ. Գանձ Մեծի երեքշաբաթին ասա՛ եւ զիս յիշեա՛ («Ի ՄԱԹԵՈՍԷ[ՀՆԴՐԱՑ ԳՐԻԳՈՐ]») – *Ի կամս Արարչին, խնամալք Միածնին... ա. 139բ-40ա* Մեղեդի Աւագ երեքշաբաթին – *Քեզ, ո՛վ Տէր Յիսուս... բ. 140աբ (խորագիրը՝ արտք. լս-ում) Փ[ոխ]* – *Ահ սարսափելով դողամ... գ. 140բ-1բ* Յորդորակ է – *Որք ընկալայք ի գործ զքանքար... դ. 141բ-2ա [Փոխ]* – *Զքո սոսկալի ձայնէտ...*

33. *142ա-4ա* Խ. Աւագ չորեքշաբաթին («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ ահեղ խորհուրդ անեղին... ա. 144աբ* Մեղեդի Մեծի չորեքշաբաթի<ի>ն – *Սկիզբըն համայնից արարածոց գոյի... բ. 144բ-5ա (խորագիրը՝ արտք. լս-ում) Փ[ոխ]* – *Գառն [ան]արատ պատարագ... գ. 145աբ* Յորդորակ է այս – *Որ վասըն մեր յերկնից յերկիր...*

34. *145բ-9ա* ԽԱ. Աւագ հինգշաբաթին («ԶՊԱԿԱՍՈՐԴՔ») – *Զահեղ, զանքննին զխորհուրդըն խորին... ա. 149աբ* Մեղեդի Մեծի հինգշաբաթին – *Փառաց թագաւորն, որով նըստի... բ. 149բ-50ա (խորագիրը՝ արտք. լս-ում) Փ[ոխ]* – *Լըքեալ լուծանէր մինն ի յընտրեալ...*

35. *150ա-3բ* ԽԲ. Գանձ Աւագ ուրբաթին («Ի ՄԱԹԷՈՍԷ [ՀՆԴՐԵԱՑ ԳՐԻԳՈՐ]») – *Ի յանմարմնական անձանց բանական... ա. 153բ-5ա Տաղ անուշ ի Ներսիսէ («Ա-Ջ»)* – *Անեղ Որդին Հաւր Միածինն... բ. 155ա-6ա Ողբ Աստուածայմաւրն – [Աստուած]ածին սրբուհին ամէնաւրհնեալ... գ. 156ա [Փոխէ զձայնդ]* – *Ով Սիմէոն ծերունի...*

36. *156բ-8ա* ԽԳ. Գանձ թաղման ճրագալուցին («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ ու ահագին խորհուրդ սոսկալի... ա. 158աբ* Մեղեդի անուշ ասա՛ եւ զեղկելիս յիշեա՛յ – *Ես ձայն զառիւծուն ասեմ... բ. 158բ Շրջանակ է – Զամուրս իմ քակել կամի... գ. 158բ-9բ* Յորդորակ պիտանի է – *Այսաւր աւետիս ձեզ, նընջեցեալոցդ...*

37. *159բ-64ա* ԽԴ. Յարութեան Սուրբ Զատկին («ՏԵՐՈՒՆԱԿԱՆ») – *Տէ՛ր տէրունական, տուո՛ղ տիրական... ա. 164ա* Մեղեդի ասա՛. Տէր իմ, եւ զիս յիշեա՛ – *Հաւուն, հաւուն արթընացեալ... բ. 164աբ Տաղ անուշ՝ ի Ներսիսէ («ՆԵՐՍԵՍԻ ԵՐԳ»)* – *Նըստեալ կանայքն ողբային...*

38. *164բ-6բ* ԽԵ. Գանձ Յարութեան («ՄԿՐՏԻՉ») – *Մարդասիրութեամբ Որդիդ Միածին... ա. 166բ-7ա Տաղ անուշ՝ ի Սրիկ Կոստանդէ («ԿՈՍՏԱՆԴԻՆՔ»)* – *Կանանցըն կանխեալ եկին... բ. 167աբ* Յորդորակս ի ճնոց – *Յայնժամ սիրով տիրական...*

39. *167բ-70ա* ԽԶ. Գանձ Յարութեան («ԽԱԶԱՏՈՒՐ») – *Խորհուրդ հրաւիրման կամաց արարչին... ա. 170աբ* Մեղեդի անուշ ասա՛ եւ զիս յիշեա՛ *(«ՅԱՒԱԳ»)* – *Յարեաւ հաւն այն... բ. 170բ-1ա* Յորդորակ պիտանի – *[Յ]ընծան այսաւր երկինք...*

40. *171ա-3ա* ԽԷ. Գանձ Նոր կիրակէին («ՄԿՐՏԻՉ») – *Մեծապայծառ ձայն ուրախալի... ա. 173աբ Տաղ ի Ներսիսէ («ՆԵՐՍԵՍԻ Ե ԲԱՆՍ»)* – *Նոր ծաղիկ պայծառ ցուցաւ... բ. 173բ-4բ [Փոխ] («ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՈՅ»)* – *Կանայքն արտասուաք լային...*

41. *174բ-7ա* ԽԸ. Աշխարհամատեան է («ՄԿՐՏԻՉ») – *Մաքրեալ տաճար սուրբ տէրունական... ա. 177աբ* Մեղեդի եկեղեցոյ – *Քրիստոս եկեալ քահանայապետըն... բ. 177բ-8ա* Յորդորակ է – *Մայր հաւատոյ սուրբ հարսնարան...*

42. *178ա-82ա* ԽԹ. Գանձ երեւման սուրբ [գրչի ցանկ, 3բ-4ա, Հ[մր] ԽԹ.՝ Խաչին գանձ՝ ի Մաթ]էոս վարդապետէ («Ի ՄԱԹԷՈՍԷ ԽՆԴՐԵԱՅ ԳՐԻԳՈՐ») – *Ի յարփաւուրէ, ի գերագոյէ... ա. 182ա-3ա Տաղ Խաչի. անոյշ է* – *Խաչն ի նախնումն երեւեցաւ... բ. 183աբ* [Յորդորակ, *ձեռ. 3870, 173ա-4ա]* – *Աւրհնեալ ես, փայտ սուրբ փրկական...*

43. *183բ-6ա* Ծ. Գանձ Համբարձմանն Քրիստոսի («ՄԿՐՏԻՉ») – *Մեծապայծառ տաւնիւս ահագին... ա. 186աբ Տաղ Համբարձմանն Քրիստոսի («ԱՆԴՐԻԱՍ») – Այսաւր անդրանիկ Հաւր Միածին Որդին... բ. 186բ* Յորդորակ ազնիւ («ՎԱՐԴԱՊԵՏ») – *Վերիվ թագաւորն այ[ս]աւր առ Հայր մըտանէ...*

44. *186բ-9բ* ԾԱ. Քառոզ մեծայիրաշ կիրակէիւն՝ ի Մաթէոս վարդապետէ («ՄԱԹԷՈՍԻ է [ԽՆԴՐԵԱՅ ԳՐԻԳՈՐ]») – *Միակդ ի յէից, մինդ անտես յէից... ա. 189բ-90ա* Մեղեդի անուշ ննրին ի – *Անպարագրելիդ Աստըւած գրեալ ի կուսէն... բ. 190ա-1ա* Յորդորակ է – *Որք էք որդիք Հաւրըն լուսոյ...*

45. *191ա-3բ* ԾԲ. (Խորագիրը՝ հետգ-ի ձեռով) Հոգոյն գալըստ[ե]ան («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ հրգաւր Հոգ[ի Աստուծոյ]... ա. 193բ Տաղ անուշ վասն Հոգւոյն ասա՛յ եւ զիս յիշեա՛յ* – *Աստանաւր ծագեաց լոյս աւետեաց կենաց... բ. 194աբ Տաղ սքանչայարմար* («ՆՎԱԳԵ ՀՈԳԻՈՅՆ ՏՐՎՈՂԻՆ [Ի]ՄԱՍՏ ԲԱՆԻ ԸՆԴ ՁԱՅՆԻ») – *Ներհիւսեսցուք քաղցր եղանակ...*

46. *194բ-7ա* ԾԳ. Գանձ Յովհաննէս Թլգուրանցոյ ասացեալ է այս («ՅՈՎԱՆՆԷՍ») – *Յաւէտ իսկապէս ընդ Հաւր միապէս... ա. 197աբ* Մեղեդի անոյշ ասա՛յ – *Մեծի աւետեաց ահեղ հընչեաց... բ. 197բ* Յորդորակ Հոգոյն Սրբոյ է – *Հոգին Սուրբ հընչեաց բազմալեզու ազգաց...*

47. *197բ-201բ* ԾԴ. Գանձ սրբոց Հովսիմեանցն՝ ի Մխիթար վարդապետէ («ՎԿԱՅԱԿԱՆԱՅ») – *Վայելչականաց վայելման փառաց... ա. 201բ-2ա Տաղ ի ներսիսէ («ԱՒ ՀՈՒՓՍԻՄԵ») – Առաւաւտ լուսոյ արեւելեան ազանց... բ. 202աբ Շրջանիկն է այս* («ԿՈՅՍՆ Է») – *Կենդանի վըկայք, կոյսք իմաստունք...*

48. *202բ-4ա* ԾԵ. [Գանձ] Մանկանցն Բեդղահեմի ասա՛ եւ զիս յիշեա՛յ («ԽԱՉԱՏՈՒՐ») – *Խանդաղակաթ սրտիւ տենչալի... ա. 204աբ [Տաղ]* – *Այսաւր աւետեաց Գաբրիէլ...*

49. *204բ-8ա* ԾԶ. Գանձ մարգարէիցն՝ ի տէր Մխիթարայ ասաց[եալ] («ԽՈՐՀԸՐԴՈՅՆ») – *Խորհուրդ անքննին, խորք, որ չերեւին... ա. 208ա-9ա Տաղ ի ներսիսէ («ՆԵՐՍԷՍԻ ԵՐԳ») – Նորահրաշ տաւնիւ տեսանողացըն ցընծասցուք... բ. 209ա-10ա* Յորդորակ է *(«Ա-Ք»)* – *Աստուածային խորոցն անճառ...*

50. *210ա-4ա* ԾԷ. Որդոց եւ թոռանց Լուսաւորչին («ՏԱՒՆԻՑ ԱՍԵԼ») – *Տաճար երկնային, տուն քրիստոսային... ա. 214բ-5ա Տաղ սուրբ հայրապետացն («ՀՈՂՆՄ՞») – Հընչմամբ ձայնիւ բերկրանաց... բ. 215ա* Յորդորակն է *(«ՆՎԱ»)* – *Նոր մեծահանդէս տաւնիւ...*

51. *215ա-7ա* (խորագիրը՝ հետգ-ի ձեռով) ԾԸ. Գանձ Վարդավառին ասա՛յ եւ զիս՝ Վարդանս, յիշեա՛յ («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ ահեղ խորհուրդ [մեզ յայտնեալ]... ա. 217ա Տաղ ի տէր Ներսիսէ կաթողիկոսէ («ՏԷՐ ՆԵՐՍԷՍԻ է») – Տէր փառաց այսաւր ի Թաբաւր... բ. 217բ-8ա* Յորդորակ է («ՆԷՐՍԷՍԻ ԵՐԳ») – *Ներպատրունակեալ խորհուրդ լուսոյ... գ. 218աբ* Յորդորակն է – *Աստանաւր տեսիլ ահեղ... դ. 218բ-9ա Ի Գրիգորէ Նարեկեցոյ է* – *Գոհար վարդըն վառ առեալ...*

52. *219ա-22ա* ԾԹ. Գանձ Փոխման Աստուածածնին է («ՄԿՐՏԻՉ») – *Մեծապայծառ հրաշակերպ վեհին... ա. 222աբ Տաղ ի ներսիսէ* – *Այսաւր Գաբրիէլ հրեշտակապետն եկեալ... բ. 222բ-3բ [Փոխ]* – *Անարատ տաճար եւ առագաստ լուսոյ... գ. 223բ յերեւանեցոյն ասացեալ* – *Սուրբ Աստուածածին կուսին...*

53. *223բ-5բ* Կ. Գանձ Սրբոյ Խաչին ի Թլգուրացոյ ասացեալ է («ՅՈՎԱՆՆԷՍ») – *Յեղեմական ընկոյզն աւրհնութեան... ա. 225բ-6ա Տաղ ի ներսիսէ («ՆԵՐՍԻՍԻ է»)* – *Նոր դրախտին եկեղեցոյ... բ. 226ա-7ա* Յորդորակ է Խաչին *(«ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՈՅ»)* – *Կենաց փայտ ընկեալ ըզքեզ...*

54. *227ա-9բ* ԿԲ. (Խորագիրը՝ հետգ-ի ձեռով) Գանձ Գեւորեայ («ԽԱՉԱՏՈՒՐ») – *Խընդահրաւէր մանկունք [Սիոնի]... ա. 229բ-30ա* Մեղեդի Գէորգեայ Ջաւրավարին – *Ի հանդիսական տաւնիս երգելով զերգըս հեշտալի... բ. 230աբ* Յորդորակն է – *Համեալ ըզկիրս տանջանաց...*

55. *230բ-3ա* ԿԳ. Գանձ սրբոց առաքելոցն է («ԽԱՉԱՏՈՒՐ») – *Խորհըրդազգաց քո մարդեղութեանդ... ա. 233բ* Մեղեդի առաքելոցն է («ԵՐԳՍ ԱՅՍ Ե ՆԵՐՍԻՍԻ») – *Եկայք զուարճացեալ պայծառասցուք... բ. 233բ-5ա Տաղ առաքելոցն՝ ի ներսիսէ ասա՛յ («Ա-Ք»)* – *Առաքեալք Աստուածորդւոյն...*

56. *235ա-9ա* ԿԴ. Գանձ սրբոց կուսանաց եւ մարտիրոսաց ասա՛ եւ զիս յիշեա՛յ («Ի ՓԱՌՍ ՏԵԱՀՆ») – *Ի սկըզբան էիդ, ի լուսոյ լուսիդ... ա. 239աբ Տաղ ի ներսիսէ («Ա-Ք»)* – *Արեգակն արդար ըզհուր սիրոյ... բ. 239բ-40ա* [Յորդորակ, *ձեռ. 473, 238բ-9ա] («Ժ-Զ»)* – *Ժողով զինուորաց թագաւորին երկնից...*

57. *240ա-2բ* ԿԵ. Գանձ սրբոց մարտիրոսացն՝ ի Խաչա[տուր վարդապետէ. ձեռ. 2659, 5ա-6բ] («ԽԱՉԱՏՈՒՐ») – *Խոնարհեալ Բանին Աստուծոյ... ա. 242բ-3ա Տաղ մեղեդի անուշ՝ ի ներսիսէ ոգեալ («Ճ-Ռ»)* –

Ճըշմարիտ վկայք Աստուածորդոյն եղեալք... բ. 243աբ Յոհաննու *(«Ա-Ք») – Սոսկալի ճըգամբք սուրբ վկայից քոց, Տէ՛ր...*

58. *243բ-5ա* ԿԶ. Գանձ սրբոց մարտիրոսացն (**«ՄԿՐՏԻՉ»**) – *Մեծապայծառ փառաւք զարդարեալ... ա. 245ա-6ա Մեղեդի ի ներ[սին]* (**«ԲԱՆ [Ի] ՎԿԱՅՍՆ»**) – *Բանիւ աւետաւոր բարառնաբար... բ. 246աբ* Յոհաննու *պիտանի է* (**«Ի ՆԵՐՍԻՍԷ»**) – *Ի մի յարմարութիւն զոգիս ընտրեալ քոց անդրանկաց...*

59. *246բ-8բ* ԿԷ. Գանձ հրեշտակապետացն (**«ՄԿՐՏԻՉ»**) – *Մեծ եւ ահեղ խորհուրդ հրաշական... ա. 248բ-9ա Մեղեդի ասա՛ եւ զեղկելիս յիշեա՛, տէր իմ Տիրաւա՛գ* (**«ԳՐԻԳՈՐ»**) – *Գովեստ բերկրանաց քաղցրաձայնեալ երգեմք... բ. 249աբ* Յոհաննու *(«ՋԱՒՐԱՎԱ») – Ջաւրք երկնային զըւարթնոց...*

60. *249բ-53ա* ԿԸ. Բարդողիմէոսի եւ Թադէոսի, Յուդայի եւ Շմաւոնի գանձ (**«ԽԱՉԱՏՈՒՐ»**) – *Խորհուրդ անշարժ հա<յ> բաշարժական... ա. 253ա-4ա Տաղ անուշ* (**«ԲԱՐԲԱՂԻՄԷՈՍ»**) – *Բանն, որ ի Հաւրէ ծագեալ... բ. 254աբ* Յոհաննու *պիտանի է* (**«ԵԼՈՅՆ ԵՐԳ»**) – *Երկնաւոր լըրտեսք, յերկրաւորացս ընտրեալք...*

61. *254բ-6բ* Հ. Գանձ սուրբ Յակոբայ (**«ՄԿՐՏԻՉ»**) – *Մեծահռչակ անուն գովելի... ա. 256բ-7ա Մեղեդի սուրբ Յակոբայ եւ Մարուգէի* (**«ՄԱԹԵՈՍԻ Ե»**) – *Մեծի հանդիսի աւուրս առ քեզ պաղատիմք... բ. 257ա-8ա* Յոհաննու *պիտանի ի նոյն* (**«ՎԱՐԴԱՊԵՏԻՆ»**) – *Վարժից հանուրց եկեղեցեաց...*

62. *258ա-61ա* ՀԱ. Դաւթի եւ Յակոբայ գանձ՝ ի խաչատրէ: Եւ զգծողս յիշեա՛յ (**«ԽԱՉԱՏՈՒՐ»**) – *Խորք անքննին, անճառ անհասին... ա. 261աբ Տաղ Դաւթի՝ ի Ներսիսէ – Որ զոգ Դաւիթ յեսէածին... բ. 261բ-2ա* Յոհաննու *սրբոյն Յակոբայ («ՅՈՀԱՆՆԵՍԻ Ե») – Յակովբոս ընտրեալ վկայ, որդի Յովսեփայ...*

63. *262ա-4ա* ՀԲ. Գանձ Ստեփանոսի Նախավկային (**«ՄԿՐՏԻՉ»**) – *Մեծ, ահաւոր, անմահ թագաւոր... ա. 264բ-5ա Տաղ անուշ եւ ընտիր Ստեփանոսի վկային («Ի ՍՏԵՓԱՆՆՈՍ») – Ի խաչին տընկեալ որթոյն... բ. 265ա-6ա* Յոհաննու *Ստեփանոսի Նախավկային է այս («Ի ՆԵՐՍԻՍԵ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ») – Ի գաւազանէն եսեայ ստեղնեալ Ստեփաննոս...*

64. *266ա-70ա* ՀԳ. Գանձ Պետրոսի եւ Պաւղոսի առաքելոցն ասա՛ եւ զՍարգիս յիշեա՛յ, Տէ՛ր իմ (**«ՍԱՐԳԻՍ ԳՐԻՉ»**) – *Սուրբ երրորդութիւն ստեղծող... ա. 270ա Մեղեդի առաքելոցն Պետրոսի եւ Պաւղոսի* (**«ԳՈ[ՎԵՍՏ]»**) – *Գլուխ եկեղեցոյ եւ վէմ հիմն անշարժելի... բ. 270ա-1ա [Փոխ]* (**«ԱՌԱՔԵԼՈՅՆ ՊԵՏՐՈՍԻ»**) – *Այսաւր ցնծացէք, եղբարք...*

65. *271ա-5ա* ՀԴ. Գանձ սրբոյն Յոհաննու եւ Յակոբայ՝ որդոց Որոտման: Եւ զիս յիշեա՛յ (**«ՄԱԹԵՈՍԻ Ե ՍԱ.»**) – *Միածին Բանին, ծընունդն անեղին... ա. 275աբ Տաղ որդոց Որոտման – Որդիքն Որոտման, որք ի վերուստ որոտացին... բ. 276աբ* Յոհաննու *պիտանի եւ անուշ է («ՆԵՐՍԷՍԻ ԵՐԳ») – Նոր լոյս յարփենոյն վառեալ որդիքն Որոտման...*

66. *276բ-9ա* ՀԵ. (խորագիրը՝ հետգ-ի ձեռով) Գանձ Բարսեղի (**«ԽԱՉԱՏՈՒՐ»**) – *Խաչաբարձ արհիպանծալի... ա. 279աբ Նորին /// ասացեալ ի Բարսեղ («ԽԱՉԱՏՈՒՐ») – Խոնարհիմք այսաւր մաղթողական ձայնիւ... բ. 279բ* Յոհաննու *պիտանի է անուշ («ՎԱՐԴԱՊԵՏԻ») – Վանիչ ներհակին Յուլիանեայ չարին...*

67. *279բ-82ա* ՀԶ. Գանձ ձեռնադրութեան ի տէր Մխիթարայ (**«ՄԽԻԹԱՐ»**) – *Մինդ ի յերից անձանց... ա. 282աբ [Տաղ աւծման քահանայից] – Ով անմահ հաց կենաց...*

68. *283աբ* Երգ ի վերայ գերեզմանի ասա՛յ (**«ՎԱՐԴԱՊԵՏԻՆ Է»**) – *Վերջի այներեկ աւուրն եւ համառաւտին...*

69. *283բ-4բ* [Երգ հսկման գիշերոյ. գրչի ցանկ, ՁԲ., 5ա] (**«ՀԱՅՐԱՊԵՏ ԷՐԵՑՍ Ի»**) – *Հայր [անըսկիզբն եւ գըթածական]...*

70. *284բ* Աւրնակման առաւաւտու ժամին է – *Ճանապարհ բարի Քրիստո՛ս... ա. 285ա* [Յոհաննու, *ձեռ. 473, 160բ-1ա] – Բայց ի միաշաբաթին լուսանալն առաւաւտին...*

Ծնթ. 229բ, 259ա առտ. լս-ներում կայ գրչի 1ական բնագրային լրացում:

Բոլոր այն միաւորների դէպքում, որտեղ լրացման օժանդակ աղբիւր չի նշուել, օգտագործուել է տպագիրը. տե՛ս Մատենագիրք հայոց, հտ. ԺԳ., Գանձարան, Գիրք Ա., Անթիլիաս-Լիբանան, 2008: Մատենագիրք հայոց, հտ. ԺԴ., Գանձարան, Գիրք Բ., Անթիլիաս-Լիբանան, 2008:

Էջահամարներից յետոյ դրուած գլխահամարները գրուած են գրչի կամ հետգ-ի ձեռով՝ մասամբ ըստ գրչի ցանկի: Ձեռագրում չկան ցանկի ԾԸ. («Տաղ սրբոյ տապանակին»), ԿԸ. («Ոսկեբերանին տաղ, Անաւարզեցի»), ՀԷ. («Վասն աւրհնութեան ձորակերտ գրոցս, գանձ Այրիվանեցի»), ՀԸ. (Նորին եւ այլ երգ ի նոյն խորհուրդ), ՀԹ. (Նորին եւ այլ երգ վասն պատկերաց սրբոց), Ջ. («Յիշատակարան ձորին») միաւորները:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽԱԳԱՂԱՓԱՐ ՕՐԻՆԱԿԻ

Տե՛ս 43ա, 77բ, 266ա խորագրերը:

Ծնթ. 77բ-9բ, 266ա-70ա նոյն գրիչ-հետիմակների գանձերի աւելի վաղ կիրառութիւններ կան. տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, աշխ.՝ ճ. Ս. վրդ. Ձեմճեմեանի, հտ. Ե., Վենետիկ, 1995, ձեռ. 382, Հմր 761, էջ 295, 298 (Հմր 14), 306 (Հմր 65) (նշեալ ձեռ-ը գրուել է 1394 թ.): 43ա Անդրէաս վրդ.ի գանձի խորագիր-յիշատակարանում նշուած Սարգիսը հաւանաբար 266ա յիշատակարանի նոյնանուն հեղինակ-գրիչն է:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

5ա Ա՛վ եղբայր, քեզ երանի՛, որ հանդիպիս / այսմ պայծառ բուրաստանիս։ / Յիշել մաղթեմ, յորժամ ցնծաս / գոչել զայս բանքս առ պատշաճիս, / երկրածնաց նահատակացս եւ տէրունիս, զոր կայ տառիս, / եւ ինձ լիցի մասն ի սմին. ամէն։

223բ Ա՛վ տէր իմ Տիրաւագ, *զայս երգեա՛յ եւ մեղուցեալ զգրչակս յիշեա՛յ։*

Տե՛ս ԺԵ. դ. յիշ-f, Ա., էջ 417, Հմր 446.բ.։

285բ Փա՛ռք ամենասուրբ երրորդութեանն՝ Հաւր եւ Որդ[ո]յ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ անզրաւ յաւիտենից յաւիտեանս. ամէն։ Ի թվին ՊՁ. (1431) ես Մանուէլ *աբեղա եւ եղբարս իմ տէր* Տիրաւագ *ստացաք զգԱնձաբանս ի հալալ յընչից մերոց՝ ի վայելումն անձին եւ յիշատակ հոգւոց մերոց եւ ծնողաց, եւ ամենայն արեան մերձաւորաց։ Արդ, աղաչեմք զամենեսեան, որք հանդիպիք սմա տեսութեամբ կամ աւրինակելով, յիշեցէ՛ք ի մաքրագործ յաղաւթս ձեր զվերոյգրեալսդ, եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. եւ նմա փառք յաւիտեանս. ամէն։*

Տե՛ս ԺԵ. դ. յիշ-f, Ա., էջ 417, Հմր 446.ա.։

Տե՛ս նաեւ՝ 248բ, խոռագիր։ Գրչական աղեռսներ կան 42բ, 61ա, 136ա, 158ա, 164ա, 170ա, 193բ, 202բ, 235ա, 258ա, 271ա էջերի խոռագրերում, որոնք գուցէ նախագաղափար օրինակից են առնուել։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *1ա (1534 թ., անարուեստ բոլորգիր)* Տիրաւաֆին, Անի *քուրիկ։ Թվին ՋՃՁԳ. (1534) էր, ուրում դուս/// /// իմ /// փառք ///*

2. *285բ (1535 թ., անարուեստ բոլորգիր) [Աւր]հնեցինք զտէր* Տիրաւաֆն *[թ]վականիս հայոց ՋՁԴ. (1535), /// Տանուտէր Կշիռն, /// խաչվերացին տա[ւ]նն, /// ամիս Թ. էր Հոո[իի] ///, [Սեպ]տեմբեր ամիսն ԺԲ. էր։ գՏ[իրաւ]ա/// ///ացմայ հոծ ալեացս զաղտ[եղ]ացեալս ///ցանաք։ Ով ա/// (մի քանի բառ՝ ջնջուած, անընթեռնելի) Աստուած ձեզ ///*

3. *1ա (ԺՁ. դ., անարուեստ բոլորգիր) Աստուած ողորմի ասէք* Միկիտին, *իմ* Գուլումին, *իմ* Գուլումին *տղան։*

4. *1ա (ԺՁ. դ., կցագիր)* Պետրոս *(սրա դիմաց՝ արտք. լս-ում, աջից ձախ գրութեամբ արաբատառ)՝* Պետրոս *վարդապետ։*

5. *(ԺՁ. դ., բոլորգիր) տե՛ս՝ 215ա խորագիր։*

6. *109ա (1663 թ., նոտրգիր, վեր. լս.) Թվին ՌՃԺԲ. (1663)։*

1ա Թվին ՌՃ/// (հաւանաբար 109ա յիշատակարանի կիսատ մնացած տարբերակ է)։

7. *1բ (ԺՀ. դ., անարուեստ նոտրգիր) Ջվերջին ի-շա[տա]կարանս իշեցէ՛ք զ*Մարիաննն, *որ շատ աշխատութեամբ ազատեաց զԳանձարանս։ Ով հանդի[պ]իք սմայ, մէկ բերան ողորմի ասացէ՛ք, Աստուած ձեզ իշէ. ամէ[ն], իւր գալըստա[ն]։ |2ա| (ստ. լս-ում) զ*Մարիաննն *իշայ եւ զ[Պապ՞]ումն. ամէն։ Հա՛յր [մեր, որ] երկինս։*

ՆՇՈՒՄ՝ *1ա «ՊՁ. 1431 մ[եսրոպ] եպ[իսկոպոս]»։*

ԳՐՁԱՓՈՐՁ՝ *1ա՝ «Ա՛յ կին, կովն ջուրաւրհնէքն անցանի, ի Դ. աւր ծնի», «աստ եարա», «ես ասացի զարմանալ է ապա զի թ///ս գրեցեալ է։ Ով որ կարդաս լաւ», «ա-ե», «աս» (բազմիցս), «սթ», «նայեաց արօք», «ղուսում», 1բ՝ «Այնճառ Միածին Հայր<ն>ս երկայաւորի է ընդ-բալդ ի երկի/// սուրբ Աբ՛՛ սուրբ քրոբէ Մարմայի է։ ժ. ժ. սուրբ Աբ՛՛ կենաց բարեխաւս, առիւ վերընթաց կամ[աւ]որ ժառանգ», 2ա՝ «Զոր ի շնորհ», 5ա՝ «Ա՛վ եղ», «Ո ե.», 8դ՝ «մաց զնա ընտրելով», 20ա՝ «ես Տէր», 53ա՝ արաբատառ՝ «Պետրոս վարդապետ նորին մեծութիւն, վակֆ անող, վակֆ, զարմանք» եւլն, 135բ՝ հանգուցագիր-թուչնագիր՝ «Ի» (երկիցս), 136ա՝ «3»։*


ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *1ա՝ բուսական նախշ, 123բ, 124ա՝ թռչուն։*

3556
ՄԱՇՏՈՑ ՁԵՌԱՑ, ԳԱՆՁԱՐԱՆ

ՍՈՒՐԲ ՆՇԱՆ (ՄԱՒՐՈՒԿԱՅ ԳԱՒԱՌ) ՊՂ. – 1441
ԵՐՁՆԿԱ. ՊՂԲ. – 1449

ԳՐԻՉ՝ Սարգիս սրկ. (ապա՝ երէց)։ ՍՏԱՑՈՂ՝ տէր Գրիգորիս (Ա.)։


ԹԵՐԹ՝ 213+2 (թ. 1՝ երկիցս). չգրուած՝ 1զ։ ՊՐԱԿ՝ Ա-[ԺԲ]×12 (ԺԴ 8, ԺՁ 11)+4։ ՆԻՒԹ՝ թուղթ։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18,2×14։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն՝ թ. 2-110ա, 111բ, 112բ-65բ, թ. 183-213 (12,5×9,5), երկսիւն՝ 1զ-ե, 110բ-1ա, 112ա, թ. 166-82 (12,5×9,5)։ ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 92ա)։ ՏՈՂ՝ 19 (1դ-185բ), 17 (թ. 186-212)։ ԿԱՁՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դռնակով. միջուկը՝ տախտակ. Ա. աստառը՝ կանաչ, Բ. լրացման աստառը՝ սպիտակ եւ կապոյտ վանդակազարդ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր։



Նմուշ 92ա

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Աւետարան Ղուկասու։ Ժ. դ.։ ԱԲ+Գ, ԱԲ՝ ստացուած մէկ ամբողջական թերթի

վեր. եզրահատումով (բնագիրը՝ կտրած) եւ ընդերկայնակի ծալումով, Գ.՝ ստացուած Ա. պտոկ-պճպ-ի ստ. եզրահատումով (բնագիրը՝ կտրած) եւ ընդերկայնակի մէկ սեան հատումով: Մագաղաթ ԱԲ զոյգ թերթերի բացուածքը 17,2×20. երկսիւն (7,5×15,7). Գ.՝ 17×12,7. միասիւն (12,7×7). բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝ Բա). տող՝ ԱԲ՝ 7, Գ՝ 11 (սկզբնական վիճակը՝ 39,2×26,5, երկսիւն (22×15,7), տող՝ 20): Լուսանցազարդ՝ Յիսուս Քրիստոս՝ Գա: Գոյներ՝ կանաչ, դեղին, վարդագոյն, կարմիր, շագանակագոյն: Լս-զարդի աջ եւ ձախ կողմերում բնագրին վերաբերող ծիսական ցուցումներ՝ Գա՝ «Ջկիր[ակի] առ֊աւտ», «Առաւաւտ. զՏէր»: Կարդալ. Բբ, Գբ, Աա, Գա, Աբ, Բա՝ «/// [պատ]ճառանաւք յարկարեն զաղաւթս... եւ շարժմունք մեծա///» (Ի. 47 – ԻԱ. 11):



Նմուշ Բա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Կիսախոռան՝ 2ա: Լս-ային՝ խաչելութիւն՝ 152ա («Սայ է թագաւոր հրէից»), 204ա, ծառ (Մուտք յԵրուսաղէմ)՝ 192բ: Լուսանցազարդ՝ բուսական, բուսաթռչնային, սափոր՝ 75ա, տաճար՝ 137բ, 190բ: Զարդագիր՝ հանգուցագիր, թռչնագիր՝ 87ա, 141բ, մարդադէմ՝ 81բ: Գոյներ՝ կարմիր, վարդագոյն, շագանակագոյն:

Տե՛ս Ա. Գէորգեան, Անանուն հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն, Թ-ԺԷ. դդ., Գահիրէ, 2005, էջ 182:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, ճաճճած, անկիւններից, մէջքի վեր. եւ ստ. եզրերը թափուած, մէջքի եւ կազմի միացման վեր. եզրերը իրարից անջատ. Ա. փեղկին անցքեր, 2ական կապիչներն ու փայտէ գամերն ընկած, պահպանուել են գամերի հիմքերը, դռնակը ճաճճած, դէպի ետ ծալուած, վեր. եւ ստ. եզրերը՝ թափուած, այրուածքի հետքերով, աստառը մասամբ կեղտոտուած, դռնակինը՝ մասամբ մաշուած, պատռուած. պտոկ-պճպ-ները՝ մասամբ դեղնած, գունափոխ, եզրերը՝ սեւացած, Ա. փեղկը՝ ստ. հիմքից հեռացած, կարը՝ թուլացած. լուսանցակողերի կարմիրը՝ գրեթէ գունաթափ, սեւացած. թերթեզերքը՝ մաշուած, տեղ-տեղ մանր պատռուածքներ, եզրերը՝ սեւացած, խոնաւութեան դեղին եւ այլ կեղտաբծերով, թերթման անկիւններում՝ մատնահետքեր, հիմքը ամրացած փոշուց մասամբ սեւացած, թերթերին զանազան բծեր, խոնաւութիւնից լղոզուած թանաքի հետքեր (1դ-զ եկն), վեր. եզրերում բորբոսի հետքեր, տեղ-տեղ այրուածքի հետքեր (թ. 96-7), ցեցի եւ այլ անցքեր (թ. 1-4, 27, 34-48, 135). որոշ թերթեր՝ ստ. հիմքից, որոշ թերթեր՝ վեր. հիմքի կէսից աւելիով անջատ (թ. 4-5, 11, 21-4, 33-5, 47, 71, 198, 209), թ. 10-1, 22-3, 46-7, 70-1, 106-7 իրարից հեռացած. ընդմէջ թ. 181-2ի 1 թերթ կտրած-հանած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *2ա-181բ* [Մաշտոց]

– *1դ-ե* Կամաւն Աստուծոյ այս, ինչ որ կա ի Մաշքոցս – *Ա. Կանոն մկրտութիւն... Լ. Կանոն Իւղաբերից Աւե[տարանաց]:*

1. *2ա-13բ* [Ա.] Կանոն մկրտութիւն առնել – *Տէր Աստուած մեր, Աստուա՛ծ բարերար...*

2. *13բ-20ա* [Բ.] Կանոն պըսակ դն[ել]oյ – *Սաղմոս. Տէր ի զաւրութեան: Ընթերցուած ի Ծընընդոց. եւ ասաց Աստուած. Արասցուք մարդ ըստ պատկերի մերում...*

– *20ա-1ա* եւ յաւուր եւթներ<ր>որդի վերացուցանէ ճահճայ զթագն – *Սաղմոս. Ղխեսցէ սիրտ իմ զպատգամս բարի... Աւետարան ըստ Յովաննու. Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին ի Կանայ...*

3. *21բ-5ա* Գ. Կանոն հաղորդ տալոյ – *Աստեն զԱնբիծոն: Աւրհնութիւն. Ի նեղութեան: Շարական. Ի վերանալ յինէն... եւ ասէ զաղաւթս զայս. Տէր ամենայկալ, ամենագոյթ...*

4. *25բ-40բ* Դ. Կանոն համաւրէն ամենայն ննջեցելոց – *Աստեն սաղմոս. Երկինք պատմեն զփառս... [Ա]ղաւթք. Աստուած յաւիտենական, անըսկիզբն, անեղ...*

35բ գրչից, ստ. լս-ում՝ «Աշխարհաթաղ առնել եւ զեղկելի գրիչս |36ա| յիշել ի Տէր եւ Աստուած զնեզ յիշէ»:

5. *40բ-5ա* Ե. Եւ առաւաւտուն – *Երթան ի գերեզմանն եւ ասեն սաղմոս. Եղիցին ականջ ի խորոց: Պաւղոսի առաքելոյն ի Թէսաղոնիկէոց Թխ[թոյն]. [Ա]յլ մեք պարտիմք գոհանալ...*

6. *45ա-9բ* Զ. Կանոն եւթն աւուրն եւ ԺԵ. աւուրն, եւ ամսոյն, եւ տարէլրցացն – *Գան ի գերեզման ննջեցելոցն եւ ասեն սաղմոս. Եղիցի ականջաց... Ընթերցուած յեսայեա մարգարէէ. Այսպէս ասէ Տէր. Քաջալերացարո՛ւք եւ տեսէ՛ք...*

7. *49բ-58բ* Զ. Կանոն յորժամ տըղա վաղճանի – *Աստեն սաղմոս ԻԴ.՝ Աւ քեզ, Տէր, համբարձ[ի]: Աւ քեզ, Տէր, կարդացի... եւ ասէ զաղաւթս զայս. Սուրբ ես, Տէր Աստուած մեր...*

ա. *50բ-1ա* Ի վարդապետութեան սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ասացեալ է – *Եթէ մեք, որ կենդանիքս մնացեալ իցեմք...*

բ. *52բ-3ա* Ի վարդապետութեան սրբոյն Գրիգորի – *Ամենեքեան, որ տեսանիցեն զարդարն...*

գ. *53ա* Պատգամ այլուստ – *Արդ, երանելիք էք դուք, որ էքդ յարդարութեան...*

դ. *55ա* Պատգամ այլուստ – *Արդ եւ դուք մանկունք էք...*

8. *59ա-61ա* է. եւ ապա յերկրորդումն աւուր – *Գան ի գերեզմանն եւ ասեն սաղմոս. եղիցի անուն Տեառն աւրհնեալ յայս: Ընթերցուած յԱռակաց. Արդարն, եթէ հասցէ…*

9. *61բ-6ա* [Ը.] Կանոն ոգեհանգիստ առնելոյ – *Ասեն սաղմոս ի թիւ. երանի՛, որում թողութիւն… եւ ասէ զաղաւթս զայս. Տէ՛ր բարերար, որ դա[տա]ւորդ ես կենդանեաց…*

10. *66ա-8ա* Թ. Աւրհնութիւն հատի պատարագի – *Գոհանամք եւ փառաւորեմք զքեզ, Տէ՛ր Աստուած մեր…*

11. *68ա-74բ* Ժ. [Կ]անոն տեառնական աւրհնելոյ – *Ածեն զնուիրեալն ի դուռն եկեղեցոյն… եւ ասէ զաղաւթս զայս. Աւրհնեա՛լ ես, Տէ՛ր Աստուած ողորմութեամբ քո…*

12. *74բ-5ա* ԺԱ. Կանոն գառն աւրհնելոյ Ջատկի եւ Վարդավառի – *Ասի սաղմոս. Ջողջակէզս խոյոց… եւ ասէ զաղաւթս զայս. Տէ՛ր տաւնից եւ Աստուա՛ծ ամենայն ուխտից…*

13. *75ա-87ա* ԺԲ. [Կ]անոն Ջուր աւրհնելոյ – *Ընթերցուած ի Ջորրորդ Թագաւորութեան[ց]. եւ ասեն արք քաղաքին ցեղիսէէ…*

– *78բ-86բ* Աւրհնութիւն ջրոյ, զոր ասացեալ է Բարսղի Կեսարացու – *Աւրհնեալ ես, Տէ՛ր Աստուած ամենակալ յամենայնի, հզգաւր եւ սքանչելագործ…*

14. 87ա-96ա ԺԳ. Կանոն ապաշխարող առնելոյ – *Երթայ քահանայն ի դուռն եկեղեցոյն… Ընթերցուած յեսայեա մարգարէէ. Լուացարո՛ւք, սրբեցարո՛ւք…*

15. *96ա-104բ* ԺԴ. Կանոն Մեծի հինգշաբաթի զապաշխարողսն առնակել – *Ժողովին ի դուռն եկեղեցոյն եւ ասեն սաղմոս… Ընթերցուած յեսայեա մարգարէ[է]. Հոգի Տեառն ի վերայ իմ…*

– *99ա-100բ* եւ աղաւթ ապաշխարութեան, զոր ասացեալ է Բարսղի եպիսկոպոսի Կեսարու – *Տէ՛ր Աստուած՝ Հա՛յր ամենակալ, արարիչ երկնի եւ երկրի, որ յակնարկեալ…*

16. *105աբ* ԺԵ. Կանոն հանդերձեղէն, սպաս աւրհնելոյ – *Տանին յեկեղեցին, սարկաւագն ունելով ի վերայ բազկացն… եւ ասէ զաղաւթս զայս. Տէ՛ր Աստուած բարձրեալ, որ զգեցուցեր զեկեղեցի քո…*

17. *105բ-6ա* ԺԶ. Կանոն սկի եւ մաղրզման աւրհնել – *Տանին յեկեղեցին եւ լուանան նախ ջրով եւ ապա գինով… եւ ասեն զաղաւթս. Աւրհնեալ ես, Տէ՛ր Աստուած մեր, որ եառուր զնիւթս զայս…*

18. *106ա-8ա* ԺԷ. Կանոն նոռակերտ գիրք աւրհնելոյ – *Տանին յեկեղեցին եւ հանեն ի բեմբն… Ընթերցուածս յեսայեայ մարգարէէ. Իբրեւ զի գեղեցիկ են…*

19. *108ա-11ա* ԺԸ. Կանոն խաչալուայ առնելոյ – *Սաղմոս. Նշանեցաւ: Ընթերցուած ի Ջորրորդ Թագաւ[որութեանց]. եւ ասեն արք քաղաքին ցեղիսէէ…*

20. *111ա* ԺԹ. Կանոն խունկ աւրհնելոյ – *Ի վեր ուներ քահանայն եւ ասէ զաղաւթս զայս. Ամենակա՛լ Տէր, որ ընկալար…*

21. *111բ-4ա* [Ի.] Կանոն ձեռնադրութիւն առնել աւագ սարկաւագացն – *Սաղմոս ԺԹ.՝ Տէ՛ր, ով կացէ… եւ ասեն զաղաւթս զայս. Աստուածային եւ երկնաւոր շնորհքն, որ միշտ լնու ըզպետս…*

22. *114ա-7ա* ԺԹ. Կանոն զարմըտիս, սեռմանեաց եւ զշեղջ, եւ զիրննձան աւրհնելոյ – *Սաղմոս, կըցորդ. Հովիտք բազում ար[ասցեն]: Ընթերցուած յԱռակաց. Պատուեա՛ զՏէր ի քոյոց արդար վաստակոց…*

23. *117աբ* ԻԱ. Կանոն վասն երաշտի – *Սաղմոս. Աստուա՛ծ, ողորմեա… եւ ասէ զաղաւթս զայս. Տէ՛ր Աստուած, որ յաղագս առ քեզ…*

24. *117բ-8ա* ԻԱ., ԻԲ. Աղաւթք, որ պեղծ կերակուր կերեալ են – *Տէ՛ր Աստուած մեր, որ ի սուրբս հանգուցեալ ես…*

25. *118աբ* ԻԲ., ԻԳ. Աղաւթք, որ կերակուր միայն պղծի – *Տէ՛ր Աստուած մեր, որ գլխոյ առաքելոյն Պետրոսի…*

26. *118բ-9ա* ԻԴ. Աղաւթք ի վերայ երդմնայիւաց – *Աստուա՛ծ, որ զմարդոյ բնութիւն գիտես տակաւ…*

27. *119ա-31բ* Կանոն Մեծի հինգշաբաթի Ոտնալուային, ըստ ասաց Յիսուս, թէ. Աւրինակ մի եառու ձեզ: Ջոր առաեալ է տեառն եփրեմի Խորին Ասորոյ, զոր թարգմանեաց սուրբ դիտապետն Հայոց Մեծաց Գրիգորիոս – *Ի տասներորդ ժամու զկնի կատարման պատարագին ժողովին ի գաւիթս եկեղեցոյն… եւ ասէ եպիսկոպոսն զաղաւթս զայս. Փառաւորեմք զքեզ, Տէ՛ր մեր…*

28. *131բ-7ա* Քառոզ պատուիրանին, զոր բահանայն զեկուցանէ ժողովրդեանն նախան զսկիզբն ժողովրդեան – *Առեալ զԱւետարանն ի ձեռս իւր եւ կառկառեալ զբազուկս՝ կարդայ զաղաւթս զայս. Լուար[ո՛ւք] ինձ, որդեա՛կք իմ…*

29. *137ա-41բ* Կանոն նաւակատեաց եկեղեցոյ եւ զշարժեալ սեղան հաստատեն, որ պղծեալ է յանաւրինաց – *Մտանէ եպիսկոպոսն քահանայիւքն… եւ ասէ զայս զաղաւթս եպիսկոպոսն. Որ ընդունողդ ես աղաւթից ժողովրդեան…*

30. *141բ-51բ* Եւ այս է պղծեալ տաճարին – *Եւ ապա զհանդերձսն սրբութեան առաջի եդեալ ասեն սաղմոս ողբաձայն որպէս ի դիմաց եկեղեցոյն. Ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ, ըստ մեծի: Ընթերցուած յեսայիայ մարգարէէ. Հակառակորդքն մեր նեղեցին զմեզ…*

31. *151բ-66ա* Կանոն խաչ աւրհնելոյ – *Բերեն յեկեղեցին առաջի սուրբ սեղանոյն… Ընթերցուած յԱռակաց. Երանեալ է, որ եգիտ…*

Գրչից ստ. լս-ում՝ 153բ՝ «Խաչաւրհնեա: եւ զախմար գըրչակս |154ա| յիշել ի Տէր, եւ Աստուած զձեզ յիշէ», 163բ՝ «Խաչաւրհնէ: Ջեղկելի գրիչս յիշեա՛ |164ա| եւ Աստուած զձեզ յիշէ. ամէն»:

32. *166ա-81բ* [Աւետարանիւ Իւղաբերից, Բժշկութեան]

ա. *166ա-7բ* Իւղաբերից Աւետարան ըստ Մաթէոս[ի, ԻՀ. 1-20] – *Եւ յերեկոյի շաբաթուն, յորում լուսանայր միաշաբաթին…*

բ. *167բ-8բ* Աւետարան ըստ Մաթէոսի [ԺԸ. 21-31] – *Եւ ելեալ անտի Յիսուսի…*

168բ ստ. լս-ում գրչից՝ «Հանգըստեան Աւետարանն յԱշխարհա|169ա|թաղ գի՛տ, կարդա՛յ եւ զիս զեղկելիս յիշեա՛»:

գ. *168բ-70ա* Աւետարան ըստ Մարկոսի [ԺԸ. 42-ԺԹ. 8] – *Եւ իբրեւ երեկոյ եղեւ, քանզի ուրբաթ էր…*

դ. *170ա-1ա* Աւետարան Մարկոս [Ե. 21-34] – *Եւ իբրեւ անց Յիսուս միւսանգամ յայնկողմն…*

170բ ստ. լս-ում գրչից՝ «Ո՛վ եղբար, զՀանգըստեան յԱշխարհաթաղ կարդա՛յ, ման Աւետ[արա]ն»:

ե. *171ա-2ա* Աւետարան ըստ Ղուկաս[ու, ԻԳ. 50-ԻԳ. 12] – *Եւ ահա այր մի՝ անուն Յովսէփ…*

զ. *172ա-3ա* Աւետարան Բժշկութեան ըստ Ղուկասու [Ե. 17-26] – *Եւ [է]ղեւ ի միում յաւուրց…*

172բ ստ. լս-ում գրչից՝ «Ո՛վ հարազատ եղբարք իմ, զՀանգըստեան Աւետարան |173ա| ի յԱշխարհաթաղ գի՛տ ու կարդա՛յ, ման զի ԻԳ. (24) գլխոյն կայ, զում որ կամիս»:

է. *173ա-5ա* Աւետարան ըստ Յովհա[ննու, ԺԹ. 38-Ի. 18] – *Յետ այսորիկ աղաչեաց զՊեղատոս…*

ը. *175ա-6ա* Աւետարան ըստ Յոհաննու, Բժշկութեան [Դ. 43-54] – *Եւ յետ երկուց աւուրց ել անտի…*

թ. *176ա-81բ* Հանգիստ Յովհաննու առաքելոյ աւետարանչի – *[Է]ր ընդ եղբարսն…*

Տե՛ս Մայր Մաշտոց, հտ. Ա., Գիրք Ա., աշխ. Գէորգ Տէր-Վարդանեանի, Ս. Էջմիածին, 2012:

Բ. *183ա-212ա* [Գանձարան]

1. *183ա-6ա* Գանձ մեռելի ի Մանուէլէ ասացեալ («ՄԱՆՎԵԼԱՍ») – *Մինդ ի յէէն, Բանդ ի սկզբանէ… ա. 186ա-8ա Ողբ ննջեցելոցն – [Ո]՛վ քահանայք եւ վարդապետք աստուածաբան…*

2. *188ա-90բ* Գանձ Ծնընդեան *(«ՄԿՐՏԻՉ»)* – *Մաքուր եւ անբիծ սուրբ Աստուածածնին…*

3. *190բ-2բ* Գանձ Տեառնընդառաջին *(«ՄԿՐՏԻՉ»)* – *Միասնական Սուրբ Երրորդութիւն…*

4. *192բ-5ա* Գանձ Ծաղկազարդին *(«ՀԱՅՑԷ Ս»)* – *Համագոյական Հաւր սահման եւ Բան…*

5. *195ա-7բ* Գանձ Յարութեան («ՄԿՐՏԻՉ») – *Մեծապայծառ ձայն ուրախալի…*

6. *197բ-200ա* Գանձ Նոր կիրակէի («ԱԿԱՆ») – *Արդ, լուսաւորեա՛յ, արդ, փառաւորեա՛յ…*

7. *200ա-2ա* Գանձ Այլակերպութեան («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ ահեղ խորհուրդ մեզ յայտնեալ…*

8. *202ա-4ա* Գանձ սուրբ Աստուածածնին («ՄԿՐՏԻՉ») – *Մեծապայծառ հրաշակերտ վեհ էին…*

9. *204ա-7ա* Գանձ Սուրբ խաչին («ՄԿՐՏԻՉ») – *Մեծապայծառ ակըն պատուական…*

10. *207ա-9բ* Գանձ կիրակմտիցն ասա՛յ («ԳՐԻԳՈՐ») – *Գերամբարձ Աստուած, գովեալդ ի զաւրաց…*

11. *209բ-12ա* Գանձ հսկման գիշերոյ կիր[ակէի] («ԳՐԻԳՈՐԵ») – *Գերանճառ արփի…*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1բ Տըկարացեալ անձինս իմոյ, Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս, |1գ| աւգնեա՛ ինձ, Աստուա՛ծ Սուրբ Հոգի, եւ աջողեա՛ զսկսեալս ի բարի եւ յաւարտումն բարութեան հասո՛ւ եւ տո՛ւր զաւրութիւն:

31բ (ստ. լս.) Ո՛վ եղբայր, զեղկելի գրչակս |32ա| յիշեա՛, որ դառն մեղաւք խոցեալ կամ ի սատանայէ:

38բ (ստ. լս.) Տէր Յովանէս պանծալի / եւ ամենայն շնորհիւ ի լի / զգըրկո|39ա|ւնքս քեզ գրեցի, / մի՛ մոռանար զամմար գրիչս յաղաւթի:

48բ (աղերս՝ խորագրում) Շարական ննջեցելոց ասա՛յ եւ զիս յիշեա՛:

61ա Քրիստո՛ս Աստուած, սուրբ թաղմամբըդ եւ յարութեամբդ ողորմեա՛ ստացողի սուրբ գրոցս տէր Գրիգորիսի, եւ ծնողաց նորա Հազրպետի, եւ մաւր նորին Հրոեփսիմի. եւ ինձ՝ մեղապարտ գծողկանս Սարգսիս սարկաւագի, եւ Աստուած զձեզ յիշէ. ամէն:

123բ (ստ. լս.) Ա՛ւր, թէ լինէր բազում յանցանաց իմոց թողութիւն, |124ա| որ դառն խոցաւք խոցոտեալ եմ եւ վիրաւոր, կամ ի մեղաց իմոց, ո՛վ եղբայրք:

Տե՛ս ԺԸ. դ. յիշ-ի, Ա., էջ 520, Հմր 586.բ.:

134բ (ստ. լս.) Ա՛ւր, եղբա՛րք, զեղկելի գրչակս յիշեցէ՛ք, որ խիստ վիրաւոր կամ յաշխարհիս, որ չունիմ |135ա| ի յաշխարհէս ինձ աւգնական՝ ո՛չ հայրիկ, ՚ւ ո՛չ մարիկ, ՚ւ ոչ եղբայրիկ, ես միայն եմ մնացեալ, քան զթուփ ի դարն:

Տե՛ս ԺԸ. դ. յիշ-ի, Ա., էջ 520, Հմր 586.գ.:

150բ (ստ. լս.) Ո՛վ տէր Յովաննէս, եղբա՛յր բարի, / սրտիս ումեկ իմ սիրելի, / պայծառ ջահ անշիջելի, / |151ա| գեղ պատկերիդ ես ցանկայի / եւ աղաւթիցդ փափաքի, / որ զիս յիշես ի պատարագի: |151բ| Բոլոր սրտիս Տէր ողորմի, / քանզի մեղաւք շաղախեցի, / զհոգիս մաքուր |152ա| սեւացուցի, / դարձեալ ձայնեմ ողորմելի / եւ հառաչեմ արտասուալի:

Տե՛ս ԺԸ. դ. յիշ-ի, Ա., էջ 520, Հմր 586.դ.:

181բ Փա՛ռք անեղ արա[ր]չագործ աստուածութեանն, նախախնամող միաբան տէրութեանն՝ Հաւր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Ի թուականութեանըս հայոց ՊՂ. (1441) եղեւ զրաւ գըրչութեան սուրբ եւ տիեզարալոյս եւ համապիտան գըրկունքս, որ կոչի Մաշքոց, ի գաւառըս Մաւրոկայ Սուրբ Նշանին եւ ի գեղակս, որ կոչի /// (1 թերթ կտրած): |182ա| Եւ վասն անբարի եւ դառն ժամանակիս, յորում եմք, չէ բնաւ կարողութիւն պատ-

մել կամ ընդ գրով արկանել, յորում ազգըս մեր <ազգըս մեր> քրիստոնէից էին ի նեղութիւն երեքալեան թըշըուառութեամբ եւ հարկպահանջութեամբ, եւ այլ ազգի ազգի վըշտաւք եւ նեղութեամբ՝ վասն բազմանալոյ անաւրինաց: Վա՛ մեզ եւ դարձեալ վա՛ մեզ, զի կատարեցաւ մարգարէութիւն հոգէլից առն Աստուծոյ սրբոյն Ներսէսի, *որ վասն քրիստոնէից, թէ՝ Յամենայն կողմանց նեղին, եւ փոխին տեղոջէ ի տեղիս եւ հանգիստ ոչ գտանեն, եւ վասն մարդադէմ եւ դառնայթոյն գազանաց ազգին նետողաց: Ահայ կատարեցաւ ամենայն, զի ասեմք լերանց, թէ՝ Ծածկեցէ՛ք զմեզ, եւ բլրոց, թէ՝ Անկերո՛ւք ի վերայ մեր. վասն սաստիկ նեղութեանս եւ վասն կարի անբարի ժամանակիս. այս բա՛ւ լիցի ձեզ: |182բ| Եւ դարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ սուրբ ընթերցողք, յիշեցէ՛ք զանարժան գրիչս՝* զՍարգիս *սարկաւագն, եւ զկենակիցն իմ՝* զԳայիանէն, *եւ Աստուած յիշէ զձեզ. ամէն: Եւ դարձեալ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցս, առհասարակ, ողորմեացի Քրիստոս Աստուած. ամէն:*

Տե՛ս ԺԵ. դ. յիշ-f, Ա., էջ 519-520, Հմր 586.ա.:

188ա Զմեղաւոր եւ զանարժան գըծողակ զՍարգիս *երեց յիշեա՛յ ի Տէր, եւ Աստուած զձեզ յիշէ:*

Տե՛ս նաեւ՝ 35բ, 153բ, 163բ, 168բ ծնթ-ներ:

212բ Փա՛ռք ամենայսուրբ երրորդութեանն եւ անեղ արարչագործ աստուածութեան, նախախնամող միասնական Սուրբ երրորդութեանն՝ Հաւր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգւոյն, յաւիտեանս յաւիտենից. ամէն: Ի թվականութեանս հայոց ՊՂԸ. (1449) եղեւ զրաւ գրչութեան սուրբ եւ տիեզերայլոյս եւ համապիտան գըրկունքս, որ կոչի Մաշ[ո]ց, ի մայրաքաղաքս Եզընկայի, *ի դուռն* Սուրբ Աստուածածնին *եւ* Սուրբ Կարապետին, *եւ այլ բազմահաւաք սրբոցս, որք աստ կան ժողովեալ, |213ա| եւ ի թագաւորութեանս բարբարոսաց եւ ի կաթողիկոսութեանս Հայոց տէր* Գրիգորի, *եւ յառաջնորդութեան եւ վերայտեսչութեան գաւառիս տէր* Ներսէսի *արհիեպիսկոպոսի: Արդ, ստացաւ զսա բարեմիտ եւ հեզահոգի, ընտիր եւ պարծանք, տեսականաւն եւ գործականաւն բարեգաւաճեալ /// (5,5 տող բաց՝ չգրած): Արդ, ես՝ ողորմելիս եւ տարտամս, ի սրտէ խոցեալ եւ մեղաւք զառածեալս, ազգի ազգի մեղաւք լցեալս, |213բ| զանարժան գրիչս՝* զՍարգիս *երէցս, եւ զծնաւղսն մեր՝* զՄեսրոպ *քահանայն, եւ զմայրն իմ* զՄանանիա*թուհի, եւ զբարի խրատատուքն մեր՝ զտէր* Յակոբ *ճգնաւորն եւ* զԿարապետ *քահանայ* Վանեցին, *զգրիկս ծանուցեր է մեզ փոքր ի շատէ. Տէր Աստուած զիւր երկնից արքայութիւնն պատրաստէ իւրոց հոգւոյն:*

[Ա]րդ, ես յերես անկեալ աղաչեմ զամենեսեան, որ հանդիպիք այսմ տառի կարդալով կամ տեսանելով, կամ աւրին[ակ]ելով, յիշեսջիք յարժանաւոր յաղաւթս ձեր եւ սըղալանաց, եւ խոշորութեան, եւ անարհեստութեան մի՛ մեղադրէք, քանզի կար մեր այս է, եւ ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցըս Քրիստոս Աստուած առհասարակ ողորմեացի:

Տե՛ս ԺԵ. դ. յիշ-f, Ա., էջ 639-640, Հմր 715:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *1բ (1746 թ., անարուեստ նոտրգիր) Յիշատակ է այս Մաշտոցըս* Կարապիցի Օվանէսի *որդի* Նիկողոսին: *Գրեցաւ թվին ՌՃՂԵ.ին (1746), Յուլիսի առաջի օրն:*

2. *1ա (1760 թ., նոտրգիր) Թվին ՌՃՄ. (1760), Յուն[իսի] Ժ.[ին] ///յաշուն, արէքագըն /// է/// իբրեւ գիշէր, մուխ[ը]ն:*

1ա Թվին ՌՃՄ.ին (1760), Յունիսի Ժ.[ին] (՞), անչափ սէլ եկաւ, շատ տեղ [ա]փրէց, շատ տուն քաքէց, /// քշէց:


3. *1գ (1901 թ., շղագիր) Նուիրեց զայս գրչեա Մաշտոցն* Խաչիկ *վարդապետն* Դատեանց՝ *գործակալ* Շառուրի Կ. *քահանայ* Շահնազարեանց, *ի 8 Ապրիլի 1901 ամի,* Գուլիա-Նորպեն:

ՆՇՈՒՄ՝ *պտոկ-պհպ. Աա «1069/3556», 1ա «ՊՂԸ. — 1449 Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս», 154ա, 212բ շղագիր՝ «Միասակ Մրկալեան՞»:*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *1ա՝ «զոր», 181բ՝ մատիտով տարեթուի հաշուում՝ «1346 890/456 տարի», 213ա՝ «յիշատակ իւր եւ»:*

3557
ԱԻԵՏԱՐԱՆ

ՋԽՁ. — 1497



Նմուշ 162ա

ԹԵՐԹ՝ 292: ՊՐԱԿ՝ Ա-Զ×12 (Գ-Դ, Ջ, Ը 11, Զ 8). համարեռն այբուբենի կարգով են՝ Ա-Զ=Իե. պրակ: ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18×12,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (13,8×9): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 162ա): ՏՈՂ՝ 20: ԿԱՋՄ՝ մուգ շագանակագոյն կաշի. միջուկը՝ տախտակ. աստառը՝ կարմիր մետաքս: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԴ. չգրուած մագաղաթ (ԲԳ), դեղնատուն չգրուած թուղթ (Ա, Դ):

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Մատթէոս՝ 2բ, Մարկոս՝ 80բ, Ղուկաս՝ 131բ, Յովհաննէս եւ Պռոխորոն՝ 220բ: Կիսախոռաձ՝ 3ա (Բարեխօսութիւն), 81ա, 132ա, 221ա: Լուսանցազարդ՝ բուսական, բուսաթռչնային, տաճար, բուսական, վրան՝ խաչ, ծառ՝ 199ա: Ձարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, նարնջի, շագանակագոյն, սեւ:

Տե՛ս ԺԵ. դ. յիշ-f, Ա., էջ 24-25, Հ՝ր 21: Ձեռագրիս մասին տե՛ս Թ. Մինասեան, Արցախի գրչութեան կենտրոնները, Երեւան, 2015, էջ 37:

ՆՇՈՒՄ՝ *1ա՝ սեւով «ՊԾԱ – 1402. Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»:*


ԳՐՋԱՓՈՐՁ՝ *պտակ-պհպ Բբ՝ «հոգեւ», Դբ՝ «Ջանուն Աստուծոյ»:*

ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *108բ՝ մատիտով՝ վերջնագարդ՝ խաչ, ներքեւում՝ բուսական ոճաւորմամբ:*

3579
ԲԺՇԿԱՐԱՆ

ԺԸ. դար

ԹԵՐԹ՝ 154 (գրչի էջակալում՝ 3-315, որ է՝ 1ա-154բ). չգրուած՝ 36ա, 37բ, 128բ-30ա, 131բ-5ա, 136ա-41բ, 142ա-54բ: **ՊՐԱԿ՝** 1-6՝ խառն (1, 3՝ 26, 2՝ 32, 4՝ 30, 5՝ 25, 6՝ 15): **ՆԻՒԹ՝** թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ թագով պսակուած շեղանկիւն ողկոյզ, լատ. «R&R»: **ՄԵԶՈՒԹԻՒՆ՝** 21×15,5: **ԳՐՈՒԹԻՒՆ՝** միասիւն, սեւով սահմանագծուած (17,5×10,3. ստ. լս.՝ յիշագրեր): **ԳԻՐ՝** նոտրգիր (նմուշ՝ 26ա): **ՏՈՂ՝** 21-48. գծումներ՝ ճնշումով: **ԿԱՋՄ՝** անհարթ մակերեսով կապոյտ մոմլաթ. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ դեղին չգրուած թուղթ: **ՊԱՀՊԱՆԱԿ՝** ԱԲ+ԳԴ՝ դեղին չգրուած թուղթ, մասն կազմաստառի:



Նմուշ 26ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած, վերակազմուած 1970ական թթ., որոշ հիմերը՝ նորոգուած սպիտակ չգրուած, իսկ եզրերը՝ լրացուած-ամրացուած դեղին եւ դեղին կիսաթափանցիկ չգրուած թղթով. թերթերը՝ խոնաւացած, մասամբ խունացած, տեղ-տեղ թանաքը՝ թափուած, լղոզուած, արտատպուած հանդիպակաց էջերին (1ա, 17բ, 127բ-8ա եւլն), նախկին կպումները կոպիտ անջատած եւ թերթերը վնասած՝ 52բ-3ա, 123բ-4ա. եզրահատած, որի հետեւանքով պրակներն անհաւասար, որոշ յիշագրեր՝ կտրուած (100բ, 101բ, 102բ եւլն). սկ-ից՝ թ. 1ից առաջ, 1-2 թ.՝ գուցէ ընկած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-37ա* [Բժշկարան]

1. *1ա-2ա* Գլուխ 3. Յառաջին՝ գրեմք զեղանակ դեղոց հաւաքելոյն – *Եւ գիտացի՛ր, եղբա՛յր, որ զինչ աշխարհս դեղ կայ, Գ. ցեղ են…*

2. *2ա-17ա* Գլուխ 4. Հաղագս բնութեան մարդկան, թէ որպէս արարչագործեցաւ յԱրարչէն իւրեանց – *Վասն զի ի չորից նիւթոց ասի գոյացեալ մարդ՝ հող եւ ջուր, եւ հով, եւ հուր…*

3. *17ա-9բ* Գլուխ 5. Վասն կերպին – *[Հարց]. Եւ կերպարանքը նայել տէ եւ ճանաչէլ պարտ է բըժշկին: Պատասխանի. Աչաց նայիլն, եւ ի ձեռաց շարժիլն, եւ ոտից գնալն…*

4. *19բ-20ա* Գլուխ 6. Նշան հիւանդին – *Յորժամ հիւանդը երթաս, առաջ աջ ձեռքը բռնէ…*

5. *20ա-1ա* Գլուխ 7. Հիւանդին առաջի օրն կամ Գ.ն կամ Է.ն կամ Թ. կամ… – *ԵՒս օրերս, որ պառկած է, դարձնէ զէտ մաղց, մահու է…*

6. *21աբ* Գլուխ 8. Տե՛ս զգոզն, թէ իստակ եւ կարմիր

լինի – *Խտակութիւն ի չորութենէ է եւ կարմիրութիւն ի տաքութենէ է…*

7. *21բ-2բ* Գլուխ 9. Դարձեալ գամֆ ի հոտն – *Ծօզ կա, որ հօտն մեղրահօտ գայ…*

8. *22բ-5ա* Գլուխ 10 – *Զգոյնն կարուրային Ր. ցեղ է. Ա.ն՝ ջրի նման ճերմակ, Բ.-ն՝ քիչ մը դեղին…*

9. *25աբ* Գլուխ 11. Ղիւամ զգոզին այս է – *Որ թանձ̲րութիւնը Գ. ցեղ է. Ա. թանձր է, Ա. նօսր է…*

10. *25բ* Գլուխ 12. Եւ յորժամ ֆոզին առաջն իտակ եւ պայծառ լինի – *Յորժամ պահ մը կենա, այնպէս գուշակե̲, որ այլ հիւանդութիւն պիտի քա…*

11. *25բ-6ա* Գլուխ 13. Ըռուս(=ս)ուպ գոզին այս է – *Որ ի գօզին տակն կիջնու, կարուրային տակը կը նստի…*

12. *26աբ* Գլուխ 14. Սինային ասէ բաժանումն գոզին տղին եւ կտրիճին եւ ծերոցն – *Ջի տղին գոզն թանձրը լինի…*

13. *26բ* Գլուխ 15 – Ապուճահիրն ասե̲, թէ ի կարուրային մէջն, որպէս պախուրը երեւնա եղի նման, եւ իշուն…

14. *27ա* Գլուխ 16. Եւ ձոնալային, որ է ախպն հիւանտին – *Քան զամեն, աղէկ ախպն ան է, որ ոչ շատ պինդ լինի…*

15. *27բ* Գլուխ 17 – *Ասէ Ճալինոսն, թէ առաւել պարտ է բժշկին էրակը լաւ իմանա…*

16. *27բ* Գլուխ 18 – *Բայց զապուն մ[ար]դուն երակն օ̲ւժով լինի, քան զքէրէն…*

17. *27բ* Գլուխ 19 – *Յղի կնոջ երակն օ̲ւժով է…*

18. *28ա* Գլուխ 20 [Վասն ճանաչելոյ զերակն, որ է՝ նամզն] – *Ասէ իմաստունն Գալինոս, թէ մարդոյ բնութիւնը ճանաչելն առաջ երակն վկայ…*

19. *28ա* Գլուխ 21 – *Եւ պիտի որ Ր. մատդ հաւասար բռնես…*

20. *28աբ* Գլուխ 22. Ջմատդ ի վերայ երակին դնելը Գ. ձեղ է. – *Ա.՝ պինա̲, Ա.՝ միջակ, Ա.՝ կակուղ…*

21. *28բ-9ա* Գլուխ 23 – *Յորժամ բժիշկ կամի, որ երակ բռնէ, այսպէս խրատը պիտի որ կարդայ…*

22. *29աբ* Գլուխ 24 – *Եւ ձմեռն երակն խաղաղ է, քան զամառն…*

23. *29բ-30բ* Գլուխ 25. Յաղա̲ս վասն երակ առնելուն խրատն, զերէ առաւել պետկ է բժշկին, որ սօրվի եւ զախտութիւն չի հասէ – *Յառաջն զկէֆալին երակն յիշեմ…*

24. *30բ-1ա* Գլուխ 26. Երակ առնելու արվեստը աս է – *Որ յորժամ զկէֆալեն առնես եւ արուն չելնէ…*

25. *31ա* Գլուխ 27. Յորժամ երակն յօդել յօժարութեամբ եւ նօսրը լինի, եւ կարմիր լինի գունը – *Գիտացի՛ր, որ շերիան կտրեր է…*

26. *31աբ* Գլուխ 28 – *Երակ առնողն պիտի որ գիտնա զուժը եւ զօրութիւնը եւ զմարդուն տարիքն…*

27. *31բ-2ա* Գլուխ 29. Եւ թէ ի բազկին երակը օ̲ւտենաէ – *Դուն ի մէկալ բազկէն ա՛ռ եւ հանէ՛…*

28. *32ա-3ա* Գլուխ 30 – *Յիշեմք զվնասակար կերակուրն, թէ շահուրն ու անշահն որ պատրաստին…*

29. *33աբ* Գլուխ 31 – *Այլ եւ ասացին Բաբելոնի իմաստասէրքն, թէ̲ մարդս Դ. կազմ է եւ Դ. բաժին է…*

30. *33բ-4ա* Գլուխ 32. Ի Բագարատ բժշկապետը, զի մարդս Դ. կազմէ եւ Դ. բնութիւնը ըստ Դ. տարերաց եւ Դ. մաղցին եղանակը՝ դեղին մաղց, սեւ մաղց, արուն եւ պլղամն – *Արունին բնութիւնը տաք է…*

31. *34աբ* Գլուխ 33. Դարձեալ ասեմք զայս. Դ. մախցին բնութիւնը, թէ որն որ էւելնա, ինչ ցաւ ծնանի – *Թէ Ա. էւելնա, զայլքն պնդե̲ եւ ցաւ լինի…*

32. *34բ-5ա* Գլուխ 34. Եւ ասացինք զտարուն բնութեամբ զտարերացն եւ ասեմք, զի որ բնութիւնը նման է տարուն – *Յառաւօտէն մինչեւ ի ճաշք Դ. ժամն տաք է…*

Ծնթ. 1-32 միատոմները բաղուածաբար ընտրուած են Յովասափ Սեբաստացու եւ Բունիաթ Սեբաստացու խմբագրութիւններից եւ այլ բժշկագիտական նիւթերից. տե՛ս եւ հմմտ. Դոնարա Կարապետեան, Յովասափ Սեբաստացու «Բժշկարան ընտրեալ տարեական մախցի» բնագիտական երկը.– Բանբեր Մատենադարանի, 1986, հ՟ 15, էջ 288-316, բնագիրը՝ էջ 296-311, նաեւ՝ Ամիրտովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, խմբ. Պունիաթի Սեբաստացւոյ, աշխ.՝ Ստ. Մալխասեանցի, Երեւան, 1940, էջ 46-54, 68-75, 94-96. ձեռ. 2127, 154ա-9բ:

Բ. *38ա-68ա* (խոռագիրը՝ 35ա) Յայնուն Աստուծոյ, Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս եւ Սո՛ւրբ Հոգի, աղբե՛ր առատաբուխ, անհատաբար բխեալ ի անպատմելի, ամենաըստեղծարարի եւ հրաշագործ Հո̲րէ, որ տվեալ ես կարողութիւն եւ իմաստութիւն իմաստասիրաց, որ ընտրեալ են եւ իմացեալ շնորհո̲վ Հոգւոյն Սրբոյ ըստածումն դեղոց ի վերայ ամենայն ցաւի: Ի վերայ Այբէն մինչ ի Քէն կատարեալ գրած է ցանկով. Այբին վրա՝ աչացավի, Բէ վրա՝ բերանցաւի, Գե̲մին վրա՝ գլխացաւ եւ այլն այսպե̲ս մինչեւ ի Քէն դիւրեաւ գտանիցեն եւ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին եւ սուրբն Ղուկաս աւետարանիչին եւ սուրբն Պանդելեւն անարծաթ բժշկին եւ սուրբն Կոզմաս եւ Դամիեանոս իմաստուն եւ խօտաճարակ բժշկացն: Սոցին բարեխօսութեամբն յիշեցէ՛ք եւ զմեզ. ամէն

1. *38ա-9ա* Գլուխ 37. Ք̲եղ վասն ամենայն ցեղ աչացաւութեան. արունի, խոստուկի – *Ասաց Սողոմոն Իմաստունն, թէ̲ ա՛ռ զթուխին մայրն ու զծաղիկն… (ունի 1-39 դեղագիր):*

2. *39աբ* Գլուխ 38. Դեղ վասն անկեի ցաւի, անկեի ցաւուն եւ խոստուկին – *Զհաւկիթին դեղնուցին եղը հանէ՛ եւ անկեը լի՛ց… (ունի 1-4 դեղագիր):*

3. *39բ* Գլուխ 39. Վասն աղոացաւո դեղ – *Ա՛ռ սեւ ձուխ… (ունի 1-9 դեղագիր):*

4. *39բ-40ա* Գլուխ 40. եւ արծիվ ուտեցւոյ – *Արծիւ, որ երեսն ուռի... խմոր ջո՛ւր տուր թրթու... (ունի 1-3 դեղագիր)։*

5. *40ա* Գլուխ 41. Վասն արուն գնալու դեղեր. արուն գնալուն դեղ – *Թէ եայրիայէն է, զաճն էրէ՛ եւ ի վրա՛ն դիր... (ունի 1-7 դեղագիր)։*

6. *40ա* Գլուխ 42. Վասն աղիքի ախտելու դեղ – *Ա՛ռ զօղնուն աղիքը եւ զխնդմն քարն, սղկէ՛...*

7. *40ա* Գլուխ 43. Վասն Բենին վրայ. դեղ բերանցաւի՝ բորի եւ ֆերի, պէւասիլի եւ այլն – *Բերան, որ յաւիրի եւ ի վեր տա ի տաքութէննէ եւ խռչակն կախի եւ զանկիկն, ա՛ն նշայ ե. տրամ... (ունի 1-4 դեղագիր)։*

8. *40աբ* Գլուխ 44. Վասն դեղ բորի եւ ֆերի – *Բորի դեղն այս է. Ա՛ռ քեօլքեօւրտ, յինա... (ունի 1-7 դեղագիր)։*

9. *40բ* Գլուխ 45. Թեղ վասն պէւասիլի, որ է սունկ – *Պէւասիլն է. ցեղ է... ան շատախէ՛, զանհալ դըմակով, սուլօւեյնով պատրուք ըրէ՛... (ունի 1-7 դեղագիր)։*

10. *40բ-1ա* Գլուխ 46. Թեղ վասն Գեմին վրայ՝ գլխացաւի, գոյթութեան, գինիեն կտրելու... եւ այլն – *Գլուխ որ ցաւի, ա՛ռ պապունաճ... (ունի 1-11 դեղագիր)։*

11. *41աբ* Գլուխ 47. Թեղ վասն գոթութեան – *Գոթուխին, որ արգիլէ զոպոպին, աչին վրան պահէ, պատրաստի ի կերակրոց... (ունի 1-7 դեղագիր)։*

12. *41բ* Գլուխ 48. Վասն քեղ գինու, որ երեսն ուռենա եւ աչին եւ լինի սսխա – *Գինու թէ ուզես, որ կտրես, ա՛ռ ձուկն, ի լուանին լուսն գենէ՛... (ունի 1-6 դեղագիր)։*

13. *41բ-2ա* Գլուխ 49. Գոզկապին դեղերը այս է – *Գոզ որ կապի, սեխին, եւ խըեարին, եւ դըդմին կուտը <-կուտը> ծեծէ՛ եւ ըզկաթը հանէ՛... (ունի 1-6 դեղագիր)։*

14. *42ա* Գլուխ 50. Դեղեր ի վերա Դային՝ դեղնուութեան, դիւական ցաւոց – *Դեղնուութիւն. տե՛ս թէ քան գհիւանդութենէ առաջ էղեր է... հով դեղ տո՛ւր... (ունի 1-5 դեղագիր)։*

15. *42ա* Գլուխ 51 – *Մարդ որ դիւոտ լինի, այս դըլըորմը գրէ... (ունի 1 դեղագիր)։*

16. *42աբ* Գլուխ 52. Եչին վրան. դեղ եայրայի զինչ եւ իցէ։ Դեղ եարային – *Ա՛ռ (՞) շարմղուն, հաւկիթի դեղնուց, խառնէ՛... (ունի 1-8 դեղագիր)։*

17. *42բ* Գլուխ 53. Ջային վերայ՝ զախմի, զարկածի է դեղերը. զախմածի, ծեծածի, իննկածի – *Ա՛ռ մոմեա, արդար եղով խմցո՛ւր... (ունի 1-4 դեղագիր)։*

18. *42բ-3ա* Գլուխ 54. Էյին վրան. էլփիմէ ճեւի, էրեսի գունի, էրածի, էլունդի – *Էլփիման՝ հեւքը, որ ի թոքին... անոր կակօղ ուտելու պիտի... ա՛ռ զմատուտակն... (ունի 1-5 դեղագիր)։*

19. *43ա* Գլուխ 55. Եյթին վերայ դեղեր՝ վասն ըստամոքին եւ ըխտաւորին. ըխտաւորին դեղը – *Ա՛ռ զիշուն առաջի ըղունկը... (ունի 1-6 դեղագիր)։*

20. *43ա-5ա* Գլուխ 56. Վասն քեղ Թօյին վրա. թոֆայցաւի, թ///ծի, թմրութեան, թէրիպի եւ ամենայն ցեղ թէրեաֆ շինելու... – *Ա՛ռ Բ. տրամ փիճու խէժ... (ունի 1-21 դեղագիր)։*

21. *45աբ* Գլուխ 57. Ժէյին վրայ դեղ չի գա, բայց գրեմ զայն՝ ժահոկող եւ ըսպաննող դեղերն – *Աքուջուլէն ամենայն կենդանեաց ըսպաննող է, որ ագեւոր լինի... (ունի 1-9 դեղագիր)։*

22. *45բ* Գլուխ 58. Լիեօնին վրայ. դեղ լերդացաւի, լուծման շերպեթները – *Լէրդն իշխան է անձին... մեղրը եւ քացախ իրար խառնէ՛... (ունի 1-8 դեղագիր)։*

23. *45բ-8ա* Գլուխ 59. Լուծման շերպեթ, դեղէրն կարգաւ Խ. ցեղ – *Լուծման դեղերը, որ կը գրեմ... որ առանձին տան մարդուն ըմպել... (ունի 1-52 դեղագիր)։*

24. *48ա-9ա* Գլուխ 60. Վասն Խէին վրայ. դեղեր խուլունճի, խլի, խոցի, ամենայն ցեղ խեւութեան, խոչակի, խոռանալու, խումարի, խլի, խոստուկի։ Խուլունճի դեղ – *Ա՛ռ ըռավենտի չինի Ա. տրամ ու կէս... (ունի 1-34 դեղագիր)։*

25. *49աբ* Գլուխ 61. Ծային վրայ՝ ծըծացաւի, ծնկան ցաւի, ծարաւծի, ծաղկի եւ ֆութչին դեղերը։ Ծըծացաւի – *Ջբաղլային ալուրը շարմղէ՛... (ունի 1-13 դեղագիր)։*

26. *49բ-51բ* Գլուխ 62. Կենին վըրա՝ կողացաւի, կաւ ուտողի, կաթին կերակրի, կերցաւի, կոտրածի, կատղածի, կապածի։ Կողացաւ եւ կշտացաւն – *Թէ ձախ կուշտն է հովութեան... բայց ա՛ռ փիճու խէժ... (ունի 1-24 դեղագիր)։*

27. *51բ-2ա* Գլուխ 63. Հօյին վրայ՝ հազի, հեւքի, հեւրհունի, հայվայի եւ հապեր շինելու։ Հեւգի – *Ամէն օր Բ. տրամ փիճու խէժ ի մալէզն խառնէ... (ունի 1-15 դեղագիր)։*

28. *52ա* Գլուխ 64. Վասն Ջային վրայ դեղ՝ ձուգուռեցի, ձանի, ձեռաց դողալու։ Ջուգուռեցի դեղ – *Բաղլային ալուրը քացախով տլէ ըրէ՛... (ունի 1-7 դեղագիր)։*

29. *52աբ* Գլուխ 65. Ղատին վրայ գրեմ՝ զղալիայ մուշկն, ղալիան ի մուշկին եւ ֆեայֆիրիյին... օգտէ ճով գլխացաւին եւ անկաճցաւին... – *Ա՛ռ սուք, մուշկ, քեայֆիրի.. (ունի 1-3 դեղագիր)։*

30. *52բ-3ա* Գլուխ 66. Ճէյին վրայ՝ ճուլապներ պիտանի եւ ընտիր, ամենայն ցաւոց դեղ։ Ճուլլապ ըսկիզբն եւ նիւթ ամենայն շերպեթներու, օգտէ կրծոցն եւ ըստամոքին, հազին... – *Ա՛ռ շեքեր Ճ. (100) տրամ... (ունի 1-7 դեղագիր)։*

31. *53ա-8բ* Գլուխ 67. Մենին վրայ՝ մուղլապներ, շերպեթներ, մաճուն ը[ն]տիր, մէրձաւորութիւնն յաւելցնելու ամենայն կողմանէ եւ պակասեցնելու, մազի, մջացաւի, մանի, մոջմնոցի, մսածի, մաշայցաւի, մախսկաթի, մախասի, մեհլեմներու։ Մուղլապ դեղերն. մօտ է բնութեամբ ճուլլապին... – *Ա՛ռ յուննապ,*

չիր սալոր, ըսպիտակ չամիչ Ժ. Ժ. տրամ... (ունի 1-89 դեղագիր)։

32. *58բ* Գլուխ 68. Վասն Յիին վրա՝ դեղ յուշ արբեցնալու։ Oւշ արբենալու, յանոթուց – *Ժ. տրամ նուշ կե՛ր... (ունի 1-3 դեղագիր)։*

33. *58բ-9բ* Գլուխ 69. Նույին վրայ՝ նիկրիսի, նիգի, նասուրի, նուզլայի դեղեր։ Նիկրիս ցաւուն... – *Մ՛ո ոչխարի ճրագու... (ունի 1-22 դեղագիր)։*

34. *59բ-61ա* Գլուխ 70. Վասն Շային վրայ՝ շտերու, շան խածածի, շարապներու։ Շրտեր եւ բշտեր, որ ելանէ ի մարդն... – *Մ՛ո գ՛հինան, շաղւէ... (ունի 1-22 դեղագիր)։*

35. *61աբ* Գլուխ 71. Վասն Ոյին վրայ՝ ուռեցի, ործկտայ, ոսկրացաւին եւ այլ նիկրիսի ոսկրացաւութեան։ Վասն ուռեցի, որ ի մարդն լինի – *Զկաղամբին հերն եփէ... (ունի 1-6 դեղագիր)։*

36. *61բ* Գլուխ 72. Զային վրայ գրեմ՝ չօգնելու եւ չի պատեղտրելու։ Զօգնելու – *Ազւխաուն եղն ոսվին եւ ի ծնկւին քսէ... (ունի 1-6 դեղագիր)։*

37. *61բ-2բ* Գլուխ 73. Պէյի վրան՝ պարչի խրատ, պահակին եւ պարասին թիրեաֆներն գըրած է ի Թօն, մաճուները՝ ի Մենն։ Պարչիսայ թիրեաֆն այս է՝ օգտէ աչիչ մթնալուն... – *Մ՛ո ֆլֆլ սեւ եւ սպիտակ... (ունի 1-14 դեղագիր)։*

38. *62բ-3ա* Գլուխ 74. Ո<ո>ային վրայ գրեմ. զօնին, խեցգետինին, կարճին եւ գորտին այրելն եւ մոխիրին խասլիեյթն – *Ասէ Ճալինոս, թէ՝ Մ՛ո գքարբի օձն... (ունի 1-3 դեղագիր)։*

39. *63ա* Գլուխ 75. Սէյին վրայ դեղ՝ սրտացաւի, սնկան, սըլաֆ մտածի մարդուն։ Սրտացաւի դեղերն կարդա՛յ, ի թիրեաֆներն, եւ ի մաճուններն, եւ ի շարապներն գրած է, բայց այս դեղս խիստ աղեկ է, որ սիրտն ցաւի, եւ խոստէ, եւ ի բերանն չուր գայ, զէտ փրփուր – *Մ՛ո կարմիր շէքեր Ժ. տրամ... (ունի 1-10 դեղագիր)։*

40. *63բ* Գլուխ 76. Վէվին վրայ՝ վարամ ցաւի, վառցաւի, վուշու խամրն համի որ խախցնէ։ Վարամ ցաւն ի մաղցէ լինի... – *Հաւն ճեղքէ՛ եւ վրան կապէ՛... (ունի 1-5 դեղագիր)։*

41. *63բ-5ա* Գլուխ 77. Տիունին վրայ՝ դեղ տըղի ամենայն դիմոռ։ Տղի դեղ – *Մ՛ո գալու լեղի... (ունի 1-35 դեղագիր)։*

65ա՝ վջ-ում գրչից՝ «Րէին վրայ դեղ գրելու չկայ»։

42. *65ա* Գլուխ 78. Յօին վրայ գրեմ զայն դեղերն, որ պատեղտրին զեն կու անէ, զտղան ձգել կու տայ։ Յգելու դեղ – *Տո՛ւր ե. տրամ չողան...*

– 65ա Իինին վըրա՝ հիւանդի – եապռոնն վերցնէ...

43. *65ա-6ա* Գլուխ 79. Փիւրին վերայ՝ փորցաւու եւ խոստուկի ի խէն է գրած, փորն որ երթայ, փորն որ կապի, փորն որ ուտենա, փածդան։ Դեղ փորցաւի – *Մ՛ո տուղտ Ժ. տրամ... (ունի 1-24 դեղագիր)։*

44. *66ա-7ա* Գլուխ 80. Քէյին վրայ՝ հանչլի, համու, հարի, հնու, հեռի, հոտիմի։ Քանչլին դեղն այս է – *Երբ վազեց լինի եւ դեղ մտիկ չանէ... ա՛ռ սինամէքի, պեսւայիճ, դեղին հալիլէ Բ. Բ. տրամ... (ունի 1-34 դեղագիր)։*

45. *67ա-8ա* Գլուխ 81. Ֆէյին վրայ՝ դեղեր ֆըրէնկ ցաւի, ֆըլտնայի։ Ֆըրէնկ ցաւու դեղ – *Այս ցաւս նմանի ի գէշ ցաւերն... ա՛ռ խոզու եղ Ժ. տրամ... 68ա Բաւ է՝ այբէն մինչեւ ի ֆէն եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն (ունի 1-20 դեղագիր)։*

Գ. *68ա-74բ* Յանկ գրոյս յանուն ամենայն սուրբ Աստուածածնին [Դուռմ վասն զանազան ցաւոց]

1. *68աբ* Գլուխ 82. Դուռն, որ յիշէ ըզտղայոց սնունդն եւ զիւրեանց ցաւոց ըստածումն։ Վասն առաջն յիշեմ զպորտն, թէ ինչպես կու կտրեն եւ կպատեն, կը աճըռեն եւ կմարձեն – *Հօրժամ տղան ի մօրէն բաժանի, յայնժամ Գ. մատեն էւելկեկ գպորտն չափէ՛ եւ կտրէ՛... (ունի 1-4 դուռ)։*

2. *68բ* Գլուխ 83. Վասն ամենայն ցաւու դեղ է այս դուռն։ Եւ որ յիշէ զտըղակըներուն հիւանդութիւն եւ զիւր ըստածումն – *Եւ ասեր է Բագարատն, թէ յառաջն զաղին ծծցնողն եւ զկաթն պիտի տեսնուլ, եւ յորժամ տղական լնտերն ուռի, մատովդ կամաց ի վայր կոխէ՛ եւ մանուշկի ձէթ, հոռոմ ձէթ, սամթի ձէթ մեղրով խառնէ՛ եւ օ՛ծ զտեղն... (ունի 1-10 դուռ)։*

3. *69ա-70բ* Գլուխ 84. Վասն բերնին ցաւուն, որ վեր տայ եւ այս – *Գ. ազգ է՝ Ա.ն կարմիր... կարմիրին մանուշակ եւ չոր վարդ ծէծէ՛... (ունի 1-54 դուռ)։*

4. *70բ-1ա* Գլուխ 85. Եւ այս բժշկարանս վասն կանանց ցաւոց, որ ի տղացկանութեանն պատահէ։ Վասն ծընընդականի, որ հանի պատեղտրի, սիրտն ու հովն ցաւի... փուշին արգիլի, եւ մայրն մեռանի – *Եփէ՛ գհուլպան եւ քամէ եւ մեղրով տո՛ւր... (ունի 1-7 դուռ)։*

5. *71բ* Գլուխ 86. Վասն ամուլ կնոջ – *Սողոմոն Իմաստունն դուստր մի ունէր, ԻԴ. (24) տարի տղա չէր բէրէր...*

6. *72ա-4ա* Գլուխ 87. Վասն տկճորին դնելու, որ է հոգնայ եւ ամենայն կատարեալ եւ յետ լուծման դեղերոց յիշենք զթէկպիր հոգնային, զոր յայերն գոեհիկ ասեն – *Իմացի՛ր, որ հօգնային դեղերն որպէս շաֆին է... (ունի 1-55 դուռ)։*

7. *74աբ* Գլուխ 88. Պատճառ հասկընալու համար զիասնըւած դեղերն ըզհիւանդն ըստածեն – *Եւ է, որ թիրեաքուֆիւն այլ առնէ ըզմահացու դեղոցն, ըզչարութիւնն խափանէ... (ունի 1-9 դուռ)։*

Դ. *75ա-94բ* Գլուխ 89. Վասն այլ դեղեր ի վերայ այբուբենի՝ հաղւած կարճառօտաբար (Ա-Ֆ) – *Անիսոնն տաք է եւ չոր, Բ. տարաճան ըզչարն տանի... Ֆրուղուտի լաւութ, թուրքերէն՝ էշեկ թիքենի... որպէս թառայի տակն համեն, փածդան պալղամի, խուլունճի լաւ է։*

Ծնթ. Տրուած են դեղանիւթերի հայերէն, պարսկերէն, թուրե-

ռէն տարբերակ-աճումներ, դրանց օգտագործման բանակի, փոխարինող դեղանիւթերի եւ այլնի վերաբերող տեղեկութիւններ: Բոլոր գլխահամարները եւ դեղագրերի համարակալումները գրչինն են. գլխահամարները դրուած են արաբ., իսկ դեղագրերի համարները՝ նրբն լս-ներում:

Ե. *95ա-111բ* [Պատմութիւնք յաղագս դեղաբուսոց եւ դեղանիւթոց]

1. *95ա-6ա* Պատմութիւն հայկաւուն – *Մինի մախթուն, որ է մատնէհար կաւն, ասէ Ճալալիոսի գիրքն, թէ այս կաւիս լիմնոս կաւ ասեն…*

2. *96աբ* Պատմութիւն երընջնային – *Երնջնան փշով խոտ է, թուրք[երէն] պուխայ թիքենի ասեն…*

3. *96բ-7բ* Պատմութիւն մարդատակին – *Եապրաւ հրլսանամ, որ է սարաճլ դուտրուպ…*

4. *97բ-9բ* Պատմութիւն լօշտակին – *Եւ այս լօշտակիս նշանն այս է. եւ է տերեւն իբրեւ գդըդում եւ ինքն ի սարմաշըխին ցեղէն է…*

5. *100ա-1ա* Պատմութիւն ճատւարին – *Ճատւար, որ է մահիփարւին, եւ ինքն թիրեաք է, ի Հինտիստան մենծ լեռ մի կա, իր անունն Ղարաճիլ ասեն… եւ՝ պակասաւոր ծառայ, գտի ի այն տեղւանքն եւ ի գործ շատ արկի, որպէս հնտի ճաւրն եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն:*

6. *101բ* Պատմութիւն վասն ճնտի տէպէշիրին – *Եւ գրոցս ասեր են, թէ հնտի տէպէշիրն եղեք է, որ Հնտկաց ծովն կու բուսնի…*

7. *101բ* Պատմութիւն վասն սըս[ր]ին, որ է հայկաւն – *Սուսրն հով է, զէտ սորա կապողն է, արիւն թքնելուն եւ լերդացաւին օգտէ…*

8. *101բ-2ա* Պատմութիւն վասն սապոին – *Սապոն սուսամի պէս խոտի քամուկ է…*

9. *102աբ* Պատմութիւն վասն աֆիեօնին – *Աֆիեօնն, որ է դալար խաշխաշին կաթն եւ հազրին…*

10. *102բ-3ա* Պատմութիւն վասն ֆարֆիեօնին – *Ֆարֆիեօնն ինքն խեժ է, որ անծարութ նըմանի եւ մէչն փոս խիստ սուր է…*

11. *103աբ* Եւ դեղ վասն եղին պատմութիւնն – *Եղն Դ. ցեղ կու լինի…*

12. *103բ-4ա* Պատմութիւն վասն մշկին, թէ ֆանի ցեղ է – *Մուշկն, որ իւրմէ լինի…*

13. *104աբ* Պատմութիւն վասն աղւխսու – *Եւ աղւեսուն յարապ սայլապ ասէ…*

14. *104բ-5ա* Պատմութիւն վասն աղաւնուն – *Եւ աղաւնուն յարապ համամ ասէ, միսն օգուտ է…*

15. *105ա* Պատմութիւն վասն սալորին, որ է դամոնն – *Դամոնին պարսնաճ ասէ, լաւն այն է, որ խոշոր, լի եւ քաղցր…*

16. *105աբ* Պատմութիւն վասն մըռտխակին – *Սահակն ասաց, թէ այն է, որ ի լերունքն լինի…*

17. *105բ* Պատմութիւն վասն աղբրանց արիւնին – *Ինքն ի յամանու կղզին լինի, կապող է, զարիւն թըքնուլն կտրէ…*

18. *105բ-6ա* Պատմութիւն վասն խնկին – *Խունկն, որ է լուպան, որ է քուտուրն, քուննուկն, իր ծառն ի յամանու եզերն է…*

19. *106ա* Պատմութիւն վասն ղոյինկոզուն – *Պապունաճն, որ է գետնի խնձորն, որ է ղօյինկօյզուն, օգտէ ամենայն հով գլխայցաւու…*

20. *106աբ* Պատմութիւն վասն ղուղուպաղուն – *Լիմաւիոնն՝ գառնալեզու, գառնագմակ…*

21. *106բ* Պատմութիւն վասն աղին – *Եւ ասէ Դէոսկորիդոս, թէ աղն կապող է…*

22. *106բ-7ա* Պատմութիւն վասն նէֆտին – *Ի կուռճիստան Ա. տեղ մի կա, ի ջրհորէն կելանէ…*

23. *107ա* Պատմութիւն վասն աղղաւհային – *Վայրի թարխօնին տակն է, զթուղութիւն տանի յանձնէն…*

24. *107ա* Պատմութիւն վասն պալասանին – *Պալասանն կրակն լնուն, չի երի, այւի կու ժողվըվի…*

25. *107աբ* Պատմութիւն վասն տարչինին – *Տարչինն զսիրտն ուժովցնէ…*

26. *107բ* Պատմութիւն վասն շեէրին – *Շեքերն կակղցնէ զբնութիւնն մարդուն, աչացն նոսր ըսպիտակութիւնն տանի…*

27. *107բ-8ա* Պատմութիւն վասն ծաթրինին – *Թէ զծաթրինն մեղրով սննցես եւ ամէն պառկելու ժամ Ա. մթխալ ուտէ…*

28. *108ա* Պատմութիւն վասն տորոնին – *Տորոնն, որ է ֆուֆան, որ է ղըզըլպօեան…*

29. *108ա* Պատմութիւն վասն ֆլֆուլին – *Ֆլֆուլն, որ ֆռանկ պիպեռ ասէ…*

30. *108աբ* Պատմութիւն վասն ֆաոսին – *Քաոսն, որ է նէխուրն, որ է ֆատրասալիոնն…*

31. *108բ* Պատմութիւն վասն ֆամունին – *Քամունն, որ է քինուն, որ է չամանն, որ է կանդանա…*

32. *108բ* Պատմութիւն վասն ֆուտիաթին – *Քուռաթն պար[սկերէն] կանդանա ասէ…*

33. *108բ-9ա* Պատմութիւն վասն ֆաֆուրին – *Քաֆուրն յայտնի է, որ Դ. ցեղ է…*

34. *109ա* Պատմութիւն վասն ֆէպապիեյին – *Քէպապիյեն զէտ ֆլֆուլի պէս հատկներ է…*

35. *109ա* Պատմութիւն վասն դեղին սուսամին – *Դեղին սուսամն, զոր քաքլիկ չիկտամի ասեն, ոմանք ղուզղուն ղըրըճի ասեն…*

36. *109աբ* Պատմութիւն վասն վայրի հազարին – *Վայրի հազարն ասեն, թէ զկաթն ի յաչքն կաթեցնես…*

37. *109բ* Պատմութիւն վասն մատուտակին – *Մատուտակն, որ է մարուխն, որ է տաթլըպօեան, հին հազին եւ թոքին եւ լերդին օգտէ…*

38. *109բ* Պատմութիւն վասն պախուրւ եղին –

Պախրու եղն տաք է եւ թիրեաք է, զթիւնաւոր օձին չարն տանի…

9. *109բ-10ա* Պատմութիւն վասն կօտիմին – *Կոտիմն, որ է թառան…*

40. *110ա* Պատմութիւն վասն սեխին – *Սեխն հով է, թէ սեխին կեղեւն եփես եւ տաս, օգտէ գոզարգիլին…*

41. *110ա* Պատմութիւն վասն սոյխին – *Սոխն պարսկ[երէն] փիազ ասէ, անկաճ որ ցաւի եւ ձայն հանէ, ա՛ռ սպիտակ սոխն, ծեծէ՛…*

42. *110աբ* Պատմութիւն վասն տղտին – *Տուղտն հով է եւ գիճային, թուր[քերէն] խաթմի ասէ…*

43. *110բ* Պատմութիւն վասն փրփըրեմին – *Փերփերն, որ է անմեռուկն, ամենայն ցաւու օգտէ, որ ի սաֆրայէ լինի…*

44. *110բ-1ա* Պատմութիւն վասն էֆդիմոնին – *Եֆդիմոնն, որ է գօճամորու…*

45. *111ա* Եւ յիշեմք զխարդահար խոտն, զոր Գրիգոր Աստուածաբանն գովէ ի գիրն…

46. *111բ* Եւ այս է մեկնութիւն Դիոնէսիոսի իմաստասիրի, որ ականատես եղեւ համասփիւռ ծաղկին, որ եւ բանալիք է ամենայն փակած բանի անոշահոտ <u>ք</u>ուրաստանաց – *Տերեւն կանանչ եւ բոլոր է…*

Ծնթ. Պատմութիւնների սկզբում հիմնականում ներկայացուած են տուեալ դեղանիւթի եւ դրա կիրառման, գանուելու վայրի մասին տեղեկութիւններ, նաեւ՝ այլալեզու տարբերակներ, ապա նշւում են հիւանդութիւնները, յետոյ՝ դեղանիւթերի կիրառութեան եւ այլ ցուցումներ:

Զ. *112ա-6բ* Վասն գործաւորութիւն դեղերոյս այս է. ԿԶ. – *Լատիֆ, որ է նուրբ, անոր ասեն, որ դեռ մեր բբնական տաքութիւն հանի մարդուն… զատեղ մանի, որ է սերմն պակասեցնող, այն դեղն, որ չոր լինի եւ տաք… զատեղ մանի, որ է սերմն պակասեցնող… եւ չորցնէ զէտ զաղուշբանկին հունտն եւ որ նման է սոցա: Գիտացի՛ր, որ այս է ԿԴ. գործաւորութիւն դեղօցն:*

Է. *117ա-128ա* [Դեղագիրք]

ա. *117ա-120բ Ամարիղալիս, որ է դեղին սուսամն… 117ա Ալավմալի, ինքն եղ մ՚է… 117աբ Ալիւր, որ է ալուրն… 117բ-8ա Աճաս, որ է դամոնն, որ է սալորն… 118ա Աճուր, որ է կղմինտրն… 118ա-9ա Այրաս, ինքն կապուտ սուսանին տակն է… 119ա Սակամոնին մահմուտիեյն է, ինքն բաղեղան տակին կաթն է… 119աբ Անճիտան, որ է սասալիոսն… 119բ-20ա Անֆայհայի արնապ, պար[սկերէն] փանի մայայի խարկօշ, հայ[երէն] լապտակի խախաց ասեն… 120ա Անֆահայի ֆարաս, որ է ձիուն խախացն (նաեւ՝ 120ա եղին խախացն… 120ա եղին, հորթուն խախացն… 120ա Ղղտուն կողերուն խախացն… 120ա Ղղտուն, ոչխրին, եղինն, վայրի ոչխրին խախացն… 120ա Արչուն խախացն…) 120ա Անֆահլ յօճլ, որ թուր[քերէն] բութուքիթ ասէ… 120աբ Անճիրայ, որ է ղարիոն, որ է սասարքիշտն, որ է կազնան, որ է եղիճին հունտն… 120բ Սալախըլ հայեայ, որ է օձուն խորխն…*

Ծնթ. Ամէն դեղանիւթից յետոյ տրուած են հիւանդութիւնների անուններ եւ դեղագրերը:

բ. *121ա-3բ* [Դեղագիրք զանազան ցաւոց]. *121ա Վասն ոտից <u>ձ</u>աւուն անբըժշկելի, դեղն աս է – Ա՛ռ զչորուն շեռն… 121ա Վասն աչաց, աչք, որ ըսպիտակ է – Ա՛ռ զծիծռան հաւկթին կճեպն… 121ա Հապ այեարիճն այս է – Ա՛ռ թուրպութ… 121ա Մաճուն հով ցաւու – էյիր ժ. տրամ… 121աբ Հապ ի լօխմանի, փորձած է – Ա՛ռ սօտ… 121բ Մաճուն դօւզլու պալղամի – Ա՛ռ զդեղին տերեւն… 122ա Տուզլու պալղամին այլ դեղ – Ա՛ռ շապեմէնի… 122ա Թիրեաք յառպային… 122ա Եախը ամենայցեղ ցաւոց օգտէ – Ա՛ռ խունկ ե. տրամ… 122ա Մաճուն խելաց թափելու… – Ա՛ռ ճէվիզ Զ. հատ… 122բ Վասն զնճուֆրին. շինելն այս է – Ա՛ռ ծծումբ… 122բ Ջռնխ Գ. ազգ է… 122բ Եղ ֆարֆիեօնի – Ա՛ռ փիճու խէժ… 122բ Սանտալօս եայղի այս է – Ա՛ռ Ա. բաժին մազտաքի… 123ա Ջէթ ֆարֆիօնի – Ա՛ռ զէյթ Մ. (200) տրամ… 123ա Այս է խուվեթ շարապին – Ա՛ռ Ա. օխայվայ… 123ա Ջախմածի եւ այլ ինչ ցեղ գլուխն ցաւ, զախմ լինի… – Ա՛ռ սապռ Գ. տրամ… 123բ Թէ մարդու փոր օձ մտնէ – կարմիր սոխն եփէ… 123բ Թէ կտրածին արունը որ չի դադա<դա>րի – Ա՛ռ գաւաթ մի քացախ… 123բ Մեհլէմ դեղին ամենայն խոցի – Ա՛ռ սապօն… 123բ Մէհլէմ ճերմակ – Ա՛ռ քիրշան… 123բ Մեհլէմ /// – ///թ մոմ ժ. ժ. տրամ… եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն:*

գ. *124ա-7բ* [Մաճուճ, հապ, մեհլէմ]. *124ա Մաճուն մուղավի – Ա՛ռ մեօր Սուլէյմանի… 124ա Մաճուն քուչէվէյի, որ օգտէ բէրնէն արուն երթալուն եւ այլ հով <u>ձ</u>աւերուն – Ա՛ռ քօչուվէ ճ. (100) տրամ… 124ա Մաճուն ճէվ[ար]իշի, որ օգտէ Հե. (75) ազգ <u>ձ</u>աւոց – Ա՛ռ մահմուտիեյ… 124բ Հապ լուծման, որ օգտէ պուխարին… – Ա՛ռ սեւ հալիլէ ժ. տրամ… 124բ Հապ լուծման, որ զպալղամ լուծէ… – Ա՛ռ չալափա ե. տրամ… 124բ Հապ լուծման, որ է կատարեալ շէրպէթ, օգտէ ամենայն ցաւու – Ա՛ռ մահմուտիեյ Դ. տրամ… 124բ-5ա Հապ լօւծման շատ օգտութիւն ունի – Ա՛ռ սեւ հալիլէ… 125ա Հապ պուխարի… աչքն սրացնէ եւ զմթութիւնն տանի… – Սապռ ժ. տրամ… 125ա Հապ էֆտիմօնի – Ա՛ռ էֆտիմօն… 125ա Հապ այեարիչի լուծող է, օգտէ պուխարի… – Ա՛ռ սէլիխա… 125բ Սուֆուֆ մուհդատիլ – Տառչին Գ. տրամ… 125բ Հապ ամպէր – Կուլի տառչին… 125բ Հապ ամպէր, որ խալի օգտէ – Աֆիեօն, միեանպալի… 125բ Հապ իսալի… – Ա՛ռ տիշիղասնի… 125բ Հապ դուզլու պալղամի – Ա՛ռ քառաչօփլեմէ… 125բ Հապ տուզլու պալղամի… – Դութուն, զոնխ, երկաթի քաք՝ ժ. ժ… 125բ-6ա Հապ ֆրանկ ցաւի – Ա՛ռ նիշատր… 126ա Հապ ֆրանկ ցաւու… – Ա՛ռ ճիվա խունկ… 126ա Հապ ֆրանկ ցաւի… – Ա՛ռ օյտօւլ զահր… 126ա Մեհլէմ ֆրանկ ցաւի… – Ա՛ռ*

դարանֆիլ... 126ա Տուզլու պալղամի, բորի մէհլէմ – Ա՛ռ մաղրպ սապօնի... 126ա էռքի մէհլէմ – Սուլումէն, ճիվա... 126ա Մոջմնոցի դեղ – Ա՛ռ գաֆռան... 126բ Մոջմնոցի – Ա՛ռ ճէնկեառ... 126բ Հապ մոջմնոցի – Մահմուտիէյ, սապո Գ. Գ. տրամ... 126բ Հապ լուծում, օգտէ աչացաւի... – Ա՛ռ չալափայ Բ. տրամ ու կէս... 126բ Հապ իսալի, որ օգտէ արուն գնալուն – Ա՛ռ ախպրանց արուն... 126բ Սուֆուֆ սափառնայի, շատ ցեղ ցաւու օգտէ – Ա՛ռ սափառնա... 126բ-7ա Սուֆուֆ ֆրանկ ցաւի – Ա՛ռ էմլաճ... 127ա Սուֆուֆ մէչաց պաղումթեաննն... – Ա՛ռ խունկ ե. տրամ... 127ա Մէչաց պաղումթեաննն դեղ – Ա՛ռ խաւունի կուտ... 127աբ Մէհլէմ բորի – Ա՛ռ շապեայմանի... 127բ – Մէհլէմ բորի Ա՛ռ Գ. օխա թազէ զիմմի եափռախ... 127բ Խալի սուֆուֆ – Ա՛ռ լէյլէկին խաթին... 127բ Նէրկ մազի – Ա՛ռ գիտոր կանանչ...

Ծնթ. Լս-ներում հետգ. նոտրգրով կան նշումներ, խորագրեր, իսկ շղագրով գրուած են կտրուած յիշագրերը (45ա, 52բ, 54ա, 56ա, 62բ, 81բ, 93ա, 97բ, 98բ, 102բ, 104ա, 110ա, 111ա):

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐՉԻ, ԺԸ. դ., նոտրգիր

1. *35բ* (լս.)՝ Գլուխ 35. եւ Դ. բաժին Դ. տարերաց օրինակ է – *Գլուխն՝ կրակն, ճիեյրն, սիրտն, փորն, աղիքն ջուր է...*

2. *36բ-7ա* (լս.)՝ Գլուխ 36. եւ պիտի որ մարդ կենդանակերպն նայի – *Մարդն աշխարհիս նման է. գլուխն երկնից, մարդն ի քաղաքի նման է... Գլուխն Գ. բաժին է. յառաջին՝ լուսուն երակն է... (37ա՝ մարդու կազմախօսական նկար. հմմտ. ձեռ. 414, 427ա):*

3. *128ա* [Դեղագիր] – *Դառչին տրամ, քարանֆիլ՝ Բ. տրամ ու կէս...*

4. *128ա* Մաճուն ընտիր – *Քարանֆիլ, տառչին տրամ ե. ե.... որպէս փայլուն ըսպիտակ լինի:*

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, ԺԹ. դ., շղագիր

1. *130բ* Սախըչ լեպլեպիյի շինելու թէրթիպ – *Առ նոհուտ, քիչ մը աղի ջուրի մէջ ձըքէ, որ համ տա, անլի չըլայ (այսչափ):*

2. *130բ* (ուղղանկիւն կանթանման ելուստով պատկերի մէջ) Աս տեսար սաճէ թավա մը ըրէ...

3. *131ա* (հայատառ թուրեերէն*, կաթից իւղ ստանալու բաղադրատոմս) Սիւտէն եաղ չըգարմագ – *8 օկա սիւտէն, 1 օկա եաղ չիգար... (8 օկա կաթից 1 օկա իւղ է դուրս գալիս. օկա – չափման միաւոր):*

* Ծնթ. Ընթերցումը եւ բացատրութիւնը՝ Ա. Ժ. Աւետիսեանի:

4. *135բ, 141բ* Յունարէնի այբուբենից արտածուած արհեստական գրեր:

ՆՇՈՒՄ՝ *պհպ. Ա՛ա (1962 թ., Մնիկ Եգանեան, շղագիր) «Ուշադրութիւն. Նախկինում սույն՝ Հմր 3579 տակ պահուող վրացերէն «Գիրք փիլիսոփայութեան» ձեռագիրը հանուեց հայկական ձեռագրական հաւաքածուից եւ մուծուեց Այլալեզու ձեռագրական հավաքածուի մէջ Հմր 79ի տակ: Փոխարէնը Հմր 3579ի տակ գրանցուեց երեւանաբնակ Յարութիւն Մելքոնի Յովհաննիսեանից նուէր ստացուած բժշկարանը: Ձեռագրատան գլխ[աւոր] պահորդ (ստորագրութիւն)՝ Ո[նիկ] Եգանեան, 22/I – 62 թ.»:*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *127բ՝ «ն» (8 անգամ), 134բ՝ թուաբանական հաշուարկ՝* «9689/2×29», *իրար տակ՝* «223×123×567× 913×722»:


3580
ՄԱՇՏՈՑ ՁԵՌԱՑ

ԹԵՂԱՍԵՌ (ԱՂՈՒԱՆԻՑ ԵՐԿԻՐ) ՌՁ. – 1631

ԳՐԻՉ՝ Բաղդասար դպիր: **ՍՏԱՑՈՂ՝** Շահսավար:

ԹԵՐԹ՝ 174+1 (կրկն.՝ թ. 80): **ՊՐԱԿ՝** Ա.-ԺԵ×12 (Ա. 11, ե, ԺԵ 10): **ՆԻՒԹ՝** թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ շրջանակ, վրան՝ 1 ծաղիկով ծաղկաման, մէջը՝ լատ. «FF», բուսական ոճաւորմամբ շրջանակ, մէջը՝ լատ. «FG», գաւաթ, վրան 2 ծաղիկ, որից վեր խաչով պսակուած թագ, բուսական նախշ: **ՄԵԾՈՒԹԻՒՆ՝** 19,2×14,7: **ԳՐՈՒԹԻՒՆ՝** երկսիւն, որոշ թերթեր սեւով սահմանագծուած (14,3×9,5): **ԳԻՐ՝** բոլորգիր (նմուշ՝ 147ա), որոշ սկզբնատողեր բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝ 31ա): **ՏՈՂ՝** 24. գծումներ՝ ճնշումով: **ԿԱՋՄ՝** շագանակագոյն դրոշմազարդ կաշի. միջուկը՝ տախտակ. Ա. աստառը՝ գրոտած սպիտակ թուղթ, Բ. աստառը՝ գրոտած մագաղաթ:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Կիսախոռան՝ 1ա: Ճակատազարդ՝ 10ա, 31ա, 49ա, 57ա, 69ա, 90բ, 113բ, 124ա, 129ա: Լուսանցազարդ՝ բուսական, բուսաթռչնային, յուշկապարիկ՝ 65ա, խաչ՝ 165բ: Զարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, կանաչ, դեղին, նարնջի:



Նմուշ 147ա



Նմուշ 31ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, ֆերծուած, տեղ-տեղ թափուած, յական կապիչներն ու փայտէ գամերն ընկած՝ պահպանուել են հիմմերը, վրան՝ ցեցի անցքեր, Բ. փեղկի առտ. եզրի կաշին պատռուած՝ երեւում է միջուկը. աստառները կեղտոտուած, գունափոխ, Ա. աստառին սպիտակ թերթիկի սոսնձման հետեւանքով գիրը ծածկուած՝ երեւում են անկապակից տառեր, իսկ Բ. աստառի գիրը ջնջած, կան թանաքի հետքեր. լուսանցակողերի կարմիրը թափուած, սեւացած. եզրերը տեղ-տեղ մաշուած, մանր պատռուածքներ (թ. 14, 35, 173-4 եկն). թերթերը խոնաւացած, դեղնած, վրան՝ կեղտաբծեր, թանաքաբծեր (17բ, 33բ-4ա, 38բ-9ա, 162բ-3ա եկն), ստ. առտ. անկիւններում՝ մատնահետքեր, ցեցի անցքեր (թ. 31-6, 64-88, 118-31 եկն), թանաքը տեղ-տեղ մասամբ թափուած (39բ, 61ա եկն), որոշ թերթերի եզրերի կան նախկին կպումների հետքեր (47բ-8ա, 49բ-50ա, 50բ-1ա եկն). թ. 23-4, 35-6, 47-8, 57-8, 69-70, 80-1, 104-5՝ իարից հեռացած, երեւում է հիմքը, որոշ թերթեր հիմքից մասամբ անջատ (թ. 36, 47-58, 69, 81, 92, 104-5 եկն). թ. 173՝ շերտազատուած, բ երեսի ստ. առտ. կէսը անկիւնաձեւ թափուած, թ. 134՝ ստ. առտ. անկիւնը լրացուած սպիտակ գրուած կարկատանթղթով, թ. 174ի բ. երեսին կապոյտ թուղթ սոսնձած, սրանիք հաւանաբար ԺԸ. դ. նորոգման հետեւանք են. տեղ-տեղ եզրահատած, որի հետեւանքով որոշ ստ. լս-ային գրեր կտրուած (24ա, 28ա եկն). թ. 47-8ի եւ 57-8ի միջեւ 1ական թ. ընկած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *1ա-10ա* (խորագիրը՝ ստ. լս-ում) Խաչ աւրհնել – *Ընթերցուած յԱռակաց. Երանելի է այր, որ էգիտ զիմաստութիւն…*

2. *10ա-8ա* Բ. Կանովն Ջուր աւրհնելոյ – *Առնուն խաչ եւ Աւետարան, եւ զսուրբ մեռոնն եւ այս կանովն կատարի. Սաղմոսըն. Ջայն Տեառն ի վերայ ջուրց… Ընթերցուած ի Ջորրորդ Թագաւորութեանցն. Եւ ասեն արք քաղաքին այնորիկ ցեղիսէէ…*

10բ ստ. լս-ում գրչից՝ «Ջրաւրհնէք: Ի մեղացէ սրբէի |11ա| եւ առ Աստուած մերձենայք եւ մտաւք զնա տեսնէք»:

– *12բ-7բ* Աղօթք սրբոյն Բարսղի Կեսարու եպիսկոպոս Կապադովկացոյց – *Աւրհնեալ ես, Տէր Աստուած ամենակալ ամենայնի, հզաւր եւ սքանչելագործ, որ արարեր զերկինս եւ զերկիր…*

3. *18ա-9բ* Գ. Կանովն խաչալուա առնել – *Եւ այս կանոն կատարի. Եւ ասեն արք քաղաքին: Պօղոսի առաքելո ի Գաղատացւոց թղթոյն. Այլ ինձ քաւ լիցի պարծել…*

4. *19բ-22բ* Կանոն աւազան աւրհնելոյ, որ ունի շնորհս փրկութեան աստուածային եւ շնորհս վերածնելոցն, վասն զի չէ կատարեալ յեկեղեցին, որ ոչ ունի ըզծնունդս յորովայնի – *Եւ արդ, այս է կարգն՝ հաստատեն զաւազանն ի տեղի իւրում եւ լուանան ջրով… [Աղօթք]. Տէր Աստուած մեծ եւ փառաւորեալ, ամենայն արարածոց…*

5. *22բ-30բ* Ե. Կանոն պղծել տաճարի եւ շարժել սեղանոյն – *Մտանէ եպիսկոպոս քահանաիւքն, սարակաւագունք՝ ժողովրդօքն եւ հրամայէ… եւ ասէ զաղօթս. Որ ընդունիչդ ես աղաւթից ժողովրդեան քո…*

6. *30բ-41բ* Զ. Կանովն կենդանաւար մկրտութեանն, յորժամ ութաւրեա լինի տղայն – *Տղայն տա, բեր ի դուռն եկեղեցոյն, եւ ասեն սաղմոս. Տո՛ւր զօրութիւն ծառայիս… եւ ասէ զաղաւթս. Տէր Աստուած մեր, Աստուա՛ծ բարերար, որ զվրիպեալս եւ զհեռացեալս…*

– *41աբ* եւ աւտուն ութերորդի – *Ասէ քահանայն զաղաւթս ի վերայ Մակարայն (=մանկտոյն) – Որք մկրտեցան եւ լուսաւորեցան…*

– *41բ* եւ զկնի է. ամաց – *Առեալ ածէ քահանայն զմանուկն ի դուռն…*

7. *41բ-5ա* Է. Կանոն նշան աւրհնել – *Պարտ է քահանային նախ ընտրել կանոնաւք զփեսայն եւ զհարսն, զի մի լիցին ազգակից… Ընթերցուած յԱռակաց. Որդեա՛կ, եթէ իմաստուն լիցի սիրտ քո…*

8. *45ա-9ա* Ը. Կանոն զհանդերձ հարսանեաց աւրհնել – *Բերեն առաջի քահանային, եւ ասէ շարական ԴՋ՝ Խաչանշան դրոշմամբ… Ընթերցուած յԱռակաց. Լուա՛ր, թագաւո՛ր, եւ ի մի՛ առէք… 47բ …մի՛ չար փոխանակ չարին հատուցանէք կամ /// (շար.) 48ա [Աղօթք]. /// եւ արդ, դու նոյն ինքն աւրհնեա՛ եւ սրբեա՛ եւ զփառս հանդերձից սոցա յաջողեա՛…*

9. ա. *49ա-54բ* Թ. Խրատ զգուշութեան, զոր տացէ հաճանայն հանդերձելոցն պսակ առնուլ կա[ն]խաւ, եւ դառնալ ի ժամ հարսանեացն եւ եթէ ոչ զգուշացուցանէ եւ ընթեռնու, իմն տացէ զվրէժս անձանց նոցա ի յաւուրն դատաստանին – *[Եւ] ասէ քահանայն. Ի՞նչ ասջի՛ք, որդեա՛կք, որ հանդերձեալ էք կապիլ ընդ միմեանս…*

49բ ստ. լս-ում գրչից՝ «Քարոզ վասն |50ա| պսակի»:

բ. *54բ-6բ* Ժ. եւ ապա ասեն զերգս աւրհնութեանն – *Ամենազաւր Տէր թագաւոր թագաւորաց / թագաւորիս մեր զգեցո՛յ հանդերձ փառաց… Սաղմոս. Աղաղակեցէք: Եւ մտանեն յեկեղեցին… եւ քահանայն ասէ զաղօթս. Տէր Աստուած յաւիտենական եւ զանզոյգ եւ զբացորոշեալս…*

գ. *57ա-65ա* ԺԱ. *Եւ ապա սաղմոս. Տէր ի զաւրութեան: Ընթերցուա[ծ] ի Ծնընդոց. Եւ ասաց Աստուած. Արասցուք մարդ ըստ պատկերի մերում… 57բ կամ այլ ինչ այսպիսեաց, այլ զի լի իցէ սուրբ եւ /// (շար.) /// 58ա Տէր հովւեսցէ: Քարոզ. Խնդրեսցուք: Եւ ասէ զաղաւթս. Տէր Աստուած մեր…*

61բ ստ. լս-ում գրչից՝ «Պսակին է |62ա| հարսանեաց»:

10. *65ա-6ա* ԺԲ. Կանոն պսակ վերացուցանելոյ – *Եւ յետ ութ աւուր երթա քահանայն եւ վերացուցանէ զպսակն... եւ ասէ զաղօթս. Տէ՛ր Աստուած մեր, յոր ամենայն ժամ ընդ մեզ ես...*

11. *66ա-8բ* ԺԳ. Կանոն հաղորդ տալոյ – *Առնու քահանայն գփրկական խորհուրդ պատարագին... եւ ասէ զաղօթս. Աւրհնեալ ես, Տէ՛ր Աստուած ամենակալ, արարի՛չ ամենայն արարածոց, որ արժանի արարեր...*

12. *69ա-83բ* ԺԴ. Կանոն զամենայն հաւատացեալս ննջեցեալսն ի Քրիստոս յաւղարկել – *Ասեն սաղմոս. Ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ... եւ ասէ զաղօթս. Աստուա՛ծ յաւիտենական, անսկիզբն, անեղ, անիմանալի...*

– *72բ-3ա* Եւ եթէ ապաշխարող ոք իցէ կամ ի սարգաւագաց – *Տանին ի դուռն եկեղեցոյն եւ ասեն սաղմոս. Երանելիք են... Պաւղոսի առաքելոյ ի Թեսողոն[իկեացւոց]. Ոչ կամիմ եղբարք...*

ա. *77բ-80բ* ԺԵ. Եւ ապա ասեն զգանձս կամ ֆարոզ («ՄԱՆՎԵԼՍ») – *Մինդ ի յէէն, / Բանդ, որ ի Հաւրէ... ’ւ ինձ բարեխաւս առ Տէր կացուցէ՛ք: Ողորմեաց:*

բ. *80բ-գ* Ողբ ազնիւ եթէ կամիս, ասա՛յ – *Եկայք այսաւր եղբայրք ամէն, / յԱբրահամեան շառաւեղէն... եւ փառս տամք երից անձինդ:*

13. *83բ-8ա* ԺԶ. Կանոն երկրորդ աւուրն – *Առօաւտուն գան ի գերեզմանն եւ ասեն սաղմոս. Ընդ երեկոյս... Պաւղոսի առաքելո ի Թեսողոն[իկեացւոց]. Այլ մեք պարտիմք գոհանալ...*

14. *88ա-90բ* ԺԷ. Կանովն է. աւուրն – *Երթան ի գերեզմանն եւ ասեն սաղմոս ճԱ.՝ Տէ՛ր, լո՛ւր աղօթից իմոց... Ընթերցուած յԻսայա մարգարէէ. Այսպէս ասէ Տէր. Գամ ժողովել զամենայն ազգս...*

15. *90բ-9ա* ԺԸ. Կանոն զամենայն վաղճանեալ տղայսն, որ ի Ժ. տարոյն ի վայր են, առ Քրիստոս յօղարկել – *Ասեն սաղմոս, գուբղայս Դ.՝ Առ քեզ, Տէ՛ր, համբարձի... եւ ասէ զաղօթս. Հա՛յր երկնաւոր, քաղցր եւ երկայնամիտ, բարեգութ եւ ողորմած, կեանք եւ կենդանացուցիչ...*

ա. *92բ-3ա* Սրբոյն Գրիգ[ո]րի ասացեալ – *Արդ, մեք, որ կենդանիքս մնացեալ եմք...*

բ. *94բ-5ա* Սրբոյն Գրիգորի ասացեալ – *Ամենեքեան, որ տեսանիցեն զարդարն...*

16. *99ա-101ա* ԺԹ. (ստ. լս.)՝ Այգոյն տղային – *Ի վաղւեան օրն՝ ընդ այգն, ընդ առաւօտն գան ի գերեզմանն... Ընթերցուած յԻսայեա մարգարէէ. Զի ի Տեառնէ եղիցի գարձ արդարոցն...*

17. *101ա-2բ* Ի. Եւթանն – *Սաղմոս. Երանի՛ բնակողաց: Ընթերցուած յԱռակաց. Արդարքն յաւիտենական կացցեն...*

18. *103ա-8բ* ԻԱ. Կանոն տեառնական աւրհնելո – *Ածեն զնուիրեալն ի դուռն եկեղեցոյն՝ առաջի սուրբ խաչին... եւ ապա ասէ զաղօթս. Աւրհնեալ ես, Տէ՛ր Աստուած ամենակալ, որ Տէրդ ես ուխտից...*

– *108աբ* Աւրհնութիւն աղի – *Սաղմոս. Աստուած, ողորմեա՛յ մեզ: Քարոզ. Խնդրեսցուք: Եւ ասէ զաղօթս. Աւրհնեալ ես, Տէ՛ր Աստուած ամենակա[լ]: Գրած է յՈգէհան[գիտան], գի՛տ եւ կարդա՛յ (այսչափ):*

19. *108բ-12բ* ԻԲ. Կանոն յոգէհանգիստ առնելո եւ պատարագ մեռելոյ – *Ասի սաղմոս. Երանի՛ որում թո[ղու[թիւն]... եւ ասէ զաղաւթս. Որ դատաւորդ ես կենդանեաց եւ մեռելոց...*

– *112բ* Աւրհնութիւն աղի – *Սաղմոս. Աստուած ողորմեայ... եւ ասէ զաղաւթս. Աւրհնեալ ես, Տէ՛ր Աստուած ամենակալ, արարի՛չ ամենայն արարածոց, որ արարեր զամենայն արարածս...*

20. *112բ-24ա* ԻԳ. Կանոն Ոտնալուաին, ըստ որում ասաց Յիսուս, թէ՝ Օրինակ մի ետու ձեզ: Զոր արարեալ սրբոյն Եփրեմի, որ թարգմանեաց սուրբ հայրապետն Հայոց Գրիգոր Վկայասէրն – *Զկնի սուրբ պատարագին ժողովին ի գաւիթ սուրբ եկեղեցոյն... եւ ասէ զաղօթս. Փառաւորեմք զքեզ, Տէ՛ր մեր Յիսուս Քրիստոս...*

Ստ. լս-ում գրչից՝ 114ա «Մեղխալուայ», 118ա «Մեղխալուա», «Մեղխայփիչ», 119ա «Մեղհասրբիչ», 121ա, 122ա «Մեղաց մաբրիչ»:

21. *124ա-9ա* ԻԴ. Քարոզ պատուիրանի, զոր [զ]եկուցանէ Քահանայն ժողովրդեանն – *Առեալ ի գիրկս զսուրբ Աւետարանն, կարկառեալ զձեռն իւր եւ ասէ. Լուարո՛ւք ինձ, որդեա՛կք իմ...*

22. *129ա-40ա* ԻԵ. Կանոն ապաշխարող առնակելոյ ի Մեծի հինգշաբաթին – *Յերեք ժամուն ժողովին ի դուռն եկեղեցոյն քահանայք եւ ապաշխարողքն... Ընթերցուած յԻսաեա մարգարէէ. Եւ կատարեսցին աւուրք սգոյ քո...*

Ստ. լս-ում գրչից՝ 131բ «Ապաշխարող |132ա| առնակել: Յիշեա՛ զմեզ, Տէ՛ր, Տէ՛ր», 136բ «Ապաշխարող |137ա| առնակել: Ծառայ եմ Յիսուսի Քրիստոսի»:

23. *140ա-50ա* ԻԶ. Մեծի հինգշաբաթի ժամատուն աւրհնել – *Սարկաւագն քարոզէ. Խնդրեսցուք: Եւ քահանայ ասէ զաղօթս. Աւրհնեալ է ամենաբաւ ողորմութիւն Սրբոյ Երրորդութեանն ի բարձունս...*

24. *150ա-2բ* ԻԷ. Կանոն զարմախս սեռմանցն, շեղջ եւ հնձան աւրհնել – *Սաղմոս, կցուրդ. Հովիտք բազում արասցեն ցորեան: Ընթերցուած յԱռակաց. Պատուեա՛ զՏէր ի քոյոց արդար վաս<ս>տակոց...*

25. *152բ-4բ* ԻԸ. Կանոն զնշխարս սրբոց ընդունել եւ փոխել ի հանգիստ – *Ասեն ի թիւ սաղմոս ճՂԴ.՝ Յիշեա՛, Տէ՛ր, զԴաւիթ... Ընթերցուած ի Զորրորդ Թագաւորութե[անց]. Եւ ելին ամենայն ծերքն Իսրայիղի...*

26. *154բ-5ա* ԻԹ. Կանոն յորժամ նոր դուռն դնեն ե-

կեղեցոյ – *Հաստատեն ի տեղոջ իւրում եւ ասեն սաղմոս ի ՃԻԵ ճԺե.... եւ եպիսկոպոսն ասէ զաղօթս. Տէր Աստուած արարիչ եւ յորդոր քոց արարածոց, որ ի սկզբանց իսկ տպաւորեցեր...*

27. *155աբ* Լ. Կանոն սկիհ եւ մաղզման աւրհնել – *Բերեն եկեղեցին եւ լուանան նախ ջրով եւ ապա գինով... եւ ասէ զաղաւթս. Աւրհնեալ ես, Տէր Աստուած մեր, որ եառուր մեզ գնիւթս...*

28. *155բ-6ա* ԼԱ. Կանոն հանդերձեղէն աւրհնել – *Տանին յեկեղեցին՝ առաջի բեմբին, ունելով սարկաւագունքն ի վեր... եւ ասէ զաղօթս. Տէր Աստուած բարձրեալ, որ զգեցուցեր զեկեղեցի քո...*

29. *156ա-7ա* Կանովն նորկերտ գիրգ աւրհնել – *Բերեն եկեղեցին եւ հանեն ի բեմբն... եւ ասէ զաղօթս. Աւրհնեալ ես, Տէր Աստուած մեր, որ եառուր մեզ զպատուիրանս քո...*

30. *157ա-8ա* ԼԳ. Կանովն ժամահար աւրհնել – *Բերեն եկեղ[ե]ցին եւ լուանան նախ ջրով եւ ապա գինով... եւ քահանայն ասէ զաղաւթս. Տէր Աստուած զաւրութեանց եւ արարի՛չ ամենայն արարածոց, զքեզ աւրհնեն...*

31. *158աբ* ԼԴ. Աղօթք վասն երաշտի – *Տէր Աստուած մեր, որ յաղագս քեզ նախանձուն լուար եղիայի մարգարէին...*

32. *158բ-9ա* ԼԵ. Աղօթք, որ պիղծ ինչ կերեալ իցէ – *Սուրբ ես, Տէր, եւ ի սուրբս հանգուցեալ...*

33. *159աբ* ԼԶ. Աղօթք, որ ի կերակուր միայն պղծի – *Տէր Աստուած մեր, զգլխոյ առ[ա]քելոյն Պետրոսի...*

34. *159բ* ԼԷ. Աղօթք վասն երդմնահարաց – *Տէր, որ զբնութիւն մարդոյ փոփոխական գիտես...*

35. *159բ-60բ* ԼԸ. Ուտաւհնէք Ծաղկազարդարին – *Ընկա՛լ գհաւատս յուսացելոցս ի քեզ, Աստուա՛ծ...*

36. *160բ-1ա* ԼԹ. Աղաւթք խունկ աւրհնելոյ – *Տէր Աստուած մեր, որ ընդունեցար զԱբէլի զընծայսն...*

Ծնթ. էջահամարներին յաջորդող գլխահամարները գոչինն են:

37. *161ա-71բ* [Աւետարանիչ Իւղաբերից, Պաշտաման, Բժշկութեան]

ա. *161ա-2ա* ԲԿ. Դ[Կ.] Աւետարան ըստ Մաթէոսի [ԻՀ. 1-20] – *Եւ յերեկոյի շաբաթուն, յորում լուսանայր միաշաբաթին...*

բ. *162ա-3ա* ԲՁ. ԴՁ. Աւետարան ըստ Մարկոսի [ԺԵ. 42-ԺՁ. 8] – *Եւ իբրեւ երեկոյ եղեւ, քանզի ուրբաթ էր...*

գ. *163ա-4ա* Աւետարան ըստ Ղուկասու [ԻԳ. 50-ԻԴ. 12] – *Եւ ահա այր մի՝ անուն Յովսէփ, որ էր նախարար...*

դ. *164ա-5բ* Աւետարան ըստ Յոհաննու [ԺԹ. 38-Ի. 18] – *Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս...*

ե. *165բ-7ա* ԲԿ. ԴԿ. Պաշտաման Աւետարան ըստ Մաթ[էոսի] [ԺԳ. 36-52] – *Յայնժամ թողեալ Յիսուսի զժողովուրդսն...*

զ. *167աբ* ԲՁ. ԴՁ. Աւետարան ըստ Մարկոսի [Դ. 26-34] – *Եւ ասէր. Այսպէս է արքայութիւն Աստուծոյ...*

է. *167բ-8բ* ԱԿ. ԳԿ. Աւետարան ըստ Ղուկասու [ԺԲ. 32-48] – *Մի՛ երկնչիր, հա՛ւտ փոքրիկ...*

ը. *168բ-9բ* ԱՁ. ԳՁ. Աւետարան ըստ Յոհաննու [Ե. 19-30] – *Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Ամէն, ամէն ասեմ ձեզ...*

թ. *169բ-70ա* Բժշկութիւն, Աւետարան Մաթէոսի [ԺԵ. 21-28] – *Եւ ելեալ անտի Յիսուսի գնաց...*

ժ. *170աբ* Բժշկութեան Աւետարան, Մարկոս [Ը. 22-26] – *Գան ի Բեդսաիդա եւ ածեն առաջի նորա կոյր մի...*

ժա. *170բ-1ա* Բժշկութեան Աւետարան, Ղուկաս [ԺԱ. 14-20, Մտթ. ԺԲ. 23-29] – *Եւ հանէր դեւ մի համր...*

ժբ. *171աբ* Բժշկութեանն Յոհան[նու] [Դ. 46-54] – *Եկն գարձեալ Յիսուս ի Կանայ Գալիլեացւոց...*

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, ԺԸ. դ., նոտրգիր

173ա-4ա Երդմնեցութիւն ընդդէմ յարուցեալ փայլատակմանց եւ կարկտի – *Քահանայն ունելով զխաչն ի ձեռն ասացէ՛ք. Նշանաւ սուրբ խաչին ընդդէմ թշնամեաց մերոց... զի ելանիցէք ի նոցանէ եւ զնոսա ի բաց փախուցանիցէք:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

28ա *(ստ. լս.) Վա՛ գրչիս, զի մեղաւոր է, զառացեա///:*

106բ (ստ. լս.) Վա՛ ինձ: / |107ա| Ձեռս գնա, գիրս մնայ, / |107բ| <ձեռս գնա, գիրս մնա> / |108ա| գծագրողիս, Տէրն ողորմեա:

111բ (ստ. լս.) Ձեռս փտի, գառնայ ի հող, / |112ա| գիրս մնայ յիշատակող:

172ա [Փ]ա՛ռք ամենայսուրբ երրորդութեանն՝ Հօր եւ Որդո եւ Հոգոյն Սրբոյ. ամէն: Արդ, գրեցաւ սուրբ գիրքս, որ կոչի Մաշտոց, որ յաղագս գործառնութեան քահանայից, որով կատարի սովաւ եւթն խորհուրդ եկեղեցոյ՝ սահմանեալ սուրբ հօրն մերոյ վարդապետին Մաշտոցայ, որոյ զանուն իւր ի վերայ գրոյս յորջորջեաց: Գրեցաւ սուրբ գիրքս ձեռամբ Բաղաասար դպրի ի յերկիրս Աղուանից, ի գաւառս Դիզակ, ի գիւղս Թեղասեռ, ի թվին հայոց ՌՁ. (1631), ի թագաւորութիւն Պարսից շահ Սաֆուն երրորդ ամի: Որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեցէ՛ք ի յերկնայաղօթս ձեր զտէր Մկրէնէք վարժապետն իմ եւ զգրիչ Բաղաասարս հանդերձ հարբ եւ մարբ, եւ եղբարն իմ, մանաւանդ ստաց[ող]ի սուրբ գրոյս (գրչափոխութեամբ գունատ թանաքով)՝ Շահսավար, կողակիցն Հիւրի, եղբայրն իմ Մոսէն, կողակիցն իմ Բէկի, որդին իմ Տալաթիար, Բրթոլ, Պարխուտար, իւր եղբայրորդին Պետրոս քահանայն: |172բ| Մանաւանդ Շահսավարին, հայր /// [Ա]ստամ, մայր իմ [Պա]ճալոյ եւ փոխեց[աւ] առ Քրիստոս, եառ եկեալ մայրն իմ Թափառուկ. (այլ ձեռքով)՝ ամէն:

Տե՛ս ԺԷ. դ. յիշ-ի, Բ., էջ 434-435, Հմր 628:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *172բ (1745 թ., անարուեստ նոտրգիր) Յիշայ-ցակ է այս Մաշտոցըս* Մէլիխէք՝ *որդի* Շահնազար, Ըսպադարըս, Ղահրիմանըս, Օսէփըս, Սարգիսըս, *յի-շեցէ՛ք եւ Աստուած [ո]ղորմի ասիցէք, եւ ասողըն ար-ժանի լնի սիրուն Քրիստոսի: Հար մեր, որ երգրինս: ես՝* Օսէփ *գրե[ց]ի: Շահնազարի որդին, որ ըլաւ թվին ՌՃՂԴ. (1745) էր: ես՝* Օսէփըս, *գրեցի (վջ-ում՝ վերջ-նազարդ):*

2. *171բ (1783 թ., նոտրգիր, արտք. լս.) Թվին ՌՄԼԲ. (1783), Մարտի ԺԹ., որ մեղապարտ [տէր]* Գրիգոր *Ջեռ-նայաւրվեցի ի Ջեռամբ* Աբրայհամ *աստուածայբան վար-դապետի, որ* Ջալեթու Թուխ Մանկան: *Աստուած ի վայելումն տացէ. ամէն:*

3. *171բ (նուիրատուի, 1791 թ., նոտրգիր) Թվին ՌՄԽ. (1791), Ապրիլի մէգին այս սուրբ Մաշ<ա>տոցս կերի էր անկեալ, որ ազատէց* Թիփլիզեցի *ողորմած Աս-տուածոյ հոգի նալպանդ* Մօսէսի *որքի եզչի* Սիսօն, *որ էլ յիշայտակ տվէց* Սուրբ Աստուածածնայ եկ[եղ]եցուն, *որ եւ յիշատակն բարի եղիցի, տէր* Գրիգորիս:

4. *172ա (ԺՀ. դ. բոլորգիր, ստ. լս.) Տրուբս քահա-նայից զ*Կիրակոս *յիշեա՛, ազի՛զ տէրտէր:*

5. *172բ (նորոգողի, ԺՀ. դ., բոլորգիր) Նորոգեցաւ այս սուրբ Մաշտոցս մատեամբս անարժան* Մարդանս *դպրի: Յիշեցէ՛ք, եւ Աստուած զձեզ յիշէ. ամէն: Հա՛յր մեր, որ երկինսդ ես:*

6. *1ա (գնողի, 1804 թ., նոտրգիր, ստ. լս.) Թվին ՌՄԾԴ.ումն (1804), Յունվարի մէկում ե<ե>ս՝* Ամրոլեցի *ողորմած հոգի* Առաքելի *որթի* Յարութունըս *առիմ այս սուրբ Մաշտոցըս:*

174բ /// [Յուն]վարի Ի.ումն ես՝ Ամրո[լեցի] /// *հոգի* Առաքելի *որթի [ա]նարժան եւ մէղայվոր* Յարութունըս, *առիմ այս սուրբ* Մաշտուցըս, *որ է իլի յիշայտակ: Ով որ կարթայ, մէկ բերան ասի Աստուած բանըն [ա]չօղի եւ յի-շի, յիշօղըն յիշեալ լինի առաջի Աստուծոյ: Աւելեցաւ ի քաղաքըն* Թիփլիզ:

Ձեռագրիս մասին տե՛ս Թ. Միմասեան, Արցախի գրչութեան կենտրոնները, Երեւան, 2015, էջ 43:

ՆՇՈՒՄ՝ *մէջքին սոսնձած սպիտակ թերթիկին՝ «Մաշ-տոց բոլորագիր ի թղթի թվ. ՌՋ – 1631)», սեւով՝ «1285», Ա. աստառին սոսնձած սպիտակ թերթիկին՝ «Մաշտոց, բոլորագիր, գրեալ ի հաստ թղթի.-«Ձեռամբ Բաղդասար դպրի ի յերկիրս Աղուանից ի գաւառս Դի-զակ, ի գիւղս Թեղասեռ, ի թվին հայոց ՌՋ. (1631) ի թա-գաւորութիւն Պարսից շահ Սաֆուն երրորդ ամի... յիշեցէ՛ք ի յերկնայաղօթս ձեր զտէր Մելքսէթ վարժա-պետն իմ», յիշատակարան ի վերջն թղ. 172ա Մատենա-դարանապետ Սահակ վ[արդապետ] Ամատունի, 22 Մայիսի, 1906», «ՌՋ.-1631. Մ[եսրոպ] եպ[իսկոպո[ս]», սեւով՝ «1285/3580»:*

ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *69բ՝ թուղթագիր «Ի», 151բ՝ բուսական լուսանցազարդ, 172բ՝ վերջնազարդ:*

ԳՐՁԱՓՈՐՁ՝ *24ա՝ «բարձրեալ տհաւոր Տէր աստուա-ծա», 24բ՝ «ա», 25ա՝ «աչա», 26բ՝ «ա», «աչ», 131ա՝ «ա» (6 անգամ), 150բ՝ «ի նուաստի», 157բ՝ «աաաաաց», 162բ՝ «ն» (տառագծեր):*


3581
ՄԱՇՏՈՑ ՁԵՌԱՑ

ԺԷ. դար (1671 թ. առաջ)


ԳՐԻՁ՝ Թումա երէց: ՄԵԿԵՆԱՍ՝ կոյս Գիչի: ՍՏԱՑՈՂ՝ Աստուածածին եկեղեցի:

ԹԵՐԹ՝ 100: ՊՐԱԿ՝ Ա.-Թ×12 (Ա. 11, Ը 10, Թ 7): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18,7×15: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն, սե-ւով սահմանագծուած (13,8×11,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 47ա), ոռոշ սկզբնատողեր՝ բոլորգիծ երկաթա-գիր (նմուշ՝ 62ա): ՏՈՂ՝ 19 (թ. 1-19), 22-29 (թ. 20-99). գծումներ՝ ճնշումով: ԿԱՋՄ՝ շագանակագոյն կաշի, մէջ-բը՝ կապոյտ կտաւ. միջուկը՝ տախտակ. Ա. աստառը՝ կարմիր ներկով սպիտակ եւ կանաչ դրոշմազարդ, Բ. աստառը՝ սպիտակ ներկով ասեղնագործ կտաւ: ՊԱՀ-ՊԱՆԱԿ՝ Ա+ԲԳ՝ դեղնաւուն չգրուած թուղթ:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Լս-ային՝ Քահանայ՝ 31բ, Յիսուս Քրիստոս՝ 71ա: Ճակատազարդ՝ 1ա, 20բ, 31բ, 83ա: Լուսանցազարդ՝ բուսական, բուսաթռչնային՝ 27ա, 96բ, վրան խաչ՝ 14բ, բուսական, վրան խաչ՝ 62ա, տաճար՝ 79բ: Ջարդագիր՝ թռչնագիր, հանգուցա-



Նմուշ 47ա



Նմուշ 62ա

գիր, մարդադէմ՝ 36բ, 79բ: Գոյներ՝ կարմիր, կանաչ, դեղին, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած 1950ական թթ., մէջ-բի կտաւը եւ պիպ-ները՝ նորոգման ժամանակի. կազ-

մի կաշին՝ մաշուած, վրան ցեցի անցքեր, սուր գործիքի հետքեր, անկիւնների եւ Ա. փեղկի ստ. եզրի կաշին թափուած՝ երեւում է միջուկը, 2ական կապիչներն ու գամերն ընկած՝ երեւում են անցքերը. աստառները մաշուած, վրան անցքեր, պիպ. Գ.՝ ստ. եզրը մի տեղից պատռուած. խոնաւութեան հետեւանքով թերթերը դեղնած, մասամբ խումացած, կապոյտ եւ սեւ թանաքի հետքերով (1ա, 3բ եւլն), ցեցի եւ այլ անցքեր (թ. 1-18, 46 եւլն), որոշ եզրեր ու հիմքեր ամրացուած նորոգման դեղին եւ դեղնաւուն, գրադաշտը՝ դեղին կիսաթափանցիկ չգրուած թղթով (թ. 1, 29-30, 96-100). թ. 23-4՝ իրարից հեռացած, երեւում է հիմքը, թ. 24-6, 31-4, 51-2, 55-6 եւլն՝ հիմքից մասամբ անջատ. եզրահատած, որոշ լս-զարդեր կտրուած (62ա, 71ա եւլն):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *1ա-14բ* [Կանոն մկրտութեան] – *Տէ՛ր Աստուած մեր, Աստուա՛ծ բարերար, որ զվիրիպեալս եւ զհեռացեալս…*

2. *14բ-6բ* Կանոն հանդերձ աւրհնելոյ *(«ԽԱՉԱՒԱՒ»)* – *Ասի շարական. խաչանիշ դրոշմամբ նըշանաւ պարագրական փառօք զարդարեալ…*

3. ա. *16բ-8բ* Աւրհնեալ է Աստուած: Փեսային եւ հարսին խրատ է եւ հարոզ, պարտ է, որ լսեն եւ զգուշանան յաւնացն Աստուծոյ – *Ո՛վ եղբայր իմ եւ որդի փեսա, եւ քո՛յր իմ…*

բ. *18բ-20բ* [Եւ ապա ասեն զերգս աւրհնութեանն. ձեռ. 3580, 54բ-6բ] Եւ ասեն ամենազօր ձայնիւ – *Ամենազո՛ր Տէր թագաւո՛ր [թագաւորաց] / թագաւորիս մեր ըզգեցոյ հանդերձ փառաց… եւ աւրհնութեամբն աստուածային միաւորին: Սաղմոս. Աղաղակեցէք… եւ տանի քահանայն զփեսայն եւ զհարսն առաջի բեմին… եւ ասէ քահանայն զաղօթս. Տէ՛ր Աստուած յաւիտենական, որ զանզոյգ եւ զբացորոշեալս զուգակցես…*

գ. *20բ-6բ* (խորագիրը՝ 21ա ստ. լս-ում) Պսակ – *Եւ ապայ սաղմոս. Տէր ի զօրութեան: Ընթերցուած ի Ծըն[ընդոց]. Եւ ասաց Աստուած. Արասցուք մարդ ըստ պատկերի մերում…*

Համմ. ձեռ. 3580, 49ա-65ա:

4. 26բ-7ա [Կանոն պսակ վերուցանելոյ] – *Իսկ ի վերացուցանել պսակին ասի սաղմոս ԺՀ.… եւ ասէ զաղաւթս. Տէ՛ր Աստուած ամենակալ, ի քէն աւրհնեցան պսակք ծառայի…*

5. 27ա-30բ Կանոն տեառնականի – *Ածեն զնուիրեալն ի դուռն եկեղեցոյն եւ առաջի խաչին դնեն կարմիր բուրդ… Ընթերցուած յՂեւտացոց. Եւ կոչեաց զՄովսէս Տէր եւ խաւսեցաւ…*

6. 30բ-1ա Աւրհնութիւն աղի – *Նախ ասի սաղմոս կՁ.՝ Աստուած մեր… եւ ասէ զաղօթս. Աւրհնեալ ես, Տէ՛ր Աստուած ամենակալ, արարի՛չ ամենայն արարածոց, որ արարեր…*

7. 31ար Աւրհնութիւն սեղանոյ տեառնականի – *Աւրհնեալ ես, Տէ՛ր Աստուած ամենակալ, Հա՛յր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ առիթ սիրոյ քո պատրաստեցեր մեզ…*

8. 31բ-42ա Կանոն Ջուր աւրհնելոյ յաւուր Յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի – *Առնուն քահանայքն զխաչն… Ընթերցուած ի Ջորրորդ Թագաւորութենէն. Եւ ասեն արք քաղաքին ցեղիսէ. Հհաւասիկ բնակութիւն քաղաքիս…*

– 34ա-41բ Աղօթք, զոր ասացեալ է տեառն Բարսղի Կեսարու Կապուդակացւոց – *Աւրհնեալ ես, Տէ՛ր Աստուած ամենակալ յամենայնի, հզաւր եւ սքանչելագործ, որ արարեր զերկինս…*

41ա ստ. լս-ում գրչից՝ «Ջուրաւրհնէք, եղբա՛յր»:

9. *42ա-5բ* Կանոն հաղորդ տալոյ – *Առնու քահանայն զմար[մ]ին եւ զարիւնն Տեառն… եւ ասէ զաղօթս. Տէ՛ր Աստուած ամենակալ, ամենագով, ամենախնամ, ծածկագիտող…*

10. *45բ-62ա* Կանոն համօրէն ամենայն ննջեցելոց թաղմամբ ի Քրիստոս յուղարկեն – *Ասեն գուբղայս Գ. եւ ողբաձայն. Ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ… Աղաւթք. Աստուա՛ծ յոյիտենական, անսկիզբն, անեղ, անիմանալի, անհասանելի խորհուրդս…*

51ա ստ. լս-ում գրչից՝ «Մեծաթաղումն»:

– *49բ-50ա* Ապայ եթէ ի դպրաց ոք իցէ կամ յապաշխարողաց – *Տանին ի դուռն եկեղեցոյն եւ ասեն ողբաձայն սաղմոս ՁԳ.… Պօղոսի առաքելոյ ի Թեսաղոնիկեցոց Թ[ղթոյն]. Ոչ կամիմ եղբարք…*

11. *62ա-6բ* Այգոյն – *Երթան ի գերեզման եւ ասեն զԱմբիծքն եւ ապայ սկսանին սաղմոս, կցուրդ. Ընդ երեկոյս… Պօղոսի Թեսաղոնիկեցոց Թ[ղթոյն] ընթերցուած. Այլ մեք պարտիմք գոհանալ…*

12. *66բ-71ա* Կանոն եաթներորդ աւուրն թաղման ննջեցելոց – *Երթան ի գերեզմանն եւ ասեն սաղմոս. Տէ՛ր Աստուած փրկութեան իմոյ: Ընթեր[ուած] յեսայեա մարգարէէ. Այսպէս ասէ Տէր. Գամ ժողովել զամենայն ազգս…*

13. *71ա-9բ* Կանոն յորժամ տղայ վաղչանի – *Եւ ասեն սաղմոս, գոբողայս Գ.՝ Առ քեզ, Տէ՛ր, համբարձի… եւ ասէ զաղօթս. Սուրբ ես, Տէ՛ր Աստուած մեր, որ բնակեալդ ես ի յերկինս…*

ա. *72աբ* Սրբոյն Գրիգորի ասացեալ զաղօթս – *Եթէ մեք, որ կենդանոյն մնացեալ իցեմք…*

բ. *74աբ* Ի վարդապետութենէ սրբոյն Գիրիգորի աս[ացեալ] – *Ամենեքեան, որ տեսանիցեն զարդարն, ճանաչիցեն…*

14. *79բ-81բ* եւ այգուցն – *երթան ի գերեզմանն եւ ասեն սաղմոս. եղիցի անուն Տեառն... Ընթերցուած յեսայեայ մարգարէէ. Զի ի Տեառնէ եղիցի դարձ արդարոց...*

15. *81բ-3ա* Կանոն եաւթն օրն – *երթան ի գերեզմանն եւ ասեն սաղմոս. երանեալ է այր, որ բնակեալ են... Ընթերցուած Առակաց. Արդարք յաւիտեան կացցեն...*

16. *83ա-6ա* Կանոն հոգէհանգիստ աղ աւրհնելոյ – *Ասեն սաղմոս ի թիւ. երանի՛ որում թողութիւն... Ընթերցուած յԱռակաց. Պատուեա՛ Տէր ի քոյոց արդար վաստակոց...*

17. *86ա-91բ* Կանոն Ոտնալուային – *Զկնի պատարագին ժողովին ի դուռն եկեղեցոյն... Յոհանու առաքելոյ ի կաթողիկեայց թղթոյն է ընթերցուած. Սիրելի՛ք, սիրեսցուք զմիմեանս...*

18. *91բ-3բ* Կանովն սերմն, շեղջ եւ յընծան (=ինձան) աւրհնելոյ – *եւ ասեն սաղմոս, կցուրդ. Հովիտք բազում արասցեն ցորենոյ... Ընթերցուած յԱռակաց. Պատուեա՛ զՏէր ի քոյոց արդար վաստակոց...*

19. *93բ-5բ* Կանովն նշան աւրհնելոյ – *Ասեն շարական Ա՛Կ՝ Խորհուրդն անճառ ծածկ[եալն]... Ընթերցուած Առակաց. Որդեա՛կք իմ, եթէ իմաստուն լի[նի]ց[ի] սիրտ քո...*

20. *96ա* Կանոն աւրհնութիւն նորկերտ գրոց – *Տանին յեկեղեցին եւ հանեն ամբիոնն, ունելով սարկաւագն ի վերայ բազկաց... ասէ զաղօթս. Աւրհնեալ ես, Տէ՛ր Աստուած մեր, որ եառար մեզ զպատուիրեանս քո...*

21. *96աբ* Կանոն խունկ աւրհնելոյ – *Ի վեր ունելով՝ քահանայն ասէ զաղօթս. Ամենակա՛լ Տէր Աստուած մեր, որ ընկալար զխունկն...*

22. ա. *96բ-8ա* Գանձ մեռեալթաղի *(«ՄԱ[ՆՎԵ]ԼՍ»)* – *Մինդ ի յէին, / Բանդ, որ ի Հօրէ... եւ ի չարեաց այսոցն զիս թափեցէք: Ողորմեա՛:*

բ. *98ա-9բ* Տաղ ննջեցելոց – *Ո՛վ քահանայք եւ վարդապե՛տք աստուածաբան / եւ ժողովուրդք հաւատացեալք ամենեքեան... զի Տէրըն քաղ[ցըր է եւ պատ]ուական ողորմութեան:*

– *100ա* [Յանկ] – *[Վաս]ն մկրտութեան... վասն գանձ մեռեալթաղի:*

Ծնթ. 49բ, 58բ, 61բ լս-ներում հետգ-ի նոտրգրով կան ծէսի ընթացքում կատարուող երգերի վերաբերեալ նշումներ՝ 49բ «Աստուած անեղ՝ Բ. տուն...» եւլն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

91բ եւ զԹումաս՝ *զանարժանս, յիշեցէ՛ք ի Տէր:*

99բ Փա՛ռք հ[ամ]աք[ոյ եւ] համա[պատի]ւ Հ[օր եւ] Որդոյ եւ Հ[ոգւոյն Սրբոյ]. ամէն: Արդ, գրեցաւ ձեռամբ Թումայ իրիցու///: Աղաչեմ ըզձեզ, ո՛վ դաս[ք] քահանայք, այս տառս գոչեցաւ Մաշտոց, կարդալով կամ օրինակելո[վ], լի բերանով թողութի՛ւն շնորհեցէք ինձ եւ զիմ ծնօղ Մարիամն, հայրն իմ Գրիգոր քահանայիս, եւ այլ եղբարց իմոց՝ Ովանէսին, Մանկասարին, Ոսկանին, Թորոսին, գադն մեր Պէկ[ա]զին, Փառուն: Դարձեալ յիշեցէ՛ք ի Տէր եւ Աստուած ձեզ յիշէ. ամէն: Հա՛յր մեր, որ յերկինս, սուրբ:

57. *61բ-2ա* ԾԷ. Գանձ երեք սուրբ ժողովոյն. Յ. եւ ԺԸ. (318) հայրապետաց ասա՛ («Ա[Յ]ՐԻՎԱ[ՆԵՑԻ]») – *Աստուած կենդանի, անիմանալի… ա. 62ա* Մեղեդի ազնիւ եւ գեղեցիկ – *Խոստովանիմք եւ դաւանիմք… բ. 62ա Տաղ գեղեցիկ ասա՛ – Խոստովանիմ Աստուած ըզՀայր…*

58. *62բ-3* ԾԸ. Գանձ Բուն Բարեկենդանի կիրակէին ասա՛ եւ զիս յիշեա՛ («ԵՐԵԻՄԱՆԵՑԻ») – *Երգըս յաւէրժական երգեմք բանական… ա. 63ա [Փոխ] («Ն») – Նոր երկին կազմեալ… բ. 63աբ Տաղ ազնիւ ի գոյն էջմիածնի ասա՛ – Ճրագ ճշմարիտ եւ երկնային… գ. 63բ* Յորդորակ. *պատշաճաւոր ասա՛ – Ճրագ մարմնոյս է իմ խաւար…*

59. *63բ-4ա* ԾԹ. Գանձ Թէոդորոսի Զօրավարին («Ի [ՅԱՌԱՔԵԼԷ] ԽՆԴՐ[ԵԱԼ Է ՎԱՐԴԱՊԵՏՆ]») – *Ի քէն հայցեմք, աղբիւր բարութեան… ա. 64ա* [Տ]աղ եւ մեղեդի ազնիւ ասա՛ – *Քաջամարտիկ մեծ զինուորին… բ. 64ա Տաղ ազնիւ ասա՛ եւ գրչագրիս յիշեա՛ – Խաղաղարար նոր թագաւոր…*

60. *64բ-5ա* Կ. Գանձ երկրորդ կիրակէի աղուհացիցն («ԳՐԻԳՈՐ») – *Գըթութեամբ իջեր, Տէր… ա. 65ա Տաղ գեղեցիկ յոյժ* («ԳՐԻ[ՈՐԻ Ե]») – *Գոյիդ անեղ, անըսկըզբան… բ. 65ա* Յորդորակ ասա՛ («ԲԱ[ՆՍ]») – *Բանիւ ասաց Տէր Պետրոսին…*

61. *65աբ* ԿԱ. Գանձ Կիւրղի հայրապետին եւ մօր նորա Աննայիկ («ԳՐԻԳՈՐ») – *Գըթացեալ քոյին, Աստուածդ անքըննին… ա. 65բ Տաղ ազնիւ. ի գոյն երջանկի է – Քրիստոս փառաց, լոյս անքըննին… բ. 65բ Փոխէ զձայնդ – Ընդ Յուդային սուրբ Կիւրեղին…*

62. *66աբ* ԿԲ. Գանձ երորդ կիրակէին՝ յԱնառակ որդին («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ ահեղ խորհուրդ տիրական… ա. 66բ Տաղ ազնիւ («Ա[ՅՍ Բ]Ա[ՆՍ]») – Առ Հայրդ աղաղակեմ… բ. 66բ Տաղ գեղեցիկք եւ ազնիւ («Գ[ՐԻ]Գ[ՈՐԻ ե]») – Գանգատ ունիմ ասել քեզ…*

63. *66բ-7ա* ԿԳ. Գանձ Յոհաննու, եպիփանու հայրապետացն («ԳՈՒՐ(=Գ[Ր]Ի[ԳՈՐ])») – *Գրքուքեամբ քոյին Որդիդ Միածին… ա. 67ա Տաղ ազնիւ («ԳՐԻԳ[ՈՐԻ է]») – Գերագոյն Հոգւոյն շնորհաց սուրբն… բ. 67ա Տաղ պատմաբան – Մեծ եպիփանըն կիպրացին…*

64. *67բ-8ա* ԿԴ. Գանձ չորրորդ կիրակէին՝ Մեծատանն եւ Ղազարու («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ ահեղ խորհուրդ տիրական… ա. 68ա Տաղ ազնիւ – Լըսէ զմեծատան առակն… բ. 68ա Յորդորակ ընտիր – Տընտես չէի հաւատարիմ…*

65. *68աբ* ԿԵ. Գանձ սրբոց Քառասնիցն, որ ի Սեբաստիայ կատարեցան («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ հրաշալի անմահից արքայ… ա. 68բ-9ա [Տ]աղ ազնիւ եւ գեղեցիկ ասա՛ («ՔԱ[Ր]ԱՍ[ՈՒ]Ն[ՍՆ]») – Քրիստոս փառաց թագաւորն… բ. 69ա Այլ տաղ ազնիւ ի գոյն Այսօր անդրանկի – Ի Սեբաստիայ ի ծովակին մըտեալ…*

66. *69աբ* ԿԶ. Գանձ հինգերորդ կիրակէին՝ ի Դատաւորն եւ յայրին («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ ահեղ խորհու[ր]դ անքննին… ա. 69բ Տաղ ազնիւ ի գոյն Խոստովանողի – Ի յիմ քաղաք մարմնոյս դընին… բ. 69բ Փոխէ՛ զձայնդ – Այլ դատաւորդ իմ երկնային…*

67. *70ա* ԿԷ. Գանձ ապաշխարութեան ամենայն պահոց («ՄԵՐՁՆ») – *Մեղա՛յ, Տէ՛ր, մեղա՛յ… ա. 70աբ Տաղ գեղեցիկ ասա՛ («Ա-Բ, Ե-Զ») – Անձն իմ, արի աղօթեա… բ. 70բ Փոխէ՛ զձայնդ («Ի, Ի-Ծ, Զ») – Ի յերկրիս նաւ շինէ…*

68. *70բ-1ա* ԿԸ. Գանձ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ հրաշալի անմահից արքայ… ա. 71ա Մեղեդի ընտիր եւ լաւ – Գրիգորիոս առաքինի հրամայող… բ. 71աբ Տաղ ազնիւ յոյժ – Ի յելս արեւու արեւ… գ. 71բ Փոխէ՛ զձայնդ – Անդ ի հանդիսէն ձայնէր ի գուբն ըստուերին…*

69. *71բ-2ա* ԿԹ. Գանձ վեցերորդ կիրակէին ասա՛ («ԳՐԻԳՈՐ») – *Գոյիդ կատարեալ Աստուծոյդ բարձրեալ… ա. 72ա Տաղ ազնիւ («ՎԱՐ[ԴԱՊԵՏԻՆ Է]») – Վերջի յաներեկ աւուրն… բ. 72ա Տաղ ազնիւ յոյժ – Յորժամ գըրեալքըն կատարին…*

70. *72աբ* Հ. Գանձ Ղազարու յարութեան («Գ[ՐԻԳՈ]Ր[Ի] Է Ս[Ա]») – *Գոչումըն ըղձական, գովասանական… ա. 72բ Տաղ գեղեցիկ եւ լաւ – Զայնն այն, որ զաշխարհս արար… բ. 73ա Ողբ ապաշխարութեան – Ես եմ կորուսեալ ոչխար…*

71. *73աբ* ՀԱ. Գանձ Գալըստեան. Ծաղկազարդին ասա՛ («ՀԱ[ՅՅ]ԷՍ[ԻՐՈՎ]») – *Համագոյական Հօր սահման… ա. 73բ Տաղ գեղեցիկ («ՏՐ ՆԵՐ[ՍԵՍԻ Է]») – Տիրական տօնիւս այսօր եկայք ցընծասցուք… բ. 73բ* Մեղեդի ի գոյն Խաչն ի նախնումի – *Աստ եբրայեցւոց մանկունքն… գ. 73բ Տաղ ազնիւ ասա՛ եւ զիս՝ գծագրողիս, յիշեա՛ – Այսօր նոր տօնիւս ցընծամք… դ. 73բ-4ա* Յորդորակ սըմին – *Յիսուս Որդին Տէրըն փառաց…*

72. *74աբ* ՀԲ. Գանձ Աւագ երկուշաբաթին ասա՛ («ԳՐԻԳՈՐ») – *Գերագոյն էից, գերահրաշ գոյից… ա. 74բ Տաղ. խորհրդաւոր ասա՛ – Անդ ի մէջ դրախտին ե-րեք անձինք կային… բ. 74բ Այլ տաղ ազնիւ – Ադամայ ստեղծօղն եկեալ յիւր պատ[կ]երն ի տես… գ. 74բ-5ա Փոխէ՛ զձայնն, լաւ ասա՛ – Ադամ նըստէր դուռն ի դրախտին…*

73. *75աբ* ՀԳ. Գանձ Աւագ երեքշաբաթի աւուրն ասա՛ («ԳՐԻԳՈՐ») – *Գործ արարչական, գերահրաշական… ա. 75բ Տաղ գեղեցիկ – Քէ՛զ, ով տէր Յիսուս, ձայնեմ… բ. 75բ Փոխէ՛ զձայնն – Վա՛յ իմ մեղուցեալ անձինս…*

74. *75բ-6ա* ՀԴ. Գանձ Աւագ չորեքշաբաթի աւուրն («ՄԿՐՏԻՉ») – *Մեծ եւ անճառ խորհուրդն ահագին… ա. 76աբ Տաղ ազնիւ յոյժ – Յիսուս փըրկիչ կենարար… բ. 76բ Փառ Աւետարանին – Մերձեալ Զատիկ հրէականին…*

75. *76բ-7ա* ՀԵ. Գանձ Աւագ հինգշաբաթի աւուրն ասա՛ («ՁՊԱ[Կ]ՍԱ[ՈՐ]Դ[Ք]») – *Զահեղ, զանքննին, զխորհուրդըս խորին… ա. 77աբ Տաղ գեղեցիկ («Ա[Ս]Տ[ՈՒԱ]Ծ[Ա]Տ[ՈՒՐՆ ԽՆԴՐԵԱՅ]») – Աստուածն ամենի՝ Միածնի Որդի…*

76. *77բ-8ա* ՀԶ. Գանձ Աւագ հինգշաբաթի երեկոյին. Ոտնալուայ ասա՛ («ՄԿՐՏԻՉ») – *Մեծապայծառ խորհուրդն ահագին… ա. 78ա Տաղ չարչարանաց Տեառն մերոյ. ողբով ասա՛ – Կապեալ կապեցաւ լուծիչն… բ. 78բ Տաղ. սրգով ասա՛ եւ գրծագրողիս յիշեա՛ – Եկեալ ինքնակամ ի կատարումըն գրոց…*

77. *78բ-9ա* ՀԷ. Գանձ Աւագ ուրբաթու առաւօտուն ասա՛ («Ի ՄԱ[Թ]Է[ՈՍԷ]») – *Ի յանմարմնական յանցանաց… ա. 79ա Տաղ ազնիւ եւ լաւ – Զարհուրեալ զօրացն երկնաւորաց… բ. 79ա* Յորդորակ գեղեցիկ – *Ծարաւեցաւ որպէս ըզմարդ Տէրն ի խաչին… գ. 79աբ Տաղ Աստուածածնին ընդ դէմ սուրբ խաչին. ցերեկին ասա՛ – Աստուածածին սըրբուհի, ամէնօրհնեալ տիրուհին… դ. 79բ Ձայնն փոխեա՛ – Ով Սիմէօն ծերունի… ե. 79բ Տաղ երեկոյին. ասա՛ քաղցր եղանակաւ («Ա-Բ, Ի-Լ, Ծ») – Անեղ Որդի Հօր Միածին բազկատարած… զ. 79բ Ողբ Աստուածածնին ընդ դէմ սուրբ խաչին – Աստուածածին կոյսըն Մարիամ կացեալ առ խաչն իւրոյ Միածնին…*

78. *80ա* ՀԸ. Գանձ Թաղման ճրագալուցի. Մեծի շաբաթի աւուրն («Խ[Ա]Չ[ԱՏՈՒ]Ր[Ը]») – *Խորհուրդ հանգստեան ի յօթներըորդին… ա. 80ա Տաղ Թաղմանն Տեառն Յիսուսի Քրիստոսի – Որ եղելոյ կեանս շնորհէ… բ. 80աբ Այլ տաղ Ճրագալուցի Տեառն ասա՛ – Այսօր է*

շաբաթ եւ լըռութիւն հանգիստ յերկրի... գ. 80բ Փոխէ՛ զձայնդ եւ լաւ ասա՛ – է՛ ինձ երանի, որ զսա պաշտել եղէ արժան...

79. *81աբ* ՀԹ. Գանձ Յարութեան. Սուրբ զատկին («ՄԿՐՏԻՉ») – *Մարդասիրութեամբ Որդիդ Միածին... ա. 81բ* Մեղեդի ազնիւ – *Հաւուն, հաւուն արթնացեալ... բ. 81բ Տաղ ազնիւ* («ՆԵՐ[ՍԷՍԻ Ե]») – *Նոր իմն աւետեաց բարբառ նորազուարճ ձայնիւ... գ. 82ա* Յորդորակ ազնիւ («ՀԱՅՈՑ Կ[ԱԹՈՂԻԿՈՍԻՆ]») – *Հօր կամաւ իջեալ Որդին մարմին ըզգենու... դ. 82ա Փոխէ զձայնն – Մարիամու Մագդաղենի ցուցաւ...*

80. *82աբ* Զ. երկուշաբաթի մեռելոցին ասա՛ («Տ[է]ՐՈ[Ի]Ն[ԱԿԱՆ]») – *Տէր ամէրունական, տըւօղ տիրական... ա. 82բ* Մեղեդի ազնիւ – *Ես ձայն զառիւծուն ասեմ... բ. 82բ Փոխէ՛ զձայնդ – Ահեղ ձայնս, որ ես լուայ... դ. 82բ Տաղ. անուշ եղանակաւ ասա՛ – Այսօր աւետիս ձեր նընջեցեալոցդ...*

81. *83ա* ՁԱ. Գանձ երրորդ աւուր Յարութեան Տեառն մեռոյ («ԱԿԱՆ») – *Արդ, լուսաւորե՛ա, արդ, փառաւորեա... ա. 83աբ Փառ Աւետարանի – Ի սմին աւուր յայլում դիմաց... բ. 83բ* Մեղեդի ազնիւ – *Ի քառաթեւին գոչէր... գ. 83բ Տաղ ազնիւ յոյժ («Յ-Պ») – Յարուցեալ յերրորդ աւուր...*

82. *83բ-4ա* ՁԲ. Գանձ չորրորդ աւուր Յարութեան Տեառն մեռոյ Յիսուսի Քրիստոսի («ՄԻՁԿ(=ՄԿ[ՐՏ]ԻՉ)») – *Մեծապայծառ ձայնիւ ցընծալի... ա. 84ա* Մեղեդի ազնիւ – *Ի յերուսաղէմ գընամ... բ. 84ա Տաղ Յարութեան – Յարեաւ յաւուր երրորդի... գ. 84աբ Փոխէ՛ զձայնդ – Յարեաւ փառաց թագաւորն...*

83. *84բ* ՁԳ. Գանձ հինգերորդ Յարութեան Տեառն մեռոյ Յիսուսի Քրիստոսի («ՄՏԻԿ(=ՄԿ[Ր]ՏԻ[Ձ])») – *Մեծ եւ ահեղ խորհուրդ սոսկալի... ա. 85ա* Մեղեդի ի գոյն Աւետիսի տաճարի – *Ձեզ մեծ աւետիս, յարեաւ... գ. 85ա Տաղ գեղեցիկ – Յայնժամ սիրով տիրական... գ. 85ա* Յորդորակ ազնիւ – *Դասքըն հրէական...*

84. *85աբ* ՁԴ. Գանձ վեցերորդ աւուր Յարութեան Տեառն մեռոյ Յիսուսի Քրիստոսի («ՅԱՐ[ՈՒԹԵԱ]Ն») – *Յերկնից խոնարհեալ, բանդ յերկիր իջեալ... ա. 85բ Փառ Աւետարանին – Դարձեալ յայտնի այլանըմման... բ. 85բ Տաղ անուշ ասա՛ – եկեալ Մարիամ Մագդաղենացին... գ. 86ա* Յորդորակ ընտիր – *Միաշաբաթ օր հանգստեան... դ. 86ա Մեղեդի ընտիր ասա՛ – Ծարաւեցաւ Տէրն ի խաչին...*

85. *86աբ* ՁԵ. Գանձ Յօհաննու գլխատմանն («ԳԳԻՐՈ(=Գ[Ր]ԻԳՈՐ)») – *Գոյակն էական Հօր անսահմանական... ա. 86բ* Մեղեդի ճամեղ եւ ընտիր – *Ի դասըս հրեղինաց... բ. 86բ Տաղ համեղ. ասա՛ եւ յիշեա՛ զիս [Տաղ ի Մագիստրոսէ* («ԿԱՐԱՊԵՏԻՆ ՏԱՂ»)*, ձեռ. 423, 171բ-2ա]* («ԿԱԻ») – *Կարապետ սուրբ հաւատոյ...*

86. *87ա* ՁՁ. Գանձ Նոր կիրակէին ասա՛ («ԳԻՐՐ(=ԳՐԻ[ԳՈ]Ր)») – *Գաղտնի խորհըրդին գուշակեալ ի հին... ա. 87ա* Մեղեդի եւ տաղ ազնիւ – *Այսօր նոր աբեւ հարեալ ի նորահրաշ արեգակնէն... բ. 87աբ Տաղ Յարութեան – Ջի թէ կըտաւքըն խօսէին... գ. 87բ Տաղ ընտիր եւ լաւ* («ՄԿՐ[ՏԻՉ Ե]») – *Մայր մարմնացելոյ Բանին տըրտմութեամբ...*

87. *87բ-8ա* ՁԷ. Գանձ Աշխարհամատոան եկեղեցւոյ («ՄՐՏՁ(=Մ[Կ]ՐՏ[Ի]Ձ)») – *Մաքրեալ տաճար սուրբ տէրունական... ա. 88ա* Մեղեդի եկեղեցւոյ ասա՛ – *Քրիստոս եկեալ, քահանայապետըն սուրբ... բ. 88ա Տաղ համեղ եւ լաւ ասա՛ – Ուրա՛խ լեր, հարսն ի յերկրէ... գ. 88ա Տաղ ընտիր եւ գեղեցիկ – Կայթեա՛ սուրբ կաթուղիկէ եկեղեցի...*

88. *88աբ* ՁԸ. Գանձ կիրակամըտի Յարութեան Տեառն ասա՛ («ԳԳՐՈ(=ԳՐ[Ի]ԳՈ[ՐՐ])») – *Գերամբարձ Աստուած, գովեալդ ի զօրաց... ա. 88բ Տաղ ազնիւ – Իսկ մեծ Մարիամ Մագդաղենացին... բ. 88բ-9ա Տաղ ընտիր («Ա-Դ») – Արմատ անմահութեան, որ տընկեցար... գ. 89ա Տաղ Թուրանդայ – Հաւիկ մի պայծառ տեսայ անըմման...*

89. *89աբ* ՁԹ. Գանձ Երեսման սուրբ խաչին յերուսաղէմ («Ի [Մ]ԱԹ[ԵԵ]Ո[ՍԵ ԽՆԴՐԵԱՅ ԳՐԻԳՈՐՆ]») – *Իսկակից Որդի Հօր քոյ հրզօրի... ա. 89բ Տաղ սուրբ խաչին – Խաչն ի նախնումն երեւեցաւ... բ. 89բ* Մեղեդի սուրբ խաչին – *Այսօր ի գիւտ սուրբ խաչին... գ. 89բ* Յորդորակ սմին («ՍՏԵՓԱՆ[ՈՍԻ Է]») – *Սուրբ քառաթեւ խաչ կենարար...*

90. *90ա* Ղ. Գանձ Համբարձմանն Քրիստոսի Աստուծոյ մեռոյ («ՄՐՏԿ(=ՄԿՐՏ[ԻՉ])») – *Մեծապայծառ ոճնիւս ահագին... ա. 91բ* Մեղեդի Համբարձման («Ա[ՆԴՐԻԱՍԻ]») – *Այսօր անդրանիկ Հօր... բ. 90բ Տաղ Համբարձմանն Քրիստոսի – Աստուածըն Բան Հօր Միածին...*

91. *90բ-1ա* ՂԱ. Գանձ մեծահռաչ կիրակէին ասա՛ («Մ[Ա]Թ[Ի]Ո[Ս]Ի [Է]») – *Միակդ ահաւոր, Տէր եւ զօրաւոր... ա. 91ա Տաղ ազնիւ* («ԱՆԴ[Ր]ԻԱ[ՍԻ]») – *Այսօր անդրանիկ Հօր Միածին Որդին... բ. 91ա* Յորդորակ սմին («ՎԱՐԴԱ[Պ]Ե[ՏԻ]») – *Վեհից թագաւորն այսօր առ Հայր մըտանէ...*

92. *91բ* ՂԲ. Գանձ մեծի աւուր Պենդեկոստէին՝ Գալստեան Հոգւոյն Սրբոյ («ՎՆԿՍ») – *Վերօրհնեալ, գովեալ եւ փառաւորեալ... ա. 92ա* Մեղեդի ազնիւ («ՆՎ[ԱԳ ՀՈԳՈՅՆ ՍՐԲՈՅ Ի ՅՈՀԱՆՆԻՍԷ ԱՆԱՐԺԱՆ ԾԱՌԱՅԷ]») – *Նուագեմք Հոգւոյն նըւագս վայելուչս... բ. 92ա Տաղ ընտիր – Ի մեծի աւուր ոճնիս... գ. 92ա Փոխէ զձայնն – Յայնժամ Պետրոսին ելեալ...*

93. *92աբ* ՂԳ. Երկրորդ աւուր Գալըստեան Հոգւոյն Սրբոյ («Մ[ԿՐ]ՏԻՉ») – *Մեծ եւ հրզօր Հոգի Աստուծոյ... ա. 92բ* Մեղեդի ի գոյն Ի խաչին տնկեալի – *Գոհութիւն Հոգւոյն Սրբոյ... բ. 93ա Տաղ ազնիւ – Աստանօր ծագեաց լոյսն աւետեաց կենաց...*

94. *93աբ* ՂԴ. Երրորդ աւուր Գալըստեան Հոգւոյ Սրբոյ («ՄԻՏՋ(=Մ[ԿՐ]ՏԻՋ)») – *Մեծապայծառ լոյսն արտափայլեալ... ա. 93բ* Մեղեդի ի գոյն Այսօր անդրանկի – *Այսօր Սուրբ Հոգին Աստուած եկեալ յաշխարհս... բ. 93բ Տաղ գեղեցիկ գունով – Հոգին Սուրբ հընչեաց բազմապատիկ մի ձայն...*

95. *93բ-4ա* ՂԵ. Գանձ չորրորդ աւուր Գալըստեան Հոգւոյն Սրբոյ («Յ[Ո]Վ[Ա]Ն[Է]Ս») – *Յաւէտ իսկապէս ընդ Հօր միապէս... ա. 94ա Տաղ ի գոյն Գովեստ բերկրանացի – Այսօր Սուրբ Հոգին Աստուած...*

96. *94աբ* ՂԶ. Հինգերորդ աւուր Գալըստեան Հոգւոյն Աստուծոյ («ՀՈԳՈ») – *Հոգիդ Աստուած, բըղխումն անքըննին... ա. 94բ* Մեղեդի ի գոյն էջմիածնի – *Որ յիսներեակ յորելենին... բ. 94բ-5ա Տաղ գեղեցիկ («ՆՎԱԳ Ե ՀՈԳՒՈՅՆ») – Ներհիւսեսցուք քաղցր եղանակ...*

97. *95ա* ՂԷ. Գանձ սրբոց Հռիփսիմեանց ասա՛ («ՎԿ[Ա]ՅԱ[ԿԱՆԱՅ]») – *Վայելչականաց, վայելման փառաց... ա. 95բ Տաղ Միաշաբաթի գոյնն է – երջանիկն ի յարգանդէ... բ. 95բ Փոխէ՛. Յիսուս Որդւոյ գոյն ասա՛ – Ով հրաշագեղ սուրբ Հռիփսիմեանց...*

98. *95բ-6ա* ՂԸ. Գանձ Յօհաննու Կարապետին եւ Աթանագինեայ եպիսկոպոսին («Գ[ՐԻԳ]ՈՐ») – *Գոյիդ հգօրի, Աստուծոյ<ոյ>դ Բանի... ա. 96ա Տաղ ի գոյն Այսօր ձայնըն հայրականի ասա՛ – Մըկըրտիչըն Քրիստոսի սուրբ կարապետըն Յովհաննէս... բ. 96ա Յիսուս Որդւոյ գոյն ասա՛ – Համարձակ սա ձեռնադրէ...*

99. *96բ* ՂԹ. Գանձ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին՝ ելն ի վիրապէն («Ա[ՍԱՏ՟]ՈՒՐ») – *Աստուած անմահ փառաց թագաւոր... ա. 96բ-7ա Ողբ. Իմ եղականին գոյն ասա՛ – եկեղեցի կաթուղիկէ ի Հայաստան...*

100. *97ա* Ճ. Գանձ յԱմենափրկիչն ասա՛ («ՄՎ ԱՀ») – *Մեծի գօրութիւն սրբոյ նըշանին... ա. 97բ Տաղ եկեղեցւոյն էջմիածնի. Խաչն ի նախնումի գոյն է – Սուրբ է տաճար տէրունական...*

101. *97բ-8ա* ՃԱ. Գանձ մանկանցն Բեդղէեմի եւ Ակակիոսի վկային («Ա՟Յ[Ս] [Յ]Ա[Ռ]ԱՔԵԼԷ ԲԱՆ») – *Անըսկըզբնական ծընունդ հայրական... ա. 98ա Տաղ. Կանայքն արտասուօքի գոյն է – Սարսեալ Հերովդէս դողայր ընդ լուր արքային...*

102. *98աբ* ՃԲ. Գանձ Կոստանդիանոսի թագաւորին եւ մօրն նորա Հեղինեայ («ԳՐՐԻ(=ԳՐԻ[ԳՈ]Ր)») – *Գերարփիդ վերին, լոյսըդ լուսածին... բ. 98բ Տաղ. Եղեալ հարսի գոյն ասա՛ – Թագաւորդ աստուածարեալ...*

103. *98բ-9ա* ՃԳ. Գանձ Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ի լեառն Սեպուհոյ («Ա-ՌԱ[ՔԵԼ]Ի») – *Այսօր ծագեաց լոյսն արփիական... ա. 99ա Տաղ. Աբեներ արքայի գոյն է – Ի լեառըն Սեպուհոյ...*

104. *99բ* ՃԴ. Գանձ Ներսեսի հայրապետին եւ Խաթայ եպիսկոպոսին ասա՛ («ԳՈՐՐ(=ԳՐ[ԻԳ]ՈՐ)») – *Գոյ մեզ ցընծալի... ա. 99բ-100ա Տաղ. Առաջնաճաշակի գոյն է – Հընչմամբ ձայնիւ բերկրանաց...*

105. *100աբ* ՃԵ. Գանձ թարգմանչացն Սահակա եւ Մեսրոպ[այ] («Ա՟ՌԱՔ[ԵԼԻ]») – *Աւրհնեալ ես, Հայր սուրբ անքննական... ա. 100բ Տաղ. Միաշաբաթի գոյնն է – Յայսըմ վայրի եղեւ յայտնեալ...*

106. *100բ-1ա* ՃԶ. Գանձ Տղատայ թագաւորին եւ Աշխէն տիկնոջն եւ Խոսրովիդխտոյն («Ի ՋԳԵ») – *Ի հողոյ առեալ ի ձեռն եւ ստեղծեալ... ա. 101ա Տաղ. Ճանապարհ բարի Քրիստոսի գոյնն է – եւ Տըրդատ գոռոզ արքայն...*

107. *101աբ* ՃԷ. Գանձ որդւոց եւ թոռանց սուրբ Լուսաւորչին – *Նոր թագ պետական... ա. 101բ Տաղ. Առաջնաճաշակի գոյնն է («ՀԷՓ[ՈՒՄ]») – Հոգի Աստուծոյ Աստուած...*

108. *101բ-2ա* ՃԸ. Գանձ Տապանակին («Ի [ՆՆ]ԴՐՐ[ՈՅ]») – *Իմաստութիւն անճառ անեղին... 102ա Տաղ. Առաջնաճաշակի գոյնն է – Խորհուրդ գալըստեան Բանին...*

109. 102բ ՃԹ. Գանձ Վարդավառի առաջին աւուրն («Մ[Կ]Ր[Տ]ԻՋ») – *Մեծ եւ ահեղ խորհուրդ մեզ յայտնեալ... ա. 102բ-3ա Տաղ. Ես ձայն գառիւծուն գոյնն ասա՛ – Գոհար վարդըն վառ առեալ...*

110. *103ա* ՃԺ. Գանձ Վարդավառի երկրորդ աւուրն ասա՛ («Ա՟ՌԱՔ[ԵԼ]») – *Այսօր անճառ լոյսն արփիական... ա. 103բ Տաղ Վարդավառին ասա՛ – Այսօր ցընծայ լեառըն Թաբօր... բ. 103բ Տաղ. Կանայքն արտասուօքի գոյն ասա՛ – Ընդ որս եւ մանկունք...*

111. *103բ-4ա* ՃԺԱ. Գանձ Վարդավառի երրորդ աւուրն («Ն[Ե]Ր[Ս]ԵՍ») – *Ներգործական Աստուած բարերար... ա. 104ա Տաղ. Յարուցեալ յերրորդի գոյն ասա՛ – Յետ վեցօրեայ ըստ Մատթէին...*

112. *104բ* ՃԺԲ. Գանձ Թադէոսի առաքելոյն եւ Սանդխտոյ կուսին («Խ[Ա]Զ[Ա]ՏՈ[ՒՐ]») – *Խորհուրդ անշարժ հայրաշարժական... ա. 104բ-5ա Տաղ. Տունկ անմահութեան գոյնն ասա՛ – Արեգակն արդար ըզհուր սիրոյ...*

113. *105ա* ՃԺԳ. Գանձ սրբոց նախահարցն՝ Ադամայ, Աբէլի, Սեթայ, Ենովսայ եւ այլն («Ա՟ՌԱ[Ք]Ե[Լ]») – *Ամենազօր Տէր Աստուած... ա. 105աբ Տաղ. Միաշաբաթի գոյնն ասա՛ – Պաղատանօք սուրբ նախահարցդ...*

114. *105բ-6ա* ՃԺԴ. Գանձ երկոտասան մա[ր]գարէիցն («ՄԱՆ Մ») – *Մեծ եւ հրաշալի... ա. 106ա Տաղ. Տէր բարերարի եւ կամ Գլխոյ պսակի գոյնն է – Մարգարէիցն երկոտասան, որք յայնմ էին...*

115. *106աբ* ՃԺԵ. Գանձ եփեսոսի սուրբ ժողովոյն երկու Ճ. (200) հայրապետացն («ՆԲՅԻ») – *Նեստոր նասրանի, նոր հերձուած խօսի... ա. 106բ Տաղ. Եղեալ հարսի գոյնն է – Նոյն բանն, որ էր ծնունդ նա Հօր...*

116. *106բ-7ա* ՃԺԶ. Գանձ Շողակաթին՝ տեսլեանն

Գրիգորի Լուսաւորչին («ՏԱԵՅ(=ՏԱ[ԻՆԻ]Յ [Ա.Ս]Ե)Լ») *– Տաճարդ երկնային, տուն քրիստոսային... ա. 107ա Տաղ. Միաշաբաթի գոյնն ասա՛ («ԱԱՀՀ») – Ահա ասեմ բան գովեստի...*

117. *107աբ* ՃԺԷ. Գանձ Վերափոխման սուրբ Աստուածածնին. առաջին ատուն ասա՛ («ՄԿ[Ր]Տ[Ի]Ձ») *– Մեծապայծառ հրաշակերտ վեհին... ա. 107բ Տաղ. Տունկ անմահի գոյն ասա՛ – Այսօր Գաբրիէլ հրեշտակապետն եկեալ...*

118. *108ա* ՃԺՐ. Գանձ Վերափոխման սուրբ Աստուածածնի. երկրորդ ատուն ասա՛ («Մ[Կ]Ր[Տ]ԻՁ») *– Մեծապայծառ արփիանըման... ա. 108աբ Տաղ ազնիւ – Ողջոյն ընդ քեզ, Մարիամ... բ. 108բ Տաղ. Առաջնաճաշակի գոյնն է – Ծաղիկ պայծառ ծովային...*

119. *108բ-9ա* ՃԺԹ. Գանձ Վերափոխման. եր<ր>որդ ատուն ասա՛ («ԽՁՏԻ») *– Խոնարհեալ բանն Միածին... ա. 109ա Տաղ. Մեր նախահօրի գոյնն ասա՛ – Խընկին ծառի նըման ես... բ. 109ա Տաղ. Քրիստոս փառացի գոյն է – Մարգարէից պարծանք ես...*

120. *109աբ* ՃԻ. Գանձ սրբոց վարդապետացն Մեսրոպայ, Եղիշէի եւ Մովսէսի Քերթողին («Վ[ԱՐ]ԴԱ[ՊԵ]Տ[Ա.Յ]») *– Վարդապետաց քանոն եւ սահման... ա. 109բ Տաղ. Կանանցն կանխեալի գոյն ասա՛ – Հանդէս գումարեալ եկեղեցւոյ ժողովք...*

121. *110ա* ՃԻԱ. Գանձ Յովհաննու Կարապետին եւ յիշատա[կ] Յոբայ («Մ[Կ]ՐՏԻ[Ձ]») *– Մեծապայծառ փառօք պանծալի... ա. 110աբ Տաղ. Մեր նախահօրն խնդրի գոյն է – Յովհաննէս մեծ մարգարէ...*

122. *110բ-1ա* ՃԻԲ. Գանձ Նիկիոյ սուրբ ժողովոյն ԳՃԺԸ. (319) հայրապետացն («ՀԷ[Թ]Ո[Ի]Մ») *– Հրգօր զօրութեան Հոգի անսահման... ա. 111ա Տաղ. Հրճուիմք գոյն է – Ի նիկիայ ժողով դարձեալ...*

123. *111աբ* ՃԻԳ. Գանձ Սրբոյ խաչի առաջի ատուն («Յ[Ո]ՎԱ[ՆՆԵՍ]») *– Յայն յեդեմական դրախտին փափկութեան... ա. 111բ Տաղ. Միաշաբաթի գոյն է – Օրհնեալ ես, փայտ քրիստոսական...*

124. *111բ-2ա* ՃԻԴ. Գանձ Սուրբ խաչի երկրորդ ատուն ասա՛ («ՄԿՐ[ՏԻ]Ձ») *– Մեծապայծառ ակըն պատուական... ա. 112ա Այլ տաղ անոյշ – Խաչն եղիցի մեզ պահապան...*

125. *112աբ* ՃԻԵ. Գանձ յԱպարանից Սուրբ Նըշանին երրորդ ատուն («ՅՈ[Վ]ԱՆ[ԷՍ]») *– Յանեղական լուսոյն խոնարհեալ... ա. 112բ-3ա Տաղ ազնիւ («ՅՈՎ[ԱՆԷՍ]») – Յանեղական լոյսն ի Հօրէ մեզ յայտնեցաւ...*

126. *113աբ* ՃԻԶ. Գանձ Սուրբ խաչին չորրորդ ատուն («ՅԱԿՈԲ») *– Յիսուս Քրիստոս, արքայն համայնից... ա. 113բ Տաղ ազնիւ ասա՛ եւ գծողիս յիշեա՛ – Սքանչելի սուրբ նըշանդ պատուեալ...*

127. *113բ-4ա* ՃԻԷ. Գանձ սրբոյն Գէորգեա Զօրավարին («ԱՌ[Ա]Ք[Ե]Լ») *– Աւրհնեալ է Հայր, ծընօղ Միածնին... ա. 114ա Տաղ գեղեցիկ յոյժ – ՅԱստուածոյ ընտրեցար դու բարի...*

128. *114աբ* ՃԻԸ. Գանձ Վարագայ Սուրբ Խաչին («ԳԳՐԻ(=Գ[ՐԻ]Գ[Ո]ՐԻ [Է ՍԱ.]») *– Գլուխն եկեղեցւոյ, վէմըն հաւատոյ... ա. 114բ Տաղ ազնիւ ի գոյն Առաջնաճաշակին – Ամփոփեալ զնշան խաչին... բ. 115ա Տաղ յոյժ գեղեցիկ ասա՛ – Օրհնեալ ես, փայտ լուսով մածած...*

129. *115աբ* ՃԻԹ. Գանձ իշխանացն Սահակայ եւ Համազասպայ *– Յայս ահագին աւուրս, որ հասաք... ա. 115բ Տաղ ազնիւ. Յարուցեալի գոյնն է – Ողբացէ՛ք, եկեղեցի՛ք...*

130. *115բ-6ա* ՃԼ. Գանձ եօթանասունեւերկու աշակերտացն Քրիստոսի («ԱՌՔԼԱ(=ԱՌԱՔ[Ե]Լ)») *– Այսօր ոտն է մերս եկեղեցի... ա. 116ա Տաղ ի ներսէս հայրապետէ – Աղաչանօք մաքուր դասին առաքելոց... բ. 116աբ Փոխեա՛ զձայնն ի գոյն էջմիածնի – Ընդ Պօղոսի վաստակողին...*

131. *116բ* ՃԼԱ. Գանձ սուրբ կուսանացն Թեկղի եւ Վարվառեայ («ԱԼԱՔ(=Ա[Ռ]ԱՔ[Ե]Լ)») *– Անախտ, ամբիծ փեսայն... ա. 117ա Տաղ. Դարձեալ յայտնիի գոյնն է – Օրհնեալ անճառ Հայրըն գըթած...*

132. *117աբ* ՃԼԲ. Գանձ սրբոց աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու եւ Յոհաննու («Ա[ՌԱ]Ք[ԵԼ]Ի») *– Այսօր որդիք Հօրն երկնաւորի... ա. 117բ Տաղ անուշ – Մատթէոս մարդ անուանեցաւ...*

133. *117բ-8ա* ՃԼԳ. Գանձ Խաչգիւտին («Խ[Ա]ՉԱ[Տ]Ո[ԻՐ]») *– Խաչի քո, Քրիստոս, երկիրպագանեմք... ա. 118ա Տաղ. Միաշաբաթի գոյնն է – Ի գըտանել կենաց փայտին... բ. 118բ Տաղ. Ուրախ լերուք գոյն է – Այսօր եղեւ գալ դըշխոյին...*

134. *118բ-9ա* ՃԼԴ. Գանձ խաչ օրհնելոյ («ԽՁՏԻ») *– Խորհուրդ ընտրեալ, յառաջ գուշակեալ...*

119ա գանձի վջ-ում գրչից՝ «Ո՛վ սիրելի երգիչ, սորա տաղն ի յերեւման խաչի գանձն գրեալ կայ, որ է՝ ՁԹ. (89), ի հարիւր եւ ութ համարն. գի՛տ եւ աստ երգեա՛»:

135. *119աբ* ՃԼԵ. Գանձ ձեռնադրութեան ասա՛ («ԳՐ[Ի]Գ[ՈՐԻ] Է») *– Գըթա՛ ի մեզ, Տէ՛ր ամենակալ... ա. 119բ Տաղ ձեռնադրութեան ի գոյն Հանճարեղի – Ի մեծի հրաշափառ հանդիսիս...*

136. *119բ-20ա* ՃԼԶ. Գանձ սրբոց մարգարէիցն ասա՛ («Խ[ՈՐ]Հ[Ը]Ր[Դ0]Յ[Ն]») *– Խորհուրդ անքննին, խորք, որ չերեւին... ա. 120ա Տաղ. Խաչն ի նախնումի գոյնն է («Ա-ե») – Աստուածային խորոցն անճառ... բ. 120ա Փոխէ զձայնն. Միաշաբաթի գոյնն է – Եսայիաս տայ մեզ նըշան...*

137. *120աբ* ՃԼԷ. Գանձ սրբոց մարտիրոսաց ասա՛ («ՈԵԱՆ») *– Ո՛վ Տէրդ բարձրեալ եւ փառաւորեալ... ա. 120բ Տաղ. եղեալ հարսի գոյն ասա՛ – Բայց դուք, որդիք իմ սիրելիք...*

138. *121ա ՃԼԸ.* Գանձ ամենայն սրբոց («ԴԱ[ԻԻ]-ԹԷ») – *Դաւանեցէ՛ք, որդիք օրինաց... ա. 121աբ Տաղ. Հրճուիմքի գոյնն ասա՛ – Ազաչանօք ընտրեալ դասին...*

139. *121բ-2ա ՃԼԹ.* Գանձ Հսկման գիշերոյ պաշտաման («ԱՌԱՔԵԼ») – *Անտանելիդ երկնի եւ երկրի... ա. 122ա Ողբ մեռելոյ ի գոյն Ղարիպինի – Ով քահանայք եւ վարդապետք աստուածաբան...*

Ծնթ. Փակագծային լրացումներն առուել են ըստ Մատենադիրի հայոց, հտ. ԺԳ., Գանձարան. երկու գրով, Գիրք Ա., Գիրք Բ., Անթիլիաս-Լիբանան, 2008, նաեւ՝ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի» տուեալներուն. չլրացուած ծայրակապերը մեր օգտագործած աղբիւրներում չենք գտել:

– *123ա-6ա* Յանկ բովանդակ գանձից, տաղից եւ մեղեդեաց, եւ ամենայն սրբոց, նաեւ կիւրակէից Յարութեան, եւ աղցից ի մատենի աստ գրեցելոյ – *Ճ. Ամենափրկչին եւ Սրբոյ էջմիածնի... Խէ. Քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի:*

Ծնթ. Տօների այբբենական կարգով ցանկն է:

– *126ա-8բ* Այլ ցանկ ոմանց նշանաւոր գանձից, տաղից եւ մեղեդեաց յատուկ տօնից, կիւրակէից սրբոց եւ պաւոց՝ ըստ նոյն վերագրեալ ճամարաթուի Գանձարանիս – *ԼԴ. Խնդութեան ձայն, բարբառ աւետեաց... Կուսանացն. ՃԼԱ. Օրհնեալ անճառ Հայրն գրթած:*

Ծնթ. Սկզբնատողերի այբբենական կարգով ցանկն է:

– *128բ* [Յաղագս ցանկից] – *Գիտեա՛ աստանօր, նազելի՛ երգաբան, զի առաջին եւ երկրորդ ցանկքս երկաքանչիւրքն զմի տարազ ունելով՝ զերկոսին ճանապարհս գիւտից ցուցանեն ըստ երկուց հաճոյից քոց, զի մինչ կամիցիս անորոշակի զպատկանաւոր իմն գտանել, ցուցանէ քեզ առաջինն, իսկ եթէ կամիցիս որոշակի զյատուկ իմն որոնել յանուանէ եւ գտանել, զայն ցուցանէ քեզ երկրորդն: Ուրեմն՝ զերկոսեան եւս պիտեւան եւ հարկաւոր համարելով՝ երկոքումքն որոնեսցես: Ո՛ղջ լեր:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

55բ եւ զմեղապարտ գրիչս յիշեա՛ (նման՝ խորագիր 44ա, 55ա, 60ա, 60բ, 62բ, 64ա, 73բ, 78բ, 86բ, 113բ):

Տե՛ս 1ե Տիտղոսաթերթ:

ՆՇՈՒՄ՝ *մէջքին սոսնձած սպիտակ թերթիկին՝ «Գանձարան 2.», 1ա՝ «48/3591», մատիտով՝ «Գանձարան», 1ե՝ «Մ[եսրոպ] եպ[իսկոպոս]»:*


ԳՐՉԱՓՈՐՁ՝ *Ա. աստառին՝ «սուրբ» (երիցս), «13»:*

3592
ԱԲՐԱՀԱՄ ՇԱՔԵՅԻ, ՕՐԻՆԱԿՔ ԳՐՈՒԹԵԱՆՑ

ՃԱԼԷԹ գիւղ ՌՄԽ. – 1791

ԳՐԻՉ՝ Յարութիւն վրդ. Շաճեցի:

ԹԵՐԹ՝ 81. չգրուած՝ 65ա, 73ա, 81բ: ՊՐԱԿ՝ Թ-ԺԸ×8 (ԺԸ 8+1): ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ ռուսերէն՝ «СЯ», որից վեր՝ «28», ռուսերէն «РФХЯ», տակը՝ «17», խաչով պսակուած թագ, տակը՝ եղջերու, իսկ ստ. նախ կողմում՝ «84», «27», «17»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16×12,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (10×7,5): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 47ա): ՏՈՂ՝ 19-20. գծումներ՝ ճնշումով: ԿԱՋՄ՝ շագանակագոյն, մէջբը՝ կարմիր կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ սպիտակ չգրուած թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա.-Գ+Դ-Զ. սպիտակ չգրուած թուղթ: ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Լուսանցազարդ՝ բուսաթոչնային՝ 57ա, 65բ, 73բ: Զարդագիր՝ թոչնագիր՝ 57ա, 65բ, 73բ, ճանգուցագիր՝ 59բ, 75ա: Գոյներ՝ կարմիր:



Նմուշ 47ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած ԺԹ. դ., պիպ-ներբ՝ նորոգման ժամանակի. կազմի կաշին մաշուած, եզրերից՝ մասամբ թափուած. կազմը ճիմիից թուլացած, ձեռագրի սկզբից Ա-Ը պրակներ ճաւանաբար ընկած, որի հետեւանքով նշեալ պրակների կարը դուրս է եկել ճիմիից, իսկ Ա. փեղկը՝ թերթերից ճեռացել. նախկին աստառների՝ գունափոխ սպիտակ թղթի վրայ սոսնձած նորերը, որոնք եւս խոնաւութեան եւ աղտոտուածութեան հետեւերով են. կազմին եւ աստառներին, պիպ. Դ-Զ՝ ցեցի անցքեր. Ա. եւ Բ. փեղկերին մէկական անցք կայ, որ կարող է լինել գամի եւ կապիչի անցքի հետք. թերթեզերբը՝ մաշուած, մասամբ թափուած, դեղնած. թերթերին տեղ-տեղ ցեցի եւ մաշուածութեան անցքեր, խոնաւութեան հետքեր, ստ. արտք. անկիւններում մատնահետքեր, թանաքի եւ այլ բծեր, թ. 72-81՝ խոնաւութիւնից առաջացած կարմրաւուն հետքեր, թ. 79-80՝ ստ. գրադաշտը մաշուած, պատռուած, իսկ թ. 81՝ ստ. եզրից թափուած. թ. 64-5՝ իրարից ճեռացած. սկ-ից՝ թ. 1ից առաջ ամորոշ ֆանակի թ.՝ ընկած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *1ա* [Թուղթ յաղագս նուիրակութեան] – *(սկ.) /// մեր զտէր Սարգիս եւ Աբրահամ եպիսկոպոսդ հանդերձ սրբալոյս միռօնիւ... (տէր Սարգիս եւ Աբրահամ եպիսկոպոսների միջոցով սրբազան միւռոնը ուղարկելու, նրանց պատշաճ ընդունելու մասին):*

2. *1բ-3ա* Աթոռոց իմտատիայի գրելոյ – *եւ զկնի սիրալիրականի ողջունատրութեանս... (եկեղեցին եւ նրա խախտուած տանիքը վերանորոգելու նպատակով «իմտատիայի»՝ օգնութեան համար Պետրոս վարդապետին ուղարկելու մասին, նշում է նաեւ, թէ մինչ այս նուիրակ կամ ժողով չի եղել այնտեղ սուրբ Աթոռի համար, բայց հիմա նորոգման համար նրանց տուրքերի անհրաժեշտութիւնը կայ, ուստի խնդրում է վարդապետին ընդունել սիրով եւ տուրքերը տալ)։*

3. *3ա-4ա* Թուղթ ողորմութիւն խնդրելոյ – *եւ ընդ աստուածային օրհնութեան նամակիս... (պարոն Գրիգորին ուղղուած օգնութեան խնդրանք-աղերսանք)։*

4. *4ա-5ա* Թուղթ ընծուկ ընդունելութեան – *եւ ընդ օրհնութեան եւ շնորհագեղուն նամակաւս... (Պօղոս վարդապետին նրանց մօտ ուղարկելու, նրա միջոցով տուրքը եւ նուիրատուութիւնը սուրբ Աթոռ ուղարկելու մասին, քանի որ սուրբ Աթոռը եւ միաբանները դրանով են գոյատեւում)։*

5. *5ա-6ա* Թուղթ շնորհակալութեան – *Յետ այսորիկ յայտնի լիցի սիրելւոյդ մերոյ... (Պօղոսի միջոցով սուրբ Աթոռ ուղարկուած նուէրները ստանալու մասին, այս կապակցութեամբ շնորհակալական եւ օրհնութեան խօսք)։*

6. *6աբ* Թուղթ շնորհակալութեան – *եւ զկնի այսր բանի ծաներ՛ուք, սիրելի՛ք մեր ի Տէր... («ֆլանի» ձեռքով «ընծայքն ձեր այս ինչ» ստանալու առիթով շնորհակալական եւ օրհնութեան խօսք)։*

7. *6բ-7ա* Թուղթ շնորհակալութեան – *Ի տէր Աբրահամ արհիեպիսկոպոսէ Շաքեցւոյ աստուածային օրհնութեամբ... (պարոն Պօղոս Արզրումեցու ձեռքով նուէրները ստանալու առիթով շնորհակալական եւ օրհնութեան խօսք)։*

8. *7ա-8բ* Թուղթ ժողովի կարգաւորաց – *Յորմէ ժամանեալ հասեալ գիր օրհնութեան եւ նամակ պահպանութեան... ի վերայ ընդհանուր ամենայն երկրի... եւ լուսածնունդ գաւակացդ մօրս լուսոյ սրբոյ Գանձասարայ... (ողջոյնի խօսքից եւ ողորմած լինելու խրատից յետոյ նշում է, որ Պօղոս վարդապետ կէնճեցին՝ «ի տանէն Աղուանից», իրենից օրհնութեան եւ շրջաբերական թուղթ խնդրելով, գնում է նրանց մօտ, ուստի դիմում է, որ նրանք սիրով ընդունեն վարդապետին եւ «արդիւնաւոր ողորմութիւն» անեն՝ «գրքից, շորից եւ դրամից, զի ողորմութեամբ ձերով լցուցանիցէ զչափաւորս պակասութիւն յանձին իւրոյ»)։*

9. *8բ-10ա* Ողորմութիւն անապատաւորաց – *Յորմէ ժամանեսցի թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան... (շինութեան նուիրատուութեան կոչ՝ կանջայի երկրի Կուլուստան գիւղին մերձ Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու եւ այնտեղի անապատի համար, որը վաղուց է կառուցուել, եւ պարիսպը փլուզուել է, նորոգման եւ այլ շինութիւնների կարիք ունի։ Այդ պատճառով տեղի հոգեւոր առաջնորդ Ներսէս եպիսկոպոսը դիմել է իրեն եւ ստացել օրհնութեան նամակ, որով կարող է նրանցից ստանալ «զկամաւոր ողորմութիւն»)։*

10. *10ա-2ա* Թուղթ ճալէթու վանքի Աստուածածնի թէմի եւ վիճակի սահմանադրութեան գիրն է – *եւ ընդ շնորհագեղուն թղթոյս ծանուցումն լիցի օրհնեալ երկրներացդ՝ Ջաքու, Ղապալու, Արաշպասանու, Աղդազու, որք էք թէմ եւ վիճակ Սուրբ ճալէթի վանք Աստուածածնի աթոռոյն... (խօսում է ճալէթի Սուրբ Աստուածածնին եկեղեցու՝ եղիշէ առաքեալի հրամանով կառուցուած լինելու, կարգերը հաստատելու մասին, ապա՝ ներկայի անմխիթար վիճակի, քանի որ «պատերազմ եւ վրդովումն եղեւ փոքրակի, եւ պակասեցան ի նմանէ կարգաւորք, եւ ինքն մնաց ամայի...», տեղի՝ բնակիչ չունենալու պատճառով քայքայուել են եւ մնացել «անտէրունչ», որի պատճառով էլ այնտեղ է ուղարկում եւ առաջնորդ կարգում Պօղոս վարդապետ Շաքեցուն, որ նաեւ արքեպիսկոպոս է, որ գնայ, նորոգի, միաբանի եւ հովուի նրանց եւ նրանց երկիրը։ Ապա հնազանդութեան կոչ է անում)։*

11. *12աբ* Վերայ առաջնորդի գրել – *Մեծի գերազարդի եւ գերերջանիկ լուսարհեստի հօրդ մերում եւ հոգեւոր իշխողի տանդ Գողտնեաց եւ աջորդի սրբոյ առաքելական աթոռոյդ Թօմայի, տեառնդ Պետրոսի... (ողջոյնի խօսք Պետրոս եպիսկոպոսին)։*

12. *12բ-3ա* Գրելի էջմիածնայ կաթուղիկոսին – *Ի լուսանկար եւ տիրակառոյց, շնորհածորան եւ հանրածնող... (ընդհանրական կաղապար է՝ առանց անուննեւրի եւ խնդրի մանաւորեցման)։*

13. *13ա-5ա* Գրելի Աղուանից կաթողիկոսին – *Համբածաւալ եւ ընդհանրահռչակ, գերազարդ եւ լուսապայծառ... (աղերսագիր Աբրահամ աբղ Շաքեցուց Աղուանից՝ «կողմանցն հիւսիսոյ գաւառին Ալանաց», կաթողիկոսին՝ իրեն հոգեւոր ծառայութեան վերցնելու «ի սահմանս Աղուանից եւ յերկիրս Շաքուայ», խոստում՝ հպատակութեամբ եւ հնազանդութեամբ ծառայելու, ինչպէս որ ծառայել է Յովհաննէս կաթողիկոսին։ Նաեւ գրում է, թէ իրեն ոմանք տկար են համարում ծառայութեան համար եւ մեղադրական բաներ են գրել իր մասին, պատրաստ է գնալ եւ ներողութիւն խնդրել, միայն թէ արժանանայ ներման)։*

14. *15ա-6ա* Ուր ֆահանայ իմին գերի անկանի – *եւ ընդ օրհնութեանս ծանուցի սիրելեաց մերոց, զի հրամայէ... (խօսում է հայերի տարագրութեան մի քանի պատճառի մասին՝ սաստիկ հարկապահանջութիւն, խստաբարոյ բռնաւորք, մարդկային ծով մեղքերի պատճառով գերութիւն։ Ապա նշում է, թէ Յովհաննէս քահանան, «որ է յերկրէն Վրացտանու եւ ի գեղջէն Ցխինվալու», գերուել է լեզգիների կողմից, 25 թումանով ազատուել, որի դիմաց «գիր են առեալ ի դմանէ»՝*

նշուած գումարը իրենց տանելու եւ «զձեռագիրն քո» ետ ստանալու պայմանով։ Ուստի՝ կոչ է անում ընդունել Յովհաննէսին եւ անհրաժէշտ օգնութիւնն անել նրան)։

15. *16ա-7ա* Թուղթ իմմին խնդրելոյ – *Յետ այսր բանի յայտ լիցի հոգեւոր որդեկիդ իմոյ՝ Կիրակոս իշխանիդ... (խնդրանք Կիրակոս իշխանին «շնորհել ինձ ողորմութիւն»)։*

16. *17աբ* Թուղթս իմմին խնդրելոյ – *Եւ յետ բանի այսորիկ զեկուցումն լիցի սիրելի որդւոցդ եւ եղբարցդ իմոց... (իրեն նիւթապէս օգնելու խնդրանք՝ քանի որ «աղքատ եմ եւ մերկ եւ ոչ ունիմ, որով ապրիցիմ»)։*

17. *17բ-8բ* Թուղթ իրիցփոխութեան – *Եւ ընդ շնորհազեղուն եւ օրհնառաքի գրոյս ծանիր... (մահտեսի Սարգսին Գեանջա քաղաքի Սուրբ Յովհաննէս եկեղեցու երեսփոխ կարգելու մասին, առնելու եւ դատելու մէջ իրաւացի եւ արդար լինելու կոչ)։*

18. *18բ-9ա* Թուղթ շնորհակալութեան հանդերձի – *Եւ ընդ օրհնամատոյց ողջունառաքի գրոյս ծանիք... (վաճառականներին ուղղուած շնորհակալագիր՝ «Ք. գազուկէս բագրատ» ուղարկելու համար, օրհնանքի խօսք)։*

19. *19աբ* Թուղթ իշխանութեան հանձայից – *Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Ներսէս կաթողիկոս Աղուանից, յորմէ օրհնութեամբ եւ սիրով ծանիք Գեանջայու քաղաքիդ քահանայք... (Մարգարի որդի մահտեսի տէր Պետրոսին միաբանութեամբ հալածելու մասին, չնախանձելու եւ միմեանց մասին վատահամբաւութիւն չտարածելու հրաման)։*

20. *19բ-21բ* Թուղթ հոգեւոր տիրաց գրելոյ – *Երկնահանգոյն եւ շնորհազարդ ատենաապետի սարսափելի շնորհալի... (Աբրահամ եւ Իսրայէլ վարդապետները «սրբոյ եւ մեծի աթոռոյն» Գանձասարի կաթողիկոսին գրել են, որ ստացել են նրա ուղարկած նամակը, հասկանում են խնդիրը, բայց եւ «ըստ սրբազան վեհապետին էջմիածնայ», հնազանդութեամբ շարունակելու են ծառայել։ Իսկ Յովսէփ տղան կաթողիկոսի նամակը տարել է Նուխի, տեղի իշխաններն ու քահանաները տեսել են, իսկ իրենք վարդապետները ինչ-որ պէտք եւ պատշաճ է, ասել են. իրենք էլ պատասխանել են, որ 15 տարի էջմիածնի սրբազանի հրամանով ծառայութիւն են արել, այսուհետ եւս շարունակելու են ծառայել Գանձասարի սուրբ Աթոռին։ Ապա նշւում է, որ իրենք համաձայն են մէլիքների, զրւանցիների եւ շամախեցիների ասածներին, եթէ դրանք համապատասխանում են էջմիածնի սրբազանի հրամաններին։ Անելու են այնպէս, ինչպէս իշխանների հրամանն է, եւ ինքնագլուխ ոչինչ չեն ձեռնարկելու)։*

21. *21բ-2ա* Թուղթ գերէտիրանց գրելոյ – *Ի Սրբոյ Աստուածածնայ աթոռոյս առաջնորդ Աբրահամ վարդապետէ... (արցախցի Մօզի անունով մէկի որդին գերի է ընկել եւ չունենալով փրկագին, նրանց հայրապետի կոնդակով դիմել է իրենց՝ տուրքի (հաւանաբար՝ դրամի) խնդրանքով, որի համար կոչ է անում ողորմածութիւն ունենալ եւ օժանդակել)։*

22. *22աբ* Թուղթ պարտէզեանց – *Յիսուսի տրուպ ծառայ Աբրահամ վարդապետէ եւ առաջնորդ օրհնեալ Թէմի եւ վիճակի մերում... (դիմում է բոլորին՝ քահանաներին, իշխաններին, երէցփոխաններին, գանձապետերին ելլն՝ օգնութիւն ցուցաբերելու համար Աբրահամ անունով աղքատ եւ ծանր պարտքերի տակ յայտնուած մարդուն, որին իր անունից շրջաբերական թուղթ է տուել)։*

23. *22բ-3բ* Թուղթ ծանուցումն աղխատաց – *Աստուածասէր եւ բարեպաշտօն հարցդ եւ եղբարցդ իմոց... (դիմում է մի աղքատ, օրահացի կարօտ մարդու օգնելու նպատակով)։*

24. *24աբ* Թուղթ ծանուցումն աղխատաց – *Շնորհն ամենազօրին Աստուծոյ եղիցի ի վերայ պատրաստական հարցդ իմոյ... (Պօղոս անունով չքաւորին օգնելու կոչ է)։*

25. *25ա-6ա* Թուղթ վկայական եպիսկոպոսաց – *Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Ներսէս կաթողիկոս Հայոց, որք ի կողմանս Աղուանից, փոխանորդ եւ յաջորդ սրբոյն եղիշէի առաքելոյն եւ Գրիգորիսի սուրբ հայրապետին՝ Թոռիոն մեծի լուսաւորչին Հայոց եւ ծայրագոյն պատրիարգ երկնահանգէտ աստիճասարաս սրբոյ մեծի Աթոռոյս Գանձասարայ – Շնորհօք ամենազօրին Աստուծոյ բազմաժողով հանդէս արարի ի հազար երկու հարիւր Ա. (1752)... (Աբրահամ վարդապետ Շաքեցուն «ի ծառայութիւն եւ ի պաշտօնատարութիւն սրբոյ Աթոռոյս Գանձասարայ» եպիսկոպոս ձեռնադրելու, նրան տուած իրաւունքի, նորընծայ եպիսկոպոսին չհակառակուելու մասին. այս մասին տե՛ս նաեւ՝ ձեռ. 3452, 2ա)։*

26. *26աբ* Թուղթ եղբօր վերայ գրելի – *Մեծապատիւ եղբօրդ իմոյ եղիազար վարդապետիդ հոգեկան սէր ընծայի... (որպիսութեան մասին հարցում եւ պատասխան նամակի խնդրանք)։*

27. *26բ-7բ* Բրիւնձ ժողովեցման գրելի – *Եւ զկնի օրհնութեանց, գորս մատուցաք զեկեղեցի սիրելեացդ մերոց... (տէր Պօղոս վարդապետին ուղարկելու եւ նրա միջոցով բրնձի բերքից աթոռանիստ առատ բաժին տանելու մասին)։*

28. *27բ-8ա* Թուղթ շնորհակալութեան – *Զկնի յայտ լիցի սիրելւոյդ իմոյ, զի ի քէն... (շնորհակալագիր է՝ կարապետ եղբօր միջոցով նուէրը ուղարկելու համար եւ նուէրին ի պատասխան՝ օրհնութեան խօսք. նամակի հասցէատէրը եւ նուէրի տեսակը գրուած չեն)։*

29. *28աբ* Թուղթ օրհնութեան – *Զկնի օրհնեալ լինիք յԱստուծոյ վերոյգրեալ Ղարաջալլու գիւղի օրհնեալ քահանայքդ... (շնորհակալութեան եւ օրհնութեան խօսքով դիմում է բոլորին՝ իր ուղարկած վարդապետին ընդունելու եւ մեծարելու համար)։*

30. *28բ-32ա* Թուղթ վկայական ծայրագունի – *Մարդասէր եւ արարչագործ բնութեան բարերարին Աստուծոյ... (Թուարկում է Աստծու վարդապետութիւնը սերնդեսերունդ ժառանգածներին՝ Աստուած-Սուրբ Հոգուց, Ադամից, եկեղեցու հայրերից մինչեւ տէր Յօհան արքեպիսկոպոս Ամթեցին, որից յետոյ էլ նշում է իրեն՝ «եւ սոցին վերոգրեալ երջանկացս յետին աշակերտ նուաստ ծառայ Աբրահամ վարդապետս Շաքեցի եւ առաջնորդ Ճալէթու Սուրբ Աստուածածնի վանքին...», որի իշխանութիւնը ստացել է կեանջա քաղաքի Սուրբ Յովհաննէս եկեղեցու առաջնորդ Աթանաս արքեպիսկոպոս Ջարաբերթեցուց՝ «ի մէջ բազմահանդէս ժողովրդեան, ի թուին ՌՄԱ. (1752), ամսեանն Յունվարի Գ.»)։*

31. *32բ* Շարադրանք եպիսկոպոսի – *Աստուածազարդ եւ գերազարդ եղբօրդ իմոյ աւագագունի ի տանն Աստուծոյ... (ողջոյնի խօսք՝ ուղղուած «Շամախու եւ բոլոր նահանգիդ Շամախու» հոգեւոր իշխող տէր Ոսկան եպիսկոպոսին)։*

32. *32բ-3բ* Թուղթ բանադրանաց – *Յիսուսի ծառայ Խորայէլ կաթուղիկոս, յորմէ հասցէ ի վերայ չՊետրոս չիք քահանայիդ... (բանագրանքի խօսք Պետրոս քահանային, որը Մահմատ Թովան գիւղի քահանայից այլազգիների օգնութեամբ յափշտակել է քահանայութիւնը՝ առանց իր թոյլտուութեան, ուստի՝ նրան զրկում է քահանայութիւն անելու իրաւունքից, մինչեւ չզղջայ)։*

33. *33բ-5ա* Թուղթ բանադրանաց գրելի – *Քրիստոսի նւաստագունեղ ծառայ եւ սուրբ Դանձասարայ միաբան ի տէր Պօղոս վարդապետ ժամանեսցի գիր բարկութեան... (ուղղուած է տէր Պօղոս վարդապետին, բայց առանց խնդրի որոշակիացման)։*

34. *35ա-6բ* Թուղթ բանադրանաց – *Յորմէ ժամանեալ հասցէ թուղթս դառնութեան բանագրանաց... (առանց որոշակիացման, կաղապարային գրութիւն է)։*

35. *36բ-7ա* Թուղթ բանադրանաց եւ նզովից – *Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Պօղոս եպիսկոպոսէ, յորմէ հասցէ գիր նզովից... (ուղղուած է «պիղծ ֆլանիդ», որ չի տուել սուրբ Աթոռի հասն ու իրաւունքը)։*

36. *37աբ* Թուղթ բանադրանաց արձակման – *Քրիստոսի ծառայ տէր Պօղոս արքեպիսկոպոսէ առաջնորդ Դաթեւու վանաց... (գիր սիրոյ, ողջոյնի՝ ուղղուած Պօղոսին)։*

37. *37բ-9ա* Թուղթ երուսաղէմայ ժողովք – *Եւ ընդ օրհնութեան նամակաւս յայտ լիցի համօրէն... (հասցէատէրը պարզ չէ, սակայն դիմում է Սարգիս անունով այրի համար, որ էրեւանից է, իրենից թուղթ ու վկայական է խնդրել, ինքն էլ տուել է, որ գնայ եւ նրանց օժանդակութիւնը ստանայ երուսաղէմ ուխտի գնալու համար)։*

38. *39ա-41ա* Թուղթ առաջնորդական եղիշէի առաֆելո[յ]ն – *Յորմէ ժամանեալ հասցէ թուղթ օրհնութեան եւ նամակ պահպանութեան... (Կիրակոս վարդապետին Սուրբ եղիշէ առաքեալի վանքին հովիւ եւ առաջնորդ կարգելու, վանքի խաւար, աւեր եւ առանց հովուի մնալու մասին, յանձնարարութիւն՝ նշեալ առաջնորդին պատշաճ դիմաւորելու, հասն ու իրաւունքը ամբողջապէս նրան տալու, սիրոյ եւ չհակառակուելու խորհուրդ եւ օրհնանք)։*

39. *41ա-2ա* Թուղթ աղիատաց գրելոյ – *Եւ զկնի օրհնութեանս զեկ լիցի յԱստուծոյ օրհնեալ հայկական քրիստոնէիցդ... («Կէնճէու» երկրի Ղարաբուլախ գիւղից Սարգիս անունով մէկի մասին է, որը խիստ հարկերի պատճառով չքաւոր է դարձել եւ ապրուստի միջոց չունի։ Դիմում է «կամաւոր ողորմութեան» կոչով)։*

40. *42բ-3ա* Թուղթ գերեւերաց – *Եւ ընդ օրհնութեանս ծանուցի սիրելեացդ մերոց եւ հոգեւոր հարցդ... («Վրացտանու» երկրի «Դըմանիսու» գիւղի քահանայ Յարութիւնի եղբայրը գերի է ընկել լեզգիներին, որոնք 10 թուման են պահանջում ազատ արձակման համար։ Քահանայ Յարութիւնին տուել է վկայական թուղթ, որով կկարողանա օգնութիւն ստանալ նրանցից)։*

41. *43ա-4ա* Ընդհանուր Հայոց լուսաւորիչ, աստուածընդիր Յովհաննէս կաթուղիկոսիդ զաստուածաշնչափ սուրբ աջն համբուրեմ – *Վերոյ գրեալ լուսատուիդ մերոյ... (որպիսութեան հարցում, շնորհակալագիր իրենց յիշելու՝ սիրոյ եւ օրհնութեան նամակ ուղարկելու համար, ինչպէս նաեւ՝ ծանուցում առ այն, որ Սարգսի միջոցով «մէկ կթի գով» է ուղարկել)։*

42. *44ա-5բ* Թէմուրազայ Քրիստոսապսակի եւ հոգեծնի արեայիդ Վրաց, նաեւ Հերակլայ աստուածազօրի եւ բաջասրտի խանիդ ի տոհմէ արեայականէ եւ մարգարէականէ եւ ի շառաւիղէ յառաքինեաց... – *Ես՝ Ներսէս, նուաստ ծառայ Յիսուսի եւ որոյ կամօքն կաթուղիկոս եւ պատրիարգ Աղուանից Հայոց, մատուցանեմ... (ողջոյնի խօսքից յետոյ գրում է, որ Յակոբ վարդապետ գիտնական Շամախեցին, որ մինչ այժմ էջմիածնում էր եւ որին ինքը ցանկացել է բերել իր մօտ «սակս պիտանաւորութեան» եւ չի ստացուել, հիմա իր մօտ է։ Իսկ արքան Գրիգոր վարդապետի միջոցով ուղարկուած թղթով Յակոբ Շամախեցուն իր մօտ է կանչել, ինքն էլ, «բարեաց մեծագոյնն» ընտրելով, Յակոբ վարդապետին ուղարկում է նրա մօտ, քանի որ այդպէս է պահանջում նաեւ Մայր Աթոռի օգուտը, որի համար էլ Վրաց արքան կանչել է։ Բայց խնդրում է նաեւ ամեն ինչ անել զգուշութեամբ, որ արքայի անունը եւ Մայր Աթոռին պակասութիւն չլինի, Յակոբ վարդապետին ընդունել սիրով եւ խնամքով. եւլն)։*

43. *45բ-6բ* Թուղթ առաջնորդութեան աւապատի – *Եւ ընդ աստուածայնոյ օրհնութեանս ծանուցումն լիցի ընդ[հ]անուր... (Բարսեղ եւ Յարութիւն վարդապետներին Մեռոնուտի Սուրբ Ուխտի միաբան կարգելու, «ի սէր սուրբ անապատին Մուռուտոյ» նրանց սիրով ընդունե-*

լու եւ «ողորմութիւնն» շնորհելու մասին. հասցէատէրը պարզ չէ)։

44. *46բ-7ա* Հաւ եւ հաւկիթ ժողովելոյ – *Եւ ընդ աստուածապարգեւ օրհնութեանս ծաներո՛ւք, սիրելի՛ք մեր ի Տէր... (ամեն տօնի եւ պատարագի հաւաքուող նուէրների, հաւ եւ հաւկիթ ժողովելու եւ ուղարկելու մասին. առանց հասցէատիրոջ եւ այլ անունների որոշակիացման)։*

45. *47աբ* Հանճարազգօն եւ մեծապատիւ նազելոյդ տեառնդ Ջամարիայի սրբանուէր ֆաճանայիդ յիսուսեան ողջոյն եւ գրկախառն համբոյր ողջութեանդ (այսչափ)։

46. *47բ* Թուղթ իմմին խնդրելոյ – *Ի յԱստուծոյ չնչին ծառայ Աբրահամ արքեպիսկոպոսէ... (տիրացու Աբրահամին ողջոյնի խօսքից յետոյ խնդրում է 1 լաւ Յայսմաւուրք ճարել եւ տալ Անապատին, քանի որ այդ օրերին Անապատը գերեվարուել է «լեկզի»ների կողմից, որի ժամանակ էլ հաւանաբար կորել է իրենցը)։*

47. *47բ-8ա* Թուղթ շնորհակալութեան – *Յետ այսր բանի յայտ լիցի սիրելոյդ իմոյ... (Պետրոսի ձեռքով ուղարկուած պարգեւի համար շնորհակալութեան եւ օրհնութեան խօսք)։*

48. *48աբ* Թուղթ իմմին խնդրելոյ – *Զկնի այսորիկ բանի զեկ եղիցի նազելոյդ իմոյ... (գրում է արխալուղի պակասութեան մասին եւ խնդրում Սպահանի 1 լաւ մաւի զադակ)։*

49. *48բ-9բ* Թուղթ իմտատեայի եւ օգնութեան – *Յորմէ ժամանեսցի գիր օրհնութեան եւ սիրոյ... (շնորհակալագիր է՝ ուղղուած Դարբանդ քաղաքի ժողովրդին եւ տեղի եկեղեցու հոգեւորականներին՝ Սաղաթիէլ վարդապետին լաւ ընդունելու եւ նրա հետ նուէրներ եւ իրաւունքը ուղարկելու համար)։*

50. *49բ-51ա* Թուղթ վարդապետաց ժողովի – *Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր կաթուղիկոս Աղուանից եւ ծայրագոյն պատրիարգ Սրբոյ աթոռոյս Եղիշէի առաքելոյն, յորմէ ժամանեսցի, հասցէ թուղթ օրհնութեան եւ նամակ պահպանութեան... ի վերայ օրհնեալ նահանգներացդ, այսինքն՝ Ջաքու, Ղապալու, Աղտաշու, Արաշպասանու... մեծաց եւ փոքերցդ ամենից... (օրհնութեան խօսք, սիրոյ խրատ, պատուէր՝ իր ուղարկած Աբրահամ վարդապետին պատուելու եւ իր հրամանները կատարելու)։*

51. *51բ* Հաւ եւ ձու ժողովելոյ – *Յայտ լիցի, սիրելի՛ որդւոցդ իմոց, որ էք բնակեալ ի յօրհնեալ գիւղդ Գետաշէն... (գլխին՝ 10 ձու եւ մէկ հաւ ժողովելու եւ Թորոսի ձեռքով ուղարկելու մասին)։*

52. *51բ-2ա* Շարադրանք սանատի – *Պատճառ գրոյս այս է, որ ես՝ էրզրումեցի Կիրակոսի որդի Աւետիսս... («կէնջեցի» Աւետի որդի էվումից վերցրած պարտքի համար մուրհակ է, որի վկան էլ Վարդանի որդի Յարութիւնն է)։*

53. *52ա-4ա* Թուղթ իմտատիայի աթոռայց – *Յորմէ ժամանեալ հասցէ թուղթ օրհնութեան եւ նամակ պահպանութեան... ի վերայ յԱստուծոյ օրհնեալ յերկրիդ Գիլանու... մեծամեծաց եւ փոքունց... (սկզբում օրհնութեան խօսք, իսկ բուն խնդիրը Սաղիանու վանքի, «որ է անուամբ սրբոյն Ստեփաննոսի Նախավկային շինեալ», նորոգումն է, ուստի «զայս անուն» վարդապետի գործակալ է կարգել՝ օգնութիւնը հաւաքելու, նաեւ յորդոր՝ գործակալին լաւ ընդունելու եւ օգնութիւն ուղարկելու)։*

54. *54բ-7բ* [Թուղթ օրհնութեան] – *Յիսուսի Քրիստոսի ծառայք երեմիայ եւ Սիմէօն կաթուղիկոսունք ամենայն երկրիս Աղուանից... եւ արփիաւոր սրբոյ աթոռոյն Գանձասարայ, յորոց եւ որովք ժամանեալ հասցէ գիր օրհնութեան եւ նամակ պահպանութեան... ի վերայ ընդհանրական տանս Աղուանից... (օրհնութեան խօսք)։*

Ծնթ. Թէեւ 57ա էջում կայ առանձին խորագիր՝ «Թուղթ օրհնութեան», սակայն այն տրամաբանական շարունակութիւնն է 56բ, որի վերջին տողը եւ 57ա էջի սկզբնատողը նոյնն են։

55. *57բ-8բ* Ազնուամեծար եւ գերյարգելի օծելածին եւ արեայորդի Գօրգի խանի՝ հատուկ սիրելոյդ իմոյ ըստ հոգւոյ – *Յիսուսի Քրիստոսի ծառայ Աղուանից կաթողիկոս, յորմէ մեծաւ սիրով ընծայի... (օրհնութեան խօսք, այնուհետեւ գրում է, որ ստացել է նրա թուղթը եւ նրա գտնուելու տեղի մասին իմացել միրզայ Գօրգիից, իսկ իր որպիսութեան մասին գրում է Կեանճայ քաղաքից», ողջ լինելու մաղթանք եւլն)։*

56. *58բ-9ա* Գիտութիւն լիցի սրբազան հօրդ իմոյ, զի մինչ յայդ տեղդ էի ընդ հրամանոցդ... *ողջ լե՛ր ի Տէր. ամեն։ Գրեցաւ ի Մայիսի ԻԱ. (21), ձեռամբ իմոյ Յակօբայ անարդիւն աբեղայիս անպիտան ծառայիս տեառնդ (վալիին գիր գրելու, առանց այդ գրի «աստ» գնալու մասին, ապա հասցէատիրոջն ասում է, որ նրա անունից 2 վալիներին «մուսաւատէս» է գրել, որոնք խնդրում է հաստատել եւ իր ուղարկած տղայի միջոցով թղթերը իրեն ետ ուղարկել, քանի որ առանց այդ թղթերի պատշաճ չէ այնտեղ լինելը, իսկ մնացածի մասին խնդրում է հարցնել «ի ծառայէդ քումմէ մեր Գրիգորէդ»)։*

57. *59ա-61ա* Թուղթ կուսանաց անապատի ժողովի, Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Մինաս ընդհանրական կաթողիկոս ամենայն Հայոց եւ ծայրագոյն պատրիարգ Վաղարշապատու առաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի եւ տիեզերականի, լոյսակաղոյց եւ տիրանկար մեծի եւ անյաղթելի Սրբոյ Աթոռոյս էջմիածնի – *Շնորհք ընդ ձեզ եւ երկնաւոր խաղաղութիւն... (սկզբում օրհնութեան խօսք, իսկ խնդիրը վերաբերում է Ղարապաղի Սուրբ Նշան անունով՝ կուսանաց անապատի կարիքները հոգալուն, որի համար նշեալ անապատի վերատեսուչ Մարտիրոս վարդապետին իր կողմից*

տրուած նամակով ուղարկում է, որ նրանք «արդիւնաւոր ողորմութիւն» տան: Անապատը ջրի եւ շինութեան կարիք ունի: Մինչ այդ ծախսերը հոգում էր թեմը, սակայն «այն յերկրին եղեալ ազգն հայոց ցիր եւ ցան» են եղել, որի պատճառով վիճակը տուրքերը չի կարողանում հաւաքել եւ անապատի կարիքները հոգալ):

58. *61աբ* Ի Մէլիքիսեդեկ վարդապետէ բազում օրհնութեամբ ծանի՛ր, հոգեւոր որդիդ իմ տիրացո՛ւ Փիլիպպոս... *(իր աշակերտին չուխայ կարել տալու համար խնդրում է ուղարկել «մէկ աղուշայ լաւ շալ»):*

59. *61բ-2բ* Թուղթ շնորհակալութեան ճնազանդ որդոյ – *Ըզկնի ողջունագրութեանս ծանի՛ր, սիրելի՛ իմ, զի գրէ... (հնազանդութեան, նուիրակ վարդապետին ընդունելու եւ տուրքերի մասին խրատ):*

60. *62բ-3բ* Թուղթ ճնազանդ որդոյ շնորհակալութեան – *եւ օրհնութեան նամակաւս յայտ լիցի սիրելւոյդ, զի ասէ... (հնազանդութեան խրատ, յորդոր՝ համոզելու իշխաններին եւ ժողովրդին նուիրակութեան գործը ետ չգցելու համար):*

61. *63բ-4ա* [Գիր ջերման] – *Տէր մեր Յիսուս Քրիստոս մտեալ ի տունն Պետրոսի, զոքանչ նորա տաքնապէր ջերմամբ... (աւետարանական պատումը՝ Քրիստոսի զօրութեամբ ջերմութիւնը իջնելու մասին. Մտթ., Ղ. 14, խնդրանք, որ Աստուծով բժշկութիւն լինի նաեւ Աբրահամ վարդապետին՝ «հալածուի դեւն, եւ փարատի ցաւն»):*

62. *64ա* Գիր ջերմի եւ տենջի վերին եւ ներքին – *Ծագայի ծարգանայ ծետաւ, դուք բարձէք ցաւն, ջերմն եւ տենջն Աբրահամ վարդապետիս անուամբ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

63. *64աբ* Ակումի պտուղեաս պասսար եղերաս պետհաւուն անուն կոճկոտոր, որ ֆեզ ասեմ, թէ ջհուտ ջերմէս, թէ հայ ջերմէս... զֆեզ եւ եղմմնեցուցանեմ կաթամբբ սուրբ կուսին Մարիամու... եղիցի բժշկութիւն ջերմին եւ տենդին:

64. *64բ* Դանիէլ՝ դատաստանն Աստուծոյ... զայս անուանմս գրեն հացին, հօրն դնեն, ոչիլ ոչ ուտէ Աստուծով:

65. *65բ-72բ* [Գիր մաղթանաց] – *Այլ եւ շինողս սուրբ եկեղեցւոյս եւ կառուցող կամարակապ խորանիս... Սիմէօն գերընտիր ընդհանրական կաթուղիկոսն... 70բ-2բ («Ա-Ֆ») Աղբիւրն ամենայն շնորհաց... քաղցրն Աստուած... եւ ընդդէմ որդւոց ձերոց. ամէն:*

66. *73բ-5ա* Ըզկնի շնորհանիր օրհնութեանս ծանուցումն լիցի... *(այլասիրութեան խրատ, տէր Ղուկաս եւ տէր Ղազար քահանաները, որոնք «յերկրէն Վարանդու եւ ի գեղջէն Աւետարանոցու», պակասութեան եւ աղքատութեան պատճառով թուղթ են խնդրել, որ կարողանան տանել եւ դրա հիման վրայ օգնութիւն ստանալ, ուստի յորդորում է «ողորմութիւն շնորհել»):*

67. *75ա-9բ* Թուղթ մեծի ուխրակութեան – *Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Իսրայէլ կաթուղիկոս ամենայն Աղուանից... յորմէ ժամանեսցի թուղթ սիրոյ, ողջունի շնորհաց... ի վերայ օրհնեալ եւ բարելի նահանգներացդ Դիզակու, Վարանդու եւ Խաչենու եւ ի միջի դոցա բնակեալ եւ հաստատեալ սրբոց յեկեղեցայց... (օրհնութեան խօսք, ըստ աւանդոյթի՝ նրանց սրբագործ մեռոն ուղարկելու եւ նրանցից նուիրակութիւն ստանալու, տէր Սարգիս եւ Աբրահամ եպիսկոպոսներին (վարդապետերին) նուիրակ կարգելու, տրուած յանձնարարութիւնների եւ նրանց մօտ ուղարկելու մասին, պատուէր՝ նրանց առանց ներհակութեան ընդունելու):*

68. *79բ-81ա* Սիրելեաց գրէ – *Եւ ընդ աստուածապարգեւ եւ օրհնամատոյց թղթոյս ծանուցումն լիցի... Ողջ լեր ի Տէր ի փառս նորին եւ ի պարծանս եւ յուրախութիւն ծառայիս տեառնդ Յակօբայ անարգեան աբեղայիս (Աբրահամ վարդապետին նուիրակ կարգելու եւ նրանց մօտ ուղարկելու, նուիրակին եւ գանձանակին հաւատարիմ մնալու խրատ):*

Ծնթ. 81ա սա վջ-ում ունի նաեւ լրացուցիչ մաս՝ խնդրանմ՝ վարդապետին լաւ ընդունելու՝ «Դարձեալ սիրելի՛ մեր, օրհնեա՛լ ֆանանա[յ]ֆդ եւ ֆանդխուդայ, պատուիրեմ ձ[ե]զ... շնորհիւ յիսուսեան. ամէն»:

Ծնթ. Սրանմ առաւել կաղապարային գրութիւն յիշեցնող նիւթեր են, ֆանի որ որոշ դէպքերում ոչինչ մասնաւորեցուած չէ: Կան գրութիւններ էլ, որոնց մէջ կա՛մ հասցէատէրը պարզ չէ, կա՛մ խնդրոյ առարկան: Փակագծային բացատրութեան մէջ գրել ենմ բոլոր տուեալները, իսկ եթէ հասցէատէր կամ նամակագիր, խնդրոյ առարկայ եւ նման տուեալներ չկան, ուրեմն բացակայում են նաեւ գրութեան մէջ: Այս ամենով հանդերձ՝ այս գրութիւնները որոշակիօրէն ուրուագծում են ժամանակաշրջանի եկեղեցական, ազգային, հասարակական կեանֆի պատկերը (եկեղեցականների՝ միմեանց հասցէին մեղադրանմներ, խաբէութիւններ, բանսարկութիւններ, հայերի տարագրութեան եւ գերեվարութեան վերաբերեալ առանձին տեղեկութիւններ եւն):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽԱԳԱՂԱՓԱՐ ՕՐԻՆԱԿԻ

57բ Այս աստուածաշունչ գիրքս է Շաֆեցի Աբրահամ վարդապետին: Ով ոք որ հանդիպի այս սուրբ գրքոյս եւ ընթեռնուցու զսա կամ զբօանուցու ի սմին, յիշեսցէ յարժանաւոր յաղօթս իւր զվերոգրեալ վարդապետն եւ զծնողս նորին՝ Ջաֆարիայն եւ զխաթունն, եւ զայլ ազգայինսն ամենայն, եւ որ յիշէ, յիշեցեալ լիցի եւ ինքն ի միւսանգամ գալստեանն Քրիստոսի եւ լուիցէ զօրհնեալ ձայնն նորա: Արդ, գրեցաւ այս բան ի ՌՄՀ. (1781), Ապրիլի ամսոյ հինգումն, ի Շաֆի:

Տե՛ս նաեւ՝ Բվնդ., 58բ-9ա, 79բ-81ա:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

64բ Գրեցաւ գրագրութեան գիրքս ձեռամբ Աբրա-

համ, Յարութիւն՝ *անարժան վարդապետացս* Շաֆեցւոյ, *ի ՌՄԽ. (1791) թուին հայոց, Յուլիս ամսոյ երկուսն, առ դրան* Սրբոյ *աթոռոյս* Ատուածածնի *եւ* Թուխ Մանկան Սուրբ Նշանի, *ի ներս գիւղին* Ճալէթու։

Ծնթ. Ըստ տառանեւերի՝ ձեռագիրն ունի մէկ գրիչ՝ Յարութիւն Շաֆեցին, որը Աբրահամ վարդապետ Շաֆեցու իմացութեամբ կամ գուցէ պատուէրով ընդօրինակել է նրան անհրաժեշտ գրութիւնները բուն օրինակներից։ Այդ պատճառով էլ ձեռ-իս գրիչ յիշատակել է նաեւ Աբրահամ Շաֆեցուն։ Հաւանական է նաեւ, որ սկզբից Ա-Ը. պրակները ընկած լինեն, որտեղ կարող էր նաեւ Աբրահամ Շաֆեցու ձեռքով գրուած մասը լինել։ Կայ եւս մէկ՝ հիմմ օրինակից եկող գրչի անուն՝ Յակոբ աբղյ։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

64բ (ԺԸ. դ., նոտրգիր) ես՝ տիրացու Կարապետս, *գրէցի այս գիրս ի շտեմարանն* Աւետաց։

ՆՇՈՒՄ՝ *Ա. աստառին սեւով՝ «Օրինակք նամակագրութեանց կաթողիկոսաց եւ այլոց», պհպ. Ա՝ սեւով «226/3592», «ՌՄԽ. – 1791 Մ[եսրոպ] եպ[իսկոպոս]»։*


ԳՐՉԱՓՈՐՁ՝ *40բ այբուբեն՝ «ա-գեա», «աբագուսա»։*

3593
ԺՈՂՈՎԱԾՈՅ

Կ. ՊՈԼԻՍ ՌՄՁԲ. – 1833

ԳՐԻՉ՝ մհտ. Գրիգոր Պոլսեցի։

ԹԵՐԹ՝ 90 (գրչի էջակալում՝ 1-81, որ է՝ 1ա-41ա. 1-87, որ է՝ 43ա-86ա). չգրուած՝ թ. 1, 2բ, 41բ-3բ, 44բ, 86բ-90բ։ ՊՐԱԿ՝ 1-4×10 (1՝ 12)+1-5×10 (1՝ 12, 5՝ 6)։ ՆԻՒԹ՝ թուղթ։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16,3×10,1։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, մատիտով սահմանագծուած (13,5×7,5. ստ. լս.՝ յիշագրեր)։ ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 50ա)։ ՏՈՂ՝ 23։ ԿԱՋՄ՝ դարչնագոյնով եւ սեւով ծաղկաթուղթ, մէջբը եւ անկիւնները՝ տպարանային բրոնզէ դրոշմազարդերով սեւ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ սպիտակ չգրուած թուղթ։ ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ՝ սպիտակ չգրուած թուղթ՝ լուսագծերով եւ լուսադրոշմով՝ 2 փաթթոցգլխարկ, մասն կազմաստառի։



Նմուշ 50ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմը մաշուած, եզրերն ու անկիւնները մասամբ թափուած, Ա. փեղկի մէջբի ստ. եզրի կաշին կազմի միացման հատուածում՝ պատռուած. աստառներին՝ միջուկին սոսնձումից առաջացած դեղին հետեր, Ա. աստառին սոսնձած նշումի սպիտակ թերթիկը՝ պատռուած, նշմարւում են մի բանի տառեր։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *2ա-41ա* [Տիտղոսաթերթ] Ներբողեան ճառ պատմագրաբար ի վարս սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյն արհիեպիսկոպոսի Տարսոնի Կիւլիկեցւոց, ի Գրիգորէ երիցուէ, ի խնդրոյ նորին համաձուաւ եւ համազգւոյն Ներսիսի բահանայի, ընդօրինակեալ ձեռամբ մահտեսի Գրիգորի Պոլսեցւոյ՝ փոխրատուրի պերճաշնորհ Պօղոս վարդապետի՝ արժանավայել փոխանորդի վեհափառ տեառն Ստեփաննոսի արեւելիսկոպոսի եւ պատրիարգի արեւմտեան կողմանց Պոլսոյ, 1833, Նոյ[եմբերի] 25, ի պատրիարգարանս ամենայն Հայոց

1. *3ա-38ա* Ներբողեան ճառ պատմագրաբար ի վարս մեծի բահանայապետին սրբոյն Ներսիսի արհիեպիսկոպոսին Տարսոնի Կիւլիկեցւոյ – *Բազում զգուշութեան եւ ստէպ արթնութեան պէտք են այնոցիկ... յորոց ամենեցունց համաձայնութեամբ ի մի բերան փառաւորի ամենասուրբ երրորդութիւնն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

Տե՛ս Գրիգոր Սկեւռացի, Ներբողեան ի սուրբն Ներսէս Լամբրոնացի, Վենետիկ, 1854 (Սոփերք հայկականք, ժե.)։

– *38ա-41ա* Բան յիշատակի մատենիս – *Աստուածային մարգասիրութեամբ նախախնամութիւնն միշտ որպէս բարիոք վերակացու եղեալ, իբր սեպհական տէր տան առ յինքենէ ստացելոց... այլ եղիցի արժանի լինել հաստատել զանձինս, որպէս զսա ի վերայ ամրագոյն վիմի, անվրդով յամենայն յարուցմանց մնալով ի փառս Աստուծոյ. ամէն։*

Տե՛ս Յովս., ՅիշՀ, էջ 727-732։

Բ. *44ա-78ա* [Տիտղոսաթերթ] Սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյ ճառ յաղագս ժառանգաւորաց, ընդօրինակեալ ձեռամբ մահտեսի Գրիգորի Պոլսեցւոյ՝ փոխրատուրի պերճաշնորհ Պօղոս վարդապետի՝ արժանավայել փոխանորդի վեհափառ տեառն Ստեփաննոսի արեւելիսկոպոսի եւ պատրիարգի Պոլսոյս, 1833, Նոյ[եմբերի] 25, ի պատրիարգարանս ամենայն Հայոց ի Կոստանդնուպոլիս

Տե՛ս ձեռ. 632, 355բ-80բ։ ա/45ա-58բ։ բ/58բ-68ա։ գ/68ա-78ա (խորագրերից յետոյ՝ «ճառ Ա.», «ճառ Բ.», «ճառ Գ.»)։

Տե՛ս Ներսէս Լամբրոնացի, Խորհրդածութիւնք... Վենետիկ, 1847, էջ 517-555։

Ունի՝

– 78ա-9ա Նորին սրբոյն Ներսեսին *– Այս բանք եւ աստուածային օրինադրութիւնք սպասաւորութեամբ մատաց... եւ եղեւ վշտագնեալ ոգւոյ իմոյ մեծ սփոփանք եւ մխիթարութիւն, եւ առ Աստուած երկրպագութեամբ գոհութիւն... ամէն:*

Տե՛ս Ներսէս Լամբրոնացի, Խոհուրդածութիւնք... Վենետիկ, 1847, էջ 556-557. նաեւ՝ ձեռ. 441, 122բ. ձեռ. 1445, 291բ-2ա:

– 79ա-86ա Յիշատակարան մատենի գրութեան *– Յամի վեց հարիւրորդի յիսներորդի չորրորդի (1205) թուականութեանն հայոց ես՝ նուաստ եւ անարժան ծառայ Աստուծոյ* Ներսէս... *եւ որոց միանգամ անուանքն գրեալ են ի գպրութեան կենաց, որպէս զի ընդ նոսին եւ անուանք ձեր յիշատակողացդ գրեալ լիցին յանմահ գիրն ի Քրիստոս ի Տէր մեր, որում ընդ Հօր եւ Հոգւոյն Սրբոյ փառք, պատիւ եւ զօրութիւն յաւիտեանս. ամէն:*

Տե՛ս ԺԳ. դ. յիշ-ք, էջ 48-53, Հմր 19:

Ծնթ. 38ա-41ա, 78ա-9ա, 79ա-86ա յիշատակարանները Ներսէս Լամբրոնացու գործերի մեծ մասի ընդօրինակութիւններում կան: Սրանք ունեն առաւելապէս բնագրային, այսինքն՝ գրապատմական ու սկզբնաղբիւրային գրութիւնների արժէք, ուստի արձանագրել ենք Բովանդակութեան եւ ո՛չ նախագաղափար յիշատակարանների շարում: Ծանօթութիւնների մէջ նշուած տպագրերի համեմատ ունեն միայն մասնակի՝ ձեռագրական, ուղղագրական տարբերութիւններ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Տե՛ս բովանդակութիւն, 2ա, 44ա Տիտղոսաթերթ:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *2ա, 44ա՝ սեւ թանաքով բոլորակ՝* «Ք[ՐԻՍՏՈՍԻ] Ծ[ԱՌԱՅ] ԳՐԻԳՈՐ 1827»:


ՆՇՈՒՄ՝ *մէջքին սոսնձած սպիտակ թերթիկին՝ «Ձառ ի վարս Ն. Լամբրոնացւո[յ]», պհպ. Աա՝ «1833 Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»:*

3594
ՄԱՇՏՈՑ ՁԵՌԱՑ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ **ՌՁԵ. – 1636**

ԳՐԻՉ՝ Խաչատուր երէց: ՄԵԿԵՆԱՍ՝ Պետրոս Կեսարացի: ՍՏԱՑՈՂ՝ տէր Կիրակոս (մեկենասի եղբայրը):

10. *28բ-42բ* Պրակ տասներորդ. Ցաղագս ուժգնապէս պատերազմելոյ սատանայի ընդ գործակալաց եւ ընդ աստիճանաւորաց եկեղեցւոյ – *Հասարակ զինուորք մարմնաւոր թագաւորաց ստորադրեցեալք են... եւ ընդ աստիճանաւորաց եկեղեցւոյ:*

11. *42բ-7բ* Պրակ մետասաներորդ. Ցաղագս անկման եւ զրկեցման գործակալաց եկեղեցւոյ ի շնորհաց Հոգւոյն Սրբոյ եւ յաստիճանաց իւրեանց – *Եւ ասաց Աստուած. Բարձցի հոգի իմ... ի Դ. Հոկտեմբեր ամսոց ընթերնանին:*

12. *47բ-55բ* Պրակ երկտասաներորդ. Ցաղագս սրբութեան տաճարին Աստուծոյ եւ վասն պարտաւորութեան հաւատացելոց՝ սրբել զնա ի պղծութեանց, զի մի՛ կրեսցեն զպատիժս Աստուծոյ – *Նուագարանն Աստուծոյ՝ մարգարէն Դաւիթ, երգէ յօրհնաբանութեան իւրում... եւ հրեշտակաց նորին կամարարաց:*

– *55բ-71բ* Վասն հաւատարմութեան փոխու գրոյս – *Սուրբ եկեղեցին Քրիստոսի գոլով իբրեւ ծառ մի պտղալից... եւ եթէ ոք յայսքանեաց դղրդալի ասութեանց ոչ ընդոստնեալ զարթնուցու, մեռեալ է եւ ոչ ննջէ: Այսքան առ այս բաւ եղիցի: Վերջ:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԴՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Տե՛ս Յա Տիտղոսաթերթ:

72ա Որ զգրքուկս յառ[ա]ջադրեաց / եւ շարադրեաց, նայն գծագրեաց / եւ գոլով մարդ ըստոր կարեաց / սխալանացն ներումն խնդրեաց:

Վէրագը միհրի վէֆայի քիմ օգուր քիմ տիյնէր: Թարգմանութիւն՝ Թուղթն սիրոյ եւ արդեանց ո՞ ընթեռնու, ո՞ ունկն դնէ:

Տե՛ս նաեւ՝ բովանդակութիւն, 5ա:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *պհպ. Աբ (1853 թ., շղագիր) Ընծայեցաւ ինձ այս Համառօտ որպիսութիւն եկեղեցւոյ* Յակէսէդ Առտեմչէ՝ *առ ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնօղացն, ի 19ի Յունիսի յամի ազգ[ային] 1302 (1853) եւ <եւ> փրկ[ական] 1853, ի ք[աղաքն]* Բագու, Սարգիս *ք[ահանայ]* Փիրվերդեան:

2. *72բ (1888 թ., շղագիր) Ընթերցո՛ղք, յիշեցէ՛ք զժողովոդս ազգային հնութեանց եւ յիշատակարանաց, զի 1850 ամէ հետէ միաբանս* Մայր Աթոռոյ Ս[րբոյ] Էջմիածնի *եւ յայսմ 1888 ամի առաջնորդս հայոց թեմին* Շամախւոյ, *որ* յԱղուանից *աշխարհի* զՄեսրովբ *արքեպիսկոպոս* Սմբատեանցս Նախիջեւանցի, *որ ընթերցեալ զխրատուց գիրս, հաւան գտայ եւ հրաւիրեմ զհոգեւոր եղբարս ի սոյն:*

3. *1ա (1890 թ., շղագիր) Ջհամառօտ որպիսութեան գիրս* Սարգիս *աւագ քահանայն* Շամախւոյ, *ընդ ձեռն իմ ցանկացաւ նուիրել մեծի գրադարանի* Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, *զոր եւ նուիրեմ ի 1ն Մայիսի 1890 ամի, ի քաղաքն* Շամախի, Մեսրովբ *արքեպիսկոպոս:*

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *3ա, 72ա սեւ թանաքով երկշրջանակ բոլորակ, որի շրջագծերի միջեւ՝* «ՄԵՍՐՈՎԲ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԵԱՆՑ ՆԱԽԻՋԵՒԱՆՑԻ», *կենտրոնում՝ հոգեւորական, ներքեւում՝* «1871»:


ՆՇՈՒՄ՝ *մէջքին սոսնձած սպիտակ թերթիկին՝ «Համառօտ որպիսութիւնք եկեղեցւոյ 70», 1ա՝ «916/3597», «Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս», պհպ. Բա՝ «Г. Михайловъ»:*

3598
ԱՒԵՏԱՐԱՆ


ՆՈՐ ՋՈՒՂԱ Ռ–ՀԳ. – 1624

ԳՐԻՉ՝ տէր Հայրապետ (3բ-193բ), Մեսրոպ Խիզանցի (1բ-2ա, 194ա-294բ), Աթամ աշակերտ (295ա-338ա): ԾԱՂԿՈՂ եւ ԿԱՋՄՈՂ՝ Մեսրոպ Խիզանցի (գրիչը): ՍՏԱՑՈՂ՝ Մարգարիտ:


ԹԵՐԹ՝ 342. չգրուած՝ 1ա, 2բ-3ա, 4բ-5ա, 6բ-7բ, 264բ, թ. 341-2: ՊՐԱԿ՝ 6+Ա.-ԻԸ×12: ՆԻՒԹ՝ թուղթ. այլ թուղթ՝ թ. 7. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ ռուսերէն «ЯФ»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16,8×13: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն, կարմրով սահմանագծուած (թ. 1-258՝ 11×9, թ. 259-338՝ 11,5×9): ԳԻՐ՝ բոլորգիր՝ 3բ-193բ (նմուշ՝ 135ա), 1բ-2ա, 194ա-294բ (նմուշ՝ 225ա), 295ա-338ա (նմուշ՝ 327ա): ՏՈՂ՝ 18 (թ. 1-150, 163-258), 17 (թ. 151-62), 19 (թ. 259-338): ԿԱՋՄ՝ դրոշմազարդ սեւ կաշի. միջուկը՝ տախտակ. Ա. աստառը՝ սպիտակ չգրուած, Բ. աստառը՝ գրուտած թուղթ. լուսանցակողերը՝ շերտաւոր՝ կարմիր եւ դեղին:



Նմուշ 135ա



Նմուշ 225ա



Նմուշ 327ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Մարկոս՝ 104բ, Ղուկաս՝ 168բ, Յովհաննէս եւ Պռոխորոն՝ 265բ: Ս-այիւ՝ Յովսէփ Արիմաթացի՝ 99բ, 162բ, 258բ, 331բ, Իւղաբեր կանայք՝ 100բ, Աւետումն՝ 171բ-2բ: Խորան՝ 1բ, 2ա, 3բ, 4ա, 5բ, 6ա: Կիսախորան՝ 8ա, 105ա, 169ա, 266ա: Լուսանցազարդ՝ բուսական, բուսաթռչնային, տաճար՝ 80բ, 149ա, 248ա, «Ճրագ մարմնոյ ակն է...»՝ 23բ, «Հուր եկի արկանել...»՝ 222բ, Սուրբ Հոգի՝ 275բ: Ջարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ՝ բաց եւ մուգ երանգներով, դեղին, նարնջի, մանուշակագոյն, մոխրագոյն, ոսկի, սեւ:

Տե՛ս Ա. Գէորգեան. Հայ մանրանկարիչներ. մատենագիտութիւն, Թ-ԺԹ. դդ., Գահիրէ, 1998, էջ 403, Հմ 238 Բ.:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, մէջի ստ. եզրը մասամբ պատռուած, Ա. փեղկը հիմից մասամբ հեռացած. աստառները, 1ա, 342բ՝ կեղտոտուած, խումնացած. կան ԺԸ. դ. նորոգման հետքեր՝ թ. 5ի՝ ընկած թերթի փոխարէն լրացումը այլ թղթով, հիմքերի եւ եզրերի մասնակի ամրացում-լրացումները՝ 18ա, 79բ, 102ա, 114ա, թ. 164, 316 եւլն. թերթեզերին եւ հիմքում՝ տեղ-տեղ խոնաւութեան դեղին հետքեր. թերթերին զանազան մանր բծեր, մատնահետքեր, մասնակի խումնացած. թ. 1, 3, 5-6՝ շերտազատուած, որոշ պրակներ իրարից մասամբ հեռացած, թուլացած (թ. 18-9, 42-3, 102-3 եւլն), թ. 68, 342՝ պատռուած. որոշ մանրանկարներ խոնաւութիւնից վնասուած, արտատպուած հանդիպակաց էջերին կամ ներկը՝ լղոզուած (102բ, 116ա, 304բ, 305բ եւլն):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *1բ-2ա* Թուղթ եւաբեայ:

2. *3բ-4ա, 5բ-6ա* Համաբարբառ (նաեւ ստ. լս.՝ Յոուացանկ):

3. *8ա-102բ* Աւետարան Մատթէոսի:

4. *102բ-3ա* Նախադրութիւն: *103ա-4ա* Գլուխք: *105ա-65ա* Աւետարան Մարկոսի (*164ա-5ա* Յաոուցեալ Յիսուս):

5. *165ա-6ա* Նախադրութիւն: *166ա-8ա* Գլուխք: *169ա-262բ* Աւետարան Ղուկասու:

6. *262բ-3ա* Նախադրութիւն: *263բ-4ա* Գլուխք (ունի՝ Ա-ԺԷ): *266ա-338ա* Աւետարան Յովհաննու:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. *Մեսրոպ Խիզանցի գրչի 338ա Գրեցաւ սուրբ Աւետարանս ի յերկիրն Պարսից, ի քաղաքն Շօշ, որ կոչի Ասպահան, ի գիւղաքաղաք Ջուղայ, ի դուռն Սուրբ Աստուածածնին. ամէն:*

Տե՛ս ԺԷ. դ. յիշ-ք, Բ., էջ 141, Հմ 199.բ.:

2. *Աթամ գրչի 338բ Փա՛ռք անըսկզբա[ն] եւ սկզբանն ամենայնի, անեղին եւ գոյացուցչին բնաւից, անվախճան եւ անսահման էացուցչին, սահմանիչ եւ կատարումն բոլորիցս, երիցս միակ<u>ան</u>ին եզակի եւ միում աստուածութի<u>ւն</u>, որ անշարժ գոլով շարժէ զարարածս ի կեանս եւ ի փրկութիւն, էիցս էակն եւ կենդանեաց կեանքն, որ անփոփոխ գոլով մի<ն>շտ էութիւն, անեզր եւ անվայրապիակն, լրումն եւ բովանդակիչ ամենայնի: Եւ ամենայնս է եւ ամ[ենայն]է անհաս է որպէս ի մաս<ս>ունս եւ ի բոլորս, եւ ինքն ոչ մաս եւ ոչ բոլոր, որպէս թէ մասն եւ բոլոր՝ զամենայն ինք ունելով եւ կրէ զամենայն բանիւ զաւրութեան իւրոյ: Գերայլիր |339ա| գոլով՝ լնու զամենայն, որում բան եւ իմաստութիւն, լեզու տուեալ բոլոր էից, ի բոլոր էիցս հանցուք զաւրհնութիւն եւ փառս Հաւր եւ Որ[դ]ոյ եւ Հոգւոյն Սրբ(=բ)ոյ այժմ եւ:*

(շարունակած Մեսրոպ Խիզանցու ձեռքով)՝ [Ա]ւարտ եղեւ տէրունական սուրբ Աւետարանս<u></u>ն ի թուականիս մերոյ ՌՀԳ. (1624), ձեռամբ անարհեստ փըծո<u>ւ</u>մ տէր Հայրապետին եւ Մեսրոպ դպրիս, եւ Աթամ աշա<ր>կերտին: [Ո]ստի տեսեալ զփ[ր]կական սուրբ Աւետա-

բանն, հեզահոգի, բարեմիտ եւ աստուածասէր Մարգարիտն *ցանկացող եղեւ այսմ ծաղկաւէտ եւ վարդափթիթ բուրաստանիս, ետուր գրել եւ զարդարել ի հալալ եւ յարդար վաստակոց իւրոց՝ յիշելով զբան մարգարէին, որ ասէ. երանի՛ այնոցիկ, որ ունիցէք զաւակ ի Սիոն եւ ընդանիք յերուսաղէմ: եւ ետ յիշատակ բարի հոգոյ իւրոյ |339բ| եւ ծնօղացն՝ հօրն* Միրաքին, *եւ մօրն* Ինախփաշին, *եւ եղբարցն՝* Սարգսին, Մարտիրոսին, Սահակին *եւ* Վարդանէսին, *եւ քուերացն՝* Գօզալաղին *եւ* Ոսկուն, *եւ ամենայն արեան մերձաւ[որացն]:*

*Դարձեալ յիշեցէ՛ք ի Քրիստոս զ*Մարգարիտն *եւ զկողակիցն իւր* Մկրտիչն, *եւ զորդին իւր* Իշխան, *եւ զդստերքն իւրեանց՝* Խաթունջան *եւ զ*Խալինարն: *Եւ զմիուս կողակիցն* Յովաննէս, *եւ զորդիքն՝* Յովասափն, *եւ կողակիցն իւր* Խանսօլթան, *եւ զորդին* Սահակն, *եւ զդստերքն՝* Մարխան, Վարդխաթուն, Ալմայխաթուն, *եւ միուս որդին* Յուսէփն, *եւ կողակիցն* Սօլթան, *եւ որդին* էլէխանն, *եւ միուս՝* Աւետիսն, *կողակիցն* Մարաւէն, *որդին* Յովաննէսն, *եւ դուստրն* Բադրիխան, *եւ զամենայն արե[ան մերձաւորս]:*

*Կրկին անգամ յիշեցէ՛ք ի Քրիստոս զ*Մարգարիտն *եւ զպապն իւր* Սահակն, *եւ զկողակիցն իւր՝* Խաթունջան, *եւ զմիուս պապն՝ |340ա|* Պապաջան, *եւ կողակիցն՝* Դօլուաթ, *եւ զորդին* Քրման, *եւ զհայրաքուերքն իւր՝* Սօլթան, Գօզալաղէն, եւ *զմայրաքուերքն իւր՝* Աղաբէկին, Գուլբհարն *եւ զամենայն արեան մեր[ձաւորս]:*

*Դարձեալ յիշեցէ՛ք ի Քրիստոս զ*Ամիրխան *եւ զկողակիցն իւր* Խալինարն, *եւ զորդիքն իւրեանց՝* Ջաֆարէն, Մարգարէն, Ազարէն *եւ զ*Անանիէն, *եւ դուստրն* Նազլուխան *եւ զամենայն արեան մերձաւորս: Յիշեցէ՛ք եւ Աստուած ողո[րմի ասացէ՛ք]:*

*Դարձեալ յիշեցէ՛ք ի Քրիստոս զիս՝ զանարժանս զ*Մեսրոպ *գպիր* Խիզանցիս, *որ ծաղկեցի եւ կազմեցի ի վայելումն մանկանց սուրբ Սիոնի: Յիշեցէ՛ք զիս ժանարժանս եւ զմարմնաւոր ծնօղս իմ՝ զտէր* Մարտիրոսն, *եւ զ*Խոնդֆարն, *եւ զեղբայրքն իմ՝ զտէր* Թադէոսն *եւ զ*Պարսամն, *եւ զքուերքն իմ՝* Աննայն *եւ զ*Դեղծուն, *եւ զամենայն արեան մերձ[աւորս]: Եւս առաւել զհոգեւոր վարպետն իմ՝ նախ զտէր* Սարգիսն, *|340բ| որ մականուն* Մազման *կոչի, եւ զմիուս վարպետաց վարպետն՝ զտէր* Մարտիրոս Խիզանցին, *եւ զամենայն աշխատաւորս, որ ի յարուեստս յայս աշխատանք ունին: Յիշեցէ՛ք եւ Աստուած ողորմի ասացէ՛ք, եւ Աստուած ձեզ եւ մեզ ողորմեսցի յիւր միուսանգամ գալըստեան. ամէն: Հայր մեր, որ:*

*Դարձեալ յիշեցէ՛ք ի Քրիստոս զ*Ղարախան *եւ զկողակիցն իւր* Նուրիխանն, *եւ զորդին իւր* Սարուխանն, *եւ զդուստ[ր]քն՝* Էլիխանն *եւ զ*Նազլուխանն: *Եւս առաւել յիշեցէ՛ք ի Քրիստոս զ*Վարդանէսն, *զ*Ամիրխանն *եւ զեղբայրն իւր՝* Միրզէն, *եւ կողակիցն* Մարիամն, *եւ զամենայն արեան մերձաւորս յիշեցէ՛ք եւ: (այլ թանաքով)՝ Դարձեալ յիշեցէ՛ք ի Քրիստոս զ*Յովանէսն, *եւ զկողակիցն* Մարխան, *եւ զորդին* Յովասափն, *եւ զկողակիցն իւր* Գուլդաստէն, *եւ զեղբայրն իւր* Պետրոսն *յիշեցէ՛ք եւ:*

Տե՛ս ԺԷ. դ. յիշ-f, Բ., էջ 140-1 Հմր 199.ա., գ.:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *265ա (178[Ո] թ., նոտրգիր) Ետո[ւ]ր յեշատակ թիվն 178[Ո] ծառայն Աստուծոյ տէր* Օհա[ն]ին, *որ է միաբան եւ ավագ գհանայ* Ջգրաշէնայ Սուրբ Աստուածածնին, *ի դուռն* Սուրբ Նշանայ Նիկա[ղ]այոյս *հայերապետին:*

2. *1ա (ԺԸ. դ., նոտրգիր) Ծառայ* Օսէփ *դի* Ռօստէզան *(նման՝ 340բ):*

Համմտ. կնճադրոշմ:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *1ա, 8ա, 105ա, 169ա, 266ա, 340բ (երկիցս)՝ սեւ թանաքով ութանկիւն՝* **«ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ / ՕՍԷՓ»:**

ՆՇՈՒՄ՝ *1ա՝* **«927/3598», «ՌՀԳ 1624»:**

ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *Բ. աստառին՝ մտացածին կենդանի:*


ԳՐՁԱՓՈՐՁ՝ *341ա՝ «որդոց եւ ուր ծընողացն» (այլ թանաքով չնչած), Բ. աստառին, վրացերէն –* ⵅⵅ ֍ ֍ ֍ ֍ ֍ ֍ դ դ ջջ ծ ծ ծ ծ ծ ծ դ դ *მამისა და დავით՝ Հաւր եւ Դաւիթ,* დავით დავით՝ *Դաւիթ Դաւիթ,* ჩვენი ბძანება არის მეგობრევ՝ *Մեր պատուիրանն է... Այլ ձեռք՝* ჩემი ბძანება არის გეურდ՝ *Մեր պատուիրանն է ... Ք.* ჩვენი ბძანება՝ *Մեր պատուիրանը,* Ք. ჩვენი ბძანება՝ *Մեր պատուիրանը,* მეგობრევ ამას *(նշանակութիւնն անյայտ),* Րոմ. ჩვენთან ტიონის. და՝ *Քի մեզ մատ ... եւ:*

3599
ՄԱՇՏՈՑ ՁԵՌԱՅ

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅ ՎԱՆՔ (ԴԱՐԱՇԱՄԲ) ՌԺԱ. – 1562

ԳՐԻՉ՝ Աւետիս Հիզնցի: ՍՏԱՑՈՂ՝ տէր Պետրոս Դարաշամբեցի:

ԹԵՐԹ՝ 144+2-1 (կրկն.՝ թ. 1, 5. թուիչ՝ թ. 69-71): ՊՐԱԿ՝ Ա.-ԺԳ×12 (Ա, Դ 11, ԺԲ 10, ԺԳ 5): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18×13,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (13×10): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 109ա): ՏՈՂ՝ 21. գծումներ՝ ճնշումով: ԿԱՉՄ՝ վարդագոյն մոմլաթ, Ա. եւ Բ. փեղկերին՝ փակցուած ճիւն կազմի շագանակագոյն դրոշմազարդ կաշիի, մէջբը՝ կապոյտ կտաւ. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ դեղնաւուն չգրուած թուղթ: ՊԱՀՊԱ-



Նմուշ 109ա

ՆԱԿ՝ Ա+Բ՝ դեղնաւուն չգրուած թուղթ, մասն կազմաստառի:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Ջարդագիր (գծապատկերային)՝ թոչնագիր, թոչնագիր-կենդանագիր՝ 39ա, հանգուցագիր, հանգուցագիր-կենդանագիր՝ 12բ, 16ա: Գոյներ՝ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած 1950ական թթ., կազմի մոմլաթը, մէջքի կտաւը, աստառները, պիպ-ները, թերթերի՝ դեղնաւուն չգրուած թղթով լրացում-ամրացումը՝ նորոգման ժամանակի, կազմի կաշին մաշուած է, ճաճճած եւ սուր գործիքի հետեւերով. լուսանցակողերը սեւացած. թերթեզերին եւ հիմքում՝ խոնաւութեան դեղին հետեր, ստ. արտ. անկիւններում՝ մատնահետեր, կեղտոտուած, սեւացած, որոնց հետեւանքով թերթերը մասնակի խունացած, տեղ-տեղ թանաքը թափուած, գիրը անընթեռնելի կամ դժուարընթեռնելի (5բ, 7ա եկն), թերթերին զանազան բծեր (48բ-9ա, 57բ եկն). թերթերի մեծ մասի վեր. արտ. անկիւններում՝ ցեցի անցքեր, որոշ թերթերի ցեցի անցքերը նորոգուած-ամրացուած դեղին կիսաթափանցիկ թղթով (թ. 76-92 եկն), թ. 100՝ պատռուած, 111բ-2ա՝ նախկին կպումների հետեր. թ. 1-5, 21, 143-4 թափուած մասերը լրացուած դեղին կիսաթափանցիկ եւ սպիտակ թղթով, բնագիրը պակասաւոր, յատկապէս 1ա-դ, 5գդ կէսից աւելին՝ չիմ. թ. 9 աւելացուած, վրան այլ ձեռով բնագրի պակասը. սկ-ից՝ 5գդ.ից առաջ 2, թ. 33-4ի միջեւ 1 թ.՝ ընկած. թ. 123՝ կայ մէկ կանաչ էջանիշ-թել:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *5գդ, 1ա-5բ, 6ա-7ա* [Կանոն մկրտութեան] – *[Եւ քարոզէ սարկաւագն]. (սկ.) /// լուա[ցման վերստին ծննդեան եւ] զգեստուց...*

Տե՛ս Մայր Մաշտոց, հտ. Ա., Գիրք Ա., աշխ.՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, Ս. Էջմիածին, 2012, էջ 217-234:

2. *7ա-11բ* Կանոն պսակի – *Մտանեն յեկեղեցին եւ ասեն շարական... Ընթերցուածս ի Ծնընդ[ո]ց. Եւ ասաց Աստուած. Արասցուք մարդ ըստ պատկերի...*

3. *11բ-2ա* Վերացուցանեն [պ]սակն Ը. աւրն – *Աղմոս, կցուրդ. Բխեսցէ սիր[տ]: Տէր Աստուած, որ յամենայն ժամ ընդ մեզ ես...*

4. *12բ-6ա* Կանոն հաղորդ տալոյ – *Առնու քահանայն զփրկական խորհուրդն եւ խաչիւ եւ բուրվառով... եւ ասէ զաղաւթս զայս. Տէ՛ր Աստուած ամենակալ, ամենագութ, ամենախնամ, ծածկագէտ...*

15բ ստ. լս-ում գրչից՝ «Ո՛վ եղբայրք, զինչ յաւիտենական կայ, զայն կու գրեմք, թէ պակաս կայ ի ներս, սխալ յաւիտենական է»:

5. *16ա-27ա* Կանոն աշխարհաթաղ առնել – *Առեն սաղմոս. Երկինք պատմ[են]... եւ ասէ զաղաւթս զայս. Աստուա՛ծ յաւիտենական, ան<զ>սկիզբն, անեղ, անիմանալի...*

– *19բ-20ա* Եւ էթէ ի դպրաց ոք իցէ, կամ յապաշխարողաց, եւ կամ յաւա՛ք տանուտերաց – *Առեալ տանին ի դուռն եկեղեցոյն... Պօղոսի առաքելո[յ]ն ի Կորընթացոց. Ոչ կամիմ, եղբա՛յրք...*

6. *27բ-31բ* Այգոյն – *Երթան ի գերեզմանն եւ ասեն զԱնբիծքն... Պօղոսի առաքելոյ ի Կորընթացոց թղթոյն. Այլ մեք պարտիմք գոհանալ...*

27բ ստ. լս-ում գրչից՝ «Ո՛վ եղբայրք, աւրինակն խիստ սխալ է, անմեղադի՛ր [լեր]ուք»:

7. *32ա-7ա* [Կ]անոն յորժամ տղայ վախճանի – *Սաղմոս. Առ քեզ, Տէ՛ր, համբարձի... եւ ասէ զաղաւթս. Հա՛յր երկնաւոր, քաղցր եւ երկայնայմիտ... (33բ՝ «...զի ձեռն դիցէ նոցա, իսկ աշայկերտք սաստէ///» շար., 34ա՝ «Եւ առեալ տանին ի հանգիստն... Ընթերցուածս յեսայեայ մարգարէէ. Այսպէս ասէ Տէր. Ահաւասիկ ես դարձուցանեմ...»):*

8. *37բ-9ա* Այգոյն – *Գան ի գերեզմանն եւ ասեն սաղմոս. Եղիցի անուն Տեառն Աստուծոյ... Ընթերցուածս յեսայեայ մարգարէէ. Զի ի Տեառնէ եղիցի դարձ...*

9. *39ա-44ա* Կանոն ոգեհա[ն]գիստ առնելոյ – *Ասեն սաղմոս. Երանի՛, որում թողութիւն... եւ ասէ զաղ[օթս]. Տէ՛ր բարերար, որ դատաւորդ ես կենդանեաց եւ մեռելոց...*

10. *44ա-60ա* Կանոն խաչ աւրհնել – *Տանին յեկեղեցին եւ լուանան նախ ջրով եւ ասեն սաղմոս... Ընթերցուածս յԱռակաց. Երանեալ է այր, որ եգիտ զիմաստութիւն...*

11. *60ա-71բ* Կանոն Ջուր աւրհնելոյ – *Սաղմոս. Ձայն Տեառն ի վերայ ջ[ուրց]: Ընթերցուածս ի Ջորրորդ Թագ[ո]րութենէ. Եւ ասեն արք քաղաքին ցեղիսէէ. Ահաւասիկ բնակութիւն...*

– *62բ-70բ* Աւրհնութիւն ջրոյ, զոր ասացեալ է Բարսեղ հայրապետ – *Աւրհնեալ ես, Տէ՛ր Աստուած ամենակալ յամենայնի, հզաւր եւ սքանչելագործ...*

12. *71բ-80ա* Կանոն ապաշխարող առնելոյ – *Տարցեն քահանայքն ըզխոստովանողն ի դուռն եկեղեցոյն... Ընթերցուածս յեսեա մարգարէէ. Լուացարո՛ւք, սրբեցարո՛ւք...*

13. *80ա-9բ* Կանոն Մեծի հինկշաբաթին զապաշխարողն առնակել – *Ց. ժամուն ժողովի քահանայքն եւ ապաշխարողն ի դուռն եկեղեցոյն... Ընթերցուածս յեսաեա մարգարէէ. Այսպէս ասէ Տէր. Եւ կատարեսցին աւուրք սըգոյ քո...*

– *84ա-7ա* Աղօթք Բարսղի Կեսար[ացւոյ] – *եւ արդ, Տէ՛ր Աստուած մեր բարերար եւ բազմայգութ, որ այսպիսի անճառ փառաց…*

14. *90ա-6բ* Քարոզ պատուիրանին, զոր զե<ր>կուցանէ Բահանայն ժողովրդեանն – *Առեալ զսուրբ Աւետարանն ի գիրկս… եւ ասէ զայս. Լուարո՛ւք ինձ, որդեա՛կք…*

15. *96բ-113ա* Կանոն Մեծի Հ<հ>ինկշաբաթի Ոտնայլուայ, ըստ որում եւ ասաց Յիսուս. Եթէ աւրինակ մի ետու ձեզ, զոր արարեալ է տեառն Եփրեմի Խորին Ասորոյ, զոր թարգմանեաց սուրբ դիտայպետն Հայոց Մեծաց Գրիգորիս Վկայասէր – *Ի տասներրորդ ժամուն՝ զկնի սրբո պատարագին, ժողովին ի գաւիթս… ասա՛ զաղաւթս զայս. Եւ եւս գոհութիւն եւ երկրպագութիւն մատուսցուք Տեառն Աստուծոյ մերոյ եւ փրկչիդ Յիսուսի Քրիստոսի, որ է ճառագայթ փառաց…*

16. *113բ-4բ* Կանոն յորժամ նոր դուռն դնեն եկեղեցոյն – *Աւետն սաղմոս ձ՛ժէ.՝ Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է… եւ քահանայն զաղաւթս ասէ զայս. Տէ՛ր Աստուած մեր, որ նորոգիչ եւ զարդարիչ քոոց արարածոց…*

17. *114բ-6ա* Կանոն աւրհնութեանց զգեստուց սրբութեանց, զինչ որ լինի – *Դնեն փայտայ սեղանով առաջի դրան սուրբ եկեղեցոյն… եւ քահանայն ասէ զաղաւթս զայս. Աւրհնեալ ես, Տէ՛ր Աստուած ամենայկալ, ահաւոր եւ բարձրեալ…*

18. *116ա-7ա* Կանոն սկիհ եւ մաղզման աւրհնել – *Սաղմոս ԻԲ.՝ Տեր հովւեսցէ զիս… եւ ասէ զաղաւթս. Աւրհնեալ ես, Տէ՛ր Աստուած մեր, որ եառուր մեզ զնիւթս առնել անաւթս…*

19. *117բ-23ա* Կանոն աւազան աւրհնելոյ, որ ունի զսկիզբն փրկութեամբ շնորհին վերըստին ծնելոց յորդէգրութեան Աստուծոյ – *Եւ այս է կարգաւորութիւն նորին. հաստատեն զաւազան ի տեղոջ իւրում… եւ եպիսկոպոսն ասէ զաղաւթս զայս. Տէ՛ր Աստուած, մեծ եւ փառաւորեալ յամենայն արարածոց քոց…*

– *122բ-3ա* Եւ աստ ասա՛ զտաղս անոյշ եւ յարմարական – *Մայ[ր] հաւատոյ սուրբ հարանարան / եւ առագաստ գերադրական… եւ քեզ Յիսուս Հաւր միական:*

20. *123ա-35ա* Կանոն վասն պղծեալ տաճարին յանաւրինաց – *Գիշեր հսկումն առնեն ի նոյն յեկեղեցին… եւ ասէ զաղօթս. Որ ընդունող ես աղաւթից ժողովրդեան քո…*

– *132աբ* Աստ ասա՛յ զտաղս անուշ ձայնիւ – *Ուրախ լե՛ր, հա՛րսն ի յերկրէ / բերկրեալ դշխոյ յաշխարհէ… եւ երգողի այս տաղիս:*

21. *135ա-41բ* [Տաղ ննջեցելոց]

ա. *135ա-8բ* Գանձ թաղման ննջեցելոց («ՄԱՆՎԵԼ Ջ») – *Մինդ ի յէէն, / Բանդ, որ ի Հաւրէ… զիս ի յաղաւթըս ձեր յիշեցէ՛ք: Զանձինըս:*

բ. *138բ-9բ* [Ողբ մեռելոց] – *Այժմ ինձ եհաս հրաւիրակ կոչման, / ՚ւ ես երթամ տըխուր, դառըն, լալական… մի՛թէ բացցի ինձ դուռն ողորմութեան: Ողորմաց:*

գ. *139բ-41բ* [Ողբ բերանոյ մեռելոցն ասացեալ՝ յԱռաոմել վարդապետէ ասացեալ, ձեռ. 11, 109բ-10բ] – *Ո՛վ քահանայք եւ վարդայպե՛տք աստուածայբան, եւ ժողովուրդք հաւա[տա]ցեալք ամենեքեան… զի Տէրըն քաղցր է պարտական ողորմութեան:*

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐՉԻ

43բ (ստ. լս.) [Տաղ] – *Ա՛շ[ուն] էր, եղաւ գ[արուն], / ու եկո բլբուլն ի յա[յ]գին, / նստաւ [զիւր՞] վարդի թփին. / ///երէն ասաց զարիբին. / Զարիբն ի զարիբութէն խիստ դժար է յառջին տարին, / թէ՛ նուշ, թէ՛ շաքար ուտէ, սիրտ՝ սեւ, երեսն այ դեղին: / Այ իմ հրատի՛կ (՞) Աստուա՛ծ, մի՛ բերեր գիշեր զարիբին, / կամ ա՛ռ զզարիբի հոգին կամ խաս՛ւ զնայ ուր մուրազին:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

27ա Ո՛վ քահանայք եւ ժողովուրդք, յիշեց[է՛ք] ի Քրիստոս զմեր հոգեւոր հայր զԱթանաս վարդայպետն, որ Ռ֊ԺԱ. (1562) թվին զանարժանս սիրով եբեր ի սուրբ յուխտըս, եւ կամակից եղէ եւ Մաշ[ո]ոցի գրելոյն: Ու ինքն խիստ խղճացաւ, քանի որ կու տեսնի, ա՛խ, սիրտըս կու դառնանէր, արտասունքն յերեսս ի վայր կու թափէր: Վա՛յ զարիբին, վա՛յ, Ռ. (1000) բերան վա՛ կու տի զարիբին, թէ վարդապետն ի յուր տուն յ[ե]նց այ, թէ զարիպ հիւանդանայ, հալ յոց(=ոնց) կու լինի, փա՛ռք Աստուծոյ: Դարձեալ յիշեցէ՛ք ի Քրիստոս զվարդապետի եղբաւր կինն զԵթար, որ բազում աշխատանք ու չարչարանք քաշեց ի խեստ վարդապետին, արարիչն Աստուած զիւր հոգին լուսաւորէ, ընդ իմաստուն կուսանս դասեսցէ. ամէն: Հայր մեր:

31բ Ո՛վ քահանաք եւ ժողովուրդք առհասարակ, յիշեցէ՛ք ի Քրիստոս զանարժան գծողս Հիզընցի Աւետիս մո[ն]թս, որ Ռ֊ԺԱ. (1562) թվին եկանք ի Սուրբ Ստեփաննոս Նախայվկայն, Մեհեկի ամսոյն ի Զ. սկիւքն արիք Մաշ[ո]ոցին: Աստուած զամէն զարիպ թանդրուստ(՞) պահէ զմեզ յամենոց սադաղէն. ամէն: Դար[ձ]եալ երեսս անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ մանկունք սուրբ եկեղեցոյ, որ բարձր ձայնիւ կարդաք եւ յիշէք ի Քրիստոս զսուրբ աթոռոյ մեծաւոր զմեր հոգեւոր հայր զԲանաւարգեաս՝ տէր տէր, որ հայրական գթով ու եղբայրական սիրով զմեզ կու խնամէ, եւ զտէր Դօիթ, զտէր Պետրոս, զտէր Սիմէոն, զտէր Մկրտիչ, զտէր Մաթէոս եւ զմիուս տէր Պետրոս, զտէր Բարդաղիմէոս, զտէր Անդրիաս, զտէր Մելիեսեթ, որ զմեղ[ո]որս եղբարական սիրով կու ուզին ու ընդունին, Աստուած զուրենք պարզերես առնէ, մշակ առանց ամաւթոյ պահէ. ամէն: Հայր:*

* Ծնթ. Գուցէ թուրեռէն թամ դրուստ – լիովին առողջ, կենդանի, շիտակ:

37ա Ո՛վ քահանաք եւ ժողովուրդք առհասար[ա]կ յիշեցէ՛ք ի Քրիստոս զԱստապացի տընտէս Արիջան, որ բազում աշխատանք ունի ի Նախավկայուն եւ զանարժանս լաւ կու ակնայ, ամէնքդ միաբան բերա[ն] մի <Հա> բարձր ձայնիւ Հայր մեղա[յ] ասէ՛ք, Աստուած զիւր գործեցեալ մեղք թ[ողուց]ու եւ զձերդ ամէնեցուն. ամէն: Հայր:

44ա Ո՛վ քահանայք եւ ժողովուրդք, յիշեցէ՛ք ի Քրիստոս Շամբեցի ուսթայ Խոսրով, որ բազում աշխատա[ն]ք քաշեց ի վերայ մեր շքրաւնին, Աստուած զինքն փառաւոր առնէ. ամէն: Դարձեալ յերեսս անկեալ աղաչեմք զձեզ, ո՛վ մանկունք սուրբ եկեղեցոյ եւ ժողովուրդ ա[ռ]հ[ա]սարակ, յիշեցէ՛ք ի Քրիստոս զմեր հոգեւոր եղբայր զտէր Մաթէոս կրաւնաւոր եւ զուսթայ Խոսրով, որ զքանոն շինել տուին, յուղարկեցին, որ եկաւ: Աստուած ողորմի ասէ՛ք տէր Մաթէոսին, ուսթայ Խոսրովին, բարձր ձայնի[ւ], ուղիղ հաւատով, բոլոր սրտիւ եւ ինձ՝ անարժան գծօղիս եւ իմ ծնօղացն, եւ Աստուած ձեզ եւ մեզ ողորմեսցի առհասար[ակ]. ամէն: Հայ[ր]:

94բ (արտք. լս.) Ա՛խ, եղուկ է ինձ, Ռ. (1000) վայ, օր մահ:

96բ (ստ. լս.) Վա՛յ քեզ, եղկելի՛ Աւետիս գրիչ, որ զամէն գիտութեամբ կու մեղ|97ա|ուցես, զի՞նչ տաս պատասխանի յայս ահեղ աւուրս: Աւա՛ղ եղկելոյս, ի թի[ւս] ՌԺԱ. (1562): Վա՛ ինձ, վա՛ ի[ն]ձ:

102բ (ստ. լս.) Յիշեցէ՛ք ի Քրիստոս զտնտէս Արիջան, որ այսաւր զահմաթեցաւ ու ինձ ճաշ եբեր՝ գաւաթով կորկոտ:

138բ Յիշեցէ՛ք ի Քրիստոս զմեծ տէր Պետրոս, որ այսաւր զահմաթեցաւ [ու] ինձ ճաշ եբեր. Աստուած զիւր հոգին լուսաւորէ. ամէն:

141բ Փա՛ռք եւ գոհութիւն եւ յամենայն արարածոցս երկրպագութիւն՝ Հաւր անեղին եւ ծնիցելոյն ի նմանէ՝ Որդոյն Միածնի եւ Սուրբ Հոգոյն ճշմարտի՝ բխեալըն ի Հաւրէ, երեք անձանց եւ մի բնութեանց, որ եւս կարողութիւն տակաւ անձինս եւ մեղսայմակարթ ձեռինս եւ հասոյց ի վերջ տառիս եւ վարդայփթիթ բուրաստանիս՝ Աւետիս մեղաւոր գըրօղիս: Սէր է Աստուած եւ սիրոյ աղբիւր, զի սիրով ստեղծեաց եւ յիւր պատկերն նորոգեաց, եւ կամաւք Հաւր եւ Հոգոյն Սրբոյ Միածին Որդին սիրով եկն առ ազգս մարդկան եւ արար մեզ գարուն |142ա| հոգեւոր, զի զոր բանսարկուն անհաւատութեամբ, անյուսութեամբ եւ անբարի գործով ե[լի]ց զազգս Ադամայ: Իսկ Տէրն մեր եւ արարիչն, զհակառակն սատանայի ներգործեաց, հաւատով զարդարեաց, յուսով կանգնեաց եւ աստուածային սիրով զամենայն բարիս ի մեզ ժողովեաց: Զի որպէս ի գարնանային ժամանակին ազգի ազգի ծաղիկք ելանէ համով հոտով եւ զանազան տեսակով, այսպէս եւ ազգ մարդկան սիրով Սուրբ երրորդութեանն բազում առաքինութեամբ ծաղկեցան. ոմանք ուղղափառ հաւատով, ոմանք աստուածային խոստմամբն, այլք զանազան սիրոյ եռացմամբ եւ բարի գունով ի վերընթացն, կուսութեամբ եւ ողջախոհութեամբ, խոնարհութեամբ եւ հեզութեամբ, աղքատսիրութեամբ եւ ողորմութեամբ եւ այլ բազում բարութեամբ քաղցրանայ ի ծառայութիւնն Քրիստոսի, եւ եղեն ժառանգ արքայութեան անուշայոտ գ[որ]ծով: Իսկ ի գառնայքեր ժամանակիս, որ ենք |142բ| [ա]ղ[ք]ատացեալ ամենեքեան ի հոգեւոր եւ ի մարմնաւոր հարըստութեանց, աստուածայսէր ոմն ի կարգաւորաց հեզայհ[ոգ]ի եւ սրբայսէր կըրաւնաւոր տէր Պետրոս, որ է ի Սուրբ յաթոռոյն Նախավկայէ, ի գեղչէն Դարայշամայ, ետ գրել զարմատ հաւատոյ, որ կոչի Մաշտոց, յանուն արարողին սուրբ Ստեփաննոս Նախայվկային, որ է է. սուրբ խորհրդոյ կատարումն յեկեղեցիս Աստուծոյ: Զի սայ է մահու եւ կենաց ճանապարհ եւ մուտ արքայութեան: Սա է, որ կապէ զմեզ հաւատով ի սէրն անմահին Աստուծոյ: Սայ է բանալիք, որ բանայ մեզ զդուռն եդեմական դրախտին, զոր փակեաց Ադամ: Սայ է դուռն բացեալ, որ հաւատով յայսմ աշխարհիս տեսանեմք զարարիչն մեր եւ ի հանդերձեալըն վայելեմք ի խոստումն կոչման նորին յարկսըն լուսեղէն: Սա մեռելոց հանգիստ է եւ կե[նդ]անեաց պարիսպ: Այս սուրբ կենաց պտղոյս եւ անմահական ծա|143ա|ո[ղ]ս ցանկացող եղեալ աստուածայսէր եւ հեզայհոգի կրաւնաւոր տէր Պետրոս [ե]տ գրել ինձ՝ մեղաւոր Աւետիս մո[ն]թիս Հիզընցոյ, եւ ըստացաւ զսայ յիշատակ հոգւոյ իւրոյ եւ իւր եղբաւրորդոյն Մարտիրոս վարդապետին եւ իւր ծնօղաց՝ հաւր Թազտրին, մաւրն Ան[ախա]թունին՝ հանգուցելոցն ի Քրիստոս, եղ[բար]ց՝ Սահակին, Քամալին, եղբաւրորդոց՝ Մաւելին, Աստուածատրին, Խուդայվէրդուն, Մանգայսարին, քւերց՝ Մէլիխաթունին, Խանումին, թոռներուն՝ Սահակին, Յոխանիսին, Քամալին, Խաչատրին, հարսներացն՝ էթարին, Խաթունին, Դալւաթին, [Ասլ]իմելիխին, Եւատին, մաւր Գաւհարին եւ ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեացն եւ հանգուցելոցն ի Քրիստոս: Եւ /// զլսողդ, զի յիշեք յ/// յաղաւթըս ձեր եւ խնդրեք /// |143բ| մեղաց թողութիւն ի Քրիստոսէ տէր Պետրոսին եւ իւր եղբաւրորդոյն Մարտիրոս վարդապետին, եւ իւր ծնողացն եւ ամենայն [զար]մից նոցին. ամէն:

Արդ, գրեցաւ յինուքս սուրբ գիրքս, որ կոչի Մաշտոց, ձեռամբ Աւետիս գրչի Հիզընցոյ, որ կամք ի զարիբուխիւն տարէկուսեալ: Ա՛խ, զարիբի հացն է հարամ ///ակ է դառն ու լեղի, լի տրտմութեամբ զջուրն, որ ըմպէ: Ի թվականիս [ՌԺ]Ա. (1562), Մեհեկի ամսոյն սկիզբն եղաւ, Արեգի ի Դ. աւարտեցաւ ի սուրբ յաթոռ, ի թագաւորութիւն, ի պարնութիւն շահ Իսմայելին, որ այս ժամանակս խունդքարի որդին Ե. գոլովն, ի գերութիւն վարեցաւ ի ձեռն շահ Իսմաէլին, եւ հայոց ազգս յախ ՚ւ ի դող ի ներս: Գրեցա[ւ սուրբ] գիրքս ի յերկնայբնա[կ]

/// Սրբոն Նախավկային [Ստեփաննոս]ի, ընդ հովանեաւ Սուրբ ///ին, եւ Սուրբ Գէորգա Զօրավարին, |144ա| [Սուրբ] Յովաննէս Մկրտչին, եւ այլ համ[ա]գո[ւմ]ար մարտիրոս[ացն]՝ վկաեցելոցն ի Քրիստոս: ///զ որ հանդիպիք այսմ աստուածայպատում /// յիշեսջիք զառաջնորդ սուրբ ուխտ/// Աթանաս վարդապետ եւ ըզմեծ [հայ]ր սուրբ աթոռոյն զտէր Բանաւգէս, զտէր [Դաւ]իթ, զմեծ տէր Պետրոս, զտէր Սիմէոն, /// [Մկ]ըր[տի]չ, միւս տէր Պետրոս, զտէր Մաթէ[ոս], /// [Բար]դուղիմոս, զտէր Անդրիաս, զտէր ///թ: եւ զմեր հոգեւոր եղբար ///եղէք զտէր Յուսէփ, զնախ եւ զոր /// արար, զտէր Վաղդան, զՏէրն Աստուած, յորժ[ամ] ///իս որ եղբարական սիրաւք ի պա/// զտընտէսանաց եւ մե/// մո[ն]թեր, զքեռան, զ/// ///էս, զաւր եկ, զկր/// եւ զոր յիշեցաք /// յիշել, ///ասջիք Քրի[ստոս] ///: |144բ|///աւորեալ գալըստեան քոյ ///աներ ի դատաստան /// քոց, զի ոչ արդարանայ առ /// կեն-

դանի, այլ /// [ո]ղորմութի///, ///թիւն շնորհեայ սոցայ եւ ննջեց[ելոց ս]ոցին, զի դու միայն ես Աստուած, եւ ///թիւն քո ոչ անցանէ, քանզի մե///սին քեզ հանցուք զաւ///, զփառս Հաւր եւ Որդոյ եւ Հո///: Աղաչեմ զձեզ իմ բազում ///ութիւն խնդրէք յԱստուծոյ: եւ /// հաւրն իմոյ՝ Միքա-

նին, /// Ասլիփաշին եւ ե/// [ք]արտողրին, հանգուցել/// որ զանարին եւ այլոցն. ամէն///ութիւնս հասերցն իմոյ մահ///, ///ելին, Թաջումի[ն]:

ՆՇՈՒՄ՝ *Ա. աստառին մատիտով՝ «Գէ[որգեան] 936»:*


ԳՐԱՖՈՐՁ՝ *1ա, 1բ՝ անընթեռնելի տառեր, բառեր, սիւնակէտագիր ծածկագրութեամբ՝ «եվիո՞», «գազ», 1բ՝ «///ասեսցէ. ամէն», «զ ւ ը փ լ Քրիստոս», 30ա՝ «տէր Պետրոս», 74ա՝ «աա», «աաբգ», «սսաասս», 144բ՝ «///ազգսի հոգուն ամէն ///մանալ իմում Քրիստոս մմարգարէ՞», «/// ծառայ ///»:*

3600
ՄԱՇՏՈՑ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ԺԴ. դար

ԳՐԻՉ՝ Հայրապետ: **ՍՏԱՑՈՂ՝** Յովհաննէս արեպս Սեհուենաց:

ԹԵՐԹ՝ 167: **ՊՐԱԿ՝** 9+Ա.-ԺԳ×12 (Ա. 11, ԺԳ 7)+8: **ՆԻՒԹ՝** թուղթ: **ՄԵԾՈՒԹԻՒՆ՝** 17,7×13,5: **ԳՐՈՒԹԻՒՆ՝** միասիւն (13×8,5): **ԳԻՐ՝** բոլորգիր (նմուշ՝ 91ա): **ՏՈՂ՝** 13: **ԿԱՋՄ՝** Ա. փեղկ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի, վրան՝ հետգ-ի մակագրութիւններ՝ «Ի ԹՎԻՆ ՌԿԱ. (1612)», «ՍԱՀԱԿ ԱԲԵՂԱՅ», եզրերը եւ մէջը շագանակագոյն կաշի, Բ. փեղկ՝ դարչնագոյն դրոշմազարդ կաշի՝ դռնակով. միջուկը՝ տախտակ. աստառը՝ կապոյտ կտաւ, դռնակինը՝ շագանակագոյն գործուածք. լուսանցակողերը՝ կարմիր: **ՊԱՀՊԱՆԱԿ՝** Ա-Գ+Դ-Զ՝ դեղին չգրուած թուղթ:



Նմուշ 91ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Ճակատազարդ՝ 10ա, 52ա, 72ա, 94ա, 119բ: Լուսանցազարդ՝ բուսական, բուսաթռչնային, յուշկապարիկ՝ 127ա, 128բ: Զարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած 1970ական թթ., մէջբի, Ա. փեղկի եզրերի կաշին, Ա. միջուկ-տախտակը, դռնակը՝ իր աստառով, պիպ-ները, թերթերի եւ ձիմերի դեղին, սպիտակ եւ դեղին կիսաթափանցիկ թղթով լրացում-ամրացումը՝ նորոգման ժամանակի. Ա. փեղկի ձին կազմի կաշին մգացած, Բ. փեղկի կաշին մաշուած, անկիւնները թափուած, 2ական կապիչները եւ գամերն ընկած՝ կան հետքերը. լուսանցակողերը մասամբ գունաթափ, սեւացած. թերթեզերբը մասամբ մկնկեր. կան ԺՋ. դ. նորոգման հետքեր՝ ձիմբում ձեռ. թերթերի մասերով ամրացում (33ա, 44բ-5ա, 116բ-7ա, 141ա եւլն). թերթերին զանազան բծեր, դեղին հետքեր, ստ. արտ. անկիւններում մատնահետքեր, ցեցի անցքեր, որոշ թերթեր փոշուց մասամբ խունացած եւ խոնաւութիւնից դեղնած (56բ-7ա, 63ա, 65ա, 70բ, 74բ-5ա, թ. 81, 160-7 եւլն), որի հետեւանքով տեղ-տեղ թանաքը տարածուած (11բ-2ա, 13ա, 17ա եւլն), թ. 159՝ մէջտեղից մէկ տեղ պատռուած. որոշ թերթեր եզրահատած, եզրերն անհաւասար (թ. 1-9, 11-2 եւլն). սկ-ից՝ թ. 1ից առաջ, թ. 8ից յետոյ, վջ-ից՝ թ. 167ից յետոյ հաւանաբար 1-2 թ.՝ ընկած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *1ա-9բ* [Կոչումն հաճանայութեան յերեկոյին] – *(սկ.) /// եւ սարկաւագն քարոզէ. եւ եւս խաղաղութեան: Աւրհնեա՛, Տէ՛ր: եւ եպիսկոպոսն խաչակնքէ ի վերայ նոցա՝ ասելով. Կոչումն ամենակալին... 9բ ...իսկ յետ յարութեանն՝ մարմնով եւ հոգով: եւ դարձեալ նզովեմ /// (վջ):*

Տե՛ս Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ, Կ. Պոլիս, 1807, էջ 256-262:

2. *10ա-51բ* Սահմանադրութիւն դաստիարակութեան նորածնեալ մանկանց, որ հրաւիրելոց իցեն յաստիճան հաճանայութեան: Խրատ հարկաւորք եւ պիտանիք, զոր արարեալ ի տէր Առաքելոյ Սիւնեաց

նահանգի — *Արդ, ըստ կարգի ժամանակին վարժել զմանկունս ի սնունդ սրբութեան…*

ա. *19բ-27բ* Իսկ յետ է. ամին — *Ծնողքն նորա զնայ ընծայիւք ի դուռն սուրբ եկեղեցոյն եւ նուիրեն զնայ Աստուծոյ…*

բ. *27բ-34բ* Գ. Իսկ յորժամ հասանէ ի յայր կատարեալ՝ ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի եւ լինի երեսնամեայ, եւ մերձի ժամանակ ձեռնադրութեան նորա ըստ ընդրութեանն Աստուծոյ — *Տեսանէ խոստովանահայրն նորա պէս պէս խորհրդով…*

գ. *34բ-51բ* Դ. Իսկ յաւուր ձեռնադրութեան — *Նստցի եպիսկոպոսն յաթոռ ի մէջ աւենի, ի դուռն եկեղեցոյն…*

3. *52ա-71բ* [Կոչումն հաճանայութեան յերեկոյին]* — *Յետ այսորիկ մատիցէ յառաջ առաջնորդ սուրբ ուխտին, կալով առաջի եպիսկոպոսին եւ ասէ բարձր ձայնիւ. Հա՛յր սուրբ, խնդրէ ի քէն մայրս մեր սուրբ եկեղեցի, զի ձեռնադրեսցես զայս անուն յաստիճան քահանայութեան ի սպասաւորութիւն սուրբ եկեղեցւոյ…*

* Տե՛ս նաեւ՝ Հմր 1. նոյն ծիսակարգի երկու ընդօրինակութիւններ են, սակայն այս հատուածում միայն ծիսական որոշ մասեր են կրճատուած, իսկ Հմր 1ում ընդօրինակումը ե՛ւ ծիսական, ե՛ւ բնագրային մասերի կրճատումով է:

Տե՛ս Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ, Կ. Պոլիս, 1807, 256-262:

4. *72ա-158բ* Սկիզբն աստիճանաց կղերիկոսաց, որ են սաղմոսերգու եւ աւետածու, եւ ամենեքեան ըստ իւրաքանչիւր կարգի — *Եւ նախ ծխեն խունկ սուրբ սեղանոյն եւ ասեն շարական ըստ աւուրն, յորում լինի տաւնն… եւ եպիսկոպոսն ասէ զաղաւթս զա[յս]. Տէ՛ր մեր, նայեա՛ յերկրպագութիւնս մեր…*

ա. *75ա-7ա* Առաջին կարգ դռնապանին — *Եւ յետ ծխելոյ եպիսկոպոսին խունկ սուրբ սեղանոյն ասեն շարական… եւ եպիսկոպոսն ասէ զաղաւթս զայս. Դու, Տէ՛ր Աստուած Հա՛յր սուրբ, որ կարողդ ես յաւիտեան…*

բ. *77բ-9բ* Երկրորդ կարգ ընթերցողութեան — *Սարկաւագն քարոզէ. Եւ եւս խաղաղութեան… եւ եպիսկոպոսն ասէ զաղաւթս զայս. Դու Տէր եւ իշխան Հա՛յր սուրբ, որ ունիս տէրութիւն յաւիտեան…*

գ. *79բ-81բ* Երրորդ կարգ երգմնեցուցչաց — *Քարոզէ. Եղբա՛րք պատուականք, բոլորով սրտիւ աղաչեսցուք… եւ եպիսկոպոսն ասէ զաղաւթս զա[յս]. Դու Տէ՛ր, Հա՛յր ամենասուրբ եւ անբաւ Աստուած, տո՛ւր զաւրութիւն ծառայիս քո…*

դ. *81բ-4բ* Չորրորդ կարգ աշտիճանի, այսինքն՝ ջահընկալի — *Ածէ առաջի եպիսկոպոսին աւագ սարկաւագն զնուիրեալն… եւ եպիսկոպոսն ասէ զաղաւթս զայս. Տէր սուրբ Հա՛յր ամենակարող եւ Աստուա՛ծ յաւիտենական, որ զՄիածին Որդիդ քո…*

ե. *85ա-94ա* Հինգերորդ կարգ է կէսսարկաւագաց, որ [է] դպիր — *Ածէ ընդնուիրեալն աւագ սարկաւագն առաջի եպիսկոպոսին… Ընթերցուածս յԵսայեա մարգարէէ. Եւ եղեւ յամին, յորում մեռաւ Ոզիա արքայ…*

զ. *94ա-119ա* Վեցերորդ կանոն. աւա՛ղ սարկաւագ ձեռնադրեն — *Զգենու եպիսկոպոսն եւ այլ քահանայք ըստ աւրինին… եւ եպիսկոպոսն դնէ զաջն ի վերայ եւ ասէ զաղ[օթս]. Տէ՛ր Աստուած ամենակալ, Հա՛յր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, քեզ խոնարհեցուցին ծառայքս քո…*

Ծնբ. 4/ա-զ միաւորները տե՛ս Մաշտոց ձեռնադրութեան կղերիկոսաց, սարկաւագաց եւ հաճանայից… Վաղարշապատ, 1876, էջ 5-23:

է. *119բ-58բ* Եւթներորդ կանոն ձեռնադրութեան հաճանայի [յառաւօտուն] — *Զգենու եպիսկոպոսն ըստ աւրինի ի սրբատուն եկեղեցոյն…*

Տե՛ս Մաշտոց ձեռնադրութեան կղերիկոսաց, սարկաւագաց եւ հաճանայից… Վաղարշապատ, 1876, էջ 38-56:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, ԺԵ. դ., բոլորգիր

160ա-7բ Աղաւթք աւուրնութեանց, զոր ընթեռնու հաճանայն ի վերայ ժողովրդեանն զկնի մանկանցն — *Աւրհնեալ է ամենասուրբ Երր[որդ]ութիւնն ի բարձունս՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգին… եւ զուարճացուսցէ զապաշխարողս եւ զխոստովանողս, որպէս զմաքսաւորն եւ զքանանացին, եւ որպէս զպոռնիկ, զորս արդարացոյց /// (վջ):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

119ա Ջատացաւղ սուրբ Ջեռնադրութեանս զՅովհաննէս արքեպիսկոպոսն Սեհուենեաց եւ ընդ նմին զբազմամեղ գծողս Հայրապետ յիշեցէ՛ք ի Տէր:

Տե՛ս ԺԵ. դ. յիշ-f, Գ., էջ 504, Հմր 719:

158բ Ջմեռեալս ոգով յիշեա՛, ո՛վ ընթերցող, եւ ժառանգող արքեպիսկոպոս տէր Յովաննէս՝ Սեհուենեաց *նահանգի:*

Տե՛ս ԺԵ. դ. յիշ-f, Գ., էջ 504, Հմր 719: Լ. Խաչիկեանը 119ա էջին եւ սրա վերաբերմամբ գրել է. «Այս յիշատակագրութիւնները կարող են գրուած լինել նաեւ ԺԴ. դարում»: Իսկ «Համառօտ ցուցակ»ը (Ա. էջ 1047) ձեռ-իս գրչութեան վայրը համարել է «Տաթե՞ւ»ը՝ նոյնացնելով Սիւնեաց եւ Սեհուենեաց անունները: Ձեռագիրը ԺԴ. դարով թուագրեցինք թէ՛ ըստ Խաչիկեանի ենթադրութեան եւ թէ՛ յատկապէս ըստ մեր զգացողութեան, իսկ Սեհուենեաց նահանգը տեղորոշել չյաջողուեց: «Սեհուն» անունով Տեղբառ.ում միայն նշուած է՝ «Բերդ Հալէպի նահանգի Հալէպի գաւառում, Անտիոքի շրջանում. Շիհ էլ Հաղիդ» (Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 4, Երեւան, 1998, էջ 566):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *158բ (ստացողի, 1552 թ., անարուեստ բոլորգիր) Զվերջին ստացող Ջեռնադրութեան գրոցս տէր* Ովսէփ եպիսկոպոսն Գոսեցին, *որ ստացո զՋեռն| 159ա|ս-*

դրութեան գիրքս ի հալ<ե>ալ ընչից իւրոց՝ վայելումն անձին իւրոյ եւ ծնողաց իմոց՝ մաւղտոսի (=մահտեսի) եղիայիւ *եւ մօր իմոյ* Շալհին, *եւ եղբարց իմոց սարգ̣ագ* Ատուրին *եւ սարգ̣սաւա<ր>գ* Ո̲իտեց: *Որ կարդայք, եւ յիշեցէ՛ք ի մաքրափայլ աղօթս ձեր զտէր* Ովսէփ *եպիսկոպոս,* |159բ| *եւ գուք յիշեալ լիցիք ի միւսանգամ գալըստեան իւր. ամէն: Ի թվին ՌՒ. (1552) ամին:*


2. *159բ (ստացողի, ԺԶ. դ., անարուեստ բոլորգիր) Ի այլեւ վերչին ստացող սուրբ գրոցս* Անանիէ *ի վայելումն անձ[ին] իւրոյ եւ ծնողացն իմոց՝* Գրիգորին, *եւ մօրն իմոյ* Եղիսայբեթին, *եւ եղբարցն իմոց՝* Ազարիէ, Բաղումին, Գասպարին, Մէլքումին, Միւսայէլին, Բարսեղին, *եւ քոյր իմ* Թաֆուի, *եւ զորդ[ի] իմ* Մխիթարն: *Որ կարդաք եւ յիշէք ընդ երկանաւոր կենէք:*

3601
ՄԱՇՏՈՑ ՁԵՌԱՑ

ԴԱՇՏԱԿ (ԾԱՐ ԳԱԻԱՌ) ՌՃԻԲ. – 1673

ԳՐԻՉ՝ եսայի երէց: ՍՏԱՑՈՂ՝ տէր Բարսեղ:

ԹԵՐԹ՝ 230. չգրուած՝ 84բ: ՊՐԱԿ՝ Ա-ԺԸ×12 (Ա, Դ, Ը, ԺԱ 13, Է 12+1, Թ, Ժ, ԺԴ, ԺԶ, ԺԷ 14, ԺԸ 11): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18×12,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (13,5×8), սեւով տեղ-տեղ սահմանագծուած: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 8ա). խորագիրք՝ կարմիր, սկզբնատառերը՝ կարմրով եւ տեղ-տեղ կանաչով: ՏՈՂ՝ 22: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի. միջուկը՝ տախտակ. աստառը՝ բրդէ կարմիր գործուածք. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԴ՝ դեղին թուղթ, չգրուած:



Նմուշ 8ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. մէջբը եւ փեղկերի եզրերը նորոգման ժամանակի, փեղկերին փակցուած ճիւն, մաշուած, ճերմուածքներով եւ ճաճերով կաշին. լուսանցակողերի կարմիրը թափուած, մաշուած, աղտոտուած. թերթերի մեծ մասը ստացուած 2 թերթի սոսնձում-հաստացումով, որոշ թերթերի եզրեր իրարից անջատուած, վրան զանազան բծեր, խոնաւութեան, ցեցակերութեան հետքեր, թ. 1՝ առաւել աղտոտուած, որոշ թերթերի լս-ներում գորշաւուն հետքեր. տեղ-տեղ գրաղաշտը գունափոխուած, գիրը թափուած. թ. 221-9՝ ստ., թ. 228՝ նաեւ վերին լս-ը, թ. 230՝ թերթի մեծ մասը՝ նորոգած դեղին թղթով, թ. 38՝ ստ. մասում հիմիից անջատ, ընդմէջ թ. 77-8ի թ. 84ի ելուստը, թ. 84ը այլ թուղթ, լուսագծերով, ա. երեսին միասիւն, բոլորգիր գրութիւն. պրակահամարները՝ սեւով, 63ա՝ պրակ Ջ՝ կարմրով. ընդմէջ թ. 50-1ի, 89-90ի, 141-2ի 1ական թերթ ընկած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *1ա-19ա* Կանովն խաչ աւրհնելոյ – *Բերեն եկեղեցին, նախ լուանան ջրով եւ ապա գինով եւ ասեն սաղմոս. Լո՛ւր, Աստուա՛ծ, աղօթից իմոց... Ընթերցւած առաքաց. երանելոյ է այր, որ եգիտ զիմաստութիւն...*

Ծնթ. 9ա՝ բ. սեան 2-րդ տողի մի մասը եւ 3-րդ տողը ջնջած, նկատելի են՝ «զնշան յամենայն»:

2. *19ա-25ա* Կանովն աւազան աւրհնել – *Որ ունի սկիզբն յաստուածային շնորհսն... եւ եպիսկոպոսն ասէ զաղօթս. Աստուած մեծ եւ փառաւորեալ...*

3. *25բ-41ա* Կանովն նաւակատեաց եկեղեցո պղծելոյ յանաւրինաց եւ շարժեալ սեղանն վերըստին հաստատել – *Մտանէ եպիսկոպոսն հանդերձ քահանայիւք եւ սարկաւագօք եւ ամենայն ժողովրդեամբն... եւ եպիսկոպոսն ասէ զաղօթս. [Ո]ր ընդունողդ ես աղօթից ժողովրդեան քումմ...*

4. *41ա-2ա* Կանովն նոր դուռն դնեն եկեղեցոյ – *Ասեն սաղմոս ձ̣ժէ.. Խոստովան եղերո՛ւք Տեառն... եւ քահանան ասէ զաղօթս. Աստուա՛ծ մեր, նորոգիչ...*

5. *42ա-3ա* Կանովն աւրհնութեան զգեստուց սրբութեան – *Ջինչ որ լինի, դնեն փայտեա սեղանով առաջի դրան եկեղեցոյն եւ ասեն Սաղմոս Իե.. Դատ արա՛յ ինձ, Տէ՛ր... եւ քահանան ասէ զաղօթս. [Ա]ւրհնեալ ես, Տէ՛ր Աստուած ամենակալ...*

6. *43ա-4ա* Կանովն սկիհ եւ մաղզմայ աւրհնելոյ – *Սաղմոս Իհ.. Տէր հովեսցէ: Կցուրդ. Բաժակ քո որպէս... եւ քահանան ասէ զաղօթ. [Ա]ւրհնեալ ես, Տէ՛ր Աստուած մեր, որ եաւուր մեզ...*

7. *44ա-5ա* Կանովն նկարեալ եկեղեցի աւրհնել – *Յերեկոյեան հսկումն լինի մինչեւ ցառաւօտն ի նմին եկեղեցւոջն... եւ քահանան ասէ զաղաւթս. [Մ]ուրբ ես, Տէ՛ր, եւ ի սուրբս բնակեալ...*

8. *45ա-6բ* Կանովն ժամահար աւրհնել – *Բերեն եկեղեցին եւ լուանան նախ ջրով եւ ապա գինով եւ չնջեն կաւուօք եւ ասեն սաղմոսք Ղէ.. Աւրհնեցէ՛ք զՏէր աւրհնութիւն... եւ քահանան ասէ զաղօթս. Աստուա՛ծ զօրութեանց եւ արարի՛չ ամենայն արարածոց...*

9. *46բ-9ա* Կանովն խաչալուա առնել – *Սաղմոս. Նշանեցաւ: Ընթերցուած ի Զորրորդ թագաւորութեան. [Ե]ւ ասեն արք քաղաքին զեղիսէէ...*

10. *49ա-70բ* Կանո̲ւնք եւ խրատք Մկրտութեան, զոր

արաեալ է ֆաջիմաստ վարդապետացն յառաջնոցն, նախ՝ մեծին Մեսրոպայ Մաշտոցն կոչեցեալ եւ ետ նո-ա մեծն Գրիգոր Տաթեւացին եւ Յովաննէս Եզբնկացին եւ Գրիգոր Ծերընց Խլաթացին, զոր ըստ խորհրդոյն կարգեցին – *Զարարողութիւն սորա, զոր պարտ է ուսանել ամենայն քահանայից... ի վերայ բազկացն զերեան ի վայր եւ զձեռն հրաժար/// (մէջից թափուած), 51ա [Ա-ղօթք. Տէ՛ր] Աստուած մեր, Աստուա՛ծ բարերար...*

11. *71ա-4բ* Կանովն նշան աւրհնելոյ – *Պարտ է քահանային նախընտրեալ կանոնօք զփեսայն եւ զհարսն, զի մի լիցեն ազգակից... Ընթերցւած յառակաց. Որդեաք, եթէ իմաստուն լիցի...*

12. *74բ-8ա* [ստ. լս-ից՝ Հանդերձ աւրհնել]* – *Եւ ապա զհանդերձն բերեն յառաջի քահանային. աւրհնէ զգեստն: Քարոզ. Սուրբ խաչիւս... սաղմոս. Կին քո որպէս այգի վայելուչ: Ընթերցւած առակաց. Լուարո՛ւք, թագաւորք...*

* Ծնթ. Միացուած նախորդ կանոնին:

– *78ա-80բ* [ստ. լս-ից՝ Ձեռնայզինահար] – *Նախ տան զձեռնազինարն ի դրան սուրբ եկեղեցին ամենեցուն վկայութեամբ. աւրհնեալ է Աստուած յամենայն ժամ...*

13. *80բ-3բ, 85ա-7ա* [Կանոն (ստ. լս-ից)՝ պսակ առնել], զոր ժողովեալ է Թումայի առն Սուսակեցոյն ի Հարցմանց եռամիածնի Գրիգորի – *Եւ տանին ի դուռն եկեղեցոյն. ելանեն խաչիւ եւ աւետարանաւ... Ընթերցւած ի Ծնընդոց. [Ե]ւ ասաց Աստուած՝ Արասցո՛ւք մարդն ըստ <ըստ> պատկերի մերում...*

Ծնթ. 84ա (ԺԸ. դ., բոլորգիր, այլ ձեռով ոռպէս տվյալ աղօթքի լրացում) «[նախ]այ տպեացեն խնամբ արարչական սիրոյ Ֆո առ արարածբ Ֆո, ի ձեռն միածնի Ֆո՝ Որդոյ սիրելոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, գալ ծնանել ի սրբոյ Կուսէն եւ նորոգել զնուիթիւն նախաստեղծ մարդոյն, առնել ի սկիզբն նշանաց ի Կանա գալիլեացւոց ի հարսանիսն եւ աստուածային սմանչելեօրն, եւ զուարճացուցեր զհարսնաւորսն՝ զջուռն ի գինի փոխելով. եւ յայժմ Տէ՛ր Աստուած մեր, աւրհնեա՛ զամուսնութիւս սոցա՝ որպէս զնախ<ա>[ահաւոցն]» (տե՛ս Մայր Մաշտոց, 2012, էջ 243):

14. *87ա-9բ* Կանովն պսակ վերացանելոյ – *Եւ ետ Ը. աւուրս քահանայն գայ ի տուն փեսային... Ընթերցւած յԻսխաեա մարգարէ. Այսպէս ասէ Տէր՝ Փոխանակ ամօթոյն ձերոյ...*

15. *89բ* Կանովն յոգէհանգիստ առնել կամ պատարագ մատուցանել – *Աստն սաղմոս ի թիւ. Երանի, որում թող՛, Աւրհնութիւն եւ փառք... Ընթերցւած յերեմիա մարգարէէ. Տէր Աստուած Իսրաէլի, յանձինք նեղեալք եւ հոգիք... մեղաք յառաջի քո, դու բն[ակեալ ի] (գունաթափ) /// (շար.):*

16. *90ա-102ա* Կանովն տղայթաղ առնել – *Աստն սաղմոս. Առ քեզ Տէր համբարձի... եւ քահանան ասէ զաղօթս. Աստուած մեր, որ բնակեալդ ես ի յերկինն...*

ա. *91աբ* Սրբոյն Գրիգորի ասացեալ բանք – *Եթէ մեք, որ կենդանիքս մնացեալ ի գալըստեան Տեառն... տարայց զնոսա ի լեառն սրբութեան իմոյ եւ ուրախ արարից զսոսա ի տաճարի իմում:*

բ. *95բ* Սրբոյն Գրիգորի ասացեալ – *Ամենեքեան, որ տեսանիցեն զարդարն, ճանանչիցեն եւ ասասցեն... իբրեւ զհայելի տեսանիմք ի նոյն կերպարանս նորոգին փառօք ի փառս:*

գ. *96բ-8ա* Գանձ վաղճանեալ տղայոց ասա՛ [ի Նաղաշ եպիսկոպոսէ] – *Արարիչն արարածոց մեզ բարկացաւ, քաղցր բնութեամբ աստուածային մեզ դառնացաւ... եւ քեզ ամենքս երկիր պագանեմք տաճար բանին հոգոյն հանգո[ւ]ցելոց:*

Տե՛ս Մկրտիչ Նաղաշ, աշխ. էդ. Խոնդկարեանի, Երեւան, 1965, էջ 150-157 (հաղուածաբար):

17. *102ա-4ա* Կանոն այգոյն – *Երթան ի գերեզմանն, եւ այս կանոն կատարի... Ընթերցւած յԻսխայ մարգարէ. Զի ի Տեառնէ եղիցի ի դարձ արդարոյն...*

18. *104բ-6բ* Կանովն եւթներորդ յաւուրն – *Գան ի գերեզմանըն եւ ասեն սաղմոս. Երանի ամենեցուն, որ բնակեալ են ի տան Տեառն... Ընթերցւած առակաց. Արդարքն յաւիտեան կացցեն, եւ ի Տեառնէ՛ն վարձք նոցա...*

19. *106բ-10ա* Կանովն հաղորդ տալոյ – *Առնու քահանայ զփրկական խորհուրդն... Ընթերցւած յԻսխա մարգարէէ. Եւ եղեւ ամին, յորում մեռաւ Ոզիայ...*

20. *110ա-33ա* Կանովն համօրէն ընծջեցելոց ուղարկել ի Քրիստոս – *Եւ քահանայ ասէ. Աւրհնեա՛լ Հայր սուրբ, Աստուած ճշմարիտ... եւ քահանան ասէ զաղօթս. Աստուած յաւիտենական, անըսկիզբն...*

ա. *127բ-31ա* Գանձ ննջեցելոց ասա՛ («ՄԱՆՎԵԼՍ») – *Մինդ ի էյէն, Բանդ ի սկզբանէ... զհողս ի վերայ իմ դուք ծածկեցէ՛ք եւ դուք բարով կացէ՛ք, մնացէ՛ք□ ողորմեա՛ մեզ Տէր:*

բ. *131ա-2բ* Ողբ պիտանի – *Ով քահանայք եւ վարդապետք աստուածաբան... զի Տէրն քաղցր է, պարտական ողորմութեան:*

21. *133բ-9ա* [Կանոն (ստ. լս-ից)՝ այգոյն] – *Իսկ երկրորդում յաւուրն երթան ի գերեզմանն, եւ ասի սաղմոս. Ընդ երեկոյս հանգիցեն... Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց. Այլ մեք պարտիմք...*

22. *139ա-41բ* Կանովն եւթներորդ աւուրն<ուրն> – *Գան ի գերեզմանն խաչիւ եւ աւետարանաւ. սաղմոս, կցուրդ. Աւուրք իմ որպէս... Ընթերցւած յեսայեա մարգարէ. Մխիթարեցէ՛ք, մխ[իթ]արեցէ՛ք, ժողովուրդ իմ... զոր զգալուստն քո յառաջագոյն գուշակեցեն, զոր ի վերջին յաւ/// (վջ.):*

23. *142ա-5ա* [Կանոն հոգէհանգստի (ստ. լս-ից)] – *(սկ.) /// յաւիտեան եւ մեք կորըստականք, Տէ՛ր ամենակալ Իսրայէղի... Ընթերցւած Առակաց. Պատուեա՛ Տէր ի քոյոց արդար վաստակոց...*

24. *145ա-52ա* Կանովն տեառնական աւրհնելոյ – *Աձեն զխոսա<աստ>ացեալն ի դուռն եկեղեցոյն եւ առաջի խաչին դնեն կարմիր բանքաւակ... Ընթերցւած ի Ղեւտացւոց. եւ կոչեաց Տէր ըզՄովսէս...*

25. *152ա-65ա* Կանովն ջուր աւրհնելոյ – *Սաղմոս. Զա[յ]ն Տեառն ի վերայ եւ Աստուած փառաց... Ընթերցւած ի Զորրորդ թագաւորութիւն. եւ ասեն արք քաղաքին ցեղիսէէ...*

– *156ա-64ա* Աւրհնութիւն ջրոյս, զոր ասացեալ է սրբոյն Բարսեղի – *Աւրհնեալ ես, Տէր Աստուած ամենակալ, յամենայնի հզաւր եւ աքանչելագործ...*

26. *165բ-83բ* Կանովն Մեծի հինգշաբաթին զապաշխարողսն առնակել – *Ժողովէ քահանան զապաշխարողսն առ դուռն եկեղեցոյն... Ընթերցւած յեսայեա մարգարէ. եւ կատարեսցին աւուրք սգոյ քո...*

– *168բ-72բ* Քարոզ խնդրեսցուք. աղօթք Բարսղի – *Տէր Աստուած, Հա՛յր ամենակալ, / արարի՛չ երկնի եւ երկրի...*

27. *183բ-203ա* Կանովն Մեծի հինգշաբաթի Ոտնայլուային – *Ըստ ողորմեաց, որում ասաց Յիսուս, թէ աւրինակ մի ետու ձեզ... Ընթերցւած յելից. Խաւսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ՝ Արայ աւազան պղնձի...*

28. *203ա-28ա* [Աւետարան բժշկութեան, խաչելութեան, իւղաբերից]

ա. *203ա-4ա* Աւետարան բժշկութեան [Մտթ. Թ. *27 – 34*] – *Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս...*

բ. *204ա* [Աւետարան] բժշկութեան [*Մտթ. ԺԷ. 14-17*] – *Եւ իբրեւ եկին ի ժողովուրդն, մատեաւ այր մի...*

գ. *204բ-5ա* Աւետարան խաչելութեան [Մտթ. ԻԷ. 20] – *Իսկ քահանայապետքն եւ ծերք հաւանեցուցին զժողովուրդս...*

դ. *205ա-9ա* Աւետարանն ըստ Մարկոսի [Մրկ. Ժ. 26-34] – *Եւ ասէր՝ Այսպէս է արքայութիւնն Աստուծոյ...*

ե. *209ա-10ա* Աւետարան խաչելութեան [Մրկ. ԺԵ. 1] – *Եւ վաղվաղակի ընդ առաւաւտն խորհուրդ արարեալ...*

զ. *210ա-5ա* Աւետարանն ըստ Ղուկասու [Ղկ. ԺԲ. 32] – *Մի՛ երկընչիր, հա՛ւտ փոքրիկ, զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն...*

է. *215ա-6ա* [Աւետարան] խաչելութեան [Ղկ. ԻԳ. 21] – *Եւ նոքայ անդրէն ադաղակէին...*

ը. *216ա-8ա* Աւետարան ըստ Յոհաննու [Յով. Ե. 19-24] – *Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսայ՝ Ամէն, ամէն ասեմ ձեզ...*

թ. *218ա-20ա* [Աւետարան] Իւղաբերից [ԺԹ. *38 – Ի. 18*] – *Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս Յովսեփ, որ Արեմաթեան էր...*

ժ. *220ա-3ա* Աւետարան բժշկութեան [Յով. Թ. 1] – *Եւ մինչդեռ անցանէր, ետես այր մի կոյր ի ծնէ...*

ժա. *223ա-8ա* [Աւետարան ըստ Յոհաննու. [Յով. ԺԲ. 24]. *ձեռ. 3116, 51բ-2ա*] – *Ամէն, ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ հատն ցորենոյ...*

Ծնթ. Դրեթէ բոլոր կանոնների խոռագրերը ստ. լս-ներում: Համմտ. Մայր Մաշտոց, հտ. Ա., գիրք Ա., Ժ. դար, աշխ. Գէորգ Տէր-Վարդանեանի, Սբ. Էջմիածին, 2012, էջ 83-433:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

70բ Մվ սուրբ քահանայք, յորժամ մկրտութիւն առնէք, յանարժան եսայի իրիցուկըս յիշեցէ՛ք, Աստուած զձեզ յիշէ՛. ամէն:

165ա Զգծողիկս յիշեա՛, ո՛վ սուրբ քահանայք, Աստուած ձեզ յիշէ՛:

223ա (կարմրով) Զամբիծան գի՛տ եւ կարդայ:

*228ա Փա՛ռք ամենայսուրբ երրորդութեան՝ Հաւր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: եւ արդ, շնորհիւ Տեառն սկսա եւ ողորմութեամբ նորին յարգ (=յանգ) ելեալ աւարտեցաւ մատեանս աստուածային, որ է Մաշտոց՝ ի խնդրոյ պատ[ու]ելոյ սրբազան եւ սրբասնեալ տէր Բարսեղն, որ եւ ջերմն յաւժարութեամբ եւ փափաքանօք ետ գրել զսայ իմում նուաստութեանս՝ եսայի յանարժան եւ մեղօք լի իրիցոյն, փծուն եւ յանարուեստ գրչի, այլ զօրութեամբն յԱստուծոյ աւարտելով ի փառս Աստուծոյ. ամէն: Որոյ ցանկացող եղեալ բարէմիտ եւ մեծահ֊ոգաւ տէր Բարս|*228բ*|եղն, եւ ստացաւ զսայ յիշատակ հոգւոյ իւրոյ եւ բարի ծն[ո]ղացըն իւրոց՝ հօրըն իւրոյ՝ Յոհաննի, եւ մօրն՝ Փարիճ, եւ հ[ա]րազատ եղբօրն իւրոյ՝ Զաքարիայիճ, որ առ Քրիստոս է հանգուցեալ. Աստուած յարքայութիւնն պարգեւեսցէ նորա, որ շատ աշխատանք ունի ի վերայ մեր, եւ կողակիցըն նորա՝ Խանումճ, քանզի ամուլ էին եւ ոչ ունին զաւակ, այլ տրամութեամբ մխիթարէին յանձինս իւրեանց, եւ փոխարէն Աստուած յարքայութիւն շնորհեսցէ նոցայ. ամէն: Դարձեալ յիշեցէ՛ք տէր Բարսեղն եւ կողակիցն իւր՝ Ասըլխանն, եւ զաբոյս որդին իւր՝ Զաքարիայն, եւ դստեր՝ Փարին. ամէն: Դարձեալ յիշեցէ՛ք եւ միւս եղբայրն՝ Առաք[ե]լն, |*229ա*|եւ կողակիցն իւր՝ Մարիամն, որ առ Քրիստոս է հանգուցեալ, եւ Աստուած արքայութիւն տացէ նորա. ամէն. եւ միւս կողակիցն՝ Նազլուխանն, եւ որդիքն՝ Սարգիսն, Մալխումն, Հախնազարն, Գիրակոսն, եւ նորընձայ Շահնազարն, եւ դուստրն՝ եղիսա[բ]եթն. ամէն. (այլ ձեռքով՝ «եւ հարսն՝ Գօզալն»): Այլ յիշեցէ՛ք փոքր եղբայրն իւր՝ Գասբարն, եւ կողակիցն նորա՝ Մարիանն, եւ որդին իւր՝ Աստուածատուրն. Քրիստոս Աստուածն երկայն աւուր պահեսցէ: Յիշեցէ՛ք եւ ողորմի ասացէ՛ք նոցայ. ամէն: Այլեւ յիշեցէ՛ք զսրբասնեալ տէր Բարսեղն եւ քուրքն իւր՝ Հուրիխանն, Սալթանաղէն, Մարինոսն, |*229բ*| եւ զամենայն յարեան մերձաւորսն՝ զկենդանիսն եւ զհանգուցեալսն, յիշեցէ՛ք եւ լի բերանով Աստուած ողորմի ասացէ՛ք, եւ Աստուած զձեզ ողորմեսցի. ամէն: եւ աւարտեցաւ սուրբ մատեանս աստուածա-

յին, որ գոչի Մաշտոց, ձեռամբ յոգնամեղ եւ յանիմաստ գրչի՝ սուտանուն եւեթ Եսայի *իրիցու: Գրեցաւ սայ ի յերկիրս* Ծարայ, *ի գաւղս, որ գոչի* Դաշտակ, *ընդ հովանեաւ* Սուրբ Աստուածածնին *եւ* Մարդաղօնեաց Սուրբ Նշանիս *եւ* Սուրբ Յակոբիս *եւ այլ սրբոց, որ աստ կան հաւաքեալ: Ի թվիս Հայոց ՌՃԻԲ. (1673), ի փառս Աստուծոյ. ամէն: Արդ, |230ա| որք հանդիպիք [սմա] կ[արդալով կամ օրինակելով, յիշեցէ՛ք ի մաքրափայլ աղօթս ձեր զանարժան* Եսայի *իրիցուկս, եւ զհայրն իմ՝* Ջօրճապն, *եւ զմայրն իմ՝* Խանզատէն: *Յիշեցէ՛ք ուղիղ սրտիւ եւ լի բերանով ողորմի ասացէ՛ք, եւ Աստուած զձեզ ողորմեսցի իւր միւսանգամ<գամ> գալստեանն, զվարձն ձեր հատուց[անէ]. ամէն: [Հայր մեր], որ յե[րկինս]:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

230ա (1718 թ., նոտրգիր) Այլեւ կրկին յիշեցէ՛ք մերոյ թաղեցի Շարիխանի *եւ դուստր նորին* Հերիփնազն *(ջնջուած բառի փոխարէն), որ եւս /// ըզսուրբ մատեան գիրքս, որ է Մաշտոց, եւ եւս յիշատակ ի սուրբ գրանս իննի/// յիշատակ հոգոյ իմոյ եւ* Շարիխանին *եւ* Բենա///. *յիշեցէ՛ք եւ Աստուած ողորմի ասացէ՛ք, եւ [Աստուած ձեզ] ողորմեսցի. ամէն: Աղաչեմ [արդ] ձեզ, ո՛վ հոգեւորք եւ սրբագործք [եղբայրք, որք] գայք կրկին եւ երեքգին աղ///|230բ| ձեզ /// յելանիցն(՞) սառն ի հրոյ եւ ջրոյ ոչ տանք իմ: Գրեցաւ ա[ռա]ջի, միջի, վերջի յիշատակ սուրբ Մաշտոցիս յառնելոյ թվի ՌՃԿԷ. (1718) էր, որ ես վերոյգրեալ ///(յաջորդ բառը ջնջած եւ արտ. լս-ում գրուած՝ «Հերիփնազ») առայ ինձ յիշատակ եւ փրկութիւն հոգւո իմոյ. Հայր մեր՛՛:*

ՆՇՈՒՄ՝ *պհպ. Աա՝ մատիտով «3601»:*


ԳՐՉԱՓՈՐՁ՝ *230ա՝ «ձեզ/// ատր է///, որ գիրակ սա», 230բ՝ «Մուղ///եցին սուլթ[ա]նին թ. ՌՃԾ. (1701)»:*

3602
ԱՒԵՏԱՐԱՆ


ԿԱՐԻՆ (ԱՐԶՐՈՒՄ) ՌՃԴ. – 1655

ԳՐԻՉ՝ Տէր Յակոբ Զէլէպի (թ. 1-11, 22-332, 365ա), Տէր Յակոբ սրկ. (12ա-21բ, 333բ-64բ): ԾԱՂԿՈՂ՝ Տէր Յակոբ մեծ.: ՍՏԱՑՈՂ՝ Սարգիս (ստացել է Յակոբ Զէլէպիից): ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ Մէլիոն (եղբայր տէր Յակոբ սրկ-ի):

ԹԵՐԹ՝ 366+3 (երիցս՝ թ. 1, կրկն.՝ թ. 178). չգրուած՝ 1աբ, 1դ, 2բ, 3ա, 4բ, 5ա, 6բ, 7ա, 8բ, 9ա, 10բ, 11բ, 24ա, 108ա-9բ, 111բ, 112ա, 260ա, 333ա, 366բ: ՊՐԱԿ՝ 12+Ա.-Իէ×12 (Ա. 13, Բ, Իէ 11, Թ 15)+13+10+8: ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18×13: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (12×8): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 34ա, 337ա): ՏՈՂ՝ 21: ԿԱԶՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դոնակով, երեմական վարդեակաձիմմ գամերով եւ կանաչ գործուածք-կապիչներով՝ ծայրերին ամրացուած մետաղէ ճարմանդ, ապա՝ կարմիր, կանաչ, դեղին թելերի փնջիկ. Ա. փեղկին արծաթէ երկու խաչ (փոր, ոճատուռուած, կենտրոնում խաչուած Քրիստոսի պատկերով խաչն ամրացուած մեծի մէջտեղում), մեծ խաչի ձախից աջ «ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ», վերից վար «ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ»՝ գրուած ոճատուռուած շրջանակների մէջ, պատուի նշանով, մեծ խաչի աջ, ձախ եւ ստորին թեւերի տակ 3 ձուածիր մետաղէ փլաք, անկիւներին՝ աւետարանիչների խորհրդանիշերով արծաթէ եռանկիւն թիթեղներ, շղթայով ամրացուած արծաթէ խաչ՝ վրան պատկերուած Քրիստոսի խաչելութեան հետ կապուած իրեր. մի երեսին՝ կենտրոնում փշէ պսակ, ձախ թեւին՝ մուրճ, աջին՝ աֆցան, վերին եւ ստ. թեւերին՝ իրար խաչուած նիզակներ, նիզակների տակ՝ մետաղադրամներով ֆսակը, հակառակ երեսին՝ ստ. թեւին՝ սիւն, վրան՝ սեան կենտրոնում՝ աղաւնի, վերին թեւին՝ մարդկային կերպարանք՝ հաւանաբար Քրիստոս, աջ եւ ձախ թեւերին՝ մտրակ. Բ փեղկին՝ 15 մետաղէ փլաք. միջուկը՝ տախտակ. աստառը՝ շերտազարդ մետաքս. լուսանցակողերը՝ կարմիր:



Նմուշ 34ա




Նմուշ 337ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Մատթէոս՝ 24բ, Մարկոս՝ 112բ, Ղուկաս՝ 171բ, Յովհաննէս եւ Պռոխորոն՝ 260բ, Յովհաննէս Աւետարանիչ՝ 326ա (լս-ային, սեւով գծանկարային): Խորան՝ 1զ, 2ա, 3բ, 4ա, 5բ, 6ա, 7բ, 8ա, 9բ, 10ա: Կիսախորան՝ 25ա, 113ա, 172ա, 261ա: Ճակատազարդ՝ 12ա, 334ա: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն, տաճար (14բ, 87ա, 153ա, 242բ), խաչ (94բ, 104բ, 156ա եւ այլուր), սափոր (264բ), ծառ (146ա, 237բ): Ձարդագիր՝ հանգուցագիր, մարդապատկեր, թռչնագիր, կենդանագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, նարնջի, վարդագոյն, շագանակագոյն, մոխրագոյն, սեւ:

Տե՛ս Աստղիկ Գէորգեան, Հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն Թ-ԺԷ. դդ., Գահիրէ, 1998, էջ 472, Հմր 279:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ՝ Վրացերէնէ՝ Պօղոսի ճաշոց՝ խաւնիինգերորդ չորեքշաբթից մինչեւ խաւեօթերորդ երեքշաբթի: ԺԹ-ԺԵ. դդ..: Ա+Բ. Ա.՝ ստացուած 1 թերթի ընդլայնակի հատումով (բնագիրը կտրած), Բ.՝ ստացուած 1 թերթի ընդլայնակի հատումով եւ ընդերկայնակի եզրահատումով (բնագիրը կտրած) Մագաղաթ (17,2×12), միասիւն, նուսխուրի (նմուշ՝ Ա.ա): Յաւլըս ლექციონარი, ოთხშაბათი კ˜ე-დქნ ვიდრე სამშაბათამდე კ˜ზ. Ա.ա՝ եփս. Դ. 28-32, Ա.բ՝ եփս. Դ. 19-24, Բ.ա՝ եփս. ե. 13-19, Բ.բ՝ Փիլիպ. Ա. 22-27:



Նմուշ Ա.ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի վրայ կան ճաթեր եւ ֆերծուածքներ, մէջբը առանձնացուած Ա. փեղկից. լուսանցակողերը մաշուած, կարմիրը թափուած, խիստ աղտոտուած. Պտոկ-պիպ-ներն աղտոտուած, Պտոկ-պիպ. Բ՝ վրան 2 բնական անցք. թերթերն աղտոտուած, վրան թանաքի եւ զանազան այլ բծեր, խոնաւութեան հետքեր, տեղ-տեղ գիրն արտապուած հակառակ երեսին, ընդմէջ թ. 10-1ի՝ Պտոկ-պիպ-ի ելուստը, թ. 1աբ-10՝ հիմիից թուլացած, թ. 11, 12, 23՝ ստ. մասը հիմիից անջատ, թ. 117՝ վերից, սիւնակամիջի մասում այրուած, բնագիրը փոքր-ինչ վնասուած, ընդմէջ թ. 121-2ի, 327-8ի 1ական, թ. 119-20ի, 358-9ի 2ական թերթ կտրած. Բ պրակի առաջին թերթը սխալմամբ սոսնձուած Ա պրակին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1զ-10ա, 22ա-3բ, 11ա, 24ա-325բ* Աւետարան

1. *1զ-2ա* Թուղթ Եւսեբեայ:

2. *3բ-4ա, 5բ-6ա, 7բ-8ա, 9բ-10ա* Համաբարբառ *(նաեւ ստ. լս.՝ Յրուացանկ)*:

3. *22ա* Նախադրութիւն: *22բ-3բ, 11ա* Գլուխք: *25ա-107ա* Աւետարան Մատթէոսի:

4. *107աբ* Նախադրութիւն: *110ա-1ա* Գլուխք: *113ա-67բ* Աւետարան Մարկոսի *(166բ-7բ* Յարուցեալ Յիսուս*)*:

5. *167բ-8բ* Նախադրութիւն: *169ա-71ա* Գլուխք: *172ա-257ա* Աւետարան Ղուկասու:

167բ գրչից՝ «Համբարձման կարդա՛ զսա»:

6. *257բ-8ա, 325բ* Նախադրութիւն: *258բ-9բ* Գլուխք: *261ա-325բ* Աւետարան Յովհաննու *(325աբ* Իրք կնոջն շնացելոյ*)*:

Բ. *12ա-4բ* Տիեզերալուր եւ աշխարհալոյս վարդապետի հոգէնըւագ երգոյի տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի Կլայեցւոյ՝ արարեալ պատճառս ժ. խոռանաց սուրբ Աւետարանիս եւ վասն երանկ ընանկ գունոցն ծաղկանց, եւ հատուցն, եւ ծառոցն, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերո – *Առաւելապէս հրաշից արժանի սոսկալի գերապանծութիւն բանից... եւ ի մարգարէսն առ նորս կատարեալ ի փառս ամենասուրբ երրորդութեանն:*

– *14բ-21բ* Յայլմէ ասացեալ բան վասն խոռանաց Աւետարանիս – *Դո՛խտ իմանալի, սո՛ւրբ եկեղեցի, փոխանակ դրախտին Ադամա... եւ թէ ժէ. առանձին է, որ այն բանն, յայլ ոքն չկայ: Եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամէն:*

Գ. *326ա-31ա* [Նպաստումն Յովհաննու Աւետարանչին] – *Է՞ր ընդ եղբարս երանելին Յովհաննէս... աւանդեաց զհոգին ի ձեռս Տեառն սուրբ առաքեալն եւ աւետարանիչն Յովհաննէս ի փառս Քրիստոսի:*

Դ. *333բ-64բ* [Յայտնութիւն Յովհաննու]

– *333բ-4ա* Յառաջաբանութիւն Յայտնութեանն Յոհաննու – *Սրբո աւետարանչին Յոհաննու է գիրքս, որ կոչի Յայտնութիւն... եւ վասն նորոյ երկնին եւ երկրի, զոր ժառանգեն արդարքն:*

– *334ա-64բ* Յայտնութիւն սրբոյն Յովհաննու աստուածաբանի – *Յայտնութիւն Յիսուսի Քրիստոսի ի ձեռն որոյ ետ Աստուած ցուցանել ծառայից իւրոց... գամ ես վաղվաղակի. ամէն: Եկն Տէր Յիսուս Քրիստոս, շնորհք Տեառն Յիսուսի Քրիստոսի ի վերայ ամենայն սրբոց. ամէն:*

Տե՛ս Աստուածաշունչ, Վենետիկ, 1860, էջ 1197 (Յոչ.), 1199-1212:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. Յակոբ Չէլէպի գրչի *168բ Աւրհնութիւն, որ կարդայ, գովութիւն, որ լսէ, փառք Փրկչին եւ յիշատակ բազմամեղ գրչիս՝* Յակոբ *անիմաստ դպրիս. ամէն:*

259բ Արդ, ես՝ նուաստս եւ անպիտան Յակոբ *անուն անձն անարժան,*

լցեալ մեղօք յոյժ զանազան, եւ ի բարեաց թափուր ՚ւ ունայն,

զձեզ աղաչեմ, ո՛վ պատուական եղբարք եւ հա՛րք իմ սրբազան,

սուրբ աղօթից ձեր մաքրական յիշման առէ՛ք եւ զիս արժան:

Այլեւ զեղբայրն իմ՝ զտէր Վարդան, ըզքաջ մշակըն քրտնաջան,

որ իբր ըզջահ անշիջական, փայլէ նա միշտ ի մէջ յատեան,

նաեւ զԴաւիթ հեզ քահանայն, եւ ըզՊետրոսն առաքեստաբան,

որ աշխատին այժմ անխափան (ստ. լս.)՝ ի գրել զՄաղմոս մեծին Դաւթեան։

Ի թուականի մեծ Հայկազան, ՌՃ. եւ չորեքեան (1655), եղեւ աւարտ գլխոցս այսքան Մատթեա, Մարկեա *եւ* Ղուկասեան։

331ա Փա՛ռք անբաժանելի եւ համագոյ, միասնական Սուրբ Երրորդութեանն՝ Հաւր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ անզրաւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Շնորհիւ շնորհատու Սուրբ Հոգւոյն եւ ողորմութեամբ նորին յանգ ելեալ կատարեցաւ Աւետարանս ի քաղաքս, որ կոչի Թէոդուպօլիս, *որ եւ* Կարնոյ *քաղաք, եւ* Աւզրում *արտաձայնի, ընդ հովանեաւ |331բ|* Սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի, *որ ի մէջ բերդին, ի հայրապետութեան տեառն* Փիլիպպոս *սրբազան կաթողիկոսի եւ ի թագաւորութեան հագարացւոց սուլթան* Մահամատի, *որ ի* Կոստանդինուպօլիս, *ի թվականութեան Հայկազան սեռիս ՌՃԴ. (1655), ձեռամբ* Յակոբ *ախմար գրչի, ի խնդրոյ աստուածահաճոյ եւ բարեմիտ եւ երկիւղած առն* Մելիոնի, *որ մեծաւ փափաքանօք եւ բազում ջանիւ փոյթ ի մէջ առեալ՝ յիշելով զտէրունեան հրամանն, որ ասէ՝ Դանձեցէ՛ք ձեզ գանձս յերկինս, ուր ո՛չ ցեց եւ ո՛չ ուտիչ ապականեն, եւ ո՛չ գողք ական հատանեն եւ գողանան, յաղագս որոյ կատարեալ յուսով ցանկացօղ եղեւ վարդապետիթիւ բուրաստանիս այս եւ ետ գաղափարել զսա յիշատակ հոգւոյ իւրոյ եւ իւրայնոցն առհասարակ։ Բայց հաւատարիմ եւ բարեպաշտ ծառայ Տեառն հեզ եւ հպատակն* Մելիոն, *ոչ ժամանեաց |332ա| յաւարտ եւ ի կատարումն, որ միշտ եւ հանապազ ցանկայրն եւ փափաքէր՝ իբրեւ զեղջերու յաղբերս ջուրց, այլ եհաս հրաւէր մահուան յերիտասարդական տիս հասակի, եւ քառասնամեայ լեալ՝ փոխեցաւ յաստի կենացս եւ յաւելաւ առ հարսն, եւ եթող կսկիծ անպատմելի ծերունի հօրն իւրոյ՝ տէր* Գէորգ *սրբասնեալ քահանայի, եւ հարազատ եղբարց իւրոց՝ տէր* Յակոբ *ժրաջան մշակի եւ* Մաղաքիայ *ուսումնասէր սարկաւագի, եւ եկաց եւ բնակաց իսկ։ Վասն որոյ աղաչեմ զձեզ, ո՛վ դասք լուսեղէնից, որք պատահիք սմա կարդալով եւ կամ գաղափարելով, յիշեսջի՛ք ի մաքրափայլ յաղօթս ձեր զատացօղ անգին գանձոյս զվերոյասացեալ զՄելիոնն եւ զհայրն՝ զտէր* Գէ<գ>որգն, *եւ զմայրն՝ զ*Մանանայն՝ *զհանգուցեալն նախկին առ Քրիստոս, եւ զհամշիրակ եղբարքն՝ զտէր* Յակոբն *եւ զ*Մաղաքիա *|332բ|* սարգաւագն, *եւ զորդի* Մելիոնին՝ *զ*Սողոմոն *սարկաւագն, եւ զորդի տէր* Յակոբին՝ *զ*Մկրտիչ *սարկաւագն, եւ զորդի* Մաղաքիային՝ *զ*Պլուզ *սարկաւագն, եւ զայլ ամենայն մերձաւորսն։ Նաեւ զանպիտան գրիչս՝ զ*Յակոբ, *եւ զեղբայրն իմ՝ զ*Պետրոսն՝ *հանդերձ ծնօղօք մերովք, եւ զուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։*

2. Տէր Յակոբ *սրկ. գրչի 365ա եղեւ աւարտ սուրբ Աւետարանիս ձեռամբ երեք տէր* Յակոբայ, *ի լաւ եւ ստոյգ օրինակէ, որ գամենայն տուն եւ կէտ եւ ցրուացանկ քերթողութեամբ յանգ հանեալ կատարեցաք. բուն սեաւ գիրն* Զէյէպի *տէր* Յակօբն, *զՏեսիլն* Յօհաննու *եւ զՏասն խորանաց մեկնութիւնն գրեաց տէր* Գէորգի *որդի, աւագերէց գեղեցկաշէն մայրաքաղաքիս* Աւզրումայ *տէր* Յակոբն, *եւ զանազան ծաղկով զարդարեաց զսա մահդասի տէր* Յակոբն։ *Որք հանդիպիք, ներումն հանցանաց մերոց խնդրեցէ՛ք ի Քրիստոսէ, եւ ձեզ մասն լիցի ի Տեառնէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս։ Դարձեալ յիշեսջի՛ք ի Քրիստոս զբարեմիտ քրիստոնեան զՅակոբն, եւ զորդին՝ զ*Մնացականն, *եւ կողակիցն, եւ զեղբայրն՝ զ*Աւաքելն, *եւ որդի* Աւաքելին՝ *զ*Կիրակոսն, *որ ստացան զսուրբ Աւետարանս յիշատակ իւրեանց հոգւոյն, եւ եառն ի ձեռն տէր* Սարգսին։ *Ով ոք կարդայք, յիշեցէ՛ք եւ Աստուած ողորմի ասացէ՛ք նոցա հոգւոյն. ամէն։ Հայր մեր, որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո, եկեա՛ւ։*

Ծնթ. Միայն 259բ եւ 365ա էջերի յիշ-ները տե՛ս ԺԷ. դ. յիշ-ք., Գ., էջ 664-665, Հ՝ 1002։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *1գ (1689 թ., նոտրգիր) Դարձեալ յիշատակ է սուրբ Աւետարանս* Պաշգեղցի Դարբինենց *տէր* Մարտիրոսին։ *Տվի ես՝ սապոնճի* Կիրա[կ]ոս. *իմ հալալ արդենացս է, ոչ ոք իլախա չունի ձեռաց առնելու, ո՛չ որդի, ո՛չ դուստր եւ ո՛չ ազ[գա]կանն. եւ թէ անդգնինն, առնել կամենան, ԳՃԺԸ. (318) հայրապետացն նզովեալ եղիցին, եւ թէ տէր* Մարտիրոսն *ծախել կամենա կամ գրաւ դնել, իւր կարգէն լուծեալ եղիցի. մինչ որ կենդանի է, որդովքս եւ զիս յիշատակէ պատարագիս, եւ ինքն յիշեալ լիցի առաջի Քրիստոսի. ամէն։ Գրեցաւ թուին ՌՃԼՐ.ին (1689), ի* Պաշգեղ* *ծրեցաւ։*

* Ծնթ. Գիւղ Աւմ. Հայաստանում, Կարնոյ նահանգի Բասէն գաւառում. տե՛ս Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 4, Երեւան, 1998, էջ 302։

2. *365բ (ԺԷ. դ., նոտրգիր) [Դարձեալ յիշեցէ՛ք ի Քրիստոս զ*Սալչուկն, *որդին իւր՝* Ոսկան, *կո[ղակիցն՝* Աննային*] (ջնջագիծ), քեւերն՝* Դալուադին, *Աստուած ողորմի ասացէ՛ք. ամէն. Հայր մեր, որ յերկինս։* Դալաթին, *դարձեալ յիշեցէ՛ք զ*Տանային *որդին՝* Մարտիրոսին. *ամէն։ Հայր մեր, որ յերկինս։*

3. *366ա (1701, բոլորգիր)* Նաման *փաշան, որ եկ* Աւզրում, *այն տարին տղայ եղաւ* Յակոբըն։ *Քաղացն այլ այն տարին շինեցինք. թվին ՌՃՇ. (1701)։*

4. *366ա (1703, բոլորգիր) Մահն ընկաւ* Պաշգեղն. *սրահն ու գոմն այն տարին շինեցինք. թուին ՌՃՇԲ. (1703)։*

5. *366ա (1724, նոտրգիր) Թվին ՌՃՀԳ. (1724) առին* Երեւան, *Սեպտեմբեր ամսոյն։ Այն տարին աճամու ցաւն*

ընկաւ Բասէն, շատ խոշոր մարմ մեռաւ: Հոկտեմբերի ԺԲ. (12) (արտ. լս.)՝ մեռաւ Նիկողոս:

6. *1ե (1897 թ., շղագիր) Նուիրում ենք մեր յօժար կամօքն սուրբ Աւետարանս Մայր Աթոռոյ Թանկարանին (Էջմիածնի գրադարանին):* Պետրոս Տէր-Մարտիրոսեան *եւ* Մարտիրոս Տէր-Մարտիրոսեան. *1897 ամի, 15-ն Սեպտեմբերի:*

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *11բ, 112բ, 171բ (երկիցս), 260բ, 325բ (երկիցս), 336բ՝ սեւ թանաքով ութանկիւն՝* «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏԷՐ ԱԿՈԲ, ՌՃԺԲ. (1663)», *11բ (երկիցս), 112բ (երկիցս), 171բ (երկիցս), 260բ (երկիցս)՝ սեւ թանաքով ութանկիւն՝* «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏԷՐ ՄԱՐՏԻՐՈՍ»:


ՆՇՈՒՄ՝ *մէջքին սոսնձած թղթին՝ «Աւետարան», 1ա՝ սեւով «968/3602», «ՌՃԴ.-1655,* Մ[եսրոպ] *եպիսկոպոս»:*

3603
ԱՒԵՏԱՐԱՆ

ԿԵԶԱՌԻՍ ՌԺ. – 1561

ԳՐԻՉ, ԾԱՂԿՈՂ՝ Փիլիպոս: ՍՏԱՑՈՂ՝ Մաթէոս առեպ.:

ԹԵՐԹ՝ 335, չգրուած՝ 1ա, 100ա: ՊՐԱԿ՝ Ա-ԻԸ×12 (Ը 12+1, Թ 13, ԺԳ, ԻԲ 10, ԺԹ 11, ԻԸ 14): ՆԻՒԹ՝ մագաղաթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17×13: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (12×8): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 59ա): ՏՈՂ՝ 19: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ ՅԱկան կապիչներով եւ գամերով. միջուկը՝ տախտակ. աստառը՝ կարմիր կտաւ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա-Բ+Գ-Դ՝ մագաղաթ (Ա., Դ.՝ նորոգման ժամանակի):



Նմուշ 59ա

ՄԱՆՐԱՆԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ – Մատթէոս՝ 1բ, Մարկոս՝ 100բ. լս-այիւ՝ Գաբրիէլ հրեշտակապետ՝ 159բ, Եղիսաբեթ՝ 160ա: Կիսախորան՝ 2ա, 101ա, 157ա, 258ա: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն, յուշկապարիկ (45ա, 164ա, 206ա, 244բ, 290բ), տաճար (76ա, 143ա, 144ա եւ այլուր), խաչ (76ա, 91ա, 143ա եւ այլուր), ծառ (137բ), կենդանի՝ կապիկ: Ձարդագիր՝ հանգուցագիր, թռչնագիր, կենդանագիր, մարդ: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, նարնջի, շագանակագոյն, սեւ:

Տե՛ս Աստղիկ Գէորգեան, Հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն. Թ-ԺԷ. դդ., Գահիրէ, 1998, էջ 739, Հմ՝ 461:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած Ի. դ.ի սկ.ին, կազմի հին կաշին լրացուած նորով, կազմի եզրերի կաշին, կապիչները եւ պիպ. Ա, Դ՝ նորոգման ժամանակի, կազմը մաշուած, վրան կան զանազան ճաթեր եւ բերծուածքներ, հին մաշուած աստառը՝ փակցուած նոր վարդագոյն աստառի վրայ, խոնաւութեան եւ գործածութեան հետեւանքով լուսանցակողերը մաշուած, խիստ աղտոտուած. մագաղաթը տեղ-տեղ խոնաւութիւնից կծկուած, գրեթէ բոլոր թերթերը վերին լս-ից հիմիին մօտ՝ 1 սեան չափով խոնաւացած, առաւել գորշացած, որոշ թերթեր լրացուած թղթով, բնագիրը վնասուած, թ. 7, 55, 66, 89, 90, 121 եւ այլուր՝ վրան բնական անցքեր, թ. 177, 207՝ մագաղաթը թելով կարուած, թ. 213՝ պատռուածքը կարած թելն ընկած, թ. 42՝ առկայ է մագաղաթի 1/3 մասը, թ. 318՝ 1/4 մասը, թ. 24-5ի եւ որոշ թերթերի միջեւ ամրացուած թուղթ-ելուստների վրայ փակցուած ձեռագրից պոկուած փոքրիկ պատառիկներ, թ. 115-6ի միջեւ մուծուած ելուստի վրայ փակցուած թ. 117ի ներքին լս-ի, թ. 197-8ի միջեւ մուծուած ելուստի վրայ փակցուած թ. 197ի ներքին լս-ի պատռուած մասերը, մանրանկարների մեծ մասն արտատպուած հանդիպակաց երեսներին, որոշ մանրանկարների գոյները, տեղ-տեղ գիրը, 2ա, 101ա.ի կարմրագիրը մեծ մասամբ թափուած, տարածուած. Ը. պրակի վերջում է, բայց ԻԲ. պրակի մասն է, թ. 97ը, որը պետք է կարդալ՝ 254բ, 97բա, 255ա, ընդմէջ թ. 156-7ի 2, թ. 217-8ի, 257-8ի 1ական թերթ ընկած. թ. 103, 174, 328՝ էջանշան՝ կարմիր թելեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *2ա-99բ* Աւետարան Մատթէոսի:

2. *101ա-56բ* Աւետարան Մարկոսի *(ԺԵ. 41 - ԺԶ. 20 թափուած):*

3. *157ա-254բ, 97բա, 255ա-7բ* Աւետարան Ղուկասու *(ԺԳ. 27-ԺԴ. 1, ԻԳ. 46-53՝ թափուած):*

4. *258ա-334ա* Աւետարան Յովհաննու:

Ծնբ. Ունի ստ. լս. համաբարբառ՝ Յուացանկ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

334ա Փա՛ռք ամենասուրբ, ամենազաւր եւ կենդանարար Սուրբ Երրորդութեան՝ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. յամէն: Սովորութիւն է աստուածային արանց միշտ եւ հանապազ խոկեալ յաստուածային պատուիրանս, ի տուէ եւ ի գիշերի միշտ զվերինն խորհել, ուր Քրիստոս նստի ընդ յաջմէ Հաստուծոյ: Եւ վասն բազում պատճառի բազումք փափաքին ջեռմե-

ռանդ սիրով եւ ըղձալի ցանկութեամբ |334բ| արդիւնս եւ գործս կատարել. նախ՝ վասն յաւիտենական եւ անմահ կենացն զանցաւորս արհամարհեն եւ զայն ստանան կեանս, որ մնացական է, որպէս ասէ Տէրն՝ երթա՛ք, գործեցէ՛ք մի՛ զկորըստական կերակուրն, այլ զկերակուրն, որ մնայ ի կեանսն յաւիտենական, երկրորդ՝ զի հրամա[յ]է Տէրն՝ Գանձեցէ՛ք ձեզ գանձս ի յերկինս, որ ո՛չ ցեց եւ ուտիչ ապականեն եւ ո՛չ գողք ական հատանեն: Գրեմք ըզգիրս, որ զամենայն գանձ եւ զամենայն աւետիք ի յինքն պարունակեալ ունի, նախ՝ զվերին իմաստութիւն եւ ապայ՝ զամենայն աքանչելագործութիւնս, որ ի սմա: երրորդ՝ |335ա| վասն անջինջ յիշատակութեան առաջի Աստուծոյ, որպէս ասէ մարգարէն՝ երանի, որ ունիցի ի Սիոն *եւ ընդանեակք* Յերուսաղէմ, *չորրորդ՝ վասն քաւութեան եւ թողութեան մեղաց մերոց բարէխաւս, որպէս ասէ մարգարէն՝ Ջմեղս քո ողորմութեամբ քաւեսցես եւ զանաւրէնութիւնս տրաւք տնանկաց: Ըստ այսմ աւրինակի փափաքեալ եղեւ աստուածային սուրբ Աւետարանիս աստուածասէր, բարեմիտ եւ հեզայհոգի պարոնտէր* Մաթէոս *արքեպիսկոպոսն, որ գնեց զսուրբ Աւետարանս ի հալալ ինչից եւ արդար վաստակ իւրոց՝ յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց, հարւրն իմոյ՝* Էսիլպեկին, *եւ մարւրն իմոյ՝* Մարիանին, Մինաս *քահանային,* Վարդանշին, *|335բ|* Միրանշին, Յենիպէկին, Սիմօնին, Մարտիրոսին, *տէր* Մկրտչին, Հեղին, *տէր* Ոհանէսին, Գրիգոր *սարկօ[ա]քին,* Ոհան *սարկաւագին,* Մարկոս *եպիսկոպոսին,* Շիմաւոն *եպիսկոպոսին,* Ջաֆարին, Ջարման *տատին,* Հեղինին, Եղիսաբեդին, Եղիա *սարկաւագին,* Շահզանին, Երէմին, Մխիթարին, Խաչատուր *եպիսկոպոսին,* Դանիել *քահանա[յ]ին,* Իգնատիոս *աբեղին, եւ յամենայն յարեան մերձաւորացն՝ կենդանաց եւ ննջեցելոցն. ամէն: Ի թվականիս Հա[յ]ոց ՌԺ. (1561 թ.). նկար<ար>եցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ սուտանուն* Փիլիպոսի, *ի սուրբ եւ ի հռչակաւոր ուխտս* Կեչառաց Սուրբ Լուսաւորչիս *եւ ԺԱ. (11) անուան յեկեղեցացս, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ


պհպ. Բբ (ժէ. դ., անարուեստ բոլորգիր) Աստուած ողորմի Յովէսին, *ննջեցելոց հոգւոյն ամենայն: Տէ՛ր Աստուած, օրհնէ՛, բարեխաւ[ս]եա՛ տօար (՞) խաչեց է ///ճ,* Դաւիթ *տօար///եա երգ, Աստուած ողորմի տէր* Մկ[րտ]չի *ննջեցելոց, հոգւոց եւ ամենայն հարց Աստուած ողորմի ///աւին ///մգ, Աստուած /// զՎարդգէս (՞), Աստուած օրհնի /// Սարգիս, /// այն գը* Նորհատ:

ՆՇՈՒՄ՝ *2ա՝ «1019/3603», «Ռժ.-1561,* Մ[եսրոպ] *եպ[իսկոպոս]»:*


ԳՐՉԱՓՈՐՉ՝ *157ա՝ «ի տէր ի* Վահան*»:*

3604
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ (ՄԱՍՆ)

ԺԳ. դար



Նմուշ 21ա



Նմուշ 187ա

ԳՐԻՉ՝ Դաւիթ: ՍՏԱՅՈՂ՝ Տէր Գրիգոր:

ԹԵՐԹ՝ 292-12 (թուիչ՝ պրակ ԺԸ-Ի): ՊՐԱԿ՝ Ա.-Ի×12 (Ա 1, Բ 11, Գ, ԺԴ 10, ԺԵ 9, ԺԹ չիք, Ի 4)+Ա.-Թ×12 (Ա 2, Բ 7, Թ 10): ՆԻՒԹ՝ թուղթ, այլ լուսագծերով, լրացուած հետագայում՝ թ. 153, 160-1, 185, 187-9, 191-2, 194-210, 223-5, 264-6: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17×12: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (12,5×8,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 21ա, 187ա՝ լրացուած հետագայում, այլ ձեռով): ՏՈՂ՝ 21-23: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դռնակով (Ա. փեղկ, դռնակ), սեւ կաշի (մէջք, Բ. փեղկ). միջուկը՝ տախտակ (Ա. փեղկ). ստուարաթուղթ (Բ. փեղկ). աստառը՝ դեղնաւուն թուղթ, դռնակինը կապոյտ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ՝ դեղնաւուն թուղթ, մասն կազմաստառի:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – (գծանկարային, բացի՝ 153ա) Ճակատազարդ՝ 153ա (առուած այլ ձեռով, նաեւ բուսազարդը): Լուսանցազարդ՝ բուսական, թոչուն, Տիմաւթէոս՝ 131բ, Եզեկիայ թագաւոր՝ 248ա: Ջարդագիր՝ հանգուցագիր, թոչնագիր, մարդադէմ (Ջ՝ 222բ): Գոյներ՝ կարմիր, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմը վնասուած, նորոգուած 1950ականներին, Բ. փեղկը՝ դռնակով, տեղադրած Ա. փեղկի տեղում, ճիւն կաշին վնասուած, պոկուած, երեւում է միջուկը, վրան կան ճաթեր եւ ճերմակաւոտ ներ, դռնակի կաշին մասամբ փեղկից եւ աստառից անջատ, նոր, սեւ կաշին տեղ-տեղ ճերմակած, զոյգ գամերը եւ կապիչներն ընկած. լուսանցակողերի կարմիրը թափուած, մաշուած, աղտոտուած, թերթերը խոնաւութիւնից եւ գործածութիւնից աղտոտուած, մաշուած, կարմրագիր հատուածները մեծ մասամբ թափուած,

նորոգուած որոշ հատուածներ (35ա, 44բ, 45բ եւ այլն) եւ որոշ թերթեր (տե՛ս Նիւթ) լրացուած այլ ձեռով, որոշ թերթերի եզրերը մաշուած, մի հանիսն ամրացուած տարբեր թղթերով, թերթերի վրայ կան պատռուածքներ. թ. 22՝ ամրացուած տպագիր թղթով, թ. 1՝ լրացուած այլ սպիտակ թղթով, բնագիրը վնասուած, թ. 10, 18, 259՝ հիմիից մասամբ անջատ, թ. 33, 29-104, 276-92՝ ցեցի անցքեր, թ. 1ից առաջ անորոշ հանակի թերթեր, ընդմէջ թ. 1-2ի 12, թ. 22-3ի, 197-8ի, 202-3ի 2ական, թ. 199-200ի 5 թերթ ընկած, պրակ ԺԵ-Ի, Ա՝ գրուած յետագայում, այլ ձեռով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Առ Հռոմայեցիս – *Թուղթ 1ա-17բ (Ա. 1-Բ. 9, Բ. 27-Է. 23՝ թափուած)*

2. Առ Կորնթացիս Ա – *Գլ. 17բ-8բ: Թուղթ 18բ-44բ (Գ. 22-ե. 7՝ թափուած):*

3. Առ Կորնթացիս Բ – *Գլ. 44բ-5բ: Թուղթ 45բ-63բ:*

4. Առ Գաղատացիս – *Գլ. 63բ-4ա: Թուղթ 64ա-73ա:*

5. Առ Եփեսացիս – *Գլ. 73բ: Թուղթ 74ա-82բ:*

6. Առ Փիլիպեցիս – *Գլ. 82բ: Թուղթ 82բ-9բ:*

7. Առ Կողոսացիս – *Գլ. 89բ-90ա: Թուղթ 90ա-6բ:*

8. Առ Թեսաղոնիկեցիս Ա – *Գլ. 96բ-7ա: Թուղթ 97ա-102բ:*

9. Առ Թեսաղոնիկեցիս Բ – *Գլ. 103ա: Թուղթ 103ա-6բ:*

10. Առ Եբրայեցիս – *Գլ. 106բ-9ա: Թուղթ 109ա-30բ:*

11. Առ Տիմոթէոս Ա – *Գլ. 130բ-1բ: Թուղթ 131բ-9ա:*

12. Առ Տիմոթէոս Բ – *Գլ. 139աբ: Թուղթ 139բ-45ա:*

13. Առ Տիտոս – *Գլ. 145աբ: Թուղթ 145բ-8բ:*

14. Առ Փիլիմոն – *Գլ. 149ա: Թուղթ 149ա-50բ:*

15. Վերագիր, Թելադրութիւն, Պատասխանին, Նաւարկութիւն, Վկայութիւնք – *150բ-2ա:*

16. Յոբ – *Գիրք 153ա-97բ:*

17. Եսայի – *Յառաջաբան 197բ (... յապաշխարութիւն եւ խոստանա զհաշտութիւն /// (շար.): Գլ. 198ա-9բ (սկ. /// [Ի]ւր փրկ[ութիւն ի Քրիստոս հաւատացելոցն...): Մրգ. 200ա-92բ (Ա. 1-ե. 7, Ջ. 13-է. 24՝ թափուած):*

Ծնթ. Աւտ. եւ ստ. լս-ներում գրչից նշումներ՝ 125բ՝ «Թերմոթէս անուն էր դատերն փարաւոնի», 143ա՝ «զԹէկղի չարչարանացն ասէ», 144բ՝ «մատեանիք էին հրէից», 152ա՝ «Ի կոչմանէ Պօղոսի առաքելոյն մինչեւ ցկատարումն իբրեւ եւ ասէ բառոզութեանն /// ստոյգ» եւ այլն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Գրչի *151բ կատարեցաւ* Պաւղոս *առաքեալին գլուխք /// ի փառս Աստուծոյ, ձեռամբ* Դաւթի *գրչիս: Աղաչեմ զքեզ, սո՛ւրբ առաքել Բանին Աստուծոյ, բարէխաւսեա՛ վասն իմ առ Միածին Բանն Աստուծոյ՝ թողուլ զմեզս իմ եւ զայն[ոցիկ], որ զմեզ ցաւակցաբար յիշեն աղաւթիւք իւրեանց:*

174բ Վարդ[ապե՛տ], աղաչեմ յիշեա՛:

190բ Աղաչեմ զքեզ, ո՛վ տէր վարդապետ, յիշեա՛զԴաւիթ սարկ[աւագ] յաղաւթս քո եւ գրոյս այլայլութեան մի՛ մեղադրեալ, զի վիրաւորեալ էաք ընդ չար ժամանակիս:

*292բ Փա՛ռք Սուրբ Երրորդութեանն եւ միաւնական աստուածութեանն յաւիտեանս յաւիտենից. ամէն. ամէն: Ջ*Դաւիթ *գրիչս աղաչեմ աղաւթիւք յիշե[ցէ՛ք] ի Տէր, ո՛վ դասք ուսումնասիրաց:*

Ստացողի *250ա Ջստացող զսուրբ գրոցս զտէր* Գրիգոր, *յիշեցէ՛ք, ո՛վ եղբ[արք]:*

Ծնթ. 151բ, 250ա եւ 292բ էջերի յիշ-ները տե՛ս ԺԳ. դ. յիշ-ի, էջ 892, Չ^{մր} 736:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *152բ (Ժե. դար, անարուեստ բոլորգիր) եւ ինձ՝ մեղաւոր սարկաւագիս, ողորմեա՛յ, յորժամ գայս փառաւք յաշխարհս, եւ գու[ն]ա՛ք հրըշտե՛կաց առաջի քո ընթանալն, գայս զաւրութեամբ եւ զատիս այնշէջ հրով, յայնժամ յիշեա՛յ զիս՝ զմեղաւորս, որ աւրինու է (այսպէս), ե[ւ] կամ ընթեռնոյ եւ Աստուա՛ծ զինքն յիշէ. ամէն:*

2. *197ա (Ժե. դ., բոլորգիր) Ո՛վ հանդիպողք, որ հանդիպիք սուրբ գրոցս, յիշեցէ՛ք զ*[Յովակիմ] *չողապին (՞) եւ զծնուղն իւր, որ յետ կրկին նորոգել զգիրքս առաքելական եւ մարգարէական, ինձ՝ մեղաւոր, [սո]տանուն* [Ա.]ռաք[ե]լ *սարգաւագիս:*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *152բ՝ 4-րդ տողի գիրը ջնջած՝ մաքրած, անընթեռնելի, «յայտնեցաւ, հաստատեց ան, ա, ա աբ: Շատ բարեւ մի* Աստւայտուին */ չօո չօպ օղլը մեռաւ սարին: ե եսոր զ», 153ա՝ «ուրէք», 198ա՝ «Պ»:*

3605
ԴԻՈՆԻՍԻՈՍ ԱՐԻՍՊԱԳԱՑԻ, ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ


(թրգմ. Ստ. Սիւնեցի)

Ռճծե. – 1706

ԳՐԻՉ՝ Խոջամալ:

ԹԵՐԹ՝ 230-1 (թուիչ՝ թ. 87-9). չգրուած՝ 1բ-2ա, 225բ-30բ: ՊՐԱԿ՝ 1+Ա.-ԻԸ×8 (Բ 16, Ջ չիմ)+4: ՆԻՒԹ՝ թուղթ՝ լուսագծերով եւ լուսադրոշմով՝ թ. 18, 21, 22, 25 եւ այլուր՝ թագով պսակուած ձգուած ձուածիր, որի մէջ «PF», մէջտեղում սիրտ, ձուածիրի տակ՝ շեղանկիւն

խաղողի ողկոյզ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17×11: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (13,5×8). սահմանագծուած կարմրով: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 15ա): ՏՈՂ՝ 18, 26: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դռնակով եւ կապիչով. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ կապոյտ մետաքս. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ թ. 1՝ չգրուած թուղթ:



Նմուշ 15ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմը մաշուած, վրան կաւ ճաթեր եւ ֆերծուածքներ, ստորին եզրը միջուկից անջատ, մէջին մօտ՝ մէջի վերուվարի կաշուի փոքր շերտեր թափուած, դռնակը մաշուած, դէպի դուրս կծկուած, Բ. փեղկից մասամբ անջատ, աստառը դռնակից մասամբ առանձնացած, զոյգ գամերը եւ կապիչներից մէկն ընկած. խոնաւութեան ոռոշ հետքերով, թերթերի վերին մասից 1 տողից մինչեւ տեղ-տեղ թերթի կէսից աւելին խոնաւութեան հետեւանքով թաւնաթը տարածուած, գունափոխուած, բնագիրը անընթեռնելի. թ. 2, 9՝ մասամբ հիմիից անջատ, ընդմէջ թ. 49-50ի 8 թերթ ընկած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

2բ-225ա [Մատենագրութիւնք Դիոնիսիոսի Արիսպագացւոյ: Թրգմ. Ստեփաննոս Սիւնեցի եւ Դաւիթ]

Տե՛ս ձեռ. 110, 1բ-348բ: Յառաջաբան./չիք: 1. Յանկ/չիք: ա/2բ-11բ, բ/11բ-29ա, գ/29ա-36ա, դ/36ա-45բ, ե/45բ-8բ, զ/48բ-9բ (...քանզի զսուրբ աթոռն (=աթոռոն) եւ զ/// (վջ.), է/50ա-6բ (սկ. /// կատարողապետութենէն գերագոյապէս քահանայապետեալք...), ը/56բ-61բ, թ/61բ-7բ, ժ/67բ-9բ, ժա/69բ-71բ, ժբ/71բ-4ա, ժգ/74ա-81բ, ժդ/81բ-2բ, ժե/82բ-95բ (խորագիր՝ չիք, միացուած նախորդ մեաւորին, առանձնանում է միայն կարմիր գլխատառով): 2. Յանկ/95բ: ա/95բ-103բ, բ/103բ-16բ, գ/116բ-39ա, դ/139ա-52ա, ե/152ա-66բ, զ/166բ-75բ, է/175բ-92ա: 3. Յանկ/192ա-3բ: ա/193բ-216բ, բ/216բ-25ա (...անբարբառելի իսկ բազմաձայնն, զի վասն (չշարունակուած):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

96բ Ո՛վ սրբազան ընթերցող, յորժամ լուսաւորեսցես եւ լուսաճաճանչ նշուլից սորա, ընկա՛լ զաղերսս եւ միով Հայր մերիւ յիշեա՛ զանարժան մեղաւոր Խոջամալս, զոր բազմաւ գրեալ վասն կարգման Հոգոյն Սրբոյն, ֆաղաթովն (՞) իմանամք սուրբ երանելի Դիոնէսիոսի անուցեալս, հաւատովս հաւատամ Սուրբ Երրորդութիւնն, յերկիր պագանիմ. գրեաց Թիվն մեծ ԱՌՃԾԵ. (1706), Նիրհան օխտնի. փա՛ռք Քրիստոսի Աստուած մեր. ամենայնի:

ՆՇՈՒՄ՝ *1ա՝ «1032/3605», «ԺՀ. Մ[եսրոպ] եպիսկոպոս»:*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *1ա՝ «Վարդապետ եկեալ է եւ կոչէ զքեզ, թէ ո՞ւր ես եւ ասէ ցնա, թէ ես եկի եւ կոչի զքեզ», «8+ 5+ 5+ 4+ 2+ 5+ 3= 33, 33+ 3+ 2+ 2+ 3+ 5+ 4= 5[2]»:*

3606
ԺՈՂՈՎԱԾՈՅ
(բաղկացած 2 ձեռագրից)

ԹԵՐԹ՝ 337: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դռնակով. միջուկը՝ տախտակ. աստառը՝ դրոշմազարդ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ-Դ՝ չգրուած, Ա, Բ՝ դեղին թուղթ, Գ, Դ՝ լուսագծերով թուղթ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. 1960ականներին նորոգուած, Ա. փեղկի կազմաստառին սոսնձուած նշումների թերթիկը պոկուած-ընկած, կազմի կաշին եւ դռնակը մաշուած, թեթեւակի վնասուած, վրան կաւ ճաթեր եւ ֆերծուածքներ, զոյգ կապիչները եւ գամերն ընկած, աստառներն աղտոտուած, խունացած, լուսանցակողերի կարմիրը թափուած, յատկապէս վրն. լուսանցակողը, աղտոտուած. Ա, Բ պիպ-ները նորոգման ժամանակի, պիպ. Գ, Դ՝ աղտոտուած, վրան կաթիլի հետքեր եւ նախկինում եղած մագաղաթէ Պտոկ-պիպ-ի հայերէն այբուբենի բոլորգիծ երկաթագիր տառերի արտատպուածք. խոնաւութիւնից թերթերն աղտոտուած, վրան անմաֆուր ջրի, մոմի, թանաքի հետքեր, զանազան բծեր, թաւնաթը եւ ներկերը գունափոխուած, տեղ-տեղ գիրը թափուած եւ լրացուած այլ ձեռքով, թ. 319, 320՝ հիմիից թուլացած, ոռոշ թերթեր եզրերից նորոգուած դեղին թափանցիկ թղթով, ոռոշ պատռուածքներ ամրացուած թղթով. նորոգման ժամանակ երկրորդ պրակահիշերի ոռոշ համարներ եւ ճակատազարդը վնասուած՝ կտրուած. լս-ներում՝ խորագրային նշումներ, ձեռագիրն ունի 2 տարբեր պրակահամարներ, վերջում՝ 334ա՝ այլ ԺԹ պրակահամար, մասն այլ ձեռագրի, 335 սխալ տեղադրուած՝ կարդալ թ. 336-ից յետոյ, ընդմէջ թ. 333-4ի, 334-6ի, (սխալ տեղադրուած) 335-7ի (սխալ տեղադրուած) 1ական թերթ ընկած:


ՆՇՈՒՄ՝ *մէջքին սոսնձած թղթին՝ «Գիրք մեկնութեան երկոտա[սան] մարգարէից. գրչեայ, Հ[դր] 58»*

ՁԵՌԱԳԻՐ Ա.

ՆՈՆԱՒՆԻՑ ՎԱՆՔ (ԱՅՐԱՐԱՏ) ԶԺԲ. – 1303

ԳՐԻՉ՝ Թադէոս ֆիյ: ՍՏԱՑՈՂ՝ Յոհաննէս վրդ:

ԹԵՐԹ՝ 277 (թ. 1-277): ՊՐԱԿ՝ 2+Ա-ԻԹ×12 (Ա. 11): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16,5×12,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (14×10): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 4ա): ՏՈՂ՝ 22:



Նմուշ 4ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Կիսախոռան՝ 3ա: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն (178ա): Ձարդագիր՝ հանգուցագիր (առանց գունազարդման): Գոյներ՝ կարմիր:

Տե՛ս Աստղիկ Գէորգեան, Հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն Թ-ԺԷ. դդ., Գահիրէ, 1998, էջ 430, Հմր 249:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *3ա-275բ* Սրբոյ հօրն մեր տեառն Ներսէսի արեւելիսկոպոսի Տարսոնի Մեկնութիւն ԲԺ. մարգարէիցն, զոր ի թելադրութենէ աբ[բ]ա[յ] եփրեմի եւ կիւրղի եւ յիւրոց յաւելուածոյ մտաց գեղեցկայարմար յեռեալ՝ իբր ոսկի ընդ սարդիոն

Տե՛ս ձեռ. 1021, 2բ-67բ: 1/3ա-71բ: 2/71բ-101բ: 3/101բ-23ա: 4/123ա-36ա: 5/136ա-47ա: 6/147ա-50ա: 7/150ա-8ա: 8/158ա-78ա (171բ-8ա ազօթք Ամբակումայ մարգարէի – Տէ՛ր, զլուր քո լուայ եւ երկեայ...): 9/178ա-88բ: 10/188բ-98ա: 11/198ա-260ա: 12/260բ-75ա:

Բ. *1ա-2բ* [Վանականայ վարդապետի առաւել Մեկնութիւն Յոբայ. ձեռ. 5600, 12ա] – (սկ.) */// առաջին խաշանց, զոր մատոյց Հաբէլ, նոյնպես եկեր ա[յ]ժմ զհրաւոս իմ... թաքուցեալ ի ներքո լեզուի նորա, բայց զայս գիտելի է, զի բազում կանայք անզգամութիւն խաւսեցան եւ /// (շար.):*

Ծնթ. 1ա՝ ստ. լս-ում բոլորգրով գրութիւն, որը ջնջուել է, ընթեռնելի է միայն՝ «////կաղ կարմ խուլ///»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

71բ Այո՛յ, աղաչեմ յիշել բարի յիշատակաւն զմեղուցեալ գծողս՝ Թադէոս:

101բ Ջմեղուցեալ գծողս՝ Թադ[էոս], *աղաչեմ յիշել ի Տէր (նման՝ 123ա):*

136ա Ո՛հ, աղաչեմ յիշել զանարժան գծողս:

147ա Ջստացող սուրբ մատենիս՝ զՅոհաննէս *վարդապետ, յիշեսջի՛ք ի Քրիստոս աղաչեմ: Ընդ նմին եւ զբազմայմեղ ծրողս՝* Թադէոս, *աղաչեմ յիշել ի Տէր:*

150ա Ո՛հ, աղաչեմ յիշել զանարժան ծրողս՝ Թադէոս, *յաղօթս:*

158ա Աղաչեմ յիշել զբազմամեղ գրողս՝ Թադ[էոս], *ի սուրբ յաղօթս ձեր:*

178ա Ո՛յ, աղաչեմ յիշել ի Տէր զանարժան գրիչս (նման՝ 188ա):

198ա Աղաչեմ յիշել յաղօթս զմեղուցեալ ծրողս:

260ա Աղաչեմ յիշել ի Տէր զեղկելի գրողս՝ զԹադ[էոս] *սուտանուն քահանայ:*

275ա Յորժամ գրեցաւ եւ յանկ ելեալ աւարառեցաւ բացայայտութիւն գպրութեանս աստուածախաւս ԲԺ.ան (12) մարգարէիցս, դիտապետք Հայոց տէր Գրիգոր, *տէր* Ջահարէ *եւ տէր* Ստեփաննոս Աղուանից, *եւ վարժապետ* Եսայէայ, |*275բ*| *եւ ստացաւղ սորին՝ պատուական եւ աստուածախաւս բաբունին* Յոհաննէս, *եւ թագաւոր Հեթում՝ այր բարեպաշտ եւ իմաստասէր եւ մանաւանդ աստուածասէր, եւ կայսր աշխարհակալ* Ս̲ուզան *զան՝ ազգէն նետողաց՝ տիրելով Հայոց եւ* Ասորոց, Վրաց *եւ* Աղուանից, Մարաց *եւ* Պարսից, Թուրքաց *եւ* Հագարացոց*: Բայց գրեցաւ հրամանաւ վերապացեալ առնն Աստուծոյ* Եսա[յեայ] *բաբունապետի, ի խնդրոյ* Յոհաննէս *վարդապետի եւ ձեռամբ* Թադէոսի՝ *անարհեստ գրչի, ի թուիս Հայոց ՉԾԲ. (1303), ի գաւառիս* Այրարատեան, *ի վանքս, որ կոչի* Նոնաւանից, *ընդ հովանեաւ* Սուրբ Աստուածածնիս *եւ այլ կենսակիր* Սուրբ Նշանացս*: Այլեւ գրեցաւ ի դառն եւ ի դժընդակ ժամանակի, ձմեռան յեղանակի, բազում տառապանաւք եւ նեղութեամբ, երբեմն ի ցրտո եւ ի ձմեռնային խրտութենէս տառապէի, երբեմն ի թաթարի գալոյ ու գնալոյ, ու ի տեղացս աւերութենէն մեք փախստական լինեաք ու մխիթարութիւն ոչ ուստէք, ու ես հայնց կամէի, որ ամէն գիր ոսկի էր լե[ա]լ, ապա մեր կարողութիւնս այդչափ էր, Աստուծոյ սիրոյն համար անմեղադիր լերո՛ւք, որոց հանդիպելոցդ սմին հայցեմք ի ձէնջ յիշատակիլ բարի յիշատակաւն Քրիստոսիւ ստացող սորին՝* Յոհաննէս *վարդապետ, եւ աշխատողքս, ի փառս աւրհնելոյն յաւիտեանս. ամմէն:*

Ծնթ. 275աբ եւ 276ա («Եւս եւ զաղախինն...» սկսուածքովը) էջերի յիշ-երը տե՛ս ԺԹ. դ-ի յիշ-ի, էջ 15, Հմր 16ա՝ որպէս Նոնաւնից վանքում Թադէոս գրչի գրած: Այս ձեռ-ի միայն այս՝ 275աբ երեսների յիշ-ը տե՛ս ԺԹ. դ-ի յիշ-ի, Ա. (2018), էջ 41-42, Հմր 36:

ՁԵՌԱԳԻՐ Բ.


ԳԱՅԼԻՁՈՐ ԱՆԱՊԱՏ ԶԺԲ. – 1303

ԳՐԻՉ՝ Մխիթար վրդ: ՍՏԱՑՈՂ՝ Յոհաննէս վարժապետ:

ԹԵՐԹ՝ 60 (թ. 278-337): ՊՐԱԿ՝ Ա-ե×12 (ե՝ 8)+4*: ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16,5×12,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (13,5×9): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 281ա): ՏՈՂ՝ 23:

* Ծնթ. 334ա՝ ունի պրակահամար ԺԹ., թ. 334, 337 եւ թ. 335-6՝ այլ ձեռով, մասն 2 այլ ձեռագրերի:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Ճակատազարդ՝ 278ա:



Նմուշ 281ա

լուսանցազարդ՝ բուսական: Ձարդագիր՝ հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, կանաչ, դեղին, սեւ, մանուշակագոյն, դարչնագոյն:

Տե՛ս Աստղիկ Գէորգեան, Հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն Թ-ԺԷ. դդ., Գահիրէ, 1998, էջ 430, Հմ 249:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *278ա-333ա* Մեկնութիւն համառաւտ Դանիէլի, զոր հոգիապայծառ եւ իմաստախոհ վարդապետն Վարդան շարադրեալ է ի հոգէկիր մեկնչաց Եփրեմի, Հիպողիտայ, Ստեփանոսի, ի խնդրոյ ուս[ու]մնասէր մանկանց՝ առ ի դիւրահաս [ընթերցողաց] – *Մերձաւորք մեր եղբարք եւ որդեակք յաւժարեցին…*

ա. *278բ-84ա* Դանիէլ դատաստանն Աստուծոյ – *Դանիէլ ի նոցանէ է, զորս ոչ արժէ աշխարհ, ըստ Պաւղոսի ասելոյն, որ Քրիստոսին խաւսէր… մեծացաւ Դանիէլ առաջի ամենայն ժողովրդեանն:*

բ. *284ա-6բ* Տեսիլ երկրորդ – *երկրորդ տեսիլ. եւ զառաջինն եւս տեսիլ կոչէ, որ զտեսող Հոգին էառ Դանիէլ եւ զՇուշան ապրեցոյց… զի այս ամենայն տեսուածք կային աստ:*

գ. *286բ-91բ* Տեսիլ երրորդ – *Իսկ երրորդս յայտնի է թագաւորին զերազն տեսանելն եւ մոռանալն… եւ ի պատրանաց մեծութիւնից այսպիսի ինչ արար, որ ասէ:*

դ. *291բ-8բ* Տեսիլ չորրորդ – *Զոր սովոր է գիրքս այս զպատմութիւնն ինչ իրաց տեսիլս անուանել, կամ որ ի սմա գործեցաւ… քաւիչ եւ ողորմածին Աստուծոյ:*

ե. *298բ-317բ* Տեսիլ հինգերորդ – *Անասելի են խորք մարդասիրութեանն Աստուծոյ, թէ որպէս պատուեաց զբնութիւնս եւ հնարի ապրեցուցանել զայսքան մոռացկոտ եւ զգժուարահաւան ազգս մարդկան… իմոյ աւրհնելոյն յաւիտեանս ի Հայր եւ ի Հոգին Սուրբ:*

զ. *317բ-32բ* [Տեսիլ վեցերորդ] – *Յամին երրորդի կիւրոսի Պարսից արքային բան յայտնեցաւ Դանիէլի, որ կոչեցաւ Բաղտասար… գէշ-գէշ պատառեցին առաջի նորա:*

է. *332բ-3ա* [Յիշատակարան հեղինակի գրոյս] – *Աւրհնելով եւ փառաւորելով զԱստուածն յաւիտենից Դանիէլիս հանդերձ եւ յամենայն սուրբս… հաւատամք սրբիլ եւ հաճոյ երեւիլ Աստուծոյ եւ սուրբ եկեղեցւոյ ամաւթով եւ անհաճոյս, որքան յինէն է: Աւրհնեալ Սուրբ երրորդութիւն. յաւ՛:*

Ծնթ. Լս-ներում կան հեղինականիշ անուններ. «Եփ», «Ստ»: Տե՛ս Վարդան Աւետեցի, Յովհաննէս Ծործորեցի, Թովմա Մեծոփեցի, Մեկնութիւմ Դանիէլի մարգարէութեան, Ս. Էջմիածին, 2007, էջ 19-164, նեո.՝ C. վերականգնումներն ըստ այս տպագրի:

Բ. *334աբ* [Փիլոնի Եբրայեցւոյ Յաղագս զԱստուած] – *(սկ.) /// ցուցանել, քանզի զանկերպութիւնն բազումք աստուածաստեղծել արժանի համարեցան… քանզի հասարակութիւն ընկալաւ յայնմանէ, որ ի վերա ամենայնի Աստուածութեան հոգ/// (վջ.):*

Տե՛ս տպ. Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդք ի հայս, որ են Մեկնութիւն Ծննդոց եւ ելից. Ճառք ի Սամփսոն, ի Յովնան եւ յերիս մանկունս կամ ի հրեշտակս, աշխ. Մկրտիչ Աւգերեանց, Վենետիկ, 1826, էջ 614-616:

Գ. *336աբ, 335աբ* [Փիլոն Եբրայեցի, Ճառք]

1. *336ա (սկ.) ///որով նորոգել եւ զարգանալ… ոչ սակաւ աւգուտ առնեն:*

2. *336աբ, 335աբ* Հե. Ջի՞նչ են վեց ոտքն, որ ելանէին ի կողմանէ երկոցունց երեք զուգապէս – *Վասն զի կենդանաբերն… զի տարին ոչ այլ ինչ է /// (վջ.):*

Տե՛ս տպ. Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդք ի հայս, որ են Մեկնութիւն Ծննդոց եւ ելից. Ճառք ի Սամփսոն, ի Յովնան եւ յերիս Մանկունս կամ ի հրեշտակս, աշխ. Մկրտիչ Աւգերեանց, Վենետիկ, 1826, էջ 459-460 (Ժե.), 519-521:

ՅԱՒԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, *ԺՋ. դար, բոլորգիր*

– *337բ Բայց երկուքս այսոքիկ առաւելապէս ընձեայեցան մարդոյ, քանզի սայ միայն հանդիպի թողութեան մեղաց զղջացեալ, եւ սորայ միայնոյ մարմին մահկանացու գոլով՝ անմահանայ: Եւ մարմնականին վասն հոգւոյն, իսկ հոգեկանին վասն մարմնոյն հանդիպեցաւ (այսչափ):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

300բ ստ. լս.՝ Վա՛յ ինձ:

311բ ստ. լս.՝ Վա՛յ ինձ, մահացայ ի վատթար աւրինակէս:

326բ ստ. լս.՝ ///ն (գիրը կտրած, թանաքը տարածուած, անընթեռնելի) Ստեփանոսի *աստանաւր հասաս:*

333ա Գրեցաւ վերլուծութիւնս Դանիէլի *մարգարէի յանապատիս* Գայլիձոր *անուանելոյ, ի թուի ՉԾԲ.երորդի (1303)՝ աւժանդակութեամբ մերոյս սրբազան եւ արդիւնական րաբունապետի՝* Էսաիաս *անուն առձայնելոյ, ի ստացումն եւ ի խնդրոյ պատուական եւ աստուածահաճոյ* Յոհ[ան] *վարժապետի եւ իմս հոգւոյն հարազատի, ձեռամբ անպիտան եւ անարժան* Մխ[իթար] *պիտակ անուն վարդապետի, եւ որք հանդիպիք այսմ սուիերի արգասաւորի, զՔրիստոս Աստուած ողորմեսցին անյապաղ հատուսջիք մերումս հոգւոյ, որում յաւէտ կարաւտիմ:*

Ծնթ. Հետագայ՝ 276ա էջինը, այս՝ 333ա էջինը եւ հետագայ 333բ էջինը նոյն կարգով (276ա, 333ա, 333բ), որպէս Գլաձո-

ռում Մխիթար վարդապետի գրած՝ տե՛ս ԺԴ. դ-ի յիշ-f, Ա. (2018), էջ 41-42, Հմր 36բ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ
(գրուած ի մի տփի ամփոփելուց յետոյ)

1. *ԺԴ. դ., բոլորգիր*

276ա եւս եւ զաղախինն Տեառն՝ զԱսուդայն, *յիշեսջի՛ք ի Քրիստոս, քանզի ի նորա սակս յիշատակի տուեալ եղեւ գծագրել զսայ՝ ի վարժս աւգտի մանկանց նորոյս* Սիոնի: *Աւգտեալքդ յայսմ տառէ զվեր յիշատակեալ զաղախինն Աստուծոյ* զԱսուդայն *յիշեսջի՛ք ի Տէր:*

333բ Բայց ստացեալ եղեւ մատեանս աստուածախոսիմբ յիշատակ աղախնոյն Աստուծոյ՝ Ասուդա *կոչեցեալ, վերափոխելոյն ի Քրիստոս տգա եւ տհաս հասակաւ, ժամանեալ մինչ յաւուրս քսանամենից՝ աւելի եւ կամ նուազ, վախճանեալ զկեանս իւր՝ փոխեցաւ ի Քրիստոս՝ յոյժ աղէտ եւ ողորմն թողեալ ծնողացն իւր, քանզի միայն ունէին զնա: Արդ, պատահողք այսմ տառի, զվերասացեալ աղախինն Քրիստոսի* զԱսուդայն *յիշեսջի՛ք ի Քրիստոս, զի յիշեցելոյն եւ յիշողացդ եղիցի ողորմութիւն յամենառատ ողորմութենէ Քրիստոսի Աստուծոյ մերոյ աւրհնելոյն յաւիտեանս. ամէն, եղիցի:*

Ծնթ. ԺԴ. դ-ի յիշ-f, Ա. (2018), էջ 42, Հմր 36.բ.՝ այս եւ նախորդ յիշ-ները զետեղուած են Մխիթար գրչի յիշ-ների շարում: Իսկ Լ. Խաչիկեանը տարաձայնել է՝ առաջինը համարելով Թադէոս գրչինը, երկրորդը՝ Միքաէլինը (տե՛ս ԺԴ. դ-ի յիշ-f, էջ 15, 16):

2. *52ա (ԺԵ. դ., նոտրգիր, արտ. լս.) Մեղօք լցեալս յիշեսջի՛ք:*

3. *276բ (1537 թ., նոտրգիր) Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ աստուածաշու[ն]չ մատենիս՝ ԲԺ. (12) մարգար[է]իցս վերատառութեանս եւ Դան[ի]էլի մարգ[ար]էին, յիշեսցի՛ք զանարժ[ան] եւ նուաստ* Աւաքտէր *սպաս[աւ]որ բանին /// (գիրը ջնջած՝ մաքրած), որ անուամբ միայն եմ վարդապետ, եւ ոչ ելով զարդինական, որով տեսական աւրինի, որ բազում ժամանակս աշխատեցայ առ ոտս մեծ բարեբնապետացն Յեսայի եւ Տիրոյ, եւ գնեցիս զսայ ի հալալ ինչից իմոց ի ձ. (100) մթխալ արծաթ ի Գայլիձորին, ի թվին Հայոց ՋՁՁ. (1537): Արդ, երես առա՛ անկեալ աղաչեմ, դարձեալ, կրկին, որք ընթեռ[ն]ոյք զաստուածաին տառս, յիշման արժանի արարէք զԱւաքտէր վարդապետ /// (ջնջած) մեր ծնաւղաւքն հանդերձ, եւ ով գիրքս անկանի, տարէ՛ն ինն Բ. պատարագ մատուցանէ:*

4. *333բ (ԺՁ. դ., բոլորգիր) Քրիստոս Աստուած, ողորմեա՛յ* Կիրակոս *բանասէրին եւ թո՛ղ զմեղք նորին, զմահու չափն եւ ներելին՝ բարեխօսութեամբ* Սուրբ Աստուածածնին:

5. *337ա (1616 թ., նոտրգիր) ես՝* Յովսէփ *աբեղայս, նորոգել եաու զգիրքս՝ յիշատակ ինձ եւ ծնաւղաց իմոց, ով ոք որ կարդայ, մեզ եւ աշխատողաց սորին ողոմի ասասցէ, եւ որ առատն է ի տուրս բարեաց, ձեզ եւ մեզ ողորմեսցի ի միւս անգամ իւր գալըստեան. ամէն: Թվին Հայոց ՌԿԵ. (1616):*

Տե՛ս ԺԷ. դ-ի յիշ-f, Ա., էջ 573, Հմր 756:

6. *277բ (1795 թ., նոտրգիր) Յիշատակ է մեկնիչս երկոտասան մարգարէից, զոր լուսահոգի մէլիք* Յովսէփի *դուստր* Սուլթանն-Թագուհին, *եւ հարան մէլիք* Ադամին, *կինն մէլիք* Մէլքումին՝ *ըստացեալ եւս* Եղիազար *եպիսկոպոսին՝ ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ իւր համայն կենդանեաց եւ ննջեցելոցն: Արդ, որ ոք հանդիպիք այսմ հոգելից տառիս կամ ընթեռնլով եւ կամ օրինակելով, միով Հայր մերիւ յիշեսջի՛ք ի Քրիստոս զվերոգրեցեալսն, յորմէ եւ դուք եղիջիք յիշեալք ի միւսանգամ գալստ<ս>եանն Նորա. ամէն: Ի ՌՄՃԴ.ին (1795):*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *61ա՝ «Հ[ե]րձեալ իսկոյն ջուրն պաղեալ մարմին պղծոյն ի ներս պահեալ», 138բ՝ «գրչայփորձ է այս գիր», 228բ՝ «ի ժամանակին», 277բ՝ Այսաւր անճառ լուսոյ ծագում ի փրկութեան մեր», 324բ՝ «Գրչափորձ է այս գիրս տեսէք եւ ձեր բանն տեսէք», 325բ՝* «Ալաճաց յերկիրն», *334ա՝ (հակառակ դիրքով) «գիժ եւ* Ազարիեղէ *եւ ինձ որոմեա», «Սաղմոս, սաղմոս», 337բ՝ «/// ընդէր հրամայէ յարենէն մատուցանել ի ի սեամս եւ ի կամ մինչեւ ցչորեքտասան մասն», «գինչ են զոստքն որել», «Նիւսացայ են», «///մ փրկութիւն /// մինչեւ ցՀէ.», «Ուրախ լե՛ր, անապատ ծարաւ եւ ծաղկեա՛ հաւատով երանու», «Ջաստու աստ Աստուծոյ: Ես ասացի Տէր ողորմեա՛ ինձ, բժշկեա՛յ: Ատանաւր զառ: Ասաց, ասաց: Ասաց Աստուած արասցո՛ւք» (կրկն. մի քանի անգամ), (հակառակ դիրքով)՝ «եւ կենսաբեր սուրբ խաչին եւ ամենայն սրբոց գնդին. ամէն», 308ա, 337բ՝* զանազան տառեր եւ բառեր:

ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *198ա՝ վարդեակ, 337ա՝* ճակատազարդ:


3607
ՅՈՎՍԷՓ ԱՐՂՈՒԹԵԱՆՑ, ՕՐԱԴՐՈՒԹԻՒՆ, ՕՐԷՆՍԴՐՈՒԹԻՒՆ

ՀԱՇՏԱՐԱՆ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ ՌՄԻԸ.- ՌՄԼԱ. – 1779-1782


ԳՐԻՉ՝ Անանուն fարտուղար Ա. (3ա-14բ), Անանուն fարտուղար Բ. (21ա-35ա), Յովսէփ արեպս. Արղութեան*:

ԹԵՐԹ՝ 41 (ունի հետագայում Յովսէփ արեպս. Արղութեանի ձեռով առուած էջակալում՝ 1-101, որ է՝ 2ա-35բ). չգրուած՝ 1աբ, թ. 16-20, 35բ-41բ: ՊԱԿ՝ 1-4×10 (1՝ 8, 2՝ 12)+1: ՆԻՒԹ՝ թուղթ՝ լուսագծերով եւ լուսադրոշմով՝ թ. 1, 9 եւ այլուր՝ «C&I HONIC.», թ. 4, 10,


16 եւ այլուր՝ շրջանաձեւ ցանկապատ, մէջը զինուորական հանդերձով եւ սաղաւարտով այր՝ ձեռին նիզակ, դիմացը՝ առիւծ՝ կանգնած 2 թաթի վրայ, բարձրացրած թաթին սուր, միւսին՝ ետեւերի խուռն, վերեւում՝ «Propatria», ներքեւում՝ «HWOLVEN», թ. 4՝ նոյնը, առանց «HWOLVEN»-ի, թ. 5՝ «HB» ոճաւորուած թագով, թ. 12, 13, 18 եւ այլուր՝ բուսական ոճաւորմամբ շրջանակ, մէջը՝ թագ, ներքեւում՝ «GR»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 30,5×19,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (2ա-15բ, 34բ՝ մասամբ. 27×14), երկսիւն (21ա-35ա, 26×14). սահմանագծուած սեւով: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 8ա, 23ա), նոտրանման շղագիր (նմուշ՝ 15ա. լրացուած հետագայում գրիչ-հեղինակի ձեռով): ՏՈՂ՝ 34-41, 32: ԿԱՋՄ՝ ճնշագծերով մոխրագոյն մոմլաթ, մէջբը՝ սեւ կտաւ. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ՝ չգրուած թուղթ:



Նմուշ 8ա



Նմուշ 23ա



Նմուշ 15ա

* Ծնթ. Հիմնական շարադրանքը գրել են անանուն բարտուղարներ, ըստ հարկի նոտրգրանման շղագրով երբեմն յաւելում, երբեմն լրացումներ է արել հեղինակը՝ Յովսէփ արեպս. Աղղութեանը (2աբ, 3բ, 4ա, 6աբ, 12ա, 14բ-5բ):

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թ. 30՝ ստ. մասը եւ վջ. պրակը մասամբ հիմիից անջատ, որոշ թերթեր ամրացուած այլ թղթով, տեղ-տեղ թանաքաբծեր եւ աղտոտուածութեան հետեր, 25բ-ի առտ. լս-ի, 26ա-ի տողամիջի հետագայի գիրը ջնջած՝ անընթեռնելի. ընդմէջ թ. 20-1ի՝ 28 թերթ ընկած (տե՛ս Ծնթ. 21ա):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *2ա-15բ* Մասնաւոր պատմութիւն յաղագս հանդիպելոցն մէջ, յորժամ ի Հաշտարախանու ելեալ գնացաք ի Մոսկով ի պատճառս օծման եկեղեցոյն Սանկտ-Պետերբուրգու, զոր կառուցեալ էր Ջուղայեցի եղիազարենց եղիազար աղայի որդի ազնիւ աղայ Յովհաննէսն (Օրագրութիւն 1779 Յունուար 17 - 1782, Հոկտեմբեր 23) – *Յամի Փրկչին 1779, եւ ի Հայոց ՌՄԻՀ. (1779) թուականին եւ ի Յունվարի 17, ելեալ ի Հաշտարախանու գնացաք ի Մոսկով Փետրվարի 7... ի սոյն թուոջս ամի Հ[ո]գտեմբերի 23... կարգեցաք գործակալ եւ զգերապատիւ պարոն Մկրտումն Գալստեանն Ջուղայեցի:*

Ծնթ. 10բ՝ տողամիջում Սեպ. 7-ի գրաման մէջ առկայ Բանիբով հաղաքի վերեւում մանուշակագոյն մատիտով նշած «Օրանիէնբաում»:

Տե՛ս Դիւան հայոց պատմութեան, խմբ. Գիւտ աւագ քհյ. Ագանեանց, գիրք Թ., Թիֆլիս, 1911, էջ 17-48:

Բ. *21ա-35ա* [Օրէնսդրութիւն]

1. *21ա-3բ* [Մասն երրորդ] (է-իա) – */// է. Ամենայն գանձ պետ<կ>ք եւ երիցփոխք, սահմանեսցեն յիւրաքանչիւր եկեղեցւոջ ամաւն ինչ եւ կնքեսցեն զայն վասն գանձանակաց իւրեանց... եւ նոյն ինքն սրբազան արքեպիսկոպոսն, որ զայս տնօրինէ, լինի պարտաւոր բիւր բարեաց ժողովրդեանն՝ որպէս նախնի թարգմանիչք ազգիս մերոյ, զորոց վիպէ պատմաբանն Մովսէս քերթողն Խորենացի (շղագրով յաւելած՝ «Յովսէփ արքեպիսկոպոս»):*

Ծնթ. Ստ. լս-ներում՝ 21ա ԺԹ. դ-ի շղագրով «պակասում է 36 էջ, 18 թերթ: Ասում են, որ իբր թէ պոկել տարել է Սարգիս վ. Ջալալեանցն Աստրախան բննիչ եկած միջոցին, բայց անհաւատալի է: Ըստ ոմում նա կարող էր կամ ամբողջը վերցնել կամ օրինակել տալ: Ավելի հաւանական է, որ այդ ասողներն են հանել» (վերջին նախադասութիւնը՝ ջնջագիծ):

2. *24ա-6ա* Մասն չորրորդ. Վասն առղեանց լուսանկար մօրս մերոյ Սրբոյ Աթոռոյն էջմիածնի վանիցն եւ առաջնորդին

ա. *24ա-5ա* Առդիւնք Սրբոյ Աթոռոյն են այսոքիկ (ա-գ) – *Յառաջին ժամանակին մինչ Տեառն ողորմութեամբ ի մերում աշխարհի էաք եւ չէաք ցրուեալք ի զանազան իշխանութիւնս... բայց եթէ վախճանեալ արքեպիսկոպոսն եւ կամ վարդապետն կտակեալ ինչ իցեն ի կենդանութեանն եւ կամ խոստացեալ ուրուք ինչ, ճշմարիտ վկայիւք յայնց կատարումն տայցեն:*

բ. *25աբ* Հասկ առաջնորդական են այսոքիկ (ա-ե) – *Նախ զեօթն հանդիսաւոր յաւուրց պատարագն, այսինքն՝ 1. Ծննդեան, 2. Տեառնդյառաջին... յիւրաքանչիւր տարւոջ տայցեն իւրաքանչիւրքըն յատուկ-յատուկ հինգ ռուպլի, եւ զսոյն արդիւնս շնորհեցաք դատարանին յաղագս նորին հարկաւորութեանն (շղագրով յաւելած՝ «Յովսէփ արքեպիսկոպոս. վերոյգրեալ հինգ ռուպլին իւրաքանչիւր քահանայիցն վասն աղքատութեան եւ տառապանաց եւ հասարակութեան թախանձանացն շնորհեցաք չպահանջել ի նոցանէ, այլ շնորհեցաք իւրեանց: Յովսէփ արքեպիսկոպոս»):*

3. *26ա-9ա* Մասն հինգերորդ. Վասն կառաւարութեան հոգեւոր դատարանին եւ դատաւորացն եւ զա-

նազան գործոց առ նոսայ պատկանելոց (ա-լա) – *ի հոգեւոր դատարանի մերում արձակապէս հրամայօղ եւ իշխան հոգեւոր է ի Սուրբ Աթոռն էջմիածին... եւ գրով առ սրբազան արքեպիսկոպոսն բողոքեսցեն, բայց զգուշ լինիցին չզրպարտել զնայ թարց վկայի եւ օրինաւոր պատճառաց եւ կամ նախանձու (շղագրով յաւելած՝ «Յովսէփ արքեպիսկոպոս»)։*

4. *29բ-35ա* Մասն վեցեր[ո]րդ. Վասն եկամուտ ժողովարարաց, վարդապետաց եւ հաճանայից (ա-լ) – *ժողովքարար ոք եկեղեցական կամ աշխարհական, ով ոք եւ իցէ, ուստի եւ եկեսցէ առանց վկայական թղթոյ... եւ յօր[ը]ստօրէ ծաղկեալ՝ պայծառասցուսցէ ի պարծանս ազգիս մերոյ եւ սրբոյ Աթոռոյն էջմիածնի եւ ի փառս ամենամեծ անուան իւրոյ. ամէն (շղագրով յաւելած՝ «Յովսէփ արքեպիսկոպոս»)։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1ա Տե՛ս խորագիր։

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *2ա*՝ կապոյտ թանաքով ուղղանկիւն՝ «ՀՍԽՀ ԼԻԿ ԵՋՄ. ՊԵՏ. ԱՐԽԻՎ N»։

ՆՇՈՒՄ՝ *պհպ. Մ մատիտով «ունի միկրոֆիլմ», 1ա՝ կարմիր մատիտով՝ «Հմր 4», սեւով՝ «Յիշատակարան Յովսէփ արքեպիսկոպոս Աւդուրեանի», մատիտով՝ «թղթ. Հմր 7, վ. հմր 4», «ձեռ. Հմր 3607»։*


ԳՐՉԱՓՈՐՁ՝ *13բ՝ «ց», 15ա՝ «Մոզդոկ», 16ա՝ «111 ամ», 20բ՝ «պակասում է» (ջնջագիծ)։*

3608
ՏԱՂԱՐԱՆ


ԺԹ. դարի Բ. կէս

ԳՐԻՉ՝ Անանուն Ա. (թ. 4-66, 103-6), Անանուն Բ. (թ. 67-9), Անանուն Գ. (թ. 70-86)։


ԹԵՐԹ՝ 107 (գրչի էջակալում՝ 1-127, որ է՝ 4ա-67ա). չգրուած՝ 1ա-3բ, 26բ, 86բ-8բ, 89բ-98բ, 102բ, 107աբ։ ՊՐԱԿ՝ 1-14×8 (1՝ 10, 13՝ 4, 14՝ 5)։ ՆԻՒԹ՝ թուղթ՝ ճնշադրոշմով՝ թ. 64, 71, 87 եւ այլուր՝ ոճատրուած շրջանակ, մէջը՝ «ФАБРИКИ МАРШЕВА»։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16,5×10,5։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (14,7×8,5). բնագիրը սեւով շրջագծուած։ ԳԻՐ՝ նոտրգիր՝ թ. 4-66, 103-6 (նմուշ՝ 8ա), շղագիր՝ թ. 67-9, 70-86 (նմուշ՝ 67ա, 73ա)։ ՏՈՂ՝ 17, 20, 12-16։ ԿԱՋՄ՝ ծաղկաթուղթ, մէջը եւ եզրերը շագանակագոյն կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ թուղթ. լուսանցակողերը՝ շագանակագոյնով ցայտկէէ։ ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ՝ չգրուած, դեղին թուղթ, մասն կազմաստառի։



Նմուշ 8ա



Նմուշ 67ա



Նմուշ 73ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին փոխր-ինչ մաշուած, եզրերից երեւում է միջուկ-ստուարաթուղթը. թերթերի վրայ տեղ-տեղ կան թանաքաբծեր, գիրն արտացոլուած հակառակ երեսներին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *4ա-10բ* [Շարականք, մեղեդիք, սրբասացութիւնք]

ա. 1. *4ա-5ա* [Շարական հանդերձի] («ԽԱՉԱՏՈՒՐ») – *Խորհուրդ խորին անհաս անսկիզբն, / որ զարդարեցեր զվերին պետութիւնդ... թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա՛, / եւ զերկրպագուս անուանդ քում պահեա՛ ի խաղաղութեան։*

2. *5աբ* [Տաղ յորժամ եպիսկոպոս պատարագ մատուցանէ. ասացեալ փոխանակ մեղեդոյ, ձեռ. 7717, 63ա] – *Ընտրեա՛լդ յԱստուծոյ, ո՛վ երջանիկ սուրբ քահանայ, նմանեալ Ահարօնի եւ Մովսէսի մարգարէին... Հօրն փառաւք, Որդոյն պատիւ եւ Սուրբ Հոգոյն այժմ, յաւիտեանս յաւիտենից Քրիստոս օրհնեալ ի համայնից։*

բ. *5բ* Մեղեքի Ծաղկազարդի – *Աստ երբայեցւոյ մանկունքն զերգս քրոբէիցն առեալ, հեթանոսական դասուց տօնակից վերիցն եղեալ։*

գ. *5բ* Մեղեքի Ծաղկազարդի – *Զայնէր Մարքեամ առ պարտիզպանն, մի՛թէ դու բարձեր զանդրանիկն իմ սէր։*

դ. *6ա* [Գրիգոր Նարեկացի]. Մեղեքի Խաչի – *Ես ձայն զառիւծուն ասեմ, որ գոչէր ի քառաթեւին. ի քառաթեւին գոչէր, ձայն առնէր ի սանդարամետան։*

Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր եւ գանձեր, աշխ. Ա. Քեօշկէրեանի, Երեւան, 1981, էջ 129։

ե. *6ա* Մեղեքի Յարութեան – *Յարեաւ Փրկիչն աշխարհի եւ ազատեաց զազգս մարդկան ի մահուանէ Քր<է> (բազմիցս՝ «րէ րի րէ...»)խատս։*

զ. *6ա* [Անդրիաս, ձեռ. 3986, 73բ]. Մեղեքի Համբարձման – *Այսօր անդրանիկն Հօր միածին Որդին յերկինս սլանայ ադամային կերպիւ, նուագ ներբողից եղանակեն այսօր հոյլք հոգեղինաց երկնաւորացն խմբից:*

է. *6բ* Մեղեքի Սուրբ Հոգոյն գալստեան – *Նուագեմք Հոգւոյն նուագս վայելուչս, վայելուչ բանիւ զարարչութիւն նախ ասեմք:*

ը. *6բ* Մեղեքի մեռոնի – *Հա՛յր ամենակալ, որ առաքեցեր զմիածին Որդիդ ի փրկութիւն մարդկան:*

թ. *6բ* Մեղեքի Այլակերպութեան Քրիստոսի – *Լեառն ցնծա՛, դու Թաբոր, յարփիահրաշս տօնի, քան զմինայ բարձրացար, զԱստուած փառօք ընկալար:*

ժ. *6բ* Մեղեքի Յարութեան – *Այսօր ողբայն առ գերեզմանին. Գաբրիէլ գոչէր՝ Ջի՞ լայք, յարեաւ կենդանին:*

ժա. *6բ-7ա* [Գրիգորի Նարեկացի]. Մեղեքի Աստուածածնայ – *Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ, / ծաւալանայր յառաւօտուն / երկու փայլակնաձեւ արեգական նման:*

ժբ. *7ա* [Ներսէս, ձեռ. 5899, 33բ]. Մեղեքի առաքելոց – *Այսօր ցնծացէ՛ք, եղբա՛րք պարակից, եղեալ վերնոցն սուրբ զառաքեալսն, գովել յորս յիշատակի նոցին:*

ժգ. *7ա* Մեղեքի Յարութեան – *Ի կոյս վիմէն յարեաւ այսօր եւ զգերեալս ի գերողէն ազատեաց Ք<րէ>րիստոս:*

ժդ. *7ա* Մեղեքի Աստուածածնայ – *Եւ անխախտ ծնողութեան էրէ թիւն:*

ժե. *7բ* Մեղեքի հայրապետաց – *Ի յանդէս տօնի քո ուրախացեալք, ցնծամք հայր եւ վարդապետ Պետրոս, որ սիրով սրտիւ հարար ի սէր Փրկչին:*

ժզ. *7բ* Մեղեքի մարտիրոսաց – *Իսկ ի հեղմանէ արեան ձերոյ հոտ անոյշ բուրեաց ի յերկինս եւ հոտոտեցաւ Տէր ի հոտ անուշից ընդ կամաւոր պատարագս ձեր, ո՛վ երանելի սուրբ նահատակք:*

ժէ. *7բ* [Մովսէս Խորենացի, ձեռ. 8274, 51ա]. Մեղեթի Յարութեան – *Մարիամ Մաքթաղինին փարէր ի մէջ պարտիզին եւ յանդիպեալ Յիսուսի՝ ասէ՝ Ջի՞ լաս, զի՞ լաս, ո՛վ դու կին, կամ զո՞ խնդրես լալագին. մի՛ լար, մի՛ լար, մի՛ լար, ես եմ Յիսուս միածին:*

ժը. *7բ-8բ* Շարական խնկարկութեան – *Յայս յարկ նուիրանաց ուխտի Տեառն տաճարիս ժողովեալքս աստանձր ի խորհուրդ պաշտման... ուստի տուաւ զհացն անմահութեան եւ բաժակ մեզ ուրախարար, տո՛ւք օրհնութիւն նմա հգեւոր երգով:*

ժթ. *9ա* Սրբասացութիւնք Ծննդեան, Աւետեաց, Աստուածածնի եւ Վարդավառի – *Բազմութիւնք հրեշտակաց եւ զօրաց երկնաւորաց իջեալ ի յերկինից ընդ Միածնին թագաւորին... եւ ընդ մարդկան շրջեցաւ, զի կեցուսցէ զանձինս մեր:*

ի. *9աբ* Մեծի հինգշաբաթի – *Որ ի վերա նստիս ի կառս հրանիւթս քառակերպեանս... աղաղակէին ասելով՝ Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէր զօրութեանց:*

իա. *9բ* Յինաց եւ Խաչի – *Ո՛վ է որպէս Տէր Աստուած մեր՝ խաչեցաւ վասն մեր... երգեսցո՛ւք նմա ասելով՝ Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէր Աստուած մեր:*

իբ. *9բ* Կիւրակէի, եկեղեցւոյ, Ծաղկազարդի, Հրեշտակաց – *Հրեշտակային կարգաւորութեամբ լցեր Աստուած զքո սուրբ զեկեղեցի... ձայնիւ խորհրդականաւ՝ Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէր զօրութեանց:*

իգ. *10ա* Մարգարէից, առաքելոց – *Ամենակալ ես Տէր զօրութեանց, որ թագաւորդ ես յաւիտենից... վասն զի սոքա են մեզ բարեխօս, Տէր ամենակալ ի քում յարքայութեանդ:*

իդ. *10ա* Մարտիրոսաց – *Սրբութիւն սրբոց մեծ ես եւ ահաւոր, եւ զինուորութիւնք հրեշտակաց օրհնին զքեզ եւ ասեն Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութեան:*

իե. *10աբ* Պահոց եւ ննջեցելոց – *Վասն յիշատակի հանգուցելոցն, ընկա՛լ, Հա՛յր սուրբ... տեսցի աստուածութիւն եւ հանգուսցէ զհոգիս նոցա:*

Բ. *10բ-66բ* [Տաղ]

1. *10բ-24բ* Տաղ ծննդեան եւ վերափոխման

ա. *10բ-1ա* 1. *Աւետի՛ս քեզ Մարիամ, զոր Գաբրիէլ սկզբնաւորեաց... դուռն եղեր դրախտին կենաց, դո՛ւստր իմաստուն մորն Եւայի, / մայր լուսոյ, մայր լուսոյ, մայր լուսոյ, կոյս Մարիամ, մայր լուսոյ:*

բ. *11աբ* 2. *Շուշանագեղ դու օրիորդ պսակ վարդից կոյս Մարիամ... երբնագ եղեալ փայլուն փեսուր՝ ծագման լուսոյ շողշողին:*

գ. *11բ-2ա* 3. [Գրիգոր Աղթամարցի] – *Անեղին տաճար, Բանին բարերար... կեցո՛ ի չարէ Տիրամայր, հովան[ա]ւորէ է է է տիրամայր, զԱստուած ծնար:*

Տե՛ս Գրիգորիս Աղթամարցի (ԺՋ դ.), ուսումն., ճնն. բն. եւ ծնթգր. Մ. Ափալքէգեանի, Երեւան, 1963, էջ 164-146:

դ. *12աբ* 4. *Գովեստ բերկրանաց հրճուողական հնչմամբ քեզ կոյս Մարիամ քաղցրաձայնեալ երգեմք... անմահ խնձորոյն անուշահոտ պտղոյն:*

ե. *12բ* 5. *Ողջո՛յն ընդ քեզ Մարիամ, մայր Աստուծոյ հաւատամ... բողբոջ եւ տունկ պալասան, դուստր Եւայի աննման:*

զ. *12բ-3ա* 6. *երկինք երկնից իմաց արարէ՛ք, եւ երկնայինք դուք խոնարհեցէ՛ք ի բեթլեհէմ... իմ միածին որդեակս օ՛ր օ՛ր օ՛ր, իմ անդրանիկ Յիսուս օ՛ր օ՛ր օ՛ր:*

է. *13աբ* 7. *Ծաղիկ պայծառ ծովային եւ մարգարիտ մեծագին... մարմնով զԱստուած ճշմարիտ, երկնաւորաց բաղձալիդ, երկնաւորաց բաղձալիդ:*

ը. *13բ-4ա* 8. [Սրիկ Կոստանդին, ձեռ. 2659, 92ա] – *Կայր կոյսն ի յայրին, կայր եւ զուարճանար... կերպ մի ի գնդէն, կարգ մի ի թուէն, կանչեն առ հովիւսն կարեւոր գոչմամբ:*

թ. *14ա* 9. *Հրճուիմք այսօր մեք հոգեպէս տօնիւս մաքուր սուրբ կուսական... աւետի՛ս ձեզ մեծ նահապետք, աւետի՛ս քեզ երջանիկ մայր, ուռա՛յ։*

ժ. *14բ Ստեղծող մանկանց մանուկ ցուցաւ եւ հինաւուրցն տղայացաւ... որ զարարածս կերակրէ, բանայ զձեռն եւ լցուցանէ։*

Ծնթ. Ձեռագրում այս տաղը ներթական համար չունի, այդ պատճառով համարակարգը խախտում է։

ժա. *14բ-5ա* 10. [Առաքել վրդ., ձեռ. 2709, 261ա] («ՏԷՐ Ա») – *Տունկ անմահութեան բողբոջեցար սուրբ Կոյս... զհայրածինն ծաղիկ բողբ[ո]ջեցեր զՅիսուս։*

ժբ. *15աբ* 11. *Ննջեա՛ որդեակ, քաղցր եւ անուշ... բայց եղէ ես քեզ կարօտ ո՛ր օ՛ր օ՛ր օ՛ր, Աստուած որդոյս իմ օ՛ր օ՛ր օ՛ր։*

ժգ. *15բ-6ա* 12. *Խորհուրդ մեծ յայտնեցաւ այսօր յաշխարհի եւ ուրախութիւն երկնի եւ երկրի... զի լուծեալ զկապն մեղաց եւայի, եւայի, ուստի երգեսցուք օ՛ր օ՛ր օ՛ր օ՛ր օ՛ր օ՛ր, / իմ Աստուած որդոյս օ՛ր օ՛ր օ՛ր օ՛ր օ՛ր օ՛ր օ՛ր։*

ժդ. *16աբ* 13. [Ասուածատուր Հեռեցի] – *Այսօր տօն է Ծննդեան, աւետի՛ս, / Տեառն մերոյ եւ յայտնութեան, աւետի՛ս... ցնծա՛, ցնծա՛ Դաւիթ արքայ, աւետի՛ս, / հնչեա՛ զքնարն քո եւ խայտա՛, աւետի՛ս։*

Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (ԺԶ-ԺԷ. դդ.), Բնագրեր, երկու հատորով, հտ. Ա., աշխ. Յասմիկ Սահակեանի, Երեւան, 1986, էջ 89-95. Ձեռագրում տաղը կրճատումներով է։

ժե. *17ա* 14. [Ղազար Ջահկեցի, երզ Ծննդեան Քրիստոսի, ձեռ. 3416, 3բ] – *Ղամբարափայլ սրբոյ տօնիս, աւետի՛ս, / ի միտ առցուք խորհուրդ բանիս, աւե[տի՛ս]... զի, զոր տեսին վկայէին, աւետի՛ս, / թէ բանն Աստուած էառ զմարմին, աւետի՛ս։*

ժզ. *17բ* 15. *Վարանիմ ի մեղաց, դու ազատիչ մեղուցելոյս, ո՛վ Տիրամայր... ուստի եւ քեզ բերկրեցելոյդ փառս տացո՛ւք, ո՛վ Տիրամայր։*

ժէ. *17բ-8ա* 16. *Ծիածան մայր եւ կոյս, ապաւէն եւ յոյս... արքայն մարգարէն որդովք քեւ փրկիլ ցանկայր հոգով, ո՛հ, աղերսիւ։*

ժը. *18աբ* 17. *Արեւ լուսատու, բաժակ կենսատու, գերապանծ լուսով դու մայր Աստուծոյ... ձեւ քո սոսկալի, ղամբար լուսալի, ճիւղ վարդով ի լի, մայրդ հրաշալի։*

ժթ. *18բ-9ա* 18. *Խնկի ծառին նման ես, պտուղ դու քաղցրահամ ես... մահու պտուղ լուծիչ ես, Աստուածածի՛ն, մեղա՛յ քեզ։*

ի. *19աբ* 19. [Ներսէս Շնորհալի] – *Այսօր Գաբրիէլ հրեշտակապետն եկեալ, բերեալ զբարեբանն պսակ յաղթող Կուսին... այսօր խոնարհեալ անմարմնական դասուք միածին Որդին առ կուսութեանց մայր։*

Տե՛ս Ներսէս Շնորհալի, Տաղեր եւ գանձեր, աշխ. Ա. Քեօշկէրեանի, Երեւան, 1987, էջ 159-160։

իա. *19բ* 20. *Անճառին խորան, Բանին բնակարան... քեզ պաղատիմ Տալիթայ, լոյս տո՛ւր իմ ակին։*

իբ. *19բ-20ա* 21. *Ի քէն աղերսեմք, արտասուօք հայցեմք խոնարհեալ անձամբ... զքեզ աղաչեմք կո՛յս, կո՛յս, կո՛յս, ողորմեա՛ գերոյս։*

իգ. *20ա-1ա* 22. *Մայր ցանկալի, փառալի, յոյժ տենչալի, աննման... կոյս գովել[ի], երանելի, միշտ սխրալի, աննման, / մայր գովելի, լի, լի (քանիցս) Մարիամ։*

իդ. *21ա-2ա* 23. *Տիրածին կոյս, երաստ երկնից, դո՛ւ ես թագուհի... զի միաբան էվէճ երգօք զքեզ օրհնեսցուք, Տէ՛ր, զքեզ օրհնեսցուք։*

իե. *22աբ* 24. *Է մայր անբիծ, կոյս գերամբիծ, ամենօրհնեալ թագուհի... մի՛ թողուր զիս միշտ գերի, ազատեա՛ զիս եւ ողորմեա՛, մայր ողորմած, բաղձալի։*

իզ. *22բ-3ա* 25. *Մա՛յր, պանծալի՛ լոյս, անապակա՛ն կոյս... եւ փառաւորեալ Սուրբ գերրորդութիւն սէր իմ անդադար երգով։*

իէ. *23աբ* 26. *Մանեակ չքնաղ պարանոցիդ կապեսցի... թէ Մարիամ անդ գտանի, ուր կայեանն, ուր կայեանն, ո՛հ, ուր կայեանն։*

իը. *24ա* 27. *Սիրով փեսային յաւէտ սիրահար, ծաղիկ ծովային եւ արարչատար... մաղթեա՛ Տիրուհի եւ անդուլ հայցեա՛, մաղթեա՛ թագուհի։*

իթ. *24բ* 28. *Ի մեծաջահ բոց արկանեն աչք, ի լոյս շնորհաց հրափայլ ճաճանչ առ թշնամին կան... զի փառք Տեառն ելից գերկինս, խաղաղութիւն տուաւ երկրի։*

2. *27ա-9բ* Տաղ մկրտութեան

ա. *27ա Յայնժամ իսկ գայ ի Յորդանան, առ Յոհաննէս ի բանին ձայն... եւ Մկրտիչն մերձ կալով, ստեղծողն ինքեան մկրտելով։*

բ. *27աբ* [Յովհաննէս Երզնկացի]. Տաղ ջրօրհնեաց – *Այսօր ձայնն հայրական, յերկնից իջեալ հաճոյեական... աւետաւոր ձայնիւ երգի մեծ կարապետն Յովհաննէս։*

Տե՛ս Ա. Սրապեան, Յովհաննէս Երզնկացի. ուսումնասիրութիւն եւ բնագրեր, Երեւան, 1958, էջ 219-221։

գ. *27բ-8ա* [Սրիկ Կոստանդին, ձեռ. 7730, 55բ]. Տաղ ջրօրհնեաց – *Ո՛վ զարմանալի խորհուրդն այս մեծ յայտնեալ... Յիսուս յառաջեաց աստուածութեամբ ի ջուրն, / հանդերձ Յովհաննու Յիսուս ի գետն եմուտ։*

դ. *28ա-9ա* Տաղ Տեառնընդառաջի – *Քրիստոս փառաց թագաւորն այսօր եկեալ ընծայումն... ամենազօր թագաւոր օրհնեալ գալուստ քո այսօր։*

ե. *29աբ* Տաղ Ծաղկազարդի – *Այսօր ցնծան արարածք խրախճանապէս... զմեսեայն օրհնեցին փոքրիկ հօտն Պետրոսին։*

3. *29բ-36բ* Տաղ խաչի եւ եկեղեցւոյ

ա. *29բ-30ա* 1. *Կաթուղիկէ եկեղեցիս, մօր սուրբ լուսոյ հարսնարանիս... եւ առաքեալքն խօսէին ի յիս մարգարէից վարժարանիս։*

բ. *30աբ* 2. Տաղ խաչի – *Գլխոյ պսակ զարմանալի, թագ ոսկեհուռ եւ հրաշալի... զի նա է հաւն Յիսուս որդին, զքո տատրակն եւ զաղաւնին. / մի՛ լար, սո՛ւրբ Կոյս, տաճար Բանին:*

գ. *30բ* 3. [Սրիկ Կոստանդին, ձեռ. 2566, 229բ]. Տաղ խաչի – *Խաչն ի նախնումն երեւեցաւ, ծաղկեալ ի դրախտ աստուածատունկ... որ փոխանակ Խահակայ, խոյն կախեցաւ ի Մաբեկայ. մեք ի յայն փայ[տ]՛:*

դ. *31աբ* 4. [Գրիգորի Նարեկացի]. Տաղ խաչի – *Հաւիկ մի պայծառ տեսի, աննմա՛ն... մեղաւորաց պատժել կամէր, աննմա՛ն, / աննմանիդ ով նմա՛ն, դու նմա՛ն:*

ե. *31բ-2ա* 5. [Պետրոս վրդ. Ղափանցի, ձեռ. 3227, 18ա]. Տաղ խաչի – *Կանայք, ամենայն քուրք իմ սիրական... գեղարդեամբ խոցի որդեակս ի խաչին, ջուր առատ բաշխի ծննդեան. կրկին լացէ՛ք:*

զ. *32աբ* 6. Տաղ խաչի – *Աստուածածին կոյս Մարիամ կայր առ խաչին իւրոյ միածնին... այ ո՛հ, այ ո՛հ, զքեզ ի խաչ տեսողիս հազար եղուկ մօրս այրած որդիս:*

է. *33ա* 7. Տաղ խաչի – *Ի խաչին անարգ բեւեռեալ, ծով աչերս եղեւ խաւարեալ... նոցին ներհակ արդ տեսանի, աւա՛ղ, որդեակ, աւա՛ղ, որդեակ սիրտ իմ այրի:*

ը. *33բ* 8. Տաղ խաչի – *Այսօր եղեւ գալ դշխոյին, մօր արքային ինքնակալին... եւ նա գտաւ զփայտ սրբոյ խաչին, որ էր թաղեալ գներքս աղբին:*

թ. *33բ-4ա 9.* Շողակաթի էջմիածնի – *Նախ միածին Աստուածըն Բան իջեալ յերկնից առնանման... յետոյ շինեալ զդիրս Հոիփսիմեան զկանայգն պատուական:*

ժ. *34աբ* 9.* [Տէր Առաքել Սիւնեաց, ձեռ. 429, 383բ]. Տաղ էջմիածնի («Տե՛ր Ա») – *Տաճար լուսոյ, տուն արքային, տեսի զենման անմահ գառին... ի քեզ հեղու լուսահոսան բաժակ հոգոց ուրախութեան:*

* Ծնթ. Տաղի 9-րդ համարը կրկնուած է:

ժա. *34բ-5ա* 10. Տաղ էջմիածնի – *Տեսլեամբ սրբոյն Գրիգորի, Գրիգորի ահեղ եւ զարմանալի խորհուրդ յայտնեալ աքանչելի, հրաշալի... իմաստութեամբ ճոխացեալ, զազգս հայոց զարդարեալ, աննմա՛ն:*

ժբ. *35ա* 11. Տաղ եկեղեցւոյ – *Եկեղեցի կանգնեալ խորան, գմբէթին բարձր երկնից նման... յաւազանէն որդիացան, անդ Հոգուութեան արժանացան:*

ժգ. *35բ-6ա* 12. Տաղ Վարագա խաչին – *Ի մէջ լերանց կառուցեալ, կառուցեալ, վերին Վարագ անուանեալ, զանազան ծաղկօք լցեալ, աննման... աղերսանօք Սուրբ խաչին՝ աւագ եւ սուրբ նշանին, պահապան հայոց ազգին եղիցի:*

ժդ. *36աբ* 13. Տաղ Վարագայ խաչին – *Ղամբարաշար անհամեմատ լուսով լցեալ լեառն Վարագայ... քանզի նա է տեղի հրաշազան Փրկչին մերոյ ոտին կայարան:*

4.*36բ-42ա* Տաղ Յարութեան

ա. *36բ* [Բաղդասար Դպրի, ձեռ. 6998, 54ա] – *Քեզ, ո՛վ փեսայդ եկեղեցւոյ, երգեմք հոգով, ալելուիա՛յ... որով թաղմամբ եւ յարութեամբ եւ համբարձմամբ, ալելուիա՛յ:*

բ. *37ա* Տաղ Յարութեան – *Մարիամ Մաքթաղինին փարէր ի մէջ պարտիզին... մի՛ լար, մի՛ լար, մի՛ լար, ես եմ Որդին միածին:*

գ. *37աբ* Տաղ Յարութեան – *Ո՛վ պարտիզպան, ասա՛, ո՞ւր տարան զՅիսուս միածին... զոր ես եմ միածին, որ յարեայ ի գերեզմանէն:*

դ. *37բ* Տաղ Յարութեան – *Գոչէր հրեշտակն առ վիմին վասն յարութեան Յիսուսի... զՏէրն տեսէ՛ք անդ սիրով, մխիթարեցէ՛ք մեզ հոգով:*

ե. *37բ-8ա* Տաղ Յարութեան («Ի ԳՐԳԷ») – *Ի հանդիսի յարութեան, յարութեան, կանայք եկին ի գերեզման... վասն յարութեանըն նորին, աւետի՛ս, ցնծան որդիք Սիոնի, Սիոնի հրեշտակ:*

զ. *38բ* Տաղ Յարութեան – *Յորժամ յարեաւ Փեսայն անմահ ի մէջ գիշերի, դղրդեցաւ յերկիր հիմամբ, շարժեցաւ տեղին... զոր աստ եդեալ ի պատանի, վիմօք կնքեցին. Յարեա՛ւ Յիսուս, յարեա՛ւ:*

է. *39ա* [Ղազար Ջահկեցի]. Տաղ Յարութեան – *Միաշաբաթին օր հանգստեան կանայք եկին ի գերեզման... տեսին զկտաւն եւ զարմացան, եւ սերոբէն հոլաթեւեան:*

ը. *39աբ* Տաղ Յարութեան – *Դասքն հրէական էին պահապան սուրբ գերեզմանին, որ եդաւ մարմին աննման... իւղաբերքն եկին, զխունկս անուշս բերին, ողբալով լային՝ պատառեալ շուրջ զգերեզմանաւ:*

թ. *39բ* Տաղ Յարութեան – *Դարձեալ յայտնի այլանման առ ծովակին Տիբերական... զՊետրոս երիցս հարցանելով, զուարացութիւնըն քաւելով:*

20. *181բ-3ա* Կանոն յորժամ նոր դուռն դնեն եկեղեցոյ – *Հաստատեն ի տեղոջ իւրում եւ ասեն Սաղմոս ի թիւ ճԺէ... Խոստովան եղերո՛ւք Տեառն, զի բարի... եւ եպիսկոպոսն ասէ զաղօթս. Տէ՛ր Աստուած, արարի՛չ եւ յորդորի՛չ...*

21. *183ա-95բ* Կանովն նաւակատեաց եկեղեցի

սրբելոյ, յանօրինաց մոլեգնութենէ եւ շարժեալ սեղան վերըստին հաստատելոյ – *Մտանէ եպիսկոպոսն հանդերձ քահանայօք եւ սարկաւագօք... եւ եպիսկոպոսն ասէ զաղօթս. Որ ընդունողդ ես աղաւթից ժողովրդեան...*

22. *195բ* Կանովն սկիհ եւ մազգման աւրհնել[ոյ] – *Բերեն յեկեղեցին եւ լուանան նախ ջրով... Աւրհնեալ ես Տէր Աստուած մեր, որ եառուր մեզ զնի/// (վջ.)։*

Ծնթ. Տեղ-տեղ ստ. լս-ում գրուած նիւթի խոռագրերը։ Համմտ. Մայր Մաշտոց, հտ. Ա., գիրք Ա., ժ. դար, աշխ.՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, Սբ. Էջմիածին, 2012, էջ 83-433։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՋՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

38բ Արդ, Տէր՝ Աստուածդ երկնային, Յիսուս Քրիստոս, Հօր միածին, աղաչանօք սուրբ Աստուածածնին եւ ամենայն սրբոց քոյին ողորմութիւն եւ մեղաց թողութիւն շնորհեա՛յ ստացողի այսմ տառի |38բ| եւ իւր ծնօղացն, եւ ինձ՝ անարժան Ներսէսի, *եւ իմոցն ամենայնի, եւ (արտ. լս-ում՝ «*Փառանին*») կարդացողացդ, եւ լսողացդ, առհասարակ ամենեցունդ. ամէն։*

*45բ Եւս առաւել ստացողի սուրբ գրոցս եւ իւր ծնողացն եւ ամենայն արեան մերձաւորաց իւրոց, եւ ինձ՝ անարժան գրիչս զ*Ներսէսի, *եւ իմոցն ամենայնի, եւ Աստուած ողորմի ասողին, կարդացողացդ եւ լսողացդ. ամէն։*

61ա Ո վ եղբայր, թէ կամիս դու զողբս ասա՛յ, չէ նայ՝ շուտ տո՛ւր գթուղթն ու կարդա՛յ, եւ զմեղաւոր գրիչս յիշեա՛յ, եւ Աստուած ողորմի ասա՛յ. ամէն։

*66բ Այն աստուածային լուսովն լուսաւորեա՛յ, Տէ՛ր Աստուած, զհոգի համօրէն հաւատացեալ ննջեցելոց քրիստոնէից, եւս առաւել ստացողի գրոցս եւ ամենայն արեան մերձաւորացն իւրոց, եւ (արտ. լս-ում՝ «*Փառանին*»), անարժան գրչիս՝* Ներսէսի, *եւ իմ ծնօղացն։ Եւ ողորմի ասողացն Աստուած ողորմեսցի եւ խաչի լուսոյն արժանի արասցէ յիւրում գալըստեանն եւ երկնից արքայութեանն. ամէն։*

78ա Ողորմա՛ծ եւ մարդասէ՛ր Տէր, ողորմութիւն եւ մեղաց թողութիւն շնորհեա՛յ զստացող լուսազարդ տառիս եւ ինձ՝ անարժան գրչիս՝ մեղաւոր Ներսէսի. *Աստուած ողորմի ասացէ՛ք, եւ Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։*

102բ Խաչիւդ քո, Քրիստո՛ս, լուսաւորեա՛յ զհոգի ստացողի սուրբ գրոցս՝ ուսո՛ւցայ Փառանին, *եւ իւր ծնաւղացն, եւ իւր եղբօր՝* Մուրադին. *Աստուած զնոցա մեղք թողնու (5 տող չգրած)։*

120ա Յայսմ հրաշափառ տաւնիս, որք խրախանայք տաւնայխմբութեամբ, յիշեցէ՛ք զստացո[ող] սուրբ գրոցս՝ զհաւատարիմ զուսո՛ւցայ Փառանէն, *զեղբայրն իւր՝ զուսո՛ւցայ* Շիրաին, *զ*Սաֆարն, *զ*Կարապետն, *եւ զ*Գնատիոս, *զ*Յովակիմայ։ *Դարձեալ յիշեցէ՛ք եւ Աստուած ողորմի ասացէ՛ք ուսո՛ւցայ* Փառանին *եւ իւր ծնողացն՝ հօրն՝* Սաֆարին, *եւ մօրն՝* Մարգարտին, *եւ կողակցո՛ւն՝* Շաղոսկըն, *եւ Ղիմաթին, եւ իւրեանց զաւակացն՝* Սաֆարին, Կարապետին, Իգնատիոսին, Յովակիմայն. *Աստուած զիւրեանց մեղքն թողնու. ամէն։*

131բ Քրիստո՛ս Աստուած, քո անճառ խոնարհութեամբդ եկիր ի վերնատուն այսօր, լուացեր զոտս աշակերտացն, լուա՛ եւ սրբեա՛ ի մեղաց զստացող սուրբ գրոցս՝ զուսո՛ւցայ Փառանին, *եւ զծնաւղս իւր՝ զ*Սաֆարն *եւ զ*Մարգարիտին. *Աստուած զիւրեանց մեղքն թողնու. ամէն։*

150բ Տէ՛ր Աստուած, Յիսո՛ւս Քրիստոս, քո անճառ խոնարհութեամբդ արձակեա՛ ի կապանաց մեղաց զհոգի ստացողի սուրբ գրոցս. ի (չշարունակած, 6 տող չգրած)։

176բ Քրիստո՛ս Աստուած, քո անճառ խոնարհութեամբ ողորմեա՛ ստացողի գրոցս՝ հաւատարիմ ուսո՛ւցա Փառանին, *եւ իւր ծնաւղաց՝ հօրն՝* Սաֆարին, *եւ մօրն՝* Մարգարտին, *եւ կողակցո՛ւն՝* Շաղոսկըն, *եւ Ղիմաթին, եւ իւրեանց զաւակացն՝* Սաֆարին, Կարապետին, Իգնատիոսին, Յովակիմայն, *եւ մեղաւոր գրչիս. Աստուած իւրեանց մեղքն թողնու. ամէն։*

ՆՇՈՒՄ՝ *պհպ. Ա՝ սոսնձած թղթին՝ «Հ[ին] 21 / Մաշտոց ձեռաց անյայտ», սեւով՝ «ԺՂ. դար / «1138/3612» / «Հ[ին] 1138, ԺԷ., Մ[եսրոպ] եպ[ի]ս[կոպոս]», 1ա՝ մատիտով «3612»։*


ԳՐՋԱՓՈՐՁ՝ *150բ՝ «Տէր Աստուած Յիսուս Քրիստոս քո անճառ»։*

3613
ԺՈՂՈՎԱԾՈՅ
(բաղկացած 2 ձեռագրից)

ԹԵՐԹ՝ 80+2 (կրկն.՝ թ 15, 75)։ ԿԱՂՄ՝ շագանակագոյն ճնշագծերով դրոշմազարդ կաշի. Բ. փեղկին պատկերուած պատուանդանով խաչ. միջուկը՝ տախտակ. աստառը՝ շերտազարդ կտաւ (Բ. փեղկ՝ նաեւ այլ). Լուսանցակողերը՝ կարմիր։ ՊԱՀՊԱՆԱԿ՝ Դե (վջ.)՝ մագաղաթ, չգրուած։

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – լատիներէն (անորոշ. նշմարվում են տառեր կամ առանձին բառեր, վրան հայերէն մակագրութիւններ, տե՛ս Յաւելագրութիւն)։ ԺԴ. դ.։ Ա.-Գ (սկ.)՝ ստացուած 2 թերթի ընդլայնակի ծալումով, ընդլայնակի եւ ընդերկայնակի եզրահատումով (բնագիրը վնասուած. 4րդ թերթը՝ որպէս 1ին

թերթի ելուստ)։ Մագաղաթ 23×16,5. երկսիւն (23×16,5). նմուշ՝ Գա. տող՝ 16։



Նմուշ Գա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած, կազմը ժէ. դ., կաշին մաշուած, վրան ճաճեր եւ ֆետրուածքներ, Պտոկ-պիպ-ները մուծուած նորոգման շրջանում, կաթիլի հետքեր, տեղ-տեղ կաշին պոկուած-ընկած, Ա. տախտակը ջարդուած, կաշին ճեղքուած, այլ՝ շագանակագոյն կաշուով նորոգած, զոյգ գամերը, կապիչները եւ դռնակն ընկած, առկայ են կապիչների հիմքերը, Բ. կազմաստառը, Պտոկ-պիպ-ները ցեցի անցքերով. լուսանցակողերի կարմիրը մասամբ թափուած. որոշ թերթեր ցեցի անցքերով, իսկ որոշ թերթերի ներքին լս-ը եւ եզրերը նորոգուած սպիտակ թղթով, թ. 70-1՝ եզրերը մաշուած, 33բ ստ. հատուածի պատռուածքը ամրացուած այլ ձեռագրի թղթով, ընդմէջ թ. 26-7ի 1 թերթ կտրած. նորոգման ժամանակ հետագայի ձեռքով արուած լուսանցազարդերը եւ լս-ային յաւելումները վնասուած՝ 7բ, 11բ, 12ա, 21բ, 26ա եւ այլուր։

ՆՇՈՒՄ՝ *Ա. կազմաստառին թանաքով «Սամուէլ Անեցւոյ ժամանակագրութիւն, Ք. Պատկանեան*. 57», Ա. փեղկին սոսնձած կապոյտ զարդաշրջանակով եզերուած ուղղանկիւն թղթին՝ «шкафъ, полка, N (կարմրով)՝ «8» (այլ թանաքներով)՝ «Հմր 1152/3613», «Ռ3ՁՁ.-1387, Մ[եսրոպ] ե[պիսկոպոս]», Ա. կազմաստառին թանաքով «К. Паткановъ, գրեալ յամին Տեառն 1300»։*

* Ծնթ. Ձեռագիրս պատկանել է Ք. Պատկանեանին եւ Գէորգեան հաւաքածուի մասն է եղել (տե՛ս Ո. Եգանեան, Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները.– Ցուցակ ձեռագրաց ՄՄ, հտ. Ա., Երեւան, 1965, էջ 70)։

ՁԵՌԱԳԻՐ Ա.
ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ, ՀԱՒԱՔՄՈՒՆՔ Ի ԳՐՈՑ ՊԱՏՄԱԳՐԱՑ


ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔ ՈՒՋ. – 1177*

ԳՐԻՉ, ՍՏԱՑՈՂ՝ Մխիթար Անեցի։

ԹԵՐԹ՝ 71+1 (թ. 1-71, կրկն.՝ թ. 15. ունի հետագայի էջակալում՝ ա-ն, որ է՝ 1ա-13ա**)։ ՊՐԱԿ՝ Ա-ժ×8 (Դ 5, ժ 3)։ ՆԻՒԹ՝ թուղթ։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16,5×2։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, շրջանակուած կարմրով՝ թ. 29-70 (14×9,5)։ ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1ա)։ ՏՈՂ՝ 24-26։

* Ծնթ. Ձեռագրի այս թուագրումը հիմնուած է աղիւսականեւ մասում առկայ վերջին թուականի վրայ. տե՛ս Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, ժամանակագրութիւն, աշխ. Կ. Մաթեւոսեանի, Երեւան, 2014, էջ 58։

** Ծնթ. Պրակահամար ունեցող էջերը չէջակալուած։



Նմուշ 5ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – ձակատազարդ՝ *1ա։* Գոյն՝ *սեւ։*

Տե՛ս Ա. Գէորգեան, Հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն Թ-ժէ. դդ., Գահիրէ, 1998, էջ 428, Հմ 248. Ա.։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա-70բ Սամուէլ Հռհռեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս. ծայրաթաղ. հաղարաւ Անեցի

Տե՛ս նաեւ. 481, 19ա-59ա։ Նախերգան/1ա-3ա։ ա/3ա-26բ։ բ/27ա-70բ։

Տե՛ս Սամուէլ Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաթաղ արարեալ, բնագիրը Ա. Հայրապետեան, առաջաբան Կ. Մաթեւոսեան, խմբ. Գէորգ Տէր-Վարդանեանի, Երեւան, 2011։ Տե՛ս նաեւ Կ. Մաթեւոսեան, Սամուէլ Անեցու ժամանակագրութեան ձեռագրերը եւ նորայայտ լրացումները, Երեւան, 2009, Կ. Մաթեւոսեան, Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. ժամանակագրութիւն, Երեւան, 2014, Կ. Մաթեւոսեան, Սամուէլ Անեցու ժամանակագրութեան Մխիթար Անեցու ընդօրինակութիւնը, «Էջմիածին», 2006, ԺԲ-ԺԱ., էջ 88-100։

Ունի նաեւ գրչի եւ հետագայում արուած սրբագրումներ՝ 8բ, 11բ, 12ա, 26ա եւ այլուր։ Լս-ային եւ աղիւսակներում առկայ սրբագրում-յաւելումների մասին տե՛ս Կ. Մաթեւոսեան, Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. ժամանակագրութիւն, Երեւան, 2014, էջ 58. յաւելումները թուագրուում են ՊԽԹ. (1400) թուականով, որոշ մասը վերագրում է աւելի ուշ ժամանակի մէկ այլ անանուն գրչի։

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, *ԺԴ-ԺԵ. դդ., բոլորգիր*

Ա. *Պտոկ-պիպ. Աա-Գա [ժամանակագրականք, տարբեր ձեռքերով]*

1. *Պտոկ-պիպ. Աա (1217-1365 թթ., բոլորգիր). Յամի Տեառն ՌՄԺԷ. (1217) կարգն սուրբ Տօմինիկու հաստատեցաւ... ՌՅԿԵ. (1365) ջընվէգք առին ըզ/// (1 բառ չգրած]) եւ զՂրիմն։*

2. *Պտոկ-պիպ. Աբ (1449 թ., անարուեստ բոլորգիր). Յամին Տեառն ՌՆԽԹ. (1449) թվին, Օգ[ոստ]ոս յամիս ԺԵ., օրն Փոխման Աստուածածնին տօնին կայծակն էզարկ Սուրբ Նիկոլայ զանկակատան գլուխն ավէրեց, վէս պրին (չշարունակած)։*

– *Պտոկ-պիպ. Աբ (1453 թ., անարուեստ բոլորգիր). Յամի Տեառն ՌՆԾԳ. (1453) թվին, Մայիս ԻԹ., օրն Յոթմանի որդին ըմ<u>ստ</u>ամբոլն էառ, զտեառն տէր(՞)էտրուԹեամբ ԽԹ. հոգի սուրն մաշեցաւ, Թող զայլն, որ առանց սրոյ մեռան յահէն։*

– Պտռկ-պհպ. Դա (1480 թ., 1482 թ., անարուեստ բոլորգիր). Ղալաթան էթող զքաղաքն ու նավ մտաւ ու փախեաւ Լեւոն գնաց։

Ղազար, ավաք, որ այս ծովափներոյս քրիստոնութիւն կամի ջնջիլ։

Թվին Հայոց ՋԻԹ. (1480) Կաֆան առէվա///։

Թվին ՋԼԱ. (1482) մա/// այլ մեծ հեր ///։

3. *Պտռկ-պհպ. Բա (1392 թ., բոլորգիր). Յամի Տեառն ՌՅՂԲ. (1392) եղեւ չոր[րո]րդ մահն ի Ղալատա՝ սկսեալ ի Յուլիս ամիս մինչեւ ի Նովեմբեր։*

4. *Պտռկ-պհպ. Բա (1523 թ., բոլորգիր). Թվին Հայոց ՋՀԲ. (1523), Մա[ր]տի ամիս ԻԹ., աւր կիրակ[ի] Ծաղ[կ]այզարդի ձուն էրեկ խիստ։*

5. *71աբ (1376-1386 թթ., բոլորգիր) Յամի Տեառն ՌՅՀՋ. (1376), Յուլիս ԺԷ., օրն ե.շաբթի նահանջ... Յամի Տեառն ՌՅՁՋ. (1386) Դեկտեմբերի Դամուղանգն էառ գՏփխիս եւ աւերեաց, եւ զԲագրատ պարոնն տաճկացուց եւ տարաւ ընդ իւր։*

Տե՛ս եւ հմմտ. Մանր ժամանակագրութիւններ, ԺԳ-ԺԸ. դդ., հտ. Բ., կազմեց՝ Վ. Յակոբեան, Երեւան, 1956, էջ 513-514։

Բ. *Պտռկ-Պհպ. Բբ (ԺԵ. դ., նոտրգիր)* [Տաղ. Յովհաննու Թլկուրանցւոյ] *– [Ք]եզ հոգեւոր խրատ մի տամ, / է անպիտան անձն իմ, լսէ՛... փոխէ՛ զերեսն, ի վրայ դնէ, / շունն զբերանն գայ լիզէ։*

Տե՛ս Յովհաննէս Թլկուրանցի, Տաղեր, աշխ. է. Պիւզեանի, Երեւան, 1960, էջ 183-185։

Գ. *70բ (1376-1386 թթ., բոլորգիր)* [Բանիմ տոմարական] *– Խոյն զվուսինն ի գագաթն ունի, ցուլն զվուսինն ի բերանն ունի... Ջուկն զվուսինն ի թաթոտիցն ունի եւ ի չմուշկն։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

26բ Ջյետնեալս յարդիւնական գործոց, զչուառ գրիչս՝ զՄխիթարիչ Անեցի *սուտանուն աբեղայ եւ աշակերտ բանի ի վանացն Հոռոմոսի, անեալ առ ոտն սուրբ* Յովանիսի, *յիշեսջի՛ք ի Քրիստոս աղաչեմ։*

35բ Ջմեղաւոր ստացաւղս եւ գաշխատաւոր զՄխի[թար] եւ զծնաւղսն մեր եւ զեղբարսն յիշել աղաչեմ։


ԳՐՉԱՓՈՐՁ՝ *Պտռկ-պհպ. Բա՝ «Թ. Թվին Հայոց ՋՀԲ. (1523) Մա՛տի ի կիրակի գրեցաւ», գրի վրայով՝ «dic pracella, nienr», Պտռկ-պհպ. Բբ՝ անընկալելի բառեր, Պտռկ-պհպ. Գա՝ «հազ», Պտռկ-պհպ. Գբ՝ «Յակոբջանեան», 33բ էջին սոսնձած այլ թղթին, խոշոր բոլորգրով՝ «/// աղաչեր ա/// Յիսուսի Աստուծոյ մերո///», 61ա՝ «կատապան», 62բ՝ «Թժիկ.», 70ա՝ «1168, 615+ 551 = 1166», 71բ՝ «Թվական Հայոց [Պ.] եւ ԽԹ. (1400)» եւ մասամբ ջնջուած, անկապակից բառեր։*

ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *Պտռկ-պհպ. Գբ՝ ճակատազարդ։*

ՁԵՌԱԳԻՐ Բ.

ԺԷ. դար

Թերթ՝ 9+1 (թ. 72-80, կրկն.՝ թ. 75). չգրուած՝ 77բ-80բ։ ՊՐԱԿ՝ 1×10։ ՆԻԹ՝ սպիտակ թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ թ. 74՝ շրջանակ՝ մէջը խարիսխ, թ. 76՝ «LC»։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16×10։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (11,5×7)։ ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 72ա)։ ՏՈՂ՝ 18-19։



Նմուշ 72ա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

72ա-7ա [Պատմութիւն կամ ժամանակագրութիւն Հին աշխարհի]

ա. *72ա* Ադդ, որով Իլիոն առաւ յամի Պ.երորդի Լ.երորդի առաջնորդի *– Եսեբօն՝ ամս է.,* Ղաբդոն՝ *ամս Ը., Սամփսոն՝ ամս Ի. (20), Հեղի քահանայ՝ ամս Ի. (20)... իսկ ի դատաւորացն մինչեւ ցՍողոմոց (=ցՍողոմոն) ամք <Ջ> ԴՃՋ. (480)։*

բ. *72ա-3ա* Թագաւորք Յուդայ *– Դերկիղեայ թագաւորի Աւորեստանեայց յԼ.որդի ամի, նախ թագաւորեաց երբայեցւոցն Յուդայաստանի՝ Ա. Դաւիթ՝ ամս Խ.... ԻԲ. Սեդեկիա՝ ամս ԺԱ.։ Առ որով Յուդայ գերեցաւ... ամք Նե. (405), ամիսք Ջ.։*

գ. *73ա-4ա* Իսրայէլի թագաւորք *– Ղաւոսթէնի արքայի Աւորեստանեաց յերեսներորդում Բ.ում ամին նախ թագաւորէ յերբայեցոց Իսրայէլի՝ Ա. Յերեբովամ՝ ամս ԻԲ.... ԺԹ. Ովսէէ՝ ամս Թ.։ Գերի վարեալ Իսրայէլ ի Սաղմանասարայ արքա[յ]էն... կացեալ ամս ՄԽԹ. (249) եւ օրս ԻՀ.։*

դ. *74ա* Բաբելացոց թագաւորք *– Փուա ի ՌՄԻԵ. (1225) ամեն աւորեստանաց... յետ որոց ի Պարթեւս փոխեցաւ իշխանութիւն ի Ծ.որդի Ե.երորդի Ողոմպիադին։*

ե. *74բ-5ա* Պարսից թագաւորք *– Ի բառնալ Մարաց թագաւորութեանց թագաւորեաց Պարսից Ա. առաջին Կիւրոս՝ ամս Լ.... սկսեալք ի ԺԵ. Ողոմպիադին հանգեան ի Ճ.որդ Գ. տասանորդն (113)։*

զ. *75աբ* Եգիպտոսի Աղեքսանդրի թագաւորք *– Պտղեմք ի Ճ.երդումն եւ ի ԴԺ.երորդումն (114) Ողոմպիադին յետ վաղճանելոյ Աղէքսանդրի... ընդ հռոմովք նուաճեցան ի ՃՋՐ. (198) Ողոմպիադին։*

է. *75բգ* Ասորոց եւ Բաբելոնի եւ Ասիացոց թագաւորք *– Յետ Աղէկսանդրի Մակեդոնացոյ յԴԺ.երորդում ամի թագաւորութեան Պտղոմեայ... սկսեալք ի ՃԺԷ. (117) Ողոմպիադէն վաղճանեցան ի ՃՀԱ. (171) Ողոմպիադին։*

ը. *75դ-6ա* Հռէից բանանայապետք, որ նոքին եւ թագաւորք *– Յերրորդում ամի թագաւորութեան Դեմէտրի... առ Ադրիանոսիւ յՄԻՀ. (228) Ողոմպիադին։*

թ. *76ա-7ա* Մահ կայսերաց *– Գայիոս կայսր սպա-*

նաւ ի Նովղայ... Գորգիանոս զանձն խեղդեաց Ապրիկէ, Պուպինոս եւ Բաղբինիոս։

ԳՐՁԱՓՈՐՁ՝ *80ա «Սամուէլ գահայնին ժողովածի», 80բ՝ «կենարարէն, ՀՃԼԶ. (756) տարի առաջ շինած է ի մեծ Հռոմ», պհպ. Դա, եբ՝ տառեր, թուաբանական հաշուարկներ՝ եղծուած, դժուար ընկալելի։*


ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *Պտռկ-պհպ. Դա՝ զարդանախշ, աղիւսակ, 7բ, 21բ, 36ա, 39բ՝ ձեռնանիշ։*

3614
ՄԻՆԱՍ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ ԵՐԵՒԱՆՑԻ, ՏՕՄԱՐ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ԲԼՈՒՐ ԳԻՒՂ (ԱՐՇԱՐՈՒՆԵԱՑ ԳԱԻԱՌ) ՌՄԺ.-ՌՄԺԱ. – 1801-1802

ԳՐԻՉ՝ հեղինակը։

ԹԵՐԹ՝ 64 (գրչի էջակալում՝ 1-117, որ է՝ 1ա-59ա). չգրուած՝ 59բ-64բ։ ՊՐԱԿ՝ Ա-Ը×8։ ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18×10,5։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (14×9). սահմանագծուած սեւով։ ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 3ա). ունի յիշագրեր։ ՏՈՂ՝ 20։ ԿԱՋՄ՝ բաց վարդագոյն ճնշագծերով մոմլաթ, մէջը սեւ կտաւ. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ թուղթ։ ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ՝ հաստ, սպիտակ, լուսագծերով թուղթ, մասն կազմաստառի։



Նմուշ 3ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. լուսանցակողերը փոխ-ինչ աղտոտուած, որոշ թերթերի վրայ կան անմխուր ջրի հետքեր։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1աբ [Տիտղ.] *Ջբուն տօմարս մեր վերստին նորոգեալ ի վշտակիր եւ ամենատգէտ անաւրժան Միքնասայ Երեւանցւոյ եւ աւարտեալ ի թուականութեանս Հայոց ՌՄԺ. (1801) եւ յամսեանն Տրէ ի ԻԹ., ի գաւառն Արշարունեաց, ի գեօղն Բլուր*

Այլեւ զեկեղեցական Տօնացոյցս մեր՝ զնախապէս կարգեալն եւ զսահմանեալն ի սրբոյն Սահակայ Պարթեւի հայրապետէն մերմէ ըստ աւանդութեան Հայաստանեայցս եկեղեցւոյ։ Եւ զվերստին նորոգեալն եւ յերկուս հատորս բաժանելով ի ձեռս տարեգրաց եւ ամսովքն հռոմայեցւոց մշտնջենաւոր հաստատեալն Սիմէօնի սրբազան կաթուղիկոսին մերոյ Երեւանցւոյ, զնոյնն թարց յաւելման եւ պակասեցուցման ըստ կանոնի հարցն սրբոց զբոլորն ի մի հատոր ժողովեալ եւ ի ձեռս տարեգրաց, եւ ամսովք մերովք անշարժ եւ յարակայապէս |1բ| մշտնջենաւոր սահմանեցեալ՝ ի վայելումն մանկանց սուրբ եկեղեցւոյ եւ ի փառս մարդացելոյն Աստուծոյ, որում գոհութիւն եւ փառք երիս յաւիտեանս եւ անդր քան զսահմանս. ամէն։ Ի թուականութեան ծննդեանն Փրկչին 1801։

ա. 2ա-12ա եւ արդ, թէպէտ իմապէս ամենամեղ եւ ապաշնորհ անձանց ոչ է պարտ յանդգնիլ եւ ձեռնամուխ լինիլ յայսպիսի իր... որոց սահմանողին փառք եւ գոհութիւն մատուսցի յաւիտեանս. ամէն։

բ. 12բ-27ա Տօմար սրբոյ Լուսաւորչի. տօնիք անշարժք – *Նաւասարդի Ա.՝ տօն է Ծննդեանն եւ Յայտնութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ... եւ բե՛ր ի մի տուփ լիուն լաւ է, Մեննի՝ միջակ եւ վեւն՝ վատ (աղիւսակ՝ 13ա՝ 13 սիւն, 14 տող՝ «Ամիսք հայոց, Յարակայ, Ամիսք հռոմայեցւոց... Աւելեաց Ա., Զկ., Յունվարի Ա.», 13բ՝ 11 սիւն, 14 տող՝ «Ամիսք հայոց, Աւուրք, Կիսակք, Կրկնակք, Եօթներրեակք... Աւելեաց, Ե., Թ. ...», 14բ՝ 10 սիւն, 2 տող, 15ա՝ 14 սիւն, 2 տող, 16բ՝ 9 սիւն, 19 տող, 17ա՝ 6 սիւն, 7 տող, 17բ՝ 8 սիւն, 6 տող, 18ա՝ 6 սիւն, 7 տող, 13 սիւն, 3 տող, 18բ՝ 6 սիւն, 7 տող, 13 սիւն, 3 տող, 19ա՝ 6 սիւն, 7 տող, 19բ՝ 6 սիւն, 7 տող, 20ա՝ 9 սիւն, 21 տող՝ «Ամիսք հայոց, Տարեգիրք են գլխագիրքս... Սահմի, Է., Զ., Ե., Դ.», 25ա՝ 6 սիւն, 3 տող՝ «Սահմի Ա., Նիսան, Սահմի ԻԹ.», 6 սիւն, 2 տող՝ «Սահմի Ա., Հոյն... Հոռի Ա., Զուկն», 26ա՝ 14 սիւն, 14 տող՝ «Վերադիր. Լ., ԻԲ. ... Հրոտից... Աղ., Այծ», 26բ՝ 15 սիւն, 14 տող՝ «Վերադիր, ԺԱ., Գ. ... Հրոտից, Այ. ... Աղ., Այծ», 27ա՝ 13 սիւն, 13 տող՝ «Կենդանակերպք, Գնել վաճառել... Զկն., Լ. ... Վ., Լ.»)։*

գ. 27ա-59ա Տօնացոյց մշտնջենաւոր եւ հատոր երկրորդ – *Աղիւսակաձեւ խորանքդ տունկք են ԼԶ. տարեգրաց... որոց բարեխօսութեամբն եւ մեզ Տէր ողորմեսցի (աղիւսակ՝ 28ա-53ա՝ «Համար ճաշոց է, Տարեգիրք են գլխագիրքս... 932, Շաբաթ Նաւակատիս եւ տօն Սրբոյ Էջմիածնի... 12, 13», 53բ-9ա՝ «Թուական համարքդ ցուցանեն զտողս տարեգրացն, թէ քանի է... 17, զԾնունդ եւ զՅայտնութիւն տե՛ս ի Նաւասարդի»)։*

Համմտ ձեռ. 2564, 1ա-133բ։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1ա Տե՛ս Տիտղոսաթերթի։
12ա Մինաս *դպիր մեղանչական,*
ազգ եւ սերունդ Կամսարական,
յորմէ սերեալ Արշարունեան
եւ ի նորոյս Սատաղբէգեան։
Աւարատեան Երեւանու՝
ի հայրենեաց նախնւոյն իւրոյ,

ի գաւառէս Աւշարունոյ,
որ եւ ի գեղջէն յԱւկուտոյ։
Ծնեալ ի գեօղն Բլըրու,
մէլիք կոչեալ վերջին դարու
ի գաւառիս մեր Սուրմալու,
եւ ի նահանգիս Սհաթու։
Թուին հազար եւ երկերքի,
չիսուն եւ մինն կցորդի (1802),
եւ ի չամսեանն Տրէի,
տխեղծ մատամբս աւարտի։


ՆՇՈՒՄ՝ *Ա. փեղկին սոսնձած ուղղանկիւն կարմիր կտաւին, 1ա-ին սոսնձած վարդագոյն թղթին՝ «3614», Ա. կազմաստառին մատիտով՝ «ունի միկրոֆիլմ», պհպ. Մ՝ «1159/3614», «1801. Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»։*

3615
ԻՍԱՀԱԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԵԱՆ, ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ


ԿՈՂԲ ՌՅԺԴ. – 1865

ԳՐԻՉ՝ ճեղինակը (1ա-215բ, 241ա-95բ, 329ա-53ա), Անանուն Ա. (216ա-40բ, 296ա-315բ,), Անանուն Բ. (324ա-8բ), Անանուն Գ. (316ա-23ա)։


ԹԵՐԹ՝ 353 (ունի գրչի անկանոն էջակալումներ՝ 1-42, որ է՝ 4ա-22բ, 25-52, որ է՝ 64բ-78ա). չգրուած՝ 2բ, 3բ, 9աբ, 12բ, 13ա, 15աբ, 150բ, 247բ, 323բ, 344բ։ ՊՐԱԿ՝ 1-45×8 (1, 45՝ 9, 3, 5, 7, 9, 40՝ 4, 4, 6, 8՝ 12, 10՝ 10, 42՝ 5)։ ՆԻՒԹ՝ ճեղնաւուն թուղթ, ճնշադրոշմով՝ 8ա, 9ա եւ այլուր՝ ութանկիւն ուղղանկիւն, կենտրոնում ոճաւորուած ձուածիրի մէջ՝ «N 6», եզրերով՝ «ФАБРИКИ СЕРГЕЕВА»։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18×10,5։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (15×9,5). սահմանագծուած մատիտով՝ 296ա-303բ, 324ա-8բ։ ԳԻՐ՝ շղագիր (տարբեր՝ նմուշ՝ 4ա, 316ա, 324ա), նոտրգիր (216ա-40բ, 296ա-315բ. նմուշ՝ 297ա). գրչափոխութեամբ։ ՏՈՂ՝ 17-23։ ԿԱՋՄ՝ կարմիր մոմլաթ, մէջբը սեւ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ դեղին թուղթ։ ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ՝ չգրուած թուղթ, մասն կազմաստառի։




Նմուշ 4ա



Նմուշ 316ա



Նմուշ 324ա



Նմուշ 297ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ – Վերջնազարդ՝ բուսական զարդանախշ (293ա)։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նոորգուած ժթ. դարում, կազմը նոորգման շրջանի, մէջբի կաշին ճաքած, ճեռնուած, լուսանցակողերը մաշուած, աղտոտուած, թերթերի վրայ՝ տեղ-տեղ թանաքաբծեր, ընդմէջ թ. 12-3ի 2 թերթ կտրած։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. 1. *3ա-215բ, 248ա-275ա* [Տիտղ.] Համառօտութիւն մեկնութեան սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, որ կոչի Հետաւան երկնաճեմ։ Հ[այր] Ի[սահակ] ա[բեղայ] Հ.(՞) Ալէքսանդրեան, ի Կողբ, Փրկչական 1865, Հ[այոց] ՅՌԺԴ. (=ՌՅԺԴ. = 1865)

– *4ա-8բ* Նախերգաւան խոհական ընթեռնուլոց – *Ի յօգուտ եւ ի զուարճութիւն ի հաստատեղուն ստուարաստեղծ տնկարմ ամենունակ եւ ընդոստացեալ ի հայկազուն շառաւղէ եւ վերընձիւղեալ բողբոջ եւ նորաբողբոջ, սաղարթախիտ, ծաղկաւէտ, բերունակ, պտղաւէտ, մրգալիր... որպէս ասէ մարգարէն ի բերանոյ մանկանց տղայոց եւ ստնտուաց հաստատեցեր զօրհնութիւն, որ եմ եւ մնամ ա[մե]նանուաստ ծառայ՝ յԱրցախ յաշխարհէն Հ[այր] ա[բեղայ] Իսահակ կ[ողբացի] Հ.(՞) Ալէքսանդրեան։*

– *10ա-1բ* Նախ[ա]դրութիւն գերազանց եւ հրէշտակական վարդապետին մերոյ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն – *Սուրբ հայրն մեր եւ երանաշնորհ վարդապետն Գրիգոր էր ի գաւառէն Անձեւեաց, որ է Քարպահն... կայ ի նոյն վանս Նարեկայ, հուպ եկեղեցւոյն, որ է կառուցեալ յանուն սրբոյ Սանդխտոյ։*

– *14ա* [Ոտանաւոր գրչից] – *Մո՛ւտ ի սենեակ սիրոյ սրբոյս Գրիգորի, / ճաշակեա՛ զիմաստն ըստ քում կարի,*

/ անմեղագիր լե՛ր ինձ յորդ սիրահարի, / որ ի բիւրոց բանից զմինն յայտարարի։

– 14աբ Դրունք յոգնաթախանձ բանից օգտակարաց, ապաշաւանաց, հոգէշահ խրատուց... հոգեմատեան հռետորի եւ հայոց փիլիսոփայի ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

ա. *16ա-7ա* Ջեռո՛ւ սիրտ իմ ի փորի իմում, / եւ ի խորհուրդս իմ վառեցաւ հուր: Այս է նշանակումն մեկնութեան աղօթից սրբոյ Գրիգորի Նարեկացւոյ՝ ի բիւրոց բանից զմինն յայտարարեալ. Գլուխ Ա. *– Ի սոյն գլխոջ ընդհանրապէս զպաղատանս իւր համեմատէ ընդ զոհից եւ խնկոցն Իսրայէլի եւ Դաւթի, հատուցման գաւտաստանին... ահ եւ գուբ եւ որոգայթ: Այն է, որ ասէ եսայ՛՛ ԻԴ. 17, որ են չարիք պատժոց։*

բ. *17բ-9բ* Գլուխ Բ. *– Ի սոյն գլխոջ նախ ցուցանէ, թէ Աստուած ոչ հայի ի բանս, այլ ի գործս... ճոխ՝ փարթամ, ամէնալի։*

գ. *19բ-20բ* Գլուխ Գ. *– Ի սոյն գլխոջ նախ ցուցանէ զԱստուած ստեղծիչ ամենեցուն: Բ.՝ թէ Աստուած բարձր է եւ խոնարհ եւ այլօք բազմօք գերազանցեալ... վհատել՝ արգահատել։*

դ. *21աբ* Գլուխ Դ. *– Ի սոյն գլխոջ նախ ցուցանէ յառաջին գլխոջ աղօթիցս, թէ որքան սոսկալի է սկիզբն առնել խօսելոյ ընդ Աստուծոյ... բարեգութ բարերարութեամբ խնամող. որ ունիս զամենայն եւ ի քենէ ամենայն, որում եւ քեզ փառք ի յաւիտեանս. ամէն։*

ե. *22ա-3բ* Գլուխ Ե. *– Ի սոյն գլխոջ նախ ցուցանէ զբարերարութիւնն Աստուծոյ ի կողմանէ ստեղծագործութեան եւ զանազան պատուոյ մարդոյն, եւ թէ մտածմամբ երախտեացն Աստուծոյ... յօդել՝ միաւորել սահման կսկծալի է մեղքն։*

զ. *24ա-5բ* Գլուխ Զ *– Ի սոյն գլխոջ նախ ցուցանէ, թէ հեծելն միայն ներքսապէս զղջմամբ, զի՞նչ օգուտ առանց արտաքին խոստովանութեամբ... կորիւն՝ գազանի ջուտ: Փրկեալ ազատեսցէ զմեզ Քրիստոս Աստուածն մեր, որ կեայ եւ թագաւորէ ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյն յաւիտեանս. ամէն։*

է. *25բ-7բ* Գլուխ Է. *– Ի սոյն գլխոջ նախ ընդդէմ վերոգրեալ յուսահատեցուցանողացն մեղաց կարգէ զզօրութիւն ապաշխարութեան... ոչ գիտեմ՝ շրջելով չեմ պատահում: Ընդ որում քեզ ամենասրբոյ երրորդութեանդ փառք յամենայն յաւիտեանս. ամէն։*

ը. *27բ-8բ* Գլուխ Ը. *– Ի սոյն գլխոջ նախ տարակուս, թէ զիարդ ելանելոց է ի մեղաց բանտէն վասն բազմութեանն... ա[ր]բշիռն՝ է արբեցող անպարկեշտ, որում վայել է փառք յաւիտեանս. ամէն։*

թ. *29ա-30ա* Գլուխ Թ. *– Ի սոյն գլխոջ նախ ցուցանէ, թէ զինքն որպիսի կերպիւ նախատեսցէ օրինակաւ անզարդ հարսն... յերկնից յերկինս կոչին հրէշտակք, զի ծնողա<ղա>պէս խնամեն, պահպանեն զմեզ, ընդ որոց եւ ի մէնջ մատուսցի Աստուծոյ օրհնութիւն՝ գոհութեամբ հանդերձ, յամենայն յաւիտեանս. ա<ն>մէն. ամէն։*

ժ. *30ա-1բ* Գլուխ Ժ. *– Ի սոյն գլխոջ նախ <նախ> քամահէ զյուսահատական զղջումն եւ զմոլեգնաբար <զղջու> մեղանչելն... արգելում՝ յետ գցել, արգելել... ոչ բացասէ զխոստացեալսն, որում փառք յամենայն յաւիտեանսն. ամէն։*

ժա. *32ա-4բ* Գլուխ ԺԱ. *– Յայսմիկ գլխոջ նախ նկատէ յառաջին ստեղծումն իւր Քրիստոսիւ եւ կարօղութեան նորա... լուսացօղն է՝ անյարգի, որպէս կայեն մեղանչեաց եւ լեզուագիր էր: Եւ այն ի ձեռն հաւատոյ Սուրբ Երրորդութեան, ընդ որս եւ մեզ Ջ. այց արասցէ պաշտելի եւ երկրպագելի Սուրբ Երրորդութեանն՝ օրհնեալ յամենայն յաւիտեանց. ամէն։*

ժբ. *35ա-7բ* Գլուխ ԺԲ. *– Յայսմ գլխոջ նախ ցուցանէ, թէ յառաջնում զղջման իբր յուսահատեցայ (ի յինն եւ ի տասն գլխոջ), աստէն յուսով աղաչեցից... երկակից՝ ցաւակից. ընդ որոց եւ մեք արժանասցուք զգաստութեամբ օրհնել զփառաւորեալն յամենայն արարածոց. ամէն։*

ժգ. *38ա-40ա* Գլուխ ԺԳ. *– Ի սոյն գլխոջ նախ առ Հայր Աստուած դիմէ՝ ցուցանելով գնա գթած եւ ընտանի ի վերայ ամենայն աղաչօղաց... եւ որք մաքրութեամբն պերճանային, այսինքն՝ օրինականքն, որ զարտաքին բաժակին եւ զսկաւառակին սրբէին, որում փոյթ է տալ փառս այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն։*

ժդ. *40բ-3ա* Գլուխ ԺԴ. *– Այս ճառս է դէմս Որդւոյ, նախ ճառագայթի նմանացուցանէ զՔրիստոս եւ զանկեղոյն ի ձեռս աւազակաց... զօգտողին զգանձն... քեզ իրաւացուցեր եւ զՔրիստոս ստեղծածն ի քեզ դարձուցեալ... որում քեզ ընդ Հօր եւ Հոգւոյն Սրբոյ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

ժե. *43բ-5բ* Գլուխ ԺԵ. *– Ի սոյն գլխոջ ընդհանրապէս զմոլորեալ ոչխարն առնու ինքեան օրինակ... զի որ զկատարեալ մաքրութիւն ունէր աւետարանիչն սուրբ Յոհաննէս, զի էր կոյս եւ մաքուր եւ աստուածային լանջոքդ փարելով՝ առաւել եւս մաքրեցու: Մեղաւոր եմ ի մանկութենէ իմմէ եւ սպասեմ քոյդ բժշկութեան եւ այցելութեան, վասն որոյ խնայեա՛ յիս ողորմութեամբդ քով, որ էս քաղցրութեան աղբիւր ճաշակաց միայն օրհնեալդ յամենայնի. ամէն։*

ժզ. *46ա-7բ* Գլուխ ԺԶ. *– Յայսմիկ գլխոջ ընդհանրապէս ցուցանէ զկարօղութիւն Քրիստոսի եւ վասն իջման ի դժոխս... որպէս յունկան բժշկութեան հակառակ քոյ համբարձելոյ, որպէս զականջն Մաղքոսայ եհար Պետրոս, եւ դու ցուցեր զերկայնմտութիւնդ. փառք յաւէտ. ամէն։*

ժէ. *48ա-9բ* Գլուխ ԺԷ. *– Ի սոյն ճառիս ընդհանրապէս խնդրէ ի Քրիստոսէ ոչ տալ զպատիժ եւ լուսաւորել խնդրէ զինքն, որպէս զկոյրն խնդրէ... կրեմ՝ քաշել եւ*

պատահել. աշխարհ ամենայն ճանաչէ քոյովդ դասակարգելովդ, որ եւ քեզ վայէլ է փառք յաւիտեանս. ամէն։

ժը. *50ա-2ա* Գլուխ ԺԸ. — *Բոլոր ճառս է <է> ի վերայ պէսպէս բժշկութեանց Քրիստոսի... վրիպակ՝ սխալմունք, ասա ջրգողութիւն. փառք եւ երկրպագութիւն անբաժանելի Սուրբ երրորդութեան յաւիտեանս. ամէն։*

ժթ. *52բ-3բ* Գլուխ ԺԹ. — *Սոյն ճառս է աղերս առ Քրիստոս վասն ազատելոյ զինքն ի պատժոց եւ յանդիմանութիւն առ ինքն վասն ոչ սանձահարելոյ զցանկութիւն իւր... զերեսացն ծածկոյթ՝ վասն զբացմանէ մեղաց խոստովանութեամբ առաջի Աստուծոյ ասի։ Փառք անեղ, անփոփոխ, անթուելի, անճառելի անուանդ քում Հօր եւ Որդւոյ եւ Սրբոյ Հոգւոյն անզրաւ փառաբանութեամբ յաւիտեանս. ամէն։*

ի. *54ա-6ա* Գլուխ Ի. — *Յայսմ գլխոջ յիշէ զաղօթ երից մանկանցն եւ Դանիէլի, եւ զբարձրութիւն մարմնոյ արհամարելով զանձն իւր... գաղտուրեմ՝ շինել եւ զօրացնել։ Վասն որոյ ներգործապէս փառաւորեմք զօրութեամբ իմանալեացդ Սրբոյ երրորդութեանդ այժմ եւ յաւէտ. ամէն։*

իա. *56բ-8բ* Գլուխ ԻԱ. — *Ի սոյն գլխոջ բոլորապէս ցուցանէ զանձին իւրոյ վատթարութիւնն զանազան կոչմամբ եւ նմանութեամբ... իբրեւ զամպ առաւօտեան եւ ցօղ վաղորդեայն... եւ փողոյ ունայնացուցիչ, որոց նմանեցուցանէ զկեանս իւր սուրբ վարդապետաս։ Օրհասական մահուամբ փառս մատուցանեմ Հօր եւ Որդոյ եւ Սրբոյ Հոգւոյն. ամէն։*

իբ. *59ա-60բ* Գլուխ ԻԲ. — *Ի սոյն գլխոջ այլաբանօրէն զինքն բազմաց անասնոց նմանեցուցանելով եւ խրատէ զանձն... ի մատից կայծակն ասի կարկեհան. ես՝ Ջ. 6։ Որպէս զի բժշկեցայց ի խոցուածոցս զգայութեանց ի փառս մեծութեան Հօրդ քոյ եւ Աստուծոյ մերոյ յաւիտեանս. ամէն։*

իգ. *61ա-3բ* Գլուխ ԻԳ. — *Ի սոյն գլխոջ ընդհանրապէս ցուցանէ զվտանգս բազմօրինակս ի մեղաց պատճառեալ... սլաք՝ չիտայ եւ շարուալից ցաւն։*

իդ. *64ա-5բ* Գլուխ ԻԴ. — *Ի սոյն գլխոջ հանրապէս ցուցանէ զինքն անարժան աստուածայնոց բարեաց պարգեւացն խնդրելոց... զի քեւ վերստին հաշտեալ յիս դարձցի... սրբեա՛ զիս եւ մաքրեա՛։ Կենարարդ ամէնեցուն կեցո՛ եւ զիս օրհնեալդ ի բարձունս զքեզ ընդ Հօր եւ Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս. ամէն։*

իե. *66ա-7բ* Գլուխ ԻԵ. — *Յայսմիկ գլխոջ նմանեցուցանէ զաշխարհս ծովու եւ զմարմին ալէծփեալ նաւու... գոգ՝ նաւի ամպարն եւ մէջտեղն։*

իզ. *68աբ* Գլուխ ԻԶ. — *Սոյն ճառս է ողբերգական ձեւ, որով ցուցանէ, թէ որպէս կանայք լան ի մեռեալս... նոյն ինքն, որ զայս բան տպաւորեաց ընդ երջանկացն պսակեսցի... զայս աղօթս ընթերցօղաց վասն իւր աղօթել տայ։*

իէ. *69ա-70բ* Գլուխ ԻԷ. — *Ի սոյն գլխոջ ցուցանէ զզօրութիւն մեղայական զղջման եւ զոչ օգտիլն Աքարայ եւ Սաւուղայ եւ Յուդայի, զի չակամայ զղջացան... եթէ առ այս խեղդ մահու... ինձ ժամանեցուցանես. տե՛ս Ժողով՛ Ժ. 4։ Որ եւ մեկնողիս բանիցն սրբոյն Գրիգորի հոգին ընդ ճշմարիտ ապաշխարօղաց վերահեդանասցի աստ շնորհօք եւ ի հանդերձելումն փառօք. ամէն։*

իը. *71ա-2ա* Գլուխ ԻԸ. — *Ի սոյն ճառիս զանչայաս ի մեղաց ի չայտ բերէ խոստովանաբար, եւ Աստուած կարօղ խոստովանի ի թողուլն զմեղս... բարեվիճակ հարթութեան զուգակշիռ հաւասարութեան... եւ բոլորն չիւրաքանչիւր մասունս։*

իթ. *72բ-4բ* Գլուխ ԻԹ. — *Ի սոյն ճառս է ի դէմս Որդւոյ, որ եւ խօսի ընդ Քրիստոսի եւ ցուցանէ, թէ մեք չաւուրն եօթանեսնեկի եօթն թողուլ պարտեմք չանցաւորաց մերոց... եթէ զանդունդս առ երկինս փոխես... այլ որպէս կարես զանդունդս առ երկինս փոխել, զխաւարն ի լոյս... որում քեզ փառք յաւիտեանս. ամէն։*

լ. *75ա-6բ* Գլուխ Լ. — *Ի սոյն ճառիս հանրապէս ցուցանէ զզօրութիւն զղջման եւ հետին ոգեվարութեան համեմատ զդառնութիւնս մեղաց... չիք ի քեզ մասն խաւարի, եւ ոչ է բարութիւն առանց քո... ըստ ըղձից սրբոյս Գրիգորի զլոյս շնորհաց եւ իմաստութեան յաւիտեանս. ամէն։*

լա. *77ա-9ա* Գլուխ ԼԱ. — *Ի սոյն ճառիս գովէ զհաւատն Աբրահամու, Սաբայ եւ Աննայ, եւ թէ Աստուած բաւական է ամենայնի... երկրածինք ասի ստեղծուած չաշխարհիս... ընդ արդիւնաւորաց նախասահմանեա՛, որում քեզ վայէլ է փառք եւ երկրպակութիւն չաւիտեանս. ամէն։*

լբ. *79բ-81ա* Գլուխ ԼԲ. — *Ի սոյն ճառիս նախ ցուցանէ զինքն չայտնեալ ի ԼԱ. ճառի չիշեցեալ սրբոցն Աբրահամու եւ այլոցն... անեղծական՝ անջնջելի։ Եւ քեզ միայնոյ պատճառիդ եւ միոյդ ի միոյ պատճառ է եւ ունողիդ զմիոյ պատճառ, որում փառք յաւիտեանս. ամէն։*

լգ. *81բ-3ա* Գլուխ ԼԳ. — *Յայսմիկ գլխոջ նախ խնդրէ ի Քրիստոսէ եւ զիւր աղօթան խառնել ընդ անուշ իւղոյ իւղաբերիցն եւ չօծման իւղն Մագդաղինացւոյն... զքեզ աւետարանեաց ճշմարիտ Աստուած... եւ իբր իմն առ Հոգին Սուրբ վերաբերէր... եւ առ Հոգին, որ հայհոյութիւն առ նա անքաւելեքեան, որում փառք յաւիտեանս. ամէն։*

լդ. *83բ-5ա* Գլուխ ԼԴ. — *Սոյն ճառս ընդհանրապէս ունի զերեք մասունս. առաջինն է աղաչանք առ Հոգին Սուրբ ի թիկունս հասանեալ ի ժամու քարոզութեան... կերպաւորանալն ասի զբնութիւն մեր առնուլն։*

լե. *85ա-6բ* Գլուխ ԼԵ. — *Ի սոյն ճառիս հանրապէս խօսի վասն աստուածայնոյ մարդասէր կոչելոյն եւ վասն պարգեւաց մարդանալոյն Քրիստոսի... նի[ւ]թոյ խորանիս՝ իմանայ զմազ այծեաց եւ զմորթ խոյոց, որով առաստաղն խորանին ծածկեցին. տե՛ս ելից Լե. 22։ Ընդ որում,*

աղաչեմ փրկել զհոգիս ի սեւութենէ մեղաց, որպէս եւ եկիր ի խնդիր կորուսելոյս:

լզ. *87աբ* Գլուխ ԼԶ. — *Ի սոյն ճառիս խօսի զանոխակալութենէն Քրիստոսի, թէ որպէս ոչ էապան զխաչահանուան... կապէնն է պոռնկաց վարձն: ...որ եւ մեզ յուսացելոյս եղիցի վէմ պատուական ըստ այնմ. Պետրոսի Բ. 7. ամէն:*

լէ. *88ա-9ա* Գլուխ ԼԷ. — *Ի սոյն ճառիս նախ ցուցանէ զվերոյգրեալ զօրեղութիւնսն, թէ յոյժ զօրաւորք են ի հալածել զմեզս եւ զյուսահատութիւն... զխեղդ վտանգիս... աղաչեմ զքեզ, որ խաչիւդ քո զիս ազատեսցես ի խեղդմանէս... տո՛ւր ողորմութիւն քո որդւոյս սատակման յաւիտենական մահուամբ, որ է մահ անմահ:*

լը. *89բ-90ա* Գլուխ ԼԸ. — *Ի սոյն գլխոջ, որ է երեք մասն, առաջին մասն է ընդդէմ մասանց մեղաց, զոր ի վեցեր<ր>որդ գլխոջն թուեաց... ոչ միայն ըստ աստուածութեան, այլ եւ ըստ մարդկութեան միեւնոյն անձամբ:*

լթ. *90բ-1բ* Գլուխ ԼԹ. — *Ի սոյն ճառիս նախ ցուցանէ, թէ զառաջին անմեղութեան կերպարանն լքի... սակայն եւ դու գթա՛ ի յիս, մարդասէ՛ր Տէր, եւ քեզ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

խ. *92ա-4ա* Գլուխ Խ. — *Նախ ի սոյն ճառիս ցուցանէ զհանդէս ահաւորութեան զկնի մահուանն, զսուրբ եւ զլոյս օրն սրբոցն յուսոց... եւ անգիտութեան եւ լուսաւորեա՛ զմիտս իմ եւ այլն: Փա՛ռք եւ բարերարութիւն պարգեւաբաշխ Հոգւոյն Սրբոյ. ամէն:*

խա. *94բ-5բ* Գլուխ ԽԱ. — *Սոյն ճառս է գիշերային աղօթամատոյց առ Որդին Աստուծոյ, յորում նախ ասէ, թէ ի ծագել անստուեր նշուլից ողորմութեան քո... զի լի է Քրիստոս աստուածութեամբ եւ մարդկութեամբ գերբնականօք եւ կատարելութեամբք:*

խբ. *96ա-7ա* Գլուխ ԽԲ. — *Յայսմիկ ճառիս նախ ցուցանէ, թէ դու Յիսուս մերձ ես ի հեծութիւնս ամենայն եղելոց... նմանապէս եւ ինձ կարես. կամիմ, սրբի՛ր ի մեղացդ, եւ նոյնժամայն փրկիմ ի բորոտութենէ մեղացս:*

խգ. *97աբ* Գլուխ ԽԳ. — *Ի սոյն գլխոջ նախ ցուցանէ զբժշկութիւն Քրիստոսի, որ ոչ կարօտանայ տեղոյ եւ ժամանակի... եւ բոլոր բարեաց խոստումն է կտակ քոյ. տե՛ս եւ զայն 3 Թգ՛՛ Բ. 5.8:*

խդ. *98ա-100բ* Գլուխ ԽԴ. — *Ի սոյն գլխոջ հանրապէս խօսի ի վերայ առաքմանն Հոգւոյն Սուրբ, զՈրդին ի չարչարանս... եւ տեսակաց անհոտից մասանց եւ բոլորից:*

խե. *101ա-2բ* Գլուխ ԽԵ. — *Ի սոյն գլխոջ ցուցանէ սահմանաւրէն զնշանակութիւսն մեղաց եւ զթեթեւագոյսն... կարիճն՝ այն, որ թոյնն ի տուտն ունի:*

խզ. *103ա-4բ* Գլուխ ԽԶ. — *Ի սոյն գլխոջ հանրապէս ցուցանէ զշնորհ եւ զպատիւ մարդւոյն եւ խօսի ի վերայ զօդուածոց... զպատիժ մեղաց եւ այլն: Որում անբաժանելի Սուրբ երրորդութեանդ փառք անսահման թագաւորութեանդ յաւիտեան յաւիտենից. ամէն:*

խէ. *105աբ* Գլուխ ԽԷ. — *Սոյն ճառս ունի երկու մասունս. ի նախկինումն ցուցանէ զՄանասէի զղջումն եւ երկրորդումն՝ զղջումն անառակին... եւ նոյն բոլորն յաւիտենայն մասունս նշխարեաց:*

խը. *106ա-9ա* Գլուխ ԽԸ. — *Ի սոյն գլխոջ ցուցանէ զանկումն Սողոմօնի յգգուշութիւն ինքեան եւ յայտնէ զողորմութիւն Աստուծոյ առ նա եւ անտարակուսելի զթրկութիւն... ոչ միայն զաստուածութենէ Հօր, այլեւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:*

խթ. *109ա-10բ* Գլուխ ԽԹ. — *Ի սոյն ճառիս ընդհանրապէս խօսի ի վերայ բարերարութեանց Աստուծոյ... որպէս Դաւիթ ասէ՝ Օրէնք Տեառն յաւիտեան մնայ:*

ծ. *111ա-3բ* Գլուխ Ծ. — *Ի սոյն գլխոջ, թէ արդարութիւն առանց մեղաց խոստովանութեան ոչ օգնէ, եւ մեղքն ի խոստովանիլն ոչ վնասէ... առ պատիւն արքայական՝ ըստ այնմ, թէ արար զմեզ Աստուծոյ մերոյ թագաւորս եւ քահանայս. Յայտ՛՛ Ա. 6:*

ծա. *114ա-6ա* Գլուխ ԾԱ. — *Ի սոյն գլխոջ ցուցանէ, թէ ոչ է յուսալի առ երկրաւորս, այլ առ Աստուած միայն... վասն որոյ եւ մեք հասարակ վճռոյ եկեղեցւոյ հետեւելով զայն հաւատամք. գոլ աղօթք Մանասէի:*

ծբ. *116բ-8բ* Գլուխ ԾԲ. — *Ի սոյն գլխոջ ասէ ի դէմս Որդւոյն Աստուծոյ, յորում յիշէ զպէս-պէս բարերարութիւնսն, զոր ընկալաւ մարդեղութեամբն... թէ ունիմք համարձակութիւն ի մուտս սրբութեանց արեամբն Յիսուսի, մատիցուք ճշմարիտ սրտիւք եւ այլն:*

ծգ. *119ա-22բ* Գլուխ ԾԳ. — *Սոյն ճառս ի դէմս Որդւոյ է, յորում նախ ցուցանէ, թէ այնքան կարօղ ես Որդի Աստուծոյ, որ ի ներհակաց զներհական առնես... բարի գործով բաւական ի փրկել զյուսացօղսն:*

ծդ. *123ա-6ա* Գլուխ ԾԴ. — *Եւ սոյն ճառս է ի դէմս Որդւոյ, յորում նախ ցուցանէ զՔրիստոս լոյս աչաց եւ մտաց իւրոց... առ Աստուած գոչեսցեն ընթերցօղք աղօթիցս զմիտս իմ իւրեանց բերանովն խոստովանելով:*

ծե. *126բ-30ա* Գլուխ ԾՋ. *(= ԾԵ.)* — *Եւ սոյն ճառս է ի դէմս Որդւոյ, յորում նախ ցուցանէ, թէ ոչ գոյն իւր նման մեղաւոր ի մէջ մարդկան... եւ ստեղծիչ չարին մեղաց, զորս եւ ինձ դատախազս կացուցի:*

ծզ. *130բ-3բ* Գլուխս է ուղիղ ԾՋ. — *Ի սոյն գլխոջ նախ ցուցանէ մանրամասնաբար զպատուղս չար գործոց ըստ իւրաքանչիւր զգայութեանց... եթէ որպէս մահու գանից ոչ են մատնելոց, զարմանք է:*

ծէ. *134ա-5բ* Գլուխ ԾԷ. — *Եւ սոյն ճառս է ի դէմս Որդւոյ, յորում նախ ցուցանէ զգերազանցութիւնն Քրիստոսի զանազան անուամբք... այլեւ յիշեսցես եւ համարեսցես իբր գրելով ի գպրութիւն յիշողութիւնդ:*

ծը. *136ա-8ա* Գլուխ ԾԸ. — *Է եւ այս ճառս է ի դէմս Որդւոյ, յորում նախ ցուցանէ, թէ ամենայն օրհնեալք ի*

քէն միայն օրհնեցան... գտեալ սատանայ ինքեան ծառայացուցանէ, զի որ առնէ զմեղս, ծառայէ մեղաց:

ծթ. *138բ-41ա* Գլուխ ՃԹ. — *Եւ այս եւս է ի դէմս Որդւոյ, յորում նախ ցուցանէ աղաչանք, մեղականք մեղաւորաց... մատո՛ ինձ, ոգի՛ փրկութեան. ըստ այնմ յերկիւղէ քումմէ յղացեալ երկնեցաք եւ ծնաք զհոգի փրկութեան, եւ այլքն յայտնիք են:*

կ. *141ա-5ա* Գլուխ Կ. — *Եւ այս գլուխ է ի դէմս Որդւոյ, եւ իբր կցորդ միւս անցեալ գլխոյ ներհակ ձեւով... յորում զանճառելի պարգեւս բարեացդ առատապէս ցուցեր բժշկութեամբդ եւ այլովք:*

կա. *145բ-8բ* Գլուխ ԿԱ. — *Եւ այս գլուխ է իբր մնացորդ անցելոցն, զի անդ եւ աստ կարգաւ գլխոյն սաղմոսին ժողովէ զյանդիմանիչս իւրեան... եւ մեզ քեզ նման դիպեսցի պաղատեւել առաքինութեամբ, ո՛վ սուրբդ Գրիգոր:*

կբ. *149ա-54բ* Գլուխ ԿԲ. — *Ի սոյն գլխոջ ցուցանէ զամենակարողութիւն Քրիստոսի ի զանազան արարեալ սքանչելեացն եւ ընդդիմակացն բնութեան... եւ զմառախուղ ի տեղի խանձարրոյ. Յօբ ԼՐ. 9:*

կգ. 155ա-6բ Գլուխ ԿԳ. — *Ի սոյն գլխոջ նախ ցուցանէ, թէեւ յայլոց մարգարէից ընդ սաղմոսից վկայութեանց մասն ինչ յօգեցից... այլ դարձուսցես, այսինքն՝ զսուր բարկութեանդ որպէս առ Դաւիթ ի կալն Ուռնայու. ի Մնացո՛ Իւ. 27. եւ զօծումն կենաց շնորհիդ ինձ պարգեւեսցես... փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

կդ. *157ա-8բ* Գլուխ ԿԴ. — *Եւ սոյն գլուխս է ի դէմս Որդւոյ, յորում նախ ցուցանէ, թէ գովասանական կերպիւ մատչի առ Քրիստոս... եւ աջակողմեան աւազակին ինձ ի փրկութիւն եւ քեզ ի հաճութիւնն:*

կե. *159ա-61բ* Գլուխ ԿԵ. — *Ի սոյն գլխոջ նախ պարսաւէ զինքն՝ իբրեւ զգլուխ չարաց... որ այնքան վհատութիւն, այսինքն՝ ոչ այնքան յուսահատիմ վասն մեղացս բազմութեան եւ ոչ այնքան տագնապէ զիս յուսահատութիւն գոյժ, որչափ փրկութեան աջդ զիս քաջալերէ:*

կզ. *162ա-4բ* Գլուխ ԿԶ. — *Եւ այս գլուխս է ի դէմս Որդւոյ. նախ՝ ցանկայ, թէ որ ոք այսու աղօթիցէ, թէ մեղաւոր իցէ եւ թէ արդար եւ ինքն հաղորդ գոցի աղօթից նոցա... յորժամ չիշեմ զչարիսն, զորս գործեցի եւ ի բարեացն, յորոց հեռացայ:*

կէ. *165ա-7ա* Գլուխ ԿԷ. — *Ի սոյն գլխոջ ցուցանէ նախ զիրաւունսն Քրիստոսի, որ ի մարդս եւ ի սատանայ... ոչ եւս գոյ աջ պաշտպանօղ եւ ձեռն այցելու, այլ միայն դու ես ապաւինութիւն:*

կը. *167ա-9ա* Գլուխ ԿԸ. — *Ի սոյն գլխոջ նախ ձեռնարկէ ի նորոգ լաց: Բ. զպատճառն լալոյն ցուցանէ բացասական կերպիւ... որ փառաւորեալն է ընդ Հօր եւ Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

կթ. *169բ-72ա* Գլուխ ԿԹ. — *Նախ ցուցանէ զինքն իբր զկապար ի քրայս Աստուծոյ սիրոյն հալեալ եւ ոչ պարզեալ... եւ զկենացն հնար փրկելոյ եւ նորոգելոյ դու միայն ունիս եւ գիտես, եւ քեզ փառք ի յաւիտեան յաւիտենից. ամէն:*

հ. *172բ-4բ* Գլուխ Հ. — *Ի սոյն գլխոջ նախ ցուցանէ, թէ ոչ է հնար փրկութեան յեղականաց սրբոց ի հնոց եւ ի նորոց առանց Աստուծոյ... եւ վասն որոյ առ Քրիստոս դարձուցեալ զբանն առ դու ես կեանք, եւ քեզ լիցի հանգիստ. ամէն:*

հա. *175ա-9բ* Գլուխ ՀԱ. — *Ի սոյն գլխոջ նախ բարեբանէ զբան Աստուծոյ, որոց վերջին հաստատութիւնն քան զմարդկօրէն գթումն նոցին գերազանց եղեւ... ըստ այնմ տեսանեմ այլ օրէնս յանդամս իմ. Հռոմ՛ է. 23:*

հբ. *180ա-2բ* Գլուխ ՀԲ. — *Այս գլուխս է բարոյական խրատ առ կրօնաւորսն, որոց խնդրանօք շարագրեաց զբանք աղօթիցս... ուժգին՝ խիստ զօրէզ:*

հգ. *183ա-6ա* Գլուխ ՀԳ. — *Այս գլուխ է առ օրն մահու, յորում նախ ցուցանէ զՔրիստոսի կարօղութիւնն ի յուսահատութեան ժամու մահուան եւ զայն յօրհնութեան փոխելով... տո՛ւր մեզ, Տէ՛ր, զողորմութիւնս քոյ եւ զփրկութիւն քո:*

հդ. *186բ-8բ* Գլուխ ՀԴ. — *Յայսմիկ գլխոջ նախ ցուցանէ զամենակարողութիւնն Քրիստոսի, յանակնկալն ժամու ի պակիլ վաստակոց մերոց... եւ զպատժականսըն հաւասարես կարկտով, եղեմամբ եւ սառնամանեօք:*

հե. *189ա-93ա* Գլուխ ՀԵ. — *Սոյն գլուխ է նախադրութիւն առ դաւանութիւնն առաքելական, որք Հոգով Սրբով կանոնեցին զսահմանս հաւատոյ... եւ զերեւելի ձեւս նիւթական ըստ օրինակի մարմնոյ:*

հզ. *193բ-5ա* Գլուխ ՀԶ. — *Ի սոյն գլխոջ սեռօրէն ցուցանէ զանփոփոխութիւնն Աստուծոյ եւ զկարօղութիւն մեծութեան նորա... որ նմա առաջի կայր, յանձն էառ զխաչ, արհամարեաց զամօթ. եւ այլն:*

հէ. *195բ-200բ* Գլուխ ՀԷ. — *Այս ճառս է քրիստոնէաբար կտակ ի վերայ Աւագ ուրբաթի չարչարանացն Քրիստոսի, յորում նախ ցուցանէ զգերազանցութիւնն աւուրն ի վերայ այլոց աւուրց... այլ նա անէծք կոչեցաւ, վասն զի աղբիւր օրհնութեան էր:*

հը. *201ա-3բ* Գլուխ ՀԸ. — *Ի սոյն գլխոջ նախ խնդրէ սեռօրէն, զի մի՛ ունայն լիցին անցեալ ճառ ի Աւաք ուրբաթի կիրք եւ չարչարանք Քրիստոսի եւ ոչ ի յայտ բերել զմեղանս իւր... զի անքննելիդ եկեալ բնակեսցի ի հոգի եւ մարմին իմ:*

հթ. *203բ-7բ* Գլուխ ՀԹ. — *Ի սոյն գլխոջ ընդհանրապէս ցուցանէ, թէ միտք մարդկան են ի խնամս չարին, խօսի եւ ի վերայ ահեղ դատաստանին Աստուծոյ... ի խորոց անդնդոց դարձուցիլ եւ զայն. տե՛ս Իմաս՛՛ Բ. 11:*

ձ. *208աբ* Գլուխ Ձ. — *Սոյն ճառս է գովասանական եւ աղերսական բան առ սուրբ Աստուածածինն՝ նկատմամբ աւուրն դատաստանի, զորմէ ճառելով տագնապեցայ... եւ սակայն Աստուած է տուող Թողութիւն:*

նա. *209ա-12բ* Գլուխ ՁԱ. — *Ճառս այս է ի դէմս Քրիստոսի, առ որ զսուրբ հրէշտակսն միջնորդ եւ բարեխօս արկանէ զկնի սրբուհւոյ Աստուածածնին... ուրախութեամբ սրտի յիս բերկրեսցի:*

նբ. *213ա* Գլուխ ՁԲ. — *Սոյն ճառս է գովասանութիւն առ սուրբ առաքեալսն եւ առ սուրբսն՝ առ ի բարեխօսելոյ վասն տարագրութեան իւրոյ եւ պատշաճօրէն զկնի հրէշտակաց կարգի... եւ զայս սրտիւք նոցա չափել ի պատիւ նոցա:*

նգ. *213բ-5բ* Գլուխ ՁԳ. — *Ի սոյն գլխոջ հասարակաբար բարի խնդրէ ինձնամեաց եւ այց առնել ամենայն վշտաց եւ առ արեգական համեմատեալ, գերազանց ցուցանէ զզօրութիւն Հոգւոյն Սրբոյ... բայց ըստ Տեառն հրամանի անվարձ է, բայց վարձ ունի այն. տես Հռոմ՛ 4. 4:*

նդ. *248ա-9ա* Գլուխ ՁԴ. — *Ի սոյն գլխոջ նախ ցուցանէ զկարօղութիւն Քրիստոսի ի զանազան անուանց ներգործութեանց... եւ հետեւեալ լուսովք արեգական շնորհօք քո կատարելապէս լուսաւորեցայց:*

նե. *249բ-50բ* Գլուխ ՁԵ. — *Ի սոյն ճառիս խօսի վասն կարեաց գործոց եւ ճանապարհի նաւելոյ եւ յարհաւիրս ջրհեղեղին... եւ ի խաղաղ կեանսդ զիս հասուցանելով:*

նզ. *251ա-2բ* Գլուխ ՁԶ. — *Ի սոյն գլխոջ նախ գովէ զողորմութիւնն Աստուծոյ յանակնկալ ժամու... ի կողմն ողորմութեանդ նայիմ:*

նէ. *253ա-5ա* Գլուխ ՁԷ. — *Ի սոյն գլխոջ ցուցանէ, թէ Աստուած ոչ կամի զկորուստ ումեք եւ թէ մինչ դու ի ծերութիւն եւս օգնական է... ի ժամու մահուանս արդէն աղաչեմ զքեզ մի՛ մոռանասցիս. եւ այլ հետեւեալքն յայտնիք են:*

նը. *255բ-6բ* Գլուխ ՁԸ. — *Ի սոյն գլխոջ նախ յիշէ զարտասուսն Սամուէլի... որպէս թագաւորեսցեն ի մահուանդ եւ այլն. տե՛ս՛՛:*

նթ. *257ա-8ա* Գլուխ ՁԹ. — *Սոյն գլուխս միայնակ է գովութիւն ի վերայ զանազան անուանցն Քրիստոսի առ ի շնորհակալութիւն աւարտեցման անցելոց աղօթիցն... կամ թէ անյուսալի բարեաց, ըստ նմանութիւն ճանապարհի յաւիտենական կենաց՝ դու ես ելք, սանդուխք եւ հնարք:*

ո. *258բ-60ա* Գլուխ Ղ. — *Ի սոյն գլխոջ հանրապէս ցուցանէ նախ, թէ Քրիստոս է ապաքինութիւնն զանազան ախտից... ի պարտուց մեղաց եւ զնորոգութիւնն շնորհաց տեսցես աստանօր ի հառաչանս:*

ղա. *260բ-1բ* Գլուխ ՂԱ. — *Ի սոյն գլխոջ նախ ցուցանէ, թէ որպէս հրէշտակքն երկնչին յԱստուծոյ... ընդ որում հրէշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քոյ՝ ի պահել զքեզ:*

ղբ. *262ա-3բ* Գլուխ ՂԲ. — *Սոյն ճառիս առաջին մասն է գովութիւն անուանցն Քրիստոսի... որովք ի քեզ զօրացեալ՝ քեւ նորոգեսցի զատեալ ի մեղաց անմահ կենդանութեամբ ի յարութեան արդարոց:*

ղգ. *264ա-5ա* Գլուխ ՂԳ. — *Ի սոյն գլուխս առաջին մասն է գովութիւն անուանցն Քրիստոսի: Բ. է խնդիր ի Քրիստոսէ պահել զինքն յերկիւղէ գիշերոյ եւ ի տիւէ չարէ... եւ զինքն խաչն յօրինեալ ըստ կերպի նախատապին Քրիստոսի:*

ղդ. *266բ-72բ* Գլուխ ՂԴ. — *Ի սոյն գլխոջ, որովհետեւ բազումք են պարունակեցեալքն եւ ընդաձակ է ճառս, որ է աղօթք ի վերայ սրբալոյս իւղոյն միւռոնի... սաղմոսն է երգ օրհնութիւն, սրբաբանութիւն ասի սաղմոսն: Այս իմ ձեռնարկութիւն ի սրբութիւն եւ այս արձանագրութիւն ի սրբուհոյն սրբութեան: Սուրբ ձեռնարկութիւն կոչէ զիւր աշխատութիւն եւ արձանագրութիւն առ սրբուհոյն սրբութիւն կոչէ զսրբալոյս միւռոնին, ի վերայ որոյ զայս աղօթական եւ մեկնողական թարգմանութիւնս արձանագրեաց իբրեւ զգաւանութիւն:*

ղե. *273ա-5ա* Գլուխ ՂԵ. — *Ի փայտ երջանիկ բարեբաստութիւն ժամարարին խորհուրդ աստուածութիւն աղաչանք եդեալ... կամուրջն՝ է Քեօրֆի կամուրջ: Որ եւ մեզ արժանի արասցէ Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյն միշտ օրհնեալ է ի յաւիտեանս:*

2. *275բ-91ա, 294ա-5ա* Հատոր երկրորդ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հրէշտական վարդապետի ի նոյն յօրինողէ, յամի 1865 Տեառն, Հայոց ՌՅԺԴ. (1865)

ա. *276ա-82ա* Գլուխ ՂԶ. — *Ի սոյն գլխոջս բազում ինչ եւ գրեթէ բոլորն է պատմաբանական վասն Ապարանից Սրբոյ Խաչին, որ յետոյ հռչակաւոր վանք կառուցեալ յանուն սուրբ Աստուածածնին... շուխ շնորհաց՝ ցօղիչ շնորհաց, է Աստուածածինն, բացաձայնեսցուք՝ մեկնաբանեսցուք:*

բ. *282ա-3բ* Լուծմունք առընթեր դրութիւն սակաւ սոփեստի՝ յարակցեալ հիւսի ճառս ներբողի լուսակազմ խաչիդ նշանի — *Առընթեր՝ մերձ, սոփեստի՝ իմաստնոյ... վրնջողութիւն՝ ձիոյ խրխնջալն է, այլանդակական՝ աճալաճայիպ:*

գ. *283բ-4ա* Հետեւեալս են դարձեալ գովասանութիւն ի վերայ սրբոյ խաչին, ըստ կարգի այբուբենից շարադրեալ ի սրբոյ վարդապետէն — *Ամէնանկատ՝ ամէնահայեաց, բարեբանեալ՝ օրհնաբանեալ... փայլակնաշոյլ՝ լուսատու պայծառ:*

դ. *284ա-5բ, 286բ* Երկոտասան անուամբ նշանակ խաչին — *1. բոցանշոյլ՝ զմրիւխտն, 2. Սատիօն՝ որ է սէյլանն... միջնորդ՝ բարեխօս, ամուր՝ պինդ, զայիմ, ուռճանալն՝ է փարթամանալ, ճիռ՝ քնթեռն, մարգարիտ՝ մարգարիտ ակն:*

ե. *286բ-7բ* Գլուխ ՂԹ. [Յաղագս երկից Գրիգորի Նարեկացւոյ] — *Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն փոյթ յանձին կալեալ պատուասիրեալ զբան Աստուծոյ զկնի սրբոյ խաչին եւ սրբուհւոյ Աստուածածնին եւ սրբոց առաքելոց եւ աշակերտացն Քրիստոսի... վասն տայ*

զխրախոյս բանական եկեղեցւոյ յասիցն իւրում այսպէս։

287բ գրչից՝ «Բարձրագանտակ (՞) եւ բարձրացիր Սիօն հոգեւոր, դիմաւոր, անձնաւոր, խոհաւոր եւ խորհրդաւոր։ Գիտելի է, զի առ բանականս ասեմք ողջ լե՛ր եւ առ անզգայսն բարձրացի՛ր»։

զ. *288ա-91ա* [Բացատրութիւնք բառից] – *Հոգեւոր, դիմաւոր, անձնաւոր կոչէ եւ զբանական՝ եկեղեցի հաւատացելոցն, բայց հոգեւորն, փոխանակ մարմնաւոր... ոստիկան՝ թէ ֆռիշճի, քննիչ, վերակացու։*

– *291բ Վասն սրբոյն Յակոբայ հաւա<ւա>տոյն կցորդեալ եւ կարասցուք ի փառատրութիւն մեծիդ Աստուծոյ ժամանել եւ զերրորդական միութեան էիդ փառաւորեալ օրհնառաք ձայնիւ (միութիւն ասէ վասն էութեան) եւ երրորդութիւն վասն անձանց, որ է Հայր եւ Որդի եւ համագոյ Սուրբ Հոգի, որում եւ մեք ընդ սրբոյն Գրիգորի համաձայնելով՝ վերերգեսցո՛ւք զփառս եւ տացո՛ւք զպատիւ միոյն Աստուծոյ եւ երրորդական անձնաւորութեան խոնարհական երկրպագութեամբ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

է. *293բ-5ա* Գլուխ Ճ. Նորին Գրիգորի ճառոզ ի գալուստ Սուրբ Հոգւոյն – *Այս խորագիրս է իւրն սրբոյն Գրիգորի եւ պատճառ քարոզիս է սէր նորին առ Հոգին Սուրբ Աստուած... ըստ հայցուածոց սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ եռարփեան, հրէշտակական վարդապետի. ամէն։*

Բ. *1աբ, 216ա-47* [Բանիք զանազանիք]

1. *1աբ* [Անուանիք ականց պատուականաց] – *Հ[այերէն]՝ Սարդիոն եամանի, որ է՝ կարմիր սէյլան, եբր.՝ ստամ, լ[ատիներէն]՝ Սարդիուս... 12. եբ[րայերէն]՝ եասպաւ, որ է՝ յասպիս, ըստ եօթանասնից՝ Բիւրեղ։ Լ[ատիներէն]՝ Բերիլլուս, որ է՝ բիլօր կապտաղաշ կանաչ ակն։*

2. *216ա* Յակգբնական գլխոյս եկեսցէ ի լոյս, / պետացն խրախոյս, որք եղեն մեզ յոյս, / զէն հաստատէ զայս, / որովք եմք մեք կոյս (այսչափ)։

3. *216ա* [Յաղագս աշակերտացն Քրիստոսի] – *Ա. Սուրբն Պետրոս՝ վէմ հաւատոյ մի՛ ասէ հայր իբր արմատոյ... ԺԲ. Մատաթէաս մարմնոց յառնել, / ընդ Տեառն ասէ թագաւորել... սոքօք զինիմք հերձելոց ի սուրբ հաւատ յողջյողջելոց։*

4. *216աբ* Առ առաքեալսն – *Յամպոց երկնից ցօղ անձրեւաց, պտղաբերիչք մեր պարտիզաց, / սիւն էք ամպոց քան զաստեղաց, ցուցօղք երկրին այն աւետեաց... զի ըստ ձերոյդ պատուոյ արժան, յաւարտ հանցո՛ւք զայս ներբողեան։*

5. *216բ-7բ* [Առ առաքեալսն. Ա-Ք] – *Ամոռք անեղինս տեղիք հանգստեան, բանալիք դրախտին բնաբան մատեան... փեսայի բանին անմէջ սիրական, քաւել զմեր հոգին դի՛ք սրտի զղջան։*

6. *217բ* Անկիւնաւոր – *Յամոռ անգին կարգիւ ուրախ, անգին կենօք լինիք խրախ, / կարգիւ լինիք սիրոյն փարախ, ուրախ, խրախ, փարախ, անվախ, / բարի պատւարք եղե՛ք տրպիս, պատւարի լերո՛ւք այս իմ խղճիս, / եղէ՛ք այս իմ ճմլօղ սրտիս, տրպիս, խղճիս, սրտիս վատիս։*

7. *217բ-8բ* Ջուրն ի լուացումն աւազանին, արիւն յարբումն խորհրդին, / յայտնեալ կողին զխոցուած տիգի, կայլակ աղբերցն կրկնակի... զի անդ եւ կոյսք իմաստնական հագիւ գտնեն զիւղ բաւական։

8. *219ա-26ա* [վ.՝ Այս է ներբող ի վերայ սրբոյ կուսին Մարիամայ] – *Աղաչեմ զքեզ, Աստուածածին կո՛յս, շնորհիւ դու հրէշտակ, մեղաւորաց յոյս... որպէս զի իղձն իմ անդէն լնանի՛ւ երանուհւոյ ելովս ընտանի։*

9. *226բ-31բ* Հրեշտակաց, առաքելոց, մարգարէից, վարդապետաց – *Ով անարատ, պարզ հայելիք եւ վճիտք, / յամէն դիմաց սուրբ լուսափայլ մարգարիտք... զոր ինչ առնուք պարքեւ սիրոյ / եւ մեզ հանջիք մասն բարւոյ։*

10. *232ա-7ա* Առաքելոց եւ սրբոց – *Տէր բարերար, բազմապարգե՛ւ թագաւոր, / պատսպարան կենաց մերոց հպատոր... ի չար ժանեացն գազանաց ազատօղ, / ի վիշապաց ժանեաց ի կեանս կորզօղ. / եւ այլքն յայտնիք են։*

11. *237ա* Ի վերայ չորս եղանակաց – *Ամառն կենցաղս ժամ վաստակոց, աշունն հաւատք, արդեանց գործոց... աշուն է ի Իե.էն մինչեւ Խ. ամ, / ձմեռն է <է> ի Խ.էն ի Հ.։*

12. *237բ* [ստ. անկ., ընդգծուած՝ Մինչ ի տապան դնիլս ի տան] – *Երրորդութեան մի Տէրութեան փառք եւ պատիւ յաւիտեան, / որ համայնից տալ գոլ եւ կեան, խոստանայ փառք հանգստեան... լե՛ր պահապան եւ ինձ պաշտպան։*

13. *238ա-9ա («ԲԱՐՍԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ»)* – *Բարսեղ ողջիկ վարդապետիդ, կենաց բանին աշակերտիդ / ողջագուրէ զքեզ քո Որդիդ՝ զնախնի արարսն ածեալ ի միտ... զոր ինչ խնդրէր, ասաց, տացի վասն այս յերկրէ գձեզ վերածի։*

14. *239ա-40բ («ԳՐԻԳՈՐ ՎԱՐԺԱՊԵՏ»)* – *Գրիգոր գրեա՛, զի լըրասցի պատգամ բանին Հօրն Յիսուսի... գայսոսիկ լաւ տե՛ս, գրով ծանո՛ւ մեզ, զի է ինչ իզուր, այլ նախնեացս ի տուր։*

15. *241ա-3ա* [Օրինակ գրութեանց. կաղապար] – *Գերապետական գլխոյն գերագունեալ եւ ի գերագոյն գոյէն գեր երեւեալ, ի գերաբուղխ աղբերէն գերազարդեալ հիմն եւ հաստատութիւն եկեղեցւոյ, պարծանք եւ պսակ եկեղեցւոյ... եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ եւ մեծութեամբ քով ողջ լիցիս ի պարծանս հոգւոյս ամէն. այսքան առ այս։*

16. *243բ-5բ* Օրինութիւն – *Ի տակար ժամանակին ա-*

ռատ բարութիւն եւ նուազութեանց լիութիւն, սգոյ տրտմութեան մխիթարութիւն, լալագին աչաց ծաղր եւ բերկրութիւն... օրհնեսցո՛ւք զՏէր միշտ յաւիտենին։

17. *246ա-7ա* Են եւ բանի մի գծագիրք կամ նշանագիրք, որ ոչ յոլովիցս են առ կամ կիր – *Այսինքն, զորօրինակ, ընդ, ըստ... Տէր երկնից սիւն, որ է եւ այլն (բոլոր բառերից առաջ իրենց նշանագրերը)։*

Գ. 1. *296ա-315բ* [Բառգիրք] – *Ախտ, ախտի, -իւ՝ ցաւ, դարդ... քաղաքագիւղ՝ [գ]եղջ, մեծ գեղ, օր՝ աւուր, օր, կուն, երկայօր՝ [ա]ւուր, ձիգ օր, կեսօր՝ [ա]ւուր, օր հասարակ։*

Վջ. գրչից՝ «Սոխա են բառ հոլովադասք իւրաքանչիւր անուանց, ըստ բանի հոլովադասուց՝ շարամանեալ ի պէտս ուխտի մանկանց եւ թերավարժ անձանց»։ Գլխաբառերը բաժանուած են ըստ հոլովումների պատկանելութեան։ Բառերը բացատրում է խոսակցական բառերով, երբեմն՝ պարսկերէն կամ թուրքերէն։

2. *315բ-23ա* ստ. լս. գրչից՝ Այժմ սկսանին բառ բայից շարամանել ըստ կարճին – *Ագաւեմ՝ ագաւել, ամփոփեմ՝ ժողովել... վարկանեմ՝ համարել, աջանեմ՝ խաջանել։*

Գլխաբառերը խմբաւորուած են ըստ լծորդութիւնների՝ երկանգամեայ խմբաւորմամբ։

Դ. *324ա-8բ* Ցանգ մատենական վկայութեանց ի Քրիստոսէ եւ յառաքելոց ներ Նորում Կտակարանում առբերելոց ի Հնոյն – *Ծննդոց. Գլ. համար. 1. 27. Արու եւ էգ արար զնոսա. Մտթ. 19. 4, Մարկ. 10.6... Մաղաքուայ... 4. 6. Զի դարձուսցէ ըզսիրտս հարց յորդիս. Ղուկ. Ի. 17։*

Ե. *329ա-344ա* Եվիրայեցւոց, բաղդէացւոց եւ յունաց անուանց թարգմանութիւն – *Աբարիմ՝ անցք կամ անցաւորք, Աբբայ՝ հայր, սիրացւոց է բառ... Ծնանայ՝ վիշտ, անիրաւութեան ցաւ։*

Զ. *345ա-51ա* Ցանգ մատենական – *Աբարիմ կամ Յաբովբ, Թուոց 21։ 11, 27։13... Օձման վերջնոյ խորհու[րդ] Յակօբ 5։14։*

Է. *351բ-3ա* [Յաղագս Աւետարանաց եւ աւետարանչաց] – *Աւետարան, որ է ըստ Մատթէոսի. Զինքն Մատթէոս աշակերտ Տեառն գրեաց զԱւետարանս... գրեաց Յեփեսոս քաղաքի, ի խնդրոյ եկեղեցւոյ Ասիոյ, ի լեզու յոյն։*

– 353ա Մատթէոս՝ երգ կենաց, Մարկոս՝ երգ կենաց, բարձր պատուար եւ կամ ի վերայ տանեաց (այսչափ)։

Ը. *353բ* [Ոտանաւոր] – *Տրակ յերկինի հաստատ եղեալ հաստատուն, / յորմէ ճշմարիտ վերընձիւղեալ ոստ աճուն... սրօբէաբար յաճախիմատ բենաբան, / դու ախոյեան ամուր վահան յաղթական /// (շար.)։*

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, *ԺԹ. դ., շղագիր*

292ա-3ա [Ներբող առ սուրբ Յակոբ հայրապետն] – *Այգւոյ Փրկչին ողկուզաբեր ոստ աճիւն, / յորմէ ճշմարիտ պատուաստացեալ հաստատուն... Տեառն Աստուծոյ, որ կա անշարժ յանդիման, / հայցեա՛ նմին տալ մեզ զշնորհ զղջացման։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Յա Տէ՛ս Տիտղոսաթերթ։

275բ տէ՛ս խորագիր։

Շա Համառօտութիւն Մեկնութեան սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, *որ կոչի Հետարան երկնաճեմ դեռափթիթ համբակաց մերազնէից։ Հ[այր]* Իսահակայ Կ[ողբացի], *հ.(՞)* Աղէքսանդրով։ *Հայրապետութեան գերագահ* Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի *տեառն* Մատթէոսի *ամենայն Հայոց գերընտիր վեհա[փա]ռ կաթուղիկոսի եւ ասպետի տէրութեանց, 1865, ՌՅԺԴ.։*

Ծնթ. Այլ ձեռով տողամիջում՝ «Յովհաննէս 2» ներեւում՝ «գրուեցաւ 1123 թուականին» (հաւանաբար վրիպում է)։

11բ Վասն որոյ ըստ կարեաց մերոց արարելոցս փոխարէն խնդրեմ զաղօթս յամ[ենայն]ից ընթերցողացդ առ Աստուած աղբիւրն բարեաց առաքել, զի թերեւս աղօթիւք սրբոյն Գրիգորի *եւ ձերդ թողցէ ամենակարող զօրութեամբն իւրով զմեզս իմ ի կեանս այս եւ զկնի աստի կենացս յստորնային օթեւանի զգետեղումն իմ յարքայութեան իւրում, հանդերձ բազմերախտ հարբ |12ա| եւ մարբն իմով եւ հոգեկից եղբարբք իմովք եւ հոգեծին եւ ցաւակից քերբք իմով, յիշեցէ՛ք, որ եւ դուք յիշեալ լիջիք առաջի անմահ գառինն Աստուծոյ։ Մնամ ծառայ ծառայից Աստուծոյ Հ[այր]* Կ[ողբացի] Իսահակ *ա[բեղայ] հ.(՞)* Աղէքսանդրեան։

260ա Այսինքն հայեցայս ի հառաչանս հեծութեանս ոչ միայն իմ, այլեւ ամենայն ընթերցողաց սոյն գրքոյս եւ հառաջողաց սովաւ ի վերայ մեղաց իւրեանց։

265բ Փա՛ռք անճառելի, անիմանալի, անթարգմանելի, միայն հաւատով ըմբռնելի, յուսով դիմելի, սիրով ճաշակելի, քաղցր եւ համեղ, ամենակարող, ամենիմաստ եւ ամենաբարի ստեղծողիդ ամենայնի՝ Սրբոյ երրորդութեանդ՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ Սրբոյ, յաւիտենից յաւիտեանս. ամէն։ Յայսմ գլխոջ զկնի առաջնոյ եւ վերջնոյ մեկնութեանց եղեւ աւարտումն յամի Տեառն 1745 եւ Հայոց ՌՃՂԴ. (1745), ի տօնի Եփեսոսի *սուրբ ժողովոյ երկու հարիւր հայրապետացն։ |266ա| Ընդ որոց եւ համակարգեսցի ակնարեւ հոգւոյս ցանկալի սուրբ վարդապետն իմ* Գրիգոր Նարեկացին *եւ աղօթիւք նոցին եւ նորին Սուրբ երրորդութիւն եւ միոյ աստուածութիւնն ազատեսցէ զխղճալի եւ զողորմած բարեսէր եւ ուղղափառ հաւատով քրիստոսական եւ առաքելական հրամանաց հնազանդ զազգն իմ հայկական եւ զերեքերանեան հրէշտակակենցաղ հայրն իմ եւ զգերապատիւ պատրիարքն սրբոյն* Սաղիմայ *զԳրիգոր աստուածաբանութիւն վեհապետն եւ զՅակոբ պատրիարքն եւ ի շառաւիղէ նոցա ըստ հոգւոյ նորաբողբոջ ընձիւղիս* Յարցախէ Հ. Յ. Ս։

286ա Փա՛ռք Սրբոյ երրորդութեան՝ Հօր եւ Որդւոյ եւ Սրբոյ Հոգւոյն, որ անկէտ իսկութիւն, այսինքն՝ անեզր եւ անվախճան, ըստ սկսման եւ ըստ վախճանի, որոյ իշխանութիւնն է անկշիռ եւ անչափելի, անսահմանելի, անքն-[ն]ելի, որոյ էութիւնն է յարակայ, իսկ ըստ արարչականին, ըստ առաջնոյ եւ ըստ երկրորդի ստեղծագործութեանս, որ մինն է յոչ էից արարչութիւն եւ երկրորդս նորոգման եւ եւս այս փառաբանութիւնս նմա տացի յանփոփոխ եւ անզուգական յաւիտեան: Որ եւ ես եմ անարժանս փառաւորակից սրբոյ վարդապետիս ըստ կերպի նորա գԱստուած եռանձնեայ օրհնելով ի յաւիտեան յաւիտենից. ամէն:

295ա Որոյ վերոյ վերոգրելոցն եւ յստորեւ եղելոցն աղօթիւք ողորմեսցի եւ մեզ Աստուած ըստ հայցուածոց սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ *եռարփեան, հրէշտակական վարդապետի. ամէն:*

*295բ Վերջապէս զայս եւս ծանի՛ր, բարեմի՛տ ընթերցող, զի ուրէք-ուրէք զառեցեալ վկայութիւնսն յԱստուածաշնչէն եւ ի վարդապետաց մէք համառօտելով առեալ եմք ըստ պահանջման բանից մերոց, ուրեմն, երբ հանդիպիսն, մի՛ կարծիցես, թէ մէք խոտելով եւ կամ վասն զանցառութեան այնպէս եդեալ եմք, այլ՝ որքան որ ըստ համառօտութեան մեր բանիցն պէտք գայինն: Փա՛ռք եւ երկրպագութիւն անբաժանելի Սուրբ երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Սրբոյ Հոգւոյն, յաւիտեանս. ամէն:**

* Ծնթ. Այսպիսի փառաբանական եւ օրհնաբանական հատուածներ կան նաեւ այլ միաւորների վերջում:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

(ԺԹ. դար, շղագիր)

13բ Թարկմանեալ իսկապէս ի թըվին հազար ութը հարուր ամի ամսեան Ապրիլին եղեւ պարտամուրհակս Աղէքսանդրապօլ *երկայնամըտեալ ըսպա (՞) մինչեւ կերիցես պատավա* Կապըտղուն *երկրեան թախանձուե (այսպէս):*

14բ ելսաբերթ *[տողամէջերում՝ (ա-ֆ, աժիմ)]* Ղազարեան *ի թըվին հազար ութը հարուր ամի, ամսեան հազար ութը հարու[ր] հ(=մ)ընամ ձեզ խոնար[հ] ծառա ես՝* Թեղեղան Յակոբ, Առութիւ[ն]*:*

ՆՇՈՒՄ՝ *1ա՝ «3615», «1865,* Մ[եսրոպ] *եպ[իսկոպո]ս», 2ա՝ «1194/3615»:*

ԳՐՉԱՓՈՐՉ՝ *13բ՝ «Այս գիրգս», «Илтына», 14ա՝ «այս գիր», «թերահաւատիցըս տառից եզակայն արթեանց», 14բ՝ «արփիեան աղօթք ճաճանձ Ջաւսագեղ», 15բ՝ «ամա, ամսաւրս», 116ա՝ «Գալ աղօթք* Մանասէի *բարեկամ,* Մարիամ Ղուպեանց, Յոհաննէս Կարապետեանց *քույր եւ եղբայր միմեանց», 167ա (մատիտով)՝* «Մարիամ, Անանայ, *ԿՀ. Դ», 172բ-3ա՝* «Յոհաննիից Կարապետանց Մարիամ Ղուպեանց»*:*

ՆԿԱՐԱՓՈՐՉ՝ *2բ, 3բ, 9աբ, 12ա, 12բ, 13ա, 13բ, 15աբ, 48ա, 63բ, 64ա, 105բ, 122բ, 150բ, 200բ, 247ա, 275բ, 293ա, 295ա, 337բ, 338ա, 344բ՝ մարդկային, բուսական, կենդանական, թռչնային, կենցաղային իրերի պատկերներ, անվարժ գծուած, մատիտով:*

3616
ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ, ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ


ՏԱԹԵՒ ՊԽՋ. – 1397*, ԺՋ. դար

ԳՐԻՉ՝ հեղինակը (թ. 1-122, 127-36, 139-51, 155-238, 241-2, 244-56, 260-70), Անանուն Ա (թ. 123-6, 137-8, 152-4, 239-40, 243, 257-9, 271-311):


ԹԵՐԹ՝ 319. չգրուած՝ 108բ: ՊՐԱԿ՝ 1-23×16 (1, 5՝ 10, 2, 11, 13, 16, 20, 21, 22՝ 12, 3, 4, 17, 23՝ 14, 6՝ 6, 7՝ 9, 8՝ 18, 19՝ 21)+1+8**: ՆԻՒԹ՝ թուղթ՝ լուսագծերով (թ. 1-122, 127-36, 139-51, 155-238, 241-2, 244-56, 260-70). այլ թուղթ՝ լուսագծերով (թ. 123-6, 137-8, 152-4, 239-40, 243, 257-9, 271-311), յաւելագրութեան թուղթ՝ լուսագծերով (թ. 312-9): ՄԵԶՈՒԹԻՒՆ՝ 17,5×12,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (13,5×9,5): ԳԻՐ՝ բոլորգրաձման նոտրգիր՝ թ. 1-122, 127-36, 139-51, 155-238, 241-2, 244-56, 260-70 (նմուշ՝ 8ա), նոտրգիր՝ թ. 123-6, 137-8, 152-4, 239-40, 243, 257-9, 271-311 (նմուշ՝ 240ա): ՏՈՂ՝ 27, 27-30 (թ. 123-6, 137-8, 152-4, 239-40, 243, 257-9, 271-311): ԿԱՋՄ՝ շագանակագոյն կաշի. միջուկը՝ տախտակ. աստառը՝ ծաղկազարդ մետաքս: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա-Դ+Ե-Ը՝ սպիտակ հաստ գծաւոր թուղթ (ԱԲ, ԷԸ), կապոյտ չգրուած թուղթ (Դ-Զ):

* Ծնթ. Ձեռագրի այն մասը, որը Տաթեւացին է գրել, ըստ ԺՋ. դարում Անանուն Ա գրչի արտագրած յիշատակարանի՝ (310բ-1ա) գրուել է 1397 թ., իսկ միւս արտագրած յիշատակարանը 1387 թ. է:

** Ծնթ. Պրակահաշիւը թ. 1-125՝ ըստ կարաթելերի (11բ՝ ե, 66ա՝ ժ). մնացածն ըստ պրակահամարների: Պրակահամար ունեցող էջերն են՝ 137բ՝ ԺՋ, 153բ՝ ԺԷ, 154ա, 165բ՝ ԺՐ, 166ա, 181բ՝ ԺՓ, 182ա, 197բ՝ Ի, 198ա, 209բ՝ ԺԱ, 210ա, 223բ՝ ԻԲ, 224ա, 239բ՝ ԻԳ, 240ա՝ ԻԴ (կտրած է), 272բ՝ Իե, 273ա, 284բ՝ ԻՋ, 285ա, 296բ՝ Իէ:



Նմուշ 8ա



Նմուշ 240ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – (գծանկարային). Ճակատազարդ՝ 32ա, 63ա, 102ա, 248բ: Լուսանցազարդ՝ բուսական: Զարդագիր՝ մարդադէմ (Ջ՝ 32ա), հանգուցագիր, թռնագիր (248բ): Գոյն՝ կարմիր:

Տե՛ս Ա. Գէորգեան, Հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն. Թ-ժէ. դդ., Գահիրէ, 1998, էջ 121, Հմ 66, Դ.:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. վերջին նորոգումը ԻԱ. դ.ի. կազմը, կազմաստառները եւ պիպ. Ա, Բ, Է, Ը՝ նորոգման ժամանակի. թ. 1՝ վերին մասը պատռուածընկած, բնագիրը վնասուած, լուսանցակողերի սպիտակ թղթով լրացումները 1756 թ-ի նորոգման ժամանակի, թերթերն աղտոտուած, գրաղաշտը փոխ-ինչ գունափոխուած. տեղ-տեղ կարմրագիր հատուածների թանաքը տարածուած, թափուած, անընթեռնելի. կան ջնջագիծ հատուածներ, որոնցից շատերը բնագրի մաս են կազմում, 151բ էջի վր. ձախ անկիւնը նորոգուած այլ թղթով. 1756 թ. նորոգման ժամանակ վերակազմողը համարակալել է գլուխները եւ թղթերի վրայ գրելով՝ սոսնձել լ.ներում, որոնք չեն համապատասխանում բնագրի հերթականութեանը, ինչպէս նաեւ էջակալել է ձեռագիրը այբբենական կարգով (սկսում է ՂՋ., ՂԷ., այնուհետեւ Ճ., ՃԱ.. սակայն հետագայ ընթացքը եւս խախտուած է), բնագիրը սկ.ից պակասավոր, ընդմէջ 1-2ի, 11-2ի, 21-2ի, 49-50ի, 65-6ի, 79-80ի, 111-2ի, 122-3ի, 178-9ի, 203-4ի, 240-1ի, 296-7ի՝ անորոշ հանակի ընկած թերթեր, հատակ հնարաւոր չէ պարզել (տե՛ս Բովանդակութիւն). էջանշան՝ թ. 28, 100, 178, 203, 247՝ կապոյտ կտաւ, թ. 61՝ կապոյտ կտաւ եւ սպիտակ թել:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա-46բ, 49ա-311ա [Գրիգորի Տաթեւացւոյ Գիրք Հարցմանց]

Տե՛ս ձեռ. 921, 3ա-367ա: Յառաջաբան գրոցա/չիք: 1. ա-գ/չիք: 2. Յանկ/չիք, Նախադրութիւն/չիք, ե/1ա-5ա (սկ. /// եւ[ներորդ, զի չարչարանա[ւքն իւր յուսադրեաց] զմեզ..., զոր թէ ախորժէին, կարելի էր ///... (2ա) մէջից /// [Զ]ի՞նչ է տալն որդոյ գկեանս կամ գատաստան...), գ/5ա-12ա (մէջից)... զի բախումն Հոգոյն է ելումն, իսկ ելումն է շարժումն միոյն առ ///(12ա) մէջից /// դարձեալ ասէ միակն երկակ շարժեցեալ...), է/12բ-30բ (... եւ սամոսատցին Պօղոս եւ Դիոթորոս, որք Բ. անձն եւ Բ. բնութիւնս /// (22ա) մէջից /// ծանի՛ր եւ զայս, զի մի բնութիւն ասեմք...): 3. [Յանկ]/31աբ, ը/32ա-46ա, 49աբ, 46աբ** (...ըստ խորութեան թաքուն եւ ըստ անգիտութեան բարձր/// վջ.), թ/50աբ (սկ. /// կամ նուազ պարգեւս ընդունին...), 53ա («Տեսիլն եզեկիելի» մանրատառ գրութիւնը ներառեալ, որ պէտք է լիներ ձեռ. 3616ի 50բ էջի գրչի ցուցման տեղում, իսկ 53բ կրկնում է 52բ-ի համապատասխան տողերը), 50բ-1բ, 53ա («Հ[արց]ց. Վասն էր Դիոնիսոս Ք. դաս հրեշտակաց ասէ... Պ[ատասխանի]. Համաձայն են միմեանց սուրբ վարդապետքն...» հատուածը, տե՛ս նաեւ ձեռ. 3616ի 53ա գրչի ցուցումը, որ է կետերով առանձնացուած տողը), 51բ-2բ, 54ա-9բ, 61բ-2ա (հետեւել գրչի ցուցումներին), 59բ-61բ (գրչի ցուցումների միջի եղածը): 4. [Յանկ]/62աբ, ժ/63ա-73ա (... եւ կամք ոչ կենայ անդ ///... (66ա) մէջից /// աննմանութիւն բազում եւս...), ժա/73ա-7բ, ժբ/78ա-86բ (... զի յոմանս առաւել է լոյսն /// (80ա) մէջից /// զգիշերն Զ. ժամ ի կշիռն ի կարիճն...), ժգ/86բ-97բ, ժդ/97բ-101ա: 5. [Յանկ]/101աբ, ժե/102ա-4բ, 106բ, 104բ-5ա, 107ա-8ա, 105ա-6բ, 109ա-13ա (... լանջք, որ փորիւն մազածածուկ է ան/// (112ա) մէջից /// հոգին զմարմին ոչ առնի կիր...), ժզ/113ա-22բ (...նախ նկատի ի միտքն /// վջ.), ժէ/չիք: 6. [Յանկ]/չիք, ժը/չիք, ժթ/123ա-6բ (սկ. ///ուրախութեամբ զարդարէ եւ փառաւորէ...), ի/126բ-141ա, իա/141բ-56ա***, իբ/156ա-66բ, իգ/166բ-78բ: 7. [Յանկ]/178բ (...Մեռասանեւորդ. Զսուրբ /// վջ.), իդ/179ա-81բ (սկ. /// չարչարակից եղեւ Մովսեսի...), իե/181բ-4բ, իզ/184բ-8բ, իէ/188բ-94ա, իը/194ա-8ա, իթ/198ա-203ա: 8. [Յանկ]/203աբ (...զբերան իմ բացի /// վջ.), լ/204ա-47ա (սկ. /// եղեալ ամենայն արարածոց..., ... յարեաւ ի Քրիստոս ի մեռելոց եւ երան /// (241ա) մէջից /// այսինքն՝ բնական, բանական...), 9. [Յանկ]/247ա-8բ, լա/248բ-66ա, լբ/266ա-75ա, լգ/275ա-85ա, լդ/285ա-96բ (եւ չիցէ եպիսկոպոս յարկի (921 ձեռում՝ եկեղեցի) աւրհնեն եւ խաչի կնիք տան /// վջ.), լե/չիք: 10. [Յանկ]/չիք, լզ-լթ/չիք, խ/297ա-301բ (սկ. /// չորրորդ. վասն որոյ փառաւորութեան քառակի լիցի ուրախութին...), խա/302բ-10բ, Յիշատակարան գրոցս /301բ-2բ (Տե՛ս Յիշ. գրչութեան), Յիշատակարան Հարցմանցն Գէորգայ/310բ-1ա (Տե՛ս Յիշ. նախագաղափար աւրինակի):*

267բ գրչից՝ «Այլ դու, ո՛վ այդ Աստուածոյ, մաբռամիտ եւ ճգնազգեաց միայնաւոր սուրբ հայր<ք>դ Սահակ, թէեւ զիջանես զեղբայրական սիրով խնդրել բանս ի մէնջ, սակայն կարօղ ես եւ զթերին լնուլ եւ զաւելորդն կշռել եւ զմեզ օգտեցուցանել, ի ներոյդ է ոյիին պայծառամիտ սրբութեան աւտի, որովմիշտ երանութեամբ զԱստուած տեսցես՝ խորհելով յաւէնս նորա ի տուէ եւ ի գիշերի: Որ եւ [յ]արազուարճ բարեջանկութեամբ լի եւ ամէնազան խաղցռորակ պտղաւէտութեամբ տնկեսցիս ծառ բարձրաբերձ ընթացս հոգոյն ի մէջ յեկեղեցւոյ տանս Թորէոմայ ազգիս Հայկազեան: Ողջ լե՛ր ի Տէր ի պարծանս մեզ» (տե՛ս նաեւ տպ. էջ 558):

Տե՛ս նաեւ Գրիգոր Տաթեւացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցու, 1729, հմմտ. տե՛ս Հայ գիրը 1512-1800 թուականներին. Հայ ձեռագիրք գրի մատենագիտութիւն, [կազմեցին] Ն. Ոսկանեան, Ք. Կոչոտեան, Ա. Սաւալեան, Երեւան, 1988, էջ 286, Հմ 376:

Ծնթ. 8ա էջի այլ թանաքով ջնջագծով հատուածը 7բ էջի շրնկութ. է, բայց 8ա էջի խոռագրից առաջ էլ պիտի լինէր 1,5 սիւնաձոց մի նիւթ, ուր է՝ «Դարձեալ ընդդէմ այնոցիկ, որ արարած ասեն զԲանն Աստուծոյ եւ զՀոգին՝ որպէս Արիոս եւ Մակեդոն եւ հրեայք եւ այլք», որը կայ տպագրի 55-56 էջերում, իսկ Հմր 921 ձեռ-ում՝ 49բ (վջ-ի 2 տողից) – 50բ էջում եղած «Դարձեալ ընդդէմ այլազգեաց, որ արարած ասեն զԲանն Աստուծոյ եւ զՀոգին՝ որպէս Արիոս եւ Մակեդոն...» սկսուածքով 2 կարմրագիր հատուածները չկան:

* Ծնթ. 31ա էջի խոռագրից առաջ եղած մասը 28ա էջի խոռագրից առաջ եղած հատուածի կրկնութիւն է: Այս եւ միւս էջերի ետեւառաջութիւնը, կրկնութիւնը պայմանաւորուած է բնագրի եւ լուսանցների համապատասխան մասերում առկայ գրչի ցուցումներով. այսպէս՝

46ա (առտ. լս-ում գրչի ձեռքով, բոլորգիր)՝ «Զայս Դ. թղթով ի յետի նշան (ութանեւ նշան) գրէ» (տե՛ս 49ա):

49ա (վր. լս-ում գրչից)՝ «Զայս ետ (ութանեւ նշան) իմա՛» (տե՛ս 46ա):

50բ (առտ. լս-ում գրչից)՝ «Զեզեկիէլի տեսիլ հաստ գրէ. Բ. թուղթ շրջէ» (տե՛ս 53ա):

53ա (վջ-ում գրչից)՝ «Յառաջին թղթին միւն այլ երեսն գրէ նշանածէ» (նշանը տե՛ս 51բ՝ խոռագրից առաջ):

59բ (առտ. լս-ում գրչից)՝ «Աստ գրէ եւ այլք ասեմ. Բ. թուղթ շրջէ» (տե՛ս 61բ):

61բ (առտ. լս-ում գրչից)՝ «Բ. թղթով յառաջին շինածն գրէ /// 3որ դասէ անկան» (տե՛ս 59բ):

62ա (խոռագրից առաջ 2րդ տող)՝ «Յառաջ գրէ, հան զՀարցումն, որ ասէ 3որ դասէ անկան»:

104բ (առտ. լս-ում գրչից)՝ «///ե. համարն /// միւս կողմանն [դի]մաց աստ գրէ» (տե՛ս 106բ՝ մանրագիրը):

** Ծնթ. 49բ էջի նիւթի շարունակութիւնը գտնւում է 46ա էջի խոռագրից սկսած մինչեւ 46բ («Ալֆա եւ Օմեգա… զի անդամք եւ մարմինք եմք նմա ըստ առաքելոյ»). դա է 46ա-ի կրկնութեան պատճառը:

*** Ծնթ. Ձեռ. 921-ի թ. 189-90ի միջեւ 1 թերթ կտրած, բնագիրը պակասաւոր, տե՛ս ձեռ. 3616, 146ա-7բ:

Ձեռագրում առկայ չգրուած տողերը բնագրի բացթողում-պակասներ չեն (տե՛ս Վիճակ): Կան գրչի արած բնագրային ետեւառաջութիւններ (տե՛ս Գրչի ցուցումներ), որոշ կրճատում-բացթողումներ, երբեմն էլ լրացում-յաւելումներ, լս-ային կամ ազատ թողնուած հատուածներում մանրատառ սրբագրումներ (11ա, 35բ, 36ա, 40ա եւ այլուր). երբեմն տուեալ էջի լրացում-սրբագրումը վերաբերում է մէկ այլ էջի (տե՛ս 104բ՝ գրչի ցուցում):

312ա-4բ Հարց. Քսկիզբն Ա., Հարց. Ջորս գիրս Բ. … Հարց. Զզոխն. Ք:

314բ-6բ երկրորդ ցանկ գրուս. մինչ ի յայս տեղ յառաջ հարց այսուհետեւ յետ գնայ – *Հարց. Զարատաւոր քահանան. Ա. … Հարց. Զծառն Բժ. պտուղ. ՂԸ., Հարց. Զհարցմունք Գէորգայ. ՂԹ.:*

Ծնթ. Յանկերը ծաղկամաղ են, խառն այբբենական դասաւորութեամբ եւ «զ» յօդի յաւելումով: Զ տառը 2րդ ցանկում չկայ:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ

Բոլորգիր, ԺԵ. դար

ա. *47ա-8բ* [Յայլմէ ſառոզ վասն պատարագին, ի բանն առաքելոյն. (Փոռձեսցէ մարդ զանձն իւր եւ ապա ի հացէ)] (Ձմեռան ՃԻԲ.) – *Գիտելի է, զի Գ. ազգ կերակուր կու բանի յաշխարհս յամենայն… եւ ապա ի հացէ անտի կէր (նիւթի որոշ արտայայտութիւններ կրկնուած 46բ էջի յաւելուածոյ հատուածում):*

Համմտ. Գրիգոր Տաթեւացի, Քարոզգիրք. Ձմեռան հատոր: Տպ. Աբրահամ Թուակացու, Կ. Պոլիս, 1740 թ., էջ 5532-51 (47ա-48ա էջի կէսը): Գրուած են շինծու նոտրզրով, 1756 թ. հետագայ կազմողի ձեռքով:

բ. *48բ* Վասն կնոջն է – *Կին քո որպէս այգի վա[յե]լուչ… եւ զուարճալիք երեւեսցին ի փառս Քրիստոսի Աստուծոյ սրբոյ:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽԱԳԱՂԱՓԱՐ ՕՐԻՆԱԿԻ

*310բ եւ այս յաղագս այսորիկ այսքան ոչ ըստ բաւական բանի տուեալ զլուծումն, այլ ըստ կարի տկարութեանց արտայայտումն, մանաւանդ հարկեալ ի սիրոյ քումդ եղբայրական խնդրոյ: Եւ այս խռովութեան ժամու եւ յանձուկ տեղոջ, յորում պաշարեալք ի հինից նետողաց, կրկին յարուցեալ խորագմ անուանեալ յազգաց, զոր եւ անբաւ բազմութեամբ ասպատակեալ աւերեաց զաշխարհս Հայոց, Պարսից, Վրաց եւ զամենայն Արեւելեայս. ոմանք ի գերութիւն վարեալ՝ արք եւ կանայք, եւ կէսք՝ առ[ա]թուր դիմաթաւալ սրախող[խող] գալարեալ, առհասարակ քահանայ եւ աշխարհականք, գէշ անկեալ դիակամբք, անթաղ ընկեցեալք, եւ այլ՝ ի բազմազան տանջանարանս մաշեալք: Ոմանք հրով կիսայրեացք տոչորեալք, եւ այլ[ք] ի սովոյ գազանաբեկ վտանգեալք, կէսք խստամբեր կրօնիւք չարչարեալք եւ այլք երկեղիւ պակուցեալք: Որ եւ մերն ունելով իբր մեռաղս կամաւոր ի [դի]պահոջ Շահապօնս կոչեցեալ ամրոցի, ոչ ինչ ընդհատ բերելով ի մեզ զօրինակ մեծի սաստս սաքսուռն աւենի: Նախ, որպէս անդանօր ողջունեն զիաղաղութեան եւ շինութեան գոլ յեղակարծ ժամու հասանել բարկութեան, նմանապէս եւ աստ՝ աւուրն կիրակէի ասացեալն կրկնոյ Ջատկի, յանկարծահաս ժամու շարժեալ հեղեղաց ուղխից խռովութեան զաւրաց, սաստագին գոչմամբ եւ ահագնատեսիլ սուսերամերկ կորովալիճ նետողաց |311ա|, որք պատեալ պահեալ պաշարէին զմեզ: Ասացեալն նմանանապէս եւ աստ կատարեալ, ոչ միայն անդ՝ ի հեռաստան, կամ աղալ երկ[ան], այլեւ ի դռան կլայիս սակաւ ինչ դանդաղեալ, միոյն փրկեալ եւ միւսն գերեալ: Էր եւ տեսանել աստ աղէղորմ տեսիլ միայն արտասուալի դիմաւք եւ կամաբարձ հառաչ-

մամբ. ազգ եւ սիրելիք, ծնօղք եւ եղբարք: Այլ ինչ ոչ օգնել ի գերութիւն վարելոց, որպէս եւ յայնմ աւուր ի կորուստ մատնելոց: Այլեւ աստ ապաշաւելն ոչինչ օգնել, որպէս եւ անդ՝ ոչ լսողացն բերանով հաշեալք, որ ոչ գոյր անդրէն դառնալ եւ ոչ կարի աւժարացն շահավաճառ եղեալ, ո՛չ գիւտ եւ ո՛չ ողորմ, հանգոյն յիմարացն ըրիորդաց, զի ունողք բարէկեցիկք կենօք եւ ոչ նոյնպիսիքն սովամահ տուայտեալք ի սպառել սիրոյ եւ հատումն յուսոյ, բազմանալ անօրէնութեանց եւ տիրել անզղջութեանց, որ եւ խղճի որդանց անհանգիստ մտաց, եւ շրջապարեալ ընդելեաց ի հեռատակ ճիւռաղաց: Եւ առ այս եկն ինձ, ո՛վ քաջ զուգակշիռ հասարակութեանց մեծատանց եւ աղքատաց, զի որոց բազումն աւանդեցաւ, առաւել ինձ պահանջեցաւ, եւ փքացելոցն հպարտութեամբ փոխանակ խրախուսութեանց՝ ճիչ աղաղակի ընդդէմ հեշտալեաց անհանգիստ խշտիս յերեկօրեայ զառաւաւտ խնդրէաք, եւ ի նմա զեռանդն երանելաք: Եւ այս ոչ շաբաթու եւ աւուրց սպառեալ, այլ ամսոց յերից երկարեալ սորին, եւ գործելեացն վրէժ ոչ կշիռ հատուցեալ:

Եւ այս աղէտ անզերծ տարակուսից շրջապատեալ զմեզ շրջագայութեամբ տումարի Հայկազեան սեռից՝ հարիւրից կրկնակի քառից եւ վեցեաց վեցից (100×2×4+6×6=836+551=1387), յորում ամի եղեւ ծռատօն զատկաց ազգի կոչեցեալ յունաց, ի վերոյ ասացեալն աւուր նորոյս տէրունեաց: Եւ այսպէս տրտմեալ սգով եւ թա<ղ>խանձեալ մտաւք՝ ընծայեցի տխեղծ մատամբ զխունախոյ գնուէրս բանի՝ իբր զլւմայս այրոյն քումդ գանձարանի: Եւ մաղթեմ եղբայրական սիրով, զի ըստ բնածին բարեբոյս բարուցդ աշխոյժ մտաւք ուղղապէս որոնել, զթերին լնուլ եւ զաւելորդն կշռել: Հաւանեալեացն Տեառն շնորհք եւ սխալանաց տկարս անօթոյ միայն բարէսէր կամօք յիշատակ բարի առ քոյդ արձանագրեսցի ի Տէր. ողջ լե՛ր:

Տե՛ս ԺԴ. դ-ի յիշ-ք, էջ 567-9, Հմր 709. յիշ-ն առել է Հմր 915 ձեռ-ից:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

301բ **Յիշատակարան գրոյս.** *Արդ, ես՝ վերջինս ի ծնունդս յեկեղեցւոյ եւ տրուպս բանասիրաց,* **Գրիգոր** *պիտականուն խնդրող բանին, բացայայտեցի զբանս Հարցմանց ի լուսաւոր բանից վարդապետաց եկեղեցւոյ, ի խնդրոյ ումեմն բանասիրի՝* **Ատոմ** *ուղղափառի, որ ի վաղուց հետէ բազումս թախանձէր: Եւ ես վասն իմոյ տկարութեանս եւ ժամանակիս վրդովման զխնդիրն յապաղէի, եւ ապա ի սէր եւ ի յանձուկ ժեռոյ նորին, ապաստանեալ ի նայն, որ զօրացոյց զտկարս՝ ձեռն ի գիծ արկանել, որ ատոյգ մայր հարցմանց ձեռս գիծ արկեալ եւ տեղ-տեղ բացայց եւ շալակ գրելով առաջաբերի: Աւարտեցաւ բազում միջոցաւ եւ փախստեամբ ի տեղիս եւ մեծ ջանիւ փութացեալ: Որ եւ ոչ ժամանեաց ի կատար բանիս վերոասացեալ խնդրողն, այլ ի հասարակ գրոյս հասարակաց եւ նա զկեանս առօրեա հասեալ ի գանձն իմաստից եւ յաղբիւրն գիտութեանց, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի. ամէն:*

Արդ, եղեւ զրաւ բանիս ի շրջագայութեան Հայկազան տումարիս ՊԽՋ. (1397) թուի, ընդ հովանեաւ երկնահանգէտ մեծարգոյ ուխտի **Սիւնեաց** *նահանգի առաքելական աթոռոյ* **Սուրբ Առաքելոյս** *եւ այլ շրջակայ հրեշտակաբնակ սուրբ մենաստանեայց, որոց խնամօք ամրացեալ փրկեսցուք յամենայն փորձանաց. ամէն:*

Իսկ Լուծումն Հարցմանց այսոցիկ ոչ ամենեւին աւտարաձայն աւելորդս խուզեալ եւ ոչ գեղջուկ իմն աշխարհական խաւսից յարմարեալ, այլ զպիտանիսս յեկեղեցո եւ վարդապետաց ոգէշահ խնդիր հաւատոյ միայն հոգ տարեալ, ուղղակի ճշգրտութեան եւ անըստգիւտ իմացման, բովանդակել ոչ զամենայն, որ ամենեցուն է գիտելի, այլ զբանս բազումս, որ բազմաց է պիտանի եւ խնդրելի: Արդ, է ինչ ի սմա հաւաքեալ ի լուսաւոր բանից վարդապետաց սրբոց ըստ գրոյն կամ իմացուածոյն, եւ է ինչ |302ա| ներգործութեանց Հոգոյն Աստուծոյ շնորհաց, որ ծածկէ իմաստնոց եւ յայտնէ տղայոց յիւրաքանչիւր ժամանակս՝ ըստ կամաց իւրոց: Եւ թէ՛ այս եւ թէ՛ այն, դու ընկա՛լ զխնդիր մտաց առանց ամենայն երկբայութեանց՝ իբր միոյ կենդուռ աղբերէ կենաց՝ ուռճաշրացեալ եւ պտղաւէտեալ ի փառս եւ ի գովեստ նորին տնկագործի եւ առաջնորդի: Զոր եւ ես՝ զօրէն մշակաց բազմահաւաք պտղոց կամ փունջ մի անոյշահոտ բազմերանգ ծաղկաց, կամ չնչին թռչնոյ զխորիսխ մեղու, կամ որպէս լոմայս այրոյն, տաքապեալ («ր» տառից վեր գրուած՝ «ռ») գոյիւ աղերս ընծայեցի ի գանձանակ ճոխութեան ձեր մեծութեան իմաստնասէր եւ ճշմարտասէր յեկեղեցեայցդ Հայաստանեայց եւ ընթերցասէր մտաց: Որ եւ աղաչեմ զբարեմիտ հանդիպօղս՝ եղբայրական սիրով հաւանել, զպակասն լնուլ եւ զաւելիսն կշռել եւ պիտանեացն փառս վերածել այնմ, որ փառաւորեալ է ի պարգեւս իւր, իսկ զանպիտանն՝ ներել մերոյ փոքրընկալ անօթոյ եւ անդանդաղկոտ փութոյ:

Դարձեալ յերեսս անկեալ արտասուալիր դիմաւք, հողս եւ փոշի սուրբ գարշապարաց ձերոց, աղերսեմ ի խորոց սրտէ զհարազատ գութ հա[ր]ց եւ եղբարց մերոց հոգեւորաց, զի կաթ մի արտասուաց ի կաթիլ գուլէ ձերդ մաղթանաց ցօղեսցէ ի գերեզման հոգոյ իմ տառապանաց եւ լուասցէ զբազմաշարաւ զազրացեալ ոսկերս մեղաւք մեռելոյս, զի թերեւս վասն ձեր սիրալիր մաղթանացդ գտայց ողորմութիւն յամէնողորմ Փրկչէն մերմէ: Այլեւ վարժապետն իմոյ եւ մեծ հռետորին հայոց՝ **Յովհաննու Ոսոտնեցոյ** *եղիցի ի սմա յիշա-*

տակ մաղթանաց մասին աւրհնութեանց եւ վիճակի ժառանգութեան սրբոցն ի լոյս, զի նա ծնաւ մեզ ըստ բանի բազմաջան երկաւք կրթեալ ի մամուլս վարժարանի ի յոյսն կենդանի, որ եւ ձեզ յիշողաց եւ մեզ յուսողացս առհասարակ ողորմեսցի բարերար եւ բազում մարգասէրն Աստուած եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։

Այլեւ զերջանիկ գունդս փարաւղադ մաղթեմ, որք ընդօրինակէք զԳիրք Հարցմանց այսորիկ, գրել եւ սակաւ յիշատակս այսոցիկ, որպէսզի եւ դուք լիցիք գրեալ ի գիրն կենացն. ամէն։ Գրեցաւ յայսմ տեղւոջ |302բ| եւ հարցմունքն Գէորգայ *վասն բազում վկայութեանց, որ առեալ է ի գիրս յայս, զի անտարակոյս լիցի եւ են ամենայն հարցմունքդ ԺԴ. (14) գլուխ, որպէս յայտ է ի կարգիդ։*

Ծնթ. Թէեւ բովանդակութիւնը նկարագրուած է Հմր 921 ձեռ-ին յղումով, բայց յիշատակարանն այստեղ բերուած է, որովհետեւ կարեւոր տարբերություններ ունի թէ՛ յղուողից եւ թէ՛ տպագրից. օրինակ՝ այստեղ կայ կարեւոր մէկը, որ միւսներում չկայ. «...որ ստոյգ մայր հարցմանց ձեռս գիծ առկեալ եւ տեղ-տեղ բացայց եւ շալակ գրելով առաջաբերի...». սա համապատասխան է ձեռագրում առկայ վիճակին, այն է՝ կան բաց թողնուած շատ տողեր («բացայց») եւ մանրատառ («շալակ գրուած») հատուածներ եւ մի շարք ցուցումներ, որոնք թոյլ են տալիս կարծելու, որ գրիչը Տաթեւացին է (ձեռագիրս ըստ ամենայնի «Գիրք հարցմանց»ի սեւագիր տարբերակն է)։ Տե՛ս նաեւ ձեռ 921, 359բ-60բ, 366բ-7ա. նաեւ Գրիգոր Տաթեւացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցու, 1729, էջ 558, 772-773, 188-189: Տե՛ս ԺԴ. դ-ի յիշ-ր, էջ 616-7, Հմր 771:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

316բ (1756 թ., Նոտրգիր, հետագայ կազմողի)

Արդ, ես՝ յետինս դաւանողաց եւ ունա[յ]նս ի բարեաց, / եւ անպիտանս ի կարգաւորաց, զառածեալս մեղօք / եւ տկարս հոգով, եւ սեռաց<աց>եալ մարմնով, / հեռացեալս ի կարգաց եւ մերձեցեալս մեղաւորաց, / անուամբս լի, գործօվս ունա[յ]ն, անարժան՝ |317ա| իբր տէր ըՍտեփան, */ ի ժամանիլն Թվին Ռ.արին երկոյ հարիւր ամք ընդ նոցին, / հինգ այլ վերայ որ բարեգործին (1756), զտեղի առի օթեւանին՝ / յերկիր* Բագվան Արշակունիւն, *ի գիւղ* Ջուջան, *որ յոտն պատին, / ի սպառիլ հայոց զարմին, ի զօրանալն գոռոզին, չարիք հասին հա[յ]կայ զարմին։ / Ի չորս դիմաց բորոքեցան՝ իբրեւ զգազանս արձակեց[ան], /* յԱրարատեան *երկիրն ելին, զորդիս խողխողեցին, / զօմանս սրոյ ճարակ տըւին, զայլ ոմն գերինս վարեցին, / վանորեայքն քանդեց[ան], լուսք կանթեղացն խաւարեցան, / կարկաւ[որ]աց դասք սգացան, մարգարէից բանքն լցան։ / Եկեղեցիք քայքա[յ]եցան, կաթուղիկոսք զփախուսք առին, / եպիսկոպոսքն մերձեցան, եւ աբեղաքն ցրվեցան։ / Իբրեւ զգառինս՝ գայլոց տըւան, ի չար մարդոց |317բ| հալածեցան։ / Արի՛,* Մատթէ՛, *զի քո բանին տեղի եղեւ Աւետա[րա]նն, / որ կու խօսէր զքաղցր լուր Բանն, պատմէր զերկրո[ր]դ գալուս[տ] մարքիկան, / յա[յ]տնէր, թէ արթուն կացէ՛ք ամենեքեան, / ահա Քրիստոս գայ ի դատաստան / վասն մեղաց, որ գործեցան, / թէ ոչ անցցէ ա<յ>զգս այս մինչեւ եղէցի։ / Ահա առ մեզ կատարեցաւ, տեսաք զօվ ամենեքեան, / որ մեծատունքն աղքատացան, աղփացեալքն խպաս կորեան. / Գ. տարի սօվն տարաւ,* Եղիայիւ *բանն լցաւ, / ի միուս ամին մահն էառ։ / Զինչ որ յաւուրս* Դաւթի *եղեւ, տեսաք աչօք ամենեքեան. / ի չորս ամիսն ու ուգնէր (՞) առեալ (=առաւել՞), մեռեալ շատ էր, քան գկենդանին, / ամենեքեան դատարկեցան, զմարմնական գործն մոռացան, / յու[ս]օվ առ |318ա| Տէր ապաւինան, զի թէ լիցի հնար փրկութեան / մինչ ինքն Աստուած ողորմեցաւ, մահն ի կեանքն փոխեցաւ։ / Զայս քաղվածուս, որ ես տեսի, էր քայքայեալ ամենեւին, / սուգ ինձ դիպաւ անհնարին, ի հոգ մտիս յուժ կրկին, / զհարց յինէն ոչ էր գտեալ, որ էր խնդրեալ, / ոչ էր առեալ, զի ցանկ սօրայ ոչ էր գրեալ։ / Շատ զանազան բան կայ գրեալ ի մէջ սօրայ յարմարեալ, / սայ է ծաղիկ գարնանին կամ զարմացեալ ընդ շար սորին, / զինչ որ խնդրես, կայ ի միջին։ / Սայ է պսակն լուսաճէմ, սայ է պարիսպն անխաթեւի, / շր<ա>ջա[պա]տեալ զեկեղեցի, / սայ է աղբիւրն |318բ| ան[ա]պակ՝ / բղխեալ մէջ աշխարհի տարածա[ծ]կ, զի պասքէլոց է զօվական, / սայ է դեղ բժշկութեան, որ խոցելոց առողջութեան։ / Եւ սայ է պարիսպ եկեղեցւոյ, վահան ամուր սուրբ հաւատոյ, / սայ է զէն աշխոյեան՝ սրեալ արքամբ քրիստոսեան, / սայ է թագ զօրեղութեան, սայ է պարծանք կարգաւաց, դաստիարակ սրբոց մագնաց (=մանկաց)։ / Ես՝ անարժան յետինս, տեսի զփտեալ սուրբ ծերունիս, / աղէկիզեալ սիրտս ի փորիս, / ըսկբն (=սկիզբն) առի կազմել զայս գիրք, որ չէր մնաց թո[ղ]ւ մի սայ. սաղ չէր մնացեալ։ / Ահա գրեցի զցանկն գլխաւոր, որ է մտ<տ>ացն բանալի. / |319ա| զի[ն]չ որ խնդրեն, աստ գտանեն, զգժվարիմաց բանս քննեն, / [որ]պէս զծօվ տարածանեն, որգոց մարքիկան շնորհս բաշխեն։ / յա[յ]բն սկ[իզ]բն արկանեն, մինչեւ Բեն նոքա քննեն, / դաւձեալ Գեմէն խօս առնեն, գրէ ի գիր զամէն / քննեն մինչեւ ի Քէն տարածանի, դաւդեալ յա[յ]բն ըսկ[ս]անի, գնայ ի վերջն հասանի։ / Է սահմանած անփոխելի մինչ ի գալուստն Քրիստոսի, / որք ընթեռնուք սիրօվ սրգի, յիշման առնէք զիս արժանի։*

Դաւդեալ, օ՛վ հայրք եւ եղբարք իմ, ահա զգլխաւոր բաներն ցա[ն]գօվ |319բ| գրեցի, որ զինչ խնդրես, դիւրաւ գտանես. յառաջին ցանկէն ըսկսիր յա[յ]բէն մինչեւ ի Քէն, որ յառաջ է, քան զցանկն։ Նա, որ վերջ լինի աստ ըսկի[զբ]ն, նա վերջ կանէ. եւ Քրիստոսի փառք յաւիտե[ան]ն. ամէն։ Թվին ՌՄԵ. (1756) ես՝ տէր ըՍտե-

փանս *կազմեցի զայս գիրքս եւ գրեցի զցանկ սօրին, զի կարդան, յիշեն զիս՝ մեղաւորս, եւ յիշեցողք յիշեալ լիցին ի Քրիստոսէ. ամէն:*

ՆՇՈՒՄ՝ *267ա՝ «Թվին ՌՃԽԱ. (1692)», պհպ. Դբ՝ «Գէորգեան հոգեւոր ճեմարանի ձեռագրերից Հ՝ր 51. Օ[նիկ] եգ[ամեան]», պհպ. Դա-ին սոսնձած թղթին՝ «Բ-8 / (այլ ձեռով՝ «11»), / Հարցմանց գիրք / Գր. պիտակ///», 3ա՝ մատիտով «Մ-811 / Հարցմանց գիրք / Գր. պիտակի», սեւով՝ «1195/3616, ժե. Մ[ատենադարան] եպ[իսկոպոս]», 319բ եւ պհպ. ե.ի միջեւ սոսնձած թղթի ա երեսին՝ «Գերմանյային հաղթելուց հետո ձապոն<յ>ային ուլտիմատում տրվեց ///պատ միացան: Բորենիությանը վերջ տրվեց: Տղաս չկա: Կազմեցի 2. 7. 45 [թ.] ////ատորագրություն/»:*

ԳՐՁԱՓՈՐՁ՝ *31բ, 78ա, 95բ, 102բ, 209ա, 275ա եւ այլուր՝ հայերէնի գրեր, 108բ՝ «առաջ կայ ճաշյակ պուջուր մայր մանելի ուբ կուս ջիլնծօվ», 151բ վր. ձախ անկիւնը նորոգուած այլ թղթով, բոլորգրով՝ «/// գ/հք/// ///ան անձին ///արէին ///», 258բ՝ «ի նւաստ Աստուծոյ ծա», «կոստակաղլոսի (՞)», 270բ՝ նորգման թղթին՝ «մին է զուարակ», 272բ՝ «ի բոբ», 272բ եւ 273ա՝ հայերէն ա-նընթեռնելի գրութիւն, 275բ՝ «պատ֊ծառ ի նախյ», 278բ՝ «տական լինիմք այլոց ԴԴ. յորժամ սիրեմք», 279բ՝ «Զի՞նչ է առաքինութիւն: Պխ. Սահման ա», 311ա՝ «Առանց հրամանի Աստուծոյ դրեւ մի ծառայի մզի///անձ նիշն կ[ա]մք է Աստուծոյ, զետուատեսի(՞)», 311բ՝ «Խնկի ծառի նման ես, որ», «ես՝ տէր Մատթէոս», «Խնկի ծառի նման ես, պտուղ դու քացրն համ ես, պարի պտուղ, բարի պտուղ, բարի պտուղ», «Քարտ քո մայր պահպանութեան Խաչիկէս բարով Ռ. (1000) բարի հասցէ կերակուր», «Խնկի ծառի նման ե», «Յիսուսի Քրիստոսի ծառայ, յորմէ ժամանեալ յասցէ կիր օրհնու[թեան], նամակ պա[հ]պանութեան», «Խնկի ծառի նման ես», 319բ՝ «ես Սիմէ֊ն (=Սիմէոն) աստուածաբան վարդապետս գրեցի զայս քարոզգիրքս, յիշատակ եւոս, (լս-ում) աաբգ տուր աս սուրբ»:*

ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *31բ, 75բ, 113բ, 267ա՝ մարդանման էակներ, 53բ՝ շրջանակ, մէջը՝ «ցայտայջուրս դա կայ, ղուրայաղաչայ առ Տէր», 86բ՝ ուղղանկիւն շրջանակ, 231ա՝ թռչնագիր ե, բուսական զարդեր, 253ա՝ թռչուն, 188ա՝ բուսազարդ:*


3617
ՀԱՄԱՌՕՏ ՀԱՒԱՔՈՒՄՆ ՅԱՂԱԳՍ ՀՈԳՒՈՅ, ՅԱՂԱԳՍ ՀՐԵՇՏԱԿԱՅ

(թրգմ.՝ Ստեփաննոսի Լեհացւոյ)

ՌՄԿԷ. – 1818

ԳՐԻՉ՝ Կարապետ:

ԹԵՐԹ՝ 94-1 (թուիչ՝ թ. 7-9. գրչի էջակալում՝ 1-75, որ է՝ 1ա-39ա, 1-103, որ է՝ 40ա-91ա). չգրուած՝ 39բ, 91բ-5բ: ՊՐԱԿ՝ Ա-Դ×8+6+Ա-Է×8: ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17,5×11,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (13,5×9). սահմանագծերը երկգիծ՝ կարմրով եւ սեւով, ունի յիշագրեր: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 6ա). խորագրերը՝ կարմրագիր: ՏՈՂ՝ 28-32: ԿԱՋՄ՝ ճնշազարդերով սեւ թուղթ, մէջէը՝ կաճաչ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ դեղին թուղթ. լուսանցակողերը՝ ցայտկէն կաճաչ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+Գ՝ չգրուած թուղթ (Գ՝ մասն կազմաստառի):



Նմուշ 6ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Ջարդագիր՝ թռչնագիր (1ա, 40ա): Գոյներ՝ սեւ, կարմիր:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած Ի. դարում, կազմը մաշուած, եզրերից երեւում է միջուկ-ստուարաթուղթը, վրան ֆեծուածքներ, Ա. փեղկի կազմաստառը՝ մասամբ պատռուած-ընկած, վրայի գիրը վնասուած, պհպ. Ա, Բ՝ հիմից անջատ, թերթերի վրայ կան անմաֆուր ջրի հետքեր, տեղ-տեղ գրադաշտը գունափոխուած, թ. 1՝ ստ. ներքին լս-ից պատռուած ընկած, նորոգուած դեղին թղթով, 39բ՝ ստ. հատուածում փակցրած դեղնաւուն թուղթ, տակի գիրը ծածկած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-33ա* [Յովհաննէս Անգեղոս] Յաղագս հոգւոյ համառօտ հաւաքումն եւ զօրութեանց նորին ի յաստուածաբանից լատինացւոց (ա-ծ.)

Տե՛ս ձեռ. 868, 193ա-244ա: [Նախադրութիւն]/1ա: ա/1բ: բ/1բ-2ա: գ/2ա: դ/2բ: ե/2բ-3ա: զ/3ա: է/3բ: ը/3բ-4ա: թ/4բ: ժ/4բ-5ա: ժա/5բ: ժբ/5բ-6ա: ժգ/6բ (սկ. այլ՝ «երեւի թէ այո, զի այն, որոյ արտաքս...»): ժդ/6բ: ժե/7բ (խորագիր եւ սկսուածք այլ՝ «Էութիւն հոգւոյ ոչ է զօրութիւն նորին. Յաղագս զօրութեանց հոգւոյն սեռօրէն – Ընդդէմ առարկի. երեւի թէ էութեան հոգոյ է զօրութեան նորին...»): ժզ/7բ-9ա: ժէ/9ա: ժը/9բ-10ա: ժթ/10ա: ի/10բ: իա/10բ-2բ: իբ/ 12բ-3բ: իգ/13բ-4բ: իդ/14բ-6բ: իե/16բ-7բ: իզ/17բ-9ա: իէ/19բ: իը/19բ (Յաղագս տրտնջականին – Տրտնջական է ունակութիւն իմն կարողական իմացմանն, զի որպէս...): իթ/19բ-20ա: լ/20ա: լա/20ա-1ա: լբ/21աբ: լգ/21բ-2բ: լդ/22բ: լե/22բ-3ա: լզ/23աբ: լէ/23բ-4ա: լը/24ա-5բ: լթ/25բ-6ա: խ/26աբ: խա/26բ-7ա: խբ/27ա-8ա: խգ/28ա-9ա: խդ/29աբ: խե/29բ:*

խզ/29բ-30ա: խէ/30ա-1ա: խը/31աբ: խթ/31բ-2բ: ծ/32բ-3ա (վջ. այլ՝ «որ կարէ պարունակել զնա Աստծոյն ստեղծողին. (գրչից) զմեզ ամենասրբոյ երրորդութեանն՝ Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, փառս եւ պատիւ եւ երկրպագութիւն այժմ եւ՚՚»):

Ունի՝

— 1ա Յառաջաբանութիւն (նոտրգրով) — *Գիտելի է, զի տեսութիւն յաղագս բնութեան մարդոյ վերաբերէ առ աստուածաբանութիւն ի կողմանս հոգւոց... եւ ապա սկիզբն արասցուք զհրեշտակացն Աստուծոյ, որում փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն:*

33ա գրչից՝ «Աւարտ հոգեացս — Գիրք հոգեացս, առ որով առատաւոր զկացութիւն եւ զէութիւն հոգւոյն՝ շարադրեցեալ ի յաստուածաբանից լատինացւոց եւ անտի թարմանեցեալ ի հայկական բարբառ ի ձեռն ճշտաբանից թարմանչացն մերոց՝ ի վաղնջուց ժամանակիս, առ որով թարմանեցան եւ այլք գրեանք, այսինքն՝ Ալփերտ «Առաքինութեանց» եւ «Մոլութեանց» գրեանքն եւ այլքն, որ անհոգութեամբ բանիւն ի ստուեր կորստեան մնացին»:

* Ծնթ. Յղուող ձեռ-ի նկարագրութեան մէջ սխալմամբ բաց թողած:

Բ. *33ա-9ա* [Բանք զանազանք]

1. ա. *33աբ* Ջուղացւոյն նորին գիտելիք — *Նիւթ կրօղին ունի զինքն յառնօղն կրկին կերպիւ... եւ զանազանին ըստ զանազան չափակցութեան նիւթոյն ընդունել զազդումն առնողին:*

բ. *33բ* [Յաղագս ճանաչման] — *Ճանաչմանն անկատարութիւն Գ. կերպիւ է. նախ՝ ի կողմանէ յառաջ եգելոյ ճանաչեալ իրին... եւ ճանաչումն հաստատական մէջովն, այսինքն՝ որ կարէ կերպիւ ինչ ճշտիլ եւ կերպիւ ինչ ստել:*

2. ա. *33բ-4բ* Ա. Յաղագս, թէ մարդկային հոգին ո՞չ է ստեղծեալ յառաջ, ըստ զմարմինն — *Ընդ[դ]էմ առարկի. նախ՝ երեւի թէ մարդկային հոգին յառաջ է ստեղծեալ... եւ այս պակասութեանս ի սկիզբն ստեղծագործութեան ոչ էր պիտոյ լինել:*

բ. *34բ-5բ* Բ. Յաղագս, թէ ճանաչումն Աստուծոյ ի ձեռն շնորհին բարձրագո՞յն կալեալ լինի, քան զայն, որ է բնական բանիւն — *Ընդդէմ առարկի. նախ՝ երեւի, թէ ճանաչումն Աստուծոյ շնորհիւն բարձրագոյն ոչ լինէր... եւ հասցէ յաստուածապատակն ճառագայթն եւ նովաւ զմայլեսցի անզրաւ յաւիտենիւ. ամէն:*

գ. *35բ-7ա* Գ. Յաղագս, թէ Աստուած է հանդերձելումն ամենայն յամենայնի՞ — *երեւի թէ այո. ըստ Պօղոսի Կորնթ. ԺԵ. գլ. 28 համար՝ Յորժամ հնազանդեսցի նմա ամենայն... եւ զնախասկիզբն Հայր Աստուած (այս մեկնութիւն ի Կուռնելիոսէ):*

դ. *37ա-8բ* Դ. Յաղագս չորս օժտիւք ի հանդերձեալն մարմինք մեր յառնեն ըստ վկայութեան Պօղոսի — *երեւի թէ այո, զի Ա. Կորնթացիս ԺԵ. գլուխ 11 համար՝ Սկսի առարկել զյարութեան մեռելոց... զորս բառնան եւ հեռանան ներհակքն ներհակօք ըստ Օգոստոս եւ Պօնաւէնթուրայ:*

ե. *38բ-9ա* Ե. Արդեօ՞ք հոգիքն ունին զզայութիւնս եւ զզգացողութիւնս ի հանդերձալն, որպէս այժմ ունի — *երեւի թէ այո, թէպետ Ղուկասու 16 ասի, թէ մեծատունն լեզուն պապակեալ տանջիւր... եւ յայլոց սրբոց ստորասեալք եւ շնորհեալք ընթեռնումք Բ. Կո<օ>րնթացիս Գ. գլ. 16 համար:*

Գ. *40ա-91ա* Յաղագս հրեշտակաց գոյութեան համառօտ խաղուածօրէն զուգեալ (թրգմ. Ստ. Լեհացւոյ)

1. ա. *40ա* Ա. [Յաղագս բնութեան հրեշտակաց] — *Հրեշտակ ոչ է ամենեւին անմարմին, զի այն էր, որ է անմարմին միայն համեմատելով առ մեզ եւ ոչ առ Աստուած... այլ ոչ են անպարագիր գոյացութիւն:*

բ. *40աբ* Բ. Եւ Յաղագս, թէ հրեշտակ ո՞չ է բաղադրեալ ի նիւթոյ, ի տեսակէ — *երեւի թէ այո, զի թէպետ ամենայն պարունակեալն ընդ սեռիւ իւիք է բաղադրեալ... եւ այսպիսի բաղադրութիւն իմանի ի հրեշտակս եւ ոչ առաջինն:*

գ. *40բ* Գ. Յաղագս համեմատութեան հրեշտակաց առ մարմնաւոր յէութիւնսն. նախ՝ թէ հրեշտակք ո՞չ ունին մարմին բնականապէս միաւորեալ ընդ իմիեռանս — *երեւի թէ այո, զի զոր ինչ պատահի բնութեան, ի մեք ոչ գտանի ի բնութիւնն այն ընդ հասարակն... եւ զայսպէս հրեշտակս կոչեմք:*

դ. *40բ-1ա* Դ. Յաղագս, թէ հրեշտակք ձեւացուցանեն իմիեռա՞նց մարմին — *երեւի թէ այո, զի հրեշտակք ոչ կարօտին առեցեալ մարմնոյ վասն ինքեանց... որ է կարողական սկիզբն սոյնպիսի ներգործութեան:*

ե. *41աբ* Ե. Յաղագս, թէ հրեշտակ են ի տեղւո՞ջ — *երեւի թէ այո, զի հրեշտակի յարմար է գոլ ի տեղւոջ... այլ իբրեւ զպարունակօղ կերպիւ ինչ, իսկ մարմնաւորք ոչ այսպէս են:*

զ. 1. *41բ* Զ. Յաղագս, թէ հրեշտակ ո՞չ է համանգամայն լինել ի բազում տեղիս — *երեւի թէ այո, զի հրեշտակն ունի զզօրութիւն եւ զէութիւն եզերեալ... եւ ոչ սահմանաբեր, զի է յամենայն ուրեք:*

2. *41բ-2ա* Յաղագս, թէ հրեշտակ[ք] կարե՞ն շարժիլ ի տեղւոջէ ի տեղիս — *երեւի թէ այո, զի շարժումն կայացելոյն զօրութեամբ է գործ անկատարին... վասն այնոցիկ, որք ժառանգելոց են զփրկութիւն:*

3. *42ա-3ա* Յաղագս, թէ շարժումն հրեշտակի ո՞չ լինի ի մի կէտն — *երեւի թէ այո, զի դնել ի վերջին ժամանակն, որպէս թէ ի ժամանակին այնորիկ... վասն որոյ հրեշտակք կոչին միտք եւ իմացութիւն:*

4. *43ա* Յաղագս կերպի հրեշտակին ճանաչման — *Ասիցես, թէ ոչ ճանաչէ հրեշտակն զամենայն էութեամբն իւրով որպէս զԱստուած... զի իմացականն նորա կատարեսցի նմանութեամբ իմն՝ առ ի ճանաչել զէս:*

5. *43աբ* Յաղագս, թէ հրեշտակ ո՞չ իմանան զիրս արտաքարշեալ նմանութեամբբ – *Առարկիցես՝ հրեշտակն լոյսն զօրագոյն է, քան զլոյս առնողական իմացականին ի հոգին... եւ մերթ զմիւսն տեսակ յառնողէ յումեքէ:*

է. *43բ* Յաղագս, թէ հրեշտակք իւրեանց բնականո՞ք կարեն ճանաչել զԱստուած – *երեւի թէ այո. առ այս գիտելի է, զի Գ. կերպիւ իր ինչ ճանաչի... հայելի իմն երեւեցուցիչ աստուածայնոյն նմանութեան:*

ը. 1. *43բ-4բ* Յաղագս, թէ հրեշտակք ճանաչե՞ն զնիւթական իրս – *երեւի թէ այո, զի այսպիսի է կարգ յիրս, զի վերնագոյնք յէիցս են կատարելագոյնք... եւ ըստ այնմ հրեշտակք լաւագոյն ճանաչեն զապառնիսն քան զմարդիկք:*

2. *44բ-5ա* Յաղագս, թէ հրեշտակք ո՞չ ճանաչեն զխորհուրդս սրտից – *Զի խորհուրդ սրտի կրկին կերպիւ ճանաչի. նախ՝ ի պատճառելին իւր... եւ այսպէս մի՛ կարասցէ տեսանել զմիտս միւսոյն:*

3. *45աբ* Յաղագս, թէ հրեշտակք ո՞չ ճանաչեն զխորհուրդս շնորհաց – *երեւի թէ այո, քանզի կրկին է ճանաչումն ի հրեշտակս... թէ ըստ յաջորդութեան ժամանակաց աճեաց աճումն աստուածային ճանաչմանն:*

թ. 1. *45բ* Թ. Յաղագս, թէ հրեշտակք կարէի՞ն իմանալ զնամանգամայն – *երեւի թէ այո, զի իմանալ զբազումս իբր զմի է... բազում մարմնոց նմանիլ միով ձեւով:*

2. *45բ-6բ* Յաղագս, թէ հրեշտակք ո՞չ ճանաչեն հաւաքաբանելով – *Ասիցես, թէ հրեշտակն ճանաչէ հաւաքաբանելով, զի հաւաքաբանութիւն իմացականին տեսանի... եւ ի պատճառելեացն ի պատճառս:*

3. *46բ* Յաղագս, թէ հրեշտակ ո՞չ իմանան բաղադրելով – *երեւի թէ այո, զի որպէս իմացումն հաւաքաբանականն եզրակացութիւն... եւ զնիւթականն աննիւթաբար:*

4. *46բ-7ա* Յաղագս, թէ ի դեւս է՞ ստութիւն, ապա ուրեմն եւ ի հրեշտակս – *երեւի թէ ի դեւս է ստութիւն ստոր ասի... կարգեալ լինի առ բաղաձրութիւն իմն կամ բաժանումն:*

5. *47ա* Յաղագս, թէ ի հրեշտակս գո՞յ ճանաչումն առաւօտեան եւ երեկոյեան – *Ընդդէմ առարկի. նախ՝ երեւի թէ ի հրեշտակս ոչ է երեկոյեան... վասն գալոյն իւրաց ի հրեշտակային իմացումն, այլ ընդդէմ է:*

6. *47ա-8ա* Զի Օգոստինոս բաժանէ զճանաչումն հրեշտակաց ի յառաւօտեան եւ երեկոյեան. եզրակացութիւն – *Ի հրեշտակս բաժանի ճանաչումն առաւօտեանս, որով ճանաչեն զէսս... որպէս եւ գալն իրաց ի յատուկ բնութիւն:*

7. *48ա* Յաղագս, թէ առաւօտեան եւ երեկոյեան ճանաճումն ո՞չ է մի – *Ասիցես՝ անկարելի է ունել համայնգամայն միով զօրութեան... վասն այսորիկ ոչ ինչ արգիլու զերկաքանչիւրն համանգամայն գոլ ի հրեշտակս:*

ժ. 1. *48աբ* Ժ. Յաղագս, թէ ի հրեշտակս գո՞յ կամք – *Առարկիցես. յերրորդ գիրս հոգւոյն ասէ Արիստոտէլ... որպէս ասի յերրորդ գիրս հոգւոյն:*

2. *48բ-9ա* Յաղագս, թէ ի հրեշտակս կամք զանազանի՞ յիմացականէն – *Պնդիցես, թէ յառաջ եդեալ յիմացականին է ճշմարիտն... այլ սակայն զանազանութիւն սահմանացն բաւական է առ ի զանազանել զզօրութիւնսն:*

3. *49աբ* Յաղագս, թէ ի հրեշտակս գո՞յ աննիշխան կամք – *Ընդդէմ առարկի. նախ՝ երեւի թէ ի հրեշտակս ոչ է անձնիշխան կամք... եւ բացատրութեամբ խորհուրդ են այլ յանկարծահաս վերահասութեամբ ճշմարտութեան:*

4. *49բ-50ա* Յաղագս, թէ ի հրեշտակս ո՞չ է սրտմտական եւ ցանկութեան – *Ընդդէմ առարկի. երեւի թէ ի հրեշտակս է ցանկական եւ սրտմտական... յորում ոչ է յոյսն, որ է առաքինութիւն, այլ՝ աստուածային զգժուարինսն:*

ժա. 1. *50աբ* Յաղագս, թէ ի հրեշտակս է՞ բանական սէր – *Ընդդէմ առարկի. երեւի թէ ի հրեշտակս ոչ է բանական սէր կամ սիրելութիւն... եւ այլ է ճշմարտութիւն պարգեւեալ կամ ստացեալ ճանաչմանն:*

2. *50բ-1ա* Յաղագս, թէ ի հրեշտակս գո՞յ ընտրողական սէր – *երեւի թէ այո, զի ասէ Արիստոտէլ՝ Բանականապէս ոչ վարձատրիմք... որպէս եւ ճանաչումն անդրէն դառնայ ի ճանաչօղն՝ առ ի ճանաչել զինքն:*

3. *51աբ* Յաղագս, թէ մի հրեշտակ բանական սիրով սիրէ՞ զմիւսն, իբրեւ զինքն – *երեւի թէ այո, զի ոչ ինչ գտանի յամենեսին... ըստ որում՝ զանազանին արդարութեամբ եւ անիրաւութեամբ:*

4. *51բ-3ա* Յաղագս, թէ հրեշտակն բանական սիրով սիրէ՞ զԱստուած առաւել քան զինքն – *Ընդդէմ առարկի. [է]րեւի թէ հրեշտակն բանական սիրով ոչ սիրէ զԱստուած առաւել քան զինքն... ըստ իւրում կերպի բանականապէս առաւել սիրէ զԱստուած:*

ժբ. 1. *53աբ* ԺԲ. [Յ]աղագս բաժանել հրեշտակաց. բաժանել ի պրակս. [Յ]աղագս, թէ հրեշտակք ունի՞ն պատճառս գոլոյն իւրեանց – *Ընդդէմ առարկի. նախ՝ երեւի թէ հրեշտակք ոչ ունին պատճառ գոլոյն իւրեանց... եւ յայսմանէ յայտնի է պատասխանին եւ առ երրորդն:*

2. *53բ-4ա* Յաղագս, թէ հրեշտակք ո՞չ են ստեղծեալք ի յափտենից – *երեւի թէ այո, զի ասէ Սողոմոն... ոչ հետեւի, թէ հրեշտակք իցեն ի յափտենից:*

3. *54ա* Յաղագս, թէ հրեշտակք ո՞չ են յառաջ եան զգալի աշխարհս – *երեւի թէ այո, զի ասի ի գիրս Արարածոց... ի միասին ընդ բոլոր աշխարհիս քան առաջ:*

4. *54ա* Յաղագս, թէ հրեշտակք ստեղծեալ եղեն ի հրեղէն երկի՞նն – *երեւի թէ այո, զի Մտրաբօ ոմն վարդապետ ի վերայ բանին... Տեառն Աստուծոյ քոյ է երկին եւ երկին երկնից:*

ժգ. 1. *54աբ* Գլուխ ԺԳ. Յաղագս կատարելութեան հրեշտակի՝ կողմանէ շնորհաց եւ փառաց Թ. պրակս բաժանեալ: Յաղագս, թէ հրեշտակք ի ստեղծմանն իւրեանց ո՞չ էին երանելիք – *երեւի թէ այո, զի առ սահման երանութեան վերաբերի... յատկապէս կոչի ճանաչումն առաւօտեան:*

2. *54բ-5բ* Յաղագս, թէ հրեշտակք կարօտանա՞յր շնորհացն, որով դառնայր առ Աստուած – *Ասիցես հրեշտակն չկարօտանայ շնորհաց եւ այլն... զի դառնալն առ Աստուած է զինքն նախապատրաստել առ շնորհն:*

3. *55բ-6ա* Յաղագս, թէ հրեշտակքն ստեղծան ի շնո՞րհս – *Ասիցես, թէ շնորհն նկատեցուցանէ զբանական ստեղծուածն... կարէ զայն ոչ առնուլ ի կիր եւ մեղանչել:*

4. *56աբ* Յաղագս, թէ հրեշտակք ստեղծեալ երանութեան իւրում արժանի՞ եղեն – *երեւի թէ այո, զի ասի Յօհաննու Յայտնութեան... այլ դարձմամբն սիրոյն, որ լինի շնորհօք:*

5. *56բ* Յաղագս, թէ առժամայն յետ միոյ արժանատոր գործոյն էհա՞ս երանութեան – *երեւի թէ այո, զի հոգին մարդոյ... աստուածային սիրոյն էհաս երանութեան:*

6. *56բ* Յաղագս, թէ հրեշտակք հասին շնորհացն եւ փառաց ըստ բանականութեան բնական զօրութեա՞նցն իւրեանց – *երեւի թէ այո, զի ոմն յաստուածաբան վարդապետացն ասէ... հասին մեծագոյն շնորհացն եւ փառաց:*

7. *56բ-7ա* Յաղագս, թէ երանելի հրեշտակսն մնա՞յ ճանաչումն եւ սէր բնական – *Ասիցես, թէ ուր մինն բաւական է... ի հրեշտակս լինել բանական ճանաչումն եւ սիրոյն փառաց:*

8. *57ա* Յաղագս, թէ երանելի հրեշտակն ոչ կարէ մեղանչել – *երեւի թէ այո, զի ասէ Օգոստինոս, թէ այն բնութիւն... ոչ ինչ կերպիւ կարէ մեղանչել:*

9. *57ա-8ա* Յաղագս, թէ ո՞չ կարեն յառաջանալ յերանութեան իւրեանց – *Ընդդէմ առարկի. նախ՝ երեւի թէ երանելի հրեշտակքն... այլ առաւել է կատարումն զմայլման:*

ժդ. 1. *58աբ* Գլուխ ԺԴ. Յաղագս չարութեան հրեշտակաց ի կողմանէ յանցաւորութեան. ի Թ. պրակս բաժանել. յառաջին, թէ չարութեան մեղաց կարէ՞ լինել ի հրեշտակս – *Ընդդէմ առարկի ասա. երեւի թէ չարութիւն մեղաց ոչ կարէ... ներգործութիւն անձնիշխան կամացն, ըստ որում՝ հանդիպի ի նոսա գոլ չարութեան:*

2. *59աբ* Յաղագս՝ ի հրեշտակս կարէ՞ լինել միայն մեղի հպարտութեան եւ նախանձու եւ ոչ այլ – *Առարկիցես. երեւի թէ ի հրեշտակս ոչ կարէ լինել միայն մեղք... որ ոչ յարմարի դիւաց:*

3. *59բ-61ա* Յաղագս, թէ սատանայ ցանկացա՞ւ լինել իբրեւ զԱստուած – *Առարկիցես. նախ՝ երեւի թէ սատանայ ոչ ցանկացաւ լինել որպէս զԱստուած... եւ ըստ այսմ յայտնի է պատասխանին ամենայն առարկութեանցն:*

4. *61աբ* Յաղագս, թէ ոմանք ի դիւացն ո՞չ են բնականապէս չարք – *Առարկիցես. երեւի թէ ոմանք ի դիւաց են բնականապէս չարք... եւ ոչ սրտմտօղ լինել է չար շան. այսպէս եւ այլն:*

5. *61բ-2բ* Յաղագս, թէ սատանայ յառաջին կէտ ստեղծման իւրոյ ո՞չ էր չար կամաւ մեղանչելով – *Առարկիցես. երեւի թէ սատանայ յառաջին կէտ ստեղծման իւրոյ էր չար... վասն այսորիկ զրկեցան յարժանաւոր երանութեան. եւ այլն:*

6. *62բ-3ա* Յաղագս, թէ ո՞չ էր ժամանակ ինչ ի մէջ ստեղծման եւ անկման հրեշտակին – *Առարկիցես, թէ երեւի ժամանակ ինչ ի մէջ ստեղծմանն եւ անկմանն սատանայի... այլ յերկրորդումն բարիքն ի չարեացն որոշեցան:*

7. *63աբ* Յաղագս, թէ Բելիարն էր բարձրագո՞յն ի մէջ ամենայն հրեշտակաց – *Առարկիցես, թէ երեւի թէ հրեշտակն այն, որ էր առաջին... վասն այսորիկ կարէր անձնիշխան կամօք այնմ ոչ հետեւիլ:*

8. *63բ-4ա* Յաղագս, թէ մեղի առաջին հրեշտակին էր պատճա՞ռ մեղանչելոյ այլոցն – *Ասիցես՝ մեծագոյն մեղք է կամիլ հնազանդիլ այլում... նմին իրի եղեւ մեծագոյն ըստ չարութեան:*

9. *64աբ* Թէ ոչ այսման մեղան, որման մնացին – *Ասիցես, թէ երեւի թէ յոլովագոյնքն ի հրեշտակաց... որք կարեն գոլ հաւասարակ բարեաց եւ չարեաց:*

ժե. 1. *64բ-5բ* Յաղագս պատժոց դիւաց: Յաղագս, թէ իմացումն սատանայի ո՞չ է խաւարեալ զրկմամբ. ճանաչումն ճշմարտութեան – *Ասիցես՝ ոչ ինչ է յոյժ յայտնի ի բնութիւն... զոր ոչ նախածանեան ապագայն:*

2. *65բ-6բ* Յաղագս, թէ կամք դիւաց հաստատեա՞լ է ի չարն – *Ասիցես՝ Գրիգորիոս պապն ասէ, թէ մարդ կարէ միւսանգամ նորոգել... զի կամեսցի գործել, եթէ կարիցէ:*

3. *66բ-7ա* Յաղագս, թէ ի դեւսն է ցա՞ւ – *երեւի թէ այո, զի մեղքն դիւին ծանրագոյն է, քան զմեղս մարդոյ... դեւք չար գոլով ըստ կամաց եւ անզեղջ, ոչ ցաւին վասն մեղաց:*

4. *67աբ* Յաղագս, թէ օդս այս է տեղի՞ տանջանաց դիւաց – *երեւի թէ այո, զի ասէ Օգոստինոս, թէ խաւարային օդն է իբրեւ բանտ դիւաց... զի մի՛ արտաքսեսցէ զնոսա արտաքոյ քան զաշխարհս:*

ժզ. 1. *67բ-8բ* ԺԶ. Յաղագս լուսաւորութեան հրեշտակացն. ի Դ. պրակս բաժանեալ. նախ՝ թէ մի հրեշտակ լուսաւորէ՞ զմիւսն – *Ընդդէմ առարկիցես. երեւի թէ մի հրեշտակ ոչ լուսաւորէ զմիւս... գրէ, թէ նշոյլ նորա ամենեւին չազօտանայ:*

2. *68բ-9ա* Յաղագս, թէ հրեշտակ ո՞չ կարէ շարժել զկամս միւսոյն – *Ըստիպիցես, ասէ Արիստոտել, թէ*

վերնագոյն յօժարութիւն շարժէ... որ ոչ յարմարի հրեշտակաց։

3. *69աբ* Յաղագս, թէ խոնարհոյն հրեշտակն ո՞չ կարէ լուսաւորիլ – *Առարկիցես. երեւի թէ ստորնագոյն հրեշտակն կարէ լուսաւորել զվերնագոյնն... միայն հաւատոյ աչօք նկատելի է, եւ ոչ առարկութեամբ։*

4. *70ա* Յաղագս, թէ վերին հրեշտակն լուսաւորէ՞ զստորին զամենայն, զոր ինքն գիտէ – *երեւի թէ այո, զի Դրիգորիոս պապն ասէ, թէ յերկնային այն ժառանգութեան... զորմէ վերին հրեշտակքն լուսաւորեն զստորինսն։*

ժէ. 1. *70ա-1ա* ԺԷ. Յաղագս խօսից հրեշտակաց. ի Ե. պրակս. թէ մի հրեշտակ խօսի՞ ընդ միւսոյն – *Առարկիցես. երեւի թէ մի հրեշտակ ոչ խօսի ընդ միւսոյն... եւ խօսքն են լուսաւորութիւնք միմիանց։*

2. *71ա-2ա* Թէ ստորնագոյն հրեշտակ խօսի՞ ընդ վերնագունին – *Ասիցես, երեւի թէ խոնարհագոյն հրեշտակն ոչ խօսի ընդ բարձրագունին... այլ ոչ է նոյն պատճառ յաղագս կամաց հրեշտակի։*

3. *72աբ* Յաղագս, թէ հրեշտակ խօսի՞ ընդ Աստուծոյ – *երեւի թէ այո, զի ասի ի Սուրբ գիրս Զաքարիայ... յորժամ նոր ինչ նոքօք առնել հանդիպի, որոյ վերայ լուսաւորիլ փափագին։*

4. *72բ* Թէ տեղական հեռաւորութիւն ո՞չ ունի արգելումն ինչ ի խօսս հրեշտակաց – *Ասիցես՝ Աղաղակ խօսողին լինի վասն հեռավորութեան լսողին... թէ այնչափ ոք նուազ աղաղակէ, որչափ նուազ փափագէ։*

5. *73ա* Թէ ո՞չ ամենայն հրեշտակ իմանան զխօսիլ միոյ հրեշտակի ընդ միւ[ո]յն – *Առարկիցես. երեւի թէ զխօսիլ միոյ հրեշտակի ընդ միւսոյն ամենայն հրեշտակ իմանան... եւ յայսմանէ յայտ է առաջին եւ երկրորդ առարկութեան։*

ժը. 1. *73ա* Յաղագս կարգաւորութեան հրեշտակաց ըստ հաճայապետութեանց եւ դասուց, թէ ամենայն հրեշտակք ոչ են ընդ միով հաճայապետութեամբ – *երեւի թէ այո, զի Դիոնէսիոս յերիս յերրորդական զարգս որոշեաց... զսմանէ տե՛ս ի Դիոնէսիոսն։*

2. *73բ* Թէ ի միում հաճայապետութեան են բազում կա՞րգս – *երեւի թէ այո, զի առաքեալն ասէ առ Եփեսացիս... դնէ երիս կարգս յիւրաքանչիւր քահանայապետութեան. տե՛ս ի Դիոնէսիոսի։*

3. *73բ-4բ* Թէ ի միում դասուն են բազում հրեշտա՞կք – *երեւի թէ այո, զի Եսայի ասէ, թէ սերօբէք աղաղակէին մի առ մի... եւ զայլս բազումս տե՛ս ի Դիոնէսիոսի գիրս յաճախ։*

4. *74բ* Յաղագս, թէ աստիճանք կարգացն պատշաճաբա՞ր եղեալ են – *երեւի թէ այո, զի զաստիճանս հրեշտակական զարդուցն դնեն... կատարման գործոցն իւրեանց մասամբ մնացեն եւ մասամբ ոչ։*

5. *74բ-5ա* Թէ մարդիկ ընկալեա՞լ լինի[ն] ի կարգս հրեշտակաց – *երեւի թէ այո, զի Տէրն ասէ ի Մատթէոսի վասն սրբոցն... եւ ոչ յաստիճան բնութեան, զի է անկար։*

ժթ. 1. *75ա* Յաղագս դասակարգութեան չարաչար հրեշտակացն, թէ ի դեւսն է զանազան կա՞րգք – *երեւի թէ այո, զի առաքեալն ասէ՝ Ոչ մեզ պատերազմ ընդ մարմնոյ եւ ընդ արեան... ըստ որում ունին զբնութիւն բարիքն կարգաւորեալք։*

2. *75աբ* Թէ ի դեւս է իշխեցողութի՞ւն – *Ասիցես՝ ուր ոչ գոյ լսողութիւն եւ հնազանդութիւն... յառաջադէմ լինելն ի չարիս է գոլ առաւել թշուառութիւն։*

3. *75բ-6ա* Թէ ի դեւս ո՞չ գոյ լուսաւորութիւն – *երեւի թէ այո, զի լուսաւորութիւն է հանդերձ մաքրութեամբ եւ կատարելագործութեամբ... որ է ի վերին դեւսն, որ կարէ լինել պատճառ լուսաւորութեան։*

4. *76աբ* Թէ բարի հրեշտակիւն իշխե՞ն ի վերայ չարեաց – *երեւի թէ այո, զի Օգոստինոս ասէ, թէ հոգին կենսաթող եւ մեղաւոր... եւ չափ ամենայն մարդկային գործոցն։*

ի. 1. *76բ-7բ* Ի. Յաղագս վերակացութեան հրեշտակաց ի վերայ մարմնաւոր ստեղծուածոցս. ի չորից պրակս. Առաջին. Յաղագս, թէ մարմնաւոր ստեղծուածք սպասաւորե՞ն ի հրեշտակաց – *Ընդդէմ առարկի. նախ՝ երեւի թէ մարմնական ստեղծուածքս ոչ լինին խնամեալ... զի կարգ զանազանին ըստ հասարակ գործոցն։*

2. *77բ-8բ* Յաղագս, թէ մարմնական նիւթն ո՞չ ճնազանդի հրեշտակի՝ ըստ մտածման նորին – *Ասիցես՝ բովանդակ բնութիւն մարմնական կառավարի հրեշտակօք... իբրեւ պատճառ վերնագոյն։*

3. *78բ-9ա* Թէ մարմինք ճնազանդին հրեշտակաց ըստ տեղական շարժմա՞ն – *Ասիցես, թէ մարմնական անդամքն հնազանդին մտածութեան հ[ո]գւոյն... ի կիր առնու զհուր՝ առ ի կակղացուցանել զերկաթ։*

4. *79ա-80ա* Յաղագս, թէ հրեշտակք ո՞չ կարեն առնել սմանչելիս – *Առարկիցես. նախ՝ երեւի թէ հրեշտակք առնել զսքանչելիս... ի կիր առնելով զմարմնական սերմանս տեղական շարժմամբ։*

իա. 1. *80ա-1ա* Յաղագս ներգործութեանց հրեշտակաց առ մարդիկ։ Յաղագս, թէ հրեշտակ կարէ՞ լուսաւորել զմարդ – *Ընդդէմ առարկի. նախ՝ երեւի թէ հրեշտակ ոչ կարէ լուսաւորել... կատարելագոյն հասանի ի ստեղծուածոցս ի ճանաչումն վերստին։*

2. *81աբ* Թէ հրեշտակք ո՞չ կարեն փոփոխել զկամս մարդոյն – *երեւի թէ այո, զի փոփոխել զկամս է յատուկ Աստուծոյ... ոչ հետեւելով կարից զգոյական յօժարութեան, վասն այսորիկ ոչ է նման։*

3. *81բ-2բ* Թէ հրեշտակ կարէ՞ փոփոխել զերեւակայութիւն մարդոյ – *Ասիցես՝ նմանութիւնք, որք են յերեւակայութեան անմարմինք... բազում ինչ առակօք խօսեցաւ, զոր ոչ մեկնեաց նոցա։*

4. *82բ-3ա* Թէ կարէ՞ փոփոխել զգացութիւն մարդոյ հրեշտակ – *երեւի թէ այո, զի հրեշտակք որք կործանեցին զՍոդոմ... յորոց զգայութիւնք զանազան կերպիւ փոփոխին:*

իբ. 1. *83աբ* Յաղագս առաքման հրեշտակաց կամ Յաղագս, թէ հրեշտակք առաքի՞ն սպասաւորութիւն մարդկան – *Ասիցես՝ արտաքին զբաղումն խափանէ զտեսութիւն իմաստութեան... որպէս թէ յուրախութենէ ներքին տեսութեան զրկեցին:*

2. *83բ-4ա* Թէ ո՞չ ամենայն հրեշտակք առաքին ի սպասաւորութիւն – *երեւի թէ այո, զի Գրիգորիոս ասէ, թէ վերին գունդքն հրեշտակաց... այլ հոմանունաբար ասին՝ առաքիլ, որպէս յայտ է ասացելոցս:*

3. *84աբ* Թէ հրեշտակք, որք առաքին, ո՞չ կան առաջի Աստուծոյ – *Ասիցես՝ հրեշտակն, որ ի սպասաւորութիւն Տուբիայ առաքեցաւ... նաեւ զկարգն սպասաւորութեան եւ Գ. առաջնիկան:*

իգ. 1. *84բ-5ա* ԻԳ. Յաղագս պահպանութեան հրեշտակաց. նախ՝ թէ մարդիկ պահպանի՞ն ի հրեշտակաց – *Առարկիցես, ուր մերձ է զօրագոյն պահպանութիւն... ի բանական ազգմանէ բարոյն ի բաց կան վասն կրից մեղաց:*

2. *85աբ* Թէ իւրաքանչիւր մարդիկ պահպանի՞ն իւրաքանչիւր հրեշտակաց – *երեւի թէ այո, զի Ջեռանիմոն ասէ՝ Մեծ է արժանաւորութիւն հոգւոց... առ ի պահպանութիւն ըստ վկայութեան Սուրբ Գրոց:*

3. *85բ-6ա* Թէ պահպանել զմիայն մարդիկ յարմարի՞ յետին կարգի հրեշտակաց – *երեւի թէ այո, զի ըստ սաղմոսին՝ պահպանութիւն մարդկան վերաբերէ առ հրեշտակք... թէ՛ ի ներքուստ, թէ՛ արտաքուստ, վասն որոյ պահպանի:*

4. *85աբ* Թէ հրեշտակ ի ծննդենէ՞ կարգեալ լինի պահապան – *երեւի թէ այո. ըստ Ջերոնիմոսի, թէ իւրաքանչիւր հոգի ի ծննդենէ իւրմէ ունի զպահապան հրեշտակ... եւ ապա կարգեալ լինի ի ծնանիլն ինքեան եւս այլ հրեշտակ:*

5. *85բ-7ա* Թէ պահապան հրեշտակն երբեմն ոչ ի բաց լինի ի մարդոյն, որոյ է պահապան – *Առարկի, թէ երեմիայ ի դիմաց հրեշտակաց ասէ... զի հրեշտակք պահապանք նոցա ոչ խափանեսցին զնոսա անկանել ի նեղութիւնս:*

6. *87աբ* Թէ հրեշտակք ո՞չ ցաւին վասն չարեաց մարդկան – *Առարկեցիս՝ տրտմութիւն է ըստ Օգոստինոսի վասն այնոցիկ, որք մեզ ակամայ պատահին... Աստուծոյ եւ հրեշտակաց հպեցուցանեն զայսպիսի կիրս Սուրբ Գիրք ըստ ասելոյս:*

7. *87բ-8ա* Թէ ի մէջ հրեշտակաց կարէ՞ լինիլ մարտ կամ անմիաբանութիւն – *երեւի թէ այո, զի ասէ ի գիրս Դանիէլի ի դիմաց Գաբրիէլի... եւ յայսմանէ յայտ է լուծումն առարկութեան:*

իդ. 1. *88ա-9ա* Յաղագս մարտի դիւացն, թէ դեւք մարտնչի՞ն ընդ մարդիկ – *Ընդդէմ առարկի. երեւի թէ դեւք ոչ մարտնչին ընդ մարդիկ... մի՛ երկնչիր, զի բազումք են ընդ մեզ, քան ընդ նոսա:*

2. *89աբ* Թէ փոռձելն յատո՞ւկ է սատանայի – *երեւի թէ այո, զի ասէ առաքեալն՝ գուցէ արդեօք փորձեաց զմեզ փորձիչն.... զի որ ստեղծ, կամի զի կեցուցանէ:*

3. *89բ-90բ* Թէ դեւք կարե՞ն պատրել ճշմարիտ սահմնչելեօք – *երեւի թէ այո, զի ասէ Օգոստինոս, թէ կախարդական արուեստիւք բազում անգամ լինէին... կարէ զնման տեսակն մատուցանել զգայարանաց միւսոյն. ահա առարկութիւն երեւի:*

4. *90բ* Թէ դեւն յաղթահարեալ ումեքէ՝ դաշտարի՞ ի մարտնչելոյ ընդ նմա – *Առարկիցես. Քրիստոս կատարելապէս յաղթեաց փորձողին իւրում... եւ յայսմանէ յայտնի է պատասխանին:*

5. *90բ-1ա* Հաւաքումն համաոօտ Յաղագս հոգւոյ եւ հրեշտակաց – *Գիտելի է, զի տեսութիւն Յաղագս բնութեան մարդոյ... եւ ապա յաղագս միաւորութեան նորա ընդ մարմնոյ եւ ապա հրեշտակաց: Վերջ:*

Համմտ. ձեռ. 924, 147ա-270ա: Գլուխները եւ պրակները պատկերուած են հաղուածաբար, համաոօտումներով:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

39բ լս., թղթի տակ «Ի վայելումն Պօղոս *շնորհունակ վարդապետի»*

Աղօթելով առ քեզ միակ,
ո՛վ գերագանց իմ շնորհունակ,
օրհնութիւնս քո առ հէգս արա՛,
սխալանացս ներում շնորհեա՛:
Ղողեալս ի տղմի անդադար
որոնեա՛, գի՛տ անխնայաբար,
ուստի անկելոյս ժամանեա՛,
հզօր թիկամբդ քո թեւարկի:
Սակայն կամի ծրել ըշտապ
յամեցեալս եղէ Տեառն ի խաբ,
վասն այն գերիս զքէն պաղատէ,
անօգս խնդրեմ մի՛ պարսաւէ:
Բա[զ]միցս օրհնեալ եւ անխրատ
դի՛ր սպեղանի վիրացս հաստատ,
պաշտօնեայս մի՛ թ[ո]ղցես զքէն զատ,
եղկելոյս շն[ո]րհեա՛ նուրբ արմատդ:
Տո՛ւր զօրհնութիւնդ զիս շրջապատ
ծրեալ թվոջս մի հազարի
հնգեակ յոբել եւ ժէ. տաւղի (1818),
եւ ԻԲ. (22) Դեկտեմբ[ե]րի,
ձեռամբ չնչին Կարապետի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *91ա (1899 թ., շղագիր)* Նուիրեմ զայս ձեռա-

գիրս Մատենադարանի Գէորգեան ճեմարանի Սրբոյ էջմիածնի, ի յիշատակ հոգւոյ հօրն իմոյ մահտեսի Էմմանուէլի Դանիէլեան, յաւուր քսանեւհինգամեայ գոյութեան դորին: Ի 25 Սեպտեմբերի 1899 ամի, ի Նոր-Նախիջեւան: Մկրտիչ քահանայ Տէր Յակովբեանց:

2. *1ա-39ա ստ. լս. (ժԹ. դ. վջ., շղագիր, ամէն էջում 1 տառ)* Պետրոս Տէր Անոսէլեան Տէր Յակովբեանց *ինձ պատկանի, որը է յիշատակ Ստեփաննոս Խալիպեանցէն եւ նորա կնոջմէն:*

40ա-3ա ստ. լս. (ժԹ. դ. վջ., շղագիր, ամէն էջում 1 բառ) Այս գիրքը շարադրուած է հազար երեք (1003) թուականին. աշխատողը (չշարունակած):

ՆՇՈՒՄ՝ *Ա. փեղկին սոսնձած թղթին՝ «1196», Ա. կազմաստառին՝ «Ի գրոց* Պ. Տէր Յակովբեան, *1003 թուա-կ[ան]», «Յիշատակ Խալիպեանցէ», «1196/3617», «ժԹ. Մ[եսրոպ] եպ[իսկոպոս]», «*Кавказская ж///ная въ///въ /// Лукяну/// яну», *մատիտով «Խանոյեանց (՞)», «*Микит/// ///вичь Мелконовь», *1ա՝ «1003 թուակ[ան]»:*

ԳՐՋԱՓՈՐՁ՝ *95բ՝ հակառակ դիրքով «ա, ւ, փ, տ, աի, աղ, աղքատանոց, աղքատանոց», պհպ. Գբ (հակառակ դիրքով), Բ. կազմաստառ՝ մատիտով թուեր:*


3618
ՅՈՎՍԷՓ ԱՐՑԱԽԵՑԻ, ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ

Ս. ՅԱԿՈԲԱՅ ՎԱՆՔ (ԱՐՑԱԽ) ՌՄԿԶ. – 1817


ԳՐԻՉ՝ Յովսէփ Արցախեցի:

ԹԵՐԹ՝ 280+2 (կրկն.՝ 57, 92). չգրուած՝ 1աբ, 4բ, 279բ-80բ: ՊՐԱԿ՝ 1-35×8 (1, 2՝ 4, 3՝ 10, 9, 10, 15՝ 7, 35՝ 19*): ՆԻՒԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ թ. 82 եւ այլուր՝ «18», թ. 84՝ «R», թ. 88 եւ այլուր՝ «Ի»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17×11: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (13,5-16×8,5-9): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 11ա, 257ա): ՏՈՂ՝ անկանոն. 20-30: ԿԱԶՄ՝ շագանակագոյն մոմլաթ, մէջբը՝ սեւ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ դեղնաւուն թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ՝ դեղնաւուն չգրուած թուղթ (մասն կազմաստառի):

* Ծնթ. Յաւելուած է 8 թերթանոց պրակ՝ 35րդ պրակի մէջտեղում՝ կարագծի մասում:



Նմուշ 11ա



Նմուշ 257ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով լուսանցակողերը մաշուած, խիստ աղտոտուած, թերթերի արտաքին եզրերն անհաւասար, թերթերի վրայ զանազան բծեր, խոնաւութեան հետքեր, տեղ-տեղ գիրն արտացոլուած հակառակ երեսին, որոշ թերթերի եզրերը փոքր-ինչ մաշուած, թ. 1-3՝ ստ. մասում հիմիից անջատ, թ. 66, 73, 115՝ ստացուած 2 թերթի սոսնձումով, որոշ թերթերի վրայ արտ. լս-ում կան պատռուածքներ. թ. 40՝ շագանակագոյն էջանշան թել:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *2բ-261բ* [Յովսէփայ Արցախեցւոյ ծաղկաքաղ ի Մեկնութենէ Աւետարանին Մատթէոսի, զոր մեկնեալ է Յօհան Ոսկեբերան]

– *2բ-4ա* [Նախադրութիւն] – *Ծանի՛ր, ով բարեմիտ ընթերցասէր, զի զգիրքս զայս ի վեց մասունս բաժանեցաք եւ իւրաքանչիւր մասանց առընթեր եդաք զպատշաճաւոր ցանգս նոցին... իսկ ծառք տերեւազարդք չունելով զպտուղ՝ չեն իսկ կարի վայելուչք:*

– *5ա-9բ* Ցանգ առաջնոյ հատորին (Ա-ԻԲ.) – *Ա. Համեմատութիւն չորից աւետարանչացն ըստ չորս գետս. Մատթէոս՝ Փիսոն, երեք կերպիւ... ԻԲ. Քսանեւերկուս<ր>որդ. Վասն նշանացն Քրիստոսի:*

1. *10ա-39բ* Սկիզբն մեկնութեան առաջնոյ հատորին – *Ա. Զորեքին Աւետարանիչքս համեմատին չորից գետոց ելելոց ի դրախտէն: Արդ, Մատթէոս նմանի Փիսոնի... իսկ Յօհաննէս զաստուածութենէն ճառեաց, զի Աստուած անփորձ է ամենեւին:*

– *40ա-7ա* Ցանգ երկրորդ մասինն (Ա-Լ.) – *Ա. Առաջին. Զի մատնեցաւ Յօհաննէս ի բանգ եւ ապա քարոզեաց Քրիստոս եւ դարձաւ զօրութեամբ Հոգւոյն... Լ. երեսուն. Վասն բորոտին, եւ հոգէպէս խոստովանիլն կամիս եւ կարես, եւ վաղվաղակի սրբեցաւ, առ քահանայն առաքեաց ի վկայութիւն նոցա:*

2. *47ա-96բ* Մեկնութիւն երկրորդ մասին – *Ա. Եւ իբրեւ մատնեցաւ Յօհաննէս, մեկնեցաւ Յիսուս անտի եւ գնաց ի Նազարէթ... կամ պատիւ եւ քահանայութեանն աստիճանի, զի մի՛ ասիցեն զփառս եւ զպատիւ մեր յափշտակէ:*

– *96բ-100ա* Ցանգ երրորդ հատորին (Ա-ԺՋ.) – *Ա. Վասն հարիւրապետին, թէ այլ է սա, եւ այլ Թագաւորազն... ԺՋ. Վեցտասաներ<ր>որդ. Նախատէ զքաղաքն, զի ոչ լուան Քրիստոսի... եւ թէ վասն էր սոքա առաւել տանջին:*

3. *100բ-26բ* [Մեկնութիւն երրորդ մասին] – *Ա. Եւ մտեալ ի կափառնայում, մատեաւ առ նա հարիւրապետ*

մի, երկիր պագանէր նմա եւ ասէր... եթէ ոչ պահեսցեմք զօրէնս Քրիստոսի:

– 126բ-8ա Ցանգ չորրորդ մասին (Ա-ԺԶ.) *– Ա. Աստուած եւ Հայր: Գոհանամք: Ցնծացաւ հոգւով: Վասն իմաստնոց... ԺԶ. Վեցտասաներ<ր> որդ. Առաւօտուն եւ երեկոյին կարմրիլն երկնից... Զի՞նչ է սանձ լեզուին: Զի՞նչ է բաղանիսն:*

4. *128բ-49բ* [Մեկնութիւն չորրորդ մասին] *– Ա. Յայնժամ պատասխանի ետ Յիսուս՝ Գոհանամ զքէն Տէր, Հա՛յր երկնի եւ երկրի: Յորժամ զպատուէր երկոտասանից, կատարեաց եւ առաքեաց ի քարոզութիւն... զղջումն եւ խոստովանութիւնն է աւազան, եւ արտասուքն՝ ջուր լուացման մեղաց:*

– 150ա-2ա Ցանգ հինգեր<ր>որդ մասին (Ա-ԻԲ.) *– Վասն Հերովդէի եւ որդւոց նորա: Որդի մարդոյ կոչէ... ԻԲ. Քսանեւերկուեր<ր> որդ. Վասն սադուկեցւոցն: Եօթն եղբարք էին: Վասն Յարութեան... Գիտեմք, զի կենդանիք են Աբրահամ, Իսահակ եւ Յակոբ:*

5. *152ա-91բ* Մեկնութիւն հինգեր<ր>որդ մասին *– Ա. Ելեալ Յիսուս ի կողմանս Փիլիպպեայ Կեսարիայն՝ հարցանէր ցաշակերտս իւր՝ Զո՞ ոք ասեն զինէն մարդիկն... եւ չէ Աստուած Աստուած մեռելոց, այլ կենդանեաց:*

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – կիսախոռան՝ 2ա: Ճակատազարդ՝ 14բ, 21ա, 51բ, 63բ, 67ա, 72բ, 84բ, 97բ, 102ա, 113բ: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն, կենդանի (63բ, 64ա, 67ա), յուշկապարիկ (67ա), խաչ (84բ, 85ա), ծառ (113բ): Ջարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր, մարդադէմ (Մ՝ 52ա, Ո՝ 73ա): Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, վարդագոյն, շագանակագոյն, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած 1977 թ., կազմի կաշին եւ պհպ-ները նորոգման ժամանակի, լուսանցակողերի կարմիրը թափուած, խիստ աղտոտուած՝ սեւացած, մագաղաթը ձեւափոխուած, ալիքաւորուած, թերթերի վրայ կան խոնաւութեան հետեր, տեղ-տեղ եզրերն առաւել գորշացած, վրան կաթիլի հետեր, գիրը տեղ-տեղ թափուած, անընթեռնելի, թ. 29, 84 եւ այլուր՝ վրան բնական անցք, թ. 32, 47՝ եզրերից պատռուած-ընկած, պրակահամարները գրած սկզբինը թերթի ձախ անկիւնում, վերջինը՝ աջ. ընդմէջ թ. 24-5ի, 26-7ի ՝ 4, թ. 25-6ի՝ 2, ընդմէջ թ. 32-3ի, 35-6ի, 46-7ի, 74-5ի, 92-3ի չգրուած 1, թ. 71-2ի չգրուած 2 թերթ մկրատած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *2ա-4ա* [Կանոն մկրտութեան – *Աղօթք.*] *Տէ՛ր Աստուած մեր, Աստուած բարերար, որ զվիրապեալս եւ զհեռացեալս ի քէն, զազգս մարդկան…*

Ստ. լս-ում, գրչից՝ 2բ «Կնունք: Ժամատունն կարդա՛», 3ա «Կնունք ի վերայ երախային կարդա՛յ», 4բ-5ա «Կնունք դաւան||ութեան», 5բ «Այս աղօթս ի վերայ աւազանին», 14ա «Ութերորդ աւուրն մանկանն պարտ է թագն առնել»:

2. *14բ-20բ* Կանոն հանդերձ հարսանաց աւրհնելոյ – *Բերեն առաջի քահանային եւ ասեն սաղմոս. Երանի՛ ամենեցուն… Ընթերցուած յառակաց. Լուարո՛ւք թագաւորք եւ ի միտ առէ՛ք…*

3. *21ա-5ա* Խրատ հարսին եւ փեսային. մեղա տան եւ խոստովանին: Կանոն պսակ առնելոյ – *Որդեա՛կ, ի կարճ համառօտեցից. ականջս ձեր զաստուածային օրէնքն պինդ պահեցէ՛ք երկոքեանդ… Եւ քահանան ասէ զաղօթս. Արդ, եթէ այսու օրինակաւ կեցջիք… /// (մէջից) 24բ …սրբեսցէ սրբութեամբ աւազանին բանիւ, զի /// (մէջից) 25ա /// եւ խնդրեն զողորմութիւն ի քէն եւ զթողութիւն մեղաց, վասն որոյ, Տէ՛ր բարերար՝ հայեա՛ց ի սոսա…:*

Ստ. լս-ում, գրչից՝ 23ա «Նաւօտն ձգի խաչանման ի վերայ [բազ]կին», 25ա «[Պսակ]առնելոյ վերջն այս է»:

4. *25բ* Կանոն եօթն աւուրն – *երթա քահանան եւ վերացուցանէ զթագն եւ ասէ սաղմոս՝ Լո՛ւր Աստուած, աղօթից իմոց… շնորհեա՛ սոցա զաւակ ըստ կա/// (վջ.):*

5. *26բ* [Կանոն Հաղորդ տալոյ] – *(սկ.) /// մարմնոյ եւ յարենէ քումմէ սրբեալ եւ մաքրեալ լիցի… Պողոսի առաքելոյն ի Կորնթացոց թղթոյն ընթ՛. Ոչ կամիմ եղբարք, եթէ տգետք իցէք, զի հարքն մեր…, զնոյն հոգեւոր ըմպելին արբին, զի ըմբէ/// (վջ.):*

6. *27ա-42ա* [Կանոն աշխարհաթաղի] – *(սկ.) /// մերոյ եղելոյ յԱսիայ, զի առաւել քան զկարն մեր ծանրացաք, մինչեւ անյոյս լինելոյ մեզ… Պողոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցոց թղթոյն է ընթերցւած. Ոչ կամիմ եղբարք, եթէ տգետք իցէք վասն ննջեցելոցն…*

ա. *34ա-7բ* [ստ. լս-ից՝ Գանձ թաղման] («ՄԱՆՎԵԼԱՍ») – *Մինդ ի յԻէն, Բանդ, որ ի Հօրէ, յորժամ ծագիս փառօք… ինձ դուք պաշար պատարագ դրբէ՛ք եւ ի չար այսոցըն զիս թափեցէ՛ք, / զհոգս ի վերայ իմ ծածկեցէ՛ք եւ դուք բարով կացէ՛ք, մընացէ՛ք. Ողորմ՛:*

բ. *37բ-9ա* [ստ. լս-ից՝ Ողբ ննջեցելոց] – *Ով քահանայք եւ վարդապետք աստուածաբան… զի Տէրըն քաղցր է եւ պարտական ողորմութեան:*

7. *42բ-8բ* [Կանոն մեծի այգուց կատարելո] – *Իսկ առաւօտուն գան ի գերեզմանն՝ ասելով զԱմբիծն ի բուն, Շարական Դկ.՝ Յիսուս միածին… Պողոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցոց թղթոյն է ընթերցւած. Այլ մեք պարտիմք գոհանալ…*

– *43ա-4բ* Այս ողբս իգնաճողացն ասա՛ – *[ե]կա՛յք այսօր, եղբա՛յրք ամէն աբրահամեան շառաւիղէն… խոստովանիմք զՀայր եւ զՀոգիդ եւ փառս տամ երիս անձիդ:*

8. *48բ-51բ* Կանոն եօթներորդ աւուրն – *Գան ի գերեզմանն եւ ասեն՝ Արարիչ իրաւանց… Եւ քահանան ասէ զաղօթս. Փառաւորեմք զքեզ Քրիստոս Աստուած փառաց թագաւոր…*

9. *51բ-61բ* Կանոն տղաթաղի՝ մինչեւ ԺԴ. (14) ամաց լինի – *երթան քահանայքն խաչիւ եւ աւետարանաւ եւ ամենայն զարթիւք կատարեն զկարգն… Եւ ասէ զաղօթս. Սուրբ ես Տէր Աստուած մեր, որ բնակեալդ ես յերկինս…*

ա. *53ա* Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ասացեալ – *եթէ մեք, որ կենդանիքս եմք մնացեալ… տարայց զնոսա ի լեառն սրբութեան իմոյ եւ ուրախ արարից զնա ի տաճարի իմում:*

բ. *57բ-8ա* Սրբոյն Գրիգորի ասացեալ – *Ամենեքեան, որք տեսանեն, զարդարն ճանաչիցեն… բայց անդ դէմ յանդիման տեսանեմք եւ ի նոյն կերպարանս նորոգիմք փառաց ի փառս:*

10. *61բ-3բ* [Տղաթաղի իգնահողէք] – *Իգնահողէք առաւօտն գան ի գերեզմանն եւ ասեն՝ երանեալ են ամբիծքն.... Պողոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն. Այսուհետեւ եղբարք ոչ էք օտարք եւ պանդուխտք...*

11. *63բ-6բ* Կանոն հոգեմատաղի աղաւհնէք – *Աս Սաղմոս՝ երանի, որում թողութիւն եղեւ մեղաց... Ընթերցուած յառակաց. Պատուեա՛ զՏէր ի քոյոց արդար վաստակոց...*

12. *67ա-72բ* Կանոն տեառնական աղաւհնէք – *Ածեն զխոստացեալն ի դուռն եկեղեցւոյն, առաջի խաչին եւ կապեն զկարմիր նարօտ... Ընթերցուած ի Ծննդոց. եւ եղեւ Հաբել հովիւ խաշանց...*

13. *72բ-84բ* Կանոն ջուր աւհնելոյ Յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի – *եւ պատարագ մատուցանեն եւ յետոյ երթան ի ջուրն՝ խաչիւ եւ աւետարանաւ... սաղմոս. Ձայն Տեառն ի վերայ ջուրց: Ընթերցուած ելից. եւ խաղացոյց Մովսէս զորդիսն Իսրայէլի...*

14. *84բ-97ա* Կանոն խաչ աւհնելոյ – *Բերեն յեկեղեցին եւ լուանան նախ ջրով... [Ընթերցուած յառակաց]. երանեալ է այր, որ եգիտ զիմաստութիւն...*

15. *97բ-101բ* [Ք]արոզ պատուիրանի – *Կարդա՛ ի բեմին առաջ, քան զպատարագն Աւագ Ե.շաբթի օրն. Լուարո՛ւք ինձ, որդեա՛կք իմ սիրելիք, եւ ես զերկիւղ Տեառն ուսուցանեմ ձեզ...*

16. *102ա-13բ* Կանոն Մեծի աւագ հինգշաբթին <u>Ե</u>րիկունն ժողովին – *Ժողովին ի դուռն եկեղեցւոյն եւ այս կանոն կատարին. Պատրաստէն աւազան ե՛ւ ջուր, ե՛ւ ղենջակ, ե՛ւ եւղ եւ դնեն առաջի քահանային... եւ եպիսկոպոսն ասէ զաղօթս. Փառաւորեմք զքեզ Տէր մեր Յիսուս Քրիստոս...*

17. *113բ-7ա* Կանոն զարմտիս, զսերմն, զսեղջ, զհնձան, խաղող աւհնելոյ – *Սաղմոս. Քեզ վայել է աւրհնութիւն: Լո՛ւր աղ[օթից իմոց]: Քարոզ՝ Վասն լսելի ձայնի աղօթից... Ընթերցուած յառակաց. Պատուեա՛ զՏէր ի քոյոց արդար վաստակոց...*

– *116աբ* Աղօթք երաշտի – *Տէ՛ր, Աստուա՛ծ ամենակա[լ]... որք կերիցեն հանցեն զաւրհնութիւն եւ զփառս:*

Ստ. լս-երում ունի խոռագրեր կամ խոռագրային ցուցումներ:

ՅԱՒԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, *ԺՂ. դար, նոտրգիր*

1. *1ա* [Մէկ եպիսկոպոս մի նոր այգի տնկեր է, եւ դեռ այգին պտուղ տուել չէ, նա եպիսկոպոսին օրըն մահուն հասեր է. նա ի հոգեվարին զայս ողբս ասել է] – */// (անընթեռնելի) Ք[ա՛ր եմ կըրեր սարեր]ոյս, / փուշ եմ կրեր... Գաբրիէլն եկաւ հոգւոյս, / յահէն կապեցաւ լեզուս:*

Տե՛ս եւ հմմտ. Աս. Մնացականեան, Հայկական միջնադարեան ժողովրդական երգեր, Երեւան, 1956, էջ 439-41, Չ$^{\text{որ}}$ 129:

Տաղը գրուած է տարընթերցումներով եւ եռեւաուաջութիւններով: Գուցէ եւ փոփոխակն է Գրիգորիս Աղթամարցու «Յամէն առաւօտ եւ լոյս» սկսուածիով չափածոյի. տե՛ս Գրիգորիս Աղթամարցի, Տաղեր, աշխ. Մ. Թ. Աւդալբէգեանի, Երեւան, 1984, էջ 107-109:

2. *1բ* [Տաղ] – *Խաւարեցաւ աչք լոյսըս հայիճ եմ, / կարճ արեւ այս առին գհոգիս ի մարմնոյս... զամենեսեան, որ ասէք գՀայր մեր:*

3. *65բ-6բ* [ստ. լս-ից՝ Աղօթք] – *Աւրհնեալ ես Տէ՛ր, Աստուա՛ծ ամենակալ, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... պարգեւաց քոց գհատուցումն ընկա՛լ գնուէրս զայս ի մէնջ, զոր մատուցանեմք յանուն սուրբ խաչին եւ սրբոյ Սիոնի:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

72բ (կարմրագիր) եւ զմեղաւոր Գրիգոր *գրիչս յիշեա՛ ի Տէր:*

117ա Գրեցաւ ձեռամբ Գրիգորի, *ի թվին ՌՃՒ. (1671). զմեզ յիշեցէ՛ք ի Քրիստոս:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

66բ (1816 թ.) Թուին ՌՄԿԵ. (1816), Սեպտեմբերի ԺԸ.ին (18), ես՝ տէր Մարդիրոս, *ելի ի տունէն աւ(՛). Աստուած է շնոր[հ]ս Հոգւոյն Սրբոյ արբեալ եւ արա՛:*


ՆՇՈՒՄ՝ *պհպ. Աա՝ սեւով «Մաշտոց բոլորագիր, գրեալ ի մագաղաթի «ձեռամբ* Գրիգորի, *ի թվին ՌՃՒ. (1671)» այսչափ յիշատակարան վերջն: Բաղկանայ ի Ժ. տետրէ, յորոց ա. տետրն ունի 12 թերթ, բ.-12, գ. իսպառ չիք, դ. տետրն ունի 14 թերթ, ե.-15, զ.-12, է.-13, ը.-12, թ.-9, ժ.-16. մատենադարանապետ* Սահակ *վարդապետ* Ամատունի», *հակառակ դիրքով՝ «1303/3625», «ՌՁԻ.-1671,* Մ[եսրոպ] *եպիսկոպոս», պհպ. Աբ՝ մատիտով «գ.-14, ե.-15, զ.-12, է.-13, ը.-12, թ.-9, ժ.-16. Մաշտոց մագաղաթեայ, կազմալոյծ, ծխոտեալ 12 . գրեցաւ ձեռամբ* Գրիգորի *ի թվին ՌՃԻ. [= 1120+ 551= 1671], Գ. 2»», վր. աջ անկիւնում սոսնձած թղթին՝ «[Մ]աշտոց [բո]լորագիր / ի [մա]գաղաթի, / ի թվին ՌՃԻ. (1671): Պհպ. Բա՝ «3625», պհպ. Դբ՝ «Վերականգնված է / նոր կաշվով, հին կազմաստառով, / նոր գծագրութ[յամբ]: / Գլխ. վերականգնիչ՝ Լ. Աղաբեկյան / Երեւան 1977 թ.», թանաքով՝ «19/XI»:*

ԳՐՁԱՓՈՐՁ՝ *2ա՝ կիսախորանի կամարների տակ՝ «արարեալ սրբոյն», 13ա, 52ա՝ հայերէն այբուբենի տառեր, 24բ՝ «պսակ» (քառիցս), 72բ՝ «Աւրհնեա՛ Տէր, կանոն ջուր աւրհնելոյ յայտնութեան Տեառն մերոյ», 81բ-2ա՝ «Ջուր օրհնէք նայ պարոն տէր», 108բ-9ա՝ «Ոտնալւայ նայ պարուն տէրտէր», 113ա՝ «Ոտնալւայն է պարոն տէր»:*

3626
ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, ԲԱՆՔ ՁԱՓԱՒ

ԺԸ. դար

ԹԵՐԹ՝ 209 (գրչի էջակալում՝ 5-424, որ է՝ 2ա-208բ): ՊՐԱԿ՝ 1-22×12 (1՝ 3, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9՝ 8, 10՝ 7, 13, 16՝ 11, 22՝ 5): ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17×10,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (14×7): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 22ա): ՏՈՂ՝ 19-21: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ տպարանային, մետաղէ ագուցիչներով, Ա. փեղկին լատ.՝ «IHS», մէջբը՝ գորշ կտաւ. միջուկը՝ տախտակ. աստառը՝ թուղթ. լուսանցակողերը՝ ճնշումով ծաղկազարդ:



Նմուշ 22ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ (գծանկարային) – ձակատազարդ՝ 69ա, 99ա, 135ա, 161ա, 171ա: Լուսանցազարդ՝ բուսական (69ա, 99ա, 135ա, 161ա, 171ա): Ջարդագիր՝ թոչնագիր (69ա, 99ա, 135ա եւ այլուր), կենդանու հետ համակցումով (171ա):

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին ճաճճած, Ա. փեղկի վն. եւ Բ. փեղկի ստ. մասերը պոկուած-ընկած, Ա. փեղկի միջուկը մէջիին մօտ մասում վերից վար կոտրուած, Բ. փեղկը առանձնացած մէջիից, երեւում է մէջի կաշին, կապիչներն ընկած, կազմատաոնները խիստ աղտոտուած, մաշուած. թ. 206-9՝ եզրերը մաշուած, թ. 209՝ ձեռագրին ամրացուած միայն մէջտեղի հատուածում, 69ա, 99ա, 135ա, 161ա, 171ա-ի լուսանցազարդը եւ ճակատազարդը տպագրից կտրած եւ սոսնձած, ունի հետագայի թերթակալում արաբական թուերով՝ 100ա-2բ՝ 15-20, 108բ-9ա՝ 31-2, եւ հայերէն այբուբենի տառերով՝ 103ա-7բ՝ ԻԱ-Լ, բնագրի սկ.ից 1 թերթ եւ վջ-ից ամբողջ հանակի թերթեր ընկած, թ. 1՝ առկայ է 2 փոքրիկ պատառիկ, թ. 2՝ պատռուած, եզրերը ծալծլուած, ընդմէջ թ. 68-9ի, 98-9ի (չգրած), 134-5ի 1ական թերթ կտրած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տէ՛ս ձեռ. 1540, 3ա-376ա. 1. ա/1ա-94ա (սկ). /// [Գրտայ անց]ող սուրբ աւրին[ին], [զի] պատուիրանն էր նոցա [մին]... /// (մէջից) 68բ ...Այսինքն է բան պատուիրանին, ի լսելիս տիրականին ///(շար.): բ/94ա-8ա: 2. ա/99ա-131բ: բ/131բ-4բ (...Ըստորնայնոցս ամբառնալոյ եւ յերկնայինսդն հրպելոյ /// (շար.): գ/չիք: 3. ա/170բ-2բ: բ/172բ-209բ (...Որպէս զոմանց է ասացեալ, միայն ի յոյսըն յուսացեալ /// (շար.): 4-6/չիք: 7/168բ-70բ: 8/160բ-8ա: 9/135ա-42ա (խորագիր այլ՝ «Տեառն ներսէսի սուրբ եպիսկոպոսի բան խրատ ուսումնասիրաց մանկանց ի դիմաց այբուբենից տառիջ ոտանաւոր չափով»): 10/142բ-6բ (խորագիրն այլ՝ «Նորին տեառն ներսէսի Բան հաւատոյ վասն եղելոց հա[յ]կական տառից չափ<եր>մամբ ոգ<ր>եալ ի ներսէսէ»): 11/146բ-50բ (խորագիրն այլ՝ «Նորին տեառն ներսէսի Բան հաւատոյ վասն եղելոց հա[յ]կական տառից չափերմամբ ոգեալ ի ներսէսէ»): 12/158բ-60բ: 13/152բ-4ա: 14/154բ-6ա: 15/156բ-8ա (խորագիրն այլ՝ «Նորին ժողովող անուն ասացեալ է»): 16-21/չիք: 22/150բ-2ա (խորագիրն այլ՝ «Նորին ներսեսի ասացեալ»): 23/չիք:

Ունի՝

– 98աբ («ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԵՐԳՍ») – Սուրբ երջանիկ Տէր ընդ ներսէս... փառս առաքեմք առ Տէր Յիսուս:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *Ա. կազմաստառ, (1724, շղագիր) Թիվն ՌՃՀԳ. (1724). ամէն:*

2. *152ա (1821, նոտրգիր) Ի թիւին Հայոց ՌՄՃՀ. (1821), Բ. Յունվարի, առաչին օրըն Իսայդուլին հարսանիս արինք: երախայներըն՝ Թաթէոսըն ու Ասլիխանըն էլաւ Զ. ամիս է յինէին (՞):*

ՆՇՈՒՄ՝ *մէջքին սոսնձած թերթիկին՝ «1304, Յիսուս Որդի Ներսիսի Շնորհալւոյ», Ա. կազմաստառին սոսնձած թերթիկին՝ «Յիսուս Որդի Ներսիսի Շնորհալւոյ, նօսր գրչութեամբ, սկիզբն եւ վերջն թերի. թիւն եւ անուն գրչին անյայտ: Մատենադարանապետ Սահակ վարդապետ Ամատունի», «ԺԸ., Մ[եսրոպ] եպիսկոպոս», «1304/3626»:*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *Ա. կազմաստառին՝ «ճշմարիտն», հայերէն այբուբենի տառեր, Բ. կազմաստառին՝ «եղեր Թիֆլիզ», Բ. կազմաստառին սոսնձած թերթիկին՝ «Հեղումն արէան Որդոյ Աստուծոյ, զոր էհեղ ի խաչին, ազատեաց զմարդկային բնութիւնս ի դժոխոց, ազատեաց զմեզ ի Քրիստոս մեղացն», զանազան անկապակից բառեր, Բ. փեղկին սոսնձած թերթիկի տակ՝ «կատարեաւ բան չափեալ ի համբակէ հաւատացեալ», հայերէն այբուբենի զանազան տառեր, ստորագրութիւն:*

3627
ԱԻԵՏԱՐԱՆ


ԺԴ. դար

ԿԱԶՄՈՂ՝ Անանիայ աբեղ (1573 թ.):

ԹԵՐԹ*՝ 237-1 (թուիչ՝ թ. 154-6). չգրուած՝ 15բ: ՊՐԱԿ՝ Ա-ԻԳ**×10+8 (Ա. 6, Է 11, Ը 9, Թ 8, ԺԲ, ԺԳ 12): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17×12: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (12,5×8,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 80ա): ՏՈՂ՝ 19-23: ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշի. միջուկը՝ տախտակ. աստառը՝ կապոյտ հէնմով ծաղկազարդ կտաւ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԴ՝ դեղին չգրուած թուղթ:

* Ծնթ. Թ. 4, 220-5, 236՝ ընկած թերթերի փոխարէն լրացուած եւ մուծուած հետագայ կազմողի ձեռով:

** Ծնթ. ԻԳ. պրակահամարը լրացուած կազմողի ձեռով, ի տառն էլ մոռացմամբ չգրած:



Նմուշ 80ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած 1977 թ., կազմը, միջուկը, աստառը եւ պիպ-ները նորոգման ժամանակի. լուսանցակողերը մաշուած, մասամբ աղտոտուած, կարմիրը թափուած. բոլոր թերթերի հիմքը սպիտակ թղթով նորոգուած, իսկ եզրերից, որոշ թերթեր ամբողջութեամբ ամրացուած այլ՝ կիսաթափանցիկ դեղին թղթով, տեղ-տեղ գիրը թափուած, խոնաւութեան հետեւեր, զանազան բծեր. ընդմէջ թ. 73-4ի, 229-30ի 1ական թերթ ընկած, թ. 67՝ սխալ տեղադրուած, կարդալ՝ թ. 3, 67, 5. թ. 132՝ էջանիշ՝ սպիտակ թել:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *1ա-3բ, 67աբ*, 5ա-66բ, 68ա-73բ* Աւետարան Մատթէոսի *(գլ. ԻՀ. 20ի վերջ՝ թափուած):*

15ա՝ գրչի ցուցում (2-րդ սեան վերջին 2 տողը) «[թուղ]ա՛ն շուք տուր ///ան կարդայ»:

* Ծնթ. թ. 67՝ նախապէս սխալ տեղադրուած, պէտք է լինէր թ. 4ի փոխարէն, որը լրացրել եւ համապատասխան տեղում տեղադրել է 1573 թ. կազմողը, այդ է թ. 4ի չլինելու պատճառը:

2. *74ա-120ա* Աւետարան Մարկոսի:

3. *120ա-189ա* Աւետարան Ղուկասու:

4. *189ա-236բ* Աւետարան Յովհաննու *(գլ. ԺՀ. 20-36՝ թափուած):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

237ա (1573, կազմողի, բոլորգիր) Փա՛ռք ամենասուրբ երրորդութեան՝ Հաւր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ այժմ: Յամի ՌԻՀ. (1573), ի թագաւորութիւն շահ Թահմազին, *ի հայրապետութիւն տէր* Ովաննէս *արհեպիսկոպոսի* Գողթան *գաւառի, կազմեցաւ կրկին Աւետարանս ձեռամբ մեղաւոր* Անանիայ *խաբողայիս, ի վանքս* Ագուլաց, *ընդ հովանեաւ* Սուրբ Թումայի *առաքելոյս եւ ի* Սուրբ Աստուածածնին*: Արդ, աղաչեմք զձեզ, սրբազան դասս քահանայից, զի որք հանդիպիք զլոյսերանգ բուրաստանիս կարդ[ալով] կամ աւրինակելով զսուրբ Աւետարանս, յիշեցէ՛ք ի մաքրա[փայլ] |237բ| [աղա]ւթս ձեր զՓիրիջանն, զՍալթան, զՇահզատէն, զԻփական, զՇահվերտին, զխոջայվելին, զխալըխվերդին, զՇահնազարն, որ երեսս ի դուռս* Սուրբ Քստափուրիս *(այսպէս) իւր յիշատակ եւ ծնողաց իւրոց, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն:*

ՆՇՈՒՄ՝ *պհպ. Աա, 1ա՝ մատիտով «3627», պհպ. Գբ-ին սոսնձած թերթիկին՝ «Վերականգնված է / նոր կաշվով, նոր կազմաստառով, / նոր գծագրությամբ: / Գլխ. վերականգնիչ՝ Լ. Աղաբեկյան / Երեւան, 1977 թ.»:*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *187բ՝ «նայք, նա, տա, աաա», 237բ՝ «աղաւթս», եւ հայերէն այբուբենի զանազան տառեր, 289բ՝ ստ. լս-ում փակցրած թերթիկին, մանուշակագոյնով՝ «Վասակաշէն»:*

ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *94ա՝ թռչուն, 141ա՝ մարդու դեմք:*

3628
ՏԱՂԱՐԱՆ

(բաղկացած 2՝ տպագիր եւ ձեռագիր մասից)

ԹԵՐԹ՝ 337 (թ. 1-271՝ տպագիր): ԿԱԶՄ՝ բաց շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դռնակով. միջուկը՝ տախտակ. աստառը՝ ծաղկազարդ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր:


ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի վրայ կան ճաթեր եւ թերծուածքներ, զոյգ գամերը եւ կապիչներն ընկած, դռնակի վերին մասը Բ. փեղկից փոքր-ինչ անջատ, թերթերի վրայ կան աղտոտուածութեան հետեւեր:

ՆՇՈՒՄ՝ *մէջքին սոսնձած թերթիկին՝ «Յիսուս Որ/դի Ներսիսի / Շնորհալւոյ», կարմրով՝ «սո///»:*

Ա. ՏՊԱԳԻՐ

ԹԵՐԹ՝ 271 (թ. 1-271. տպագիր, ունի էջակալում՝ բ.-շիզ. (2-526), որ է՝ 5բ-270բ). չգրուած՝ 1ա-2բ, 3բ, 4ա, 88ա, 126ա, 172ա, 271բ: ՊՐԱԿ՝ 4+A-Kk×8*: ՆԻՒԹ՝ թուղթ. կապտաւուն, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ թ. 14-6, 38, 39՝ անընկալելի պատկեր, թ. 23, 30՝ թոչուն, թ. 29՝ ծածանուող դրօշ, թ. 41, 50, 228 եւ այլուր՝ գծային խաչ՝ պսակուած երեմնուկով, որի հորիզոնական թեւերից մէկն աւարտուում է լատինատառ «V», միւսին հակառակ դիմով՝ «P»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15,5×10,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (11,6×6,8). սեւով գծափակ: ԴԻՐ՝ տպագիր բոլորգիր (նմուշ՝ 46ա). ունի յիշագրեր: ՏՈՂ՝ 17:

* Ծնթ. Պրակաճամարները՝ լատինատառ (A-Z+Aa-Kk), կողմին՝ արաբացիւ 1-4 թերթակալումով: Տիտղոսաթերթը եւ փորագրապատկերներն էջակալուած չեն:



Նմուշ 46ա

ՓՈՐԱԳՐԱՊԱԿՏԵՐՆԵՐ – Ներսէս Շնորհալի՝ 3ա, Յիսուս Քրիստոս՝ 4բ, Խաչելութիւն՝ 88բ, Սուրբ Երրորդութիւն եւ Ներսէս Շնորհալի՝ 126բ, «Բան խրատ ուսումն ասորաց մանկանց»՝ 172բ: Կիսախորան՝ 5ա, 89ա, 206ա: Ճակատազարդ՝ 127ա, 173ա, 218ա: Վերջնազարդ (87բ, 124բ, 125բ, 171բ, 182ա, 192ա, 194բ, 197ա, 199բ, 205բ, 218ա 271ա (Բովիսի տպարանաձիշը)): Բաժանազարդ (205բ, 218ա): Լուսանցազարդ՝ բուսական, խաչեալ Քրիստոս (272ա), թռչնային: Զարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

3ա-270բ [3ա Տիտղոսաթերթ] – *Տէառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի նուէր մաղթանաց ներչափական տաղիւ ողբումն հեծութեան ի խորոց սրտէ խօսք ընդ Աստուծոյ (ստ. աջ անկիւնում՝ «Ruphanus sculp.»)։*

Տե՛ս Ներսէս Շնորհալի, Յիսուս Որդի, Վեհետիկ, տպագր. Ջուան-Բատիստա Բովիսի, 1660: Նկարագրութիւնը տե՛ս Հայ գիրը 1512-1800 թուականներին. Հայ հնատիպ գրի մատենագիտութիւն, [կազմեցին] Ն. Ոսկանեան, Ք. Կոռկոտեան, Ա. Սաւալեան, Երեւան, 1988, էջ 34-35, Հմր 46. այստեղ՝ էջ 34 «տե՛ս Հմր 37 նկարագրութեան բովանդակութիւնը», իսկ այս Հմր 37բ նոյն գրի՝ Յովհաննէս Անկիւրացու 1643 թ. տպագիրն է. այսինքն՝ 1660 թ. տպագրի բովանդակութիւնը ցանկուած չէ, ուստի այստեղ մեր օրինակի պարունակութեան միայն խորագրերը ներկայացնում ենք կրկնակ՝ ձեռագրի եւ տպագրի հայատառ էջահամարներով (վերջի՝ շիա.-շիզ. էջերի յիշ-ը տե՛ս Հայ գիրը 1512-1800 թթ., էջ 35):

1. *4ա/ա.-120ա/միթ.* Յիսուս Որդի Հաւր միածին եւ ճառագայթ կերպարանին...

2. *120ա/միթ.-124բ/մլբ.* Յիշատակարան բանի երգողին մաղթանաց տեառն Ներսէսի Կլաեցոյ...

3. *125ա/մլթ.-125բ/մխ.* Սուրբ երջանիկ տէրդ Ներսէս («ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԵՐԳՍ»)...

4. *127ա/մխա.-167ա/յիա.* Նորին Ներսէսի ասացեալ առ Սուրբ Երրորդութիւն...

5. *167ա/յիա.-171բ/յլ.* Յիշատակարան տեառն Ներսէսի...

6. *173ա/յլա.-182ա/յխթ.* Տեառն Ներսէսի սրբոյ եպիսկոպոսի Բան խրատ ուսումնասիրաց մանկանց. Ի դիմաց այբուբենից տառիջ ոտանաւոր չափով («Ա-Ք. ՆԵՐՍԷՍ»)...

7. *182բ/յծ.-187ա/յծթ.* Նորին տեառն Ներսէսի Բան հաւատոյ Վասն եղելոց հայկական տառից չափերմամբ, ոգեալ ի Ներսէսէ («Ա-Ք. ՆԵՐՍԵՍԻ Է»)...

8. *187բ/յկ.-192ա/յկթ.* Նորին բան Ներտաղական Տեառն Ներսեսի սրբոյ. Բան խրատ ուսումնասիրաց մանկանց Ի դիմաց այբուբենից տառից. ոտանաւոր չափով («Ա-Ք. ՆԵՐՍԵՍԻ Ե»)...

9. *192բ/յհ.-194բ/յհդ.* Նորին Ներսեսի ասացեալ («Ա-Ք»)...

10. *195ա/յհե.-197ա/յհթ.* Տեառն Ներսէսի Յիշատակարան յԱռակացն Սողոմոնի, զոր իւրովք ձեռօքն գրեաց («Ա-Ք»)...

11. *197բ/յձ.-199բ/յձդ.* Անդրադարձութիւն տառից յիշատակի («Ք-Ա»)...

12. *200ա/յձե.-202ա/յձթ.* Նորին ժողովող անուն ասացեալ է («ՍՈՂՈՄՈՆ ՆԵՐՍԵՍԻ ԲԱՆՍ Ե»)...

13. *202բ/յղ.-205ա/յղե.* Թուխք մխիթարական տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի՝ առ ոմն իշխան արեւելեան, վասն որդոյ իւրոյ տարաժամ մեռանելոյ («Ա-Ք. ՆԵՐՍԵՍԻ Է»)...

14. *205բ/յղզ.-215ա/նժե.* Նորին Ներսեսի Կլայեցւոյ. Ցաղագս երկնից եւ զարդուց նորայ բարառնաբար ի դիմաց նորա, ի չափ երկոտասանիցն պարեալ ոտից. ի խնդրոյ առն բժշկապետի եւ աստղագիտի Մխիթար անուն...

15. *215ա/նժե.-217բ/նի.* Նոյնաչափ տաղ ի խնդրոյ անուանագիծ տանց («ՄԽԻԹԱՐ ԲԺՇԿԻ ԸՆԿԱԼ Ի ՆԵՐՍԷՍԷ ՁԱՅՍ ԲԱՆ»)...

16. *218ա/նիա.-220ա/նիե.* Շարադրութիւն հոմերական վիպասանութեամբ. սակս հայկազանցն սեռի եւ Արշակունեացըն զարմի ի սկզբանցըն մինչեւ ի վաղճան, առասացեալ Ներսէսի՝ եղբօր կաթողիկոսի Հայոց տէր Գրիգորիսի, յիւրականսըն նախնիս, ի համբակութեան ելով տիս...

17. *220բ/նիզ.-267բ/շի.* Վիպասանութիւն նախնի ըստ Հոմերի սկսեալ ի վերուստ...


18. *268ա/շիա.-20բ/շիզ.* Ծանուցում պայծառ ընթերձողաց... Կատարեցաւ գիրք Բ., նախ Յիսուս որդի եւ ապայ Սաղմոս: Ի տպագրատունն Պովիսի:

Բ. ՁԵՌԱԳԻՐ

Ռճվև. – 1682

ԳՐԻՉ՝ Յովնաթան:

ԹԵՐԹ՝ 66 (թ. 272-337). չգրուած՝ 336ա-7բ: ՊՐԱԿ՝ Ա-Ձ×12 (Ձ 6): ՆԻՒԹ՝ թուղթ. կապտաւուն, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ 290, 292, 308 եւ այլուր՝ երեք շրջանակ, մէկը թագով պսակուած, կենտրոնում խաչ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15,5×10,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (11×7). սահմանագծուած սեւով: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 288ա). վերջին 2 խորագրերը եւ որոշ տողեր կարմրագիր: ՏՈՂ՝ 22:



Նմուշ 288ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ (հիմնականում գծանկարային) – ճակատազարդ՝ 272ա, 290ա, 302ա, 313ա: Լուսանցազարդ՝ խաչուած Քրիստոս (272ա), թռչուն, բուսական: Ձարդագիր՝ թռչնագիր, կենդանագիր: Գոյներ՝ սեւ, դարչնագոյն (302ա):

Տե՛ս Աստղիկ Գէորգեան, Հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն Թ-ԺԷ. դդ., Գանիրէ, 1998, էջ 566, Հմ՝ 353:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

272ա-335ա [Ներբողք, խրատք]

1. *272ա-80բ* Ներբողեան կենսատու սուրբ խաչին առ ի սրբոյ հօրէն մերմէ Դաւթի ասացեալ, տեառն մերոյ Ներսէսի կաթողիկոսի փոխադրեալ յոտանաւոր չափս եւ աստանօր եղաւ – *Բարձրացուցէ՛ք զՏէր Աստուած մեր միաբան՝ / մարգարէն յառաջ ձայնեալ տայ ձեզ հրաման... փոխհատուցո՛ւք պէսպէս ըզքանս գովասան / աստուածազօր սըրբոյ խաչիս փառատրութեան:* ա. *280բ-9ա* (սկսեալ՝ «Փոխէ՛ զգոյնդ») ա.-խը. – *Որհնեալ ես փայտ քրիստոսական / աստուածազարդ սուրբըդ նշան... եկեղեցի այսօր պարէ, / զպայծառ նըշանս ձայնիւ պատուէ, / զՅիսուս ի սա փառաւորէ / այժմ եւ յապայն, որ գալոց է:*

2. *289ա-300ա* Առտաոյ թուցս ի սոյն կարգ յարմարեալ բան բարառնական՝ ոգեալ դիմառնաբար ի դիմաց Վաղարշապատու Սուրբ Կաթուղիկէին. ողբ աւաղականք եւ ձայն աշխարականք լեալ անհուն հեծեծանօք վասն աւերման աշխարհիս Հայոց, եւ բնաւին սպառելոյ հայրապետութեանն եւ թագաւորութեանն համագունդ իշխանութեան՝ շարեալ չափաբան բերմամբ, հոմերական արհեստիւ՝ ի Ստեփաննոսէ Սիւնեաց այցելուէ, ի խնդրոյ շնորհազարդ վարդապետի Խաչատրոյ Կեչառեցի *(միայն խորագիրը նոտրգիր, խորագրից առաջ՝ «Տունք Մ. եւ ԺԲ.») Ժ.-Մ. – Ձայն բարձրագոյժ եւ ահագին նըման օդոցդ որոտացին... յաւէտ ամօք, որ չվըճարին, այժմ եւ անգէտ յաւիտենին:*

– *300ա-1բ* Յիշատակ բանի ըստ անուան ողոգին՝ ի տէր Ստեփաննոս վարդապետէ *(«ՍՓԵՓԱՆՈՍ»)* – *Սիւնըդ լուսոյ ի սկըզբանէ խորան փառաց կանգնեալ յերկրէ... ի սեղանոյ իւր որպէս շան, եւ նըմա փառք միշտ յաւիտան այժմ եւ յաւէտ եւ անվախճան:*

3. *302ա-9ա* Կարապետի եռամեծի վարդապետի ասացեալ խրատս պիտանի մանկանց եկեղեցւոյ՝ ոտանաւոր տաղիւք *(«Ա-Ք», «ԿԱՐԱՊԵՏԷ»)* – *Ամենայնի սկիզբն ես եմ. դուք լուարո՛ւք, զոր ինչ ասեմ, / ո՛վ մանկունք իմ, ըզձեզ խրատեմ եւ ըզքնութիւնս իմ ձեզ ճառեմ... է սա ընծայ սուղ իմն եւ փաստ նորամարգիցն, որք ի ջասաստ (՞):*

4. *309ա-12բ* Խրատ մանկանց տղայոց յուսումնասիրաց՝ ասացեալ Առաքել վարդապետէ. ոտանաւոր տաղիւ չափ Այբուբենից *(«Ա-Ք», «ՁԱՌԱՔԵԼԷ»)* – *Այբն Աստուած է օրինակ, ուսուցանէ զքեզ համարձակ... լեալ ըստ թուոյ այբուբենի, էին լուսոյ անճառելի:*

5. *312բ-35ա* Ժ-ՆԴ. Գովեստ ներբողական պատմագրական բանիւ՝ յաղագս վարուց մեծի հայրապետին տեառն Ներսէսի Կլայեցւոյ Հայոց կաթողիկոսի եւ տիեզերալոյս վարդապետի՝ ասացեալ տեառն Ներսէսի Լամբրոնոյ եպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցւոյ եւ սորին հարազատի որդւոյ դըստեր եղբօր – *Շարժել ստիպէ հարկ տէրունի, ըզգարդարումն իմըս բանի... հայցեա՛ լինել մեզ լըսելի, զեկա՛յք օրհնեալքըն հայրենի:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

289բ (նոտրգիր) Յիշեցէ՛ք զգրիչ Յովնաթանս, եւ դուք յիշեալ լիջիք. թվին Ռճվև. (1682):

301բ ես՝ Յովնաթանս, *զայս գրեցի*
եւ ընթերցողաց աղաչեցի,
զի վասն տառիս խորշութեան
Թողութիւն ի ձէնջ խնդրեցի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

335բ (1718 թ., բոլորգիր) Ձայս Յիսուս Որդի գիրքս ի Ռճկէ. (1718) թուին ես՝ տէր Բարսեղ *վարդապետս, ետու զսա ի վանս* Ագուլեաց, *ի դուռն սրբազան առաքելոյն* Թովմայի՝ *անջնջելի յիշատակ ինձ եւ իմ ծնողացըն <համոցն>:*

ՆՇՈՒՄ՝ *1ա՝ «Ռճվև.– 1682,* Մ[եսրոպ] *եպիսկոպոս», 2ա՝ «1306/3628», 5ա՝ «Ի գրեանց* Յովսէփ *քահանայի Տ. Յ.»:*


ԳՐՁԱՓՈՐՁ՝ *321ա՝ խզբզոցներ:*

3629
ԱԻԵՏԱՐԱՆ

ՄԱՔԵՆԱՅՈՑ ՎԱՆՔ **ՋԽԷ. – 1498**

ԳՐԻՉ՝ Ալեքսիանոս:

ԹԵՐԹ՝ 289. չգրուած՝ 1ա: ՊՐԱԿ՝ Ա.-ԻԴ×12 (Ա. 11, ԻԴ 14): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16×9,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (14,5×8,7): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 36ա). երբեմն գրչափոխութեամբ (153բ-4ա եւ այլուր): ՏՈՂ՝ 21: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի. միջուկը՝ տախտակ. աստառը՝ շերտազարդ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա.-Դ (վջ.)՝ Ա՝ սպիտակ Գ, Դ՝ դեղին թուղթ. չգրուած:



Նմուշ 36ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Մատթէոս՝ 1բ, Մարկոս՝ 78բ, Ղուկաս՝ 132բ, Յովհաննէս եւ Պրոխորոն՝ 223բ: Կիսախորան՝ 2ա, 79ա, 133ա, 224ա: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն, թռչուն՝ կցին օձ (196բ), տաճար (117բ, 207ա, 267բ), խաչ (72ա, 214բ), «Հուր եկի արկանել» (182ա): Ձարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր, կենդանագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, մոխրագոյն, մանուշակագոյն, սեւ, սպիտակ:

Տե՛ս Աստղիկ Գէորգեան, Անանուն հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն Թ-ԺԷ. դդ., Գահիրէ, 2005, էջ 245, Հմ 359:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած Ի. դարում, նոր կազմի վրայ փակցրած հնի մաշուած եւ ֆերծուածֆներով կաշին, Բ. փեղկի հին կաշին կիսով չափ, աստառը եւ պիպ. Գ, Դ՝ նորոգման ժամանակի. լուսանցակողերի կարմիրը մասամբ թափուած, աղտոտուած, հին նորոգման ժամանակ թերթերը եզրահատած, որով տեղ-տեղ բնագիրը, որոշ զարդագրեր եւ լուսանցազարդերը վնասած, որոշ թերթերի վրայ խոնաւութեան զորշաւուն հետքեր, թ. 203-39՝ ստ., թ. 239-89՝ վր. եւ ստ., պիպ. Բ՝ արտ. եզրերը նորոգուած դեղին թղթով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *2ա-78ա* Աւետարան Մատթէոսի:

2. *79ա-132ա* Աւետարան Մարկոսի *(131ա-2ա* Յարուցեալ Յիսուս*)*:

3. *133ա-223ա* Աւետարան Ղուկասու:

4. *224ա-89ա* Աւետարան Յովհաննու:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

289ա Փա՛ռք եզակի տէրութեանն եւ եռահիւսակ անձ[ն]աւորութեանն՝ Հաւր եւ Որդո[յ] եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ, եւ աւիտեան, եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Արդ, գրեցաւ սուրբ Աւետարան[ս] ի թվականիս Հայոց ՋԽԷ. (1498), ձե[ռա]մբ անարժան հէ[ք, ֆանաք /// Ալեքսիանո]|289բ|սու միայն աբեղա եւ գործով ունայն, եւ վա[տ]թար եմ քան զամենայն մարդ, ի սուրբ ուխտս Մաճենացոց, ի դուռս սուրբ տաճարիս Աստուածածնին եւ հայր Սող[ո]մովնի գերեզմանիս եւ այլ սրբոց, որ աստ կան, ի առաջնորդութեան սուրբ ուխտիս՝ Սարգիս վարդապետին: Եւտոյ եկաւ եպիսկոպոս մի Դաթէոս անուն, հակառակութիւն մէջ անկաւ, եւ ի չարէն ոչ եղեւ միաբանութիւն սոցայ: Ելաք ի Մաճե[ն]իսն, սկսա եւ [արագապէս] վճարեցի. [այսմ ամի եղեւ] /// խռովութիւն խիստ, Իպա-Սաւլթան անուն պարոն էառ զԱհմատ խանն եւ զՄուրատ խանն եւ էած աւեր աշխարհի, զերեք տարէն մալն Գ. ամսումն էառ: Աստուած գիւր ումր կարճ անէ սրբոց բարէխաւսութեամբ. ամէն:*

* Ծնթ. Տե՛ս ժե. դ-ի յիշ-f, Գ., էջ 261, Հմ 351: Սահակ վ. Ամատունին (տե՛ս 1ա էջին սոսնձած թուղթը) եւ Համաոօտ ցուցակը (հտ. Ա., էջ 1053) գրչի անունը գրել են «Ֆանոս», Ա. Գէորգեանը (տե՛ս նշ. աշխ.)՝ «Ֆանոս Ալեքսիանոս Խու»: Մենք հետեւել ենք Լ. Խաչիկեանի ծանօթագրութեանը (ժե. դ-ի յիշ-f, Գ., էջ 261). «Գրչի անունը՝ Ալեքսիանոս պատռուած է, վերականգնում ենք Մաճենացոց վանքում նոյն ձեռագրով ընդօրինակուած Հմ 220 (1499 թ.) գրչագրի հետ համեմատելով»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

պհպ. Բա (ժէ-ԺՀ. դդ., նոտրգիր) Յիշատակ է այս սրբագործ Աւետարանս Մարդ[՞]ին *եւ իւր մայր* Մարիամին, *///(տողամիջում բաց գոյնի թանաքով՝ «իւր կողակից» /// (անունն անընթեռնելի) եւ իւր ծնողաց՝* Մկրտչին, *եւ իւր պապ* Բարսեղի *եւ իւր տատ* Պնաւշին, *եւ իւրանց քահանայ տէր* Սօհպաթին, *իւր կողակից* Եղսումին: *Դարձեալ թոռներն՝* Մէլիխէթ, Սիմոն, Սօհպաթն, *դուստր՝ խանում* Գուլփաշէն, *որ [հալ]ալ արդեանց /// այս սուրբ Աւետարան տվին յիշատակ /// (մի քանի բառ ջնջուած, անընթեռնելի):*

ՆՇՈՒՄ՝ *1ա՝ (մատիտով) «3629», վրան փակցուած թերթիկին՝* «Աւետարան *բոլորագիր, ի թվի «Գրեցաւ... ի թվականիս Հայոց ՋԽԷ. (1498)* ձեռամբ անարժան, հէք Ֆանոս *սու(տ) միայն աբեղա... ի սուրբ ուխտս...» (յիշը բերել է լրիւ), Յիշատակարան ի վերջն: Մատենադարանապետ* Սահակ վ. Ամատունի», *թերթիկի հակառակ երեսին՝ «1311/3629», «ՋԽԷ. – 1498,* Մ[եսրոպ] *եպիսկոպոս», մատիտով՝ «Աւետա///, 947 ///ցոյց ի /// Հայր ս/// վերջու///», 2ա՝ կիսախորանի կամարի տակ, մա-*

տիտով «ն=400, խ=40, է=7, 1879-999=880, 447+552=999», 132բ՝ (վր. լս-ում մատիտով) «780 տարի է գրած Աւետարանս», (ստ. լս. մատիտով) «Այժմս 1879 թ. Քրիստոսի», պհպ. Աա՝ (մատիտով) «Ջեխ.-1498», պհպ. Աբ՝ (Ի. դ., շղագիր, մատիտով) «[Հետա]քրքրական պատկերներով: Սուրբ գրքի վկայութիւններով նկաքած են, լս-ներում «փոքրիկ տէր [Հայ(՞)]րապետից»: Վերջում (էջ 113) յիշատակ, թ. 1700, Յուլիսի Ի. (20): Մաքուր գրչութիւն: Գրուածքի բովանդակութիւնն է՝ Պարգումն է. մահացու մեղքերի՝ հպարտութիւն, նախանձ, բարկութիւն, ծուլութիւն, ագահութիւն, որկրամոլութիւն եւ [բղջա]խոհութիւն»:

3630
ԾԱՂԿԱՔԱՂ ՅԱԻԵՏԱՐԱՆԱՅ

(բաղկացած 2 ձեռագրից)

ԹԵՐԹ՝ 115+1 (կրկն.՝ թ. 2): ԿԱՋՄ՝ մուգ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դոնակով եւ զոյգ գամերով, Ա. փեղկին՝ 60, Բ. փեղկին՝ 12 կոստղ, Ա. փեղկի վրայ 8 փլաք, կենտրոնում՝ առծաթէ խաչ, վերին եւ ձախ թեւերին՝ ապակէ ակներ. միջուկը՝ տախտակ. աստառը՝ կանաչ մետաքս, դոնակինը՝ շերտազարդ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, վրան կան ճաթեր եւ ֆերծուածքներ, Ա. փեղկի ստ. մասի կաշին մէջտեղից պոկուած-ընկած՝ երեւում է միջուկը, խաչի թեւերի 2 ապակէ ակը եւ 24 կոստղը, Բ. փեղկի կենտրոնում փակցուած երեմնի խաչը եւ զոյգ կապիչներն ընկած. լուսանցակողերի կարմիրը մասամբ թափուած, լուսանցակողերը, յատկապէս վերինը, աղտոտուած, մաշուած. թերթերի վրայ կան զանազան բծեր, թանաքի եւ սոսնձի հետքեր. թ. 93, 94՝ լուսագծերով թուղթ, մուծուած հետագայում, թ. 95-115՝ այլ ձեռ՝ այլ նկարազարդումով. էջանշան կապոյտ թել՝ թ. 82. վջ.ից պակասաւոր.


ՆՇՈՒՄ՝ *Ա. փեղկի կազմաստառին փակցուած թերթիկին՝ «Հասարակ խաչազարդ Աւետարան», «1372/3630», «ՌԺէ.-1568. Մ[եսրոպ] եպիսկոպոս»:*

ՁԵՌԱԳԻՐ Ա.

ԱՄԻՐԴԱԻԼՈՒ ՎԱՆՔ (ԲԱՂԷՇ) ՌԺէ. – 1568

ԳՐԻՋ, ԿԱՋՄՈՂ՝ Ներսէս աբղյ (2ա-91բ): ՍՏԱՅՈՂ՝ Կիրակոս:

ԹԵՐԹ՝ 93+1 (1ա-93բ. կրկն.՝ թ. 2): ՊՐԱԿ՝ Ա.-Ը×12 (Ը 9)+1: ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17,5×13: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (13,5×10): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 12ա): ՏՈՂ՝ 18:



Նմուշ 12ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – (լուսանցազարդերը եւ զարդագրերը գծանկարային). Ճակատազարդ՝ 2ա: Լուսանցազարդ՝ բուսական: Զարդագիր՝ թոչնագիր, հանգուցագիր: Գոյներ՝ շագանակագոյն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ա. *2ա-5ա* Բ. Ղազարու – *Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս ի Բեթանիա, ի գեղջէն Մարեմա... երթա[յ]ին եւ հաւատա[յ]ին ի Յիսուս (Յովհ., ԺԱ. 11-ԺԲ. 11):*

բ. *5ա-6ա* Ճաշու Աւետարանն Յոհաննու. Ղ.* – *Եւ էր մերձ Զատիկն հրէից... եւ հաւատա[յ]ին ի Յիսուս (գլ. ԺԱ. 55-ԺԲ. 11):*

* Ծնթ. Այսպիսիք ինն գլխակարգութեան համարներն են:

գ. *6ա-7բ* Ծաղկազարդի առաւօտուն. Աւետարան Մարկոսի. ԶԺԶ. – *Եւ գան յերիքով, եւ ընդ ելանել նորա յերիքովէ... ել ի Բեդանիայ երկու տասանեաւքն հանդերձ (Ժ. 46-ԺԱ. 11):*

դ. *7բ-9բ* Կիրակի Ճաշու. Աւետարանն Մաթէոսի – *Եւ յելանել նորա յերիքովէ՝ գնացին զկետ նորա ժողովուրդք... ել արտաքո քաղաքին ի Բեթանիա եւ անդ ագաւ (Ի. 29-ԻԱ. 17):*

ե. *9բ-11ա* Իսկ Թ. ժամուն Աւետարան Ղուկաս – *Եւ եղեւ, իբրեւ մերձեցաւ ի Բեթբագէ եւ ի Բեթանիայ... կանխեալ կային զնմանէ ի լսել (ԺԹ. 29-48):*

զ. *11ա-2ա* Բեմբն կարդա. Աւետարան Ոհաննու. Ճ. – *Ի վաղիւ անդր ժողովուրդ բազում, որ եկեալ էր ի տունն... զի փառաւորեսցի Որդի մարդոյ (ԺԲ. 12-23):*

է. *12ա-5բ* Աւետարան Մատթէոսի – *Եւ այգուցն իբրեւ դարձաւ անդրէն ի քաղաքն քաղցեալ... եւ սակաւք են ընտրեալքս (ԻԱ. 18-ԻԲ. 13):*

12ա ստ. լս. գրչից՝ «Բ.շաբթի առաւաւտուն»:

ը. *15բ-6բ* Աւետարան Մատթէոսի – *Եւ իբրեւ ելանէր Յիսուս յերուսաղէմ, առ զերկոտասանսն առանձինն... եւ տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց (Ի. 17-28):*

թ. *16բ-9բ* Աւետարան Մարկոսի. ՃԼ. – *Եւ առաքեն առ նա զոմանս ի փարիսեցւոց անտի... արկ գոյիւ չափ զկեանս իւր (ԺԲ. 13-44):*

ժ. *19բ-27ա* Աւետարան Մաթէոսի. Մխ. – *եւ ելեալ արտաքս ի տաճարէն՝ գնայր Յիսուս... եւ Որդի մարդոյ մատնի ի խաչ ելանել (ԻԴ. 1-ԻՋ. 2)։*

ժա. *27ա-8ա* Աւետարան Մարկոս. ՃԽԴ. – *եւ էր Ջատիկ, եւ բաղարջակերք յետ երկուց աւուրց... զի՞արդ պարապով մատնեսցէ զնա (ԺԴ. 1-11)։*

ժբ. *28ա-9ա* Աւետարանն Մաթէոս. ՄՀէ. – *Յայնժամ ժողովեցան քահանայապետքն եւ դպիրք եւ ծերք... զի մատնեսցէ զնա նոցա (ԻՋ. 3-16)։*

ժգ. *29ա-31ա* Աւետարանն Յոհաննու – *Բայց այժմ անձն իմ խռովեալ է, եւ զի՞նչ ասացից, եթէ՝ Հա՛յր, ապրեցո՛յ զիս... որպէս ասաց ինձ Հայրն, այնպէս խաւսիմ (ԺԲ. 27-50)։*

ժդ. *31ա-2բ* Աւետարան Ղուկասու. ՀԴ. – *Աղաչէր զնա ոմն ի փարիսեցւոցն, զի կերիցէ ճաշ ընդ նմա... երթ ի խաղաղութիւն (Լ. 36-50)։*

ժե. *32բ-3ա* Աւետարան Մաթէոսի. ՄՀԸ. – *Յայնժամ ժողովեցան քահանայապետքն եւ դպիրք եւ ծերք ժողովրդեանն... ասաց զինչ կա (ԻՋ. 3-15. տե՛ս նաեւ 28ա-9ա)։*

ժզ. *33բ-4բ* Աւետարան Մատթէոսի. ՄՀԸ. – *Եւ յառաջնումն աւուր Բաղարջակերացն մատեան աշակերտքն առ Յիսուս... եւ ելին ի լեալն Ջիթենեաց (ԻՋ. 17-30)։*

ժէ. *34բ-6ա* Աւետարան Մարկոս. ՃԽԴ. – *Եւ էր Ջատիկ եւ բաղար[ջակերք] (գրչից՝ «գրած է ի վայր»). Եւ յառաջնում աւուր Բաղարջակերացն... ելին ի լեառն Ջիթենեաց (ԺԴ. 12-26)։*

ժը. *36ա-7ա* Աւետարան Յոհաննու – *Յառաջագոյն քան զտաւն Ջատկին գիտեց Յիսուս, թէ հասեալ է ժամ նորա... եւ դուք առնիջիք (ԺԴ. 1-15)։*

ժթ. *37ա-41ա* Աւետարան Յոհաննու. ՃԺԸ. – *Ամէն, ամէն ասեմ (գրչից՝ «Գրած է»). [Ի]այց արդ, երթամ ես առ առաքիչն իմ... եւ աշակերտքն իւր (ԺՋ. 5-ԺԸ. 1)։*

ի. *41ա-6բ* Աւետարանն Ղուկասու – *Մերձեցաւ տաւն Բաղարջակերացն... այլ բազում հայհոյութեամբ խաւսէին ի նայ (ԻԲ. 1-65)։*

իա. *46բ-50բ* Աւետարան Մարկոսի. ՃԿԸ. – *Եւ ասէ ցնոսա Յիսուս՝ Ամենքեան գայթագղելոց էք յինէն յայսմ գիշերի... եւ սկսաւ լալ (ԻՋ. 31-72)։*

իբ. *50բ-3ա* Աւետարան Մատթէոսի. ՄՁԸ. – *Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս՝ Ամենեքին գայթագղելոց էք յինէն... Թողին զնա եւ փախեան (ԻՋ. 31-56)։*

իգ. *53ա-4բ* Աւետարան Մաթէոսի – *Իսկ նոցա կալեալ զՅիսուս՝ ածին առ կաիափա... արտաքս ելաց դառնապէս (ԻՋ. 57-75)։*

իդ. *54բ-6բ* Աւետարան Յոհաննու – *Գիտէր Յուդայ, որ զնայն մատնելոց էր զտեղին... եւ վաղվաղակի հաւ խոսեցաւ (ԺԸ. 2-27)։*

իե. *56բ-9բ* Աւետարան Յոհաննու – *Եւ ածեն զՅիսուս ի վանացն Կաիափա յապարանս դատաւորին... ի խաչ ելանիցէ (ԺԸ. 28 – ԺԹ. 16)։*

իզ. *59բ-64ա* Աւետարան Մատթէոսի. ՅԺէ. – *Իբրեւ այգ եղեւ, խորհու[ր]դ արարին քահանայապետքն եւ ծերք ժողովրդեանն վասն Յիսուսի... եւ մա[յ]ր որդւոցն Զեբեդեայ (Իէ. 1-ԺԹ. 56)։*

իէ. *64ա-7բ* Աւետարան Մարկոս. ՃՂԸ. – *Եւ վաղվաղակի ընդ <ընդ> առաւաւտն խորհուրդ արարեալ... եկեալ էին յերուսաղէմ (ԺԵ. 1-41)։*

իը. *67բ-72բ* Աւետարան Ղուկասու. ՄՂԵ. – *Եւ իբրեւ այգ եղեւ, ժողովեցաւ ծերակոյտ ժողովրդեանն... ի Գալիլէէ տեսանէին զայն (ԻԲ. 66 – ԻԹ. 49)։*

իթ. *72բ-4բ* Աւետարան Ոհաննու. ՃՂէ. – *Եւ նոքա առեալ տանէին զնա... թէ հայեսցին ի նայ, յոր խոցեցին (ԺԹ. 17-37)։*

լ. *74բ-5ա* Աւետարանն Մաթէոսի. ՅԽԸ. – *Եւ իբրեւ երեկոյ եղեւ, եկն այր մի մեծատուն... նստէին հանդէպ գերեզմանին (Իէ. 58-61)։*

լա. *75աբ* Աւետարանն Մաթէոսի. ՅԾԱ. – *Եւ ի վաղիւ անդր, որ է յետ ուրբաթուն, ժողովեցան քահանայապետքն եւ փարիսեցիքն... հանդերձ զօրականօքն (Իէ. 62-66)։*

լբ. *75բ-6ա* Աւետարանն Յոհաննու. ՄԾԴ. – *Եւ էր երեկոի միաշաբաթոջ աւրն... ի կողս նորա ոչ հաւատամ (Ի. 19-25)։*

լգ. *76ա-8ա* Ղուկասու Աւետարանն. ՅԼԹ. – *Եւ ահա երկու ի նոցանէ երթային ի նմին աւուր ի գեօղ մի... ի բեկանել հացին (ԻԴ. 13-35)։*

լդ. *78աբ* Աւետարանն ըստ Ղուկասու. ՅԽ. – *Մինչդեռ զայն խաւսէին, ինքն իսկ Յիսուս եկաց ի մէջ նոցա... զձեռսն եւ զոտսն (ԻԴ. 36-40)։*

լե. *78բ-9ա* Աւետարան Մաթէոսի. ԻԴ. – *Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ի լեառն. եւ իբրեւ նստաւ անդ... յառաջ, քան զձեզ էին (Ե. 1-12)։*

լզ. *79ա-80բ* Աւետարան Յոհաննու. ՄԽԸ. – *Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր Յիսուս աշակերտաց իւրոց... յարուցեալ ի մեռելոց (ԻԱ. 1-15)։*

լէ. *80բ- 2ա* Աւետարան Մարկոսի. ԾԸ. – *Եւ լուաւ արքայ Հերովդէս... եւ եդին ի գերեզմանի (Ջ. 14-29)։*

լը. *82ա-3բ* Աւետարան Յոհաննու – *Եւ իբրեւ ճաշեցին, ասէ ցՍիմոն-Պետրոս Յիսուս... տանել զգիրս, որ է գրեալ էին (ԻԱ. 15-25)։*

լթ. *83բ-5ա* Աւետարան Մաթէոսի – *Գիրք ծնդգեան Յիսուսի Քրիստոսի՝ որդւոյն Դաւթի... ազգ չորէքտասանք (Ա. 1-17)։*

խ. *85ա-6բ* Աւետարան Ղուկասու – *Եւ իբրեւ լցան աւուրք սրբութեամբ նոցա ըստ աւրինացն Մովսէսի... եւ շնորհք Աստուծոյ է ի վերա նորա (Բ. 22-40)։*

խա. *86բ-90բ* Աւետարան Ղուկասու – *Ի հ<ի>նգէտասաներորդի ամի տէրութեան Տիբերեա կայսեր... առ ժամանակ մի (Գ. 1-Դ. 13)։*

87ա ստ. լս., գրչից՝ «Տէ՛ր, ողորմեա՛»:

ՅԱՒԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, *ԺԷ. դ., նոտրգիր*

93աբ [Աւետարան Մատթէոսի] – *Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս: Խօսեալ զմայր նորա Մարիամ Յովսեփու... զի եւ ես եկեալ երկիր պագից նմա (Ա. 18-Բ. 8):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

91ա Փա՛ռք համագո եւ միաս[ն]ական, անբաժանելի Սուրբ Երրորդութեան՝ Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ, այժ[մ] եւ միշտ եւ յաւիտեան յաւիտենից: Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս՝ ծննդեան եւ գալստեան, մատնութեան, թաղման եւ յարութեան, յիշատակ հոգոյն Կիրակոսին *եւ հօրն՝* Խաչատուն, *եւ մօրն՝* Շաումին, *եւ որդոցն՝ /// (անուանց տեղը բաց՝ չգրած) եւ ամենայն /// (տեղը բաց՝ չգրած), եւ եղբարցն՝* <Հ>Խլիաթին, Ջանհոշին, *եւ հարսին՝* Ջմուտին, *եւ* Շընահատուրին, *եւ քըւերն՝* Գուլին*: Եւ որ զողորմին ասէ, Աստուած իւրն ողորմեսցի ի միւսանգամ գալստեանն. ամէն: Դարձեալ աղա<ւ>չեմ զամենեսեանդ, որ աւաք Ջատկի կիրակնաւուր ժամուն յիշել արժանի առնէք զիս: |91բ| Արդ, երես ա[ն]կեալ աղաչեմ զձեզ, յիշեցէ՛ք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվերջին կազմողս սուրբ գրոցս, անիմաս[տ] եւ մեղօք լցեալ, անարժան, սուտանուն* Ներսէս *աբեղա, որ քան զամենայն գործողս չարեաց առաւել եմ ես, եւ ընդիեայ վարդապետին, որ բազում աշխատանք ունի ի վերա մեր: Արդ, գրեցաւ եւ կազմեցաւ Մաշտոց եւ սուրբ Աւետարան եւ Գանձարան* ի թվին մեր ՌԺԷ. (1568), ընդ հովանեաւ* Սուրբ Յովաննէսին*, որ Ամիրդալ կոչի, յիշատակ հոգոյն* Կիրակոսին*, հաւրն՝* Խաչատուն*, եւ մօրն՝* Շաումին*, եւ որդոցն եւ եղբարցն եւ ամենայն աբեան մերձաւոց. ամէն:*

* Ծնթ. Այս թուականին գրիչը հաւանաբար գրել է նաեւ Մաշտոց եւ Գանձարան:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *92ա (1689, նոտրգիր) ես՝* Պախտիարըս *որդի է<ր> ի* Յովաննէսի*, որդի* Յարութեան*,* Եղտիայրի *որդի՝* Բահայտուր*, մալըս Բ. եղպար որդոց, իմ մալըս իմ բերնիս իխարովըս տուվի՝ կէս մալըս՝ որդոցըս, կէս մալըս՝ աղչիկնէրուն: Բաւ է. մեր առաջնորդըս՝ տէր* Պաղտաս<ս>արըս *վկայ, տէր* Յովսեփըս, Վարդանըս*: Թվին ՌՃՀԲ. (1689):*

2. *1ա (ԺԷ. դ., նոտրգիր, ցրիւ գրչութեամբ)* Յ[Աո]ագել, Կակոս, Կ[ի]ռակոս, Տ[ի]ռատուր՝ *որդիս* Կ[ի]ռակոս*, էս զարտաւգ տվել եմ, որ այս տա էս* Նէնէս*:* Կակոս, Յովագելին *յաղբէր* Կիրոս, Տիրատուր՝ *է որդի* Կ[ի]ռակոս*. յերեգ յեբբար (՞) իրս տուր///. ամէն: |1բ| Քանի ողչ է, յերեգ որդուն մալն կայ.* Յովագելին *յաղբայր* Կիրակոս, Վագիլ, *Աստուծոյ համար* Յամիրխան*, էս զարտաւվ տէր* Յոհաննէս, Գալուս, Պէտրոս, Պարտուխտ *(այսպէս)* Ղարզար *Աստուած էսր յ[ի]շա՛ Հաւթէնովն: Քանի* Տիրատուր *ողչ է, յանոց մալն կայ, յանոր յանցան յետեւ, ետեւ յեգրեգ փաս///. այլ բաւ է ինձ /// կարդ///:*


3. *92բ (ԺԷ. դար, նոտրգիր)* Յանուն Հաւր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ. Յալէքսանն *Բ. կարպետ յԱւետարանին երեսս:*

ԳՐՁԱՓՈՐՁ՝ *91բ՝* «Յովանէսին *հոգոյն///սրբոյ Աւետարանին», 115բ՝* «Պատուրին, Թուրվանդին *հոգուն, Հովմին», 1ա-4ա, 115բ՝ «IV»:*

ՁԵՌԱԳԻՐ Բ.

ԺԷ. դար (1631ից առաջ)

ԹԵՐԹ՝ 22 (թ. 94-115): ՊՐԱԿ՝ 1-2×8 (1՝ 9)+5: ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17,5×13: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (13,5×10): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 96ա): ՏՈՂ՝ 20:



Նմուշ 96ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – (լուսանցազարդերը եւ զարդագրերը՝ գծանկարային, բացառութեամբ՝ 95ա-ի) Մատթէոս՝ 94բ: Կիսախորան՝ 95ա: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն՝ 97բ: Զարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, նարնջի, վարդագոյն, սեւ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ա. *95ա-7ա* Աւետարանն Մաթէոսի – *Եւ յերեկոյի շաբաթուն, յորում լուսանայր միաշաբաթին, եկն Մարիամ Մագդաղենացի... ի կատարածն աշխարհի (Իհ. 1-20):*

բ. *97աբ* Աւետարանն ըստ Մաթէոսի բժշկութեան – *Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս, զհետ եղեն նորա... հանէ զդա զդեւս (Թ. 27-34):*

գ. *97բ-8ա* Աւետարանն Մաթէոսի հանգըստեանն – *Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յիսուս եւ ասէ՝ Գոհանամք զքէն Հա՛յր... եւ բեռն իմ փոք[ր]ոգի (ԺԱ. 25-30):*

դ. *98ա-9բ* Աւետարան ե<ա>ղեաբէրից ըստ Մարկոս է – *Եւ իբրեւ երեկոյ եղեւ, քանզի ուրբաթ էր... զի երկնչէին (ԺԵ. 42-ԺԶ. 8):*

ե. *99բ-100բ* Աւետարան ըստ Մարկոսէ. բժշկութեան է – *Եւ մտանեն ի Կափառնաւում. եւ իսկ եւ իսկ ի շաբաթուն մտեալ ի ժողովուրդն, ուսուցանէր զնոսա... զի գիտէին զնա, թէ Քրիստոսն է (Ա. 21-34):*

զ. *100բ-1բ* Աւետարանն ըստ Մարկոս. հանգստեան – *եւ ասէր՝ Այսպէս է արքայութիւն Աստուծոյ... աշակերտաց մեկնէր զամենայն (Դ. 26-34)։*

է. *101բ-3ա* Աւետարան ըստ Ղուկասու է եւթաբերից – *եւ ահա այր մի անուն Յովսէփ, որ էր նախարար... ընդ միտս զարմաց, թէ զինչ եղեւ (ԻԴ. 50-ԻԴ. 12)։*

ը. *103ա-4ա* Աւետարանն ըստ Ղուկաս է բժշկութեան – *եւ էջ ի կափառնաւմ՝ ի քաղաքն գալիլեացւոց... զի գիտէին զնա, թէ Քրիստոսն է (Դ. 31-42)։*

թ. *104ա-5բ* Աւետարանն Ղուկասու հանգստեան – *Մի՛ երկնչիր, հաւտ փոքրիկ, զի հաճեցաւ Հայր ձեր... պահանջեսցեն ի նմանէ (ԺԲ. 32-48)։*

ժ. *105բ-7բ* Աւետարան ըստ Յոհաննու է ե<ա>տաբերից – *Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս Յովսէփ, որ յԱրիմաթեա էր... եւ զայս ինչ ասաց ցնա (ԺԹ. 38-Ի. 18)։*

ժա. *107բ-9ա* Աւետարանն Յոհաննու բժշկութեան – *Յետ այսորիկ տաւն էր հրէից, եւ էլ Յիսուս յերուսաղէմ... եւ հաւասար առնէր զանձն Աստուծոյ (Ե. 1-18)։*

ժբ. *109ա-10բ* Աւետարան Յոհաննու հանգստեան – *Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա՝ Ամէն, ամէն ասեմ ձեզ... որ առաքեացն զիս (Ե. 19-30)։*

ժգ. *110բ-4ա* Աւետարան ըստ Յոհաննու. ամբիծի է – *Թէ սիրէք զիս, զպատուիրանս իմ պահեսջիք... թէ ատեցին զիս ի տարապարտուց (ԺԴ. 15-ԺԵ. 25)։*

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, *ԺԷ. դ., նոտրգիր*

94ա [Աղօթք-մաղթանք] – *Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ զաւրութիւն, կապեա՛յ զամենայն ցեղ ցաւն... եւ փախուցեալ ի ծառայէն Աստուծոյ։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *114ա (1631, բոլորգիր) Փա՛ռք անբաւելի (=անբաւելի) եւ եռահուսակ, անբաժանելի Սուրբ Երրորդութեան՝ Հաւր եւ Որդւո եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Զվերջին ըստացաւղ սուրբ Աւետարանիս զտէր Աբրահամ եպիսկոպոսն յիշեցէ՛ք, որ ըստ|114բ|ացաւ զսա յիւրն յիշատակ եւ ետ իւր հալալ ընչից եւ էառ զսուրբ Աւետարանս անջինջ յիշատակ իւր ամենայն է.արեան մերձաւորացն եւ ծնաւղաց հոգւոյն՝ հաւրն՝ Ղարաղաւչին, եւ մաւրն՝ Փաշաբէկուն, եւ եղբաւրն՝ Գրիգորին, եւ Վարդանիսին, եւ քուէրն՝ Հոիփսիմին, Սառին, Աղասապթանին, Յովանիսին, Մարգարտին, եւ յամենայն արեան մերձաւորացն, որ ի Քրիստոս է հանգուցեալ։ Յիշեցէ՛ք եւ Աստուած ողորմի ասաց[է՛ք] իւրեանց հոգւոյն. ամէն։ Հայր մեր, որ յերկին՛։ |115ա| Դարձեալ, կրկին անգամ յիշեցէ՛ք զսուգա (՞) Ամիրխանն, եւ զկողակիցն Ամիրխանին՝ զՄամախաթուն, եւ հանգուցեալ, որդին՝ Մխիթարն, եւ զՊարսամն, Նսէֆ, որ ի ձեռն այլազգաց գերի անկաւ, Շահբէկին, Գուլբեկին։ Յիշեցէ՛ք եւ Աստուած ողորմի ասացէ՛ք իւրեանց հոգւոյն. ամէն։ Դարձեալ յիշեցէ՛ք զԱմիրխանի հայրն՝ Գուլնազարն, եւ զմայրն՝ Շահբեկին, եւ զեղբայրն՝ զԱրմաղանն, զԳրիգորն, եւ զքուրն՝ Խաթունաղէն, զխանբեկին, զխերակոբն. ամէն։ Աղաչեմ զձեզ, ո՛վ լուսերամ դասք քահանայից, յիշեցէ՛ք զստացաւղ սուրբ Աւետարանիս զԱբրահամն եպիսկոպոսն եւ զհաւրեղբարն՝ զԱկոբ եպիսկոպոսն, յիշեցէ՛ք եւ Աստուած ողորմի ասացէ՛ք։ |115բ| Արդ, եւ՝ յԱբրահամ եպիսկոպոս, եւ եղբայրն իմ՝ Ամիրխան, մեք մեր կամաւ եւ յաւժարութեամբ մեր հոգոյս վախմ եւ յիշատակ դրաք զփոքրիկ Աւետարանս ի երկիրն Քաչբէրունաց, ի գիւղն Գանձակ, ի դուռն կենսաբեր Սուրբ Աստուածածնին։ Եթէ ոք մերոց կամ աւտարաց հանել կամ ծախել ջանա, պատժի եւ նզովք առնու հայրապետացն։ Արդ, աղաչեմք զձեզ, ո՛վ լուսերամ դասք քահանայից, ով ոք հանդիպիք, լի սրտիւ Աստուած ողորմի ասաց[է՛ք] իւրեանց հոգւոյն. ամէն։ Հայր մեր՛՛, ի թվականիս հաոց ՌՁ. (1631) էր կաթողկիոսոս/// (վջ.)։*

Տե՛ս ԺԷ. դ-ի յիշ, Բ., էջ 435, Հ^{մր} 629. տպագրել է երեք ա-գ. հատուածի բաժանած։

Ծնթ. ե-ի եւ է-ի գծագրական տարբերութիւն չկայ, ուստի գրել ենք ըստ ընդունուած կանոնների։


2. *114բ (ԺԷ. դար, նոտրգիր)* Յիշատակ է Շահզատի, *հօրն՝* Պետրոսին, *մօրն՝* Ոսկիհատին, *եղբօրն՝* Պօղոսին, *քուրոչն՝* Շահոսկին, *առն իւրոյ՝* Գրիգորին, *որ եւտւր յիշատակ յօխտեաց* Սուրբ Յովաննէս *յեկեղեցին, ի ձեռն տէր* Մովսէսին, *զոր* Տէր Աստուած վայել տացէ. *ամէն. Հայր՛՛։*

3631
ԱԻԵՏԱՐԱՆ

ՌՃԺՂ. – 1667

ԳՐԻՉ՝ Ղաւնջայ: ՍՏԱՑՈՂ՝ Քասքար (1684 թ.):

ԹԵՐԹ՝ 273+2 (կրկն.՝ 1, 204). չգրուած՝ 1աբ, 79աբ, 129ա, 130բ, 209բ, 272բ-3բ: ՊՐԱԿ՝ Ա-ԻԳ×12 (ԺԱ. 11): ՆԻՒԹ՝ մագաղաթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16,5×11,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (11,5×7). սահմանագծուած կարմրով: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 24ա): ՏՈՂ՝ 21-22: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դռնակով եւ 3 գամով, կոստղապատ, Ա. փեղկի կենտրոնում արծաթէ խաչ՝ մէջտեղում՝ սպիտակ քար, անկիւներում՝ անկիւնազարդեր, 88 կոստղ, Բ. փեղկին փոքր արծաթէ խաչ՝ մէջտեղում կարմիր ակն, ներքին անկիւններում՝ անկիւնազարդեր, 63 կոստղ. միջուկը՝ տախտակ. աստառը՝ ծաղկազարդ բրդէ գործուածք. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԴ՝. մագաղաթ, չգրուած:



Նմուշ 24ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Կիսախոռան՝ 1գ, 80ա, 131ա, 210ա: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն, յուշկապարիկ (20ա), ծառ (50բ), տաճար (60ա, 116բ), խաչ (72բ, 74բ, 195բ, 202ա, 263բ), ծաղիկ ծաղկամանով (110ա), «Հուր եկի արկանել» (173բ): Զարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, նարնջի, շագանակագոյն, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմը մաշուած, վրան ճաճեր եւ ճեռնուածքներ, մէջքի եւ Ա. փեղկի վերին մասի կաշին փոր-ինչ պոկուած-ընկած, Ա. փեղկի 10 կոստղն ընկած, Բ. փեղկի կոստղերից մէկը թուլացած, 3 կապիչներն ընկած, առկայ են հիմերը, դռնակի կաշին մաշուած, ձեւափոխուած, ստ. մասից թեռութեամբ մասամբ պոկուած-ընկած, դռնակից երկտակ 2 թել ամրացրած՝ որպէս կապիչ, աստառը՝ մաշուած, աղտոտուած, դռնակից մասամբ առանձնացած. լուսանցակողերը գործածութիւնից եւ խոնաւութիւնից աղտոտուած, կարմիրը թափուած, ձեւափոխուած. պիպ-ները խիստ աղտոտուած, կծկուած, պիպ. Բ, թ. 8, 10, 37 եւ այլուր՝ վրան բնական անցքեր, թ. 273՝ վր. մասից պատռուած. խոնաւութիւնից թերթերն ալիքատուած, հիմի մօտ բորբոսի հետքեր, զանազան բծեր, մանրանկարների գոյները արտատպուած հանդիպակաց երեսներին, սպիտակ, կանաչ, կապոյտ էջանշան թելեր՝ թ. 40, 100, 127, 152 եւ այլուր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *1գ-78բ* Աւետարան Մատթէոսի:

2. *80ա-128բ* Աւետարան Մարկոսի

3. *208բ* Նախադրութիւն: *131ա-208ա:* Աւետարան Ղուկասու:

4. *208բ-9ա* Գլուխք: *209ա* Նախադրութիւն *209ա: 210ա-70բ* Աւետարան Յովհաննու: *(270աբ* Իրք կնոջն ընացելոյ*)*:

Ծնթ. Ունի ստ. լս. համաբարբառ՝ Յրուացանկ: Որոշ տեղերում նոտրգրով հետագայի նշումներ՝ 20աբ, 21ա եւ այլուր:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

208ա Ասացեր, զոր ինչ մեղար, Տէր թողցէ քեզ զյանցանս քո: Ա՛խ, վա՛յ, մեղաւորիս:

209ա Ո՛վ սրբազան ընթերցողք, աղաչեմ զձեզ յիշեցէ՛ք ի Քրիստոս ի սուրբ աղօթս ձեր զանարժան Ղաւնջայ գրիչս եւ Աստուած ողորմի ասացէ՛ք, եւ Աստուած զձեզ ողորմեսցի. ամէն:

271ա Փա՛ռք ամենասուրբ երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, յաւիտեանս յաւիտենից. ամէն: Փա՛ռք երից անձնաւորութեանն, անբաւից տէրութեան եւ թագաւորութեան, անմահից, մշտնջենաւորաց, անապական բնութեան եւ ամենազօր զօրութեան, անպարագրելի աստուածութեան, իսկից յատկութեանց, յանձնաւորութեանց եւ միոյ աստուածութե[ա]ն, պատճառից էից եղելութեանց, եղականաց եւ ստեղծականաց, գոյացութեանց, արարողաց Հօր ճշմարտի՝ ծնօղի Որդւոյն միածնի եւ բխողի Հոգւոյն կենարարի, յանմահից հրեղինաց, յիննեակ դասուց հրեշտակաց, եւ ի մահկանացուաց սեռից մարդկութեանց: Գոհութիւն եւ երկրպագութիւն եւ աւրհնութիւն յանգեալն եւ ի ներկայս եւ յապագայսն |271բ| ժամանակաց շրջագայութեանց, որ զօրացոյց զիս՝ զտկարս եւ զտխմարս, զփչացունս եւ զթարմատարս, զյոյլս եւ զծոյլս, զանարգս եւ զանպիտանս՝ զՂաւնջայ գրիչս, յանգ եւ յաւարտ հանել զսուրբ եւ զաւետաբեր Աւետարանս արքայութեանն երկնից, զշնորհաբաշխ եւ զկենսունակ բժշկարանս հոգւոց ամենայն հաւատացելոց, գգրախտս աստուածատունկ, որ է լցեալ ամենայն անմահարար եւ անուշահոտ պտղովք, յորմէ բղխեն չորք գետք ընդ չորէքծագեան տիեզերս՝ արբուցանել զչորէքնիւթեայ պասքեալ մեր բնութիւնս հոգեւոր եւ աստուածային, պայծառ ի յերկնից ծագեալ արեգակնս, որ լուսաւորէ եւ ծագէ լոյս աստուածային, որոց նստին ի խաւարի եւ ի ստուերս մահու, որում ցանկա|272ա|ցող եղեալ այսմ աւետարս եւ տէրունախօս սուրբ Աւետարանիս (չգրուած տեղում 10 տող լրացուած ստացողի ձեռքով՝ «որ ըստացաւ սուրբ Աւետարանս սուտանուն Քասքարս եւ Պաղտարս, Միրզախանս, որ ստացան ընչից իւրեանց, հայրն իւրեանց՝ զՇահնազարն, մայրն իւրոյ՝ Պակին»): Քանզի մտաւ ածեալ զբան մարգարէին, որ ասէ, եթէ՝ երանի այնոցիկ, որ ունի զաւակ ի Սիոն եւ ընդանեակք յԵրուսաղէմ, եւ զհետ մտեալ՝ հասին իբրեւ զիմաստուն եւ զհոհեմ վաճառական անգին եւ երկնաւոր պատուական մարգարտիս, առիս զսուրբ Աւետարանս զայս ողորմութեամբն Աստուծոյ հոգեւոր անկողոպտելի (այլ ձեռքով՝ «Քասքարս»):

Գրեցաւ զսուրբ Աւետարանս թվին ՌՃԺԶ. (1667): Ո՛վ սուրբ ընթերցողք, աղաչեմ յիշել ի Քրիստոս զգծող սոքա եւ զըստացող, եւ զամենայն արեան մերձաւորսն, եւ զնընջեցեալսն. ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

129բ (ստացողի, 1684 թ.) ես՝ Քասքարս, սուրբ Աւետար[ան]ս առայ ընչից իւրոց՝ յիշատակ հոգւոյ իւրոյ, հայրն իւրոյ՝ Շահնազարն, մայրն իւրոյ՝ Պէկին, կենակիցն իւրոյ՝ եղիսաբեթ, որդւոց իւրոց՝ Հախնազարն,

եաւրին, Խաւստրաւն, *դուստրն իւրոյ՝* Նազլուխան, Հ<ի>ոիփսիմայն, Փարին, Մարինոս, Եթարն, Նեղսարն, Հեռիքնազն, *հանգուցեալ* Կաւհարն, *եւ հարսներն իւրոյ՝* Շահփարն, Մարիան-Խաթուն, *թոռն իւրոյ՝* Յովանէսն, Ղարապէկն, Շահխանումն, *եղբայրն իւրո՝* Պաղտասարն, *կենակից իւրոյ՝* Գուլաղն, *որդին իւրո՝* Աստուածատուրն, *դուստրն իւրո՝* Սալվարխան, Մարասն, Մարիան, *աննման հանգուցեալ* Աղապաղն, Շահնազար, Ղարապաղն, Խաւս<տ>րովն, Շամամն *եւ հարսն, (2.5 տող բաց՝ չգրած), միւս եղբայրն իւրոյ՝* Միրզախանն, *հանգուցեալ կենակիցն իւրոյ՝* Շահզատն, *հանգուցեալ որդին իւրոյ՝* Ղարախան, *միւս |130ա| կենակիցն իւրոյ՝* Թիլին, *որդին իւրոյ՝* Պայքնտուրին, *դուստրն իւրոյ՝* Սանամն, Իոխսխին, *հանգուցեալ եղբայրն իւրոյ՝* զՄելխուն: *Յիշեսջի՛ք ի Քրիստոս Աստուած, լի բերան ողորմի ասէ՛ք, Քրիստոս Աստուած ողորմեսցի ձեզ ի միւսանգամ գալըստեան. ամէն: Հայր մ՛: Քոյրն իւրոյ՝* Մարիամն, *հանգուցեալ* Նազլուխան *յիշեցէ՛ք ի Քրիստոս, հանգուցեալ թոռն՝* Շահիսլումն, *յիշեցէ՛ք: Յարձեալ յիշեցէ՛ք զխոս[տ]ովանահայր տէր* Մանուելն*. *յիշեցէ՛ք ի Քրիստոս:*

Թվին ՌՃ. եւ լ. եւ Գ. (1684) էր, ի հայրապետութիւն հռոմայեցի Հեղիազարին. *ամէն:*

* Ծնթ. Այստեղ սկզբում գրուած՝ «Աւետիսն», որ ապա շրջանակած-ջնջած է, փոխարենը տողագլխին գրուած է «Մանուելն»:

ՆՇՈՒՄ՝ *1ա՝ «3631, ՌՃԺԶ.-1667,* Մ[եսրոպ] *եպիսկոպոս»:*

3632
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ

ԺԹ. դար (1857ից յետոյ)*


Թերթ՝ 162 (գրչի էջակալում՝ 1-58**, որ է՝ 1ա-30բ, 1-61 (թռիչք՝ 20-22), որ է՝ 39ա-68բ, 1-59***, որ է՝ 72ա-93ա, 31-46, որ է՝ 95ա-102բ). չգրուած՝ 28բ-9ա, 70բ-1բ, 93բ-4բ: ՊՐԱԿ՝ Ա-ԺԹ×8+Ի×8+ԺԱ-ԻԱ×8**** (Դ՝ 6, Ը, Ժ, ԻԱ՝ 4): ՆԻՒԹ՝ թուղթ. լուսադրոշմով՝ թ. 5, 60՝ «7՞», թ. 15, 45, 61 եւ 46, 62, 81 եւ այլուր՝ «1834» թ. 34, 51՝ «36», թ. 55, 56 եւ 57, 58՝ հիւղակ, որի շուրջ պտտվում են 2 ճանճ, հիւղակի կողմին ծաղիկ, ներեւում՝ «///6», թ. 73, 125 եւ այլուր՝ «И», թ. 74, 75, 79, 86, եւ այլուր՝ «ВФ7», թ. 109, 113՝ «38», թ. 110, 114 եւ այլուր՝ «П.П.», թ. 135 եւ 142, թ. 138, 145 եւ 139, 148 եւ այլուր՝ «1857», անընկալելի պատկեր, վերեւում՝ շրջանակ, մէջը ծաղիկ եւ ետեւի թաթերին կանգնած առիւծ, թ. 141 եւ 136, 143 եւ 150, 152 եւ 157՝ «С. Ф. ЧЕШИХИМА», ճնշադրոշմներով՝ 21ա եւ այլուր՝ առաւել թոյլ դրոշմուած՝ երկգիծ ձուածիր, երկու գծերի միջեւ՝ «Ярославской фабрики /// (անընթեռնելի)», կենտրոնում՝ երկգլխանի թեւատարած թագակիր արծիւ, 157ա՝ եւ այլուր՝ առաւել թոյլ դրոշմուած՝ երկգիծ ձուածիր, երկու գծերի միջեւ՝ «Вырновской фабрики», կենտրոնում՝ «ГН»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17×11: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (68ա-70ա, 135ա-6ա, 138բ-162բ. 15,5×9), երկսիւն (14,5×7,5): ԳԻՐ՝ շղագրանման նոտրգիր (նմուշ՝ 25ա): ՏՈՂ՝ 17-24: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի. միջուկը՝ տախտակ. աստառը՝ թուղթ:

* Ծնթ. Ժամանակի համար տե՛ս ՆԻՒԹ:

** Ծնթ. Գրիչը 55րդ էջի յաջորդ չգրուած 2 էջը չի համարակալել, որից յետոյ շարունակել է 56 համարով:

*** Ծնթ. Գրիչը 12ից յետոյ յաջորդ 1 գրուած էջը չի համարակալել, որից յետոյ շարունակել 13ով: Ըստ գրչի երկրորդ էջակալման 16 էջ՝ 31-46 (պրակ ԺԲ.), տեղադրուած սխալ, որից յետոյ էլ առուել է ձեռագրի թերթակալումը՝ 95ա-102բ՝ կարդալ 86բ-ից յետոյ:

**** Ծնթ. Գրիչը Ժ. պրականիշից յետոյ սխալմամբ գրել է Ի, այնուհետեւ ԺԱ.ով շարունակել:



Նմուշ 25ա

Վիճակ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, վրան կան ճաթեր եւ ֆեթծուածքներ, անկիւններում երեւում է միջուկ-տախտակը, լուսանցակողերը՝ մաշուած, աղտոտուած, կազմաստառների վրայ զանազան խզբզոցներ, գրչափորձեր, եզրերից փոր մասեր թափուած, երեւում է միջուկ-տախտակը. թ. 95-102՝ տեղադրուած սխալ, կարդալ ընդմէջ թերթ 86-7ի, թ. 25-30՝ հիմիից գրեթէ անջատ, թերթերի վրայ կան զանազան բծեր, խզբզոցներ, խոնաւութեան հետեր. ե. պրականամարիից յետոյ գրիչը Զ., է., Ը. պրականամարների առաջին թերթը կրկին սկսել է համապատասխանաբար Ա. (39ա), Բ. (47ա), Գ. (55ա), աւարտել Զ. (46բ), է. (54բ), Ը.ով (58բ), Ժ.ից (70բ) յետոյ սխալմամբ գրել է Ի. (78բ), այնուհետեւ շարունակել է կանոնաւոր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-38բ* [Խաչատուր Տէր-Յօհաննեանց, Համառօտ հայկազեան բեւեռանութիւն]

1. ա. *1ա-11բ* [Յաղագս անուան]. Անուանի ըստ առաջին պատկերի (Ա-0) – *Ախտ՝ ցաւ, տարտ, ակումբ՝ խալիչա... օձ՝ օձ, օղ՝ օղ, հալղայ:*

բ. *11բ- 3ա* Ածականք. – *Ջոր օրինակ Աշխոյժ զորպայ, բախած՝ յիմար... երաշխեալ՝ տանջանք, հանգիստ՝ հանգիստ։*

2. ա. *13բ-28ա* Ըստ երկրորդ պատկերի գոյականք (Ա-0) – *Ագցան՝ քիւլփութիւն, ագարագ՝ չեօլ, ջաշտ... օրհաս՝ օրհասած, օրօրոց՝ բրօրոց։*

բ. *28ա-30ա* Անեզական անուանք – *Ջոր օրինակ. Արհաւիրք՝ երկիւղ, բաղձանք՝ սէր, փափակ... գամիրք՝ ազգ են, թուրք՝ թուրք ասեն։*

3. *30բ-7ա* Երրորդ պատկեր հոլովադասութեան. զոր օրինակ – *Ա իւն՝ մոխիր, աղիւս՝ քարպուճ, ամուսին՝ կին մարդոյ... քուրձ՝ քուրձ, օդ՝ հաւայ երկնքի։*

Համմտ. Խաչատուր Բաճանայ Տէր-Յօհաննեանց Շամշատինեցի, Համառօտ հայկազեան բերականութիւն, Շուշի, 1839, 9-36։

Բ. *39ա-68բ* [Միխայէլ Զամչեան. Քերականութիւն հայկազեան լեզուի]

1. *39ա-52ա* Յաղագս խնդրառութեան բայից. Բայք առօղք բնութեան խնդիր իւրեանց զուղղական հոլովն. – *Ջոր օրինակ՝ Համարիմ՝ համարել, վարկանիմ՝ կարծել, թահմին անել... քշտեմ՝ խշխարտալ. օրինակ՝ Ոչ այժմ զերեսս այլագունեսցէ Իսրայէլ։ Զանճառութիւն շնորհեն ընդոտնեալ։*

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած Ի. դարում (ընդմէջ թ. 122-3ի եւ այլուր՝ թերթերի հիմքերը), կազմի կաշին մաշուած, վնասուած, վրան կան ֆեծուածքներ, ցեցի անցքեր, մէջի ստ. մասը պատռուած, վրն. մասը պատռուած-ընկած, գամերը, դռնակը եւ կապիչներն ընկած, առկայ է կապիչներից մէկի հիմքը, կազմաստառները մաշուած, աղտոտուած, ցեցակեր. լուսանցակողերի կարմիրը մասամբ թափուած. թերթերի վրայ կան աղտոտուածութեան, խոնաւութեան այրուածքի հետքեր, զանազան բծեր, 11-2՝ այրուածքի հետեւանքով առաջացած անցք, թ. 23՝ վերեւից պատռուած, թ. 24՝ հիմքից անջատ, Բ. փեղկի տախտակը, թ. 96-114ի ստ. աջ հատուածը եւ այլ թերթեր՝ ցեցակեր, որոշ թերթերի կարը թուլացած, սկզբից, ընդմէջ թ. 8-9ի, 23-4ի, 33-4ի, 45-6ի 1ական թերթ ընկած, 2բ, 6ա, 16բ, 22բ եւ այլն՝ որոշ տողեր չգրուած, բաց թողնուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-96ա* [Մեկնութիւն թղթոցն Պաւղոսի]

1. *1ա-2բ* [Հարցմունք եւ պատասխանիք ի Հռոմայեցւոց թղթոյն]. Ջի՞նչ է, որ ասէ առաքեալ ի Հռոմ գլուխ – *Հարցումն. Մ՛ մեկնեսցէ զիս ի սիրոյն Քրիստոսի... Պատասխանի. Ոչ են սոքա հակառակ միմեանց, զի այսու առաւել աճի սէրն... եւ մի՛ ումէք պարտապան գտանիցիք:*

2. *3բ-26ա* [Հարցմունք եւ պատասխանիք ի Կորնթացւոց թղթոյն.] Ջի՞նչ է, որ ասէ ի Կորնթացւոց առաջին թղթոյն – *Հարցումն. Ազգ եղեւ ինձ ի քաղուացւոց անտի վասն ձեր... Պատասխանի. երկու եղանակք են բամբասանաց... որ ասէ՝ Մի՛ խորէք, զի /// (մէջից թափուած) 9ա /// Նախ զի յամօթ առնէ զգլուխ իւր... այսինքն՝ ոչ է ինքնինքն, որ անկ/// (մէջից թափուած) 24ա ///ահատն այն, այլ նման է ըստ բնութեան նոյնութեան... զի մեղաւորք զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն: Կատարումն Առաջ[ին] թղթոյն Կորնթացւոց:*

8բ նոտրգրով ծանուցում՝ «Աստ Ա. թուղթ պակաս թուի»:

3. *26ա-45բ* Համառօտ տեսութիւն երկրորդ թղթոյն Կորնթացւոց. Պաւղոս առաքեալ եւ Տիմոթէոս եղբայր – *Հարցումն. Վասն էր աստ եղբայր եւ այլուր որդի իւր անուանէ: Պատասխանի. Ի Կորնթոս գնաց եւ զամենայն պակասութիւն ուղղեաց... զի գհաւատն հաստատ է յուսով ազատութեանն, ասէ գնունիմք (՞) գնոյն հոգի հաւատոց եւ հաւատ /// (մէջից թափուած) 34ա /// հաւատովք գնամք եւ ոչ կարծիմք... Այսոքիկ եւ եւս բազում քաջամարտութիւն եւ /// (վջ.):*

4. *46աբ* Թուղթ Կորնթացւոց բահանայիցն առ Պօղոս – *Ստեփանոս եւ որ ընդ նմայ երիցունք, Նեմինոս եւ Բուլոս... առնէր Պօղոս թղթոյն պատասխանի:*

5. *46բ-7բ* Առ Կորնթացիս երրորդ – *Պաւղոս կալանաւոր Յիսուսի Քրիստոսի առ եղբարս Կորնթացիս... շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ոգոյդ ձերում, եղբա՛րք. ամէն:*

ա. *48ա-9ա* Առ Կորնթացիս երրորդ գրեցաւ ի Փիւնիկեայ, ի ձեռն Թիէպեայ եւտիհեայ նոցուց սարկաւագաց. տուիմ ՃԲ.: Պատճառ երրորդ թղթոյն Կորնթացոց՝ եփրեմի ասացեալ – *Կորնթացիքն յետ միաբանութեան իւրոց ի ձեռս թղթոցն առաքելոյ... զճշմարտութիւնն ասէ կոխան եղեալ ի մեքենաից, այսինքն՝ ի խաբեբայից քահանայից սատանայի:*

բ. *49ա-51ա* Առ Կորնթացիս երրորդ – *Պաւղոս կալանաւոր Յիսուսի Քրիստոսի: Մկ. Ոչ վասն այլոյ ինչ իրաց... յերրորդիցն զազգակցութիւն յարուցողին:*

6. *51ա-71բ* [Թուղթ Գաղատացւոց]

ա. *51ա* Սրբոյն եփրեմի պատճառ Գաղատացոց թղթին – *Գաղատացիք աշակերտեալք ի Պաւղոսէ, ոչ ի պահել զպահպանութիւն օրինացն... վասն որոյ սկիզբն առնէ այսպէս: Պաւղոս առաքեալ՛՛:*

բ. *51բ-2ա* Սրբոյն Յոհաննու Ոսկեբերանի ասացեալ պատճառ Գաղատացոց թղթոյն – *Բազում սաստիւ լի է սկիզբն թղթոյս եւ իմաստութեամբ... թէ ոչ է աշակերտ Քրիստոսի, այլ առաքելոցն ի վերայ էած:*

գ. *52ա-71բ* [Առ Գաղատացիս] – *Պաւղոս առաքեալ, ոչ ի մարդկանէ եւ ոչ ի ձեռն մարդոյ: Մկ. Որպէս ասացի՝ խաբեբայքն ասէին, ոչ է պարտ անսալ Պաւղոսի... Դ. զի զուարթ երեսօք: Բն. Մինչդեռ ժամանակս ի ձեռս է, գծեսցուք զբարիս:*

7. *72ա-90բ* [Թուղթ եփեսացւոց]

ա. *72ա* Պատճառ թղթոյն եփեսացւոց՝ սրբոյն եփրեմի ասացեալ – *Եփեսացիք աշակերտեալք աւետարանչին... որպէս ի վերուստ յաղագս Քրիստոսի:*

բ. *72աբ* Յոհաննու Ոսկեբերանի պատճառ թղթոյն եփեսացւոց – *Եփեսոս՝ մայր քաղաքաց է ասիացւոց, պաշտօնեայ եւ <եւ> հարկատու Արտեմեայ դիցն... եւ մարմնակիցս եւ հաղորդս, որ ի Քրիստոս:*

գ. *72բ-90բ* [Առ եփեսացիս] – *Պաւղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամօքն Աստուծոյ: Մկ. Ահաւասիկ*

զկամօքն Աստուծոյ յետոյ... իսկ առաքինութիւնն անեղծ եւ անապական։

8. *91ա-2ա* Հարցմունք Տիմոթեա – *Հարցումն. Ջի՞նչ է օրինօք կրել գօրէնս, որպէս ասէ... Պատասխանի. Նախ, զի ոչինչ չիրս ցածնուցու... զի եհարց Պիղատոս վասն թագաւորութեանն, ասաց Քրիստոս՝ ի դոյն իսկ ծնեալ եկեալ յաշխարհ։*

9. *92ա-4ա* Երկրորդ Տիմոթ[էայ] թուղթ – *Պաւղոս առաքեալ, ըստ աւետեաց կենացն, որ ի Քրիստոս Յիսուս... որպէս ասէ յամենայն ճգնեաց եւ պալին պաշտօնն կատարեալ։*

10. *94ա-5ա* Ի Տիտոսի թղթոյն – *Հարցումն. Ջի՞նչ է, որ ասէ. Ամենայն ինչ սուրբ է սրբոց։ Պատասխանի. Գիտելի է, զի ըստ բնութեան իրին... զի կերիցեն եւ միայն հաւատասցեն ի Քրիստոս։*

11. *95ա-6ա* Ի Փիլիմոնի թղթոյն – *Հարցումն. Ջի՞նչ է օգտութիւն ի Փիլիմոնի թղթոյն։ Պատասխանի. Բազում ինչ. նախ... Լուայ զհաւատն քո եւ զսէրն, զոր ունիս առ Քրիստոս։*

Բ. *96ա-113բ* Հարցումն ի Հարցողաց գրոց. եւ fարոզ վասն անապատաւորաց – *Հարցումն. Ջի՞նչ հարկաւոր է անապատաւորաց եւ զի՞նչ պիտանացու։ Պատասխանի. Հարկաւոր է նախ քան զամենայն զախտ մարմնական... զի լրումն ամենայն օրինաց սէր է, ասէ առաքեալ։*

1. *99բ-100բ* Վասն սիրոյն որ առ Աստուած – *Սիրեսցէս զՏէր Աստուած յամենայն սրտէ քո։ Ամենայնս աստ վասն բոլորին նշանակէ... եւ քան զհուր գեհենին դժնդակ յայրումն։*

2. *100բ-1բ* Վասն առ ի յընկերն սէրն – *Եւ երկրորդն նման սմին. Սիրեսցէս զ[ը]նկեր քո... ուստի յայտ է, զի տուան խնդրուածք նոցա։*

3. *101բ-2ա* Վասն յանապատ բնակելոյ – *Ոչ [է] պարտ կրօնաւորին կալ ի մէջ աշխարհականաց... կարէ առնուլ զիաչն եւ յետեւիլ Քրիստոսի։*

4. *102աբ* Վասն ոչ առանձին կալոյ – *Առ բազում ինչ պիտանացու է միաբանական կեանք կրօնաւորաց... կամ զո՞ բժշկեսցես։ Ասէ մարգարէն՝ բարի գոլ զբնակել։*

5. *103ա-9ա* Խրատ վասն կրթութեան Ի. օգտութեան – *Իմաստութիւնն Աստուծոյ եւ շնորհքն աղաչէ վասն ձեր... ընդ մեզ գօրք եւ պատերազմ կազմեն։*

ա. *104աբ* Ամբարտաւանութիւն է, որ բաղձա զյաւուկ բարձրանալն իւր... որ ոչ պատկառի ի խնամողէ եւ յերախտաւորէ իւրմէ։

բ. *104բ-5ա* Նախանձ – *Նախանձիլ ընդ այլոց բարէբախտութիւն... եւս առաւել յորժամ տեսանէ յեղբայրն՝ հաշի եւ մաշի։*

գ. *105աբ* Բարկութիւն է ցասումն հոգոյ... եւ ընդդիմամարտին զմահն որոնողութիւն։

դ. *105բ* Ծուլութիւն է հեղգութիւն հոգոյ... եւ պատշաճաւոր գործ գործել։

ե. *105բ-6բ* Ագահութիւն է անկերպ ցանկութիւն՝ ունել յինչքն, եւ այս է մեծագոյն չար յաշխարհի... դարձեալ պատրանք եւ խաբէութիւն եւ երդմնահարութիւն հետեւի ագահութեան։

զ. *106բ-7ա* Որկրամոլութիւն է անսահման բաղձանք ուտելոյ... մարդն գիտէ, թէ զգինին կու խմէ, նա զխելքն կու խմէ։

է. *107աբ* Բղջախոհութիւնն է ցանկութիւն յամենայն ժամ լնուլ զվավաշոտութիւնն... եւ այնոքիկ, որ յայս մեղս ձգեն զմարդիկ, երեքն են՝ սատանայ, աշխարհս եւ մարմին։ Զայս չափս ծանուցաք վասն մեղացն։

ը. *107բ-9ա* Այժմ համառօտ ծանուցանեմք վասն դեղոցն... յաղագս այսորիկ հարքն ի նիկիայ սահմանեցին զհաւատամքն հաստատագոյն։

6. *109ա-14ա* Յաղագս է. մեղացն – *Հպարտութիւնն ծնանի ի մանէ հոգոյն, որ է բանն եւ լինի ըստ Թ. յեղանակի... մերձենամք առ Աստուած եւ ճանաչեմք զնայ։*

– 113բ *եւ գիտելի է, զի Աստուած ե. կերպիւ ճանաչի... եւ թէ է մշտնջենաւոր, է անեղ եւ անշարժ գոլով՝ շարժէ զարարածս, որ է Աստուած օրհնեալ. ամէն։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

114բ Յիշատակ է գիրքս Մարգարէ *եպիսկոպոսին Ա-պուչեղցոյ. Թվ[ին] ՌՃԾԲ. (1703), Փետրվարի ԺԴ. (14)։*

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *1ա, 6ա, 21ա, 22բ, 33ա, 34ա, 40ա՝ կապոյտ երկգիծ բոլորակ, եզրագծով «ՍՈՒՐԲ ԹԱԴԷԻ ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔ», ապա պարսկերէն՝* «گری قره کلیسا خلیفه» *(թրգ.՝ Ղարաքիլիսայի կաթողիկոսարան)»*, կենտրոնում եկեղեցի, որի տակ՝ «1901»։*

* Ծնթ. Կարդաց եւ թարգմանեց Քրիստինէ Կոստիկեանը։

ՆՇՈՒՄ՝ *մէջքին սոսնձած թերթիկին՝ «Մեկնութիւն Պօղոսի, 61», Ա. փեղկին սոսնձած թերթիկին՝ «///խանի /// ինչ-ինչ ///կաից նորոք (ջնջագիծ) կա/// ///ակար անորոշ /// մեկն. ժ.», 1ա՝ «ԺՉ. Մ[եսրոպ] եպս.», «Թ[ադէի] առաք[ելոյ] վ[անք]», «61/3643»։*


ԴՐՉԱՓՈՐՉ՝ *44բ, 67բ-68ա՝ գրչախաղ՝ նման զարդերի եւ տառերի նշաններին՝ «ւօ, օՀ, յես...», 114բ՝ «բարեւ շատ եւ, սիրեսցեք»։*

3644
ՊԱՐՉԱՏՈՄԱՐ

ԺԸ. դար

ԹԵՐԹ՝ 54։ ՊՐԱԿ՝ 1-5×12 (1՝ 10, 5՝ 8)։ ՆԻՒԹ՝ թուղթ։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15×10։ ԴՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (13×7)։ ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 7ա)։ ՏՈՂ՝ 19։ ԿԱՉՄ՝ կարմիր կտաւ, մէջքը՝ սեւ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ սպիտակ թուղթ։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած 1950ական թթ., թեր-



Նմուշ 7ա

թերը խումացած, գունափոխուած, տեղ-տեղ աղտոտուած, խոնաւութեան եւ թանաքի հետեւեր, զանազան բծեր, սկզբից պակասաւոր, թ. 47-9՝ մօտ 1 սմ-ի չափ լս-ից կտրած, ընդմէջ թ. 10-1ի 1 թերթ ընկած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա-54ա [Պարզատումար Ա-Ք] – *(սկ.) /// Վարդավառ յունիսի ԻՀ. (28), միջոց ուտիք... Ծնունդ Յովանու Յուլիս ԺԱ. օրն կիրակի /// (մէջից թափուած) 11ա /// Բուն Բարեկենդան Փետրվար Ը.... Քէն հանապազ նահանջէ: Ջմնացեալն ի Փիւրն հարցիր:*

Ծնթ. 16ա՝ սեւով հետագայ լրացում: Տե՛ս Գիրք տօմարաց հայոց, հռոմայեցւոց եւ Պարզատօմար, Մարշիլեայ, 1708 թ., էջ 32-96. տե՛ս նաեւ Հայ գիրը 1512-1800 թուականներին. Հայ հնատիպ գրի մատենագիտութիւն, [կազմեցին] Ն. Ոսկանեան, Ք. Կորկոտեան, Ա. Սաւալեան, Երեւան, 1988, էջ 168, Հմր 232:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, *ԺՀ. դ., նոտրգիր*

1. *23բ, 24ա, 33բ, 34ա, 36բ (լս-ներում. հատուածաբար)* [Գրիգորիսի Աղթամարցւոյ] Տաղ [գարնան] – *Գարունն է բացուեր, վարդն ի պաղչանին, / Քաղցր եղանակեն պլպուլն ու զումրին... նօնօֆար ծաղիկ գուն ըռահանին գին (՞):*

Տե՛ս Գրիգորիս Աղթամարցի (ԺՋ դ.), ուսումն., ֆնն. բն. եւ ծնթգր. Մ. Աւդալբէգեանի, Երեւան, 1963, էջ 238-241:

2. *45ա (լս-ում) Դրախտ /// քեզ հանց իմացայ երեսդ ///... Քեզ տեսայ եւ ուրախացայ բաբօվ զարդարեցայ, զարդարեցեր զաշխարհ]ս ամենայն ///:*

3. *54աբ* [Ծնունդ լուսնին] – *Տօմար հայոց. (ջնջագծով) Ծնունդ լուսնին այսպէս արա՛յ. կա՛լ հանապազ Լ. կամ Կ. զվերադիր... զկէս վերայ /// վերայ բե՛ր /// մնան րոպէ: /// կա՛լ զրոպէն եւ զԹիւ /// զմնացեալ ի վերայ մի տվի ///:*

Տե՛ս եւ հմմտ. Բուն տօմար հայոց, 1760 թ., էջ 91-92, տե՛ս նաեւ Հայ գիրը 1512-1800 թուականներին. Հայ հնատիպ գրի մատենագիտութիւն, [կազմեցին] Ն. Ոսկանեան, Ք. Կորկոտեան, Ա. Սաւալեան, Երեւան, 1988, էջ 450, Հմր 587:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

54ա եւ թէրավարժ գրչակայ աղօթից ո՛չ մոռանայք, ո՛վ ընթերցողք:

ՆՇՈՒՄ՝ *կազմի Ա. փեղկի կտաւին՝ «3644», 1ա՝ «Թ[աղէի] առ[աքելոյ] վ[անք]», «70/3644», «ԺԷ. Մ[եսրոպ եպսիսկոպոս]»:*


ԳՐՉԱՓՈՐՁ՝ *19բ՝ լս.՝ «Լաւաշ ///եարագ խաղտալ ///արտզ այեայ /// կրիտուր ///եշխայ ///անգ ///աքայեա, ոչին ալայ, որ է զալ ///եալին ///անատ/// գտի ///», 23ա՝ «հաւատամ», 31բ՝ «///այրբ, ///ողյու»:*

3645
ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, ՀԱՒԱՔՈՒՄՆ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ԵՒԹԱՆԵՑՈՒՆՑ ԹՂԹՈՑ ԿԱԹՈՂԻԿԷՒՑ

ԺԴ. դար


ԹԵՐԹ՝ 262+1. (կրկն.՝ թ. 12): ՊՐԱԿ՝ Ա-ԻԲ×12 (Ա, ԻԲ 10, ե 16, Ը 11): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16,5×12: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (13,5×8,5): ԳԻՐ՝ բոլորգիր. նոտրգրի տարբերով (նմուշ՝ 75ա). երբեմն գրչափոխութեամբ: ՏՈՂ՝ 21-22: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դռնակով, միջուկը՝ տախտակ. աստառը՝ դրոշմազարդ կտաւ, դռնակի աստառը՝ ծաղկաւոր կտաւ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԲԳ+Դ՝ թուղթ լուսագծերով եւ լուսադրոշմով՝ Գ՝ «G», երեքնուկ, Բաբ, Գա, Դբ՝ չգրուած:

ՊԱՏԱՒԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Մաշտոց, «Կանոն նաւակատեաց եկեղեցոյ եւ պղծելոյ յանաւրինաց եւ զշարժեալ սեղանն վերստին հաստատել»: ԺԱ. դ.: Ա. (սկ.)՝ ստացուած մէկ թերթի ընդլայնակի եւ ընդերկայնակի հատումով (բնագիրը կտրած): Մագաղաթ 16,2×11. երկսիւն (12×9,5. շարադրանքը ընդլայնակի). ուղղագիծ երկաթագիր (նմուշ՝ Աբ). տող՝ 10: Կարդալ՝ Աբ



Նմուշ Աբ

«/// [մատն]եցաւ [տունն սրբո]ւթեան fո [եւ փառք], զոր աւրինե[լին հարբ]ն մեր, եղեւ [հրձիկք] եւ ամենայն [փառաւոր]ութիւն մե[ր կործանեց]աւ եւ ի [վերայ այս]ր ամենայն[ի անսաս Տէ]ր, եւ լռեցեր, [եւ խոնարհ] արարեր ///, /// ձայն զաղմոս ԻԲ., կցուրդ. Աւ<u>ճեր</u> եղով զգլուխ իմ: եւ դնէ զՄիհոռն ի վերայ



Նմուշ 75ա

սեղանոյն մինչեւ ասեն զսաղմոսն եւ ապա տեառնագրէ զսեղանն, ըստ առաջին աւրինակի, զբոլոր եկեղեցին նոյնպէս եւ զաւազանն եւ զամբոնն եւ եթե խաչ լինի, եւ կան այլ ինչ սպաս եւ կամ ժամահար///»:

Տե՛ս Մայր Մաշտոց. Ժ. դար, ճ. Ա., գիրք Ա., աշխ. Գէորգ Տէր-Վարդանեանի, Ս. Էջմիածին, 2012, էջ 153:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – (գծանկարային). Ճակատազարդ՝ 1ա: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն: Զարդագիր՝ հանգուցագիր: Գոյներ՝ շագանակագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած, կազմի կաշին մաշուած, վրան կան ճաթեր եւ ֆեծուածքներ, տեղ-տեղ կաշին պոկուած-ընկած, մէջբը վրն. մասից երկայնակի պատռուած, դռնակը վնասուած, ծալուած, գամերը եւ կապիչներն ընկած, աստառները հնամաշ, աղտոտուած, խունացած, խոնաւութիւնից եւ գործածութիւնից լուսանցակողերը եւ թերթերն աղտոտուած, մաշուած, թերթերի վրայ առկայ են խոնաւութեան, կաթիլի հետքեր, ցեցակեր, պատռուածքներ, մեծ ու փոքր անցքեր եւ զանազան բծեր, տեղ-տեղ թանաքը թափուած: Պտոկ-պիպ. Աա՝ գիրը թափուած, անընթեռնելի, առկայ է գրեթէ առաջին սեան կէսը եւ երկրորդ սիւնը, պիպ. Բ, թ. 9, 95, 254՝ հիմիից անջատ, թ. 10՝ հիմիից մասամբ անջատ, թ. 86-94, 96՝ հիմիին ամրացուած փոքր մասով, թ. 23՝ պատռուածքն ամրացուած այլ թղթով, եւ բնագրի ծածկած մասը լրացուած հետագայում, բոլորգրով, ընդմէջ թ. 85-6ի 1, թ. 252-3ի 2 եւ վջ.ից ընկած թերթ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *1ա-47բ* [Թուղթ Յակոբայ]

1ա-2ա Նախադրութիւն Թղթոյն Յակովբայ – *Արդարն Յակովբոս, որ էր ըստ մարմնոյ եղբայր Տեառն մերոյ... եւ կարգելոյն եղեցիս ընդ է. թուղթան կաթողիկեացս:*

ա. *2ա-47բ* [Մեկնութիւն Թղթոյն Յակոբայ] – *[Բան]. Յակովբոս Աստուծոյ եւ Տեառն Յիսուսի Քրիստոսի ծառայ, երկոտասան ազգացդ, որ ի սփիւռդ էք, ողջոյն: [Մեկնութ.] Սովորութիւն էր իւրաքանչիւր ումէք... եւ ձեր առնել զասացեալսն, եւ այսպէս կատարի գործն: Կատարումն ի Քրիստոս թղթոյս Յակոբա:*

2. 47բ-96բ [Թուղթ առաջին Պետրոսի]

47բ-8ա Նախադրութիւն Առաջին թղթոյս Պետրոսի – *Պետրոս ինքնին գրեաց զայս թուղթս առ որ ի սփիւռս... թէ որպէս առաջի թագաւորին տացեն զպատասխանի, եւ աստ աւարտէ զթուղթս:*

ա. *48ա-96բ* [Մեկնութիւն Առաջին թղթոյն Պետրոսի] – *[Բան]. Պետրոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի ընդրելոց նժդեհից, որ ի սփիւռս Պոնտացւոց, Գաղատացւոց, եւ Կապադովկացւոց, եւ Ասիացւոց, եւ Բիւթանացւոց: [Մեկնութ.] Սա առաքեալս, /// որոց ի թլփատութեանն էին... Իսկ զյետ ժամանակին, որ[պէս զարդէն կոչեն] /// (մէջից թափուած) 86ա ///[Յիսուսի ի մարմինս մեր բերցուք] նորին. Վասն զի ոչ միայն վասն արդարոց... իբրեւ զկնիք արքունական ի կատարումն արձանացուցեալ: Կատարումն Առաջին թղթոյն Պետրոսի:*

Ծնք. Վերականգնումներն ըստ ձեռ. 1407, 76ա եւ 78ա-ի:

3. *97ա-120բ* [Թուղթ երկրորդ Պետրոսի]

97աբ Նախադրութիւն երկրորդ թղթոյն Պետրոսի – *Գրէ դարձեալ նոյն ինքն Պետրոս եւ զայս թուղթս... պատուիրէ քննօղս լինել եւ ի սոյն աւարտէ զթուղթն:*

ա. *97բ-120բ* Թուղթ Պետրոսի երկրորդ. [Մեկնութիւն] – *[Բան]. Սիմոն-Պետրոս ծառայ եւ առաքեալ Յիսուսի Քրիստոսի, որոց հանգիտապատիւ մեզ հասէքդ հաւատոց յարդարութիւն Աստուծոյ մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի: [Մեկնութ.] Զի մի եմք, մի ունելով գլուխ զսրբութիւնն մեր Քրիստոս... այլ ի հուրն յաւիտենից արկանէ, յորմէ լիցուք փրկեալք մեք Քրիստոսիւ Յիսուսիւ, որում փառք յաւիտեանս: Կատարումն ի Քրիստոս երկրորդ թղթոյն Պետրոսի:*

4. *121ա-232ա* [Թուղթ առաջին Յոհաննու]

121ա-2ա Նախադրութիւն Առաջին թղթոյն Յոհաննու – *Յովհաննէս, որ զԱւետարանն գրեաց, նոյնն առաքէ թուղթ... եւ պահեսցո՛ւք զանձինս ի կռոց:*

ա. *122ա-232ա* Թուղթ Յովհաննու կաթողիկէի առաջի. [Մեկնութիւն] – *[Բան]. Որ էրն ի սկզբանէ, զորմէ լուաքն, որում ականատեսն իսկ եղաք. ընդ որ հայեցաք, եւ ձեռք մեր շաւշափեցին ի վերայ Բանին կենաց: [Մեկնութ.] Խորհուրդ իմ ինձ խորհրդին եւ իմոցն լուա՛ք... Թէպէտ եւ առ նոսա սոյն պարագրի:*

5. *232ա-8բ* Թուղթ Յոհաննու երկրորդ

232աբ [Նախադրութիւն] – *Ջառաջնում թղթոյն զօրութիւն եւ զմիտս ունի եւ այս թուղթ... զտուն իւր եկեղեցի արար, եւ զորդեական ուղղեր հոգեւորապէս:*

ա. *232բ-8բ* [Մեկնութիւն երկրորդ թղթոյն Յոհաննու] – *[Բան] Յերիցուէ առ ընտրեալ կիւրիա, եւ առ որդեակս իւր, զոր եսդ սիրեմ ճշմարտութեամբ: [Մեկնութ.] Ծանեաք զսովորութիւն երանելւոյս յԱւետարանէն... միշտ զշնորհսն Աստծոյ յաւգնութիւն նոցա մատակարարեալ: Կատարումն երկրորդ թղթ[ոյն] Յոհաննու:*

6. *238բ-43բ* [Թուղթ Յոհաննու երրորդ]

238բ-9ա Նախադրութիւն Երրորդ թղթոյն Յոհաննու – *Գրէ նոյն երանելիս զայս երրորդ թուղթ... վասն յառաջ ասացելում պատճառին գրեցաւ, զոր յերկրորդն ցուցաք:*

ա. *239ա-43բ* Թուղթ Յոհաննու երրորդ. [Մեկնութիւն] – *[Բան]. Յերիցուէ առ Գայիոս սիրելի. զոր եսդ սիրեմ ճշմարտութեամբ: Սիրելի՛, վասն ամենայն իրաց քոց աջողութեան եւ առողջութեան աղաւթս առնեմ, որպէս է իսկ յաջողութիւն անձինդ քո: [Մեկնութ.] երկու*

շնորհս կատարեալս... զամենեսեան անուամբ նշանակեալ աւանդեա՛ նոցա զողջոյնս մեր: Կատարումն Գ. թղթոյն Յոհաննու:

7. *243բ-62բ* [Թուղթ Յուդայի]

ա. *243բ-4ա* Նախադրութիւն թղթոյն Յուդայի – *Ջթուլաթս զայս գրէ նորոգ հաւատացեալոցն... զի աճեսցեն ի հաւատսն եւ ի փառս Քրիստոսի աւարտեալ զթուլաթս:*

բ. *244ա-52բ, 253ա-62բ* [Թուղթ Յուդայի եղբաւր Յակովբայ. Մեկնութիւն] – *[Բան]. Յուդայ Յիսուսի Քրիստոսի ծառայ եւ եղբայր Յակոբայ: [Մեկնութ.] Կարեւորապէս զոյգ անուան իւրոյ ի մէջ ածէ... մարմնովն խելամտութեամբ ժողովրդեան /// (մէջից թափուած) 253ա /// վիճեալ տայր պատասկանի վասն մովսեսեան մարմնոյ... զի ամէնն եղիցի կամ հաստատիչն այսորիկ ասաց: Միոյն աստուծոյ փառք մե/// (վջ.):*

Կան գրչի (61բ, 73բ, 96ա, 106ա, 163ա, 164բ եւ այլուր) եւ հետագայ ձեռով (25ա, 26ա, 33բ, 123բ, 135ա, 164բ եւ այլուր) յաճախդէպ սրբագրումներ:

Ծնթ. Խմբագիր մեկնութիւն հաղուած հետեւեալ հեղինակներից՝ Աթանաս Աղէքսանդրացի, Ամոն Բահանայ, Բասեղ Կեսարացի, Գրիգոր Աստուածաբան, Դիդիմոս, Դիոնիսիոս Աղէքսանդրացի, Եւսեբիոս Կեսարացի, Թէոդորեայ Երակլեցի, Թէոդորիտոն, Իսիոս, Կիւրեղ Աղէքսանդրացի, Հիւսիոս Բահանայ, Հիսիդիոս Երուսաղէմացի, Մաքսիմոս կրաւնաւոր, Յովհան Ոսկէբերան, Սեւերիանոս Գաբաղու եպիսկոպոս, Սեւերոս Անտիոքացի, Ոռոգինես, Տիմոթէոս:

Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ջ, Վենետիկ, 1996, էջ 617-20, ձեռ. 656/1065, հմմտ. նաեւ Յ. Տաշեան, Յուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 234-243, ձեռ. 48: Նաեւ՝ տպ. Patrologia orientalis, tom 43, 44, 46, 47 (Մեկնութիւն եօթանց թղթոց կաթուղիկեայց):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *120բ (ստ. լս., 1488 թ., բոլորգրախառն նոտրգիր, կարմրով) Յայսմ օուր յիշատակ սքանչելեացն, որ եղեւ ի թվականիս ՋԼԷ.* (1488), ազգն տաճկաց այպն անէին զա|121ա|զգս հայոց, եւ զՔրիստոս եւ զՄարիամ մայր նորա եւ զանարիւն պա|120բ|տարագն սուրբ ի մէջ հարսանեաց, իբր ընդ խաղալիկս առնէին եւ յ|121ա|անկարծակի տիրեալ նոցա պատուհաս, զի տեսեալ քրիս|120բ|տոնէիցն ակներեւ այր մի՝ ահօնր, տեսլեամբ, հրեղէն կառաւք |121ա| իջեալ եւ եսպան ի նոցանէ նիզակաւ Հ. (70) ոգի՝ ընդ այր եւ ընդ կին:*

* Ծնթ. Նախապէս գրած «ՊԸ. (1389)», յետոյ այլ թանաճով ուղղած ՋԼԷ. (1488). նոյնը գրած նաեւ կողքին՝ շրջանակի մէջ:

2. *120բ (1488 թ., շղագիր, շագանականոյնով) Ես՝* Պաւղոս, *գրեցի ի Լիմ:*

3. *պհպ. Դա (1715 թ., նոտրգիր) Թվին ՌՃԿԲ. (1715) ես՝* Աբրահամս, *գրեցի. ԽԴ. (44) է:*

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *Դա՝ սեւով շրջանակ, մէջը՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ԱԲՐԱՀԱՄ ՌՃԿԲ. (1713)»:*

ՆՇՈՒՄ՝ *մէջքին սոսնձած թերթիկին՝ «Մեկնութիւն թղթոց կաթուղիկեաց», Ա. փեղկին սոսնձած թերթիկին՝ «Հմր 42 / Հաւաքումն / մեկնութեան / եօթն թղթոց / կաթողիկէից / ձեռագիր Տաթեւի», պհպ. Ասա «Տաթեւ», «42/3645», Պտռկ-պհպ. Բա՝ «ԺԴ. Մ[եսրոպ] եպիսկոպոս», Պտռկ-պհպ. Գբ՝ «Մեկնութիւն թղթոյ Յակոբու առաքելոյն Հմր 85»:*


ԳՐՋԱՓՈՐՁ՝ *Պտռկ-պհպ. Ասա՝ «տէ ինչպէ տէր, ինչպէ, իին ոչ», Պտռկ-պհպ. Աբ՝ սիւնակամիջում բոլորգրով «Մեկնութիւն կաթուղիկէից», պհպ. Բա՝ հայերէն այբուբենի տառեր, «Տէր, ջանացարո՛ւք, տէր ողորջան, տէր ջանացար զի չան կամ տէր (կրկն. քանիցս), շանդ ոտիր, տէր զորպէս... շահաորել, որպէս Տէր հացդ, զաւկ շատ, կամք չա»:*

3646
ԱԻԵՏԱՐԱՆ

ԺԵ. դար

ԹԵՐԹ՝ 258. չգրուած՝ 117բ, 254ա, 257ա-58ա: ՊՐԱԿ՝ Ա-ԻԱ×12 (Ա, Ե 11, Ջ, ԺԳ, ԺԴ, ԻԱ 14, Թ չիմ, ԺԵ, ԺԸ, Ի 16): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15,5×11,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (11×8): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 4ա). գրչափոխութեամբ: ՏՈՂ՝ 16-22: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի. միջուկը՝ տախտակ. աստառը՝ դրոշմազարդ կարմիր կտաւ:


ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Կիսախոռան՝ 1ա (այլ ձեռագրից կտրած, փակցրած), 72ա (ուղղանկիւն երկգիծ շրջանակ, ստ. եզրի կենտրոնը բաց՝ աւուած կիսախոռանի պատկերման համար. նոյն նպատակով



Նմուշ 4ա

բաց է թողնուած նաեւ «Ս» սկզբնատառի տեղը), 191ա: Ճակատազարդ՝ 118ա (գծանկարային): Զարդագիր՝ հանգուցագիր, կենդանագիր, թռչնագիր, մարդադէմ (Գ՝ 1ա, 253ա, Ջ՝ 10բ, 118ա, 191ա, 192ա): Գոյներ՝ կարմիր, կանաչ, սեւ:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Վարժ իմն։ ԺԱ. դար։ Ա֊Բ (վերջում)՝ ստացուած երկսիւն 1 թերթի ընդլայնակի ծալումով, ընդլայնակի եւ ընդերկայնակի եզրահատումով (բնագիրը կտրած)։ Մագաղաթ 14,5×20 (բացուած վիճակով). երկսիւն (14,5×16,5). բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝ Բա). տող՝ 13։ Կարդալ՝ Աա-Բբ «/// [հաս]տատել զձեզ [ըս]տ Աւետարանիս իմում... ըստ հրամանի մշ]տնջենաւորին Աստուծոյ, ի հ[նա]զանդութիւն հաւատո[ց] ///, ///անելոյ հան///... բնակութիւնն ///»։ Աբ-Բա «/// հանապազ ատարա /// եւ զամենայն ///ցեալսն յաննն ///էր շնորհացն Քրիստոսի... առաջ Յովսէփ եւ երկ/// թողիկ արբ, զի ///, /// պետական բան/// մինչդեռ արբոյ ///... զոր ամենայնի իմինատես նկատե///»։



Նմուշ Բա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմը մաշուած, վրան կան ճաթեր եւ ֆերծուածքներ, ցեցակեր. աստառը՝ մաշուած, գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով լուսանցակողերը (առաւել վր. եւ ստ.) աղտոտուած, մաշուած, ձեւափոխուած. Պտոկ-պիպ-ները խոնաւութիւնից կուչ եկած, եզրերն առաւել գորշացած, Աբ, Բա՝ եզրերը գրեթէ սեւացած, ցեցակեր, Աա, Բբ՝ գիրը մասամբ թափուած, դժուարընթեռնելի. թերթերը խոնաւացած, տեղ-տեղ առաւել գորշացած, աղտոտուած, վրան՝ ստ. մասում՝ հիմիին մօտ, բորբոսի հետքեր, ցեցակեր, զանազան բծեր, տեղ-տեղ գիրը թափուած, ոռոշ թերթեր վր. եւ ստ. մասերից 1-2 սմ-ի չափով հիմիից անջատ եւ թուլացած, ոռոշ թերթերի վրայ կան պատռուածքներ, ոռոշ հատուածներում էլ անկիւններից պատռուած-ընկած, անկիւնների մաշուածքները կարկատաններով նորոգած ԺԸ. դարում, անհրաժեշտ տեղերում բնագիրը լրացուած՝ 39բ, 42աբ եւ այլուր. թ. 26, 27, 32, 33՝ արտ. լս-ից 1-2 սմ-ի չափով կտրած, թ. 72, 230, 231, 238, 242, 243՝ հիմիից անջատ թ. 83՝ առկայ է թերթի կէսը, թ. 132՝ պատռուածքը թելով կարած խոնաւութիւնից կարմիր թանաքը տեղ-տեղ տարածուած, գիրն արտատպուած հանդիպակաց երեսին եւ արտացոլուած դարձերեսին. պրականիշ Թ՝ թուիչք. թ. 61՝ էջանիշ կարմիր թել։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *1ա-71բ* Աւետարան Մատթէոսի։

2. *72ա-117ա* Աւետարան Մարկոսի։

3. *118ա-90բ* Աւետարան Ղուկասու. (*190բ (վերջում)՝ «եւ զամենայն համառօտագոյն պատմեցին այնոցիկ, որ եկին ընդ Պետրոսի։ Յետ այսորիկ ինքն Յիսուս սկսաւ յարեւելից մինչեւ ի մուտս արեւու եւ ետ ի ձեռս նոցա զաստուածային զանապական քարոզութիւնն սիեզերական փրկութեանն ամենայն արարածոց յաւիտեանս. ամէն)։*

4. *191ա-253բ* Աւետարան Յովհաննու *(353աբ* Իրք կնոջն շնացելոյ*)*։

Ծնբ. Ունի ստ. լս. համաբարբառ՝ Յուացանկ։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

253բ *Փա՛ռք Փրկչին, եւ յիշատակ գրչին։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *254բ (ԺԵ. դար, բոլորգիր) Փա՛ռք ամենասուրբ երրորդութեան՝ Հաւր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Կամակցութեամբ անկարաւտ, ապենիազ Թագաւորին Քրիստոսի եւ մարդասէր բարերարին եւ ողորմութեամբ սրբոհոյ Աստուածածնին եւ ամենայն սրբոց՝ երկնաւորաց եւ երկրաւորաց, եւ ընդրելոց յորովայնէ, եւ կամարարաց Տեառն Աստուծոյ, արդ, ես՝ մեղուցեալ եւ անարժան ծառայս Աստուծոյ* Յոհաննէս, *լվաք զհրամանս սուրբ պատուիրանացն Աստուծոյ՝ երանի, որ ունիցի զաւակ ի Սիոն եւ ընդգանի ի վերին* Երուսաղեմ, *գնեցաք զսուրբ Աւետարանս ի հալ|255ա|ալ արդեանց մերոց՝ յիշատակ մեզ եւ ծընողաց մերոց՝ հաւրն իմոյ՝* Դաւթին, *եւ մաւրն՝* Խոնդխաթունին, *եւ եղբարցն իմոյ՝* Վարձելին *եւ* Վարդան, *եւ քերցն իմոյ՝* Ազատին։ *Արդ, աղաչեմ զմանկունս սուրբ եկեղեցոյ, զի ասասջիք՝ Տէր Աստուա՛ծ Յիսուս Քրիստոս, ի քոյ ահաւոր եւ միւսանգամ գալըստեանն, յորժամ բանք սպառին եւ գործք թագաւորեն, արդարքն պսակին եւ մեղաւորքն մատնին ի հուրն անշէջ, յայնժամ ողորմեա՛յ ստացողի սորա՝* Յոհաննիսիս, *եւ ծընողաց իւրոց, եւ ամենայն արեան մերձաւորաց, հաւրն՝* Դաւթին, *եւ մաւրն՝* Խոնդխաթունին, *եւ եղբարցն՝* Վարձելին *եւ* Վարդան, *եւ քուրջն՝* Ազատին։ *Ո վ սուրբ ընթերցողք, |255բ| աղաչեմ զձեզ սիրովն Աստուծոյ, յորժամ ընթեռնուք ի ժամ սուրբ պատարագին, յիշեսջիք առաջի Քրիստոսի ի սոսկալի ժամ սուրբ պատարագին եւ ասասջիք բոլորով սրտիւք՝ Տէր Յիսուս Քրիստոս եւ Աստուած ամենեցուն, յիշեա՛ զհոգիս* Յոհաննիսին, *եւ լսեցո՛յ զքաղցրայլուր բարբառն, թէ՝ «Բարի՛ ծառա եւ հաւատարիմ, է՛կ, մո՛ւտ յուրախութիւն Տեառն քո»։ Եւ ինքն արարիչն Աստուած, որ առատ է ի տուրս պարգեւաց, ձեզ՝ յիշողացա՛, եւ մեզ՝ յիշելոցս, ողորմեսցի յիւրում ահեղ դատաստանին. ամէն։*

2. *255ա (ԺԵ. դար, բոլորգիր) Ես՝* Վարձիգուլս, *որդի*

Ամիր Ազիզին, *եկի ի Մաւղնոյ վանքս, դրի յիշատակ իմ հոգուս, որ զինչ վանուցն աղուն լինի, իմ ջաղացն աղցվի, որ զինչ միաբանք լինին, վանքս ուտեն ու մեր ծնողացն ու մեր հոգուս ողորմի ասեն: Եւ միաբանք վանիցս՝* Իգնատիոս *եպիսկոպոսս եւ այլ աբեղայքս ի տարին մէկ ժամ կատարենք* Վարձիգուլին *հոգուն, քանի վանքս ենք, եւ յետ մեզ հաստատուն պահպանքն աւրհնին յԱստուծոյ. ամէն: Եւ ով ոք որ վանքս լինին, զայս կատարեն:*

3. *256բ (1651 թ., բոլորգիր) ես՝* Թաթոս, *իւր որդի* Օագին, Յոհաննին, Միրզայեանին, *իւր կողակից* Շահզամանին, *իւր որդի* Ավանէսին, *իւր կողակից* Սիմայ, Հայրապետ, *իւր կողակից* Սանամին, *դստեր* Եղիսապետ, Պետրոս, *քոյր* Մարէան, Հուտում. *թվին ՌՃ.* (1651) էր, որ գիրեցօ: Աստուած ողորմի ասասցէ ձեզ եւ մեզ. ամէն: Հայր մեր որ յերկինս՝:*

* Ծնթ. Այլ ձեռով Ճ.ի վրայ մեծ Ճ. գրած եւ կողքը ե. աւելացրած. տարեթիւը սրբագրել է Թաթոսը՝ 1656 թ.:

Տե՛ս Ժէ. դ-ի յիշ-ք, Գ., էջ 440, Հմ 694:

4. *258բ (1656 թ., անարուեստ բոլորգիր) ես՝* Թաթոս, *սուրբ Աւետարանս նորոգիլ տվի՝ յիշատակ ինձ եւ <իմ> ծնաւղն իմոց, որ [հ]անգուցեալ են առ Քրիստոս: Իմ մեծ քոյրն՝* Մարգարիտ, *<իմ> կողակ<իցն> իմ՝* Շահում, *եւ մեծ որդին իմ՝* Աւագն, *եւ միւսն որդին՝* Յոհան, *եւ <իմ> պապն իմ՝* Ճանիպէկն, *եւ <իմ> մայրն իմ՝* Մէհրգան, *կարդալով կամ յաւրինակելով՝ լի <եւ> բերանով Աստուած ողորմի ասէք: Աստուած ձեզ եւ մեզ <եւ> ողորմեսցի. ամէն:*

Տե՛ս Ժէ. դ-ի յիշ-ք, Գ., էջ 440, Հմ 694:


ՆՇՈՒՄ՝ *մէջքին սոսնձած թերթիկին՝ «ԻԲ. Հմր 47, Աւետարան, ԺԶ. դար», Ա. փեղկին սոսնձած թերթիկին՝ «Հմր 47, Աւետարան», Ա. կազմաստառին սոսնձած թերթիկին՝ «Տաթեւ», «Ժե. Մ[եսրոպ] եպիսկոպոս», «47/3646»:*

3647
ԱԻԵՏԱՐԱՆ

ՄՈՍ ԳԻՒՂ (ԾԱՐ ԳԱԻԱՌ) ՌՃԲ.-ՌՃԳ. – 1653-1654

ԳՐԻՉ՝ Մատիրոս Խնծորեկցի (1դ-2բ, 8բ-340ա), Մովսէս Երէց (3ա-7ա, 340բ-4ա): ԾԱՂԿՈՂ եւ ԿԱՉՄՈՂ՝ Մովսէս Երէց: ՍՏԱՅՈՂ՝ Թադէոս Րախիշեցի:

ԹԵՐԹ՝ 346+3 (կրկն.՝ 1, 291, 298). չգրուած՝ 1ա, 1բ, 1գ, 7բ, 8ա, 106ա, 345ա-346բ: ՊՐԱԿ՝ 7+Ա-ԻԹ×12 (Գ 11, Ժե, ԻԲ, ԻԸ 10, ԻԳ 7, ԻԹ 14)+4: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16×11,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (10,5×7,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 10ա): ՏՈՂ՝ 19: ԿԱՉՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի, Բ. փեղկին կոստղերով ամրացուած ածաթէ խաչ. միջուկը՝ տախտակ. աստառը՝ ծաղկազարդ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա-Գ+Դ-Ջ՝ չգրուած, դեղնաւուն թուղթ:



Նմուշ 10ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Մատթէոս՝ 8բ, Մարկոս՝ 106բ, Ղուկաս՝ 169բ, Յովհաննէս եւ Պռոխորոս՝ 270բ: Կիսախորան՝ 9ա, 107ա, 170ա, 271ա: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն, վարդեակ, տաճար (82բ, 151բ, 249բ), խաչ (96բ, 257ա), ծառ (71բ, 73բ, 143բ, 244ա), մոմ (102ա), յուշկապարիկ (215ա): Ջարդագիր՝ հանգուցագիր, մարդ (9ա), թռչնագիր, կենդանագիր (107ա, 170ա), ձկան մարմնով, թռչնի թեւերով եւ գլխով մտացածին պատկեր (282բ): Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, նարնջի, սպիտակ, վարդագոյն, մոխրագոյն, շագանակագոյն:

Տե՛ս Աստղիկ Գէորգեան, Հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն Թ-ԺԷ. դդ., Գանիրէ, 1998, էջ 450, Հմ 263, Բ.:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած եւ վերակազմուած 1963 թ., կազմի եզրերը, մէջքը, պիպ-ները նորոգման ժամանակի, Ա. եւ Բ. փեղկերին ամրացուած ճիւ՝ մաշուած, ցեցակեր կաշին, խաչի կենտրոնում երբեմնի եղած ակը եւ կոստղերից մէկն ընկած. աստառը՝ մաշուած, խունացած. լուսանցակողերի կարմիրը մասամբ թափուած, աղտոտուած. խոնաւութիւնից եւ գործածութիւնից թերթերն աղտոտուած, վրան զանազան բծեր, խոնաւութեան գորշաւուն հետքեր, ցեցակեր մասերը նորոգուած դեղին կիսաթափանցիկ թղթով, մանրանկարների գոյները տեղ-տեղ թափուած, գիրը տեղ-տեղ տպուած հակադիր երեսին, տեղ-տեղ էլ թափուած. թ. 1, 291, 298. թ. 50, 164, 261, 334՝ կարմիր, կապոյտ, սպիտակ էջանշան թելեր՝ ամրացուած թղթի շերտերով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ա. *2բ-3ա* Նախադրութիւն: *1դ-2բ* Գլուխք: *9ա-104ա* Աւետարան Մատթէոսի:

– *3ա-5ա* Պատմութիւն առաքելոյն եւ աւետարանչին Մատթէոսի – *Մինչ դեռ առաքեալն եւ աւետարանիչն Մատթէոս ի լերինն էր... եւ կամեցաւ սպանանել զառաքեալն. եւ Քրիստոսի փառք յաւիտեան. ամէն:*

– *5բ-7ա* Խօսք եւ պատուէր սուրբ Աւետարանիս առ

այնոսիկ, որ ժառանգեն զսա յապայս ժամանակաց վասն զգուշութեան – *Յանեղական Բանէն եւ յանմատոյց լուսոյն կազմեալ են ճանապարհք իմ... որ դու յաւուրն ահագին պսակեսցես զգլուխ իմ, եւ քեզ փառք յաւիտեանս. ամէն: Հայր մեր, որ յեր՞:*

բ. *104ա* Նախադրութիւն: *104աբ* Նախադրութիւն Մարկոսի Աւետարանին, նորայ ցանկին: *105աբ* Գլուխք: *107ա-66ա* Աւետարան Մարկոսի:

գ. *166բ* Նախադրութիւն: *166բ-7ա* Նախադրութիւն Ղուկասու Աւետարանին նոր ցանկին: *167բ-9ա* Գլուխք: *170ա-266ա* Աւետարան Ղուկասու:

դ. *266ա* Նախադրութիւն: *266ա-7բ* Նախադրութիւն Յովհաննու Աւետարանիս նոր ցանկին: *169բ-70ա* Գլուխք: *271ա-340բ* Աւետարան Յովհաննու:

– *267բ-9ա* Ննջումն Յովհաննու առաքելոյ եւ աւետարանչի եւ աստուածաբանի – *Յետ ննջմանն ամենասրբուհոյ աստուածածնին, ամէնաւարհնեալ կուսին Մարիամայ Յովհաննէս առաքեալն... որ փոխեցեր Քրիստոս զսիրելին քո Յովհաննէս եւ զպատմող աստուածութեան յերկրայնոցս յերկնայինսն, պարգեւեա՛ եւ զքո զերկնից արքայութիւնդ:*

Ծնբ. Ունի ստ. լս. համաբարբառ՝ Յոուացանկ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԱՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. Մովսէս գրչի

7ա Զսակաւ ծրօղ բանիս զՄովսէս զանպիտան էրէցս եւ զծնօղսն իմ յիշել աղաչեմ ի Տէր միով ողորմիւ, զյիշօղքդ յիշեալ լիջիք զՏեառնէ Աստուծոյն մերոյ. ամէն: Թվին ՌՃԳ. (1654):

2. Մարտիրոս գրչի

*167ա Զ*Մարտիրոս *փցուն գրիչ մի՛ մոռանայք, յիշեցէ՛ք ի Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշէ. ամէն:*

269բ Մտացօղի եւ գրօղի սուրբ Աւետարանիս եւ ծնօղաց իւրոց եւ ամենայն արեան մերձաւորաց իւրեանց, եւ քեզ փառք յաւիտեան. յամէն:

296բ (ստ. լս.)՝ եղբա՛յրք, թողութիւն արարէ՛ք ննջումի:

340բ Փա՛ռք եզակի, եռահիւսակ դասանութեանն՝ ապենիագին, կատարեալ եւ անսահմանելի Աստուծոյ Հօր, Աստուծոյ Որդւոյ, Աստուծոյ Հոգւոյ: Շնորհիւ Տեառն ամենակալի եւ նորին օգնականութեամբ աւարտեցաւ եռահարշաշ եւ հոգիազարդ Աւետարանս, զոր էր շաղկապեալ երանեալ աւետարանչացն՝ ըստ բազմերանգ գունոց ի մի ոստայն, ընկենլով հանճար, զոր արուեստակեալ |341ա| անուշոցաց ծաղկանց իւղ եփեցական կազմութեամբ իր՝ ըստ հոգւոյն յատկութեամբ իմանի զանազանն որակութեամբք գաղափարելով ըստ յոքունց արփիացելոցն դասակցութեանց՝ առ ի յեկեղեցւոյ յարմարումն, յօդիւ խաղաղութեամբ գլխոյն պատշաճեալ, զի յայսմանէ կատարելութիւն: Զորք աւետարանք ի բազում պատճառէ՝ չորեքկերպեան կենդանիք՝ մարդ, առիւծ, ցուլ, արծիւ. չորք նիւթք աշխարհիս՝ հող, ջուր, հուր, օդ՝ հակառակք անհաշտելիք եւ սիրելիք անքակտելիք. չորք-չորք գիր անուան երրորդ<րդ>ութեան՝ Հայր, Որդի, Հոգի, չորք գետք բղխեալք ի դրախտէն՝ Փիսովն, Գեհովն, Տիգրիս, Եփրատէս, չորս անկիւնս եւ չորս եղջեւրք սեղանոյն, չորս թեւք սրբոյ խաչին, չորս առաքինութիւնք հոգւոյ՝ խոհեմութիւն, արիութիւն, ողջախոհութիւն, արդարութիւն, |341բ| չորս ծագ տիեզերաց՝ արեւելք, արեւմուտք, հիւսիս, հարաւ, չորս բանք Աւետարանիս՝ պատգամ եւ պատուիրան, ըսպառնալիս եւ աւետիս, չորս բանիւ խօսի Աւետարանն՝ հրամանաւ եւ խրատով, օրինակաւ եւ վկայութեամբ, եւ այլ բազում պատճառք են, յորս գաղափարին չորեքեան աւետա-[րա]նիչքս, զի թէպէտ եւ բազում բանք ի սոսա երեւին ներհակք միմեանց, այլ քաջ ճշմարիտք եւ յոյժ միաբանք միմեանց:

Արդ, գրեցաւ Մաղթէոս *ի խնդրելոյ հրէից հաւատացելոցն, որք էին յԵրուսաղէմ զկնի Ք. ամի համբառնալոց Փրկչին, ի լեզու յեբերայեցի, յԵրուսաղէմ քաղաքի, զոր առեալ* Թովմայի՝ *քարոզէ Հնդկաց, եւ Բարդուղիմէոս՝ Դելմաստանի եւ Ամրանա եւ ամենայն յարեւելից: Իսկ* Մարկոս *գրէ ի հրամանէ* Պետրոսի *վիմի վարդապետին իւրոյ* Աղեքսանդր *քաղաքի, ի լեզու եգիպ|342ա|տացի, զկնի ԺԱ. (11) ամի, եւ աւետարանէ յԵթովպէ եւ ի Լիւիկիա եւ լուսաւորէ զարեւմուտս: Իսկ* Ղուկաս, *յառաջագոյն աշակերտ գոլով* Գաղիանոսի *բժշկապետի, յոր եւ ինքն էր արուեստիւ բժիշկ, յետոյ աշակերտի սրբոյն* Պօղոսի, *որ եւ հրամանաւ իսկ նորա գրէ զկնի ԺՀ. (18) ամի ի լեզու հռովմաեցի, յԱնտիոք քաղաքի, եւ քարոզէ ի Բիւթանիա եւ յամենայն* Մակեդովնիա: *Իսկ* Յովհաննէս՝ *որդի* Զեբեդեա, *որդի* Որոտման, *որդի սուրբ Կուսին, զվերինն որոտալով աւետէ եւ աւետարանէ զկնի ԾԳ. (53) ամի գրէ յԵփեսոս քաղաք, եւ լուսաւորէ զամենայն Ասիա: Արդ, Աւետարան կոչի, որ պատմէ մեզ զեղեալ բարութիւնս, զխաղաղութիւն, զոր եղեւ հրեշտակաց եւ մարդկան, զքակտումն բռնութեան թշնամւոյն կենաց մերոց, զաւերումն դժոխոց, զազատութիւն հոգւոց, զընդ աջմէ Աստուծոյ նստել բնութեան մարդկութեանս:*

Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ |342բ| Մարտիրոս *կղերիկոսի, որ էր նա ի յերկրէն* Ծագաձորոյ, *ի գեղջէն* Խնձորեկոյ: *Յայսմ Աստուածաշունչ տառիս ցանկացող եղեալ ի Հոգւոյն Սրբոյ եռացեալ, սիրասնունդ եւ սրբամիտ, ողջախոհ եւ սրբասնեալ տէր* Թադէոս *նորընծայ քահանայն, որ եւ ետ գրել զսուրբ Աւետարանս ի* Մարտիրոս *դպրին զսեաւ գիրն, եւ եբեր ետ զիս՝ զանարժանս, գհեք<գ>ս եւ զիշուառս, զնուաստ անուն* Մովսէս *տրուպ եւեթ իրիցուկս: Եւ ես՝ թաքուրս ի բարեաց գործոց, մեղսամած, մատամբս ծաղկեցի եւ*

կազմեցի զսուրբ Աւետարանս եւ զսակաւ յիշատակարանս ծրագրեցի, մի թէ քաւի մեղս ի մարմնի, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի, եւ աղօթիւք նոցին Տէրն մեզ ողորմեսցի: Ի թվին ՌՃԲ. (1653) գստացաւ սուրբ Աւետարանս հեզահոգի Թադէոս *էրէցն, ի հալալ ընչից իւրոց, բարի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնօղացն, որ էր նա բնական ի յերկրէն* Մաղաւ[ո]ւզա, *ի գեղջէն* Րախիշոյ, *որ եւ ազգմամբ չարին փախըստեա եղեալ, եկեալ բնակե|343ա|ցաւ ի յերկիրս* Ծարա, *ի գեօղն* Մոս: *Եւ առաջնորդութեանն ի յայսմ նահանգի զտէր* Ստեփաննոս *արհեպիսկոպոսն եւ ժրաքան հովիւն, եւ էր սպասաւոր ի սուրբ* Դադի վանիցն *եւ* Մարդաղաւնեաց Սուրբ Նշանին, *եւ զի էր երաշխաւոր եւ հոգացող ի տէր* Թադէոսին՝ *հոգեւոր, այլ եւ մարմնաւոր: Աստուած զինքն անփորձ եւ անսասան կենօք պահեսցէ ի յամեռոի իւրում մինչ ի խորին ծերութիւնն, եւ եդ ի յաստեացս ելանելոյ ընդ սուրբ հայրապետացն դասեսցէ. ամէն: Ի հայրապետութեան* Աղւանից *ի տէր* Պետրոս *կաթողիկոսի արի եւ քաջ նորընծա հայրապետին, եւ ի թագաւորութիւն* Պարսից *փոքր շահ* Ապազին *նոր թագաւորին, ի թվին ՌՃԳ. (1654) զստացաւ սուրբ Աւետարանս զտէր* Թադէոս *քահանայն՝ յոյժ կարօտիւ եւ փափագանօք դիմեալ ի յայն բանն* Սողովմոնի, *որ ասէ՝ Երանի, որ ունիցի զաւակ* Սիով|*343բ*|ն *եւ ընտանիք նորա յԵրուսաղէմ: Եւ ետ գրել զսա բարի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնօղացն՝ հօրն՝* Ումիտին, *եւ մօրն՝* Գուլաղին, *եւ մեծ հաւերուն իւրոյ՝* Վալադին, Պօղոսին, Մեհրապին, *եւ հօր հաւուն իւրոյ՝* Առաքելին, *եւ հօրեղբօրն՝* Էվազին. *ամէն: Այլեւ յիշեցէ՛ք զտէր* Թադէոսն *եւ իւր մեծ եղբայրն՝ զկուսակրոն* Գրիգո[րն], *որ էր անդամալոյծ ոտիւք եւ ձեռօք. Աստուած իւրեանն արքայութիւն տացէ եւ միւս եղբօրն՝* Պօղոսին, *եւ հանգուցեալ եղբարցն՝* Պաղտասարին, Էվազին. *ամէն: Այլեւ յիշեցէ՛ք զ*Թադէոս *երէցն եւ կողակիցն իւր՝ զ*Պաճին, *եւ դստերացն՝* Մարիաննին *եւ* Հռ[ո]ւփսիմին, *եւ ուստր Աստուած տացէ. ամէն: Այլեւ յիշեցէ՛ք զտէր* Թադէոսի *եղբայր* Պօղոսն *եւ իւր ամուսնոյն՝* Մարիոնսին, *եւ որդոցն՝* Վալատին, Սեւումին, Առաքելին, Էվազն: *Արարիչն Աստուած զկենդանիքն առ|344ա|ողջ եւ անսասան կենօք պահեսցէ եւ ննջեցելոցն հանգիստ եւ արքայութիւն տացէ. ամէն: Այլեւ յիշեցէ՛ք զտէր* Թադէոսի *մայր* Գուլաղէն *եւ իւր ծնօղացն՝ հօր՝* Գասբարին, *եւ մօրն՝* Խանբէկուն, *եւ իւր որգւոցն՝* Գրիգորին, Խլին, Առաքելին. *ամէն: Հայր՛:*

Տե՛ս ԺԷ. դ-ի յիշ-ք, Գ., էջ 601-2, Հ^{մր} 921:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *344ա (ԺԷ. դար, բոլորգիր) Այլեւ յիշեցէ՛ք զտէր* Թաքէոսն *եւ նորաբոյս որդիքն՝* Մովսէսն *եւ* Գրիգորն *եւ* Գասբարն, *եւ հանգուցեալն ի Քրիստոս* Դաւիթն, *եւ միւս այլ* Դաւիթն. *ամէն: Հայր մեր:*


2. *344ա (ԺԷ. դար, բոլորգիր) Եւ զ*Գիրիկորն, *այլեւ յիշեցէ՛ք զ*Պաղտարն *(՞),* Յակոբն, Գիրիկորն *եւ զ*Մովսէսն, *եւ զիւր կողակիցն՝* Կուլին, *եւ զորդիքս իմ՝* Մալոումն, Ծատուրն, Դօիթն: *Արդ, անկեալ յիշեցէ՛ք զ*Քասբարն |*344բ*| *եւ զիւր կողակիցն՝* Սալին, *եւ զնորաբոյս զորդին՝* Էվազն, *եւ առ Քրիստոս հանգուցեալ որդին իւր՝* Ներսէսն:

ՆՇՈՒՄ՝ *պհպ. Ա, Դ՝ մատիտով «3647», 1ա՝ «Տաթեւ», «3647», «ՌՃԳ. 1654* Մ[ետրոպ] *եպիսկոպոս», մատիտով «47», 345բ՝ «Վերակազմված է / հին ու նոր կաշիների միացումով / հին կազմաստառով / գլխ. վերականգնիչ՝* Խաչատրյան Ա. */ 10/ճ.63 թ. / Մատենադարան», պհպ. Դ՝ մատիտով «Ձեռագիրը բաղկացած է 348 թերթերից (կրկնված են 191 եւ 198-րդ համարները)»:*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *17ա, 35ա, 185բ, 188ա եւ այլուր՝ «Բժշկութիւն»:*

3648
ՄԱՇՏՈՑ ՁԵՌԱՑ

ԺՉ. դար



Նմուշ 14ա

ԳՐԻՉ՝ Հ<u>ե</u>ռապետ Բ<u>հ</u>ինյ: ՍՏԱՑՈՂ՝ Ուսլումելէմ (կին):

ԹԵՐԹ՝ 169+1 *(կրկն.՝ թ. 27).* չգրուած՝ թ. 9-10: ՊՐԱԿ՝ Բ-ԺՉ×12 (Բ 10, Գ, Չ, Թ, ԺԱ, ԺԵ 11, ԺՉ՝ 9): ՆԻԹ՝ թուղթ (հետագայի յաւելում՝ թ. 9, 10, 44, 54, 55, 148): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17×12,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (13,5×9,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 14ա), գրչափոխութիւն՝ 1ա-8բ: ՏՈՂ՝ 22-24: ԿԱՉՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի. միջուկը՝ տախտակ. աստառը՝ Ա. փեղկ՝ կապոյտ կտաւ, Բ. փեղկ՝ վանդակազարդ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԴ՝ դեղնաւուն, չգրած թուղթ:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – ճակատազարդ՝ 8ա, 14բ, 18ա, 33ա, 42բ, 50բ, 54բ, 60բ, 88ա, 95ա, 107բ, 119բ, 136ա, 145ա: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն, սափոր (76բ): Ձարդագիր՝ հանգուցագիր, բուսական, թռչնագիր: Դոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, շագանակագոյն, վարդագոյն, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած 1966 թ., մէջքի, փեղկերի եզրերի կաշին նոր, ձին կաշին մաշուած, վրան ճեռնուածծիներ եւ ճաճեր, պիսպ-ները եւ կազմատառները նորոգման ժամանակի, լուսանցակողերի կարմիրը թափուած, աղտոտուած, խոնաւութիւնից ալիւաւորուած. թերթերի վրայ կան խոնաւութեան եւ անմաճուր կաթիլի, բորբոսի հետքեր, զանազան բծեր, մանրանկարների գոյները, գիրը տեղ-տեղ թափուած, դժուարընթեռնելի, թ. 44, 54, 55, 148՝ հետագայի յաւելում, պակասը լրացուած այլ ձեռքով, թ. 26, 28՝ սխալ տեղադրուած, թ. 28՝ կարդալ թ. 25ից, թ. 26՝ թ. 27գդ-ից յետոյ, սկ. առնուազն 13 թերթ, ընդմէջ թ. 10-1ի, 79-80ի 1ական, թ. 160-1ի առնուազն 2 թերթ ընկած, ընդմէջ թ. 10-1ի, 44-5ի, 113-4ի 1ական թերթ մկրատուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *1ա-4բ* [Ա. Կանոն մկրտութեան] – *(սկ.) ///ոյ եւ ի ջրոյ, որով գծառայս գայս անուն... եւ ասէ զաղօթս. Աւրհնեալ ես բարեխնամալուղ Աստուած...*

2. *4բ-14ա* [Բ. Կանոն պսակ դնելոյ] – *եւ ապա տացէ քահանայն զաջ ձեռն հարսինն ի յաջ ձեռն փեսային եւ ասէ՝ Ըստ աստուածային հրամանին... Ընթերցուած ի Ծննդոց. եւ ասաց Աստուած՝ Արասցուք մարդ ըստ պատկերի մերում... եւ ամենայն մարմնոց բժշկութիւն, ամենայն պահպա/// (մէջից եւ կամ չգրած) 11ա /// գինի եղեալ, եւ ոչ գիտեր ուստի իցէ...*

3. *14բ-7բ* Գ. Կանոն հաղորդ տալոյ – *Առնու քահանայն զփրկական խորհուրդն եւ խաչ, եւ բուրվառ եւ երթայ առ հիւանդն... եւ ասէ զաղօթս. Տէր, Աստուա՛ծ ամենակալ, ամենագութ...*

4. *18ա-25բ, 28աբ, 27ա-դ, 26աբ, 29ա-32բ* Դ. Կանոն թաղման. յորժամ զամենայն ննջեցեալսն ի Քրիստոս յուղարկեն – *Սաղմոս. Ողորմեա՛ ինձ Աստուած ըստ մեծի... եւ ասէ զաղօթս. Աստուած յաւիտենական, անսկիզբն, անեղ...*

ա. *25բ, 28աբ, 27ա-դ* եղբա՛յր, թէ կամիս զգաւնդ ասա՛, թէ չէ՝ դու գիտես. մի՛ ձաւնձրաւնար, եղբա՛յր («ՄԱՆՎԵԼՍ») – *Մինդ ի չէէն, Բանդ, որ ի Հաւրէ յորժամ ծագիս փառաւք... ինձ բարեխաւս առ Տէր կացուցէ՛ք. ողոր՛՝:*

5. *33ա-7բ* [Ե. Կանոն այգոյն] – *Իսկ յերկրորդում աւուրն, յորժամ յայգալացն ժողովին, գան ի գերեզման եւ ասեն սաղմոս. Հոգի քո բարի... Պաւղոսի առաքելոյ ի Թեսաղոնիկեացւոց թղթոյն է ընթերցուած. Այլ մեք պարտիմք գոհանալ...*

6. *38ա-42ա* Զ. Կանոն եօթերորդ աւուր – *երթան ի գերեզմանն եւ ասեն զԱմբիծոն եւ շարական, սաղմոս. Տէր, Աստուած փրկութեան իմոյ... Ընթերցուած Յիսայեայ մարգարէէ. Այսպէս ասէ Տէր՝ Դամ ժողովել զամենայն ազգս...*

7. *42բ-50ա* է. Կանոն յորժամ տղայ վախճանի – *երթան քահանայքն եւ ասեն Սաղմոս՝ Առ քեզ, Տէ՛ր, համբարձի... եւ ասէ զաղաւթս գայս. Սուրբ ես Տէր Աստուած մեր, որ բնակեալդ ես յերկինս... (ստ. լս.՝ Տղայթաղն)*

ա. *44աբ (այլ թուղթ, լրացուած այլ ձեռքով)* Ի վարդապետութիւնէ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին – *Թէ մեք, որ կենդանիքս մնացեալ իցեմք... տարայց զնոսա ի լեառն սրբութեան իմոյ եւ ուրախ արարից զնոսա ի տան իմում:*

բ. *47աբ* Սրբոյն Գրիգորի ասացեալ – *Ամենեքեան, որ տեսանիցեն զարդարն... եւ ի նոյն կերպարանս նորոգիմք փառաւք ի փառս:*

8. *50բ-4ա* Ը. Կանոն այգոյն – *երթան ի գերեզմանն. սաղմոս. Եղիցի անուն Տեառն... Պաւղոսի առաքելոյ յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուած. Այսուհետեւ, եղբա՛րք, ոչ էք աւտարք եւ պանդուխտք...*

9. *54բ*-8ա* [Թ.] Կանոն հոգեհանգիստ առնելոյ կամ Պատարագ մեռելոց – *Ասեն սաղմոս ի թիւ. երանի որում թողու՛՛... Ընթերցուած յառակաց. Պատուեա՛ զՏէր ի քոյոց արդար վաստակոց ...*

* Ծնթ. թ. 54-5՝ այլ թուղթ, լրացուած այլ ձեռքով:

10. *58ա* [Ժ.] Աղաւթք վասն աղ աւրհնելոյ – *Աւրհնեալ ես Տէր Աստուած ամենակալ, արարիչ...*

11. *58բ-60ա* ԺԱ. Կանոն զնշխարս սրբոց փոխել ի հանգիստ – *Տանին ի տեղին արժանի դնելոյ եւ ասեն ի թիւ սաղմոս. Յիշեա՛ Տէր զԴաւ[իթ]... Ընթերցուած ի Ջորրորդ թագաւորութենէ. եւ ելին ամենայն ծերքն Իսրայէղի...*

12. *60բ-76բ* ԺԲ. Կանոն խաչ աւրհնելոյ – *Բերեն յեկեղեցին եւ լուանան նախ ջրով եւ ապա՝ գինւով, եւ ասեն սաղմոս ի թիւ՝ Լո՛ւր, Աստուա՛ծ, աղաւթից իմոց... Ընթերցուած յառակաց. Երանեալ է այր, որ եգիտ զիմաստութիւն...*

13. *76բ-87բ* ԺԳ. Կանոն ջուր աւրհնելոյ – *Յաւուր յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... զի իջանէր իբրեւ զաղաւնի /// (մէջից թափուած) 80ա /// երկնեաց ծով կէտս մեծամեծս եւ մանունք ելին ի նմանէ... Ընթերցուած յելից. եւ խաղացոյց Մովսէս զորդիան Իսրայէղի...*

14. *87բ-94բ* ԺԴ. Կոչումն յապաշխարութիւն – *երթայ մեղուցեալն ի դուռն եկեղեցւոյն, եւ ասեն սաղմոս՝ Ողորմեա՛ ինձ Աստուած ըստ մեծի... Ընթերցուած Յիսայ մարգարէէ. Լուացարո՛ւք, սրբեցարո՛ւք, ընկեցէ՛ք զչարիս յանձանց...*

15. *95ա-100բ* ԺԵ. Քարոզ Պատուիրանին, զոր զեկուցանէ բահանայն ժողովրդեանն – *Նախ քան զպատարագն առեալ զԱւետարանն ի գիրկն եւ կարկառեալ... եւ ասէ զաղօթս. Լուարո՛ւք ինձ, որդեա՛կք իմ սիրելիք...*

16. *100բ-7ա* ԺԶ. Կանոն ժամատուն աւրհնելոյ յատուր Մեծի հինգշաբաթին – *Աւրհնեալ ամենասուրբ երրորդութիւնն...*

17. *107բ-9ա* ԺԷ. Կանոն ապաշխարաւղ առնակելոյ ի Մեծի հինգշաբաթին – *Յերեք ժամուն ժողովին ի դուռն եկեղեցւոյն քահանայն եւ ապաշխարողքն եւ ասեն սաղմոս Ծ.՝ Ողորմեա՛ ինձ Աստուած... Ընթերցուած յԻսայայ մարգարէէ. եւ կատարեսցին աւուրք սգոյ քո... որ պահէր զճանապարհ ծառոյն կենաց /// (մէջից թափուած)114ա /// վասն ընդ մեզ դրաւ ճանապարհ...*

18. *119ա-35բ* ԺԸ. Կանոն ոտնլուային – *երեկոյին յետ սրբոյ պատարագին ժողովին, եւ այս կանոն կատարի... եւ եպիսկոպոսն ասէ զաղաւթս. Փառաւորեմք զքեզ, Տէ՛ր Աստուած մեր Յիսուս Քրիստոս...*

ա. *124բ-6բ* Երանելոյն Յովհաննու վարդապետի ասացեալ, որ մականուն Պլուզ կոչի – *Աստուած սէր է, ասէ որդին որոտման... եւ կամեցօղ սիրոյ ի սուրբ սրտէ եւ յանկեղծաւ. որ հաւատոց:*

բ. *127բ-9բ* [ստ. լս-ից.՝ Գանձ ոտնալուային] – *Աստուած մեծ եւ աքանչելագործ զօրութիւն... եւ որք հաղորդին եւ ոտնալուին ընդ քեզ միութիւն ողոր՛:*

19. *136ա-41բ* ԺԹ. Կանոն տեառնական աւուրնելոյ – *Ածեն զնուիրեալն ի դուռն եկեղեցւոյն եւ առաջի խաչին դնեն... Ընթերցուած ի Ղեւտացւոց. եւ կոչեաց զՄովսէս Տէր եւ խաւսեցաւ ընդ նմա...*

20. *141բ-4բ* Ի. Աղաւթք – *Յորժամ առ հիւանդն երթան, այսպէս ասասցեն. ասեն Սաղմոս՝ Ջերգն եզեկիէլի մարգարէին, որ է այսպէս... եւ քահանան ասէ զաղօթս. Ամենակալ Աստուած, արարիչ ամենայն արարածոց...*

141բ-4բ ստ. լս., գրչից՝ «Վասն հիւանդաց աղօթելոյ»

21. *145ա-52ա** ԻԱ. Կանոն նաւակատեաց եկեղեցւոյ կամ պղծել յանաւրինաց եւ շարժել սեղան վերըստին հաստատել – *Մտանէ եպիսկոպոսն հանդերձ քահանայիւքն եւ համաւրէն ժողովրդովն... եւ ասէ եպիսկոպոսն զաղաւթս. Որ ընդունաւղ ես աղաւթից ժողովրդեանն քո...*

* Ծնթ. բ. 148՝ այլ թուղթ, լրացուած այլ ձեռով. ստ. լս., գրչից՝ 145ա «Սրբել տաճարին», 146բ-9բ «Պղծել տաճարին»:

22. *152բ-6բ* ԻԲ. Կանոն զԱրմտիս, սերմանց եւ զղեղջ աւրհնելոյ – *Սաղմոս, կցուրդ՝ Քեզ վայել է. Ընթերցուած յառակաց. Պատուեա՛ զՏէր ի քոյոց արդար վաստակոց...*

23. *157ա-69ա* [Աւետարանի Իւղաբերից, Բժշկութեան, Պաշտաման եւ Հանգստեան. ձեռ. 825, 118ա-25բ]:

ա. *157ա-8բ* Աւետարան ըստ Մատթէոսի – *Եւ յերեկոյին շաբաթուն, յորում լուսանայր...*

բ. *158բ-9բ* Աւետարան ըստ Մատթէոսի – *Եւ ելեալ անտի Յիսուսի՝ գնաց ի կողմանս Տիւրոսի...*

գ. *159բ-60բ* Աւետարան ըստ Մարկոսի – *Եւ իբրեւ երեկոյ եղեւ, քանզի ուրբաթ էր...*

դ. *160բ* Աւետարան ըստ Մարկոսի /// *(շար.):*

ե. *161ա (սկ.)* /// [Աւետարան ըստ Ղուկասու] – *Ընթացաւ ի գերեզմանն, եւ հայեցեալ տեսանէ զկտաւսն...*

զ. *161ա-3ա* Աւետարան ըստ Ղուկասու – *Եւ հանէր դեւ մի համր...*

է. *163ա-5ա* Աւետարան ըստ Յովհաննու – *Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս...*

ը. *165ա-8ա* Աւետարան ըստ Յովհաննու – *Եւ մինչդեռ անցանէր, ետես այր մի կոյր...*

թ. *168ա-9ա* Աւետարան ըստ Յովհաննու – *Եթէ սիրէք զիս, զպատուիրանս իմ պահեսջիք...*

ժ. *169ա* [Աւետարան ըստ Յովհաննու] – *Ջայս խաւսեցայ ընդ ձեզ՝ Մինչ առ ձեզս եմ...*

Ստ. լս-ներում գրչից ունի խորագրեր:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՋՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

4բ Որ ողորմի Քրիստոս Աստուած ստացաւղի սուրբ գրոցս Ուալումելեհին *եւ ծնաւղացն նորին (ապա 6 տող չգրած):*

7բ Եւ ստացաւղ սուրբ Մաշ[ք]ոցիս զհոգեւոր մայրն մեր՝ զՈւալումելիհն, եւ զայրն իւր՝ զխալիֆէն, եւ զորդիքն իւր՝ զՆուռադին եւ զՔարիմադին, յիշեցէ՛ք ի Քրիստոս եւ լի բերանով Աստուած ողորմի ասացէ՛ք:

14ա Ողորմեա՛ Տէր Աստուած Յիսուս Քրիստո՛ս, ստացաւղի սուրբ գրոցս՝ Բաւգլալօենց *(ժամանակ անց անկանոն գրով) «*Խալիֆին *եւ* Ծերունին*, եւ* Ուալումելեհին*, եւ ծնաւղաց նորին՝* Սուրաթին *եւ* Քարիմադին*, եւ ամենայն ննջեցելոցն. ամէն»:*

17բ Որ ողորմի Քրիստոս Աստուած ստացաւղի սուրբ գրոցս:

37բ Տէր Աստուած ողորմի ստացաւղի սուրբ Մաշ[ք]ոցիս, (7,5 տող չգրած) եւ Հերապետ գրչի եւ մեր ծնաւղացն եւ ձեզ՝ լսաւղացդ, եւ Աստուած ողորմի ասաւղացդ ողորմեացի Քրիստոս Աստուած. ամէն:

*42ա Ներա՛ւղ Աստուած, ողորմեա՛ ստացաւղի սուրբ գրոցս (ժամանակ անց անկանոն գրով՝ «*Ուալումելեհին *եւ* Խալիֆին*, եւ* Ծերունին*, եւ ամենայն ննջեցելոցն. ամէն, եղիցի, եղիցի» (1 տող չգրած)): Եւ փծուն գրչի՝* Հերապետ *քահանայի եւ ձեզ:*

Ստացողի.

50ա Յիշեսջի՛ք ի սուրբ յաղաւթս ձեր զստացաւղ սուրբ գրոցս (ժամանակ անց անկանոն գրով)՝ «Ուալումելեհին*, եւ* Խալիֆին*, եւ* Ծերունին*, եւ ամենայն ննջեցելոցն. ամէն»:*

60ա Այժմ բարեխաւսութեամբ սուրբ ճգնաւորացն ողորմեա՛, Քրիստո՛ս Աստուած, ստացաւղի սուրբ կտակիս, որ այժմ Մաշ[ք]ոց անուանի (ժամանակ անց անկանոն գրով)՝ «Ուալումելեհին *եւ զաւակաց նորին՝* Նուռադնին *եւ* Քարիմադնին*,* Խալիֆին *եւ* Ծերունի*, եւ ամենայն ննջեցելոցն. ամէն» (1 տող չգրած): Եւ մեղապարտ գրչի՝ Հերապետ *քահանայի, եւ մեր ծնաւղացն, եւ ձեզ՝ լսաւղացդ եւ կարդացաւղացդ. ամէն:*

76բ Աստուած ողորմի ստացաւղի սուրբ գրոցս (ժամանակ անց անկանոն գրով)՝ «Ուլումեեին, Խալիֆին, *եւ* Ծերունին *եւ ամենայն արեան մերձաւորաց նոցին՝ կենդանեաց եւ հանգուցելոցն ի Քրիստոս. ի ամէն»:*

87բ Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, քո սուրբ ծնընդեան բարեխաւսութեանն ողորմեա՛ ստացաւղի սուրբ կտակիս (ժամանակ անց անկանոն գրով)՝ «Ուլումելեին, *եւ* Խալիֆին, *եւ* Ծերունին, Նուրադնին *եւ* Քարիմատնին, *եւ ամենայն ննջեցելոցն. ամէն»:*

94բ Ողորմեա՛, Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, աւուրս շնորհի ստացաւղի սուրբ գրոցս (ժամանակ անց անկանոն գրով)՝ «Ուլումելեին, Խալիֆին, *եւ* Ծերունին, Նուրադնին *եւ* Քարիմադընին, *եւ ամենայն ննջեցելոցն»:*

100ա Յիշեսջի՛ք ի սուրբ սոսկալի պատարագս ձեր զմեղաւք մեռեալ փծուն գրչիս՝ սուտանուն Հերապետ քահանա, եւ զծնօղան մեր, եւ զմիաբան ժողովուրդդ առհասարակ, եւ ստացաւղ սուրբ Մաշտոցիս (ժամանակ անց անկանոն գրով)՝ «Ուլումելիին *յիշեցէ՛ք ի Քրիստոս եւ լի բերանով Աստուած ողորմի ասացէ՛ք»:*

105բ Աւրինեսցէ Տէր Աստուած զգրաւղ գրոյս՝ զՀերապետ քահանայս, եւ զստացաւղ սորա (անունը չգած, տեղը բաց) եւ արասցէ թողութիւն մեղաց իւրոց ի միւսանգամ գալըստեանն իւրոյ, եւ ծնաւղաց եւ ննջեցելոց իւրոց:

107ա Ողորմի՛ Քրիստոս Աստուած ստացաւղի սուրբ գրոցս (ժամանակ անց անկանոն գրով)՝ «Ուլումելեին, *եւ* Խալիֆին, *եւ* Ծերուն, Նուրադնին *եւ* Քարիմադնին, *եւ ամենայն արեան մերձաւորաց նորին»:*

119ա Սուրբ տաւնի բարեխաւսութեամբս, Քրիստո՛ս Աստուած, ողորմեա՛ ստացաւղի սուրբ կտակիս (ժամանակ անց անկանոն գրով)՝ «բարեպաշտ կնոջն՝ Ուլումելեին, *եւ* Խալիֆին, Ծերունին»:

135բ Ջստացաւղ սուրբ գրոցս (ժամանակ անց անկանոն գրով) «Ուլումելիին *յիշեցէ՛ք ի Քրիստոս եւ լի բերանով Աստուած ողորմի ասացէ՛ք»:*

141բ Քրիստոս Աստուած, ողորմեա՛ ստացաւղի սուրբ գրոցս՝ (ժամանակ անց անկանոն գրով)՝ «բարեպաշտ կնոջն՝ Ուլումելեին, *եւ ծնաւղաց նորին եւ ամենայն ննջեցելոցն»:*

144բ Որ ողորմի Քրիստոս Աստուած ստացաւղի սուրբ գրոցս (անուան տեղը բաց՝ չգրած):

152ա Ջստացաւղ սուրբ գրոցս յիշեցէ՛ք:

156բ Եւ ստացաւղի սուրբ գրոցս (ժամանակ անց անկանոն գրով)՝ «Ուլումելեին *եւ ծնաւղաց նորին»:*

ՆՇՈՒՄ՝ *պհպ. Աա, 1ա՝ «3648», պհպ. Գբ՝ «Վերակազմված է / հին եւ նոր կաշիների միացումով / հին եւ նոր կազմաստառով: / Գլխ. վերականգնիչ՝* Ա. Խաչատրյան, / Երեւան, *1966 թ.»:*

ԳՐՁԱՓՈՐՁ՝ *4բ՝ «Նշանն առ տանըտերն, ո[ր] ապայ պսակայ»:*


3649
ԹՈՎՄԱ ԱՔՈՒԻՆԱՑԻ, ՅԱՂԱԳՍ ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԺԵ. դար


ԳՐԻՉ՝ Մխիթար (՞):

ԹԵՐԹ՝ 308. չգրուած՝ 308բ: ՊՐԱԿ՝ Ա.-ԻԵ×12 (ԺՒ 16, ԻԴ, ԻԵ 14): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16,5×12,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (13,5×9,5): ԳԻՐ՝ բոլորգիր, փոխնիփոխ նոտրգիր (նմուշ՝ 18ա, 232ա): ՏՈՂ՝ 32-37: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի. միջուկը՝ տախտակ. աստառը՝ դրոշմազարդ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա.-Գ+Դ-Ջ՝ դեղնաւուն թուղթ:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – ճակատազարդ՝ 161ա,



Նմուշ 18ա



Նմուշ 232ա

273ա: Լուսանցազարդ՝ բուսական՝ 302ա: Ջարդագիր՝ հանգուցագիր, թոչնագիր (տեղ-տեղ զարդագրերն առանց գունազարդման): Դոյներ՝ կարմիր, վարդագոյն, շագանակագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած 1963 թ., վերակազմուած հին ու նոր կաշիների միացումով, հին կազմաստառով, կաշուի վրայ զանազան ֆերծուածմներ, զոյգ կապիչներն ու գամերն ընկած, պիպ-ները նորոգման ժամանակի, լուսանցակողերի կարմիրը մեծ մասամբ թափուած, թ. 1՝ ամբողջութեամբ, իսկ միւս թերթերի եզրերը թափանցիկ թղթով նորոգուած, վրան խոնաւութեան, կաթիլի, ձէթի, բորբոսի, թանաքի հետքեր, զանազան բծեր. գիրը մասամբ թափուած, դժուարընթեռնելի, տեղ-տեղ անընթեռնելի, թ. 13՝ փակցուած հակառակ դիրքով, կարդալ՝ 13բա, ԺԳ պրակից սկսած (149ա)՝ պրականիշերը եւ գիրն աստիճանաբար դառնում են նոտրգիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա-308ա [Երաւելոյն Թոմայի Աֆիւնացոյ. Յաղագս

տնօրէնութեանն Քրիստոսի. Առաջին հատոր երրորդ մասին հաւաքման]

Տե՛ս ձեռ. 68, 1ա-275բ: Յանկ/305ա-8ա: [Նախերգան]/1ա: ա/1ա-6բ: բ/6բ-16ա: գ/16ա-22ա: դ/22ա-6ա: ե/26ա-9բ: զ/29բ-33ա: է/33ա-41բ: ը/41բ-6բ: թ/46բ-50ա: ժ/50ա-4ա: ժա/54ա-8ա: ժբ/58ա-61ա: ժգ/61ա-5ա: ժդ/65ա-8բ: ժե/68բ-76ա: ժզ/76ա-85ա: ժէ/85ա-7բ: ժը/87բ-92բ: ժթ/92բ-7բ: ի/97բ-9բ: իա/99բ-102բ: իբ/102բ-7ա: իգ/107ա-10ա: իդ/110ա-3բ: իե/113բ-9բ: իզ/119բ-21ա: ի-է/121բ-8բ: իը/128բ-34ա: իթ/134ա-7ա: լ/137ա-41ա: լա/141ա-50բ: լբ/150բ-4բ: լգ/154բ-8ա: լդ/158ա-61ա: լե/161ա-8բ: լզ/168բ-77բ: լէ/177բ-81բ: լը/181բ-6ա: լթ/186ա-94ա: խ/194ա-9ա: խա/199ա-201բ: խբ/202ա-10ա: խգ/210ա-4բ: խդ/214բ-22բ: խե/222բ-6բ: խզ/226բ-41ա: խէ/241ա-6ա: խը/246ա-50բ: խթ/251ա-6բ: ծ/256բ-62ա: ծա/262ա-5բ: ծբ/265բ-73ա: ծգ/273ա-7ա: ծդ/277ա-81բ: ծե/281բ-8բ: ծզ/288բ-91ա: ծէ/291ա-6բ: ծը/296բ-9բ: ծթ/300ա-4բ: Յիշ. թարգմանութեան/304բ:

Տե՛ս Marcus Antonius van den Oudenrijn, Linquae Haicanae Scriptores... Bernae, 1960, էջ 203-204, ՀՄ 482

Լուսանցներում կան բոլորգրով եւ նոտգրով գրչի սրբագրումներ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉԻ

ատ. լս., բոլորգրով
65ա Մուխն է, աչիգդ ցաւ է:
89բ Մուխն է:
93ա Ջմեռն սկսայ եւ խիստ է ցուրտ, ո՛հ, զմայլումս բազում:
109ա եղբայր Մխիթարն է գրել, Յունվար ԻԸ. (28):
125ա Ճրագն անցաւ, մոմն ի վերայ վայթեցաւ, դառն ցուրտ է:
169ա Յետին Բարեկենդանին սրբութիւն է այսաւր:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *304բ (1681, բոլորգիր)* Ջմեռօք մեռեալ Սահակ Վանեցի *դպիրս՝ վերջին կազմողս, եւ գծնաւղս իմ յիշել աղաչեմ, եւ Աստուած զձեզ յիշէ: Կազմեցաւ ի տ[օ]ն սուրբ առաքելոյն* Թաթէոսի, *ի թվին ՌՃՀ. (1681) ամին:*

2. *308ա (1690, շղագրանման նոտրգիր)* Յիշատակ է գիրքս Կաֆայեցի Սարգիս *վարդապետին, ի դուռն* Սուրբ *առաքելոյն* Թադէոսի, *թիւն ՌՃՂ. (1690):*

ԿՆՔԱԴՐՈՇՔ՝ *1ա, 15ա, 16ա, 108ա՝ շրջանաձեւ կապոյտ երկգիծ բոլորակ, եզրագծով՝ «ՍՈՒՐԲ ԹԱԴԷՈՍ Ա-ՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔ», ապա պարսկերէն՝ «گری کلیساء خلیفه» (թրգ.՝ Ղարաֆիլիսայի կաթողիկոսարան)**», *կենտրոնում եկեղեցի, որի տակ՝ «1901»:*

* Ծնթ. Կարդաց եւ թարգմանեց Քրիստինէ Կոստիկեանը:


ՆՇՈՒՄ՝ *պհպ. Աա, Գա՝ «3649», 1ա՝ «Տաթեւ, 52/3649», «ժե. Մ[եսրոպ] եպ[իսկոպոս]», պհպ. Դա՝ «Վերակազմված է / հին եւ նոր կաշիների միացումով / հին կազմաստառով: / Գլխ. վերակազմող՝ Ա. Խաչատրյան / 24/XII. 63 թ., Մատենադարան»:*

3650
ՊԵՏՐՈՍ ԱՐԱԳՈՆԱՑԻ, ԳԻՐՔ ՄՈԼՈՒԹԵԱՆՑ

Պիթ. – 1380

ԳՐԻՉ՝ Ֆրա Յոհաննէս:


ԹԵՐԹ՝ 215+1 (կրկն.՝ թ. 1). չգրուած՝ թ. 1, 4, 203ա-5ա, թ. 208-15: ՊՐԱԿ՝ 10+4+4+Բ-ԺԷ×12 (ե, ԺՁ 10, է 16, թ 12+2, ԺԳ 15*, ԺԴ 14, ԺԷ 11): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16,5×12: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (14-14,5×9,5-10): ԳԻՐ՝ բոլորգիր՝ գրչափոխութեամբ (նմուշ՝ 5ա, 31ա): ՏՈՂ՝ տարբեր՝ 30-50: ԿԱՋՄ՝ բաց շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դռնակով, զոյգ գամերով եւ կապիչներով. միջուկը՝ տախտակ. աստառը՝ շերտազարդ կտաւ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԴ՝ մագաղաթ, չգրուած:



Նմուշ 5ա

* Ծնթ. Յաւելում 8 թերթանոց պրակ պրակի մէջ:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Կիսախոշոր՝ 188բ: Ճակատազարդ՝ 22ա, 63ա, 70ա, 80բ (սեւով գծանկարային), 102բ, 144բ, 160ա, 182ա, 188բ: Վերջնազարդ՝ 29բ: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն, յուշկապարիկ (30ա, 31ա, 32ա, 72բ), մարդու գլխով մտացածին արարած (38ա), ուլ (48բ, 168բ): Ձարդագիր՝ հանգուցագիր, թռչնագիր, յուշկապարիկ (Ա՝ 10բ, 35բ եւ այլուր), մարդադէմ (Ջ՝ 26բ եւ այլուր, Փ՝ 134բ), թռչնագիր մարդադէմ (Գ՝ 44բ), թաղը ձեռիին մարդ (ե՝ 188բ): Գոյներ՝ կարմիր, կանաչ, դեղին, սեւ:



Նմուշ 31ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած, կազմը ԺԸ. դարի, մաշուած, վնասուած, վրան կան ֆեռծուածմներ եւ ճաֆեր, խունացած, մէջքը մասնակի նորոգուած, կապիչները նորոգման ժամանակի, գործածութիւնից եւ

ԺԴ. *250բ* **[Հարցմունք եւ պատասխանիք ի Սահմանաց գրոց Դաւթի Անյաղթի (՞). *հմմտ. ձեռ. 1815, 214բ*] –** *Հարցումն. [Զի՞]նչ է իմաստասի[րութիւն]: Պատասխանի. Նախ՝ իմաստասիրութիւն է գիտութիւն [գոյից]... իմաստասիրութիւն է սիրելութիւն ի իմաստութեան (հմմտ. պրակ ե., էջ 47): Ասէ Պղատոն, թէ՝ իմաստասէր կոչեմ ես ոչ զայն, որ շատն գիտէ... այլ որ զախտս կարող գոյ հնազանդեցուցանել (հմմտ. պրակ Ա., էջ 14):*

Յաւելեալ ունի՝ «Դիտաւորութիւն, պիտանացուն, պատճառք մակագրութեան, հարազատութիւն, բաժանումն գլխոցն, [կարգն] վարդապետական յեղանակն, առ ինչ մասն վերայբերումն»։

Համմտ. Դաւիթ Անյաղթ, Գիրք սահմանաց, Մադրաս, 1797:

ԺԵ. *250բ-6բ* [Ի Հարցմանց գրոց Գրիգորի Տաթեւացւոյ*. Հատոր ե. Վասն կազմութեան մարդոյ, պրակ ԼԹ-Խ. եւ Հատոր Ջ. Վասն ե. գրոցն Մովսէսի, պրակ Ա. *հմմտ. ձեռ. 1815, 214բ-9բ*]

ա. *250բ-1բ* [Հատոր ե., պրակ ԼԹ., էջ *277*] [Վասն] պատուիրանին Ադամայ – *Հարցումն. Որո՞վ զանազանի [ուրէ]նք եւ պատուիրանք եւ հրամանք։ Պատասխանի. Նախ՝ զի հրամանք[ն է սահ]ղծողի... եւ այլ սոյնպիսիք տարբերութիւնք են բնութեան եւ ոչ թշնամիք։*

բ. *251բ* [Հատոր ե., պրակ Լ., էջ 278] Վասն որպիսութեան կենաց – *Գիտելի է, զի որպիսութեան կենաց մարդոյս տրամատի յերիս... ոչ կարէ մեռանել եւ անկար [է մեռանիլ] եւ այլն նմանապէս։*

գ. *251բ-2ա* [Հատոր ե., պրակ Լե., էջ 278] Վասն զի ոչ ամաչէին – *Հարցումն. Վասն է՞[ր ոչ ա]մաչէին Ադամ եւ կինն։ [Պատասխանի. Նախ]՝ վասն պարզամտութեանն... սակայն ի լուսոյ շնորհաց զարդարեալ էին։*

դ. *252աբ* [Հատոր ե., պրակ ԼԶ., էջ 278] Վասն ԲԺ.ն (12) պարգեւաց – *երկոյտասան պարգեւք էին դրախտին... զի ոչ եւս երեւի [բան] մի յիշատակ շնորհաց նոցա։*

ե. *252բ-3ա* [Հատոր ե., պրակ Լէ., էջ 279] Դարձեալ վասն շնորհաց եւ յանցանացն [Ադամայ – *Հարցումն*]. *Մր է շնորհն Ադամայ, զոր եւս Աստուած։ Պատասխանի. Այսպէս ասեն վարդապետք... եւ եմուտ յարգանդի երկրի, այսինքն՝ ի գերեզման։*

զ. *253ա-4ա* [Հատոր ե., պրակ ԼԸ., էջ 280] [Վասն Ժ. աստիճանի անկմանն Ադամայ] – *Բայց սուրբն Գրիգոր Նիւսացի Ժ. աստիճան դնէ անկման մարդոյն... այսինքն առ ամենեւին զուտ բարին, որ է [Աստուած, խորհրդ]ով բանիւ ե[ւ գ]նացիւք։*

է. *254ա* [Հատոր ե., պրակ ԼԹ., էջ 281] Վասն մաշկ[եղէն հանդերձ]ին] – *Հարցումն. Ջի՞նչ է մաշկեղէն հանդերձ[ն, զոր զգե]ցոյց զԱդա[մայ]։ Պատասխանի. Մաշկն է կենդանական մորթ... զոր այժմ զգեցոյց Քրիստոս շնորհ[աւք եւ յե]տ յարութեանն զգեցուցանէ փառաւք։*

ը. *254ա-5ա* [Հատոր ե., պրակ Խ., էջ 282] [Թէ վասն է՞ր մաշկեղէն կոշի մարմին մեր] – *Հարցումն. Մրպէս ա[սեն մաշկ]եղէն հանդերձ զմարմինս մեր։ Պատասխանի. Հանդերձ[ն մաշկեղէն] էր իր... եւ ոչ թէ զօրութեամբ։ Այսպ[էս եւ զԱդամայն] իմացի[ս]։*

թ. *255ա-6բ* [Հատոր Ջ., պրակ Ա., էջ 286] [Վասն Աբէլի եւ պատարագաց] – *Հարցումն. Ջի՞նչ է, որ ասէ Գիր. Հայեց[աւ Աստուա]ծ ի Հաբէլ եւ ի պատարագս նորա... Պատասխանի. Եւթն ազգ բարեգործութեան տեսակ... եւ վասն ար[դար գոլոյն Տէր, որում վկայէ Մովսէս] Նոյ էր արդար կատարեալ յազգի/// (վջ.)։*

* Տե՛ս Գրիգոր Տաթեւացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, լուսատիպ վերահրատարակութիւնը՝ Գրիգոր Տաթեւացի, Գիրք հարցմանց, Երեւան, 1993, էջ 277-288 (նկարագրութեանը զուգահեռ անմիջապէս տրուած են նաեւ համապատասխան հատորը, պրակը եւ էջը)։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽԱԳԱՂԱՓԱՐ ՕՐԻՆԱԿԻ

166ա Այլեւ զհամշիրակն իմ եղբայր՝ զԳէորգ վարդապետն եզնկացի, *որ աշխատեցաւ սրբագրելով զսա, յիշեսջի՛ք ի Տէր, աղաչեմ (տե՛ս նաեւ ձեռ. 1694, 172ա)։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. Գրչի *35բ եւ զիս յիշեա՛ ի Տէր, աղաչեմ։*

2. Ստացողի (՞) *250բ Մ վ պատուական իմ[ա]աստունք,* զՅով[ա]նէս *վարդապետս յ[իշեցէ՛ք յ]աղաւթ[ս] ձեր, եւ Աստուած զյիշողք[դ յիշէ]. ամէն։*

Ծնթ. Այս յիշատակարանը նոյնութեամբ առկայ է Հմր 1815 ձեռագրի 214բ էջում, որի նկարագրութեան մէջ, գրչութեան այլ տուեալներ չլինելու պատճառով, ԺՐ. դարով թուագրուած ձեռագրի գրիչը համարուել է Յովանէսը (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ջ., խմբ. Գ. Տէր-Վարդանեան, Երեւան, 2012, էջ 51): Մեր ձեռագրում այս յիշատակարանի առկայութիւնը փաստում է, որ Հմր 1815 ձեռ-ում այս յիշատակարանն առնուազն նախագաղափար օրինակի է, իսկ երկու ձեռագրերի բովանդակութիւնների նոյնականութիւնը թույլ է տալիս հաւանական համարելու, որ կա՛մ Հմր 1815 ձեռ-ի համար այս ձեռագիրը եղել է գաղափար օրինակ, կա՛մ, որ աւելի հաւանական է, 1815 եւ սոյն՝ 3653 ձեռագրերն ունեցել են միեւնոյն կամ յար եւ նման գաղափար օրինակներ: Իսկ մեր ձեռագրում Յովանէսը ենթադրաբար ձեռագրի ստացողն է՝ չնայած յիշատակարանը գրուած է իրարից չսահմանազատուած երկու տարբեր նիւթերի միջեւ (նոյնպէս է նաեւ ձեռ. 1815, 214բ). գրիչն այդպէս կարող էր ընդամենը ընդօրինակել գաղափար օրինակից՝ առանց սահմանազատելու:

3. Ծաղկողի *179ա Ջսակաւ աշխատող ծաղկիս՝ զտրուպ Ղազար յիշեցէ՛ք, ծնա[ւղացն՛] /// (1 բառ անընթեռնելի)։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *13ա (ԺԷ. դ., նոտրգիր, արտք. լս.) Սրբոյն* Գ[րի]գորի Թաթ[եւ]ացոյ *արարեալ եւ իւր ձեռամ[բ] գրեալ։*

2. *35բ (ԺԷ. դ., նոտրգիր) [Վ]երջատին [ն]որոգող գրոցս։*

3. *178բ (ԺՐ. դ., անփոյթ շղագիր) Թվիս Ջ. (1451)* Ղազար *գրիչ, ի վանս* Գօշ Մխիթարայ։

179ա Թվիս Ջ. (1451), ի վանս Գօշ Մխիթարայ։

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *35բ սեւ թանաքով բոլորակ՝ վերին մասում Քրիստոսի պատկերով «*[ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ/ ԾԱՌ]ԱՅ/ [ՄՈ]ՎՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ Ի/ ՎԻՃԱԿ ՍՏԱԹ/Է-Ի*» (հմմտ. ձեռ. 8061, կոնդակ, խոսքը Մովսէս Գ. Տաթեւացու մասին է. այս մասին տե՛ս Ա. Յարութիւնեան, Երեւանի Մ. Անանիա առաքեալի անապատը կամ Ջօրաւոր Մ. Աստուածածին եկեղեցին, Երեւան, 2020, էջ 64-74)։

ՆՇՈՒՄ՝ *1ա՝ սեւով «Առածք ե.», այլ սեւով «Տաթեւ, 68/3653»։*

ԳՐՋԱՓՈՐՁ՝ *9ա՝ սեւով գրութիւն, կարգացւում է հայելիով՝ «ա ան, որպէս ձայն, իսկ», 129բ՝ սեւով խզբզոցներ, «Դաւիթ», 147ա՝ սեւով «եւ կարելին ոչ գոլ եւ ոչ կարելին ոչ գոլ», 149ա՝ սեւով «աւրն առ կարելին որպէս հետեւի», 149բ՝ սեւով «անկարին եւ ոչ անկարին»։*


ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *13բ, 14ա, 57բ, 80ա՝ սեւով զարդանախշեր։*

3654
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ՄԱԿՈՒ (ԱՐՏԱՋ ԳԱՒԱՌ) Պե. – 1356

ԳՐԻՉ՝ Ղուկաս ֆիյ։ ՍՏԱՑՈՂ՝ Թադէոս ֆիյ։

ԹԵՐԹ՝ 294+1-1 (կրկն. թ. 1, թուիչ՝ թ. 10-12, թերթակալումը՝ սեւ թանաքով). չգրուած՝ 1բ, 292բ։ ՊՐԱԿ՝ Ա.-Իե×12 (Ա. 10, Իե 8)։ ՆԻԹ՝ թուղթ։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16×12,5։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (13×9,5)։ ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 117ա). խոռագիրք՝ կարմիր։ ՏՈՂ՝ 26-27։ ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դռնակով եւ զոյգ կապիչներով. միջուկը՝ տախտակ. աստառը՝ կարմիր մետաքս (դռնակի աստառը սպիտակ թուղթ՝ նորոգման ժամանակի)։



Նմուշ 117ա

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Աւետարան Մատթէոսի։ Ժ. դ.։ Ա+բ՝ ստացուած մէկ թերթի ընդլայնակի եւ ընդերկայնակի եզրահատումներով (պահպանուած 1 սիւնակը)։ Մագաղաթ 30,5×10,5 (տուելաները պահպանուած թերթինն են). երկսիւն (պահպանուած ամբողջական սիւնը՝ 21,5×14). բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝ Բբ). տող՝ 15. չգրուած՝ Ա*ա*, Բ*ա*։ Կարդալ. Աբ-Բբ՝ «///տեցէք զնոսա յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյ Սրբոյ։ Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ։ եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս՝ մինչեւ ի կատարած աշխարհի» (ԻՀ. 19-20)։



Նմուշ Բբ

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Ճակատազարդ՝ 1ա, 34ա, 83բ, 125ա, 161բ, 209բ, 245ա։ Լուսանցազարդ՝ բուսական՝ 1ա, 34ա, 83բ, 124բ, 161բ, 278բ, թռչուն՝ 125ա, 162ա, 209բ, 245ա, 268ա։ Ձարդագիր՝ հանգուցագիր՝ 1ա, 34ա, 83բ, 124բ, 125ա, 161բ, 162ա, 245ա, թռչնագիր՝ 209բ, 268ա, 278բ։ Գոյն՝ վարդագոյն։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած Ի. դարում, վերակազմուած հին ու նոր կաշիների միացումով՝ Ա. եւ Բ. փեղկերի եզրերը, մէջքը եւ զոյգ կապիչները վերափոխուած նոր կաշով, ձեռագրի հիմքը, թերթերի պատռուած հատուածները եւ ցեցի անցքերը (թ. 269-78) ամրացուած-լրացուած սպիտակ թղթով, կազմի հին կաշին մաշուած, ֆերծուած, ճաճճուած, տեղ-տեղ թափուած, Ա. եւ Բ. փեղկերի կազմաստառ-մետաքսը մաշուած, գունափոխուած, դռնակի մետաքս աստառն ընկած. լուսանցակողերը մաշուած, բամբակակալած, պտոկ-պիպ-ները գունափոխուած, խոնաւութիւնից ձեւափոխուած, եզրերը (հին կազմի հատման տեղերում) շրջանականաձեւ դեղնած. ձեռագրի հիմքը եւ վերին եզրը խոնաւութիւն տեսած, թերթերին գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, սնկային հիւանդութեան, իւղի, մոմի, թանաքի, ներկի եւ այրուածքի հետքեր, գրադաշտը խոնաւութիւնից գունափոխուած, տեղ-տեղ աղտոտուած, լուացուած, կպումներից որոշ բառեր եղծուած, մասնակի վերականգնուած, մանրանկարները խոնաւութիւնից գունափոխուած, երբեմն արտատպուած հանդիպակաց էջերին, թ. 292-4՝ տեղադրած սխալ (թ. 291, 294, 293, 292), կարդալ ըստ թերթակալման յաջորդականութեան, ձեռագրի թերթերը եզրահատուած, մանրանկարների եւ պրակահամարների մեծ մասը վնասուած, հետագայի ձեռքով պրակահամարները լրացուած՝ 47ա, 143ա եւ այլուր, թ. 1, 159, 195, 199՝ պատռուածք-անցքեր, էջ 132բ՝ բնագիրը երկու բառի չափով վնասուած, այլ թղթով նորոգուած՝ վրան Բովանդակութիւնը ընդօրինակուած, թ. 268՝ հիմքի վերին մասից մասամբ անջատուած, թ. 294՝ կտրած-հանած, պահպանուած 3 սմ լայնութեամբ հիմքը (բնագիրը վնասուած), թ. 129-32՝ ցեցի անցքեր։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1գ-267բ* [Ալբեռտ Մեծ] Համառօտ հաւաքումն յաղագս աստուածաբանական ճշմարտութեանն

Տե՛ս ձեռ. 104, 2ա-397բ: Յանկ/չիք: Յոջբ./1գդ: 1/1դ-33ա: ա/2ա-3ա: բ/3ա-4ա: գ/4աբ: դ/4բ-5ա: ե/5աբ: զ/5բ-6բ: է/6բ-7ա: ը/7աբ: թ/7բ-9բ: ժ/9բ-12ա: ժա/12աբ: ժբ/12բ-3ա: ժգ/13աբ: ժդ/13բ-4ա: ժե/14աբ: ժզ/14բ-6ա: ժէ/16ա-7բ: ժը/17բ-8բ: ժթ/18բ-20ա: ի/20աբ: իա/20բ-1բ: իբ/21բ-2ա: իգ/22ա-3ա: իդ/23ա-4ա: իե/24աբ: իզ/24բ-5բ: իէ/25բ-6ա: իը/26բ-7ա: իթ/27ա-8ա: լ/28ա-9բ: լա/29բ: լբ/29բ-31ա: լգ/31ա-2բ: լդ/32բ-3ա: 2/33բ-83ա: Յանկ/33բ-4ա: ա/34ա-5ա: բ/35աբ: գ/35բ-6բ: դ/36բ-7ա: ե/37աբ: զ/37բ-8ա: է/38ա-9ա: ը/39ա-40ա: թ/40ա-1ա: ժ/41ա-2ա: ժա/42ա-3ա: ժբ/43աբ: ժգ/43բ-4ա: ժդ/44ա-5ա: ժե/45ա-6ա: ժզ/46աբ: ժէ/46բ-7ա: ժը/47ա-8ա: ժթ/48ա-9ա: ի/49աբ: իա/49բ: իբ/49բ-50ա: իգ/50ա: իդ/50աբ: իե/50բ: իզ/50բ-1ա: իէ/51ա-2ա: իը/52աբ: իթ/52բ-3ա: լ/53աբ: լա/53բ: լբ/53բ-4ա: լգ/54ա: լդ/54աբ: լե/52բ-5բ: լզ/55բ-6ա: լէ/56ա: լը/56աբ: լթ/56բ-8ա: խ/58աբ: խա/58բ-9բ: խբ/59բ-60ա: խգ/60ա-1ա: խդ/61աբ: խե/61բ-3ա: խզ/63աբ: խէ/63բ-4ա: խը/64աբ: խթ/64բ: ծ/64բ-5բ: ծա/65բ-6ա: ծբ/66ա-7բ: ծգ/67բ-8ա: ծդ/68աբ: ծե/68բ-9ա: ծզ/69ա-70ա: ծէ/70ա-1ա: ծը/71ա-4ա: ծթ/74աբ: կ/74բ-6ա: կա/76ա-7ա: կբ/77ա-8բ: կգ/78բ-9բ: կդ/79բ: կե/79բ-81ա: կզ/81ա-3ա: 3/83ա-124բ: Յանկ/83աբ: ա/83բ-4ա: բ/84աբ: գ/84բ-5ա: դ/85աբ: ե/85բ-6բ: զ/86բ-8ա: է/88ա-93բ: ը/93բ-5ա: թ/95աբ: ժ/95բ-7ա: ժա/97ա-8ա: ժբ/98ա-9բ: ժգ/99բ-101ա: ժդ/101ա-2բ: ժե/102բ-5ա: ժզ/105բ-6ա: ժէ/106ա-8բ: ժը/108բ-10բ: ժթ/110բ-2ա: ի/112ա-3բ: իա/113բ-5բ: իբ/115բ-21ա: իգ/121ա-2բ: իդ/122բ-4բ: 4/124բ-61ա: Յանկ/124բ-5ա: Նախերգան/124բ: ա/125ա-6ա: բ/126աբ: գ/126բ-9բ: դ/129բ-31բ: ե/131բ-4ա: զ/134ա-5ա: է/135ա-8ա: ը/138ա-9բ: թ/139բ-41ա: ժ/141ա-3ա: ժա/143ա-4բ: ժբ/144բ-5բ: ժգ/145բ-7ա: ժդ/147ա-8բ: ժե/148բ-9բ: ժզ/149բ-50ա: ժէ/150աբ: ժը/150բ-1բ: ժթ/151բ-3բ: ի/153բ-5ա: իա/155ա-6բ: իբ/156բ-8բ: իգ/158բ-60բ: իդ/160բ-1ա: 5/161բ-209ա: Յանկ/161բ-2ա: Նախերգան/161բ: ա/162ա-3բ: բ/163բ-4բ: գ/164բ-5ա: դ/165աբ: ե/165բ-6բ: զ/166բ-7բ: է/167բ-8բ: ը/168բ-9բ: թ/169բ-70բ: ժ/170բ-1բ: ժա/171բ-2ա: ժբ/172ա-3ա: ժգ/173աբ: ժդ/173բ-5ա: ժե/175ա-6ա: ժզ/176աբ: ժէ/176բ-7ա: ժը/177ա-9ա: ժթ/179ա-80ա: ի/180աբ: իա/180բ-2ա: իբ/182աբ: իգ/182բ-3բ: իդ/183բ-4ա: իե/184ա-5ա: իզ/185աբ: իէ/185բ-6ա: իը/186աբ: իթ/186բ-7ա: լ/187աբ: լա/187բ-8բ: լբ/188բ-9բ: լգ/189բ-90բ: լդ/190բ-1բ: լե/191բ-2բ: լզ/192բ-4ա: լէ/194աբ: լը/194բ-5բ: լթ/195բ-6ա: խ/196ա: խա/196բ: խբ/196բ: խգ/196բ-7ա: խդ/197աբ: խե/197բ: խզ/197բ-8բ: խէ/198բ: խը/198բ: խթ/198բ: ծ/198բ-9ա: ծա/199ա: ծբ/199ա: ծգ/199աբ: ծդ/199բ: ծե/199բ-200ա: ծզ/200ա: ծէ/200աբ: ծը/200բ-2ա: ծթ/202աբ: կ/202բ-3ա: կա/203աբ: կբ/203բ: կգ/203բ-4ա: կդ/204ա: կե/204աբ: կզ/204բ: կէ/204բ-5ա: կը/205աբ: կթ/205բ-9ա: 6/209ա-44բ: Յանկ/209աբ: Նախերգան/209բ: ա/209բ-10ա: բ/210ա-1ա: գ/211ա-2ա: դ/212աբ: ե/212բ-3բ: զ/213բ-4ա: է/214ա-5ա: ը/215ա-7ա: թ/217ա: ժ/217ա-8բ: ժա/218բ-20բ: ժբ/220բ-2ա: ժգ/222ա-3բ: ժդ/223բ-4բ: ժե/224բ-6ա: ժզ/226ա-7ա: ժէ/227աբ: ժը/227բ-8բ: ժթ/228բ-30ա: ի/230աբ: իա/230բ-1ա: իբ/231ա-2ա: իգ/232բ-3բ: իդ/233բ-4բ: իե/234բ-5ա: իզ/235աբ: իէ/235բ: իը/235բ-6ա: իթ/236աբ: լ/236բ-8ա: լա/238ա-9ա: լբ/239ա-40ա: լգ/240ա-1ա: լդ/241ա-2բ: լե/242բ: լզ/242բ-3ա: լէ/243ա-4բ: 7/244բ-67ա: Յանկ/244բ: Նախերգան/245ա: ա/245ա-6ա: բ/246ա-7ա: գ/247աբ: դ/247բ-8բ: ե/248բ-9ա: զ/249աբ: է/249բ: ը/250ա-1ա: թ/251ա: ժ/251աբ: ժա/251բ-2ա: ժբ/252ա: ժգ/252ա: ժդ/252ա-3ա: ժե/253աբ: ժզ/253բ-4բ: ժէ/254բ-5ա: ժը/255ա-6ա: ժթ/256ա-7ա: ի/257աբ: իա/257բ-9ա: իբ/259ա: իգ/259ա-60ա: իդ/260ա: իե/260ա-1բ: իզ/261բ-2բ: իէ/262բ-4ա: իը/264ա-5ա: իթ/265ա-6ա: լ/266ա-7ա: Յիշատակարան Թարգմանչի/267աբ:

Տե՛ս Ալբեռտ Մեծ, Համառօտութիւն աստուածաբանութեան, Վենետիկ, տպ.՝ Անտոնի Բոռտոլի, 1715:

Բ. *268ա-78բ* [Առաբել Սիւնեցի. *տե՛ս ձեռ. 662, 294ա*] Գիրք յաղագս ծնընդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ. Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ – *Արդ, ի Դ.ից աւետարանչացն... Բանն մարմինն եղեւ եւ բնակեաց ի մեզ:*

Գ. *278բ-94ա* Գիրք յաղագս համօրէն յարութեանն. Հարցումն եւ պատասխանիք *(հմմտ. ձեռ. 789, 427ա-38բ)* – *Զի ինքնին Տէր հրամանաւ հրեշտակապետին... ին մի /// որք կենդանի /// ապա յառ/// ///պա մեք ո/// ///ի լինիցի ///ին: Թէպ/// Քրիստոսի մեղաց /// (թ. 292 կտրած, պահպանուած 3 սմ լայնութեամբ հիմքը. բնագիրը վնասուած):*

Ծնթ. Թ. 292-4՝ տեղադրած սխալ՝ թ. 291, 294, 293, 292. կարդալ ըստ թերթակալման յաջորդականութեան:

Առմ. լս-ներում ունի հետագայ ձեռով արուած բնագրային լրացումներ՝ 3ա, 7ա եւ այլուր:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

33ա Կատարեցաւ Գիրքն առաջին, որ յաղագս աստուածային բնութեա[նն]: Ջնուաստ ոգի Ղուկաս յիշեա՛առ Տէր, յորժամ կարդաս:

83ա Կատարեցաւ Գիրքն Բ., որ յաղագս ստեղծման:

124բ եւ այսքան յաղագս երրորդ գրոցն:

125ա (ճակատազարդի մէջ) Թադէոս *քահ[անայ]:*

161ա եւ աստ առնու զաւարտումն Գիրքն չորրորդ: Ջարբասէր եւ զարիական, պատուելի եւ զերջանկագեղ, գերաշխարհիկ գովից գերազանցն զԹադէոս ողջամիտ

եւ յոգնիմաստ քահանայն՝ ստացող այսմ աստուածաբան տառիս, յիշեցէ՛ք ի մաքրափայլ յաղօթս՝ հանդերձ զարմիւք եւ կրկին ծնողօք: Նաեւ զախմար գրիչ՝ տարտամ եւ զնուաստ Ղուկաս մի՛ մոռանայք յիշել ի Տէր սրտի մտօք:

209ա Կատարեցաւ Գիրքն հինգերորդ, որ յաղագս շնորհաց եւ առաքինութեանց: Ձնուաստ Ղուկաս գծող յիշեա՛ առ Տէր ամէնողորմ:

244բ Ձնուաստ գծող Ղուկաս յիշեա՛ առ Տէր, յորժամ կարդաս:

267բ Ձբարի անուն եւ զմեծաշուք պատուական եւ զսրբասնունդ արիաջան քահանայն Քրիստոսի՝ զԹադէոս, որ բազում ըղձիւք եւ սիրատէնչ փափագմամբ ստացաւ զսայ յիշատակ եւ ի վայելս անձին իւրոյ, եւ յետ աստեացս գանձ անկապտելի եւ զաւակ ի Սիոն՝ արձան յաւիտենական ի սուրբ եկեղեցի, զոր ստացաւ զսա ի հալալ արդեանց եւ ի յանցաւոր մամոնայէ գանձ անհատանելի յերկինս, ի թվականի Հայկազեանս սեռի Պ եւ ե. (1356) ամի, ի յամսեանս Յունիս, ի գաւառս Արտազու, ընդ հովանեաւ սուրբ առաքելոյս Թադէոսի եւ աստուածամուխ Գեղարդեանս՝ Տեառն նիզակի, ի յառաջնորդութեան տեառն Տիրացուի արհիեպիսկոպոսի, ի գեղս, որ կոչի Մակու, ձեռամբ թարմատար եւ նուաստ գրչի՝ Ղուկասի, սոսկ անուն քահանայի եւ լոկ աշակերտ բանի:

Արդ, որք օգտիք ի սմանէ, յիշեցէ՛ք ի մեղսաքաւիչ, մաքրափայլ յաղօթս ձեր զվերոյ ասացեալ քահանայն՝ Թադէոս, եւ զիա՝ զՂուկաս գծող, աղաչեմ ի Տէր:

292ա Կատարեց[աւ] ///: Ձստաց[ող]/// զբարեպաշ[տ] /// յաղօթս ձեր /// ի հանդերձ[եալն] /// նուաստ եւ յե[տին] /// կրկին ///:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԴԱՅԻ

1. *1ա (ԺԹ. դ., նոտրգիր)*
Գիրքս այս կոչի Աստուածաբան,
Համառօտօղ տարագրական:
Ի յԱլբերթէ ասաց զայս բան,
Առ ի վարժում ներհմտական:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *5բ, 34ա, 162ա՝* սեւ թանաքով բոլորակ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ/ՂՈՒԿԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ/ՌՃԾԷ. *(1708)»:*


ՆՇՈՒՄ՝ *Ա. կազմաստառին սոսնձած թղթին՝* սեւով շղագիր «Հ*ին* *42 (ջնջած, ուղղած՝ 69), Ձեռագիր Տաթեւի վ[անից], Ալբերտի Հաւաքումն Աստուածաբանական ճշմարտութեանց», պտկ-պհպ. Աա՝* սեւով «Տաթեւ, *69/3654», 1ա՝* սեւով շղագիր «Հաւաքումն Աստուածաբանական ճշմարտութեանց, *թարգ.՝* Յովհան Քոնեցի, *թվ. ՉՂԳ.-793-1344, գրչութիւնս՝ Պե.-805-1356», այլ թանաքով՝* «Մ[եսրոպ] *եպ[ի]ս[կոպոս]», 1գ՝* սեւով «*Թ. ՌԿՉ. (ջնջած, այնուհետեւ գրած ճիշտը) Պե. (1356) ի* Մակու», *Բ. կազմաստառին սոսնձած թղթին՝* սեւով շղագիր «Ալբերտի *աստուածաբանութիւն (երկիցս), Պե.-1356»:*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *Պտկ.-պհպ. Աա՝* սեւով, *1* տող նոտրգրով, *դժուարընկալելի «////ա որում եւ նրան ուզէլ ////ուկ ասյն», պտկ-պհպ. Աբ՝* սեւով տառեր «*ա-լ*», «*Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ Աստուած ամենայնի», 1բ՝ «այս <այս> օր ան, ա-դ, ա (երիցս), լե 3»:*

3655
ԺՈՂՈՎԱԾՈՅ
(բաղկացած 2 ձեռագրից)

ԹԵՐԹ՝ 354 (թերթակալումը՝ սեւ թանաքով): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16×11,5: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դռնակով եւ զոյգ կապիչներով (դռնակը եւ կապիչները նորոգման ժամանակի). միջուկը՝ տախտակ. աստառը՝ կարմիր կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Աւետարան Մատթէոսի: Ժ. դ.: Ա+Բ՝ ստացուած մէկ թերթի ընդերկայնակի եւ ընդլայնակի եզրահատումով (Բբ+Աա եւ Բա+Աբ. պահպանուած 1-ին սիւնակը): Մագաղաթ 31,5×11 (տուելաները պահպանուած թերթինն են). երկսիւն (պահպանուած ամբողջական սիւնը՝ 15×8,5). բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝ Աա). տող՝ 19 (ամբողջական թերթինը). ունի լուսանցային համաբարբառ՝ Յոհաննէսի: Կարդալ. Բբ (հակառակ դիրհով, պահպանուած թերթի՝ մօտ 3 սմ լայնութեամբ հիմիր՝ ոչ ամբողջական բառերով, յաջորդիւ ընդգծած)՝ «///ո[ւէ զիս, եւ սիրտ



Նմուշ Աա

իւեանց հեռացեալ] **է յ**[ինէն: Ջուր պաշ]**տե**[ն զիս. ուսուցա]**ցեն** [վարդապետու]**թիւ**[ն՝ զմարդկան] **պատ**[ուիրեալս:] **Եւ կո**[չեցեալ առ ին]**քըն զ**[ժողովուրդսն՝] **ասէ ցն**[ոսա. Լուա]**ռո՛ւմ** [եւ ի միտ առէ՛ք]» (ԺԵ. 8-10), Աա՝ «Ոչ որ ինչ մտանէ ընդ բերան՝ պղծէ զմարդ, այլ որ ինչ ելանէ ի բերանոյ՝ այն պղծէ զմարդ: Յայնժամ մատուցեալ աշակերտացն նորա՝ ասեն ցնա. Գիտե՞ս՝ զի փարիսա///» (ԺԵ. 11-2), Բա (հակառակ դիրհով, պահպանուած թերթի՝ մօտ 3 սմ լայնութեամբ

հիմքը՝ ոչ ամբողջական բառերով, յաջորդիւ ընդգծած)՝ «///**առ** [ուտել՝ ոչ պղծէ զմ]**արդ**: [եւ ելեալ անտի Յիսուսի] **գն**[աց ի կողմանս Տի]**ւռ**[սի եւ Սիդովնի:] **եւ ահա՝** [կին մի բանան]**ացի ի** [սահմանաց ան]**տի ելոց**[ա՝ ելեալ,] **աղա**[ղակէր եւ ասէր. Ո]**ղոր**[մեա՛ ինձ, Տէ՛ր, ո]**րդի**» (Ժե. 20-2), Աբ՝ «[Դաւթի, դուս]տր իմ՝ չարաչար այսաւուր: եւ նա ոչ ետ նմա պատասխանի: եւ մատուցեալ աշակերտքն նորա՝ աղաչեին զնա եւ ասեին. Առնակեա՛ զնա՝ զի աղաղակէ զհետ մեր ///» (Ժե. 22-3):


ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած, թերթերի պատռուած մասերը ամրացուած-լրացուած այլ թղթով. կազմի հին կաշին ճեղուած, մաշուած, թեթեւակի վնասուած, եզրերի կաշին մաշուած-թափուած, վրան սնկային հիւանդութեան հետեւեր եւ ցեցի անցքեր, մէջքի կաշին խիստ մաշուած, ճաքճքուած, դռնակի կաշին եւ զոյգ կապիչներն ընկած, նորոգման ժամանակ փոխարինած նոր կաշուով, կազմի Ա. փեղկի տախտակը մասամբ ճեղքուած, Ա. եւ Բ. փեղկերի կազմաստառ-կտաւները աղտոտուած, մաշուած, խոնաւութիւնից գունափոխուած, պտոկ-պիպ-ներ Ա. եւ Բ.՝ գունափոխուած, խոնաւութիւնից ձեւափոխուած-կծկուած, պտոկ-պիպ. Ա.՝ վերին եզրը փոշուց սեւացած, պտոկ-պիպ. Բ.՝ պահպանուած մօտ 3 սմ լայնութեամբ հիմքը՝ ոչ ամբողջական բառերով (տե՛ս Պտոկ-պիպ.), լուսանցակողերը մաշուած, կարմիրը թափուած, տեղ-տեղ սեւացած. ձեռագրի բոլոր թերթերի վերին եզրերին անմաքուր ջրի եւ սնկային հիւանդութեան հետեւեր:

ՁԵՌԱԳԻՐ Ա.

ԺԷ. դար

ՍՏԱՅՈՂ՝ Բարթողիմէոս վրդ.:

ԹԵՐԹ՝ 281 (թ. 1-281): ՊՐԱԿ՝ Ա-ԻԴ×12 (Ա 8, ԻԴ 9): ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16×11,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, կարմրով սահմանագծուած (12×7,5): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 37ա). խորագիրք՝ կարմիր: ՏՈՂ՝ 18:



Նմուշ 37ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ (գծանկարային) – ձակատազարդ՝ 1ա, 73ա, 194ա: Լուսանցազարդ՝ բուսական՝ 1ա, 73ա, 194ա: Ջարդագիր՝ հանգուցագիր՝ 1ա (պարզունակ), 73ա: Բաժանազարդ՝ 46բ: Գոյներ՝ կարմիր, սեւ:

Ծնթ. 194ա՝ սկզբնատառերի տեղը բաց՝ յետոյ լրացնելու նպատակով:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթերին գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, սնկային հիւանդութեան, իւղի, սեւ թանաքի, նաեւ սկզբի որոշ թերթերի առաք. լս-ներում անմաքուր ջրի հետեւեր, գրադաշտը տեղ-տեղ աղտոտուած, թանաքը թեթեւակի տարրալուծուած, մանրանկարները խոնաւութիւնից գունափոխուած, ձեռագրի թերթերը եզրահատուած (1ա՝ լուսանցազարդը վնասուած), 25ա՝ կանաչ թանաքի բծեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-281բ* [Հայոց պատմութիւն յերիս հատուածս, ասացեալ Մովսէսի Խորենացւոյ]

Տե՛ս ձեռ. 1863, 2ա-188ա: ա. 1/չիք: 2/1ա-72բ: բ. 1/չիք: 2/73ա-194ա: գ. 1/չիք: 2/194ա-281բ:

47բ առաք. լս. գրչից՝ «Իսկ Վատամս եւ Կար, յայլոց գրեցաք, եւ բնիկ ոչ գոյր», հմմտ. յաջորդիւ նշուած տպագիրը, էջ 62, տող 21 (տպագրում՝ «Վատամկար»):

Տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմութիւն հայոց, բնական բնագիրը եւ ներածութիւնը՝ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Նմանահանութիւն, Երեւան, 1991 (ձեռագրիս մասին տե՛ս էջ ԽԴ., հմր 14 եւ էջ 404, հմր N):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

194ա (խորագրի վերջում) Աւգնեա՛յ, Մո՛ւրբ Հոգի:

281բ Մանաւանդ զստացող գրոցս /// ///պետն (ջնջած, այլ ձեռքով գրուած-յարմարեցուած՝ «Բարդողիմէոս վարդապետն») եւ զծնօղսն /// (ջնջած) [Տէր ողոր]մէածն (այլ ձեռքով վրան կրկին «Բարդուղ[ի]մէոս՞») Աստուած զինքն հաստատուն պահեսցէ ի սաղմոսերգութիւնն եւ յետ աստեացս ելանելոյ ընդ Դաւթի մարգարէին դասեսցէ, եւ նմա փառք յամենայն եղանակաց. ամէն: Թողութիւն շնորհեցէ՛ք ընթերցողք գրոցս, զի կարն մեր այս է:


ԳՐՉԱՓՈՐՁ՝ *260ա՝ բոլորգիր «Ի[մ] Քրիստո՛ս, քո արեամբ եմ ///ն (ստ. լս-ի եզրահատումից վնասուած, դժուարընկալելի)»:*

ՁԵՌԱԳԻՐ Բ.

ԺԷ. դար

ՍՏԱՅՈՂ՝ Դաւիթ րաբունապետ:

ԹԵՐԹ՝ 73 (թ. 282-354). չգրուած՝ 343բ-4ա, 354աբ: ՊՐԱԿ՝ Ա-Ջ×12 (Ա 11)+2: ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16×11,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, նարնջիով սահմանագծուած (12×7): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 284ա). խորագիրք՝ կարմիր (282ա, 339ա՝ նաեւ կապոյտ, վարդագոյն, նարնջի): ՏՈՂ՝ 20:



Նմուշ 284ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ (գծանկարային) – ճակատազարդ՝ 282ա: Ձարդագիր՝ թոչնագիր՝ 282ա: Գոյն՝ սեւ:

Ծնթ. 339ա եւ 347ա՝ ճակատազարդի եւ սկզբնատառերի տեղը բաց՝ յետոյ լրացնելու նպատակով:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթերին գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, սնկային հիւանդութեան, իւղի, սեւ թանաքի հետքեր, գրաղաշտը տեղ-տեղ աղտոտուած, թանաքը խոնաւութիւնից տարբալուծուած, յաճախ արտատպուած դարձերեսին, մանրանկարները խոնաւութիւնից գունափոխուած, ձեռագրի վերջը թերի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *282ա-352բ* [Բարթուղիմէոս Մարաղացի-Բոլոնիացի] Համառօտ հաւաքումն եւ յոյժ օգտակար ի Դիալէթիկայն, որ է Տրամաբանութիւն, կարգեալ եւ թարգմանեալ ձեռամբ Բարդուղիմէոսի եպիսկոպոսի

Տե՛ս ձեռ. 69, 266ա-337բ: ա/282ա-338բ: բ/339ա-52բ (343ա՝ որոշ հատուած եւ 343բ-4ա՝ տեղը բաց՝ յետոյ լրացնելու նպատակով՝ 343ա «...ամենայն մարդ է կենդանի, ամենայն մարդ է ծիծաղական, ապա ուրեմն ոմն ծիծաղական է կենդանի///», 344բ «/// Իսկ շարադասումն երեք կերպիւ լինի որպէս ասացաւ...». հմմտ. ձեռ. 69, 300բ-1բ, վերջը՝ թափուած. 337բ «...Ամենայն քար է կենդանի, իսկ եզրակացութիւնս այս հակակայի փոք///». հմմտ. ձեռ. 69, 305բ): գ-ղ/չիք:

Տե՛ս Ս. Առեւշատեան, Բարդուղիմէոս Բոլոնիացու հայկական ժառանգութիւնը, Երեւան, 2014, էջ 23:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ

1. *353ա (ժէ. դարի վերջ, նոտրգիր)* [Տաղ] – *(սկ.) /// ախորժակ կամօք, ախորժակ, վա՛յ: / Արդ, որ մահուան օրըն հասնու, յո՞ փախեաց գերիս, յո՞ թաքեայց... Ո՜հ, թշուառ անձինս, ո՛հ հիքոյս, վա՛յ եւ եղ՛:*

2. *353բ (ԺԲ. դ., նոտրգիր)* [Տաղ Յարութեան Գրիգորի Նարեկացւոյ. *տե՛ս ձեռ. 6998, 46ա*] – *Հաւիկ մի պայծառ տեսա աննման, / Ի յայն քառաթեւին աննըման... Զիարս ամենեցուն յայտնել կամիմ, աննմա՛ն:*

Տե՛ս Մատենագիրք հայոց, ԺԴ. հատոր, Գանձարան, Գիրք Բ., Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 1228-1231 եւ Գրիգոր Նարեկացի, Տաղեր եւ գանձեր, աշխ. Ա. Քեոշկերեանի, Երեւան, 1981, էջ 237-243 (ձեռագիրս օգտագործուած չէ):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

338բ Վաղճան եւ աւարտ Դիալէթիկայիս, որ ասի ճարտասանութիւն՝ ըստ մերում բարբառոյ: Եւ է սայ յիշատակ յինէն առ Դաւիթ րաբունապետն, ամենավսեմականի հոգւոյն ընդունարան եւ այր ցանկալի յօրուրս այսոսիկ, որոյ աղօթից նպաստութիւն հիքոյս, տէրունի հասցէ, վասն զի կարի կարօտիմ, նայ եւ ի յապագայի վայելողացդ հայցեմ յիշել զիս առ Տէր. ամէն: Ահո՛, ահո՛:

ԳՐՉԱՓՈՐՉ *353ա՝ անկապակից տառեր «Մաէուա»:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

(գրուած ի մի կազմելուց յետոյ)

1. 1ա (ԺԹ. դ., շղագիր, բոլոր յիշատակարանների վրայ ջնջագծեր) Թվ[ին] [Ռ]Ա. (1552) ի* Նախիջեւան, Մեսրոպ *քահանայ:*

* Ծնթ. Թուականի գրութեան սխալ:

281բ Թվ[ին] ՌԱ. (1552):

282ա Թվ[ին] ՌԱ. (1552):

335բ Թվին ՌԱ. (1552) ի Նախիջեւան *քաղաքի, ի* Մեսրովբ *քահանայէ:*


ՆՇՈՒՄ՝ *Մէջքին սոսնձած թղթին՝ շղագրով «Մովսէս/ [Խո]րենացի/ [եւ] Տրամաբա/նութիւն», այլ թանաքով «ԺԷ. [դար]», Ա. փեղկին սոսնձած թղթին՝ շղագրով «Հմր 55 (վրան՝ ջնջագիծ) 70,/ [Հայ]ոց պատմութիւն,/* [Մ]ովսէս/ *Խորենացի/ եւ/ Տրամաբանութիւն», պտռկ-պհպ. Մ սեւով «Տաթեւ, 70/3655», 1ա՝ կապոյտով «ԺԷ. [դար], Մ*[եսրոպ] *եպ[ի]ս[կոպոս]», սեւով «352 թերթ»:*

3656
ԹՈՒՂԹՔ ՊՕՂՈՍԻ

ԺԴ. դար

ԳՐԻՉ՝ Ստեփանոս:

ԹԵՐԹ՝ 217+2. (կրկն.՝ բ. 112, 114). չգրուած՝ 179ա-80բ: ՊՐԱԿ՝ Ա-ԻԹ×8 (Ա. 5, ԺԴ, ԻԹ 7, ԺԷ, ԺԹ, ԻԱ, ԻԳ 6): ՆԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16×12: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (13×8,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 10ա). խոռագիրք՝ կարմիր: ՏՈՂ՝ 17: ԿԱՋՄ՝ շագանակագոյն



Նմուշ 10ա

դրոշմազարդ կաշի, մէջբը եւ եզրերը սեւ կաշի (նորոգման ժամանակի). միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ սպիտակ թուղթ (նորոգման ժամանակի): ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Դ՝ սպիտակ չգրուած թուղթ (նորոգման ժամանակի), մասն կազմաստառի:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Աւետարան Յովհաննու: Թ.-ժ. դդ.: ԲԳ (վջ.)՝ ստացուած մէկ թերթի ընդերկայնակի եւ ընդլայնակի եզրահատումներով եւ ընդլայնակի ծալումով (բնագիրը կտրած, 2րդ սիւնակից պահպանուած 2 սմ լայնի): Մագաղաթ 21,5×15 (տուելաները պահպանուած թերթինն են). երկսիւն (21,5×14). բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝ Գա). տող՝ 12: Կարդալ. Գա-Բբ՝ «///զի յորժամ լինիցի՝ հաւատասջիհ եթէ ես եմ... զայն, որ առաքեացն զիս: Ջայս իբրեւ աս///» (ԺԳ. 19-21):



Նմուշ Գա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Ճակատազարդ՝ 1ա, 45բ, 89բ, 116բ, 131բ, 144ա, 154ա, 163բ, 178ա, 214բ: Լսային՝ Պաւղոս (միայն դէմքը)՝ 108բ: Լուսանցազարդ՝ վարդեակ՝ 157ա, անորոշ պատկեր՝ 214բ (լուսանցակողերի եզրահատման պատճառով վնասուած): Ջարդագիր՝ հանգուցագիր (նաեւ մարդադէմ՝ 202բ), թոչնագիր՝ 214բ, կենդանական՝ 1ա, թոչուն եւ ձուկ՝ 144ա: Գոյներ՝ կարմիր, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած (Ի. դար), թերթերի պատռուած հատուածները այլ թղթով ամրացուած-լրացուած (բնագիրը՝ մասամբ վնասուած, հետագայում այլ ձեռքերով տեղ-տեղ ընդօրինակուած-լրացուած). կազմի հին կաշին մաշուած, վնասուած, ճեղուած, գունաթափուած, փեղկերը խոնաւութիւնից կորացած, մէջբը եւ եզրերը այլ կաշուով նորոգուած, Ա. փեղկի եզրերի՝ նորոգման ժամանակի կաշին խոնաւութիւնից մասամբ անջատուած, զոյգ կապիչներն ու գամերն ընկած, լուսանցակողերը եզրահատուած, մանրանկարները տեղ-տեղ վնասուած. պտոկ-պիպ-ները եզրահատուած, բնագիրը 1 սիւնակի չափով կտրած, 2րդ սիւնակից պահպանուած 2 սմ լայնութեամբ մաս (տե՛ս Բովանդակութիւն), գունաթափուած, խոնաւութիւնից թեթեւակի կծկուած եւ ձեւափոխուած, աղտոտուած, Բա եւ Գբ էջերը լուացուած, անընթեռնելի, պտոկ-պիպ. Բ., Գ.՝ պատռուածք-անցքեր. թերթերին խոնաւութեան եւ գործածութեան հետեւանքով զանազան բծեր, խոնաւութիւնից գրադաշտը գունափոխուած, սեւացած, աղտոտուած, տեղ-տեղ վնասուած, առանձին բառեր եւ պարբերութիւններ եղծուած, թանաքը եւ մանրանկարների ներկերը մասամբ թափուած, մանրանկարները դժգունած, մասնակի վնասուած, թերթերի արտք. լս-ներին անմաքուր ջրի լայն հետքեր, 107ա-8բ՝ կապոյտ թանաքի բծեր, թ. 114գդ, 115՝ հիմքից անջատ, թ. 199՝ պատռուածք-անցք, պրակներից առանձին թերթեր ընկած, թ. 108-9ի, 122-3ի, 128-9ի, 150-1ի, 156-7ի, 164-5ի, 170-1ի միջեւ 1ական, իսկ թ. 142-3ի միջեւ 2ական թերթ ընկած, թ. 181ից առաջ 2 թերթ ընկած, հետագայի նորոգման ժամանակ փոխարէնը մուծուած 2 չգրուած թերթ, նորոգման ժամանակ որոշ թերթեր տեղերով շփոթուած, ԺՋ. պրակի մէջ թ. 118 եւ 119 տեղադրած սխալ, համապատասխանաբար թ. 114դ-ից եւ 121ից յետոյ, կարդալ ըստ թերթակալման յաջորդականութեան՝ թ. 115-22, թ. 178ը սխալ տեղադրած, կարդալ թ. 170ից յետոյ. ճիշտ է հետեւեալ հերթականութիւնը՝ թ. 1-170, 178, 171-7, 181-217:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-217բ* [Թուղթ Պօղոսի առաքելոյն]

ա. Առ Հռոմայեցիս – Թղթ. *1ա-44ա:*

Ծնթ. 30բ՝ արտ. լս. այլ ձեռքով բնագրային լրացում:

բ. Առ Կորնթացիս Ա. – Գլ. *44ա-5բ:* Թղթ. *45բ-88ա:*

գ. Առ Կորնթացիս Բ. – Գլ. *88ա-9ա:* Թղթ. *89բ-115բ (նիւթը՝ թերի. 108բ «...Որ կարծեն զմեզ [եթ]է ըստ մարմնոյ գնայցեմք ///» 109ա «/// զանձինս մեր ոմանց, որ զանձինս իւրեանց ձեզ ընծայեցուցանեն...»):*

Ծնթ. Թ. 108-9ի միջեւ 1 թերթ ընկած:

դ. Առ Գաղատացիս – Գլ. *115բ-6բ:* Թղթ. *116բ-30բ (նիւթը՝ թերի. 122բ «...Զի որ միանգամ ի գործոց աւրհնացն են. ընդ անիծիւք են///» 123ա «///եդան, ոչ կարեն խախտել առ [ի խա]փանելոյ զաւետիսն...», 128բ «...Զի յայտնի են գործք մարմնոյ. այս///» 129ա «///զգոյշ լինիցիք անձանց, զի մի՛ եւ դուք փորձիցիք...»):*

Ծնթ. Թ. 122-3ի եւ 128-9ի միջեւ 1ական թերթ ընկած:

ե. Առ Եփեսացիս – Գլ. *130բ-1ա:* Թղթ. *131բ-43բ (նիւթը՝ թերի. 142բ «... Զի անդամք եմք մարմնոյ նորա, ի մարմնոյ նորա եւ/// 143ա «///անակի հոգւով: եւ ի նոյն տքն[ե]սջիք ամենայն ժուժկալութեամբ...»):*

Ծնթ. Թ. 142-3ի միջեւ 2 թերթ ընկած:

զ. Առ Փիլիպեցիս – Գլ. *143բ-4ա:* Թղթ. *144ա-53ա (նիւթը՝ թերի. 150բ «...եւ ոչ եթէ զիմ արդարութիւն ինչ, որ յաւրինաց անտի է ունիցիմ, այլ///» 151ա «///ին ակն ունիմք՝ Տեառն Յիսուսի Քրիստոսի, որ նորոգեսցէ զմարմին խոնարհութեան...»):*

Ծնթ. Թ. 150-1ի միջեւ 1 թերթ ընկած:

է. Առ Կողոսացիս – Գլ. *153ա-4ա:* Թղթ. *154ա-62բ (նիւթը՝ թերի. 156բ «...որ այժմ յայտնեցաւ սրբոց իւրոց: Որոց կամեցաւ Աստուած ցուց///» 157ա «/// Զգոյշ լերո՛ւք, մի՛ ոք իցէ, որ զձեզ կողոպտիցէ ճարտարմտութեամբ...»):*

Ծնթ. Թ. 156-7ի միջեւ 1 թերթ ընկած:

ը. Առ Թեսաղոնիկեցիս Ա. – *Գլ. 162բ-3ա: Թղթ. 163բ-70բ. (նիւթը՝ թերի, վերջը՝ թափուած. 164բ «...Դուք ինքնին գիտէք, եղբա՛րք, զմուտն մեր առ ձեզ, զի ոչ ընդունայն ինչ եղեւ. այլ/// 165ա «///ոգդ եղեաք. որպէս եւ գիտէք իսկ, զի զիւրաքանչիւր ոք ի ձէնջ...», 170բ «...Զամենայն ինչ փորձեցէք, զբարին ընկալ///»):*

Ծնթ. Թ. 164-5ի եւ 170-1ի միջեւ 1ական թերթ ընկած:

թ. Առ Թեսաղոնիկեցիս Բ. – *Թղթ. 178աբ, 171ա-5ա:*

ժ. Առ Եբրայեցիս – *175ա-6ա* [Սրբոյն Եւթաղեա Պատճառ Եբրաեցւոց թղթոյն. *հմմտ. ձեռ. 1879, 343ա] – Եբրայեցւոց թուղթն թուի թէ չիցէ Պաւղոսի գրեալ... Գլ. 176ա-7բ: Թղթ. 181ա-213ա (սկիզբը թերի՝ «///յ ի Տեառնէ. եւ ի ձեռն այնոցիկ որ լուանն՝ ի մեզ հաստատեցաւ...»):*

Ծնթ. Թ. 181ից առաջ 2 թերթ ընկած, հետագայի նորոգման ժամանակ փոխարէնը մուծուած 2 չգրուած թերթ:

ժա. Առ Տիմոթէոս Ա. – *Գլ. 213ա-4բ: Թղթ. 214բ-7բ (վերջը՝ թափուած. 217բ «...կին մարդ՝ [ցած]ութեամբ ուսցի, ամենայն հնազան[դութեամբ]: Այլ ուսուցանել կնոջ///»):*

Բնագրերի խոռագրերը նշուած ստ. լս-ներում:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԴՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1ա Աւգնեա՛, Տէ՛ր Յիսուս Քրիստոս, ///ա ծառայիս քո եւ հասո՛յ յաւարտ /// (ջնջուած):

80ա Ջմեղուցե[ա]լ գծողս աղաչեմ յիշել:

89ա Ջդառն մեղուցե[ա]լ գծողս յիշեա՛յ, ի մեղաց թողութիւն աղաչեմ զձեզ, որք ընթեռն///(ջնջուած):

89բ Աւ[գ]նեա՛յ, Տէ՛ր Յիսուս, տակաւ ծառայիս քո:

96ա Աղաչեմ, յիշե[ա՛] զբազմայմեզ գծողս սորա ի մեղաց թողութիւն:

99բ Ջմեղուցեալ եւ զանարժան գծողս սորա յիշեա՛յ ի մեղաց թողութիւն. եւ զծնողն իմ՝ աղաչեմ:

116բ Ջտառապեալ ոգի զգրող սորին եւ զծնողն իմ աղաչեմ յիշելով, ո՛հ սրբասէրքդ, որք ընթեռնոյքդ, եւ դուք յիշե[ա]լ լիջիք ի Քրիստոսէ. ամէն:

116բ Աւգնեա՛յ, Տէ՛ր Յիսուս, տակաւ ծառայիս:

131ա Ո՛վ մանկունքդ սուրբ եկեղեցւոյ, որք հանդիպիք սորբ կտակիս եւ ընթեռնոյք, ի մեղաց թողութիւնն յիշեցէ՛ք զեղկելիս եւ զբազմամեղ գծող սորայ՝ զՍտեփանոս, եւ զծնաւղն իմ, եւ զեղբայրն իմ՝ զՍարգիս միայնակեաց, եւ զամենայն արեան մերձաւորսն իմ, եւ զամենայն երախտաւորսն իմ, եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ, որ է աւրհնեալ յաւ[իտեանս]. ամէն:

131բ Աւգնեա՛, Տէ՛ր Յիսուս Քրիստոս, տակաւ ծառայիս քո եւ հասո՛յ ի յաւարտումն:

144ա Աւգնեա՛յ, Տէ՛ր Յիսուս:

191ա Ջմեղուցե[ա]լս յի/// (ջնջուած):

202ա Ջմեղուցե[ա]լս յիշեա՛յ, աղաչեմք (ջնջուած):

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *52բ սեւ թանաքով բոլորակ՝ գրութիւնը՝ շրջանաձեւ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ԳՐԻԳ[ՈՐ ՎԱ]ՐԴԱՊԵՏ ///», 116բ սեւ թանաքով բոլորակ՝ գրեթէ անընթեռնելի «///Ա/ՏՈՒՐ»:*

ՆՇՈՒՄ՝ *Ա. փեղկին սոսնձած մոխրագոյն կտաւին՝ «3656», 1ա՝ «Տաթեւ, 74/3656», «ԺԴ. Մ[եսրոպ] եպ[ի]ս[կոպոս]»:*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *Պտղ.-պհպ. բա՝ տառեր «ա-է (բազմիցս)»:*

3657
ԺՈՂՈՎԱԾՈՅ
(բաղկացած 5 ձեռագրից)

ԹԵՐԹ՝ 273: ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15,5×10,5: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի. միջուկը՝ տախտակ. աստառը՝ բաց կապոյտ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. մասամբ նորոգուած, թերթահամարները փոխուած (Ի. դ.). կազմի կաշին մաշուած, վնասուած, ճեռնուած, մասամբ գունաթափուած, տեղ-տեղ պատռուած-թափուած, եզրերի կաշին մաշուած-թափուած, մէջքի վերին եւ ստորին հիմերի կաշին պատռուած-ընկած՝ կարի թելերը բաց, զոյգ կապիչներն ու գամերն ընկած՝ Բ. փեղկի կազմաստառին մնում է վերին կապիչի հիմ-շարունակութիւնը, Ա. փեղկի միջուկ-տախտակը ճեղքուած, Ա. եւ Բ. փեղկերի կազմաստառները խոնաւութիւնից եւ գործածութիւնից աղտոտուած, մաշուած, գունափոխուած, առկայ են նախկինում փակցուած պտոկ-պհպ-ների գրութիւնների արտատպութիւնները՝ բոլորգիծ երկաթագիր. լուսանցակողերի կարմիրը թափուած, հազիւ նշմարելի, մասամբ սեւացած:


ՁԵՌԱԳԻՐ Ա.

ՌՃԻԹ. – 1680

ԳՐԻՉ՝ Տէր Աւետիս (՞): ՍՏԱՑՈՂ՝ Սարգիս Եւդոկիացի:

ԹԵՐԹ՝ 18 (թ. 1-18). չգրուած՝ 18բ: ՊՐԱԿ՝ Ա-Բ×10 (Բ 8): ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ աստղ եւ Լուսին: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15,5×10,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (11,5×6,5): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 10ա). խոռագիրք՝ կարմիր եւ մանուշակագոյն: ՏՈՂ՝ 19-20:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ (գծանկարային, յաճախ պարզունակ) – Զարդագիր՝ հանգուցագիր՝ 1ա, 3ա, 6բ,



Նմուշ 10ա

14բ, 16աբ, թուչնագիր՝ 11ա: Գոյներ՝ կարմիր, մանուշակագոյն, շագանակագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթերին գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, իւղի, մոմի, թանաքի եւ սնկային հիւանդութեան հետքեր, արտ. լս-ներին անմաքուր ջրի հետքեր. գրադաշտը տեղ-տեղ աղտոտուած, թ. 11-8՝ հիմիից անջատուած, թ. 2-13՝ ցեցի անցքեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-18ա* Սահմանք հերականութեան *(հմմտ. ձեռ. 2275, 10ա-94ա)* – *Քերականութիւն է արուեստ գործական բնականաբար ասական եւ գրական: եւ մասունքն նոր չորք՝ Գիր, Վանկ, Բառ, Բան:*

ա. *1ա-2ա* Յաղագս տառի – *Գիր է յօգաւոր ձայնի նուազատ մասն... եւ նոյնք ի սոցանէ՝ ղ, մ, ն, ր:*

բ. *2աբ* Յաղագս վանկի – *Վանկ է ձայն կատարեալ բաղկացեալ... եւ բնութեամբ, որք երկատեսական, որ գոն ընկալան:*

գ. *2բ* Յաղագս բառի – *Բառ է ձայն բաղկեալ ի վանկից եւ մասն բանի... այլ ոչ է բան, որ գոն է՛ է՝ մի գիր, մի վանգ եւ մի բառ:*

դ. *2բ* Յաղագս բանի – *Բան է շարադրութիւն բառից... դերանուն, նախադրութիւն, առբայ, շաղկապ:*

ե. *2բ-6բ* Յաղագս անուան – *Անուն է մասն բանի հոլովական թարց ամանակի եւ դիմաց... նախադաս նուիւն միայն, որ իւր՛ ըն յոքնական հոլովոն, վասն այն նորդիս գրեցաք:*

զ. *6բ-11ա* Յաղագս բայի – *Բայ է բառ հոլովական ընդունական ամանակաց եւ դիմաց... միայն յոքնական առնէ, որ զան զանօթան բեկոտեմք:*

է. *11ա-2ա* Յաղագս ընդունելութեան – *Ընդունելութիւն է բառ հոլովական, ընդունական ամանակաց առանց դիմաց... խփեցելով կոչեցելով, որք են յոյժ հեռի ի միմեանց:*

ը. *12աբ* Յաղագս յօդի – *[յ]օդ է մասն նուազատ բանի անհոլով... որ գոն՝ եղբայրս, եղբայրդ, եղբայրն:*

թ. *12բ-4բ* Յաղագս դերանուան – *[Դ]երանուն է բառ հոլովական, ընդունական դիմաց, թարց ամանակի... իւրաքանչիւր այլ եւ հոլովին սոքա որպէս անունն:*

ժ. *14բ-6ա* Յաղագս նախադրութեան – *Նախադրութիւն է բառ անհոլով, որ նախադրի ի մասունս բանի... առոգանութիւն, յիախնդրութիւն, ստուգաբանութիւն:*

ժա. *16աբ* Յաղագս առոգանութեան – *Առոգանութիւնք են տասն՝ Շեշտ, Բութ... Վերջակէտն զկատարումն տրամախոհութեան ցուցանէ:*

ժբ. *16բ-7բ* Յաղագս յիախնդրութեանն – *Իսկական անուանք ուղղականք ոչ առնուն... Շաղկապիցն ոչ է պիտոյ յի, որզան՝ ապա, ապա ուրեմն:*

ժգ. *17բ-8ա* Յաղագս ըստուգաբանութեան – *Ըստուգաբանութիւն է, որ յաղագս հոլովմանցն, եւ է, որ յաղագս բառից... Իսկ ըստ քերթողութեան՝ կամ ըստ ձայնին լինի կամ ըստ իրին, ըստ ձայնին՝ որպէս ճնճղուկ, ըստ իրին՝ որպէս սապատ:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

18ա Գիրքս այս ումեմն սրբազանի,
երջանկափառ կրօնաւորի՝
Սարգիս *անուն* Պարոնտիրի,
Արփիաշնորհ այցելուի:
Ի թուականիս Հայոց մեծի՝
Շող *բառս նըշան քեզ յայտնեսցի,*
կենըն *պատուով ի բաց դիցի,*
Այբն *ընդ նըմին բարձեալ լիցի (1680):*

Ծնթ. Թուագումար ծածկագրութիւն է՝ ՇՈՂ՝ 500+600+90=1190 – Կ՝ 60+Ա՝ 1=1129+551=1680): Տե՛ս Ա. Աբրահամեան, Հայկական ծածկագրութիւն, Երեւան, 1978, էջ 246:


18բ եա՝ տէր Աւետիս գր[իչ]:

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *15ա՝ սեւով «Սրբոյ Աւետարանիս», 15բ՝ սեւով, հակառակ դիրքով՝ գլխիվայր «Պատկարանօք յինն Ադա|16ա|մայ ոն է աջ յարա աաա», 16բ՝ սեւով խզբզոցներ:*

ՁԵՌԱԳԻՐ Բ.

ԺԷ. դար

ԹԵՐԹ՝ 26 (թ. 19-44): ՊՐԱԿ՝ Ա-Բ×12+2: ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15×10: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (11,5×7): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 21ա). խոռագիրք՝ կարմիր: ՏՈՂ՝ 19, 15 (թ. 41-4):



Նմուշ 21ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Ձարդագիր՝ հանգուցագիր՝ 37ա (գծանկարային), թուչնագիր՝ 41ա: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, դեղին, մանուշակագոյն, մոխրագոյն, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթերին գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, իւղի, մոմի, թանաքի եւ սնկային հիւանդութեան հետքեր, արտ. լս-ներին անմաքուր ջրի հետքեր. գրադաշտը

տեղ-տեղ աղտոտուած, լուացուած, մանրանկարը (41ա) դրոշմուած հանդիպակաց էջին, թ. 19-29, 31, 42՝ ցեցի անցքեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *19ա-40բ* [Աշխարհացոյց]

ա. *19ա-37ա* [Վարդանայ Արեւելցւոյ Աշխարհացոյց]. [Այս է աշ]խար[հ]ացոյցն կարգաւ ամենայն

Տե՛ս ձեռ. 20, 251ա-7ա: ա/19ա-21ա: բ/21ա-2բ: գ/22բ-31բ (գրչից չառանձնացուած): դ/31բ-7ա (վերջը՝ Հմր 20 ձեռագրի համեմատ յաւելեալ «...ոչ կամեցայ գրել զամենայն: Էրտացոց անապատն ի Հինդիստան է, Սինիֆաթան քաղաքն Յովասափուն է՝ է. տակ պարիսպ ունի, ամէն պարիսպի միջու լանքն ճՌ. (100000) ոտն է, ընդամէնն՝ էճՌ. (700000)»):

Տե՛ս Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, աշխ. Հ. Պէրպէրեանի, Բարիզ, 1960 (ձեռագիրս օգտագործուած չէ):

Ստ. լս-ներում գրչի ձեռով բնագրային համաոստումներ՝ հիմնականում եկեղեցիների, վանքերի, հաղարների անուններ՝ 24ա «Խոր վիրապ», 26ա «Սուրբ Սարգիս», 29ա «Ուրհայ է» եւ այլն:

բ. *37բ* [Անուանի հաղարաց] Այլում տեղոջէ այս բանս կարգաւ ասացեալ եւ սահմանեալ – *Դըւին քաղաք ի Նախչուանայ յարեւմտից կողմ է... Հացունեաց գաւառն է, Բասեն է: Անձեւացոց, որ է Քարապահն:*

գ. *38ա-40ա* Յաղագս է. բաժին աշխարհին, որ իմանաս, թէ որպէ՞ս կամ որչա՞փ են երկայն կամ լայնն, եւ կամ զի՞նչ կերպ մարդիկք բնակեալ են – *Առաջին բաժին աշխարհիս բնակեալ են մարդիկք գիշատեսիլք... եւ այս երկրածինքն, զոր ստեղծեաց Աստուած, եւ փա՛ռք յաւիտեան. ամէն:*

դ. *40բ* [Մղոնաչափ. *տե՛ս ձեռ. 1127, 230բ-1բ*]* – *Ահա կատարեցան ամենայն տիեզերք աշխարհի եւ պատմութիւնք աստուածախօսից... ի յովկիանոս, ծովն ծանօթ:*

– *40բ* Յիշատակարան նախագաղափար օրինակի – *Այս քեզ ընծայ յինէն ի Պորփիւրի ներածութենէն, Գեղգեղիոյ մողանական գրամարտիկոս տառիցն եւ բազմավէտ պատմութենէն պապայ Ազէկսանդրացոց. ո՛ղջ լերուք ի Տէր:*

* Տե՛ս Մ. Խաչատրեան, Հռոմէական աշխարհաարտէզը եւ հայկական մղոնաչափը, Բնագիտութեան եւ տեխնիկայի պատմութիւնը Հայաստանում, Երեւան, 1967, Հմր 4, էջ 111-128 (Նախագաղափար օրինակի յիշատակարանի տարընթերցումների մասին աւելի մանրամասն տե՛ս էջ 121):

Բ. *41ա-4բ* Մեկնութիւն վասն խաչին եւ վասն է. խօսից Տեառն Քրիստոսի – *Եւ գիտելի է, զի Դ. յազգ փայտ էր խաչին... պատառել եւ այտնել խոստովանութեամբ եւ Քրիստոսի փա՛ռք. յաւիտեանս:*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *30ա*՝ սեւով գրութիւն, հետագայում ջնջած «[թ]/// գ///օէ դբ», *41ա*՝ սեւով «Մեկնութիւն վասն խաչին եւ վասն է. խօսից», *43բ*՝ սեւով «բեմք»:


ՁԵՌԱԳԻՐ Գ.

ԵՐՈՒՍԱՂԷՄ ՌՃԻԶ. – 1677

ԳՐԻՉ, ՍՏԱՅՈՂ՝ Սարգիս եպս. Եւդոկիացի:

ԹԵՐԹ՝ 153 (թ. 45-197). չգրուած՝ 45աբ, 178աբ, 190ա-2բ, 197բ: ՊՐԱԿ՝ 2+Ա.-ԺԱ×12 (Ա. 9, ԺԱ. 12+12)*+1-2×6 (1՝ 4): ՆԻԹ՝ թուղթ. լուսագծերով, թ. 45-6, 167-78՝ այլ թուղթ. լուսագծերով, թ. 188-91՝ հաստ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15,5×10,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (11×7): ԳԻՐ՝ նոտրգիր (ամուշ՝ 47ա). խորագիրք՝ կարմիր: ՏՈՂ՝ 19:

* Ծնթ. Բ. պրակի վերջին թերթն ընկած, հետագայում տեղն առանձին թուղթ մուծուած եւ լրացուած բովանդակութիւնը (թ. 67), նոյն ձեռով 1 պրակ թուղթ (12-ական, թ. 167-78) առանձին մուծուած ԺԱ պրակի մէջ (թ. 166-79ի միջեւ), ըստ գրչի ցուցումի՝ պակաս մասերն այլ ձեռագրից ընդօրինակուած-լրացուած:



Նմուշ 47ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ (գծանկարային) – Ձարդագիր՝ հանգուցագիր՝ 180բ: Գոյն՝ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթերին գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, իւղի, մոմի, թանաքի եւ սնկային հիւանդութեան հետեւեր, արտ. լս-ներին անմաքուր ջրի լայն հետեւեր. գրաղաշտը տեղ-տեղ աղտոտուած, գրչափորձերի եւ նկարափորձերի թանաքը արտատպուած հանդիպակաց էջերին, թ. 102 արտ. լս-ը, իսկ թ. 109՝ ստ. լս-ը պատռուած, թ. 141՝ ստ. լս-ը պատռուած-ընկած, թ. 154-70՝ ստ. անկիւնները մկնկեր, մասամբ նորոգուած եւ վերականգնուած, մի շարք թերթեր հետագայում յաւելուած՝ թ. 45, 46, 67, 167-78, 188-91 (ԺԸ. դ., տե՛ս Պրակ):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *46ա-180ա* Նուաստ եւ յետին աշակերտ Մատթէոս եռամեծին Յոհաննու եւ Գրիգորի աշխատասիրացն, արարեալ Հաւաումն բանից Աւետարանին Ղուկասու եւ Քարոզի յոլովի ի վայելումն մանկանց Հայաստանեաց եկեղեցւոյ

Տե՛ս ձեռ. 2519, 4ա-74ա: Յանկ/174բ-7բ (վջ.՝ յաւելեալ. 22. Քսան Բ. ճառ. Տօն Համբարձման... գոցես ի Հարց-

մանց գրքոյ ՃՄԸ. համարն)։ ա/46ա-8ա։ բ/48ա-52բ։ գ/52բ-9ա։ դ/59ա-62բ։ ե/62բ-6ա։ զ/66ա-72բ։ է/72բ-9ա։ ը/79ա-85ա։ թ/85ա-90բ։ ժ/90բ-3ա։ ժա/93ա-7բ։ ժբ/97բ-101բ։ ժգ/101բ-9բ։ ժդ/109բ-16բ։ ժե/116բ-28ա։ ժզ/128ա-35ա։ ժէ/135ա-43բ։ ժը/143բ-9ա։ ժթ/149ա-56ա։ ի/156ա-64ա։ իա/164ա-6բ, 179ա. (վերջնամասը կրկն.՝ էջ 167ա, մուծուած թղթի վրայ, յարմարեցուած նախորդ էջին)։ իբ/167ա-74բ (մուծուած թերթերի վրայ)։ իգ/չիք։ Յիշատակարան հեղինակի/179ա-80ա։*

* Ծնթ. 179ա՝ գրչից «Այս մէջն չէ, Ա. գլխաւոր բան պակաս է, որ վասն Համբարձմանն Տեառն. եւ համբարձեալ զնեռն իւր աւրհնեաց զնոսա եւ եղեւ աւրհնելն նորա մեկնեցաւ ի նոցանէ եւ վերանայր յերկինս։ Ո՛վ եղբարք, օրինակն էր այսպէս պակաս, եթէ կամի[ս] զՔարոզգիրքն տե՛ս (աւելի ուշ ձեռագրի նշուած պակաս մասի համար թ. 166-79ի միջեւ մուծուած առանձին թերթեր՝ 167-78, վրան ընդօրինակուած-լրացուած բովանդակութիւնը, նոյն ձեռքով առանձին թուղթ մուծուած նաեւ նիւթի թերի սկիզբը լրացնելու նպատակով՝ թ. 45-6, ամբողջ շարադրանքին զուգահեռ առաք. լս-ներում աւելացնողի ձեռքով սրբագրում-յաւելումներ՝ 95բ, 128բ եւ այլուր)»։

Բ. *180բ-9բ* Բանիւ առակաւոր, զոր ասացեալ է Բարուախօսն. Զբարս իւրաքանչիւր անասնոցն ինդել, արտասահմանեալ ունի յինքեան տառս եւ զանազան կերպարանօք նշանակէ զոմանս գերազանցեալ եւ զոմանս ստորանկեալ սանդարամետականացն. եւ է վասն այսոցիկ *(հմմտ. ձեռ. 466, 192բ-204բ)*

ա. *180բ-1բ եկեսցուք ասել վասն առիւծին... եւ ապա բարւոք ասաց Յակոբ՝ կորիւն առիւծու Յուդայ։*

բ. *181բ-2բ Վասն նահատակելոց, որ ոչ հանիցեն զառաքինութիւնն ի գլուխ։ է երէ ինչ ու թուխ փոքրագազան... եւ ի փորձութիւն մտին վասն կանանց։*

գ. *182բ է գազան ինչ ի ծովի, որ կոչի սղոց... որ իբրեւ զալիս ծովու տատանիցին։*

դ. *182բ-3բ է թռչուն ինչ, որ կոչի քարադրոս... վերացաւ ի խաչն եւ գերեաց զգերութիւն։*

ե. *183բ Դաւիթ ասէ. եղէ ես որպէս հաւալասան յանապատի... եւ զջուրն ի լուսաւոր մկրտութիւն եւ թողութիւն ապաշխարութեան։*

Ծնթ. Նոյն սրբագրողի ձեռքով լրացում. «հաւալուսան ի ճեղոյն արիւն ի վերայ ձագուցն տկարանայ, մինչ զի ոչ կարէ կերակրիլ, յոր ձագուց կերակրի պահեսցէ զնա, եւ զայլսն՝ բարձիթողի»։

զ. *183բ-4ա Զբուէ ասեն, թէ զգիշերն խիստ սիրէ... զի ըստ ամենայնի ամենայն եղեւ, զի զամենեսին կեցուցչէ։*

է. *184աբ Դաւիթ ասէ. Նորոգեսցէ որպէս արծուոյ զմանկութիւն քո... եւ զգենուցուս զնորս, զոր ըստ պատկերի Աստուծոյ հաստատեցաւ բարեաւ եւ օգուտ։*

ը. *184բ-5ա Տէր մեր՝ Յիսուս Քրիստոս ասէ. Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ եւ իշխանութիւն ունիմ միուս անգամ՛ եւ հրէայքն ապստամբէին զբանն։ է թռչուն ինչ, որ կոչի փիւնիկս... եւ առաքինասցուք ի հոտ անուշից գործօք մերօք։*

թ. *185ա-6ա Տէր մեր ասէ. եղերուք խորագէտք իբրեւ զօձս... հայրն մեր Ադամ մինչ ի դրախտին էր, չկարաց դիմել սատանայ։*

ժ. *186աբ Սողոմոն ասէ. Ե՛րթ առ մրջիմն։ Բարուախօսն ասէ՝ Գ. բարք են մրջեմանն... որ օտարացուցին զանձինս անասնաբար յամենայն ուսմանց գրոց։*

ժա. *186բ-7ա Եսայի ասէ. Յուշկապարիկ[կ]ք բնակեցեն ի նմա... որպէս ասէ Եսայի. Թէ ապականեն զբարս քաղցունս բանք չարք։*

ժբ. *187աբ է գեռուն ինչ ոզնի անուն, գնդաձեւ կերպարանօք... ճառեաց մեզ զբարս անասնոց աստուածային գիրք։*

ժգ. *187բ-8ա Զաղուեսէ ասէ Բարուախօսն, թէ/// (շար. թափուած, հետագայում առանձին մուծուած թերթերի վրայ սրբագրողի ձեռքով շարունակուած-լրացուած, շղագիր) 188ա Զաղուեսէ ասեն, թէ ամենեւին նենգաւոր է... աղուեսուց որջ գոն եւ թռչնոց՝ որպէս բոյն, եւ որդի մարդոյ ոչ՛՛։*

ժդ. *188աբ Վասն արջոյ. Արջն է անհեթեթ գազան ոմն... զոր թագուցանեն ամօթոյ աղագաւ։*

ժե. *188բ-9ա Պարտի յարաժամ առաջի աչաց մերոց լինիլ երկիւղալի յիշումն եւ մտածումն մահուան... եւ զփառաւորութիւն իւր, որ ի վերայ աշխարհի, ուրախանայ եւ ի տեսանելն զմահն հասարակաց՝ տրտմի։*

ժզ. *189ա է գազան ինչ, որ կոչի վանակրեայ, ի ծովս բնակի... ոչ մտանեն, այսինքն՝ զսուրբսն Աստուծոյ եւ զառաքինիսն, եւ մանուկքն նշանակեն զկամարարսն սատանայի։*

ժէ. *189բ է գազան մի՝ տիտիոն անուն, թշնամի կորաքիլոս գազանին... զչարութիւնս գործել տալով մեռուցանէ։*

ժը. *189բ է ծառ մի ի Հնդիկս, որոյ պտուղն քաղցր է... աղանիքն՝ հաւատացեալքն, օձն՝ սատանայ։*

Գ. *192բ-7ա* [Նախերգամբ. *հմմտ. ձեռ. 266, 96ա-7բ]*

ա. *192բ* Սկիզբն Աւետարանի նախերգացն — *երանելի բնութիւն եւ աննախանձ բարութիւն, սկիզբն կենաց եւ կենդանութեան արարածոց...* բ. *192բ* Նախերգան<ն>ի մարգարէից — *Համայնից եւ անմիջոց բարեկամն Աստուծոյ...։* գ. *192բ-3ա* Նախերգամբ առաքելոց եւ մարգարէից — *Անծախելի շնորհացն Աստուծոյ...։* դ. *193ա* Նախերգամբ առաքելոց — *Փողն բարձրաբարբառ...։* ե. *193աբ* Նախերգամբ Սողովմոնի Բ. — *Մանուկն տիօք, ծերացեալն մտօք... Աստուածեղէն առ հանճարովն լցեալն...։* զ. *193բ* Նախերգամբ Աւետարանի — *երանելին եւ միայն հզօրն...։* է. *193բ-4ա* Նախերգամբ առաքելոցն — *Փողն Տասօնացի՝ բերանն*

Յիսուսի...: ը. *194ա* Նախերգանի եսաեայ – *լցեալն ի շնորհաց...:* թ. *194ա* Նախերգանի մարգարէից – *Գովելին ի գումարս ամենայն մարգարէից...:* ժ. *194աբ* Նախերգանի Յովաննու մարգարէին – *Տէ՛ր, լո՛յս փառաց աշխարհիս...:* ժա. *194բ-5ա* Նախերգանի Սուրբ Հոգոյն – *երրորդութիւն գերակայ... Որ ասէ. Հոգի է Աստուած եւ երկրպագուաց նորա**: ժբ. *195բ* Տէ՛ր, տո՛ւր ինձ լեզու խրատու... *(կրկն.՝ 196բ):* ժգ. *195բ* Արդ, աւրհնեալ եւ բարեբանեալ...: ժդ. *195բ-6ա* [Առաքելոց է այս] – *Անօթին հոգեւորական եւ փողն աստուածային...:* ժե. *196ա* Նախերգանի Մովսէսի մարգարէին – *Հայրն մարգարէից եւ անմիջոց բարեկամն Աստուծոյ...:* ժզ. *196ա* Մ *անստուեր լոյս իմանալի...:* ժէ. *196բ* Տէ՛ր, տո՛ւր ինձ լեզու խրատու... *(նոյնը՝ 195բ):* ժը. *196բ-7ա Մեծ են գործք աստուածային... զբան աւետարանչացն, որ ասէ:*

* Ծնթ. յաջորդիւ հիմնականում անխոռոգիր, ձեռ. 266ի համեմատ յաւելեալ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

180ա Լնդ նմին եւ զիա՝ զՍարգիսս, որ անուամբ միայն եւ ոչ գործով, տաղտկացեալս մեղօք, եպիսկոպոս կոչեցեալս, որ եմ ի նահանգէն Եդեսկիոյ, գծագրեալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի գուռն Սուրբ Փրկչի եւ Կափարիճ վիմի, եւ Տեառն արկեալ բանդի, ի վայելումն անձին իմոյ: Եւ որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսջի՛ք ի մաքրափայլ յաղօթս ձեր զիս եւ զծնօղսն իմ, եւ դուք յիշեալ լիջի՛ք ի Քրիստոսէ՝ Աստուծոյ մերմէ: Արդ, գրեցաւ թվին ՌՃԻԶ. (1677), Յուլիս ի ԻԲ. (22). եղեւ զրաւ բանիս ի հայրապետութեան տեառն* եղիազար *կաթուղիկոսի եւ բանիբուն* Մարտիրոս *վարդապետի:*

* Ծնթ. Սարգիս Եվդոկիացու մասին տե՛ս նաեւ Գ. Տէր-Վարդանեան (ստորագրուած՝ Յու. Վարդանեան), «Պատմութիւն հաղարին Յանտոյ» բանաստղծութեան հեղինակի եւ ժամանակի հարցի շուրջ, Պատմաբանասիրական հանդէս, Երեւան, 1985, Հ՝ 2, էջ 212-225:

197ա Յիշատակարանըն յիր՛ *(հաւանաբար գրուած որպէս յիշատակարանի կաղապար. հմմտ. 192բ-7ա՝ «նախերգանքներ»ից յետոյ, համաբանութեամբ) – Այսուհետեւ դնելով զաւարտ այսմ գործակի, եղիցի ամենաբարութեանն, ամենակալութեանն, ամէնիմաստութեան, ամենազօրութեան, անբովանդակութեան, անշուշտ ճշմարտութեան, անեզր երանութեան, մշտնջենաւորութեան եւ ինքնակամութեանն Աստուծոյ: Աեւմ գոհութիւն ի շնչաւորաց, օրհնութիւն ի յզգայականաց եւ պատիւ ի բանականաց, փառաբանութիւն ի բարձունս երկնի, իշխանութիւն ի ստորեւս երկրի եւ շնորհակալութիւն ի բնակիչս երկաքանչիւրոյն յերիս եւ անվախճան յաւիտեանս յաւիտենից. ամէն, ամէն եւս:*

197ա Ջանիւ հասցես ասէ շնորհաց,
Մի՛ ծոյլ կենար եւ դեգերած,
Մի՛ սիրեր քուն դանդաղանաց,
Մի՛ արթնութիւն քզբաղանաց:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *126բ (ԺՐ. դ., շինծու բոլորգիր) եւ գրեցաւ* Ղազարէս:

2. *192ա (ԺԹ. դ., շղագիր) ի մէկիք* Շահնազարէս *շատ բարով Ռ. (1000) բարի հասցէ քեզ, սիրելի՛ ուստայ* Քօլի, *թէ որ իմանաս Համամիսը:*

ՆՇՈՒՄ՝ *179բ՝ սեւով հեղինակի յիշատակարանի թուականի հաշուարկ «Պխ. 840, 1359, հեղինակ[ի]», 180ա՝ սեւով գրչութեան յիշատակարանի հաշուարկ «ՌՃԻԶ. 1126, 1677, գրիչ ներկայ»:*


ԳՐԶԱՓՈՐՁ՝ *145ա՝ սեւով «գրչափոր[ձ]», 197բ՝ սեւով «ա (բազմիցս)»:*

ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *62ա՝ սեւով բուսական լուսանցազարդ, 79ա սեւով՝ եկեղեցի:*

ՁԵՌԱԳԻՐ Դ.

ԺԷ. դար

ԹԵՐԹ՝ 39 (թ. 198-236). չգրուած՝ 234բ: ՊՐԱԿ՝ 1+Ա-Գ×12 (Ա 11)+3: ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով, թ. 198՝ այլ կապտաւուն թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ «Н»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15,5×10,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (11,5×6,5): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 199ա). խորագիրք՝ կարմիր: ՏՈՂ՝ 21-22:



Նմուշ 199ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ (գծանկարային) – Զարդագիր՝ հանգուցագիր՝ 199ա, 216ա: Գոյն՝ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթերին գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, իւղի, մոմի, թանաքի եւ սնկային հիւանդութեան հետեւեր, մատնահետեւեր, արտ. լս-ներին անմաքուր ջրի հետեւեր. գրադաշտը տեղ-տեղ աղտոտուած, գունափոխուած, գրչափորձի թանաքը արտատպուած հանդիպակաց էջերին, պրականիշերը եզրահատումից վնասուած, թ. 198 (կապտաւուն)՝ հետագայում մուծուած առանձին (ԺԸ. դ.):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *199ա-215բ* [Աւետիսութիւն ժողովրդեան եւ շրջաբերական գրելոյն. *հմմտ. ձեռ. 745, 70ա-99ա*] – *Ի գիւղ*

թեանցն Աստուծոյ եւ ամենայն սրբոց նորա, նաեւ ի յայս անուն վարդապետէ բանի սպասաւոր... եւ զսեղանս բարով իլին աւրհնեալ անուամբ Տեառն անեղին. ամէն։

Բ. *216ա-34ա* Աւրհնութիւն ամենայն աշխարհի — *Այժմ ժամանեալ մեր ի յաւարտ եւ ի կատարումն թարգմանութեան առաջի արկեալ բանիս... ձեր բանատեղն պղտատու, որ տա պտուղ ամէն ժամու. ամէն (լս-ներում՝ 216բ «Աշխար[հ]ի», 216բ «Քրիստոնէից», 217ա «Հայոց», 217բ «Աստուածածնի», 217բ «Խաչի», 218ա «եկեղեցոյ», 219ա «կաթուղիկոսի», 219բ «Թագաւորի», 220ա «Իշխանաց», 220բ «Վարդապետաց», 220բ «Ճգնաւորաց», 221ա «Ընկերաց», 221բ «Քահանայից», 221բ «Քաղաքի»)։*

ՅԱՒԵԼՎԱԴՐՈՒԹԻՒՆ

1. *198աբ (ԺՀ. դ., նոտրգիր)* Գիւտ գրոյ տաւտյն այսպէս առա՛ — *Կա՛լ հանապազ Լե. (35), բայց ի նահանջի տարւոյն ԼՋ. (36), զվերադիրն հռօմայեցւոց ի բաց հա՛ն... ի յԱյբէն յառաջ տո՛ւր, ուր դադարի, գիր է տարւոյն։*

2. *235ա-6բ (ԺԹ. դ., շղագիր)* [Գանձերու գոյն այս է. *հմմտ. ձեռ. 541, 164բ-7բ, 201բ-3բ*]

ա. *235ա* [Տաղ աւետեաց սրբոյ Կուսին. Ջորս վանկի։ Ջորրորդ գոյն *(գոյները գրչից չառանձնացուած)*] — *Անդ, ի խօսել մեծի հրեշտակին, / Ընդ ամէնօրհնեալ երջանիկ Կուսին...* [Հինգերորդ գոյն] *Տեսեալ Կոյսին զարուսեակ Լուսին, / Խոնարհեցաւ յողջոյն հրեշտակին...* [Վեցերորդ գոյն] *Ուրախացի՛ր, Կո՛յս երանուհի, / Ըստ աւետեացքն Գաբրիէլի...* [Եօթներորդ գոյն] *Խիսեալ պարեա՛, դո՛ստեր Սիոնի, / Կաթուղիկէ խորան բերկրալի...* [Ութերորդ գոյն] *Համից խըմ[բ]ից մաքրազարդ կոյսից, / Թագ եւ պարծանք կանանց համայնից, / Պայծառ Արեւ ի կամարն երկնից, / Բոլոր Լուսին եւ այգ արփենից։*

բ. *235բ-6բ* [Գանձ սրբոց թարգմանչացն՝ Սահակայ եւ Մեսրոպայ. երեք վանկի։ Առաջներորդ գոյն *(գոյները գրչից չառանձնացուած)*] — *Բարձրեալ անքննին, / Ինաւից լրութիւն, / Բաւականութիւն...* [Երկրորդ գոյն] *Արարչագործեալ, / Արուեստաւորեալ, / Ճարտարապետեալ...* [Երրորդ գոյն] *Նոյն նըմանական, / Նոր շնորհ գըրական / Որդւոց տըւան...* [Ջորրորդ գոյն] *Քրիստոս մարմնացեալ, / Քարոզ առաքեալ, / Քանոն մեզ եդեալ...* [Ջորրորդ գոյն *(հմմտ.՝ ձեռ. 541, 202աբ)*] *Աստ հոգին շարժեալ, / ԵՒս նոսա ազդեալ, / Հայ գիր օրինեալ... 236ա* [Հինգերորդ գոյն] *Բաբունիք բարիք / Վաթսուն համբակիւք, / երկաթաշըղնչիւք...* [Վեցերորդ գոյն] *Ով հայր Իսահակ, / Որ տեսողանակ, / Որպէս գերունակ...* [Յեօթներորդ գոյն] *Ջարթի՛ր, Տէ՛ր, գթած, / Ջարթի՛ր, ողորմած, / Յազգս տառապած... 236բ* [Ութերորդ գոյն] *Ի Նաւասարդի, / Ի վերջին օրի, / Իսահակ ծնանի...* [Ինըներորդ գոյն] *Յուցեալ Սագաշէն, / Յանկ Սահակաշէն, / Սուրբ Գրիգորաշէն, / Ցնծա՛ Նորաշէն / Ով կըմբեթաշէն, / Դո՛ւ աստուածաշէն։*

Տե՛ս Մատենագիրք հայոց, ԺԹ. հատոր, Գանձարան, Գիրք Բ., Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 1291։

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *199ա՝ սեւով «ա (բազմիցս)», 202ա՝ սեւով «գաւարարրց», 206բ՝ սեւով «իչ ա գրել», 210ա, 222ա՝ սեւով խզբզոցներ, 215բ՝ սեւով «ա (բազմիցս)»։*


ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *205ա՝ սեւով բուսական լուսանցազարդ։*

ՁԵՌԱԳԻՐ Ե.

ԺԷ. դար

ՍՏԱՅՈՂ՝ Սարգիս վրդ.։

ԹԵՐԹ՝ 37 (թ. 237-73). չգրուած՝ 272բ։ ՊՐԱԿ՝ 1-4×12 (1՝ 6, 3՝ 11, 4՝ 7)+1։ ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15×10,5։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (11,5×7)։ ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 238ա). խորագիրք՝ կարմիր։ ՏՈՂ՝ 21։



Նմուշ 238ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ — Լս-ային՝ Խաչելութիւն (ձախ կողմում՝ Մարիամ Աստուածածին, աջ կողմում՝ Յովհաննէս աւետարանիչ. մակագրութեամբ՝ «ՅՆԹՀ» (Յիսուս Նազովրեցի՝ Թագաւոր Հրէից)՝ 261ա։ Ջարդագիր՝ հանգուցագիր (պարզունակ, գծանկարային), թոչնագիր՝ 261ա։ Գոյներ՝ կարմիր, շագանակագոյն, սեւ։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթերին գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, իւղի, մոմի, թանաքի եւ սնկային հիւանդութեան հետքեր, գրադաշտը տեղ-տեղ աղտոտուած, որոշ թերթերի ստորին եզրեր կտրած-հանուած, թ. 254՝ պատռուածքանցք, թ. 236-7ի միջեւ՝ նախապէս չգրուած 5 թերթ կտրած-հանած։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *237ա-60բ* Շարադրութիւն ականց ի բազում Աստուածաշունչ գրոց

— *237ա* Այս ցանկ է ի Սուրբ Գրոց — *Ա. Վասն երրորդութեան, վասն հաւատոյ... Վասն պատասխանի առնի։*

— *237բ-8ա* [Նախաբան] Շարադրութիւն ականց ի բազում Աստուածաշունչ գրոց — *Արեգակն արդարութեան ի բարձանց ի քեզ տպաւորեալ... եւ զոմն ի խրատս եւ զոմն ի մխիթարանք բանիւքս այսոքիկ եւ կոչէ կարասցուք ապաշխարութիւն։*

ա. *238ա-40բ* Սուրբ Երրորդութեանն — *Մովսէս պատմեաց ասելով. եկայք, արասցուք մարդ ըստ պատ-*

343. *243ա-4ա* Հռոտից ԺԷ. Յովիս ԻԳ. *Փոկասու եւ Մարիամու Մագդաղենացոյն... 243բ ...Մարիամու... 243բ-4ա ...Ստեփանոսի՝ Սիւնաց եպիսկոպոսին...*

344. *244բ-5ա* Հռոտից ԺԸ. Յովիս ԻԴ. *Սրբոհոյն Քրիստինէ... 244բ ...աղախնոյն Աստուծոյ՝ Ողիմպիա...*

345. *245ա* Հռոտից ԺԹ. Յովիս ԻԵ. *Հանգիստ ննջման Աննայի՝ մաւր Աստուածածնին... 245ա ...աղախնոյն Քրիստոսի՝ Եւպրակէ...*

346. *245բ* Հռոտից Ի. եւ Յովիս ԻԶ. *Երմողայոսի քահանայի եւ ընկերացն...*

347. *246աբ* Հռոտից ԻԱ. Յովիս ԻԷ. *Պանտալեւոնի, որ Թարգմանի ամենայն առիւծ...*

348. *246բ-7ա* Հռոտից ԻԲ. Յովիս ԻԸ. *Կալինիկոսի եւ Ապողինոսի... 247ա ...Ապողինոսի...*

349. *247ա* Հռոտից ԻԳ. Յովիս ԻԹ. *Սրբոհոյն Թէոդոտեա եւ որդոց իւրոց...*

350. *247բ* Հռոտից ԻԴ. Յովիս Լ. *Եւտաթէոսի Անկիւրացոյն... 247բ ...Մարթաի՝ մաւր Սիմէոնի...*

351. *247բ-9ա* Հռոտից ԻԵ. Յովիս ԼԱ. *Քահանայիցն Հայոց՝ Սահակա, Յովսեփա, Ղեւոնդի, Մուշաի, Արսենի, Քաջաջա սարկաւագին, Թաթկա, Սամուէլի, Աբրահամու եւ մոգպետին... 248բ-9ա ...կոյս վկային՝ Լուկիա եւ վկային՝ Ռիկսոնի, եւ այլ ընկերացն...*

352. *249ա-50ա* Աւգաւստոս Ա. Հռոտից ԻԶ. *Մակաբաեցոցն եւ Տիտոսի առաքելոյ... 249բ-50ա ...Տիտոսի առաքելոյ եւ եպիսկոպոսին՝ Գորտինոյ քաղաքին...*

353. *250աբ* Հռոտից ԻԷ. Աւգոստոս Բ. *Կինդինոսի քահանայի... 250բ ...վերադարձումն նշխարաց Ստեփանոսի Նախավկային (այսչափ):*

354. *250բ-1բ* Հռոտից ԻԸ. եւ Աւգոստոս Գ. *Վարք Դաղմիատոսի...*

355. *251բ-2ա* Հռոտից ԻԹ. եւ Աւգոստոս Դ. *Սոփեա եւ երիս դստերացն՝ Պիստիսի, Ելպիսի, Ագապիսի, որ է ի մերս՝ յոյս, սէր, իմաստութիւն...*

356. *252բ* [Հռոտից Լ. եւ Աւգոստոս Ե.] *Վարդանա եւ այլ զաւրականացն Հայոց... (վերջը՝ թափուած. «...Ընդ հեծեալ եւ ընդ հե///»):*

Ծնբ. Թ. 252-3ի միջեւ 1 թերթ ընկած:

357. *253ա* [Յաւելեաց Ա. եւ Աւգոստոս Զ. *Պայծառակերպութիւն Քրիստոսի]... (սկ.) ///զկնի Պենտակոստէին, յետ Ծ. (50) աւուրն տաւնէն հայք եւ այլ քրիստոնեայք...*

358. *253աբ* Յաւելեաց Բ. եւ Աւգոստոս Է. *Դեմետրիոսի... (վերջը՝ թափուած. «... եւ զամբութիւն յորդեծնութիւն փոխէր եւ պիղծն Յուլիանոս///»):*

Ծնբ. Թ. 253-4ի միջեւ 1 թերթ ընկած:

359. *254ա* [Յաւելեաց Դ. եւ Աւգոստոս Թ. *Միւռոն քահանայի եւ Մատաթիա առաքելոյ]... (սկ.) /// խոնարհեցոյց զգլուխն եպիսկոպոսն եւ կապեալ բանիւ հալածեաց...*

360. *254աբ* Յաւելեաց Ե. եւ Աւգոստոս Ժ. *Անտոնինոսի...*

361. *254բ* Ահկի Ժ. *Սմբատա Թագաւորին եւ որոց ընդ նմա...*

362. *255ա* Ա*ճկի* Ի*Ը. Տիմոնի առաքելո…*

363. *255աբ* Մ*արեի Ջ. Առաքելոցն Յասոնի եւ Սոսիպատրոսի…*

364. *255բ-6ա* Մ*արեի* Ի*Ա. երկրորդ մահ Ղազարու եւ գիւտն նշխարացն…*

365. 256աբ Մարգաց Թ. Մտաքիոսի՝ Բիւզանդեա եպիսկոպոսին…

366. 256բ Մարգաց ԺՒ. Յովսեփա նոր վկային…

367. 257աբ Մարգաց ԺԷ. Վահանա Գողթնացոյն…

Բ. *259ա-69բ* [Գանձարան]

1. *259ա-62ա* Մ*եծի յայտնութեանն եւ Սուրբ Ջատկին է գանձս* [Բ*արսղի՝ Կեսարու Կապադովկացւոց*] – *Ժողովեալքս ի տաճար փառաց սրբութեան քո,/ Հայցեմք ի քոյին գքթութեանց… երկայնամիտ եւ բազումողորմ Աստուած, / Ողորմեա՛ ց մեզ, Տէ՛ր Աստուած։*

Տե՛ս Մատենագիրք հայոց, ԺԴ. հատոր, Գանձարան, Գիրք Ա., Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 697-700։

2. *262ա-5բ* Ի *մեծի աւուր Այլակերպութեանն Քրիստոսի՝ Աստուծոյ մերո.* Տ*եառն Ներսէսի* [Շ*նորհալւոյ*] ասացեալ *բառոզ (ծայրակապ՝ «*Ն*ԵՐՍԷՍԻ* Ե*ՐԳ»)* – *Ներգործական զաւրութիւն, / Անեղ բնութիւն, / Ի վեր քան զզբան, / Անքակիզբն եւ սկսեալ եւ բղխումն անընդհատ… 264բ … եւ ազատեա՛ զազատեալքս արեամբ քո սուրբ։*

ա. *264բ-5բ* Փ[ոխ] – *Ի բարձունս ամբառնամք զձեռս եւ զմիտս առ մերձդ ամենից… զորոյ ցուցեր այս աւր զտիպ լուսոյ աղաւտ եւ չափաւորապէս ողորմեաց։*

Տե՛ս Մատենագիրք հայոց, ԺԴ. հատոր, Գանձարան, Գիրք Բ., Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 1044-1049։

3. *266ա-9բ* Նո*րին տեառն Ներսէսի* [Շ*նորհալւոյ*] ասացեալ *բառոզ փոխմանն Աստուածածնին (ծայրակապ՝ «*Ն*ԵՐՍԷՍԻ* Ե*ՐԳ»)* – *Նորահրաշ տաւնիս կուսական, / Արփիականացն համաձայնելով դասուց, / Երաժշտական նուէր ներբողից… Ամենայն հաւատացեալոց շնորհել ողորմութիւն յայժմուս եւ յաներեկ աւուրն։*

Տե՛ս Մատենագիրք հայոց, ԺԴ. հատոր, Գանձարան, Գիրք Բ., Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 1118-1123։

Գ. *269բ-79բ* [Ճ*աշոց*]

ա. *269բ-74բ* Կ*անոն ջուր աւրհնել*[*ոյ*] – *Զայն Տեառն ի վերա ջուրց. Ընթերցուած յելից. եւ խաղացոյց Մովսէս զորդիսն Իսրայէղի ի կարմիր ծովէ անտի… եւ եւս միաբան եւ վասն միմեանց զՏէր զանձինս մեր։ Ողորմեաց մեզ Տէր ա/// (շար.)։*

Ծնթ. Թ. 274-5ի միջեւ 1 թերթ ընկած։

բ. *275ա-9բ* [Օ*րհնութիւն ջրոյ, զոր ասացեալ է* տ*եառն* Բ*արսեղի Կեսարացւոյն*]* – *(սկ.) ///ընդովքն սահանաբաց անձրեւաքն չնչեցեր… Դու ի չորից տարերց զաշխարհս յարմարեցեր եւ չորեք եղանակաւք զբովա[ն]դակ զլրումն տարոյն պսակեցեր/// (շար.)։*

* Տե՛ս Ճաշոց, Վաղարշապատ, 1872, էջ 15-17։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽԱԴԱՂԱՓԱՐ ՕՐԻՆԱԿԻ

257բ Թարգմանեցաւ ի յունաց ի մերս ի թուին Հայոց ՃՂ. (731, Վահան Գողթնացու վկայաբանութեան առիթով)։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

3բ Ողորմեա՛ Քրիստոս Աստուած, Կ*ոստանդեա քահանայի՝ ստացողի գրոցս, եւ եղբաւր իւրոյ՝* Թ*որոսի, եւ մեղաւոր գրողիս՝* Սի*ոնի. եւ որ զԱմէնն ասէն (նման՝ 2բ, 4ա, 5ա, 6ա, 10բ, 11բ, 13ա, 14բ, 15բ, 17ա, 18ա, 18բ, 19ա, 19բ, 20բ, 22ա, 23ա, 24ա, 24բ, 26ա, 26բ, 27բ, 29բ, 30բ, 33բ, 35ա, 36ա, 36բ, 37բ, 40ա, 40բ, 41ա, 41բ, 45ա, 46բ, 47ա, 50բ, 51բ, 54բ, 55բ, 58ա, 58բ, 59բ, 61ա, 62ա, 64ա, 65ա, 66ա, 66բ, 69բ, 71ա, 72ա, 73բ, 76ա, 77բ, 78ա, 79ա, 85բ, 87ա, 88բ, 90բ, 92ա, 94ա, 98բ, 99բ, 103բ, 104բ, 108ա, 109ա, 110ա, 113ա, 116ա, 118բ (երկիցս), 119ա, 119բ, 122ա, 123բ, 124ա, 124բ, 125բ, 126ա, 127բ, 130բ, 131բ, 133բ, 134ա, 135բ, 136ա, 137բ, 138բ, 139բ, 142բ, 145ա, 145բ, 146ա, 147բ, 148ա, 148բ, 151ա, 152բ, 154ա, 155ա, 160բ, 161ա, 163բ, 167ա, 168ա, 172ա, 173ա, 175բ, 176ա, 180բ, 181ա, 182բ, 184ա, 185ա, 187բ, 188գ, 189ա, 193բ, 195բ, 199բ, 200բ, 201բ, 203բ, 204ա, 205բ, 209ա, 211բ, 219ա, 222ա, 224ա, 224բ, 225բ, 226բ, 230բ, 232բ, 238ա, 238բ, 240ա, 240բ, 245ա, 249ա, 254ա)։*

12բ Մ վ սուրբ վկայք, բարեխաւսեցէ՛ք առ Տէր վասն մեր (նման՝ 14ա, 14բ, 23բ, 25բ, 28ա, 30բ, 31բ, 32ա, 32բ (երկիցս), 38բ, 42ա, 43բ, 45բ, 48ա, 49բ, 50ա, 51բ, 52բ, 53ա, 54ա, 55ա, 56բ, 63ա, 65բ, 67ա, 68ա, 69ա, 70բ, 73ա, 74ա, 74բ, 76բ, 77ա, 80ա, 81ա, 82բ, 83ա, 84ա, 86ա, 87ա, 89ա, 90ա, 92բ, 93բ, 95բ, 96ա, 96բ, 97բ, 99ա, 100բ, 101ա, 102ա, 105ա, 106ա, 107ա, 107բ, 108բ, 109բ, 110բ, 111բ, 112բ, 113բ, 114բ, 115ա, 115բ, 117ա, 118ա, 119բ, 120ա, 120բ, 121ա, 121բ, 126բ, 129բ, 130ա, 132ա, 133ա, 136բ, 137բ, 138ա, 138բ, 140ա, 141ա, 141բ, 143ա, 143բ, 144ա, 144բ, 147բ, 149բ, 150ա, 150բ, 152ա, 153ա, 154բ, 155բ, 156բ, 157ա, 158ա, 159բ, 162ա, 162բ, 164ա, 164բ, 168բ, 169բ (երկիցս), 170ա, 176բ, 178ա, 179ա, 181բ, 183ա, 186բ, 190ա, 191բ, 196ա, 197ա, 197բ, 200ա, 201բ, 202բ, 206ա, 207բ, 212ա, 212բ, 213ա, 215ա, 216ա, 217բ, 220ա, 228ա, 242բ, 244ա, 245բ, 250բ, 252ա)։

171ա Ջ*Կոստ*[*ընդին*] *քահանայ եւ զեղբայրն իւր՝* Թ*որոս, եւ զմեղաւոր գրողս՝* Սի*ոն, եւ զծնողսն մեր յիշեցէ՛ք ի Քրիստոս Աստուած, որ է օրհնեալ յաւ*[*իտեան*] *(նման՝ 262ա, 265բ, 269բ)։*

258ա Փա՛ռք ամենասուրբ երրորդութեանն՝ արժանաւորին փառաւորելո, հզաւրին, անեղին, անհասին, անճառին, անբաւին, ամենաբարոյն, ամենասուրբ, ամենաւրհնեալ, ամենակարող, ամենաթագաւոր, սուրբ եւ

երկրպագելի երրորդութեանն եւ միոյ Աստուածութեանն՝ ճշմարիտ Հայր ամենակալի եւ Որդո նորա Միածնի եւ աւծելոյ Յիսուսի Քրիստոսի՝ Տեառն մերոյ, եւ Հոգւո նորա Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւ[իտենից]: Յամի եւթն հարիւրերքորդի, վաթսներքորդի, ութերքորդի Թուականութեան Հայոց (1319) գրեցաւ տառս տէրունական աստուածային գանձուցն, որ ունի յինքեան բովանդակեալ զամենայն տաւնս եւ զյիշատակ սուրբ եւ աստուածախաւս մարգարէիցն, եւ զսրբոց առաքելոց, եւ զհայրապետաց, եւ զարեամբ նահատակեալ մարտիրոսաց, եւ զսրբոց կուսանաց, եւ զընտանուր ամենայն սրբոց, որոյ յիշատակողքս եւ տաւնողք |258բ| սոցա աւրհնութեամբ եղիցին ի Քրիստոսէ՝ Աստուծոյ մերոյ:

Արդ, գրեցաւ սա ի խնդրոյ աստուածասէր եւ տաւնասէր կրաւնաւոր քահանային՝ Կոստանդեա՝ *ի յիշատակ իւր եւ եղբաւր իւրոյ՝* Թորոսի, *եւ ծնաւղաց իւրոց, քանզի յոյժ փափագէր հասանել ի զրաւ սորա՝ վասն առաւել տաւնելո եւ յիշատակ առնելոյ սուրբ վկայիցն, որո բարեխաւսութեամբ սոցա եւ աղաչանաւք* Սուրբ Աստուածածնին *եւ անբարբառ բարեխաւսին՝* Սուրբ Խաչին, *եւ երկնային զաւրութեանցն՝ սուրբ հրեշտակապետացն՝* Միխայէլի եւ Գաբրիէլի, *եւ սուրբ ճգնաւորացն, Քրիստոս Աստուած, ողորմեա՛ ստացողի գրոցս՝* Կոստընդին *քահանայի եւ եղբաւր իւրոյ՝* Թորոսի, *եւ ծնողաց իւրոց, եւ ամենայն զարմից: Յիշեսջի՛ք եւ զհոգեւոր որդին իւր՝* գՊետրոս: *Եւս առաւել աղաչեմ զհանդիպողքս եւ զընթերցողդ, եւ զլսաւղդ, որ աւգտիք ի սուրբ գրոցս, յիշեսջի՛ք սրտի մտա|259ա|ւք եւ Աստուած ողորմի խնդրեցէ՛ք ի բարերարէն Աստուծոյ՝ Յիսուսէ Քրիստոսէ ինձ՝ անարժանիս եւ բազմամեղիս, փծուն եւ ախմար գրողիս՝* Սիոնի *եւ եղբաւր իմոյ՝* Սիմէոնի՝ *կազմողի գրոցս: Եւ որ մեզ ի բարին յիշէ եւ Աստուած ողորմի ասէ յաւժար կամաւք՝ մեզ եւ մեր ծնաւղացն, նա Քրիստոս Աստուած յիւր միւսանգամ գալուստին իւր եւ իւր ննջելոցն (այսպէս) ողորմութիւն եւ թողութիւն շնորհեսցէ. ամէն:*

Տե՛ս ԺԴ. դ. յիշ-ք, էջ 160-161, Հմր 201 (կրճատումներով), նաեւ ԺԴ. դ. յիշ-ք, Ա. (2018), էջ 384-385, Հմր 343:

ՆՇՈՒՄ՝ *Պհպ. Ա.՝ կապոյտով «Հմր 3658», 1ա՝ մատիտով «Հմր 3658, Քարոզագիր[ք]», 258ա՝ շագանակագոյնով «ՁԿՔ. (1319, գրչութեան Թուականը)»:*


ԳՐՁԱՓՈՐՁ՝ *151բ՝ սեւով «այայայ ա, յաւուրս, յաւուրս, յայնոսիկ», 152բ՝ սեւով «ասէ (երկիցս)»:*

ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *66բ՝ Ղուկաս աւետարանիչ (մակագրութեամբ՝ «Ղուկաս աւետարանիչն է յայնմն իմանալիի»), 184բ՝* Բատ *եւ* Պեղակէոս *սուրբք:*

3659
ՄԱՇՏՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ


ԺՔ. դար

ԹԵՐԹ՝ 103 (գրչի էջակալում՝ 1-207, որ է՝ 1ա-103ա). չգրուած՝ 1բ, 99բ-103ա: **ՊՐԱԿ՝** Ա-ԺԳ×8 (ԺԳ 7): **ՆԻՒԹ՝** թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմներով՝ ուղղանկիւն զարդաշրջանակի մէջ՝ «Р Ф»: **ՄԵԾՈՒԹԻՒՆ՝** 16×10: **ԳՐՈՒԹԻՒՆ՝** միասիւն, կարմրով սահմանագծուած (11,5×6,5). ունի յիշագրեր: **ԳԻՐ՝** նոտրգիր (նմուշ՝ 24ա). խորագիրք՝ կարմիր: **ՏՈՂ՝** 16: **ԿԱՋՄ՝** բաց շագանակագոյն դրոշմազարդ կաշի. միջուկը՝ տախտակ. աստառը՝ տպագիր թուղթ (Ա. փեղկ. տե՛ս Պտոկ-պհպ.), սպիտակ թուղթ (Բ. փեղկ, որպէս կազմաստառ ամրացուած ձեռագրի 103րդ թերթը). լուսանցակողերը՝ կարմիր:



Նմուշ 24ա

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Գիրք ժողովածոյ՛ (տպագիր)*: 1 (Ա. փեղկի կազմաստառ)՝ ստացուած մէկ թերթի ընդերկայնակի եւ ընդլայնակի եզրահատումներով (բնագիրը կտրած): Թուղթ 14,5×10 (տուելաները պահպանուած մասինն են). երկսիւն (13,5×8,5. նմուշ՝ Ա. փեղկի կազմաստառ). տող՝ 31: Կարդալ. Ա. փեղկի կազմաստառ՝ «///ի երկնի եւ երկրի /// իննիով զանէնս /// եւ ամենայն դատերաց... բայց գոր/// Սուրբ Հոգւոյն եւ ///լի եւ հրաշալի ծննդ/// իտ որդիին Հօրն հաւա/// («ւա»-ն՝ յիշագիր). 2րդ սիւնակում՝ բնաբան «Աւրար ընդ իս մեծամեծս ևզօրն եւ սուրբ է անուն նորա»:



Ա. փեղկի կազմաստառ

* Հմմտ. Անանիա Սանահնեցի, Գիրք կոչեցեալ ժողովածու, յորում նախ ճառք զնախկին ծնողաց մերոց՝ զԱդամայ եւ զեւայէ, եւ հետեւապէս զայլոց նախահարցն սրբոց, Կ. Պոլիս, 1793, էջ 346:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին ֆերծուած, մաշուած, տեղ-տեղ թափուած, վրան զանազան հետքեր. Ա. փեղկի կազմաստառ-տպագիր թուղթը խոնաւութիւնից գունափոխուած, վրան սնկային հիւանդութեան բազմաթիւ հետքեր, Բ. փեղկին որպէս աստառ փակցուած ձեռագրի 103րդ թերթը, խոնաւութիւնից եզրերը դեղնած. լուսանցակողերի կարմիրը թեթեւակի թափուած, մասամբ սեւացած. թերթերին գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, իւղի եւ սնկային հիւանդու-

թեան հետեր, սկզբի որոշ էջերի գրադաշտը թեթեւակի գունափոխուած, 83բ՝ սեւ թանաքի հետեր, թ. 100՝ հիմիից անջատ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *2ա-99ա* [Մաշտոց հայրապետական]

– *2աբ* Այս են նիւթք եւ պէտք սրբալոյս Մեռոնին – *Պալասանի փայտու հունդ, խասապ տրիրէ՝ թուխ Ա. ...*

1. *3ա-43ա* Կանոն օրհնութեան սրբոյ Մեռոնին. այսպէս արասցեն – *Յաւուր Մեծի հինգշաբաթոջն՝ ի ժամ սուրբ պատարագին զսուրբ Մեռոնն թափեն...*

43ա գրչից՝ կարմրով «Վէրջ մեռոնօրհնէք տեառակիս»:

2. *44ա-99ա* [Կանոն եպիսկոպոս ձեռնադրելոյ] *(հետագայի յաւելում Մեսրոպ Սմբատեանցի ձեռքով «Կանոն ձեռնադրութեան»)*

– *44ա-9բ* Հարցանէ եպիսկոպոսապետն եւ ասէ – *[Ո]՞ւնի զգաւանութիւն խոստովանութեան ուղղափառ հաւատոյ ի Սուրբ Երրորդութիւնն...*

ա. *50ա-99ա* Կանոն եպիսկոպոս ձեռնադրելոյ – *Յորժամ հանդերձեալ լինին եպիսկոպոսացուցանել զոք... ի վերայ բազմաց կացուցից զքեզ, մո՛ւտ յուրախութիւն Տեառն քոյ/// (չշարունակած)։*

Կանոնների խորագրերը ստ. լս-ներում նշուած:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *43բ (ԺԹ. դ., շղագիր) Զմիաբանս* Ս[ուրբ] էջմիածնի զմեռովք *եպիսկոպոս* Սմբատեանցս Նախիջեւանցի, *որ պաշտօնական գործով՝ հրամանաւ տ[եառն] տ[եառն] Գէորգ Դ. կաթողիկոսի Ամենայն Հայոց, պատահեցայ աստ՝ ի վանս* Գանձասարայ, *եւ տեսանելով զվանահայր տէր զՅակովբ վարդապետն* Նորատունկեանց Ախլցխացի *յանմխիթար միայնութեան՝ անցեալ գնացի։*


ՆՇՈՒՄ՝ *Մէջքին սոսնձած թղթին՝ «Մա[շտո]ց ///», 1ա՝ սեւով «Մաշտոց, Հմր 3659, նօտրագիր։ Զունի թուական եւ գրչի անուն։ 1. Կանոն Մեռոնի օրհնութեան, սկզբում ունի Մեռոնի նիւթեր։ 2. Կանոն եպիսկոպոս ձեռ[ն]ադրելոյ (2 տող՝ վրան չնջագծեր)։ 1912, 28 Դեկտ[եմբեր], ի Մ[ուրբ] էջմիածին», «ԺԴ. [դ.],* Մ[եսրոպ] *եպ[իսկոպոս]»։*

3660
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

ԺԷ. դար

ԳՐԻՉ՝ Ֆոյր Հոիփսիմէ:

ԹԵՐԹ՝ 211: ՊՐԱԿ՝ Չ-ԻԳ×12 (ԺԲ 11, ԺԷ, ԻԱ. 10): ՆԻՒԹ՝ մագաղաթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 12,5×9,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, կարմրով սահմանագծուած (8,5×5,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 114ա). խորագիրք՝ կարմիր: ՏՈՂ՝ 17: ԿԱՉՄ՝ կանաչ մոմլաթ, մէջբը՝ սեւ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ ծաղկաթուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա.Բ+Գ՝ ծաղկաթուղթ, մասն կազմաստառի (Ա, Գ), սպիտակ չգրուած թուղթ (Բ):



Նմուշ 114ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Լս-այիւ՝ Աննա՝ մայր Սամուէլի մարգարէի՝ 74բ, եզեկիայ թագաւոր՝ 147բ: Ճակատազարդ՝ 8ա, 46ա, 78բ, 116ա, 149բ, 183բ: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն, յուշկապարիկ՝ 3ա, 37ա, 113բ, 181ա: Զարդագիր՝ հանգուցագիր, թռչնագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, վարդագոյն, դարչնագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի մոմլաթը թեթեւակի մաշուած, ֆեռծուած, մասամբ գունաթափուած եւ աղտոտուած, մէջի կաշին տեղ-տեղ ֆեռծուած, Ա. եւ Բ. փեղկերի կազմաստառների եւ պիսպ. Ա֊ա եւ Գբ-ի ծաղկաթուղթը մաշուած, գոյները խոնաւութիւնից տարրալուծուած. լուսանցակողերը աղտից սեւացած. թերթերին խոնաւութեան եւ գործածութեան հետեւանքով զանազան բծեր, մոմի, իւղի, սեւ թանաքի եւ սնկային հիւանդութեան հետեր, գրադաշտը խոնաւութիւնից գունափոխուած, տեղ-տեղ աղտոտուած, մանրանկարները խոնաւութիւնից մասամբ գունափոխուած, լուացուած, եղծուած, գոյները յաճախ դրոշմուած հանդիպակաց էջերին. ձեռագրի սկիզբը եւ վերջը թերի՝ Ա-ե պրակներն ընկած, թ. 81-2ի միջեւ՝ հաւանաբար սխալ գրուած մէկ թերթ կտրած-հանած (բնագրի պակաս չկայ), թ. 1՝ վերին եւ ստորին անկիւնները պատռուած-ընկած, թ. 5՝ ստորին անկիւնը պատռուած-ընկած, թ. 9-12՝ ստ. լս-ներից որոշ մասեր չորութիւնից փշրուած, թ. 45, 118, 138, 176, 198՝ բնական անցքեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-211բ* [Սաղմոսարան]

Տե՛ս ձեռ. 1642, 1ա-239ա: 1/չիք: 2/1ա-7բ (սկ.՝ «///ի բացեա առնիր յինէն: Զարթի՛ր եւ հայեա՛ց, Տէ՛ր, յիրաւունս իմ...». [Սղմ. ԼԴ. 22]): ա/3ա-5բ: բ/5բ-7բ: 3/8ա-45բ: ա/40բ-3ա: բ/43ա-4ա: գ/44ա-5բ: 4/46ա-78ա: ա/74բ-6բ: բ/76բ-8ա: 5/78բ-115բ: ա/113բ-5բ: բ/115բ: 6/116ա-49ա: ա/147բ-9ա: բ/149ա: 7/149բ-83ա: ա/181ա-2ա: բ/182ա-3ա: գ/183ա:

8/183բ-211բ: ա/210բ-1բ (վջ.՝ թափուած. «... ելեր դու ի կառս քո հեծելութիւնդ քո փրկութիւն եղեւ յելանելդ քո///»): բ-է/չիք:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

78ա Ո վ երգողք, յիշեցէք զբազմերախտ գհոգեւոր ծնօղն իմ՝ զտէր Առաքելն, եւ գհարազատ քոյրն իմ՝ զՀրիփսիմէն, եւ այլ միաբան քեռքս. ամէն:

149ա Ո, ձեռս փլճի, գիրս մնա,
Ինձ յիշելի արարէք սմա,
Ով որ երգէք զխոստովան կանոնս,
Աղաչեմ վասն սորա:

ՆՇՈՒՄ՝ *Պհպ. Բա՝ սեւով «Խ[աչիկ] վարդապետ, Հմր 4/3660», «ԺԽ. [դար], Մ[եսրոպ] եպ[ի]ս[կոպոս]»:*


Ձեռագիս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Յուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 6, Հմր 4:

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *1ա՝ «16», «սաղմոս ասացէք/// (շար. լուացուած)», 2ա՝ տառեր «աբաբբաաբբեաաագէ», 26ա՝ «չալ գաս», 29ա՝ «Գ/// (անկանոն գծեր)», 35ա՝ «ւ (բազմիցս)», 41բ՝ «զա աբ/// (շար. ջնջուած)», 42ա՝ «իզ ագ/// (շար. ջնջուած)», 47բ՝ «մաօ ւ մա թ ծ», 63բ՝ «վասն բով», 64ա՝ «Իվան», 164բ՝ «ֆգ», 184բ՝ «ֆգց» 185ա՝ «գ», 211բ՝ «Սաղմուս մարտիրոս»:*

3661
ԱՒԵՏԱՐԱՆ

ԺԶ. դար

ԹԵՐԹ՝ 460. չգրուած՝ 101ա, 103ա-4ա, 180բ-1ա, 306ա: ՊՐԱԿ՝ Բ-Լ×16 (Բ 10, Դ 14, Է 17, Իէ 20, Լ 15): ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ ոճաւորուած զինանշան, տակը՝ երեմնուկ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 12×8: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (8×5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմոյշ՝ 57ա). սկզբնատառերը եւ սկզբնատողերը կապոյտով, յաճախ՝ ոսկի: ՏՈՂ՝ 16: ԿԱՋՄ՝ մուգ կապոյտ մոմլաթ (Ի. դար). միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ ծաղկաթուղթ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԴ՝ կապոյտ թուղթ, լուսագծերով՝ վրան սոսնձած կազմաստառի շարունակութիւն-ծաղկաթուղթը՝ Ա, Դ, մասն կազմաստառի, սպիտակ չգրուած թուղթ՝ Բ-Գ:



Նմոյշ 57ա

ՄԱՆՐԱՆԱԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Մարկոս՝ 104բ, Ղուկաս՝ 181բ, Յովհաննէս եւ Պռոխորոն՝ 306բ: Կիսախոռան՝ 105ա, 182ա, 307ա: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն, տաճար՝ 69ա, 73ա, 160ա, 284բ, 314բ, 352բ, 359բ, խաչ՝ 287բ, 367ա, 388ա: Ձարդագիր՝ հանգուցագիր, թռչնագիր, կենդանագիր՝ 182ա: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, վարդագոյն, մանուշակագոյն, շագանակագոյն, սպիտակ, սեւ, ոսկի:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած, սկզբի որոշ թերթեր հիմիւն ամրացուած այլ՝ սպիտակ թղթով, կազմի մոմլաթը թեթեւակի մաշուած, ճեռնուած, մասամբ գունաթափուած եւ աղտոտուած, Ա. եւ Բ. փեղկերի կազմաստառների եւ պիպ. Ա.ա եւ Դբ-ի ծաղկաթուղթը մաշուած, գոյները խոնաւութիւնից տարրալուծուած. լուսանցակողերի կարմիրը մասամբ գունաթափուած, սեւացած. թերթերին խոնաւութեան եւ գործածութեան հետեւանքով զանազան բծեր, մոմի, իւղի եւ թանաքի հետքեր, գրադաշտը տեղ-տեղ աղտոտուած, ձեռագրի գրեթէ բոլոր թերթերի արտաքին եզրերին խոնաւութեան հետքեր, որից արտ. լս-ները տեղ-տեղ մաշուած-թափուած. ձեռագրի սկիզբը եւ վերջը թերի, Ա. պրակը, Բ. պրակի սկզբից եւ վերջից 3ական թերթ ընկած՝ թ. 10-1ի միջեւ ընկած 3, իսկ թ. 26-7ի եւ թ. 40-1ի միջեւ ընկած 1ական թերթ, թ. 1-8 տեղադրած սխալ. կարդալ՝ 1-4, 6-7, 5, 8, թ. 78-9ի միջեւ 1 թ. կտրած-հանած (79ա-ի սխալ տարբերակը), բնագրական պակաս չկայ, 80բ՝ գրուած մէկուկէս տող, սակայն նիւթը անմիջապէս շարունակւում է 81ա-ից, բնագրական պակաս չկայ, թ. 82-3ի միջեւ կտրած թերթերի 2 ելուստ, բնագրական պակաս չկայ, թ. 105՝ պատռուածք-անցք եւ հիմիից մասամբ անջատուած, թ. 142՝ արտ. վր. լս-ը պատռուած-ընկած, թ. 210, 329՝ պատռուածք-անցք, 413ա՝ սեւ թանաքի հետքեր, թ. 140-82՝ ցեցի անցքեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-399բ* [Աւետարան]

1. *1ա-4բ, 6ա-7բ, 5աբ, 8ա-100բ* [Աւետարան Մատթէոսի] *(սկ.) «///սաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան...» (Ա. 1- է. 16 թափուած), թ. 10-1ի միջեւ 3 թ. ընկած՝ 10բ «եւ ահա մատուցեալ բորոտ մի, երկիր պագանէր նմա եւ ասէր///» 11ա «///անցանել ընդ այն ճանապարհ...» (Ղ. 2-28 թափուած), թ. 26-7ի միջեւ 1 թ. ընկած՝ «...եւ ամենայն քաղաք կամ տուն բաժանեալ յանձն///» 27ա «///ցէք բարիս խօսել, որ չարքդ էք...» (ԺԲ. 25-34 թափուած), թ. 40-1ի միջեւ 1 թ. ընկած՝ 40բ «...մեկնեա՛ մեզ զառակս զայս///» 41ա «/// Պատասխանի եւ նմա եւ ասէ...» (ԺԵ. 16-25 թափուած):*

2. *101բ-2բ* Գլուխ: *105ա-77բ* Աւետարան Մարկոսի:

3. *178ա-9բ* Գլուխ: *182ա-305ա* Աւետարան Ղուկասու:

4. *305բ* Գլուխ: *307ա-99բ* Աւետարան Յովհաննու (*398բ-9բ* Իրք կնոջն շնացելոյ):

Բ. *400ա-52բ* [Յայտնութիւն Յովհաննու]

– *400ա-3բ* Դրութիւն գլխոց սրբոյ Յայտնութեանս – *Ա. Յայտնութիւն սրբոյն Յոհաննու աստուածաբանի... ՀԲ. Զի եկեղեցի եւ որ ի նմա Հոգին ընդունի զՔրիստոսի Յայտնութիւնս եւ վասն անիծիցն, որոց յաւելուած ի գիրս մուծանեն:*

1. *404ա-52բ* [Յայտնութիւն Յովհաննու] – *Յայտնութիւն Յիսուսի Քրիստոսի ի ձեռն որոյ... շնորհօք Տեառն Յիսուսի Քրիստոսի ի վերայ ամենայն սրբոց:*

Գ. *452բ-60ա* Հանգիստ երանելոյն Յովհաննու աւետ[արանչին] – *էր ընդ եղբարս երանելին Յովհաննէս... աւանդեց զհոգին ի ձեռն Տեառն, որում փառք յաւիտեանս. ամէն:*

Ստ. լս-ներում գրչից բնագրային յղումներ՝ 10բ «Զ. Վասն բոռոտին», 11բ «ԺԲ. Վասն անդամալուծին» եւ այլուր:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԴՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

460բ Փա՛ռք ամենասուրբ երրորդութեանն եւ մի աստուածութեանն՝ Հօր եւ Որդո եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Զշնորհն բարեբար ողորմութեան Աստուծոյ, որ առ իւր արարածս անհաս իմանամբ ի բանականացս սեռից, մանաւանդ զանցելոյ հրաշիցն ներգործութիւնս, որ առ հարսն մեր կատարեցաւ եւ գներկաիս հիանշմար զեղումն նախախնամող<եաց> գթութեանց Հոգւոյն Սրբոյ, առ ի քաջասնութիւն միանգամայն արարածականացս սեռից, մանաւանդ, զոր առ իմանալի հոգիս արգասաւորաբար համանգամայն ցանկալ տա բարոյ, ոմանց ընդ նու /// (շար.):

ՆՇՈՒՄ՝ *Պհպ. Բա՝ սեւով «Խ[աչիկ] վարդապետ, [Հմր] 9/3661», «ԺՋ. [դար],* Մ[եսրոպ] *եպ[ի]ս[կոպոս]»:*


Ձեռագիս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Ցուցակ ձեռագրաց Դպրեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 8-9, Հմր 9:

3662
ԱԻԵՏԱՐԱՆ

ԷՐԸՆԿԱՆ ԳԻՒՂ (ԱՂԲԱԿ) ՌՃԺԵ. – 1666

ԳՐԻՉ՝ Դաւիթ ֆիյ: ԾԱՂԿՈՂ՝ Սահակ վարպետ: ՍՐԲԱԳՐՈՂ՝ տէր Միհնաս:

ԹԵՐԹ՝ 295. չգրուած՝ 1ա, 2բ-3ա, 4բ-5ա, 6բ-7ա, 8բ-9ա, 10բ-1ա, 12բ-3ա, 14բ-5ա, 16բ-7ա, 18բ-9ա, 20բ-1ա, 22բ-3ա, 24բ-5ա, 26բ-7ա, 230ա, 294բ-5բ: ՊՐԱԿ՝ 1-2×12 (2՝ 14)+Ա-ԻԲ×12 (Ա, 13, Թ, ԻԲ 14): ՆԻՒԹ՝ մագաղաթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 12,5×9,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (8,5×6): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 210ա). սկզբնատառե-



Նմուշ 210ա

րը եւ սկզբնատողերը կապոյտով եւ վարդագոյնով, յաճախ՝ ոսկի: ՏՈՂ՝ 23: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դռնակով եւ զոյգ կապիչներով (Ա. փեղկին 6 արծաթէ խաչ, երկուսը մակագրութեամբ՝ «ՋԱՆԱՂԱՅ», «ՅԱՎԱՆԷՍ», Բ. փեղկին 3 արծաթէ խաչ, երկուսը նոյն մակագրութեամբ՝ «ՓՕՒՅ»). միջուկը՝ տախտակ. աստառը՝ կարմիր կտաւ (դռնակի աստառը դարչնագոյն կտաւ). լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԴ՝ մագաղաթ, չգրուած՝ Աբ, Բբ, Գա-Դբ:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Աւետումն՝ 1բ, Ծնունդ եւ երկրպագութիւն մոգուց՝ 2ա, Ընծայումն տաճարին՝ 3բ, Մկրտութիւն՝ 4ա, Պայծառակերպութիւն՝ 5բ, Յարութիւնն Ղազարու՝ 6ա, Մուտ Յերուսաղէմ՝ 7բ, Ոտնլուայ՝ 8ա, Խաչելութիւն (դժուարընկալելի մակագրութեամբ՝ «A S V ԹԳ [= թագաւոր]». սկիզբը լատինատառ հայերէ՞ն՝ «Աս է թագաւոր»)՝ 9բ, Ողբ առ Քրիստոս՝ 10ա, Աւերումն դժոխոց՝ 11բ, Յարութիւն՝ 12ա, Համբառնումն՝ 13բ, Հոգեգալուստ՝ 14ա, Ազգարարումն երկրորդ գալստեան՝ 15բ, Անեղ դատաստան՝ 16ա: Լսային՝ Ծննդաբանութիւն Քրիստոսի՝ 29բ-30ա, Յովսէփ եւ Մարիամ՝ 30բ, մարգարէ (ծաղկաբոյլի մէջ)՝ 31ա, Տեսիլն Յովսեփայ՝ 32ա, Յովհաննէս Մկրտիչ՝ 33ա, 232բ, Լեռան քարոզ՝ 36ա, 64բ, 103ա, 108ա, Քրիստոսի ուսուցանէ՝ 36բ, 55ա, 56բ, 59ա, 63ա, 73ա, 82ա, 115բ, 127բ, 133ա, 135ա, 173բ, 185ա, 214բ, 254բ, Քրիստոս եւ դպիր՝ 44բ, Կոչումն Մատթէոսի՝ 46ա, Բժշկումն Յայրոսի դստեր՝ 47ա, Բժշկումն կուրաց՝ 47բ, 76ա, Առաքումն աշակերտաց՝ 49ա, 179ա, Գոհութիւն առ երկնաւոր Հայր՝ 52բ, Բժշկումն դիւահարի՝ 54ա, 163բ, Քրիստոս եւ կինն քանանացի՝ 64ա, Բժշկումն լուսնոտի՝ 68ա, Անպտուղ թզենի՝ 77բ, 132ա, Մարիամ Մագդաղենացի՝ 100ա, Քրիստոս եւ Յայրոս՝ 113բ, 114ա, Քրիստոս եւ առաքեալք՝ 117ա, Քրիստոս եւ փարիսեցիք՝ 119ա, Բժշկումն խուլի եւ համրի՝ 121ա, Աւհնութիւն մանկանց՝ 128ա, 207բ, Քրիստոս եւ Պետրոս՝

129ա, Ոդիբ ոռոտման՝ 129բ, Բժշկումն Բարտիմէոս կուրի՝ 130բ, Յովսէփ Արիմաթացի՝ 147բ, 225բ, 285բ, Աւետումն՝ 152բ-3ա, Հանդիպում Եղիսաբեթի եւ Մարեմայ՝ 153բ, Բարի հովիւ՝ 156ա, Բժշկումն բորոտի՝ 165բ, Բժշկումն անդամալուծի՝ 166ա, Կոչումն Մատթէոսի՝ 166բ, Լերան աղօթք՝ 168բ, Սաստումն հողմոյն՝ 176ա, Բժշկումն համեր՝ 187բ, Բժշկումն ջրգողեալ առն՝ 197ա, Քրիստոս ուսուցանէ՝ 251ա, Բժշկումն երիխովի կուրի՝ 209ա, Կոչումն աշակերտաց՝ 233բ, Հարսանիք ի Կանայ՝ 234բ, Մովսէս բարձրացոյց զօձն յանապատի՝ 237ա, Սուրբ Հոգի՝ 240ա, Բժշկումն ի ծնէ կուրի՝ 257ա, Ելանելն ի Գողգոթայ՝ 284ա: Մատթէոս՝ 28բ, Մարկոս՝ 101բ, Ղուկաս՝ 150բ, Յովհաննէս՝ 230բ, Եւսեբիոս՝ 17բ, Կարպիանոս՝ 18ա: Խորան՝ 17բ, 18ա, 19բ, 20ա, 21բ, 22ա, 23բ, 24ա, 25բ, 26ա: Կիսախորան՝ 29ա, 102ա, 151ա, 231ա: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն, տաճար՝ 84բ, 137ա, 215բ, 261ա: Ջարդագիր՝ հանգուցագիր, թռչնագիր, կենդանագիր, մարդագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, նարնջի, վարդագոյն, շագանակագոյն, երկնագոյն, դարչնագոյն, մոխրագոյն, սպիտակ, սեւ, ոսկի:

Տե՛ս Ա. Գէորգեան, Հայ մանրանկարիչներ. մատենագիտութիւն Թ-ԺԹ. դդ., Գահիրէ, 1998, էջ 639, Հ՟ 394 (ձեռագրի նախկին էջահամարներով):

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին թեթեւակի վնասուած՝ ճեռնուած, խոնաւութիւնից Ա. փեղկի կաշին տեղ-տեղ ձեւափոխուած, դռնակի կաշին թեթեւակի կծկուած, կազմաստառները մաշուած, գունաթափուած, աղտոտուած, դռնակի դարչնագոյն աստառը սեւացած, կապիչներից մէկը եւ փականներից երկուսն ընկած. լուսանցակողերի կարմիրը մասամբ գունաթափ, սեւացած. պհպ. Ա֊ա եւ Դբ՝ խաչերի գամերի հիմերից վնասուած. թերթերին խոնաւութեան եւ գործածութեան հետեւանքով զանազան բծեր, մոմի, իւղի եւ թանաքի հետքեր, գրադաշտը տեղ-տեղ աղտոտուած, ձեռագրի սկզբի եւ վերջի որոշ էջերի արտաքին եզրերին եւ բոլոր թերթերի վերին մէկ բաւորդ մասի վրայ առկայ են խոնաւութեան հետքեր, թերթերը խոնաւութիւնից թեթեւակի ձեւափոխուած, թ. 77, 239՝ պատռուածք-անցք, թ 114, 156, 166, 268՝ բնական անցքեր. մանրանկարները գունափոխուած, ներկերը դրոշմուած հանդիպակաց էջերին. միմեանց հետ մանրանկարների շփումը բացառելու նպատակով թ. 1-26ի բոլոր զոյգերի եւ 28-9ի, 101-2ի, 150-1ի, 230-1ի միջեւ մուծուած են լուսագծերով թղթէ թերթեր, որոնք նախկինում համարակալուած են եղել եւ որի պատճառով Համառօտ ցուցակում (Ա., էջ 1060) թերթաքանակը համարուած է 314, ուստի եւ յիշատակարանների էջահամարները տարբեր են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *17բ-8ա* Թուղթ Եւսեբեայ:

2. *19բ-20ա, 21բ-2ա, 23բ-4ա, 25բ-6ա* Համաբարբառ՝ կանոնք Ա-Ժ. *(նաեւ առ. լս.՝ Յուացանկ)*:

3. *29ա-101ա* Աւետարան Մատթէոսի:

4. *150ա* Նախադրութիւն: *102ա-50ա* Աւետարան Մարկոսի *(149աբ* Յաւուցեալ Յիսուս*)*:

5. *229բ* Նախադրութիւն: *151ա-229բ* Աւետարան Ղուկասու:

6. *291ա* Նախադրութիւն: *231ա-90բ* Աւետարան Յովհաննու:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

291ա Փա՛ռք անքակզբանն եւ սկիզբն ամենայնի, անեղ էին եւ գոյացուցչին բնաւից, անվախճան եւ անսահման էացուցչին, սահմանիչ եւ կատարումն բոլոր էիցս, էիցս միակին, եզակի եւ միում աստուածութեանն, որ անշարժ գոլով՝ շարժէ զարարածս ի կեանս եւ ի փրկութիւն, էից էակն եւ կենդանեաց կեանքն, որ անփոփոխ գոլով միշտ յէութեան՝ անեզր եւ անվայրափակ, լրումն |291բ| եւ բովանդակիչ ամենայնի, եւ յամենայնս է եւ յամենայնէ անհաս է՝ որպէս ի մասունս եւ ի բոլորս, եւ ինքն ոչ մասն եւ ոչ բոլոր, որպէս թէ զմասն եւ զբոլորն զամենայն ինքն ունի եւ կրէ զամենայն արարածս բանիւ զօրութեան իւրոյ: Գերալիր գոլով՝ լնու զամենայն եւ անհաս է յամենայնէ, որում բան եւ իմաստութիւն եւ լեզու տուեալ բոլոր էիցս, ի բոլորիցս հանցուք աւրհնութիւն եւ փառս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: [Ի]սկ ի չորից աւետարանչացն խորհուրդ բազմօրինակ իմն ցուցմամբ տեսանի, զի ոմանք ասեն, թէ չորից աւետարանչացն են չորք անկիւնք արարածոց՝ արեւելք, արեւմուտք, հիւսիս, հարաւ, պարտ էր համապիւռ քարոզել զԱւետարանն: [Ի]սկ ոմանց հաճոյ թուեցաւ ըստ չորից մշտա|292ա|հոյս գեղոցն յադենական աղբերէն յառաջ խաղացեալ առ՝ ի տիեզերաց ոռոգումն՝ Փիսոն, Գեհոն, Տիգրիս եւ Եփրատէս: Եւ սոցա գոլով նմանապէս թուով ուռճացեալք՝ ի կենդանական աղբերէն ոռոգանել զպաքեալ միտս մարդկային բնութեանս: Նոյն օրինակ, ըստ տեսութեանն եզեկիէլի քառակերպեան աթոռոյ՝ մարդ, առիւծ, եզն, արծիւ, զանմարմնոցն Տէր տեսանելով՝ բազմեալ ի փառացն աթոռ իմանալի ցուցմամբ, զինամս բոլոր բնութեանս զակնարկումն, որ աստուածապէս եւ տիրաբար բերմամբ նշանակէ զլինելն առ ի հողածինս, հոգեղինացն անմահից զմահկանացուս ընդունել հաղորդս: Եւս ի գերակատարն հանել ի փառս, վասն զի փառաց թագաւորն Քրիստոս՝ փառակիցն Հօր եւ Հոգւոյն Սրբոյ, զմերս առեալ բնութիւն, |292բ| ըստ ինքեան միացոյց աստուածութեանն՝ ուսուցանելով մի Որդի դաւանել, որ յԱստուծոյ Հօրէ եւ որ ի Մարիամայ՝ սրբոյ կուսէ, անճա-

ռելի միաւորութեամբ, զոր Աւետարանս ուսուցանեն բանք մինչ ի կատարած հաւանութեամբ, հաւատահասատատ կարգօք ի նոյն յարելով յառաքելաւանդ քարոզութիւն, որ զաստուածախօսն վարդապետութիւնն դրոշմեալ զսակաւս առ ի բազմացն՝ առ ի հաւատալ, եթէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ: Ըստ վերին Յովհաննու հաւատալ եւ զկեանսն յաւիտենականս ընդունել յանուն նորա:

Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ մեղսամած եւ սուտանուն Դաւիթ քահանայի, որ անունս եւ գործովս ուրացեալ ի կարգէ, սկսա եւ ողորմութեամբ նորին աւարտ հանի եւ եռու ոսկով եւ զանազան գունով զարդարել՝ յիշատակ ինձ եւ ամենայն արեան մերձաւորաց իմոց |293ա| եւ ծնօղացն իմոց <իմոց>՝ Ստեփանոս *եւ* Եթարին, *եւ հօրեղբօրն իմոյ՝* Փիլիպոս *կաթողիկոսին,* Հայրապետին, Զաքարին, Ներսէսին *եւ կողակցուն՝* Անին, *եւ որդոցն՝ տէր* Մելքեսեդին, *կողակցուն՝* Զիչաֆին, *եւ որդոցն՝* Խաչատուրին, Աստուածատուրին, Յակոբին *եւ* Մովսէսին, Գրիգորին *եւ կողակցուն՝* Աղաբէգուն, *որդոցն՝* Անտոնին *եւ* Ատոմին, Զաքարին, *կողակցուն՝* Խանաղին, *եւ որդոց՝* Եղիային *եւ* Ներսէսին, *եւ եղբօրն իմում՝* Յովսեփին *եւ կողակցուն՝* Խանզադին, *որդոցն՝* Սարգսին *եւ* Ստեփանոսին, *եւ մեծ պապուն՝* Խալիֆին, *եւ որդւոցն՝ տէր* Աստուածատրին, Բաղդասարին, Մելքեսեդին, Գրիգորին *եւ ամենայն արեան մերձաւորաց իմոց՝ կենդանեաւն եւ հանգուցելոց, եւ որք զՈղորմին ասէ, Աստուածն իւր ողորմեսցի իւր միւսանգամ գալստեանն. ամէն: Դարձեալ յերեսս անկեալ աղաչեմ, ո՛վ սուրբ ընթերցողք եւ լսողք, յիշեցէ՛ք ի սուրբ յաղօթս ձեր Դաւիթ գրիչս եւ զծնօղս իմ եւ կողակիցն իմ՝* զՍալւարն, *եւ զորդիսն իմ՝* զՓիլիպոսն՝ *փոխե|293բ|ցեալն ի Քրիստոս դառն մահուամբ,* Գորգն *եւ փոքր* Փիլիպոսն, *եւ դստերքն իմ՝* Գուհարն *եւ* Եթարն *եւ մի Ողորմայի արժան արարէ՛ք, եւ ձեզ լիցի ողորմութիւն ի Քրիստոսէ: Ի թվականիս Հայոց Ռճժե. (1666) ամին, ի դառն եւ նեղ ժամանակիս, ի յերկ<ր>իրս* Աղբագու՝ *ի գուղն* Էրընկանի՝ *ի դուռն* Սուրբ Ստեփանոսին, *առաջնորդութեան* Սուրբ Աթոռոյս *մերոյ* Բարթողիմէոս *եսայեայ վարդապետին, տեղապահութեան երկրիս մերոյ* Էզդինշէրին *եւ* Խօսրով *փաշին: Դարձեալ յիշեցէ՛ք ի Քրիստոս* Էրընկանու *քահանայքն՝ տէր* Մելքեսեթն, *տէր* Վարդան, *եւ սարկաւագներն՝* Մուրատ, Խղաթն, Սահակն *եւ* Ատոմն, *ծաղկող սուրբ Աւետարանիս՝* զՍահակ *վարպետն, եւ սրբագրող սուրբ Աւետարանիս՝ տէր* Մինաս *կրօնաւորն, որ աշխատեցաւ ի սրբագրելն, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն: Հայր մեր, որ յերկինս՛՛:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *294ա (ժէ. դ., բոլորգիր) Դարձեալ յիշեցէ՛ք եւ Աստուած ողորմի ասացէ՛ք զբարեպաշտ եւ աստուածասէր, գորովաբան եւ հեզահոգի տէր* Գէվորգն *եւ զորդին իւր՝* զՄելքէսեթն, *եւ մայրն իւր՝* զԲախչագուլն, *եւ կողակիցն իւր՝* Աղասին, *եւ զո[ր]դիքն իւր՝* Գէվորճն *եւ* Փանոսն, *եւս զխոչեմամիտ եւ սրբասնունդ տէր* Փիլիպոսն *եւ կողակիցն իւր՝* զԽանումն, *եւ զորդեակն իւր՝* զԽաչօն, *եւ դստերքն իւր՝* զԻմաթն *եւ* զՄարեամն, *եւ ամենեցուն հայր եւ վարպետ՝* Մեսրոպն, *եւ զորդին՝* Դաւիթն, *եւ կողակիցն իւր՝* Թուրվանդէն, *եւ ամենայն արեանառու մերձաւորացն, որ զՈղորմի ասէ. ամէն:*

2. *27բ (1867 թ., շղագիր) 1867 ամի Հոգաեմբեր մէկին: Յիշատակ է այս Աւետարան, որ եռու տէր* Պետրոսին Տէր-Պետրոսեան *ես՝ մահտեսի* Յակօբ, *եւ իւր կողակից |28ա|* Սօնաին, *իւր որդուննն՝* Վարդանին, *որ անգնգիմ յիշատակ իմ կամաւ, ոչ ոք ձեռնամուխ չի լինի, որ կարդացէ՝ մեզ յիշեսցէ. ամէն:*

ՆՇՈՒՄ՝ *Պհպ. Ա՝ կարմրով, վրան չնջագիծ «Հմր 11», պհպ. Ա՝ սեւով «Ռճժե. Մ[եսրոպ] եպ[ի]ս[կոպոս]», պհպ. Բ՝ սեւով «Խ[աչիկ] վարդապետ, [Հմր] 11/3662»:*


Ձեռագիրս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Յուցակ ձեռագրաց Դպրեան Խաչիկ վարդապետի, ժողված 1878-1898, մասն Ա.., Վաղարշապատ, 1898, էջ 9-10, Հմր 11 (էջ 10՝ յիշատակարանների հատուածներ):

3663
ՄԱՆՐՈՒՄՈՒՆՔ


ԹՈՒԽԱԹ (Ա.) ՌԿէ. – 1618 (Ա.), ՌՃԿ. – 1711 (Բ.)

ԳՐԻՉ՝ Գրիգոր երէց Բաղիշեցի (Ա.՝ թ. 1-100, 124-48), Զաքարիա ֆիլ (Բ.՝ թ. 101-23): ԾԱՂԿՈՂ՝ Գրիգոր Բաղիշեցի (գրիչը. ծաղկել է միայն Ա. մասը): ՍՏԱՑՈՂ՝ Սարգիս վրդ. Սպերցի (Ա.), Զաքարիա ֆիլ (գրիչը):


ԹԵՐԹ՝ 148. չգրուած՝ 4ա: ՊՐԱԿ՝ Ա. պրակախումբ (թ. 1-100, 124-48)՝ 4+Ա-ժ×12+1, Բ. պրակախումբ (թ. 101-23)՝ 1-2×12 (2՝ 11)*: ՆԻՒԹ՝ մագաղաթ** (թ. 4՝ թուղթ. լուսագծերով): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 8,5×6,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (6×4): ԴԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ Գրիգոր Բաղիշեցի գրչի՝ 89ա. ծածկագիր՝ 147ա, Զաքարիա գրչի՝ 106ա). խորագիրք՝ մանուշակագոյն եւ կարմիր: Խազագրուած՝ Ա պրակախումբը: ՏՈՂ՝ 11, Բ. պրակա-



Նմուշ 89ա



Նմուշ 147ա



Նմուշ 106ա

խումբը՝ 16: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դոնակով. միջուկը՝ տախտակ. աստառը՝ դեղին (Ա. փեղկինը) եւ վարդագոյն (Բ. փեղկինը) մետաքս. լուսանցակողերը՝ կարմիր:

* Մնթ. Ջաֆարիա գրչի ձեռքով Բ. պրակախումբը (թ. 101-23) գրուել է 1711 թուականին եւ մուծուել Ը. եւ Թ. պրակների միջեւ:

** Մնթ. Համաոօտ ցուցակում (Ա., էջ 1060) ձեռագիս նիւթը վրիպմամբ «թուղթ» է համարուած, մինչդեռ այն բարակ մագաղաթ է (հմմտ. Յ. Թօփճեան, Ցուցակ ձեռագրաց Դպրեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 12, Հմր 15):

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Լս-ային՝ Աբեղայ՝ 81ա: Կիսախոռան՝ 6ա: Ճակատազարդ՝ 54ա: Լուսանցազարդ՝ բուսական, թոչուն, թոչուն-օձ՝ 21ա, ոճաւորուած խաչ՝ 76ա, ծառ՝ 85ա: Ջարդագիր՝ հանգուցագիր (նաեւ մարդադէմ՝ «Ջ»՝ 39բ), թոչնագիր, մարդադէմ գլխատառ «Ջ»՝ 9բ, 33բ, 38բ, 58ա, 60բ, 78ա, «Գ»՝ 140բ: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, վարդագոյն, երկնագոյն, մանուշակագոյն, շագանակագոյն, նարնջի, ոսկի:

Տե՛ս Ա. Գէորգեան, Հայ մանրանկարիչներ. մատենագիտութիւն, Թ-ԺԹ. դդ., Գահիրէ, 1998, էջ 136, Հմր 76:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. մասնակի նորոգուած (Ի. դ.)՝ թ. 54, 90, 136, 143՝ լս-ների պատռուած հատուածներին թուղթ փակցուած. կազմի կաշին մաշուած, ճեռնուած, գունաթափուած, տեղ-տեղ սնկային հիւանդութեան հետեւեր, մէջքի կաշին ամբողջութեամբ անջատուած-ընկած. երեւում են կարի թելերը, դոնակի կաշին խոնաւութիւնից ձեւափոխուած, տեղ-տեղ մաշուած-թափուած, զոյգ կապիչներն ու գամերից մէկն ընկած. կազմաստառները գունաթափուած, խոնաւութիւնից աղտոտուած. լուսանցակողերի կարմիրը թափուած, խոնաւութիւնից դեղնած. թերթերին գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, իւղի, մոմի, թանաքի եւ սնկային հիւանդութեան հետեւեր. գրադաշտը տեղ-տեղ աղտոտուած, գունափոխուած, թանաքը տեղ-տեղ թափուած, երբեմն նաեւ արտատպուած հանդիպակաց էջերին, յաճախ անմխիթար ջրի լայն հետեւեր, արտ. լս-ներին խոնաւութեան հետեւեր, թերթերը խոնաւութիւնից յաճախ ձեւափոխուած. մանրանկարները մասամբ գունաթափուած, տեղ-տեղ արտատպուած հանդիպակաց էջերին. 1ա եւ 148բ՝ խոնաւութիւնից թանաքը թափուած, գրադաշտը՝ դժուարընթեռնելի, թ. 3՝ պատռուածք-անցք, թ. 4՝ հիմիից մասամբ անջատ, թ. 121-2ի միջեւ 1 թ. կտրած-հանած, թ. 39, 140՝ ստ. լս-ները պատռուած, թ. 147՝ արտ. լս-ը պատռուած-ընկած, թ. 92-148՝ արտ. լս-ներին անմխիթար ջրի հետեւեր, թ. 33՝ բնական անցք:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *5ա-146ա* [Մանրուսմուն]

Տե՛ս ձեռ. 755, 4ա-317ա: 1. ա/6ա-11ա: բ/11ա-22ա: գ/22ա-39բ: դ/39բ-53բ: 2. ա/54ա-78ա (յղուղի «Մեծացուսցէ...»-ները չունի): բ/78բ-81ա (վջ.՝ տարբեր «...կենդանութեան իմում որթիւ», «Ջամենայն աւուրս...»՝ չիք): գ/78աբ: դ/81ա-6ա: ե/86ա-97ա: 3./չիք: 4. ա/101ա-12ա (վերջում որոշ միաւորներ Հմր 755 ձեռագրի համեմատ յետեւառաջութեամբ, ունի՝ 110աբ «Գրիգո՛ր (լուսաւորիչ՝ արտք. լս-ից) սուրբ քահանայապետ, որ զհաւատս ուսուցէր...». կրկն.՝ 113ա): բ/114ա: գ/114աբ («Աղղից. Ուխտս դի՛ք եւ կատարեցե՛ք...»՝ չիք, տե՛ս 97բ-8ա): դ/98ա-100ա (ունի՝ 100աբ «Աղղից կիր՛՛. Աղաղակեցէ՛ք առ Տէր...»): 5. ա/115ա-8ա (կրկն.՝ 145աբ): բ/124ա-8ա (վջ՝ տարբեր «... եւ երկիր խաղաղութիւն», «Վասն յիշատակի հանգուցելոցն...» եւ «Աւագ Սուրբ Աստուածածնի ծննդի...»՝ չիք): գ/128ա-35ա: դ/135աբ: ե/135բ-9բ: գ/139բ-40բ: 6. ա-բ/չիք: գ/120բ: դ/120բ-1բ: 7./չիք: 8. ա/118բ: բ/118բ-9ա: գ/119աբ (կրկն.՝ 146ա): դ/119բ-20բ: 9./չիք: 10./չիք:

Ունի՝

ա. *112աբ* [Մասն ժամագրոց]* – *Վասն որոյ եւ մեք զՀոգին Սուրբ ընդ Հաւր միաւորեալ... մեզ զհոգեւորականն՛՛, խաղաղութիւն ի Տէր, փառք քեզ:*

* Տե՛ս ժամագիրք ատենի, էջմիածին, 1785, էջ 191:

բ. *112բ* [Մասն ժամագրոց]* – *Այսաւր ի հրեղէն ի լեզուս բաժանեալ... եւ խաղաղարար աշխարհի խնաեա՛ եւ կեցո՛յ զմեզ:*

* Տե՛ս ժամագիրք ատենի, էջմիածին, 1785, էջ 191:

գ. *112բ* [Մասն ժամակարգութեան]* – *երկրպագեալով եւ մեք ճշմարիտ Սուրբ Հոգոյն՝ գոչեսցուք՝ Աստուա՛ծ, փա՛ռք քեզ (այսչափ, կրկն.՝ 113ա):*

* Տե՛ս ժամակարգութիւն եկեղեցւոյ Հայաստանեայց ըստ կարգաւորութեան սրբոց թարգմանչաց եւ այլոց սրբոց հարց մերոց, մաս Բ., Վիեննա, 1839, էջ 507:

դ. *113բ* Առաւտու. երգ Յարութեան – *Յարութիւն ըզՓրկչին օրհնեսցուք, զՓրկչին մերոյ... եւ աստուածային յարութեամբն ըզմահացեալսն վերաբերեաց ի կեանս:*

ե. *122ա* [Սրբասացութիւն Մարգարէից, Առաքելոց եւ Հայրապետաց՝ *արտք. լս-ից*] – *Ամենակալ ես, Տէր զաւրութեանց... Տէր ամենակալ, ի քում յարքայութեանդ:*

զ. *122բ* [Սրբասացութիւն] – *Վասն յիշատակի հանգուցելոցն ընկալ.... եւ հանգուսցէ զհոգիս նոցայ:*

է. *123ա* [Նեռսէս Շնորհալի, Բանք չափաւ]* – *Որ ի հընկից նկանակաց նշխարեցեր ե. հազարին, / եւ ի չորից զարձեալ զնոսին կերակրեցեր յանապատին... Զի եթէ շուն կոչես վերջին, / Ար[ա]գապէս լըսեմ ձայնին (կրկն.՝ 113բ «տեառն Ներսիսէ. Որ ի հընկից նկանակաց նշխարեցեր հինգ հազարին». այսչափ):*

* Տե՛ս Նեռսէս Շնորհալի, Բանք չափաւ, Բ. տպագրութիւն, Վենետիկ, 1928, էջ 91:

ը. *123բ* [Նեռսէս Շնորհալի, Բանք չափաւ]* – *Զենմամբ եզին պարարակին, / Որ ի խաչին պատարագին... Ուստի այլ ոչ է դեղ վիրին, / Բայց թէ ի քէն բժշկեսցին:*

* Տե՛ս Նեռսէս Շնորհալի, Բանք չափաւ, Բ. տպագրութիւն, Վենետիկ, 1928, էջ 13-14:

թ. *140բ-1բ* [Երգ տեառն Նեռսիսի Շնորհալւոյ, ասացեալ ի պաշտաման գիշերի. Մասն ժամագրոց, Կցուրդ]* – *Անբաժանելի եւ համագոյ յերրորդութեանդ... ողորմեա՛ բանաւոր հօտի:*

* Տե՛ս Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանեայց եկեղեցւոյ, Կ. Պոլիս, 1871, էջ 10:

ժ. *142աբ* [Փոխ] – *Զարթի՛ր, ընդէ՞ր ննջես յանձն իմ... Աստուա՛ծ, փա՛ռք քեզ:*

ժա. *142բ-3բ* [Կցուրդ] – *Մ՛ուր երկու եւ երեք կան յանուն իմ... եւ սըրտից եւ խորհըրդոց մերոց:*

ժբ. *143բ-4ա* [Երգ Կիւրակնամտից]* – *Լոյս զուարթ սուրբ փառաց անմահի... Որ տայ կենդանութիւն, վասն որոյ եւ աշխարհս տաւն է:*

* Տե՛ս ժամագիրք. Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանեայց եկեղեցւոյ, Տրիեստ (գրուած՝ Թրեստ), 1784, էջ 318-319:

Բ. պրակախմբի խորագրերը ստ. լս-ներում նշուած:

ՅԱԻԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ

1. *1ա* [Ախտարական *(ԺՀ. դ., շինծու բոլորգիր, դժուարընթեռնելի)*] – *Այս են ան[ուանք հրեշտակացն (՞)], որ ունին իշխանութիւն ի [վերայ] ամենայն դիւաց՝ տէրն (՞) [Մ]աբաօթ, Սեթի///, Սինայէլ, Ղղիկիոս, [Ու]րիէլ: Ով ոք զայս անո[ւանքն] վրէն պահէ, դեւք [ոչ մերձենան], որ ժամ որ քուն լինիս, /// զՀընռափայէլ հրեշտա[կն], ոչ ինչ լինի ամենայն չ/// կարա///ովն դ/// են օքի///: /// (հաւանաբար անունը) վարդապետ:*

148բ [Դեղագիր. *դժուարընթեռնելի*] – *(սկ.) ///կին Ը. Ը., ապ/// Ռ. Ռ. (1000), Դ. ///կան է յայս է [ցաւ]ոյ գինն:*

148բ [Դեղագիր. *դժուարընթեռնելի*] – *Ա[չ]կն, որ սպիտակ լինի, որ մարդ չըտեսանէ, [ոչխարի (՞)] պանիրն ի///, որ է Աստուծով: ///ազամաթին ///մա///, որ ընծաեցան ո///թի///վոջ:*

2. *1բ-3ա* [Ոտանաւոր *(ԺՀ. դ., բոլորգրանման նոտրգիր)*]

[3]ոգնահանճար եւ իմաստուն,
Մտօք զուարթ, հոգով արթուն,
Զքեզ գովէ սաղմոսերգուն,
Պսակ հիւսէ ականց անհուն,
Քան զՍողոմոնն <ա> այլ գերագոյն,
Զոր ցանկացաւ նմայ դշխոյն,
Զտար|2ա|նոսացի (=Զտարսոնացի) Պ̲ողոս ասեմ՛,
Զլատինացոց քարոզատուն,
Զքեզ թուէ ընդ առաքելոց,
Մարգարէից սրբոց դասուն:
Զոր ընկղմեալքն ի մէջ ծովուն,
Դու վերածես բանիւ սրբոյն:
Հոտ անուշ ես Քրիստոսիւ,
Զոր միշտ բուրես նման վարդուն (արտք. լս-ում սրբագրած՝ «յոյն». =վարդոյն),
Զմո|2բ|որեալքն մեղաց մթ ///
Առաջնորդես [ա]ռ լուսատուն,
Իսկ դու քաղաք վեր լերին
Ճ՛րագ ի մէջ եկեղեցուն:
[Մ]ին, նուաստ մտօք գրեմ
Առ իմաստըդ գերագոյն,
Աստուածային շընորհացն եռնեալս
Առ ընդունող |3ա| ծայրագուն:
[Ն]մանօդս ան ///ակին
Առ իմ ե/// երիցագոյն,
Ի/// բանից համանմանեալս
Առ բանականըդ վեհագուն,
Ախտեմ ներես յիմարութեանս,
Դու գիտութեանն ծովըդ անհուն:

3. *4բ* [Մանուիմ *(ԺՀ. դ., բոլորգիր)*] – *Ութ կանօնս Ը. եւ Զ. (56) գուբղայ է եւ Ճ. եւ Ը. (150) փոխ է եւ Ա. եւ Ն. եւ Կ. (2460) տուն է ամէնն (այսչափ, բոլորգրանման նոտրգրով կրկնուած):*

4. *148ա* [Մասն Ժամակարգութեան *(ԺՀ. դ., բոլորգրանման նոտրգիր)*]* – *ԲՁ. Զ[յ]արուցեալն զՔրիստոս օրհնեսցո՛ւք եւ Յարութիւն նորա փառաւորեսցուք (այսպէս): ԳԿ. Որ ելն ի բարձունս եւ գերեաց գգերեաց գգերութիւն, էառ աւար, բաշխեաց պար[գեւ]ս, եւ որդոց մարդկան՛՛: ԴՁ. Որ համբերեաց խաչի եւ եդաւ ի նորափոր վիմի եւ աստուածային յարութեամբն ըզմահացեալսն վերաբերեաց ի կեանս (այսչափ):*

* Տե՛ս Ժամակարգութիւն եկեղեցւոյ Հայաստանեայց ըստ

կարգաւորութեան սրբոց թարգմանչաց եւ այլոց սրբոց հարց մերոց, մաս Բ., Վիեննա, 1839, էջ 97:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. Գրիգոր Բաղիշեցի գրչի *5ա (խազագրուած) Յիշեա՛, Տէ՛ր, եւ ողորմեա՛:*

5բ (խազագրուած) Փա՛ռք, Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ եւ միշտ եւ յաւիտեանըս յաւիտենից. ամէն: Փա՛ռք, յաւիտենից. ամէն:

32ա (որպէս աղօթքի շարունակութիւն) եւ գրողիս:

53բ Ջմեղաւոր հոգս՝ զԳրիգոր գծողս, յիշեցէ՛ք յաղաւթըս ձեր եւ՛: ՌԿԷ. (1618):

97ա Ջփարթամս ի չարեաց եւ զթափուրս ի բարեաց զանխմա[սա] գծողս աղաչեմ յիշել ի Տէր:

146բ Յիշատակարան. Փա՛ռք անմահին, անեղին եւ արարչագործ կամացն Աստուծոյ՝ Յիսուսի Քրիստոսի. ամէն, որ եւս կարողութիւն տկար ոգոյս, անարժան եւ յիմար, անխմաստ եւ տգէտ Գրիգոր *իրիցիս* Բաղիշեցի, *որ ծաղկեցի զխազտեարս ի վայելումն մեր հոգեւոր հաւրն՝ քաջ եւ արի հեռատորին եւ րաբունապետ վարդապետն* Սարգսին, *որ է* Յովհաննա՝ *ի քաղաքէն* Սպերու:

147ա Արդ, որք հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով, յիշեսջի՛ք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զքաջ եւ արին՝ երանաշնորհ վարդապետն զՍարգիս, եւ զիս՝ զանարժան Գրիգորիսս յիշել ի Տէր, եւ դուք՝ յիշողքդ յիշեալ լիջի՛ք ի Քրիստոսէ Աստուծոյ. ամէն: Արդ, նկարեցաւ ծաղիկ սորայ ի քաղաքն Թուխաթ, ի թվին ՌԿԷ. (1618), ձեռամբ (կապգիր)՝ Գրիգորիս *քահանայիս. աբ. լբ. մ. աբ. ...ժդ. լբ. մ. մթ. (ծածկագիր՝* Գրիգորիս*)**:

* Ծնթ. Մի ֆանի բանալիով առուած ծածկագիր է, աբ. (գումարագիր՝ 1+2=3՝ Գ) լբ. (գումարագիր՝ 30+2=32, եւ 32-րդ տառը այբուբենում՝ ր) մ. (եղբայրագիր՝ ի) աբ. (գումարագիր՝ 1+2=3՝ Գ) ...ժդ. (կէտերը ժ-ի վերեւում, ժամացոյցի սլաքի ուղղութեամբ՝ ...ժ=մ, որից կ՝ մդ=20+4=24, եւ 24-րդ տառը այբուբենում՝ ո) լբ. (գումարագիր՝ 30+2=32, եւ 32-րդ տառը այբուբենում՝ ր) մ. (եղբայրագիր՝ ի) մթ. (գումարագիր՝ 20+9=29, եւ 29-րդ տառը այբուբենում՝ ս). ծածկագիրը վերծանուած է ժէ. դ.ի յիշ-ում առանց մանրամասն վերլուծութեան, ծածկագրի մանրամասն վերծանութիւնը արել ենք Յասմիկ Իրիցեանը եւ Մարինէ Սարգսեան:

Տե՛ս ժէ. դ. յիշ-ք, Ա., էջ 645, Հմր 868 (կրճատումներով):

2. Ջաւարիա գրչի *3բ (յաճախ անկապակից) Փա՛ռք անմահ<ա>ին, անեղին եւ արարչագո[ր]ծ կամացն Յիսուսի Քրիստոսի, որ եւս կարողութիւ<[ն]տ կարողութիւ[ն]> ոգոյս անխմաստի* Ջաւարիայ *բանասիրէ՝ ի վայելումն անձ<ն>ին իւրոյ, տա՛ Աստու[ա]ծ, Տէր սիրէ, զ[հ]եզ եւ խոնարհ առնէ զամբարտաւանս մինչ ի յերկիր, (խազագրուած)՝ յիշեա՛, Տէ՛ր, եւ զղորըմեայ (այսպէս):*

112բ Զգծող սորին եւ վայելող սորին Ջաւարիայ *քահանայս յիշեցէ՛ք առ Տէր եւ ձ/// (չշարունակած): Թվին ՌՃԿ. (1711), ՋՄՀ. (1711)**:

* Ծնթ. Ծածկագրուած է թուականը տառերի թուային արժեքով՝ 900+200+60 (Հ=Կ՝ եղբայրագիր)=1160+551=1711:

112բ Աստուած Մկրտիչ *(կապգիր) ողորմի բա<ի>րի հոգոյն՝ ծիրան էրեր: Մկրտիչ (կապգիր), տէր* Յովհաննէս *կերան:*

113բ ՌՃԿԲ. (1713)*:

* Ծնթ. Քանի որ նախորդ՝ 112բ էջում կայ Ջաւարիա գրչի յիշատակարանը՝ 1711 թուականով, իսկ այստեղ՝ 1 էջ յետոյ առկայ է 1713՝ 2 տարուայ տարբերութեամբ յիշատակարանը, կարծում ենք, որ 113 էջը (ուր յաւելեալ նիւթեր են) կրկին Ջաւարիայի ձեռքով գրուած է 2 տարի անց:

121բ (կապգիր) Գրիգորիս*:

* Ծնթ. Ամենայն հաւանականութեամբ Ջաւարիայի ձեռքով արտանկարուած է 147ա-ի «Գրիգորիս» կապգրից:

122բ (որպէս բնագրի շարունակութիւն) եւ գրողիս:

144բ Յիշատակ է խազտեարս ի անարժան Ջաւարիայ *իրիցուս, որ զանունս միայն եմ ընկալեալ եւ ի բարեաց գործոց դատարկացեալ: Ջմեղաւոր (այսպէս) հոգս եւ* Ջաւարիա *գծողս յիշեցէ՛ք ի յաղօթս ձեր, եւ դուք յիշեալ լիջի՛ք առաջի անմահին Աստուծոյ. ամէն:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *3բ (1697 թ., բոլորգրանման նոտրգիր)* Յոհաննն, *որ ի մօրէն ընծայեցաւ, եւ էր ի թվին ՌՃՀՋ. (1697), օրն Դ.շաբթի:*

2. *4բ (ԺԲ. դ., շինծու բոլորգիր)** *Այս է զքսի (՞) հասապն՝ Ա. հէք///, Ա. ճիտանոց, Ա. ոսկէ էրէսանոց, ԺԲ. (12) ջուխտ չափռաստ, Ա. մասնատուի, է. թօփ, Ա. հե/// էրէսանոց, Բ. սանդուխտ, Դ. թօփ էլ հէքալի վրէնա///:*

* Ծնթ. Հնարաւոր է նաեւ Ջաւարիա գրչի ձեռքով է՝ 1711 թ. շուրջ, ճմմտ. նրա 3բ էջի յիշատակարանի գիրը:

3. *147բ (ԺԲ. դ., բոլորգրանման նոտրգիր) Հայոց կե. (616) թվին եկաւ* Մահմետն *աշխարհս: Թվին ՌԾԳ. (1604) տարի է, որ* Մահմետն *էկել է եւ անցել: Երբ թիւն ՌՃԿ. (1711) հասանի, թագաորութիւն (այսպէս) Հայոցն լինի:*

ՆՇՈՒՄ՝ *Մէջքին սոսնձած սպիտակ թղթին՝ «15», Ա. փեղկի կազմաստառին՝ սեւով «Խ[աչիկ] վարդապետ, [Հմր] 15/3663», «XVII», «1/4», «ՌԿէ., Մ[եսրոպ] եպ[ի]ս[կոպոս]», «Հմր 81», 1ա՝ կարմրով, Հմր 15»:*

Ձեռագիս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Յուցակ ձեռագրաց Դպրեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 12, Հմր 15:

ԳՐՁԱՓՈՐՁ՝ *3բ՝ սեւով «Մի՛ այ անտես առներ զաղաչանս մեր, մի՛ դարձուցանէր զերեսս քո ինէն, արարեր աստուածածան (այսպէս)», «Տէ՛ր, սիրէ՛ զհեզս եւ խոնար[հ] առնէ (թանաքը տարածած)», «Յո», 5ա՝ սե-*


ւով «Ամ, Ջողորմութեան», 7բ՝ սեւով «ատ», 144ա՝ սեւով «Փառաւորէ՛. ոմանք այսպէս ասեն (երգեցողութեան հետ կապուած ցուցում՝ ըստ խազերի)», 147բ՝ սեւով «ե. շաբաթ է, եւ շաբաթ գլուխ վէր արայ, ղունկ հարթէ, բարի է», «Այսաւր չար (խազագրուած)», «Ասաց անզգամն», «Ասաց անըզգամն ի սրտի իւրում, թէ ոչ գոյ Աստուած», «Ասաց Աստուած (՞)», «Ասաց անզգ ի սրտի իւրում, թէ ոչ գոյ ինձ»:

ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *3բ, 4բ՝ սեւով՝ բաժանագարդ, 97ա՝ սեւով լուսանցագարդ՝ բուսական:*

3664
ՇԱՐԱԿՆՈՑ

ԺԷ. դար

ԹԵՐԹ՝ 379. չգրուած՝ 9բ, 133բ, 182բ, 237բ, 304բ, 330բ, 379բ: **ՊՐԱԿ՝** Ա-ԼԳ×12 (Ա, ԺԲ, ԺԹ 10, ԺԵ, Ի, ԻԳ, ԻԸ 11, ԻԶ 8, ԼԳ 9): **ՆԻՒԹ՝** մագաղաթ: **ՄԵԾՈՒԹԻՒՆ՝** 13×8,5: **ԳՐՈՒԹԻՒՆ՝** միասիւն, շագանակագոյնով սահմանագծուած (9×5,5): **ԳԻՐ՝** բոլորգիր (նմուշ՝ 308ա). խորագիրք՝ կարմիր, մանուշակագոյն, շագանակագոյն, բնագրերի սկզբնատառերը յաճախ նաեւ կապոյտ: **ՏՈՂ՝** 23: **ԿԱՋՄ՝** սեւ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ ծաղկաթուղթ. լուսանցակողերը՝ կարմիր: **ՊԱՀՊԱՆԱԿ՝** ԱԲ+Գ՝ սպիտակ չգրուած թուղթ (Բ), ծաղկաթուղթ (Ա, Գ)՝ մասն կազմաստառի:



Նմուշ 308ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Կիսախոռան՝ 1ա, 134ա, 183ա, 331ա: Ճակատազարդ՝ 10ա, 55ա, 107ա, 238ա, 305ա, 359ա: Լուսանցազարդ՝ բուսական, թոչուն, ծառ՝ 109ա, 111ա, 174ա, տաճար՝ 31ա, 148բ, 215բ, 224բ, 238ա, խաչ՝ 120բ, 239բ, 249բ, 252բ: Ջարդագիր՝ հանգուցագիր, թոչնագիր, կենդանագիր՝ 1ա, 183ա: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, վարդագոյն, մանուշակագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. մասնակի նորոգուած՝ Ի. դ., նեռագրի հիմքը ամրացուած կապտաւուն եւ սպիտակ թղթերով. կազմի կաշին մաշուած, ճեղուած, թեթեւակի գունափոխուած, մէջքի կաշին ճեղուած. Ա. եւ Բ. փեղկերի կազմաստառների եւ Ա. եւ Գ. պիսկ.ների ծաղկաթուղթը մաշուած, խոնաւութիւնից գոյները տարածուած, պիսկ. Բ.՝ թուղթը մաշուած, տեղ-տեղ պատռուած. լուսանցակողերի կարմիրը թափուած, աղտից սեւացած. թերթերին գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, իւղի, թանաքի եւ սնկային հիւանդութեան հետքեր, գրաղաշտը գունափոխուած, յաճախ անմխիթար ջրի լայն հետքեր, արտ. լս-ներին խոնաւութեան հետքեր. մանրանկարների գոյները խոնաւութիւնից տեղ-տեղ դժգունած, յաճախ դրոշմուած հանդիպակաց էջերին. թ. 298-9ի միջեւ՝ 4, իսկ թ. 311-2՝ միջեւ 1 թ. ընկած, թ. 170՝ հիմքից ամբողջութեամբ, իսկ թ. 171՝ մասամբ անջատուած, թ. 1, 2, 41, 71, 267, 358, 371, 379՝ արտ. ստորին անկիւնները պատռուած-ընկած, թ. 24, 96, 187, 335, 369-70՝ արտ. լս-ները պատռուած, թ. 199՝ ստ. լս-ը պատռուած, թ. 233՝ պատռուածք-անցք, թ. 176, 197, 240, 355՝ վերին արտ. լս-ները պատռուած-ընկած, թ. 296-302՝ հիմքին մօտ՝ ցեցի անցքեր, թ. 93, 96՝ բնական անցքեր, թ. 262-3ի միջեւ՝ մէկ թերթ կտրած-հանած (բնագրական պակաս չկայ):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-379ա* **Շարակնոց**

Տե՛ս ձեռ. 1576, 4ա-368բ: 1/1ա-4ա: 2/4ա-6ա (խորագիրը՝ տարբեր «Կանովն Յովակիմայ եւ Աննայի»): 3. ա/6ա-9ա, բ/9ա (խորագիրը՝ չիք): 4/10ա-2ա: 5/12ա-3բ: 6/13բ-5բ: 7/15բ-7ա: 8/17ա-9ա: 9/19ա-21ա: 10/21ա-2բ: 11/23ա-4բ: 12/24բ-6բ: 13. ա/27ա-8ա, բ/28աբ, գ/28բ, դ/28բ-9ա, ե/29աբ, զ/29բ, է/29բ-30բ, ը/30բ-1ա: 14/31ա-3բ: 15/33բ-5ա: 16. ա/36բ-8ա, բ/38աբ (խորագիրը՝ չիք): 17/38բ-9բ: 18/39բ-42ա: 19/42ա-4ա: 20/44ա-6ա: 21/46ա-8ա: 22/48բ-50ա: 23/51ա-3ա: 24/53աբ (խորագիրը՝ չիք): 25/55ա-6բ (խորագիրը՝ չիք): 26/56բ-60բ: 27. ա/60բ-2բ, բ/62բ-6բ, գ/66բ (առկայ է միայն խորագիրը, ամբողջը՝ տե՛ս 290ա): 28. ա/66բ-8բ, բ/68բ-71բ, գ/71բ-4բ, դ/74բ-6ա: 29. ա/76ա-8ա, բ/78ա-82ա, գ/82ա-3բ, դ/83բ-6ա: 30. ա/86բ-8բ, բ/88բ-93բ, գ/98բ-100ա: 31. ա/100ա-2ա, բ/102ա-5բ, գ/105բ-6բ: 32/107ա-9ա: 33/109ա-11ա: 34/111ա-2բ: 35/112բ-4բ: 36/114բ-6բ: 37/116բ-8ա: 38/118ա-20բ: 39. ա/120բ-3ա (չիք՝ Յահեղ աւուրն...), բ/123ա-8ա, գ/128ա-30ա: 40. ա/130ա-1բ, բ/132աբ: 41. ա/134ա-5բ (խորագիրը՝ չիք), բ/135բ-40ա, գ/140ա-1ա: 42. ա/141ա-3ա, բ/143ա-7բ, գ/147բ-8բ: 43. ա/148բ-53բ, բ/153բ-8ա, գ/158բ-63ա, դ/163ա-6ա, ե/166ա-9բ: 44/170ա-4ա: 45. ա/174ա-6բ, բ/176բ-82ա: 46/183ա-5բ: 47/185բ-7բ: 48/187բ-9ա: 49/189ա-90բ: 50/190բ-2ա: 51/192ա-3բ: 52/193բ-5ա: 53/195ա-200ա (ունի՝ 199ա Որ ի յամսեանն վեցերորդի առաքեցաւ հրեշտակապետն Գաբրիէլ...): 54/200բ-1բ: 55/201բ-4բ: 56/204բ-6ա: 57. ա/206ա-8բ, բ/208բ-9ա (խորագիրը՝ չիք): 58. ա/209ա-15ա, բ/215աբ: 59/215բ-7բ: 60/217բ-20ա: 61/220ա-2ա:

62/222ա-4ա: 63/224բ-6ա: 64/226ա-8բ: 65/232բ-34բ: 66/234բ-7ա (ունի՝ 237ա Ուրախացի՛ր, Աստուածածին, վերաւրհնեալդ ի սրովբէից...): 67/238ա-9բ: 68/239բ-41բ (խորագիրը՝ տարբեր «Կանովն սրբոյ Խաչին կիւրակէին»): 69/241բ-3ա (խորագիրը՝ տարբեր «Կանովն երկրորդ աւուր»): 70/243ա-4բ (խորագիրը՝ տարբեր «Կանովն երրորդ աւուր»): 71/244բ-6ա (խորագիրը՝ տարբեր «Կանովն չորրորդ աւուր»): 72/246ա-7բ (խորագիրը՝ տարբեր «Կանովն հինգերորդ աւուր»): 73/248ա-9բ (խորագիրը՝ տարբեր «Կանովն վեցերորդ աւուր»): 74/249բ-52բ (խորագիրը՝ տարբեր «Կանովն եւթներորդ աւուր»): 75/252բ-4բ: 76/254բ-6բ: 77. ա/256բ-9ա, բ/259ա-60բ: 78/260բ-3ա: 79/363ա-5բ: 80/265բ-7ա: 81/267բ-70ա: 82. ա/270ա-3բ, բ/273բ-4ա, գ/274աբ, դ/274բ, ե/275բ, զ/289աբ, է/288ա-9ա, ը/275աբ, թ/275բ-6բ, ժ/276բ, ժա/276բ-7բ, ժբ/293ա, ժգ/293բ, ժդ/303բ-4ա (վերջը 4 տող չգրած՝ 304ա «...գմիշտ պատարագի, Հաւր ի հաշտութիւն մեզ, ի քաւութիւն///»), ժե/277բ-8ա, ժզ/278աբ, ժէ/278բ-9ա, ժը/279ա-80ա, ժթ/280աբ, ի/280բ, իա/280բ-2բ: 83/282բ-8ա: 84. ա/132բ-3ա, բ/293բ-4բ, գ/294բ-5բ, դ/295բ-6ա, ե/296բ-7ա, զ/297ա-8ա, է/298ա-8բ (թ. 298-9ի միջեւ 4 թ. ընկած. վերջը՝ թափուած «...ընդ քեզ քոյին փառաւք արեգական///»): 85. ա-դ/չիք: ե/299ա (սկ.՝ 3-4 տող թափուած «///բարձեր ձեռաւք նիւթ ի հողոյ եւ ստեղծեր մարդ ի պատկեր քո...») զ/299աբ, է/299բ-300բ, ը/300բ-2բ (խորագիրը՝ տարբեր «Երգ զկնի ի Տէր լոյս եւ սաղմոս»): 86. ա/305ա-9ա (ունի՝ 308բ-9ա «Անսկիզբն Աստուած, համապայծառ ամենասուրբ երրորդութիւն...»), բ/309ա-11բ (թ. 311-2ի միջեւ 1 թ. ընկած. վերջը՝ 3-4 տող թափուած «Ի տաճարի հանգըստեան... արիաբար մարտեան ընդդէմ թըշնա///») գ/312ա-3բ (սկ.՝ թափուած «[Ո. Հեղմամբ արեան... ///ժողովք դասք մարգարէից...») դ/313բ-7ա, ե/317ա-20ա, զ/320բ-2բ, է/322բ-6բ, ը/326բ-30ա: 87. ա/331ա-3ա, բ/333ա-4բ, գ/334բ-6ա, դ/336ա-40ա (ունի՝ 339բ-40ա «Մարսափելի որոտմամբ...»), ե/340ա-2ա (չիք՝ «Զքեզ աղաչեմք...», «Արեգակն արդարութեան...»), զ/342ա-4բ, է/344բ-50ա (չիք՝ «Աւրհնաբանող ձայնիւ երգեմք...»), ը/350ա-2բ: 88. ա/359ա-61ա, բ/361ա-3բ, գ/363բ-6ա, դ/366ա-9ա, ե/369ա-71բ, զ/371բ-4ա, է/374ա-6բ, ը/376բ-9ա: 89. ա/353ա-6ա, բ/356ա-8բ (ունի՝ 357բ-8բ «Ողբ գերեզմանաց. Ես ասացի վերանալ յինէն...»): 90. ա/93բ-7ա, բ/97բ-8բ: 91/35ա-6բ (կրկն.՝ 291ա-3ա): 92/290ա-1ա (ունի՝ 290բ-1ա Պսակ եւ փառք պարծանաց...): 93/53բ-4ա: 94/50ա-1ա: 95/229ա-32բ: 96/302բ-3բ:*

Ունի՝ 289բ-90ա «Շարական Տարգոսեանց. Տենչալի տաւնիւ սրբոց...»:

* Ծնթ. «Ձգնաւորի Քրիստոսի...» մասը ի տարբերութիւն Հմր 1576 ձեռագրի՝ այստեղ նախորդում է:

1բ-2բ՝ առմ. լս-ներին հետագայի ձեռով սուրբգրային յղումներ, մէկընդմէջ բնագրային յաւելումներ՝ 287բ եւ այլուր:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *54բ (ստացողի, 1639 թ., նոտրգիր) ես՝* **Գեղեմացի** *տէր* **Յարութիւնս**, *առի այս ձեռնագիր Շարականս ի թիւին Յայոց ՈՁՐ. (1239)*,* **Մուշի** *վանքումն,* **Անդրէաս** *վարդապետիցն, ԻՐ. (28) դուման, ամսիանն Մէկեկի:*

* Ծնթ. Ստացողը թուականը սխալ է գրել. պէտք է գրէր ՌՁՐ. (1639):

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *103ա՝ սեւ թանաքով ուխտանկիւն՝ անընթեռնելի:*

ՆՇՈՒՄ՝ *Ա. փեղկին եւ մէջքին կարմրով՝ «3664», պհպ. Բա՝ սեւով «Խ[աչիկ] վարդապետ, Հմր 18/3664»:*

Ձեռագրիս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Ցուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 13-17, Հմր 18:

ԳՐՋԱՓՈՐՁ՝ *9բ՝ սեւով «ա, արտագրվեցաւ այս (հետագայում ջնջած)», 54բ՝ սեւով, նոտրգիր «Ի քոյ որդի Յարութենէ բարան բարի հասար բաբասզէ (թանաքը մասամբ տարածուած)», 74ա՝ սեւով նոտրգիր «մեղք», 86բ-7ա, 106բ-7ա, 118բ, 123բ-4ա, 198բ՝ շագանակագոյնով «ս», զանազան գծեր, 130բ-1ա՝ շագանակագոյնով «աբ, արամանազ նիսեաց», 162բ՝ շագանակագոյնով «ալաբ (թանաքը տարածուած)», 164բ-5ա՝ շագանակագոյնով «արն (վրան ջնջագիծ)», 188ա՝ զանազան տառեր «ա-լ, ա-է», 220ա՝ տառեր «ա-գ», 222ա՝ «աբ», 230բ՝ զանազան տառեր «ա-խ», անորոշ գծապատկերներ, 379ա՝ սեւով «Ձշմարիտ կին է/// (շարունակութիւնը՝ անորոշ)»:*


ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *182բ՝ սեւով թռչուն եւ ձուկ, 209բ, 210ա՝ սեւով բուսական նախշեր:*

3665
ՇԱՐԱԿՆՈՑ

ԺԶ. դար

ԹԵՐԹ՝ 318: ՊՐԱԿ՝ Ա-ԻԷ×12 (Ա, ԻԶ 11, ԻԷ 8): ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 12×10: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (8,5×6,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 10ա). խոռագիրք՝ կարմիր: ՏՈՂ՝ 21-23: ԿԱՋՄ՝ կանաչ մոմլաթ. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ ծաղկաթուղթ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+Գ՝ սպիտակ չգրուած թուղթ (Բ), ծաղկաթուղթ (Ա, Գ)՝ մասն կազմաստառի:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Կիսախոռան՝ 1ա, 123բ: Ճակատազարդ՝ 9բ, 50ա, 99ա, 167ա, 215բ, 267բ,



Նմուշ 10ա

* Ծնթ. Գրուած Պարզատումարի չգրուած էջերի վրայ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽԱԳԱՂԱՓԱՐ ՕՐԻՆԱԿԻ

69ա [Պ]արզատոմարս է գովելի,
Է գեղեցիկ եւ պիտանի,
Ջբոլոր տարին յինքիան ունի
Եւ ցուցանէ զամէնն յայտնի,
Յեւթներեակ ըսկսանի.
Հռովմայեցւոց ամսով վարի,
Մինչ Յայտնութեան Բարեկենդանի.
ԽՋ. (46) թիւ համարի։
Հինգ հարիւր ամ անցանի,
ԼԲ. (32) յարայբարդի,
Այսքան ամօք վերջքն լինի,
Դարձեալ յառաջքն սքսանի։
|69բ| [Է] սահմանած անփոխելի,
Մին[չ] ի գալու[ս]ան Քրիստոսի,
Որ ընթեռքուք սիրով սրտի,
Յիշման արէք զիս արժանի։*
[Դ]արձեալ ծանի՛ր, ո՛վ ընթերցող/// (չշարունակուած, համմտ. ձեռ. 2455, 3աբ)։

* Ծնթ. Յաջորդող 3 տողը տե՛ս Դրչութեան ժամանակի յիշատակարան՝ 69բ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. Ազարիա գրչի *31բ Ջապիկար* Ազարիայս *յիշեցէ՛ք ի Քրիստոս։*

2. Յովհաննէս Ջուղայեցի գրչի
69բ Ջմեղօք լցեալս ազգի-ազգի,
ՋՀօվաննէս *զփանաքի,*
ՋՀօվաննէսս Ջուղայեցի։

Ծնթ. Յարմարեցուած նախագաղափար յիշատակարանի բառատողերի մէջ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *60բ (1732 թ., նոտրգիր) Յիսուսի Քրիստոսի ոտից հող եւ մոխիր, զանարժան մեղաւոր ողորմած հոգի* Խրոզիկենց Յակոբջանի *որդի* Սիմոն *գրեցի, որ գայս իմ ձեռաց գիրն այ, որ գրեցի։ Որ գայս Տօմարս կարդասցի սրբաչգան եւ սրբոց կրցն (այսպէս, կրօնաւորացնՙ)։ Դպրաց տան վարպետ տէր* Ոհանին *քշտին կարդացի եւ այս Տօմարս։ Ով որ կարդայ՝ թէ մեռած լինեմ, մին Հայր մեր ասի, թէ կենդանի լինեմ, իմ (ո)րդու խէր ուտի եւ գայս(՞) էս Տօմար շինողին յիշի, որ վարպետ* Ազարէն *այ, եւ յիքն յիշեալ լինի առաջի Քրիստոսիք։ Գրվեցաւ թիվ Փորք (= Փոքր) ԱՃԺԷ. (1732)*, Նախայ ԺԸ.ումն (15), գրոյս վերջ արարի։*

* Ծնթ. Ե՛ւ Համառօտ ցուցակը (Ա., էջ 1061), Ե՛ւ Յ. Անասեանը (Հայկական մատենագրութիւն, հտ. Ա., Երեւան, 1959, էջ 277) այս յիշատակարանի թուականը համարել են ՌՃԺԷ. (1668), մինչդեռ այն դրուած է Ազարիա Ջուղայեցու Փոխ տումարով (ԱՃԺԷ՝ 117+1615). դժուարընթեռնելի լինելու պատճառով «Ա» գիրը «Ռ.» են կարդացել. Յ. Անասեանը կարդացել է նաեւ «փոխ» բառը, սակայն թուականը հաշուել է Հայոց մեծ թուականով:

ՆՇՈՒՄ՝ *Ա. փեղկին սոսնձած վարդագոյն թղթին՝ «3669», Ա. կազմաստառին՝ մատիտով «ունի միկրոֆիլմ», պհպ. Բա՝ սեւով «Խ[աչիկ] վարդապետ, [Հմր] 28/3669»։*

Ձեռագրիս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Ցուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 42, Հմ 28:


ԳՐՉԱՓՈՐՁ՝ *Յա՝ սեւով «տաս ժ.», «Գվ.ժվ.», 6բ՝ սեւով զանազան բծեր, 18ա՝ սեւով «նն ատ, գիր գրչ», 38բ՝ «խ լ (բազմիցս)», 74բ՝ սեւով զանազան տառեր «ա, լ, մ ո (բազմիցս)»։*

3670
ՄԱՇՏՈՑ

ԺԵ. դար (ՊԿԵ. – 1416ի շուրջ)

ԳՐԻՉ՝ Սարգիս եպս.:

ԹԵՐԹ՝ 259+2 (կրկն.՝ թ. 53, 255): ՊՐԱԿ՝ Ա.-ԻԲ×12 (Ա. 10, Ը 11): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 12,5×10: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (9×7): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 32ա. ծածկագիր՝ 154ա). խորագիրք՝ կարմիր, կապոյտ: ՏՈՂ՝ 16: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դռնակով, մէջքը՝ սեւ կտաւ (նորոգման ժամանակի). միջուկը՝ ստուարաթուղթ (Ա. փեղկ), տախտակ (Բ. փեղկ). աստառը՝ դեղնաւուն թուղթ (Ա. փեղկ), կապտաւուն թուղթ (Բ. փեղկ). լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+Գ՝ սպիտակ չգրուած թուղթ՝ Ա, կապտաւուն չգրուած թուղթ՝ ԲԳ, Ա եւ Գ՝ մասն կազմաստառի (նորոգման ժամանակի):



Նմուշ 32ա



Նմուշ 154ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Ճակատազարդ՝ 1ա, 13բ, 68ա, 110ա, 154բ, 179բ: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն՝ 87ա, տաճար՝ 1ա, վարդեակ, սափոր (ոճաւորուած բուսական լուսանցազարդով)՝ 179բ: Ձարդագիր՝ հանգուցագիր, թռչնագիր: Գոյներ՝ կապոյտ, վարդագոյն, մանուշակագոյն, շագանակագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած Ի. դարում, կազմի հին կաշին ֆեռծուած, մաշուած, վնասուած, գունաթափուած, մէջքը փոխարինուած սեւ կտաւով, կազմի Ա. փեղկը վերակազմուած հին կաշուի եւ բաց վարդագոյն մոմլաթի միացումով, զոյգ կապիչներն ու գամերն ընկած, դռնակի աստառն ընկած, կաշին վնասուած, վերին եւ ստորին մասի կաշին մաշուածթափուած. լուսանցակողերը մաշուած, կարմիրը գունաթափուած, հազիւ նշմարելի. պիսպ-ները թեթեւակի աղտոտուած, պիսպ. Բ.՝ պատռուածք-անցք. թերթերին գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, սնկային հիւանդութեան եւ իւղի հետքեր, տեղ-տեղ աղտոտուած, գրադաշտը վնասուած, գունափոխուած, կպումներից տեղ-տեղ եղծուած, մանրանկարները մասամբ գունաթափուած. թ. 10-1ի միջեւ 1 թերթ ընկած, թ. 87-8ի միջեւ՝ նախապէս չգրուած մէկ թերթ կտրած հանած (բնագրի պակաս չկայ), ձեռագրի վերջը թափուած, թ. 38, 58, 61-8, 85, 87, 89, 90, 204, 209՝ ստ. լս-ները շեղակի կտրած-հանած, թ. 169-72՝ առտ. լս-ները 0,5 սմ չափով կտրած-հանած, թ. 50-1՝ վր. լս-ները պատռուած-ընկած, թ. 208՝ ստ. լս-ը պատռուած, թ. 1-8, 231-59՝ ցեցի անցքեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-259բ* [Մաշտոց]

1. *1ա-13ա* [Ա.] Կանոն ի[ի]մմաւկութեան եկեղեցւոյ – *Պատրաստեն քառակուսի քարինս ե. մեծամեծս եւ այլ [քարինս]... Սաղ. Մեծ է Տէր, օրհնեալ է յո՛. եւ արկ արքայ Սողովմոն... (նիւթը թերի*. 10բ «...եպիսկոպոս ասէ. Տէր Աստուած մեր, որ հաճեցար ի վերա///» 10բ «///զի փոխեցից ի քեզ զմեծութիւն ծովի եւ ցամաքի...». Ընթ. յեսաեա):*

* Ծնթ. Թ. 10-1ի միջեւ 1 թերթ ընկած:

2. *13ա-49բ* [Բ.] Կանոն նաւակատեաց եկեղեցւոյ օրհնութեան – *Յետ յերեկոին հսկումն է միաբան ուխտին մինչեւ ցառաւօտն... Ընթերցուած յԱռակաց. Իմաստութիւն շինեաց իւր տուն...*

3. *49բ-54ա* [Գ.] Կանոն աւազան օրհնելո, որ ունի սկիզբն փրկութեան յաստուածային շնորհսն վերածնելոցն, վասն զի դեռ չէ կատարեալ զեկեղեցին, որ ոչ ունի զծնունդ որովայնի իւրոյ – *եւ արդ, այս կարգաւորութիւն հաստատեն զաւազանն ի տեղւոջ իւրում... Եպիսկոպոսն ասէ զաղաւթս զայս. Տէր Աստուած, մեծ եւ փառաւորեալ...*

4. *54բ-62ա* Դ. Կանոն նաւակատեաց եկեղեցւոյ, պղծել տաճարի, պղծելոյ յանօրինաց եւ շարժել սեղան վերըստին հաստատելո – *Մտանէ եպիսկոպոսն քահանայիւք... եպիսկոպոսն ասէ զա[ղաւթս]. Որ ընդունողդ ես աղ[օթ]ից ժողովըրդեան քում...*

5. *62ա-3ա* [Ե.] Աւրհնութիւն հանդերձեղէն սպասու – *Տանին յեկեղեցին, առաջի բեմին, սարկաւագն ունելով ի վերա բազկացն: Սաղմոս ԺԵ. Սիրեցից զքեզ Տէր... Աղօթք. Տէ՛ր Աստուած, բարձրեալ, որ զգեցուցեր...*

6. *63աբ* [Զ.] Աւրհնութիւն սկի եւ մաղըզմոյ – *Տանին եկեղեցին առաջի բեմին, լուանան ջրով եւ ապա գինով եւ ջնջեն սուրբ կտաւով: Սաղմոս ԻԲ. Տէր հովուեսցէ զիս... Աղո[թս]. Աւրհնեալ ես, Տէ՛ր Աստուած մեր...*

7. *63բ-4բ* [Է.] Կանոն նոր դուռն աւրհնել եկեղեցւոյ – *Հաստատեն ի տեղոջ իւրում եւ ասեն. Սաղմոս ՃԺԷ. Խոստովան եղերուք Տեառն, զի... եւ ասէ զաղ[օթս]. Տէ՛ր Աստուած, նորոգիչ եւ զարդարիչ քո արարածոց...*

8. *64բ-8ա* [Ը.] Կանոն խաչալուա առնել – *եւ այս կանոն կատարի. Սաղմոս. Ձայն Տեառն ի վերա ջուրց...*

Ընթերձ<u>ա</u>ւած ի Զոր[բ]որդ թագաւորութենէ. եւ ասեն արք քաղաքին զեղիսէէ...

9. *68ա-74բ* [Թ.] Սկիզբն կարգի է. աստիճանաց, որ<u>ո</u>ք ձեռնադրեն ի <ի> Դ. եղանակ տարոյն. շաբաթ օր ի գադր դաբլն *(= 4 եղանակ)*

ա. *68ա-9բ* [Ժ.] Առաջի աստիճանի կղերիկոսաց, որ<u>ո</u>ք են սաղմոսերգովքն – *Զի զ<u>ա</u>գենու եպիսկոպոսն ըստ օրինին, եւ ամենեքեան ըստ իւրաքանչիւր կարգի... Շարական՝ ըստ աւուրն պատշաճի.... քարոզէ սարկաւագն. Միաբան ամենեքեան աղաչեսցուք զմարդասէրն Աստուած...*

բ. *69բ-70բ* [ԺԱ.] Երկրորդ կարգ. Դռնապանին – *Յետ ծխելոյ խունկ եպիսկոպոսին սուրբ սեղանոյն, շարականաւ ածէ զնուիրեալն աւագ սարկաւագն յառաջ, քարոզէ. եւ եւս խաղաղութեան աղաչեսցուք...*

գ. *70բ-1բ* [ԺԲ.] Երրորդ կարգ. Ընթերցողին – *Քարոզէ սարկաւագն. եւ եւս խաղաղութեան աղաչեսցուք զԱստուած Հայրն ամենեցուն...*

դ. *71բ-3բ* [ԺԳ.] Զորրորդ. Ակալիտին, այսինքն՝ Ջահընկալին – *Առաջի եպիսկոպոսին աւագ սարկաւագն զնուիրեալն քարոզէ. եւ եւս խաղաղութիւն, եղբա՛յրք սիրեցեալք, աղաչեսցուք...*

ե. *73բ-4բ* [ԺԴ.] Հինկերորդ կարգ՝ Կէս սարկաւագի – *Ածէ զնուիրեալն աւագ սարկաւագն առաջի եպիսկոպոսին, քարոզէ. եւ եւս խաղաղութեան, սիրեցե՛ք եղբարք, աղաչեսցուք զԱստուած...*

10. *75ա-86ա* [ԺԵ.] Կանոն յորժամ սարկաւագ ձեռնադրեն – *Զ<u>ա</u>գենու եպիսկոպոսն եւ այլ քահանայքն ի սրբատան եկեղեցոյն... Շարական ըստ տօնի աւուրն եւ կամ. Ուրա՛խ լեր, սուրբ եկեղեցի...*

11. *86ա-109բ* ԺՋ. Կանոն ձեռնադրութեան բահանայի – *Զ<u>ա</u>գենու եպիսկոպոսն ըստ օրինին սրբատանն եկեղեցո... եւ յետ ասելո եպիսկոպոսին զաղօթս. Տէ՛ր Աստուած մեր, զբազկատարած զաղաչանս մեր...*

12. *110ա-54ա* [ԺԶ. Կանոն եպիսկոպոս ձեռնադրելոյ] – *Յորժամ հանդերձեալ լինի եպիսկոպոսացուցանել զոք, ամենայն ժառանգաւորք եկեղեցւոյն, բոլոր բնակչօք գաւառին... Իսկ յաւուրն յորում պատշաճի ձեռնադրութիւն...*

13. *154բ-79ա* [ԺԷ.] Կանոն յորժամ կաթողիկոս ձեռնա<u>ա</u>րեն – *Յորժամ հանդերձեալ լինին բարձրացուցանել զոք ի պատիւ կաթողիկոսութեան տանըս Հա[յ]ոց...*

14. *179բ-212բ* [ԺԸ. Մեռոնօրհնէք.] Կապի տերեւ, նուամա ծաղիկ, մրտենի, վարդէջուր՝ Ա. լիտր, գինի, մուշկ, յամբար, նոճէս, նապուտնուկի՝ Ա. Կանոն աւրհնութիւն սրբոյ Մեռոնին այսպէս արասցէն – *Յաւուր Մեծի հինգշաբաթոջն, ի ժամ սուրբ պատարագին զսուրբ մեռոնն թափեն ի յաման արծաթի...*

15. *213ա-8ա* [Ի.] Կանոն յորժամ սկսանի հիւանդն աւանդել գհոգին – *Քահանայ յառաջընթեր կատարէ զայս. Տէ՛ր, ուղղեա՛ զգնացս մեր ի ճանապարհ... Տէր ողորմեա, եւ գկնի զայս՝ Հա՛յր երկնաւոր Աստուած, ողորմեա՛ հոգւո հրաժարելոյս...*

ա. *217բ-8ա* Եւ եթէ կամիս կրօնաւոր առնել բերեն զչուխայն եւ հաճանայն ասէ զաղօթս – *Ամենակարող եւ յաւիտենական Աստուած...*

16. *218ա-30բ* [ԻԱ.] Կանոն աւրհնութեան ջրո – *Եւ այս կանոն կատարեն. Սաղմոս. Զայն Տեառն ի վերայ ջուրց... Ընթերձ<u>ա</u>ւած ի Զորրորդ թագաւորութենէ. եւ ասեն արք քաղաքին զեղիսէէ...*

17. *230բ-4ա* [ԻԲ.] Կանոն եւ կարգ օրհնութեան միակեցի՝ ըստ Հա[յ]աստանեաց եկեղեցոյ, թէ ոչ կղերիկոս – *Նախ ասեն զաղօթս կղերիկոսի հերակատրութեան եւ ըստ կարգի աղօթիցն սափրեն պսակի գլուխ սեւ զմռրուն...*

18. *234ա-41բ* [ԻԳ.] Կանոն ապաշխարող աւրհնելո – *Տանին քահանայքն ի դուռն եկեղեցոյն զեկեալն յապաշխարութիւն եւ ասեն սաղմոս. Ը. ի թիւ ճԽԱ.... եւ քահանայն ասէ զաղօթս. Տէ՛ր Յիսուս Քրիստոս, հաեա՛ց ի ստեղծուածս քո...*

19. *241բ-6ա* [ԻԴ.] Կանոն Ոտնալուաի երիկուն – *Այս կանոն կատարի. Սաղմոս. ԻՀ., կցուրդ. Զայն Տեառն ի վերայ ջուրց. Յոհանու առաք[ելոյ] ի Կաթողիկեաց. Սիրելի՛ք, սիրեսցուք զմիմեանս...*

20. *246ա-59բ* [Իե.] Կանոն Խաչ աւրհնելո – *Բերեն ի դուռն եկեղեցոյն, լուանան նախ ջրով եւ ապա գինով. Սաղմոս. կցուրդ. Լո՛ւր, Աստուա՛ծ, աղօթից իմոցն... Ընթերձ<u>ա</u>ւած յԱռակաց. Երանեալ է այր, որ եգիտ զիմաստութիւն... (վերջը՝ թափուած. 259բ «...Խաղաղութիւն. Աստուծոյ երկիրպագեսցուք. Աղաչեմք քեզ, Միածին որդի Աստուծոյ... ամենայն հաւատացելոց քոց կրեալ յանձինս իւրոց զնշան ամենայաղթի///»):*

Կանոնների խոռագրերի համառօտութիւնները գրուած են ստ. լս-ներում:

Հմմտ. Մայր Մաշտոց, հտ. Ա., Գիրք Ա., աշխ. Գ. Տէր-Վարդանեանի, Ս. Էջմիածին, 2012:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

49բ եւ զՍարգիս յիշեա՛:

109բ Սարգիս գր[չ]ակս (չ-ն լրացուած բառի տակ)՝ սուտանուն եպիսկոպոս, յիշէ՛ք:

111ա (ստ. լս.) եւ զՍարգիս յիշէ՛ք ի Քրիստոս:

134ա (ստ. լս.) եւ զծնրդս յիշէ՛ք ի Քրիստոս:

154ա եւ զնուաստ գրչակս՝ փծուն, զտառապեալ անձն՝ զՍարգիս եպիսկոպոս, յաղաւթս յիշեցէ՛ք ի Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշէ յիւր ամենագութ յողորմութիւնն. ամէն: ժսսհտ (փոխարինագիր ծածկագիր՝ «ամ<u>ե</u>ն»):*

* Տե՛ս ԺԵ. դ. յիշ-ք, Ա. էջ 185, Չ^{ար} 197. Լ. Խաչիկեանը միայն այս յիշատակարանը դրել է 1416 թուականի շարքում՝ նոյն

տառում Սարգիս եպիսկոպոս գրչի գրած ՄՄ Հ՝ 4300 ձեռ-ի յիշատակարաններին կից, տե՛ս էջ 185, ծնթ., երկու ձեռագրերի գրերի համեմատութեան հիման վրայ այս ենթադրութիւնը լիովին հաւանական է:

178բ (ստ. լս.) ՁՍարգիս *եպիսկոպոս յիշէ՛:*

186ա (ստ. լս.) եւ զՍարգիս *յիշէ՛ք:*

194ա (ստ. լս.) ՁՍարգիս *յիշեա՛ ի Տէ՛ր:*

213ա (ստ. լս.) ՁՍարգիս *եպիսկոպոս յիշեա՛, աղաչեմ:*

217բ (ստ. լս.) եւ զիս յիշեա՛յ առ Քրիստոս՝ զՍարգիս*:*

ՆՇՈՒՄ՝ *Պհպ. Բա՝* «Խ[աչիկ] *վարդապետ, Հմր 30/3670»:*

Ձեռագիս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Յուցակ ձեռագրաց Դպրեան Խաչիկ վարդապետի, ժողված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 45-46, Հմր 30:


ԳՐՁԱՓՈՐՁ՝ *104ա՝ կարմրով «ով անմահ», 59ա՝ մանուշակագոյնով «Ձակքէ», 109բ՝ սեւով «ջ»:*

3671
ՄԱՇՏՈՑ

ԳԵՏԱՁՈՐ ՌԺ. – 1561

ԳՐԻՁ՝ Աթանէս: **ՍՏԱՑՈՂ՝** Յոհաննէս ֆիյ, Սարգիս սրկ. (եղբօրորդիք գրչի):

ԹԵՐԹ՝ 191-1 (թուիչ՝ թ. 154-6). չգրուած՝ 191բ: **ՊՐԱԿ՝** Ա.-ԺՁ×12 (ԺՁ 10): **ՆԻՒԹ՝** թուղթ. լուսագծերով: **ՄԵԾՈՒԹԻՒՆ՝** 16,5×11: **ԳՐՈՒԹԻՒՆ՝** միասիւն (11,5×8): **ԳԻՐ՝** բոլորգիր (նմուշ՝ 49ա). գրչախաղերով (10ա, 21բ եւ այլուր), խորագիրք՝ կարմիր: **ՏՈՂ՝** 19: **ԿԱՁՄ՝** շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դռնակով, մէջբը՝ սեւ կտաւ (նորոգման ժամանակի). միջուկը՝ ստուարաթուղթ (Ա. փեղկ), տախտակ (Բ. փեղկ). մէջբը՝ սեւ կտաւ (նորոգման ժամանակի). աստառը՝ դեղնաւուն թուղթ (Բ. փեղկինը կիսով թուղթ, կիսով՝ դռնակի աստառի շարունակութիւն-կտաւը), դռնակի աստառը վանդակազարդ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր: **ՊԱՀՊԱՆԱԿ՝** ԱԲ+ԳԴ՝ սպիտակ չգրուած թուղթ՝ ԱԴ, կանաչ չգրուած թուղթ՝ ԲԳ, Ա եւ Դ՝ մասն կազմաստառի (նորոգման ժամանակի):



Նմուշ 49ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Կիսախորան՝ 3ա: Ճակատազարդ՝ 27ա, 40բ, 64ա, 103ա, 120բ, 134բ, 149ա: Լուսանցազարդ՝ բուսական, թոչուն՝ 75բ, 92ա, 135ա, 174ա, ոճաւորուած խաչ՝ 103ա, վարդեակ, սափոր՝ 150ա, յուշկապարիկ՝ 166ա: Ջարդագիր՝ հանգուցագիր, թոչնագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, երկնագոյն, դարչնագոյն, շագանակագոյն, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած Ի. դարում, կազմի կաշին գունափոխուած, վնասուած, ֆեռծուած, մաշուած, տեղ-տեղ թափուած, մէջբը փոխարինուած սեւ կտաւով, Ա. փեղկի եզրերը նորոգուած վարդագոյն մոմլաթով, դռնակի կաշին ճաճճած, մաշուած, ֆեռծուած, գունափոխուած, խոնաւութիւնից ձեւափոխուած, վարից վեր պատռուած, զոյգ կապիչներն ու գամերն ընկած, Բ. փեղկի եւ դռնակի աստառը աղտոտուած, մաշուած, գունափոխուած, Բ. փեղկի համարեա չպահպանուած ձին՝ կտաւէ աստառին փակցուած սպիտակ թուղթ. լուսանցակողերը մաշուած, կարմիրը գունաթափուած, վերին լուսանցակողերի ձիմմին սեւով վարդեականեւ դրոշմազարդ. պիպ-ները թեթեւակի աղտոտուած, թերթերին զանազան բծեր, խոնաւութեան եւ սնկային ձիւանդութեան հետեր, գրադաշտը խոնաւութիւնից գունափոխուած, թ. 12-48՝ առտ. լս-ներին, թ. 99-191՝ ձիմմին մօտ, եւ թ. 184-91՝ թերթերի վերին կէսերին անմաւռ ջրի լայն հետեր, թ. 40-5՝ ձիմմից անջատուած, մանրանկարները խոնաւութիւնից գունափոխուած, թ. 187-91 եւ Բ. փեղկի կաշուի վրայ ցեցի անցքեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-191ա* [Մաշտոց]

1. *3ա-20բ* [Կանոն Մկրտութիւն առնելոյ] – *Տէ՛ր Աստուած մեր, Աստուա՛ծ բարերար…*

2. *20բ-6բ* Կանոն զձանդերձ հարսանեաց աւրհնել – *Բերեն առաջի քահանային եւ ասեն շարական ԴՁ. խաչանշան դրոշմամբ… Ընթերցուած յԱռակաց. Լուարո՛ւք թագաւորք եւ ի միտ առէք…*

3. *27ա-36ա* Կանոն պսակ դնելոյ – *Բերեն եկեղեցին եւ ասեն սաղմոս. Տէ՛ր, ի զօրութեան քում՛…. Ընթերցուած ի Ծնընդոց. եւ ասաց Աստուած. Արասցուք մարդ ըստ պատկերի մերում…*

4. *36ա-40ա* Կանոն հաղորդ տալոյ – *Առնու քահանայն զփրկական խորհուրդն եւ խաչ առաջի եւ բուրուառ եւ երթայ առ հիւանդն… եւ ասէ [աղօթս]. Տէ՛ր Աստուած ամենակալ, ամենագութ, ամենախնամ…*

5. *40ա-57բ* Կանոն համաւրեն ննջեցելոց – *Սաղմոս. երկինք պատմեն զփառս. Աւրհնութիւն եւ փառք… եւ ա-*

սէ զաղօթս. Աստուա՛ծ յաւիտենական, անսկիզբն, անեղ, անիմանալի…

6. *57բ-63բ* [Կանոն երկրորդ աւուրն] – *Իսկ յերկրորդումն աւուր առաւաւտուն գան ի գերեզման եւ ասեն Սղ. կց. եղիցին ականջ քո ի լս՛՛… Պաւղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցոց. Այլ մեք պարտիմք գոհանալ զԱստուծոյ…*

– *58բ-61ա* Եւ հաճոյն ասէ զաղօթս, զոր ասացեալ է Բարսղի հայրապետէն [Կեսարացւոյ, *տե՛ս ձեռ. 826, 120ա*] – *Գոհանամք զքէն, Տ՛ր, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի… զի արժանաւորք եղիցուք փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ. այժմ:*

7. *64ա-75բ* Կանովն յորժամ տղա վախճանի – *Այսպէս յուղարկեն առ Քրիստոս. Աւեն սաղմոս գոբզայս Դ. Առ քեզ, Տ՛ր, համբարձի… եւ քահանայն ասէ զաղաւթս. Սուրբ ես, Տ՛ր Աստուած մեր, որ բնակեալդ ես ի յերկինս…*

73ա ստ. լս. գրչից՝ «Յաւրինակն չկայր, ո՛վ եղբայր»:

8. *75բ-85ա* [Կանոն Տղայաթաղի այգոյն] – *Իսկ յերկրորդումն աւուր առաւաւտուն գան ի գերեզմանն Սղ. եղիցի անուն Տեառն աւրհնեալ… Ընթերցուած յեսայեա մարգարէէ. Զի ի Տեառնէ եղիցի գանձ արդարոց…*

78ա գրչից՝ «Գոհութիւն յԱստուծոյ, որ յայսպէս աւետիս լուաք»:

– *79ա-83ա* Գանձ ննջեցելոց թաղմանն (*ծայրակապ՝* «ՄԱՆՎԵԼՍ»). [Մանուէլ եպիսկոպոսի ասացեալ ի թաղումն մեռելոց]* – *Մինդ ի չէէն Բանդ որ ի Հաւրէ, յորժամ ծագիս փառաւք ի յերկինէ… ի չար այսոցն զիս թափեցէք: Ողորմե՛՛:*

* Տե՛ս Մատենագիրք հայոց, ԺԴ. հատոր, Գանձարան, Գիրք Բ., Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 1551-1553:

– *83ա-5ա* Եւ յետոյ զողբս ասա ննջեցելոց (*արտք. լս. «Տաղ»*)* – *Ո՛վ քահանայք եւ վարդապետք աստուածաբան… զի Տէրըն քաղցր է պարտական ողորմութեան:*

* Տե՛ս Մատենագիրք հայոց, ԺԴ. հատոր, Գանձարան, Գիրք Բ., Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 1555-1556:

9. *85բ-92ա* Կանոն յոգեհանգիստ առնելոյ կամ պատարագ մեռելոյ – *Աւեն Սղ. ի թիւ. երանի ում թողութիւն եղեւ մեղացս… եւ ասէ զաղաւթս զայս. Տ՛ր, բարերար գաւօրդ ես կենդանեաց…*

– *91բ* Աւրհնութեան աղի – *Սղ. Աստուած ողորմի մեզ, եւ աւրհնեա՛ զմեզ է՛՛: եւ ասէ զաղաւթս. Աւրհնեալ ես, Տ՛ր Աստուած, ամենակալ արարիչ…*

10. *92ա-8բ* Կանոն Տեառնական աւրհնելոյ – *Աձեն զնքւիրեալսն ի դուռն յեկեղեցոյն եւ առաջի Սուրբ Խաչին… Ընթերցուած ի Ղեւտացոց. եւ կոչեաց Տէր զՄովսէս եւ խաւսեցաւ ընդ նմա…*

11. *98բ* Կանոն աւրհնութեան աղի – *Սաղմոս. Աստուա՛ծ, ողորմեա՛ մեզ եւ աւրհնեա՛ զմեզ եր՛՛. եւ ասէ զաղաւթս. Աւրհնեալ ես, Տ՛ր Աստուած, ամենակալ արարիչ ամենայն արարածոց…*

12. *99ա-102բ* Կանոն զարմտիս, սերմանեաց եւ զղեղջ եւ հընձան աւրհնելոյ – *Սաղմոս, կցուրդ. Հովիտք բազում արասցեն… Ընթերցուած յԱռակաց. Պատուեա՛ զՏէր ի քոյոց արդար վաստակոց…*

13. *102բ-20բ* Կանոն Խաչ աւրհնելոյ – *Յետ հսկմանն տանին յեկեղեցին եւ լուանան նախ ջրով… Ընթերցուած յԱռակաց. երանեալ է այր, որ եգիտ զիմաստութիւն եւ մարկանացու, որ եառես գհանճար…*

14. *120բ-34բ* Կանովն ջուր աւրհնելոյ – *Աւեն սաղմոս ԻՀ. կցուրդ. Զայն Տեառն ի վերայ ջուրց… Ընթերցուած ի Ջորրորդ թագաւորութեան. եւ ասեն արք քաղաքին ցեղիսէէ…*

– *124բ-8ա* Աւրհնութիւն ջրոյ, զոր ասացեալ է տեառն Բարսղի Կեսարացւոյն* – *[Ա]ւրհնեալ ես, Տ՛ր Աստուած ամենակալ… ծերք եւ տղայք հանդերձ ցնծութեամբ տացեն գոհութիւն Աստուծոյ:*

* Տե՛ս ձաշոց, Վաղարշապատ, 1872, էջ 15-17:

15. *134բ-49ա* Կանոն Մեծի հինգշաբթին. Ջապաշխարողն առնակելոյ – *Ի Գ. ժամն ժողովէ քահանայն զապաշխարողսն ի դուռն եկեղեցոյն… Ընթերցուածս յեսայեա մարգարէէ. եւ կատարեսցին յաւուրք սգոյ քո, եւ ժողովուրդ իմ ամենեւին արդար…*

– *138ա-43ա* Աղաւթք, զոր ասացեալ է սրբոյն Բարսղի [Կեսարացւոյն, *տե՛ս ձեռ. 826, 353բ*] – *Տ՛ր Աստուած, Հա՛յր ամենակալ, արարիչ երկնի… եւ ազատեալք արեամբ Միածնի՝ որդոյ քո Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Քեզ, Հաւր եւ Հոգւոյդ Սրբոյ վայելէ փա՛՛:*

16. *149ա-66ա* Կանոն Մեծի հինգշաբթին. Ոտնալուային – *Ըստ որում ասաց Փրկիչն Քրիստոս, թէ՝ Յաւրինակ մի եառու ձեզ… եւ եպիսկոպոսն ասէ զաղօթս. Փառաւորեմք զքեզ, Տ՛ր մեր եւ փրկիչդ Յիսո՛ւս…*

17. *166ա-73բ* Քառոզ պատուիրանին – *Ձեկուցանէ քահանայն ժողովրդեանն. Առեալ զսուրբ Աւետարանն ի գիրկս իւր, ելանէ ի բեմբն եւ կարկառեալ զձեռն ասէ. Լուարո՛ւք ինձ, որդեա՛կք իմ…*

18. *174ա-87բ* Աւետարանի իւղաբերից, Բժշկութեան, Հանգստեան – *Մաթէոս. եւ յերեկոյի շաբաթին, յորում… 175բ-7ա* Աւետարան ըստ Մարկոսի – *եւ իբրեւ երեկոյ եղեւ… 177ա-8բ* Աւետարան ըստ Ղուկասու – *եւ ահա այր մի յանուն Յովսէփ… 178բ-80բ* Աւետարան ըստ Յովհաննու – *Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս Յովսէփ… 180բ-1ա* Աւետարան Բժշկութեան – *Մաթէոս. եւ իբրեւ եկն ի ժողովուրդն… 181աբ* Աւետարան Հանգստեան – *Մաթէոսի. եւ ապա երեւեաց նշան Որդւոյ մարդոյ… 181բ-2բ* Աւետարան ըստ Մարկոսի Բժշկութեան – *եւ ընդ այգն ընդ առաւաւտն յարուցեալ… 182բ-3բ* Աւետարան ըստ Մարկոսի Հանգստեան – *Այլ յաւուրսն յայնոսիկ յետ նեղութեանն այնորիկ… 183բ-4ա* Աւետարան ըստ Ղուկասու Բժշկութեան – *եւ եղեւ*

ի հասանելն նորա… 184ա Աւետարան ըստ Ղուկասու Հանգստեան – *Ջգոյշ լերո՛ւք անձանց, գուցէ ծանրանայցեն… 185ա-6ա* Աւետարան ըստ Յովհաննու Բժշկութեան – *Յետ այսորիկ տաւն էր հրէից… 186ա-7ա* Աւետարան ըստ Յովհաննու Հանգստեան – *Եթէ սիրէք զիս, զպատուիրանս իմ պահեսջի՛ք… 187աբ* Աւետարան ըստ Յովհաննու – *Ես եմ հովիւ քաջ…*

19. *187բ-9բ* Կանոն աւազան աւրհնելոյ – *Հաստատեն յաւազանն ի տեղոջ իւրում եւ լուանան նախ ջրով… Քո երեքանձնեա տէրութեանդ վայել է փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ՛:*

Կանոնների խորագրերի համառօտութիւնները գրուած են ստ. լս-ներում:

Համմտ. Մայր Մաշտոց, հտ. Ա., Գիրք Ա., աշխ. Գ. Տէր-Վարդանեանի, Սուրբ Էջմիածին, 2012:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, ժէ. դ., նոտրգիր

1ա-2ա [Հանդերձաւրհնէք. Գանձ Խաչատուրի ասացեալ, *համմտ. ձեռ. 3116, 25ա*]* (*ծայրակապ՝* «ԽԱՉԱՏՈՒՐԻ Ե») – *Խաչանիշ դրոշմամբ նշանի, / Պարագրական փառօք պսակի, / Ի կարմրութիւն ձորձոյ ծիրանւոյ / Եւ ոսկեթել բեհեզոյ օրհնեա՛, Միածին, հանդերձ հարս[ան]եաց… Կենսատու խաչին եւ սուրբ նշանին աւրհնեա՛յ մի:*

* Ծնթ. Գանձը վերագրւում է Խաչատուր Տարօնացուն. տե՛ս Ա. Ահարոնեան, Հայկական ծիսարանի հիմնական երաժշտական շարերի մասին, Պատմաբանասիրական հանդես, Երեւան, 1985, Հ՚ 1, էջ 139:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

2բ Աւգնեա՛, Հոգի՛ Սուրբ, Աստուա՛ծ ճշմարիտ:

63ա (ստ. լս.) Խնայեա՛, Տէ՛ր, զծառայս քո:

63բ Եւ զանպիտան զմեղսամած գրիչս յիշեա՛, ո՛վ եղբայր, եւ թողութիւն մեղաց իմոց խնդրեա՛ ի Տեառնէ, աղաչեմ:

78բ Ջատացող սորա եւ զգծողս յիշեա՛, ո՛վ եղբայր, եւ բոլոր սրտիւ զԱստուած ողորմին ասա՛յ, աղաչեմք, եւ դու յիշեալ լիցի՛ս ի Քրիստոսէ Աստուծոյն մերոյ. ամէն. այսօր Գիւտ նշխարաց Լուսաւորչին է:

80բ (ստ. լս.) Գանձ ննջեցելոց ասա՛ |81ա| եւ զիս ի յաղաւթս յիշեա՛:

83բ (ստ. լս.) Արտասուալից ասա՛ զողբս, |84ա| ո՛վ եղբայր:

98բ (ստ. լս.) Եւ զիս յիշեա՛, ո՛վ եղբայր:

109բ (ստ. լս.) Այսուր, որ է |110ա| Ահկի Բ. եւ թիւն ՌԺ. (1561) ձալալ հօրեղբայր իմ փոխեցաւ առ Քրիստոս յոյսն մեր:

113բ (ստ. լս.) Եւ զիս |114ա| յիշէ՛ք, աղաչեմ (նոյնը՝ 125ա):

134բ (խորագրի վերջում) Եւ զիս յիշեա՛:

167ա (ստ. լս.) Վա՛յ ինձ, թէ ի՛նչ լինիմ:

168ա (ստ. լս.) Վա՛յ ինձ Ռ. (1000) բերան:

171ա (ստ. լս.) Կարդա՛, զմեղաւորս գծող յիշեա՛, աղաչեմ:

179բ (ստ. լս.) Կարդա՛ եւ զիս |180ա| ի յաղաւթս ձեր յիշեա՛յ, աղաչեմ զձեզ:

190ա Փառք ամենասուրբ երրորդութեանն՝ Հաւր անեղին եւ Որդւոյն միածնի եւ Հոգւոյն ճշմարտի. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւ[իտեն]ից, որ ետ ինձ կարողութիւն տկարիս հասանել յաւարտ սորին: Գրեցաւ Մաշտոցս ձեռամբ անարժան եւ փցուն գրչի՝ Աթանէս *մեղաւորի, ի թվիս Հայոց ՌԺ. (1561), ի յայսմ վայրի, որ եւ* Գետանոր* *կու անուանի ընդ հովանեաւ սուրբ նահատակիս* Գետա *եւ սուրբ եկեղեցոյս ի վայելումն եղբաւր որդոցն իմոց՝* Յոհաննէս *քահանային եւ* Սարգիս *սարկաւագին, եւ յիշատակ հոգոյ իմոյ եւ ծնողաց իմոց՝ հարսն իմ՝* Վրթանէս *քահանային, եւ մաւր իմոյ՝* Գուլպահարիւն, *եւ եղբար|190բ|ց իմոց՝* Յովանիսին, Խաչանիսին *եւ* Վարդանին, *որ հանգուցեալ են ի Քրիստոս, եւ քվերց իմ՝* Գուլվարդին *եւ* Բեկիխաթունին, *եւ եղբաւրորդոց իմոյ՝* Ղուկասին, Մարկոսին, Յոհաննէս *քահանային, եւ* Սարգիս *սարկաւագին, եւ* Յակոբին, *եւ միւս եղբօրորդոց՝* Մարտիրոսին *եւ* Յոհաննին, Մարգարիտին *եւ մօր իւրեանց՝* Դադին, *եւ* Եղիսաբեթին: *Որք հանդիպիք սմա կարգալով կամ աւրինակելով, յիշեցէ՛ք ի մաքրայփայլ աղօթ ձեր զմեղաւք աղտեղացեալ հոգի՝* Աթանէս *գծողիս եւ զվերոյ գրեալ անուանքս, եւ լի բերանով եւ ուղիղ սրտիւ զԱստուած ողորմին ասացէ՛ք, աղաչեմ: Ձեզ խիստ կարելի է, եւ մեզ յոյժ պիտանի, եւ Աստուածն ամենայնի՝ ստեղծաւղն երկնի եւ յերկրի, զձե|191ա|զ առնէ արժանի՝ յաջակողմանն դասի արքայութիւնն մեծարի, եւ ձեր խնդիրքն կատարի. ամէն: Այլեւ ողորմի՛, Քրիստոս,* Հռոմի *եւ* Խաճբէկիի, *որ [յ]ոյժ սպասաւորութիւն արարին մեզ, զվարձս յԱստուծոյ առնուն, որոյ մեզ վրայ երախտիք եւ աշխատանք կայ՝ թէ շատ, թէ փոքր: Այլեւ ողորմի՛, Քրիստո՛ս Աստուած, վարպետին իմոյ՝ մեծ րաբունապետին՝ ի* Ղուկաս *վարդապետին, եւ* Յոհաննէս *վարդապետին, որ շատ աշխատանք ունին վերայ իմոյ, արարիչ Աստուած զնոքա երկոտասան վարդապետացն դասակից եւ պսակակից արասցէ. ամէն, ամէն:*

* Ծնթ. Ըստ Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարանի (հտ. Ա., Երեւան, 1986, էջ 843)՝ Գետանոր-ը Լօռիում է՝ Լոռ լեռան մօտակայքում:

ՆՇՈՒՄ՝ *Պհպ. Աա, 1ա՝ մատիտով «3671», պհպ. Բա՝ «Հ՚ 9», «Խ[աչիկ] վարդապետ, Հ՚ 31/3671», պհպ. Բա՝ «ՌԺ.-1561,* Մ[ետրոպ] *եպ[ի]ս[կոպոս]»:*

Ձեռագրիս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Յուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 46-47, Հ՚ 31:

ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *146ա՝ մարդկային դէմք (գրչախաղի արդիւնք), 187բ՝ աւազան:*


3672
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ՌԾԸ., ՌՀԲ. – 1609, 1623


ՍՏԱՅՈՂ՝ Կարապետ երէց եւ Յովհաննէս* (1623 թ.):

ԹԵՐԹ՝ 218. չգրուած՝ 197բ: ՊՐԱԿ՝ Ա.-ԺԲ×12 (Ա 10)+1-6×12 (3՝ 10, 5, 6՝ 14)+2: ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 13,5×10: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն՝ թ. 1-166 (9,5×6,5), թ. 167-218 (9,5×7): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 100ա), գրչափոխութիւն՝ 166բ-218ա (նմուշ՝ 168ա). խորագիրք՝ կարմիր, սկզբնատողերը՝ կարմիր եւ կանաչ: ՏՈՂ՝ 16 (թ. 1-166), 13-15 (թ. 167-218): ԿԱՋՄ՝ կարմիր մոմլաթ, մէջբը՝ սեւ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ սպիտակ թուղթ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա.Բ+Գ.Դ՝ սպիտակ չգրուած թուղթ, մասն կազմաստառի (Ա, Դ):

* Ծնբ. Ձեռագրի 1ա-166ա մասը գրուել է 1609 թ., այնուհետեւ 14 տարի անց գրչափոխութեամբ գրուել է միւս՝ 166բ-218ա մասը:



Նմուշ 100ա



Նմուշ 168ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ (գծանկարային) – Կիսախորան՝ 1ա: Ջարդագիր՝ հանգուցագիր՝ 1ա: Գոյն՝ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած-վերակազմուած Ի. դարում, ձեռագրի սկզբից եւ վերջից երկուական թղթէ պահպանակ աւելացուած. կազմի մոմլաթը թեթեւակի ֆեռծուած, մաշուած, աղտից մասամբ սեւացած, պիպ-ներ Բ., Գ.՝ խոնաւութիւնից գունափոխուած. լուսանցակողերի կարմիրը թափուած, սեւացած, գործածութիւնից եւ խոնաւութիւնից տեղ-տեղ մաշուածթափուած. թերթերին գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, իւղի, մոմի, այրուածքի, սեւ թանաքի, սնկային հիւանդութեան հետեւեր, որոշ թերթերին՝ նաեւ մատնահետեւեր՝ 49բ, 50բ եւ այլուր, գրադաշտը երբեմն աղտոտուած, խոնաւութիւնից խիստ դեղնած, գունափոխուած, սեւացած, տեղ-տեղ լուացուած, կպումներից որոշ հատուածներ եւ բառեր եղծուած, կնճռոտումների թանաքը տարբալուծուած՝ գիրը յաճախ անընթեռնելի, թ. 4-14՝ ստ. լս-ները մաշուած-թափուած, թ. 46՝ վր. լս-ը պատռուած, թ. 52-4, 182՝ վերին, իսկ թ. 167, 185-7, 210՝ ստորին անկիւնները պատռուած-ընկած, թ. 77, 152՝ պատռուածք-անցքեր՝ գրադաշտը մասամբ վնասուած, թ. 201՝ վարդագոյն թանաքաբիծ, թ. 188, 197՝ պատռուած մասերը նորոգուած-լրացուած այլ՝ սպիտակ թղթով, թ. 190՝ հիմից մասամբ անջատ, թ. 1-9, 25-36, 96-101՝ ցեցի անցքեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-74բ* [Կանոնգիրք]

1. *1ա-8բ* Կանոնք եւ սահմանք սուրբ առաքելոյն Թ[ա]քէոսի եղեալ – Հարցումն. *Մրպէս պարտ է եպիսկոպոսին լինել կալ ի տեսչութիւն եկեղեցւոյ:* [Պատասխանի]. *Եպիսկոպոսն եղիցի սուրբ, անարատ, պարկեշտ... այլ հանապազ պողընկուիթիւն, եւ ընդ անիծաւք Արարչին:*

Ծնբ. Առկայ են միայն՝ Ա., Գ., Դ., Ժ.-ԺԴ., ԺԷ.-ԺԹ., ԻԱ., ԻԲ., ԻԲ., ԻԳ., ԻԹ.-ԼԱ., կանոնները, առանց համաբակալման: Հմմտ. Կանոնագիրք հայոց, աշխ. Վ. Յակոբեանի, հտ. Բ., Երեւան, 1971, էջ 19-40:

2. *8բ-32ա* [Ի կանոնաց սրբոց հարց]* – Հարցումն. *Վասն գայլատի եւ շնատի: եթէ կենդանի են ըմբռնեալ, զենցեն... 9ա Իսկ քահանայից ձուկն յորսացեալ կերիցեն: 9աբ Այլ ի սուրբ եւ ուտելի կենդանեաց, եթէ ի ծնունդս մեռանի... 9բ Եւ եթէ մորթեալ գտանիցեն ի նմայ ծնունդ շնչով մի՛ կերիցեն... 9բ-10ա Այլազգոյ ի ձեռն առեալ հաց մի՛ ուտիցեն... 10աբ Այլ ի նոցանէ զաման փ[ո]րձեալ ի պէտս մեր առնուլ... 10բ-1ա Քրիստոնեա կնոջ՝ զբուրդի տղայն չէ պարտ ի ստեանցն կերակրել... 11ա Դարձեալ սովորութիւն քահանայից, որ այլազգոյ ծնունդն մկրտեն... 12բ-3ա Այլ ի ժամ մերոյ մկրտութեան ի բաց կացցեն... 13ա Եւ մի՛ ոք եղիցի կնքահայր ապաշխարողաց... 13ա-4ա Եւ թէ մի անգամ ոք արարեալ է տգիտութեամբ մեծաջան... 14ա Եթէ մկնառ գինով կամ նշխարով անգիտութեամբ ոք պատարագ շինէ... 14աբ Իսկ եթէ գիտութեամբ ոք մատուցանէ առ ոտն հարկանելով զանճառ խորհուրդն... 14բ-5բ Իսկ ի դնել սպասուցն մերձեցեալ մուկն արածեսցէ... 15բ-6ա [Ա]յլ Բ.աւրեայ նշխարով ոք շինէ պատարագ... 16աբ Իսկ եթէ յաւթեակ ջրով ի պատճառս ծուլութեան կազմեացին նշխար... 16բ-7բ Վասն երազափորձութեան յաւրինակ տեսանի՝ է, որ ի լնուլ ժամանակի... 17բ-8ա Այլ եթէ անկանի ընդ քուն մայրն ի վերայ մանկան... 18աբ*

Վասն անկնունք մանկան մեռանելոյ հարցմանն… 18բ-9ա Այլ են ոմանք, որ չար սովորութեամբ ճմլեն… 19ա Վասն յարուսյգիտաց եւ անասնագիտաց մի է բանն… 19բ Եթէ անաւրինաց հետ խառնակին, ժե. (15) ամ ապաշխարէ… 19բ-20ա Այլ կանայք պոռնիկ, որ զմանկունս սպանանին… 20ա-1ա Վասն հաղորդելոյ հարցմանն այս է… 21ա-3ա Առաջ քահանային պարտ է ուսուցանել զմեղաւորն… 23ա Ապա թէ կոչեսցեն զքահանայն վասն հիւանդին կամ վասն… 23բ-4ա Այլ թէ քահանայն վերբերութիւն առնէ… 24ա Այլ կանայք, որ ի ծնունդս մեռանին… 24բ-5ա Ընդ քուրդի որ շնայ կին սոդոմակա[նա]ւն հանդերձ… 25ա Կարգեցին առաքեալքն, թէ ոք փոխ տայ եւ առնու վաշխ… 25ա Վասն գողի – *Ահա գողացար եւ զրկեցար զընկերդ… 25բ-7բ* Յաղագս ոչ առնելոյ սուգ ի վերայ մեռելոց – *Դ[արձ]եալ ի վերայ ամենայնի գրեմք զայս կանոնք հաստատութեամբ… 27բ Իսկ եթէ մեղաւք շաղախեալ իցէ ոք ընդ մօրեւր կամ ընդ խորդ քվեր… 27բ-8ա Եթէ ընդ հարսին կամ ընդ զանքաչին պոռընկին… 28ա Այլ պարտ է քրիստոնէից որ ժ.ամեայ զաւակն ոչ քնեն ընդ մաւր կամ ընդ քվեր: 28ա Այլ երիտասարդ քահանայ, որ կին իւր մեռանի… 28բ-30ա Վասն մկան, թէ մուկն ի վերայ աղի սատկի… 30ա Թէ տաշտ կամ տեփուր կամ այլ ինչ ամանք… 30բ-1բ Ի [հ]այ կին, որ լինի ընդ տաճկի եւ ոչ մեկնեսցէ ի պատճառս քրիստոնէութեան… 31բ Թէ կամաւ զգաստերս իւրեանց տացեն այլազգեաց անհաւատից… 31բ-2ա Եթէ քրիստոնեա կին տաճկի մանկան ծիծ տայ… Եթէ սովորական գործ՝ որոշեսցի եկեղեցւոյ:*

* Այստեղ 8բ-25ա, 27բ-32ա թերթերին Դափթ Ալաւկայ որդու Բ.-Դ., ե., Ը.-ԺԲ., ԺՋ., ԺԸ.-ԻԱ., ԻԴ., ԻԷ., ԻԹ., ԼԱ., ԼԴ., Խ., ԽԴ., Ծ., ՇԵ.-ՇԷ., ՀԲ., ՀԳ., ՀԷ. կանոններն են՝ առանց համարակալման, խառն եւ հաղուածոյ (որոշ դեպքերում խմբագրուած եւ համադրուած այլ կանոնների հետ՝ տե՛ս 20ա-1ա, 23աբ, 27բ-8ա, 28բ-32ա). հմմտ. Ա. Աբրահամեան, Դափթ Ալաւկայ որդու կանոնները, ուսումնասիրութիւն եւ բնագրեր, Երեւան, 1953, էջ 10-47: 25ա՝ Կանոնք առաքելականի ԺԸ. կանոնը. հմմտ. Կանոնագիրք հայոց, աշխ. Վ. Յակոբեանի, հտ. Ա, Երեւան, 1964, էջ 39: 25բ-7բ՝ Յովհաննէս Երզնկացւոյ Խրատ հասարակաց երկի ԺԹ. գլուխը՝ համառօտուած, հմմտ. Է. Բաղդասարեան, Յովհաննէս Երզնկացին եւ նրա խրատական արձակը, Երեւան, 1977, էջ 179-180: 21ա-3ա, 25աբ՝ հաղուածմներ այլ կանոններից:

3. *32ա-46ա* [Բանիմ կանոնականք]

ա. *32ա-3ա* Կանոնք եւ սահմանք սուրբ հայրապետին Սահակայ – *Պարտ է քառասունք տալ մեռելին, զի առաքելական հրամանք է եւ աւանդութիւն սուրբ հարցն*… 32բ-3ա Եպիսկոպոսին հասքն, տուն քահանայիցն… 33ա Գեղոյ քահանային ռամիկ ժողովրդեանն զթաղմանն եւ զպաշտմանն… զտուն աւրհնելն, ամենայն ինչ երիցու է:*

* Ծնթ. Քաղուած Յովհաննէս Երզնկացոյ Խրատ հասարակաց երկից. տե՛ս Է. Բաղդասարեան, Յովհաննէս Երզնկացին եւ նրա խրատական արձակը, Երեւան, 1977, էջ 180-181: Սկզբում Սահակ Ջորոփորեցու ԺԵ. կանոնի վերաշարադրանքն է (հմմտ. Կանոնագիրք հայոց, հտ. Ա, էջ 513), ապա հաղուածմներ այլ կանոններից:

բ. *33աբ* Այլ կանոնք Մեհրոնի – *Մի՛ իշխեսցէ ոք ի պէտս դեղոց մերձաւցանել… Էթէ ոք յանդգնի, առնէ զայս, նզովեալ եղեցի:*

գ. *33բ-4ա* [Պասի, ձէթ կամ գինի ու[տելոյ]. *ձեռ. 8461, 37բ, ստ. լս.*] – *Եւ լուաք վասն քահանայից եւ սարկաւագաց… ճ. (100) ծունր եւ կանոն ըստ կարգին եւ ողորմութիւն հետ նորա:*

դ. *34աբ* [Քահանայն, nr շահ ուտէ. *ձեռ. 8461, 38ա, ստ. լս.*] – *Քահանայ կամ այլ եկեղեցական, որ զարծաթ իւր ի վարձու տայ… եւ այլ մի՛ գնասցէ:*

ե. *34բ-5ա* Վասն հոսման, nr fուն լինի – *Ջերմութիւնն, որ ի քուն լինի, է որ խոտելի է եւ մեղադրելի, զի եթէ յղփութենէ կերակրոց լինի կամ ըմպելեաց… 35ա-6ա Այլ վասն տեսլեանց պէս-պէս, որ լինին արուի… ապա թէ սովորութիւն առնէ, պոռնիկ է ստոյգ. եւ Քրիստոսի փառք յ[աւիտեան]:*

զ. *36բ-44ա* [Վասն ամուսնութեան]* – *Եւ արդ, այսպէս է խնամութիւնն, որ լինի կրտիճ (այսպէս) տղայն ժե. (15) տարոյ՝ փեսացու է, եւ աղջիկն՝ ԺԴ. (14) կամ ԺԲ. (12)… 37բ-8ա Եթէ ազգականք յամուսնանան, զի՞նչ արասցուք… 38ա Եթէ ոք առնու կին ի մերձաւորէ իրմէ մինչեւ ի վեցերբորդն… 38աբ Արդ, գիտասցէք աստուածասէր ժողովո՛րդք, ով յուժով զքահանայն իւր կամացն հանէ… 38բ-43բ Երբ գինւ(վերեւում ուղղած՝ տ)ենայ մարդ, որ կին իւր չհասոյթք է… 43բ-4ա Զի կանոնքս սուրբ հարցն գրեալ է, ոք անգիտութեամբ կիրակէի ի կինն իւր մերձենայ… կատարողք աւրինացն աւրհնին Աստուծոյ եւ ամենայն սրբոցն. ամէն:*

* Ծնթ. Քաղուածմներ Յակոբ Դրիմեցւոյ, Թադէոսի, Բարսեղի, Աբասեղի եւ այլոց կանոններից:

է. *44ա-6ա* Վասն ազգակցութեան հարց, զոր է. պորտն կոչի եւ բաժանի Գ. ի դէմս, ի վեր եւ ի վայր, եւ ի կողմն, զոր ասացին սուրբ հայրապետք* – *Ի վերն այսպէս առաջինն մեք եւ հայրն մեր եւ պապն… 45աբ Եւ խնամութիւնն է. պորտն առնու, որ աւտար ազգ է… 45բ-6ա Զի հասարակ կանոնք այսպէս եդին սուրբ հարքն, եթէ հոգեւոր ազգն, որ է յաւազանութիւն… ի հոգեւոր ազգն, որ է Մանուբէլն:*

* Ծնթ. Քաղուածմներ Գրիգոր Տաթեացւոյ Հարցմանց գրից (հմմտ. Գրիգորի Տաթեացւոյ Գիրք հարցմանց, Երուսաղէմ, 1993, էջ 611 (հատոր իններորդ, պրակ ԼՋ.) եւ ամուսնութեան հոգեւոր ու մարմնաւոր ազգակցութեանը վերաբերող այլ կանոններից:

4. *46բ-74բ* [Ի Դատաստանագրոց]*

ա. *46բ-57բ* Վասն [դատաստա]նի գրոց մեծին [Սահակայ եւ Բարսղի, եդե]ալ փ[որր ի շատէ գրեցաք աս]տ. Վասն եկեղեցայ[կա]նաց – *եւ արդ, այսպէս սկսաք ցուցանել զկարգ եկեղեցւոյ… 49բ-50ա Որք զպտուղս եկեղեցւոյն կամին արտաքսել… 50աբ Զի որ զպտուղն զտեառնականն… 50բ-1ա Կան եկեղեցիք, որ թագաւորաց կամ մեծամեծաց հարկ ուտեն… 51աբ Զվիճակաց եւ զաթոռոց եւ զժողովրդոց, եթէ հայրապետաց փոխիլ կամին վասն տգիտութեան… 51բ-3ա եթէ վախճանի եպիսկոպոսն, նամակաւ տացէ զինչս եկեղեցւոյ… 53աբ եթէ ոք գողութեամբ քահանայ կամ գլխաւոր կամ ռամիկ… 53բ-4ա եւ մի՛ լիցի քահանայից ժառանգութիւն առնել… 54աբ եթէ ժողովրդեաց ոք փոխէ՝ թաղէ ի թաղ գնայ… 54բ-5ա* Մատաղի *(լս-ից)* – *եւ աշխարհական ոք թէ մատաղ առնէ, իւրում քահանային տացէ… 55աբ* Բանադրելոյ *(լս-ից)* – *եթէ վանականաց կամ եպիսկոպոսի կամ երեցու ի գլխաւորաց… 55բ-7ա Քահանայ, թէ վասն աշխարհի… 57աբ եւ թէ ոք եկեղեցական տեսանէ, զի իշխան ոք, որ անզգամի… 57բ* Վախմի *(լս-ից)* – *եւ թէ լինի եկեղեցւոյ վախմ կամ գեղ կամ յագարակ… բայց միայն զիւրն կորուսանել:*

բ. *57բ-60բ* Վասն բահանայից առնելոյ զպտուղս ժողովրդոց – *եւ այս են իրաւունք քահանայից ի ժողովրդոցն, որ զենուն զգենլիս, եթէ արջառ իցէ, եթէ ոչխար… 58բ-9բ Իսկ աշխարհի քահանայ, որ վախճանի, թէ չունի ժառանգ… 59բ-60բ* Բանադրելոյ *(լս-ից)* – *եթէ ժողովրդական ոք ի պէսպէս սխալանաց… եւ ոչ աշխարհի իրաց համար նզով դնել:*

գ. *60բ-4բ* Վասն յիշատակի ննջեցելոց եւ սուտ վկայ կացուցանել[ոյ] – *Զյիշատակ ննջեցելոցն՝ ընդանեաց նոցա, որ ինչ կարգ է աւրինաց… 62աբ* Յանկարծամահ (լս-ից) – *եթէ յանկարծամահ լինի կամ մահակոտոր կամ անհաս ի ձեռն քահանայս… 62բ-4բ եթէ յետ մեռելոյն, որք երթայ ի մեռէլոյ ազգացն խնդրէ ինչ… այլ մի՛ գնասցէ եկեղեցին, զի անարգ[է] զնայ:*

դ. *64բ-5բ* Վասն կնոջն եւ այրն, որ չկարէ ի կին իւր ի կուսութենէ հանել, զի՞նչ է դատաստան – *եթէ պատահի, որ այրն չկարէ զկին իւր ի կուսութենէն հանել… բայց հրամանաւ այրոյն լիցի առն այլում:*

ե. *65բ-7ա* Վասն դիւահար կին առնակելոյ – *Արժան է արձակիլ, թէ ոչ, թէ յառաջ քան զպսակն էր՝ ծնաւղքն ծածկեցին… 66ա-7ա եթէ առն լիցի ախտ գողի կամ պիսակութիւն… մինչեւ ի մահ հոգասցէ զկեանս հիւանդի:*

զ. *67աբ* Վասն ատելութեան առն եւ կնոջն – *եթէ զմիմեանս ատիցեն այր եւ կին, առանց բանի պոռնկութեան… զոր գրեալ է ի կանոնս սուրբ հայրապետացն:*

է. *68աբ* Վասն յամուլ կնոջ եւ այրն ներիթի – *Ամուլ կին՝ մի՛ արձակեսցէ զնայ այր իւր, զի Աստուծոյ է տալ զորդիս… մինչեւ ի մահ հրաման է ի սուրբ կանոնաց:*

ը. *68բ-9ա* Վասն որոյ պատճառէ ելանէ կինն ի յայրէ իւրմէ – *Յորժամ կինն տեսանէ զայր իւր յարուագիտութիւն կամ անասնապղծութիւն… կենայ առ նայ ի վերայ որդոցն:*

թ. *69աբ* Վասն ատելութեան առն եւ կնոջ – *Այր եւ կին եթէ ատելութեամբ զիրար թողցեն, պատահի մեռանել… հրաման տայ եւ գիր արձակման:*

ժ. *69բ-70բ* եթէ վանե[ա]կան կամ այլ ճանապարհորդաց ամենամարդ *(այսպէս)* կինն այր առնու – *Յորժամ այր ոք ճանապարհ գնայ հեռի եւ յամէ գալն, պարտ է կնոջն համբերել, մինչ որ լսէ զմահ նորա կամ այլ կին առնուլն… զի անարգեաց զպսակն աւրհնութեան:*

ժա. *70բ-1բ* Վասն կո[ո]փ այր ընդ կին եւ վնասէ – *եթէ այր զկին իւր անարգէ, թէ խորշ կայ ի մէջն, դարձուսցեն ազգն իւր… զգլուխն առցէ եւ զկէս աճմանն:*

ժբ. *71բ-2ա* Վասն առն եւ կնոջ ուրացողաց – *եթէ այր կամ կին վասն նեղութեան կամ վասն տուգանաց ուրասցի զՔրիստոս… պարտ է շահել զհոգի միմեանց ընդունի դատաստանս:*

ժգ. *72ա-3բ* Եղբարց եւ քուերաց բաժանումն – *Մարդ եթէ մեռանի առանց կտակագրի, կուսան դստերքն ժառանգեն… եւ տալ նմայ զժառանգութիւն:*

ժդ. *73բ-4բ* Վասն աղջկանն – *Աղջիկ որ հասանի յամուսնութեան, եւ խաւսեն վասն կնութեան եւ տալ հաւանութիւն… եւ զայլն դարձուսցեն դատաստանէ:*

* Ծնթ. Քաղուածքներ Մխիթար Գոշի Դատաստանագրքից (Գ.-է., Թ., ԺԱ.-ԺԵ., ԺԷ., ՃԺԳ., ՄԳ.-ՄԴ. եւ այլք՝ առանց համարակալման, խառն եւ հաղուածոյ՝ մեծ ու փոքր կրճատումներով եւ յաւելումներով. հմմտ. Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, աշխ. Ս. Թորոսեանի, Երեւան, 1975, Գ. խմբագրութիւն, էջ 283-523) եւ Աւէնիր յաղթող թագաւորաց բնագրից (Ծէ., ՁԹ., Ղ.՝ առանց համարակալման, ետեւառաջութեամբ (հմմտ. Ասորական Դատաստանագիրք, լոյս ընծայեց Աւսէն Վրդ. Ղլտճեան, Ս. Էջմիածին, 1917, էջ 27, 38-39):

Բ. *74բ-83ա* Խրատ հոգէշահ եւ մարմնաշահ – *Մարդոյն, որ վայել է Դ. իրք է, որ զմարդն ի մեղաց պահէ. Դ. իրաւք մարդն ճանաչի… եւ ապաշխարէ եւ յաղաւթէ առ Աստուած:*

Գ. *83ա-94բ* [Տեսիլ Մարիամու Աստուածածնի] Պատմութիւն շարչար[ան]աց հոգոց, թէ որպէս են ի դժոխս – *Յարուցեալ Աստուածածին՝ մայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի… ի երկիւղէ դժոխոցն. եւ նմայ փա՛ռք յաւիտեանս. ամէն:*

Դ. *94բ-110ա* [Տեսիլ Գրիգորի Լուսաւորչի] Տեսիլ սրբոյն Գրիգորի ընդ հրեշտակն – *Սուրբն Գրիգոր մեր Լուսաւորիչն զԽ. (40) տիւ եւ զԽ. (40) գիշեր հաց ոչ եկեր… զի ազատեցեր զմարդիկք ի դառն դժոխոցն: Եւ ասէ խաղաղութիւն ընդ քեզ, հա՛յր սուրբ, եւ ել երկինս. եւ Քրիստոսի փա՛ռք յաւիտեանս:*

Ե. *110ա-22ա* [Թուղթ երկնաւոր]* Խրատ եւ խարոզ

վասն կիրակաբանի: Խրատ կիրակէից. Աւրհնեալ է ամենասուրբ Երրորդութիւնն. Ջարմանի եւ սքանչելի բան եկն ողորմութենէն Աստուծոյ, եկն ի դուռն Պետրոսի եւ Պաւղոսի – *Ես՝ պատրիարգս Հռոմ քաղաքի, եկի տաճարն սուրբ... եւ լսօղքս արժանի արասցէ Քրիստոս Աստուած ի փառս իւր. ամէն:*

* Ծնթ. Սոյն բնագիրը 1906 թ. եթովպերէն, ասորերէն, արաբերէն, հարշունի թարգմանութիւններուն հետ հրատարակել է Մախսիմիլիան Բիտները (M. Bittner, Der vom Himmel gefallene Brief Christi in seinen morgenländischen Versiopnen und Recensionen, Wien, 1906). առաւել մանրամասն տե՛ս Յ. Տաշեան, Թուղթ երկնաւոր (հրատ. Մ. Բիտնէր), ՀԱ, Վիեննա, 1906, թ. 9-10, էջ 259-264, նաեւ Տեղեկատուութիւմ հայրենագիտական նորութեանց վրայ, Բազմավէպ, Վենետիկ, 1906, թ. 11, էջ 507:

Զ. *122ա-9ա* Հարցում Բարսեղայ (Կեսարացւոյ) առ սուրբն Գրիգոր (Նիւսացի. *հմմտ. ձեռ. 737, 37ա-9ա*)* – *[Ի]արսեղ ասէ առ [սուրբ]ըն Գրիգոր. Յորժամ ոչ երկինք կայր եւ ոչ երկիր, յո՞րոյ վերայ հանգչէր յԱթոռ Աստուածութեան: Գրիգոր ասէ. Ի վերայ տարրեղէն լուսազգեստ հոգւոյ... զի ծնանիցէ զԱրարիչն իւր Քրիստոս. եւ նմա փա՛ռք յաւիտեանս ամէն:*

* Ծնթ. Սոյն Հարցումը որոշ ձեռագրերում ուղղուած է Գրիգոր Լուսաւորչին (տե՛ս օր. ձեռ. 588, 307ա, ձեռ. 834, 123ա եւ այլուր), որոշներում՝ Գրիգոր Նազիանզացուն (Աստուածաբանին՝ տե՛ս օր. ձեռ. 728, 23ա, ձեռ. 2566, 150բ եւ այլուր):

Է. *129ա-43ա* [Ի հասարակաց խրատուց Յովհաննու երզնկացւոյ]*

1. *129ա-31ա* Յաղագս երթման – *Եւթներորդ բան կանոնական. Ոչ է պարտ քրիստոնէին երդնուլ... եւ դառն պատուհաս կրելոց են արդար դատաւորին Աստուծոյ:*

2. *131ա-2բ* Յաղագս սուտ վկայից – *Իններորդ կանոն գրեմք վասն այնոցիկ, որք անաստուածաբար սուտ վկայութիւն տան... զի բնակեսցէ ի ձեզ Հոգին Սուրբ:*

3. *132բ-7ա* Յաղագս յիշոնցնայտուի – *Տասներորդ կանոն գրեմք վասն ահեղ եւ դառն զարհուրելի մեղացն, որ ասեն յիշոնցք աշխարհի բառով... որ զարհուրին եւ դառնան այնպիսի չար եւ յիմար սովորութենէն. եւ Քրիստոսի փա՛ռք յաւիտեանս:*

4. *137ա-43ա* Վասն յաղաւթից հարց – *Արդ, պարտ է քրիստոնէից աւրն Գ. անգամ յաղաւթք առնել... ի այնպիսին չարէն. եւ նմայ փառք յաւիտեանս:*

* Հմմտ. Է. Բաղդասարեան, Յովհաննէս Երզնկացին եւ նրա խրատական արձակը, Երեւան, 1977, էջ 161-166, 171-174:

Ը. *143բ-66ա* Յաղագս բնութեան եւ գոյացութեան մարդոյ – *Ջորից գոյացեալ ասի մարդն, զի չորք պատճառք են եղելութեան ամենայն գոյից... սոյնպէս անմեղքն եւ արդարքն եւ անխորամանկքն եւ պար՛՛ (չշարունակուած):*

Թ. *167ա-214բ* Տեառն Ներսէսի [Շնորհալւոյ] ասացեալ. Բան դաւանութեան հաւատոյ Սուրբ Երրորդութեան *(ընդարձակ տարբերակ)** – *Խոստովանիմ Աստուած՝ ըզՀայր, / Անծին, անեղ եւ անըսկիզ(գ)բն, / Խոստովանիմ Աստուած՝ զՈրդին, / Անժամանակ Հօր Միածին... Իսկ մեք հանցուք փառս նմայ՝ / Հօր եւ Հոգւոյն միշտ յարակայ: / Յանցեալն յայնժմուս եւ յապագա / Երրորդութեանըն մըշտակայ:*

* Ծնթ. Համառօտ տարբերակը տե՛ս Մատենագիրք հայոց, ԺԳ. հատոր, Գանձարան, Գիրք Ա., Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 403:

Ժ. *214բ-8ա* Յիշատակարան սրբոյն Ներսէսի Հայոց կաթուղիկոսի – *Վասն Աստուծոյ խօսել զայս բան,/ Ինձ ոչ էր յանկ եւ ոչ նման... Ոչ ի յինէն բան ըստ մարմնոյ,/ Զի իմաստ ոչ է յիս մարդոյ:*

Ծնթ. Նիւթերի դասդասումը եւ բնագրային որոշ ճշգրտումներ արել ենք Ն. Վարդանեանի օգնութեամբ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. *143ա (1609 թ.)* Փա՛ռք ամենասուրբ երրորդութեանն՝ Հաւր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Արդ, գրեցաւ կանոնական տառս ի թուին Հայոց ՌԾԸ. *(1609)*:

2. *166բ (1623 թ.)* Ի վայելումն Կարապետ իրիցոյն եւ Յովանէսին, *ի Հայգազան թիւականին ՌՀԲ. (1623)*:

Տե՛ս ԺԷ. դ. յիշ-f, Բ., էջ 93, Հմր 138:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *143ա (ԺՐ. դ., նոտրգիր)* Ես Ծատուրէս *գրեցի:*

166բ (Ջնջուած, անընթեռնելի, երեւում են առանձին տառեր):

218բ Պատճառ գրոյս այս, պատճառ գրոյս այս է ֆլանս (այսպէս) տալու եմ Ծատուրին Ա. թուման տամ, տամ թէ ոչ թումանին դա:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *3ա, 12ա, 25բ (երկիցս), 26բ (երկիցս), 33բ (երկիցս), 34բ, 46ա (չորիցս), 58բ (երկիցս) 59բ (երիցս), 60ա, 104բ, 116ա (երկիցս), 145ա (երկիցս)՝* սեւ թանաքով բոլորակ՝ անընթեռնելի, *20բ (չորիցս, 2-ը դժուարընթեռնելի), 21ա (անընթեռնելի)՝* սեւ թանաքով ձուածիր «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱ/ ԳՐԻԳՈՐ», *46ա (երկիցս), 57բ (երիցս), 58ա (երկիցս)՝* սեւ թանաքով բոլորակ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱ/ ԵՂԻԱԶԱՐ (՞)/ ՌՃԱ. *(1652)*», *60ա, 60բ (երկիցս), 61ա (երկիցս)՝* սեւ թանաքով բոլորակ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱ/ ՏԷՐ ԱՐ/ԱՐԱՏ(՞)», *84բ՝* սեւ թանաքով ութանկիւն, վրացերէն «ძონაზონი (= մոնազոն՝ մենակեաց) /მეჩხემ/ ١٧٨٣ խփիր ինն (՞) 1783»:

ՆՇՈՒՄ՝ *Պհպ. Բա՝* սեւով «Խ[աչիկ] *վարդապետ, Հմր 42/3672», «ՌՀԲ. – 1623,* Մ[եսրոպ] *եպ[ի]ս[կոպոս]», 1ա՝ մատիտով «42», 218բ՝ «XVII 1/4»:*

Ձեռագիրս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Յուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 53-54, Հմր 42:


ԳՐՉԱՓՈՐՉ՝ *12բ, 15բ, 16աբ, 17ա, 18բ, 19աբ, 30բ, 32բ, 33բ, 42բ, 43աբ, 44ա, 45ա, 46բ, 55բ, 64բ, 69բ, 73բ, 84բ, 85ա, 89բ, 90բ, 106բ, 108բ, 109ա, 110բ, 121բ, 127բ, 129բ, 131բ, 132ա, 142բ, 143ա, 154բ, 162բ, 167ա, 177բ, 178բ, 179աբ, 180ա, 181բ, 182բ, 185բ, 186ա, 186բ, 187բ, 200բ, 201աբ, 203բ, 205բ, 206աբ, 215բ, 216բ՝ հայերէն եւ վրացերէն զանազան տառաձեւեր, անկանոն գծեր եւ խզբզոցներ, 13ա՝ այբուբեն «ա-թ», 15ա՝ «աբա», 38բ՝ «բա 999,», 40բ՝ «չէ իր անգօվելի, հօտ զարմանալ», 45բ՝ «մի է բանս (կրկն.), զի սուրբ սանն», 54բ՝ «է իւր քահանայէ, ան ալ», 70ա՝ «գրայ», 81բ՝ «չէ բր անգօվիլ հօտ զարմանալի գօյ», 90բ՝ «եանցն եւ լինի մահ», 94բ՝ «չէ իր անգօվելի հօտ զարմանալ», 111բ՝ «Չէ իր անգօվելի հօտ գ», 133բ՝ «Հացըն տայցէ», 143ա՝ «աբագադ///աւկա», տառեր՝ «ա-թ», 167ա՝ «Ohանէսխս», 174բ (ժողովրդական ամանորեայ տաղ, դժուարընթեռնելի, յաճախ անկապակից, շարունակութիւնը տե՛ս 175աբ, 176աբ)՝ «աշէն աշէն, Աստուածաշէն, ալէլ<u>ո</u>ւիա, գէրանիրին գիղ գէրանիր ալելո<u>ւ</u>իա, կուճէն փու ծիրանիլովն», 175ա՝ «ալէլ<u>ո</u>ւիա ծուծը վըրէն ծալած ոսկի, ալելո<u>ւ</u>իա, հողը վըրէն խընկան փուշի, կըտուրն վըրէն բօլօրօ լիսին, գուռըն վրէն», 175բ՝ «փիղի արէգակ, սուղնակամէր նոշա ոսկի, տուն ավլօղըն ջ[ուխտ] աղ<u>ո</u>ւնիկ, ավելը ձեռին փ<u>ո</u>ւ[ն]ջ մանիշակ», 176ա՝ «ակ<u>ո</u>ւնիրըն խ<u>ո</u>ւրանէքիր, թօնդըրնիրընա, գեղէցիք հացի<u>ո</u>ւխներն խան<u>ո</u>ւմ», 176բ՝ «Ամէն, ամէն ասի, ձի», 197բ՝ «Անկան նման ատորանգելոց,/ որք յաւիտեան չեն կանգնելոց», 218բ՝ «չէ իր անգօվ հօտ», «Oվանիս»։

ՆԿԱՐԱՓՈՐՉ՝ *201բ՝ սեւով մարդ։*

3673
ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ, ԱՂՕԹՔ

ԺԸ. դար

ԹԵՐԹ՝ 42+1 (կրկն.՝ թ. 1)։ ՊՐԱԿ՝ 1-7×6 (1՝ 7, 6՝ 8, 7՝ 4)։ ՆԻՒԹ՝ հաստ թուղթ. լուսագծերով։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 10,5×8,5։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (8,5×7)։ ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 5ա). ստ. լս. ունի յիշագրեր։ ՏՈՂ՝ 13։ ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի. աստառը՝ սպիտակ թուղթ։ ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ՝ սպիտակ չգրուած թուղթ, մասն կազմաստառի։



Նմուշ 5ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Բնագրի մէջ՝ խաչ խորանի մէջ՝ 35ա։ Ճակատազարդ՝ 4բ, 23բ (դրուած որպէս վերջնազարդ)։ Վ ե ր ջ ն ա զ ա ր դ՝ 8բ, 15բ։ Լուսանցազարդ՝ բուսական՝ 38ա։ Ջարդագիր՝ հանգուցագիր՝ 1ա, թոչնագիր՝ 4բ (նաեւ մարդադէմ՝ 20ա), 24ա, 26ա, 31բ, 38ա։ Գոյն՝ սեւ։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին ֆեռծուած, մաշուած, մասնաւորապէս եզրերի կաշին մաշուած, թափուած, մէջքի ստորին մասի կաշին ճիմմից անջատուած, Բ. փեղկի արտաքին անկեան կաշին պատռուած-ընկած, կազմի միջուկ-տախտակները չկան, երկու կողմերից՝ սկզբից եւ վերջից մէկական թղթէ պիպ. աւելացուած (Ի. դար), զոյգ կապիչներն ու գամերն ընկած. կազմաստառները թեթեւակի մաշուած. պիպ. Ա.՝ վերին անկիւնը պատռուած-ընկած. լուսանցակողերը՝ աղտից սեւացած. գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով գրադաշտը տեղ-տեղ աղտոտուած, սեւացած, վրան զանազան բծեր, իւղի եւ սեւ թանաքի հետքեր. թ. 1՝ ճիմմից անջատ, թ. 13-24 եւ 25-30՝ մասամբ անջատուած՝ ճիմմին միացուած 1 թելով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-42ա* [Ա.]ղօթք զօրաւորք սրբոյն եփրեմի խօսք ընդ Աստուծոյ

ա. *1ա-4ա* [Գլուխ Ա.] – *Տե՛ս, Տէ՛ր, զտառապանս իմ եւ զցաւս հոգւոյ իմոյ բազմամեղիս… Շնչեա՛յ, Տէ՛ր, զհարաւ քաղցրաշունչ Հոգւոյն Սրբոյ ի վերայ. ամէն, փառք Հօր եւ Սրբոյն՛՛ (հմմտ. տպ. Ա.-ԺԷ.)։*

բ. *4բ-15բ* Սրբոյն եփրեմի ասացեալ. Գլուխ Բ. <Գլուխ Բ.> – *Բա՛ց, Տէ՛ր, զփականս դուռն սրտի իմոյ… զօրացո՛ր, ա՛ռ զմահիցս քո եւ ե՛րթ ի ճանապարհս արդարութեան։ Փառք Հօր եւ Որդոյ այժմ եւ՛՛. ամէն (հմմտ. տպ. ԺՀ.-ՀԳ.)։*

– *9ա-15բ* Սրբոյ եփրեմի ասացեալ է – *Առաքեա՛յ, Տէ՛ր, զբաժակ ուրախարար Հոգւոյդ Սրբոյ… (գրչից առանձնացուած, հմմտ. տպ. ԼՀ.)։*

գ. *16ա-20ա* Սրբոյն եփրեմի ասացեալ. Գլուխ Գ. – *Ե՛կ, Տէր, ի խնդիր մոլորելոյս, որ ածեալ շրջիմ արտաքոյ հօտի քո… եւ ուրախանալ միշտ ընդ կամարարքս քոյ (հմմտ. տպ. ՀԴ.-ՂԴ.)։*

դ. *20ա-1ա* [Գլուխ Դ.] – *Գթա՛յ, Տէ՛ր, ի մեղուցեալ եւ եղկելի անձն իմ, խափանեա՛յ զանառակ ցանկութիւնս իմ… համբերել վշտաց, առաքինաբար գործով հանդիպիլ քում աստուածային շնորհաց (հմմտ. տպ. ՂԵ.-ՂՐ)։*

ե. *21բ-3բ* Սրբոյն եփրեմի ասացեալ առ Հայրն Աս-

տուած. Գլուխ ե. – *Վա՛յ ինձ, վա՛յ, Տէ՛ր իմ, վա՛յ, ինձ զի մեղօք կործանեցայ... եւ նորոգեա՛յ հոգոյս կենդանութեան: Փա՛ռք Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ. այժմ եւ՛՛ (հմմտ. տպ. ՂԹ.-ճէ.)։*

զ. *24ա-42ա* Սրբոյն եփրեմի՛՛. Գլուխ Զ. – *Կոչեա՛, Տէ՛ր, ի մեղուցեալ անձն իմ... Փառաւորեցից եւ վերօրհնեցից զամենայն Սուրբ երրորդութիւնդ. այժմ եւ միշտ՛՛։ (հմմտ. տպ. ճՀ.-ճԽԱ.)։*

– *26ա-31բ* Աղօթք սրբոյն եփրեմի – *Բա՛ց, Տէ՛ր, զաչս հոգոյ եւ լուսաւորեա՛յ զխորհուրդս իմ... եւ տպաւորեա՛ յիս զառաջին լուսաւորութեան կերպարանն (հմմտ. տպ. ճԺԴ.ի կէսից մինչեւ ճԻԶ.)։*

– *31բ-4բ (այս եւ յաջորդ ենթամիաւորները գրչից առանձնացուած)* – *Ողորմեա՛, Տէ՛ր, մեղաւորիս եւ անցաւորիս... եւ զարդարեա՛ եւ միացո՛ ի սէր Աստուածութեանդ քո, Աստուած իմ (հմմտ. տպ. ճԻէ.-ճԼԴ.)։*

– *34բ-8ա* – *Աղաչեմ, Տէ՛ր Յիսուս, եւ անկանիմ առաջի քոյ սուրբ խաչին... եւ քեզ փա՛ռք արարողիդ իմոյ բարեաց (հմմտ. տպ. ճԼե.-ճԼՓ.)։*

– *38ա-42ա* Վասն աճեղ դատաստանին – *Եւ յորժամ երկնից գաս անճառ փառօք... Փառաւորեցից եւ վերօրհնեցից զամենայն Սուրբ երրորդութիւնդ. այժմ եւ միշտ՛՛ (հմմտ. տպ. ճԽ. 2րդ տողից մինչեւ ճԽԱ.)։*

Տե՛ս Սրբոյն եփրեմի Մատենագրութիւնք, հտ. Դ, Վենետիկ, 1836, էջ 227-252 (= Աղօթք Ա, որոշ տարբերութիւններով եւ կրճատումներով, ի տարբերութիւն տպագրի՝ այստեղ աղօթքը բաժանուած է գլուխների), հմմտ. նաեւ Գիրք աղօթից ասացեալ սրբոյն եփրեմի Խուրտյն Ասորւոյ, Կ. Պոլիս, 1788, էջ 3-60։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *21բ (ԺԴ. դարի վերջ, նոտրգիր) Տէր* Գրիգոր, *տէր* Յովագի[մ]։

42բ Տէր Գրիգոր, Գրիգոր։

2. *42բ (ԺԴ. դարի վերջ, շինծու բոլորգիր) ես՝* Բարսեղ, *գրեցե՛ք։*

ՆՇՈՒՄ՝ *Պհպ. Աա՝ սեւով «Խ[աչիկ] վարդապետ, կարմրով՝ Հմր 45/3673», սեւով «ԺԴ., Մ[եսրոպ] եպ[ի]ս[կոպոս]»։*

Ձեռագիրս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Յուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 55-56, Հմր 45։

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *1ա՝ սեւով «բ (երկիցս)», 1բ՝ «ված ծ է», 2բ՝ «ճ ճ հ», 9ա՝ «Սրբոյ, յ ձ ք», 12բ՝ «րա աանդ», 13ա՝ «ի ջ», 21բ՝ «ախտացելոյս», 24բ՝ ստ. լս-ում գրութիւն (հետագայում ջնջած), 25ա՝ «ե, բ», 31բ՝ «ե է, աա ան ն», 36բ՝ «ռ մ խ նա ճ գ», 37բ՝ «ռ (բազմիցս)», 42բ՝ զանազան տառեր եւ բառեր «ա-ճ», «ճ, ղ, չ(բազմիցս)», «թ», «այս է»։*

ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *1ա՝ Արեգակ, 17ա, 23ա՝ աստղ, 23ա՝ խաչ, 25ա՝ ուղղանկիւն զարդանախշ։*

3674
ՀՄԱՅԻԼ

ԴԱՇՏ ԳԻՒՂ (ՆԵՐՔԻՆ ԱԳՈՒԼԻՍ) ՌՄԼԳ. – 1784

ԳՐԻՉ՝ Յոհաննէս Դաշտեցի: ՍՏԱՑՈՂ՝ պրն Աբրահամ (ձեռագրում՝ Աբրհամ):

ԹԵՐԹ՝ 47. չգրուած՝ 1ա-4բ, 46ա, 47աբ: ՊՐԱԿ՝ Ա-Ը×8 (Ա, Գ 6, Բ, Դ 4, Ը 3)*: ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 11,5×8,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, սեւով սահմանագծուած (9×6,5): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 6ա). խորագրերը եւ սկզբնատառերը՝ կարմիր, ստ. լս. ունի յիշագրեր: ՏՈՂ՝ 17-20: ԿԱՋՄ՝ կարմիր մոմլաթ, մէջբը՝ սեւ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ դեղնաւուն թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա.Բ+ԳԴ՝ սպիտակ չգրուած թուղթ (Բ եւ Դ), դեղնաւուն չգրուած թուղթ (Ա եւ Դ)՝ մասն կազմաստառի:

* Ծնթ. Դ. եւ ե. պրակների թերթերը նորոգման ժամանակ տեղադրած սխալ յաջորդականութեամբ, պրակները հաշուել ենք ըստ ձեռագրի նախնական վիճակի՝ պրակ Դ. (թ. 17-8, 26-7), պրակ ե. (թ. 28, 24-5, 22-3, 19-21):

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ (գծանկարային, անառուեստ) – Խաչելութիւն՝ 16բ, Սուրբ Սարգիս Զաւրավար (?)՝ 27բ, Սուրբ Կիպրիանոս՝ 31ա, Մատթէոս աւետարանիչ՝ 36ա: Բնագրի մէջ՝ Խաչ՝ 20ա, Տիրամայրը՝ մանուկ Յիսուսը գրկին՝ 21բ, Գրիգոր Լուսաւորիչ՝ 24ա: Գոյներ՝ կանաչ, կարմիր, դեղին, դարչնագոյն, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած (Ի. դար), ձեռագրի սկզբից եւ վերջից երկուական թղթէ պահպանակ աւելացուած. կազմի մոմլաթը թեթեւակի մաշուած, աղտոտուած, մէջբի կաշին մաշուած, տեղ-տեղ ճեռնուած. կազմաստառները եւ պհպ-ներ Ա-Դ՝ թեթեւակի մաշուած, խոնաւութիւնից մասամբ գունափոխուած. լուսանցակողերը մաշուած, տեղ-տեղ պատռուած, մասամբ սեւացած. թերթերին գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, սեւ թանաքի, իւղի եւ ներկի հետքեր, գրադաշտը վնասուած, որոշ հատուածներ եւ բառեր եղծուած, խոնաւութիւնից տեղ-տեղ աղտոտուած, թերթերին (մասնաւորապէս թ. 1-4, 45-46) անմաքուր ջրի լայն հետքեր. մանրանկարները խոնաւութիւնից գունափոխուած. թ. 5՝ ստ. անկիւնը պատռուած-ընկած. գրադաշտը վնասուած, թ. 16, 19, 25, 34՝ պատռուածք-անցք, թ. 23ի մեծ մասը պատռուած-ընկած՝ վերին հիմքին մօտ պահպանուած

եռանկիւնաձեւ փոխ կտոր՝ բնագիրը մեծապէս վնասուած, թ. 26ի պատռուած կէսերը անյաջող նորոգուած՝ մասամբ փակցուած իրար վրայ, թ. 27՝ ստորին կէսը պատռուած-ընկած. Ի. դարի նորոգման ժամանակ թ. 28ը հիմին ամրացուած արտ. լս-ից, կարդալ՝ 28բա, իսկ թ. 19-28 տեղադրած սխալ յաջորդականութեամբ. կարդալ՝ թ. 18, 26-8, 24-5, 22-3, 19-21, 29, որոշ թերթեր մէջընդմէջ ընկած (տե՛ս Բովանդակութիւն):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *5ա-46բ* [Հմայիլ]*

* Ծնթ. Աղօթքներում տարածուած «ծառայիս Աստուծոյ» դարձուածի հետ բնագրի զանազան մասերում գործածած ստացող Աբրահամի անունը:

ա. *5ա-9ա* Աղօթք [Ներսէսի Շնորհալի հայրապետին, [որ փրկէ] ամենայն չարեաց – *Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանեմ... եւ երկրպագութիւն անբաժանելի Սուրբ երրորդութեան յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

բ. *9ա-10բ* [Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ. Բան ԺԲ.] – *Ընկա՛լ քաղցրութեամբ, Տէ՛ր Աստուած հզօր... զի դու փառաւորեալ ես ամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

գ. *10բ* [Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ. Բան ԽԱ.] – *Որդի՛ Աստուծոյ կենդանւոյ... Հալիր մեղք, հալածին դեւք, չնչին [յանցանք]/// (շար.):*

դ. *11ա-2բ* [Աղօթք պահպանութեան]* – *(սկ.) ///[ա]մենա[խնա՛մ Աստուած, ամենախո՛րհ Աստուած, ամենախօ՛ս Աստուած... ամենաանարա՛տ Աստուած, ամենաբա՛ն Աստուած, ամենակաշա՛ռ Աստուած:*

* Տե՛ս Աղօթագիրք Կիպրիանոս, Անթիլիաս, 1974, էջ 21 (տպագրի համեմատ տարընթերցումներով, համառօտ), նոյնագրում «ամենա» բառի փոխարէն կիրառուած է «ամենայն»ի համառօտագրութիւնը՝ «ամ»՝ պատուի նշանով:

ե. *13ա* Աղօթք պահպանութեան, [որ ի] չարէ փրկէ – *Տէ՛ր Աստուած մարդասէր, մարդասիրի Հօր Որդո[ւ՛]... ի սողնոց եւ ի ճգճաց եւ ամենայն թիւ[ն]աւորաց փրկեա՛յ եւ պահեա՛յ զծառայս Աստուծոյ՝* Աբրահամը. *ամէն:*

զ. *13ա* [Աղօթք. *հմմտ. ձեռ. 2660, 184աբ*] – *Հոգին Սո՛ւրբ, սրբեա՛ զիս մարմին Քրիստոսի... ո՛վ քաղցր եւ բարերար Քրիստոս Յիսուս, մի՛ տար թոյլ բաժանել /// (չշարունակած):*

է. *13բ* [Զ]ար ակին եւ [ակնահարին] ամենայն չար[եաց] – *Գայր գետն Յորդանան եւ բերէր ծառ մի գեղեցիկ... եւ այլ Գ՚ձկե. (365) ցեղ պիղծ ցաւոցն արձակեալ եւ հեռացեալ եղիցի ի ծառայէս Աստուծոյ՝* Աբրահամին. *ամէն:*

ը. *13բ-4ա* Աղօթք չար աչից եւ չար լեզուի – *Ելեալ երթայր չար ակն ի ճանապարհ... դարձի՛ր ի չար խորհրդոցդ, եւ չունիս իշխանութիւն մերձենալ ի ծառայս Աստուծոյ՝* Աբրահամին. *ամէն:*

թ. *14ա* [Վասն չար աչիին] – *Ջար աչքն ի չար փուշն, չար փուշն ի չար կրակն... եւ ջուր ելանէ եւ խափանէ գհուրն եւ զխաւարն ի դէմ ծառայիս Աստուծոյ՝* Աբրահամին. *ամէն:*

ժ. *14ա-5ա* Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Աղօթք եւ կապ ամենայն ցեղ [դիւաց, որ] ոչ մերձենն ի ծառայս Աստուծոյ – *Տէ՛ր Աստուած մեր՝ Յիսուս Քրիստոս եւ Փրկի՛չ Որդի Աստուծոյ... ի բազմութիւն զօրացն Բելիարայ եւ Դադայելի, որ ոչ մերձենա ի ծառայս Աստուծոյ՝* Աբրահամին. *ամէն:*

ժա. *15ա* Գիր խոստուկի եւ ամենայն ցեղ ցաւոց – *Դա՛նն ծաղիկ, դա՛նաբեր ծաղիկ, ո՞ւր ելար կամ ո՞ւր բուսար... Թռաւ ձագ դեղին ի ձուէն ու դեղին ի հետ Յկե. (365) զօթուածոց դեղին ցաւն ի հետ:*

ժբ. *15բ* Աղօթք վասն ծննդեան, որ հեշտ բերէ – *Կարմիր, կատրին, կակատրինէ... ծնանի զաւակ բարի եւ պտուղ մնացական ծառայիս Աստուծոյ՝* Աբրահամին:

ժգ. *15բ-6ա* Աղօթք վասն գլխապցաւի եւ նազլոյի – *ՁՏէրն մեր Յիսուս Քրիստոս՝ զՈրդին Աստուծոյ... եւ ամենայն սրբոց բարեխօսութեամբ հերկեցի եւ ցրեսցի ամենայն, եւ եղեւ ցաւ ջերմն եւ տենդ ծառայիս Աստուծոյ՝* Աբրահամին. *ամէն:*

ժդ. 16ա Աղօթք պահպանութեան ամենայն չարեաց – *Բարեխօսութեամբ սուրբ եւ փառաւորեալ եւ պատուակ[ան] սուրբ Խաչին... պահեսցէ զծառայս ի չար աչից եւ ի չար///(շար.):*

ժե. *17աբ* Գիր խաղցրութեան [ի սիրտ դատաւորաց եւ թագաւորաց] – *Յանուն Մեսիհեային, որ անուանեցաւ Քրիստոս... եւ ամենայն սրբոց կապի սիրտ դատաւորաց եւ թագաւորաց ի դիմաց ծառայիս Աստուծոյ՝* Աբրահամին:

ժզ. *17բ* Աղօթք [եւ պահպանութիւն] /// (*ծայրակապ՝* «ՏԷՐ ԱՌԱ[ՔԵԼ]») – *Տէ՛րն մեր եւ փրկի՛չ Յիսուս Քրիստոս, Հօր ճառագայթ եւ լոյս փառաց... լե՛ր պահապան քում ծառային հնարք դիւաց/// (շար.):*

ժէ. *18ա* [Աղօթք պահպանութեան եւ ընդդէմ պատահարաց] – *(սկ.) ///հողմոյ, ի ջրէ եւ ի հեղեղատէ, յընկմանէ ծովուն... ի պատերա[զ]մէ եւ յամենայն պատուհասէ փրկեա՛ եւ պահեա՛ ծառայս Աստուծոյ՝* Աբրհամն. *ամէն:*

ժը. *18աբ* Աղօթք լեզու չարի /// – *Կայր Մօսէս յեզր կարմիր ծովուն... զչարն, այլ զբարին ի դիմաց ծառայիս Աստուծոյ. ամէն:*

ժթ. *18բ* Աղօթք լեզուկապիւն – *Եկին ասացին, թէ քոյ չար կամն գայլ էր, նա գառն ելաւ... ՀԲ. (72) ցեղ մէլաթի երկան եւ կնկան լեզուն կապած կենա ի դէմ ծառայիս Աստուծոյ՝* Աբրահամին. *ամէն: Ազգէ, որ ոչ է սուրբ, ի մարդոյ մեղաւորէ, նենգաւորէ փրկեա՛յ զիս:*

ի. *18բ, 26ա* Աղօթք [պահպանութեան] ամենայն չարէ – *Դրեր եմ մազեղէն սանդուղք, ելեր եմ յերկինս... այլ կապեր եմ զչար կամաց զա[չք]ն եւ զչար լեզուն եւ զչար նիաթն [ի դիմ]աց ծառայիս Աստուծոյ՝* Աբրհամին. *ամէն:*

իա. *26աբ* Յորժամ կամիս ճանապարհ երթալ յիշեա՛ զայս անուամբ եւ անահ զնայ – *Կենամէլ, Կենդանամայէլ, Մաթէ, որ էք սպասաւորք Աստուծոյ... եւ բիւրք ընդ աջմէ քումէ, որ առ քեզ ինչ ոչ մերձեսցին:*

իբ. *26բ* Աղօթք վասն վախ [օցի] գրէ, վերայ պահէ – *Ամահեայ ուկում տումիեայ խազէ... որպէս զի մեծ են գործք քոյ, Տ՛ր, եւ այժմ խորին խորհուրդ քոյ:*

իգ. *26բ-7ա* Աղօթք ջերման, դողի եւ տենդի – *Ակաս մեաս ասիաս պուխազի... Տէրն մեր փրկիչ Յիսուս/// ///ար յԱդամայ /// արեր բժշկութիւն /// եւ այլ այժմ ա///* Ա.[բրհ *(հաւանաբար՝* Աբրահամ*)]՛՛/// (շար.):*

իդ. *28բ** [Աղօթք] – *(սկ.) ///եցեր լուսով, Աստուա՛ծ, գիտութիւնդ քո... եւ ես ընդ ձեզ եմ զամենայն յաւուրս կենաց իմոց բժշկել զնոսա: Տէ՛ր Աստուած մեր, ես՝ մեղուցեալ ծառայս քո, դնեմ ըզձեռս իմ ի վերայ գլխոյ ծառայիս Աստուծոյ՝* Աբրհամին *եւ կարդամ զահեղ անուն քո... ամենայն հակառակորդն սատանայի եւ մեք կարդամք զանունքս օրհնեալ ի բարձունս յաւիտեանս. ամէն:*

* Ծնթ. Թ. 28՝ ձիմիին ամբացուած առաք. լս-ից:

իե. *28բա, 24ա* Աղօթք վասն կապանաց [դիւաց] – *Ողջո՛յն ընդ քեզ, Մարիա՛մ, զլի շնորհօք... եւ աւրհնեալ է պտուղ յորովայնի քո, պահեա՛ ծառայս քոյ: Սողոմոն՝ մայր իմաստութեան եհես զիշխան դիւացն ի խաւարի... եւ Կոնոնոսի աղօթիւքն կապեալ լիցիս, ո՛վ պիղծ, չար դեւ, անուն Յիսուսի Քրիստոսի ել ի յայսմանէ, յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ եղիցի պահապան եւ օգնական ծառայիս Աստուծոյ՝* Աբրհամին. *ամէն:*

իզ. *24բ-5բ* Մաղթանք առ սուրբ հայրապետացս Աստուծոյ – *Բարէխօսութեամբ եւ աղօթիւք ընդգրեալ սրբոց հայրապետացն՝ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին... եւ այլոց սրբոց եւ Յովակիմայ եւ Աննայի՝ ծնօղաց սուրբ Աստուածածնին, եւ ամենայն սրբոց, Տ՛ր Աստուած՝ Յիսուս Քրիստոս, պահեա՛ զծառայս քո՝* Աբրհամըն. *ամէն:*

իէ. *25բ, 22ա* Աղօթք սուրբ առաքելոցն – *Բարէխօսութեամբ սուրբ առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի... ողորմեա՛, դու ստեղծեր, մի՛ կորուսաներ զգործս ձեռաց քոց, մի՛ անտես առնէր, ողորմեա՛ ինձ, մարդասէ՛ր: Դի՛ր, Տ՛ր, պահապան բերանոյ իմոյ եւ դուռն ամուր շրթանց իմոց, զի մի՛ խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարութեան:*

իը. *22ա-3բ* Աղօթք պահպանութեան – *Ես՝ Պօղոս հալածիչ [եկեղեց]ւոյ զաւուրս բազումս... ///դիս բնակեալ է /// յերդմնեցուցանեմ զձէւ /// յերդմնեցուցանեմ ///գ, որուն ///ւն Հօր եւ ///օձն սա/// նն եւ զգի///*:

* Ծնթ. Թ. 23՝ մեծ մասը պատռուած-ընկած. վերին ձիմիին մօտ պահպանուած եռանկիւնաձեւ փոքր կտոր, բնագիրը մեծապէս վնասուած (ձմմտ. ձեռ. 604, 52բ-5բ):

իթ. *19ա* [Աղօթք] – *(սկ.) ///Դա՛տ արա ինձ, Աստուա՛ծ, եւ իրա՛ւ արա ինձ դատաստանի իմում: Ազգէ, որ ոչ է սուրբ, ի մարդոյ մեղաւորէ, նենգաւորէ փրկեա՛ զիս (այսչափ):*

լ. *19ա-20ա* Աղօթք սրբոյն Գրիգորի Նարեկացոյն – *երեքանձնեա՛ տէրութիւն միով բնութեամբ, էութեամբ անքննին... կարգեա՛ զվարանգեալս պահպանութեամբ քո եւ պահեա՛ այժմ եւ ապա ի փառս, եւ քեզ փառք յաւիտեանս. ամէն:*

լա. *20բ-1ա* [Աղօթք] ամենայն սուրբ նշանացն Ա.[ստուծոյ] – *Բարեխօսութեամբ սուրբ եւ աստուածային նշանացս Քրիստոսի եւ անբաղբաո բարեխօսացս... ի յաստեղս խաչաձեւ ամենեցուն բարեխօսութեամբն պահեա՛, Տ՛ր Աստուած՝ Յիսուս Քրիստոս, զծառայս Աստուծոյ՝* Աբրհամն. *ամէն:*

լբ. *21աբ* Աղօթք պահպանութեան ամենայն չարի – *Յիսուս Քրիստոս ի սուրբ Սիոն պատարագէր ի վերնատունն... եւ անօրէն ձշնամին, որ ոչ խօսի չար, այլ բարի ի դիմաց ծառայիս Աստուծոյ՝* Աբրհամին. *ամէն:*

լգ. *29ա-30բ* Աղօթք վասն Աստուածածնին – *Ո՛վ ամենասրբուհի Աստուածածին, պայծառ քան զԱրեգակն... եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէն, Տ՛ր Աստուած. ամէն:*

լդ. *31բ-2բ* Աղօթք սրբոյն Կիպրիանոսի ասացեալ է – *Ես՝ Կիպրիանոս՝ ծառայ Աստուծոյ... աղանդս կանանց եւ կախարդացն, եւ չար աչքն եւ չար նիաթն, եւ զչար լեզուք ի դիմաց ծառայիս Աստուծոյ՝* Աբրհամին:

լե. *32բ-5բ* Պատմութիւն Ուստեանէ կուսին, աղօթք – *Յայն ժամանակին, յորում զկախարդական արուեստն... զՊՁՀԲ. (1172) աղանդք եւ կախարդութիւնք եւ կապք, եւ չար աչք, եւ չար նիւթք, եւ չար լեզուք, որ ոչ մերձենայ ի ծառայս Աստուծոյ՝* Աբրհամին. *ամէն:*

լզ. *35բ-8ա* Աւետարան ըստ Մաթէոսի (Թ. 18-Ժ. 15) – *Եւ մինչդեռ զայս խօսէր ընդ նոսա... Ամէն ասեմ ձեզ՝ դիւ[ր]ագոյն լիցի երկիրն այն սոդոմեացոց յաւուրն դատաստանին յայնմիկ, քան զձեզ:*

լէ. *38աբ* Աւետարան ըստ Մարկոսի (Բ. 1-12) – *Եւ մտեալ դարձեալ ի Կափառնաում... մինչեւ զարմանային եւ փառաւոր առնէին զԱստուած եւ ասէին, թէ այսպիսի ինչ երբեք ոչ տեսաք:*

լը. *39ա-40ա* Աւետարան ըստ Ղուկասու (Թ. 1-17) – *Եւ կոչեցեալ զերկոտասան առաքեալսն, ետ նոցա զօրութիւն... Կերան եւ յագեցան ամենեքան եւ բարձին զնշխարս կոտորոցն երկոտասան սակառի:*

լթ. *40ա-1ա* Աւետարան ըստ Յոհաննու (Ղուկ. ԺԱ. 14-26) – *Եւ հանէր դեւ մի համր, եւ եղեւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն... Յայնժամ երթա եւ առնու է. այլ այս չար, քան զինքն, եւ լինի այնորիկ յետինն չար, քան զառաչինն:*

խ. *41ա-2բ* Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ եւ

Թ. դասուց հրեշտակացն նորա – *կապեսցի ամենայն չար աչք եւ չար լեզուք... չար կամաց ի դիմաց հայի, թուրքի, ֆռանկի, ՀԲ. (72) միլաթի ամենեցուն լեզուսն թաղիք լիցի ի դէմ ծառայիս Աստուծոյ՝* Աբրհամին:

խա. *42բ* Գիր թրի, սրի, դանակի, նետի, նիզակի, խանչալի եւ ամենայն ցեղ սրի՝ չորանայ – *Տ՛ր Աստուած՝ Յիսուս Քրիստոս, լո՛յզդ անճառելի... Աղեղնա[ւ]որն, Այծեղջուրն, Ջրհոսն, Ջուկն եւ փառաց թագաւորն՝ ձեր փառաց սիրոյն օգնեցէ՛ք եւ փրկեցէ՛ք գծառայս Աստուծոյ՝* Աբրհամն. *ամէն:*

խբ. *42բ-4ա* Երդումն բժշկութեան հոգոյ եւ մարմնոյ յանուն Տեառն մերոյ՝ Յիսուսի Քրիստոսի – *երդմեցուցանեմ զամենայն դեւսն եւ զամենայն ջերմն... որ ընդ ամենայն տիեզերս, եւ ողորմեա՛ սմա, որ է նեղեալ ի ցաւոց եւ բժշկեա՛ ամենայն վտանգից հոգոյ եւ մարմնոյ. ամէն: Աստուա՛ծ, անուան քում կեցոյ եւ իրաւ արա՛ ինձ... հեռի եղէ ի փրկութեան իմոյ է վասն բանից յանցանաց իմոց եւ փրկեա՛ ծառայս Աստուծոյ՝* Աբրհամն:

խգ. *44ա-5ա* Աւետարան ըստ Յոհաննու (Յովհ. Ա. 1-17) – *Ի սկզբանէ էր Բանն եւ Բանն էր առ Աստուած... Ձի օրէնքն ի ձեռն Մովսէսի տուան, շնորհք եւ ճշմարտութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեւն:*

խդ. *45ա* [Աղօթք] – *Աստուած, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի՝ անբաժանելի Սուրբ երրորդութիւն եւ միաստուածութիւն քեզ փառք յաւիտեանս. ամէն (այսչափ):*

խե. *45ա* [Աղօթք] – *Սուրբ եւ արեղ անուն Աստուծոյ, պարիսպ ամրութեան եւ բժշկութեան... եւ յամենայն բարի բան գործ աջողէ ի դիմաց ծառայիս Աստուծոյ՝* Աբրհամին:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, ԺԸ. դ.

45ա (վրացատառ հայերէն) გიორ ლიზვაკაპი (= Գիր լիզուակապի) – ადემ ტსნამუნ ვურ... განასარაც არვულ. (= *Ադեմ թշնամուն վուր... գանասարած առվուլ):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

9ա Քրիստո՛ս Աստուած, պահեա՛ զծառայս քո՝ Աբրհամն *ամենայն փորձանաց. ամէն:*

10բ Փրկեա՛յ եւ ազատեա՛ զծառայս Աստուծոյ՝ Աբրհամ *ամենայն փորձանաց. ամէն:*

12բ Տ՛ր իմ՝ Յիսուս Քրիստոս, փրկեա՛յ զծառայս Աստուծոյ զամենազոր տէրութեամբդ՝ Աբրհամն *ամենայն փորձանաց. ամէն:*

Տե՛ս Բովանդակութիւն՝ 13ա, 13բ, 14ա (երկիցս՝ ը. եւ բ.՝ վջ.), 15ա, 15բ, 16ա, 17բ, 18ա, 18բ, 21ա, 21բ, 24ա, 25բ (իզ.՝վջ.), 26ա, 27ա, 32բ, 35բ, 42բ (երկիցս՝ խ. եւ խա.՝ վջ.), 44ա, 45ա (խե.՝ վջ.):

15ա Տ՛ր Աստուած՝ | 15բ | Յիսուս Քրիստոս, պահեա՛ զծառայս քո՝ Աբրհամն. *ամէն:*

17ա (սկ.) /// յամենայն փորձանաց զծառայս Աստուծոյ՝ Աբրհամն. *ամէն (նաեւ բնագրի մէջ՝ «...դատաւորաց եւ թագաւորաց ի դիմաց ծառայիս Աստուծոյ՝* Աբրհամին. *ամէն...»):*

20ա Տ՛ր Աստուած՝ Յիսուս Քրիստոս, պահեա՛ զծառայս Աստուծոյ՝ Աբրհամ. *ամէն:*

*22ա (Բնագրի մէջ) Օգն|22բ|եա՛ ինձ եղկելոյս եւ զ*Աբրհամն. *ամէն:*

24բ (Բնագրի մէջ) Տ՛ր Աստուած՝ Յիսուս Քրիստոս, պահեա՛ զծառայս Աստուծոյ՝ Աբրհամն *ամենայն չարէ. ամէն:*

25բ (Բնագրի մէջ) ...խափանեսցի ամենայն դիւական որոգայթ եւ պատահմունք ի դիմաց ծառայիս Աստուծոյ՝ Աբրհամին. *ամէն:*

26բ (Բնագրի մէջ) ...նաւահանգիստս դարձուցէ՛ք գծառայս Աստուծոյ՝ Աբրհամն. *ամէն:*

28բ Տ՛ր Աստուած՝ Յիսուս Քրիստոս, պահեա՛ զծառայս քո՝ Աբրհամն *(տե՛ս նաեւ Բովանդակութիւն, բնագրի մէջ):*

29բ (Բնագրի մէջ) ...ծառայիս Աստուծոյ՝ Աբրհամին:

30բ Ծառայի քո՝ Աբրհամս *եւ ողորմեա՛. ամէն:*

32ա (Բնագրի մէջ) ...Արդ, կապ եւ կախարդութիւնք արձակեալ եղիցի ի ծառայէս Աստուծոյ՝ Աբրհամին. *ամէն:*

41բ (Բնագրի մէջ) ...Նոյնպէս կապեսցի եւ հալածեսցի ամենայն չար ի դիմաց ծառայիս Աստուծոյ՝ Աբրհամին. *ամէն (պարբերութեան յաջորդ տողում կրկին յիշատակուած ստացողի անունը. «եւ այժմ արձակեա՛, Տ՛ր Աստուած, դիմաց ծառայիս Աստուծոյ՝* Աբրհա՛մին *զամենայն բարի եւ զամենայն շնորհք երեսաց...» եւ այլն):*

42ա Բարեխօսութեամբ սոցին փրկեա՛ ամենայն չարից եւ փորձանաց Աբրհամն. *ամէն (բնագրի մէջ՝ «...եւ չար խօսել չի կարէ ի դիմաց ծառայիս Աստուծոյ՝* Աբրհամի *եւ ամէն...»):*

45ա Գրեցաւ Կիպրիանոսս Աբրհամին *համար, ի Դաշտ, ձեռամբ Դաշտեցի տէր Պետրոսի որդի տէր Յոհան|45բ|ննէսին՝ ընդ հովանեաւ Սրբոյ Երրորդութեան եկեղեցուն, եղեւ թվին ՌՒՃԳ. (1784), Նոյեմբերի Ի.ումն (20): Տ՛ր Աստուած, վայելումն տացէ պարոն* Աբրհամին. *ամէն, եւ յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի, եւ ով որ կարդայ, զմեզ մէկ Հայր մերիս յիշեսցէ, եւ ինքն յիշեալ լիջի առաջի Աստուծոյ, եւ նմա փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

ՆՇՈՒՄ՝ *Պհպ. Բա՝ սեւով «Խ[աչիկ] վարդապետ, [Հմր] 46/3674», «Ժ.Ր. [դար] (աւելի ուշ կապոյտով ջնջած եւ ուղղած՝ ՌՄՀԳ.-1784), Մ[եսրոպ] եպ[ի]ս[կոպոս]», 1ա՝ սեւով «Հմր 81. (վրան կարմրով ջնջագիծ)»:*


Ձեռագրիս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Ցուցակ ձեռագրաց Դպրեան Խաչիկ վարդապետի, ժողված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 56, Հմր 46:

3675
ՀՄԱՅԻԼ

ԺԸ. դար (1738ից առաջ)

ՍՏԱՅՈՂ՝ Յովանէս (՞)*:

ԹԵՐԹ՝ 115+4 (թ. 1՝ կրկն. հինգ անգամ). չգրուած՝ 1ա-1դ, 1զ-1բ: ՊՐԱԿ՝ 4+Ա.-ժ×12 (է 7): ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 7×5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, կարմրով սահմանագծուած (5×3): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 5ա). խորագրերը՝ կարմիր եւ վարդագոյն, պարբերութիւնների սկզբնատառերը՝ կարմիր: ՏՈՂ՝ 9: ԿԱՋՄ՝ դրոշմագծերով բաց մանուշակագոյն մոմլաթ. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ սպիտակ թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ՝ սպիտակ չգրուած թուղթ, մասն կազմաստառի:



Նմուշ 5ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Խաչ՝ 63բ: Խորան՝ 1թ, 1ժ, 35բ: Կիսախորան՝ 2ա: Ճակատազարդ՝ 36ա, 56բ, 64ա, 78ա, 89ա, 99բ: Լուսանցազարդ՝ բուսական: Ջարդագիր՝ հանգուցագիր: Գոյներ՝ կանաչ, վարդագոյն, դեղին, սեւ:

* Ծնթ. Հետագայ՝ ԺԸ. դարի ստացող Յոհաննէսանը բոլոր տեղերում ջնջել է առաջին ստացողի՝ Յովանէսի անունը, տեղը գրելով իր անունը, իսկ Յովանէս անունը ջնջման թանաքածի տակ նշմարւում է միայն 77բ էջում:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած Ի. դարում՝ թերթերի պատռուած հատուածներն ամրացուած-լրացուած այլ թղթով, ձեռագրի սկզբից եւ վերջից մէկական թղթէ պահպանակ աւելացրած. կազմի մոմլաթը թեթեւակի մաշուած, ճերմակած, աղտոտուած. լուսանցակողերը մաշուած, սեւացած. գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով թերթերին զանազան բծեր, թանաքի, իւղի եւ ներկի հետքեր, ձեռագիրը ծայրից ծայր խոնաւութիւն տեսած, գրաղաշտը վնասուած, խոնաւութիւնից տեղ-տեղ աղտոտուած, գունափոխուած, թերթերի մեծ մասը (մասնաւորապէս ձեռագրի երկրորդ կէսը) տեղ-տեղ լուացուած, թանաքը տարրալուծուած, հանդիպակաց էջերի գրութիւնները տող առ տող արտատպուած իրար վրայ, ինչի հետեւանքով մասամբ անընթեռնելի, որոշ պարբերութիւններ եւ առանձին էջեր ամբողջութեամբ եղծուած, բնագիրը խաթարուած. մանրանկարները խոնաւութիւնից գունափոխուած, վնասուած, եղծուած. թ. 74-5ի միջեւ 1, իսկ թ. 77-8ի միջեւ 3 թ. ընկած (տե՛ս Բովանդակութիւն), թ. 75-6ի միջեւ 1 թ. պատռած-հանած (բնագրական պակաս չկայ), թ. 50՝ առտ. լս-ը պատռուած-ընկած, թ. 97-8՝ հիմիից մասամբ անջատ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *2ա-114բ* [Հմայիլ]

ա. *2ա-4բ* [Աւետարան ըստ Մատթէոսի (ԺԵ. 21-8)] *– Եւ ելեալ անտի [Յիսուսի], գնաց ի կողմանս Տիւր[ոս]ի եւ Սիդ[ոն]ի... եւ բժշկեցաւ դուստրն նորա ի նմին ժամու:*

բ. *4բ-7ա* [Աւետարան ըստ Մատթէոսի (Թ. 18-26)] *– Մինչդեռ նա զայս խօսէր ընդ նոսա, ահա իշխան մի... եւ ել համբաւս այս ընդ ամենայն երկիրն ընդ այն:*

գ. *7բ-9բ* [Աւետարան ըստ Մատթէոսի (Թ. 27-34)] *– Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուսի, գհետ եղեն նորա կոյրք երկու... Իսկ փարիսեցիքն ասէին, թէ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս:*

դ. *10բ-25ա* [Ա]ղօթք իւրաքանչիւրոց անձանաց հաւատացելոց ի Քրիստոս, որ արարեալ է տեառն Ներսէսի Հայոց կաթուղիկոսի *– Հաւատով [խոստով]անիմ եւ երկիր պագանեմ... երկնաւորաց եւ երկրաւորաց, եւ քեզ փա՛ռք եւ երկրպագութիւն անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ, յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

ե. *25ա-30ա* Մաղթանք զօրաւորի ընդ /// աւհաւիրաց գի[շե]րանցոց (=գիշերայնոց)՝ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն [Բան ԺԲ.] *– Ընկա՛լ քաղցրութեամբ, Տէ՛ր Աստուած հզօր... զի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

զ. *30ա-3ա* Աղօթք զօրաւորի սրբոյն Գրիգորի [Բան ԽԱ.] *– Որդի՛ Աստուծոյ կենդանւոյ, աւրհնեալդ յամենայնի... եւ քեզ ընդ Հօր եւ Հոգւոյդ Սրբոյ վայել է փառք յաւիտեանս. ամէն:*

է. *33ա-5ա* Դարձեալ աղօթք սրբոյն Գրիգորի Նարեկացոյն՝ օգնական եւ պահապան եղիցի ծառայիս Աստուծոյ /// *(անունը՝ ջնջած)* [Բան ՂԴ.] *– Տէ՛ր մեր, որ լա[ւս գհեծու]թիւն կապելոց եւ հայիս յաղօթս խոնարհաց... եւ ի դրոշմէ խաչի քո նշանիդ հալածեսցէ ամենայն չար ի ծառայէս Աստուծոյ (շարունակութիւնը՝ Աստուածաշնչից) Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի, եւ ոչ ի նետէ, որ թռչի ի տուէ (Սաղմ. Դաւթի, Ղ. 6):*

ը. *35բ-47բ* Աղօթք սրբոյն Փոկասու հայրապետին *– Յիսո՛ւս Քրիստոս՝ Որդի՛ Աստուծոյ, [Տէ՛ր իմ եւ Աստուած], որոյ սուրբ է անունդ... եւ փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ. այժմ եւ՛՛ /// (անունը ջնջած):*

թ. *48ա-9ա* [Աղօթք] /// ամենա/// չարի /// *(հետագայում խորագիրը ջնջած, փոխարէնը գրած՝* «[Յ]ոհան-

ջանիև. *ամէն»)* – *Այլ կապեմ ես զիմ չարկամաց լեզուն... ի մատուցումն /// պատարագին, [որ ոչ] մերձենա[յ ծառայիս] Աստուծոյ /// (անունը ջնջած)։*

ժ. *49բ-51ա* [Գիր] չար աչից, վասն չար նիաթի ծառայիս Աստուծոյ /// *(անունը ջնջած) [հմմտ. ձեռ. 6193, 48ա-50ա, որոշ տարբերութիւններով]* – *[Գայր աչքն, ա]հեղ որոտայր [իբրեւ զ]ամբ, գոչէր որպէս զառիւծ, գալարէր որպէս գօձ... Ասէ ողորմութեան հրեշտակն՝ կապեմ զքեզ չար [աչք], որ ոչ մերձենայ [ծառ]այիս Աստուծոյ /// (անունը ջնջած)։*

ժա. *51ա-3ա* Գիր վասն զնդաւածի. գրէ, առ իմն պահէ – *Տ՛ր մեր՝ Յիսուս Քրիստոս գոչեաց ի վերայ խաչին... եւ ամենայն սրբոց քոց պահեա՛ եւ [ազա]տեա՛ զծառայս [Աստուծոյ] /// (անունը ջնջած) ամենայն որոգայթից [չ]նամոցն. ամէն /// (անունը ջնջած)։*

ժբ. *53բ-6ա* [Գիր վասն կախարդաց. *հմմտ. ձեռ. 2472, 54ա-6ա]* – *Երդմնեցուցանեմ զքեզ, [սատանա՛յ], եւ կապեմ անուամբն յԱստուծոյ եւ սրբոց առաքելոցն Պետրոսի, Պօղոսի եւ սուրբ Ստեփանոսի Նախավկային... [ել]եսցէ, որ արար զերկինս եւ զերկիր։*

ժգ. *56ա-60բ* Ա[ղօթք ս]բոյն [Կ]իպրիանոսի եպիսկոպոսին, ո՛ր ասացեալ է ///ֆեղի կատար/// մաս ման /// – *Օրհնեալ ես, Տ՛ր, [որ] արարեր զերկինս եւ զերկիր եւ այլ ամենայն, որ ի նոսա... եւ փրկեալ են յամենայն վտանգէ հոգւոյ եւ մարմնոյ եւ գ///։*

ժդ. *61ա-3ա* [Գիր] գլխայցափ – *[Կա]յր անկարն [ի ծո]վէ ելանէր... եւ ամենայն ցաւոց պատահարաց եղիցի [օգնական] ծառայիս Աստուծոյ /// (անունը ջնջած, տեղը գրած՝ «Յոհաննջան. ամէն»)։*

ժե. *63բ-6բ* /// [Աղօթք սուրբ խաչի. *հմմտ. ձեռ. 8543, 89ա-90ա (որոշ տարբերութիւններով)]* – *[Ա]րդ, սուրբ խաչն մեզ նշան յաղթութեան... զգեւսն, սուրբ խաչն եւ սուրբ Ա[ւետարանն] օգնական [եւ պահապան] լինին [ծառայիս Աստուծոյ] /// (անունը ջնջած)։*

ժզ. *66բ-70բ* Մաղթանք [սուրբ նշանացս Քրիստոսի՝ Աստուծոյ] մերոյ, ո՛ր կա[ն] ///. *հմմտ. ձեռ. 8543, 87բ-9ա (որոշ տարբերութիւններով)* – *[Բ]արեխօսութեամբ սուրբ աստուածային [նշան]ացն Քրիստոսի եւ [ան]բարբառ բարեխօսացս... [յերեւելի] եւ յաներեւոյթ [չ]նամ[ո]ն։*

ժէ. *70բ-4բ* Աղօթք սրբոց մարգա[ր]էիցս, վարդապե[տաց] եւ [հայր]ապետացս եւ այլ սրբոց, ո՛ր լիցին օգնական եւ պահապան ծառայիս Աստուծոյ /// *(անունը ջնջած)* – *Բարեխօսութեամբ սուրբ մարգարէից Մովսէսի, Յեսուայ, եզեկիայի... եւ սրբոյն Սարգսի Զօրավարին եւ [որդ]ոյն նորա՝ Մարտիրոսին, եւ սրբոյն /// [զծառայս Աստուծոյ] /// (անունը ջնջած, փոխարէնը գրած «Գուլնազին ամենայն»)։*

ժը. *75ա-6բ** [Սաղմ. Դաւթի, ԾԳ. 3-9] – *(թ. 74-5ի միջեւ 1 թ. ընկած, սկ. թափուած) ///[արա՛] ինձ։ Աստուա՛ծ, [լո՛ւր աղաւթ]իդ իմոց, ունկն [դի՛ր բա]նից բերան[ոյ իմոյ]... [յամենայն] նեղութենէ [իմմէ] փրկեցեր [զիս, եւ ի թշն]ամիս իմ [ետես ակն իմ] /// ծառայիս Աստուծոյ /// (անունը ջնջած, փոխարէնը գրած «Գուլնազին»)։*

* Ծնթ. Թ. 75-6ի միջեւ 1 թ. պատռած-հանած. բնագրի պակաս չկայ։

ժթ. *76բ-7բ* Գի[ր] նիաթի եւ /// չար ակն /// – *Տ՛ր մեր՝ Յիսո՛ւս Քրիստոս, գայր ի գետն Յորգանան եւ բերեր ծառ մի գեղեցիկ... աղաղակ[էին] եւ ասէին՝ Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ՝ Տ՛ր զօրութեանց. /// ակնի կա/// գմեղուս/// եր եղիցի [ծառայ]իս Աստուծոյ /// (անունը ջնջած, նշմարւում է Յովանէս՞)։*

ի. *77բ* [Յովհ. Ա. 1] – *Ի սկզբան[է էր Բան]ն, եւ Բան[ն էր առ Աստուած], եւ Աստուած էր [Բանն (շարունակութիւնը կրկին Աստուածաշնչից) եւ] արարեր [զերկինս] եւ զերկիր /// (թ. 77-8ի միջեւ 3 թ. ընկած, վջ. թափուած)։*

իա. *78ա-81ա* [Աղօթք սրբոյն Աստուածածնի, ամենայն չարին եւ չար նիաթն կալեալ եղիցին ի դիմաց ծառայիս Աստուծոյ. Գիր գլխացաւի. *հմմտ. ձեռ. 8543, 90աբ, (որոշ տարբերութիւններով)]* – *Ով ամենասրբուհի Աստուածածնին՝ պարծանք կուսու[թեան]... օգնական [եւ պահապան] եղիցի ծ[առայիս] Աստուծոյ /// (անունը ջնջած, փոխարէնը գրած «Յոհաննջան. ամենայն»)։*

իբ. *81ա-2բ* [Աղօթք] /// – *Յիսո՛ւս Քրիստոս, որ ի[ջեր] յերկնից եւ [ան]եր բժշկութիւն... եւ [յամենայն] սրբոց բարեխօս[ութեամ]բն որոշեալ եւ ///եալ եղիցի ///աւութիւն [ծառայ]էս Աստուծոյ /// (անունը ջնջած)։*

իգ. *82բ-5ա* Գիր /// [ա]րգանդու սուրբ Մարիամ[ու] ///րաց, եւ զայս յղ/// ալոճի վիզն կապ[եա՛] /// օրն վեց անկա/// մանն ի դիմ/// – *Յիսուս Քրիստոս՝ Տէր մեր, /// եմուտ յերուսաղէմ... հովիւ բարի ///[իտ] եւ քաջ [յա]ւիտենա[նս. ա]մէն։*

իդ. *85ա-8բ* Գիր [ալի եւ թպղի] – *Անաս եւ Շղիաթ, Սիսահանէ... [ծառ]այէս Աստուծոյ՝ /// (անունը ջնջած, այլ թանաքով վրան գրած՝ Ջարե/// ամենայն) այլ խ. (40) տու[նք հե]ռանամ ի տա[նէ]։*

իե. *88բ-91բ* Աղօթք սուրբ հ[րեշտակա]պետացն՝ [լինին օգն]ական եւ պահապան [ծառայիս] Աստուծոյ /// *(անունը ջնջած)* – *[Բա]րեխօսութեամբ եւ խնդրուածօք անմարմնոց հրեշտակապետացն... ի պահ[պանութիւն ծառայիս Աստուծոյ] /// (անունը ջնջած)։*

իզ. *91բ-5ա* [Աղօթք] /// – *[Յիսուս] Քրիստոս /// եւ զաչս /// եւ ատր///... լուայ, եղիցի ///միս ծառայիս [Աստուծոյ] /// (անունը ջնջած)։*

իէ. *95աբ* [Այլ աղօթք՞] /// [ծառա]յիս fn /// *(անունը ջնջուած)* – *///երես /// նկարինս ///... զձեզ դուք ան/// իշխանութիւն եւ պա[տիւ] եւ զբերան /// (անունը ջնջած)։*

իբ. *95բ-9ա* Գիր /// – *երդմնեցուցանեմ զքեզ չար /// դեւ, յԱստուած ///... Անուն Հօր եւ [Որդւոյ] եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն /// (շարունակութիւնը՝ հաւանաբար յիշատակարանը ջնջուած):*

իթ. *99բ-101ա* [Գիր գլխացաւի վասն պահպանութեան ծառայիս Աստուծոյ *(հմմտ. ժապաւենաձեւ հմայիլ 339, ԻՁ.)*] – *[Տէր] մեր՝ [Յիսուս Քրիստոս] յայնժամ գայ ի Գալիլեա ի Յորդ[անան]... զմեր /// լեր /// (շարունակութիւնն անընթեռնելի):*

լ. *101ա-2բ* Գի[ր] /// – *յիշ/// (շարունակութիւնը անընթեռնելի, նշմարւում են առանձին տառեր):*

լա. *102բ-4բ* /// *(խորագիրն անընթեռնելի)* – *[Յ]անուն Աստուծոյ եւ յանուն սրբոց հայրապետաց... խնդրուածս ի վերայ /// բժշկեա՛ Քրիստոսի ծառայիս /// (անունը ջնջած):*

լբ. *104բ-5ա* /// *(խորագիրն անընթեռնելի)* – *Յիսուս ///ին սուրբ հայրապետն... ամենայն մարտիրոսաց:*

լգ. *105ա-7բ* /// *(խորագիրն անընթեռնելի)* – *Ս/// (շարունակութիւնն անընթեռնելի)... ///տեմք ամենայն մարդու ///:*

լդ. *107ա-8ա* Գիր լեզուկապի – *Այիազ/// արի ///... դիմաց ի ծառայէս Աստուծոյ:*

լե. *108բ-10բ* Գիր դաճակի, սրի /// – *Անայն մեզ եա/// եւ փրկէ... խորհել ի դիմաց [ծառայիս Աստուծոյ] /// (անունը ջնջած):*

լզ. *110բ-1բ* /// *(խորագիրն անընթեռնելի)* – *Ո/// ել զբերան... հալածէ եւ /// հեռարգեալ (՞) ի ծառայիս Աստուծոյ /// (անունը ջնջած):*

լէ. *111բ-4բ* /// *(խորագիրն անընթեռնելի)* – *[Յանուն] Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ... հուրն վիշապի /// դադարա/// հեզ/// [ծառայիս Աստուծոյ] /// (անունը ջնջած, փոխարէնը գրած՝ «Յոհանջանին»):*

Ծնթ. Ձեռագրի անընթեռնելի հատուածների վերծանութիւնն արել ենք Ձեռագրագիտութեան բաժնի աշխատակից Դ. Ղազարեանի հետ:

ՅԱԻԵՎԱԳՐՈՒԹԻՒՆ, ԺԸ. դ., շղագիր

115բ (խոնաւութիւնից ջնջուած, ընթերցւում են անկապակից բառեր) Թվին [Ռ]ՃՁ[է.] (1738) /// բեր ///ոհկ /// ի ժամանակ ///երէ մի /// եկ /// մոր յ/// բան:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

*9բ Տէ՛ր Աստուած՝ Յիսուս Քրիստո՛ս, բարեխօսութեամբ սրբոց աւետարանչացն |10ա| Մատթէոսի եւ Մարկոսի, Ղուկասու եւ Յօհաննու, օգնական լե՛ր եւ պահապան եւ պարգեւեա՛ առողջութիւն ծառայիս քոյ/// (հետագայում ստացողի անունը ջնջած եւ տեղը գրած «Յոհանջանին. ամէն»)**:

* Ծնթ. Բոլոր խոռագրերի եւ բնագրերի վերջում գրուած ստացողի անունը ջնջած. տե՛ս Բովանդակութիւն՝ 33ա, 47բ, 48ա, 49ա, 49բ, 51ա, 53ա (երկիցս), 63ա, 66բ, 70բ, 77բ (թէկաւորէն՝ Յովանէս), 81ա, 82բ, 88բ (երկիցս), 91բ, 95ա, 95բ, 104բ, 110բ, 111բ, 114բ:

47բ Բարեխօսութեամբ եւ աղօթիւք սրբոյն Փոկասու հայրապետին, Քրիստո՛ս Աստուած, պահեա՛ զծառայս քո/// (անունը ջնջած):

60բ Տէ՛ր Աստուած Յիսուս [Քրիստոս, բարե]խօսութեամբ սրբ[ոյն Կիպր]իանոսի եպի[սկոպոս]ին եւ Սատ///ադին փրկեա՛ |61ա| /// (շարունակութիւնը, նաեւ՝ ստացողի անունը ջնջած):

115ա [Փառք անբաժանելի] Սուրբ երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ [եւ միշտ] եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *1ե (1798 թ., շղագրանման նոտրգիր)* Թվին 1798 ունն Մալխասն *անգ[ա]վաշխար (= ծնուեց), Աստուած վերջն բ[ար]ի արասցէ:*

2. *74բ (ԺԸ. դ., նոտրգիր)* Գովնազին *ամենայն (գրուած ստացողի անուան վրայ, տե՛ս նաեւ Բովանդակութիւն՝ 76բ):*

3. *10ա (ԺԸ. դարի վերջ, շինծու նոտրգիր)* Յոհանջանին. *ամէն (գրուած բուն ստացողի անուան վրայ. տե՛ս նաեւ Բովանդակութիւն՝ 48ա, 63ա, 81ա, 114բ):*


ՆՇՈՒՄ՝ *Ա. փեղկին՝ կապոյտով՝ «3675», 1ա՝ մատիտով «3675»:*

ԳՐՁԱՓՈՐՁ՝ *1ա՝ մատիտով «12», «34», զանազան գծեր, 1բ՝ մատիտով «6 0», «Պ (կրկն. 6 անգամ)», 1գ՝ մատիտով անկապակից բառեր «Անահիտ (՞), պանեգ պանմեծ էրնի», 1ը՝ մատիտով անկապակից բառեր «Պայ զ պասել ա»:*

3676
ԺՈՂՈՎԱԾՈՅ

Ժե. դար

ԹԵՐԹ՝ 103. չգրուած՝ 82բ, 101բ-3ա: ՊՐԱԿ՝ Ա.-Թ×12 (Ա 10, Թ 8)+1*: ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14,5×10: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (10,5×6): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 84ա). խոռագիրք՝ կարմիր, վարդագոյն եւ շագանակագոյն: ՏՈՂ՝ 21: ԿԱՋՄ՝ մուգ կարմիր մոմլաթ, մէջբ՝ սեւ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ սպիտակ թուղթ (նորոգման ժամանակի. նախկին կազմը՝ դրոշմազարդ եւ ծաղկազարդ կաշի, խառակուսի շրջանակի մէջ գրութեամբ՝ «Տէր եղիազար»՝ տե՛ս Յ. Թօփճեան, Յուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վար-



Նմուշ 84ա

դապետի, ժողված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 64, ըստ վերջինիս՝ գրիչ եւ ստացող՝ Յովհաննէս վրդ., տե՛ս նոյն տեղում): ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԴ՝ սպիտակ չգրուած թուղթ, մասն կազմաստառի (Ա, Դ), Բ, Գ՝ այլ, բարակ թուղթ:

* Ծնթ. է. պրակի վերջին թերթի պրակահամարից սկսած՝ մնացածները գրուած են հետագայի ձեռքով, մատիտով, վերջին՝ 103րդ թերթը Թ. պրակի մաս է:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Կիսախոշոր՝ 1ա: Ճակատազարդ՝ 83ա: Լուսանցազարդ՝ բուսական՝ 1ա, 68բ, 83ա: Ջարդագիր՝ հանգուցագիր՝ 1ա, 68բ, 78ա, թոչնագիր՝ 83ա: Գոյներ՝ կարմիր, մանուշակագոյն, շագանակագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմը նորոգուած Ի. դարում, ձեռագրի սկզբից եւ վերջից երկուական թղթէ պահպանակ աւելացուած. կազմի մոմլաթը թեթեւակի ճեռուած, մասամբ սեւացած, պիպ-ներ Բ., Գ.՝ խոնաւութիւնից գունափոխուած. լուսանցակողերը մաշուած. թերթերին գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, իւղի, սեւ թանաքի եւ գրեթէ բոլոր թերթերին՝ սնկային հիւանդութեան բազմաթիւ հետքեր, գրադաշտը տեղ-տեղ աղտոտուած, խոնաւութիւնից գունափոխուած, լուացուած, բնագիրը երբեմն եղծուած, դժուարընթեռնելի, մասամբ նոյնիսկ անընթեռնելի, խորագրերի կարմիրը՝ թափուած, մանրանկարները խոնաւութիւնից գունափոխուած, յաճախ դրոշմուած հանդիպակաց էջերին (83ա եւ այլուր). թ. 28-9՝ հիմիից անջատուած, թ. 98՝ ստ. արտ. անկիւնը պատռուած-ընկած, թ. 72-103՝ ձեռագրի վերին կէսին անմաճուր ջրի հետքեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-68բ* Մեկն[ութիւն պատարա]գի, զոր [արարեալ է Ներսէսի] Լամբրոնաց[ոյ, եւ համաոօտ]եաց Յովհաննէս վարդապետ Ար[ե]ի[ղեցին վասն ուս]ումնասիրաց [յաղագս] ամենայնի – *ժ[ա]ման[ակ է ամենայն] իրաց. ասէ [Սողով]մոն. [ժամա]նակ [լալոյ եւ ժա]մանակ [ծի]ծաղելոյ... արձակ եւ պայծառ քննութեամբ եառուն զպատարագին մեկնութեան տեսութիւն (2բ):*

ա. *2բ-8ա* Զի՞նչ է, որ յամենայն օր պատարագ առնեն. եւ թէ որոց լինի փրկութիւն եւ որոց ոչ... – *Արդ, նախ պարտ է գիտնալ զայս, թէ յամենայն աւր զի՞րդ հրաման առաք պատարագ մատուցանել... եւ աղուհացից շաբաթն եւ կիրակէն միայն լինի պատարագ:*

բ. *8ա-12բ* Յաղագս՝ թէ զի՞նչ է աւրինակ հացին եւ բաժակին եւ թէ նուազին վասն անարժանութեան հանապային – *Յորժամ էջ Բանն Աստուած յարգանդ սուրբ Կուսին... բազում հիւանդք եւ ախտաժէտք եւ շատ եւս այն են, որ ննջեցեալք են:*

գ. *12բ-4ա* Խ[որհուրդ զանազան զգեստուց հանդ]այ[ական աստիճան[աց եւ որպէս] – *Յորժամ հանդերձեալ է ոք ի քահանա[յ]ից եւ կամ յեպիսկոպոսաց մատուցանել պատարագ... իսկ բացաւ գլխով մատուցանելն զպարզմտութիւն սրտին ունի զօրինակ:*

դ. *14ա-7ա* [Վասն զգեստ]ուց հանդերձեալութեան – *Բայց են ոմանք, [զի] հակառակին եւ անաւգուտ համարին քահանայական զգեստն... կինն ոչ բանայ զգլուխն, եւ այրն համարձակ բանայ անամաւթ:*

ե. *17ա-8բ* Զի՞նչ է, որ [զգե]նուն հանդերձեալն – *Եկեղեցին տուն եւ բնակութիւն է երկնաւոր թագաւորին... համարձակութեամբ [գնեաս եւ գգլուխս] Քեզ համբառնամք, աւրհնեալ է Աստուած. ամէն:*

զ. *18բ-9ա* Խրատ հանդերձ[յ]ին [խոնարհի եւ անկանի ի վերայ երեսաց իւրոց եւ անմոռուչ ասէ զաղաւթս առ Սուրբ Հոգին, զոր ասացեալ է Գրիգորի Նարեկացոյ] – *Ամենակա՛լ Աստուած՛: Ի լման ասէ. Այս ցուցանէ զՀոգին Սուրբ Աստուած... մտացս կրկին խաղաղութիւն [առ]նու վերըստին:*

է. *19ա-31բ* [Աղօթք եւ շարականք] Խաղաղութիւն ամենեսեան – *Աղաչեմք եւ աղերսեմք արտասուալից [հառաչմամբ]... եւ սարկաւագն քարոզէ՝ եւ եւս [խաղաղու]թեան եւ եւս հաւ[ատով]:*

ը. *31բ-68բ* Մեկնութիւն պատարագի Աթանասի [ասացեալ] – *Տէ՛ր Աստուած, զաւրութեանց եւ արարիչ ամենայն լինելութեանց... Դատելոց են ընդ այնոսիկ, որ վաճառեցին զՏէրն եւ զերկնոյն Քրիստոսի Աստուծոյ փա՛ռք յաւիտեանս. ամէն: Աւրհնեալ է Աստուած:*

Ծնթ. Մասամբ տարբեր է Յովհաննէս Աւրհիշեցու այս երկի սովորաբար յղուող օրինակից՝ ձեռ. 45, 62բ-106ա: Նոյնանում է հետեւեալների հետ՝ ձեռ. 1770, 330բ-53ա, ձեռ. 3939, 228բ-65բ (Յովհաննէս Աւրհիշեցու անունով), ձեռ. 941, 277ա-81բ (անհեղինակ, վերագրուած Յովհաննէս Երզնկացուն) եւ ձեռ. 3119, 3ա-79բ (Յովհաննէս Երզնկացու անունով, առկայ են ոռոշ տարբերութիւններ): Տարբեր է նաեւ տպագրերից՝ Մեկնութիւն ահաւոր խորհրդոյ սրբոյ պատարագին /արտահանեալ ի մեկնութեանց Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի եւ Ներսեսի Լամբրոնացւոյ՝ վերատեսչին Տարսոնի՝ կարճելով եւ պարզաբանելով / Յովհաննու Աւրհիշեցւոյ, Կալկաթա, 1830 եւ Մեկնութիւն ահաւոր խորհրդոյ սրբոյ պատարագին /արտահանեալ ի մեկնութեանց Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի եւ Ներսեսի Լամբրոնացւոյ կարճելով եւ պարզաբանելով / Յովհաննու Աւրհիշեցւոյ, Էջմիածին, 1860: Հմմտ. նաեւ Մովսէս

Երզնկացու «Հաւաճումն համաոօտ մեկնութեան սրբոյ պատարագին, զոր յառաջագոյն առաբեալ է սրբոց լուսաւոր հարցն». այս մասին տե՛ս Ե. Պետրոսեան, Հայ դաւանաբանական գրականութիւնը «Էջմիածին» ամսագրի էջերում, Էջմիածին, 1975, Բ., էջ 43 եւ Ե. Պետրոսեան, Մովսէս Երզնկացու «Հաւաճումն համաոօտ մեկնութեան սրբոյ պատարագին, զոր յառաջագոյն առաբեալ է սրբոց լուսաւոր հարցն» աշխատութիւնը, Էջմիածին, 1973, Թ., էջ 14-20, ԺԱ., էջ 43-48:

Բ. *68բ-78ա* Կարգ եւ կանոնի [աղօթից, զոր խնդ]րեալ է ի հոգէկիր առանց, յումեմնէ միայնացելոյ առթուն եւ զարթուն հոգո ի Գրիգորէ Նարեկացո, որ եւ ցուցանէ նախադրութիւն բանիս, թէ ոչ համարի զանձն արժանի այսպիսի իրի. վասն այն զառաքելոյն ի մէջ առեալ, դնէ ի սկիզբն կանոնիս պատմութեան եւ ոգէշահ խրատու. Յաղագս կրաւնաւորաց եւ եկեղեց[ականաց ասացեալ. *հմմտ. ձեռ. 507, 306ա-10բ*]

– *68բ-72բ* [Նախադրութիւն] – *Առաքեալն Պաւղոս, անաւթն ընտրութեան եւ բնակարան Ամենասրբէ Հոգոյն... ի վերայ նոցին բան յաւգել, բայց զնոցա ասասցուք համառօտաբար:*

ա. *72բ-8ա* [Կարգ եւ կանոն աղօթից] – *Անաւթն ընտրութեան Պաւղոս հրամա[յ]է աղաւթել առանց բարկութեան եւ երկմտութեան... ի սէր Տեառն [բեւեռեա՛ եւ աներկիւղ] ննջեա՛ ի փառս նորա, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:*

Գ. *78ա-82ա* Սուրբ ե[աւն Յովաննիսի Գառ]նեցո ասացեալ [աղաւ]թից Խրատ կրաւնաւորաց *(տե՛ս ձեռ. 2680, 263բ-6ա. Ամենանուաստ ծառայակիցս ձեր... ձեռագրիս սկիզբը հմմտ.՝ 264բ)* – *Այլ թէ վասն աղաւթից հարցանել կամիս՝ ոչ գո չափ եւ սահման աղաւթից... զի այսու յիշատակաւ կատարեսցես զամենայն ողջամբ, ողջ լե՛ր ի սէրն Աստուծոյ եւ ի համբերութիւնն Յիսուսի յաւէրժ:*

Դ. *83ա-93բ* [Ն]որին Գրիգորի [Տաթեւացւոյ]՝ աշակերտի Յոհան[նու] Որոտնեցո, Լուծումն համառաւտ դժուարիմաց բանից ի գիրս գրչութեան, որ յԱռի[ւստակ]իսէ հո[ետ]որէ

Տե՛ս ձեռ. 267, 444ա-55ա: ա/83ա-6ա: բ/86ա-7ա: գ/87ա-դ/87բ-8բ: ե/88բ-9ա: զ/89ա-է/89բ: ը/89բ-90ա: թ/90ա: ժ/90ա-1ա: ժա/91ա-3բ:

Տե՛ս Լ. Խաչերեան, «Գրչութեան արուեստի» լեզուական-ֆերականական տեսութիւնը միջնադարեան Հայաստանում, Երեւան, 1962, էջ 321-340 (ձեռագիրս օգտագործուած չէ):

Ե. *93բ-101ա* Նորին Գրիգորի [Տաթեւացւոյ]՝ աշակերտի Յոհաննու Որոտնեցոյ, Լուծումն համառաւտ ի խրատ գրչութեան Գէորգեայ վարդապետի, զոր նախ խնդրեալ էր ի նմանէ Կոստանդեայ գրչի եւ ապա Գոյներիցանց Ստեփաննոսի

Տե՛ս ձեռ. 267, 429ա-44ա: ա/93բ-4ա: բ/94ա-101ա (վերջը՝ չշարունակուած. «Վեշտասաներորդ. գի[տելի է ի] վերջոյ, զի գրեալն ան[ուանեալ կոչի...] ///». հմմտ. տպ., էջ 352): գ-զ/չիք:

Տե՛ս Լ. Խաչերեան, «Գրչութեան արուեստի» լեզուական-ֆերականական տեսութիւնը միջնադարեան Հայաստանում, Երեւան, 1962, էջ 341-358 (ձեռագիրս օգտագործուած չէ):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1ա Հոգին յաւա[ր]ա գրոյ[ս] /// հասցէ:

Ծնթ. Նախապէս եղել է՝ «[Սուրբ] Հոգին յաւարտ գրոյս [ժամանե]ցուսցէ»:

82ա Գրչի սորա եւ ստացողի Քրիստոս գթածն ողորմեսցի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *103բ (ԺԹ. դ., շղագիր) Յի[շատակ է] ժողովածու գիր[քս]* Ն[երսէ[ս] *կաթողիկոսին ի դուռն* երից մանկանաց:

ՆՇՈՒՄ՝ *Պհպ. Բա՝ սեւով «Խ[աչիկ] վարդապետ, Հմր 52 (կարմրով ջնջած, յետոյ գրած ճիշտը) Հմր 58/3676», մանուշակագոյնով «ԺԵ-ԺԶ. [դար,* Մեսրոպ *եպիսկոպոս]»:*

Ձեռագիրս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Յուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 64-65, Հմր 58:

ԳՐԶԱՓՈՐՁ՝ *1ա՝ սեւով զանազան գծեր, 102բ՝ «ա (քանիցս)»:*


3677
ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ, ՔԱՐՈԶԳԻՐՔ

ԺԷ. դար

ԳՐԻՉ՝ Աւետիք:

ԹԵՐԹ՝ 502+3 (կրկն.՝ թ. 367, 369, 406, ունի հետագայի մէջընդմէջ թերթակալում). չգրուած՝ 1աբ, 361բ, 502աբ: ՊՐԱԿ՝ 1+Ա.-ԽԲ×12 (Ա. 10, Լ 14): ՆԻԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ թագ (թերթերի եզրահատման պատճառով հազիւ ընկալելի): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16,5×10,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, վարդագոյնով սահմանագծուած (12,5×7): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 20ա). խորագիրք՝ կարմիր եւ վարդագոյն: ՏՈՂ՝ 21: ԿԱՋՄ՝ կարմիր լաթ, մէջքը՝ սեւ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ սպիտակ թուղթ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԴ՝ սպիտակ չգրուած թուղթ, մասն կազմաստառի:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Կիսախորան՝ 2ա (գծա-



Նմուշ 20ա

նկարային): Լուսանցազարդ՝ բուսական, թոչուն՝ 73բ, 326բ: Զարդագիր՝ թոչնագիր, թոչուն-ձուկ՝ 326բ: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, վարդագոյն, մանուշակագոյն, երկնագոյն, ոսկի:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած Ի. դարում. սկզբում եւ վերջում երկուական թղթէ պահպանակ աւելացրած, կազմի լաթը թեթեւակի մաշուած, աղտոտուած, մէջի կաշին մաշուած, ճեռնուած. կազմաստառները եւ Ա-Դ. պիպ-ները թեթեւակի մաշուած, մասամբ խունացած. լուսանցակողերի կարմիրը թափուած, մասամբ սեւացած. թերթերին գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, սեւ թանաքի հետքեր, արտ. լս-ներին անմաքուր ջրի հետքեր, գրադաշտը խոնաւութիւնից տեղ-տեղ աղտոտուած, թանաքը տարրալուծուած, գրադաշտը սեւացած, թթուայնութիւնից թերթերի մեծ մասը վնասուած, պատռուած, հետագայում այլ թղթով նորոգուած-լրացուած, որոշ թերթերի՝ պատռուելու ենթակա մասերը թափանցիկ թղթով ամրացուած, որից գրադաշտը յաճախ դժուարընթեռնելի, խոնաւութիւնից մանրանկարների գոյները յաճախ դրոշմուած հանդիպակաց էջերին (հմմտ. 2ա եւ 501բ), ձեռագրի արտ. լս-ները եզրահատուած, մանրանկարների մեծ մասը վնասուած՝ 2ա, 13բ եւ այլուր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *2ա-501բ* [Քարոզգիրք Գրիգորի Տաթեւացւոյ]

1. *2ա-361ա, 455ա-501բ* [Քարոզք յառաջին հատորոյ]

Տե՛ս Ջմեռան հատոր, տպ. 1740: Նախերգանք/352ա-61ա (իր մասամբ տարբեր): ա-բ/չիք: գ/2ա-13բ (Ա): դ-ը/չիք: թ/13բ-28ա (Բ): ժ-իբ/չիք: իգ/28ա-40ա (Գ): իդ-խէ/չիք: խը/40ա-52ա (Դ): խթ/52ա-61ա (Ե): ծ-կէ/չիք: կգ/61ա-73բ (Զ): կէ-կը/չիք: կթ/73բ-85ա (Է): հ/85ա-97բ (Ը): հա-հբ/չիք: հգ/97բ-110բ (Թ): հդ/չիք: հե/110բ-9բ (Ժ): հզ/120ա-30բ (ԺԱ): հէ-հը/չիք: հթ/130բ-41բ (գլխահամարը չգրած, տեղը՝ բաց): ձ/չիք: ձա/141բ-54ա (ԺԲ): ձբ-ձդ/չիք: ձե/154բ-66ա (ԺԳ): ձզ/չիք: ձէ/166բ-78բ (ԺԴ): ձը/178բ-97բ (ԺԵ): ձթ/197բ-206ա (ԺԶ): ղ/206ա-13ա (ԺԷ): ղա/213ա-24բ (ԺԸ): ղբ/224բ-37ա (ԺԹ): ղգ/237ա-46բ (Ի): ղդ/246բ-55բ (ԻԱ): ղե/չիք: ղզ/255բ-75ա (ԻԲ): ղէ/275բ-95բ (ԻԳ): ղը/295բ-306ա (ԻԴ): ղթ-ճէ/չիք: ճը/306ա-26ա (ԻԵ): ճթ/326ա-41ա (ԻԶ): ճժ-ճժգ/չիք: ճժդ/341ա-52ա (ԻԷ): ճժե-ճիա/չիք: ճիբ/455ա-69ա (ԼԷ): ճիգ-ճիթ/չիք: ճլ/469բ-82ա (ԼԸ): ճլա/482ա-8բ (ԼԹ): ճլբ/489ա-501բ (Խ): ճլգ-ճկա/չիք:

2. *362ա-447ա* [Քարոզք յերկրորդ հատորոյ]

Տե՛ս Ամառան հատոր, տպ. 1741: ա-հգ/չիք: հդ/362ա-79ա (ԻԹ): հե/379բ-87բ (Լ): հզ/387բ-98բ (ԼԱ): հէ/399ա-406դ (ԼԲ): հը/406դ-17ա (ԼԳ): հթ/417ա-27բ (ԼԴ): ձ/427բ-47ա (ԼԵ): ձա-ճձը/չիք:

3. *447ա-54բ* [Քարոզ արտաքոյ Ա. եւ Բ. հատորոց]

ա. *447ա-54բ* ԼԶ. Յաղագս խոստովանութեան, ի բանն, որ ասէ առաքեալ. Ապա եթէ խոստովանիմք զմեղս մեր, հաւատարիմ է եւ արդար՝ առ ի թողուլ [զմեղս մեր] – *Վարդապետք եկեղեցւոյ վկայութեամբ աստուածեղէն գրոց այսպէս ասեն, թէ խոստովանութիւն... Քրիստոսի մարգասիրին. նմա փառք յաւիտեանս. ամէն:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

40ա Արդ, յերեսս անկեալ աղաչեմ յիշել յամենայնի անարժան գրչիս եւ դուք յիշեալ՛:

85ա Օգնեա՛, Սո՛ւրբ Հոգի, զի աւարտեսցուք:

97բ եւ առաւել՝ զԱւետիք գծողս եւ զծնօղս իմ, եւ զամենեսեանն փրկեսցէ ի հուր ձիրալիր տանջանացն:

482ա Ջմեղսամած եւ բազկաշաղախ Աւետ անուն գրիչս յիշեա՛:

ՆՇՈՒՄ՝ *Պհպ. Բա՝ սեւով «Խ[աչիկ] վարդապետ, Հմր 14 (կարմրով ջնջած, յետոյ գրած ճիշտը) Հմր 65/3677», «ԺԷ. [դար], Մ[եսրոպ] եպ[ի]ս[կոպոս]»:*


Ձեռագիրս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Յուցակ ձեռագրաց Դպրեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 78-79, Հմր 65:

3678
ԺՈՂՈՎԱԾՈՅ


ՓՈՍ ԱՆԱՊԱՏ (ԿԻԼԻԿԻԱ) ԶՀԸ. – 1329

ԳՐԻՉ՝ Հայրապետ, Թորոս Րիյ (թ. 403ա-21բ): ՍՏԱՑՈՂ՝ Ստեփաննոս կր.:

ԹԵՐԹ՝ 424 (հետագայի էջակալում սեւով՝ 1-869, որ է՝ 1ա-424բ). չգրուած՝ 3աբ: ՊՐԱԿ՝ Ա-ԼԴ×12 (Ա 11, ԻԸ 12+1, ԼԴ 6)+1-2×12 (2՝ 10): ՆԻՒԹ՝ թուղթ (թ. 3 եւ 336՝ այլ թուղթ, մուծուած առանձին՝ նորոգման ժամանակի. լուսագծերով, թ. 3՝ նաեւ լուսադրոշմով՝ «.GINI.»): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17,5×12,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (13,5×8,5), թ. 403-21 (14,5×10): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 169ա), թ. 403-21 (նմուշ՝ 404ա). խորագիրք՝ կարմիր, սկզբնատողերը՝ նաեւ մանուշակագոյն: ՏՈՂ՝ 18, թ. 403-21՝ 22: ԿԱԶՄ՝ դրոշմագծերով բաց վարդագոյն



Նմուշ 169ա



Նմուշ 404ա

մոմլաթ, մէջբը՝ սեւ կտաւ (նորոգման ժամանակի). միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ դեղնաւուն թուղթ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ ԱԲ+Գ՝ դեղնաւուն չգրուած թուղթ, Ա եւ Գ՝ մասն կազմաստառի (նորոգման ժամանակի):

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – կիսախորան՝ 1ա: Ճակատազարդ՝ 403ա: Լուսանցազարդ՝ բուսական, վարդեակ, խաչ՝ 31ա, 224բ: Ձարդագիր՝ հանգուցագիր (նաեւ մարդադէմ՝ «Զ»՝ 302բ), թոչնագիր՝ 7ա, 194ա: Գոյներ՝ կարմիր, կանաչ, վարդագոյն, մանուշակագոյն, դարչնագոյն, շագանակագոյն, սեւ:

Տե՛ս Ա. Գէորգեան, Անանուն հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն, Թ-ԺԷ. դդ., Գահիրէ, 2005, էջ 111, Հմ՛ 150:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած Ի. դարում, երկու կողմից՝ սկզբից եւ վերջից մէկական թղթէ պահպանակ աւելացուած, լս-ների պատռուած հատուածներին նորոգման ժամանակ փակցուած այլ՝ լուսագծերով թուղթ, յաճախ թուղթ փակցուած նաեւ լս-ների գրութիւնների վրայ, մի մասը յետոյ բացած (տե՛ս Գրչափոռն), թ. 336 մուծուած ԻՐ եւ ԻԹ պրակների միջեւ, 336բ՝ նախապէս սպիտակ թղթով փակած, այժմ թուղթը հանուած եւ եղածը նկարագրուած համապատասխան տեղերում. կազմի մոմլաթը աղտոտուած, ճերմակած, թեթեւակի մաշուած, մէջբի սեւ լաթը աղտոտուած, խոնաւութիւնից գունաթափուած. կազմաստառները եւ Ա-Գ. պիպ-ները խոնաւութիւնից թեթեւակի դեղնած, պիպ. Բ.՝ արտ. լս-ները մաշուած. լուսանցակողերի կարմիրը մասամբ թափուած, տեղ-տեղ սեւացած. թերթերին գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, իւղի, սնկային հիւանդութեան, սեւ թանաքի, անմաքուր ջրի լայն հետքեր, գրադաշտը տեղ-տեղ աղտոտուած, խոնաւութիւնից գունափոխուած, երբեմն դեղնած, սկզբի որոշ էջեր նաեւ սեւացած, թանաքը յաճախ դրոշմուած հանդիպակաց էջերին, թ. 176, 287, 289՝ պատռուածքանցք, թ. 275-310՝ հիմիից մասամբ անջատուած, թ. 287-424՝ հիմբը եւ վր. լս-ները խոնաւութիւն տեսած, թ. 351-91՝ ստ. լս-ներում ցեցի անցքեր, մանրանկարները խոնաւութիւնից մասամբ գունափոխուած, արտ. եւ ստ. լս-ները եզրահատուած, պրակահամարները վնասուած՝ 11բ, 35բ եւ այլուր (հետագայի սեւով՝ թերթակալողի ձեռով որոշները լրացուած՝ 23բ, 35բ եւ այլն), եզրահատումից վնասուած նաեւ ստ. լս-ների խորագրերը՝ 173ա, 182ա, 188ա, 307ա եւ այլուր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-302ա* [Յովհաննու Կլեմաքի Սանդուղք գիրք]

– *1աբ* Սանդուղ աստուածային ելից – *Ի գիրս կէ- նաց յերկինս գրին... եւ յիմանալի յայս եւ յերկնային ընթացիցս կէտն ժամանեսցուք:*

– *1բ-2բ* [Յանկ] Իսկ այժմ յառաջին աշտիճանս վարդապետէ զբարւոն եւ զստոյգն – *Ա. Վասն ցաւոց սրտի եւ տրտմութեան... Լ. Վասն սիրոյ, յորում յոյս եւ հաւատ եւ պայծառ աստուածաբանութեան պարունակումն:*

– *2բ-5ա* [Նախերգանք] – *Մի՛ դիր, թէ որպէս ճշմարտութեամբ գՔրիստոսի մարմնական հասակին... (թ. 2-4ի միջեւ 1 թերթ ընկած. 2բ «...եւ առանց հաւանութեան գոցին: Այղ հարկա///» 4ա «/// եւ հոգին յերկնից լեառնն բնակիւր...») քանզի արդար եւ անբիծ է նորին բնապատմութիւնն:*

Ծնթ. Ձգուած 3րդ թերթը նորոգման ժամանակ մուծուել է 2-4 թերթերի միջեւ ընկածի փոխարէն: Թափուած մասը նոյն չափով բացակայում է նաեւ հետեւեալ ձեռագրերում՝ ձեռ. 1924, 147ա-8ա եւ ձեռ. 1926, 5ա-7ա, սրանց գրիչները բաց են թողել որոշակի տեղ՝ հետագայում լրացնելու համար: Հաւանական է, որ նշուած ձեռագրերի (ձեռ. 1924՝ 1653 թ., ձեռ. 1926՝ 1660 թ.) համար գաղափար օրինակ ծառայած լինի 1329 թ. գրուած այս ձեռագիրը:

Տե՛ս ձեռ. 1919, 2բ-51ա: Թուղթ Յովհաննու առ Յովհաննէս/5ա-7ա: 1/7ա-19բ: ա/19բ-24բ: բ/24բ-32բ: գ/32բ-77ա: դ/77ա-95ա: ե/95ա-100ա: զ/100ա-14բ: է/115ա-22ա: ը/122ա-5ա: թ/125ա-8բ: ժ/128բ-30բ: ժա/130բ-2բ: ժբ/132բ-5բ**: ժգ/135բ-43ա: ժդ/143ա-63բ***: ժե/163բ-5ա: ժզ/165ա-7ա: ժէ/167ա-71ա: ժը/171ա-3ա: ժթ/173ա-6ա: ի/176ա-8ա: իա/178ա-85ա: իբ/185ա-90ա: իգ/190ա-4ա: իդ/194ա-8ա: իե/198բ-212բ: իզ/212բ-7ա: իէ/217ա-24բ: իը/224բ-39ա: իթ/239ա-52ա: լ/252ա-7ա: լա/257ա-64ա: Յաւաջաբան Յոհաննու առ Յոհաննէս/265ա-92բ: 2/292բ-302ա:*

* Ծնթ. 128բ ստ. լս. գրչից՝ «Այս բանիւ գովութիւն ճառիցս թուի, թէ չէ միաբան համարոյ ճառիցս, այղ ես զհամարն ի վերայ առաջնոյ ճառացուցին եղի, զի յաւրինակն անհամար էր եւ ստոյգ եթե մինչ ի վերջին: Զայս Վարդանն էր գրել լաւ հաստ եղեալն (խօսքը գաղափար օրինակի գրչի մասին է, տե՛ս Յիշատակարան գրչութեան ժամանակի՝ 334բ)»:

** Ծնթ. 135ա ստ. լս. գրչից՝ բնագրային բառի սրբագրում «Անյիշաչարութիւն էր աւրինակն»:

*** Ծնթ. 157ա ստ. լս. գրչից՝ խոռագրի համառօտ անուանմանը կից «Քա՛չ ինձնեա զայս տեղի եւ ուսի՛ր զկարգ մտից պռոնկականին, որ մարթես զգուշանալ»:

Ունի՝

– 264բ-5ա [Յանկ. *միաւորների կարգային համարները յետընթաց կարգով*]* *– Լ. Վասն սիրոյ, հաւատոյ եւ յուսոյ... Ա. Վասն փախստեան յաշխարհէ առաջին ելք:*

* Ծնթ. 265ա գրչից՝ «Ի հանդարտելոց ճառէն ի հետ նոր եղեւ գտեալ, եւ այս ճառացոյց այսպէս եղեալ զկնի՝ յետուստ կուսէ սկսեալ: եւ ես որպէս գտի, եդի, դու որ փոխես, որպէս կամ ֆո է՝ առա՛»:

Բ. *302ա-35բ* Լուծմունք դժուարիմաց եւ նուրբ բանից, որ կան ի գիրս յայս կոչեցեալ Կլիմաս. Աւարեալ Դանիէլի կրաւնաւորի Ռայիթեցւոյ

Տե՛ս ձեռ. 1924, 287բ-302բ: 1/302բ-7ա: 2/307ա-9ա: 3/309ա-13բ: 4/313բ-4ա: 5/314բ: 6/314բ-5ա: 7/315աբ: 8/315բ: 9/315բ-6ա: 10/316ա-9բ: 11/319բ-20ա: 12/320աբ: 13/320բ-1ա: 14/321աբ: 15/321բ-2բ: 16/322բ-8բ: 17/328բ-31բ: 18/331բ-3բ: 19/333բ-4ա:

Գ. *337ա-421բ* [Ի կա]մս Աստուծոյ մարդասիրին եւ ի նախախնամութիւն Սրբոյ Երրորդութեանն, որ է գոյացուցիչ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի. Այս են բանք ճշմարտութեան սուրբ հաւրն Յոհաննու Աստուածաբանի, զոր ասացեալ է վասն միանձանց եւ անապատականաց, զոր ազդեաց ի նմա Հոգին Սուրբ

Տե՛ս ձեռ. 1919, 53ա-71բ: 1/337ա-402բ: ա/338բ-44բ: բ/344բ-5բ: գ/345բ-9ա: դ/349ա-51ա: ե/351ա-3ա: զ/353աբ: է/354աբ: ը/354բ-5ա: թ/355բ-65ա: ժ/365ա-8բ: ժա/368բ-75բ: ժբ/375բ-91բ: ժգ/391բ-4բ: ժդ/394բ-8բ: ժե/398բ-400բ: ժզ/400բ-2բ: 2/403ա-21բ:*

* Ծնթ. 420ա ստ. լս. գրչից՝ ամենայն նշանի բացատրութիւն, ուղղաձայեաց «ամենայն է»:

Դ. *421բ-3ա, 424բ* [Բանիւ զանազանիւ]

1. *422ա* Դեղ ամենայն ցաւոց բժշկութեան ոգւոց համայնց *– Էհարց ոմն ի հարանց ընդ իմաստուն բժիշկ մի եւ ասէ՝ Ամենայն ցաւոց դեղ գիտե՞ս... եւ արտասուախառն ըմպէ յամէն մէջ գիշերի. այս է դեղն ամենայն ցաւոց:*

2. *422աբ* Ի պռաւսխաւմէն ասա ընդդէմ սուրբ խոռհրդոյն *– Ողջունեմ զքեզ, փրկութի՛ւն աշխարհի, կատարեալ աստուածութիւն... որ կամաւ բաշխիս ի թողութիւն մեզաց, որ բառնաս զմեղս աշխարհի:*

3. *422բ* Բանիւ գիտութեան եւ զչափ անձին գիտելոյ *– Զորք են կարգ գիտութեան. առաջին գիտէ եւ գիտէ... յանդգնի խաւսել անգիտաբար եւ այս յանդուգն է:*

4. *423ա* Աղաւթք, զոր Յովհաննէս ուսոյց իւր աշակերտացն *– Հա՛յր սուրբ, տո՛ւր մեզ զբանդ քո... Հոգիդ սուրբ, մաքրեա՛ զմիտս մեր եւ ըզզգայութիւնս:*

5. *424բ* [Վասն դիւաց ինչ. *հմմտ. ձեռ. 2177, 372ա] – Առաւաւտուն՝ ամբարհաւաճութեան եւ ցանկութեան դեւքն պատերազմին ընդ մեզ: Միջաւրէին՝ ձանձրութեան եւ տրտմութեան եւ բարկութեան դեւքն: Երեկոյն՝ որկրամոլութեան դեւքն նեղեն զմարդիկ: (Գրչից)՝ /// [Յոյս՞] եւ փրկիչ դու ես, Քրիստո՛ս՝ փրկիչ մեր:*

Ծնթ. Աւտհ. լս-ներում գրչից բազմաթիւ բնագրային սրբագրումներ եւ լրացումներ (նոյնիսկ կէտադրական)՝ 33բ, 96բ, 116ա եւ այլուր, ստ. լս-ներում՝ առկայ են նաեւ խոռագրերի համառօտ անուանումները. 147ա «Վասն խոռամանկութեան պռոնկական դիփն», 148ա «Վասն անիծեալ անբնական պռոնկականին» եւ այլուր:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. Հայրապետ գրչի *62ա (նրբ. լս., հազիւ նկատելի, ուղղահայեաց) Պի՛նդ կաց:*

77ա Որ մեղապարտ գրողիս սորա՝ Հայրապետի, եւ Կարապետի *եւ Թորոսի եւ ծնողաց եւ զարմից մեր մեղաց թողութիւն խնդրէ, եւ իւրն թողցին յանցանք շնորհաւքն Քրիստոսի Աստուծոյ:*

114բ Ողորմութիւն յԱստուծոյ խնդրեցէ՛ք, եղբա՛րք, գրողի սորա, եւ նա ձեզ շնորհես[ցի]է:

119ա (արտք. լս.) Մ՛հ, ո՛հ:

127բ (արտք. լս., հազիւ նկատելի, ուղղահայեաց) Վա՛յ գրողիս միայն:

130բ (արտք. լս., մասամբ ուղղահայեաց) Վա՛յ ինձ, ես գրիչս եմ: Ոչ միայն քեզ, այլեւ ինձ:

198ա Տէ՛ր Աստուած, ողորմեա՛ գրողի սորա եւ թո՛ղ զմեղս իւր, եւ քեզ փա[ռք]:

264ա Քրիստո՛ս փրկիչ՝ բազմեալ ի գլուխ ամենայն բարեաց, զանկեալս ներքոյ ամենայն չարեաց կանգնեա՛ ողորմութեամբ քով զՀայրապետ՝ գրաւղ սորա եւ զծնաւղս, եւ զեղբարս իւր, եւ որ մեզ Աստուած ողորմի ասէ, նաեւ իւր ողորմի Տէրն:

292բ Որք հանդիպիք սմա, աղաչեմ՝ մեղաց թողութիւն խնդրեցէ՛ք վատատես գրողիս եւ եղբարց իմոց՝ հոգեւորաց եւ մարմնաւորաց, եւ ծնողաց մերոց, եւ Աստուած ձեզ եւ մեզ ողորմեսցի. (կապգրով)՝ ամէն:

305ա (արտք. լս., ուղղահայեաց) Մ՛հ, է՛ս, է՛ս:

306ա (արտք. լս., ուղղահայեաց) Արասցես տարմ գիս:

334ա Ի լրման տառատպութեանս լիակատար գոհութիւն Աստուծոյ, եւ ի կատարման ձեռակերտիս, անձեռագործ բարեբանութիւն Քրիստոսի, եւ ի հանգստեան աւուրս անհանգիստ բարբառով հանգստարար Հոգին Սուրբ աւրհնեացի ի ներկայս եւ որ գայն (այսպէս) եւ ի կատարեալն. ամէն:

334բ ՉՀՀ. (1329) Թուականիս գրեց[աւ] /// (1 բառ ջնջուած) զաւր այս մատեան յեռաձշուառ մարդոյ՝ յոյժ վշտացեալ անձամբ, յիմարեալ հոգւով, կուրացեալ մտաւք եւ խաւարեալ աչաւք, եւ աղտով մեղաց ներկեալ

մարմնով: Եւ որպէս ոք ցաւ սաստիկ եւ մահաբեր ի փորի ունելով եւ նեղեալ դեղ խնդրեսցէ եւ գտեալ ործացուցիչ դեղ յոյժ զաւրաւոր ի բժշկել, եւ առեալ այղ ոչ ըմպիցէ եւ ոչինչ աւգտի ի ձեռին ունելն, նոյնպէս եւ ես գտի զայս դեղ հոգւոյ յոյժ զաւրաւոր, այղ ոչինչ շահեցայ չընթեռնուլս եւ ի գրելս, որովհետեւ ոչ կամեցայ ըմպել զսա գործովք, այղ կամ ի կամակար մտաւք կորուսաս: Ո՜հ, վա՛յ, եւ վէրքս աւր ըստ աւրէ |335ա| ճարակէ, մատնեալ իմ ի ձեռն չար ոսոխի մարմնոյս եւ լկտի եւ անառակ անպատկառ մտացս, եւ առաջնորդին չարեաց գտողին անաւրէնութեան՝ դիւրին պղծոյ, եւ հասեալ եմ ի վիհս կորըստեան ինքնայաւժար դիմեալ, զոր Աստուծոյ միայն է դարձուցանել եւ կանգնել, որ կենդանի առնէ զմեռեալս: Եւ դուք, ո՛վ մտառու ընթերցաւղք, որք ի ձեռին կրէք եւ յակն արկանէք զսա, յիշեսջի՛ք աղաւթիւք եւ Աստուած ողորմայիւ զաշխատաւղք սորա ի կոկել թղթոցս եւ զամենամեղ գրաւղս՝ Հայրապետ, եւ զեղբարսն իմ եւ զծնաւղսն մեր, եւ զԿարապետ եւ զԹա-
ռոս (= Թորոս) քահանայք Աստուծոյ, եւ որդիք քերց իմ եւ զնոցին ծնաւղսն, եւ որպէս յիշէքդ կարեկից կամաւք, |335բ| եւ դուք լիջի՛ք անմոռաց առաջի Աստուծոյ: Եղեւ աւարտ սորա յեղբայրանոցս Փոս կոչեցեալ, ի հայրապետութեան տեառն Յակոբայ եւ ի թագաւորութեան Լեւոնի՝ որդւոյ Ասղնի արքայի, ի տաւնի Համբարձման Տեառն սկսեալ եւ ի խաչավերաց տաւնիս վճար եղեւ ի գրելոյ, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ շնորհեսցէ հանգիստ եւ ողորմութիւն աւրինակիս գրողին՝ Վարդանայ ամենագովելի քահանայի եւ արեամբ վկայի, այղ եւ Պետրոսին, որ յաւժար կամաւք եւտ, որ գրեցի: Արդ, յիշաւղդ եւ յիշեցեալքս յիշեալ լիցուք ի Քրիստոսէ՝ անմահ թագաւորէն, եւ նմա փա՛ռք յաւիտեանս յաւիտենից. ամէն. (կապգրով)՝ ամէն:

423ա Փա՛ռք ամենասուրբ երրորդութեանն եւ միոյ Աստուածութեանն՝ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշա՛ւ: Ի թուիս Հայոց ՉՀՀ. (1329) աւարտեցաւ գիրքս, որ կոչի Սանդուղք աստուածային ելից, եւ միւս Յոհան, որ կոչի Աստուածաբան, յանապատս Փոս վերակոչեալ՝ յաշխարհիս Կիլիկեցւոց, ի թագաւորութեանն Հայոց Զորորդ Լեւոնի՝ աստուածակարգ արքայի՝ որդւոյ Ասղնի թագաւորի, ի կաթողիկոսութեան տեառն Յակոբոյ, յառաջնորդութեան ուխտիս՝ տէր Ստեփանոս սրբասէր եպիսկոպոսի, ձեռամբ մեղաւոր Հայրապետի, եւ վերջին ճառս, որ է Միաշաբաթի Յարութեան Տեառն՝ ձեռամբ Թորոսի՝ որդւոյ քեռ մերոյ: Յիշեսջի՛ք աշխատաւղքս, եւ Աստուած զձեզ յիշեսցէ:

424ա Գիրքս այս վերջին, որ է Աստուածաբան Յոհաննու, նոր է թարգմանած յասորւոց ի մերս, եւ ես՝ անպիտան եւ մեղաւոր գրողս հանդիպեցայ սմա ի վանս Զարդաոնոյ, առ ճգնաւորի ումեմն՝ Ատոմ կոչեցելոյ, որ էր բերեալ զսա ի Թաբաւրականէն, եւ ասէր՝ եթէ ոչ կամեցայ գրել կարգաւ, զի ոչ էր ի մերոց վարդապետաց մատւռ: Զարհուրեցայ կարգաւ գրել, զի ահ եղեւ, զարմանալի իրս է ի պատմել, որպէս ի գրելոցդ է իմանալ: Վասն այնր սակաւ մի գրեցի, զի ի գիրս գիտութիւն բազում էր, եւ ես երկնչէի: Յուսամ յԱստուած, եթէ գիտնական ոք հանդիպի եւ տեսանէ եւ իմանա զճշմարիտն: Ես վասն աւգտի գրեցի, վասն իմ եւ այլոց: Աղաչեմ զընթերցաւղսդ՝ յիշել զտառապեալ գրաւղս, եւ Աստուած զձեզ յիշէ յիւր ողորմութիւնն:

Տե՛ս ԺԴ. դ. յիշ-f, էջ 221-222, Հ՝ր 278. միայն 423ա, 424ա, 335բ էջերի յիշատակարանները՝ յապաւումներով, նաեւ ԺԴ. դ. յիշ-f, Բ. (2020) էջ 56-58, Հ՝ր 503. մի փոքր աւելի ընդարձակ՝ 423ա, 424ա, 334աբ էջերի յիշատակարանները:

2. Թորոս գրչի *421բ Զսակաւ աշխատօղս ի գիրս զԹո՛[րոս] յիշեա՛ ի Տէր աստուած. ամէն:*

3. Ստացողի *303ա եա՝* Ստեփաննոս *կրաւնաւոր, ստացայ զհոգէլից գիրքս զայս ի հալալ յարդեանց իմոց, յիշատակ ինձ եւ ծնաւղաց իմոց, եւ ամենայն արեան մերձաւորաց իմոց: Որք հանդիպիք սմա, յիշեցէ՛ք ի սուրբ յաղաւթս ձեր, եւ Աստուած զձեզ յիշէ:*

423բ Ո՛վ սուրբ ընթերցողք, յորժամ ընթեռնուք զաստուածա[յ]ին գիրքս, յիշեցէ՛ք զմեղապարտ Ստեփանն ի մաքրափայլ յաղաւթս ձեր եւ զեղբայրն իմ՝ զԿարապետ քահանայ եւ զՅակոբ քահանայ, եւ զՄարտիրոս, եւ զծնաւղսն մեր՝ զՅովաննէս քահանա, եւ զմայրն մեր՝ զԱ-
ագտիկին, եւ զեղբաւր որդիսն՝ զՈվանէս, եւ զՈհաննէս, եւ զՆորոգէս, եւ զհաւրաքոյրն իմ՝ Թանկխաթուն, եւ զամենայն արեան մերձն իմ. յիշեցէ՛ք ի Քրիստոս. եւ որք յիշէ՛ք, յիշեալ լիցիք ի Քրիստոս Աստուած. ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *336բ (ժէ. դ., նոտրգիր, այս եւ միւս գրութիւններ փակուած էին սպիտակ թղթով. այժմ թուղթը հանած) Ո՛վ սուրբ ընթերցողք, յորժամ ընթեռնուք զսուրբ մատեանս յայս, յիշեցէ՛ք զմեղապարտ* Գէորգ *ապեղայս եւ զհոգեւոր ծնօղն իմ՝* զՄկրտիչ *վարդապետն, եւ զմարմնաւոր ծնօղքն իմ, եւ որք յիշէք, յիշեալ լիցիք ի Քրիստոսէ՝ յԱստուծոյ մերմէ:*

ԿՆՔԱԴՐՈՆՔ՝ *336բ (երկիցս)՝ սեւ թանաքով ձուաձիր՝ «/// گلستان» («/// պարտեզ/ծաղկանոց». կնքադրոշմի վերծանութիւնը եւ թարգմանութիւնը՝ Ի. Թաջարեանի):*

ՆՇՈՒՄ՝ *Պհպ. Բա՝ «Ե[աչիկ] վարդապետ, [Հմր] 70/3678», մանուշակագոյնով՝ «ՉՀՀ.-1329, Մ[եսրոպ] եպ[ի]ս[կոպոս]», 334բ՝ գրչութեան ժամանակի յիշատակարանի թուականի թուաբանական հաշուարկ մանուշակագոյնով «778+ 551= 1329 թ.»:*

Ձեռագիրս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Յուցակ ձեռագրաց Դպրեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 83, Հ՝ր 70:

ԳՐՉԱՓՈՐՉ՝ *4ա՝ սեւով «5 (բազմիցս)» եւ զանազան գծեր, 34բ, 35բ, 36ա, 49ա, 60բ, 64բ, 65բ, 84բ, 110բ, 118բ, 120բ, 141բ, 205ա, 234բ, 238բ, 336բ, 375ա, 380բ, 381ա, 383ա, 396բ, 397ա՝ լս-ներում էջակալողի ձեռքով (ձեռքը հմմտ. 110բ) տառեր այբբենական կարգով «Ա-Ֆ (մեծ մասի վրայ նորոգման ժամանակ թուղթ փակցուած, որոշները յետոյ բացած)», նոյն ձեռքով նաեւ այլ գրութիւններ (կրկին մեծ մասի վրայ նորոգման ժամանակ թուղթ փակցուած, որոշները այժմ բացած, դժուարընթեռնելի, հիմնականում եղծուած. 41բ՝ «Հարութուն, Պողոս, Սիմոն, ընՍտեփան, Գրիհոր», 42բ՝ «Սարգիս, Ղազար, Վարքան ամի, Ազարիա», 48բ՝ «զԴանիել ԼԼԼ», 54բ՝ «Դանիել, Պաղդասար, [Յո]վանէս, Խաչատուր», 55բ՝ «Մկիրտ, Վարքազար, Դանիել, Սարկիս», 142բ՝ «Գրիհոր, Ըստեփան, ///, Կարապետ», 143բ՝ «Մաթոս (՞), Քարապետ (՞)», 239բ՝ «Միրէլի եպսպար Հարութուն», 382բ՝ «ժ (բազմիցս)», 336բ՝ սեւով «բանի ճշմարիտ աղքատաց», 253բ՝ սեւով «Աստուա», 337բ՝ սեւով «Գ» եւ վերջինիս ելուստով գրչախազ, 396բ՝ սեւով անկապակից տառեր «ֆօցփփուՇննյւնի», 423բ՝ սեւով «ւարցուն, Աբրահամ, համգնա ձում (՞)», 424բ՝ սեւով տառեր «ա չ (քանիցս)»։*


ՆԿԱՐԱՓՈՐՉ՝ *192բ՝ սեւով շրջանաձեւ պատկեր (մնացած սոսնձած թղթի տակ), 336ա՝ սեւով լաբիրինթոս (գծապատկեր), 350բ՝ սեւով բուսական լուսանցազարդ, 424բ՝ կարմրով տարակենտրոն՝ ներգծուած շրջանագծեր (գծապատկեր)։*

3679
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ԺԶ. դար

ԳՐԻՉ՝ Ստեփաննոս։ ՍՏԱՅՈՂ՝ Մկրէէսէթ կր.։

ԹԵՐԹ՝ 285։ ՊՐԱԿ՝ Ա.-ԻԵ×12 (Ա 8, Թ 10, ԺԴ 11, ԻԵ 4)։ ՆԻՒԹ՝ թուղթ։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 13,5×10,5։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (10,5×6)։ ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 110ա). խորագիրեւ սկզբնատառ՝ կարմիր։ ՏՈՂ՝ 17-20։ ԿԱՉՄ՝ վարդագոյն մոմլաթ, մէջը՝ սեւ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ նորոգման ժամանակի դեղնաւուն թուղթ. լուսանցակողերը՝ կարմիր եւ կանաչ, մէջին մօտ՝ անգոյն գծազարդ (սեւով)։ ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա.-Գ+Դ.-Ջ՝ դեղնաւուն չգրուած թուղթ, Ա եւ Ջ՝ մասն նորոգման ժամանակի կազմաստառի։



Նմուշ 110ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Կիսախորան՝ 1ա։ Լուսանցազարդ՝ բուսական՝ 1ա։ Ջարդագիր՝ հանգուցագիր՝ 1ա։ Գոյներ՝ կարմիր, կանաչ, վարդագոյն, մանուշակագոյն, դեղին։

Ծնթ. Որոշ տաղերի խորագրերը ստ. լս-ներում նշուած՝ 178բ-9ա «Տաղ որդոցն |179ա| Որոտման Յոհաննու եւ Յակոբայ», 179բ-80ա՝ «Տաղ Տրդատա թագաւորին |180ա| եւ այլ թագաւորաց է»։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *67բ-8ա (ԺԷ. դարի վերջ, նոտրգիր, ստ. լս.) Յիշատ[ա]կ է Գրիգորիսի |68ա| Աղուանից կաթողիկոսին վանքին։*

89բ Սուրբ գիրքս յիշատակ է տէր Յոհաննին եւ իմ ծնաւղացն՝ տէր Մկրտչին, եզտիխասին։ Ո՛վ մանկունք սուրբ եկեղեցոյ, եթէ ոք իշխէ այս գրքէս կամ կարէ թուլթ կամ յիշատա[կա]րան կարէ կամ Սուրբ Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի դրանէն ջոկէ, մասն Յուդայի առցէ, ԳՃԺՐ. (318) հայրապետով անիծած լնի։

172ա Դարձեալ յիշեցէ՛ք տէր Յոհաննն եւ կողակիցն իմ՝ Ղատամղութլուն, եւ որդիքն իմ՝ Մանուկն, Պ̲ողոսն, Մաղաքիէն, յիշեցէ՛ք եւ Աստուած ողորմի ասացէ՛ք, եւ Աստուած ձեզ եւ մեզ ողորմեսցի. ամէն։

ՆՇՈՒՄ՝ *Պհպ. Մ մատիտով «3689», պհպ. Գա՝ սեւով եւ կարմրով «Խ[աչիկ] վարդապետ, Հմր 41 (վրան՝ կարմրով ջնջագիծ) Հմր 97/3689», մանուշակագոյնով «ԺԶ.-ԺԷ. դար, Մ[եսրոպ] եպ[ի]ս[կոպոս]», 1ա՝ մատիտով «1», «41», պհպ. Դա՝ մատիտով «Աշխեն» [Քարտաշյան], պհպ. Եբ՝ սոսնձած սպիտակ թղթին՝ մեքենագիր «Վերակազմված է հին ու նոր կաշվով, նոր կազմաստառով։ Գլխ. վերականգնիչ՝ Ա. Խաչատրյան, Երեւան, 1970 թ. (ուղղած՝ 1971)»։ Բ. կազմաստառին ամրացուած նորոգման ժամանակի կաշուի վրայ՝ բոլորակ, մէջը՝ կապգրով «Ա[րշակ] Խ[աչատրյան]»։*


Ձեռագրիս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Յուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 109-110, Հմր 97։

3690
ՌԻՋԻՆԱԼԴ, ՊԱՂԵՍՏԻՆ
(Պոեմ)

ՇՈՒՇԻ **ՌՄՁԲ. – 1833**

ԳՐԻՉ՝ Մովսէս Սրապեան (՞)։

ԹԵՐԹ՝ 18. չգրուած՝ 1աբ, 2բ, 17բ, 18աբ։ ՊՐԱԿ՝ 1+1-2×8+1։ ՆԻՒԹ՝ հաստ թուղթ։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16,5×10,5։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, սեւով սահմանագծուած (15×9)։ ԳԻՐ՝ շղագիր (նմուշ՝ 3ա). պարբերութիւնները առանձնացուած կարմիր աստղանիշներով։ ՏՈՂ՝ 16-18։ ԿԱՋՄ՝ սպիտակ լուսագծերով թուղթ. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ լուսագծերով սպիտակ թուղթ։ ՊԱՀՊԱՆԱԿ՝ թ. 1 + թ. 18՝ սպիտակ չգրուած թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ «10 ՞» (եզրահատումից մեծապէս վնասուած), մասն կազմաստառի, հաշուած թերթաթանակի մէջ։



Նմուշ 3ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Վերջնագարդ՝ 17ա։ Գոյն՝ սեւ։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի թուղթը մաշուած, խոնաւութիւնից եւ գործածութիւնից խիստ աղտոտուած, դեղնած, վրան զանազան գրութիւններ (տե՛ս Յիշատակարան հետագայի, Նշում եւ Դրչափոխ), սեւ թանաքի հետքեր, կազմի Ա. փեղկի ստորին անկիւնը ցեցակեր. կազմաստառները խոնաւութիւնից դեղնած. թերթերին խոնաւութեան եւ գործածութեան հետեւանքով զանազան բծեր, դեղին հետքեր, գրադաշտը տեղ-տեղ աղտոտուած, խոնաւութիւնից թեթեւակի գունափոխուած։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *2ա-17ա* [Ռիջինալդ, Պաղեստին]

– *2ա (Տիտղոսաթերթ, շինծու բոլորգրով, կարմրով)* Պաղեստին / բանաստեղծութեան / տեառն Ռիջինալդայ։ / Յամի 1833, / Շուշի։

1. *3ա-17ա* Պաղեստին – *Ջուրկ յորգւոց ի մէջ թշնամեաց լքած,/ լաց այրիդ դշխոյ՝ անյո՛ւշ Սիոն, լա՛ց... Արժանի Դաւին՝ կարող Փրկողին,/ Որ մեռաւ, որ կեայ՝ մահուն յաղթանակ: Վերջ:*

Տե՛ս երեսն Ռիջինալդ, Պաղեստին, Կալկաթա, 1830, էջ 1-61 (անգլերէն-հայերէն զուգադիր):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

2ա Տե՛ս Տիտղոսաթերթ: 2ա (սեւով, շինծու բոլորգրով) Մովսէս Սրաքեան *(վրան մատիտով չնջագիծ):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *Ա. փեղկ (ԺԹ. դ.) պարսկերէն՝* «منفرد (؟) است این کتاب بسیار» *(«Սա եզակի գիրք է». Թրգմ. Քրիստինէ Կոստիկեանի):*

2. *Ա. փեղկ (ԺԹ. դ.) Управляющему* Корабагской *провинциею господину подполковнику и коволеру* Степанову.

Ա. փեղկ (ԺԹ. դ.) Довидов.

ՆՇՈՒՄ՝ *Ա. փեղկին՝ Հմր 97», Ա. կազմաստառին՝ մատիտով «ունի միկրոֆիլմ», 1ա՝ սեւով եւ կարմրով «Խ[աչիկ] վարդապետ, Հմր 98/3690», Բ փեղկին՝ «Հմր 197»:*


Ձեռագիրս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Յուցակ ձեռագրաց Դպեան Խաչիկ վարդապետի, ժողված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 110, Հմր 98:

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *Ա. փեղկին՝ սեւով «Рапортъ», Բ. փեղկին՝ սեւով «Рапортъ для /// за, Трепетать, толчокъ, Дрожать дрогнулъ, Задержанный, Довешный, Поступить ///(որոշ բառեր անընթեռնելի)», կազմի Ա. եւ Բ. փեղկերին սլաւոնատառ եւ արաբատառ անընկալելի գրութիւններ, զանազան գծեր եւ չնջումներ:*

3691
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ԺԸ. դար

ԹԵՐԹ՝ 32 (գրչի էջակալում՝ 94-124, որ է՝ 1ա-32ա): ՊՐԱԿ՝ է-Ը×16: ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17,5×12: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (12×7,5): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 19ա). խորագրերը եւ պարբերութիւնների սկզբնատառերը երբեմն կարմիր եւ վարդագոյն, յաճախ նաեւ բաց թողած՝ յետոյ լրացնելու նպատակով: ՏՈՂ՝ 22: ԿԱՋՄ՝ կարմիր լաթ, մէջքը՝ սեւ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ դեղնաւուն թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԴ՝ սպիտակ չգրուած թուղթ (Բ եւ Գ), դեղնաւուն չգրուած թուղթ (Ա. եւ Դ)՝ մասն կազմաստառի:



Նմուշ 19ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – ճակատազարդ՝ 1ա: Ջարդագիր՝ հանգուցագիր՝ 1ա: Գոյն՝ սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի լաթը գունաթափուած, մէջքի կաշին մաշուած, ճեղուած, տեղ-տեղ թափուած. կազմաստառները եւ պիպ-ները խոնաւութիւնից գունափոխուած. լուսանցակողերը մաշուած, տեղ-տեղ պատռուած, մասամբ սեւացած. թերթերին գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, իւղի, մոմի, սնկային հիւանդութեան, սեւ թանաքի, ինչպէս նաեւ անմաքուր ջրի լայն հետքեր, գրադաշտը տեղ-տեղ աղտոտուած, խոնաւութիւնից գունափոխուած. թ. 26բ-7ա՝ խոնաւութիւնից թանաքը տարածուած, որոշ տառաձեւեր դժուարընկալելի, թ. 27-32՝ ստ. լ-ներում ցեցի անցքեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-29ա* [Աշխարհագրութիւնք]

1. *1ա-20բ* Յաշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյն

ա. *1ա-3բ* [Աշխարհագիր հատուած առաջին] – *Յադագս աշխարհագրութեան յաստուածային գիրս ոչ ուրեք գտանեմք ոճով ասացեալ... եւ երկիր բնակութիւն մարդկան ասէ շուրջ լինիլ զնոքօք եւ է ճշմարիտ:*

բ. *3բ-4ա* Աշխարհագիր հատուած երկրորդ – *Քանզի զՅունականսն եւ զԿասբիականսն եւ մերոց իսկ առանց պատահեցաւ շուրջ անցանիլ յորոյ վարկանիմ... եւ գրեմք զայս միայն, զոր կոխեաց ոտն եւ եհես ակն մարդոյ:*

գ. *4ա-6ա* (Անխորագիր) – *Արդ, սկսցուք ըստ Պապայ Աղէքսանդրացւոյ երկրագծութեանն, որ ըստ ինքնագիր բոլորակին կղօդիայ Պտղոմեայ... սկիզբն արարեալ յԱրեւմտէ յովկիանոսէ ի Սպանիոյ յաշխարհէ:*

դ. *6ա-8ա* Աստանօր աշխարհ Եւրոպիոյ – *Սպանիա է երեքանկիւնի իմն ձեւով... որ անպատճառ այսր անդր հոսի, ուր խորասոյզ եղեւ Արիստոտէլ:*

ե. *8ա-10ա* Աշխարհ Լիբէացւոց ութն – *Առաջինն է, որ է Ինկուրուրայ, Մօրիտանիայ, Տինգանի տարածի... որ նման է կովի դիեցի, անցանէ ընդհանուր եւ շիջուցանէ:*

զ. *10ա-2բ* Աշխարհ ընդհանուր Ասիացւոց – *Առաջին բաժին երկրի ընդհանուր Ասիա է եւ ունի կողմունս... ի ցամաքական լերինս երիս եւ գետս չորս:*

է. *12բ-4բ* Ահա կատարեցան միջերկրայիս կոչեցեալ – *[Մ]արմատացոց աշխարհին հասարակն է, որ բաժանեալ է արեւելեան ծայրիւն... Արցախ, Փայտակարան, Ուտիաց, Գուգարք, Տայք, Արարատ:*

ը. *14բ-7ա* Արդ, կամիմ զսոսա մանրամասնաբար պատմել, թէեւ սակաւ աշխատիցիմ ի գիր եւ ի բառս – *Արդ, ունի Բարձր Հայք գաւառս ինն... եւ զմայր եկեղեցեացն ի Թագաւորաբնակ եւ յարքայանիստ Վաղարշապատ քաղաքի:*

թ. *17ա-20բ* Ահա կատարեցան ամենայն Հայք – *Ասորիք յելից կալով իւրեանց ծովուն... Վեց ձեռնիք, փոկոտունք, վիշապատոտունք, կիսահաւք, կիսանդամք, անգլուխք:*

Տե՛ս Մատենագիրք հայոց, հտ. Բ., ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 2123-2192 (առաջաբանը՝ Բ. Յարութիւնեանի):

2. *20բ-3բ* Զորս գետին են այսոքիկ – *Գիսօն ի Հնդկաց եւ յԵթէօպաց՝ Դանգէս կոչի... եւ ելանէ ընդ Հայք ի Բագրեւանդայ եւ ի Կարնոյ լերանց՝ մօտ ի յԱրծն քաղաք (21ա):*

ա. *21ա-3բ* Գետք եւ գնացք նոցա. մեծ եւ անուանիք հառասուն եւ երկու – *[Ն]աբանայ եւ Փարփայ ի Դամասկոս ելանեն եւ անցանեն ըստ բաժան քաղաք... եւ դարձեալ մտանեն անդրէն առ ծնօղն եւ մայրն իւրեանց համատարած ծովն:*

3. *23բ-8ա* Անուանիք հաղարացն Հնդկաց եւ Պարսից – *[Պ]անիան քաղաք՝ ութ աւուրց ճանապարհ... այս քաղաքք են Հնդկաց եւ Պարսից. եւ Յիսուսի Քրիստոսի՝ արարչին ամենայն արարածոց փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն:*

4. *28ա-9ա* [Մղոնաչափ. *հմմտ. ձեռ. 1864, 294բ*]. Ահա կամիմ զչափ աշխարհիս համառօտել մղոնախաղաց ոտնաչափութեամբ ուղղեկաբար ասպարիզաեաւ դրութեամբ – *Ի Դլունայ մղոն ՔՃ. (200) ի Կարնոյ քաղաք... Անտի մղոն հազար յովկիանոս ծովն անծանօթ:*

Բ. *29ա-31բ* [Վիճակագոյց]

1. *29ա-30բ* [Ա.] – *(սկզբում բանալի աղիւսակ՝ ԱԲ... ՓՔ) ԱԲ. Քննեա՛ եւ տե՛ս, խնդրեա՛ եւ նկատեա՛ զերկբայութիւնդ, զի ունիս հակառակորդս բազում... ՓՔ. Ա՛վ այր դու, դադարեցո զանձն քո ի չար խորհրդոց, զի ոչ ինչ շահիս դու ի դմանէ:*

2. *30բ-1բ* [Բ.] – *(սկզբում բանալի աղիւսակ՝ ԱԳ... ՈՏ) ԱԳ. Յորժամ առաքեցաւ քեզ շնորհք Աստուծոյ ուրախութեան, եւ կատարէ Աստուած զխորհուրդս քո... ՆՈ. Զկարես քննել զայդ խորհուրդդ, զի չէ քեզ օգուտ եւ զի ոչ է Աստուծոյ, այլ ի մարդկանէ եւ թէ թոյլ տաս՝ բարւոք առնես:*

– [Յիշատակարան ձեռինակի] *Արդ, այս վիճակս գրեալ եղեւ հրամանաւ սուրբ ժողովոյն Նիկիոյ, կամաւ Թագաւորին Կոստանդիանոսի, որք հարցանեն սովաւ լուիցէ ի Տեառնէ Աստուծոյ միանգամ վասն մերոյս խորհրդոյ, բայց այլ մի երկրորդեսցէ, զի մի՛ անպատշաճն լուիցէ վասն երկմտելոյն, քանզի հաւատով հարցանելն մի անգամն է. վասն խորհրդոյն բաւական է:*

Գ. *31բ-2բ* [Խրատակաւք] – *Երկու վաճառականք եւ լեալ գնացին աշխարհ հեռի եւ տեսին... եւ ամենայն ինչ որ եղեւ ի պէտս Աստուծոյ, որպէս գրեցաւ:*


ՆՇՈՒՄ՝ *Ա. փեղկին սոսնձած կարմիր մոմլաթին՝ «3691», պհպ. Ա՝ մատիտով «ունի միկրոֆիլմ», պհպ. Բ՝ սեւով «Խ[աչիկ] վարդապետ, [Ձ՛ր] 102-գ («-գ»՝ կապոյտով լրացուած)/3691», «ԺՀ. [դար, Մեսրոպ եպիսկոպոս]»:*

Ձեռագիս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Ցուցակ ձեռագց Դպրեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 112, Ձ՛ր 102գ:

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *11ա եւ 13ա՝ ստ. լս-ներում գրչի էջահամարներ՝ «103», «104» (յետոյ ջնջած, թանաքը տարածած):*

3692
ՏԱՂԱՐԱՆ

ԺԷ. դար



Նմուշ 5ա

ԹԵՐԹ՝ 11: ՊՐԱԿ՝ 1×7+Ա (4): ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 13,5×9,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (9,5×6,5): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 5ա). խոռագիրք՝ կարմիր: ՏՈՂ՝ 19-20: ԿԱՋՄ՝ կարմիր լաթ, մէջը՝ սեւ կաշի. միջուկը՝ ստուարաթուղթ. աստառը՝ դեղնաւուն թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԴ՝ դեղնաւուն չգրուած թուղթ, մասն կազմաստառի (Ա., Դ):

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի լաթը թեթեւակի մաշուած, աղտոտուած, մէջի կաշին մաշուած, ֆերծուած, տեղ-տեղ թափուած. կազմաստառները եւ պիսպ-ները թեթեւակի մաշուած, մասամբ խունացած. թերթերին գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, իւղի, մոմի, սնկային հիւանդութեան, սեւ թանաքի, անմաքուր ջրի լայն հետքեր, գրադաշտը

տեղ-տեղ աղտոտուած, խոնաւութիւնից մասամբ գունապոխուած. ձեռագիրը սկզբից թերի, թ. 1ա՝ պատռուածք-անցքեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-11բ* [Տաղարան]

ա. *1աբ* [Գր. Աղթամարցի, Տաղ] – *(սկ.) /// պայծառ որպէս զծովակ / ղարդ եղայ, ի ներս եղեւ անճարակ... էնց սիասաթով իջնի որպէս խան, / դրիր զգերիս զքնջիլ ու զքնտան:*

Տե՛ս Գրիգորիս Աղթամարցի, ԺՋ. դ., ուսումնասիրութիւն, ինական բնագրեր եւ ծանօթագրութիւններ՝ Մ. Աւդալբէգեանի, Երեւան, 1963, էջ 206-212, տող 39-60 (ձեռագիրս օգտագործուած չէ):

բ. *1բ-3ա* [Գր. Աղթամարեցի, Տաղ. *չխորագրուած*] – *Դու ես Արեգակ, Լուսին ի լրման, / Զկայ քեզ օրինակ ի որդիս մարդկան... ըսգաստացի՛ր ի միտս եւ կա՛ց ի ոտաց / Լալով աղաչեաց զՔրիստոս Աստուած:*

Տե՛ս Գրիգորիս Աղթամարցի, ԺՋ. դ., նոյն տեղում, էջ 199-205, տող 1-44, 49-56, 61-64, 69-78 (ձեռագիրս օգտագործուած չէ, որոշ հատատողեր ձեռագրումս բաց թողած):

գ. *3ա-4բ* [Գր. Աղթամարեցի, Տաղ. *չխորագրուած*] – *Որպէս նախաստեղծքն գեղեցկաշէնս / Եւ տիպ եւ գաղափար Տեառն Աստուծոյ ես... գունդէք չար այսոցն ի քէն հալածի / Զերթ զԱրեգակն փայլես ի յերկրի:*

Տե՛ս Գրիգորիս Աղթամարցի, ԺՋ. դ., նոյն տեղում, էջ 192-198, տող 5-8, 17-36, 41-76 (ձեռագիրս օգտագործուած չէ, որոշ հատատողեր ձեռագրումս բաց թողած):

դ. *4բ-5ա* Ջատկին վրէն ասացեալ Աբդին – *Հաւքերն կու կարդան խանտան, / Նալայի զումրի սադ չանդան... Ալամ քուշ յաշիլ գէհնուր, / յորժամ [հայոց Ջատիկն] գայ:*

Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (ԺՋ-ԺԷ. դդ.), Բնագրեր, երկու հատորով, հտ. Բ., աշխ. Յ. Սահակեանի, Երեւան, 1987, էջ 650, 734, տե՛ս նաեւ Յ. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, հտ. Բ., Երեւան, 1976, էջ 978-979:

ե. *5ա* Հաղ Դաշտիցի Աւետիքի ասաց[եալ]* – *Ալ զանայ բոյարսան դաստն, / ալխիզանդայ չաշմի մաստն... գանգլի ավլար հար սաբայի, / շուխի թարլանում, թարլանում:*

* Ծնթ. Այս եւ յաջորդող տաղերի մեծ մասը հայատառ թուրերէնով եւ թրերէնախառն հայերենով (լի բարբառային ձեւերով), բառաբաժանումը՝ Անի Ժ. Աւետիսեանի (Յ. Անասեանը հայատառ թուրերէն տաղերը համարում է ադրբեջաներէն, տե՛ս վերը, էջ 978-979):

զ. *5բ-6ա* Հաղ Աւետիքի ասացեալ Դաշտեցի – *Անբարով շայ քաքուլն ոլմիշ, / անբուշվառէ հանաբդինըն... աբդինըն ղիբլայ գայի սանսան, / սոլայ նիշուն դիմայան:*

է. *6ա* Այլ հաղ Աւետիքի ասած – *Եազ ֆասլի շքուֆայ չիչայք չոխալսըն / զումրիլար սասլանսըն... քաբդի իստար սեյրայ չիսն յարի յանինջայ:*

ը. *6բ-7ա* Յայերին Դաշտիցի Աւետիկի ասացեալ *(ծայրակապ՝* «ԱՎԵԻՔԴ») – *Աչքերդ է կան<դ>թեղ կազմեալ, ունքերդ է կամար, հոգի՛ս... Միրուն ես, սիրուն, / գեղեցիկ, պատուական ես դուն:*

Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (ԺՋ-ԺԷ. դդ.), Բնագրեր, երկու հատորով, հտ. Բ., աշխ. Յ. Սահակեանի, Երեւան, 1987, էջ 651-652, 734:

թ. *7աբ* Հաղ դիւան Աւետիկի ասած – *Ալբաթտայ ահիմ ահման հուքմ եթմիշտի շանիեայ... գար դրիամ դիւիչի ամոլսամ նայն բիթթարսանըն:*

ժ. *7բ-8բ* Այլ հաղ դիւան Դաշտիցի Աւետիկի ասած – *Ագիքան ալմիշ բայդայի դոլդուր փիազ ալար... բիրբարոյ գոզլայ գիր բիրիսին ոլդի / Յարաբ ոլ սանն չ[ու]ն բիրիսին օլդի:*

ժա. *8բ* Հաղ դիւանէ – *Գալգուլ փաք ոլ ջուանդայ սավմայ գիլ մուրդարինի... էղրարուսնայ սարվէրագոր եզդէ վարլուլ էվալի, / Բու ջան հախայ ղուլ ոլանդայ քիմ դոնար ըղրարինի:*

ժբ. *9ա* Այս հաղ դու բէյիթ – *Աւալ յարաթին Ադամի / բամիլայ չաղրդն յահու... քիմին մաչիթայ, զիքր եյլար քիմին մի խանադահ յահու:*

ժգ. *9աբ* Հաղ հոռմաց – *Զիլամ սանդան փիր Մհամադ ման սուրլէի... ղոնչայ գուլումդան զրհար թաս գանդի ալումդան իչտում ուրագ յանայ գալդում:*

ժդ. *9բ-10ա* Այս հաղ թաջլիս – *Ղանի խուդայ օզի նազար էյլադի դունիամ աւադան ոլդի սաբրինան ադամի... ադայ վերդի մըրադին, քիմինի ախրաթթայ սալդի սաբրինան:*

ժե. *10ա-1ա* Այս հաղ մրախայ մազի – *Ուն սաքզ մին ալամն միմարի սան մեհրաբին... չին քաբիայ դեղան բարէբարդուր սհաբին:*

ժզ. *11աբ* Այս հաղ խիստ լաւ հո[ւ]զէ – *Յաղլուղի վերդում ալինայ, / դուշտի բաղլարն սեյրինայ... յաղլադում, յաղլաղում, Յաղլուղում աւարայ ոլդում:*

ՅԱԽԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, ԺԹ. դ., շղագիր

11բ Լուսնոյ երազացո[յ]ց – *Որն պարի ամենայն իրաց, զի ան օրն Ադամ ըստեղ<ա>ծաւ սերմանել, տնկել, ճանապար (այսպէս) երգալ հիմն արկանել, զի այն օր իսկիսպն արար հա///(այսչափ):*

ՆՇՈՒՄ՝ *Ա. փեղկին կապոյտով «3692», պհպ. Ա.՝ մատիտով «ունի միկրոֆիլմ», պհպ. Բա՝ սեւով «Խ[աչիկ] վարդապետ, Ձ՛՛՛ 103/3692», «ԺՀ. [դար], Մ[եսրոպ] եպ[ի]ս[կոպոս]»:*


Ձեռագիրս նկարագրութիւնը տե՛ս Յ. Թօփճեան, Ցուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 110, Ձ՛՛՛ 97ա. 103 կարգահամար վերոնշեալ գրքում չկայ. 102ով աւարտւում է:

ԳՐՋԱՓՈՐՁ՝ *1ա՝ շագանակագոյնով «զուտ, ումուր», 6ա՝ սեւով «սաշի ագլի սպան գալսն մէյմազ այլանսն, նիչուն (՞)», 11բ՝ սեւով «ձե (երկիցս)»:*

3693
ՀԱՐՑՄՈՒՆՔ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ՁԱՆԱՁԱՆՔ

ԺԸ. դար

ԹԵՐԹ՝ 53 (գրչի էջակալում՝ գ-ճլզ., որ է՝ 1ա-53բ): ՊՐԱԿ՝ 1-8×8 (2՝ 4, 3՝ 6, 8՝ 3): ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ եռամաճիկ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16,5×11,5: ԴՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, կարմրով սահմանագծուած (12,5×7,5): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 17ա). խորագրերը եւ սկզբնատառերը՝ կարմիր: ՏՈՂ՝ 19: ԿԱՋՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի. միջուկը՝ տախտակ. աստառը՝ կապոյտ կտաւ:



Նմուշ 17ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին վնասուած, ճեռծուած, գունաթափուած, տեղ-տեղ մաշուած-թափուած, երբեմն անջատուած նաեւ միջուկ-տախտակից, զոյգ կապիչներն ընկած, Բ. փեղկի կաշուի վրայ ցեցի անցքեր, կազմաստառները գունաթափուած, խոնաւութիւնից եւ գործածութիւնից խիստ աղտոտուած, մաշուած, լուսանցակողերը խոնաւութիւնից մաշուած, տեղ-տեղ պատռուած. թերթերին գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, իւղի, մոմի, սեւ թանաքի, անմաքուր ջրի լայն հետքեր, գրադաշտը տեղ-տեղ աղտոտուած՝ մասնաւորապէս սկզբի եւ վերջի թերթերը գործածութիւնից եւ խոնաւութիւնից սեւացած. որոշ թերթեր մէջընդմէջ ընկած, այսպէս՝ ձեռագրի սկզբից ընկած 1 թերթ, թ. 8-9ի եւ 15-6ի միջեւ 2ական, իսկ թ. 12-3ի միջեւ 5 թերթ թափուած (տե՛ս Բովանդակութիւն), էջ 12բ, 14բ, 17բ, 26ա, 32բ՝ արտ. լս-ներին որպէս էջանիշ փակցուած կարմիր գործուածքներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-50բ* [Հարցմունք եւ պատասխանիք]

ա. *1ա-20ա* Հարցումն համաոտն /// տապանին – *Հց. Քանի՞ աւր կացին տապանին: Պխ. Բոլոր տարի մի... (Թ. 8-9ի միջեւ 2 Թ. ընկած. 8բ «...եւ զի պարգեւ խաչին է Հոգին Սուրբ, նմին իրի յիշատակել զՀոգին Սուրբ///» 9ա «/// պահքն նոցա տօնեմք, վասն որոյ պահքն նոցա չանուն կոչի...», Թ. 12-3ի միջեւ 5 Թ. ընկած. 12բ «...պարտ էր լինել բազմութեան ջուրց, զի խառնեսցի ընդ երկիր եւ ծնընդական արասցէ: Երրորդ, զի///» 13ա «///աւուրբք էրէցին քան զմարդն: [Հց.] Յորժամ սատանայ անկաւ...», Թ. 15-6ի միջեւ 2 Թ. ընկած. 15բ «...եւ արիւն բղխեաց եւ ցայթեաց ի յաչքն եւ նոյն ժամայն բացան///» 16ա «/// ներքոյ մահու վասն այն ոչ ետ Մարիամու մերձենալ, այլ պահեաց զնա բազկին...») զի ի նորս կենդանին յայն օրինակ անարիւն է, յորմէ մոմն գոյանայ:*

բ. *20ա-1բ* Վասն Մելխիսեդեկի – [Հց.] *Ուստի՞ է Մելքեսեդեկ: Պխ. Հօրն անունն Մելքի եւ մօրն՝ Սաղայ... եւ այնու կոխեցին զգլուխս կամակոր օձին:*

գ. *21բ-2բ* Այս են ՀԲ. (72) լեզուս – *Եբրայեցիք, Ասորիք, Քաղդէացիք... Թուի Թէ, մարք աւելորդ է գրած:*

– *22ա Իսկ որ դպրութիւն գիտէ եւ գրով վարի՝ ԲԺ.ան (12) ազգ են՝ Եբրայեցիք, Քաղդէացիք, Ասորիք...*

դ. *22բ-3ա* Ձանազան լեզուաց – *Իսկ գեղեցկախօսութիւն լեզուաց փափուկ հելենն... Թէ զառաջին լեզուն նա եբեր:*

ե. *23ա* Անուանիք նախահարցն – *Ադամ՝ երկիր, Սէթ՝ ջրարբի կամ մոռացումն չարի... Քամ՝ իշխեցօղ, Քանան՝ դառնացօղ:*

զ. *23աբ* Անուանիք կանանց նահապետացն – *Ադամայն՝ եւայ, Սեթայն՝ Ազերայ... եւ զինչ եւ կամէին զամենայն, համս տայր ի բերան կերողացն:*

է. *23բ-4բ* Վասն բնակելոյ ժողովրդեան – *[Հց.] Մ՚ւր բնակէին ԲԺ.ան (12) ցեղքն: [Պխ.] Բովանդակ անցեալքն ի հանդէս զՃՌ. (100.000) էին... եւ կամ իշխանացն եւ այլ աւարն զօրացն:*

ը. *24բ-6ա* Վասն մշտնջենաւոր լերանց – *[Հց.] Զի՞նչ է առաւել օրհնութիւն քո, քան զմշտնջենաւոր լերանց եւ բլրոց յաւիտենից: Պխ. Նախ լերինք եւ բլուրք մշտենջենաւորք կոչին հրեշտակացն դասք... Իսկ նոյնպիսեացն ծածկէ զզօրութիւնն:*

թ. *26ա-7ա* Վասն Աստուածաշունչ գրոց – *[Հց.] Որքա՞ն են եւ ո՞րք Գիրք Սուրբք՝ Հին եւ Նոր կտակարանք: Հց. [= Պխ.] Հին կտակարանք՝ ե. գիրք Մովսէսի այս են... Միահամուռ Հին եւ Նոր կտակարանքն ԳԻՁԻ. (իմա՝ ԺԷՌՁԻ. 17720) տուն է:*

ժ. *27աբ* Վասն մասնաւոր անդամոցն Քրիստոսի – *Հց. Որք են մասնաւոր անդամք յեկեղեցոյ: Պխ. Գլուխ եկեղեցոյ է Տէր մեր Յիսուս Քրիստոս, որպէս ասացաւ... որք բոլորակի զգեստ կոչեցան Քրիստոսի:*

ժա. *27բ* Վասն նորին սպասաւորաց եկեղեցոյ – *Հց. Զի՞նչ է, որ ասէ. Զորս եդ Աստուած յեկեղեցւոջ այս են. Նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ զմարգարէս, երրորդ՝ զվարդապետս: Պխ. Նախ՝ զմարգարէքն զհայր ծանուցին... առաքեալքն որպէս խոսեցեալն եւ վարդապետք որպէս գրեալն բան:*

ժբ. *27բ-33ա* Վասն կարգի հաճանայութեան – *Հց. Զի՞նչ է կարգ քահանայութեան: Պխ. Կարգն է կրողութիւն... իսկ հաւատալն զԱստուած է հաւատալ, եթէ է Աստուած, այսպէս եւ հաւատան ամենայն ազգն:*

ժզ. *33ա-4ա* Վասն գունո մարդկան – *Հց. Վասն էր մարդ, յորժամ երկնչի, դեղնի եւ յամաչելն շառագունի: Պխ. Սիրտն իշխան է անձինն... Իններորդ՝ Փանուէլ յայտնութիւն Աստուծոյ:*

ժդ. *34աբ* Վասն փառաբանութեանց հրեշտակաց – *Հց. Զի՞նչ է փառաբանութիւն Թ. դասուց հրեշտակաց: Պ[խ.] Ներքին դասք հրեշտակաց, որք են պատգամաւորք... Իններորդ՝ աթոռոցն, եւ ասեն՝ աթոռ քո Աստուած յաւիտեանս զաւիտենից:*

ժե. *34բ* Թէ որման խօսեցաւ Աստուած ընդ նախահարսն – *Հց. Քանիցս անգամ խօսեցաւ Աստուած ընդ հարցն ամենայն: [Պխ.] Ընդ Ադամայ եւ Եւայի՝ հինգ... Հագարու՝ Դ., Բաղամու՝ Զ. Հրեշտակովն՝ Բ., Իշովն՝ Ա.:*

ժզ. *35ա-6բ* Վասն նեռին, որ գալոց է չար աղանդի – *Հց. Նեռն ուստի՞ լինի: Պ[խ.] Թովմաս ասէ՝ կին յեգիպտոսէ ի գալ լինի... որպէս ցուցաւ ի վերոյ, որ յաղագս անկման դիւաց ասացաւ:*

ժէ. *36բ-7բ* Վասն պատրանաց նեռին – *Հց. Որպէ՞ս պատրէ զմարդիկ: Պխ. Զորիւք յեղ[ա]ն[ա]կաւ քարշէ ընդ ինքեան զմարդիկ... եւ սուրբք ժամանակին այնորիկ լինիցին զօրեղագոյնք, քան զամենայն յառաջագոյն եղեալ մարտիրոսն:*

ժը. *37բ* Վասն գօգայ եւ մագօգա – *Հց. Զի՞նչ է գօգ եւ մագօգ: Պխ. Ասեն ոմանք, թէ Ժ. ցեղքն Իսրայիլի... փոքրիկ լինին հասակ մարդկան, քան զմերս, որպէս մերս, քան զառաջոցն:*

ժթ. *37բ-8ա* Վասն եղիայի եւ Ենովխա – *Ընդ երեւել նեռինն եւ թագաւորելն յերուսաղէմ եկեսցեն Ենովք եւ Եղիայ... Հց. Որպիսի՞ հասակաւ գայցեն: Պխ. Նոյն հասակաւն, որով փոխեցան, եւ գայցեն... Եւ յետ մահուան եւ յարութեան նոցա թագաւորեսցէ նեռն ԺԵ. (15) օր:*

ի. *38ա-9ա* Վասն յերկարելոյն նեռինն եւ հալածանաց – *Հց. Որքա՞ն թագաւորէ նեռն: Պխ. Թագաւորէ նեռն զաւուրս Ռ. (1000) երկերիւր եւթանասուն եւ ութ... եւ պատրանք մարդկան եւ սատանայի: Այսքան աւուրս նեռին:*

իա. *39ա-42բ* Յաղագս Յոբայ արդարոյ – *Հց. Համբերողն Յոբ յորո՞ւմ ժամանակի էր եւ կամ յորո՞ւմ ազգէ: Պխ. Երանելին Յոբ էր ի ժամանակս Մովսէսի... որոտն եւ մրրիկն յամպոյն զպատուհասիսն բարեկամացն նշանակէ:*

իբ. *43ա-5ա* Վասն հանցանաց մտաց մեղաց մերոց – *Հց. Ոմանք զյանցանս մտաց կատարեալ մեղս դնեն... Պատասխանեմ եւ ասեմ՝ թէ ոչ են միմեանց հակառակք... վասն զի նախ ի խորհուրդն տնկի ամենայն սերմ մեղաց եւ ապա ի մարմինն բուսանէ եւ աճէ:*

իգ. *45ա-7ա* Վասն ոգեվարին – *Հց. Զի՞նչ է՝ ոմանք յերկար ոգեվարին, եւ ոմանք յանկարծի մեռանի[ն]: Պխ. Յերկար ոգեվարք լինի յերից պատճառաց... արգարոց եւ մեղաւորաց, որպէս ցուցանի յառաջիկայդ՝ բազում վկայութեամբ:*

իդ. *47ա-50բ* Ազգաբանութիւն Կուսին եւ Յովսեփայ – *Հց. Յորմէ՞ ցեղէ էր Աստուածածին Կոյսն: Պխ. Փառաւորեալ եւ միշտ կոյսն Աստուածածին Մարիամ էր ի թագաւորական ցեղէն Դաւթի... զի առանց խոստովանութեան մեղաց ոչ թողուի եւ վասն ներելոցն թողութեան ասացաւ ի Թուոցն: Այսքան ի կարճոյ վասն ապաշխարութեան:*

Համմտ. նաեւ Գրիգոր Տաթեւացի, Գիրք Հարցմանց, Երուսաղէմ, 1993 (հաղուածոյ, յաճախ նոյնիսկ 1 միաւորի մէջ առկայ են հաղուածմներ գրքի տարբեր էջերից):

ՅԱԻԵԼՎԱԳՐՈՒԹԻՒՆ

1. *34բ (ԺՀ. դ., բոլորգիր)* Առաւ* արարողութիւն կատարեալ իմաստութիւն է, եւ դո՛ւ, ո՛վ եղբայր, թէ կարողութիւն ունիս, հարցաքննութիւն առնես եւ թէ ոչ՝ խազաս, յետ քաշվիս:

* Ծնթ. «Ատամ» սկզբնաբառը նախ լս-ում:

2. *4ա (ԺՀ. դ. վերջ, բոլորգիր)* Սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէ՛ր զօր[ու]թեանց, Աստուած Իսրայիլի, թագաւորէ ի վերայ ամենայն ազգայց, տէր է:

3. *50բ (ԺՀ. դ., նոտրգիր)* [Ախտարբ]

ա. *50բ* Այր ու կին, որ կապ լինի – *Առ Դ. ապ հող... «Հայր մեր, որ յերկինս» ասա՛յ, «Արդ, արձակեայ» ասա՛յ:*

բ. *50բ* Վասն կապածի – *Բե՛ր է. աղբիւրէ ջուր, է. պղտատու ծառի ճիւղ... «Յայնժամ վերացաւ Յիսուս», է. խաչայլեայ էրայ, տո՛ւր, որ խմէ:*

4. *51բ-3ա (ԺՀ. դ., շինծու բոլորգիր եւ նոտրգիր, տէր Սարգսի ձեռքով, կցկտուր յիշատակագրութիւններ, աղօթքներ՝ ոճաւորուած խաչաձեւ պատկերների մէջ եւ շուրջը, յաճախ անկապակից)*

ա. *51բ (խաչաձեւ պատկերի մէջ. աջ թեւին)* – Փայտ կենացց, որով պտ[ու]ղ (այսպէս), (ձախ թեւին) Սայ է նշան քառաթեւին <է>, (վերին թեւին) Սայ է կարապետ գալըստէան, (ստորին թեւին) Սայ է դրոշմ գայութեան ընդ[դ]էմ ամենից դու աստուածայինն:

բ. *51բ* Սայ է հեծանօց, որ է հուսել <էի> եւ ժողովել կայլ աշխար[հ]ի խաչիւ լինէցյց (այսպէս) է, այսմ աշխար[հ]իս վերայ լինցէ դատաստան Արիմաթի՝ քաղաքն հր[է]ից, յիս յուսացաւ եւ փրկեցից եւ փառաւոր արարից ըզնա, դատարկայբանին խօսին մարդիւք՝ պարտաւոր լինին դատաստանին պատասխան ասէ Աստուած:

գ. *51բ* Խաչն է սանդուխ[տ]՝ Տէր երեւեալ Յակոբայ յայտեայց Աստուած: Ասէ Աստուած վասն իմ անձին իմոյ է այս պատմի գրօք յայտնէր Աստուածինն (այսպէս) աւետարանաւ գիրով, այլ իմ ցուց տար գիր աչիջս երեւէցուցանի մէջն Աւետ<տ>ար[ան]ին խոսէր առ յիս եւ ասէ Աստուած, թէ սակաւմիցն (այսպէս), որ ասէ տուէլոց մարոյս աշէին (այսպէս) եւ ասէին՝ Սարգիս կարգեւիս, ասէին վասն այն պա[տ]ճառին համար յայտի երկնաւոր Աստուած, ծանոյցնէ այդ հայր իմ զիս գրով այսպէս եւ ասէ սակաւմիցն, որք ետու մի[ն]չեւ կին առնուլըն մերցեցան՝ հերայքըն (այսպէս):

դ. *51բ Այսպէս Աստուած ստայխոսքն եւ գրախօսն դատելօց, Աստուած յայնժամ պատարագ, որ մատոյցանեմ, դիւանքն մարտնչին ընդի, զի ըզխորհ[ուր]դ, որք աղէի չար կախարդութիւն ար եւ տիւս կամին պատարագս <կամին> խաբանէլ <կամին>: Ով Տէր Աստուած [ի]մ, դո՛ւ ես ըստեղծող երկնի եւ երկրի, արարի՛չ Աստուած իմ, դո՛ւ ես թագ[աւ]որ, քեզ յայտնի է այս գործս իմ, մէջ պատարագին հիւանդութիւն կու բերէր:*

ե. *52ա (խաչաձեւ պատկերի մէջ. աջ թեւին) — Աստուած ասէ Ադօնէայ (այսպէս), Աստուած Օթէոսէ (այսպէս), որ խօսէր ընդ իս եւ ասէ սակաւմիցն ետու յարին աշէն մինչեւ կին առնուլ մերգէնասցէ՝ ասէն հր[է]այք, (վերին թեւին) Սարքսին սէրոբէք <եւ դող> քէրոբէք ահեղ փառ[ք] աստուածութեան:*

զ. *52բ (խաչաձեւ պատկերի մէջ. աջ թեւին) — Որպէս ասէ Տեառն՝ ամենայն դատարկ բանին համարս տալոց են առաջի Աստուծոյ, մա՛յր ողորմութեանն սուրբ տիրուհի, (ձախ թեւին) Դատարկաբանին խօսին մարդիկ, պարտաւոր լինին դատաստանին պատասխանին, աշխարհի եւ ի ժամ մահու ընկա՛լ զմեզ ուրախալի, (վերին թեւին, մասամբ հակառակ դիրքով) Հիպատոս արդար էր, տէրն վաճառեց լ. (30) դահեկի, տէր* Սարգիս, *ազբի՛ւր շնորհաց, անսպառելի թշնամոյն զմեզ պահեա՛յ, (ստորին թեւին) Ով սո՛ւրբ, սո՛ւրբ տիրուհի, խորհուրդ պատարագին ասեմք «Հայր մեղայ»:*

է. *53ա (խաչաձեւ պատկերի մէջ. աջ թեւին) — Ահա նոր Սուրբ Կուս ծնաւ, նոր Ադամ ըստեղծաւ, նոր Քրիստոս տղայ եղաւ, ահայ երկի[ն]ք նօր եւ երկիր նոր է, (ձախ թեւին) յաջ* թեւ քառաթեւին է այս, ո՛վ մարդիւք ասեն, (վերին թեւին եւ ստորին թեւին) Այս է զին յաղթութեան ընդ[դ]էմ անօրէն թշ[նա]մոյն, դրախտէն ծագեցաւ շարիւ, նորին խոցիւն բժըշկեցաւ արարածք ամենայն, (ստորին թեւին) կենաց փայտիւն եղեւ փրկութիւն:*

* Ծնթ. Այսուհանդերձ գրուածը նախ թեւի վրայ է:

ը. *53ա Այս է սանդուխտ եւ հեծանոց Տէր Աստուած: Քրիստոսիս օծեալ Աստուած թար[գ]մանի, Բեղխեմ ծնու[ն]դ, Աստուած Հրէայստանի, որ է Հայաստան <է>: Լո՛ւր Աստուած մեզ ասելն կիս, թէ ին<ն>ձի, թէ սուս, ձիս<ս>ուս:*

5. *53բ (ԺԲ. դարի վերջ, նոտրգիր)* [Աղօթք] *— Մա՛յր ողորմութեան, սո՛ւրբ տիրուհի,*

Աղբիւր շնորհաց անսպառելի,

Ի թշնամոյն զեմզ (= զմեզ) պահեա՛ աշխարհի,

Եւ ի ժամ մահու ընկալ զմեզ ուրախալի:

Ով Յիսուս, ո՛վ սրբուհի կոյս՝ Մարիամ Աստուածածին,

Ի քեզ յանձն առնեմ զհոգի եւ մարմին իմ:*

* Ծնթ. Ներեւում չորս տողը կրկնուած:

6. *53բ (ԺԲ. դ., շղագիր)* Ջօհրապին *ավի Ա. ըռուպ մէկ, կէս զուռուշ՝ Ա.մէկ (այսպէս):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. *15ա (1775 թ., շղագիր) Թվին ՌիհարուրիԻ. (1775) Յուլիսի ԺԳ.ին (13) այ այս [յ]հիշատակ տիրացու* Նհապետին Ձեռն. *ամէն:*

2. *51ա (ԺԸ. դ., անարուեստ բոլորգիր, երբեմն անկապակից) Վասն այն պատճառին համար լամ, երբ որ լամ նայ* Խուրդայտէրտէն *(այսպէս) կայց թափի, կու տեսանէի զայս, բարկութիւն [Աստուծո]յ եկ ի վրայ իմ, յայս ամենայն անըրէքութեան իմում է, այս չարիք եկ մեղայց իմոց, պատարագս պատուհաս կու քէր, ատավածասաստ (= աստուածասաստ) բարկութիւն արտասվոք շիջուչանէի: Ի խորոց սրտէ կարդացի առ քեզ՝ Տէ՛ր, Տէ՛ր, աչք իմ դու ես, ապաւեն ի նեղութենէն այսմանէ, զոր թագուցանէ ինձ գայթա[կ]դութէ դիւէն, է չարիք այս: Աներուժաբար (այսպէս) հալածէ զիս, Աստուա՛ծ, ամենան դու ես, համբերութիւն իմ, փառք նէրուղեան (այսպէս), ո՛հ, ո՛հ, մոլորեցայ, դարձո՛յ եւ առաջնորդեա՛յ ինձ ուղիղ, Աստուա՛ծ իմ, դու ըստեղծեր զիս, ո՛վ բարէգութ Աստուած:*

3. *53բ (ԺԸ. դ., շինծու նոտրգիր) Ես՝* Իմֆատոս, *գրեցի:*

4. *52բ (ԺԸ. դ., շինծու նոտրգիր) Այս է տէր* Սարգիսին *ձեռաց նշան, որ գրեալ ի գիրն:*

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *53ա՝ սեւ թանաքով ութանկիւն «ՀԱՅՐԱ/ՊԵՏԻ ՈՐԴԻ / ՍԱՐԳԻՍ», սեւ թանաքով բոլորակ՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ/ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ/ ԹՎԻՆ ՌՃՁԶ. (1737)»:*

ՆՇՈՒՄ՝ *1ա՝ «3693», «ԺԸ. [դ.], Մ[եսրոպ] եպ[իսկոպոս]»:*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *26բ՝ «ասաց Տէ[ր] մի անագ զբարին», 43ա՝ սեւով «անտան անտանելոյն», 50ա՝ սեւով «ա անտնալոյն», 52բ՝ սեւով «դատարկ բանին համար տալոց էք յաւուրն», 53բ՝ սեւով «Այս այ զայս վայսօեր էլէլ», «Այսօր անճառ», «Մայր ողորմութեան սուրբ տիրու», «Մայր ողորմութեան սուրբ տիրուհի»:*


ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *15բ՝ սեւով բուսական լուսանցազարդ:*

3694
ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ


ՌՄԼԵ. — 1786

ԳՐԻՉ՝ Այիվազ, Յովաննէս (փոխնիփոխ):

ԹԵՐԹ՝ 66. չգրուած՝ 6բ-7ա, 8բ: ՊՐԱԿ՝ 8+Ա.է×8 (Ա 7, ե 16, է 3): ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16,5×11,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, սեւով սահմանագծուած (13×8,5): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 4ա, 66ա). 9ա-18ա՝ սկզբնատառերը կարմիր (գրչափոխութեամբ):



Նմուշ 4ա




Նմուշ 66ա

ՏՈՂ՝ 20: ԿԱՉՄ՝ շագանակագոյն ներկած տախտակ, մէջքը՝ շագանակագոյն կաշի:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Մեկնութիւն Սաղմոսի (տպագիր, ունի 591-2 էջահամարով): ԱԲ (վջ.)՝ ստացուած մէկ թերթի ընդլայնակի ծալումով: Թուղթ 22×*16* (այս եւ յաջորդ տուեալները ամբողջական թերթինն են). միասիւն, սեւով սահմանագծուած երկգիծ շրջանակով (17×11,5). տպագիր (նմուշ՝ Աա). տող՝ 33, բուսական լուսանցազարդ՝ Բբ-Աա: Կարդալ. Բա, Աբ, Բբ, Աա՝ «ԵՃՂԱ. Մեկնութիւն Սաղմոս. ///զէրէ տեսին զիս, եւ իւեանց գլուխն ինձ վերայ շարժեցին ատելութեամբ... ի վախճանի աշխարհիս դնեմ ոյ ոտաց տակն իբրեւ զպատուանդան, իբր ոյ սուրբ հաւատոյդ ինազանդեցնեմ»:

Տե՛ս Յովհաննէս Կոստանդնուպոլսեցի, Պարզաբանութիւն հոգենուագ սաղմոսացն Դաւթի մարգարէին, Վենետիկ, 1687, էջ 591-592:



Նմուշ Աա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի Ա. եւ Բ. փեղկերի տախտակները մի քանի տեղից կոտրուած, հետագայում թելով կարած-ամրացուած, կազմ-տախտակների շագանակագոյնը թափուած, տեղ-տեղ այլ իրերի ճնշումից առաջացած հետքեր, զանազան բերծուածքներ, մէջքի կաշին բերծուած, մաշուած, տեղ-տեղ թափուած, աստառներն ընկած. պտոկ-պիպ-ները մաշուած, գործածութիւնից եւ խոնաւութիւնից դեղնած, մասնաւորապէս Բբ՝ հանդիպակաց կազմ-տախտակի շփումից սեւացած. լուսանցակողերը սեւացած. թերթերին գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, իւղի, թանաքի եւ սնկային հիւանդութեան հետքեր, գրաղաշտը գունափոխուած, յաճախ անմաքուր ջրի լայն հետքեր, արտ. լս-ներին խոնաւութեան հետքեր. թ. 1-8, 56-63՝ կապտաւուն թուղթ (հաւանաբար ձեռագրի թերթերից, հետագայում կապոյտով գունաւորած), թ. 1՝ պատռուածք-անցք, թ. 31՝ ստորին եզրը կտրած-հանած, թ. 32՝ հիմից մասամբ անջատ, թ. 66ից յետոյ 3 չգրուած թերթ կտրած-հանած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *9ա-66ա* [Աստղաբաշխութիւն]

9ա [Նախաբան] – *Աստուծով սկ[ի]ւբն արասցուք վասն ըստուղապի ար[ու]եստին, որ է երկրաչափութիւն եւ աստղաբաշխութիւն, եւ է մեծս իմաստութիւն առ ուսումնասէրսն. Օգնեա՛յ, Հոգի՛դ Սուրբ, Աստուա՛ծ ճշմարիտ, եւ հասո՛յ յաւարտ (այսչափ):*

– *9ա-11բ* Դուռն առաջին ցուցանելոյ զգործարանացն, որ կայ ի վերայ նոցա՝ արտաքոյ կամ ի ներքոյ, եւ վասն խազերուն, եւ բոլորակացն, եւ դաւսերոյն, որ է բոլորակին, եւ այլ ամենայն իրացն – *Յատատայն այն է, որ ստուղապին յետի կողմն է եւ Բ. ծայրն սուր է... որ լինի ամէն բաժնի մէջ գրեալ անուն կենդանակերպից ի կենդանակերպն եւ այլն է:*

*ա. 11բ 1.** *Համարքն, որ գրեալ են ի հուճբայի բոլորքն, այն համարքն է... յայնժամ լինի հուճբան ի վերայ 3Կ.ի (360):*

* Ծնթբ. Խորագրերը սկզբնատողերից չառանձնացուած:

բ. 11բ 2. Վասն գիտութեան արեգական երթիֆայէն, յորում ժամու եւ իցէ ի տվնջան... մինչ ի նոյն տեղին զինչ որ լինի, այն է երթիֆայ՝ ի նոյն ժամն ի սաֆաղն հատ:

գ. 12ա 3. Յաղագս գիտութեան երթիֆայի, յորում աստեղայց որ խնդրես... որմոյ եւ զպարսպայց գլուխն եւ լերանց եւ ծառոց եւ զամենայն բարձր իրաց:

դ. 12ա 4. Այլ թէ ի՞նչ անցեր է աւուրն ի թիւր ժամանցն կամիս խնդրել... ի թիւր ժամուցն, այնքան ժամ է անցեալ աւուրն:

ե. 12բ 5. Վասն գիտելոյ, թէ զի՞նչ է անցեալ յերեկոյէն թիւր ժամուցն... ի թիւր ժամուցն այնքան ժամ է անցեալ յերեկոյէն:

զ. 12բ-3ա 6. Վասն գիտելոյ զթիւր ժամուն եւ զմասունս նորա... զինչ որ ելանէ, այն է մասունք մնացորդաց թիւր ժամուցն:

է. 13աբ 7. Վասն գիտութեան երկնից շրջագայութեան, թէ ո՞ր չափ ի վեր է բերեալ... ի ծագմանէ արեգական մինչեւ ի նոյն ժամն:

ը. 13բ 8. Վասն գիտելոյ, թէ ի՞նչ է վերաբերեալ շրջագայութիւնս երկնից ի գիշերի... ի գիշերի ի մտանելն արեգական մինչեւ ի ժամ գիտաւորութեան:

թ. 13բ-4ա 9. Վասն գիտութեան, թէ ի՞նչ է անցեր ի տվնջեան ի յուղիղ ժամուցն... այն է անցեալ ի տվնջենէն ուղիղ ժամնքն, որ կոչի մստովիայ:

ժ. 14աբ 10. Վասն գիտելոյ, թէ ի՞նչ է անցեալ ի գիշերի ի ուղիղ ժամուցն... եւ զմնացեալն չորեքպատկեայ, եւ այն է մասունք ի յուղիղ ժամուցն:

ժա. *14բ* 11. *Վասն գիտելոյ զղաւս տունջանն... ի տեղացն, եւ այն է ղաւս տուընջանն, յորում աւուր եւ կամիս:*

ժբ. *14բ* 12. *Վասն գիտելոյ զղաւս գիշերոյ, յորում աւուր եւ կամիս... ի տեղացն, ինչ որ եղեւ, նայ այն է ղաւս գիշերուն, որում աւուր եւ կամիս:*

ժգ. *14բ-5ա* 13. *Վասն գիտելոյ զղաւս տվնջեանն... ի տեղացն, զինչ որ եղեւ, նայ այն է կէս ղաւս տուընջան այն աւուրն:*

ժդ. *15աբ* 14. *Վասն գիտելոյ զկէս ղաւս գիշերուն, յորում աւուր եւ կամիս... աստիճան, որի ի խոնար մնայ՝ այն է կէս ղաւս տվնջեանն:*

ժե. *15բ* 15. *Վասն գիտելոյ զաստիճան ժամուցն տունջեանն ամենայն աւուր թէ կամիս գնայ... եւ տե՛ս, թէ որ չափ խաղաց մտին ի տեղացն, զինչ որ եւ եղեւ, նայ այն է տունջեանն ժամուն աստիճանքն այն աւուրն:*

ժզ. *15բ* 16. *Թէ կամիս գիտել զկէս ղաւս տունջեանն եւ առնուս զվեց բաժնէն... զինչ որ յառաջ գայ, այն է աստիճանք ժամուց տունջեանն այն աւուրն, զոր խնդրես:*

ժէ. *15բ-6ա* 17. *Վասն գիտելոյ զաստիճանք ժամուցն գիշերուն թէ կամիս գնայ՝ դիր զաստիճան... եւ զինչ որ ելանէ, նայ այն է աստիճանք ժամուց գիշերուն:*

ժը. *16ա* 18. *Վասն գիտելոյ զմստովիայ ժամ աւուրցն, յորում եմք... եւ ի բաց ե՛րթ զե.էն, զմինն լինի մնացեալ մստովիայ ժամք տունջեանն աւուրն:*

ժթ. *16աբ* [19.] *Վասն գիտելոյ զմստովիայ ժամք գիշերուն՝ յայսմիկ մնան աստիճանք ժե. (15) ի խոնարհ... եւ ի բաց իւրմէն զե.էն զմինն, եւ լինի մնացեալն մստովիայ ժամք գիշերոյ:*

ի. *16բ* 20. *Վասն գիտելոյ զտալեհ տունջեան, յորում աւուր կամ յորում ժամու զոր խնդրես... գօտոյ աստիճանացն զինչ որ լինի՝ այն է ի տունջեան ի նոյն ժամն, յորում խնդրես:*

իա. *16բ-7ա* 21. *Վասն գիտելոյ զկենդանի ցիցք գիշերացն թէ կամիս գնայ... այսպէս լինի նայ՝ ստոյգ է եւ թէ ոչ՝ սխալ կայ ի ստուղապն:*

իբ. *17աբ* 22. *Վասն գիտելոյ տանց ԲԺ.ն (12) կենդանակերպից կամիս գնա՝ դի՛ր զաստիճան... այնպէս է՝ որպէս է.երորդի կենդանակերպին նոյն աստեղ աստիճանքն:*

իգ. *17բ* 23. *Վասն գիտելոյ զերթիֆայ ի գիշերի. առ զերթիֆայ, զոր աստեղի եւ կամիս... եւ գտանես զկենդանի ցցերն եւ ԲԺ.ն (12) տունն, որպէս որ իմացար տունջեան տլհովն:*

իդ. *17բ-8ա* 24. *Վասն գիտելոյ զտալեհն երթիֆաղին, յոր տունջեան է... ահայ լինի նայ այն իրացն եւ տալեհի ժամն. այսպէս գիտացի՛ր:*

իե. *18ա* 25. *Վասն գիտելոյ զերթիֆայ, որ աստեղի որ կամիս զտալեհլին ժամն... թէ՛ արեւելք, թէ՛ արեւմուտք՝ լինի այն պիտոյացեալ ժամն վասն այն իրացն:*

իզ. *18աբ* 26. *Վասն գիտելոյ զաստեղերն երթիվայօվն, յորում ժամու եւ կամիս ի տունջեանն... յայնժամ ստվերն բաժանեալ է մատամբք՝ մատիւք, թէ ոտիւք բաժանեալ է՝ ոտիւք. այսպէս է:*

իէ. *18բ* 27. *[Վ]ասն գիտելոյ զստվեր միջօրեայ ամենայն աւուր թէ կամիս գնայ... ստվերաց աստեղաց աստիճանացն զինչ եղեւ՝ նայ այն է ստվեր միջօրէին յամենայն աւուր:*

իը. *18բ* 28. *[Վ]ասն գիտելոյ զերթիֆայ արեգական միջօրէի, յորում աւուր եւ կամիս գնայ... երկրի լայնութեան աստիճանք պակաս՝ քան զաստիճան մեծ մէյլին, որ կոչի մէյլի ազամ:*

իթ. *19ա* 29. *[Վ]ասն գիտելոյ զերթիֆայ արեգական միջօրէի, որ կոչի զայթի երթիֆայ՝ թէ կամիս գնայ... եւ թէ գէմք մեր ի կողմն հարաքայ լինի՝ նայ հարաքային է եւ արեգական ի հարաքայիին գլուխ բարձրութեան:*

լ. *19ա* 30. *[Վ]ասն գիտելոյ, թէ յո՞ր եղանակն է ի չորից եղանակաց... եւ իմացութեամբ երթիֆային սկսբան եւ սկսբան կշեռքին:*

լա. *19աբ* 31. *[Վ]ասն գիտելոյ զտեղիք արեգական ստուղապով, թէ տեղիքն այն յատնէ... յոր աստիճան որ եհաս ի նշանն կենդանակերպից գօտոյ աստիճանացն՝ այն է տեղին արեգական ի յայնմ աւուր:*

լբ. *19բ* 32. *[Վ]ասն գիտելոյ զտեղիք արեգական ասէ զաստիճան... յայն աստիճանէ, որ ի վերայ այն երթիֆային է:*

լգ. *19բ-20ա* 33. *[Վ]ասն գիտելոյ զտեղիք աւուր վերջն եւ զետնասաց սկսբն... ապայ սկսբն միջօրէի պահուն, յորժամ լինի արեգական կատարել իւր թիւն բարձրացեալ:*

լդ. *20ա* 34. *[Վ]ասն գիտելոյ զկէս աւուր աստիճանն ժամ յետնասաց, յորում աւուր եւ կամիս... զինչ որ եղեւ, նայ այն է երթիֆայ արեգական պահուն ի վերջի յետնասաց յայն աւուրն:*

լե. *20բ* 35. *[Վ]ասն գիտելոյ զվազճան, ծագումն ֆարճին եւ պահ մտանելոյ շաֆաղին, յորում գիշերի զոր կամիս... եւ այսպէս առ գնայ որպէս ի ծագումն ղաւսն:*

լզ. *20բ-1ա* 36. *[Վ]ասն գիտելոյ զպահ մտանելոյ շաֆաղին, յորում գիշերի եւ կամիս... ի վերայ յոր աստիճանի անկաւ երթիֆայի աստիճանացն եւ այսպէս առ գնայ որպէս զանցեալ դուռն զվազսն:*

լէ. *21ա* 37. *[Վ]ասն գիտելոյ պահ ծագումն տվնջեանն, որ աստեղ եւ կամիս այն աստեղաց, որ կան ի ստուղապն... ի տեղացն, զինչ որ եղեւ, նայ այն է վազս տվնջեան այն աստեղեն եւ կէս վազս տվնջեան նորայ:*

լը. *21աբ* 38. *[Վ]ասն գիտելոյ զղաւս գիշերոյ, զոր աստեղ որ կամիս այն աստեղաց, որ կան ի ստուղապն... նայ լինի մնացեալն ժամք գիշերոյ նորայ. եւ այն է՝ որքան ի վերայ ի ներքոյ երկրի տեւէ:*

լթ. *21բ* 39. *[Վ]ասն գիտելոյ զաստիճան, որ ելանէ*

ընդ աստեղն աստիճանաց գօտոյ կենդանակերպիցն, յորում երկրի եւ կամիս... եւ տե՛ս զաստիճան կենդանակերպից գօտուն, թէ որ աստիճան հասաւ ուֆուղն յարեւելեան, նայ այն է աստեղն ելանէ ընդ այն աստիճանի։

խ. *21բ* 40. *[Վ]ասն գիտելոյ զայն աստիճան, որ ի մէջ երկնքից ընդ այլ աստեղաց... նայ այն աստիճան է ի մէջ երկնքից ընդ այն աստեղն ընդ անցանել նոցայ։*

խա. *22ա* 41. *[Վ]ասն գիտելոյ զաստիճան, որ մտանէ ընդ որում աստեղ՝ թէ կամիս... նայ աստեղն մտանէ ընդ այն աստիճանին ի յայն երկրի լայնութեան աստիճանաց։*

խբ. *22ա* 42. *[Վ]ասն գիտելոյ, թէ ո՞ր աստեղ ի յաստեղացն որ կան ի ստուղապն ելնէ ի տվնջեան... ի ժամերու մէջն, նայ ելանէ այն աստեղն ի գիշերի։*

խգ. *22բ* 43. *[Վ]ասն գիտելոյ, թէ ո՞ր աստղ է ի յայն աստեղաց, որ կան ի ստուղապն, որ մտանէ ի գիշերն կամ որ է, որ մտանէ ի ցերեքն... եւ բաժանէ ի վերայ ԺԵ.ի (15)՝ զինչ որ ելաւ, նայ այն է այնքան ժամ, որ ելանէ այն աստեղն։*

խդ. *22բ-3ա* 44. *[Վ]ասն գիտելոյ, թէ յորում ժամու գիշերի եւ կամ ի տնջեան ելանէ զոր աստեղ եւ կամիս... մինչեւ այն աստեղին ելանելոյ ժամն այնքան ժամ է։*

խե. *23աբ* 45. *[Վ]ասն գիտելոյ, թէ քանի ժամ է, որ կան ի ստուղապն՝ թէ կամիս զնայ... ի յայնքան ժամքն եւ մասունքն մտանէ այն աստեղն։*

խզ. *23բ* 46. *[Վ]ասն գիտելոյ, թէ յորում ժամու գիշերն կամ ի տունջեանն երկրի մերում մտանէ՝ զոր աստեղ եւ կամիս... յորում ժամու դադարեցաւ ի ներքոյ երկրի ի ղամնիայ ժամերն. եւ այն է։*

խէ. *23բ-4ա* [47.] *[Վ]ասն գիտելոյ, թէ որքան ժամուց ելանէ՝ զոր աստեղ եւ կամիս յա[յ]ն աստեղաց, որ կան ի ստուղապն... ի մասունցն մինչեւ այնքան ժամն ելանէ այն աստեղ ի մստոֆիայ ժամերուցն։*

խը. *24ա* 48. *[Վ]ասն գիտելոյ, թէ յորում ժամու ի գիշերի կամ ի ցերեկի ելանէ զոր աստեղ եւ կամիս, որ կայ... զինչ որ եղեւ, նայ այն է անցեալն ի տունջեան կամ ի գիշերի ի մստովիայ ժամերուն՝ այն աստեղի յելնելոյ ժամն։*

խթ. *24աբ* 49. *[Վ]ասն գիտելոյ, թէ քանի ժամ է անցեալ ի մտանելոյ աստղին, զոր կամիս ի յայն աստեղաց, որ կան ի ստուղապն... զինչ որ ելանէ ժամք կամ մասունք, այնքան ժամ է ի մտանելոյ աստղին ի յերկրի մերում։*

ծ. *24բ-5ա* 50. *[Վ]ասն գիտելոյ, թէ յորում ժամու ի գիշերի կամ ի տունջեան եւ մուտ զոր աստեղ եւ կամիս ի յայն աստեղաց... մինչեւ այն պահն, որ եմուտ այն աստեղն ի զամանեայ ժամերուց։*

ծա. *25ա* 51. *[Վ]ասն գիտելոյ զմաթալեհ կենդանակերպիցն, որ է ելուզի ֆալաք... զինչ որ եղեւ, նայ այն է մաթալեհ, այն կենդանակերպին ի ֆալաք մուսթաքիմն։*

ծբ. *25աբ* 52. *[Վ]ասն գիտելոյ ի մէջ խոյին, մինչեւ որ աստիճան եւ կամիս աստիճանաց գօտոյ կենդանակերպիցն... զոր խնդրես ի մուսթաղեմ ֆալաքին մաթալեհովն։*

ծգ. *25բ* 53. *[Վ]ասն գիտելոյ զաստիճան արեգական մստովիայի մինչ յաստիճան մաթալէեն... զինչ որ եղեւ՝ նայ այն է աստիճանաց մստովիային փոքանակ աստիճանաց մաթալեհին ի ֆալաքլ մուսթաղեմին։*

ծդ. *25բ-6ա* 54. *[Վ]ասն գիտելոյ զաստիճան արեգական մաթալեհովն ի ֆալաքլ մուսթաղեմին... փոխանակ աստիճանաց մաթալեհին ի սաֆիային աստիճանաց։*

ծե. *26աբ* 55. *[Վ]ասն գիտելոյ զմաթալեհ կենդանակերպիցն ամենայն երկրի՝ թէ կամիս զնայ... ի մէջ սկսբան խոյին մինչեւ յայն աստիճան, զոր ասացեր։*

ծզ. *26բ* 56. *[Վ]ասն գիտելոյ զաստիճան սաֆային մինչեւ յաստիճանն մաթալեհին, յորում երկրի եւ կամիս... զինչ որ եղեւ. եւ նայ այն աստիճանաց մստովիային փոխանորդն ի մաթալեհին աստիճանաց այն երկրին։*

ծէ. *26բ-7ա* 57. *[Վ]ասն գիտելոյ զաստիճան մաթեալեհին մինչեւ աստիճանն սաֆիային... զինչ որ եղեւ՝ նայ այն է մաթալեհի աստիճանաց փոխանորդն աստիճանաց սաֆիային։*

ծը. *27ա* 58. *[Վ]ասն գիտելոյ ի մէջ սկսբան զոր աստիճանի որ կամիս ի կենդանակերպից աստիճանաց ըռասատով մստովի... եւ մնայ այն աստիճանի մէյլն հիւսիսային կողմն մստովիայ. այսպէ՛ս իմացիր։*

ծթ. *27աբ* 59. *[Վ]ասն գիտելոյ զմէյլ, թէ յորում աստիճանի եւ կամիս ի կենդանակերպից աստիճանաց... յայն աստիճանի մէյլն եւ զայլս այսպէս է։*

կ. *27բ* 60. *[Վ]ասն գիտելոյ զմէյլն, որում աստիճանի եւ կամ կենդանակերպից աստիճանացն մստովիայ սաֆիաներովն... եւ թէ սկսբն խոյի բոլորակէն ի դուրս է նշանն՝ նա մէյլն հարաֆոյ է. այսպէ՛ս իմացիր։*

կա. *27բ-8ա* 61. *[Վ]ասն գիտելոյ զմէյլն, յորում աստիճանի որ կամիս ի կենդանակերպից աստիճանացն մանքուս սաֆիաներովն... զինչ որ եղեւ՝ նայ այն է մէյլն նոյն աստիճանին ի կողմն հիւսիսոյ մանքուս։*

կբ. *28աբ* 62. *[Վ]ասն գիտելոյ զմէյլի վաղան թէ ունես ընդ քեզ զաստիճանն մէյլին եւ կամիս որ իմանաս զայն... մինչեւ ի վերջ ձկանն այն է՝ այն մէյլի վաղան մստովիայ. այսպէ՛ս իմայ։*

կգ. *28բ-9ա* 63. *[Վ]ասն գիտելոյ զմէյլի զաւան մանքուս, թէ կամիս գիտենալ զզաւան զայն մէյլի մանքուս... եւ պարտ է, որ համարես զՔ. աստիճանն Այծեղջիւրին մի համար։*

կդ. *29աբ* 64 *(արաբական գծագրութեամբ թուանշաններով). [Վ]ասն գիտելոյ զմէյլի աստիճանն, որում*

երկրի եւ կամիս արեգական աստիճանով ըռասատով... նայ լինի մնացեալն լայնութեան աստիճանաց երկրին, այն բաւ է։

կե. *29բ-30ա* 65. *[Վ]ասն գիտելոյ զլայնութեան աստիճանաց երկրին ամէն կլէմի իւր սաֆիայովն թէ կամիս զնայ... նայ այն է նոյն երկրի լայնութեան աստիճանքն։*

կզ. *30ա* 66. *[Վ]ասն գիտելոյ զհեռաւորութիւն, զոր աստղ եւ կամիս յայն աստեղացն, որ կան ի ստուղապն ի բոլորակէն սկսբան... նայ այն է հեռաւորութիւն այն աստեղն ի հասարակ աւուրէն, որ է երկնամիջակ գօտին։*

կէ. *30ա* 67. *[Վ]ասն գիտելոյ զհեռաւորութիւն աստեղաց ի հիւսիսային բեւեռէն՝ թէ այն աստեղն կայ ի ստուղապն... զինչ որ եղեւ կամ մնաց, այն է հեռաւորութիւն այն աստեղին բեւեռին հիւսիսոյ. այսքան առ այս։*

կը. *30բ* 68. *[Վ]ասն գիտելոյ զլայնութեան աստիճանքն, յորում երկրի կամիս անմոլար աստեղքն... եւ այն լայնութեան աստիճանաց երկրին հաւասար է։*

կթ. *30բ-1ա* 69. *[Վ]ասն գիտելոյ զլայնութեան աստիճան երկրին անմոլար աստեղօք այլ ուրիշ կերպիւ... նայ այն է նոյն երկրին լայնութեան աստճանքն. զայս եւս այսպէս իմացիր։*

հ. *31աբ* 70. *[Վ]ասն գիտելոյ զփոխել տարուն աշխարհի, թէ լինի մեզ տարի մի յայտնի ի տարեացն... զինչ որ եղեւ՝ նայ այն է տալեհ տարուն, որ կամիս փոխել։*

հա. *31բ-2բ* 71. *[Վ]ասն գիտելոյ, թէ յորում ժամու գիշերոյ կամ տունջեան լինի փոչումն... զինչ որ եղեւ՝ նայ այն է անցեալն ի գիշերոյ վասն ժամուն փոխման։*

հբ. *32բ-4ա* 72. *[Վ]ասն գիտելոյ զփոխումն ամաց ծնանելոց թէ կամիս զնա՝ դի՛ր զտալեհ զանցեալ տարոյ... զինչ որ ելաւ՝ նայ այն է անցեալն ի տունջեանն այնմ աւուր, որ համարես յայն գիշերն, որ հասար յինքն մատովիայ ժամերուն. այսքանս։*

հգ. *34աբ* 73. *[Վ]ասն գիտելոյ զտալեհ զուպային, թէ գիտացար զտալեհ փոխումն երկրի մերում... կամի գիշերոյ զուպայովն ի զամանեա ժամուցն ի ժամ փոխման։*

հդ. *34բ-5ա* 74. *[Վ]ասն գիտելոյ, թէ որ կլէմի կլէմանցն, որ բարձրացաւ Արեգական... որ լինի ի մէջ բոլորակի սկսբան խեցգետնին Ղ. (90) կէտէն աստիճանաց երթիֆային ի մուղանթարաթներն։*

հե. *35ա* 75. *[Վ]ասն գիտելոյ, թէ որում աւուր ի տարին բարձրացաւ Արեգակն ի վերայ գլխոյ նոցայ... աստիճանին սկսբանէ խեցգետնին ի հեռավորութիւն միայպէս։*

հզ. *35բ* 76. *[Վ]ասն գիտելոյ, թէ յորում որ նոր սաֆիայ չի լինի թէ կամիս զնայ՝ ապայ թէ լինի... ի վերայ գլխոց բնակչաց այն լայնութեան թէ որ լինի Արեգակն յայս Բ. Աստիճանս. այսպէ՛ս իմացիր։*

հէ. *35բ-6ա* 77. *[Վ]ասն գիտելոյ այն երկիրն, այն ո՞ր աստեղացն, որ կայ ի վերայ ստուղապին, թէ ո՞րն բարձրացաւ ի վերայ գլխոց բնակչաց... նայ աստեղն բարձրացաւ ի վերայ գլխոց նոցայ, թէ լինի ի վերայ խազին միջօրէի։*

հը. *36ա* 78. *[Վ]ասն գիտելոյ, թէ յո՞ր աստեղ չգան ստուղապն եւ մոլորակն աստեղացն թէ կամիս զնայ՝ գիտացի՛ր զերթիֆայ... հաւասար լայնութեան՝ նայ անցնի ի վերայ գլխոց բարձրութեան բնակչացն այն լայնութեան։*

հթ. *36աբ* 79. *[Վ]ասն գիտելոյ անմոլար աստեղացն, որ կան ի ստուղապն լայնութեան ի հիւսիս... նայ լայնութեան ի հարաքէ, ապայ որն որ լինի արտաքոյ գօտոյ նայ լայնութեան ի հիւսիսէ։*

ձ. *36բ-7ա* 80. *[Վ]ասն գիտելոյ այն աստեղաց, որ չի գան ի ստուղապն՝ թէ կամիս զնայ... եւ թէ լինի աստիճանն անցուցանող ի հիւսիս բարձրութեան գլխոյ եւ աստեղն հարաւ բարձրութեան՝ նայ լայնութեան հարաւ է։*

ձա. *37ա* 81. *[Վ]ասն գիտելոյ, թէ ո՞րն ի աստեղաց հիւսիսային, որ կան ի ստուղապն, որ մտանէ երկրի մերում... եւ անկաւ ի վերայ սաֆաղին՝ նայ շրջի բոլորակացն մեծի, որ միշտ երեւի։*

ձբ. *37աբ* 82. *[Վ]ասն գիտելոյ զայն, որ թէ լինի յերկրիս մերում սաֆիայ՝ թէ կամիս զնայ... եւ թէ լինի ի վերայ խազին միջօրէի՝ նայ ի ներքոյ բեւեռին է։*

ձգ. *37բ-8ա* 83. *[Վ]ասն գիտելոյ, թէ ո՞րն է աստեղացն անմոլարից հիւսիսայնոց, որ չկայ ի ստուղապն... եւ շրջի ի վերայ մեծ բոլորակին այն, որ միշտ յա[յ]տնի լինի։*

ձդ. *38ա* 84. *[Վ]ասն գիտելոյ զբեւեռն այս աստեղօք, որ ոչ մտանէ երկրի մերում... նայ այն է երթիֆայ բեւեռին եւ է որպէս զաստիճանսն լայնութեան երկրին։*

ձե. *38աբ* 85. *[Վ]ասն գիտելոյ, թէ ո՞ր երկրին լինի կենդանակերպից գօտին միջի կէտն ծագել եւ մտանել... ի մէջ բոլորակի սկսբն խեցգետնի՝ նայ հիւսիսային ոչ մտանէ եւ հարաքային ոչ ծագէ։*

ձզ. *38բ* 86. *[Վ]ասն գիտելոյ զբուն երթիֆային գօտոյ կենդանակերպից կէտին հիւսիսոյ, որ լայնութեան որ խնդրես՝ թէ կամիս զնայ... որպէս զբուն երթիֆային կէտին հիւսիսոյ գօտոյ կենդանակերպից այն երկրին, որ իւրն է սաֆիայ. այսպէս իմացիր։*

ձէ. *38բ-9ա* 87. *[Վ]ասն գիտելոյ զկարի անկումն երթիֆային կէտին հիւսիսային գօտոյ կենդանակերպից, թէ ոչ լինի իւր մտանել... սկսբն խեցգետնին՝ նայ այն, որ կայ ի մէջն՝ այն է բուն երթիֆան կէտին հարաքայ այն երկրին։*

ձը. *39աբ* 88. *[Վ]ասն գիտելոյ զկէս ղաւս տունջեան կէտին հիւսիսոյ գօտոյ կենդանակերպից... եւ ուր հասաւ՝ նշէ զտեղին եւ խնդրես ի վերայ խազին միջ[օ]րէին զմարքազն։*

ձթ. *39բ* 89. *[Վ]ասն գիտելոյ զկէս ղաւս գիշերին կէ-*

տին հիւսիսոյ գօտւոյ կենդանակերպիցն... կէտին հիւսիսոյ եւ կէս ղաւս տունջեան կէտին հարաքթոյ այն լայնութեան։

ղ. *40ա* 90. *[Վ]ասն գիտելոյ, թէ ո՞ր աստիճանն ի աստիճանացն գօտւոյ կենդանակերպից ելանէ ընդ կէտին հիւսիսոյ... եւ մտանէ կէտն հարաքթոյ ընդ այն աստիճանն ընդ դիմայ կողմն եւ այլն. այսպէ՛ս իմացիր։*

ղա. *40աբ* [91.] *[Վ]ասն գիտելոյ զաստիճանն, որ մտանէ ընդ կէտին հիւսիսոյ եւ աստիճանն, որ ելանէ ընդ կէտին հարաքթոյ... եւ զինչ աստիճանն, որ եհաս ի ուքթաղն յարեւելեանն այն է, որ ելանէ ընդ կէտին հարաքթոյ։*

ղբ. *40բ* 92. *[Վ]ասն գիտելոյ, թէ ո՞ր աստեղ աստեղացն է, որ կան ի ստուղապն ի մէջ գօտւոյ կենդանակերպիցն է ի վերայ խազին... անցանէ զխազ միջօրէի յետոյ քան աստեղն։*

ղգ. *41ա* 93. *[Վ]ասն գիտելոյ, թէ ո՞ր է աստեղացն, որ կան ի ստուղապն արտաքոյ գօտւոյ կենդանակերպիցն... եւ թէ անկանի յարեւմտեան կուսն սաֆիային՝ նայ անցնէ յետոյ քան զաստիճանսն։*

ղդ. *41ա* 94. *[Վ]ասն գիտելոյ ո՞ր աստեղացն, որ կան ստուղապն, որ ելանէ յառաջ քան աստիճանն իւր որում լայնութեան կամիս... եւ դի՛ր զփարկալի մի ոտն ի վերայ կողմն խազին միջօրէի ի սաֆիան եւ միւս ոտն՝ ի վերայ նշանին։*

ղե. *41աբ* 95. *[Վ]ասն գիտելոյ անմոլար աստեղացն, որ կան ստուղապն, թէ աստղի տեղն յա[յ]տնի է, եւ թէ լինի այն լայնութեան սաֆիայ... եւ թէ նշանն ի ներքոյ երկրի է՝ նայ աստեղն ի ներքոյ երկրի եւ ելանէ յետ քան զաստիճանն։*

ղզ. *41բ* 96. *[Վ]ասն գիտելոյ անմոլար աստեղացն, որ կան ի ստուղապն, ելնէ յառաջ քան զաստիճան իւր... թէ լինի ի վերայ երկրի՝ նայ վերայ աստեղն ի երկրի է եւ ելնէ յառաջ քան զաստիճան իւր։*

ղէ. *41բ* 97. *[Վ]ասն գիտելոյ, այն աստեղացն, որ չքան ի ստուղապն, թէ լայնութիւն հարաւ է եւ այն լայնութիւն, որ խնդրես... եւ զինչ որ կայ միւսն՝ այս ու գայն արայ ի վերայ երկրի։*

ղը. *41բ-2ա* 98. *[Վ]ասն գիտելոյ յայն աստեղացն, որ կան ստուղապն, որ մտանէ յետ քան զաստիճանսն իւրոյ, թէ լինի լայնութիւն ի հիւսիս... նայ աստիճան աստեղն ի վերայ երկրի եւ աստեղն առնէ յառաջ քան զաստիճան իւր։*

ղթ. *42աբ* 99. *[Վ]ասն գիտելոյ, թէ ո՞րն է, որ չքան ստուղապն, թէ լինի աստեղի տեղն յա[յ]տնի... քան զկէս ղաւս տունջեան կէտէն հիւսիսոյ՝ նայ աստեղն ընդ կէտին ի ներքոյ երկրի է եւ մտեալ է յառաջ քան զաստիճանսն։*

ճ. *42բ* 100. *[Վ]ասն գիտելոյ այն աստեղացն, որ կան ի ստուղապն, մտանէ յառաջ քան աստիճանն լայնութիւն ի հարաք... նայ աստիճան աստեղն լինի մտեալ, եւ աստեղն մտանէ յետ քան զաստիճանն իւր։*

ճա. *42բ-3ա* 101. *[Վ]ասն գիտելոյ, թէ ո՞ր աստեղացն է, որ չքան ի ստուղապն յառաջ քան զաստիճանսն իւր, թէ լինի լայնութիւն ի հարաւ... եւ թէ անկանի նշան ի ներքոյ երկրի՝ նայ աստեղն ի վերայ երկրի է եւ մտանէ յետ քան աստիճանն իւր։*

ճբ. *43ա* 102. *[Վ]ասն գիտելոյ, թէ ո՞ր աստեղաց որ կան ի ստուղապն, որ ելանէ ընդ աստիճանսն որ լայնութիւն հիւսիսոյ լինի... որ լինի այս Բ. աստիճանս՝ նայ ելանէ ընդ աստիճանս իւր, հիւսիսոյ լինի լանութիւն կամ հարաքթոյ պակաս լինի լայնութիւն կամ աւելի։*

ճգ. *43բ* 103. *[Վ]ասն գիտելոյ դարձեալ զնոյն, թէ յերկրի մերում լինի սաֆիայ՝ թէ կամիս գնայ՝ գիտացի՛ր... նա ելանէ ընդ աստիճանսն իւր ի հիւսիս լինի լայնութիւն, թէ հարաւ պակաս լինի լայնութիւն եւ թէ աւելի։*

ճդ. *43բ-4ա* 104. *[Վ]ասն գիտելոյ, թէ ո՞րն է ի աստեղաց, որ մտանէ ընդ աստիճանն իւր ի հիւսիս լինի լայնութիւն, որ խնդրես գնայ ինքն սաֆիայ... որ մտանէ ընդ կէտին հարաքթոյ եւ լինի հեռաւորութիւնքն սկսքանէ խոյին հաւասար։*

ճե. *44ա* 104. *[Վ]ասն գիտելոյ, թէ ո՞ր աստիճանք գօտւոյ կենդանակերպից ելանէ, զինչ որ կայ յինքն հիւսիսային աստեղացն... եւ այն, որ լինի ի մէջ աստիճանին երկրորդի եւ աստիճանն առաջնոյ ըստ կարգի կենդանակերպից՝ նայ ելնէ յետ, քան զաստիճանն։*

ճզ. *44բ* 106. *[Վ]ասն գիտելոյ, թէ ո՞ր աստիճանն աստիճանաց գօտւոյ կենդանակերպից ելանէ, զինչ որ լինի յինք աստեղաց հարաքթային յառաջ քան աստիճանն... եւ աստիճանին առաջնոյ ըստ կարգի կենդանակերպիցն՝ նայ ելանէ յետ քան զաստիճանն։*

ճէ. *45ա* 107. *[Վ]ասն գիտելոյ, թէ ո՞ր աստիճանն աստիճանաց գօտւոյ կենդանակերպից մտանէ ինչ որ կայ յինքն աստեղացն... ի մէջ աստիճանին առաջնոյ եւ աստիճանին երկրորդի ըստ կարգի կենդանակերպից եւ լայնութեան հիւսիսոյ՝ նայ մտանէ յառաջ քան աստիճանն։*

ճը. *45աբ* 108. *[Վ]ասն գիտելոյ, թէ ո՞ր աստիճանաց գօտւոյ կենդանակերպիցն մտանէ, ինչ որ կայ ինքն յինքն աստեղ հարաքթային յառաջ քան աստիճանն... եւ աստիճանն երկրորդի ըստ կարգի կենդանակերպից՝ նա մտանէ յառաջ քան զաստիճանն։*

ճթ. *45բ-6ա* 109. *[Վ]ասն գիտելոյ, ո՞ր չափ ի մէջ ծագման աստեղն այն աստեղացն, որ կան ի ստուղապն եւ ի մէջ ծագման աստիճանին... զինչ որ եղեւ՝ նայ այն է մէջ ծագման աստեղին եւ ի մէջ ծագման աստիճանին մաթալեհօվն այն երկրին։*

ճժ. *46ա* 110. *[Վ]ասն գիտելոյ, թէ ո՞ր չափ է ի մէջ անցուցանեալսն, զոր աստեղ եւ կամիս այն աստեղացն, որ կան ի ստուղապն... որպէս որ առաջն ասաց մաթալեհօվն ֆալակկ մուսթաղիմն։*

ճժա. *46աբ* 111. *[Վ]ասն գիտելոյ, թէ ո՞րչափ է ի մէջ մտանելոյ աստեղն, զոր կամիս աստեղացն, որ կան ի ստուղապն ի մէջ մտանելոյ աստիճանն իւր… որ ի մէջ մտանելոյ աստեղն եւ ի մէջ մտանելոյ աստիճանին իւր աստիճանք մաթալեհին յաւելուն ի յայն երկիրն։*

ճժբ. *46բ-7ա* 112. *[Վ]ասն գիտելոյ ի մէջ մտանելոյ աստեղն եւ ի մէջ անցնելոյ աստիճանին ի վերայ բոլորակի մառայի աստիճանօվ… եւ անցեալ աստիճանին իւր ի վերայ բոլորակին, որ ասացՙ՛։*

ճժգ. *47աբ* 113. *[Վ]ասն գիտելոյ զնոյն այլ կերպիւ, թէ լինի աստեղն ի ստուղապն. եւ այն է, որ գիտենաս զմէջ անցնելոց աստեղին… զինչ որ ելաւՙ նայ այն է ի մէջ անցեալ աստեղին եւ ի մէջ անցեալ աստիճանին ի վերայ բոլորակին, զոր ասացեր։*

ճժդ. *47բ-8ա* 114. *[Վ]ասն գիտելոյ զմէջ անցնելոյ աստեղին եւ ի մէջ անցանելոյ աստիճանին ի վերայ բոլորակի, որ անցնէ աստիճանօվ աստեղին… զինչ որ եղաւՙ նայ այն է էջ անցանելոյ աստիճանն ի վերայ բոլորակին, զոր զյիշեցի։*

ճժե. *48աբ* 115. *[Վ]ասն գիտելոյ զնոյն ի յայս չորեակն, թէ լինի այն աստեղ ի վերայ ստուղապին… զինչ որ ելաւՙ նայ այն է ի մէջ անցանելոյ աստղին եւ ի մէջ անցանելոյ աստիճանին ի վերայ բոլորակին, զոր յիշեցի։*

ճժզ. *48բ-9բ* 116. *[Վ]ասն գիտելոյ ի մէջ անցանելոյ աստղին եւ մէջ անցանելոյ աստիճանին ի վերայ բոլորակին, որ անցանէ աստիճանօվ, աստեղօվ… եւ այն է, որ ի մէջ անցուցանելոյ աստղին եւ անցուցանելոյ աստիճանին ի վերայ բոլորակին, զոր յիշեցի։*

ճժէ. *49բ-50ա* 117. *[Վ]ասն գիտելոյ զմէջ անցուցանելոյ աստեղն եւ մէջ անցանելոյ աստիճանին ի վերայ բոլորակին, որ անցանէ աստիճանով աստեղին… զինչ որ ելաւ կամ մնաց, այն է մէջ անցանելոյ աստեղին եւ մէջ անցուցանելոյ ի վերայ բոլորակին, զոր ասացի։*

ճժը. *50բ* 118. *[Վ]ասն գիտելոյ զմէջ ծագման Բ. աստեղն, թէ լինին ի վերայ ստուղապին… ինչ որ եղեւՙ նա այն է ի մէջ Բ. աստեղաց աստիճանօք մաթալեհին։*

ճժթ. *50բ* 119. *[Վ]ասն գիտելոյ, թէ ո՞ր չափ է ի մէջ խազին միջօրէի եւ մէջ Բ. մէջ եղն Բ. աստեղին… ի վերայ խազին միջօրէի մաթալեհօվն ֆալաքլ մուսթաղիմն։*

ճի. *50բ* 120. *[Վ]ասն գիտելոյ զմէջ մտանելոյ աստեղին եւ այլ ումն աստեղին, թէ լինի ի վերայ ստուղապին… զինչ որ եղեւՙ նայ այն է <այն է> մէջ մտանելոյ Բ. աստղին աստիճանօքն յարեւմտեանն։*

